

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Г. ДЖАУКЯН

И С Т О Р И Я  
Я З Ы К О З Н А Н И Я

ТОМ I

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН—1980

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՏՈՐ I

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1980

## ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատությունը բաժանված է երկու հատորի, որոնցից առաջինն ընդգրկում է հին ժամանակներից մինչև XIX դարի վերջն ընկած շրջանը, երկրորդը՝ XX դարը (ներառյալ նաև սովետական լեզվաբանությունը):

Գիրքը նախատեսված է բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և ընդհանրապես լեզվաբանության հարցերն ուսումնասիրողների համար:

Հրատարակվում է  
Երևանի Պետական համալսարանի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի  
որոշմամբ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

## 1. ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏԵՅՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության պատմությունը և նրա ուսումնասիրության նաւրցերը.— Լեզվաբանության պատմությունը լեզվաբանական կարևորագույն դիսցիպլիններից մեկն է, որ կազմում է ֆիլոլոգիական մասնագիտական կրթության անհրաժեշտ մասը: Չնայած սրան՝ մինչև այժմ գրեթե չկան լեզվաբանության պատմության այնպիսի ամբողջական շարադրանքներ, որոնց մեջ տրվի այդ գիտության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը՝ տարածական քիչ թե շատ լայն ընդգրկմամբ: Մասնավորապես չկան լեզվաբանության պատմության բուհական այնպիսի դասագրքեր, որոնք վերհանեն լեզվաբանության պատմության գլխավոր մոմենտները՝ մեթոդոլոգիական ճիշտ մեկնաբանությամբ: Ինչպես ցույց տվեց «Вопросы языкознания» ամսագրի էջերում 1954—1955 թթ. բացված դիսկուսիան, բացակայում են այդ առարկայի վերաբերյալ միասնական կարծիքներ, նյութի սիտտեմավորման ու շրջանաբաժանման միասնական ըմբռնումներ: Գործը դժվարանում է և նրանով, որ առանձին լեզվաբանական ուղղությունների և լեզվաբանների գնահատման հարցում գոյություն ունեն տարակարծություններ, որոնք մասամբ էլ պայմանավորված են մեր երկրում լեզվաբանական գիտության անցած ճանապարհի առանձնահատկություններով:

Լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատությունները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ ըստ դրանց ընդգրկման, բնույթի ու նպատակների:

Լեզվաբանության պատմության ամբողջական շարադրանքները.— Մի խումբ են կազմում լեզվաբանության պատմության քիչ թե շատ ամբողջական շարադրանքները՝ ժամանակագրական

տարբեր ընդգրկումներով: Սրանց մեջ առաջին հերթին հիշատակելի է դանիացի գիտնական Վ. Տոմսենի (1842—1927) «Լեզվաբանության պատմությունը մինչև XIX դարի վերջը» աշխատությունը, որը ներկայացնում է Կոպինհագենում նրա կարգացած «Լեզվաբանության ներածություն» դասընթացի համապատասխան բաժնի վերամշակումը և հրատարակվել է 1902 թ.: Այդ աշխատությունը թարգմանվել է ռուսերեն և հրատարակվել 1938 թ. Ռ. Օ. Շորի հավելումներով ու վերջաբանով: Վերջաբանը, որի մեջ տրվում է լեզվաբանական ուսմունքների համառոտ պատմությունը վերածնության դարաշրջանից սկսած, որոշ վերամշակումով («Լեզվաբանության պատմության ուրվագիծ» վերնագրի տակ) հետագայում մտել է Ռ. Օ. Շորի և Ն. Ս. Չեմոդանովի «Լեզվաբանության ներածություն» բուհական դասագրքի մեջ<sup>2</sup>: Իր բոլոր արժանիքներով հանդերձ՝ Տոմսենի աշխատությունը ունի մի շարք թերություններ և արդեն հնացել է. նախ՝ հեղինակը տալիս է գրեթե միայն արևմտաեւրոպական լեզվաբանության պատմությունը՝ բացառություն անելով միայն Հնդկաստանի համար, որքանով որ հնդկական լեզվաբանությունը կարևոր դեր է խաղացել պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման համար. երկրորդ՝ այս դեպքում էլ Տոմսենը XIX դարի լեզվաբանության պատմության շարադրանքը տալիս, ուշադրությունը կենտրոնացնում է հնդկաեւրոպական լեզուների ուսումնասիրության հարցերի վրա՝ գրեթե զանց առնելով մյուս լեզվախմբերի ուսումնասիրությունը և անընդան տեղ հատկացնելով ընդհանուր լեզվաբանությանն ու լեզվաբանական կարևորագույն հոսանքների տեսական հիմունքների բնութագրմանը. երրորդ՝ լինելով տիպիկ երիտքերական և էմպիրիկ գիտնական՝ Տոմսենն ակնհայտ առավելություն է տալիս լեզվաբանական մեթոդի զարգացման հարցերին՝ լեզվաբանական տեսության զարգացման հարցերի հանդեպ: Այս բոլորին միանում է և այն, որ մի կողմից՝ Տոմսենի գիրքը համդես գալով XX դ. սկզբներին, իր վրա կրում է XIX դ. պատկերացումների կնիքը, մյուս

<sup>1</sup> В. Томсен. История языковедения до конца XIX века (краткий обзор основных моментов), перевод студентов в обработке и послесловием Р. О. Шора («Краткий очерк истории лингвистических учений с эпохи возрождения до конца XIX века»), М., 1938.

<sup>2</sup> Р. О. Шор и Н. С. Чемоданов, Введение в языковедение, М., 1945, էջ 256—277:

կողմից՝ այդ գրքից ամբողջովին դուրս է մնացել XX դարը, որի պատմությունը պակաս հետաքրքրություն չի ներկայացնում:

Լեզվաբանության պատմությանը նվիրված նորագույն ուսումնասիրություններից առանձին հիշատակության արժանի են Հանս Արենսի և Թադեուշ Միլևսկու աշխատությունները: 'Իրանցից առաջինը՝ ունի ժամանակային լայն ընդգրկում՝ անտիկ աշխարհից մինչև մեր օրերը, բայց նրա տարածական ընդգրկումը նեղ է. այն սահմանափակվում է միայն հվրոպական և նորագույն ամերիկյան լեզվաբանությամբ: Արենսը գրեթե որևէ տեղեկություն չի տալիս հնդկական լեզվաբանության մասին, որը ոչ միայն աչքի ընկնող նվաճումների է հասել հնդկական լեզուների ուսումնասիրության բնագավառում, այլև կարևոր դեր կատարել պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորման մեջ. խիստ համառոտ հիշատակություն է արվում միայն Պանինիի մասին, այն էլ XIX դարի լեզվաբանության ձևավորման նախադրյալների քննության հետ կապված: Բոլորովին զանց են առնվում շինացիների, ճապոնացիների, արաբների և այլ ժողովուրդների լեզվաբանական նվաճումները: Լեզվաբանության պատմության պերիոդիզացիան Արենսը կատարում է տրագիցիոն ձևով՝ տարբերելով «Լեզվաբանության բարձրուցման» (մինչև XIX դարը) և «Լեզվաբանության» շրջաններ. մինչև XIX դարն ընկած շրջանն, այսպիսով, նա բուն լեզվաբանության շրջան չի համարում: Ոչ բոլոր դեպքերում է Արենսը լեզվաբանական ուղղությունների և առանձին հեղինակների կոնցեպցիաների հանգամանալից քննություն կատարում. նա սովորաբար բավարարվում է ներածական դիտողություններով և ապա ընդարձակ ֆազվածքներ է բերում քննարկվող հեղինակներից. սրանով աշխատությունը դառնում է ընդարձակ ծանոթություններով օժտված քրեստոմատիա:

Ավելորդ չէ նշել, որ XX դարի լեզվաբանությունը քննվում է ոչ թե ըստ լեզվաբանական ուղղությունների ու կոնցեպցիաների, այլ ըստ առանձին երկրների:

Թադեուշ Միլևսկին իր «Ընդհանուր լեզվաբանության ուրվագծի» առաջին մասում («Լեզվաբանության տեսություն»)՝<sup>2</sup> որտեղ

<sup>1</sup> H. Arens, Sprachwissenschaft, Der Gang ihrer Entwicklung von der Antike bis zur Gegenwart, Freiburg—München, 1955.

<sup>2</sup> T. Milewski, Zarys językoznawstwa ogólnego, zes'c' I, Teoria językoznawstwa, Lublin—Krakow, 1947. Այս աշխատությանը մենք ծանոթացել ենք մեր շարադրանքը հիմնականում ավարտելուց հետո և պետք է

տալիս է լեզվաբանական ուսմունքների պատմական տեսությունը, լեզվաբանության պատմության իր դասակարգումը հիմնում է լեզվի քննության երկու հնարավոր հայեցակետերի տարբերման վրա՝ ֆունկցիոնալ և էվոլյուցիոն: Ֆունկցիոնալ հայեցակետ ասելով նա հասկանում է լեզվի քննությունը՝ մարդկային տվյալ հասարակության մեջ նրա կատարած ֆունկցիայի (իմա՝ հաղորդակցական ֆունկցիայի) առումով. էվոլյուցիոն հայեցակետը լեզվի քննությունն է՝ նրա ծագման և հետագա ձևափոխության առումով: Առաջին հայեցակետը Միլևսկին համարում է տելեոլոգիական (նպատակաբանական), որովհետև այս դեպքում որոշվում է այն նպատակը, որին ծառայում են տվյալ լեզվի ձևերը, իսկ երկրորդը՝ պատճառական (իմա՝ դետերմինիստական), որովհետև այս դեպքում վերլուծվում են այն պատճառները, որոնք հանգեցնում են տվյալ ձևերի հանդես գալուն: Լեզվի ֆունկցիոնալ քննությունը նա միաժամանակ համարում է քննություն հասարակության դիրքերից, էվոլյուցիոնիստական քննությունը՝ քննություն անհատի դիրքերից: Ֆունկցիոնալ քննությունն, ըստ Միլևսկու, տելեոլոգիականի և հասարակականի հետ միասին նաև ֆենոմենոլոգիական քննություն է, որի դեպքում լեզուն փորձում են հասկանալ որպես գոյություն ունեցող օբյեկտ. էվոլյուցիոն քննությունը պատճառականի և անհատականի հետ միասին հոգեբանական քննություն է. այս դեպքում աշխատում են լեզուն հասկանալ անհատական փորձի ճանապարհով: Ֆունկցիոնալ և էվոլյուցիոն հայեցակետերը, ըստ Միլևսկու, վարդացել են երկու մակարդակով՝ նկարագրական և համեմատական: Միլևսկին տարբերում է լեզվաբանության պատմության 3 շրջան՝ նկարագրական-ֆունկցիոնալ (մինչև 1800 թ.), համեմատական-էվոլյուցիոն (XIX դ.) և համեմատական-ֆունկցիոնալ (XX դ.): Նշելի է, սակայն, որ Միլևսկին, ի հակասություն այս դասակարգման, շարունակելով տրադիցիոն կերպով XIX և XX դարերը միավորել մի ընդհանուր «նոր (modern) լեզվաբանություն» անվան տակ՝ XX դարը դիտում է որպես նոր լեզվաբանության շրջաններից մեկը: Այս դեպքում XIX—XX դդ. համար նա ընդհանուր առմամբ տարբերում է 3 շրջան՝ 1800—1870 թթ.,

նշենք, որ լեզվաբանության պատմության շրջանների առանձնացման հարցում նրա գրքի և ներկա գործի միջև բնդհանրություն կա, թեև մենք համարիս շենք ոչ Միլևսկու պեդոգոգիկայի սկզբունքներին, ոչ էլ այլ կարգի դրույթներին, այդ թվում՝ լեզվաբանական դիսցիպլինների նրա գաղափարգմանք, առանձին հարցերի մեկնարանությանը և այլն:



**XIX դ.** վերջին երեսնամյակը և **XX դարը.** մի այլ դեպքում, սակայն, երիտքերականների տիրապետության շրջանը նա հասցնում է մինչև 1914 թիվը:

Եթե փորձենք որոշ ընդհանուր եզրակացություններ անել, ապա Միլևսկու կոնցեպցիայի մասին կարելի է նշել հետևյալը. 1) այն հենվում է Սոսյուրի կոնցեպցիայի սնփնադատ յուրացման վրա, ընդ որում Միլևսկին խիստ կերպով հակադրում է նախ՝ ֆունկցիոնալ ու պատմական հայեցակետերը և երկրորդ՝ լեզուն ու խոսքը՝ որպես հասարակական և անհատական երևույթներ: 2) Իրականում լեզվի պատմական քննությունը կարող է լինել ոչ միայն անհատական-հոգեբանական, այլև հասարակական-հասարակագիտական. պատմական քննության երիտքերականական եղանակը, որը նկատի է առնում Միլևսկին իր եզրակացությունների համար, միակը չէ: 3) Միլևսկին նախ՝ անհրաժեշտ շափով հաշվի չի առնում նկարագրական և նորմատիվ քննության տարբերությունը՝ մինչև XIX դ. ընկած շրջանը կոչելով նկարագրական, և երկրորդ՝ անհրաժեշտ շափով չի տարբերում XX դարը մինչև XIX դարն ընկած շրջանից: XX դարի լեզվաբանության միակ տարբերությունը վերջինից համարվում է նկարագրական տարրի ներմուծումը. էլ չենք խոսում այն մասին, որ XX դարը նա դիտում է միակողմանիորեն՝ միայն մեկ ուղղության (Սոսյուրի ու նրա որոշ հետևորդների) դիրքերից: 4) Լեզվաբանական ուղղությունների խմբավորման և ենթաշրջանների առանձնացման հատուկ միասնական սկզբունքներ Միլևսկին չի մշակել. այսպես, մինչև XIX դարն ընկած շրջանի նյութը նա քննում է «Հնդկական դպրոց», «Հունական դպրոց», «Եգիպտական դպրոց», «Արաբական դպրոց», «Եվրոպական դպրոց» անունների տակ, XIX դ. նյութը՝ «Բուպպ և Հումբոլդտ», «Փրիմի դպրոց», «Լավգուստ Շլայխեր», «Երիտքերականական դպրոցի դրույթները», «Հնչյունական օրենքների բացառություն չճանաչելը», «Լեհալոգիա», «Երիտքերականների շարահյուսական ուսումնասիրությունները», «Լեզվաբանական աշխարհագրություն» անունների տակ, իսկ XX դ. նյութը՝ «Էթնոլոգիալոգիական դպրոց» (Վուլգատ և Կասսիրեր), «Ֆերդինանդ դը Սոսյուր», «Հնչյունաբանություն և հնչույթաբանություն», «Ձևահնչույթաբանություն», «Ձևաբանություն և շարահյուսություն», «Լեզվաբանական ոճաբանություն և գրական ոճաբանություն», «Կարլ Բյուլեր» անունների տակ: Աշխատության շորորդը մասը նվիրված է լեզվաբանական դիսցիպլինների և բաժինների դասակարգմանն ու բնութագրմանը:

լեզվաբանության գիտական հանգամանալից պատմությունն լինելուց շատ հեռու է Կ. Ս. Գազկուևի «լեզվաբանության պատմության վերաբերյալ դասախոսությունների դասընթացը»<sup>1</sup>, որը, սակայն, կարող է օգտակար լինել այդ բնագավառի նախնական ծանոթության համար:

Լեզվաբանության պատմության առանձին շրջաններին նվիրված աշխատությունները.— Զգալի թիվ են կազմում լեզվաբանության պատմության այս կամ այն շրջանին նվիրված աշխատությունները: Լեզվաբանության պատմության հին շրջանը արտացոլվել է անտիկ և հնդկական լեզվաբանությանը նվիրված աշխատություններում: Անտիկ լեզվաբանության պատմությունը տվել է Զ. Շտայնթալը իր «Հունների և հռոմայեցիների լեզվաբանության պատմությունը» աշխատության մեջ (1863)<sup>2</sup>, հնդկական լեզվաբանության պատմությունը շարադրված է Ս. Կ. Բելվարկարի «Հաշվետվություն սանսկրիտական քերականության՝ գոյություն ունեցող տարբեր սիստեմաների մասին» (1915) և Պ. Զակրվարտիի «Հնդիկների լեզվաբանական հայացքները» (1933) գրքերում<sup>3</sup>, Միջնադարյան Եվրոպայի լեզվաբանական ուսմունքները ուսումնասիրության առարկա են դարձել Ս. Թյուրոյի «Դիստոլոգիաներ և քաղվածքներ տարբեր լատինական ձեռագրերից՝ որպես միջնադարյան քերականական դոկտրինաների պատմության նյութ» (1868), Յ. Բեբլերի «Միջնադարյան լատինական քերականության պատմության ուրվագծեր» (1885), Պ. Ռոտտայի «Պատրիստիկայի և սխոլաստիկայի լեզվի փիլիսոփայությունը» (1909), Ֆլյուդելի «Արաբների քերականական դպրոցները» (1862), Գիրզասի «Արաբների քերականական սիստեմի ուրվագիծ» (1873) գրքերում<sup>4</sup> և բազմա-

<sup>1</sup> К. Е. Гагкаев, Курс лекций по истории языкознания, Одесса, 1957.

<sup>2</sup> H. Steinthal, Geschichte der Sprachwissenschaft bei Griechen und Römern, Berlin, 1863.

<sup>3</sup> S. K. Belvarkar, Account of the Different Existing Systems of Sanskrit Grammar, Poona, 1915. P. Chakravarti, The Linguistic Speculations of the Hindus, Calcutta, 1933.

<sup>4</sup> C. Thurot, Notices et extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire des doctrines grammaticales au moyen âge, Paris, 1868. J. Bähler, Beiträge zu einer Geschichte der lateinischen Grammatik im Mittelalter, Halle, 1885. P. Rotta, Filosofia del linguaggio nella patristica e nella scolastica, Torino, 1909. G. Flügel, Die grammatischen Schulen der Araber, 1862. Гирзас, Очерк грамматической системы арабов, СПб, 1879.

թիվ ալլ գործերում, որոնք վերաբերում են առանձին երկրների լեզվաբանությունների պատմությանը: Վերջիններս անհրաժեշտության դեպքում կհիշատակվեն ներկա աշխատության համապատասխան հատվածներում:

XIX դ. լեզվաբանության պատմությունը արտացոլված է Հ. Պեդերսենի «Լեզվաբանությունը տասնիններորդ դարում» աշխատության մեջ (1924)<sup>1</sup>: XX դ. լեզվաբանական ուսումնասիրությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ առանձին հիշատակության արժանի է Վ. Պիզանիի «Ընդհանուր և հնդարոպական լեզվաբանությունը», որտեղ տրված է 1936—1950 թթ. լեզվաբանական աշխատությունների տեսությունը<sup>2</sup>: Բենվենուտո Տեռաչինիի «Պատմական լեզվաբանության ուսումնասիրության ձեռնարկ» I մասը<sup>3</sup> նվիրված է XIX դ. լեզվաբանության մի շարք աչքի չնկնող դեմքերի քննությանը: Եթե մի կողմ թողնենք հավելվածում քննվող իտալացի լեզվաբաններին (Վինչենցո Կրեչինի և Կլաուդիո Զակոմինո), որոնք առանձին դեր չեն կատարել լեզվաբանության պատմության մեջ, ապա մնացած նյութը նվիրված է մի շարք խոշոր լեզվաբանների, որոնց հայացքների քննության հետ կապված՝ բացահայտվում են պատմա-համեմատական լեզվաբանության կարևոր հարցերը՝ «Համեմատական մեթոդի հիմքերը—Բոպպ», «Ընդհանուր լեզվաբանության ակունքները—Ուիտենի», «Լեզվաբանական հնէաբանություն—Ասկոլի», «Համեմատական մեթոդի սահմանները—Մեյեր-Լյուրկե և Մեյե», «Լեզվաբանական աշխարհագրություն—Ժիլբերոն» և «Համեմատական մեթոդի քննադատությունը—Շովարդտ»: Ինչպես տեսնում ենք, հեղինակների ընտրությունը ոչ միշտ է որոշվում նրանց ընդհանուր արժեքով. ընտրվում են (բացի Բոպպից) գերազանցապես ումանագիտության հետ սերտորեն կապված հեղինակները:

Սովետական իրականության մեջ նման բնույթի աշխատություններ են Վ. Լ. Զվեգինցևի «XIX—XX դարերի լեզվաբանության պատմության քրեստոմատիան», որտեղ բերված նյութերին ոչ

<sup>1</sup> H. Pedersen, Sprogvidenskab i det nittende aarhundrede, København, 1924 (անգլ. թարգմ. Linguistic Science in the Nineteenth Century, Cambridge, U. S. A., 1931).

<sup>2</sup> V. Pisani, Allgemeine und vergleichende Sprachwissenschaft, WF, II, 19-3 (ռուս. թարգմ. В. Пизани, Общее и индоевропейское языкознание, համանուն ժ-դրգածվում, М., 1956).

<sup>3</sup> B. Terracini, Guida allo studio della linguistica storica, I, Profilo storico-critico, Roma, 19-9.

միայն կցված են ներածական դիտողություններ, այլև տրված է մինչև XIX դարի լեզվաբանության պատմության համառոտ ուղղագիծը, և Տ. Ա. Գեգտերևայի «Լեզվաբանական ուսմունքների համառոտ տեսությունը (XIX—XX դդ. Նվրոպայում)»<sup>1</sup>:

Լեզվաբանության պատմության հարցերը ընդհանուր լեզվաբանական աշխատություններում ու ձեռնարկներում.— Առանձին հիշատակության արժանի են լեզվաբանության պատմության այն շարադրանքները, որոնք տրված են լեզվաբանական աշխատություններում, դասագրքերում ու ձեռնարկներում: Ընդհանուր լեզվաբանության, լեզվաբանության ներածության և լեզվափիլիսոփայության հիմունքների քիչ թե շատ ամբողջական շարադրանքների մեջ սովորաբար տեղ է տրվում լեզվաբանական ուսմունքների պատմությանը՝ կամ ամբողջականորեն, կամ որևէ մասնակի հարցի կապակցությամբ, հաճախ էլ և՛ այս, և՛ այն դեպքում: XX դարի նման տիպի աշխատություններից կարելի է նշել հետևյալները՝ Օ. Կսպերսենի «Լեզուն, նրա բնությունը, զարգացումը և ծագումը» («Լեզվաբանական գիտության պատմությունը» բաժինը), Լ. Բլումֆիլդի «Լեզուն», Լ. Հ. Գրեյի «Լեզվի հիմունքները» («Լեզվի ուսումնասիրության պատմությունը» գլուխը)<sup>2</sup> և այլն, ռուս լեզվաբաններից նշելի են Վ. Պորժեգինսկու «Լեզվաբանության ներածությունը» («Լեզվաբանության պատմության հիմնական մոմենտները» գլուխը), Ա. Լ. Պոզոգինի «Լեզուն որպես ստեղծագործություն» գիրքը (տրված է լեզվի ծագման տեսությունների գրեթե սպառիչ շարադրանքը), Մ. Ն. Պետերսոնի «Լեզվաբանության ներածությունը», Ռ. Օ. Շորի և Ն. Ս. Չեմոզանովի՝ վերևում հիշատակված գիրքը, և. Ա. Ռեֆորմատսկու «Լեզվաբանության ներածությունը» (առանձին հարցերի քննության ներածականները)<sup>3</sup>, հայ իրակա-

<sup>1</sup> Хрестоматия по истории языкознания XIX—XX веков, составил В. А. Звегинцев, М., 1953. Т. А. Дегтерева, Краткий обзор лингвистических учений (в XIX—XX веках в Европе), «Проблемы изучения языка», М., 1957.

<sup>2</sup> O. Jespersen, Language, Its Nature, Development and Origin, London, 1922 (գերմ. թարգմ. Die Sprache, ihre Entwicklung und Natur, Heidelberg, 1925). L. Bloomfield, Language, 1933. L. H. Gray, Foundations of Language, New York, 1939. II հրատ. 1950:

<sup>3</sup> В. Поржезинский, Введение в языковедение, М., 1910. А. Л. Погодин, Язык, как творчество, Харьков, 1913. А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1955. М. Н. Петерсон, Введение в языковедение, М., 1928—29. II հրատ. 1929, 1930, նոր հրատ. 1952:

նության մեջ՝ Գ. Մենևիշյանի «Արդի լեզվագիտությունը» (Վիեննա, 1906), Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության առաջին գիրքը («Ներածությունը», Երևան, 1955), է. Բ. Աղայանի «Լեզվաբանության ներածությունը» (Երվան, 1952) և այլն:

Մասնակի և առանձին լեզվաբանությունների պատմությանը նվիրված աշխատությունները.—Մի մեծ խումբ են կազմում մասնակի լեզվաբանությունների (հատկապես հնդերոպականի) և առանձին լեզվաբանությունների պատմության շարադրանքները: Եթե մի կողմ թողնենք զանազան համեմատական ու պատմական քերականությունների, լեզվի պատմության և մասնագիտական ֆիլոլոգիայի ներածության շարադրանքների մեջ տեղ տրված համառոտ ուրվագծերը, որոնց սուսկ թվարկումը մեզ շատ հեռու կտաներ (սրանցից արժե հիշատակել Ա. Մեյի «Հնդերոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներածությունը» գրքի «Համեմատական քերականության զարգացման ուրվագիծը»)<sup>1</sup>, ապա առաջին հերթին կարելի է նշել հնդերոպական լեզվաբանությանն ու նրա պատմությանը նվիրված այնպիսի մենագրություններ, ինչպիսիք են Բ. Դելբրյուկի «Լեզվի ուսումնասիրության ներածությունը», որը հետագայում ենթարկվել է արմատական վերամշակման և հրատարակվել «Հնդերոպական լեզուների ուսումնասիրության ներածությունը» խորագրով, Ի. Սյրիյենի «Հնդերոպական լեզվաբանության ուսումնասիրության ներածությունը»<sup>2</sup>, սովետական իրականության մեջ՝ Ա. Վ. Դեսնիցկայայի «Հնդերոպական լեզուների ցեղակցության ուսումնասիրության հարցերը»<sup>3</sup> և այլն: Հնդերոպական լեզվաբանության նվաճումների ամփոփման՝ նման կարգի առաջին փորձերից մեկն է եղել հայ լեզվաբան Ս. Տերվիշյանի «Հնդերոպական նախալեզուն» (Կ. Պոլիս, 1885): Ավելորդ ենք համարում մեկ աս

<sup>1</sup> A. Meillet. Introduction à l'étude comparative des langues indo-européennes, Paris, 1903 (ռուս. թարգմ. А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938).

<sup>2</sup> B. Delbrück, Einleitung in das Sprachstudium, Leipzig, III հրատ., 1897 (ռուս. թարգմանությունը С. К. Булич-ի «Очерк истории языкознания в России» գրքում, СПб, 1904). Einleitung in das Studium der indogermanischen Sprachen, VI հրատ., Leipzig, 1919. I. Schrijnen, Einführung in das Studium der indogermanischen Sprachwissenschaft, Heidelberg, 1921.

<sup>3</sup> А. В. Десницкая, Вопросы изучения родства индоевропейских языков, М.—Л., 1955.

մեկ թվարկել մյուս մասնակի լեզվաբանությունների պատմությանը նվիրված գործերը, որոնք անհրաժեշտության դեպքում կհիշատակվեն ներկա աշխատության համապատասխան հատվածների ծանոթագրություններում և բիրլիոգրաֆիական ցանկերում: Պետք է նշել, որ հնդերոպական լեզվաբանության վերաբերյալ պատմական և բիրլիոգրաֆիկ կարևոր տեղեկություններ տրված են «Grundriss der indogermanischen Sprach- und Altertumskunde» շարքում՝ «Հնդերոպական լեզվաբանության պատմությունը՝ Բուպպի կողմից նրա հիմնադրվելուց սկսած» ընդհանուր խորագրով<sup>1</sup>:

Հնդերոպական առանձին լեզվաճյուղերի և լեզուների ուսումնասիրության պատմությանը նվիրված աշխատություններից հիշատակելի են Ռ. Ռաումերի «Գերմանական ֆիլոլոգիայի պատմությունը», Ի. Իորդանի «Ռոմանական լեզվաբանության ներածությունը», Վ. Վ. Վինոգրադովի «Ժամանակակից ուսաց լեզու» աշխատության 1-ին պրակը («Բառի քերականական ուսմունքի ներածություն»), Գ. Ա. Շումուպֆի «Հայերենի ուսումնասիրությունը Եվրոպայում», Յ. Կարստի «Հայկական ֆիլոլոգիայի պատմությունը»<sup>2</sup>, Է. Բ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմությունը» (I, Երևան, 1958) և այլն:

Որոշ հեղինակներ ընտրել են յուրատեսակ ուղի. նրանք տալիս են լեզվաբանական գիտության զարգացման պատմությունը այս կամ այն երկրում՝ նկատի առնելով ոչ միայն տվյալ լեզվի ուսումնասիրությունը, այլև այդ երկրի լեզվաբանների արժարժած այլ հարցերը: Որոշ աշխատություններ էլ զուգորդում են երկու սկզբունքները՝ տալով տվյալ երկրի լեզվաբանության պատմության հետ միասին նաև տվյալ լեզվի ուսումնասիրությունը այլ երկրներում: Այս կամ այն երկրի լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատություններից կարելի է նշել Թ. Բենֆեյի «Գերմանիայի լեզվաբանության և արևելյան ֆիլոլոգիայի պատմու-

<sup>1</sup> Geschichte der indogermanischen Sprachwissenschaft seit ihrer Begründung von Fr. Bopp, Strassburg, 1916—1938.

<sup>2</sup> R. Raumer, Geschichte der germanischen Philologie, München, 1870. I. Jordan, Introdúcere in studiul limbilor románie (առգլ. թարգմ. An Introduction to Romance Linguistics, London, 1937). В. В. Виноградов, Современный русский язык, вып. I, Грамматические учения о слове, М., 1938. G. A. Schrumpf, The study of Armenian in Europe, „L'Arménie“, 1891 (հայ. լրացված և վերամշակված հրատ. «Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յվրոպայում», Վենետիկ, 1893)։ J. Karst, Geschichte der armenischen Philologie, 1930.

թյունը», որ ունի նաև մինչև XIX դարի լեզվաբանության պատմությանը նվիրված ընդհանուր ներածական մաս, Ֆ. Շպեխտի «Հնդեւրոպական» լեզվաբանությունը հրիտքերականներից մինչև առաջին համաշխարհային պատերազմը», Ս. Կ. Բուլիչի «Ռուսաստանի լեզվաբանության պատմության ուրվագիծը», սովետական իրականության մեջ՝ Ն. Ս. Չեմոդանովի «Համեմատական լեզվաբանությունը Ռուսաստանում» աշխատությունը (գերազանցապես ոռոսաց լեզվի համեմատական ուսումնասիրության հարցերը)<sup>1</sup> և այլն:

Լեզվաբանության պատմության հարցերին նվիրված մենագրություններն ու հոդվածները.— Հսկայական թիվ են կազմում այն մենագրություններն ու հոդվածները, որոնք նվիրված են այս կամ այն լեզվաբանական ուղղության, այս կամ այն լեզվաբանի հայացքների ու գործունեության, այս կամ այն հարցի ուսումնասիրության պատմությանը: Սրանց ոչ միայն մանրամասն, այլև նույնիսկ ամենահամառոտ թվարկումը հնարավոր չէ, մանավանդ եթե նկատի առնենք, որ յուրաքանչյուր հետազոտող այս կամ այն մասնակի հարցի քննության կապակցությամբ սովորաբար անգրագառնում է սովյալ հարցի պատմությանը, և որ գրեթե յուրաքանչյուր թարգմանվող լեզվաբանական աշխատության հեղինակ բնութագրման է ենթարկվում թարգմանության առաջարկում: Լեզվաբանական դասազան մենագրությունների, հոդվածների և ձեռնարկների ցանկերը տրվում են զանազան բիբլիոգրաֆիկ աշխատություններում, լեզվաբանական պարբերականներում, գրադարանային բիբլիոգրաֆիկ տեղեկատուներում: Ըստ հնարավորության, կարևորության և անհրաժեշտության՝ լեզվաբանական նման մենագրություններն ու հոդվածները կհիշատակվեն ներկա աշխատության համապատասխան բաժինների համար հանձնարարվող գրականության ցանկերում:

<sup>1</sup> Th. Benfey, Geschichte der Sprachwissenschaft und orientalischen Philologie in Deutschland. München, 1869. F. Specht, Die „indogermanische“ Sprachwissenschaft von den Junggrammatikern bis zum ersten Weltkriege. „Lexis“. I, 1948 (ռուս. թարգմ. Փ. Шпехт, „Индоевропейское“ языкознание от младограмматиков до первой мировой войны, „Общее и индоевропейское языкознание“, М., 1956, էջ 15—54). С. К. Булич, История языкознания в России, СПб, 1904. Н. С. Чемоданов, Сравнительное языкознание в России, М., 1956.

## 2. ԼԵՉՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈՂԻՉԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ

Լեզվաբանության պատմության տրագիցիոն պերիոդիզացիան. — Լեզվաբանության պատմարանի գլխավոր խնդիրներինց մեկը գիտական պերիոդիզացիայի և նյութի սխտեմավորման ռացիոնալ եղանակների մշակումն է: Սակայն այս խնդիրը լուծված համարել չի կարելի: Տրագիցիոն կերպով լեզվաբանության պատմությունը բաժանում են երկու շրջանի՝ նախագիտական և գիտական: Այս բաժանման համար հիմք է ծառայում այն փաստը, որ մինչև XIX դ. լեզվաբանությունը որպես առանձին գիտություն չէր ձևավորվել, այլ գոյություն ուներ մասամբ քերականության ու բառարանագրության ձևով, մասամբ էլ՝ փիլիսոփայական, ֆիլոլոգիական ու ճարտասանական ուսմունքների մեջ, այսինքն՝ լեզվի ուսումնասիրության բոլոր բնագավառները չէին միավորվել մի ընդհանուր անվան տակ: XIX դ. լեզվաբանության տարբեր բնագավառները միավորվում են որպես մեկ գիտություն: Սրա հետ միասին սովորաբար մատնանշում են, որ այս երկու շրջանների առանձնացման գլխավոր հիմքը XIX դ. լեզվի նկատմամբ պատմական մոտեցման առաջացումն է, մի բան, որ մինչև այդ լոկ սահմանավորվում էր:

Լեզվաբանության պատմության այս տրագիցիոն պերիոդիզացիան, որ համապատասխան անվանումներով կամ առանց դրանց ընդունվում է գրեթե բոլորի կողմից, չի կարող չհանդիպել մի շարք առարկությունների:

1) «Նախագիտական» և «գիտական» անվանումները ինքնին ահհաջող են. ճիշտ է, այդ անվանումները գործածվում են ոչ այն իմաստով, թե մինչև XIX դ. լեզվի գիտական ուսումնասիրություն ընդհանրապես գոյություն չուներ, այլ նշվում է, որ այդ ուսումնասիրությունը դեռևս որպես մի միասնական, մյուս գիտություններից ու դիսցիպլիններից անկախ բնագավառ գոյություն չուներ: Բայց և այնպես՝ այդ անվանումները թյուրիմացությունների տեղիք են տալիս:

2) Այս պերիոդիզացիան գրեթե տարբարանորեն գործածության մեջ է մտել XIX դարում, երբ միակ գիտական հայեցակետը համարվում էր պատմականը և, հետևաբար, ողջ նախորդ շրջանը չէր արժեքավորվում այնպես, ինչպես պետք է: Իրականում՝ մինչև XIX դ. լեզվի ուսումնասիրությունը մեծ առաջագիմություն էր կա-



առարել ստանձին լեզուների ստատիկ վերլուծության սկզբունքների մշակման ուղղությամբ, մշակվել էին լեզվի կառուցվածքի վերլուծության ու նյութի սիստեմավորման այնպիսի եղանակներ, որոնք կիրառվում էին իրենց իսկ՝ պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրների ու ներկայացուցիչների կողմից: XX դարում, երբ սկսում են ձայներ լսվել XIX դարի միակողմանի պատմականության դեմ, երբ լեզվի ուսումնասիրության մեթոդների մեջ զգալի առաջընթաց է կատարվում, այնուամենայնիվ, շարունակում են: անքննադատ օգտագործել հիշյալ պերիոդիզացիան: XIX դարում լեզվի ուսումնասիրության բնագավառների լոկ մեխանիկական միավորում է կատարվում. նախ՝ քերականությունը շարունակում է անկախ զարգացում ապրել և օգտվել նախքան XIX դարը մշակված վերլուծության եղանակներով և սիստեմավորման սկզբունքներով՝ հանդես գալով հատկապես դպրոցական քերականություն անվան տակ. նրա մեջ շարունակում են բերվել նաև այնպիսի գիտելիքներ (հնչյունաբանություն, ուղղագրություն, բառադիտության և իմաստաբանության տարրեր և այլն), որոնք լեզվի քերականական կառուցվածքին չեն վերաբերում. պատմա-համեմատական լեզվաբանության ներկայացուցիչները իրենց հետազոտության արդյունքները ամփոփում են «համեմատական քերականություն» և «պատմական քերականություն» անունների տակ՝ քերականություն քառի միևնույն համապարփակ ըմբռնմամբ. երկրորդ՝ լեզվական հարցերը շարունակում են քննվել նաև այլ դիտությունների և գիտական դիսցիպլինաների կողմից, լեզվի ուսումնասիրության բոլոր բնագավառների լիակատար առանձնացում տեղի չի ունենում. դեռ սովելին. հոգեբանական գիտության ձևավորման հետ միասին լեզվական հարցերը դառնում են այդ գիտության ներկայացուցիչների հոգածու ուսումնասիրության առարկան և ալգում լեզվաբանության վրա:

3) Լեզվաբանության որպես անկախ գիտության լիակատար ձևավորում և առանձնացում XIX դարում տեղի չի ունենում. լեզվաբանության վրա խիստ կերպով ազդում են, մի կողմից, բնական գիտությունները, հատկապես բիոլոգիան, մյուս կողմից՝ հոգեբանությունը, սրանց ուսումնասիրության մեթոդները մեխանիկորեն տեղափոխվում են լեզվաբանության բնագավառ: Եթե մինչև XIX դարը լեզվական ուսումնասիրության շատ հարցեր կազմում էին փիլիսոփայության, ֆիլոլոգիայի և ճարտասանության տնօրինությունը, ապա այս շրջանում էլ լեզվաբանությունը դիտվում է:

կամ որպես բնական գիտությունների մի մասը, կամ որպես հոգեբանության յուրատեսակ կցորդը:

4) Վերջապես, այս բոլորին միանում է և այն, որ XX դարում լեզվաբանական գիտության մեջ արմատական փոփոխություններ են կատարվում: Կարելի է ասել, որ իսկական ընդհանուր լեզվաբանական հայեցակետը մշակվում է XX դարում, երբ ջանքեր են արվում վերացնելու XIX դ. լեզվաբանության սահմանափակությունները՝ միակողմանիորեն տարվելը պատմա-համեմատական հետազոտությամբ և լեզվաբանությունը որպես կախյալ բնագավառ դիտելը: Իհարկե, այս հարցի լուծման մեջ քիչ չեն ծայրահեղությունները, որոնք պատմական որոնումների ճանապարհին լիովին հասկանալի են:

Եթե պերիոդիզացիայի հարցում գոյություն ունի քիչ թե շատ միասնականություն, ապա այդ բանը չի կարելի ասել նյութի սիստեմավորման հարցի մասին. ոմանք նյութը սիստեմավորում են ըստ հեղինակների, ոմանք՝ ըստ ուղղությունների (այն էլ ոչ առանց ժամանակագրական խախտումների), ոմանք՝ ըստ լեզվաբանության բաժինների ու դիսցիպլինների, ոմանք էլ՝ ըստ տվյալ շրջանում հանդես եկած կարևորագույն պրոբլեմների և այլն: Այսպիսով, բոլոր դեպքերում էլ գոհացուցիչ ու որոշակի սկզբունքներ չեն մշակված: Ուղղությունների առանձնացման հիմքում դրվում են տարբեր սկզբունքներ՝ մերթ լեզվաբանական կոնցեպցիայի և մեթոդի բնագավառում հանդես եկած տարբերությունները՝ համապատասխան անվանումներով հանդերձ, մերթ էլ այլ կարգի հատկանիշներ՝ դրանց համապատասխան այլ անվանումներով. այսպես՝ նատուրալիզմ, պոսիտիվիզմ, սոցիոլոգիզմ և այլ անվանումների կողքին, որոնք բնորոշում են լեզվի ըմբռնումը, հանդիպում են և այնպիսի հորոշումներ, ինչպիսիք են երիտքերականներ, ժնկի դպրոց, Կազանի դպրոց, Մոսկվայի դպրոց և այլն: Քննարկվող լեզվաբանների ընտրության հարցում ոչ միշտ են դեր խաղում՝ օբյեկտիվ չափանիշները: Իհարկե, բոլոր դեպքերում չէ, որ հնարավոր է դիմել միասնական սկզբունքների, ժամանակագրական խախտումներ թույլ չտալ, տրադիցիոն անվանումները հաշվի չառնել և այլն. բայց այս բոլոր դեպքերը կարելի է հասցնել մինիմումի, եթե հանդես բերվի իրական պատմականություն և հետևողականություն:

Լեզվաբանության պատմության՝ ներկա աշխատության մեջ կիրառվող պերիոդիզացիայի սկզբունքները.— լեզվաբանության

պատմության պերիոդիզացիայի միասնական սկզբունք և նյութի սիստեմավորման ուսցիտնալ եղանակներ մշակելու հարցերը լուծելու համար հարկավոր է նկատի առնել այն գլխավոր պրոբլեմները, որոնք կազմում են նրա իրավասության բնագավառը: Այդ պրոբլեմները կարելի է հանգեցնել երկու խմբի. 1) լեզվաբանական տեսության (կոնցեպցիայի) պրոբլեմները, որոնց վերաբերում են լեզվի բնույթի, այլ երևույթների հետ նրա ունեցած հարաբերության, նրա ծագման ու ֆունկցիավորման, այլև այն ուսումնասիրող գիտության՝ մնացած գիտությունների մեջ գրաված տեղի ըմբռնումը. 2) լեզվաբանական մեթոդի պրոբլեմները, որոնց վերաբերում են լեզվի նկատմամբ ունենալիք մոտեցումը, լեզվի ուսումնասիրության եղանակները, լեզվական նյութի սիստեմավորումը, լեզվաբանական դիսցիպլինների ու լեզվաբանության բաժինների առանձնացումն ու խմբավորումը:

Եթե մենք փորձենք պարզել լեզվաբանության պատմության մեջ XIX դ. սկզբներում կատարված հեղաշրջման բնույթը, ապա կտեսնենք, որ այն վերաբերում էր առաջին հերթին մեթոդին: Այդ հեղաշրջման էությունն այն էր, որ լեզվի ոչ պատմական, մետաֆիզիկական ըմբռնումը փոխարինվում է լեզվի պատմական ըմբռնմամբ, որ մի վճռական քայլ էր դեպի լեզվական երևույթների նկատմամբ դիալեկտիկական վերաբերմունքի մշակումը: Իհարկե, սրա հետ միասին տեղի են ունենում և այլ կարգի փոփոխություններ, բայց գլխավորը, այնուամենայնիվ, պատմական մոտեցման արմատավորումն էր: Այսպիսով, եթե ելնենք լեզվաբանության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների բնույթից, ապա նրա պատմության պերիոդիզացիայի հիմքում պետք է դնենք առաջին հերթին լեզվաբանական մեթոդի զարգացման մեջ կատարված տեղաշարժերը: Եվ այդ հասկանալի է. լեզվաբանությունը գիտության այլ բնագավառների նման կյանքի է կոչված բավարարելու հասարակության որոշ կարգի պահանջմունքներ: Լեզվաբանների ջանքերը բնականորեն պետք է առաջին հերթին ուղղված լինեն դեպի այդ պահանջմունքների բավարարման, որքան կարելի է, ավելի ուսցիտնալ եղանակների մշակումը, այլ կերպ ասած՝ դեպի լեզվի ուսումնասիրության՝ տվյալ ժամանակաշրջանի պահանջմունքներին ամենից ավելի համապատասխանող մեթոդի հայտնաբերումն ու կատարելագործումը: Սակայն այս դեպքում հարկավոր է նկատի ունենալ որոշ հանգամանքներ: Նախ՝ հասարակության այսպիսի պահանջմունքները միայն գործնական բնույթ չեն ունենում, եթե

սկզբնապես գիտությունների զարգացումը կոչված է բավարարելու հասարակության գրեթե միայն գործնական պահանջմունքները, ապա աստիճանաբար երևան է գալիս նաև տեսական հետաքրքրություն: Երկրորդ՝ գիտության զարգացման յուրաքանչյուր բնագավառ որոշ հարաբերական անկախություն ունի, ելնում է իր զարգացման նախորդ ընթացքից, որոշ պատրաստի նյութից: Լեզվաբանության նկատմամբ ևս կիրառելի է էնգելսի այն դրույթը, ըստ որի «որպես աշխատանքի բաժանման հատուկ բնագավառ, յուրաքանչյուր դարաշրջանի փիլիսոփայությունն իրրև նախադրյալ ունի մի որոշակի մտածողական նյութ, որ նրան հանձնել են իր նախորդները, և որից նա ելնում է»<sup>1</sup>: Այս առումով գիտության տվյալ բնագավառի հարաբերական անկախությունը դրսեվորվում է առաջին հերթին նրա ուսումնասիրության առարկայի հետազոտության՝ գոյություն ունեցող եղանակների կատարելագործման, իշխող մեթոդի հակասությունների վերացման, հետազոտության նոր եղանակների մշակման, առարկան ավելի բավականողմանիորեն ընդգրկելու ձգտման մեջ: Սովետական լեզվաբանական գիտությունը վաղուց է հաղթահարել վուլգար սոցիոլոգիզմը, որ հանդես է եկել նաև լեզվաբանության պատմության պերիոդիզացիայի մեջ. այսպես, Ն. Յա. Մառի հետևորդներ Վ. Բ. Ապտեկարը և Ս. Ն. Բիկովսկին<sup>2</sup> մինչսովետական շրջանի լեզվաբանության պատմության պերիոդիզացիայի համար հիմք են ընդունում կապիտալիզմի զարգացման էտապները՝ տարրերելով ծավալման (XVIII դ. վերջերից մինչև լեզվաբանության հիմնադրման շրջանի վերջը), կայունացման (XIX դ. 1840—80-ական թվականները՝ Շլայխերից՝ երիտքերականներ) և քայքայման շրջաններ: Նման պերիոդիզացիան, իհարկե, աչքաթող է անում լեզվաբանական գիտության յարգացման առանձնահատկությունները՝ գիտության այդ բնադավառը ուղղագծորեն կապելով տնտեսական փոփոխությունների հետ, հաշվի չառնելով ոչ այլ կարգի գործոնների ու միջակա օղակների ազդեցությունը<sup>3</sup>, ոչ էլ իր իսկ լեզվաբանության զարգացման նախորդ շրջանի ստեղծած նյութը: Երրորդ՝ լեզվաբա-

<sup>1</sup> Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. II, Երևան, 1950, էջ 637—638:

<sup>2</sup> В. Б. Аптекарь и С. Н. Быковский, Современное положение на лингвистическом фронте и очередные задачи марксистов-языковедов, „Известия ГАИМК“, X, 1931, 8—9.

<sup>3</sup> Հմմտ. Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. II, Երևան, 1950, էջ 627—630:

նական մեթոդի զարգացումը անհրաժեշտորեն կապվում է լեզվա-  
րանական տեսության (կոնցեպցիայի) հետ, նրանից այն շի կարե-  
լի անջատել. մեթոդը և տեսությունը, վերջիվերջո, հանդես են գա-  
լիս գիրկընդխառն, փոխադարձ կապի մեջ, և մեթոդի թերություն-  
ներն ու արժանիքները հաճախ որոշվում են տեսության (կոնցեպ-  
ցիայի) բնույթով: Կարելի է նշել, որ եթե XIX դ. լեզվաբանական  
մեթոդի մեջ կատարված հեղաշրջումը, մի կողմից, կապված էր լեզ-  
վական նյութի ուսումնասիրության հետ, ապա, մյուս կողմից, մեծ  
չափով պայմանավորված էր այլ գիտությունների մեջ տեղի ունե-  
ցող փոփոխություններով. մեթոդի որոշ առանձնահատկություն-  
ներն էլ շատ բանով որոշվում էին լեզվաբանության մեջ իշխող  
լոգիցիզմով, նատուրալիզմով կամ պոսիտիվիզմով: Այս բանը  
նկատի ունենալով է, որ լեզվաբանության պատմության շրջանների  
մեջ ենթաշրջաններ առանձնացնելիս և բնութագրելիս՝ մենք նկատի  
ենք առել լեզվաբանական մեթոդի ուղղվածությունը (направлен-  
ность), այն հանգամանքը, թե սովյալ շրջանում իշխող մեթոդը  
ի՛նչ կողմով է ուղղված դեպի հասարակության պահանջմունքները,  
հասարակության ո՛ր կարգի պահանջմունքներն է բավարարում,  
սրա հետ կապված ի՛նչ երանգ է ստանում և ի՛նչ հարաբերու-  
թյան մեջ է գտնվում լեզվաբանության պատմության նախորդ փուլի  
հետ: Սրանով իսկ կամուրջ է դրվում լեզվաբանության զարգաց-  
ման փուլերի և հասարակության այս կամ այն շրջանի լեզվական  
հետաքրքրությունների միջև: Զարգացման յուրաքանչյուր փուլում,  
սակայն, գոյություն ունեն լեզվի տարրեր ըմբռնումներ, որոնք  
հանդես են գալիս լեզվաբանական հոսանքների ու կոնցեպցիաների  
ձևով: Լեզվաբանները լեզվի բնույթի, ծագման, զարգացման ու  
ֆունկցիավորման մեկնաբանության համար ելնում են գոյություն  
ունեցող որոշ կարգի ընդհանուր ըմբռնումներից կամ առաջ քաշում  
սեփական ըմբռնումները, ընդ որում լեզվաբանության զարգաց-  
ման տարրեր շրջաններում դրանք դրսևորվում են միատեսակ  
կերպով: Մինչև XIX դարը, երբ լեզվաբանությունը գոյություն ու-  
ներ ոչ «մաքուր» ձևով, այլ ֆիլոլոգիայի, փիլիսոփայության և  
հարտասանության ընդերքում, բնականաբար լեզվի ըմբռնումներն  
էլ հենվում էին այդ բնագավառներում իշխող ընդհանուր ըմբռնում-  
ների վրա: XIX դարում լեզվաբանությունը դառնում է համեմատա-  
բար ինքնուրույն բնագավառ, բայց լեզվաբանները լեզվի բնույթի,  
ծագման, զարգացման ու ֆունկցիավորման պրոցեսի մեկնաբանու-  
թյան համար հիմք են ընդունում լեզվաբանության հետ այս կամ

այն կողմով առնչվող գիտությունների տվյալներն ու սկզբունքները: Բնականաբար, այս դարի լեզվաբանական հոսանքների խմբավորման համար հիմք պետք է ծառայի այն հանգամանքը, թե ո՞ր գիտություններն են հատկապես հիմք ընդունվում: XX դարում աստիճանաբար արմատավորվում է լեզվի՝ հասարակական ինքնուրույն բնագավառ լինելու ըմբռնումը: Սրա հետ կապված լեզուն ումանք սկսում են քննել իմանենտորեն, այլ երևույթներից կտրված, ումանք էլ լուկ այն կողմերով, որոնք կապվում են այլ գիտությունների ուսումնասիրության բնագավառների հետ: «Մաքուր» լեզվաբանություն ստեղծելու փորձերին զուգընթաց ստեղծվում են լեզվաբանական միջդիսցիպլիններ, գիտական քննության այնպիսի ուղղություններ ու դիսցիպլիններ, որոնք կամուրջ են նետում լեզվաբանության այլ գիտությունների միջև՝ ըստ քննության առարկաների փոխադարձ առնչությունների, բայց (ի տարբերություն XIX դարի) առանց խառնելու կամ նույնացնելու լեզվաբանության բնագավառը այլ բնագավառների հետ: XX դ. հոսանքներն սկզբնական շրջանում դեռևս պայմանավորված են (թեև շատ ավելի քիչ չափով) գիտական այլ բնագավառների ըմբռնումներով, բայց աստիճանաբար լեզվաբանությունն ավելի ու ավելի է ինքնուրույնանում, և լեզվի ուսումնասիրության բնագավառներն ավելի են սուհամանապատվում: Ընդհանուր առմամբ, փոքր-ինչ պարզ դարձնելով հարաբերությունների իրական բարդությունը, կարող ենք ասել, որ մեթոդը՝ հիմք ենք ընդունում լեզվաբանության պատմության հարցերի ժամանակային, իսկ տեսությունը (կոնցեպցիան)՝ տարածական խմբավորման համար, ընդ որում ենթաշրջանների առանձնացման սկզբունքը կամուրջ է ծառայում դրանց միջև:

Սակայն վերևում շարադրված սկզբունքները լիովին «մաքուր» ձևով չեն կարող կիրառվել. 1) լեզվաբանության պատմությունը որպես գիտական դիսցիպլին հենվում է որոշ տրագիցիայի վրա, և հնարավոր չէ լիովին հրաժարվել նրանից՝ առանց լեզվաբանության ժառանգորդականությունը խզելու վտանգի: Այս դեպքերում մենք ստիպված ենք եղել մտցնել կրկնակի անվանումներ, որոնցից մեկը բնորոշ է մեր սկզբունքի համար, մյուսը անհրաժեշտ տուրք է տրագիցիային. այսպես, օրինակ, «պսիխոֆիզիոլոգիզմ» ընդհանուր անվանման հետ միասին որպես նրա տարատեսակներ տրվում են «երիտքերականություն», «Կազանի լեզվաբանական դպրոց» և «Մոսկվայի լեզվաբանական դպրոց» անվանումները և այլն: 2) Որքան էլ ձգտենք ընտրել այնպիսի անվանումներ, որոնք ամենից

ավելի լավ արտացոլեն քննվող նյութը, այնուամենայնիվ, պետք է նկատի առնել, որ դրանք չեն կարող սպառել բնութագրվող կոնցեպցիայի էությունը և ավելի կամ պակաս չափով պայմանական բնույթ են կրում. որոշ դեպքերում դրանք կարող են շատ լավ բնութագրել նյութը, մինչդեռ այլ դեպքերում կարող են ավելի պակաս հաջող կամ էլ միակողմանի լինել: 3) Նյութի ժամանակագրական բաշխումը միշտ էլ կապված է որոշ դժվարությունների հետ. նախ՝ այս կամ այն շրջանը մյուսից կտրուկ դարային սահմաններով չի առանձնանում, բայց նպատակահարմար է, օրինակ, XIX դարը առնել ամբողջությամբ և ոչ թե սկսել, ասենք, 1816 թվից՝ Բոպպի առաջին գրքի լույս տեսնելու ժամանակից. երկրորդ՝ լեզվաբանները միշտ չէ, որ գործել են ժամանակագրականորեն հստակ սահմանազատված շրջաններում, նրանց հայացքների մեջ հաճախ փոփոխություններ են կատարվել և այլն. այս դեպքում բնականաբար այս կամ այն լեզվաբանին դնում ենք այն շրջանի մեջ, որ նրա հայացքների համար ավելի բնորոշ է և որին վերաբերում են նրա ստեղծած լեզվաբանական հիմնական արժեքները. երրորդ՝ որոշ հեղինակների գործեր տպագրվել են ոչ իրենց ապրած ժամանակ, հայտնի են դարձել շատ ավելի ուշ, երբեմն էլ այն ժամանակ, երբ իրենք՝ հեղինակներն այլևս չէին ապրում. այսպես, Սոսյուրը՝ սոցիոլոգիական դպրոցի հիմնադիրը, վախճանվել է 1913 թ., մինչդեռ նրա գլխավոր գիրքը լույս է տեսել 1916 թ. չորրորդ՝ ոչ բոլոր լեզվաբաններն են համընթաց քայլել ժամանակի նվաճումների հետ, թեև այս կամ այն կոնկրետ ընագավառում նրանք կարևոր դեր են կատարել տվյալ շրջանում և պետք է հիշատակվեն հենց այդ շրջանում: 4) Եթե բազմաթիվ դեպքերում տվյալ լեզվաբանի գործունեությունը հստակ կերպով կապված է այս կամ այն լեզվաբանական ուղղության հետ և պետք է քննվի սրա մեջ, ապա պատահում է նաև, որ տվյալ լեզվաբանի գործունեությունը նույնպիսի հստակությամբ չի կապված այս կամ այն ուղղության հետ, այլ կարևոր է առաջին հերթին լեզվի ուսումնասիրության այս կամ այն կոնկրետ բնագավառում ձեռք բերված արդյունքներով. այսպես, օրինակ, Իոն Ռիսը լեզվաբանության պատմության մեջ կարևոր է առաջին հերթին՝ իր շարահյուսական ուսումնասիրություններով, իսկ նրա լեզվաբանական ընդհանուր կոնցեպցիան որևէ օրիգինալություն չունի և առանձին խնամքով չի ձևակերպված. սակայն Ռիսի շարահյուսական փոնցեպցիան լեզվաբանության պատմաբանն իրավունք չունի

շրջանցելու: Այդ նույնը կարելի է ասել այս կամ այն մասնակի պրոբլեմին, այս կամ այն լեզվին նվիրված ուսումնասիրությունների մասին: Նման դեպքերում մենք վարվել ենք հետևյալ ձևով. լեզվաբանական կոնցեպցիաների և ուղղությունների գլխավոր ներկայացուցիչների հայացքների և հիմնական աշխատությունների բնութագրումից հետո քննում ենք առանձին բնագավառներում տվյալ ենթաշրջանում ձեռք բերված մասնակի նվաճումները: 5) XX դարի լեզվաբանության պատմությունը հնարավոր չէ քննել միասնական ձևով. սովետական լեզվաբանության զարգացումը սկզբնական որոնումների կարճ շրջանից հետո ընթացել է իր ուրույն ճանապարհով, քան արասահմանում: Հետևաբար՝ մենք այն առանձնացրել և քննել ենք անկախ ձևով՝ XX դարի լեզվաբանության պատմությունը, այսպիսով, բաժանելով երկու հատվածի: 6) Պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրները սովորաբար քննվում են առանձին. այդպես ենք վարվել և մենք՝ որոշ չափով խախտելով նյութի բաշխման ընդհանուր սկզբունքը: 7) Քանի որ, ի տարբերություն լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատությունների գերակշռող մեծամասնության, մենք աշխատել ենք ընդգրկել լեզվաբանության պատմությունը՝ իր տարածական դրեթե ողջ կտրվածքով, բնականաբար առաջացել են պերիոդիզացիայի միասնական սկզբունքների որոշման նոր դժվարություններ, և մենք չէ, որ պիտի ասենք, թե ի՛նչ չափով ենք կարողացել հալթահարել դրանք:

Լեզվաբանության պատմության պերիոդիզացիան մեր աշխատության մեջ ընդունում է հետևյալ տեսքը.

I. Ստատիկ-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (հին լեզվաբանություն—լեզվաբանական գիտելիքների սկզբնավորումից մինչև XVIII դ. վերջը). այս շրջանի համար կարելի է տարրերել 3 ենթաշրջան.

1. Ապոստերիորիստական իդոլյացիոնիզմ<sup>1</sup> (հին դարեր).— Այս ենթաշրջանում սկիզբ առնող լեզվաբանական գիտելիքները, փոխարինելով նախալեզվաբանական պատկերացումներին, հանդես են գալիս իրարից գրեթե անկախ կենտրոններում (երկրներում) և առանձին բնագավառներում (լեզվի ու գրի ուսուցում, փոխառված

<sup>1</sup> Լատ. a posteriori «հետևյալից» [հակառակ a priori-ի, a posteriori-ն նշանակում է փորձի վրա հենվող, փաստերից ելնող (պնդում, իմացություն)] և լատ. → իտալ. → ֆր. isolatio(n) «առանձնացում, առանձնություն, մեկուսացում, մեկուսություն» բառերից:



յուժյուն, բանասիրական աշխատանք): Սրա հետ կապված, մի կողմից, լեզվաբանական հետևություններն ու ընդհանրացումները հենվում են միայն տվյալ լեզուների ընձեռած փաստերի վրա ու կաշկանդված են այդ լեզուների բնույթով ու առանձնահատկություններով, մյուս կողմից, լեզվաբանության զարգացումը դեռևս պայմանավորված է տվյալ բնագավառների պահանջմունքներով ու հնարավորություններով:

2. Ապրիորիստական՝ դսգմատիզմ (միջին դարեր—վաղ միջնադար).—Այս ենթաշրջանում տեղի է ունենում լեզվաբանական գիտելիքների որոշ փոխանցում՝ ազդեցություն մի քանի սահմանափակ ոլորտների ներսում և դրանց ենթարկում եկեղեցու և իշխող կրոնական իդեոլոգիայի պահանջներին: Սրա հետ կապված, մի կողմից, լեզվաբանական հետևություններն ու ընդհանրացումները ձեռք են բերում ապրիորիստական բնույթ, մյուս կողմից, լեզվաբանական գիտելիքների ընկալումը կատարվում է գերազանցապես դոգմատիկորեն ու անքննադատաբար:

3. էմպիրիկ-տեխնիկական և ռացիոնալիստական ունիվերսալիզմ<sup>2</sup> (վերածնունդյան շրջան և XVII—XVIII դդ.).—Այս ենթաշրջանում աստիճանաբար հաղթահարվում են ինչպես լեզվաբանական ազդեցության ոլորտների սահմանափակությունը, այնպես էլ եկեղեցու ու կրոնի կաշկանդող ազդեցությունը, աննախընթաց կերպով մեծանում են լեզվաբանական աշխատանքի շրջանակները: Սրա հետ կապված, մի կողմից, պահանջ է առաջանում մշակել ամենաբազմազան կառուցվածքի լեզուները հեշտությամբ նկարագրելու եղանակներ, որ կատարվում է գերազանցապես լատինական էմպիրիկ-տեխնիկական քերականության սկզբունքների բազայի վրա, մյուս կողմից, բանականության դիրքերից վերանայել լեզվաբանական բոլոր նախորդ դրույթները և ստեղծել բոլոր լեզուների համար կիրառելի բանական սկզբունքներ:

II. Պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորման շրջան (նոր լեզվաբանություն—XIX դար). այս շրջանի համար նույնպես կարելի է տարրերել 3 ենթաշրջան.

---

Լատ. a priori «նախորդից» (նախքան փորձը, նախքան փաստերը, այսինքն՝ փորձի, փաստերի վրա չհիմնվող) բառից:

<sup>2</sup> Վերջին բառը ծագում է լատ. universalis «համընդհանուր, ընդհանրական, ողջ աշխարհն ընդգրկող, համաշխարհային, տեղեկերական» բառից:

1. Մագումարանական (դենետիկական) կոմպարատիվիզմ<sup>1</sup> (XIX դ. I կեսը).—Մասամբ՝ գիտության մեջ տիրապետություն հաստատող ընդհանուր գաղափարների, մասամբ էլ՝ լեզվաբանական փաստերի հավաքման, դասակարգման ու մեկնաբանության նախորդ փորձերի բազայի վրա հանդես է գալիս պատմա-համեմատական լեզվաբանությունը որպես փիլիսոփայությունից, բանասիրությունից և լեզվի դարոցական-գործնական ուսուցումից անկախ բնագավառ՝ իր ուրույն խնդիրներով ու մեթոդով. լեզվաբանության ուշադրության կենտրոնում գտնվում են գենետիկական պրոբլեմները՝ ժողովուրդների ծագման և լեզուների քերականական կառուցվածքների կազմավորման հարցերը, ընդ որում այդ պրոբլեմների լուծման բանալին համարվում է լեզուների (ցեղակից լեզուների) համեմատությունը:

2. Վերականգնողական (ռեկոնստրուկտիվիստական) կոմպարատիվիզմ (XIX դ. III քառորդը).—Մի կողմից՝ բնական գիտությունների (հատկապես բիոլոգիայի) և հոգեբանության զարգացումը, մյուս կողմից՝ լեզուների համեմատության ուղղությամբ կուտակված նյութը տեղաշարժեր են առաջ բերում պատմա-համեմատական լեզվաբանության զարգացման բնագավառում: Լեզուների համեմատությունը շարունակելով դիտել որպես գլխավոր միջոցը՝ լեզվաբանները փորձում են պարզել համեմատվող լեզվական միավորների նախաձևերը և նպատակ դնում վերականգնել համեմատվող լեզուներին ծնունդ տված հիմք-լեզուները:

3. Օրինասահմանչական (նոմոթետիկական)<sup>1</sup> էվոլյուցիոնիզմ (XIX դ. վերջին քառորդը).—Բնական գիտությունների բնագավառում կատարված հայտնագործությունները և հոգեբանության հետազոտ նվաճումները՝ մի կողմից, և լեզվաբանության մեջ մի շարք կարևոր հնչյունական օրենքների հաստատումը՝ մյուս կողմից, ստեղծում են այն համոզմունքը, որ լեզվաբանությունը կարելի է դարձնել միանգամայն ճշգրիտ օրենքներով առաջնորդվող գիտություն: Սրա հետ միասին, ոչ առանց Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի ազդեցության, լեզվական պրոցեսը սկսում է պատկերացվել որպես աննկատ էվոլյուցիոն փոփոխությունների անընդհատ շարք, և գիտական միակ հնարավոր հայեցակետը համարվում է պատմականը:

<sup>1</sup> Հուն. γενετικός (γενέσις «ծագում» բառից կազմված ածական) «ծագումային», ծագմանը վերաբերող» և լատ. comparativus «համեմատական» քառերից:

<sup>2</sup> Հուն. νομοθετικός «օրենսդրական, օրինասահմանչական» բառից:

III. Սիստեմային-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (ժամանակակից լեզվաբանություն—XX դար). այս շրջանի նյութը նսլատակահարմար է բաժանել երկու հատվածի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր զարգացման յուրահատկությունները.

Ա հատված. Նախասովետական և արտասահմանյան լեզվաբանություն, որի զարգացման մեջ կարելի է տարբերել 2 ենթաշրջան.

1. Ֆունկցիոնալիստական սինխրոնիզմ<sup>1</sup> (XX դ. սկզբից մինչև 20-ական թվականների վերջերը).—Մասամբ՝ փիլիսոփայության մեջ ու գիտական զանազան բնագավառներում հանդես եկած նոր գաղափարները, մասամբ էլ՝ XIX դ. լեզվաբանության միակողմանի զարգացման հանդեպ առաջացած ռեակցիան հիմք են տալիս լեզվաբանության նախորդ շրջանի գաղափարների քննադատական վերանայման համար: Այս ենթաշրջանի գրեթե բոլոր լեզվաբանական ուղղությունները հանդես են գալիս XIX դ. վերջին քառորդում տիրապետող երիտօրեականական ուղղության միակողմանի պատմականության, լեզվի ամբողջականության տրոհման (ատոմիզմի), նեյ էմպիրիզմի քննադատությամբ. այս ուղղությունները լեզուն բնում են ֆունկցիոնալ դիրքերից՝ այդ բառի ամենալայն առումով (և՛ լեզվի հաղորդակցական ու արտահայտչական ֆունկցիաների տարբեր կողմերը, և՛ լեզվասիստեմի բաղադրիչների ֆունկցիաներն: Ֆունկցիոնալ փոխհարաբերությունները):

2. Կառուցվածքային (ստրուկտուրային) դելիմիտացիոնիզմ<sup>2</sup> (XX դ. 20-ական թվականների վերջերից մինչև մեր օրերը).—Այս ենթաշրջանում ևս՝ մասամբ փիլիսոփայության մեջ և ամենատարբեր գիտությունների բնագավառում հանդես եկող գաղափարները, մասամբ էլ լեզվաբանության նախորդ ենթաշրջանում կատարված ուսումնասիրություններն ու հայտնված մտքերը հիմք են տալիս լեզուների կառուցվածքային իմանենտ քննությունը համարելու լեզվաբանության միակ հիմնական բնագավառը և խնամքով սահմանազատելու լեզուն այլ երևույթներից ու լեզվաբանությունը՝ այլ գիտություններից: Այս կապակցությամբ՝ ձևավորվում են նաև լեզվաբանության ու այլ գիտությունների միջև կանգնած մի շարք դիս-

<sup>1</sup> Հուն. (συσ- «համա-») χρονος «ժամանակ» բառից. սինխրոնիա է կոչվում լեզվական երևույթների փոխկապակցվածությունը յուրաքանչյուր տվյալ մոմենտում՝ ի տարբերություն դիսխրոնիայի (երևույթների պատմական հաջորդական կապի):

<sup>2</sup> Լատ. structura «կառուցվածք» և delimitatio «սահմանազատում, սահմանորոշում» բառերից:

ցիպլիններ, որոնք լեզունների ներկառուցվածքային քննութիւնը համարելով բուն լեզվաբանութիւնն ապատակը՝ իրենք զբաղվում են լեզվի քննութիւնով՝ հոգեբանական, ֆիզիոլոգիական, տեխնիկական և այլ նկատառումներով. սրանով իսկ փորձեր են արվում ճշգրտութեն սահմանազատելու լեզվի քննութիւնն զանազան հայեցակետերը:

Բ հատված. Սովետական լեզվաբանութիւնն, որը ձևավորվում է մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայութիւնն հիմքի վրա, իր վարդացման ընթացքում հաղթահարելով իդեալիստական և վուլգար մատերիալիստական կոնցեպցիաների ազդեցութիւնը, ի մի բերելով և քննադատաբար օգտագործելով նախորդ ողջ լեզվաբանական ժառանգութիւնն լավագոյն կողմերը:

Լեզվաբանութիւնն ի պատմութիւնն 3 շրջանների բնորոշ գծերը.—Լեզվաբանութիւնն զարգացման 3 շրջանները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

1) Ըստ ժամանակային գործոնի հաշվառման՝ առաջին շրջանի համար բնորոշ է ստատիկ քննութիւնը (ստատիզմը)<sup>1</sup>, երկրորդի համար՝ պատմական քննութիւնը (իստորիզմը)<sup>2</sup>, երրորդի համար՝ կառուցվածքային-ժամանակագրական քննութիւնը (ստրուկտուրային խրոնոլոգիզմը)<sup>3</sup>: Առաջին շրջանում շկա լեզվի նկատմամբ պատմական հայացք, և լեզվի ուսումնասիրութիւնն եղանակները ստատիկ վերլուծութիւնն եղանակներ են: Երկրորդ շրջանում հանդես է գալիս պատմական հայեցակետը, որը որոշ միակողմանիութիւն է ստանում՝ համարվելով միակ գիտականը: Երրորդ շրջանում զարգացում են սպրում և՛ ստատիկ, և՛ պատմական հայեցակետերը, ընդ որում, հրաժարվելով նախորդ շրջանի միակողմանի պատմականութիւնից, որոշ հոսանքներ առաջնութիւն են տալիս ստատիկ հայեցակետին: Գերադասութիւնն տալով նրան պատմականի հանդեպ և այն դնելով լեզվի ուսումնասիրութիւնն հիմքում, որպէս լեզվի սիստեմային ըմբռնման արտահայտութիւն, ժամանակակից լեզվաբանութիւնն ներկայացուցիչները լեզվի պատմական վերլուծութիւնը կատարում են ժամանակագրական շերտեր հաստատելու միջոցով՝ ըստ նախորդ շրջաններում լեզվասիստեմի

<sup>1</sup> Հուն. στατός «ստատիկ, կայուն, անշարժ» բառից (լեզուն առանց պատմական շարժման քննելը):

<sup>2</sup> Հուն. ιστορία «պատմութիւն» բառից:

<sup>3</sup> Լատ. structura «կառուցվածք» և հուն. γροολογία «ժամանակագրութիւն» բառերից:

կրած վերակազմավորումների, ըստ հին սիստեմի տարրերի՝ նոր սիստեմի մեջ գրաված տեղի:

2) Ըստ նյութի քննության տիրապետող մեթոդի՝ առաջին շրջանի համար բնորոշ է ստատիկ-վերլուծական քննությունը (ստատիկ-անալիտիզմը), երկրորդի համար՝ համեմատական քննությունը (կոմպարատիվիզմը), երրորդի համար՝ սիստեմային-վերլուծական քննությունը (սիստեմային անալիտիզմը): Առաջին շրջանում ուղադրությունը կենտրոնացված է առանձին լեզուների կառուցվածքի վերլուծության վրա, աստիճանաբար մշակվում են այդպիսի վերլուծության և նյութի սիստեմավորման միասնական սկզբունքներ: Երկրորդ շրջանում տիրապետող մեթոդը համեմատությունն է, որ կատարվում է կամ ցեղակից լեզուների, կամ միևնույն լեզվի պատմականորեն հաջորդող շրջանների ընդհանուր ծագում ունեցող միավորների միջև. այդ նյութի սիստեմավորման և վերլուծման սկզբունքների հարցում կոմպարատիվիստները հենվում են նախորդների վրա: Երրորդ շրջանում պահանջ է առաջանում վերանայել վերլուծման նախորդ եղանակները, ստեղծել բոլոր լեզուների ստատիկ վերլուծման համար կիրառելի եղանակներ և բարելավել պատմա-համեմատական լեզվաբանության վերլուծման եղանակները. հատուկ արժեք է ձեռք բերում սիստեմի գաղափարի ներմուծումը, որը պատմական վերլուծության մեջ հանգեցնում է ժամանակագրական շերտերի (տարրեր սիստեմներին հատուկ երեվույթների) առանձնացման և ներքին վերականգնման սկզբունքներին:

3) Ըստ լեզվի կառուցվածքային տարրերի փոխհարաբերության ըմբռնման առաջին շրջանի համար բնորոշ է միասնականությունը, համադրականությունը (ինտեգրիզմը<sup>1</sup>, սինթետիզմը), երկրորդի համար՝ տրոհայնությունը (ատոմիզմը)<sup>2</sup>, երրորդի համար՝ սիստեմայնությունն ու «զուգահեռությունը» (սիստեմատիզմը և «իպոմորֆիզմը»)<sup>3</sup>: Առաջին շրջանում լեզվի կառուցվածքային վերլուծության մեջ չի կորչում տվյալ լեզվի ամբողջականության և միասնականության զգացումը. սա բացատրվում է մասամբ նրանով, որ դեռևս շատ չեն խորացել լեզվի մանրամասների մեջ, մասամբ նրանով, որ պարփակվում են մեկ լեզվի մեջ, և տարրերի

<sup>1</sup> Լատ. integer «ամբողջական» բառից:

Հուն. ἅπλοσ «անբաժանելի, ատոմ» (իմս լեզվի տրոհված, մանրացված քննությունը):

<sup>3</sup> Հուն. (ισο- «համա-, հավասար-»)μορφή «ձև» բառից:

ուսումնասիրութիւնը քննվում է դեռևս միայն սովորական լեզվի դիրքերից, մասամբ նրանով, որ լեզվի ուսումնասիրութիւնը դեռ գործնական նպատակներ է հետապնդում,—իսկ գործնական ուսուցումը պահանջում է ամբողջի իմացում որոշ կոնկրետ նպատակի համար,—մասամբ էլ նրանով, որ լեզվական ուսումնասիրութեան բնագավառը դեռ չի անշատվել այլ բնագավառներից: Երկրորդ շրջանում առաջ գնացող վերլուծութիւնը աստիճանաբար հանգցնում է ամբողջականութեան զգացման կորստի, մանրախնդրութեան և «ատոմիզմի», մասնավանդ որ լեզուների համեմատութիւնը ուշադրութեան կենտրոնում է, և համեմատվող լեզուների ամբողջականութիւն լինելու զգացումը թուլանում է: Երրորդ շրջանում փորձ է արվում վերացնել «ատոմիզմը»: Սիստեմի և ստրուկտուրայի գաղափարները հնարավորութիւն են տալիս վերլուծութիւնը կատարելու սիստեմի դիրքերից և անալոգիա անցկացնելու տարբեր բաժինների մեջ կիրառվող վերլուծութեան սկզբունքների միջև (իզոմորֆիզմ): Առաջին շրջանում ուշադրութեան կենտրոնում է ամբողջը, երկրորդ շրջանում՝ ամբողջի մասերը, երրորդ շրջանում՝ ամբողջի ու նրա մասերի փոխհարաբերութիւնը:

4) Ըստ իմաստավոր միավորների (բառերի) ձևի և բովանդակութեան (հնչման և իմաստի) փոխհարաբերութեան ըմբռնման ու մեկնաբանութեան՝ առաջին շրջանի համար բնորոշ է համադրական-անվանային քննութիւնը (սինթետիկ օնոմատիզմը)<sup>1</sup>, երկրորդի համար՝ վերլուծական-ձևային քննութիւնը (անալիտիկ ֆորմալիզմը), երրորդի համար՝ ֆունկցիոնալ-նշանային քննութիւնը (ֆունկցիոնալ սեմիոլոգիզմը)<sup>2</sup>: Առաջին շրջանում իմաստային միավորների (բառերի) ձևը և բովանդակութիւնը առնվում են միասնաբար, սրա համար հիմք է ծառայում բառի սինթետիկ ըմբռնումը որպէս անվանում, մի բան, որ ենթադրում է և՛ բառաձև, և՛ բառիմաստ (հարաբերութիւնը դեպի անվանվող առարկան): Երկրորդ շրջանում աստիճանաբար տեղի է ունենում որոշ խզում ձևի և իմաստի միջև, ուշադրութիւնը կենտրոնացվում է ձևական վերլուծութեան վրա, բառի ամբողջականութեան ըմբռնումը կորչում է հանուն բաղադրիչների: Երրորդ շրջանում փորձ է արվում վերացնել իմաստային միավորների (բառերի) ձևի և

<sup>1</sup> Հուն. ὄνομα «անուն» բառից:

<sup>2</sup> Հուն. σήμα «նշան», σημαίον «հատկանիշ, նշան», σημαίνω և σημαίω «նշանակել» բառերից:

բովանդակութեան խզումը՝ նշանի և ֆունկցիայի գաղափարների միջոցով: Այս դեպքում ևս ոմանք հասնում են ծայրահեղության, բառը կտրում առարկայական հիմքից կամ դիտում լոկ որպես սիմվոլ:

5) Ըստ լեզվական վերլուծության հիմնական միավորների բնույթի՝ առաջին շրջանին բնորոշ է բառա-տառային քննությունը (լեքսիկովը կամ լոգոմերիզմը<sup>1</sup> և էլեմենտիզմը, լիտերիզմը, ստոյ-խիզմը)<sup>2</sup>, երկրորդի համար՝ արմատա-հնչյունային քննությունը (ուղիցիզմը և ֆոնետիզմը)<sup>3</sup>, երրորդի համար՝ ձևույթա-հնչյունային քննությունը (մորֆեմատիզմը և ֆոնոլոգիզմը)<sup>4</sup>, մասամբ էլ «լուս» հարաբերությունների քննությունը (ուելյացիոնիզմը)<sup>5</sup>: Առաջին շրջանում լեզվական քննության հիմնական միավորներն են բառը և տառը. լեզվաբանական ուսումնասիրության հիմնական բնագավառները խոսքի մասերի և տառերի ուսմունքներն են: Երկրորդ շրջանում լեզվական քննության հիմնական միավորները արմատներն ու հնչյուններն են. լեզվաբանական ուսումնասիրության հիմնական բնագավառներն են ձևաբանությունն ու հնչյունաբանությունը: Երրորդ շրջանում լեզվական քննության հիմնական միավորները ձևույթներն ու հնչյութներն են, մասամբ էլ «մաքուր» հարաբերությունները. լեզվական հետազոտության հիմնական բնագավառներն են ձևույթաբանությունը (մորֆեմատիկան) և հնչյութաբանությունը (ֆոնոլոգիան, ֆոնեմիկան):

6) Ըստ այն բանի, թե լեզվի ո՞ր կոնկրետ դրսևորման վրա է ուշադրությունը կենտրոնացվում, առաջին շրջանի համար բնորոշ է բանասիրական-գրային քննությունը (ֆիլոլոգիզմը կամ լիտերարիզմը)<sup>6</sup>, երկրորդի համար՝ բանավոր-խոսքային քննության (ֆոնացիոնիզմի)<sup>7</sup> արմատավորումը, երրորդի համար՝ ֆունկցիոնալ-տարբերակված քննությունը (ֆունկցիոնալ դիֆերենտիզմը)<sup>8</sup>: Ա-

<sup>1</sup> Հուն. λέξις «բառ» և μέρος του λόγου «խոսքի մասեր» բառերից:

<sup>2</sup> Լատ. elementa «տառեր, տարրեր», litterae «գրեր», հուն. στοιχεία «տառեր, տարրեր» բառերից:

<sup>3</sup> Լատ. radix «արմատ» և հուն. φωνή «հնչյուն, ձայն» բառերից:

<sup>4</sup> Ֆոնեմա «հնչյութ» և մորֆեմա «ձևույթ» բառերից (հուն. ծագմամբ):

<sup>5</sup> Լատ. relatio «հարաբերություն» բառից:

<sup>6</sup> Հուն. φιλολογία «բանասիրություն» և Լատ. litterarius «գրային, գրավոր, գրական» բառերից:

<sup>7</sup> Հունա-լատ. phonatio «հնչակազմություն, հնչում, արտասանություն» բառից:

<sup>8</sup> Լատ. differens «տարբերություն» (իմաստաբերակում) բառից:

առաջին շրջանում ուշադրության կենտրոնում են գրավոր արտահայտությունները, գրավոր խոսքը. եթե արտասանության մասին խոսվում է, ապա լոկ գրավոր խոսքի հետ ունեցած առնչությամբ (ուղղախոսություն): Երկրորդ շրջանում աստիճանաբար սկսում են կարևոր տեղ հատկացնել կենդանի ճշմանը. գրավոր խոսքը ուշադրության է արժանանում հիմնականում այն շահով, որ շահով այն արտացոլում արտասանությունը: Երրորդ շրջանում գրավոր և բանավոր խոսքը արժեքավորվում են ու տարբերակվում ըստ իրենց ֆունկցիաների:

7) Ըստ լեզվի ուսումնասիրությանը նպատակների՝ առաջին շրջանի համար բերող է լեզվի նորոգմանը քննությունը (նորոգման լեզվագիտություն), երկրորդի համար՝ ծագումաբանական քննությունը (գենետիկություն), երրորդի համար՝ նկարագրական քննությունը (դեսկրիպտիվություն)<sup>1</sup>: Առաջին շրջանում գերազանցապես նպատակ է դրվում սալ հին սեքստերը ճիշտ ընթացքով և մեկնաբանելու, ճիշտ գրելու և խոսելու նորմաներ. ուշադրությունը կենտրոնացվում է այն բանի վրա, թե ինչպե՛ս և ետք է ընթանա և ի՛նչ նպատակ պետք է ունենա լեզվի հարցերով զբաղվելը: Երկրորդ շրջանում նպատակ է դրվում պարզել լեզուների ցեղակցական կապերը և զարգացման ընթացքը. ուշադրությունը կենտրոնացվում է այն բանի վրա, թե որտեղի՛ց է ծագել տվյալ լեզուն և որտեղի՛ց են գալիս լեզվի տվյալ տարրերը: Երրորդ շրջանում նպատակ է դրվում լեզվի՝ գոյություն ունեցող վիճակի ուսումնասիրությունն այնպես, ինչպես կա և ինչպես կազմավորվել է. ուշադրությունը կենտրոնացվում է այն բանի վրա, թե ի՛նչ կա, ժամանակագրական ի՛նչ շեղումն են առկա, ի՛նչ հարաբերությու՛ն կա եղած տարրերի միջև:

8) Ըստ լեզվաբանության առարկայի տարածական ընդգրկման և ընդհանրացման աստիճանի՝ առաջին շրջանի համար բերող է լեզուների առանձնական քննությունը (սինգուլարիզմ)<sup>2</sup>, երկրորդի համար՝ մասնական քննությունը (պարտիկուլարիզմ)<sup>3</sup>, երրորդի համար՝ ըստհանրական քննությունը (ունիվերսալիզմ)<sup>4</sup>: Առաջին շրջանում լեզուներն առնվում են առանձին, լեզվական հետազոտության եղանակները մշակվում են այս կամ այն լեզվի համար և մեխանիկորեն կիրառվում այլ լեզուների նկատմամբ, իշ-

<sup>1</sup> Լատ. descriptio «նկարագրություն» բառից:

<sup>2</sup> Լատ. singularis «առանձին, առանձնական» բառից:


<sup>3</sup> Լատ. particularis «մասնակի, մասնական» բառից:

<sup>4</sup> Լատ. universalis «ընդհանուր, ընդհանրական» բառից:



խում են առանձին լեզվաբանությունները. լեզվի տեսութայան ընդհանուր հարցերի լուծման համար հիմք են ծառայում առանձին լեզվաբանությունների տվյալները: Երկրորդ շրջանում հաստատվում են լեզվաբանության ընդհանուր ըստ ծագման և ըստ քերականական տիպերի ընդհանրության. իշխում են մասնակի լեզվաբանությունները, և լեզվի տեսութայան ընդհանուր հարցերի լուծման համար հիմք են ծառայում նրանց տվյալներն ու եզրակացությունները: Երրորդ շրջանում փորձեր են արվում հաստատելու բոլոր լեզուների ուսումնասիրության ընդհանուր եղանակներ ու սկզբունքներ, մշակելու ընդհանուր օրինաչափություններ. իշխում են ընդհանուր լեզվաբանական ուսմունքները:

Առանձին շրջանները քննելիս բնականաբար պետք է ուշադրության առնվի և նախորդ շրջանում ձևավորված ուսմունքների հետագա զարգացումը: Այլ կերպ ասած՝ պետք է ստացվի հետևյալ սխեման.



9) Ըստ լեզուների փոխհարաբերության ըմբռնման ու մեկնաբանության, առաջին շրջանի համար բնորոշ է լեզուների մեկուսացված քննությունը (իզոլյացիոնիզմը), երկրորդի համար՝ ծագումաբանական-համեմատական քննությունը (գենետիկական կոմպարատիվիզմը), երրորդի համար՝ ընդհանրական տիպաբանական-ծագումաբանական քննությունը (տիպոլոգիական-գենետիկական ունիվերսալիզմը): Առաջին շրջանում լեզուները քննվում են մեկուսացված, նրանց ծագման և այլ լեզուների հետ ունեցած փոխհարաբերության հարցերը լուծվում են կամ կրոնական հայեցակետով,

կամ առանց որոշակի գիտական սկզբունքների: Երկրորդ շրջանում ուշադրության կենտրոնում է լեզուների ցեղակցական կապերի, լեզուների ծագման ու գենետիկորեն կապված լեզվաբնօրինակների գիտական ուսումնասիրությունը: Երրորդ շրջանում ուշադրություն են գրավում լեզուների տիպոլոգիական ընդհանրության, միջլեզվաբնօրինակային կապերի, լեզվական ընդհանրության ու տարբերության ներքին ու արտաքին գործոնների, լեզուների զարգացման ֆունկցիավորման ընդհանուր օրինաչափությունների, ցեղակցության ընդհանուր շափանիշների որոշման, լեզուների համընդհանուր առնչությունների ու կապերի հարցերը:

10) Ըստ լեզվի ու հարակից հրևույթների և լեզվաբանության ու իմացության մյուս բնագավառների կապի ու դրա ըմբռնման՝ առաջին շրջանի համար բնորոշ է շտաբորոշված քննությունը (սինկրետիզմը)<sup>1</sup>, երկրորդի համար՝ կախյալ քննությունը (դեպենդենտիզմը)<sup>2</sup>, երրորդի համար՝ անկախ ու ինքնակա քննությունը (ինդեպենդենտիզմն ու իմանենտիզմը)<sup>3</sup>՝ մի կողմից և քննությունը հասարակական ֆունկցիայի դիրքերից (սոցիալ-ֆունկցիոնալիզմը)՝ մյուս կողմից: Առաջին շրջանում լեզվի հարցերը մշակվում են փիլիսոփայության, ֆիլոլոգիայի և ճարտասանության հարցերի հետ միասին. լեզվաբանությունը սաղմնավորվում է փիլիսոփայության, ֆիլոլոգիայի, ճարտասանության ընդերքում և գոյություն ունի որպես փիլիսոփայական լեզվաբանություն (լեզվափիլիսոփայություն), ֆիլոլոգիական լեզվաբանություն (քերականություն ու բառարանագրություն) ու ճարտասանական լեզվաբանություն (ոճի ուսմունք): Երկրորդ շրջանում լեզվի հարցերը կապվում են գերազանցապես բնագիտական և հոգեբանական (մասամբ և տրամաբանական) օրինաչափությունների հետ՝ լեզվաբանությունը հանդես է գալիս որպես բնական գիտությունների (հատկապես կենսաբանության) և հոգեբանության կցորդը. նրա օրինաչափությունների բանալին որոնվում է այդ գիտությունների բացահայտած օրինաչափությունների մեջ: Երրորդ շրջանում լե-

<sup>1</sup> Հուն. συγγρητισμός «սինկրետիզմ. միաձուլություն, շտաբորոշվածություն» բառից:

<sup>2</sup> Լատ. dependens «կախյալ, կախված» բառից:

Լատ. independens «անկախ, չկախված» բառից:

<sup>3</sup> Ըստ այն բանի, թե լեզուն իր իր կողմով է հատկապես ուշադրություն գրավում, լեզվի իր կողմն է կարևոր ու բնորոշ համարվում՝ արտաքին-հնչյունականը, թե ներքին-իմաստայինը:



ցով մարդիկ աշխատել են իմաստավորել անհասկանալի բառերն անվանումները:

Իհարկե, այս բոլոր դեպքերում մենք գործ ունենք ոչ թե իսկական լեզվաբանական գիտելիքների և լեզվի ուսումնասիրության փորձերի, այլ լոկ լեզվի նկատմամբ եզած հետաքրքրության վկայությունների հետ: Այս բոլորը լեզվաբանության պատմության համար արժեք են ներկայացնում այն շափով, որ շափով նրանք վկայում են մարդու սկզբնական հետաքրքրության շրջանակների մեջ լեզվական հարցերի՝ զգալի տեղ զբաղեցրած մասին և արտացոլում են մարդկանց նախալեզվաբանական պատկերացումները: Լեզվի էություն մեջ թափանցելու, նրա առեղծվածները բացատրելու սկզբնական միամիտ փորձերը շատ հեռու են արդի լեզվաբանական կուռ ուսմունքներից: Սակայն դրանք այն արահետներն են, որոնք մարդկային միտքը դուրս են բերել ժամանակակից լեզվաբանության լայն պողոտան: Եվ ինչպես որ այս կամ այն անհատի լեզուն ուսումնասիրողը պետք է սկսի այդ անհատի ամենավաղ թոթովանքներից, այնպես էլ լեզվաբանության պատմաբանը չի կարող լուծվամբ անցնել մարդկանց այն լեզվական պատկերացումների կողքով, որոնք գիտական լեզվաբանության թոթովանքներն են: Զի կարելի չնկատել, որ մարդուն հենց սկզբից հետաքրքրող շատ հարցեր մինչև այժմ էլ գիտական լեզվաբանության ուշադրության կենտրոնում են դրսևում, թեև լեզվական հարցերի բացատրության այդ նախնական միամիտ փորձերը նույնքան հեռու են արդի գիտական լեզվաբանությունից, որքան նախնադարյան քուրե կացին ու աղեղը ժամանակակից միջուկային դեմքից:

Սակայն ժողովրդական հեքիաթները, առասպելները, միֆերը, առածները և այլն պատմական մի դարաշրջանի շեն վերաբերում: Հանդես գալով հնագույն ժամանակներից ի վեր՝ նրանք շերտ առ շերտ աճել են, փոփոխվել, հարստացել նոր տեսակներով, կորցրել որոշ գծեր, ձեռք բերել ուրիշները: Այս առումով չի կարելի ժողովրդական բանահյուսության բոլոր արտադրանքների մասին խոսել որպես նախապատմական մարդու մտածողության արտացոլումների մասին, այլ պետք է խնամքով առանձնացնել այն բոլորը, որոնք մեզ տանում են դարերի խորքերը: Առածների ու ասացվածքների մեջ քիչ չեն այնպիսիք, որոնք խոշոր ընդհանրացման արդյունք են:

Լեզվի ծագման հարցը.— Լեզվի հետ առնչվող հեքիաթների,

միֆերի և սոսակներին սոսաջին խումբը կազմում են նրանք, որոնց մեջ խոսվում է լեզվի ծագման մասին: Լեզվի ծագումը, թաղված լինելով դարերի հնության մեջ, որպես առեղծված վաղուց ի վեր զբաղեցրել է մարդկային միտքը: Պատմական այս կամ այն դարաշրջանը մարդկանց տվյալ շրջանի իմացության աստիճանին և հասարակական գոյին համապատասխան՝ իր կնիքն է դրել լեզվի ծագման մասին ունեցած պատկերացումների վրա:

Ամենից ավելի տարածված պատկերացումների մեջ լեզուն հանդես է գալիս կամ որպես աստվածային շնորհ, կամ որևէ նշանավոր մարդու հայտնագործություն, որից էլ, ըստ այդ պատկերացումների, խոսել են սովորել մնացած մարդիկ: Լեզվի կոլեկտիվ ստեղծագործության գաղափարը դեռևս շատ թույլ սաղմեր ունի, որովհետև նախնադարյան մարդու գիտակցությամբ կոլեկտիվն ինքը կապվում էր այս կամ այն անհատի հետ՝ տոտեմի կամ նախահոր պաշտամունքի ճանապարհով:

Լեզվի ծագման ամենից ավելի հայտնի միֆերը արտացոլվել են աստվածաշնչի մեջ և կապված են հրեաների նախնական պատկերացումների հետ: Աստվածաշնչում հարցը լուծվում է ոչ միատեսակ:

Հին Կտակարանի՝ այսպես կոչված Մենդոց գրքի առաջին գլխում լեզվի ծագումը վերագրվում է իրեն՝ աստծուն, որը իբր բնության նախնական քառսի մեջ կարգ հաստատելուց, ցամաքն ու ջուրը և ցեղեկն ու գիշերը անշատելուց հետո սրանց անուններ է տվել. «Եվ աստված լույսի անունը ցեղեկ և խավարի անունը գիշեր դրեց: Եվ աստված հաստատությունը երկինք կոչեց... Եվ աստված ցամաքի անունը երկիր դրեց ու ջրերի ժողովքը ծովեր կոչեց»<sup>1</sup>:

Նույն այդ Մենդոց գրքի երկրորդ գլխում կենդանիներին ոչ թե աստված է անուններ տալիս, այլ Ադամը. «Եվ տեր աստված դաշտի բոլոր գազաններին և երկնքի բոլոր թռչուններին հողից շինեց և Ադամի առջև բերեց, որպեսզի տեսնի, թե նրանց ինչ անուն կդնի: Եվ Ադամը ինչ անուն որ դրեց շնչավոր կենդանու, այն եղավ նրա անունը: Եվ Ադամը բոլոր անասուններին ու երկնքի թռչուններին և դաշտի բոլոր գազաններին անուններ դրեց»<sup>2</sup>: Այս նույն ձևով էլ

<sup>1</sup> Աստվածաշնչի գիրք հին և նոր կտակարանաց, գիրք Մենդոց, գլուխ Ա, 5, 8, 10:

<sup>2</sup> Նույն տեղը, գլուխ Բ, 19, 20:

եվայի ստեղծվելուց հետո Ադամն ասում է. «Թող սա կին կոչվի, քանզի իր այրից առնվեց»<sup>1</sup>:

Լեզվի ծագման մասին նման կարգի առասպելներ և միջեր կան նաև այլ կարգի ժողովուրդների մոտ<sup>2</sup>:

Էստոնական մի հեքիաթում լեզվի ծագումը վերագրվում է մի իմաստուն ծերունու: Մի օր «ծերունին» ջրով լի կաթսան դնում է կրակի վրա: Ջուրը տաքանալով սկսում է զանազան ձայներ արձակել՝ բլղբլղալ, սուլել, խշշալ: Մինչ այդ ծերունին հրավեր է ուղարկում և իր մոտ կանչում բոլոր ժողովուրդներին: Ամենից ավելի արագ վրա են հասնում էստոնացիները, և ծերունին սրանց սովորեցնում է իր լեզուն: Մնացած ժողովուրդները ստանում են ջրի այս կամ այն ձայնը հիշեցնող որևէ լեզու<sup>3</sup>: Էստոնական այս հեքիաթում չի կարելի շնկատել բնաձայնական տեսության սաղմերը:

Ըստ ավստրալիական մի ավանդության՝ մարդկային ցեղերը լեզուներ են ստացել Վուրուրի կնոջ դիակն ուտելու հետևանքով, ընդ որում տարբեր լեզուները որոշակիության տարբեր աստիճան ունեն՝ նայած այն բանին, թե նրանցով խոսող ցեղերը մարմին ո՞ր մասն են կերել. ամենաորոշակի լեզուն ունեն հարավային ցեղերը, որոնք առաջինն են վրա հասել և կերել միսը. արևելյան ցեղերը կերել են փորոտիքի վերին մասը և ավելի քիչ որոշակի լեզու ստացել. ամենավերջում եկած հյուսիսային ցեղերը բավարարվել են ադիքներով և խոսում են շատ ավելի քիչ որոշակի լեզով<sup>4</sup>:

Լեզուների բազմազանության առաջացման և լեզուների փոխհարաբերության հարցերը.— Երկրորդ կարևոր հարցը, որ զբաղեցրել է մարդկային միտքը, լեզուների բազմազանության հարցն է: Այս ընդհանուր հարցը կարելի է հանգեցնել 3 մասնակի հարցի՝ 1) ինչպե՞ս են առաջացել տարբեր լեզուները իրենց տարբեր հատկություններով հանդերձ. 2) ի՞նչ փոխհարաբերության մեջ են գտնվում տարբեր լեզուները միմյանց հետ. 3) ո՞րն է լեզուներից հնագույնը:

Լեզուների բազմազանության ծագման պատճառների հարցը

<sup>1</sup> Աստվածաշունչ գիրք հին և նոր կտակարանաց, գիրք Ծննդոց, զուկ Բ, 23:

<sup>2</sup> Հմտ. Փрезер, Фольклор в ветхом завете, 1931.

<sup>3</sup> H. Steinthal, Geschichte der Sprachwissenschaft bei Griechen und Römern, Berlin, 1863, էջ 10:

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 8:

զանազան առասպելների մեջ տարբեր լուծում է ստանում: Այն առասպելները, որոնց մեջ լեզուն աստվածային պարզև է համարվում, բնականաբար հիմք են տալիս և լեզուների բազմազանության ծագման երկու կարգի մեկնաբանությունների համար. մի մասը այդ բանը դիտում է որպես աստվածային պատիժ, որպես չարիք. մյուս մասը լեզուների բազմազանությունը գնահատում է իբրև դրական երևույթ: Առաջին կարգի բացատրություն օրինակ կարող է ծառայել աստվածաշնչի մեջ տեղ գտած բաբելոնյան աշտարակաշինության առասպելը, որն իր զուգահեռներն ունի և այլ ժողովուրդների մոտ: «Եվ ամբողջ երկրի լեզուն մեկ ու խոսվածքը մեկ էր,—ասված է աստվածաշնչում:—Ու եղավ, որ երբ արևելքից չվում էին, Սենաար երկրի մեջ մի դաշտ գտան ու իյնտեղ բնակվեցին: Եվ իրար ասացին. Եկե՛ք աղյուսներ շինենք ու դրանք կրակով թրծենք: Եվ աղյուսներ նրանց համար քարի տեղ եղան, և ձյութը նրանց ցեխի տեղ եղավ: Եվ ասացին. Եկե՛ք մեզ համար մի քաղաք ու մի աշտարակ շինենք, որոնց գլուխը մինչև երկինք հասնի, և մեզ անուն ստանանք, որ չլինի թե ամբողջ երկրով մեկ ցրվենք: Եվ տերը մարդկանց որդիների շինած քաղաքն ու աշտարակը տեսնելու իջավ: Եվ տերն ասաց. Ահա մեկ ժողովուրդ են, ու ամենքի լեզուն մեկ է. և սա շինել սկսեցին. և ինչ որ շինել խորհեն, նրանց չի արգելվի: Եկե՛ք իջնենք և նրանց լեզուն այնտեղ խառնակենք, որպեսզի ամեն մեկը իր ընկերների լեզուն չհասկանա: Եվ տերը նրանց այնտեղից ցրեց ամբողջ երկրի երեսով մեկ. ու դադարեցին քաղաքը շինելուց: Սրա համար անունը Բաբելոն կոչվեց, քանզի տերը այնտեղ ամբողջ երկրի լեզուն խառնակեց և տերը այնտեղից ամբողջ երկրի երեսով մեկ ցրեց նրանց»<sup>1</sup>:

Հին հույների դիցաբանական զրույցների համաձայն՝ մարդիկ սկզբնապես միայն մեկ լեզու ունեին: Հետագայում Հերմես աստվածը մարդկությունը բաժանում է առանձին ժողովուրդների և տարբեր լեզուներ սահմանում:

Առասպելների այն խումբը, որը լեզվի ծագումը մարդկային է համարում, բնականաբար տեղիք է տալիս լեզուների բազմազանության առաջացման այլ կարգի մեկնաբանությունների: Դրանք մեծ մասամբ միամիտ բացատրություններ են և խիստ հեռու գիտական որևէ արժեքից, բայց ինքնին կարևոր են հարցադրման

<sup>1</sup> Աստվածաշնչ. գիրք Ծննդոց, գլուխ ԺԱ, 1—9:

առումով: Այդպիսին է արդեն հիշված էստոնական հեքիաթը, որ ոչ միայն բացատրում է լեզվի ծագումը, այլև փորձում է պարզել լեզուների բազմազանության առաջացման պատճառները: Համատիպ միամիտ առասպելներ փահպանվել են, ինչպես մասամբ տեսանք, նաև ավստրալիացիների և հյուսիս-ամերիկյան հնդիկների մոտ<sup>1</sup>:

Տարբեր լեզուների հատկությունների մասին նախագիտական պատկերացումները հանգում են միայն ամենամակերեսային դիտողությունների: Նկատելով լեզուների միջև եղած որոշ նմանությունները՝ մարդիկ դրանք բացատրում էին այդ լեզուներով խոսող ժողովուրդների նախահայրերի եղբայրութամբ: Միաժամանակ մարդիկ հնուց ի վեր կարողանում էին արտաքին հատկությունների տեսակետից համեմատել տարբեր լեզուները, ընդ որում տվյալ լեզվով խոսողները իրենց լեզուն համարում էին ամենակատարյալն ու ամենագեղեցիկը:

Այս կամ այն լեզվի նախնականության հարցը կապված էր մեկ ընդհանուր նախնական լեզվի՝ լեզուների բազմազանությանը նախորդելու հարցի հետ: Այդ հարցի լուծման մոտիվները տարբեր են: Այստեղ դեր են խաղացել կրոնական հավատալիքները, ազգային դժգոհումները և այլն: Այսպես, աստվածաշունչը հեղինակութուն համարող ժողովուրդները հավասարացած էին եբրայերենի՝ սկզբնական լեզու լինելու մեջ<sup>2</sup>: Այդ նույն ձևով էլ մահմեդականները այդպիսի սկզբնական լեզու էին համարում արաբերենը: Նրանց ավանդության համաձայն, որ արտացոլվել է արաբական հայտնի բարոյանի՝ «Կամուս»-ի մեջ, Ադամի որդիները տարբեր լեզուներ ունեին, որոնցով խոսում էին իրենց զավակների հետ, իսկ Ադամը գիտեր այդ բոլոր լեզուները և ամեն մեկի հետ խոսում էր նրա լեզվով. հետագայում Ադամի որդիները, ցրվելով զանազան վայրեր, իրենց հետ տարել են իրենց լեզուները:

Շատ ժողովուրդներ էլ, նույնիսկ մեզ համեմատաբար մոտ ժամանակներում, ազգային ինքնասիրությունից կամ զանազան կեղծ համոզմունքներից ելնելով, նախնական են համարել իրենց լեզուն կամ մերձակից այլ լեզուներ: Հայերի մեջ կարծիք է հայտնրվել, որ դրախտը գտնվել է Հայաստանում, և Ադամի լեզուն հայերենն է եղել<sup>3</sup>: XVI դ. երկրորդ կեսի հեղինակ Բեկանուսի կարծի-

<sup>1</sup> Հմմտ. H. Steinthal, հիշ. աշխ., էջ 9—10:

<sup>2</sup> XVII—XVIII դդ. նույնիսկ փորձեր են արվել այդ բանն ապացուցելու. այս մասին տես համապատասխան տեղում:

<sup>3</sup> Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, հ. Ա. էջ 153—164:



քով այդպիսի նախնական «դրախտային» լեզու է եղել հոլանդերենը<sup>1</sup>: XIX դ. Ֆրանսիական մի շարք «լեզվաբանների» կարծիքով՝ բրետոներենն է եղել նախնական լեզուն<sup>2</sup>: էստոնացիների հեքիաթում էստոներենը, ինչպես տեսանք, համարվում է մարդկանց խոսել սովորեցրած իմաստուն ժերունու լեզուն և այլն:

Հայտնի հույն պատմիչ Հերոդոտը իր «Պատմության» երկրորդ գրքում հաղորդում է եգիպտական փարավոն Պսամմետիսի կատարած մի փորձի մասին, որ նպատակ ուներ պարզել, թե փոյուզերեն և եգիպտերեն լեզուներից ո՛րն է ավելի հին: Պսամմետիսը հրամայում է երկու նորածին երեխայի մեկուսացնել մի տեղ այնպես, որ նրանք մարդկային ձայն չստանան: Մի քանի ամիս հետո պարզվում է, որ երեխաները արտասանում են βίχος բառը փոյուզերեն հասց է նշանակում: Պսամմետիսը սրա հիման վրա եղրակացնում է, որ փոյուզերենը ավելի հին լեզու է:

Եթե նույնիսկ Հերոդոտի հաղորդածը ճիշտ է այս կարգի փորձի մասին, ապա, այնուամենայնիվ, փորձի արդյունքների մասին նրա հաղորդածը չի կարող ճիշտ լինել. լեզուն բնածին երևույթ է, այն հասարակական ձեռք բերովի երևույթ է և կարող է յուրացվել միայն շրջապատից: Նորածին երեխաները չէին կարող որևէ բառ արտասանել՝ առանց սովորելու որևէ մեկից:

Արդյունքների տեսակետից ավելի հավաստի է թվում Շահ-Աբասի համատիպ մի փորձի մասին հայ սլամիչներ Խաչատուր Զուղայեցու և Զաքարիայի հաղորդածը<sup>3</sup>: Ըստ այդ պատմիչների՝ Շահ-Աբասը լեզուների հնության աստիճանը պարզելու նպատակով՝ մի տեղ է հավաքում տարբեր լեզուներով խոսող ծնողների երեխաների և փակել տալիս: Մեկ տարի հետո, ըստ պատմիչների, Շահ-Աբասը պարզում է, որ նրանք արձակում են այնպիսի ձայներ, որոնք ոչ մի լեզու չեն հիշեցնում:

Կենդանական «լեզվի» («լեզուների») գոյության և մարդկային լեզվի հետ նրա ունեցած փոխհարաբերության հարցը.— Հեքիաթներում և առասպելներում արտացոլում գտած երրորդ կարևոր հարցը կենդանական լեզվի գոյության և մարդկային լեզվի հետ

<sup>1</sup> Հմմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 44:

<sup>2</sup> Brache, Gr. hist., 42, էջ 23 (ըստ Աճառյանի «Լիակատար քերականության ներածության», 1905, էջ 51):

<sup>3</sup> Ն ա չ ա տ ու ը ը ր ա բ ե դ ա յ Զ ու ղ ա յ ե ց ի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 136—138 և Զ ա ջ ա ռ ի ա Ս ա ռ կ ա ա զ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 55—56:

Նրա ունեցած փոխհարաբերության հարցն է: Կարելի է ասել, որ նախամարդը գրեթե չէր կասկածում կենդանական լեզվի գոյության մասին: Նրա կարծիքով՝ ամեն կենդանի ունի իր լեզուն կամ, թերևս, կենդանիներն ունեն մեկ լեզու, ընդ որում այդ լեզուները կամ լեզուն անհասկանալի են մարդուն: Երանձին օժտված անհատներ, երբեմն էլ սովորական մահկանացուները այս կամ այն ճանապարհով կարող են հասկանալ կենդանիների լեզուն: Որոշ հեքիաթներում էլ գործն այնպես է պատկերացվում, թե կենդանիները հասկանում են մարդկային լեզուն, բայց մարդկանց հետ խոսում են ոչ միշտ, այլ հատուկ դեպքերում: Մի շարք այլ դեպքերում մարդկանց լեզուն հասկանալու և մարդկային լեզվով խոսելու հատկություն վերագրվում է միայն որոշ հրաշալի կենդանիների: Այսպես, հայկական մի շարք հեքիաթներում պատմվում է, թե ինչպես են հրեղեն ձիերը խորհուրդներ տալիս իրենց տերերին, ինչպես ծառան, օձի միս ուտելով, սկսում է հասկանալ թռչունների լեզուն, ինչպես մրջյունների թագավորը դիմում է հեքիաթի հերոսին սրա խոսած լեզվով և այլն: Հին եգիպտական հեքիաթներից մեկում պատմվում է, թե ինչպես Նոֆերկա-Պտախը, Մեռներ-Պտախ փարավոնի որդին, գտնում ու կարդում է Թոր աստծու գիրքը. արտասանելով առաջին կախարդանքը՝ «նա կախարդեց երկինքն ու երկիրը, լեռներն ու ջրերը և անդրձիբիմյան աշխարհը: Նա սկսեց հասկանալ երկնքի թռչունների լեզուն և ջրերի ձկների լեզուն և լեռների գազանների լեզուն»<sup>1</sup>:

Հնդկական «Ռաման, Լակշմանան և իմաստուն բուն» հեքիաթում բուերի մասին ասվում է հետևյալը. «Դրանք շատ խելոք թռչուններ են և գիտեն, թե ինչ պետք է պատահի մարդկանց հետ. հարկավոր է միայն հասկանալ նրանց խոսքերը: Բայց քիչ մարդիկ միայն գիտեն նրանց լեզուն: Բարեբախտաբար Լակշմանան հասկանում էր բուերի լեզուն և սկսեց ուշադրությամբ լսել, թե նրանք իրար ինչ են ասում»<sup>2</sup>: Հնդկական մի այլ հեքիաթում (ՎՄՆ լինելու է, կլիխի) պատմվում է, թե ինչպես հեքիաթի հերոսուհին, նստելով բարձր ծառի տակ, «հանկարծ լսում է, որ ծառի վրա խոսում են արծիվն ու թուփակը: Իսկ արքայադուստրը անտառում անցկացրած իր երկարատև կյանքում սովորել էր հասկանալ թռչունների ու գազանների լեզուն»<sup>3</sup>:

<sup>1</sup> Сказки и повести древнего Египта, М., 1956, էջ 110:

<sup>2</sup> Индийские народные сказки, М. 1956, էջ 57—58:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 110:

Աստվածաշնչում պատմվում է, թե ինչպես Բաղամի էջր-աստվածային կամքով սկսում է խոսել մարդկային լեզվով և իր տիրոջը կշտամբել<sup>1</sup>:

Ճապոնական «Ջգայուն ակտիվներով գլխարկը» հեքիաթում կախարդական գլխարկը դնող ծերունին հասկանում է ոչ միայն կենդանիների, այլև բույսերի զրույցն ու վեճը<sup>2</sup>:

Լեզվի էություն, դերի և հատկությունների հետ կապված հարցերը.—Ժողովրդական բանահյուսության մի այլ բնագավառի՝ առաջվածքների ու առածների մեջ արտացոլում են գտել մարդկանց պատկերացումները լեզվի բնույթի, մարդկային հասարակության մեջ լեզվի խաղաղած դերի, լեզվի ունեցած հատկությունների մասին: Լեզվական այսպիսի առածներ և առաջվածքներ առկա են համարյա բոլոր ժողովուրդների մոտ և հնագույն ժամանակներից սկսած:

Հին եգիպտական տեքստերում պահպանվել են այնպիսի ասույթներ, որոնք վկայում են ճարտասանության կարևորության և խոսքի ուժի վերաբերյալ հին եգիպտացիների ունեցած բարձր պատկերացումների մասին. «Լեզուն զենքից ուժեղ է», «Խոսքով ճարտար եղիր, և կհաղթես», «Գեղեցիկ խոսքը թանկագին կանաչ բարից լավ է», «Մարդու շրթունքները փրկում են նրան, և խոսքն ստիպում է նրա նկատմամբ բարեհաճ լինել» և այլն<sup>3</sup>:

Այս բնույթի բազմաթիվ առածներ են առկա նաև հայերի մոտ. «Թրի կտրածը կլավանա, մարդու կտրածը չի լավանա», «Ուտքով ընկնողը կելնա, լեզվով ընկնողը չելնա», «Գեշ լեզուն ասելուց սուր է», «Լեզվի ծակածը նշդարն էլ ծակիլ չի», «Լեզվի բոզը կնկա բոզից վատ ա», «Մինչև թուրը եկավ, լեզուն գլուխը կտրեց», «Տավարը կապով կկապեն, մարդը՝ լեզվով», «Թուրը մե մարդ սպանեց, լեզուն մե օռդու (բանակ)», «Լեզուն լուռ, կոնակը դուր (հանդիստ)», «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես», «Աշխրբի շինողն ու քանդողը լեզուն ա»<sup>4</sup>:

Իրի և անվան փոխհարաբերության ըմբռնումը.—Սկզբնապես մարդիկ իրի անվանումն ըմբռնում էին որպես նրա անբաժանելի մասը: Այստեղից էլ բխում էր մարդկանց հավատալիքն այն մասին, թե անվան միջոցով կարելի է ազդել իրերի վրա: Այս հավատալիքն

<sup>1</sup> Աստվածաշունչ, դիրք Ծննդոց, ԻԲ, 28—30:

<sup>2</sup> Японские сказки, М., 1956, էջ 60—63:

<sup>3</sup> Древний Восток, 1953, էջ 80:

<sup>4</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Հայկական առածանի, 1951, էջ 18:

էլ հիմք էր տալիս լեզվական կախարդանքների, օրհնանքների ու անեծքների և լեզվական արգելքների (թաբուի) համար:

Զանազան կախարդանքները, օրհնանքներն ու անեծքները մինչև վերջերս էլ լայն տարածում ունեին ժողովրդի մեջ: Շատերը հավատում էին, թե այս կամ այն կախարդանքի խոսքերը մրմըն-ջալով՝ կարելի է ազդել այս կամ այն կենդանու և իրի վրա, հեռացնել նրան կամ օգնության կանչել, շեղփացնել նրա շար ուժը կամ իր օգտին գործի դնել այդպիսին: Բառերին վերագրվում էր մոգական ուժ և իրերի վրա ազդելու կարողություն: Զանազան կախարդանքները նախապես տնտեսական բնույթ ունեին և ըստ մարդկանց հավատալիքների՝ պետք է նպաստեին երկրագործական, որսորդական և այլ կարգի գործողությունների հաջողությանը: Մոգերը և կախարդները առանձնանալով որպես առանձին դաս՝ կախարդանքներն օգտագործում են իրենց շահերի օգտին, իրենց ձեռքը վերցնում դրանց մենաշնորհը և տարբեր դեպքերի համար համապատասխան կախարդանքներ ստեղծում: Մոգական գանազան բանաձևերը լայն շափով տարածված էին հին Եգիպտոսում, Միջագետքում և այլուր: Բարեխոսքների մաս գոյություն ունեւր այն հավատալիքը, թե ամեն մի հիվանդություն կամ դժբախտություն ծագում է մի շար ոգուց, և այդ շար ոգուն քշելու համար պետք է իմանալ նրա անունը:

Կախարդանքների, օրհնանքների և անեծքների մեջ կարելի է գտնել հատուկ տեսակներ՝ նախատեսված հաջող որսի, ձկնորսության, զենքը փշացումից պահելու, որսն իր կողմը գրավելու, գանազան հիվանդությունների դեմ պայքարելու համար և այլն:

Բառ-անվանման և բառիմաստի փոխհարաբերության ըմբռնումը: Ստուգաբանության վաղ փորձերը.— Տվյալ լեզվով խոսողների գիտակցության մեջ բառ-անվանումը և բառիմաստը անխզելի միասնություն են կազմում: Բառիմաստը միշտ ներկայացնում է որոշ աբստրակցիայի ու ընդհանրացման արդյունք, որը յուրաքանչյուր տվյալ դեպքում կարող է կոնկրետանալ և մասնավորվել: Սակայն կա բառերի մի որոշակի խումբ՝ հատուկ անունները, որոնք նպատակ ունեն միայն այս կամ այն եզակի վայրը կամ անձը առանձնացնել մյուսներից: Հատուկ անունները նախապես հասարակ անուններ են եղել. և այս հանգամանքը հանդեցրել է նրանց սկզբնական (ստուգաբանական) իմաստի՝ երկրորդ պլանը անցնելուն, մթազնվելուն և աստիճանաբար զուրս մղվելուն: Հատուկ անունների ստուգաբանական իմաստի կորուստը բացա-

տրրվում է և այն հանգամանքով, որ շատ դեպքերում նրանք այլալեզու ցեղերից ու ժողովուրդներից են յուրացվում: Սկզբնական ստուգաբանական իմաստի մթազնմանը նպաստում են նաև զանազան հնչյունական փոփոխությունները: Առաջանում է մի վիճակ, երբ ժողովուրդը որոշ հատուկ անունների ստուգաբանական իմաստը դեռ դիտակցում է, երկրորդներինը գիտակցում է աղոտ կերպով, երրորդներինը բոլորովին չի գիտակցում: Պարզ է, որ նա պետք է աշխատի սեփական լեզվի տվյալներով (եթե գիտի այլ լեզու, ապա նաև այդ լեզվի տվյալներով) իմաստավորել ոչ միայն առաջին և երկրորդ, այլև երրորդ կարգի հատուկ անունները: Այլ կերպ ասած՝ ժողովուրդն սկսում է ստուգաբանել անունները իրեն մատչելի լեզվական միջոցներով: Այսպիսի ստուգաբանություն կարող են ենթարկվել նաև փոխառյալ հասարակ անունները:

Հատուկ անունների ստուգաբանությունը հնում խիստ տարածված երևույթ է եղել: Մարդիկ այդ կարգի ստուգաբանություններն օգտագործել են պատմական անցյալի վերականգնման, տվյալ անձնանունների և տեղանունների պատմությունը պարզելու համար:

Նման ստուգաբանությունները խիստ շատ են աստվածաշնչում, ընդ որում դրանց արժեքն էլ կախված է այն բանից, թե ո՞ր չափով են տվյալ հատուկ անունները կորցրել կապը իրենց ծնունդ տվող բառերի հետ: Բերենք աստվածաշնչի այս կարգի ստուգաբանություններից մի քանիսը. «Երա համար նրա անունը Բարելոն<sup>1</sup> կոչվեց, քանզի տերը այնտեղ ամբողջ երկրի լեզուն խառնեց» (Մննդոց գիրք, ԺԱ, 9). «Եվ Ադամն ասաց. Հիմա սա իմ ոսկորից ոսկոր և իմ մարմնից մարմին է. թող սա կին (եբր. 'iššāh) կոչվի, քանզի իր այրից (եբր. iš) առնվեց» (Մննդոց, Բ, 23). «Եվ Ադամ իր կնոջ անունը Եվա (եբր. Havvah) գրեց, որովհետև բոլոր կենդանություն (եբր. hāy) ունեցողների մայրը նա էր»<sup>2</sup> (Մննդոց, Դ, 1). «Ահա դու հղի ես ու որդի պիտի ծնես և նրա անունը Իսմայել (եբր. Jišmā'el) դնես, քանզի տերը լսեց (եբր. yišmā' el) քո տառտպանքը» (Մննդոց, ԺԶ, 11) և այլն:

Համատիպ ստուգաբանություններ և մեկնություններ հանդիպում են նաև հին հնդկական, հին եգիպտական, հին հունական աղբյուրներում: Nārāyana «Նարայի սերունդ» անձնանունը հին

<sup>1</sup> Եբրայերեն ba'al «խառնել» բառից:

<sup>2</sup> Հմտ. Louis H. Gray, Foundation of Language, 1950, էջ 420:

հնդկական տեքստերից մեկում ստուգաբանվում է որպես «ջրով (uāra-) գնացող (yāra) ջրագնաց»: Հին եգիպտական «Փարավոն Քուֆուն և կախարդները» հեքիաթում Ուեբերկաֆ (բառացի՝ «ուժեղ նրա կան»), Սահուրա («հապաղել» բայից) և Կեկու («խավար» բառից) փարավոնների անունները մեկնվում են նրանով, որ Խսիդա աստվածուհին առաջինին՝ ծնվելու ժամանակ ասել է. «Ուժեղ մի՛ լինիր մորդ արգանդում, Ուեբերկաֆ», երկրորդին՝ «Մի՛ հապաղիր մորդ արգանդում, և թո՛ղ Սահուրա լինի քո անունը», երրորդին՝ «Մի՛ մնա արգանդի խավարում, և թո՛ղ Կեկու լինի քո անունը»<sup>1</sup>. Հունական մտքի՝ լեզվական երևույթների նկատմամբ վերաբերմունքի առաջին արտահայտությունը ևս անունների մեկնությունն է, ձգտումը՝ ցույց տալ, որ անունն արտահայտում է իրի բնույթը: Այստեղից էլ առաջանում են ստուգաբանությունն աշխն փորձերը Հոմերոսի և Հեսիոդոսի մոտ<sup>2</sup>:

Ստուգաբանություններով լի են նաև մեր պատմիչների գործերը: Հմմտ. Խորենացու մոտ. «Եւ զԱրծրունիսդ գիտեմ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին... Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս, որ վարժանի թագատրի պատրաստէր զըմպելիսն, որ սքանչելի իմն դիպեալ եղև ըստ գործոյն և անունն, քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և ի համեղ գինեաց, ունէր և կոչումն անուանն գին... Ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ զենարանաց, և զՀաւունիսդ՝ բազէակիրս և բաղէակալս...»<sup>3</sup>:

Հայկական «Սասունցի Դավիթ» էպոսը ևս նյութ է տալիս այդպիսի ստուգաբանությունների համար: Այստեղ պատմվում է, թե ինչպես Դավիթը իրեն վերք հասցրած աղջկան՝

«...քաշեց ճըվտեց, թալեց սարու տկու գեղ.

Ու զըդ գեղի անուն դրեց Ճըվտիս-Ճապկիս.

Ու էդ գեղ էլ հար հըմկա՝

Հանդ է Ջըղուրա բերան

Ու անուն լե՝ Ճապկիս»<sup>4</sup>:

<sup>1</sup> Сказки и повести древнего Египта, 1956, էջ 49:

<sup>2</sup> Հմմտ. L. Lersch. Sprachphilosophie der Alten, III, 1948.

<sup>3</sup> Մ ո վ ս ի ս ի Խ ո Ր Ե Ն Ա Ս Ե Ն Յ Պատմութիւն հայոց, 1913, էջ 111:

<sup>4</sup> Գ. Ս ր վ ա ն ձ ա տ յ ա ն ջ, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 170:

Ա

**ՍՏԱՏԻԿ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ**

(Հին լեզվաբանություն—լեզվաբանական գիտելիքների  
սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջը)

## ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆ

(Հին դարեր)

### ԱՊՈՍՏԵՐԻՈՐԻՍՏԱԿԱՆ ԻԶՈՒՅԱՑԻՈՆԻԶՄ

#### ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվաբանական ինֆնուրոյն կենտրոնների գոյացման նախադրյալները և պայմանները.— Անցումը անդասակարգ հասարակությունից դեպի դասակարգաչինը նշանավորվում է կուլտուրայի բնագավառում կատարվող մի շարք կարևոր փոփոխություններով: Դասակարգային հասարակության առաջին տիպը ստրկատիրությունն էր: Ստրկատիրական հասարակությունը հին Արևելքի երկրներում՝ Եգիպտոսում, Միջագետքում, Հնդկաստանում և Չինաստանում երևան է գալիս դեռևս մեր թվագրությունից առաջ IV—II հազարամյակներում: Սակայն դասական ձևով այն արտահայտվել է անտիկ աշխարհի երկրներում՝ Հունաստանում և Հռոմում. Հունաստանում ստրկատիրության ծաղկման շրջանն ընկնում է V—IV դդ. մ. թ. ա., Հռոմում՝ II դ. մ. թ. ա.— II դ. մ. թ.:

Չնայած այն բանին, որ ստրկական աշխատանքը ցածր արտադրողականություն ուներ, այնուամենայնիվ, ստրուկների մեծաթիվության և նրանց աշխատանքի էթանության պայմաններում գոյանում էր հավելյալ արդյունքի բավականաչափ մեծ մի զանգված: Միաժամանակ աշխատանքի երկրորդ մեծ բաժանմամբ՝ արհեստի անջատմամբ երկրագործությունից՝ առաջանում է անմիջապես փոխանակության համար նախատեսված արտադրություն, որ իր հերթին նպաստում է տնտեսության առաջադիմությանը: Հովելյալ արդյունքի բավականաչափ մեծ վանգվածի գոյացումը



նպաստում է կուլտուրայի ծաղկմանը, գրականության, գիտության ու արվեստի զարգացմանը: «Միայն ստրկությունն էր,—գրում է Էնգելը,—որ ավելի մեծ շահով հնարավոր դարձրեց աշխատանքի բաժանումը հողագործության և արդյունաբերության միջև և դրանով պայմաններ ստեղծեց հին աշխարհի կուլտուրայի՝ հունական կուլտուրայի ծաղկման համար: Առանց ստրկության չէր լինի հունական պետությունը, հունական արվեստն ու գիտությունը. առանց ստրկության չէր լինի նաև հռոմեական պետությունը: Իսկ առանց Հունաստանի և Հռոմի դրած հիմքի՝ չէր լինի նաև ժամանակակից Եվրոպան»<sup>1</sup>: Գիտության և գրականության զարգացումը բնականաբար ենթադրում է գրի ստեղծում ու զարգացում: Գրի ու գրականության դպրոցական ուսուցումը, հին տեքստերի բանասիրական ուսումնասիրությունը, նրանց դասակարգումն ու գրադարանային կատալոգավորումը շէին կարող անհրաժեշտարար առաջ շքերել լեզվաբանական-բանասիրական գիտելիքներ:

Ստրկատիրական հասարակությունը, ինչպես ասացինք, առաջին դասակարգային հասարակությունն է: Դասակարգային հասարակությունը բնականաբար ենթադրում է պետությունների գոյացում: Ստրկատիրական և հետագայում ֆեոդալական պետության գոյությունը իր հերթին առաջ է բերում լեզվաբանական աշխատանքի որոշ անհրաժեշտություն: Ամենից առաջ պետության և կրոնական դասի համար, քաղաքական կյանքում, հարկավոր են բավականաչափ զարգացած, դրագետ և ճարտարախոս անձինք: Երկրորդների միջև եղած դիվանագիտական հարաբերությունները, տարբեր լեզուներով փաստաթղթերի կազմումը և թարգմանչական գործի անհրաժեշտությունը գործնական պահանջ են առաջադրում օտար լեզուների ուսուցման համար: Մայրենի լեզվի և օտար լեզուների հմուտ իմացումը պետական և կրոնական գործի համար անհրաժեշտություն էր:

Այսպիսով, ճարտասանական հմտությունների մշակումը, հմուտ գրագիտությունը և օտար լեզուների իմացությունը դառնում են հին աշխարհի լեզվաբանական գիտելիքների հիմքը: Պետության, տարբեր մասերի միավորման պահանջը իր հերթին նպաստում էր գրության միասնականացման պահանջին և լեզվաբանական գիտելիքների զարգացմանը: Զինական լեզվաբանության զարգացումը մեծ շահով կապված էր երկրի միավորման և դրա առաջացրած ան-

<sup>1</sup> Ֆ. Էնգելս, Անտի-Պյուերինգ, Երևան, 1952, էջ 231:

-ժգոթինաստիտիեզլ յմյոսնրսոս ւմզդրանզլ մտսոս ‘(ւնզլ վզզմտր) մյոսնրսոս զտըրնզտնմզզըզմ ղ վմն յրսմզժտմզի ղզ ղտմլլ տզզ ղտյոնրսոս ղտիոնսմտն ղզ զոթիտի ղզզմսզտիտնվյոզտ ժըզսմս ‘մմզղ -ժվլզտվն ղտիտիեզլ մսնսժ ղրտ ժըզ յրսմսիտվր ժըզյր հտտ ղտի -ըտ ոնր— ղրսմնսըտժտիեզլ ղտիտըտոտստոս-կվտիտնվկ (I  
 •մմզղ

-հտոզտ Լոնդտզջ վմզղժվլզտվն ղտիտըտժտիեզլ Լզղնտղջըտտոս չ վլզմտի •մմզտվտ րս ղըրնզժ վժըտստոլՆտ ղտիտըտժտիեզլ վղտնմՆ -տըղզ ոտ Լզղնտմզհտտտ Իստմզհ Ետտ չ վլզմտի Եվմզղջոտոտ յրսղմզի— մնզտվտ րս ղըրնզժ վլլըտտոլՆտ ղտիտըտժտիեզլ

•մզղնսըզր  
 րս մզղըզտոմլո Խվտտմրսմ ղտըրնսմվոտղըրսոս ւմզդրանզլ ղվջըտտոտ ղզ յրսիիտՆր ‘յրսղոտջ ղզ ղտյոնտնմտն զզր փտՆտղտիտիտմ մմզղըզրսմըրսոզտ ղտըրնսմվոտղըրսոս փրեզլ ‘ըվոտր ղտըրնտիստ վմզղըզտոմլո ղրսմնսղժըզ վտիտըտժտիեզլ ղտիտիոմ Լզոսոլ չ վլզմ -տի ղզնմտ ղ ‘մմզղըզսմտղզի ղրսմնսղժըզ վտիտըտժտիեզլ ղտիտղզվ ղ ղտիտղրսս ‘ըտիտիկնըզ ղզ յրսզմսն ղզնմտ յրստտսն ոտ •մմզի -ն Ա •թ յր ղըրնզ Եվմնիո •ն Ա •տ •թ •ղ (Ճ լնրտըրնսսոտտմզի տոմվ ղրտվր Լզմտրտջ ղվոմտնտն չ վլզմտի մժըտտոլՆտ ղտիտղզմսն ղտիտըտժտիեզլ Եսիմտս յրսնըսմս ‘յրսժտզտնժվղ ղ յրստտտիվնզ ղվժ մըրնզժ վժըտտոլՆտ ղտիտըտժտիեզլ չ ղվոմտնտն ղ ղիզտմզի ղզժ վրզտոմլո վիտՆսմս վր ղ ղզդրս ղրսմըրսզոթիմիտոլոյրտտ ղտիտղ -զմսն ղտիտնվյոզտ մմզղըժվլզտվն ղտիտըտժտիեզլ •ըվոտր ղտըրնսմ -սն վմզղժըրսոս Խվտտրզտոմլո ղտիտըտժտիեզլ ղտիտիոմ Լզոսոլ վլզմտի վժ ողսզն յրստտսն ոտ •մմտն Ա •թ յր ղըրնզ Եվիտմ -յրտմտնտջ ԱI •տ •թ յր (I •տտսն ղսիմզ ղտյոնտնմտն վմզղժըրսս -ոս ղտիտըտժտիեզլ վղտնմՆտըղզ Եսիիմտղըժ Լզմզմմտս չ վլզմ -տի— մնզղիտտն ղտրնտնտն վնզլլըրսոս ղտիտըտժտիեզլ

•նոտր Լրսջոմվր Եղտմղ ոզտմս ոմլոտն ղզ ոզնղտջ Լոտ ‘Եվմզղժըրսոս ղտիտմիսոմվլմի յրսիտոն -ըտ ղզժ ողսզն մմզղժվլզտվն ղտիտիեզլ ղրտիտլլ •մղտրնտնմտն վմզղժվլզտվն ղտիտիեզլ ղտղ ղզ յրստտտոտղ ‘սնմզիվժմզի ‘մմզղըրնսմը -րսոզտ ղտնտղտն ղտիտըտժտոյրտմս ղ ղտիտըտժտնտրվ •մղտրնտնզ վմզղմտիտնտն Նսմս ղտիտըտժտիեզլ չ յրսղնզեղտջ ղզզմստՆզրոմջ -ըտ մյոսնտնմտն վմզղժըրսոս ղտիտմիսոմվլմի ‘ոզիտոնմզի

•յրսղտնմՆ ղտըրնստզտոմվտ վմզղ  
 -ըրսմըրնսմզժտոմջ ղտիտոտնսզժ ղզնմտ ղտզջ վմզղժվմտի ղտիտնվր

ների անհրաժեշտ համեմատութեամբ հանդերձ և ճարտասանական-ոճաբանական ուսմունքները:

2) Ֆիլոլոգիական լեզվաբանութիւն.—Այս անվամբ մենք կոչում ենք ֆիլոլոգիական աշխատանքի այն բնագավառները, որոնք սերտորեն առնչվում են լեզվի ուսումնասիրութեան հետ: Սրան են վերաբերում նախ՝ հենց գրերի ստեղծումը, ապա՝ հին տեքստերի լեզվական մեկնութիւնները՝ հին գրավոր լեզուների առանձնահատկութիւնների անհրաժեշտ բացատրութեամբ հանդերձ, բարբառագիտական տեղեկութիւնները, բանաստեղծական աշխատանքի կարիքները (հանգաբանութիւն, բանաստեղծական լեզվի առանձնահատկութիւնների ուսումնասիրութիւն), տեքստերի կետադրական մշակումը, խմբավորումն ու գրադարանային կատալոգավորումը, հին տեքստերի ճիշտ վերծանութեան հարցերը:

3) Փիլիսոփայական լեզվաբանութիւն (օնոմատիստիկա)<sup>1</sup>.— Այս անվամբ մենք կոչում ենք այն բոլոր կարգի լեզվական հարցերը, որոնք շոշափվում են իմացարանական-տրամաբանական աշխատանքի հետ կապված: Սրան են վերաբերում անունների ծագման, անունների և իրերի փոխհարաբերութեան, այլև լեզվի ծագման նախնական որոշ տեսութիւնները: Քանի որ այստեղ հիմնականը անվան հետ կապված պրոբլեմներն են, ուստի և այս շրջանի փիլիսոփայական լեզվաբանութիւնը օնոմատիստական ենք կոչում:

Հին աշխարհի ստեղծած լեզվաբանական անկախ դիսցիպլիններն էին բառարանագրութիւնը և քերականութիւնը:

1) Բառարանագրութիւնն ստեղծվում է մասամբ դիդակտիկ-ճարտասանական, մասամբ էլ ֆիլոլոգիական լեզվաբանութեան պահանջներով: Հիերոգլիֆական և սեպագրական գրութիւն ունեցող ժողովուրդների մոտ այն զգալի շափով կապվում է գրերի օգտագործման, ուսուցման և նորմավորման հետ: Մնացած դեպքերում բառարանագրութեան ստեղծումը կապված էր հին տեքստերի բանասիրական ուսումնասիրութեան, այն է՝ արխայիկ, բանաստեղծական և բարբառային անհասկանալի բառերի բացատրութեան կարիքի հետ:

2) Քերականութիւնն ստեղծվում է մասամբ դիդակտիկ-ճարտասանական, մասամբ ֆիլոլոգիական, մասամբ էլ փիլիսոփայական լեզվաբանութեան (օնոմատիստիկայի) պահանջներով: Քերա-

<sup>1</sup> Հուն. ὄνομα «անուն» բառից:

կանության հարցերը դիդակտիկ-ճարտասանական լեզվաբանության մեջ անխուսափելիորեն արծարծվում էին մայրենի և օտար լեզուների ուսուցման, այլև ճարտասանական հմտությունների մշակման, իսկ օնոմատիստական լեզվաբանության մեջ՝ իմացաբանական և տրամաբանական հետազոտությունների հետ կապված: Սակայն դրանք լուկ օժանդակ դեր կատարեցին. քերականության՝ որպես անկախ դիսցիպլինի ձևավորումը պարտական էր ֆիլոլոգիական լեզվաբանությանը: Այդ պատճառով էլ քերականությունը հնում ակնհայտ ֆիլոլոգիական բնույթ ունեւր և ներկայացնում էր ֆիլոլոգիական բոլոր գիտելիքների շտեմարանը: Հետագայում միայն այն նեղանում է՝ դառնալով լեզվական դիսցիպլին, ապա և լեզվաբանության բաժին: Ենթաշրջանի վերջում քերականության մեջ բուն լեզվական գիտելիքներն արդեն ընդգրկում էին հետևյալ բաժինները՝ ա) «տառերի» ուսմունքը կամ հնչյունաբանությունը, բ) ձևաբանությունը, գ) բառակազմությունը, որ հանդես էր գալիս նախորդի հետ միասին, դ) շարահյուսությունը, այլև ե) կետագրությունն ու զ) ուղղախոսությունը (ներառյալ և վերծանությունը՝ հմուտ ընթերցանությունը): Ուղղագրական հարցերը ֆիլոլոգիական առումով առանձին սրություն չունեին, այլ կապվում էին մայրենի լեզվի և դրաճանաչության ուսուցման հետ. դրանք բուն քերականության մեջ մուտք են դործում մասամբ քերականության՝ դպրոցական ուսուցման առարկա դառնալով, մասամբ էլ զրուվոր և բանավոր խոսքի տարբերության հետագա խորացմամբ:

Այս ենթաշրջանում ոչ անկախ կերպով գոյություն ունեին արդեն մի շարք այլ լեզվաբանական դիսցիպլինների տարրերը. 1) բարբառագիտությունը բխում էր ֆիլոլոգիական լեզվաբանության պահանջներից և կազմում էր մասամբ բառարանագրության, մասամբ էլ քերականության նյութը: 2) Ոճաբանությունը բխում էր դիդակտիկ-ճարտասանական, մասամբ էլ ֆիլոլոգիական լեզվաբանության պահանջներից և արծարծվում էր հիմնականում ճարտասանության մեջ. մինչև XVIII դ. ճարտասանությունը փոխարինում է ոճաբանությանը, որը որպես անկախ բնագավառ գոյություն չուներ. XVIII դ. էլ այդ երկու հասկացությունները դեռ շփոթում են: 3) Սաուգաբանությունը բխում էր մասամբ փիլիսոփայական լեզվաբանության (օնոմատիստիկայի), մասամբ էլ ֆիլոլոգիական լեզվաբանության պահանջներից՝ հանդես գալով փիլիսոփայական և քերականական ու բառարանագրական աշխատությունների մեջ: 4) Ընդհանուր լեզվաբանության հարցերը (անվան և իրի, բառի-



ների հետ ունեցած հարաբերությունների մեջ օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը, հին տեքստերի ուսումնասիրությունը, սխտեմավորումն պահպանումը, այդ տեքստերի վրա կատարվող բանասիրական աշխատանքը,—ահա այն շարժառիթները, որոնք հին եգիպտացիներին ստիպում էին լրջորեն զբաղվելու լեզվական հարցերի ուսումնասիրությամբ:

Եգիպտական գրերը.—Ինչպես կարծում են, եգիպտական գրերը հանդես են եկել մ. թ. ա. IV հազարամյակում, թերևս նույնիսկ ավելի վաղ և կիրառության մեջ են եղել մինչև մ. թ. III դարը: Սկզբնապես դրանք փորագրում էին քարերի վրա, բայց հետագայում՝ պապիրոսի գյուտից հետո, գրում էին պապիրոսների վրա և փաթեթներ կազմում: Գրի ուղղությունը տարբեր էր՝ վերևից ներքև, աջից ձախ և ձախից աջ. ընթերցողը պետք է կողմնորոշվեր դեմքերի ուղղությանը նայելով:

Սկզբնապես եգիպտական գրերը պատկերագրական-դադա-փարսզրական բնույթ ունեին: Աստիճանաբար այդ նշաններն սկսում են գործածվել հնչյունական արժեքով, այսինքն՝ տվյալ իմաստն արտահայտող նշանը սկսում է կիրառվել նաև այն դեպքերի համար, երբ հանդիպում էր նույն հնչյունակամայլեքսը: Այս բանը հեշտանում էր նրանով, որ եգիպտացիներն ընդհանրապես ձայնավորները չէին նշանակում:

Այսպիսի համագիր իմաստները տարբերելու համար եգիպտացիները գործածության մեջ են մտցնում այսպես կոչված որոշիչները (դետերմինատիվները), այսինքն՝ տվյալ նշանի կողքին դնում են մի այլ նշան, որը ցույց է տալիս, թե գաղափարների կամ իրերի ո՛ր խմբին է պատկանում տվյալ նշանի արտահայտած իմաստը: Եգիպտացիները գործածում էին երկու, երեք և շորս բաղաձայն արտահայտող նշաններ, ավելի ուշ՝ նաև մեկ բաղաձայն արտահայտող նշաններ: Այս վերջինները ներկայացնում էին եգիպտական այբուբենը՝ բաղկացած 24 տառից, որոնցով գրում էին հիմնականում հատուկ անունները. եգիպտական հիերոգլիֆների վերծանությունն սկսվեց այսպիսի նշաններից:

Ժամանակի ընթացքում փոխվում է նաև եգիպտական նշանների ձևը: Բուն հիերոգլիֆային նշանների թիվը 750-ից անցնում էր: Նշանների աստիճանական պարզեցման և հեշտացման ճանապարհով գոյանում է այսպես կոչված հիերատիկ գիրը, որ ունի շուրջ 600 նշան, ապա VII դ. մ. թ. ա.՝ դեմոտիկ գիրը, որ ավելի արագագիր նշաններից է բաղկացած:

## 2. ԳԻՒԱԿՏԻԿ ԵՎ ՖԻԼՈՍՓԻԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2. Եգիպտական գրեթի ուսուցումը.— Եգիպտական գրությունն ասարբեր տեսակների ուսուցումը հեշտ գործ չէր, մանավանդ որ հին շատ նշաններ աստիճանաբար դուրս էին դալիս գործածությունից: Միաժամանակ փոփոխություն էր ենթարկվում նաև լեզուն<sup>1</sup>, և անհրաժեշտ էր դառնում մեկնաբանել հին տեքստերը: Այս սլափաճառով էլ եգիպտական դպրոցներում մեծ տեղ էր տրվում եգիպտական գրի ուսուցմանը՝ տեքստերի ճիշտ ընթերցմանը և ճիշտ ու գեղեցիկ գրելուն:

Եգիպտական դպրոցները գոյություն ունեին պետական հիմնարկներին ու տաճարներին կից և պատրաստում էին պետական աստիճանավորներ ու քրմերի դասին պատկանող անձեր: Դպրոցներում սովորում էին 5—12 տարեկան երեխաները՝ ծանոթանալով զանազան գիտությունների: Գոյություն ունեին և բարձր տիպի «գրիչների դպրոցներ», որոնք կոչվում էին «կյանքի տներ»:

Մայրենի լեզվի այլ կողմերի ուսուցումը.— Դպրոցական ուսուցման մեջ մեծ տեղ էր արվում մայրենի լեզվին: Այդ ուսուցումը չէր սահմանափակվում միայն եգիպտական գրի ուսուցմամբ, այլ բանավոր և գրավոր խոսքի դարգացման ուղղությամբ: Խոսքի աշխատանքով, ճարտասանական հմտությունների մշակմամբ: Դպրոցն ավարտողը պետք է յուրացներ եգիպտական գրությունն սիստեմը, կարողանար առոպանությունը ու ճիշտ ընթերցել և ճիշտ ու գեղեցիկ գրել, յուրացներ տարբեր կարգի փաստաթղթեր կազմելու եղանակները, հմտանար ճիշտ և տպավորիչ խոսելու մեջ: Թե որքան կարևոր էր համարվում ճարտասանությունը, այդ երևում է եգիպտական հիշյալ առածներից ու ասացվածքներից:

Օտար լեզուների ուսուցումը.— Բացի մայրենի լեզվից, աշակերտներից ոմանց սովորեցնում էին օտար լեզուներ՝ նրանցից թարգմանիչներ և դեսպաններ պատրաստելու նպատակով: Ուսուցվող օտար լեզուների շարքում կարևոր տեղ էր տրվում բաբելերենին: Ամենխոտեպ IV-ի մայրաքաղաքի ավերակներում գտնվել են ձեռնարկներ, որոնցով եգիպտական պաշտոնյաները սովորում էին ակկադական գրությունը: Ակկադական գրության ու լեզվին ծա-

<sup>1</sup> Հին գրական լեզուն, սկիզբ ստնելով հին թագավորության շրջանից, ծաղկում էր ապրում միջին թագավորության շրջանում. նոր թագավորության սկզբնական շրջանում այն դեռևս գործում էր, թեև արդեն բավականաչափ տարբերվում էր խոսակցականից: Էինաթոն փարավոնի (1410—1402) օրոք այն տեղի է տալիս նոր գրական լեզվին:

նոթանալու հետ միասին եգիպտացիները ծանոթանում են նաև ակ-  
կադական ֆիլոլոգիայի եղանակներին:

**Լեզվաբանական գիտելիքների զարգացումը.**— Հասկանալի է,  
որ եգիպտական բարդ գրության ուսուցումը, մայրենի և օտար լե-  
զուների դասավանդումը, ճարտասանական հմտությունների պատ-  
րաստումը, այլև հին տեքստերի ուսումնասիրությունը, «գրքերի»  
դասավորումն ու կատալոգիզացիան պահանջում էին լեզվաբանա-  
կան որոշ անհրաժեշտ գիտելիքներ և բանասիրական աշխատանքի  
հմտություն: Բնական է ենթադրել, որ եգիպտական ուսուցիչները  
աշակերտներին գիտելիքներ էին հաղորդում եգիպտական խոսքի  
կառուցման առանձնահատկությունների մասին, կատարել էին  
տալիս ճարտասանական վարժություններ, ուղղում քերականական  
ու ոճական սխալները, նշում ճիշտ և նախընտրելի քերականական  
ձևերն ու արտահայտությունները, հարստացնում աշակերտների  
բառապաշարը: Միաժամանակ եգիպտական դրի մեջ առկա էր և  
այլրենական գրության սիստեմ, որ աստիճանաբար ստեղծվելով՝  
կիրառվում էր հատուկ անունների գրության համար: Այսպիսի  
գրության ստեղծումն ու կիրառումը պահանջում էր հնչյունական  
որոշ գիտելիքներ, մանավանդ որ այդ այլուրեքնն օգտագործվում  
էր նաև օտար հատուկ անունները գրելու համար: Օտար լեզուների  
ուսուցումը ևս չէր կարող չնպաստել եգիպտացիների լեզվաբանա-  
կան մտահորիզոնի լայնացմանը: Եգիպտական դրի մեջ «որոշիչ-  
ների» (դետերմինատիվների) կարևոր դեր խաղալը պահանջում էր  
դասակարգել իրերն ու հասկացությունները և նպաստում էր իմաս-  
տարանական գիտելիքների զարգացմանը:

Եգիպտական տեքստերում արդեն հանդիպում են բառարա-  
նագրական տիպի աշխատություններ: Միջին թագավորության վեր-  
ջում հանդես է գալիս մի յուրատեսակ տեղեկատու-տերմինարա-  
նական բառացանկ, որ պարունակում է 300-ից ավելի անվանում-  
ներ՝ տարբեր սեռակ յուղերի, թռչունների, կենդանիների, բույսե-  
րի, հացի, հացահատիկի, մարմնի մասերի, ինչպես և աշխարհա-  
գրական անուններ՝ եթովպական ամրոցների և վերին եգիպտական  
քաղաքների<sup>1</sup>: Նոր թագավորության վերջերից մնացել է մի հանրա-  
գիտական բառացանկ, որ ներկայացնում է այն ժամանակվա աշ-  
խարհի տերմինաբանական տեսությունը և որը լայն տարածում է  
ունեցել 21—22-րդ դինաստիաների շրջանում. այն կազմվել է  
«կյանքի տան» գրիչ Ամենեմիպետի կողմից<sup>2</sup>:

<sup>1</sup> Всемирная история, 1, 1955, էջ 280:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 286:



Այսպիսով, լեզվաբանական գիտելիքների զարգացմանը նպաստող երկու բնագավառ կար՝ դպրոցական պրակտիկան և հին տեքստերի վրա կատարվող բանասիրական աշխատանքը, որոնց դերի մասին ավելի մանրամասն կիրոսենք այլ երկրների կապակցութեամբ: Եգիպտական տեքստերը լեզվաբանական գիտելիքների առումով համեմատաբար ավելի քիչ տեղեկութուններ են տալիս, քան ասուրա-բաբելական արձրուրները:

## II. ՇՈՒՄԵՐԱ-ԱԿԿԱԳԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԳԶԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվական գիտելիքների զարգացման պատճառները.— Միջագետքը մարդկային հին քաղաքակրթության երկրորդ գլխավոր օրրանն է, և որոշ գիտնականներ նրան եգիպտականից ավելի մեծ հնութուն են վերագրում:

Ասուրա-բաբելական լեզվաբանության զարգացման գլխավոր ազդակները նույնն էին՝ գրության բարդ սիստեմի յուրացման դժվարությունները, լեզվի դրավոր ու բանավոր ուսուցումը դպրոցում և հին տեքստերի վրա կատարվող բանասիրական աշխատանքը:

Գրության սիստեմը.— Միջագետքի ամենավաղ բնակիչները շումերներն էին, որոնց լեզվական պատկանելիության (ցեղակցության) հարցը լեզվաբանության կողմից վերջնականապես չի ճշտված: Շումերական սկզբնական գիրը նույն բնույթն ուներ, ինչ եգիպտականը, այսինքն՝ պատկերագրական-գաղափարագրական էր: Շումերները գրում էին կավե տախտակների վրա և ապա թրծում: Շումերական սկզբնական գիրը աստիճանական էվոլյուցիայի ճանապարհով ստանում է այն տեսքը, որ հայտնի է սեպագրություն կամ բեռագրություն անվամբ: Այս անունը ծագել է այն պատճառով, որ փայտիկով գրելու ժամանակ գրողը նախ այն սեղմում էր կավի վրա, ապա ավելի թեթևացնում սեղմումը. ստացվում էին սեպածև նշաններ: Ժամանակի ընթացքում էվոլյուցիա են ապրում ոչ միայն գրածները՝ կորցնելով իրենց սկզբնական պատկերագրական բնույթը և վերածվելով վերացական գրածների, այլև այդ գրածների կիրառությունը: Շումերներն սկսում են այս կամ այն սեպագիր նշանը կիրառել ոչ թե տվյալ իմաստը, այլ տվյալ հնչու-

մը նշանակելու համար: Այսպես, օրինակ, երկնքի նշանը, որ կարգացվում էր ձՈՒ, սկսեց կիրառվել այն բոլոր դեպքերի համար, երբ հարկավոր էր նշանակել ձՈՒ վանկը: Այս բանը հնարավորութուն տվեց շումերներին նշանակելու ոչ միայն նյութական, այլև քերականական իմաստները, արտահայտել դերանունները, թծանցները, վերջավորությունները: Սակայն, ի տարբերություն հին եգիպտացիների, որոնք հասան զուտ այբբենական-հնչյունական գրին, շումերները այդպիսի քայլ չկատարեցին՝ կանգ առնելով վանկահնչյունական գրի ճանապարհին<sup>1</sup>:

Շումերական գրի այս հնչյունական կիրառությունը ոչ միայն չվերացրեց գրության բարդությունը, այլև ստեղծեց նոր բարդություններ: Հարկավոր է նկատի առնել, որ յուրաքանչյուր լեզվում գոյություն ունեն համանիշ ու նույնանիշ և համանուն բառեր: Այսպիսով, միևնույն սեպագիր նշանը մերթ կարող էր արտահայտել միայն մեկ գաղափար՝ մենիմաստ լինել, մերթ էլ մեկից ավելի գաղափարներ՝ բազմիմաստ լինել: Համապատասխանաբար հնչյունական արժեքով օդտագործվելիս որոշ նշաններ կարող էին նշանակել միայն մեկ հնչակոմպլեքս՝ լինել մենահունչ, մյուսները կարող էին նշանակել մեկից ավելի հնչակոմպլեքսներ՝ լինել բազմահունչ: Շումերներն սկզբնապես գրում էին աջից ձախ, ԿԱԿԱ սկսում են գրել ձախից աջ:

Մ. թ. ա. III հազարամյակի կեսերին Միջագետքը նվաճվում է ակկադական (ասուրա-բաբելական) ցեղերի կողմից, որոնք տեր են դառնում նաև շումերների կուլտուրական նվաճումներին, այդ թվում և նրանց գրությանը: Սակայն ակկադական ցեղերն ստիպված էին շումերական գրության սիստեմը հարմարեցնել իրենց լեզվին: Այս բանը է՛լ ավելի դժվարացրեց սեպագրերի ուսուցումը, որովհետև ակկադացիները հարմարեցումը կատարեցին ոչ այնքան հետևողական կերպով: Սկզբնապես նրանք պահպանում էին նշանների շումերական հնչումը համապատասխան վանկերը նշանակելու համար, բայց հետագայում սկսում են դրանք օգտագործել նաև բաբելական հնչմամբ: Ստեղծվում է գրության մի բավական խառը սիստեմ, որ պահանջում էր ծանոթություն նաև շումերերենի հետ և տեքստի ընթերցումը հաճախ կամայական էր դարձնում: Սեպագրությունը եգիպտական գրի համեմատությամբ ուներ այն առավելությունը, որ նշանակվում էին և ձայնավորները՝ շնորհիվ

<sup>1</sup> Հմտ. Վ. Лоукотка, Развитие письма, М., 1950, էջ 35:



նիշների բառարանները: Սրանց մեջ ի մի են հավաքված ասուրական այն բառերը, որոնք հոմանիշների արժեք ունեն:

Բառացանկերի երրորդ տիպը հիշեցնում է այժմյան մասնագիտական բառարաններն ու տերմինարանները: Այդ բառացանկերում բառերը խմբավորվում են ըստ նշանակության՝ կենդանիները իրենց զանազան տեսակավորումներով (թռչուններ, ձկներ, միջատներ և շորքոտանիներ), բույսերը և նրանց սերմերը (դեղաբույսերն առանձնացվում են որպես հատուկ խումբ), քարերը, բրոնզից և քարից պատրաստված առարկաները: Կան աշխարհագրական անունների բառացանկեր, սոստղաբաշխական-սոստղագիտական տերմինների ցանկեր և այլն:

Վերջապես, զգալի տեղ են բռնում գրանշանների զանազան ցանկերը, որոնք նպատակ ունեն նպաստել գրովթյան յուրացմանը և ծառայում են որպես դասագրքեր: Գրանշանները խմբավորվում են տարբեր սկզբունքներով՝ ըստ գրանշանների արտաքին նմանության, ըստ նշանների շումբերական արտասանության (նման կամ նույնական հնչում ունեցողները առանձնացվում են որպես հատուկ խմբեր) և, որ առանձնապես կարևոր է, ըստ ասուրական բառերի արմատական ցեղակցության: Այլ կերպ ասած՝ այս վերջին կարգի ցանկերը յուրատեսակ արմատական-ստուգարանական բառարաններ են՝ իհարկե շատ հեռու այդ կարգի բառարանների մասին մեր ունեցած գիտական պատկերացումներից: Կան նաև հնացած և զարգանկարային ձևավորում ունեցող նշանների ցանկեր՝ լրացատրություններով հանդերձ:

Որոշ կարգի ցանկեր ունեն խառը բնույթ. սրանց մեջ շորս շարքով տրվում են՝ 1) նշանները, 2) նրանց շումբերական արտասանությունը, 3) ասուրերեն իմաստը և 4) նշանների անունները. որոշ դեպքերում սրանցից առաջինը, երրորդը կամ չորրորդը բացակայում են: Հետաքրքրական է իմանալ, որ 1902 թ. գտնվեցին ուշ շրջանի տախտակներ, որոնց մեջ սեպագրերը տրված են հունական տառերով. սա ղգալի շափով օգնեց սեպագրերի ընթերցման ճշումանը:

Տեխտերի բանասիրական-փերականական մեկնությունը. — Լեզվաբանական-ֆիլոլոգիական առումով առանձնապես կարևոր են տեքստերի մեկնարանությունները, թեև դրանց թիվը նախորդների համեմատությամբ ավելի սահմանափակ է: Դրանք մեծ մասամբ պահպանվել են հատվածաբար և ներկայացնում են այս կամ այն բառիմաստի, հազվադեպ նաև նշանի բացատրություններ:

Պահպանվել են նաև քրեստոմատիաներ և «օրինակաների աղյուսակներ», որոնք քերականության յուրատեսակ ձեռնարկներ են: Այդ աղյուսակները պարունակում են բառաձևերի և բառերի օգտագործման ու զուգորդման դեպքերի նմուշներ, միևնույն արմատից ածանցված բառերի ցանկեր, ինչպես նաև առանձին տեքստերից առնված նախադասություններ:

Իրադարձագիտություն.— Ասուրա-բաբելական ֆիլոլոգիական աշխատանքի մասին ամբողջական գաղափար տալու համար անհրաժեշտ է հիշատակել նաև գրադարանային գործը: Բաղմաթիվ աղյուսակները անհրաժեշտ էր դասավորել այնպես, որ նախ՝ իրար շարունակությունը կազմող աղյուսակների հաջորդականությունը պահպանվեր և երկրորդ՝ զանազան կարգի ու բնույթի տեքստերի օգտագործումը դժվարություններ չհարուցեր: Առաջին խնդիրն իրագործելու համար ասուրները հաջորդ աղյուսակի առաջին տողը կրկնում էին նախորդ աղյուսակում և միաժամանակ նշում տվյալ սերիայի մեջ աղյուսակի գրաված համարն ու ողջ սերիայի վերնագիրը: Այս բանը մեծ չափով օգնում է ասուրագետներին՝ տեքստերի սիստեմավորման հարցում: Երկրորդ խնդրի իրագործման համար ասուրները կազմում էին կատալոգներ, նշում աղյուսակների առաջին ղերը և տողերի թիվը, խմբավորում տարբեր բնույթի տեքստեր սյարունակող աղյուսակներ:

### III. ՉԻՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 1. ԸՆԿՉԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվական գիտելիքների զարգացման պատճառները.— Չինաստանը ամենահին գիր ու գրականություն ունեցող երկրներից մեկն է: Նրա հնագարյան կուլտուրայի բազմազան բնագավառների մեջ ոչ պակաս կարևոր տեղ է գրավում նաև լեզվաբանությունը: Չինական լեզվաբանության սկզբնավորումը ևս կապված է կյանքի առաջադրած գործնական հարցերի լուծման հետ: Լեզվական հարցերի ուսումնասիրությունը բուռն վերելք ապրեց Չինաստանի միավորումից հետո՝ իսան դինաստիայի շրջանում (III դ. մ. թ. ա.— III դ. մ. թ.), առանձնապես երկու կարևոր ինդրի լուծման հետ կապված, դրանցից առաջինը երկրի միավորման հետևանքով ծագած՝ գրի հիասնականացման պահանջն էր, երկրորդը՝ հին կանո-

նախնի հիմունքի ճանաչման և իրավունքների պաշտպանման մասին համապատասխան հարցերի քննարկումը և լուրջ հարցերի քննարկումը:— Ընդունված է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՈՒՆԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վերջին ամիսներին Հայաստանի Կրթության նախարարության կողմից և Կրթության նախարարի կողմից իրականացված աշխատանքների և ծրագրերի մասին հարցերի քննարկումը և լուրջ հարցերի քննարկումը:— Ընդունված է:

Վերջին ամիսներին Հայաստանի Կրթության նախարարության կողմից և Կրթության նախարարի կողմից իրականացված աշխատանքների և ծրագրերի մասին հարցերի քննարկումը և լուրջ հարցերի քննարկումը:— Ընդունված է:

Վերջին ամիսներին Հայաստանի Կրթության նախարարության կողմից և Կրթության նախարարի կողմից իրականացված աշխատանքների և ծրագրերի մասին հարցերի քննարկումը և լուրջ հարցերի քննարկումը:— Ընդունված է:

Վերջին ամիսներին Հայաստանի Կրթության նախարարության կողմից և Կրթության նախարարի կողմից իրականացված աշխատանքների և ծրագրերի մասին հարցերի քննարկումը և լուրջ հարցերի քննարկումը:— Ընդունված է:

։տաի ղտնթրաննու տետտգյ վմգղժղտտտովնո ղտհոզ  
-տժտիեզլ ղզ յրաննու իսփոռ՝ զզր մմգղյրսսչտիղ զտմզմ ծսգջ ղտնթ  
-րսղտժտիեզլ յրսղտձմն ղտնթրաստգետմվտ վմտվաստղվն ղտոպ

։մղտմտտմ զտի  
-նսի «ղվր վյ» իսղյրետի մղտնթրամվոտղյրստրս վմզնմտյ ղտհոզտժ  
-տտոտրվ ղ ղտհոզտժտտեաստո յրսղն ն ծրվյ (․ն II) ղվղ րսնլ

։(«մմգղջիվտզղսճ» լմզոտյ նսնսս մծգրմո ղտհոզրսնղյ  
վմզղճվնեամզվյ) մմզնվղտնղյ ղ մմզղվլողտժ զտիՆսի ոզեոնոտ յրսն  
-սսս ծղտմն յրսմսիտմյոլ տոտ «մմգղճվնեամզվյ նմտժ ղտհոզվր  
յրսիմթղղզ ն ղտնթրստմզի միտղվնզյ ձզր ղտնթրստտովնո ննղ  
։միզյ նվմզգմսե ղտհոզրվյ ղտնթրստզտ վմզմե ղտհոզվր ն յրսղնոմ  
-տիմզղ ն յրթո ղնղվր («ղզի սյ» լտտջմի յտի «մջ գզ ղզի սյ») «ղվոտր  
վմզղղտնյ նմտժ ղ վմզմմոյ» մղտմտտմ զտրետի տմյ  
իսնմտյ վմզղճվնեամզվյ ն լզիևտմն (․ն II—I) մղզ իսնղ

։մմզղղտձմն ղտնթրստգետմե նղտմղ ղզ զտիՆզ  
ղ «մմզղնվղտրսյ նսիգեգմսե յրսմզղտտժմտժ մզժմտտ ղզ զտիմզժ  
յրսղտմտտժ ոնղ իսմնտղմզի («ղտնղտճ») «մզղտտժմոյ» մղտմ  
-տտժ ղտհոտտվետտժմտժ ղվձտտո ն յրսյրետի (․թ ր թ լ Է I—տ  
․թ ր թ լ ԷԵ) մղրսնղ ղտճ ղտժտիեզլ—ղսսնմսսետղտտտայ

։իսմզղղտնթրսիտտոյտղզղտտ ղվմծգտիեաստի վղզմտղվր  
լզվտտոնոմ ն ծտգեո մղրսնթրսիտտոյտղզղտտ ոնո ղտնթրսղտժտիեզլ  
ղտհոզվճ ձզր ղտնթրսետղտտտժ ոզեոհիտտյ ‘յրսմզղտտիտեոզմ  
լոտ մն նգրս ող մզղղրսնթրստտովնո ղրսմսղժզվ հվտտրգտոփո  
ղտհոզղտիտմզժ լզգնգտո վր ‘վմզղղրսնթրսղտժտիեզլ ղտհոզրսյ ղ ղտի  
-տիևղյ ղրսնթրսմզժմտտ վ ‘մղրսնթրսղտժտիեզլ ղտհոզվճ ղզզ հմսսե  
նվղրսնթրսղտժոզլրմզտ ղտհոզղտիտմզժ ղ յրսիիմթղղզ ղզղ ղտրմսի  
-տրգտոփո վիտնսս մմզղղրսնթրստմզի վեմտի ոնո ղրտհոլ

։ձզր (․տ թ լ ր ․ն II) «վղտսն ղտնղրսճ» ղ (․տ թ լ ր ․ն ԱI)  
«վղտսն ղտնրսճ» յրսմզղղրսնթրսղտժոզիզր զտիմե մոտրտյ ղտնթ  
-րսմեզմտտ «սննղսճ» վոսվնսճղսսի մզժեոզն ղտնթրստմզի ղտհոզ  
-տիտմզժ վմզտոծգտ նոտ ղզ յրսեովնղտյ զտիևտի սզյ ղտնթրսղտժ  
-տղիզր րս ղտնթրսմվոտղյրստրս ղտիտմվոտղտժ վմզտոծգտ ղվ

։յրսղսժ ղվն նգտ մսղմտի մմզնմտյ  
վեմտի նոտ ձզր ղտնթրսղտժտիեզլ ղտհոզղվր ‘ժսմվ իզ իսմզնմտյ  
ղտհոզղտժտոտրվ ղ ժրտնթրսղտժոզրսնղյ իսմզղճվնեամզվյ րսղի

### 3. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՕՆՈՄՍԻՍՏԻԿԱԿԱ)

Ընդհանուր տեղեկություններ.— Դեռ հին ժամանակներից սկսած՝ շինացիների մոտ տարածված էր այն կարծիքը, որ լեզուն նույնպիսի բնական երևույթ է, ինչ թռչունների երգը և բնության մեջ արձակված այլ ձայները<sup>1</sup>: Մարդը խոսում է դրսից ստացված մղումով: Մարդկային լեզուն մարդու արձակած այլ կարգի ձայների զարգացած աստիճանն է միայն, ընդ որում լեզուն շինացիները դիտում են զարգացման մեջ՝ սկզբնական կոպիտ և անգիտակցաբար արտասանվող ձայներից մինչև զարգացած խոսքը. քանի որ ոճը, այսինքն՝ բառերի ճարտար շարահյուսումը համարվում էր ամենազարգացած խոսքի հատկանիշը, ուստի և շինացիները հատուկ ուշադրություն էին դարձնում ոճաբանության վրա: Որոշ առումով կարելի է ասել, որ լեզվի բնույթի հիշյալ ըմբռնման մեջ առկա է բնաձայնական և ձայնարկությունների տեսության յուրատեսակ զուգորդումը. մի կողմից՝ մարդկային լեզվի հնչյունները դիտվում են բնական ձայների անալոգիայով, մյուս կողմից՝ համարվում դրսից ստացած տպավորությունների արդյունք: Լեզվի այս ըմբռնման հետ է կապված Կոնֆուցիոսի և այլոց ուսմունքը «անվան ուղղման» մասին: Ըստ այդ ուսմունքի՝ կատարյալ է այն անունը, որ համապատասխանում է իրի էությանը: Բայց իրականում այդպիսի համապատասխանություն չկա. «ուղղել անունը» նշանակում է այդպիսի համապատասխանություն ստեղծել, այլ կերպ ասած՝ հասարակական կյանքում (իմա՝ ֆեոդալական հիերարխիայում) ամեն մեկին տալ իր համապատասխան տեղը:

Լեզվական հարցերը մոխստական փիլիսոփայության մեջ.— Լեզվական հարցերը ամենից ավելի շատ ուշադրություն են գրավել Կոնֆուցիոսի հակառակորդ Մո-ձըի (Մո Դիի, 479—381 թթ. մ. թ. ա.) և նրա հետևորդների՝ «մոխստների» փիլիսոփայական ուսմունքի մեջ: Մո-ձըի փիլիսոփայությունը իդեալիստական բնույթ ունեւր՝ մատերիալիզմի որոշ տարրերով հանդերձ: Մոխստները իրենց ուսուցչի փիլիսոփայությունը ազատում են միատիկայից և զարգացնում մատերիալիզմի գիծը: Լեզվական հարցերը տեղ են գրավում նրանց իմացաբանական-տրամաբանական ուսմունքի

<sup>1</sup> Այս մասին հայտնի է միայն ուշ շրջանի աղբյուրներից, հատկապես Խան Վեն-կունից (768—824), որ, սակայն, այս դեպքում ինքնուրույն չէ, այլ հենվում է հին աղբյուրների վրա:



մեջ, ընդ որում «անունները» և հասկացությունները հստակ կերպով չեն տարբերակվում:

Անունները, ըստ մոխստների, իրականության մեջ գոյություն ունեցող իրերի պատճեններն են («էո»), որոնք առաջանում են իրականության ճանաչման պրոցեսում: Ճիշտ «անունների» (հասկացությունների) մշակումը ճանաչողության պրոցեսի կարևորագույն գործոններից մեկն է: Մոխստները տարբերում են 3 տեսակ անուն՝ 1) «համընդհանուր անուն» («դա մին»), որ տրվում է բոլոր կոնկրետ իրերին ու առարկաներին, 2) «սեռային անուն», որ տրվում է միատեսակ իրերի կամ կենդանի արարածների այս կամ այն խմբին (օր. «ձի») և 3) «մասնակի անուն», որ կազմում է «իրականության նշանակման սահմանը» (օր. «ստրուկ»): Վերջինս, ըստ մոխստների, արտահայտում է անբաժանելի հասկացություն:

Անունների այս 3 տեսակները ծառայում են իրերի նույնություն («թուն») և տարբերության («ի») ճիշտ արտահայտմանը: Մոխստները տարբերում են նույնության 4 տեսակ՝ բովանդակության, ձևի, տարածական և սեռային: Բովանդակության նույնություն ասելով նրանք հասկանում են այն երևույթը, երբ միևնույն առարկան տարբեր անուններով է արտահայտվում, այսինքն՝ համանշտությունը. այսպես, օրինակ, կենդանու ձագը կարող է կոչվել և՛ առանձին անունով, և՛ տվյալ կենդանին նշանակող ընդհանուր անունով (հմմտ. լակոտ և շնիկ):

Մեր իմացության և իրականության հարաբերությունը արտահայտելու համար տարբերելով ուղիղն ու սուտը՝ մոխստները ուղիղ են համարում «անունների» (հասկացությունների) համապատասխանությունը իրականությանը, սուտ՝ անհամապատասխանությունը: Նրանց կարծիքով՝ մարդը պետք է ճանաչողության պրոցեսում «իր հասկացություններով մոտավորապես պատկերացնի իրերը այնպես, ինչպես նրանք գոյություն ունեն իրականության մեջ, համեմատի նրանց տարբեր մեկնությունները, անունների միջոցով ցույց տա իրականությունը, բառերի միջոցով արտահայտի մտքերը, դատողության միջոցով գտնի պատճառականությունը, անալոգիայի միջոցով հասնի տրամաբանականության»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ян Хин-шун, Из истории китайской философии, М., 1956, էջ 121

## IV. ՀՆԴԻԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնդկական լեզվաբանության նշանակությունը.— Հին աշխարհի ժողովուրդներից ոչ մեկը այնքան առաջ չգնաց լեզվական հարցերի ուսումնասիրության բնագավառում, որքան հնդիկները և հույները: Այս երկու ժողովուրդները առաջիններն էին, որ ստեղծեցին քերականությունը՝ լեզվի հնչյունական և քերականական կառուցվածքի վերլուծության իրենց ուրույն մեթոդներով: Հնդիկների և հույների ստեղծած քերականական սխտեմները միմյանցից լիովին տարբերվում են: Տարբեր է նաև լեզվաբանության զարգացման վրա նրանց թողած ազդեցության աստիճանը: Հնդկական քերականական սխտեմը մինչև XIX դարը կանգնած էր մեկուսի և, շնայած մանրամասնությունների մեջ իր ունեցած կատարելությունը, ազդեցություն չթողեց աշխարհի ժողովուրդների գերակշռող մեծամասնության քերականական սխտեմների ձևավորման վրա: Այս բանում գլխավոր դերը պատկանում է հույներին, որոնց քերականական սխտեմը եղել է մնում է այն հիմքը, որի վրա աշխարհի ժողովուրդները ձևում են իրենց քերականությունները:

Վեդաները և նրանց դերը հնդկական լեզվաբանության սկզբնավորման մեջ.— Հնդկական լեզվաբանությունը սկիզբ է առել այն բանասիրական աշխատանքներից, որ երկարատև սերունդներ կատարում էին հին սրբազան հավաքածուների՝ Վեդաների՝ վրա: Վեդայական հնագույն ժողովածուները («սամհիտաները») 4-ն են՝ 1) Ռիգ-վեդա (Rg-veda), որ հիմնների ժողովածու է և հավանաբար սմենահինն ու ամենաընդարձակն է, 2) Սամա-վեդա (Sāma-veda), որ կրոնական երգերի ժողովածու է, 3) Յաջուր-վեդա (Jajur-veda), որ աղոթքների և զսաբերությունների կանոններ է պարունակում, և 4) Աթարվա-վեդա (Atharva-veda), որ բազկացած է մոգական բանաձևերից և աղոթքներից: Սրանց կազմավորման ժամանակը ենթադրվում է մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակը: Բացի սրանցից՝ կան 3 տեսակի այլ տեքստեր:

Վեդաների լեզուն ժամանակի ընթացքում ավելի ու ավելի էր տարբերվում փոփոխության ենթարկվող խոսակցական լեզվից, դառնում դժվար հասկանալի: Այդ պատճառով էլ անհրաժեշտ էր

<sup>1</sup> «Վեդա» հին հնդկերեն նշանակում է «գիտելիք» և ցեղակից է ռուսերեն ведать, հայ. գէտ. գիտեցալ բառերին:

դառնում վեդաների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանությունը: Քերականները վերցնում էին վեդաների մի որևէ ճյուղը և մանրամասնորեն նկարագրում նրա լեզվական առանձնահատկությունները: Հնդիկների քերականական միտքը պարզանում էր վեդաների լեզվի և իրենց սեփական խոսակցական բարբառների համեմատության ճանապարհով: Աստիճանաբար հնդիկների քերականական միտքն ընդլայնվում է՝ ընդգրկելով հնդիկների ողջ հին լեզվի առանձնահատկությունները: Մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին վեդայական լեզուն արդեն մշակված և նորմավորված ձև է ստանում. այդ մշակված լեզուն, որ մինչև մեր թվագրությունը արդեն մեռած լեզվի էր վերածվել, հայտնի է աճանկրիտ անունով (sanskṛta «արհեստական», տառացի՝ «համակերտ»): Հնդիկները լեզվաբանական աշխատանքը նպատակ ուներ սանսկրիտի կայունացումն ու նորմավորումը՝ այն պրակրիտների (խոսակցական լեզուների, prakṛta «բնական», տառացի՝ «նախակերտ») ազդեցությունից զերծ պահելու համար:

Խոսելով հնդկական հնագույն տեքստերի մասին՝ մենք պետք է հիշենք, որ ամենահին գրավոր հուշարձանը մ. թ. ա. 253 թվից է: Այսպիսով, մինչև այդ շրջանը հանդես եկած գործերը հասել են բանավոր հաղորդմամբ: Հնդկական գիրը, որը մինչև երկու հարյուր տեսակներ ունի, ներկայացնում է լավ կառուցված վանկային այբուբեն, որ հնարավորություն է տալիս հիանալի կերպով արտացոլելու խոսքի հնչյունական առանձնահատկությունները:

## 2. ՖԻԼՈՍՈՓԻԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանական հարցերը վեդանգներում.— Վեդաները լրացնող (իմա՝ նրանց ուսումնասիրությունը նվիրված) գիտությունները հայտնի էին վեդանգներ (vedāngas) անունով: Վեց վեդանգներից երեքը լեզվական գիտելիքներ են պարունակում. հնչյունաբանական և ուղղախոսական (հմուտ վերծանության կամ ընթերցանության) հարցերը քննվում են շիկշայում (ś'ikṣā) քերականական հարցերը՝ վայակարանայում (vaiyākaraṇa), ստուգաբանական և բառակազմական հարցերը՝ նիրուկտայում (nirukta): Վեդանգներից մեկում էլ՝ շանդահում քննվում են տաղաչափական հարցերը: Շիկշային վերաբերող հնագույն աշխատությունները հայտնի են «Պրատիշաքյաներ» անվամբ. նրանց մեջ տրվում են «Սամհիտաները» ճիշտ վերծանելու (ընթերցելու) կանոնները: Ստուգաբանական-բա-

ուակազմական աշխատություններից մեզ հասել է Յասկայի (Jaska, V դ. մ. թ. ա.) «Նիրուկտան», որի մեջ հանդիպում են նաև որոշ քերականական տեղեկություններ և տերմիններ: Քերականական և տաղաչափական հնագույն աշխատությունները կորել են: Մեզ հասած ամենահին քերականական աշխատությունը Պանինիի քերականությունն է:

Պանինի.—Քերականական մտքի զարգացումը հասցնում է Պանինիի (Pāṇini, ըստ ոմանց V դ., ըստ մյուսների IV դ. կամ III դ. մ. թ. ա.) նշանավոր աշխատությանը, որը կոչվում է «Ութ ընթերցված» (Aṣṭādhyāyī)<sup>1</sup>. Պանինին հիշատակում է 10 նախորդների անուններ և խոսում լեզվաբանական երկու՝ հյուսիսային և արևելյան դպրոցների գոյության մասին: Հայտնի է եղել և Խինդրա կոչված քերականական դպրոցը: Պանինիին նախորդած քերականներից հիշատակելի են Շակալյան (Śākalya), Գարգյան (Gārgya) և առանձնապես Շակատայանան (Śakatāyana): Շակատայանան առաջինն էր, որ, հակառակ Գարգյայի, նշեց, թե գոյական և Ժական անունները ծագում են բայական արմատներից: Յասկան և Պանինին հարում են նրա տեսակետին:

Պանինիի աշխատությունը բաղկացած է մոտ 4000 կարճ չափածո կանոններից (սուտրաններից), որոնք ժամանակակից ընթերցողի համար առանց մեկնաբանության լիովին հասկանալի չեն: Կանոններից 200-ը նվիրված են վեդաների լեզվին. մնացած կանոնների մեծ մասը նվիրված է հին հնդկերենի այն նորմավորված, ստանդարտ տեսակի ուսումնասիրությանը, որ հայտնի է սանսկրիտ անունով: Կան նաև խոսակցական լեզվի և երկրի արևելքում խոսվող բարբառների առանձնահատկություններին նվիրված կանոններ<sup>2</sup>: Պանինիի քերականական աշխատությունը խիստ էմպիրիկ-նկարագրական է: Այստեղ լեզվի փրիլիսոփայության հարցերին տեղ չի տրվում. այդ հարցերը քննվում են փրիլիսոփայական տարբեր սիստեմներում: Կանոնների մեջ գլխավոր ուղադրությունը կենտրոնացվում է ձևաբանության, բառակազմության և ստուգաբանության վրա. կան նաև հնչյունական երևույթներին նվիրված

<sup>1</sup> Pāṇini's Grammatik, herausgegeben von O. Böhtlingk, Leipzig, 1887. The Aṣṭādhyāyī of Pāṇini, Benares, 1896. La grammaire de Pāṇini, Paris, 1947.

<sup>2</sup> Հմմտ. А. П. Баранников, Элементы сравнительно-исторического метода в индологической лингвистической традиции, ВЯ, 1952, № 2, էջ 41 և 42.





կան գծերով էմպիրիկ-վերլուծական բնույթ ունի: Պատահական չէ, որ որոշ լեզվաբաններ նմանություն են տեսնում Պանինի վերլուծական մեթոդի և ժամանակակից տարածված լեզվաբանական հոսանքներից մեկի՝ ստրուկտուրալիզմի միջև: Հնդիկ քերականները լեզվական փաստերի վերլուծությունը կատարում են դրանց նմանությունների ու տարբերությունների բացահայտման, ընդհանրացման և տարրալուծման միջոցով: Կարելի է ասել, որ մեթոդը վերլուծական է, նկարագրության եղանակը՝ համադրական: Քերականությունը նշանակող հին հնդկական vaiyākaraṇa բառի բուն իմաստն է հենց «վերլուծություն»:

Քանի որ լեզվական տեսակետից որպես անկախ միավոր կարելի է դիտել միայն նախադասությունը, ուստի և հնդիկ քերականները վերլուծությունն սկսում են նրանից. միայն նախադասությունն է, որ արտահայտում է վերջավորված միտք, բառն այդպիսի անկախություն չունի ոչ ըստ ձևի, ոչ էլ ըստ բովանդակության: Այսպիսով, հնդկական լեզվաբանական տրադիցիան փաստորեն շարահյուսական վերլուծությունից է գնում դեպի ձևաբանական-բառակազմական վերլուծությունը: Սակայն նրա ուշադրության կենտրոնում վերջին տիպի վերլուծությունն է, իսկ նախադասության վերլուծությունը ծառայում է լոկ իրրև մեկնակետ:

Նախադասության տարրալուծումը հանգեցնում է առանձին իմաստալից միավորների՝ բառ—խոսքի մասերի բացահայտմանը, որոնք հնդիկ քերականները խմբավորում են ըստ իմաստի և ֆունկցիայի: Եթե նկատի չառնենք բառերի խոսքի մասային բաժանման մեջ գոյություն ունեցող մասնակի տարբերությունները, ապա կարելի է նշել, որ հնդիկ քերականները անջատում են բառերի 4 հիմնական խումբ կամ 4 խոսքի մաս<sup>1</sup>.

1) Անուն (nāman), համարվում է գոյության (սուբստանցիայի) գաղափարի արտահայտիչ. անվան հետ միասին են քննվում և դերանունները (sarvānāman):

2) Բայ (ākhyāta). համարվում է կատարված և կատարվող գործողության արտահայտիչ. բայի հետ միասին են քննվում մակբայները:

3) Նախդիր (upasarga). նախդիրները համարվում են լեզվի

<sup>1</sup> Այս խմբավորումն արդեն առկա է Յասկայի «Նիրուկտայու»-ում, թեև հետազոտողները կարծում են, որ այն ազելի վաղ պետք է հայտնի եղած լինի Հիմա. P. Chakravarti, The Linguistic Speculations of Hindus, Calcutta, 1933.

ցուցական տարրեր, որոնք որոշում են նախորդ երկու խոսքի մասերի՝ անունների և բայերի իմաստը:

4) Մասնիկ (nipāta)՝ տարբերվում է մասնիկների երեք խումբ՝ համեմատության, միացման և իմաստազուրկ (թարմատար)․ վերջին տիպի մասնիկները գործածվում են ոտանավորների մեջ որպես ձևական տարրեր:

Այս խոսքի մասերից առաջին երկուսը համարվում են կարևորագույնները․ նրանք անկախ իմաստ ունեն, որ շեն կորցնում նաև առանձին դործածվելիս, մինչդեռ նախդիրներն ու մասնիկները անուններից և բայերից կտրվելիս՝ այդպիսի անկախ իմաստից զրկվում են:

Հնդկական քերականության մեջ հատուկ կարևորություն ունի բառի կառուցվածքի ուսմունքը: Բառերի (անունների և բայերի) մեջ հնդիկ քերականները տարբերում են երկու մաս՝ 1) ՚իմփ (prakṛti) այսպես է կոչվում բառի այն մասը (լինի այն արմատական, թե ածանցավոր), որին հետևում է որևէ վերջամասնիկ․ 2) վերջամասնիկ (pratyaya)․ այսպես են կոչվում զանազան վերջածանցները և վերջավորությունները, ընդ որում բուն դիմային և հոլովական վերջավորությունները նշանակվում են և հատուկ տերմինով (vibhakti):

Հնդիկ քերականները ոչ միայն տարբերում են արմատի (dhātu) գաղափարը, այլև անունների ու բայերի ձևաբանական փոփոխությունների դեպքում հենվում այդ գաղափարի վրա․ Պանինին քննում է 2000 այդպիսի արմատ: Ի տարբերություն անտիկ քերականների, որոնք բառերի հիմնական ձևեր են համարում անունների ուղղականը և բայերի ներկա ժամանակի առաջին դեմքը, հնդիկ քերականները ձևաբանական փոփոխությունների քննությունն սկսում են արմատից: Սակայն արմատի և հիմքի գաղափարները հստակ կերպով չեն սահմանազատվում․ արմատներ են համարվում նաև բայական որոշ ածանցավոր ձևեր: Այս տեսակետից հնդիկ քերականները տարբերում են 3 տեսակ արմատներ՝ 1) պարզ կամ նախատիպ արմատներ, 2) որպես կազմիչ տարրեր հանդես եկող արմատներ և 3) ածանցյալ արմատներ: Վերջիններիս մեջ են դրվում պատճառական (niyanta), բազմապատկական (yananta), անվանական (nāmadhātu) և ըղձական (sannanta) բայահիմքերը:

Ինչպես նշեցինք, հնդիկ քերականների մոտ տենդենց է նկատվում ավելի նախնական համարելու բայական իմաստ ունեցող արմատները, և բոլոր բառերը հանգեցնելու դրանց: Թերևս սրտնով



էլ պետք է բացատրել, որ որոշ բայական ածանցյալ ձևեր արմատական են համարվում:

Արմատների կրած բառակազմական<sup>1</sup> և ձևաբանական փոփոխությունները նկարագրվում են ամենայն մանրամասնությամբ: Հոլովումը և խոնարհումը տրվում են իրենց բոլոր ձևերով, թեև հաճախ առանց հատուկ անվանումների: Այսպես, օրինակ, ուղղական, հայցական, գործիական, տրական, բացառական, սեռական և ներգոյական հոլովները տրվում են առաջին, երկրորդ, երրորդ և այլ անուններով:

Հնդիկների բառակազմական և հնչյունաբանական ուսմունքի շատ կողմեր հետազայում զգալի ազդեցություն գործեցին XIX դ. լեզվաբանության ձևավորման վրա: Բարդությունների տիպերի դասակարգումը այդ բնագավառի առաջին փորձն էր, և նրանց գործածած տերմինները դարձան երևույթի ընդհանուր անվանումներ: Պանինին և մյուս հնդիկ քերականները տարբերում են բարդության երեք տեսակ՝ կցական (dvandva-), «րոշչային» (tatpuruṣa-) և ստացական (bahuvrīhi-): Բարդության տարբեր տեսակների անվանումներն ընտրված են այդ տեսակների համար առնված օրինակներից (dvandva- «զույգ», tatpuruṣa «նրա ծառան», bahuvrīhi- «բազմաբրինձ»):

Հնդիկները տարբերում են բառակազմական ածանցների երկու տեսակ՝ առաջնային (kṛt) և երկրորդային (taddhita). առաջնային են համարվում այն ածանցները, որոնք ծառայում են արմատներից անմիջաբար հիմքեր կազմելուն. երկրորդային՝ այն ածանցները, որոնցով նոր հիմքեր են կազմվում արդեն ածանցյալ հիմքերից<sup>1</sup>:

Հնդկական քերականները ուշադրություն են դարձնում նաև մի այնպիսի կարևոր երևույթի վրա, ինչպիսին հնչյունական հերթագայությունն է, որ հունական քերականների տեսադաշտից դուրս է մնում: Պանինին և մյուս հնդիկ քերականները տարբերում են հիմնական և ածանցյալ ձայնավորներ. հիմնական են համարվում a, i, u, r, l ձայնավորները: Արմատները սահմանելիս հնդիկ քերականներն աշխատում են դրանց համար վերականգնել նշված ձայնավորները: Հիմնական ձայնավորներից նրանց կարծիքով, a-ի հավելմամբ ստացվում են ē(ai), ō(au). ar, al երկրորդական ձայնավորներն ու երկրորդականները: Այս երևույթը նրանք կոչում են guṇa «հասկություն», Երկար a-ն (ā) և նրանով կազմված āṛ, ān,

<sup>1</sup> Հնդկական քերականական տերմինաբանության մասին տես L. Renou, Terminologie grammaticale du sanskrit, I—III, Paris, 1942.

ār, al երկրաբբաունները համարվում են հիմնական ձայնավորի երկրորդ հավելման արգյունք: Այս երևույթն էլ կոչվում է vřddhi «աճում»: Այսպիսով ստացվում են՝ հետևյալ շարքերը.

Հիմնական ձայնավորներ	a	ı	u	ř	ı
Guṇa		ē(ai)	ō(au)	ar	al
Vřddhi	ā	āı	āu	ār	āl

Արանով իսկ տարբերվում են արմատական ձայնավորների հերթ «գայու թյունների հետևյալ տիպերը՝ a/ā, ı/e/ai, u/ō/au, ř/aı/ār, ı/al/āl (հիմ.տ. օրինակ. kř/kar/kār):

Այս ուսմունքը հետագայում ղգալի դեր է խաղում հնդկուպական լեզվաբանության վաղ շրջանի՝ հերթագայությունների տեսության և ձայնավորների ուսմունքի համար: Ավելորդ չէ նշել, որ հնդիկները, առանձնացնելով արմատի հերթագայման աստիճաններ, ձայնավորագրուկ աստիճանը դիտում են որպես նախնական, իսկ լիաձայն աստիճանը՝ որպես երկրորդային կազմավորում: Այս գաղափարը այսպես կոչված «կոկորդայինների հիպոթեզի» կապակցությամբ նորից երևան է գալիս XX դարում:

Հնչյունաբանության հարցերում հնդիկները նշանակալից բարձրության էին հասել: Նրանք հին հույներից ավելի մեծ կատարելության մեջ են տալիս հնչյունների ֆիզիոլոգիական հատկությունների նկարագիրը և ավելի լավ պատկերացում ունեն արտասանական օրգանների գործունեության մասին: Հին հույների նման նրանք ևս վանկերի հիմնական տարրը համարում են ձայնավորները. ըստ նրանց՝ ձայնավորները ինքնին կարող են վանկ կազմել, բաղաձայնները՝ ոչ. բաղաձայնները (բացի ք-ից) կարող են արտասանվել միայն ձայնավորի ընկերակցությամբ: Ձայնավորները և բաղաձայնները հին հնդիկների կողմից տարբերվում են ոչ միայն ըստ վանկի մեջ կատարած ֆունկցիայի, այլև ըստ նրանց կազմավորման ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, ընդ որում հիմք են ընդունվում արտասանական ակտիվ օրգանները: Հնդիկների ուսմունքի համաձայն՝ ձայնավորների դեպքում տեղի է ունենում արտասանական օրգանների մերձեցում, բաղաձայնների դեպքում՝ հպում:

Ըստ հնչյունների՝ արտաբերության մեջ ունեցած մասնակցության՝ տարբերվում են արտաբերիչներ (karaṇa) և արտաբերման տեղեր (stana). Արտաբերիչներ են համարվում լեզվի մասերը (արմատը, միջին մասը և ծայրը), ներքին շրթուները և այլն. ար-

տաբերման տեղեր են համարվում փափուկ քիմքը, ատամները, ատամների արմատները (ալվեոլները), վերին շրթունքը և այլն:

Հնչյունաբանական գիտելիքների մեջ հատուկ տեղ է տրվում այսպես կոչված sandhi-ի ուսմունքին՝ ձայնավորների հանդիպման ժամանակ առաջացող երևույթների քննությունը:

Բառաբանագրություն.— Հնդկական բառարանագրությունը ևս սկզբնապես սերտորեն կապված էր վեդայական տեքստերի ուսումնասիրության հետ: Հնդիկների վաղ բառարանագրական գործերը ներկայացնում էին վեդայական բառերի հավաքածուներ և հայտնի էին ուighaդիս անունով: Դրանց մեջ տրվում էր անհասկանալի և բազմիմաստ բառերի բացատրությունը գերազանցապես հոմանիշների օգնությամբ. նույն կամ նման իմաստն ունեցող բառերը հավաքվում էին և զուգադրվում:

Հնդիկները նշել են՝ բառի ձևի և իմաստի փոխհարաբերության հետ կապված այնպիսի երևույթներ, ինչպիսիք են համանունությունը, բազմիմաստությունը, հոմանշությունը: Հնդիկների իմաստաբանական ուսումնասիրությունները սերտորեն կապված էին ստուգաբանության հետ. Յասկայի «Նիրուկտան» հենց այսպիսի ստուգաբանական-իմաստաբանական գործ է՝ գրված որպես ուighaդիս-ի մեկնություն<sup>1</sup>:

Ոճաբանություն.— Ոճաբանությունը Հնդկաստանում առաջանում է ոչ թե որպես համոզելու ուսմունքի (ճարտասանության) անհրաժեշտ բաղկացուցիչ մասը (ինչպես Հունաստանում), այլ որպես խոսքի (իմա՝ բանաստեղծական խոսքի) դարդարանքի ուսմունք («վարդարանքի գիտություն»՝ alamkaraçâstra). Բանաստեղծները պետք է լավ ծանոթ լինեին ոճի նրբություններին և դրա համար վարժության մեծ դպրոց էին անցնում, մանավանդ որ Հնդկաստանում մշակվել էին բանաստեղծական արտահայտության ուրույն ըմբռնումներ:

### 3. ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվական հարցերը հնդկական փիլիսոփայության մեջ.— Լեզվական հարցերը տեղ են գտել նաև հնդկական փիլիսոփայական գանազան սիստեմներում: Սակայն եթե հին հույների մոտ, կարելի է ասել, փիլիսոփայական լեզվաբանությունը նախորդում և նախապատրաստում է ֆիլոլոգիական լեզվաբանության զարգացումը,

<sup>1</sup> Հմտտ. P. Chakravarti, հիշ. աշխ., էջ 15:

ապա հնդիկների մոտ ժամանակագրական այդպիսի որոշակի հաջորդականություն չկա: Այնուամենայնիվ, հնդկական իրականություն մեջ ևս առկա է եղել փիլիսոփայական լեզվաբանության և ֆիլոլոգիական լեզվաբանություն նշանակալից փոխազդեցություն, որ կարևոր դեր է խաղացել հնդկական լեզվաբանության զարգացման գործում: Բուն լեզվական հարցերը հին հնդկական փիլիսոփայության մեջ արծարծվել են իմացաբանական և տրամաբանական հարցերի հետ կապված:

Հին հնդիկների մոտ տեղ են գտել լեզվի ծագման երկու հակադիր տեսակետներ: Հնդկական փիլիսոփայական որոշ սիստեմներ լեզվին աստվածային ծագում էին վերագրում. այդ բանը արտացրլում է գտել դեռևս վեդաներում: Դեռ ավելին. լեզվի աստվածային ծագման կողմնակիցները լեզուն (խոսքը) աստվածացնում էին: Խոսքը (vāk, հմմտ. հուն. λόγος, հյ. բան) դիտվում էր որպես յուրատեսակ հավերժական էություն, համարվում ամեն մի գոյության հիմք և աստվածային բնության կրող: Խոսքի հավերժականության այս գաղափարը տեղ է գտել միմանսայի փիլիսոփայական սիստեմում: Սրան հակառակ նյայայի և վերջինիս մերձավոր վայշեհիկայի (vaiśeṣika) փիլիսոփայական սիստեմներում լեզուն դիտվում էր որպես մարդկային ստեղծագործություն: Սակայն այս բանը չէր խանգարում նյայայի փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներին՝ խոսելու բառերի սկզբնական իմաստի (շակի, հմմ. հուն. ἔτυμον)՝ աստվածային սահմանում լինելու մասին և անունների ու իրերի սկզբնական իդեալական համապատասխանությունը վերագրելու աստվածային կամքին:

Վերևում հիշատակված Շակատայանայի այն տեսակետի հետ միասին, ըստ որի բոլոր բառերը ծագում են նախնական բայարմատներից, հին հնդիկների մոտ հանդիպում են նաև առանձին կարգի բառերը բնաձայնական հիմունքով բացատրելու փաստեր: Սակայն, ի տարբերություն հին հույների, հին հնդիկները բնության ձայներին նմանվելու սկզբունքը բոլոր բառերի ծագման բացատրության միջոց չեն դարձնում: Ավելորդ չէ նշել, որ հին հնդիկները ուշագործություն են դարձրել նաև այնպիսի մի կարևոր երևույթի դերի վրա, ինչպիսին ժեստերն ու միմիկան են:

Բառերի և իրերի հարաբերության հարցը միշտ էլ եղել է հնդիկների միտքն զբաղեցնող կարևոր հարցերից մեկը, ընդ որում նրա լուծման մեջ հանդես են եկել բազմազան տեսակետներ. 1) ուսումնաբերության և իրերի կապը հավերժական և բնական են համա-

րում. 2) երկրորդները այդ կապը համարում են աստվածային կամքի ստեղծագործություն, դրան որոշ պայմանական բնույթ վերագրում. 3) երրորդները այն քննում են որպես պատճառի և հետեւյալների, ազդարարողի և ազդարարվողի (grāhaka և grāhya) հարաբերություն. 4) վերջապես չորրորդները բառի և նրա իմաստի միջև տարբերություն շեն դնում, դրանք իրար հարաբերակից և փոխադարձելի են համարում<sup>1</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ հին հնդիկների մոտ կարելի է տեսնել հումբրոլոգոյան «ներքին իմաստի» ուսմունքի սաղմերը: «Ներքին իմաստը» նշանակվում է sphota բառով: Ըստ այդ ուսմունքի՝ բառի հնչյուններն ինքնին չեն կարող առարկայի իմացությունը նշել. նրանք արտասանվելով կորչում են: Այդ պատճառով էլ պետք է ենթադրել, որ կա հնչյունները առարկայի իմացության հետ կապող մի էություն՝ սփոտան: Սփոտայի ուսմունքի հետ Պանինին ծանոթ է, մի հանգամանք, որ վկայում է այդ ուսմունքի՝ նրա ժամանակունեցած հեղինակության մասին<sup>2</sup>:

Ջայնիզմ.—Ջայնիզմի [հիմնադիր Jina-ի («հաղթող») մականունից] ակունքները հասնում են մեր թ. ա. VI դարը: Ջայնիստները ժխտում էին աստվածներին ու վեդաների հեղինակությունը: Նրանք ընդունում էին սովորական իմացության երկու աղբյուր՝ անմիջական, որ ստացվում է անմիջական զգայությունմբ ու մտքի գործունեությամբ և միջնորդված (չռուտա «վկայություն»), որ ստացվում է բանավոր ու գրավոր ճանապարհով (նկարագրությունմբ), այս կամ այն հեղինակությունից: Քանի որ հեղինակությունը հասկանալը կախված է հնչյունների կամ գրերի ընկալումից, ուստի և անմիջական իմացությունը նախորդում է միջնորդված իմացությունը<sup>3</sup>: Տարբերելով իմացության երկու ձև՝ պրամանա (իրերի իմացումը որպես այդպիսին, իմա՝ կոնկրետ-զգայական իմացությունը) և նայա (իրերի իմացությունը նրանց հարաբերություններով, իմա՝ իմացությունը արատրահմամբ և ընդ-

<sup>1</sup> Վ.Մ. Ս. Chakravarti, հիշ. աշխ., էջ 341—342:

<sup>2</sup> Վ.Մ. Ս. Радхакришнан, Индийская философия, II, М., 1957, էջ 89—90:

<sup>3</sup> С. Чаттерджи и Д. Датта, Введение в индийскую философию, М., 1955, էջ 75—76: Ըստ Ռադհակրիշնանի (հիշ. աշխ., I, 1938, էջ 247—248), Ջայնիստներն ընդունում են տիպի իմացություն, որոնցից մեկն էլ շուտան է՝ նշանների, սիմվոլների և բառերի միջոցով ստացվող իմացությունը:

հանրացմամբ, վերացական մտածողութիւնը), ջայնիստները նյայայի տեսականերից երեքը կապում են բառերի հետ և նշանակում շաբդանայա ընդհանուր անվամբ. ըստ շաբդանայայի ուսմունքի՝ 1) բառերի (տերմինների) և իմաստների կապը հարաբերական է, 2) բառերը (տերմինները) սահմանադատվում են ըստ արմատների, և 3) բառի (տերմինի) արմատի նշանակածը բառի (տերմինի) օրինական իմաստն է:

Նյայայի փիլիսոփայութիւնը.— Նյայայի (nyāya «եղանակ») փիլիսոփայական սիստեմն սկիզբ է առնում մ. թ. ա. I դարից և շոշափում է հիմնականում իմացաբանական-տրամաբանական հարցեր: Նյայայի փիլիսոփայութիւնն հետևորդները, խոսելով իմացութեան առարկայի մասին, տարբերում են գործունեութեան 3 տեսակ՝ խոսակցական, մտավոր և մարմնական: Այսպիսով, լեզվական (խոսակցական) գործունեութիւնը նրանք դիտում են որպէս մարդու գործունեութեան անհրաժեշտ բաղկացուցիչ մասը: Ըստ նրանց՝ հավաստի իմացութիւնը բաժանվում է ընկալման, եզրակացութեան, համեմատութեան և վկայութեան (ṣabda «շաբդ»)։ Վկայութիւնն ասելով՝ նյայայի փիլիսոփայութեան հետևորդները հասկանում են գրավոր և բանավոր հաղորդումը, առարկաների այնպիսի իմացութիւնը, որ ստացվում է ուրիշ անձերի բառերից կամ դատողութիւններից: Սակայն ոչ ամեն հաղորդում (վկայութիւն) է հավաստի, այլ վստահելի, հեղինակավոր անձերից ստացվածը, անձեր, որոնք վերահասու են եղել ճշմարտութեանը և հայտնում են ուրիշներին դրանով առաջնորդվելու համար: Սակայն մեկ դատողութիւնը (նախադասութիւնը) կամ հավաստումը բավական չէ իրերի իմացութեան համար: Միաժամանակ, դատողութեան (նախադասութեան) բառերի պարզ ընկալումը չի հասցնում օբյեկտների որևէ իմացութեան. ընկալումը հասցնում է իմացութեան՝ միայն բառերի իմաստը հասկանալու դեպքում: Այսպիսով, բառային իմացութեան հավաստիութիւնը որոշվում է հաղորդողի վստահելիութեամբ, հնարավորութիւնը՝ հաղորդածի հասկանալիութեամբ:

Բայց ի՞նչ բան են նախադասութիւնը և բառը: Նախադասութիւնը որոշակի կերպով դասավորված բառերի խումբ է, բառը՝ որոշակի կերպով դասավորված տառերի խումբ:

Բառի էությունը նրա իմաստն է. բառը միշտ նշանակում է որևէ օբյեկտ և գոյութիւն ունի նրա համար, որ ամեն անգամ կարդացվելով կամ արտասանվելով, հիշեցնի այդ օբյեկտը: Բառերի՝

որոշակի օբյեկտներ նշանակելը նրանց կարողությունն է (çakti «շակտի»), որ հաստատված է աստվածային կամքով: Նյայայի փիլիսոփայության կողմնակիցները, առանց աստծու գաղափարին դիմելու, չեն կարողանում բացատրել այս կամ այն բառի՝ անփոփոխ, մեկընդմիշտ միևնույն որոշակի իրի հետ կապված լինելը, միշտ տվյալ և ոչ թե մի ուրիշ օբյեկտ նշանակելը:

Նախադասությունը (vākya «վակյա») որոշակի իմաստ ունեցող բառերի զուգորդում է: Բայց բառերի ամեն մի զուգորդում իմաստալից նախադասություն չի կազմում: Բառերից հասկանալի նախադասություն կազմելը պետք է բավարարի 4 պայման. 1) փոխհենթադրում (ākāṅkṣā «ականկշա»): սա նախադասությունը կազմող բառերի փոխադարձ ենթադրումն է միտքը բավարար կերպով արտահայտելու համար, բառերի զուգորդելիությունը, նրանցից մեկի գոյություն՝ մյուսինը ենթադրելը (նկատի է առնվում հատկապես սեռը և խնդրառությունը), բառերի հարաբերակցությունը. այսպես, «բերել» բայը պահանջում է բերելի առարկա. օրինակ՝ «կուժ»: 2) Փոխադարձ պիտանիություն (yogyatā «յոգյատա»): սա նախադասությունը կազմող բառերի նշանակած առարկաների զուգորդելիության հնարավորությունն է, նրանց միջև հակասության բացակայությունը. այսպես, «խոնավանում է կրակից» նախադասությունը պետքական չէ, որովհետև «խոնավություն» և «կրակ» բառերը իմաստով հակասական են: 3) Մերձակցություն (sannidhi «սաննիդհի») կամ asatti «ասատտի»): սա նախադասությունը կազմող բառերի ժամանակային և տարածական մերձակցության անհրաժեշտությունն է. այսպես, «կովը բեր» բառերը չեն կարող նախադասություն կազմել, եթե իրար ետևից չեն արտասանվում կամ իրար մոտ չեն գրվում, և նրանց միջև կապը ժամանակով կամ տարածությամբ խզվում է: 4) Նախանշանակվածություն (tatparya «տատպարյա»): սա նախադասության մեջ արտահայտվելիք մտքի՝ ինչի՞ համար նշանակված լինելն է: Այս կամ այն նախադասության, այլև բառի իմաստը հասկանալու համար պետք է իմանալ, թե խոսողը կամ գրողը ի՞նչ մտադրություն ունի, ի՞նչ առումով է գործածել բառերը: Նախադասության (այլև բառի) հասկանալու կախված է նախանշանակվածությունից, որ սովորական նախադասությունների դեպքում պարզվում է կոնտեքստից, վեղայական տեքստերի դեպքում՝ նրանց մեկնության տրամաբանական կանոններից, որոնք հաստատվում են միմանսայի կողմից. այսպես, համանուն բառերի դեպքում պետք է իմանալ, թե ո՞ր իմաստով է

տվյալ բառը գործածված: Այսպիսով, տատպարյան նկատի ունի մասամբ մողալականությունը, մասամբ՝ համանունությունը:

**Սաեքյայի փիլիսոփայությունը.**— Սանքյայի (sañkhyā «թիվ, թվարկում», այսինքն՝ ճիշտ սկզբունքների թվարկում) փիլիսոփայության ծաղկման շրջանն ընկնում է մ. թ. II—VII դարերում, թեև նրա գոյությունը հավաստվում է ավելի վաղ: Սա դուալիստական սիստեմ է:

Սանքյայի կողմնակիցներն ընդունում են հավաստի իմացության հրեք անկախ աղբյուր՝ ընկալում, տրամաբանական մտահանգում և վկայություն:

Ընկալումը լինում է 2 տեսակ՝ 1) անորոշ, չգիտակցված, որ հնարավոր չէ բառերով արտահայտել և 2) որոշակի, գիտակցված, որ արտահայտվում է ենթակա և ստորոգյալ ունեցող նախադասությամբ: Վկայությունը տալիս է այնպիսի օբյեկտների իմացությունը, որոնք հնարավոր չէ իմանալ ոչ ընկալմամբ, ոչ եզրակացություն: Հաստատումը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախադասություն, որ կազմված է որոշակի շարադասություն ունեցող բառերից: Բառը նշան է, որ նշանակում է մի որևէ բան («վաշակ»), իսկ նրա նշանակությունը՝ այն իրը, որ նա նշանակում է («վաչյա»): Այսպիսով, բառը որևէ օբյեկտ նշանակող սիմվոլ է: Նախադասության հասկացումը պահանջում է այն կազմող բառերի հասկացում:

**Միմանսայի փիլիսոփայությունը.**— Միմանսան («mīmāṃsā» «խորհրդածություն, հետազոտություն») ծագել է մոտավորապես մ. թ. ա. V—IV դդ. և նպատակ է ունեցել վեդայական ծեսերի (ոփտուալ) մեկնությունն ու արդարացումը: Միմանսայի փիլիսոփայության մեջ ևս խոսվում է իմացության աղբյուրների մասին. տարբերվում են իմացության անմիջական և միջնորդված աղբյուրներ: Հավաստի իմացության աղբյուրներից մեկն էլ համարվում է վկայությունը («շաբդ»), որ կարող է լինել բանավոր և գրավոր: Փորձելով հիմնավորել լեզուների հավերժականությունը, որի է մեկի կողմից ստեղծված չլինելը, միմանսայի հետևորդները բառերը և տառերը հավերժական են համարում. դրանք գոյություն ունեն, բայց սլառաբանական պայմանավորվածություն չունեն: Բառերը իրապես ընկալվող հնչյուններ չեն: Կ-ն տարբեր մարդկանց կողմից գրվում և արտասանվում է տարբեր տեղերում և տարբեր ժամանակ տարբեր ձևով, բայց մենք այդ բոլոր դեպքերում նկատում ենք, որ բոլորն արտասանում են միևնույն տառը. այս նույնությունը ցույց է



տալիս, որ այն որն է տարածության ու ժամանակի մեջ չի ստեղծվել, այլ դուրս է գալիս նրանց սահմաններից<sup>1</sup>:

Միմանուսյի այս ուսմունքի մեջ, շնայած նրա միատրիկ բնույթին, չի կարելի շտեմանել հնչույթի (ֆոնեմայի) ուսմունքի սաղմերը:

Հավաստի իմացության մի այլ աղբյուր էլ համարվում է բացատրության պահանջը (arthapatti). սա այն դեպքն է, երբ տվյալ երևույթը հնարավոր չէ հասկանալ առանց ենթադրելու մի ընկալվող փաստ: Սրա տակ բերվում են նաև լեզվական որոշ երևույթներ. այսպես, նախադասության զեղչված անդամի փոխարեն մենք ենթադրում ենք այս կամ այն բառը, առանց որի հնարավոր չէ բացատրել բացակայող իմաստը: Այդ նույն ձևով էլ, եթե բառը գործածված է ոչ ուղղակի իմաստով, մենք ենթադրում ենք բառի փոխարենական այս կամ այն գործածությունը, առանց որի հնարավոր չէ բացատրել նախադասության իմաստը:

## V. ԱՆՏԻԿ (ՀՈՒՆԱ. ՀՌՈՄԵԱԿԱՆ) ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ա. ՓՆՅԵԻ-Ի և ԹՃՅԵԻ-Ի շՈՒՐՋԸ տարվող վեճերը ի՞նչ Հուճաստացում

Լեզվաբանական ուսմունքների զարգացման նախադրյալները և սկզբնական բնույթը. — Լեզվական հարցերի նկատմամբ հին հույների հետաքրքրության ուժեղացումը սկզբնապես պայմանավորված էր փիլիսոփայական հարցերի լուծման ուղղությամբ նրանց կատարած պրպտումներով: Լեզվական հարցերը հանդես էին գալիս որպես փիլիսոփայական հարցերի մի օղակը, մարդկանց զբաղեցնում այն չափով, որ չափով դրանք առնչվում էին իմացարանական էությունների հարցերի լուծմանը: Յուրաքանչյուր փիլիսոփա, որ զբաղվում էր գոյի ու գիտակցության փոխհարաբերության և մարդկային մտածողության հարցերով, չէր կարող անտարբերությամբ անցնել մի գործոնի կողքով, որ հանդիսանում է «իսկական գործնական գիտակցություն»<sup>2</sup>, «մտքի անմիջական իրականություն»<sup>3</sup>: Անտիկ

<sup>1</sup> Հմմտ. С. Чаттерджи и Д. Датта, Введение в индийскую философию, М., 1955:

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., I изд., т. IV, էջ 20:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 434:

լեզվաբանության արժեքը առաջին հերթին լեզվաբանական կարե-վորագույն պրոբլեմների առաջադրումն է, պրոբլեմներ, որոնց լուծումը, սակայն, դեռևս լուրջ ստղմնավորվում է<sup>1</sup>:

Միաժամանակ հունական փիլիսոփայական մտքի ներկայացուցիչները այս կամ այն հարցի լուսաբանության համար հաճախ էին դիմում լեզվից առնվող օրինակներին: Այս հանգամանքը ևս ղգալի շափով նպաստում էր լեզվական երևույթների հատկությունների բացահայտմանն ու նրանց սիստեմավորմանը:

Լեզվի գործնական ուսուցումը սկզբնապես սահմանափակ բնույթ էր կրում և լեզվական լայն հետաքրքրության համար նյութ չէր տալիս: Գրավոր և բանավոր խոսքի ուսուցումը տարրական գրագիտական տեղեկություններից այն կողմը չէր անցնում, մասնավորապես սկզբնապես գրավոր և բանավոր խոսքի միջև աչքի ընկնող խղում գոյություն չունեի:

Լեզվական հարցերի սկզբնական բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է նկատի առնել երկու կարևոր հանգամանք:

Առաջին՝ երբ հունական լեզվաբանությունն սկսում էր իր առաջին քայլերը, չկար առանձին լեզուների կառուցվածքի ուսումնասիրության ուղղությանը կուտակված նյութ, և առանձին լեզուների կառուցվածքային տարբերության հարցը մարդկանց չէր զբաղեցնում: Հին հույների լեզվական ողջ զբաղումների հիմքում ընկած էր լեզվային ընդունվող այն գրույթը, թե մեկ լեզվի հիման վրա արվող եղբայրացությունները կիրառելի են բոլոր լեզուների նկատմամբ, ընդհանրական բնույթ են կրում: Նրանց մտածել չէր տալիս այն հարցը, թե կարելի է արդյոք ընդհանուր փիլիսոփայական եզրակացություններ անել միայն մեկ լեզվի տվյալների հիման վրա: Սրա հետ սերտորեն կապված է այն հանգամանքը, որ հին հույները սովորաբար լեզվական ընդհանուր պրոբլեմները քննում են որպես անվան բնույթի ու ծագման պրոբլեմներ:

Երկրորդ՝ հունական փիլիսոփայական միտքը իր առաջին քայլերը կատարելիս նոր էր թոթափում դիցաբանական պատկերացումների խանձարուրները: Ավելի կամ պակաս շափով դրանք երևան էին քալիս նաև լեզվական հարցերի լուծման մեջ՝ առաջ բերելով այս կամ այն մեկնաբանությունը: Պետք է նկատի առնել, որ դիցաբանական զանազան պատկերացումները մի կուռ միասնական սիստեմ

<sup>1</sup> Հմմտ. Robins, Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe, London, 1951:

<sup>2</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 10:

չէին կազմում և ունեին հակասություններ: Առանձնապէս կարևոր է հիշատակել այն պատկերացումները, որոնք վերաբերում են անունների բնույթին և ծագմանը: Դիցարանական պատկերացումների տեր մարդը անվան և իրի բնույթի միջև հակասություն չէր տեսնում, դիտում էր անունը և իրը անխզելի միասնության մեջ, առաջինը որպէս երկրորդի անբաժան մասը, նրա որակարար կողմը, որի օգնութեամբ կարելի է ազդել իրի վրա: Սակայն անունների առաջացման հարցը լուծելիս մարդը կանգնած լինելով իմացության սկզբնական աստիճանի վրա, ստիպված էր դրանք կապել որևէ օնոմատոթետոսի (անվանադրի) հետ՝ լինի այն մարդ թե աստված: Առաջանում էր յուրատեսակ հակասություն՝ անունների բնույթի և անունների առաջացման դիցարանական պատկերացումների միջև: Այս հակասությունը կամ շրջանցում էին, կամ դիմում անվանադրութեան ակտի յուրատեսակ մեկնարանութեան. անվանադիրը կամ պարզապէս անվան գլուտարարն է, որ բացահայտում, գտնում է իրի մեջ նրա անունը, կամ իրին հատկացնում է նրա բնույթին ու էութեանը հատուկ անուն<sup>1</sup>:

Դիցարանական մտածողութեան համեմատութեամբ հունական փիլիսոփայական մտքի առաջընթացը լեզվի բնագավառում արտահայտվեց իրի և անվան արբերակմամբ: Սակայն անունը դեռևս շարունակում էին ըմբռնել որպէս բառի և բառիմաստի ամբողջութուն, սրանք միմյանցից չէին անջատում: Միաժամանակ անվան մեջ նյութական և քերականական իմաստները շարունակում էին շտարբերակել, դիտել իբրև մի միասնական բան: Հետագա առաջընթացը նշանավորվում է բառի հնչյունական ձևի ու բառիմաստի, բառի նյութական ու քերականական իմաստների տարբերակմամբ:

Φύσει-ի և θέσει-ի շուրջը տարվող վեճերը.— Հունական փիլիսոփայական միտքն զբաղեցնող գլխավոր լեզվական հարցը անվան բնույթի հարցն էր, իրի էութեանը (բնույթին) նրա համապատասխանելու կամ չհամապատասխանելու խնդիրը: Այն փիլիսոփաները, որոնց վրա դիցարանական պատկերացումները ուժեղ ազդեցություն ունեին, գտնում էին, որ անուններն իրերին տրվում են ըստ այդ իրերի բնույթի, նրանց բնութեանը համապատասխան՝ «բնութեամբ» (φύσει) և որ ամեն իրի «ի բնե» հատուկ է որևէ անուն: Նրանց հակառակորդները իրի և անվան բնույթի միջև այդպիսի պարտադիր համապատասխանություն չէին տեսնում: Նրանց կարծիքով, անունները դործում են օրենքի ուժով, սովորութեամբ,

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 9:

մարդկանց որոշ պայմանադրություններ (չօրենքով), չժել «սովորություններ», ՍՅԵ «դրություններ»)։ Այս վեճը հայտնի է ֆոսեյ-ի և ՍՅԵ-ի կողմնակիցների վեճ անունով։ Նկատվում էին և երկու հակառակ տեսակետները հաշտեցնելու և մի միջին լուծում գտնելու տենդենցներ։

Նշելի է, որ նշանի շատաճառաբանվածության և պատճառաբանվածության հարցադրումները ժամանակակից լեզվաբանության մեջ, վերջին հաշվով, ֆոսեյ-ի և ՍՅԵ-ի վեճերի յուրատեսակ ձևափոխություններն են։

Հերակլիտ.— Փրիսոփայական վաղ դպրոցների ներկայացուցիչներից Հերակլիտը, որքան կարելի է եզրակացնել պահպանված տեղեկություններից, հանդես է եկել որպես յ կողմնակից։ Միևնույն կարգի հայացք է վերագրվում նաև իոնիական բնափիլիսոփայության ներկայացուցիչներին, թեև առանց որևէ հաստատուն փաստարկի<sup>1</sup>։

Էլեական (էլեաթենրի) դպրոցը.— էլեական (էլեաթենրի) դպրոցի (VI—V դդ. մ. թ. ա.) ներկայացուցիչները պաշտպանում էին հակառակ տեսակետը։ Նրանք ճշմարտությունը տեսնում էին միակ հավերժական ու անփոփոխ գոյի մեջ։ Սակայն մարդը, ըստ նրանց, ճշմարտությունը իմանում է միայն մտաավորապես, որովհետև կարծիքները հոգին տանում են զգայարանների խաբուսիկ տվյալների ճանապարհով։ Անունները հենց այդպիսի մոլորությունների աղբյուր են, որովհետև անվանմամբ էլ կազմվում է կարծիքը իրի մասին։ Սակայն ՍՅԵ-ի սկզբնական ոչ բոլոր կողմնակիցներն էին, որ ընդունում էին էլեաթենրի տեսակետը։ Տրակտատներից մեկի («Արվեստի մասին») անանուն հեղինակը գրում էր. «Ես կարծում եմ, որ արվեստներն ընդունել են անունները (արտաքին աշխարհի) պատկերների շնորհիվ։ Անհեթեթություն է կարծել, որ պատկերները բուսել են անուններից, և (այդ) անհնար է, որովհետև անունները օրենքի սահմանումներն են, իսկ պատկերները սահմանումներ չեն, այլ (բնության ստեղծած) բողբոջները»<sup>2</sup>։ Այսպիսով, այս տրակտատի հեղինակն ազելի հետևողական կերպով է անցկացնում անվան և իրի անհամապատասխանության, անունների օրենքի արդյունք լինելու տեսակետը, քան էլեաթենրը, որոնք անունները դիտում են իրրև իրերի մասին մեր ունեցած կարծիքների աղբյուր։

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 14։

Նույն տեղը, էջ 34։

**Դեմոկրիտ.**— Հին աշխարհի խոշորագույն փիլիսոփա-ատոմիստ Դեմոկրիտը (մոտ. 460—370 մ. թ. ա.) նույնպես հանդես է եկել որպես «օրենքի» կողմնակից: Նա բերում է անունների և իրերի տնհամապատասխանության 4 կարգի ապացույց. 1) մեկ իրը կարող է ունենալ մի քանի անուն (նույնանիշ բառերը). 2) ընդհակառակը, մի քանի իր կարող են ունենալ մեկ անուն (համանուն բառերը). 3) մեկ անունը (նկատի ունի հատուկ անունները) կարող է փոխարինվել մի այլ անվամբ. 4) կան իրեր, որոնք անուն չունեն:

Պլատոնը և նրա «Կրատիլոս» երկախոսությունը.— Ամենից ավելի հանգամանորեն այս հարցը քննության է տանված Պլատոնի «Կրատիլոս» երկախոսության մեջ, որտեղ վեճը գնում է ֆոնաետիկոլոմնակից Կրատիլոսի և Թեթեյի կողմնակից Հերմոգենի միջև: Սոկրատեսը սկզբում կարծես թե իր համաձայնությունն է հայտնում Կրատիլոսին՝ նշելով, որ անունները իրերի էության իմացության «գործիքներ» են և որ նրանք բնականից հատուկ են իրերին: Այս նպատակով նա քննում է բոլոր հնարավոր ապացույցները հօգուտ անվան և իրի բնույթի համապատասխանության տեսության: Նախ օրինակներ է բերում մարդկանց և աստվածների հատուկ անուններից՝ ստուգաբանական վերլուծության միջոցով փորձելով ցույց տալ այդ անունների բնական ճշմարտացիությունը: Այս վերլուծության ընթացքում Սոկրատեսը առանձնացնում է անունների որոշ խումբ (τὰ πρῶτα ὀνόματα «նախնական անունները»), որոնց միջոցով կատարում է նշված անունների վերլուծությունը: Այս «նախնական անունների» համար անկիրառելի համարելով ստուգաբանության նախորդ եղանակները, Սոկրատեսը բերում է երկու կարգի կարծիք. 1) այդ «նախնական անուններն» ստեղծել են աստվածները. 2) այդ անունների և իրերի բնույթի համապատասխանությունն արտահայտվում է նրանով, որ որոշ «տառեր» իրենց բնույթով հիշեցնում են իրերի այս կամ այն հատկությունը՝ ρ-ն՝ շարժումը ('ρῆν հոսել), τρῆμος գոգոց, τρέχειν «վազել»), ι-ն՝ նուրբը, որ կարող է հեշտությամբ անցնել բոլոր բաների միջով (ίέναι «գնալ»), ἴεσθαι «ձգտել»), λ-ն՝ հարթը և սահունը (λεῖα «հարթ», ὀλισθαίνει «սահել»), ο-ն՝ կլորը (γούρον) և այլն:

Անունների և իրերի բնույթի համապատասխանության բոլոր կարգի ապացույցները քննելուց հետո՝ Սոկրատեսը անհրաժեշտ է համարում հարցը ավելի հիմնովին վերանայել ու ստուգել՝ ինքնախաբեությունից զերծ մնալու համար: Այլ՝ նպատակով նա սկսում է բերել այնպիսի օրինակներ որոնք հակասում են հնչունների՝

վերևում նշված հատկություններին: Նախ՝ որոշ անունների մեջ կարող են հանդես գալ նշանակվողի բնույթին անհամապատասխան «տառեր»։ այսպես լ-ն, որ համարվում է հարթի և փափուկի արտահայտիչ, հանդիպում է օւղթուտի «կոշտություն» բառի կազմում: Երկրորդ՝ միևնույն անվան տարբեր ձևերում կարող են հանդիպել բնույթով իրար անհամապատասխան «տառեր»։ այսպես, օւղթուտի բառը էրետրիացիները արտասանում են օւղթուտի, այսինքն՝ օ-ն փոխարինում են օ-ով: Երրորդ՝ այնպիսի բառերը, ինչպիսիք թվականներն են, հիմք չեն տալիս հարցի նման լուծման համար: Այստեղից էլ Սոկրատեսը անում է այն եզրակացությունը, որ անունները իրերի ճիշտ արտացոլումները չեն: Այն հանգամանքը, որ խոսողը և լսողը բառերը հասկանում են միատեսակ, բխում է ոչ թե անունների և իրերի համապատասխանությունից, այլ հանդիսանում է սովորույթի և դաշինքի արդյունք:

Ըստ Պլատոնի՝ իսկական իմացությունը ծագում է ոչ թե անունների ստուգաբանությունից, այլ իրերի բնույթի հետազոտությունից: Պլատոնը ավելի ուշ, իր 7-րդ նամակում անդրադառնալով այս հարցին, նշում է, որ անունների իմացությունը իմացության ստորին աստիճանն է, և իր համոզմունքն է հայտնում անունների՝ «դաշինքի» արդյունք լինելու տեսակետի ճշտության առթիվ: Պլատոնի այս հայացքը մասամբ էլ բացատրվում է նրանով, որ ըստ Պլատոնի՝ «բնություններ ճիշտ» լեզու կարող է գոյություն ունենալ միայն իդեաների աշխարհում<sup>1</sup>:

Արիստոտել.— Արիստոտելը անունների և իրերի բնույթի համապատասխանության հարցին հատուկ ուշադրություն չի հատկացրել: Սակայն նա ևս հարում է դաշինքի տեսակետին՝ նշելով, որ ոչ մի անուն բնությունից գոյություն չունի: Ըստ նրա՝ անունները «գործիքներ» են, որոնք բնական ոչինչ չունեն<sup>2</sup>: Լեզուն Արիստոտելը համարում է մարդուն մյուս կենդանիներից տարբերող կարևոր գործոն՝ նշելով, որ միայն մարդն ունի լեզու:

Ստոիկներ.— Համեմատաբար ուշ շրջանի փիլիսոփայական դպրոցներից ստոիկները հանդես են գալիս որպես ֆոնի-ի, իսկ սկեպտիկները՝ որպես մեթա-ի կողմնակիցներ: Ստոիկների մոտ հարցադրումն ավելի է բարդանում, որովհետև նրանք անվան մեջ

<sup>1</sup> Հմմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 16:

<sup>2</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 21:

սկսում են տարբերակել հնչյունական ձևեր և իմաստը: «Ստորիկները պնդում են,—գրում է Սեքստոս էմպիրիկոսը,—որ երեք (բան) իրար հետ զուգորդվում են՝ նշանակվողը, նշանակողը և առարկան... Մրանցից երկուսը մարմնական են, այն է՝ հնչյունը և առարկան, մեկը անմարմին է, այն է՝ նշանակվող բանը, և դա արտահայտվողն է, որ կարող է լինել ճիշտ կամ սխալ»<sup>1</sup>: Այդ պատճառով էլ ստորիկների կարծիքով՝ խոսել նշանակում է արտասանել պատկերացվող իրը նշանակող հնչյունը, որը խոսողի մեջ առաջացնում է համապատասխան տպավորությունը՝ շնորհիվ անվան և իրի բնույթի սկզբնական համապատասխանության: Ունենալով այն գաղափարը, որ «անունները բնույթունից են, որովհետև առաջին հնչյունները նմանվում էին իրերին, իսկ նրանց համապատասխանում են անունները»<sup>2</sup>,—ստորիկները հիմք են դնում յուրատեսակ ստուգաբանական ուսմունքի, որ հիշեցնում է Պլատոնի հիշյալ տրամախոսության մեջ կատարված ստուգաբանական վերլուծությունը: Միաժամանակ նրանց մոտ տեղ են գտնում լեզվի ծագման բնաձայնական տեսության սաղմերը:

Ակեպտիկներ.— Ակեպտիկները անունների և իրերի բնույթի փոխհարաբերության հարցում հակադրվում էին ստորիկներին՝ պենդելով, որ անունները շեն արտացոլում իրերի էությունը: Ակեպտիկների կարծիքով՝ բառերի իմաստը արդյունք է պատահական սահմանման, այլապես բոլոր ժողովուրդները իրար կհասկանային: Ակեպտիկների մտքած տերմինը այս անհամապատասխանությունը նշանակելու համար,— որ անուններն իրերին տրվում են «επειθετικῶς»,— հետագայում դառնում է «φύσει· ἢ· ἁκρωτακτορικῶς»-ի տեսակետի ընդհանուր անվանումը:

էպիկուրյաններ.— էպիկուրյանները յուրատեսակ փորձ են անում հաշտեցնելու երկու հակադիր տեսակետները: Ըստ նրանց՝ անուններն սկզբնապես ծագել են մարդկանց բնությանը համապատասխան, իսկ մարդկային բնությունը կրել է շրջապատող իրերի ազդեցությունը: Բանականությունը հետո ճշտել է բնության տվածը: Մարդիկ անհրաժեշտության և կարիքի ուժով միասին սահմանել են հատուկ նշանակումներ, որպեսզի կարողանան ավելի լավ հարդարակցել:

Շարադրելով էպիկուրի հայացքները՝ Դիոգենես Լաերտիոսը իր

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 69:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 72:

«Փիլիսոփաների կենսագրութիւններ»-ում գրում է. «Մարդկային բնութիւնը բազմաթիւ և բազմազան դեպքերում ներգործութեան է ենթարկուել (շրջապատող) իրերի կողմից և նրանցից ցուցումներ ստացել: Իսկ բանականութիւնը հետագայում ճշտել է բնութեան կողմից տրվածը և բացահայտել բացի դրանից (այլ բաներ), ոմանց մոտ արագ, ոմանց մոտ դանդաղ, որոշ շրջաններում ու ժամանակներում (մեծ հաջողութեամբ), մյուսներում՝ պակաս: Այնպես որ անունները եւ նախապես սահմանումից չէ, որ ծագել են, այլ հենց մարդկանց բնութիւնները, կրելով յուրաքանչյուր ցեղի մեջ առանձնահատուկ տպավորութիւններ և ստանալով առանձնահատուկ ընկալումներ, տարբեր ձևով են արտաշնչել օդը, այդ տպավորութիւններից և ընկալումներից յուրաքանչյուրի ներգործութեան տակ, վայրերի և ցեղերի բազմազան առանձնահատկութիւններին համապատասխան: Իսկ հետագայում յուրաքանչյուր ցեղի մեջ միասին սահմանել են առանձնահատուկ (նշանակումներ), որպեսզի փոխհաղորդակցումն ավելի քիչ երկիմաստ և ավելի շատ սեղմ լինի: Այս նույն ձևով էլ, ներմուծելով ընկալման համար անմատչելի որոշ իրեր, դրանք արդեն ճանաչած անձինք հաղորդել են որոշ հնչյուններ՝ ղգալով այդ հնչյուններն արտասանելու կարիքը և, բանականութեամբ ընտրելով դրանք կարևորագույն պատճառին համապատասխան, այդ եղանակով բացատրել են (իրերը)»<sup>1</sup>:

Էպիկուրի հետևորդներից մեկը՝ Դիոգենես Էնոսանդացին, ծաղրի էլ բնթարկում ինչպես անվանադրի գաղափարը (Հերմեսին լեզվի յուրատեսակ ուսուցիչ պատկերացնելը համարելով անհեթեթութիւն), այնպես էլ անունները դաշինքի արդյունք համարելու տեսակետը: Միծաղելի է խոսել դաշնագրութեան մասին, որովհետև մեկը չէր կարող հավաքել այդքան բազմութիւններ և այն ժամանակ, երբ շկային ոչ տառեր, ոչ հնչյուններ, ուսուցչի նման սովորեցնել նրանց այս կամ այն անունը:

Ամփոփման և խմբավորման փորձեր.— Համեմատաբար ավելի ուշ շրջանում Ամոնիոսը Արիստոտելի «Մեկնութեան մասին» աշխատութեան իր մեկնութեան մեջ շնչաբանութեան և թմբաբանութեան կողմնակիցների հայացքները փորձում է խմբավորել՝ դրանցից յուրաքանչյուրի մեջ տարբերելով երկու ուղղութիւն: Ըստ նրա՝ Պոսեյդոնի կողմնակիցներից ոմանք, ինչպես Հերակլիտի հետևորդ Կրատիլոսը, անունների բնականութիւնը հասկանում են այն իմաստով, որ անունները

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 65:



րը բնության ստեղծագործությունն են. իմացող մարդու գործն է լոկ բացահայտել դրանք: Մյուսները կարծում են, որ անունների բնականությունը նշանակում է անվանվող իրերի բնությանը նրանց համապատասխանելը, բանական լինելը. այսպես, իշխող մարդու համար հարմար է Արխիդամոս («Փողովորդապետ») անունը: Այլ կերպ ասած՝ ըստ այս ուղղության՝ անունները հիշեցնում են նկարչական արվեստի գործերը: Ինչպես Կրատիլոսի հակառակորդ Հերմոգենը, այդ հասկանում են այն իմաստով, որ անվանումը կամայական բան է և ամեն մարդ ուղած առարկան կարող է կոչել ուղած ձևով. մյուսները՝ այն իմաստով, որ անունները սահմանում է որևէ անվանադիր, որը կամ գիտե իրերի բնությունը և համապատասխան անուններ է տալիս, կամ ցուցում է ստանում այդպիսի մի իմացողից:

### բ. Յեռուգիստների և ահումալիստների վեճերը հելլենիստական Հուճաստացում

Վեճի էությունը. — Հելլենիզմի շրջանում փոքր-ինչ այլ ընթացք են ստանում՝ հանդես գալով որպես անալոգիայի և անոմալիայի կողմնակիցների վեճեր: Այդ վեճերի ակունքները կարելի է տեսնել ստոիկների մոտ, որոնք ժամանակին նշել էին քերականական ձևերի մեջ երբեմն նկատվող անմիօրինակությունը՝ անոմալիան՝ հակառակ ավելի ընդհանուր ընդլսթ կրող անալոգիկ ձևերի. այսպես, քերականորեն լոկ արական կամ լոկ իգական սեռի բառը կարող է նշանակել և՛ արու, և՛ էգ. միևնույն տիպի բառերի սեռական հոլովը կարող է տարբեր ձևավորում ունենալ. ուղղական և սեռական հոլովները, ընդհանրապես տարբեր լինելով հանդերձ, որոշ դեպքերում կարող են համընկնել և այլն: Այսպիսով, անալոգիայի և անոմալիայի հարցը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառի քերականական ձևի և արտահայտած իմաստի, քերականական և տրամաբանական կատեգորիաների համապատասխանության և անհամապատասխանության, լեզվի մեջ կանոնավորության, թե՛ անկանոնության իշխելու հարց:

Վեճի դերը հունական ֆերականության ձևավորման մեջ. — Այս հարցը հետագայում անցնում է քերականներին և հիմք տալիս նրանց կողմից քերականական համապատասխանություններ ու կանոնավորություններ և բացառություններ ու շեղումներ որոնելու

պրպտումներին: Անոմալիան կողմնակից է գտնում հանձին Քրիստիպոսի և նրա աշակերտ Կրատես Մալոսացու: Քրիստիպոսը, ըստ լատին քերական Վառոնի, որ հիմնական աղբյուր է ծառայում այս վեճի բնույթի որոշման համար, գրել է «Անոմալիայի մասին» աշխատությունը: Հակառակ տեսակետին էր Կրատես Մալոսացու ժամանակակից, հայտնի քերական Արիստարքոսը (մոտ 200—150 թթ. մ. թ. ա.), որը լեզվի մեջ իշխող էր համարում անալոգիան: Այս վեճի առկայությունը էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Արիստարքոսի աշակերտ Դիոնիսիոս Թրակացին իր քերականական աշխատության մեջ քերականության այն մասը, որի մեջ տրոփվում է խոսքի մասերի ուսմունքը, այսինքն՝ քերականության բուն մասը, համարում էր անալոգիկ ձևեր գտնելը (ἀναλογία εχλογισμός):

**Վեճի հարթումը.**— Ինչպես կարելի է եզրակացնել Վառոնի հաղորդածից, վեճը հետագայում հարթվեց նրանով, որ Արիստարքոսի առաջ քաշած՝ գործածության գաղափարը տարածվեց և՛ անալոգիայի, և՛ անոմալիայի վրա: «Հետևաբար,— գրում է Վառոնը,— եթե գործածությունն ընդգրկում է նման և ոչ նման բառերն ու նրանց հոլովումը, ապա չպետք է մերժել ոչ անոմալիան, ոչ անալոգիան»<sup>1</sup>:

#### **Գ. Լեզվի (անունների) ծագման տեսությունները ինք չունաստանում**

**Չայնարկությունների տեսության սաղմերը.**— Ինչպես տեսանք, φύσει-ի և θέσει-ի վեճերը սերտորեն կապվում էին նաև լեզվի (ավելի ճիշտ՝ անունների) ծագման հարցի հետ: Խոսել անունների բնույթի, իրերի բնությանը նրանց համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին՝ նշանակում է խոսել նաև անունների ծագման մասին: Եվ իրոք, այդ վեճերի մեջ առկա են հետագայում լայն մեկնաբանություն ստացած երկու տեսությունների սաղմերը՝ բնածայնական և ձայնարկությունների: Մենք տեսանք նաև, որ էպիկուրյանների ուսմունքի մեջ առկա էին ձայնարկությունների տեսության սաղմերը: Էպիկուրյանների կարծիքով, մարդիկ իրերին անուններ են տվել ըստ այն տպավորությունների, որ թողել են իրերը նրանց հոգում: Այլ կերպ ասած՝ անունները ոչ

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 94:

դուռըտ թշուառ մտազատմանոց հետք մն չնստանալոց որ տուրբվոց որոցքն մղուաջ հոտմը յնշուառուց հոտմըվը մտազատմանոց ղվհոգիո թղուառ ղվոտմը իսնցիթոնուց հվնահիմը որ ՛լոգոն հոտմըվը հուո -տըրոթ դուրիաքմուց վմըդըտեոն հըմհըմսիսո հոտմը մծվմուհի իսս -գընաստեոտաթ աս իստուղ նըրուց ըրաիդը որ մմըմոնիտուսսո ովոտե ղվն ըսասն դուռնամվն իսթըտի դըրըտըտեոն որ հմըհուրեոնիդը ղվն ըսսմուո հվնսսը—տը ն ըրսսն—ըր ըրսոո ՛ոգեոուցմեիլլ»

մոզցն

-սսն ռսնըմըմ թնգը ռսնըլ դուրոմմոնսց ՛թոնիՆսսսմուո որ ռսնըիտոննըո մտազատմանոց ղսնմուր հվնսմուղՆո դուրիադոնըդի ըրսսնեոմոհը ն սըտոնո մս ՛տսը ռսնովվհնվլ ոսմսսսսվս թըր ըրսըոգս թըրը մմ -գըթըտեոթմ ուրթըրսոգս վսսվմիսըրըս : մոզցնսսն դուրմսիտուոըրվ վմըդըրսնըց սոուրբըո կընմոն ղը ըրսըմսսի իսսս ՛ըր ղիտեո նսոոհ -տե ուր հս ՛տսը վմըդըրսնսիվնն մըրսնթրսոգս վմըդըրսնթրսսիմոը -ոմը որ վսսվմիսըրըս մըրսնթրսոգս դոնթրսնըրսոըրըս : մըրսնթրսսսըր -տմնըո որ մծվմուհի ղը ըրսիսսն ՛տսը վմսսիվնն սըտուհիտուց ՛մըրս Նվնը դուրիադըրըս դուրնեոնմոն ուրը : մըրնոո ռսնըսըմ ոզցնսն ղսն -տըրստեոնըմ ՛թըրսննո ուրըոնմոն ոսոմոմոհիմը դուրիոըրստոն ոզոն -մս նոո ՛տիո ուրոննըոմըր ոզեոմս զթ Նս մըրսսեոթ վիեըլ ոլոը ովլ -տե ն ոզնըոց նըսոնո .տոըըրսը նոո վը ոլոը կըՆըոդսոըր ն մսըմուհի : մմըզըստուտե ուրոնեթ ուրթըրսոգեոնեոմ վմըդըրսնըլ ռսնըստեոնոմ ըրսիմո ն զմսսի ՛ըվըրըս սըր : մըրնեո վծըրսըրս ուրոնեթ դուրիոհ -տմոուսը վիեըլ թըր ըրսըոգս թըրըս սսը վմսսիվնն որ ուոո ՛վսսվ միսըրըս — մնըրնո ուրննսոգս ուրոնեթ ուրիոհոսսոուցս վիեըլ

տսը վմըդըրսնսսիվնն որոն մնսուց ըրսիմն

ն ոզեոնըլ : տըզըրսը Նվնսնոմ մոզոմս հս ովոնե ն ոզնըոց նըս -ոնո մըրսնթրսոգս ուրիադըրսոըրըս : նՆ ոո մըրնսի դուրիադըրըս վծըրսը -ոոս ուրիոտեոըրստե ուրիադը : ղվթըրսըմ վմըդըրսնըրըս նսիտուցստ -մոո ն ըրսըտոնիտուտեոնըրս (մթըրսնըմ վմըսոզը ուրիադըրոոսսմո) մթըրսնըմ ուրիադըրոոսսմո վմըդըրսնըց զթ ՛ն ուր ուրսնթրսնը վմս ու ըրս-«ոսվստմը» վըստուլլ ն թոնիմնոմաՆ մս ՛նըր վծըրսըրս ուրի -տուոըրստե ուր նըսնե ն ուրիադըրսնըրստմ ոզմսսոոմս նոոն հվմ -գըրիվստո մըրսնթրսոգս ուրիադըրսոըր ուրը : «ըվմըմ ղվն ըրսիդըրը մմըդըրսնըց ղվնոսսն» իսծվըմոհ հոտմը ՛թըրսոգս ոզեոնըս : մմ -գըրնո ուրիադըրս ուրիադըրսոըրըս նոո վը ղվն ուրիադըրսնըրս թըր -ոոս վմըզըրիվսսուղ — մնըրնո ուրննսոգս ուրիադըրսոըրըս

մըզըրսնթրսնսսուցս վմըդըրսնթրսնսսիվնն

վմըմմոս ուրիոնսց զոնոոն հվմըմվ ՛նըրիոմուր Նս զթը ՛ըր Նըվ նո

տարրորոշ բառերի և, միմյանց հետ սիմվոլներ հաստատելով աժեն իրի համար, ստեղծեցին իրենց համար հասկանալի բացատրություններ ամեն ինչի վերաբերյալ: Իսկ որքանով որ այդպիսի միավորումներ տեղի ունեին ողջ աշխարհում, ապա լեզուն ոչ բոլորի մոտ համահունչ դուրս եկավ, քանի որ յուրաքանչյուրը պատահական կերպով էր կազմում իր բառերը. այստեղից էլ լեզուների բնույթի բազմադանոթյունը, իսկ սկզբնական ծագած միավորումները սկիզբ դրեցին ցեղերին»<sup>1</sup>:

Լեզվի՝ ձեռքբերովի<sup>2</sup>, թե՛ բնածին լինելու հարցը.—Վեճերի տեղիք էր տալիս և այն հարցը, թե լեզուն ձեռքբերովի՞ է, թե՞ բնածին երևույթ: Պլատոնը խոսելու շնորհքը մարդուն հատուկ էր համարում: Ընդհանրապես փՅՅԵԻ-ի կողմնակիցները մեծ մասամբ հանդես էին գալիս լեզվի՝ մարդուն «ի բնե» հատուկ լինելու տեսակետով, ՓՅՅԵԻ-ի կողմնակիցները այն համարում էին ձեռքբերովի: Ահա թե ի՞նչ էր նշում այս կապակցությամբ հույն հեղինակներից մեկը (անունը չի պահպանվել). «Մենք սովորում ենք անունները, ավելի կամ պակաս շափով, մեկը հորից, մյուսը՝ մորից: Եթե մեկը հավատացած չէ այն բանում, որ մենք անունները սովորում ենք, և (կարծում է), թե մենք ծնվում ենք դրանց իմացությամբ, թող համոզվի հետևյալ հիման վրա. եթե որևէ մեկը նորածին երեխային ուղարկի Պարսկաստան և այնտեղ մեծացնի առանց հելլենական լեզուն լսելու, ապա երեխան կխոսի պարսկերեն, իսկ եթե մեկը քերի այստեղ, ապա՝ հելլեներեն»<sup>2</sup>:

#### գ. Լեզվափոխառության հարցերը հին Հռոմում

Հունական ազդեցությունը.— Ինչպես փՅՅԵԻ-ի և ՓՅՅԵԻ-ի, այնպես էլ անալոգիայի և անոմալիայի շուրջը տարվող վեճերը լայն արձագանք են գտնում հռոմեական մտածողների մոտ: Լեզվի (անունների) ծագման և իրերի ու անունների փոխհարաբերության հարցերը, սկիզբ առնելով հույների մոտ, անցնում են և Հռոմ՝ լեզվա-փերականական գործնական հարցերի հետ միասին գրադեցնելով հռոմայեցիների միտքը: Հռոմայեցիների դերն այս դեպքում կայանում է նրանում, որ, մի կողմից, նրանք մեծ շափով տեղեկություններ են պահպանել հունական լեզվաբանական մտքի մասին՝ բաց անելով մեզ համար շատ կորած էջեր, մյուս կողմից,

<sup>1</sup> Античные теории и языка стили, 1936, էջ 33:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 35:

որոշ հարցերի լուծման մեջ նրանք հուլյների կույր ընդօրինակողները շեն, այլ ունեն և ինքնուրույն կողմեր:

Հոռոմեական լեզվաբանական միտքը սկզբնավորվել և զարգացել է հունականի ազդեցութեան տակ: Շատ դեպքերում հոռոմայեցիները հուլյների ունեցած նվաճումները վերցրել և կիրառել են իրենց լեզվի նկատմամբ՝ առանց էական փոփոխութիւններ մտցընելու. տարբերութիւններն արտահայտվել են օբյեկտի թելադրած պահանջով և ընթացել որոշ դրույթների մանրամասնման ուղղութեամբ: Հետազոտողների կարծիքով՝ դեռ վաղ շրջանում հոռոմայեցիները պետք է որոշ լեզվաբանական գիտելիքներ ունեցած լինեն: Քվինտուս Էնիտուս, որը լատինական տաղաչափութեան մեջ ջին անգամ օգտագործել է հունական հեքսամետրը, թերևս պետք է տարրական քերականական ծանոթութիւններ ունենար:

Փոսէ-ի ու Յէսէ-ի և անալոգիայի ու անոմալիայի շուրջը տարվող վեճերի արձագանքները Հռոմում.— Հոռոմայեցիների ավելի մոտ ծանոթութիւնը հունական լեզվաբանական-քերականագիտական մտքի հետ տեղի է ունենում մ. թ. ա. II դարում: 167 թ. մ. թ. ա. հուլյն քերական, Պերգամի քերականական դպրոցի ներկայացուցիչ անոմալիստ Կրատես Մալոսացին, որպես դեսպան ուղարկվելով Հռոմ և հանգամանքների բերումով բավական երկար մնալով այնտեղ, հունարեն լեզվով դասախոսութիւններ է կարդում: Հոռոմայեցիները ծանոթանում են փոսէ-ի ու Յէսէ-ի և անոմալիայի ու անալոգիայի շուրջը տարվող վեճերին, այլև հունական քերականագիտութեան մշակած սկզբունքներն սկսում կիրառել լատիններենի նկատմամբ: Թե հոռոմայեցիների մոտ որքան մեծ էր հետաքրքրութիւնը լեզվական հարցերի նկատմամբ, երևում է այն փաստից, որ Հուլիոս Կեսարը գրել է հատուկ աշխատութիւն՝ «Անալոգիայի մասին», որը, սակայն, մեզ չի հասել: Բուն քերականական հարցերը, ինչպես կտեսնենք, լայն ուսումնասիրութեան առարկա են դառնում՝ տալով այնպիսի նշանավոր քերականագետներ, ինչպիսիք էլիոս Ստիլոն և Մարկոս Տերենցիոս Վառոնն են (116—27 մ. թ. ա.): Վերջինիս աշխատութիւնների պահպանված հատվածներից էլ մենք տեղեկանում ենք անալոգիայի և անոմալիայի նշանավոր վեճերի մասին, թեև օրինակները Վառոնն ընտրում է լատիններենից: Ինքը Վառոնը այս հարցում, ինչպես տեսանք, յուրատեսակ միջին դիրք էր բռնում՝ լեզվի մեջ

<sup>1</sup> Հմտ. W. A. Oldfather and G. Bloom, Caesar's Grammatical Theories and his own Practice, „Classical Journal“, XXII:

ընդունելով և՛ անալոգիան, և՛ անոմալիան: Վառոնը լեզվական ողջ հարցերը հանգեցնում է երեքի՝ 1) անունների և իրերի փոխհարաբերության կամ գՅՅԷ-ի և ՍՅՅԷ-ի շարքը, 2) քերականական և բառային իմաստների համապատասխանության կամ անալոգիայի և անոմալիայի հարցը՝ խոսքի մասերի ուսմունքով հանդերձ և 3) բառերի զուգորդման հարցը. «...նոսքը բնությամբ եռամասն է, և նրա առաջին մասն այն է, թե ինչպես են բառեր սահմանվել իրերի համար, երկրորդը՝ թե ինչ ձևով են նրանք, շեղվելով վերջիններիցս, տարբերություններ ձեռք բերել, երրորդ՝ թե ինչպես են նրանք, բանականորեն միանալով միմյանց հետ, միտք արտահայտում»<sup>1</sup>: Այս երեք հարցերն էլ (իմա՝ ստուգաբանական, ձևաբանական և շարահյուսական) լայն քննության և մեկնաբանության են ենթարկվում Վառոնի մոտ: Ստուգաբանական առումով նախատիպ բառերը (այն բառերը, որոնք չեն կարող այլևս հանգեցվել այլ բառերի) Վառոնը հանգեցնում է իմաստային 4 խմբի՝ մարմին, տեղ, ժամանակ և գործողություն նշանակողների. այս հարցում նա օգտվում է պլուրալիզմի փիլիսոփայական կատեգորիաներից<sup>2</sup>:

Լեզվի ծագման հարցը Լուկրեցիոս Կարոսի մոտ.— Լեզվի ծագման ընդհանուր հարցերը ևս հոռմայեցիներին լայն շափով հետաքրքրում էին: Էպիկուրի հետևորդ Լուկրեցիոս Կարոսը (I դ. մ. թ. ա.) իր «Իրերի բնության մասին» պոեմում ժխտում էր լեզվի ինչպես աստվածային ծագման, այնպես էլ որևէ անհատի կողմից հնարված լինելու կարծիքը.

«Նենթություն է կարծել, որ մեկն օժտեց իրերն անուններով,  
 Եվ նրանից սովորեցին մարդիկ բառերն սկզբնապես.  
 Քանզի եթե կարող էր նա բառերով ողջ նշանակել  
 Եվ իր լեզվով արտասանել հնչյունները բազմատեսակ,  
 Ապա ինչո՞ւ չկարծենք, որ բոլորն էլ այդ կարող էին»:  
 Նա, ինչպես էպիկուրը, լեզվի ծագումը տեսնում էր հասարակական հաղորդակցման բնական կարիքի մեջ.  
 «Իսկ մեր լեզվի հնչյունները բնությունն է կյանքի կոշիլ,  
 Եվ կարիքն է թելադրել անվանումները իրերի.....  
 Եվ որքա՞ն է բնական այն, որ հենց մարդիկ նախնադարյան  
 Կարող էին ամեն մի իր կոշիլ տարբեր հնչյուններով»:

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 24 և 80:

<sup>2</sup> Հմտ. Robins, Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe, London, 1951, էջ 89:

## Ե. Պատրիստիկական-աստվածաբանական լեզվաբանություն

Անունների և իրերի փոխհարաբերության հարցը: Ավգուստինոսը.— Անունների և իրերի փոխհարաբերության հարցը արծարծվել է նաև քրիստոնեական եկեղեցու հայրերի կողմից: Առանձնապես հիշատակելի է Ավգուստինոսը (354—430), որը իր «Դիալեկտիկայի մասին» աշխատության մեջ կանգնում է փնտրելի կողմնակիցների տեսակետի վրա և լատիներենից բազմաթիվ օրինակներ բերում անունների և իրերի բնույթի համապատասխանությունն ապացուցելու համար: Ավգուստինոսի վրա զգալի չափով ազդեցություն են գործել ստոիկները:

Ավգուստինոսը պատրիստիկական-աստվածաբանական փիլիսոփայության այն ներկայացուցիչներից է, որի լեզվաբանական դատողությունները դուրս են գալիս նրա քրիստոնեական դոգմատիկայի սահմաններից և դառնում հին աշխարհի լեզվաբանական մտքի հետաքրքրական էջերից մեկը: Որոշ հետազոտողներ, տարբերելով լեզվի քննության 2 հայեցակետ՝ ֆունկցիոնալ և էվոլյուցիոն, գտնում են, որ հին աշխարհում դրանցից առաջինը ամենից ավելի ցայտուն արտահայտություն է գտել Ավգուստինոսի, երկրորդը՝ էպիկուրի հայացքների մեջ: Այս առումով նշում են Նուլնիսկ, որ Ավգուստինոսի մոտ առկա են XX դ. լեզվաբանության որոշ դրույթների սաղմերը, այդ թվում՝ Սոսյուրի դրույթի սաղմերը լեզվի նշանալին բնույթի և հնչույթաբանների դրույթի սաղմերը լեզվի նշանային ֆունկցիան՝ նրա ֆիզիկական բնույթից տարբերելու անհրաժեշտության մասին:

Ավգուստինոսը լեզուն համարում է հաղորդակցման և արտահայտության պիսպիոր միջոցը մարդկային հասարակության մեջ: Նրա կարծիքով՝ որպես այդպիսին լեզուն նշանային բնույթ ունի՝ ներկայացնում է որոշ տիպի նշանների ամբողջություն: Այս կապակցությամբ Ավգուստինոսը փորձում է թափանցել նշանի (signum) էություն մեջ և կատարել նշանների որոշ խմբավորում: Ավգուստինոսի կարծիքով՝ նշանի արժեքը որպես այդպիսին պետք է տարբերել նրա ֆիզիկական էությունից. նշանի էությունն այն է, որ նա իր վրա գրավելով մեր ուշադրությունը՝ այն կենտրոնացնում է որևէ այլ օբյեկտի վրա: Այսպիսով, նշանային ֆունկցիան անհրաժեշտաբար ենթադրում է երկու կողմ՝ նշանակող (signans) և նշանակվող (signatum): Նշանները լինում են երկու տեսակ՝ բնական

<sup>1</sup> Հմմտ. T. Milewski, հիշ. աշխ., էջ 21—22:

(signa naturalia) և տվածո (signa data). առաջինները հանդես են գալիս անկախ մարդու կամքից (ինչպես ծուխը որպես կրակի նշան կամ դեմքի ծամածոումը որպես ցավի նշան), երկրորդները՝ որպես հաղորդակցելու ձգտման հետևանք: Տվածո նշանները լինում են ոչ պայմանական և պայմանական. ոչ պայմանական նշանները առկա են և կենդանիների մոտ, պայմանականները՝ միայն մարդկային հասարակության մեջ: Պայմանական նշանների թվին են պատկանում նաև հողաբաշխ լեզվի նշանները, որոնք լինելով մեծաթիվ և բազմազան՝ հնարավոր են դարձնում արտահայտել այն բոլորը, ինչ կարող են արտահայտել միացած նշանները միասին վերցրած: Լեզվական նշանները երկու հատկություն ունեն՝ կամայականություն և պայմանականություն. կամայականություն ասելով Ավգուստինոսը հասկանում է այն, որ նշանակողի և նշանակվողի միջև պարտադիր կապ չկա, այլ այդ կապը պայմանավորված է հասարակական տրադիցիայի հեղինակությամբ: Այս բանը Ավգուստինոսը հիմնավորում է լեզուների բազմազանության առկայության փաստով: Մարդկային լեզվի գոյությունը պայմանավորված է Ձ գործոնով՝ հասարակական բնազդ և բանականություն. առաջինը միավորում է իրար նմաններին և հաղորդակցվելու պահանջ ստեղծում, երկրորդը իրականացնում է պահանջի բավարարումը՝ մարդկային հնչյուններին տալով նշանային արժեք և դարձնելով հաղորդակցման ու արտահայտման գլխավոր միջոց:

Լեզվի ծագման հարցը.— Քանի որ, ինչպես տեսանք, աստվածաշունչը հնարավորություն էր տալիս լեզվի ծագման երկու տարբեր տեսակետի գոյության, ուստի և եկեղեցու հայրերը, աստվածաշնչի անառարկելի հեղինակությունն ընդունելով հանդերձ, վիճում էին սկզբնական անվանադրի հարցի շուրջը: Արևելյան քրիստոնեական եկեղեցու ներկայացուցիչները դեռևս IV դ. երկու հակադիր կարծիքներ էին հայտնում: Կրոնական հերձվածի առաջնորդ էվնոմիոսը մեղադրում էր Բարսեղ Կեսարացուն այն բանում, որ նա չի ընդունում, թե աստված է բոլոր իրերին անուաներ տվել, այլ կարծում է, որ լեզվի գոյտը աստծու կողմից մարդուն տված շնորհի արդյունք է: Գրիգոր Նյուսացին պաշտպանում էր Բարսեղ Կեսարացուն՝ զայրանալով այն բանի վրա, որ լեզվի աստվածային ծագման կողմնակիցները աստծուն պատկերացնում են որպես դպրոցական ուսուցիչ, որպես քերականության ու բառարանի հորինող:



## գ. Ստուգաբանական ուսմունքները

Ստուգաբանական ուսմունքների առաջացման պայմանները.— Անունների բնույթի ու ծագման հարցերը հասցնում են որոշ ստուգաբանական տեսությունների: Ինչպես նշել ենք, ստուգաբանական առանձին փորձեր առկա են Հոմերոսի և Հեսիոդոսի պոեմներում: Հեռագայում φύσει-ի և θάσει-ի շուրջ տարվող վեճերը նպաստում են ստուգաբանական հարցերի նկատմամբ հետաքրքրության ուժեղացմանը:

Անտիկ ստուգաբանության թերությունները.— Անտիկ աշխարհի ստուգաբանական փորձերը մի քանի կարևոր թերություններ ունենին. 1) հունարենի և, ինչպես հետո կտեսնենք, լատիներենի լեզվական փաստերը առնվում էին այլ լեզուներից լիովին անկախ, եթե հույները որոշ դեպքերում էլ դիմում էին «բարբարոսների» լեզուներին, ապա այդ կատարում էին խիստ անբավարար շափերով և առանց համապատասխան եզրակացություններ անելու. այսպես՝ հիշյալ «Կրատիլոս» տրամախոսության մեջ Սոկրատեսը գծվարանալով ստուգաբանել Հերմոգենի առաջարկած πῶς «իրակ» և ἕδωρ «ջուր» բառերը՝ ասում է. «Ես նկատում եմ, որ շատ անուննիր հույներն ընդհանրապես և առանձնապես նրանք, որոնք ապրում են բարբարոսների իշխանության տակ, փոխ են առել այս վերջիններից... Եթե փնտրենք, թե այդ անուններն արդյոք հաջող են նշանակված, հունարենի հիման վրա և ոչ թե այն լեզվի հիման վրա, որից ծագում է այդ անունը, ապա, ինչպես դիտես, կարելի է տարակուսանքի մեջ ընկնել: Տես որ այդ πῶς (կրակ) անունը բարբարոսական դուրս չգա: Այն հեշտ չէ հունարենի հետ կապել, և, բացի դրանից, հայտնի է, որ փոյուզացիները կրակը նույն այդ ձևով են կոչում փոքրիկ շեղումով. այդպես նաև ջուր (ἕδωρ), ղուն (χύνω) բառերը և շատ ուրիշները»<sup>1</sup>: 2) Ստուգաբանական գանազան փորձերի ժամանակ բացակայում էր պատմական մոտեցումը. ստուգաբանելու համար բառը ենթարկվում էր ամեն տեսակի կամայական փոփոխությունների ու մասնատումների, որոնք, իհարկե, ոչ մի կապ չունեին բառի իրական պատմության հետ: 3) Բառերի հնչյունական համապատասխանությունները որոնելիս հույները որևէ օրինաչափություն չէին հաստատում: Ստուգաբանության ժամանակ կատարվող հնչյունական փոփոխությունները որոշակի կանոնների չէին ենթարկում: Այդ պատճառով էլ նույնիսկ

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 44—45:

այն դեպքերում, երբ բառերը իրոք ծագումաբանորեն կապված էին, բացատրության ժամանակ կարող էին սխալ կերպով առնչվել միմյանց հետ<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ հունական ստուգաբանական ուսմունքներն ավելի կամայական բնույթ են կրում, քան հնդիկների ստուգաբանական փորձերը:

Φύσει-ի և θέσει-ի կողմնակիցները և ստուգաբանությունը.— Φύσει-ի կողմնակիցները ստուգաբանելիս փորձում էին բառերի զանազան կամայական փոփոխությունների միջոցով հասնել մի նախնական իմաստի, որը իրոք արտացոլում է տվյալ առարկայի (անձի, իրի, երևույթի) էությունը:

Θέσει-ի կողմնակիցները փորձում էին ստուգաբանության միջոցով պարզել այն հայացքը, որ ունեցել է անվանադիրը տվյալ առարկայի բնույթի մասին, կամ որոշել նախնական անվանման կտրի հիմքը:

Ստուգաբանական փորձերը հունական փիլիսոփայության մեջ.— Հունական փիլիսոփաների մոտ հաճախ են հանդիպում ստուգաբանական զանազան փորձեր: Այսպես, Հերակլիտը անհամապատասխանություն էր տեսնում սոխի անվան և հատկությունների միջև. «...Սոխի (βίος) անունը կյանք (βίος) է, իսկ նրա գործը՝ մահ»<sup>1</sup>: Դեմոկրիտը շսνή «կին» բառը ստուգաբանում էր որպես «սերունդ ընդունող»՝ կապելով γονή «սերունդ» բառի հետ<sup>2</sup>:

Համեմատաբար ավելի լայն կերպով է քննված հարցը Պլատոնի «Կրատիլոս»-ում: Ինչպես տեսանք, Պլատոնը տարբերում է «նախնական անուններ» ու Կոնստանտինով անուններ և երկրորդների ստուգաբանությունը հանգեցնում է առաջիններին. այսպես, ըստ Պլատոնի՝ Գոսեյդոնի անունը կարող է բացատրվել որպես ποσιδεσμος «շղթայված ոտքերով», որպես πολλά εἰδώς «բազմիմաց, ամենագետ», կամ որպես ὁ σεῖον (π-ի և σ-ի հավելմամբ) «ցնցող» ἀνθραπος «մարդ» բառն ստուգաբանվում է որպես ἀναθρών, ἄ ὀπωπε «զննող, ինչ տեսնում է» և այլն, «Նախնական անունների» մեջ, ինչպես տեսանք, Պլատոնը փորձում է որոնել առարկաների բնությունն արտացոլող հնչյուններ, այլ կերպ ասած՝ նման բառերի ստուգաբանության համար նա բնաձայնական սկզբունքին է

<sup>1</sup> Հմմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 27:

<sup>2</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 31:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 33:

գիմում: Այս նպատակով նա անհրաժեշտ է համարում, մի կողմից, սարրալուծել գոյությունն ունեցողը իր տարրերին ու սրանք խմբավորել և, մյուս կողմից, հնչյունական կազմը վերածել իր տարրերին ու դրանք խմբավորել, ապա փորձել որոշելու այդ երկու կարգի տարրերի փոխհարաբերությունն ու համապատասխանությունը<sup>1</sup>: Սակայն ինքը՝ Պլատոնը, ինչպես երևում է կյանքի վերջին շրջանում հայտնած կարծիքից, առանձին հավատ չի ընծայում այս կարգի ստուգաբանական փորձերին՝ գտնելով, որ իրերի էությունը կարելի է բացահայտել իրերի ուսումնասիրությամբ, իսկ անվանումները լոկ «դաշինքի», պայմանավորվածության հետևանք են:

Ստուգաբանության հարցերին մեծ ուշադրություն էին դարձնում և ստոիկները: Հենց ստուգաբանություն (ἐτυμολογία) բառը գործածության մեջ է մտցրել ստոիկ Քրիսիպոսը: Ըստ ստոիկների՝ հնչյունների և իմաստի միջև ներքին կապ գոյություն ունի, որը ժամանակի ընթացքում բառի կրած փոփոխությունների հետևանքով մթազնվում է: Սկզբնական հնչյունները նմանվում էին իրերին՝ արտահայտելով նրանց հատկությունները, իսկ հետագայում անուններն իրերին տրվում են ըստ նմանության, առընթերության և հակադրության<sup>2</sup>: Հնչյունների և իմաստի նախնական կապը գտնելու համար անհրաժեշտ է բառերը ենթարկել ստուգաբանական վերլուծության, գտնել նրանց նախնական «ճշտությունը» (ἔτυπον): Ի տարբերություն Պլատոնի, ստոիկները կարծում էին, որ ստուգաբանությունը նպաստում է իրերի իմացությանը:

Հին հույների ստուգաբանական վերլուծության առանձնահատկությունները.— Բառերն ստուգաբանական վերլուծության էին ենթարկվում «ուղիղ» ձևով (ուղղականով)՝ առանց բառի կազմության նախնական հստակ վերլուծության: Վերլուծության տեխնիկայի մեջ առաջին տեղը գրավում էր անվան մասնատումը բաղադրիչների՝ որպես բարդության մասերի: Այն դեպքերում, երբ այդպիսի վերլուծությունը դժվարանում էր, ենթադրում էին, որ լեզվի մեջ անուններն աղավաղվել են (գիտակցաբար, անգիտակցաբար կամ բարեհնչյունության նկատառումով), և դիմում էին հնչյունների ներմուծման, հանման, փոխարինման ու տեղափոխության:

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 20:

<sup>2</sup> Հմմտ. Նույն տեղը, էջ 27:

սրանք կիրառվում էին հատկապես կարճ բառերի նկատմամբ, որոնք փոփոխում էին մինչև այլ բառերի հանգեցնելը:

Խիստ հազվադեպ միայն հին հույները դիմում էին նաև հին գրավոր և բարբառային ձևերին: Շատ դժվար բացատրելի բառերի իմաստը համարվում էր մթազնված, կամ տվյալ բառերի համար «բարբառոսական» ծագում էր ենթադրվում<sup>1</sup>:

Ստուգաբանությունը հին Հռոմում.— «Կրատիլոս»-ում և ստոիկների մոտ կիրառվող ստուգաբանական սկզբունքները արտահայտություն են գտնում և հռոմայիցիների ստուգաբանական փորձերի մեջ: Այսպես, օրինակ, Վառոնը այս դեպքում հարում է ստոիկներին:

Անտիկ ստուգաբանության սկզբունքները.— Հունա-հռոմեական ստուգաբանական ուսմունքի հիմնական սկզբունքները հանգում են հետևյալին<sup>2</sup>.

1) Բնածայնական սկզբունք.— Այս սկզբունքը կիրառվում էր այսպես կոչված «նախնական բառերի» նկատմամբ, որոնք հնարավոր չէր կապել այլ բառերի հետ: Այս կարգի բառերի հնչյունների մեջ նմանություն էին տեսնում արտահայտվող առարկաներին. ինչպես տեսանք «Կրատիլոս»-ի օրինակից, հնչյունները համարում էին որոշ կարգի զաղափարների արտահայտիչներ, դիմում հրնչյունների սիմվոլիկային: Այս սկզբունքի կիրառությանը մենք հանդիպում ենք և հռոմայիցիների մոտ: Ավգուստինոսը, կասկած հայտնելով կիրառվող ստուգաբանական եղանակների նկատմամբ, այնուամենայնիվ կարծում է, որ որոշ հնչյունների հետ իրոք կապվում է այս կամ այն հատկության արտահայտությունը. այսպես, օրինակ, նրա կարծիքով *v*-ն արտահայտում է ինչ-որ խիստ և ուժեղ բան (*crassum et validum*)՝ *vis* (ուժ), *venter* (փոր), *vater* (խորամանկ), *velum* (առագաստ), *vinum* (գինի), *vomis* (ակոս), *vulnus* (վերք), *vincula* (շղթա) և այլն: Այս նույն ձևով դատելով՝ նա գրում է. «Երբ մենք արտասանում ենք *lene* (փափուկ) բառը, ապա նա փափուկ է հնչում. մյուս կողմից՝ ո՞վ չի նկատում կոշտություն (*asperitas*) հենց *asper* (կոշտ) բառի մեջ: Ականջների համար փափուկ է, երբ մենք արտասանում ենք *voluptas* (վայելք),

<sup>1</sup> Հմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 16:

<sup>2</sup> Reizenstein, Geschichte der griechischen Etymologika, E. Wölfflin, Die Etymologien der lateinischen Grammatiker, „Archiv für lat. Lexikographie und Grammatik“, VIII. В. Томсен, հիշ. աշխ., էջ 27—31:

կոշտ է, երբ արտասանում ենք crux (խաչ): Եվ իրենք իրերը նույն տպավորությունն են թողնում, ինչպես որ ընկալվում են բառերը»<sup>1</sup>:

2) Միմվոլիկ ստուգաբանություն.— Սա նախորդի մի տարատեսակն է: Եթե նախորդի դեպքում հնչյունը դիտվում էր որպես այս կամ այն գաղափարի արտահայտիչը, ապա այս դեպքում հնչյունի առկայության ու բացակայության, երկարության ու կարճության մեջ տեսնվում էր այս կամ այն բանի առկայությունն ու բացակայությունը, տեղանկությունն ու հանկարծակիությունը: Այսպես, փերական Տրիֆոնուսը *φιλότης* (գող, խաբբա) բառը կապելով *ὄψελέσθαι* (գաղտնի հանվել) բայի հետ՝ վերջինիս մեջ առկա *ὄ-*ի կորչելը բացատրում էր զող բառի իմաստով (որպես մի բան կորզող, թոցնող): «*Etymologicum magnum*» աշխատության մեջ հունական անցյալ անկատարի՝ նախահավելված ստանալը, ի տարբերություն ներկայի, բացատրվում է նրանով, որ անցյալն ավելի տեղական ժամանակ է նշանակում, քան ներկան: Ապուլեոս կրտսերը *saeculum* (դար) բառի *ae-*ով գրվելը բացատրում էր այդ բառի՝ տեղական բան նշանակելով: Սենեկան, խոսելով այն մասին, որ հնում *fulgēre* (փայլատակել, կայծակի տալ) բայը հնչում էր *fulgēre* ձևով, վերջինս բացատրում էր նրանով, որ մարդիկ ցանկացել են *e-*ի կարճությամբ արտահայտել կայծակի հանկարծակի փայլատակելը:

3) Բաղադրական ստուգաբանություն.— Այս ստուգաբանության էությունն այն է, որ բառը կամայականորեն մասնատվում էր բաղադրիչների, և բառի ստուգաբանական իմաստը բացատրվում դրանց համադրմամբ: Վերևում օրինակներ բերվեցին «Կրատիլոս»-ից: Հոմմայեցիներից էլիոս Ստիլոն և Վառոնը *volpes* (*vulpes*) «աղվես» բառը բացատրում էին որպես «ոտքերով թռչող» (*quod volat pedibus*): Այսպիսի ստուգաբանության փորձեր առկա են և ուշ շրջանի քերականների մոտ:

4) Հակադրական ստուգաբանություն (հուն. *κατ' ἄντι*: «հակադրից», լատ. *contradictio* կամ *progressio in contrarium*).— Սա խիստ կամայական բնույթ էր կրում և կայանում էր նրանում, որ տվյալ բառիմաստը բխեցվում էր հակառակ իմաստից. եթե բնաձայնական ստուգաբանության հիմքում դրվում էր նմանության զուգորդությունը, ապա սրա հիմքում ընկած էր հակադրությունը: Այսպես, *lucus* (պուրակ) բառը բացատրվում էր որպես «քիչ լու-

<sup>1</sup> Sancti Augusti Opera, Antwerpiae, I, 1700, էջ 615:

սավորված» (quod minime luceat), bellum (կռիվ) բառը՝ որպես «ոչ գեղեցիկ բան» (quod res bella non sit) և այլն:

5) Գրային սիմվոլիկա.— Մա ամենաանհեթեթ սկզբունքն էր: էությունն այն էր, որ բառիմաստը բացատրվում էր տվյալ բառի գրությունն ձևով (առաջին տառի գրության ձևով): Այսպես, Վառոնը vallum (ամրություն) բառի V-ն նմանեցնում էր ամրության ցցապատնեշի առանձին ցցերին: Ապոլեոսը hostis (թշնամի) բառի H-ն նմանեցնում էր հակառակորդների երկագլուխ սրերին և այլն:

## 2. ԼԵԶՎԱ-ՈՃԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մայրենի լեզվի ուսուցումը և «ճարտասանական արվեստը».— V դարում հունական հասարակական-տնտեսական կյանքում կատարված նշանակալից տեղաշարժերը մեծ փոփոխություններ են առաջ բերում իդեոլոգիական բնագավառում: Ինչպես տեսանք, մայրենի լեզվի ուսուցումը և լեզվի հարցերը մինչ այդ համեմատաբար շատ քիչ տեղ էին բռնում: V դարում այդ հարցերը սկսում են մեծ ուշադրություն գրավել՝ կապված դաստիարակության նոր սիստեմի և պահանջների հետ: Առաջ է գալիս մի նոր բնագավառ՝ ճարտասանական արվեստը (ῥητορικὴ τέχνη), որը նպատակ է դնում ունկնդիրների վրա ցանկալի տպավորություն թողնելը, համոզելը: Այս նպատակի իրագործման մեջ սկսում են մեծ տեղ տալ լեզվական միջոցներին, և սրա հետ կապված ոճական ու քերականական հարցերը սկսում են մեծ շահով գրավել ճարտասանների ուշադրությունը: Ճարտասանությունը և քերականությունը հետագայում սկսում են զգալի ազդեցություն թողնել իրար վրա:

Էլեաթների և սոփեստների դերը ճարտասանության և ճարտասանության զարգացման մեջ.— Ճարտասանության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ էլեական դպրոցի (էլեաթների) գործունեությունը: Այդ դպրոցը, մեծ տեղ տալով կարծիքին, հող նախապատրաստեց սոփեստների հանդես գալու համար: Սոփեստները, որոնք մայրենի լեզվի առաջին ուսուցիչներն էին, սկսեցին լուրջ կերպով զբաղվել ճարտասանության հարցերով: Էլեաթ Գորգիասը դառնում է առաջին սոփեստներից և ճարտասաններից մեկը, որը մեծ կարևորություն է հատկացնում լեզվա-ոճական հարցերին<sup>1</sup>: Հունական տրագիցիան Գորգիասին է վերագրում խոս-

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1933, էջ 148—149:

քի ֆիզուրների, հատկապես հակադրության (անտիթեզի), վանկերի համաշափության և ներդաշնակության ուսմունքը: Նա է տվել նաև հնչյունական կրկնությունների առաջին տեսությունը: Գորգիասի երկու աշակերտներից մեկին՝ Պոլուսին վերագրվում է բառակրկնությունների ուսմունքը, մյուսին՝ կիկիմնիոսին՝ գեղեցիկ բառերի հարցի առաջաշումը<sup>1</sup>: Վերջինս բառերի գեղեցկությունը որոշում էր նրանց հնչեղությունը և իմաստով: Սակայն Գորգիասից և նրա աշակերտներից որևէ հատուկ ճարտասանական աշխատություն չի մնացել:

Գորգիասի ժամանակակից Տրասիմաքոսը զբաղվում է մի այլ կարևոր հարցով՝ խոսքի ուղիղ հարցով: Նա ճարտասանի խոսքը համարում է ունկնդիրների մեջ անհրաժեշտ զգացմունք՝ բարկություն, վախ, կարեկցանք առաջացնելու միջոց:

Ճարտասանական հարցերը գրավում են նաև ուրիշների ուշադրությունը: Քաղաքական գործիչ Թերամենեսը գրում է ոճի տեսության հետ կապված աշխատություններ: Արիստոֆանի կոմեդիաներում արտացոլում են գտել ոճական հարցերի շուրջը տարվող վեճերը. այստեղ խոսվում է ոճի պարզության և իրթնության, բառերի և փոխաբերությունների գործածության, փքուն և հասարակ ոճերի մասին, տարբերակվում են առանձին հեղինակների (էսքիլեսի և էվրիպիդեսի) ոճական առանձնահատկությունները:

Սոփիստների գործունեությունը գրական քիչ հետքեր է թողել, որովհետև նրանք զբաղվում էին առավելապես բանավոր ուսուցմամբ. յուրաքանչյուրն աշխատում էր աշակերտներ գրավել իր սեփական տեսությամբ՝ ունենալով իր արվեստի «գաղտնիքները»: Սոփիստները ճարտասանության նպատակը համարում էին ոչ թե ճշմարտությունը, այլ ապացույցների համոզիչ լինելը: Սկզբնական արվեստը նրանց մոտ աստիճանաբար սկսում է վերածվել արհեստի, սկզբնական տեսական դրույթները կորցնում են իրենց թարմությունը, և խոսքի կառուցման միջոցների ուսմունքը որոշ ինքնանպատակության տպավորություն է թողնում: Այդ ուսմունքի շարաշահումը հասցնում է այն վատ համբավին, որ ունեն սոփիստները: Այս բացասական վերաբերմունքը խիստ կերպով արտահայտել է Պլատոնը:

Իսոկրատեսի և Անաքսիմենեսի ճարտասանական-ճարտանկական ձեռնարկները.— Նախաարիստոտելյան շրջանի ճարտասանական

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 149:

կան աշխատութիւններից նշելի են Իսոկրատեսի և Անաքսիմենեսի ձեռնարկները, որոնցից առաջինը մեզ չի հասել. այն հայտնի է ուշ շրջանի քաղվածքներով ու վերապատմումներով: Իսոկրատեսի դրայւոցը պահանջում էր շարադրման պարզութիւն, համառոտութիւն և ճշմարտանմանութիւն: Անաքսիմենեսի աշխատութիւնը ներկայացնում է ելած տեղեկութիւնների շարադրանքը՝ առանց նյութի ռացիոնալ սիստեմավորման: Այն պահպանում է սոփեստների ճարտասանութեան հիմնական սկզբունքները:

Արիստոտել.— Ոճի ուսմունքի և ճարտասանութեան մեջ նոր էտապ են բաց անում Արիստոտելը և Թեոֆրաստեսը: Վերջինիս աշխատութիւնը թեև մեզ չի հասել, բայց ժամանակին ավելի մեծ հեղինակութիւն է վայելել, քան Արիստոտելի գործը՝ շնորհիվ իր ավելի մեծ լրիվութեան ու սիստեմատիկութեան: Նախքան Արիստոտելի երկի մասին խոսելը պետք է հիշատակել Թեոդեկտեսին, որը եղել է Իսոկրատեսի աշակերտը, բայց հետագայում մեծ շահով ենթարկվել է Արիստոտելի սկզբնական գաղափարներին. նա օգտուվել է Արիստոտելի վաղ դասախոսութիւններից և որոշ ինքնուրույն հավելումներ կատարել: Աշխատութիւնն ստեղծվել է Արիստոտելի՝ Աթենքից հեռանալուց հետո, երբ Թեոդեկտեսը շարունակում էր առարկայի դասավանդումը: Այս աշխատութիւնը Արիստոտելը հիշատակում է որպես Թեոդեկտեսի ճարտասանութիւն:

Արիստոտելի «Ճարտասանութիւնը» արդյունք է 335 թ. Աթենք վերադառնալուց հետո նրա կատարած աշխատանքի և նախկին դրուլթների վերանայման: Բացի այս աշխատութիւնից, Արիստոտելը ոճական բավականաչափ դիտողութիւններ է կատարում նաև իր «Պոետիկա»-ում:

Արիստոտելի աշխատութիւնը ոչ թե դպրոցական ձեռնարկ է, այլ գիտական տրակտատ, թեև այն դեռևս լիակատար խմբագրման չի ենթարկված և ունի որոշ հակասական կողմեր: Արիստոտելը իր աշխատութիւնը բաժանել է 3 մասի. առաջին մասում տրվում են այն սկզբունքները, որոնցից ելնելով ճարտասանը գտնում է կամ պարսավում, համոզում կամ հերքում: Երկրորդում խոսվում է ճարտասանի անձնական հատկութիւնների մասին, որոնցով նա կարող է հավատ ներշնչել և հասնել նպատակին: Երրորդը վերաբերում է այն միջոցներին, որոնցից օգտվում է ճարտասանը. այստեղ մեծ տեղ են բռնում՝ ոճական հարցերը՝ արտահայտչական եղանակները, խոսքի կառուցման սկզբունքները:





ման ռիթմիկայի, պերիոդների և հակադրությունների ուսմունքի վրա:

Թեոֆրաստես.— Թեոֆրաստեսի գիրքը կրում էր «Ոճի մասին» վերնագիրը և նախատեսված էր որպես ձեռնարկ: Այդ գիրքը մեզ ամբողջությամբ չի հասել, բայց քիչ թե շատ հայտնի է զանազան քաղվածքների և վերապատմումների միջոցով:

Թեոֆրաստեսն ընդունում է խոսքի շորս հատկություն (արժանիք)՝ մաքրություն, պարզություն, համապատասխանություն խոսքի առարկային ու խոսողին և գեղեցկություն. գեղեցկությունը պարունակում է հաճելիությունը (քաղցրությունը) և վսեմությունը: Այսպիսով, ի տարբերություն Արիստոտելի, Թեոֆրաստեսը վերադառնում է ոճի հատկությունների բազմազանության ուսմունքին, որ դոյություն ունեւ ճարտասանության դասատուների շրջանում: Թեոֆրաստեսի ուսմունքը հետագայում ավելի մեծ ազդեցություն է թողնում, քան Արիստոտելինը:

Թեոֆրաստեսն ընդունում է ոճի տեսության երկու բաժիններ՝ բառերի ընտրության և բառազուգորդումների. միաժամանակ նա շարադրում է դեռևս Գորգիասին վերագրվող խոսքի ֆիզուրների ուսմունքը, թեև առանց որոշակի կապ հաստատելու բառազուգորդումների ուսմունքի հետ: Հետագայում այն սովորաբար ենթարկվում էր բառազուգորդումների ուսմունքին: Ոճի տեսության այս բաժինները Թեոֆրաստեսը ենթարկում է ոճի գեղեցկությանը: Բառերի ընտրության տեսության մեջ նա առանձնացնում է երկու կողմ՝ գեղեցիկ բառերի ուսմունքը և զրական լեզվի բառապաշարի՝ սովորականից ունեցած շեղումների ուսմունքը: Գեղեցիկ բառերի թեոֆրաստեսյան ուսմունքը հենվում է Արիստոտելի ուսմունքի վրա, բայց ավելի կուռ և սխտեմատիկ բնույթ ունի: Թեոֆրաստեսը նշում է բառերի գեղեցկության 3 կողմ՝ ակուստիկական, տեսողական և իմաստային: Գեղեցիկ են լսելիքին ու տեսողությանը հաճելի և իմաստով վսեմ բառերը:

Հենվելով դարձյալ Արիստոտելի ուսմունքի վրա՝ Թեոֆրաստեսը խոսում է գործնական և գեղարվեստական խոսքերի տարբերության մասին: Առաջինը կախված է խոսքի առարկայից, որի մասին խոսողը որևէ բան բացատրում է. երկրորդը կողմնորոշվում է դեպի խոսողները, երբ խոսողը իրեն խնդիր է դնում համոզել: Ինչպես տեսանք, Արիստոտելը գեղարվեստական խոսքի բնույթը

1 Հմմտ. Античные теории языка и стиля, 1926, էջ 190:

որոշում էր ոչ սովորական բառերի և փոխաբերությունների գործածությունը: Թեոֆրաստեսը այսպիսի ոչ սովորական բառերի շարքում մեծ տեղ է տալիս բանաստեղծական բառերին՝ պոետիզմներին՝ հանձնարարելով ճարտասաններին հաճախ ընթերցել բանաստեղծներին<sup>1</sup>: Խոսելով փոխաբերությունների մասին՝ Թեոֆրաստեսը ցույց է տալիս դրանց գործածության պատճառն ու նպատակը: Փոխաբերությունների գործածությունը, ըստ նրա, նախ՝ լրացնում է բառերի պակասը և երկրորդ՝ հաճելի է դարձնում խոսքը: Սակայն Թեոֆրաստեսը պահանջում է փոխաբերությունների գործածության հարցում լինել շահավոր: Նշելի է, որ ինչպես Թեոֆրաստեսը, այնպես էլ մյուս անտիկ հեղինակները փոխաբերության մեջ տեսնում են միայն իմաստային փոխաբերություն՝ առանց խոսելու պատկերավորության մասին<sup>2</sup>:

Բառագուրդումների ուսմունքի մասին, որ հետագայում լայն քննության առարկա է դառնում, Թեոֆրաստեսը խոսում է միայն ընդհանուր ձևով՝ խոսքի գեղեցկության հետ կապված: Նա կանգ է առնում խոսքի ութմի, պարբերությի (պերիոդ) տեսության և հակադրությունների (անտիթեզիս) ուսմունքի վրա: Վերջին դեպքում նա տալիս է որոշ դասակարգում. «Հակադրությունը,— գրում է նա,— լինում է եռատեսակ՝ կամ մի երևույթի վերագրվում են հակադիր հատկություններ, կամ հակադիր երևույթներին՝ միևնույն հատկությունները, կամ հակադիր երևույթներին՝ հակադիր հատկություններ»<sup>3</sup>:

Ճարտասանության և ոճի հարցերը հելլենիստական Հունաստանում.— Ոճի հարցերի հետագա մշակման ու զարգացման մեջ կարևոր դեր են խաղում պերիպատետիկները և ստոիկները: Այդ հարցերը հելլենիզմի էպոխայում ընթանում են նախորդ նվաճումների հետագա մշակման, ճշտման և մանրամասնման ուղղությամբ: Եթե քերականության ստեղծումը կապված է հելլենիզմի էպոխայի հետ և նախորդ շրջանում միայն նախապատրաստվել է, ապա ոճի ուսմունքը ստեղծվել է նախահելլենիստական շրջանում՝ հետագայում հնթարկվելով միայն վերամշակման: Ոճի հարցերի ուսումնասիրությունը հելլենիզմի էպոխայում զգալի շահով կապված է նաև գրական տեքստերի էսթետիկական քննադատության խնդիրների հետ<sup>4</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 157:

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղը, էջ 158:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 272:

<sup>4</sup> Հմմտ. նույն տեղը, էջ 158:

Պերիպատետիկնիերի կողմից ստեղծված ոճի ուսմունքը հետագայում ենթարկվում է ստոիկների նշանակալից ազդեցությանը: Պերգամի փիլիսոփա-քերականների ներկայացուցիչ Կրատես Մալոսացին, որը, ինչպես տեսանք, հանդես էր գալիս որպես անոմալիստ, մեծ տեղ է տալիս խոսքի տիպերի հարցին: Գրական երկի քննադատությունն նպատակներից մեկն էլ նա համարում է գրողի ոճի բնույթի, խոսքի տիպի սահմանումը:

Արիստոտելի և Թեոֆրաստեսի ուսմունքի հետագա զարգացումը հասցնում է Յ տիպի խոսքի կամ ոճի տարբերման՝ վսեմ կամ պերճ, սուղ կամ հասարակ և միջին: Արիստոտելը տարբերում էր գրավոր խոսքը բանավորից, Թեոֆրաստեսը՝ գործնականը՝ գեղարվեստականից: Այս շրջանում տարբերվող հասարակ ոճը համընկնում է Արիստոտելի բանավոր խոսքի և Թեոֆրաստեսի գործնական խոսքի հետ, վսեմ կամ պերճ ոճը առաջինի գրավոր, երկրորդի՝ գեղարվեստական խոսքի հետ. ավելացված է միջինը: Ոմանք տարբերում են նաև ծաղկուն ոճը, որ կամ ենթարկում են վսեմ ոճին, կամ դիտում իբրև առանձին տիպ, կամ միացնում միջինի հետ: Միջին ոճը ոմանց կողմից սկսում է մեկնաբանվել որպես խառն տիպ: Խոսում են նաև «հզոր» ոճի մասին, թեև ոմանք այդ անվան տակ հասկանում են ոճի Յ տիպերին տիրապետելն ու վարպետորեն կիրառելը:

Խոսքի (ոճի) տիպերի ուսմունքը սերտորեն յանչվում է նմանողության (միփրօւս) ճարտասանական տեսության հետ: Հելլենիզմի շրջանում խոսում են հին դասական հեղինակների տված լեզվական նմուշներին նմանվելու մասին: Այս հարցն առաջադրողները հենվում են հատկապես ալեքսանդրյան քերականական դպրոցի նվաճումների վրա: Խոսքի տիպերի ուսմունքը ավելի ակտուալ բնույթ է ստանում՝ կապված երկու ուղղությունների պայքարի հետ՝ ասիական և ատտիկյան: Ասիական ուղղության ներկայացուցիչները կենտրոնացած էին Փոքր Ասիայում, որտեղից և ստացել են իրենց անունը. նրանք լայն կերպով դիմում էին պատկերավոր արտահայտություններին, ոճի ճարտասանական զանազան կարգի զարդարանքներին, շրջաբանություններին, շրջուն շարադասությանը, խոսքի ութմիկ կառուցմանը՝ վերականգնելով սովետներին հին արտահայտչական եղանակները: Ատտիկյան ուղղության ներկայացուցիչները նմանողության նյութ էին ընտրում աստիկյան արձակը՝ առանց ավելորդ զարդարանքների:

Ատտիկյանները գլխավորը համարում էին ուղիղ արտահայտ-

վելը, ասիականները՝ հետաքրքրականությունն ու վայելք պատճառելը:

Ասիական և ատտիկյան ուղղությունների պայքարի մի յուրահատուկ տարատեսակն էր Ապոլլոդորոսի ու Թեոդորոսի կողմնակիցների պայքարը: Ապոլլոդորոսի և նրա կողմնակիցների համար ոճական զանազան կատեգորիաները, այդ թվում և խոսքի տիպերը մեկընդմիշտ հաստատված անխախտ բաներ են և անվիճելի նորմաների ուժ ունեն՝ անկախ ճարտասանի հոգեկանից: Թեոդորոսը և նրա կողմնակիցները, ընդհակառակը, առաջին պլանի վրա են մղում անձնական հուզական մոմենտը: Նրանց կարծիքով՝ խոսքի տիպը փոխվում է կախված իրադրությունից, դեպքից և մոմենտից: Մեծ տեղ է տրվում և պաթոսին ու էքստազին, որպես բանաստեղծության աղբյուրի<sup>1</sup>:

Ոճի հատկությունների ուսմունքը տարբեր ուղղություններով է ընթանում: Ստոիկներից Արիստոն Քրոսացին ոճի հատկության շահանիշ է համարում լսողության վրա ազդելը: Սա դիմադրության է հանդիպում էպիկուրյանների կողմից: էպիկուրյանները դատելով Արիստոտելի նման, հանդես էին գալիս խոսքի՝ գնահատման մեկ հիմնական չափանշով՝ պարզությունամբ: Բարեհնչության հարցում էպիկուրյան Ֆիլոդեմոսը գլխավոր շահանիշը համարում է հաճելիությունը: Ոճի հատկությունների թվում նշվում է համառոտությունը, որ Իսոկրատեսի դպրոցը հատկացնում էր միայն պատմողական խոսքին, և ուժը: Հետագայում նշում են և այլ հատկություններ:

Բառազուգորդումների ուսմունքը, որ Թեոֆրաստեսի մոտ դեռ ենթարկվում էր խոսքի գեղեցկության ուսմունքին, սկսում է դիտվել որպես ոճաբանության ինքնուրույն բաժին: Բառազուգորդումների ուսմունքի մեջ տարբերում են Յ կողմ՝ շարադասության ուսմունքը, բառերի հանդիպման ժամանակ նկատվող երևույթների ուսմունքը և պարբերության ու ռիթմի ուսմունքը<sup>2</sup>:

Դեռևս շատ վաղ՝ իսոկրատյանները հաստատել էին բառերի շարադասության կայուն տրամաբանական կանոններ: Անաքսիմենեսը զգուշացնում էր շրջուն շարադասությունից և երկիմաստությունից, բառերի անկանոն շարադասության հետևանքով առաջացող անպարզությունից և անհամաձայնությունից: Այս շրջանում

<sup>1</sup> Հմ տ. Античные теории языка и стиля, 1936, էջ 163:

<sup>2</sup> Հմ տ. Նույն տեղը, էջ 169:

շարահասութեան ուսմունքին ավելանում է նոր գիծ. պահանջում են խոսքի ուժեղ և պայծառ մասերը տանել վերջը, որպեսզի խոսքը գնալով ուժեղանա, շթուլանա<sup>1</sup>:

Բառերի հանդիպման ժամանակ նկատվող երևույթների ուսմունքը ևս գալիս էր հնից: Այս ուսմունքը հանգում էր բարեհռնչութեան նպատակին ծառայող կանոններին, որոնք պահանջում էին խուսափել հորանջից (երկու ձայնավորի հանդիպումից), բառավերջի և բառասկզբի վանկերի նույնութունից և այլն: Այդ հարցը հետագայում ենթարկվում է փոփոխությունների. պերիպատետիկները ոչ միշտ են տեղին համարում այս կանոնների պահպանումը:

Բառերի ընտրութեան հարցում իբրև նոր գիծ պետք է նշել նորաբանությունների տիպավորումը: Տարբերվում են բնածայն, լարդ, ածանցավոր և անալոգիայով կազմված բառեր:

Ասիական և ատտիկյան ուղղությունների պայքարի հետագա պատկերը ամբողջացնելու համար հարկավոր է հիշատակել նաև ուշ շրջանի որոշ գործիչների:

Ասիական և ատտիկյան ուղղությունների պայքարը հետագայում կողմնակիցներ է գտնում հանձին Ցեցիլիոս<sup>2</sup> Կալակտացու և «Վսեմի մասին» աշխատութեան հեղինակի:

Ցեցիլիոս Կալակտացին (I դ.), որ հայտնի է իբրև գրական քննադատ, եղել է ատտիկականութեան շատագույն: Նա գրել է «Փոյուզացիների դեմ» (իմա՝ ասիականների դեմ) և «Ինչո՞վ է տարբերվում ատտիկյան ոճը ասիականից» աշխատությունները, որոնք մեզ չեն հասել. որոշ հատվածներ հասել են հետագա ճարտասանական աշխատություններում արված քաղվածքների ձևով: Ցեցիլիոսը մեծ դեր է կատարել ատտիկյան ուղղութեան հաղթանակի համար և մեծ ազդեցություն թողել հունա-հռոմեական ճարտասանական-ոճական տեսութեան զարգացման վրա:

Ցեցիլիոսի անվան հետ կապված է լեզվա-ոճական 2 կտրերոր հարց ևս. 1) գրական քննադատութեան խնդիրների հետ կապված՝ նա հատուկ ուշադրություն է դարձրել ֆիգուրների (հուն. σχῆμα, լատ. figura) հարցին: Ֆիգուրների հարցը հունական ոճա-ճարտասանական գրականութեան մեջ, ինչպես տեսանք, ուշադրութեան էր արժանացել Գորդիասի և Իսոկրատեսի կողմից: IV դ. մ. թ. ա. հե-

<sup>1</sup> Հմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 189:

<sup>2</sup> Անունը բերված է յադինական ձևով, ինչպես հանդիպում է:

ղինակաները սարբերում էին 3 ֆիգուր՝ ա) հակադրութիւն (αντιθεσις), բ) կոլոնների շամահնչունութիւն (παρομοιω) և գ) կոլոնների հավասարութիւն (ισοχρησισ): Յեցիլիոսը ոչ միայն մանրամասնում և ի մի է բերում ֆիգուրների մասին ասվածները, այլ և ավելացնում է բառային ֆիգուրների ուսմունքը: 2) Ցանկանալով ապահովել ճարտասանի լեզվի մաքրութիւնը և նպաստել ատտիկյան ոճի հաղթանակին՝ Յեցիլիոսը կազմում է ատտիկյան բառերի բառարան: Նրա համար դասական ճարտասանը Լիսիասն էր, որին նա հակադրում էր Պլատոնին:

Ընդհակառակը, Յեցիլիոսի հակառակորդների համար օրինակ էր ծառայում Պլատոնը: «Վսեմի մասին» աշխատութիւն հեղինակը, հանգես գալով որպէս ասիական ուղղութիւն կողմնակից և թեոդորյան, հենց այդ ձևով էլ վարվում է, պայքարելով Յեցիլիոսի ատտիկականութիւն դեմ:

Յեցիլիոսի ընկեր Դիոնիսիոս Հալիկաոնասցու ճարտասանական գործունեութիւնը նշանավորվում է ատտիկականութիւն հաղթանակով: Դիոնիսիոս Հալիկաոնասցին ճարտասանի իդեալ է համարում ոչ թէ դասական ճարտասանութիւն սկզբնավորող Լիսիասին, այլ այն ավարտող Դեմոսթենեսին, և ատտիկյան լինելով հանդերձ՝ բողոքում է այդ ուղղութիւն ծայրահեղութիւնների դեմ: Դիոնիսիոս Հալիկաոնասցին 30 թ. մ. թ. ա. եկել է Հռոմ և այնտեղ ապրել 22 տարի: Նրա գործերից ամենից ավելի հայտնի է «Բառերի շարահչուաման մասին» աշխատութիւնը: Նա առանձին նորութիւններ չի բերում, այլ ի մի է հավաքում և ամբողջացնում եղած ճարտասանական դրույթները:

Ճարտասանութիւն և ոճի հարցերի հետագա մշակման մեջ պետք է նշել խոսքի տիպերի ուսմունքը աստիճանաբար խոսքի հատկութիւնների կամ այսպէս կոչված «իդեաների» ուսմունքով փոխարինելը: Սա կատարվում է խոսքի տիպերի բազմացման հողի վրա: Խոսքը պայմաններին համապատասխան՝ պետք է կառուցվի ոճի այդ նվազագույն տարրերից՝ «իդեաներից», որոնց թիվը բազմացվում է մեծ շափով: Այս ուսմունքը արտացոլվում է Հեմոգեն Տարսոնացու (II դ. վերջ, III դ. սկիզբ) աշխատութիւններում, որոնք յուրատեսակ կերպով ամփոփում էին այդ պրոցեսը և ուշ շրջանի հնադարում ու Բյուզանդիայում դառնում գլխավոր հեղինակութիւնը:

Ճարտասանութիւն և ոճի հարցերը հին Հռոմում.— Ճարտասանութիւն և ոճի հարցերը լայն հետաքրքրութիւն և քննութիւն:

առարկա են դառնում նաև Հոռոմում: Սա բխում էր գործնական այն մեծ դերից, որ խաղում էր ճարտասանությունը Հոռոմի հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքում: Հենվելով ճարտասանության և ոճի հունական տեսությունների վրա՝ Հոռոմի ճարտասանները այն հարստացնում են իրենց պրակտիկայից բխող եզրակացություններով: Ինչպես հելլենիստական Հունաստանում, այնպես էլ Հոռոմում աշխատանքը գնում փեղած տեսությունների հետագա վարգացման, մշակման և մանրամասնման ուղղությամբ: Կարելի է նկատել, որ հելլենիստական շրջանի Հունաստանում և Հոռոմում ճարտասանության ու ոճի տեսաբաններին վաղեցնում էին հիմնականում համառոտ հարցեր, թեև Հոռոմում դրանք կապվելով պրակտիկայի հետ՝ սնող ավելի մեծ հող էին գտնում:

Ճարտասանական հարցերը Հոռոմում առանձնապես լայն հետաքրքրություն են առաջ բերում մ. թ. ա. I դարում՝ դասակարգային պայքարի և քաղաքական իրադարձությունների բուռն ծավալման պայմաններում: Ճարտասանության գործնական կարևորությունը նպաստում է նրա տեսության մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքի ծավալմանը: Պատահական չէ, որ ասիական և ատտիկյան ճարտասանական ուղղությունների պայքարը անցնելով Հոռոմ՝ այնտեղ ամենից ավելի սուր կերպարանք է ստանում. Հոռոմը փաստորեն դառնում փայլ պայքարի կենտրոնը:

Ճարտասանություն, տեսությունը նվիրված ամենավաղ գործը Հոռոմում գրվել է մ. թ. ա. I դ. 80-ական թվականներին: Երկի հեղինակը հայտնի չէ. այն մեզ հասել է Կիկերոնի աշխատությունների հետ միասին՝ սխալմամբ վերագրվելով նրան: Աշխատությունը գրվել է սմն Հերեննիուսի պատվերով և այդ պատճառով էլ հայտնի է «Ճարտասանություն Հերեննիուսին» անունով: Այս աշխատության մեջ հեղինակը առաջին անգամ հունական ճարտասանական տերմինները փոխարեն օգտագործել է լատինական տերմիններ՝ փաստորեն հիմք դնելով լատինական ճարտասանական տերմինարանությանը:

Ճարտասանական տեսության հարցերով Հոռոմում առանձնապես շատ է զբաղվել Կիկերոնը (106—43 թթ. մ. թ. ա.): Իր մի շարք աշխատություններում Կիկերոնը մշակել է ճարտասանության և ոճի հարցերը՝ իր համար ճարտասանի իդեալ համարելով Դեմոսթենեսին: Սկզբնապես Կիկերոնը իր տեսական աշխատություններում չի արձագանքել ասիական և ատտիկյան ուղղությունների պայքարի հարցերին: Այսպես, իր «Ճարտասանի մասին»



(«De oratore») աշխատության մեջ (55 թ. մ. թ. ա.), քննարկման ենթարկելով ոճի հարցերը, նա լռում է այդ մասին: Կիկերոնի գործերին նախորդող վերոհիշյալ աշխատության մեջ ևս այդ պայքարի մասին որևէ հիշատակություն չկա: Սակայն ավելի ուշ շրջանի աշխատություններում Կիկերոնը անդրադառնում է այդ հարցին և ինքնուրույն դիրք բռնում՝ սահմանազատվելով և՛ այս, և՛ այն ուղղության ծայրահեղություններից: Պետք է նշել, որ իր պրակտիկ գործունեության մեջ նա սկզբնապես տուրք է տվել ասիական ուղղությանը, բայց հետագայում զիջումներ է արել ատտիկականությանը: Խոսելով 3 տիպի ոճերի մասին՝ Կիկերոնը խորհուրդ էր տալիս ճարտասանին տիրապետել երեքին էլ և կիրառել դրանք՝ հաշվի առնելով պայմանների տարբերությունները:

I դարում ճարտասանության տեսության ամենանշանավոր դեմքը Հռոմում Քվինտիլիանոսն էր: Նա գրել է «Ճարտասանական կրթության մասին» («De institutione oratoria») աշխատությունը, ուր տեղ է տվել և քերականական հարցերին:

Ասիական և ատտիկյան ուղղությունները Հռոմում կողմնակիցներ են գտնում՝ առաջինը հանձին Հորտենզիոսի, երկրորդը՝ հանձին Հուլիոս Կեսարի: Կայսրության շրջանում I դարում գրական ոճի ընդհանուր ուղղությունը մոտենում է ասիականությանը, բայց I դարի վերջերից ատտիկականությունը տիրապետող դիրք է գրավում՝ որպես որոշ խավերի պահպանողական տենդենցների արտահայտություն:

### 3. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ («ՔԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ»)

#### ա. Քերականական հարցերը հունական գիզակտիկ լեզվաբանության և փիլիսոփայական լեզվաբանության (օգնատիստիկայի) մեջ

Հունական ֆերականությունը և նրա առաջացման նախադրյալները.— Հունական քերականական սիստեմի մշակումը հույների լեզվաբանական պրպտումների ամենից այլևի կարևոր բնագավառներից մեկն է: Այդ քերականական սիստեմը միջին դարերից անցնելով՝ հասավ նոր ժամանակները և ոչ միայն մեծ ազդեցություն գործեց ժամանակակից լեզվաբանության վրա, այլև դարձավ այն հիմքը, որի վրա մինչև այժմ էլ կառուցվում են ամենատարբեր լեզուների քերականությունները:

Հունական քերականական սիստեմի մշակումը տեղի ունեցավ երեք կարևոր գործոնի ազդեցության տակ: Դրանցից առաջինը գրի և ընթերցանության գործնական ուսուցումն էր, հրկրորդը՝ հունական փիլիսոփայական մտքի գործունեությունը, որ հաճախ ուղղվում էր դեպի լեզվական հարցերը, երրորդը՝ հին տեքստերի, հատկապես Հոմերոսի պոեմների բանասիրական ուսումնասիրությունը, որ շէր կարող մեծ տեղ շտալ այդ տեքստերի լեզվական առանձնահատկությունների մեկնաբանությանը: Այս գործոններից առաջին երկուսը խաղացին յուրատեսակ նախապատրաստական դեր, երրորդը նպաստեց նախորդ քերականական գիտելիքների ամբողջացմանն ու սիստեմավորմանը: Պետք է նշել, որ հունական քերականությունը համեմատաբար լայն ընդգրկում ուներ՝ ներկայացնելով լեզվական գիտելիքների գլխավոր բնագավառը:

Ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հին հույների սկզբնական լեզվական պրպտումները կապված են գրի ու գրականության առաջացման հետ: Հին հունական գիրը հնչյունական այբուբենն էր, և հասկանալի է, որ հնչյունաբանության հարցերը պետք է զգալի բարձրության հասնեին: Եվ իրոք, հնչյունաբանության բնագավառում հին հույների ունեցած նվաճումների սաղմերը գալիս են խոր հնությունից և մեծ շափով կապված են այդ գրի առանձնահատկությունների հետ:

Հին Հունական փիլիսոփաները, ամենավաղ ժամանակներից սկսած, դիմում էին լեզվի բնագավառից առնված օրինակների ու լուսարանումների, այս կամ այն փիլիսոփայական հարցի մեկնաբանության մեջ անհրաժեշտորեն պրազվում լեզվի տված նյութով: Լեզվական նյութի այսպիսի ներխուժումը փիլիսոփայական հետազոտությունների մեջ աստիճանաբար ուժեղանում է և հանգեցնում այն բանին, որ լեզվի կառուցվածքային հարցերը անջատվում են իրրև անկախ բնագավառ (քերականության բնագավառը), իսկ լեզվի բնույթի ու ծագման հարցերը երկար ժամանակ մնում են որպես փիլիսոփաների ուշադրության գլխավոր առարկաներից մեկը:

Գրի ուսուցումը և «տառերի ուսմունքը».— «Քերականական արվեստ» (τέχνη γραμματικῆ) ասելով հին Հունաստանում սկզբնապես հասկանում էին ընթերցանության և գրի ուսուցումը, այլ կիրպ ասած՝ գրերի (γράμματα) արվեստը: Գրերի ուսուցումը կա-

տարվում էր տառահեգական մեթոդով, որ պահանջում էր բառերի վանկատման և վանկերի տառատման ունակութունների մշակում: Սովորեցնում էին տառերի (α, β, γ, δ, ε) «տարր, տառ»<sup>1</sup> անունները, որոնք միացնելով կաղում էին վանկեր, վանկերից էլ՝ բառեր՝ «ալֆա, բետա—աբ, դամմա, էտա—գե» և այլն ձևով: Ուսուցման այս մեթոդը հիմք է տալիս տառ—վանկ—բառ աստիճանավորության հաստատման համար, որով հետագայում սիստեմավորվում էր քերականական նյութը: Միաժամանակ այն հիմք է դառնում հնչյունների զուգորդման հնչյունների՝ վանկի մեջ կատարած դերի ըմբռնման համար, որ իր հերթին նպաստում է «տառերի» դասակարգման հարցում ձեռք բերված նվաճումներին:

V դ. վերջերին արդեն մշակված էր «տառերի» դասակարգման հունական սիստեմը, ընդ որում «տառ» ասելով հասկանում էին միշտ տվյալ գրի հնչումը՝ անկախ տվյալ գրի՝ մեկ (α, β, ζ և այլն), թե երկու (ψ=πς կամ ϖς, ξ=χς կամ χς) հնչյունն արտահայտելուց: Այսպիսով, գրի և հնչյունի հստակ տարբերակում շկար: Հնչյունների դասակարգման հիմքում դրվեց վանկերի մեջ նրանց խաղացած դերը, թեև այս սկզբունքը խառնվում էր ակուստիկական-ֆիզիոլոգիական բնութագրման հետ: Այս սկզբունքով առանձնացվեցին «ձայնավորները», որպես վանկի իշխող, վանկարար, և «բաղաձայնները», որպես ձայնավորներին ուղեկցող, ոչ վանկարար տարրեր: Բաղաձայնների դասակարգման մեջ ևս դեր էր խաղում այդ սկզբունքը, որով տարբերվեցին երկու կարգի բաղաձայններ՝ 1) Պլատոնի մոտ «անձայն հնչեղներ», իսկ հետագայում «կիսաձայններ» կոչվածները՝ λ, γ, ρ, ζ, ալլև ζ, ψ, ξ. 2) Պլատոնի մոտ «անձայն անհնչեղներ», իսկ հետագայում «անձայններ» կոչվածները՝ π, τ, κ, β, δ, γ, φ, θ, χ. Առաջին խմբում դրվում էին այն «տառերը», որոնք կարող են հանդիպել վանկի կամ բառի վերջում, երկրորդ խմբում՝ այն «տառերը», որոնք կարող են հանդիպել միայն վանկի սկզբում: Երկրորդ խումբը ֆիզիոլոգիական առումով միասնական էր՝ կազմված միայն պայթականներից, մի բան, որ չէր կարելի ասել առաջին խմբի մասին:

«Տառերի» հատկութունների մանրամասն ուսումնասիրութունը կատարվում էր ոչ այնքան «քերականական արվեստի» (գրի ուսուցման), որքան երաժշտության տեսության, հատկապես ութ-

<sup>1</sup> Այսպես էին կոչվում գրերի հնչումները որպես խոսքի կամ, ավելի ճիշտ, տառաշարքի, «տողի» (στοιχον) «տարրեր»:

մոմհտրիկայի հարցերի հետ կապված: «Քերականական արվեստի» եռատիպ աստիճանավորութունն էլ իր հերթին ազդում է երաժշտության մեջ տոն—ինտերվալ—օկտավա, վտանկ—ոտք—չափ աստիճանավորության սահմանման վրա<sup>1</sup>:

Դեռևս V դ. վերջերից հունական աղբյուրներում հանդիպում են հնչյունների կազմավորման ֆիզիոլոգիական պայմանների բնութագրումներ: Ինչպես հայտնի է, այդ ժամանակ աթենացիները հնատիպ այբուբենից անցան նոր խոնրական այբուբենին: Այդ բարեփոխության օրինազօծի հեղինակ Արքինոսի բացատրության մեջ նշումներ են հանդիպում պայթականների արտաբերության տեղի մասին. փաստորեն տարբերվում են՝ 1) շրթնայիններ, որոնք կազմվում են «միացված շրթունքների մոտ», 2) առաջնալեզվայիններ կամ ատամնայիններ, որոնք կազմվում են «լեզվի լայն մակերեսով՝ ատամների մոտ», 3) հտնալեզվայիններ կամ կոկորդայիններ, որոնք կազմվում են լեզվի «ծալումով և սեղմումով՝ բերանի խորքում»<sup>2</sup>:

Բավական վաղ շրջանում է հանդիպում նաև պայթականների եռամասն բաժանումը 1) «պարզերի» (իմա՝ խուլերի) π, γ, 2) «թավերի» (իմա՝ շնչեղ-խուլերի) ϑ, χ և 3) «միջակաների» (իմա՝ ձայնեղների) β, δ,

Իեմոկրիտ.—Հին աշխարհի խոշորագույն փիլիսոփա-ատոմիստ Դեմոկրիտը (մոտ 460—370 թթ. մ. թ. ա.) և նրա հետևորդները հաճախ էին դիմում լեզվի բնագավառից առնված օրինակներին ու լուսաբանումներին: Դեմոկրիտի աշխատությունների ցանկում հանդիպում են այնպիսի վերնագրեր, որոնք առնչվում են լեզվական հարցերի հետ՝ «Ռիթմերի և հարմոնիաների մասին», «Բարեհնչուն և անբարեհնչուն տառերի մասին», «Հոմերոսի կամ ուղղախոսության և դրոսսաների մասին», «Ասուլթների մասին», «Անվանաբառ»:

Ատոմների զուգորդումներից աշխարհի ստեղծվելու իր տեսակետը Դեմոկրիտը լուսաբանության էր ենթարկում լեզվից առնված օրինակներով: Ըստ Դեմոկրիտի՝ իրերը միմյանցից տարբերվում են ատոմների ձևով, զուգորդման եղանակով և դիրքով, ինչպես A-ն N-ից (ձևով), AN-ը՝ NA-ից (զուգորդման եղանակով) և I-ն H-ից (դիրքով. հին գծագրության մեջ այս գրերից մեկը

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 13:

<sup>2</sup> Նույն աեղը, էջ 12 և 33:

90<sup>0</sup> շրջելով կարելի էր ստանալ մյուսը): Ատոմներից պարզ, պարզերից բարդ մարմինների գոյանալու դեմոկրիտյան աստիճանավորությունը աստմիստները լուսաբանում են՝ ելնելով և լեզվական հասկացությունների աստիճանավորությունից՝ տառ—վանկ—անուն և ապա անուն—ասույթ<sup>1</sup>—նախադասություն («բան»): Նախադասությունը նրանց համար ոչ այլ ինչ է, եթե ոչ անունների զուգորդում (συμπλοκή):

Պլատոն.— Պլատոնի մոտ ևս հանդիպում են հնչյունաբանական-քերականական դիտողություններ: Ինչպես տեսանք, նա խոսում էր «ձայնավորների», «անձայն հնչեղների» և «անձայն անհնչեղների» մասին՝ տալով «տառերի» դասակարգման առաջին փորձերից մեկը: Պլատոնը իր «Սոփեստ» տրամախոսության մեջ կատարում է «ասույթ» (ῥήμα) բառի իմաստի նեղացում՝ հիմք տալով Արիստոտելի խոսքի մասային բաժանման համար: Պլատոնը նշում է, որ ամեն մի «խոսք», «բան» (իմա՝ նախադասություն) կազմվում է առնվազն անունից ու «ասույթից» (իմա՝ բայից) և ներկայացնում է նրանց միացումը<sup>2</sup>: Այստեղ «ասույթ» բառը, որ օտաջ դիտվում էր որպես բառազուգորդում, գործածվում է «բայ» իմաստով:

Արիստոտել.— Լեզվա-քերականական հարցերը է՛լ ավելի մեծ տեղ են սկսում դրավել հին աշխարհի խոշորագույն մտածող Արիստոտելի աշխատություններում՝ կապված մասամբ նրա տրամաբանական, մասամբ էլ, ինչպես տեսանք, ճարտասանական ու դրականագիտական հետազոտությունների հետ: Այդ պատճառով էլ Արիստոտելի մոտ քերականական հասկացությունները հստակ կերպով չեն սահմանազատվում տրամաբանական հասկացություններից: Նրա համար լեզուն մտածողության ուղղագիծ արտահայտությունն է: Արիստոտելը լեզուն դիտում է պարզապես որպես մտածողության լսելի (հնչյունական) համապատասխանությունը և լեզվի ու մտածողության կապը համարում ինքնին հասկանալի: Սա բացատրվում է առաջին հերթին այն բանով, որ նա գտնվում է միայն իր մայրենի լեզվի՝ հունարենի պատկերացումների շրջանակում, դուրս չի գալիս հունարենին հատուկ արտահայտության եղանակների ոլորտից, հաշվի չի առնում լեզուների կառուցվածքային տարբերությունները: «Այնպես, ինչպես զրբերը

<sup>1</sup> ῥήμα. այս բառը հետագայում նեղ իմաստ է ստանում՝ նշանակելով խոսքի մասերից մեկը՝ բայը:

<sup>2</sup> Հմմտ. Античные теории языка и стиля. 1936, էջ 22:

նույնը շին բոլոր մարդկանց մոտ, — գրում է Արիստոտելը, — այն-  
 պես էլ բառերը նույնը շեն: Սակայն հոգում գտնվող պատկերա-  
 ցումները, որոնց անմիջական նշաններն են բառերը, բոլորի մոտ  
 նույնն են, ճիշտ այնպես, ինչպես առարկաները, որոնց արտա-  
 ցողումներն են պատկերացումները, նույնն են»<sup>1</sup>: Ավելորդ չէ նշել,  
 որ Արիստոտելն ընդհանրապես լավ չի տարբերակում բառը,  
 բառիմասը և նշանակվող առարկան, այլ կերպ ասած՝ գոյաբա-  
 նական, տրամաբանական և լեզվաբանական-քերականական կա-  
 տեգորիաները (հմմտ. նրա կատեգորիաների ուսմունքը): Միաժա-  
 մանակ Արիստոտելի մոտ չկա «խոսքի մաս» և «նախադասության  
 անդամ» հասկացությունների տարբերակում, մանավանդ որ  
 «խոսք» («բան», λόγος) բառը հին հույների մոտ գործածվում է  
 ոչ միայն լայն իմաստով, այլև նեղ առումով՝ խոսքի միավորը՝  
 նախադասությունը (երբեմն էլ սովորական բառակապակցություն-  
 նը) նշանակելու համար: Այդ է պատճառը, որ հետագա քերա-  
 կանների մոտ, ըստ այդ բառի այս կամ այն իմաստով գործած-  
 վելուն, «խոսքի մաս» (μέρος λόγου, հմմտ. «մասն բանի») հաս-  
 կացությունը նշանակում է կամ խոսքի մասը, կամ նախադասու-  
 թյան անդամը:

Վերևում ասածներից չի բխում, իհարկե, թե Արիստոտելին  
 անհայտ են դատողության ենթակայի և ստորոգյալի հասկացու-  
 թյունները. գրանք ոչ միայն կան նրա մոտ (υποκείμενον «հիմքում  
 լինկածը՝ ենթակա» և κατηγορούμενον «դրա մասին ասվողը՝ ստո-  
 րոգյալ»), այլև հիմք են հանդիսանում մտածողության ուսմունքի  
 կառուցման և հպտկապես կատեգորիաների ուսմունքի համար:  
 Սակայն Արիստոտելի ըմբռնմամբ ուղղագիծ համապատասխա-  
 նություն կա անվան ու բայի և ենթակայի ու ստորոգյալի միջև,  
 ստորոգյալին լեզվի մեջ անմիջականորեն համապատասխանում է  
 բայը: Դեռ ավելին, Արիստոտելը տրամաբանական վերլուծու-  
 թյան մեջ ելնում է լեզվական վերլուծությունից և լեզվական վեր-  
 լուծության մեջ ստացված անվան ու բայի կատեգորիաների հա-  
 մար ղուգահեռներ որոնում մտածողության մեջ՝ հանգելով ենթա-  
 կայի ու ստորոգյալի զաղափարին<sup>2</sup>: Այն հանգամանքը, որ ենթա-  
 կան ու ստորոգյալը գիտվում են միայն որպես մտածողության

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 60:

<sup>2</sup> Հմմտ. H. Glinz, Geschichte und Kritik der Lehre von den Satzgliedern in der deutschen Grammatik, Bern, 1947, էջ 18:

կատեգորիաներ, որոնց լեզվի մեջ համապատասխանում են անու-  
նը և բայը, պատճառ է դառնում, որ անտիկ աշխարհում ենթա-  
կայի և ստորոգյալի գաղափարները մնան միայն մտածողության  
ուսմունքի՝ տրամաբանության, բայց ոչ լեզվի ուսմունքի, սեփա-  
կանությունը և դուրս չգան փիլիսոփայության բնագավառից:

Արիստոտելը բոլոր բառերը իմաստային առումով բաժանում  
է նշանակավորների և աննշանակների: Առաջինները «խոսք» (նա-  
խադասություն) են կազմում, երկրորդները խաղում են առաջին-  
ները կապողների դեր: Նշանակավոր բառերի մեջ Արիստոտելը  
դնում է անունը (ὄνομα) և բայը (ῥήμα) առանց դրանք հստակ  
կերպով տարբերելու նախադասության ենթակայից ու ստորոգյա-  
լից և համապատասխանաբար տրամաբանական սուբյեկտից ու  
պրեդիկատից: Աննշանակ բառերի մեջ նա դնում է «շաղկապները»  
(σύνδεσμος)՝ այս անվան տակ հասկանալով այսպես կոչված  
խոսքի մասնիկները (հոգը, շաղկապը, նախադրությունը, նույնիսկ  
դերանունները): Այսպիսով ստացվում է խոսքի մասերի եռամասն  
բաժանում՝ անուն, բայ և շաղկապ: Բայի գլխավոր հատկանիշը  
համարվում է այն, որ նա «ժամանակ է ցույց տալիս» (προσῆμαίνει  
χρόνον):

«Պոետիկա»-ում Արիստոտելը հիշյալ 3 խոսքի մասերին ավե-  
լացնում է հոգը (ἄσθρον). որին նա հատկացնում է բուն հոգերը  
և դերանունները՝ «շաղկապի» մեջ թողնելով շաղկապները, նախա-  
դրությունները և մակբայների մի մասը:

Բառերի քերականական փոփոխությունները (թեքման կամ հո-  
լովման և խոնարհման ձևերը) նշանակելու համար Արիստոտելը  
գործածում է πῶτα՝ «անկում, հոլով» բառը: Անվան ուղղակա-  
նը և բայի ներկա ժամանակը համարվում են ուղիղ ձևեր, մնա-  
ցած բոլոր փոփոխությունները՝ «անկումներ» այդ ուղիղ ձևերից:  
Անվան թեք հոլովների համար «անկում» բառի գործածումը բխում  
էր «անունը» որպես ենթակա ըմբռնելուց. որպես ենթակա չգոր-  
ծածվող ձևերը «անկումներ» էին:

Դեռևս սոփիստ Պրոտագորասը տարբերել էր երեք սեռ՝ ա-  
վելի շուտ նկատի ունենալով բառերի իմաստային, քան քերա-  
կանական տարբերությունները: Արիստոտելը վերցնելով այդ բա-  
ժանումը՝ նկատի է ունենում անունների քերականական սեռերը և  
վիճարկում շեղոք սեռի պրոտագորյան σᾶσϋ «գործիքներ, առար-

կաներ» անվանումը. նա նշում է, որ կան արական և իգական սեռի բառեր, որոնք նույնպես «գործիքներ» կամ «առարկաներ» են նշանակում: Այսպիսով, նա ընդունում է 3 սեռի անուններ՝ արական (ἄνθρωποι ἄρρεα), իգական (ἄνθρωποι θήλεα) և «միջին» (μεσάζοντες՝ երկուսի միջև ընկած): Հետագայում մտցվում է «չեզոք» անվանումը՝ որպես այն բանի նշանակում, որ նա առաջին երկու սեռից ոչ այս է, ոչ այն (հուն. οὐδέτερον, լատ. neutrum, հայ. «չեզոք», իմա՝ չ + եզ «մի» + ոք): Արիստոտելը փորձում է անունների սեռը որոշելու որոշ կանոններ տալ ուղղականի հիման վրա՝:

Արիստոտելի մոտ կան նաև բառակազմական ու շարահյուսական որոշ տեղեկություններ: Նա տարբերում է սլարզ և բաղադրյալ անուններ:

Արիստոտելը հստակ կերպով չի տարբերակում բառակապակցությունը, նախադասությունը և նախադասությունների կապակցությունը: Նախադասությունը («բան, խոսք») նա սահմանում է որպես «բաղադրյալ հնչյուն, որ ունի ինքնուրույն նշանակություն, որի առանձին մասերը նույնպես ինքնուրույն նշանակություն ունեն»<sup>2</sup>: Ընդամիս նա նշում է, որ «ոչ ամեն նախադասություն է կազմված բայից և անունից: Կարող է նախադասություն լինել առանց բայերի, օրինակ, մարդու սահմանումը»<sup>3</sup>: Արիստոտելը տարբերում է նախադասությունը դատողությունից՝ նշելով, որ ամեն նախադասություն դատողություն չէ, այլ միայն այն նախադասությունը, որ պարունակում է հաստատում և ժխտում: Եթե դատողական նախադասությունների քննությունը նա համարում է տրամաբանության գործը, ապա նախադասությունների մյուս տեսակների քննությունը հատկացնում է ճարտասանությանն ու բանաստեղծությանը. «նախադասությունների մյուս տեսակներ» ասելով Արիստոտելը հենվում է Պրոտագորասի հայտնի բաժանման վրա: Վերջինս նշում էր նախադասությունների 4 տիպ՝ խնդիրք, հարց, սլատասխան և հրաման:

Հնչյունական տեղեկությունների մեջ Արիստոտելը, ինչպես հետազոտողներն են կարծում<sup>4</sup>, ինքնուրույն չէ: Հնչյունների ու

<sup>1</sup> Հմմտ. H. Steinthal, Geschichte der Sprachwissenschaft bei Griechen und Römern, Berlin, 1863, էջ 263:

<sup>2</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 62:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 63. մարդու սահմանում ասելով Արիստոտելը նկատի ունի «երկուսի կենդանի» (ζῶον δίπου) տիպի բառակապակցությունը:

<sup>4</sup> Հմմտ. H. Steinthal, հիշ. աշխ., էջ 247 և 59.1



վանկերի հատկութիւնները վրա նա մանրամասն կանգ չի առնում՝ դրանց քննութիւնը համարելով մետրիկայի գործը: Նա խոսում է բերանի ձևի, արտաբերման տեղի, լեզվի՝ այլ օրգանների նկատմամբ գրաված դիրքի, շրթնայնացման, երկարութեան ու կարճութեան, շեշտավորման տարբեր տիպերի մասին: Տարբերում է, ըստ տրագիցիայի, «տառերի» 3 տեսակ. «Ձայնավորն այն է, որի հնչումը լսվում է առանց լեզվի հսկման (προσβόλῃ), օրինակ՝ օ և օ կիսաձայնն այն է, որի հնչումը լսվում է լեզվի հսկումով, օրինակ՝ օ և օ. անձայնն այն է, որը լեզվի հսկման առկայութեամբ հանդերձ, այնուամենայնիվ, ինքնուրույնաբար ոչ մի հնչուն չի տալիս, այլ լսելի է դառնում հնչունական որևէ ուժ ունեցող հնչունների հետ, օրինակ՝ և ծ»<sup>1</sup>: Վանկը Արիստոտելը սահմանում է որպէս «ինքնուրույն նշանակութիւնից զուրկ հնչուն, որ կազմը ված է անձայնից և ձայնավորից»<sup>2</sup>:

Ստոիկներ.— Հելլենիզմի էպոխայի փիլիսոփայական ուղղութիւններից քերականութեան զարգացման համար ամենից ավելի շատ գործ կատարեցին ստոիկները: Արիստոտելի նման ստոիկները քերականական հարցերով զբաղվում էին փիլիսոփայական-տրամաբանական հետազոտութիւնների հետ կապված: Նրանց գործունեութեան սկզբնական շրջանում «քերականական արվեստը» (τέχνη γραμματικῆ) շարունակում էր դիտվել «բոլոր գրի և ընթերցանութեան տարրական գիտելիքների ուսուցում, «գրերի» (γράμματα) ուսմունք: Լեզվի բուն քերականական կառուցվածքի հարցերը քննվում էին դեռևս փիլիսոփաների կողմից, մանավանդ որ ստոիկները տրամաբանութիւնը նույնացնելով ճարտասանութեան ու դիալեկտիկայի հետ<sup>3</sup>, այս վերջինը հասկանում էին որպէս դիստութիւն «ճշմարիտ ու սուտ առարկաների մասին» և այստեղ էլ խոսում լեզվա-քերականական հարցերի մասին:

Ստոիկները լեզուն համարում էին հոգու կարևորագույն հատկութիւններից մեկը, որ ծառայում է բանականութեան (λόγος) արտահայտութեանը և սերտորեն կապված է նրա հետ: Արտաքին խոսքը ծառայում է ներքին խոսքի արտահայտմանը: Ինչպէս նշել ենք, ստոիկները տարբերում էին «նշանակվողը» (τὸ σημαίνον-

<sup>1</sup> Античные теории языка и стиля, 1946, էջ 62:

Նույն տեղը:

<sup>3</sup> Տրամաբանութիւնը նրանք բաժանում էին ճարտասանութեան, որը կանոններ է սահմանում, և դիալեկտիկայի, որը ծառայում է ճշմարիտի և ստի իմացութեանը:

μενον), «նշանակողը»՝ (τὸ σημαῖνον) և առարկան. առաջինն անմարմնական է, վերջին երկուսը (բառը և առարկան)՝ մարմնական: Խոսքի մասերի ուսմունքը ստոիկները հատկացնում էին «նշանակողին», այսինքն՝ լեզվական միջոցներին<sup>1</sup>: Նրանք տարբերում էին 4 խոսքի մաս՝ անուն, բայ, շաղկապ և հոդ<sup>2</sup>. «Հոդ» ասելով հասկանում էին որոշիչ հոդերը և դերանունները՝ այն սահմանելով որպես «խոսքի հոլովական տարր, որ սահմանազատում է անունների թիվը և հոլովը»<sup>3</sup>: Քրիստիպպոս Սոլոյացին որպես առանձին խոսքի մասեր անջատում է հատուկ և հասարակ անունները, իսկ ավելի ուշ Անտիպատրոս Տարսոսացին առանձնացնում է որպես խոսքի մաս «միջինը» (μεσότης)՝ այս անվան տակ հասկանալով մակբայը: Նրա կարծիքով մակբայը որպես բայի մակդիր կամ ածական (իսկ այս վերջինը դրվում էր անվան կազմի մեջ) միջին դիրք է գրավում անվան և բայի միջև<sup>4</sup>: Լատին քերական Պրիսցիանոսը, խոսելով խոսքի մասերի ստոիկյան ուսմունքի մասին, գրում էր. «Ստոիկները, դերբայը հատկացնելով բայերին, այն կոչում են դերբայական կամ հոլովական բայ. մակբայները նրանք հատկացնում էին անուններին կամ բայերին և կոչում որպես թե բայերի ածականներ. դերանունները հատկացնելով հոդերին՝ դրանք կոչում էին որոշիչ հոդեր, իսկ իրենք հոդերը՝ անորոշ հոդեր... նախդիրը միացնելով շաղկապին՝ ստոիկներն այն կոչում էին նախդրային շաղկապ»<sup>5</sup>:

Խոսքի մասերի ստոիկյան ուսմունքը հենվում էր ստոիկյան արամբարանության վրա: Ստոիկները, ինչպես հայտնի է, տարբերում էին 4 կատեգորիա՝ սուբստանց (ὀποχείμενον), որակ (ποιόν), հատկություն (πὼς ἔχον «ինչպես ունենալը»), հարսբերվող հատկություն (πρὸς τί πὼς ἔχον)<sup>6</sup>. այս չորս կատեգորիաներին հաջորդաբար համապատասխանում էին հոդը (որպես անո-

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 26:

<sup>2</sup> «Հոդ» բառը, ինչպես տեսանք, հանդիպում է Արիստոտելի մոտ, բայց դրա բնույթի մասին կարելի է լուր կոահումներ անել:

<sup>3</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 70:

<sup>4</sup> Christ-ը, Geschichte der griechischen Litteratur. 6-te Auflage, էջ 256. «միջին» ասելով հասկանում է դերբայը (Participium). որը նույնպես հնում համարվում էր անվան և բայի միջև գտնվող, երկուսի հատկությունները զուգորգող խոսքի մաս:

<sup>5</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 70:

<sup>6</sup> Հմմտ. A. Trandelenburg. Geschichte der Kategorienlehre, Berlin. 1846, էջ 217 և 42:

րակ սեռային հասկացութեան արտահայտիչ), անունը, բայը և շարժակալը<sup>1</sup>: Քանի որ որակը ստորիկները լաթանում էին ընդհանուրի և առանձինի, ուստի և Քրիստիպոսը համապատասխանաբար տարբերում է հասարակ և հատուկ անուններ:

Հատուկ ուշադրութիւն են դարձնում ստորիկները խոսքի մասերի քերականական հատկանիշներին կամ քերականական կատեգորիաներին (այս բառի նեղ իմաստով՝ հոլով, թիվ, սեռ, եղանակ և այլն)՝ դրանք նշանակելով *ταρπεύμενα* լատով:

Առանձնապէս կարևոր է ստորիկների դերը հոլովների ումունքի մեջ. նրանք *πεποις* «անկում, հոլով» բառը սկսում են գործածել արդի նշանակութեամբ՝ հոլով համարելով նաև ուղղականը: Այսպիսով, նրանք տարբերում են հոլովների 2 տեսակ՝ 1) «ուղիղ հոլով (γί ὀρθή կամ εὐθεία π-ῶσις)՝ ուղղապանը և 2) «թեք հոլովներ» (αἱ πλάγαι π-ῶσις): Թեք հոլովները բաժանում են 3-ի՝ չեչւի «սեռական» (որպես սեռի տրամաբանական հասկացութեան արտահայտիչ՝ ի հակադրութիւն տեսակի)<sup>2</sup>, ծօւղի «տրական» (որպես այն անձի կամ իրի հոլով, որին մի բան տրվում է) և աւաւի «հայցական» (որպես ներգործվողի հոլով՝ աւաւի «ներգործվող» բառից)<sup>3</sup>. որոշ վերապահութեամբ սրանց միացվում է և կոչականը — աւաւի որպես հինգերորդ հոլով: Եթե Արիստոտելը «հոլովը» համարում էր անկում ուղղականից, ուղիղ ձևից, ապա ստորիկները, ուղղականը համարելով հոլով, նշում էին, որ բոլոր հոլովները կրում են *πεποις* «անկումներ» անունը, որովհետև «ընկնում են» հոգեկան սլատկերացումից՝ ստանալով հնչյունական արտահայտութիւն: Պերիպատետիկները այս սլատառաբանութիւնը վիճարկում էին՝ նշելով, որ այս դեպքում «հոլովը» պիտի վերագրվեր նաև մյուս խոսքի մասերին: Ստորիկներին է վերագրվում անվան սեռերից երրորդի հա-

<sup>1</sup> Հմտ. *Античные теории языка и стиля*, 1936, էջ 26: *Ումունք այսպիսի անմիջական համապատասխանութիւնը ժխտում են. հմտ. Robinson, Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe*, London, 1951, էջ 27:

<sup>2</sup> Լատինական *genetivus*-ը անհաջող է և նկատի ունի այդ հոլովի ժազուր նշանակելը:

<sup>3</sup> Հետագայում այս բառը կապվեց *αἰτιολογία*՝ «մեղադրել, պատճառաբանել» կամ *αἰτέω* «հայցել, խնդրել, պահանջել» բայերի հետ. այստեղից էլ Վառոնի թարգմանած լատ. *accusativus*-ը (*accuso* «մեղադրել» բայից) և հայ. «հայցական» կամ գործածութիւնից դուրս եկած «պատճառական»:

ար «չեզոք» (οὐδέτερον) անվան ներմուծումը՝ նախկին «միջին»-ի (μεταξύ) փոխարեն<sup>1</sup>։

Ստոիկներն զբաղվում են նաև բայական կատեգորիաների հարցով։ Շարահյուսական-իմաստային սկզբունքով նրանք տարբերում են ստորոգյալի 3 տեսակ կամ արդի իմաստով 3 բայասեռ՝ «ուղիղ» (ներգործական), «շուռ տված» (կրավորական) և «ոչ այս, ոչ այն» (միջին կամ շեզոք)։ Տալով ժամանակների սովորական տարբերակումը՝ նրանք «ներկայի» և «անցյալի» երկու տեսակ են նշում՝ «տևական» և «կատարյալ», այլ կերպ ասած՝ տարբերում են բայական երկու կերպ։ Ստացվում է ժամանակային ձևերի հետևյալ բաժանումը՝ ներկա տևական՝ βαιῶν «գնում եմ», կատարյալ ներկա՝ βέβηχα «գնացել եմ», տևական՝ անցյալ՝ ἔβαι- «գնում էի» և կատարյալ՝ անցյալ՝ ἔβηχον «գնացել էի»<sup>2</sup>։ Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև ստոիկների արժարժած շարահյուսական հարցերից։ Նրանք ըստ բայ-ստորոգյալի և տարբեր հոլովներով դրված անունների զուգորդման տիպերի տարբերում են 1) դիմավոր («Սովրատեսն զբոսնում է») ու անդեմ («Սովրատեսին ցանկալի է») և 2) անուղղակի խնդիրներ ունեցող նախադասություններ։

Ըստ հին հունական գրականության գիտակ հրիստի՝ Անտի-պատրոս Տարսոսացու ուսուցիչ Դիոգենես Սելևկացու «Τέχνη περι φωνῆς» աշխատությունը պիտի ներկայացրած լինի ստոիկյան սուաչին քերականությունը<sup>3</sup>։

### բ. Ֆիլոլոգիական քերականությունը հելլենիստական Հունաստանում

Բանասիրական աշխատանքը և նրա դերը ֆեռականության ձևավորման մեջ.— Հելլենիզմի էպոխայում փիլիսոփայական մեկնաբանություններին և անալոգիստների ու անոմալիստների վեճերին զուգընթաց զարգանում է անտիկ քերականության ձևավորման համար կարևոր դեր խաղացած մյուս գործոնը՝ հին

<sup>1</sup> Հմմտ. L. Lersch, Die Sprachphilosophie der Alten, II, էջ 175, այլև Robins, հիշ. աշխ., էջ 31։

<sup>2</sup> Ապանուն և աորիստի հարցը ստոիկների մոտ պարզ չէ, այս մասին տե՛ս H. Steinthal, հիշ. աշխ., էջ 300—309, L. Lersch, հիշ. աշխ., II, էջ 311, Robins, հիշ. աշխ., էջ 35—36։

<sup>3</sup> Christ, հիշ. աշխ., էջ 258։

տեքստերի վրա կատարվող բանասիրական աշխատանքը: Հունական կուլտուրայի բոլոր նշանավոր կենտրոններում, հատկապես Ալեքսանդրիայում ու Պերգամոնում, լայն ծավալ է ստանում հին տեքստերի բազմակողմանի ուսումնասիրությունը: Հանդես են գալիս այդ տեքստերի քերականական, բարբառագիտական, տաղաչափական և այլ կարգի մեկնություններ: Այս կապակցությամբ փոխվում է «քերականական արվեստի» նախկին բովանդակությունն ու ծավալը: Ծթե նախկինում յթάματα բառով նշանակում էին գրերը և τέρυη γράματα-ի ստելով հասկանում պրերի և ընթերցանության ուսուցումը, այս անգամ յթάματα բառը նշանակում է գրավոր արտահղանքները, գրքերը, իսկ τέρυη γράματα-ի-ն սկսում է նշանակել գրավոր տեքստերի բազմակողմանի ուսումնասիրությունը, այն բոլոր գիտելիքները, որոնք կապված են գրավոր տեքստերի ճիշտ մեկնաբանության ու վերարտադրության հետ: Հետագայում յթάματα-ի բառն սկսում է նշանակել միայն լեզվի ուսումնասիրությունը, իսկ ավելի ուշ՝ լեզվի ուսումնասիրության բաժիններից մեկը:

Քերականության ձևավորման համար բանասիրական աշխատանքի կատարած վճռական դերը ոչ միայն ունենում է այն հետեւյալնքը, որ այդ դիսցիպլինը խիստ լայն բովանդակություն ու ծավալ է ստանում, այլև հանգեցնում է քերականության՝ հիմնականում գրավոր լեզվի ուսումնասիրությամբ սահմանափակվելուն:

Պերգամի և Ալեքսանդրիայի փերականական դպրոցները.— Բանասիրական-քերականական աշխատանքի՝ վերևում հիշատակված երկու կենտրոններից Պերգամոնում կենտրոնացած էին ստոիկյան «փիլիսոփայացված» քերականության ներկայացուցիչները, որոնք, ի տարբերություն Ալեքսանդրյան «քերականների» (γράμματικοί), իրենց կոչում էին «քննադատներ» (κριτικοί) և նրանցից ավելի բարձր էին համարում<sup>1</sup>: Պերգամոնում էր գործում անոմալիստ Կրատես Մալոսացին: Ալեքսանդրիայի քերականները, որոնք անալոգիայի կողմնակիցներ էին, ավելի կարևոր դեր խաղացին անտիկ քերականության ձևավորման մեջ. նրանցից հայտնի են Զենոդոտոսը (մեռած 260 թ. մ. թ. ա.), Արիստոֆանեսը (մոտ 257—180 թթ. մ. թ. ա.), Ապոլլոնիոսը և ամենից ավելի՝ Արիստարքոսը (217—145 թթ. մ. թ. ա.), որի աշակերտ Դիո-

<sup>1</sup> Christ, հիշ. աշխ., էջ 25:

նիսիոս Թրակացին (170—90 թթ. մ. թ. ա.) եղել է ալեքսանդրյան քերականության նվաճումների ամփոփողը և քերականական առաջին սիստեմատիկ շարադրանքի հեղինակը:

Արանցից Արիստոֆանեսը փորձ է արել բառերի անալոգիկ ձևերը որոշելու հիմունքներ նշել: Ըստ նրա՝ բառերի անալոգիայի մասին խոսելիս պետք է ընդհանրություն տեսնել նրանց 1) սեռի, 2) թվի, 3) վերջավորության, 4) վանկերի քանակի և 5) շեշտի միջև: Արիստարքոսը սրանց միացնում է վեցերորդ սկզբունքը՝ պահանջելով սլարվ բառերը չհավասարեցնել բաղադրյալներին<sup>1</sup>: Արիստարքոսն էլ հենց խոսքի մասերի թիվը հասցնում է 8-ի, որ և արտահայտություն է գտնում Դիոնիսիոս Թրակացու քերականական աշխատության մեջ:

Դիոնիսիոս Թրակացին և նրա «Քերականական արվեստ» աշխատությունը.— Դիոնիսիոս Թրակացին սկզբնապես բնակվում էր Ալեքսանդրիայում, ապա տեղափոխվում է Հռոդոս: Եղել է հեռագայում մեծ համբավ ստացած Տիրանիոն Ավագի, թերևս նաև էլիոս Ստիլոյի ուսուցիչը:

Դիոնիսիոս Թրակացու «Τέχνη γραμματικῆ» («Քերականական արվեստ») աշխատությունը ներկայացնում էր Ալեքսանդրիայի ֆիլոլոգիական քերականության նվաճումների ամփոփ գործնական շարադրանքը, որը նախատեսված էր որպես դպրոցական դասագիրք: Իբրև այդպիսին՝ միջին դարերում այն հսկայական հեղինակություն էր վայելում:

Դիոնիսիոսի քերականական աշխատության մեջ ամենից ավելի ցայտուն կերպով է արտահայտվել ալեքսանդրյան քերականության հեռացումը փիլիսոփայական լայն հարցադրումից և որոշ նեղ էմպիրիզմի հանգելը: Դիոնիսիոսը քերականությունը սահմանում է որպես բանաստեղծների և արձակագիրների մոտ ամենից ավելի հաճախ հանդիպածի փորձնական իմացություն, «հմտություն» (էմպիրիա):

Դիոնիսիոս Թրակացու այս էմպիրիկ սահմանումը ընդհանուր ընդունելություն չի գտել: Այդ սահմանմանը նախորդել է Արիստոն Քրոսացու սահմանումը, որ պահպանվել է լատին հեղինակ Մարիոս Վիկտորինոսի մոտ. «Քերականությունը բանաստեղծներին և արձակագիրներին հասկանալու գիտությունն է, որ նախընտրում է առավելապես ըստ բանականության և սովորույթի

<sup>1</sup> Հմտ. Antichnye teorii yazyka n stilya, 1936. էջ 302:

խոսելու ձևը»<sup>1</sup>։ Հետագայում Դիոնիսիոսին շատերն էին կշտամբում քերականության էմպիրիկ սահմանման համար։ Ասկլեպիադես Միուլեսացին և Պտղոմեոս Պերիպատետիկը քերականությունը համարում էին ոչ թե հմտություն, այլ արվեստ, որ իմացության ավելի բարձր աստիճան է ներկայացնում, քան հմտությունը։ Վերջինս, ինչպես հաղորդում է Սեքստոս էմպիրիկոսը, կշտամբելով Դիոնիսիոսին՝ գտնում էր, որ հմտությունն առաջնորդվում է մերկ դիտողությամբ ու վարժությամբ, առանց արվեստի և տրամաբանության, այնինչ քերականությունն արվեստ է<sup>2</sup>։

Քերականության մասերի և նպատակների ըմբռնման հարցում Դիոնիսիոսը որոշ երկվություն ունի. մի կողմից՝ քերականության մասերը թվելիս նա նկատի է ունենում այն բոլորը, ինչ անհրաժեշտ է տեքստերի բանասիրական ուսումնասիրության համար, մյուս կողմից՝ իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է բուն լեզվա-քերականական հարցերի՝ հնչյունաբանության և ձևաբանության վրա։ Ըստ Դիոնիսիոսի՝ քերականությունն ունի 6 մաս՝ 1) անագնոստիկան կամ հմուտ ընթերցանությունը, 2) էքսեգետիկան կամ երկի բանաստեղծական դարձվածքների համապատասխան բացատրությունը, 3) դժվար (բարբառային) բառերի և դիցաբանական պատմությունների հասկանալի բացատրությունը, 4) ստուգաբանությունը, 5) անալոգիկ ձևերի ընտրությունը և 6) տեքստի քննադատությունը։ Ելնելով քերականության բանասիրական լայն ըմբռնումից՝ Դիոնիսիոսը վերջին մասը համարում է քերականության բոլոր մասերից «գեղեցկագույնը»։ Բուն քերականական տեղեկությունները տրվում են 5-րդ մասում, որովհետև Դիոնիսիոսը, հետևելով ալեքսանդրյան անալոգիստների ուսմունքին, լեզվի ուսումնասիրության հիմքում դնում է «անալոգիաների ընտրությունը»։

Համառոտ տեղեկություններ տալով քերականության մյուս բաժինների մասին՝ Դիոնիսիոսը մանրամասնորեն կանգ է առնում հնչյունաբանության կամ «տառերի» ուսմունքի և ձևաբանության կամ «խոսքի մասերի» ուսմունքի վրա։ Որոշ տեղեկություններ առաջ է նաև վանկերի քանակի մասին, որ հնում կազմում էր

<sup>1</sup> Christ, հիշ. աշխ., էջ 27, Античные теории языка и стиха, 1936, էջ 106։

<sup>2</sup> Հմմտ. Античные теории языка и стиха, 1936, էջ 105։

պրոսոփեկայի հիմնական նյութը և կարևոր էր տաղաչափական առումով<sup>1</sup>:

Բուն լեզվա-քերականական նյութը Դիոնիսիոսը քննում է տառ-վանկ-բառ-նախադասություն (λόγος εἰσφορά, բան») հաջորդականությամբ, ընդ որում խոսքի մասերի (μέρη λόγου) ուսմունքը դրվում է նախադասության (λόγος «բան, խոսք, նախադասություն») սահմանումից անմիջապես հետո:

Ամփոփելով հնչյունաբանության նախորդ զրջանի նվաճումները՝ Դիոնիսիոսը «տառերը» բաժանում է նախ ձայնավորների և բաղաձայնների, ապա սրանք էլ իրենց հերթին դասակարգման է ենթարկում: Ձայնավորները նա տարբերում է բաղաձայններից նրանով, որ առաջինները ինքնին լրիվ հնչյուն են կազմում, մինչդեռ բաղաձայնները կարող են այդպիսին դառնալ ձայնավորների հետ զուգորդվելով:

Ձայնավոր «տառերը» Դիոնիսիոսը բաժանում է երկարների՝ τ, կարճերի՝ և երկամանակների (διχρονία)՝ α, ι, υ (այն «տառերը», որոնք մերթ երկար, մերթ կարճ ձայնավոր էին արտահայտում): Խոսում է նաև երկբարբառների ու նրանց կազմիչ ձայնավորների շարադասության մասին:

Բաղաձայն «տառերը» Դիոնիսիոսը բաժանում է կիսաձայնների (ήμιφωνα)՝ ψ, λ, μ, ν, ρ, σ և անձայնների (άφωνα)՝ π, α, β, δ, φ, θ, χ: Կիսաձայնների մեջ առանձնացվում են λ, μ, «տառերը» որպես անփոփոխներ (ἀμετάβολα) կամ նայեր (ήγχα): Անձայնները բաշխվում են 3 խմբի՝ պարզեր (ψίλα)՝ π, α, միջակներ (μέσα)՝ β, δ, և թավեր (δατάα)՝ φ, θ, χ: «Տառերից» γ, ն, ξ-ն և ψ-ն համարվում են կրկնակներ (διπλά)՝ ζ=σδ, ξ=αζ և φ=πς:

Դիոնիսիոսը, հենվելով իր ուսուցիչ Արիստարքոսի վրա, տարբերում է 8 խոսքի մաս՝ 1) անուն (ὄνομα), 2) բայ (ῥημα), 3) դերբայ (μετοχή), 4) հոգ (ἄρθρον), 5) դերանուն (ἄντωνυμία), 6) նախադասություն (πρόθεσις), 7) մակբայ (ἐπίρρομα) և 8) շաղկապ (σύνδεσμος): Անունը պարունակում էր գոյականները, ածականները, թվականները և դերանունների որոշ տեսակներ (հարցական, որոշյալ, անորոշ): Հոգը պարունակում էր, բացի բուն հոգերից, նաև հարաբերական դերանունները, որոնք հույներն ստու-

<sup>1</sup> Հունական տաղաչափությունը մետրիկական էր, այսինքն՝ հենվում էր երկար և կարճ վանկերի համաչափ հաջորդականության վրա: Վանկերը երկար էին համարվում բնությամբ և դրությամբ:



գաբանորեն կապում էին հոգերի հետ: Դերանունների մեջ դրվում էին միայն անձնականներն ու ցուցականները: Զայնարկությունները դրվում էին մակբայների մեջ:

Խոսքի մասերի սահմանումը Դիոնիսիոսը տալիս է իմաստա-  
բանական-քերականական սկզբունքով, այսինքն՝ հաշվի է առնում  
ոչ միայն բառերի իմաստը, այլև ձևաբանական հատկանիշները  
(ինչպես, օրինակ, հոլովվելը թե չհոլովվելը), ամենից ավելի  
հատկանշական քերականական կատեգորիաները և շարահյուսու-  
կան ֆունկցիաները: Ըստ նրա՝ 1) «Անունը հոլովական խոսքի մաս  
է, որ նշանակում է մարմին կամ իր՝ (մարմին, օրինակ՝ քար, իր,  
օրինակ՝ դաստիարակություն) և արտահայտվում է որպես ընդ-  
հանուր և որպես առանձին. ընդհանուր, օրինակ՝ մարդ, առանձին,  
օրինակ՝ Սոկրատես»<sup>2</sup>. 2) «Բայը անհոլով խոսքի մաս է, որ ըն-  
դունում է ժամանակներ, դեմքեր ու թվեր և արտահայտում է ներ-  
գործում կամ կրում»<sup>3</sup>. 3) «Դերբայը բառ է, որ ընդունում է բա-  
յերի և անունների հատկությունները»<sup>4</sup>. 4) «Հոգը անհոլով խոսքի  
մաս է, որ նախադասվում կամ ստորադասվում է հոլովվող անուն-  
ներին»<sup>5</sup>. 5) «Դերանունը բառ է, որ գործածվում է անվան փոխա-  
րեն և ցույց է տալիս որոշակի դեմքեր»<sup>6</sup>. 6) «Նախադրությունը  
խոսքի մաս է, որ նախադասվում է բոլոր խոսքի մասերին թե՛  
բառի կազմում և թե՛ նախադասության կազմում»<sup>7</sup>. 7) «Մակբայը  
անհոլով խոսքի մաս է, որ ասվում է բայի հետ՝ նախադասվե-  
լով կամ ստորադասվելով նրան»<sup>8</sup>. 8) «Շաղկապը բառ է, որ  
շաղկապում է միտքը որոշակի կարգով և արտահայտում է մտքի  
արտահայտման ձեղքը»<sup>9</sup>:

Խոսքի մասերի քննությունը Դիոնիսիոսը կատարում է հետև-  
յալ կերպ. նախ տալիս է տվյալ խոսքի մասի սահմանումը, ապա  
քննության առնում նրա քերականական հատկանիշները (սկզի-  
դենցիաները—*παρρημια*): Բառակազմական կատեգորիաները  
քննվում են մյուսների հետ միասին «ձև» (*ἔξις*) և «տեսակ»

<sup>1</sup> «Իր» ասելով՝ Դիոնիսիոսը հասկանում է վերացական անունները:

<sup>2</sup> Античные теории языка и стиля, 1936, էջ 118:

Նույն տեղը, էջ 124:

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 131:

Նույն տեղը, էջ 132:

<sup>6</sup> Նույն տեղը, էջ 133:

<sup>7</sup> Նույն տեղը, էջ 134:

<sup>8</sup> Նույն տեղը:

Նույն տեղը, էջ 136:

(εἶδος) անունների տակ. **Տարբերվում է 3 «ձև»՝ պարզ (ἀπλοῦν), բարդ (σύνθετον) և հարաբարդ (παρασύνθετον).** վերջին անվամբ նշանակվում են բարդ բառերի հետագա բաղադրումները: «Տեսակ» անվան տակ Դիոնիսիոսը քննում է խոսքի մասերի բառակազմական և իմաստային տեսակները: Ըստ կազմութայն տարբերվում են նախատիպ (πρωτότυπον) և ածանցական (παράγωγον) տեսակներ. վերջինս ընդգրկում է վերջածանցավոր կազմությունները, իսկ նախածանցավորները համարվում են բարդ բառեր և քննվում որպես «ձևեր»: Խոսքի մասերից իմաստային մանրամասն տեսակավորման են ենթարկվում անունները, մակբայներն ու շաղկապները:

**Անվանը, բացի ձևից և տեսակից, հատկացվում են թիվ (αριθμός), սեռ (γένος) և հոլով (πτῶσις).** **Տարբերվում է 3 թիվ՝ եղակի (ἐνικός), երկակի (δυσικός) և հոգնակի (πληθυντικός), 5 հոլով՝ ուղղական (ὀρθή), սեռական (γενική), տրական (δοτική), հայցական (αιτιατική) և կոչական (κλητική), 3 սեռ՝ արական (ἀρσενικόν), իգական (θηλυκόν) և շեղոք (οὐδέτερον).** **Նշվում է, որ ումանք ափեղացնում են 2 սեռ ևս՝ ընդհանուր (κοῖνον) և համընդհանուր (ἐπίκοινων).** **Ընդհանուր սեռի են համարվում այն բառերը, որոնք կարող են ստանալ և՛ արական, և՛ իգական հոգ՝ համապատասխանաբար նշանակելով կամ արական, կամ իգական սեռի անհատ (ὁ ἴππος εἰσφασσά, արու ձի», ἡ ἴππος εἰσάμειψ, էգ ձի).** **Համընդհանուր սեռի են համարվում այն բառերը, որոնք կարող են ստանալ միայն արական կամ միայն իգական սեռի հոգ, բայց նշանակել և՛ արական, և՛ իգական սեռի անհատ (ἡ χελιδὼν «1) արու կրիա, 2) էգ կրիա», ὁ ἀετός «1) արու արծիվ, 2) էգ արծիվ»):**

**Բային, բացի տեսակից և ձևից, հատկացվում են եղանակ (ἔγκλισις), սեռ (διάθεσις), ժամանակ (χρόνος), թիվ (ἀριθμός), գեմք (πρόσωπον), լծորդություն (συζυγία).** **Լծորդություններ ասելով Դիոնիսիոսը հասկանում է բայերի խոնարհման տարբեր լսմբերը. Տարբերվում է 5 եղանակ՝ սահմանական (ὀριστική), հրամայական (προστακτική), ըղձական (εὐκτική), ստորագասական (υποτακτική) և անորոշ (ἀπαρέμφατος), 3 սեռ՝ ներգործական (ἐνέργεια «ներգործություն»), կրավորական (πάθος «կրում, կիրք») և միջին (μεσότης), 3 հիմնական ժամանակ (ἔστιν φησὶ ἰσοφωσյական բաժանման)՝ ներկա (ἐνεστώς), անցյալ (παρελήλυθώς) և ապառնի (μελλών), ընդ որում անցյալի մեջ նշվում է 4 տարբերակ:**

Մնացած խոսքի մասերից դերբային հատկացվում են անվան և բայի բոլոր հատկանիշները, բացի դեմքից և եղանակից, հոգին վերագրվում են սեռ, թիվ և հոլով, դերանվանը՝ դեմք, սեռ, թիվ, հոլով, տեսակ և ձև, ընդ որում ստացական դերանունները համարվում են անձնականների ածանցական ձևերը:

Հելլենիստական շրջանի հետագա փերականները.—Հելլենիստական շրջանի քերականական հետագա ուղղութիւնները աշխատում են վերացնել Թրակացու քերականական սիստեմի հակասութիւնները, տալ քերականական հարցերի քննութեան ավելի ռացիոնալ բաշխում, ճշտել և մանրամասնել տրված տեղեկութիւնները:

Ասկիեպիադես Միուեացին (մոտ 150—50 թթ. մ. թ. ա.) տարբերում է քերականութեան երկու մաս՝ տեխնիկական և պատմական. առաջին անվան տակ նա հասկանում է բուն քերականութիւնը, երկրորդի տակ՝ գրական երկերի մեկնութիւնն ու քննադատութիւնը: Ոմանք գնում են ավելի հեռու՝ քերականութեանը թողնելով նրա բուն բնագավառը՝ խոսքի մասերի ուսմունքը՝ «տառերի» մասին ներածական դիտողութիւններով հանդերձ: Սակայն քերականական արվեստը, այնուամենայնիվ, չի կարողանում լիովին ազատվել ֆիլոլոգիական քերականութեան տրադիցիաներից: Ոմանք նույնիսկ քերականութեան առարկան էին համարում այն բոլորը, ինչ մյուս արվեստներին չէր վերաբերում:

Այն հեղինակները, որոնք քերականութեան բնագավառը համեմատաբար նեղացնում էին՝ թողնելով միայն լեզվական կողմը, հենվում էին Պերգամի ստոիկյան անոմալիստական ուղղութեան վրա: Ինչպես նշել ենք, Պերգամի դպրոցի ներկայացուցիչները իրենց համարում էին «քննադատներ»՝ ի տարբերութիւն այեքսանդրյան քերականների: Նրանց կարծիքով երկի մեկնութիւնն ու գնահատումը վերաբերում է «քննադատական արվեստին», իսկ «քերականական արվեստը» պարունակում է օժանդակ տեղեկութիւններ: Քերականութեան այսպիսի նեղ-լեզվական ըմբռնումն արտահայտվել է Դեմետրիոս Քլորոսի (մ. թ. սկզբում) և Արիստոնի սահմանումների մեջ, որոնք պահպանվել են լատին քերականների հաղորդմամբ:

Ալեքսանդրյան հետագա քերականներից նշանավոր էր Տրիֆոնոսը (մ. թ. սկզբներում), որ աշխատութիւններ է գրել խոս-

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 304:

քի մասերի և բարբառների մասին: Տրիֆոնոսը լուրջ քննության նյութ է դարձրել դերբայի՝ որպես խոսքի մասի բնույթի հարցը, որ հետագայում զբաղեցրել է և Ապոլլոնիոս Դիսկոլոսին: «Անալոգիայի ուսմունքը» նա կիրառել է բառակազմության նկատմամբ, ընդ որում բառակազմության մեջ հիմք է դրել «կրքի» ուսմունքին: Ըստ այդ ուսմունքի՝ բաղադրման (ածանցման) ժամանակ բառերը հնչյունական փոփոխություններ են «կրում» իմաստն՝ փոփոխության անալոգիայով<sup>1</sup>: Տրիֆոնոսը կազմել է դասական գրական լեզվի առաջին բառարանը՝ «Օնոմաստիկոնը», որին հետևել են համատիպ այլ բառարաններ:

Բառակազմության հարցերը նոր ձևով է դնում Ֆիլոքսենոսը, որի կարծիքով՝ մի բառը կազմվում է մի ուրիշից որոշ շարունով:

Ապոլլոնիոս Դիսկոլոսը և նրա «Շարահյուսության մասին» աշխատությունը.— Հելլենիստական շրջանի հետագա հույն քերականներից առանձնապես հայտնի են Ապոլլոնիոս Դիսկոլոսը (մ. թ. II դ.) և նրա որդի Հերոդիանոսը: Ապոլլոնիոս Դիսկոլոսի «Շարահյուսության մասին» («Περὶ συντάξεως ὀνόμων») աշխատությունը շարահյուսության առաջին անկախ և ամբողջական շարադրանքն էր: Հերոդիանոսը գրել է «Տառերի շարահյուսության մասին» («Περὶ συντάξεως ὀνόμων») աշխատությունը. որտեղ քննում է հատկապես առոգանական-կետադրական հարցեր: Շարահյուսության հարցերը քննելիս՝ Դիսկոլոսը դեռևս չի ելնում նախադասության և նախադասության անդամների գաղափարներից, այլ քննությունը տանում է ըստ խոսքի մասերի զուգորդումների և խոսքի մասերի հետ կապված քերականական կատեգորիաների գործածության: Ընդհանուր առմամբ անտիկ աշխարհում չկար նախադասության ուսմունք, այլ միայն բառազուգորդման ուսմունք. քննվում էին խոսքի մասերի զուգորդման կանոնները. խոսքի մասերն ու նախադասության անդամները չէին տարբերվում, և ուշադրություն չէր դարձվում զուգորդման՝ նախադասություն կազմելու, թե չկազմելու փաստի վրա<sup>2</sup>:

Ապոլլոնիոս Դիսկոլոսի աշխատության մեղ հասած մասը բաղկացած է 4 գրքից: Առաջին գրքում քննվում է հոդը, երկրորդում՝ դերանունը, երրորդում՝ բայը և չորրորդում՝ նախադասությունը: Բայի կապակցությամբ քննվում են եղանակը, սեռը և

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 28:

<sup>2</sup> Հմմտ. Н. Глинз, հիշ. աշխ., էջ 16:

բայի՝ թեք հոլովումների հետ ունեցած զուգորդումները: Մակբային հատկացված մասը մեզ հասել է միայն հատվածաբար, շաղկապի մասը չի հասել:

Խոսքի մասերի և քերականական առանձին կատեգորիաների բացահայտման հարցում Ապոլլոնիոս Դիսկոլոսն զգալիորեն տարբերվում է Դիոնիսիոս Թրակացուց: Խոսքի մասերի սահմանման հարցին նա, ի տարբերություն Թրակացու, մոտենում է գերազանցապես տրամաբանական չափանիշներով: Դիսկոլոսը նոր մոտեցում է հանդես բերում հոլովների բնութագրման հարցին: Եթե հունական նախորդ տրագիցիան հոլովների սահմանումների հիմքում դնում էր տվյալ հոլովով դրված բառերի՝ բայ-ստորոգյալի հետ ունեցած հարաբերությունը կամ կախումը, ապա Դիսկոլոսը հիմք է ընդունում հենց հոլովներն ինքնին, սրանց իմաստը: Ուղղականը և հայցականը նա հակադրում է իրար որպես գործողի և ներգործվողի հոլովներ, տրականը դիտում իբրև այն անձի կամ իրի հոլով, որ որևէ բան ձեռք է բերում բայի արտահայտած գործողության պրոցեսում, իսկ սեռականը, նրա կարծիքով, նշանակում է ունեցվածք և ծագում:

Որոշ հարցերում Դիսկոլոսը հենվում է ստոիկյան ուսմունքի և ըմբռնումների վրա: Այդ առանձնապես նկատվում է անվան և դերանվան իմաստային տարբերակման հարցում: Եթե Արիստոտելի ուշ շրջանի հետևորդները (Ռոմանոսը մոտ 500 թ. և նրա աշակերտ Իոաննես Ֆիլոպոնոսը) անվան մեջ տեսնում էին սուբստանցի արտահայտություն, ապա Դիսկոլոսը այն դիտում է որպես իրերի որակի (ποιότης) գրսևորում: Այս կապակցությամբ նա անունը, որպես իրերի որակական որոշակիություն արտահայտող խոսքի մաս, հակադրում է դերանվանը՝ նշելով, որ վերջինս արտահայտում է ոչ թե առարկայի որակական հատկանիշները, այլ մատնանշում է միայն «էությունը» (ὄνεια). Իր այս հատկության շնորհիվ, ըստ Դիսկոլոսի, դերանունը կարող է կիրառվել ամեն մի առարկայի նկատմամբ՝ անձնանունների նման դրանք անհատականացնելով. սա կատարվում է կոնկրետ առարկան «ցույց տալով» կամ «վերաբերելով» հայտնի առարկայի. առաջին և երկրորդ դեմքերը միշտ «ցույց են տալիս», երրորդ դեմքը և՛ «ցույց է տալիս», և՛ «վերաբերում»<sup>1</sup>: Բայի հարցում Դիսկոլոսը հենվում է Արիստոտելի այն դրույթի վրա, թե «խոսքի հնչյունները հոգեվի-

<sup>1</sup> Հմմտ. H. Glinz, հիշ. աշխ., էջ 311: Հմմտ. և Robins, հիշ. աշխ., էջ 43:

մոսսահոպկ մսոմ ուղ յդրսնթրսդրսդրսդրսդրս դսմմկ ն յրսհոմսս ոռ  
 (մկզդվՐ տնկք յոհ մսիրոմոռնն յրոնթրսվկզնհոհոհոհ) մրոսսոկոռո  
 դրոնթրսվկզնհոհոհոհ դվրոսոռոքվ յոմմոռոկոռոսոհոհոհոհոհոհոհոհոհոհ  
 -րսվկզնհոհոհոհոհ դվրոսոռոքվ վկզոռոք վժոսոպ Նս կթզ ‘չ Նդվ Նո Նս  
 մոյրոհն ոմդ մդրսնթրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրս  
 յ տոռոքվ դրոն յոսմո  
 մոսսահոպկ մսոմ «դրսնթրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրսդրս»  
 իսկզդնսր ճզր դրոնթրսդրսդրս  
 -մսն ժրոնթրսնդսո ուղ տմր վժոզսմնհո դրոնթրսվկզնհոհոհոհոհոհոհ  
 դվ  
 -ոսոռոքվ վկզսոմ ն յրսնդզզ ‘նզիՆզ վհոհնսնդո յրսդմզի ոզհոՆդվ  
 ‘մնսթզր դրոնոսսահոպն դրոնթրսդրսդրս վկզնմոհն յոհիոռոսնսնսոմո

Յզդրոյրսոո նմոհ

դոհոհոհ Նսմս դրոնթրսդրսդրս վկզոռոք վժոսոպ ղզ յրսդմզսի մկզդդոհիոմ  
 -զժ յոհիոհոհոհ ոռսրո յ մոսկզսմնսոհո ոս ‘յոռո կզՆզ ն ժսոզ

Վիսդզ դոհիոհոհ յրսն

-ոպսի վիթ սոմ հոդրոյրոթրոպրո յ իսկսն ‘սզո յրսմզմ ժսզզ ղզմոռո  
 -սսի նդոմո ‘մհոդոնզ ռս դժրզն յրսդնմսհ ‘ոռոք վժոսոպ դրոնմսնդ  
 -ժոզվ իսկոռոսոն ‘յ նվսոմսն վրոմ ովրոն ն ոմսն դրո մս ‘չ յրսնդ  
 մոսսահոպկ յոմմ նսնոթ նվրոմ իսկզմոյրոհն մրոմմզկ յ ղոհիՆզն  
 ղթ ‘ոհսո ոզհոհոնկրոզո յրսսոթզսոզսի դրո վզվլ մկզհոդոնդ մդ  
 -րսդո ղոհիոհոհոհոհ ոզհոհոհոհ մկզդվլ «հվկմսճոհոհոհ» ն յրսմոյրոհն  
 մոսսահոպկ լն ղհզր նվկզդոհվնհոհոհ մսիրոկն վնսն ՆվՆսմս յոհիոհ  
 -րս՝ Վ յոռոք վժոսոպ հմսն նվսոռոքվ մոհոհնոն վկս սոմ ‘մսզհ  
 -ոռոզս ոհոհ ն յրսսոհոհոհոհոհ ոռ հոդրոյրոթրոպրո յոմմ նսնհոհոհոհ  
 ղզմսոռոսնսոմոն մզոռոք վժոսոպ Նո իսկզմոյրոհն մոհոհնոն

Յզվոռոք վրոմմզն

յ վնսն ‘վրոհոհնոն մկզդժվճոհոհ ղոհոհոհոհ ոմդ յոռո կզՆզ ն ժսոզո  
 մոյրոհն ռսոսո մոհոհոհոհ յոհիոհոհոհոհ վկզիո դվոռոք վկզդրսս  
 -սմմրմ ղոհոհոհոհ լոմմզմոմզի վկզոռոք վժոսոպ վոհոհոհոհ

Յզոյրոհոհոհ հոսոսն դրոնթրսմզմ

-ոմոհոհոհ վկզոհոհոհ ռս վկզդոհոհոհոհ վրոմ յոհիոհոհոհ յոհոհոհ  
 մկզդդոհոհոհոհ ոռսրո լն ոզհոհոհ ‘մոսսահոպկ ոզհոհոհ մս ‘կզՆզ  
 ն ժսոզո դրոհոհոհ ղվոռոք վկզդդրսնթրսմզմոս ոզվրոհոհոհ վկզ  
 -ոմ կոհոհ յ մկզժմվն դրոնթրսդրսդրսդրսդրս դրոնիվսոո վկզդոհոհոհ  
 -ոթ լոզսոհոհոհոհ յրսդվլ ն ղոհիոհոհ մոսսահոպկ մկզդդրսնթրսմ  
 -ոհիոհոհ ղսկոհոհոհոհոհ ռսկիոհոհոհ կոհոհոհոհ լոհնդոս (ՏՍԿ  
 -ճմդքոհոհոհ ‘վոհիոհոհոհ) վկզոհոհոհոհ իսկզդդոհոհ վոհոհոհ  
 սոմ նսոհոհոհոհ մկզդոհոհոհ ոզհոհոհ ն յրսոպն (մկզդզ ղոհի  
 -հոհոհոհ-մսիրոպն Նս յոռոք) մրոմ ոռ ղզ «մկզդոհիոհոհ վկզդոհոհ

կիրառում է շարահնչուական կապակցութեան տարբեր տիպերի՝ բուն համաձայնութեան և առդրութեան համար: Խոսքի մասերն ունեն քերականական տարբեր կատեգորիաներ, որոնք երբեմն համընկնում են: Այս համընկնող կատեգորիաների համապատասխանութիւնը (հոգնակի թվի՝ հոգնակի թվի հետ, սեռական հոլովի՝ սեռական հոլովի հետ և այլն) կլինի համաձայնութիւն, տնհամապատասխանութիւնը՝ անհամաձայնութիւն: Քանի որ մակբայը, շաղկապը չունեն բայի հետ համընկնող քերականական կատեգորիաներ, ուստի և նրանք կարող են նույն ձևով դրվել բայի զանազան փոփոխվող ձևերի հետ. այդպիսի կապակցութիւնը (իմա՝ առդրութիւնը) նույնպես կլինի համաձայնութիւն, եթե, իհարկե, մակբայը կամ շաղկապը իրենց արտահայտած իմաստով իրոք կարող են կապակցվել բայի տվյալ ժամանակային կամ եղանակային ձևի հետ:

#### գ. «Քերականական արվեստը» հից Հոռմում

Հոռմայեցիների քերականական առաջին տեղեկութիւնները.— Ճարտասանութեան և ոճի հարցերի քննութեան կապակցութեամբ մենք նշեցինք, որ II դարում (մ. թ. ա.) հոռմայեցիները ծանոթացան Հունաստանում տարվող լեզվական վեճերի (հատկապես անալոգիստների և անոմալիստների վեճերի) և քերականական ու այլ կարգի նվաճումների հետ: Հետագայում լեզվական գիտելիքների բնագավառն ավելի է լայնանում. հոռմայեցիները գրում են ինքնուրույն աշխատութիւններ<sup>1</sup>, կիրառում հունական լեզվաբանութեան նվաճումներն իրենց լեզվի նկատմամբ, ինքնուրույն գիտողութիւններ անում և նույնիսկ քննադատում հունական լեզվական ուսմունքի տարբեր կողմերը:

Հոռմեական վաղ քերականներից հայտնի են Հելիոսը, Էլիոս Ստիլոն, Մարկոս Տերենցիոս Վառոնը (116—27 թթ. մ. թ. ա.) և ուրիշները: Սկզբնական շատ քերականներից, ինչպես, օրինակ, Հելիոսից, Էլիոս Ստիլոյից, մեզ կամ ոչինչ չի մնացել, կամ միայն առանձին հատվածներ են հասել: Այնինչ, սրանցից ոմանք, առանձնապես Էլիոս Ստիլոն՝ Դիոնիսիոս Թրակացու աշակերտը և Վառոնի ուսուցիչը, մեծ համբավ են վայելել:

<sup>1</sup> Լատինական քերականների աշխատութիւնները հրատարակված են H. Keil-ի հոգով «Corpus grammaticorum latinorum» բնագնանուր խորագիրը կրող շարքում, 1856—1880 թթ.:

Վառոն.—Մարկոս Տերենցիոս Վառոնը իր ժամանակի ամենազարգացած անձնավորութիւններից մեկն էր: Նրա քերականական աշխատութիւններից պահպանվել է միայն «De lingua latina»-ն («Լատիներենի մասին») և այն էլ փոքր մասով (25 գրքից միայն 5—10-րդ գրքերը): Վառոնի այս աշխատութեան 1-ին գիրքը կազմում էր «Ներածութիւնը», 2—7-րդ գրքերում խոսվում էր «րառերի սահմանման» և ստուգաբանութեան մասին, 8—13-րդ գրքերում՝ «Տոլովման» (այն է՝ բառակազմութեան ու բառափոխութեան) մասին՝ անալոգիայի և անոմալիայի հարցի հետ կապված, 14—25-րդ գրքերում՝ շարահյուսութեան մասին:

Վառոնի աշխատութիւնը կարևոր է ոչ միայն որպէս լատիներենի առաջին նկարագրութիւններից մեկը, այլև որպէս մի աշխատութիւն, որից մենք տեղեկանում ենք անալոգիստների և անոմալիստների վեճի մասին: Վառոնի կարծիքով՝ բառակազմութեան մեջ իշխում է անոմալիան, բառափոխութեան մեջ՝ անալոգիան: Վառոնը այս կամ այն հարցը քննելիս դիմում է լատիներենին՝ այդ ձևով գաղափար տալով վերջինիս հոլովման, խոնարհման, բառակազմութեան և այլ հարցերի մասին: Նրա ստուգաբանական մեթոդը հենվում է ստոիկների վրա: Վառոնի ծառայութիւնների մեջ հատուկ նշման արժանի են լատիներենի կառուցվածքի ուսումնասիրութեան ինքնուրույն սկզբունքներ մշակելու ձգտումը և խոսքի մասերի ձևաբանական դասակարգման սկզբունքի առաջըաշումը:

Իեմիոս Պալեմոնը և ալեքսանդրյան ֆերականական սիստեմի ներմուծումը.—Ընդհանուր առմամբ մինչև Պալեմոնը (մ. թ. I դ.) Հռոմում իշխում էր ստոիկյան քերականական սիստեմը՝ սկսած Կրատես Մալոսացու ժամանակներից: Իհարկե, այդ սիստեմը նույնութեամբ չէր ընդունվում. այսպես՝ Վառոնը շատ հարցերում չի համաձայնվում ստոիկյան լեզվական ուսմունքի դանազան կողմերի հետ: Իեմիոս Պալեմոնը, որի «Քերականական արվեստը» («Ars grammatica») մեզ չի հասել, Հռոմ է ներմուծում ալեքսանդրյան քերականական սիստեմը: Նրա դիրքը թրակացու քերականութեան սկզբունքների կիրառումն էր լատիներենի նկատմամբ:

Լատիներենի հետագա ֆերականները. Դոնատոս և Պրիսցիանոս.—Լատիներենի վրա կատարված գիտողութիւնների ամփոփումը ավարտվում է մ. թ. III դ.՝ հիմք տալով IV դ. երևան եկած Խարիսիոսի և Դոնատոսի աշխատութիւններին, որոնք



միավորում և ամբողջացնում է Դիոմեդեսը: Վերջապես, V դ. վերջերին հանդես է գալիս Պրիսցիանոսի ընդարձակ քերականական աշխատությունը, որի վերջին, ամենից ավելի հայտնի մասը ներկայացնում է Դիսկոլոսի շարահյուսական սկզբունքների կիրառումը լատիներենի նկատմամբ: V դ. քերականներից նշելի է նաև Մարիոս Վիկտորինոսը: Խարիսիոսի համար հիմք ծառայած քերականներից է Կոմինիանոսը (մոտ մ. թ. 300 թթ.):

Լատինական այս ուշ շրջանի քերականներից առանձնապես հայտնի են հիշված Դոնատոսն ու Պրիսցիանոսը, որոնք հետագայում լատիներենի ուսուցման հիմնական աղբյուրներն էին և մեծ ազդեցություն են գործել նոր ժամանակների քերականական աշխատությունների վրա:

Դոնատոսի աշխատությունը ունի կոմպիլյատիվ-ամփոփիչ բնույթ և կոչվում է «Ars grammatica»: Երկը նախատեսված է որպես քերականության նախնական ուսուցման դասագիրք և բաղկացած է 2 մասից, որոնցից առաջինը նվիրված է քերականության (լայն իմաստով) հիմնական հարցերի (տառերի, վանկերի, տաղաչափական գիտելիքների, խոսքի մասերի) նախնական ուսուցմանը, երկրորդը՝ քերականական գիտելիքների խորացմանը՝ շարահյուսական սխալների նշմամբ և ոճական վարժության նյութերով: Այս աշխատությունը միջին դարերում այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ «դոնատոս» ասելով ընդհանրապես քերական էին հասկանում: Այն գործածվում էր ընդարձակ-ամբողջական խմբագրությամբ («Ars maior») և ավելի փոքր խմբագրությամբ (միայն 8 խոսքի մասերի ուսմունքը—«Ars minor»):

Պրիսցիանոսի քերականությունը, որ կրում է «Քերականական գործերի հիմունքները» («Institutiones rerum grammaticarum») վերնագիրը, խիստ ընդարձակ է (18 գիրք) և ներկայացնում է լատինական քերականական գիտելիքների ամփոփումը. այն յուրատեսակ կամուրջ է հին և միջին դարերի քերականական ուսմունքների միջև: Պրիսցիանոսի աշխատության 1—16-րդ գրքերը, որոնք միջին դարերում հայտնի էին «Մեծ Պրիսցիանոս» («Priscianus maior») անունով, պարունակում էին տառերի և խոսքի մասերի ուսմունքը (հնչյունաբանությունը և ձևաբանությունը). 17—18-րդ գրքերը հայտնի էին որպես «Փոքր Պրիսցիանոս» («Priscianus minor») և նվիրված էին շարահյուսությանը (syntaxis կամ constructio):

լատինական ֆերականության առանձնահատկությունները.— Լատինական քերականությունը և սկզբնապես խիստ լայն ընդգրկում ունենր: Ինչպես հաղորդում է Դիոմեդեսը, Վառոնը քերականությանը 4 մաս էր հատկացնում՝ ընթերցանություն, բացատրություն, ուղղում և գնահատում: Սակայն հետագայում քերականական աշխատությունների շարադրանքի հիմնական առարկան «տեխնիկական», այն է՝ բուն լեզվական մասն էր, թեև այսպես կոչված էքսեգետիկական մասը դեռ երկար ժամանակ պահպանվում էր և դուրս ընկավ միայն միջին դարերում: Լատինական քերականները շարադրում էին «տառերի» և խոսքի մասերի ուսմունքը՝ սրան ստոիկների օրինակով ավելացնելով ոճի արժանիքների և թերությունների ուսմունքը: Լավելի ուշ ավելացվում են նաև ուղղադրության և տաղաչափության բաժինները:

Լատիներենի քերականները խոսքի մասերի և քերականական զանազան կատեգորիաների հունական ուսմունքը լատիներենի նկատմամբ կիրառելիս՝ մասամբ փոփոխության են ենթարկում այն, մասամբ շարունակում կուրորեն ընդունել լատիներենին խորթ կատեգորիաներ: Աստիճանաբար միայն՝ լատիներենի փաստերի ճնշումը հանգեցնում է այս արհեստական եկամուտ տարրերի արտամղմանը:

Ստոիկյան քերականության տիրապետության շրջանում հոմեական քերականները շարունակում են պահպանել ստոիկյան բառակի բաժանումը, թեև այն ենթարկում են որոշ փոփոխությունների: Վառոնը տալիս է խոսքի մասերի տարբերակման երկու սկզբունք՝ իմաստային և ձևաբանական: Իմաստային սկզբունքով նա տարբերում է անուններ, բայեր, շաղկապներ և «նեցուկներ» վերջին անվան տակ է նշվում, օրինակ, մակբայը, որը դիտվում է որպես բայի «նեցուկ»: Երկրորդ սկզբունքի կիրառման հարցում Վառոնը թերևս հենվում է ալեքսանդրյան քերական Դիոնի (I դ. մ. թ. ա.) վրա, որը հիմնականում պահպանելով Արիստոտելի և Թեոդիլտեսի դասակարգումը, զրա հիմքում դրել էր «հոլովականության» հատկանիշը: Վառոնը նախ տարբերում է փոփոխվող և անփոփոխ բառեր, ապա խոսքի մասերը խմբավորելիս նկատի է առնում բառերի փոփոխականությունն ըստ հոլովների և ժամանակների. նա տարբերում է 1) անուններ՝ հոլովներ ունեցող բառեր, 2) բայեր՝ ժամանակներ ունեցող բառեր, 3) դերբայներ՝ և՛ հոլով-

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 300:

ներ, և՛ ժամանակներ ունեցող բառեր և 4) մակբայներ ու շաղկապներ՝ ո՛չ հոլովներ, ո՛չ էլ ժամանակներ ունեցող բառեր: Անուններն էլ նա բաժանում է 4 խմբի, որոնք համապատասխանում են հարցական դերանուններին, հասարակ անուններին, հատուկ անուններին և ցուցական դերանուններին:

Խոսքի մասերի ալեքսանդրյան ուսմունքը լատիներենի նկատմամբ կիրառելիս՝ հոմեակական քերականները 2 կարևոր փոփոխություն են կատարում. խոսքի մասերի թվից նրանք հանում են հոգը և որպես խոսքի մաս առանձնացնում միջարկությունը (interiectio)<sup>1</sup>: Հոգի հարցում զգալի դեր խաղացին մի կողմից՝ լատիներենի առանձնահատկությունները, մյուս կողմից՝ ուշ շրջանի ստոիկյան քերականության ազդեցությունը: Լատիներենը, ինչպես հայտնի է, դուրկ էր այսպես կոչված «նախադաս» հոգերից, բայց ուներ «ետադաս» հոգ, այն է՝ հարաբերական դերանուն, ընդ որում որպես այդպիսին հանդես էր գալիս հարցականը: Այս պատճառով էլ հարաբերական դերանունը դադարեց «նախադաս» հոգի հետ կապվելուց և մտցվեց դերանունների շարքը: Ուշ շրջանի ստոիկյան քերականները շէին տարբերում դերանունները և հոգերը: Հնում ստոիկները դրանք կոչում էին «հոգեր»՝ այդ անվան տակ դնելով ոչ միայն բուն հոգերը, այլև ցուցական, հարաբերական, հարցական, անորոշ դերանունները, իսկ ավելի ուշ շրջանում դրանք կոչում էին մերթ հոգեր, մերթ դերանուններ և տարբերում «որոշյալ» և «անորոշ» տեսակներ. որոշյալների մեջ դրվում էին անմիջական մատնանշում պարունակողները (անձնական, ցուցական և ստացական դերանունները), անորոշների մեջ՝ անմիջական մատնանշում չպարունակողները (հարցականները, հարաբերականները և բուն հոգերը): Լատիներենի քերականները, ելնելով իրենց լեզվից, հոգը հանեցին և մնացած բոլոր տեսակների համար որդեգրեցին «դերանուն» անվանումը: Նշելի է, որ և՛ հույն, և՛ լատին քերականները դերանունները որպես խոսքի մաս առանձնացնելիս նկատի էին ունենում ոչ միայն դրանց իմաստային ընդհանրությունը, այլև հոլովման առանձնահատկությունները: Ալեքսանդրյան քերականների

<sup>1</sup> Մրջարկության առանձնացումը որպես խոսքի մաս վերագրվում է Ռեմիոս Պալեմոնին: Պրիսցիանոսը, ամփոփելով հոմեակական քերականության նվաճումները, թվում է 8 խոսքի մաս, ընդ որում հոգի փոքարեն տալիս է միջարկությունը. այն սահմանվում է որպես շեղուկ վիճակը նշանակող խոսքի մաս:

կարծիքով՝ դերանունների հոլովման մեջ անալոգիան մթագնված է: Պետք է նկատի առնել նաև այն, որ «դերանուն» անունը սկզբնապես տրվում էր միայն անձնականներին, ապա նաև ցուցականներին, որոնք համարվում էին 3-րդ դեմքի դերանուններ. հետագայում անվանումը պահպանվեց, բայց նրա տակ դրվեցին նաև այլ դերանուններ:

Լատիներենի քերականները փորձում են շաղկապների իմաստային-տրամաբանական բաժանմանը զուգընթաց մտցնել դրանց դասակարգման մի այլ, այն է՝ շարահյուսական զուգորդելիության (կապակցելիության) սկզբունքը. շաղկապները խմբավորվում են ըստ այն բանի, թե ո՞ր բայեղանակների հետ կարող են գործածվել:

Լատինական քերականության մեջ մտցվում է 6-րդ հոլովը՝ ablativus-ը<sup>1</sup>, որը Վառոնը դեռևս կոչում է «վեցերորդ» կամ «լատինական» հոլով: Դեռ ավելին, այս հոլովը լատինական քերականների մոտ հիմք է դառնում հոլովման տիպերի առանձնացման համար: Ինչպես հայտնի է, հունարենում և լատիներենում ուղղականի հիմքը մթագնված է և չի կարող հիմք ծառայել հոլովումների խմբավորման համար: Այդ պատճառով էլ լատիներենի քերականներն ստիպված էին որոնել այնպիսի մի հոլով, որի մեջ հիմքը ավելի անխաթար է: Վառոնը հանձնարարում է հենց ablativus-ը: Հետագայում որպես այդպիսի հոլով հանձնարարվում է սեռականը, որը մինչև այժմ էլ հիմք է ծառայում հոլովման տիպերի խմբավորման համար: Ճարտասան Քվինտիլիանոսը, հիմք ընդունելով հոլովական իմաստը և նշելով, որ հունական տրականը և լատինական բացառականը (ablativus) արտահայտում են նաև գործիականի իմաստ, հունական հոլովների թիվը հասցրնում էր վեցի, լատինականինը՝ յոթի: Սակայն Պրիսցիանոսը գործիական (instrumentalis) հոլովի ավելացումը համարում է «ոչ անհրաժեշտ» և նշում, որ այն ձևականորեն չի տարբերվում:

Լատինական քերականության մեջ սկզբնապես մեխանիկորեն յուրացվում է հունարենի բայեղանակների քանակը, թեև, ի տարբերություն հունարենի, լատիներենում ստորադասականն ու ըղձականը ձևաբանորեն չեն տարբերակված: Սակայն Ռեմիոս Պայեմոնն արդեն ստիպված էր նշել, որ ըղձականի ձևերը լատիներենում նաև ստորադասականի ձևեր են: Այս եղանակների տար-

<sup>1</sup> Այս հոլովի ներմուծման պատիվը վերագրվում է Հուլիոս Կեսարին:

բերակման համար լատինական քերականության մեջ նկատի էին առնում բայական տվյալ ձևերին ուղեկցող շաղկապներն ու մակբայները. ստորադասական շաղկապների առկայության դեպքում եղանակը համարվում էր ստորադասական, ըղծական բառերի առկայության դեպքում՝ ըղծական: Ստորադասականի համար գործածվող *subiunctivus* և *coniunctivus* տերմինների փոխհարաբերությունը պարզ չէ: Նկատի առնելով լատիներենի որոշ առանձնահատկությունները, լատիներենի քերականները առանձնացնում են նաև հոնարենին անհայտ «եղանակները». *gerundium*-ը և *supinum*-ը համարում էին «դերբայական», իսկ միադեմ (միայն 3 ըդ դեմք ունեցող) բայերը՝ «անդեմ» եղանակներ:

Բայական ժամանակների առանձնացման հարցում սկզբնապես իշխում էր ստոիկների հայացքը, որով ժամանակի գաղափարը կապվում էր կերպի («տեականության» և «կատարելության») գաղափարի հետ: Ելնելով ժամանակի ատոմիստական ըմբռնումից, ստոիկները ներկան դիտում էին որպես ժամանակի որոշ հատված, որ սահմանափակված է սկզբից և վերջից անցյալով և ապառնիով: Նրանք, ինչպես տեսանք, ելնելով կերպի և ժամանակի հարաբերակցությունից, տարբերում էին «տեական» ներկա ու անցյալ (անցյալ անկատար) և «կատարյալ» ներկա (վաղակատար) ու անցյալ (անցյալ վաղակատար). փաստորեն սրանցից որպես երրորդ տիպ առանձնացվում էր աորիստը («անսահման»), որի հետ կապվում էր և ապառնին՝ որպես կերպից զուրկ ժամանակ: Ըստ ստոիկների՝ աորիստը նշում է անցյալ կատարյալ գործողություն՝ առանց հարակատարի և անցյալ հարակատարի նման դրանք ներկայի և անցյալի որևէ մոմենտի հետ առնչելու: Ելնելով ստոիկյան այս տեսությունից՝ Վառոնը տարբերում է անկատար և կատարյալ կերպեր՝ յուրաքանչյուրի համար առանձնացնելով ներկա, անցյալ և ապառնի.

Անկատար կերպ	Կատարյալ կերպ
Ներկա <i>praesens</i>	<i>perfectum</i>
Անցյալ <i>imperfectum</i>	<i>plusquamperfectum</i>
Ապառնի <i>futurum I</i>	<i>futurnm II</i>

Լատինական քերականական հետագա տրադիցիան ժամանակների հարցում հենվում էր ալեքսանդրյան քերականության վրա: Ալեքսանդրյան քերականները, ի տարբերություն ստոիկների, ներկան դիտում էին ոչ թե որպես ժամանակի հատված, այլ

մշտահոս կետ անցյալի և ներկայի միջև: Ներկան դիտվում էր որպես մասամբ անցյալին և մասամբ ապառնուն պատկանող անընդհատ հոսք: Սրա հիման վրա կերպի գաղափարը մղվեց մի կողմ, և վաղակատարը (պերֆեկտը) անցավ անցյալ ժամանակների շարքը: Լատինական քերականները, հենվելով բայի ժամանակների ալեքսանդրյան ուսմունքի վրա, նշում էին, որ լատինական perfectum-ը զուգորդում է հունական վաղակատարը (պերֆեկտը) և ատրիստը<sup>1</sup>: Ջ-րդ ապառնին (luturum II exactum) հատկացվում էր ստորագասականին:

Անտիկ ֆերականական տեսության ֆենադատության փորձերը. Աեխտոս Էմպիրիկոս.— Անտիկ քերականական տեսության որոշ կողմեր խիստ քննադատության են ենթարկվում հենց անտիկ աշխարհում: Առանձնապես պետք է նշել II դ. վերջերին ապրող սկեպտիկ փիլիսոփա Սեքստոս Էմպիրիկոսին, որ ի մի է հավաքել այս քննադատության տարբեր կողմերը: Նյութտակ ունենալով ապացույցել զանազան գիտությունների անհավաստիությունը և ցույց տալ, որ պրակտիկ գործունեությունը հնարավոր է նաև առանց գիտությունների տված գիտելիքների՝ էմպիրիկոսը քննադատության է ենթարկում, ի թիվս այլ գիտությունների, նաև լեզվաբանական տրադիցիոն ուսմունքը: Այդ քննադատությունը զերծ չէ ուսանելի կողմերից: Էմպիրիկոսը նշում է, որ առկա փերականական ուսմունքը ինքնին անհրաժեշտ չէ, որովհետև լեզվի չափանիշը գործածությունն է, իսկ գործածությունը կարիք չունի քերականական արվեստի: Առանձնապես տեղին է էմպիրիկոսի քննադատությունը «տառերի» ուսմունքի դեմ. այս հարցում բռնելով անտիկ քերականության թույլ տեղից՝ տառը և հնչյունը շփոթելուց, էմպիրիկոսը անմտություն է համարում կրկնակ «տառեր» (տարրեր) ընդունելը. «տարրը» չի կարող «տարրերից» բաղկացած լինել: Այս նույն ձևով էլ նա քննադատում է «երկամանակ տառեր» ընդունելը՝ նշելով, որ այս դեպքում նկատի է առնվել տառի դրավոր նշանը, իսկ այն չի կարող կարճ կամ երկար լինել: Էմպիրիկոսը, ըստ իր վկայության, հենվելով «որոշ փիլիսոփաների» վրա, նշում է նաև անտիկ քերականության մի այլ թերությունը՝ պատմական փոփոխությունները հաշվի չառնելը, տրադիցիային կուրորեն հետևելը. այսպես, ըստ նրա՝ որոշ երկ-

<sup>1</sup> Հմմտ. Античные теории языка и стиля, 1936, էջ 309—310:

բարբառներ ունեն մենաբարբառային հնչում, մինչդեռ քերականները դրանք հրամցնում են որպես երկբարբառներ՝ ըստ գրութչան<sup>1</sup>։

#### 4. ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Հունական բարբառները և հույների բարբառագիտական առաջին ըմբռնումները.— Ինչպես հայտնի է, հին հունարենը բարբառային զգալի տարբերակումներ ուներ. հունական գրական տեքստերը գրված էին տարբեր բարբառներով։ Այս հանգամանքը դեռևս V դ. (մ. թ. ա.) հանգեցնում է բարբառագիտական կարևոր դիտողությունների, բարբառային անհասկանալի կամ քիչ հասկանալի բառերի բացատրություն։

Լեզվի տարատեսակները նշանակող διὰλεκτος և γλωσσα բառերը սկզբնապես գործածվում էին որպես հոմանիշներ՝ ինչպես «լեզու» և «բարբառ», այնպես էլ «բառ» իմաստով (հմմտ. հայ. «խոսք» բառը, որ խոսակցական լեզվում գործածվում է նաև «բառ» իմաստով)։

Հետագայում իմաստի մասնագիտացումը հանգեցնում է այն բանին, որ առաջինը գործածվում է «լեզու» և «բարբառ», երկրորդը՝ «բառ» իմաստով, ընդ որում διὰλεκτος-ը նշանակում էր. կ' բարբառները, կ' ընդհանուր լեզուն (մ. թ. ա. III դ. գոյացած լեզուն կամ εν γένει γλωσσα-ն էր «բարբառներ բարբառ»), իսկ γλωσσα-ն՝ կ' ընդհանուր, կ' բարբառային բառերը։

Բարբառագիտական ուսումնասիրություններ.— Բուն բարբառագիտական ուսումնասիրությունները կապված են հելլենիզմի կյոլխայի հետ, երբ մի կողմից գործում է ընդհանուր լեզուն, մյուս կողմից լայն թափ է ստանում տեքստերի բանասիրական ուսումնասիրությունը։ Ուսումնասիրության առարկա են դառնում ոչ թե կենդանի բարբառները, այլ այդ շրջանի ընդհանուր լեզվից գրական տեքստերի ունեցած բարբառային տարբերությունները։ Հին հույները, բացի «ընդհանուր բարբառից», տարբերում էին բարբառների 4 խումբ, որոնցից յուրաքանչյուրի մեջ խոսվածքային տարբերություններ էին նշում. այդ բարբառներն են իոնիականը, ատտիկյանը, դորիականը և էոլիականը։ Գրական տեքստերը խմբավորվում էին ըստ այս կամ այն բարբառին սլատկանելու։ Բարբառների միջև հաստատվում էին հնչյունական, երբեմն նաև

<sup>1</sup> Իբրք, եմպիրիկոսի ժամանակ հունական երկբարբառներն զգալի չափով պարզվել էին։

ձևաբանական տարբերություններ, բայց այդ բոլոր տարբերությունները մեկնարանվում էին որպես «տառերի» տարբերություններ: Տարբեր բարրառների ծագումը կասկածում էր դիցաբանական անձերի հետ (Իոնոս, էոլոս և այլն):

Մեր թ. ա. I դ. և մեր թ. սկզբում որոշ ֆերականներ (Հիպսիկատես, Տիրանիոն, Ֆիլոֆեսնոս, Դիդիմոս), համեմատելով հունարենը լատիներենի հետ, նույնիսկ այն կարծիքն էին հայտնում, որ լատիներենը մոտ է էոլիական բարբառին և որ, հետևաբար, հոմալեցիներն էոլիական ծագում ունեն. լատիներենը համարվում էր հունարենի դուատրը:

Հին հունական բարբառների մասին գրված աշխատությունները մեզ չեն հասել ամբողջական ձևով: Որոշ գաղափար տալիս են ուշ շրջանի բյուզանդական կոմպիլյացիաները և քաղվածքները:



# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՁԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>

## 1. ՀԱՅԵՐԵՆ

- Աղաջան Է., Հայ լեզվաբանության պատմություն, I, Երևան, 1958, էջ 23—29:
- Լոսկոսկոս Զ., Գրի գարգացումը, Երևան, 1953:
- Ջահնուկյան Ք., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1955, էջ 9—31:

## 2. ՌՈՒՍԵՐԵՆ

- Античные теории языка и стиля, под общей редакцией О. М. Фрейденберга, М.—Л., 1936.
- Баранников А. П., Элементы сравнительно-исторического метода в индологической лингвистической традиции, ВЯ, 1952, № 2.
- Беццоло К., Ассирия и Вавилония, СПб, 1904.
- БСЭ, статьи «Китай — языкознание», «Индийские языки», «Языкознание».
- Виндельбанд, История древней философии, СПб, 1908.
- Всемирная история, под редакцией Ю. П. Францева и др., I II, М., 1955—56.
- Добиащ А., Синтаксис Апполония Дискола, Киев, 1882.
- Кобов И. У., Учение античных грамматиков о падежах, автореферат канд. диссерт., Львов, 1955.
- Пизани В., Этимология (история-проблемы-метод), М., 1956.
- Погодин А. Л., Язык как творчество, Харьков, 1913 (гл. XII).
- Радхакришнан С., Индийская философия, I—II, М., 1956—
- Розенштраух Г. И., Грамматическая система Дионисия Фракийского, автореферат канд. диссерт., Львов, 1953.
- Тронский И. М., Основы стоической грамматики (Сб. статей в честь акад. В. Ф. Шишмарева), 1957, էջ 299—310:
- Тронский И. М., Учение о частях речи у Аристотеля, УЗ.ПГУ 1941.
- Тураев Б. А., История древнего Востока, XI., 1936.

<sup>1</sup> Այստեղ և այլուր զրականության ցանկում չեն բերվում ներածություն մեջ հիշատակված ընդհանուր բնույթի ուսական և օտար աշխատությունները: Կրկնություններից խուսափելու համար՝ ուսական և օտար այն աշխատությունները, որոնք վերաբերում են երկու կամ ավելի ենթաշրջանների, հիշատակվում են սովորաբար մեկ անգամ:

- Фрезер, Фольклор в Ветхом завете, пер. с англ. Д. Вольпина, М., 1931.
- Чаттерджи С. и Датта Д., Введение в индийскую философию, М., 1955.
- Чжоу Дин-И, Ян Сюн и его книга Фаньянь, „Дружба“, 27 янв. 1957 г.
- Ян Хин-Шун, Из истории китайской философии, М., 1956.

### 3. OSUP ICBOTBEPH4.

- Abramczyk J., Platos Dialog Kratylos und das Problem der Sprachphilosophie, Breslau, 1928.
- Allen W. S., Ancient Ideas on the Origin and Development of Language, London, 1948.
- Allen W. S., Phonetics in Ancient India, London, 1953.
- Amann H., Zu Platons Dialog „Kratylos“. „Gymnasium Perpetuum“. Festgabe z. 200-Jahrfeier des Schönborn-Gymnasium, Bruchsal, 1955.
- Benfey Th., Über die Aufgabe des Platonischen Dialogs Kratylos, AKGWG, XII, 1866.
- Barwick K., Remmius Palaemin und die römische Ars Grammatik, Leipzig, 1922.
- Belvarkar S. K., Account of the Different Existing Systems of Sanskrit Grammar, Poona, 1915.
- Borst A., Der Turmbau von Babel. Geschichte der Meinungen über Ursprung und Vielheit der Sprachen und Völker, I—III, 1957 & 52.
- Burnell A. C., The Aindra School of Sanskrit Grammarians, 1875.
- Chakwarti P., The Linguistic Speculations of Hindus, Calcutta, 1933.
- Chakwarti P., The Philosophy of Sanskrit Grammar, Calcutta, 1930.
- Collart J., Varron grammairien latin, Paris, 1954.
- Olson F. H., The Analogist and Anomalist Controversy, CQ, 13, 1919.
- Murtius G., Grundzüge der griechischen Etymologie, V Ausg., Leipzig, 1879.
- Dahlmann H., Varro und hellenistische Sprachtheorie, Berlin, 1932.
- Deuschle J., Die platonische Sprachphilosophie, Marburg, 1952.
- Draganu N., Istoria syntaxei. Lucrare postuma. București, 1952.
- Egger E., Apollonius Discole, essai sur l'histoire des theories grammaticales dans l'antiquité, Paris, 1854.
- Faddegon B., Studies on Panini's Grammar, Amsterdam, 1936.
- Franke O., Geschichte und Kritik der einheimischen Pali-Grammatik und Lexicographie, Strassburg, 1902.
- Frazer J. G., Folklore and the Old Testament, London, 1919.
- Golebiewski K., Le langage d'après St Augustin, BSPL, III, 1931, s. 3—37.
- Gomperz Th., Griechische Denker, Leipzig, 1896.
- Gotz G., Zur Würdigung der grammatischen Arbeiten Varros, AKSGW, XXVIII, 3, 1909.

- Grammatici latini, herausgegeben von H. Keil, 1856—1880.
- Haag E., Platons Kratylos, Stuttgart, 1933.
- Henry V., De sermoris humani origine et natura M. Terentius Varronis quid senserit, Insulis (Lille), 1883.
- Janet P. et Sèailles G., Histoire de la philosophie, les problèmes et les écoles, VII ed., Paris (*αὐθιγὰς*), 1923—232.
- Karlgren P., Philology and Ancient China, Oslo, 1926.
- Langdon S., Assyrian Grammatical Texts, RA. XIII—XIV, 1916—17.
- Lange L., Das System der Syntax des Apollonios Dyskolos, Göttingen, 1852.
- Leky M., Plato als Sprachphilosoph, Paderborn, 1919.
- Lersch L., Sprachphilosophie der Alten, dargestellt an dem Streit über Analogie und Anomalie der Sprache, I—III, Bonn, 1838—41.
- Lutoslawski W., The Origin and Growth of Plato's Logic, London, 1907.
- Mette H. J., Paraeresis. Untersuchungen zur Sprachtheorie des Krates von Pergamon, Halle (Saale), 1952.
- Müller Fr., De veterum imprimis Romanorum studiis etymologicis. I, Traiecti ad Rhenum, 1910.
- Murray G., The Beginnings of Grammar, „Greek Studies“, Chap. 9 Oxford, 1946.
- Pohlenz M., Die Begründung der abendländischen Sprachlehre durch die Stoa, NGAW, 1. 3. 6, s. 151—198, Göttingen, 1938.
- Prantl G., Geschichte der Logik im Abendlande, I—II, Leipzig, 1927.
- Reizenstein R., Etymologica, REA. Pauly-Wissowa, VI, I, 1807—1817.
- Reizenstein R., Geschichte der griechischen Etymologica, Leipzig, 1897.
- Robins R. H., Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe with Particular Reference to Modern Linguistic Doctrine, London 1951.
- Slöid H., Papers on Panini and Indian Grammar in General, 1926. Lunds Univers., Arskrift, NF, 21, № 8.
- Steinthal H., Geschichte der Sprachwissenschaft bei den Griechen und Römern, Berlin, 1863, II Ausg., 1890—91.
- Strauss O., Altindische Spekulationen über die Sprache und ihr Problem, ZMG, LXXXI, s. 99—151.
- Thierfelder A., Beiträge zur Kritik und Erklärung des Apollonius Dyscolus, Leipzig, 1935.
- Wackernagel J., Altindische Grammatik, I, 1896.
- Warma S., Critical Studies in the Phonetic Observations of Indian Grammarians.
- Weber O., Die Literatur der Babylonier und Assyrer, Leipzig, 1907.
- Wilamowitz-Möllendorff U., Von Platon, Berlin, 1919.
- Willmanns A., De M. Terentii Varronis libris grammaticis, 1864.
- Wölfflin E., Die Etymologien der lateinischen Grammatiker, ALLG., VIII.

## ԵՐԿՐՈՐԿ ԵՆԹԱՇՐՋԱՆ (Միջին դարեր)

### ԱՊՐԻՈՐԻՍՏԱԿԱՆ ԴՈԿՄԱՏԻՉՄ

#### ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվաբանական ազդեցության սահմանափակ ոլորտների գոյացման նախադրյալները և պայմանները.— Այս ենթաշրջանն ընդգրկում է շուրջ մեկ հազարամյակ՝ V դ. վերջերից մինչև XV դ. կեսը և համընկնում է ֆեոդալիզմի տիրապետության դարաշրջանի հետ: Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի զարգացումը կապված էր հռոմեական ստրկատիրական հարաբերությունների անկման և «բարբարոս»-նվաճողների տոհմատիրական կարգի քայքայման հետ:

Արևմտաեվրոպական ֆեոդալական միջնադարի դասուկան բնութագրերը տվել է Էնգելսը. «Միջնադարը զարգացավ միանգամայն պրիմիտիվ վիճակից,—գրել է նա,—նա սրբեց երկրի երեսից անտիկ քաղաքակրթությունը, անտիկ փիլիսոփայությունը, քաղաքականությունն ու իրավաբանությունը և ամեն ինչ նորից սկսեց: Միակ բանը, որ միջնադարը վերցրեց կործանվող հին աշխարհից, քրիստոնեությունն էր և մի քանի կիսավեր, իրենց հին կուլտուրան կորցրած քաղաքներ: Սրա հետևանքը եղավ այն, որ, ինչպես պատահում է զարգացման վաղ շրջաններում, մտավոր զարգացման մենաշնորհն անցավ հոգևորականության ձեռքը, և կրթությունն ստացավ գերազանցապես աստվածաբանական բնույթ: Ինչպես քաղաքականությունն ու իրավաբանությունը, այնպես էլ մնացած բոլոր գիտությունները հոգևորականության ձեռ-

քին վերածվեցին աստվածաբանության հասարակ ճյուղերի, և նրանց մեջ զրվեցին այն բոլոր սկզբունքները, որոնք իշխում էին աստվածաբանության մեջ: Եկեղեցական դոգմաները միաժամանակ քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի տեքստը բոլոր տեղերում օրենքի ուժ ուներ. նույնիսկ այն ժամանակ, երբ առաջացավ իրավաբանական հատուկ դաս, իրավաբանությունը երկար ժամանակ մնաց աստվածաբանության հսկողության տակ: Աստվածաբանության այս միահեծան իշխանությունը մտավոր պործունեության լուրր բնագավառներում այն բանի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին հանդիսանում էր ֆեոդալական կարգերի ամենաբարձր ընդհանրացումը և սրբագործումը»<sup>1</sup>:

Ֆեոդալական հարաբերությունների բնույթի հետ կապված բնատնտեսությունը, փոխանակային հարաբերությունների անզարգացածությունը, ֆեոդալական մասնատվածությունը հիմք են տալիս սահմանափակ աշխարհագրական ոլորտների գոյության համար:

Քննարկվող ժամանակաշրջանում տարբեր հրկրների, այլև աշխարհագրական տարբեր շրջանների կուլտուրական հաղորդակցության համար դեր են խաղում երկու կարգի գործոններ՝ քաղաքական նվաճումները և կրոնական ազդեցության տարածումը. որոշ նշանակություն են ունենում և առևտրական հարաբերությունները:

Լեզվաբանական առումով կարելի է տարբերել հետևյալ ազդեցության ոլորտները՝ 1) լատինական, 2) հունա-բյուզանդական, 3) արաբական, 4) հնդկական և 5) շինական: Լատինական ազդեցության ոլորտի գոյությունը պայմանավորված էր գերազանցապես կաթոլիկ եկեղեցու տիրապետությամբ, որի համար լատիներենը ծիսակատարությունների պաշտոնական լեզուն էր: Հունա-բյուզանդական ազդեցության ոլորտի գոյությունը պայմանավորված էր մասամբ քաղաքական և կուլտուրական շփմամբ, մասամբ պատմական տրագիցիաներով (հելլենիզմի ոլորտում ընդգրկված երկրների կուլտուրայի հետագա որոշ ժառանգորդական փոխանցմամբ), մասամբ էլ քրիստոնեական եկեղեցու ազդեցությամբ ու ավելի լայն տիրապետության հասնելու ձգտմամբ: Արաբական ազդեցության ոլորտի գոյությունը պայմանավորված էր քաղաքական ու կրոնական գործոններով, հետա-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. VIII, էջ 128:

գայում նաև կուլտուրական շփմամբ. խալամի (մահմեդականութ-  
յան) տարածումը քաղաքական նվաճումների ճանապարհով  
նպաստում է արաբական լեզվաբանական ոլորտի ստեղծմանը:  
Հնդկական և շինական ազդեցության ոլորտների ստեղծումը սլա-  
մանավորված էր կրոնական և կուլտուրական գործոններով. հըն-  
դիկները և շինացիները կուլտուրապես բարձր էին կանգնած շրջա-  
կա ժողովուրդներից: Նրանց ազդեցության տարածմանը նպաստու-  
 են նաև Հնդկաստանից բուդդհայականության և Չինաստա-  
նից՝ կոնֆուցիականության տարածումը (դոսուկաունությունը Չի-  
նաստանում և բրահմինականությունը Հնդկաստանում մնացին  
փաստորեն որպես ներքին կրոններ): Ճիշտ է, ազդեցության այս  
ոլորտների գոյացման պրոցեսը վաղուց էր սկսվել, բայց այս  
շրջանում ալդպիսի սահմանափակ ոլորտների գոյությունը ակըն-  
հայտ փաստ է դառնում:

Սրանցից սկզբնապես փոքր-ինչ անջատ էին կանգնած  
հրեաները, որոնք կորցնելով իրենց լեզուն, հին գրավոր հուշար-  
ձանների լեզվական առանձնահատկությունների ճիշտ փոխանց-  
ման համար ստիպված էին գործածության մեջ դնել ձայնավոր-  
ների, այլև շեշտման և ինտոնացիայի հատուկ նշաններ: Դեռևս  
II դարից սկսած և հատկապես VI—XV դդ. տեքստերի վրա կա-  
տարվում էր ալդպիսի բանասիրական աշխատանք, սահմանվում  
էին ուղղագրական-կետագրական և ճիշտ ընթերցանության նոր-  
մաներ. այսպես կոչված, կետագիրների (սյունկտատոդրների) և  
մասսոդրետների գործունեության հետևանքով ստեղծվում են հին  
կտակարանի և թալմուդի՝ բոլոր հրեաների համար միասնական  
տեքստեր: Սակայն հրեական քերականների սիստեմատիկ աշ-  
խատանքը պարտական է արաբական ազդեցությանը:

Ազդեցության այսպիսի սահմանափակ ոլորտների մասին  
խոսելիս՝ չպետք է կարծել, թե դրանց միջև կապերն ընդհանրա-  
պես բացակայում էին. խոսքը տեական կապերի բացակայության  
մասին է: Այլապես շփումն ու փոխազդեցությունները որոշ դեր  
էին խաղում և այս շրջանում:

Հատինական և հունա-բյուզանդական ազդեցության առան-  
ձին ոլորտների առաջ գալը հետևանք էր Հռոմեական կայսրու-  
թյան մասնատման: 395 թ. Հռոմեական կայսրությունը բաժան-  
վում է արևմտյան և արևելյան կայսրությունների: 476 թ. արևմրտ-  
յան (հռոմեական) կայսրությունն ընկնում է, իսկ արևելյանը



անհրաժեշտությունը հիմք են տալիս մի շարք ժողովուրդների գրեթե ու գրականության սկզբնավորման համար:

Հունական ազդեցության ոլորտի ժողովուրդների մոտ II դ. վերջում և III դ. սկզբում մտցվում է դպտական այբուբենը, որը հետագայում օգտագործվում է նուբիացիների կողմից: IV դ. վերջերին Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվում է հայկական այբուբենը. փոքր-ինչ ուշ ստեղծվում են վրացական և աղվանական այբուբենները: IX դ. հանդես են գալիս սլավոնական գրերը:

Լատինական ազդեցության ոլորտի ժողովուրդներից գոթերի մոտ IV դ. թարգմանվում է աստվածաշունչը լատինական այբուբենի տարատեսակով՝ դոթական այբուբենով: Լատինական այբուբենի հիման վրա (այս կսւմ այն մասնակի փոփոխություններ) գրավոր հիշատակարաններ են ստեղծվում VIII դարից՝ անդլո-սաքսոնների, իռլանդացիների և գերմանացիների, IX դարից՝ ֆրանսիացիների, X դարից՝ իտալացիների և սլովենների, XI դարից՝ սլովանասլացիների և նորվեգացիների, XII դարից՝ իսպանացիների, պորտուգալացիների և կատալոնացիների, XIII դարից՝ շվեդների, դանիացիների և չեխերի, XIV դարից՝ լեհերի, խորվաթների, հունգարների մոտ և այլն:

VII դ. գրվում է արաբական առաջին դիրքը՝ դուռանը: Նախալամական շրջանում գոյություն ունեին սինայական և ապա՝ կարմատական այբուբենները, որոնց հաջորդում է կոֆայականը (Մուհամմեդի մահից հետո), դառնալով դուռանի՝ իսլամի սրբազան գրքի պարտադիր այբուբենը: Արաբական այբուբենի վաղ տեսակները ծագել էին արամեական այբուբենի մի տարատեսակը հանդիսացող նաբատեական այբուբենից: Ասորական-արամեական գրերը գոյություն ունեին մեր թվագրության սկզբներից և, վերջ ի վերջո, սկիզբ էին առնում փյունիկյան գրերից: Արարական գիրը տարածվում է Առաջավոր Ասիայում և հարավային Աֆրիկայում: Այն տեղերում, որտեղ կային տեղական գրեր (Նգիպտոս, Պարսկաստան, Ասորիք), դրանք աստիճանաբար փոխարինվում են արաբականով: Ասորական գիրը ևս լայն տարածում է ստանում. նրանից են սկիզբ առնում մանիքեական, սոգդական (VIII դ.), ույղուրական գրերը:

Հնդկական հնագույն դրավոր հուշարձանը մ.թ.ա. 253 թվից է: Հնդկական գրերը գոյություն ունեին մի շարք տեսակներով. դեանագարին («հնդկական» կամ «սանսկրիտական» տեսակը)



XIII դարում է ծագել: Բուրդհայականության և հնդկական կուլտուրական ազդեցության տարածման հետ միասին հնդկական գրերի զանազան տարատեսակներ են երևան գալիս և այլ ժողովուրդների մոտ, որոնցից առաջին հերթին հիշատակելի են հետագայում անհետացած հնդեվրոպական ժողովուրդները՝ թոխարները (Խուրբեստանում), սակերը (իրանական ժողովուրդ խոտանի երկրամասում): VII դ. երևան եկած նեպալական տարատեսակը կենտրոնական Ասիայի երկրներից փոխանցվում է Տիբեթ (առաջին հուշարձանն այս գրով 822 թվից է), այստեղից էլ, որոշ փոփոխություններով, մի քանի այլ ժողովուրդների, օրինակ՝ Քաշմիրի սուլիթի ցեղին, նևարներին:

Հնդկական գրերի տարբեր տեսակները տարածվում են VI դարից Կամբոջայում (քմերների մոտ), VIII դարից՝ Բիրմայում (այստեղից էլ XIII դ.՝ շաների մոտ), XIII դարից՝ Սիամում և այլն: Հնդկական այբուբենից էին օգտվում շամբը Աննամում, Ցեյլոնի բնակիչները, որոնց մոտ բուրդհայականությունը մուսք էր գործել դեռ 247 թ. մ. թ. ա., Սումատրայում և այլն: Դրավիդյան ցեղերի գիրն ու գրականությունը ևս զարգացել են հնդկական ազդեցության տակ: Սեփական այբուբենի ստեղծման փորձ կատարում են թամիլները IV դ., բայց այն ներգրվում է միայն VIII դ.՝:

Չինական ազդեցության երկրներից է Կորեան. երկու երկրների միջև սիստեմատիկ կապեր են ստեղծվում IV դարից, կրկորեսցիները բուրդհայականություն են ընդունում. այս շրջանում մտցվում են և չինական գիրն ու լեզուն, իսկ հետագայում կատարվում են բարեփոխության և հարմարեցման մի շարք փորձեր: Ճապոնացիները չինացիների հետ կապեր ունեին դեռ II դարից (մ. թ. ա.). չինական գիրն ու լեզուն այստեղ ևս մեծ ազդեցություն են ձեռք բերում, թեև ավելի ուշ արվում են գրի փոփոխության և սեփական գրի ստեղծելու փորձեր: Աննամը նույնպես ընդգրկվում է չինական ազդեցության շրջանակներում. աննամցի սկզբում գրում էին չինարեն, ապա սկսում են գրել իրենց լեզվով՝ շարունակելով օգտվել չինական գրերից: Չինական ազդեցությունը տարածվում է և մի շարք այլ մանր ցեղերի ու ժողովուրդների վրա:

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները.—

Հ.մ.տ. Կ. Лоукотка, Развитие письма, М., 1950, էջ 229 (հայ թարգմ. Զ. Լոուկոտկա, Գրի զարգացումը, Երևան, 1953):

Այս ենթաշրջանն ընդգրկում է լեզվաբանական ուսմունքների զարգացման 2 էտապ, որոնց սահմանը կարող է ծառայել մոտավորապես XI դարը:

Արևմտյան Եվրոպայում առաջին էտապը համընկնում է վաղ ֆեոդալական միջնադարի հետ, որ բնութագրվում է ցածր արտադրողականությունը և քաղաքի ու գյուղի միջև աշխատանքի բաժանման բացակայությամբ. այս էտապում միակ ուսուցիչը և ուսումնասիրվող լեզուն լատիներենն է, իսկ լեզվաբանական միտքը բացահայտ անկում է ապրում՝ սահմանափակ շափով միայն օգտվելով ուշ շրջանի լատինական քերականության տրադիցիաներից: Երկրորդ էտապը զարգացած ֆեոդալիզմի էպոխան է, որ բնութագրվում է արտադրողականության մակարդակի բարձրացմամբ և աշխատանքի բաժանմամբ. սա սխոլաստիկայի տիրապետության շրջանն է: Այս շրջանում երևան են գալիս և խոսակցական լեզուների ուսումնասիրության փորձեր, լեզվաբանական միտքը որոշ վերելք է ապրում: Արևմտյան Եվրոպայում արդեն IX դարից երևան է գալիս սխոլաստիկան, որը փիլիսոփայությունը զուգակցում էր աստվածաբանության հետ, փորձում փիլիսոփայորեն, Արիստոտելի տրամաբանության հիման վրա, հիմնավորել քրիստոնեական դոգմաները. իշխող մեթոդը գեղոկցիան էր:

Հունական ազդեցության շրջանում ևս առաջին էտապը համընկնում է վաղ, երկրորդը՝ զարգացած ֆեոդալիզմի հետ, թեև լեզվաբանական առումով Բյուզանդիայում այս երկու էտապները խստորեն չեն սահմանազատված: Հայաստանում V դարի վերելքից հետո քերականության նկատմամբ հետաքրքրության որոշ անկում է նկատվում. XI դարից սկսվում է նոր աշխուժացում, ուղղագրական-քերականական աշխատությունների մեծ հոսանք, խոսակցական լեզվի նկատմամբ հետաքրքրություն: Ասորիքում առաջին էտապում իշխում է հունական, երկրորդում՝ արաբական ազդեցությունը:

Արաբական ազդեցության ոլորտում առաջին էտապը արաբների քաղաքական հզորության շրջանն է. երկրորդ էտապում քաղաքական ազդեցությունն անցնում է թյուրքերին, որոնք տիրապետություն են հաստատում նաև Հյուսիսային Հնդկաստանում: Լեզվաբանական առումով առաջին էտապը, հակառակ Արևմտյան Եվրոպայի, արաբական լեզվաբանության ծաղկման շրջանն է. երկրորդ էտապում այն ավելի քիչ ինքնուրույնություն ունի:

-վիճ դ ղտհոտղոտոտսմոց-հվտհոտնվն: րսսղոտճմՆոթղոց ոտ մս 'ղոտո  
 և վնգմտհ ւննգնմտց ղտոթրսնհոտնղոտ միննզլ ղտհոտնն մսոչ րս ոչվյ-  
 'միննզլ ղտհոտնն րս վնգղոտոմմոտ 'ղոտոթրսնգմոտոմոցոլսսի րս վթրնսղձ  
 վնգղոտոմմոտ 'ղոտոթրսնհոտնցն վնգղոտննզլ րսնզղնն լնղրսնթրսղոտձ  
 -տիննզլ ղտհոտրստոտոտոտոտ-ղոտհոտիվտոցղոց րստղ ղվտողրնտո ովտոտ.  
 և ոցնղոտց (Ք 'մժվղի վրննվնվտոտոտոտոտ րս ղտոթրսնղոտձոտոթրստոտ  
 և րսսմի մղրսնթրսնղոտձոտիննզլ ղտհոտոտստոտոտոտ (Զ 'մրննվնվտոտոտոտ.  
 րսսոտն և ղրսնթրսնցննտ վտոտն 'րսսղոտ և ղվնոտձ ղվձոտոտ մղրսնթ  
 -րսսվոտողրստոտ վնգղոտննզլ ղտհոտնհոտոտոտ հոտ 'տմի վնգղոտրստոտիս  
 ղտոթրսնվոտողրստոտ վնգղոտննզլ ղտհոտոտն և րսնիղոց մղրսնթրսն  
 -տձոտիննզլ ղտհոտվննսնսնվիճ (Շ 'թրսնղձ հվտոտոտոտոտ դ ղտհոտնցննզլ  
 վրսս մրտոտոտ քոցր մղրսնթրսնղոտձոտիննզլ ղտհոտղոտոտսմոց-հվտհոտն  
 -վն (Ը 'րսսմս տոտ 'տմի վթրնսղձ վնգղոտոտրստոտ ղտհոտղոտձոտիննզլ  
 րսսղոտ ոչ ղժվղի նղոցվ ղտհոտոտոտոտոտ րս ողրսնթրսնղոտձոտոթրստոտ  
 մղողրսնթրսնոտստիսսի վիտղոտոտ ոտոտր ոչ րսնիմտոտի 'րսնիմոտձ  
 ոչլ մղողրսնթրսնմղ մտղմոտի ղվողոտոտ ղվտոտոտոտննհոտ 'չ ղվձ վղրտ  
 ողրսնթրսնղրսնսղոտոտ: րսսմստի ոտ մս 'չ ղտ ողրսնթրսնղոտձոտոտ  
 'տոց վնգղոտ րս վթրնսղձ վոտճմՆոթղոց նմսոտո ոչ րսնղիղմրոտ  
 րսննգն ղտհոտոտոտ մնգղոտ րս ողթրսնղձ վձոտոտոտոտ ղտհոտղոտձ  
 -տիննզլ— մնգղոտ րս ողթրսնղձ վնցոտոտոտոտ: ոտհոտոտոտիննզլ

։ րսստ

-տոտ նմսմիմղ ովտոտ և ոտոտ մղրսնթրսնղրսնսղոտոտ նտ 'ձրսնթ  
 -րստոտոցրոտց ղտոթրսնղոտձոտիննզլ ղտհոտոտ րսսնզլ վ ոցնղոտց ղրսնթ  
 -րսնղրսնսղոտոտ և դմս րսսղոտնն ղվձոտոտ մղրսնթրսնղոտձոտիննզլ ղտհ  
 -տոտոտոտ: մղոցմստի ոտրոտմվի վննթոցր ղտհոտոտոտոտոտ-տրտոտ  
 հոտղրսնղ դ մղողրսնթրսնտոտոտոտ ձմսն ղտհոտոտվնտոտոտձ մղո  
 -ձոտոտոտոտ ղվտհոտոտ ովտոտ ոչ ոցնղոտց րստոտոտ նմսմիմղ մս  
 'ղրտոտ և վղտոտից 'րսստոտ և րստոտնն վտոտն և րստոտոտ րս  
 -մղ մձոտոտոտոտ ղտհոտղոտձոտիննզլ 'ղտոտմիղ ղտոտրոտղ վոտոտն  
 նտ ոտձ 'մն մվիմղ քոտոտննն վղրտ մս 'րսսղոտոտոտոտ

։ մստվտոտոտ և րսսղոտն ոտննզլ նտվոտոտ

-րստոտ հոտոտ ստոց (՝ն ԸԸ) նվտոտննղոտոտոտ 'մղրսնթրսնղրսնսղոտոտ  
 րսսղոտնն և վղրտ դ վղրտ րստոտոտ նմսմիմղ: մղողրսնթրսնղոտոտ  
 -ոտ դ մղողրոտոտձ վնգղոտննզլ ղտհոտիննց ղվձոտ ոչ րսնիմն 'րստ  
 -ոտոտ ղտհոտոտ մղրսնթրսննղոտոտոտ ովտոտ և ոցնղոտց 'մղրսնթ  
 -րսնղոտոտիցր վնգղողրսնթրստոտոտ վնգղոտննստոտ և րսնիղոտոտ  
 -տն րստոտոտ ոչ վձոտոտ ող ձոցր ողրսնթրսնղոտձոտիննզլ ղտհոտիննղ

լուրգիական լեզվաբանությունը գնում են ձեռք-ձեռքի տված՝ իբրև մեկ ամբողջություն:

Լեզվաբանության բաժինների ու լեզվաբանական դիսցիպլինների փոխհարաբերության հարցում գոյություն ունի մոտավորապես նույն վիճակը, ինչ նախորդ շրջանում: Նշելի է միայն, որ քերականության ծավալը զգալի չափով նեղացել է. նրանից դուրս է եկել «էքսեգետիկական» մասը, և մնացել «տեխնիկականը», այն է՝ լեզվական գիտելիքների շրջանակը: Բառարանագրության մեջ նկատելի է նոր հոսանք: Երևան եկած զանազան գլոսարիաներում հին գրավոր լեզունների անժանոթ բառերը բացատրվում են կենդանի խոսակցական լեզուներով. սրանք երկլեզվյան բառարանների նախատիպերն են: Ընդհանուր առմամբ բառարանագրությունն այս շրջանում նախորդ շրջանից ավելի լայն քայլեր է անում և ավելի մեծ նշանակություն ձեռք բերում. կարելի է ասել, որ բառարանագրությունը իսկական իմաստով՝ այս շրջանում է ստեղծվում:

## I. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԻՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

### 1. ԳԻՌԱԿՏԻԿ-ՖԻԼՈՍՈՒԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվի ուսուցումը.—Վաղ միջնադարյան Եվրոպայում ուսումնալիցավորող և ուսուցվող միակ լեզուն լատիներենն էր: Նույնիսկ հունարենը դուրս էր մղվել ուսուցումից և դադարել ուսումնասիրության առարկա լինելուց:

Քրիստոնեական եկեղեցին, իր ձեռքն առնելով կրթության մենաշնորհը, անտիկ աշխարհի գիտության նվաճումները պահպանում է միայն այն չափով, որ չափով դրանք անհրաժեշտ էին եկեղեցու առօրյա պրակտիկայում:

Անտիկ աշխարհից առնված գիտելիքների մինիմումը հանգում էր «յոթ ազատ արվեստներին» (septem artes liberales), որոնց ամփոփումը դեռևս V դարում տվել է Մարցիանոս Կապելլան: Դրանք էին քերականությունը, ճարտասանությունը, դիալեկտիկական, երկրաչափությունը, թվաբանությունը, աստղաբաշխությունը և երաժշտությունը: VI դ. այդ «արվեստները» բաժանվում են 2 խմբի. առաջին երեքը կազմում էին «տրիվիումը», մնացած չորսը՝ «քվադրիվումը»: Շուրջ մեկ հազարամյակ այս գիտելիքները փոքրվում էին միջնադարյան կրթության հիմքը:

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան կրթության սխտեմում կարևոր տեղ էին լսնում լեզվական գիտելիքները՝ քերականությունը և ճարտասանությունը: Սակայն այդ դիսցիպլինները անտիկ աշխարհի նվաճումների վրա համարյա ոչինչ չեն ավելացնում: Հետադարձում ծայր առած սխոլաստիկան է՛լ ավելի դոգմատիկ բնույթ է հաղորդում այդ գիտելիքներին՝ վերածելով դրանք կենդանությունից զուրկ կանոնների ժողովածուների, որոնց մեջ լուվանդակությունը զոհ էր բերվում ձևին:

Լեզվաբանական-քերականական գիտելիքներին սկզբում գերազանցապես զուտ գործնական նպատակներ էին հատկացվում, ինչպես երևում է, օրինակ, Մարցիանոս Կասելլացի և Իսիդորոս Սեյլլացու (մոտ. 560—636) սահմանումներից (համտ. վերջինիս «Ստուգաբանություններ 20 գրքով» աշխատությունը). քերականությունը համարվում էր ուղիղ խոսելու և գրելու արվեստ (ars recte dicendi et scribendi): Լեզուն դիտվում էր որպես զարգացումից զուրկ, քերականության մեջ ներկայացված մի բան, և երբեմն «քերականություն» բառը նշանակում էր պարզապես լեզու: Սակայն նույնիսկ այս տարրական գիտելիքները դիմադրություն էին առաջ բերում հոգևորականության որոշ խավերում: VI—VII դդ. Կոլտուպայի ծայրահեղ անկման հետ կասված, լեզվաբանական-քերականական միտքը է՛լ ավելի է հետադիմում: Գրիգորիոս I պապը (մեռ. 604 թ.) մի եպիսկոպոսի գրում էր. «Մենք չենք կարող առանց ամոթի հիշել, որ դու ինչ-որ մեկին քերականություն ես ուսուցանում: Լուրն այդ արարքի մասին, որի հանդեպ մենք մեծ արհամարհանք ենք տածում, մեղ վրա շատ ծանր տպավորություն թողեց»<sup>1</sup>:

Քերականությունը ավանդվում էր գերազանցապես լատինական տեքստերին արվող մեկնաբանությունների ձևով. սակայն, և՛ Ռոնատոսը և Պրիսցիանոսը նկատի ունեին դասական հեղինակներին, պապ եկեղեցական ուսուցումը պահանջում էր նկատի առնել ս. գրքի լատինական թարգմանությունը՝ վուլգատան, որի լեզուն IV—V դդ. լեզու էր: Տարբերությունը որոշ դեպքերում այնքան զգալի էր, որ IX դ. ֆրանսիացի մի աբբա նշում էր. «Իս համամիտ չեմ Դոնատոսի հետ, որովհետև դրքի (իմա՝ դրքի—Գ. Զ.) հեղինակությունը ավելի մեծ եմ համարում»<sup>2</sup>: Հետագա-

<sup>1</sup> История средних веков, под ред. А. Д. Удальцова и др., I, 1938 էջ 174—175:

<sup>2</sup> Քաղվածքն ըստ Robins-ի Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe, London, 1951, էջ 71:

յում հանդես են գալիս նաև քերականական զանազան կատեխեզիսներ (հարց ու պատասխանի ձևով գրված քերականություններ)։ այդպիսին էր, օրինակ, կարողինգյան «վերածնություն» ակադմոր դեմքի՝ Ալկուինի (VIII դ.) քերականության ձեռնարկը։ Միջնադարի քերականության գլխավոր հեղինակությունը մնում էին, ինչպես նշվել է, Դոնատուսի և Պրիսցիանոսի քերականությունները, որոնցից կատարված քաղվածքները, այլև զանազան կոմպիլյացիաները ծառայում էին որպես ձեռնարկներ։ Այդ քերականությունների համար գրվում էին մեկնաբանություններ, որոնց հեղինակները հաճախ դիմում էին թվերի միաստիֆիկացիային և կրոնական-աստվածաբանական օրինակներին ու զուգահեռներին։

Միջնադարյան ճարտասանությունը հոմիլետիկայի աղախինն էր, որը նպատակ ուներ որոշել կրոնական-եկեղեցական քարոզների սկզբունքները։ Ստուգաբանությունը միջնադարում որևէ առաջադիմություն չի ունենում. ստուգաբանում էին անտիկ աշխարհում մշակված եղանակներով։ Միջնադարյան ստուգաբանության մասին գաղափար են տալիս վերևում հիշված Իսիդորոս Սևիլացու «Ստուգաբանություններ 20 գրքով» գործը, այլև Հոաբանոս Մաուրունի (IX դ.) «Տիեզերքի մասին» («De universa») և Հուգուլլոյի (XII դ.) «Ածանցումների դիրք» («Liber derivationum») աշխատությունները։

Միջնադարյան ֆերականությունը.—Միջնադարյան լատինական քերականության սիստեմը քիչ էր տարբերվում անտիկ աշխարհի մշակած քերականական սիստեմից։ Ինչպես նշեցինք, քերականությունը համարվում էր ուղիղ գրելու և խոսելու արվեստ։ Թոմաս Էրֆուրտցին (XIV դ.) քերականությունը համարում էր ուղիղ գրելու, ուղիղ գրածը ուղիղ հասկանալու, ուղիղ հասկացածը ուղիղ կապակցելու և ուղիղ կապակցվածն ուղիղ արտասանելու ուսմունք. ըստ այսմ նա տարբերում էր քերականության 4 մաս՝ ուղղագրություն, ստուգաբանություն, շարահյուսություն և առոգանություն (պրոսոդիա)։ Որոշ փոփոխություններ կատարվում են խոսքի մասերի ուսմունքի և շարահյուսական հարաբերությունների տիպերի ըմբռնման մեջ։ Անվան սիստեմում ավելի ու ավելի են տարբերակվում գոյականները, ածականները և թվականները (մասնավանդ առաջին երկուսը), որը հասցնում է դրանց առանձնացմանը սրպես խոսքի մասերի. այսպես, դեռևս Ալկուինի քե-

րականության մեջ անունը սահմանվում էր որպես «էության (1) կամ որակի (2), կամ քանակի (3) նշանակում»<sup>1</sup>: Հետագա միջնադարյան քերականության մեջ (XII դարից սկսած), ածականի և գոյականի առանձնացմամբ, խոսքի մասերի թիվը հասցվում է 9-ի<sup>2</sup>. միջնադարից հետո որպես խոսքի մաս առանձնացվում է և թվականը<sup>3</sup>:

Միջնադարում հիմքեր են ստեղծվում նախադասության իսկական ուսմունքի համար. մի կողմից, ինչպես կտեսնենք, տրամաբանության մեջ համապատասխան տերմինների (subiectum, praedicatum, copula, obiectum) գործածությունը հիմք է տալիս, տրամաբանական քերականության գոյության պայմաններում, դրանք քերականության բնագավառը ներմուծելու համար, մյուս կողմից՝ իրենք միջնադարյան քերականներն իսկ սկսում են տարբերել ենթակայի և ստորոգյալի գաղափարները: Եթե տրամաբանական ենթակայի և ստորոգյալի համար գործածվում էին subiectum և praedicatum տերմինները, ապա քերականական ենթական և ստորոգյալը նշանակվում են suppositum «ստորադրյալ» և appositum «առդրյալ», «մակադրյալ» տերմիններով. սրանց հետ միասին գործածվում էին «ուղղական՝ բայից առաջ» և «ուղղական՝ բայից հետո» արտահայտությունները՝ անվանական նախադասությունների ենթական և ստորոգելին նշանակելու համար: XIII դ. մի քերական փորձում է նույնիսկ պարզել ենթակայի (suppositum) և ստորոգյալի (appositum) հարաբերությունը անվան (գոյական անվան—causale) և բայի հետ՝ ելնելով, սակայն, դրանց ուղղագիծ համապատասխանության ըմբռնումից. «Նախադասության լրիվության համար,—գրում է նա,—անհրաժեշտ է երկու բան, այն է՝ ենթակա (suppositum) և ստորոգյալ (appositum): Ենթական այն է, ինչի մասին խոսվում է, սա այն է, ինչ բային դեմք

<sup>1</sup> Книга для чтения по истории средних веков, 1940, էջ 120:

<sup>2</sup> Հմտ. M. II. Jellinek, Geschichte der neuhochdeutschen Grammatik von den Anfängen bis auf Adelung, II, Heidelberg, 1914, էջ 79—80. H. Glinz, Geschichte und Kritik der Lehre von den Satzgliedern in der deutschen Grammatik, Bern, 1947, էջ 12:

<sup>3</sup> Լ. Գլինցը, հիշ աշխ. մեջ, էջ 12, գերմանական քերականության մասին գրում է. «Այստեղ միայն հոգը նորից մտցվեց, թվականը անունից հանվեց ու դարձվեց ինքնուրույն խոսքի մաս և, վերջապես, դերբայը որպես ենթամաս հատկացվեց բային»։ հմտ. և M. H. Jellinek, հիշ. աշխ., էջ 75 և 111:

է տալիս: Ստորոգյալն այն է, ինչ բայի մասին ասվում է: Անունները (causalia) գտնվել են ենթական նշանակելու համար: Բայիը գտնվել են ստորոգյալը նշանակելու համար»<sup>1</sup>:

Քերականական աշխատությունների թիվը բավական մեծանում է միջնադարի զարգացման երկրորդ էտապում:

Այդ էտապի սովորական քերականական աշխատություններից, — որոնք շարունակում էին հիմնվել Պրիսցիանոսի ու Դոնատոսի վրա, նախատեսված էին որպես դասագիրք և գրված էին շափածո, — հիշատակելի են էբերհարդ Բեթունեցու «Հունաբանությունը» («Graecismus», 1212 թ.) և առանձնապես՝ Ալեքսանդր Մեծի քերականությունը՝ կազմված 1199 թ. (Alexander de Villa Dei «Doctrinale puerorum»)՝<sup>2</sup>: Ալեքսանդրի քերականական կանոնները հենվում էին ոչ թե դասական, այլ այն միջնադարյան լատիներենի վրա, որով այն ժամանակ հաղորդակցվում էր գրագետ խավր: Ուշ միջնադարում Ալեքսանդր Մեծի քերականությունը լատիներենի ուսման գլխավոր ձեռնարկն էր ուսանողների համար: XV դ. Ալեքսանդրի քերականությունը վերամշակվում է Ն. Պերոտոսի կողմից՝ օժտվելով գերմաներեն և ֆրանսերեն օրինակներով, XVI դ. սկզբին՝ Յ. Դեսպաուտերիոսի (1460—1520) կողմից:

XIV դ. վերջում հույն Մանուել Խրիստոփորոսը (մեռել է 1415 թ.) ուսուցանում է իտալական զանազան քաղաքներում և հրապարակում հունարենի մի քերականություն:

Արևմտյան Եվրոպայի երկրներում XI—XIV դդ. երևան են գալիս կենդանի-խոսակցական լեզուների քերականություններ, այլև այդ լեզուներով գրված լեզվաբանական դործեր, որոնք դեռևս խիստ կերպով կաշկանդված են լատինական քերականության նորմաններով: Դրանք մասամբ էլ նպատակ ունեին նպաստել լատիներենի ուսուցմանը և հեշտացնել նրա յուրացումը<sup>3</sup>: XII—XIV դդ. երևան են գալիս Սնոթրիի «էդդային» կցված քերականական զանազան հոդվածները, որոնք առանձնապես կարևոր են իրենց պարունակած հնչյունաբանական հետաքրքիր դիտողություններով:

<sup>1</sup> Քաղվածքների համար տես Ch. Thurot, Extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire de doctrines grammaticales au moyen âge, Paris, 1869, էջ 217:

<sup>2</sup> Հրատարակված է D. Reichling-ի կողմից „Monumenta Germaniae pedagogica“-ում, XII:

<sup>3</sup> Հմտ. B. Томсен, հիշ. աշխ., էջ 33:



Միջնադարի երկու էտապների միջև յուրատեսակ սահմանագիծ է հանդիսանում էլֆրիկի լատիներենի քերականությունը (մոտ 1000 թ.) անգլո-սաքսոներեն (Անգլիայում, Aelfric, Grammatica saxonica)<sup>1</sup>: լատինական օրինակները հեղինակը թարգմանում է անգլո-սաքսոներեն և առաջաբանում նշում, որ գիրքը ծառայելու է որպես անգլո-սաքսոներենի քերականության ներածություն: Սրանով իսկ անգլո-սաքսոներենի քերականությունը դրվում է նա-լատինական սխեմաների մեջ<sup>2</sup>: Մյուսներից հիշատակելի են էդերին Ոսկելեզուի վալիսական քերականությունը («Dosparth Ederym Davod Aur», XIII դ.), անանուն մի հեղինակի իուանդական քերականությունը («Airaicept na n-éces» — «Իպրոցականի տարրական ձեռնարկ», ժամանակը չի ճշտված), XIII—XIV դդ. պրովանսալական քերականությունները. պրովանսալական տոաջին հայտնի քերականները Ռայմոն Վիդալը և Ուկ Ֆայդիտն էին: XIV դ. գոյություն ուներ տոլուզական քերականների մի ամբողջ դպրոց, որի տված աշխատություններից են «Պրովանսալական Դոնատոսը» («Donat proensal») և «Միրո օրենքները» («Leys d'amor»): XIV դ. Անգլիայում դրվում են ֆրանսերենին նվիրված առաջին աշխատությունները՝ Ժան (Ջոն) Բարտոնի «Ֆրանսիական Դոնատոսը» («Donait françois», մոտ 1400 թ.), անանուն մի հեղինակի «Ֆրանսիական ուղղագրությունը» («Orthographia gallica», XIV դ. կեսերին), ֆրանսերենի երկու այլ դասագրքեր, Կոլֆուբելի Օուկանցու քերականական տրակտատը, որտեղ հեղինակը տարբերում է ֆրանսիական և սիկարդական բարբառներ<sup>3</sup>: Անդլիական այս շրջանի քերականներից հայտնի է Գաուտեր դե Բիբլսուտրթը:

XIV դ. Իտալիայում երևան է գալիս Գվիդոտտո Բոլոնիացու ճարտասանական աշխատությունը՝ գրված իտալերեն լեզվով:

**Բառաբանագրություն.**—Միջնադարյան Եվրոպայի բառարանագրության առաջին նմուշները լատինական տեքստերի տողատակային կամ լուսանցքային բառամեկնություններն են: Նման

<sup>1</sup> Aelfrics, Grammatik und Glossar, հրատ. J. Zupitza, Berlin, 1880: Հմտ. Robins, հիշ. աշխ., էջ 72:

<sup>3</sup> Հմտ. J. Stürzinger, Orthograpia gallica, Altfranz. Bibl., 8, Heilbronn, 1884. Stengel, Chronologisches Verzeichnis französischer Grammatiken bis zum Ausgang der XVIII Jahrhunderts, Oppeln, 1890. Stengel, Die ältesten Anleitungsschriften zur Erlernung der Französischen, „Zeitschrift für neufranzösische Sprache und Literatur“, I. 1, 1879:

քառամեկնություններ XIII դարից սկսած երևան են գալիս Գերմանիայում, Անգլիայում և այլուր. դրանք հաճախ հիլրոպական այս կամ այն լեզվի հնագույն հուշարձաններն են: Աստիճանաբար երևան են գալիս և բուռարանական այլ տիպի աշխատություններ՝ զրուցարաններ կամ զրուցարաններին ու դասագրքերին կցված բառարաններ: Այսպես, IX դարում երևան են գալիս այսպես կոչված «Կասնելյան գլոսասաները» (զրուցարաններ), որոնք կազմված են բավարերենով և նախատեսված են լատիներեն իմացող ճանապարհորդների համար: X դ. գրվում է միջին ֆրանսերեն-լատիներեն զրուցարանը: X դ. վերջին էլֆրիկը իր լատիներեն ձեռնարկին կցում է լատիներեն—հին անգլերեն: (անգլոսաքսոնիերեն) մի բառացանկ, որը կաղմված է ըստ տարբեր բնագավառների. սկսվում է գյուղատնտեսական բառերով ու արտահայտություններով և վերջանում նավի մասերի վերաբերյալ բառերով:

## 2. ՍԵՈՒԱՍՏԻԿԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ.—Սխոլաստիկական փիլիսոփայությունը նպատակ էր դրել տրամաբանական եղանակով ապացուցելու քրիստոնեական եկեղեցու քարոզած ճշմարտությունները, ցույց տալու, որ տրամաբանորեն այնպես պետք է լինի, ինչպես կա: Սխոլաստիկական նպատակ ունեւր ոչ թե նոր ճշմարտություններ հայտնագործել, այլ եղածը ապացուցել Արիստոտելյան տրամաբանության սկզբունքներով, նրբացված սիլլոգիստիկայով: Լեզվի սխոլաստիկական քննության հղանակը արիստոտելյան տրամաբանությունը լեզվի նկատմամբ կիրառելու փորձ էր: Միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության լեզվական հետաքրքրությունները դրսևորվել են գերազանցապես ընդհանուր հասկացությունների շուրջը տարվող վեճերի և այսպես կոչված հայեցողական քերականության մեջ: Սակայն միջնադարյան սխոլաստիկական լեզվափիլիսոփայությունը ունի ուշադրության արժանի մի կողմ ևս. այս շրջանում տրամաբանական այնպիսի տերմիններ ու գաղափարներ են ներմուծվում, որոնք հիմք են տալիս նախադասության անդամների հետագա ուսմունքի համար: VI դ. Բոեցիուսը Արիստոտելի նποχείμενον «ենթակա» և χαττηγορούμενον «ստորոգյալ» բառերը թարգմանում է subiectum և obiectum լատիներեն բառերով, որոնք այս ձևով տարածվում են միջնադարյան

փրիխոփա-տրամաբանների մոտ: Աբելյարը (1109—1143) ներմուծում է copula «հանգույց» տերմինը՝ այս անվան տակ հասկանալով ենթական ու ստորոգյալը կապող է բայաձևը: Նշելի է, սակայն, որ հանգույցի գաղափարն ընդհանուր ձևով կար Արիստոտելի մոտ. իր «Մեկնություն մասին» աշխատության մեջ Արիստոտելը «Մարդը գնում է»-ն հավասար էր համարում «մարդը գնացող է»-ին, այսինքն՝ առանձնացնում էր հանգույցը՝ նշելով հանդերձ, որ է-ով ամեն բառ կարող է «բայ» դառնալ:

Միջնադարյան սխոլաստիկայի շրջանում են երևան գալիս obiectum («առարկա», հետագայում «խնդիր») և attributio («որոշիչ») տերմինները: Առաջինին Արիստոտելի մոտ համապատասխանում է ἀντικείμενον («հակադիր») բառը, բայց այս տրամաբանական տերմինի արժեք չունի. երկրորդը Արիստոտելի մոտ արտահայտված է բառագուգորդմամբ (τὰ ἐν τῷ οὐσίᾳ ὄντα «էություն մեջ եղածը»): Obiectum ասելով միջնադարյան սխոլաստիկները հասկանում էին մտածողության առարկան և այդ բառը դիտում ոչ թե որպես տրամաբանական, այլ «մետաֆիզիկական» (իմա՝ գոյաբանական) տերմին. այն դեռ չէր հակադրվում subiectum-ին. obiectum-ը կարող էր հանդես գալ, ասենք, որպես տրամաբանական ենթակա: Դունս Սկոտը շուրջ 1300 թվին obiectivus-ը գործածում է ի հակադրություն subiectivus-ի, բայց այս բառերի մեջ ընդհանրապես մինչև Դեկարտը այժմյանին հակառակ իմաստ էին դնում. սուբյեկտիվ ասելով հասկանում էին իրականը, օբյեկտիվ ասելով՝ պատկերացնելին: XVII դ. կեսերից «օբյեկտ» բառը սկսում է գործածվել նշանակելու համար այն, ինչի վրա մի բան ուղղված է. «սուբյեկտիվ» և «օբյեկտիվ» բառերի այժմյան իմաստով գործածությունը գալիս է XVIII դարից և ընդհանրացվել է Կանտի միջոցով: Attributio ասելով սխոլաստիկայի շրջանում հասկանում էին էական հատկանիշը: Այսպիսով՝ միջնադարում սուբյեկտը պրեդիկատին, օբյեկտին և ատրիբուտին հակադրվում էր երեք տարբեր պլանով՝ առաջինին՝ որպես տրամաբանական սուբյեկտ, երկրորդին՝ որպես գործող (ներգործող) սուբյեկտ, երրորդին՝ որպես առարկայական սուբյեկտ (որպես առարկա, որը հակադրվում է հատկանիշին): Քերականությունը փոխ առնելով այս տերմինները՝ օբյեկտը և ատրիբուտը դնում է ենթակայի և ստորոգյալի հետ միևնույն հարթության վրա<sup>1</sup>:

<sup>1</sup> Հմմտ. H. Glinz, հիշ. աշխ., էջ 21:

նոմինալիստների, ռեալիստների և կոնցեպտուալիստների վե-  
 ները. — Միջնադարյան եվրոպայում սխոլաստիցիզմի շրջանում  
 ընդհանուր հասկացությունների բնույթի շուրջը մղվող փիլիսո-  
 փայական վեճերը սերտորեն կապված էին լեզվական պրոբլեմ-  
 ների հետ, որովհետև ընդհանուր հասկացությունները դիտվում էին  
 հասարակ անունների առնչությամբ: Հարցը դրված էր այսպես:  
 ընդհանուր հասկացությունները իրապես գոյություն ունե՞ն, թե՞  
 եզակի հրեություններն ընդգրկող անվանումներ են միայն:

Նոմինալիստները ընդհանուր հասկացություններին միայն  
 անվանական գոյություն էին հատկացնում, ընդհանուր հասկացու-  
 թյունները կամ ունիվերսալիաները համարում լոկ մտքում գոյու-  
 թյուն ունեցող արատրակցիաներ՝ միայն բառեր (voces) կամ ա-  
 նուններ (nomina): Միջնադարում նոմինալիզմը, ինչպես նշել է  
 Մարքսը, «մատերիալիզմի առաջին արտահայտությունն է»<sup>1</sup>: Նրա  
 խոշոր ներկայացուցիչներից էր Ռոսցելինը:

Ռեալիստները ունիվերսալիաները համարում էին ոչ թե ան-  
 վանապես, այլ իրապես գոյություն ունեցող իրականներ (realia):  
 Ռեալիզմը իդեալիզմի արտահայտություն էր: Նրա խոշորագույն  
 ներկայացուցիչները X—XII դդ. Անսելմ Քենտրբերցին և Վիլհելմ  
 Շամպոյացին էին: Ռեալիզմը ներկայացնում էր պլատոնականու-  
 թյան յուրատիպ տարատեսակ, որը ունիվերսալիաները նախորդել  
 էր տալիս իրերին:

Կոնցեպտուալիստները, նոմինալիստների նման կարծելով, որ  
 եզակի նյութական իրերը առաջնային են, իսկ ունիվերսալիաները  
 երկրորդային, տարամիտվում էին ունիվերսալիաներին ան-  
 վանական գոյություն հատկացնելու հարցում. նրանց կարծիքով՝  
 ունիվերսալիաները մտքի կոտեգորիաներ են, մտքի ծնունդ  
 (conceptio). դրանք ունենալով սեփական արժեք և արտահայտե-  
 լով մտքի ամենաէական հատկությունը՝ գոյություն ունեն իրերի  
 մեջ (in re), նրանց ընդհանուր հատկությունների ու հարաբերու-  
 թյունների մեջ, և ոչ թե նախորդում են իրերին: Կոնցեպտուալիզմի  
 ամենախոշոր ներկայացուցիչն Աբելյարն էր (XII դ.), որը զգալի  
 շարժում հենվում էր Արիստոտելի՝ իրեն հայտնի աշխատություն-  
 ների վրա:

Սխոլաստիկայի զարգացման երկրորդ էտապում, XIII դարից  
 սկսած, հանդես են գալիս 3 տեսակետները միավորող ուսմունք-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, III, էջ 157:

ներ: Այս հարցում առանձնահատուկ նշանակություն է ունենում արաբական փիլիսոփայության ներկայացուցիչների, առանձնապես տաշիկ Իբն Սինայի (Ավիցեննայի, 980—1037) ուսմունքը: Օգտը վելով արաբական աղբյուրներից և հատկապես Իբն Սինայից, այլև էկեկտիկորեն զուգորդելով Պլատոնի, Արիստոտելի և նոմինալիստների տեսակետները՝ Ալբերտ Մեծը (1193—1280) ունիվերսալիտանների պրոբլեմը լուծում է հետևյալ կերպ. ունիվերսալիտանները գոյություն ունեն ինքնին՝ նախքան իրերը (ante rem) և հատուկ են սաստիաժային բունականությունը. նրանք գոյություն ունեն իրերի մեջ (in re)՝ իրականանալով նյութական աշխարհի բազմազանության մեջ. վերջապես, նրանք գոյություն ունեն մարդկային բունականության արստրակցիայի միջոցով, այսինքն՝ իրերից հետո (post rem)<sup>1</sup>:

Համատիպ հարցեր շոշափել են նաև բյուզանդական և հայկական աղբյուրները: Հայերի մոտ դրանք կապվում են հասարակ (ընդհանուր) և հատուկ (առանձին) անունների քննության հետ:

**Փիլիսոփայական «հայեցողական»** փերականությունները.— Միջնադարյան Եվրոպայի փիլիսոփայական-քերականագիտական մտքի զարգացման մեջ հատուկ տեղ են բռնում փիլիսոփայական-«հայեցողական» քերականությունները: «Հայեցողական» քերականության (grammatica speculativa) առաջին օրինակը տվել է XII դ. հեղինակ Պետրոս Հելիեն, որը գործում էր Փարիզի համալսարանում. նրա աշխատությունը Պրիսցիանոսի քերականության յուրատեսակ փիլիսոփայական-տրամաբանական մեկնությունն էր: Այս աշխատությանը հետևում են մեծ մասամբ «De modis significandi» («ուշանակման ձևի մասին») ընդհանուր խորագիրը կրող քերականական-փիլիսոփայական տրակտատները, որոնք հայտնի են մոդիստաներ (modistae) համառոտ անունով: Մոդիստաների հեղինակները դերազանցապես միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության ներկայացուցիչներ էին, որոնք հենվելով Դոնատոսի և Պրիսցիանոսի քերականական փաստերի ու սխեմաների վրա՝ դրանք մեկնաբանում էին սխոլաստիկական փիլիսոփայության ու տրամաբանության դիրքերից: XIII դարից սկսած փիլիսոփայական-հայեցողական քերականությունների կամ մոդիստաների հեղինակներից հայտնի են Ալբերտ Մեծը (գործը՝

<sup>1</sup> Ավիցեննայի բանաձևը արտահայտվում է փոքր-ինչ այլ կերպ. ante multitudinem, in multiplicitate, post multiplicatam ձևով (բազմություններից առաջ, բազմազանության մեջ, բազմազանություններից հետո):

շուրջ 1240 թ.), Միգելը Կուրտրեացին (գործը՝ շուրջ 1300 թ.)<sup>1</sup>, Թոմաս Էրֆուրտցին (գործը՝ շուրջ 1350 թ.)<sup>2</sup>, Թոքեր Բեկոնը, Միքայել Մարբեացին, Թոմաս Օկհամը և, վերջուպես, Ժոս դը Մարվիլը, որ գրել է չափածո մի տրակտատ: Շատ ավելի վաղ, նախքան հայեցողական քերականության ծալալուսմը «Քերականության մասին» («De grammatica») խորագրով մի աշխատանք գրել է սխոլաստիցիզմի նշանավոր դեմքերից մեկը՝ Անսելմ Քենտրբերցին (1033—1109):

Միջնադարյան հայեցողական քերականությունը, — որ ոչ այլ ինչ էր, քան տրամաբանության կիրառում լեզվի նկատմամբ, լեզվի տրամաբանություն<sup>3</sup>, — XVII դարի երկրորդ կեսից երևան եկած ընդհանրական ուսուցողական քերականության նախատիպն էր: Հայեցողական քերականությունների հեղինակների ուշադրության կենտրոնում գտնվում էին քերականության և տրամաբանություն, իրականության, մտածողության և լեզվի, իրերի, հասկացությունների և բառերի փոխհարաբերության հարցերը, խոսքի մասերի ու նրանց քերականական հատկանիշների իմաստային կողմը: Նրանք ելնում էին բոլոր լեզուների քերականական կատեգորիաների ընդհանրության գաղափարից՝ տարբերություններ տեսնելով միայն բառերի ձևերի մեջ<sup>4</sup>, ընդ որում քերականական կատեգորիաների տիպերը ոլորտում էին Դոնատոսի և Պրիսցիանոսի լատինական քերականությունների հիման վրա: Հենվելով միայն մեկ լեզվի՝ լատիներենի վրա և նկատի առնելով բառերի ու քերականական կառուցվածքի միայն իմաստային կողմը, մոդիստաների հեղինակները բնականաբար հանգում էին այն մտքին, որ բոլոր լեզուների համար գոյություն ունի միայն մեկ ընդհանուր քերականություն և որ այդ ընդհանրության հիմքում ընկած է իրականության ու մարդկային բանականության կառուցվածքային ընդհանրությունը. այդ պատճառով էլ նրանք գտնում էին, որ քերականական կանոնները սահմանում են ոչ թե քերականները, այլ փիլիսոփաները:

<sup>1</sup> Տե՛ս G. Wallerand, Les oeuvres de Siger de Courtrae, „Les phillosophes belges“, VIII:

<sup>2</sup> Սրա քերականության տեքստը հրատարակված է Դոնա Սկոտի „Grammatica speculativa“-ում Garcia-ի կողմից, Quaracchi, 1902, և սկզբնապես վերագրվել է Նրան. հեղինակության հարցի մասին տե՛ս M. Grabman, Mittelalterliches Geistesleben, I, էջ 118 և 59.:

<sup>3</sup> Հմմտ. H. Arens, հիշ. աշխ., էջ 35 և 59.:

<sup>4</sup> Հմմտ. Robins, հիշ. աշխ., էջ 79:

Միգեր Կուրտրեացին և մյուս հեղինակները սովորաբար տարբերում են իրար համապատասխանող կատեգորիաների երեք շարք. 1) գոյության, որին պատկանում են իրերը իրենց հատկություններով կամ գոյության ձևերով (modi essendi), 2) մտածողության, բանականության, որին հատկացվում են հասկացության ակտիվ (modi intelligendi activi) ու պասսիվ ձևեր (modi intelligendi passivi) և 3) լեզվի, որին վերագրվում են նշանակման ակտիվ ձևեր (modi significandi activi) ու պասսիվ ձևեր (modi significandi passivi): Հասկացության և նշանակման ակտիվ ու պասսիվ ձևերի տարբերումը կապված էր միջնադարյան սխոլաստիկական փրիսոփայության մեջ ակտիվ և պասսիվ բանականության տարբերման հետ. ըստ այդ հայեցակետի՝ «պասսիվ բանականությունը» կապված է մարդու մարմնական կազմակերպման հետ, մինչդեռ «ակտիվ բանականությունը» հատուկ սուբստանց է, որ դրսից թափանցում է մարդու գիտակցության մեջ<sup>1</sup>: Տարբերելով իրը (res), ձայնը (vox) և բառը (dictio)՝ մոդիստոսների հեղինակները պնդում էին, որ ձայնը բառ է դառնում այն դեպքում, երբ ծառայում է իրի նշանակմանը. այլ կերպ ասած՝ նշանակման ֆունկցիան է (ratio significandi), որ ձայնը դարձնում է բառ: Սակայն բառը նշանակում է իրը ընդհանրապես՝ առանց նրա որպիսությունը, նրա հատկությունները (proprietas) կամ գոյության ձևերը (modi essendi) նշանակելու. գոյության ձևերի իմացությունն է, որ հնարավորություն է տալիս բառերն օժտելու նշանակցության ֆունկցիայով (ratio consignificandi) կամ նշանակման ձևերով (modi significandi) և սրանով իսկ բառերը դարձնելու բառերի տեսակներ (իմա՝ բառերի իմաստային խմբեր) կամ խոսքի մասեր: Խոսքի մասերը տարբերվում են նշանակման էական ձևերով, այսինքն՝ ըստ այն բանի, թե ինչպե՛ս են նրանք նշանակում իրերի էական հատկությունները: Ի տարբերություն խոսքի մասերի՝ խոսքի մասերի ենթարթանումները և քերականական հատկանիշները (իմա՝ քերականական կատեգորիաները՝ սեռը, թիվը, հոլովը և այլն) բնութագրվում են նշանակման ոչ էական, երկրորդական (ակցիդենտալ) ձևերով: Ըստ Պետրոս Հելիեի՝ անունը նշանակում է սուբստանց՝ որակով հանդերձ (substantia cum qualitate), բայց՝ գործողություն կամ կրում (actio vel pas-

<sup>1</sup> Հմտ. О. В. Трахтенберг, Очерки по истории западноевропейской средневековой философии, М., 1957, էջ 181:

sio), դերբայը՝ գործող կամ կրող (agens vel patiens), դերանունը՝ սուբստանց՝ առանց որակի (substantia sine qualitate), մակբայը՝ գործողության կամ կրման որակ (qualitas actionis vel passionis), նախդիրը՝ իրերի պարագաներ (circumstantiae rerum), շաղկապը՝ իրերի կապ կամ բաժանում (coniunctio vel disunctio)։ միջարկությունը Հելիեն խոսքի մաս չի համարում և հանում է դրանց թվից։ Ըստ հետագա հեղինակներից մեկի՝ Սիգեր Կուրտրեացու՝ անունը նշանակում է սուբստանցները, մշտական վիճակները և էությունները, բայը՝ փոփոխությունը, դառնալը, շարժումը կամ գոյությունը։ դերանունը՝ սուբստանցը՝ առանց այլ հատկությունների հետ հարաբերելու։ Նշելի է, որ հալեցողական քերականության ներկայացուցիչները այս առումով դժվարության էին հանդիպում անփոփոխ խոսքի մասերի սահմանման հարցում և կամ դրանք հանում էին փիլիսոփայական քննարկումից, կամ բավարարվում տրադիցիոն քերականության սահմանումներով։

Արհեստական լեզվի հարցը. — Աբբայուհի Հիլգորդիսը խաշակրաց արշավանքների շրջանում, նպատակ ունենալով ուժեղացնել ժողովրդի կրոնական խանդավառությունը, մշակում է յուրատեսակ արհեստական լեզու՝ ignota lingua: Այս փորձը նախորդում է փիլիսոփայական լեզվի ստեղծման XVII—XVIII դդ. փորձերին, այլև XIX—XX դդ. արհեստական լեզուներին՝ վոլապյուկին, էսպերանտոյին և այլն։

### 3. ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ-ԲՆԱԳԱՏՄԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դանթեի լեզվաբանական գործունեությունը. — Առանձնապես կարևոր է նշել իտալական մեծ բանաստեղծ Դանթեի (1265—1321) լեզվաբանական գործունեությունը։ Վերածննդի այս նախակարապետը եղել է ոչ միայն իտալական գրական լեզվի հիմնադիրը, այլև իտալական խոսակցական լեզվի առաջին հետազոտողը։ XIV դ. սկզբներին նա գրում է «Ժողովրդական ճարտարախոսության մասին» («De vulgari eloquentia») անավարտ աշխատությունը<sup>1</sup>, որտեղ հանդես է գալիս իր մայրենի խոսակցական-ժողովրդական լեզվի պաշտպանությամբ։ Նա դատապարտում է այն արհամարհանքը, որ տածում են լատիներենի ջատագովները։

<sup>1</sup> Ռուս. թարգմ. Данте, De vulgari eloquentia (О народной речи), пер. В. Б. Шкловский, Пг., 1922:



րը ժողովրդական (volgare) լեզվի հանդեպ: Այս աշխատության մեջ Դանթեին զբաղեցնում են լեզվաբանական զանազան տեսական ու գործնական պրոբլեմներ՝ լեզվի բնույթի, զարգացման ու փոփոխության պատճառների, նոր գրական լեզվի, իտալական րարբառների, իտալերենի ծագման, իտալերենի և մյուս ռոմանական լեզուների փոխհարաբերության և այլն: Այս պրոբլեմներից մի քանիսին նրա տված լուծումները, շնայած ապացուցման հաճախ դեռևս միջնադարյան եղանակներին, ոչ միայն վկայում են Դանթեի նորը դիտողականության մասին, այլև շատ քանով իրենց ճշմարտացիությունը պահպանում են մինչև այժմ: Դանթեն առաջին անգամ ցույց է տալիս իտալերեն, իսպաներեն և ֆրանսերեն լեզուների ծագումաբանական ընդհանրությունը՝ նրանց տարբերակման հիմքում դնելով հաստատական մասնիկի տարբերությունը: Հենվելով սեփական դիտողությունների վրա՝ Դանթեն հաստատում է իտալական 14 բարբառ. ինչպես նշում են հետազոտողները, այս բաժանումն ընդհանրապես ճիշտ է, թեև չի հենվում լեզվաբանական շափանիշների վրա<sup>1</sup>: Բարբառների քրնոլոգյունը Դանթեին բերում է այն եզրակացության, որ դրանցից ոչ մեկը չի կարող գրական լեզվի (volgare illustre) հավակնորդ լինել, որովհետև ամեն մեկն ունի իր արժանիքներն ու թերությունները: Այդպիսի լեզու կարող է լինել «պալատական», իտալական բոլոր քաղաքներում գործածվող լեզուն: Սակայն այդ լեզուն նույնացնելով Ֆլորենցիայում զարգացող «նոր քաղցր ոճի» գրականության լեզվի հետ, որից օգտվում էր և ինքը, Դանթեն փոստորեն կանգնում է Տոսկանի բարբառին առաջնություն տալու տեսակետի վրա<sup>2</sup>: Ինչպես ցույց են տվել հետազոտողները, Դանթեի «Աստվածային կատակերգության» լեզուն ակնհայտորեն ֆլորենտինյան բնույթ ունի<sup>3</sup>:

Նշելով, որ բոլոր կենդանի արարածներից լեզվով օժտված է միայն մարդը՝ Դանթեն լեզվին երկակի բնություն է հատկացնում՝ նյութական (հնչյունական) և բանական (մարդու կամքով այս կամ այն բանը նշանակող): Դանթեն հանգում է լեզվի՝ ժամանակի ու տարածության մեջ փոփոխական լինելու գաղափարին և այդ փոփոխականությունը կապում է մարդու անկայուն ու փոփոխական

<sup>1</sup> Հմմտ. Проф. М. В. Сергиевский, Введение в романское языкознание, М., 1952, էջ 246:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 174:

<sup>3</sup> Նույն տեղը:

լուծյան հետ: Նկատի ունենալով իր ժամանակի լեզվական մի-  
 ճակը և աշխատելով դրա հիման վրա տեսական ընդհանրացում-  
 ներ կատարել՝ Դանթեն տարբերում է երկու տեսակ լեզու՝ ժողո-  
 քըրդական (volgare) և քերականական (իմա՝ լատիներենը):  
 Դանթեն հանդես է դալիս ի պաշտպանություն ժողովրդական  
 լեզվի: Այդ լեզուն, ըստ Դանթեի, նախ՝ ավելի ազնիվ է, որով-  
 հետև մարդկության նախնական լեզուն է, երկրորդ՝ ավելի ընդ-  
 հանուր է, որովհետև ողջ աշխարհը այդ լեզուն է գործածում՝  
 չնայած արտասանական ու բառային տարբերություններին, և եր-  
 րորդ՝ բնական լեզու է, մինչդեռ քերականականը արհեստական է:  
 Դանթեն այստեղ, դեռ միջնադարյան ոգով, մարդկության սկզբբ-  
 նական լեզուն աստծուց տված եբրայերենն է համարում. սակայն  
 «Աստվածային կատակերգության» մեջ («Դրախտ», երգ 26-րդ,  
 Ադամի խոսքերը) նա լեզուն դիտում է իբրև բնատուր երևույթ  
 և այլևս չի խոսում եբրայերենի՝ մարդկության հնադույն լեզու լի-  
 նելու մասին, այլ նրան նախորդել է տալիս Ադամի լեզուն: Իր  
 լեզվաբանական աշխատության մեջ Դանթեն հայտնում է այն  
 միտքը, որ լեզուների տարածումը կատարվել է Արևելքից դեպի  
 Եվրոպա (ընդունում է բաբելոնյան աշտարակաշինության առաս-  
 պելի ճշմարտացիությունը):

Դանթեի աշխատությունը կարևոր էր և այն տեսակետից, որ  
 նա, ի տարբերություն միջնադարյան հայեցողական քերականու-  
 թյան ներկայացուցիչների, ուշադրության կենտրոնում պահում էր  
 լեզվական տարբերությունները:

Ռոջեր Բեկոն.— Միջնադարի հայտնի մտածող, միջնադարյան  
 փիլիսոփայության բնաստամական ուղղության ներկայացուցիչ  
 Ռոջեր Բեկոնը (1214—1294) նշանավորում է անցումը միջնադար-  
 յան մտածողությունից դեպի նոր ժամանակների փիլիսոփայա-  
 կան միտքը: Նա գրել է հունարենի քերականություն և ձեռնարկել  
 եբրայերենի քերականության, որով մինչ այդ միայն հրեաներն  
 էին զբաղվում. առաջին գործն ուղղված է Արիստոտելի՝ հունարեն  
 շիմացող մեկնաբանների, երկրորդը՝ եբրայերեն շիմացող աստ-  
 վածաբանների դեմ: Իր հունարենի քերականության մեջ Բեկոնը  
 տալիս է բարբառի բավականաչափ ճշգրիտ սահմանում և տար-  
 բերում «սուբստանց» լեզու ու բարբառներ: Սակայն Եվրոպայում  
 նա բարբառներ է համարում լատիներենից՝ որպես գրական լեզ-  
 վից օգտվող ժողովուրդների խոսակցական լեզուները՝ իտալերե-  
 նը, իսպաներենը, ֆրանսերենը, գերմաներենը, անգլերենը. լատի-

ներենը համարվում է սրանց «սուբստանցը»՝ բոլոր բարբառների միջև ընդհանուրը, ինչպես հունական բարբառների համար «սուբստանց» է եղել կոյնեն:

## II. ՀՈՒՆԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

### 1. ՀՈՒՆԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քերականություն և ճարտասանություն.— Հելլենիստական շրջանի Հունաստանի տրադիցիաների անմիջական ժառանգը եղավ Բյուզանդիան, որտեղ հելլենիստական կուլտուրան շարունակում էր գոյություն ունենալ ձևափոխված կերպարանքով և այն շափով, որ շափով այդ պահանջում էին բյուզանդական քրիստոնեական եկեղեցու շահերը:

Բյուզանդական կրթության մեջ ևս կարևոր տեղ էին բռնում ճարտասանությունը և քերականությունը. գրվում էին քերականական մեկնություններ, ստուգաբանական ու բառարանագրական աշխատանքներ: Ճարտասանության մեջ իշխող էր ասիականությունը, և միայն շատ ուշ (XI—XII դդ.) երևան են դալիս ստտիկականության տենդենցներ: Պատրիարք Յոտտիոսի (IX դ.) ժամանակներից սկսած՝ Բյուզանդիայում լայն ծավալ է ստանում բանասիրական աշխատանքը. կատարվում են տեքստերի մեկնություններ, հավելումներ, ձեռագրերի մեջ մտցվում են տրոհման և առոգանության նշաններ:

Բյուզանդական դպրոցներում մինչև XIII դ. որպես քերականության դասագիրք ծառայում էին Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը» և Թեոդոսիոսի «Ներածական կանոնների անունների և բայերի թեթման շուրջը» (Ἐπιστολὴ αὐτοῦ καὶ κανόνες περὶ κλίσεως ὀνομάτων καὶ ῥημάτων) աշխատությունը. Թրակացու երկը դասավանդվում էր մեկնություններով հանդերձ. գոյություն ունեին նաև զանազան քերականական կոմպիլյացիաներ: Թրակացու հունա-բյուզանդական մեկնիչներից հայտնի են Մեղամպոդեսը, Դիոմեդեսը, Գեորգոս Խոյրոբոսկոսը (VI դ.), Հելիոգորոսը, Ստեփանոսը (VI դ.), Պորփիրիոսը (ոչ նեոպլատոնիկ) և ուրիշները<sup>1</sup>: XIII դարից սկսած տարածվում են քերականական

<sup>1</sup> Սրանց մեկնությունները հրատարակված են չեխագրի կողմից „Scholia in Dionysii Thracis Artem grammaticam“ գրքում 1901 թ.՝ այդ մեկնություններից կազմված կոմպիլյացիաների հիման վրա:

կատեխիզիսները (հարց ու պատասխանի ձևով գրված քերական-նությունները): Ուշ շրջանի բյուզանդական քերականներից առանձնապես հայտնի է Մաքսիմա Պլանուդեսը (1260—1310), որ գրել է «Քերականության մասին» («Περὶ γραμματικῆς») և «Շարհյուսության մասին» («Περὶ συντάξεως») աշխատությունները:

Բյուզանդական շրջանի քերականության բերած նորություններից առանձնապես հիշատակելի է հոլովների տարածական սահմանման սկզբունքը, որ ձևակերպված է Մաքսիմոս Պլանուդեսի մոտ: Ըստ այդ սկզբունքի հոլովները արտահայտում են հիմնականում տարածական հարաբերություններ, այն է՝ ուղղություն. հայցականն արտահայտում է մերձեցում, սեռականը՝ հեռացում, տրականը՝ հանգիստ. վերջինս դիտվում է որպես նախորդ երկու հոլովների նշանակածի յուրառեսակ միջին կետը: Սրանով իսկ հոլովների ուսմունքի մեջ հունական նախորդ տրադիցիայից շեղում է կատարվում:

Բարբառագիտական աշխատություններ.—Այս շրջանում հանդես են գալիս բարբառագիտական որոշ աշխատություններ, որոնք մեծ մասամբ կոմպիլյատիվ բնույթի են կամ պարունակում են հին քերականական աշխատություններից կատարված բարբառագիտական քաղվածքներ: Սրանց մեջ հիշատակելի են Իոաննես Ֆիլոպոնոսի (VI դ.) աշխատությունը, որից մի քաղվածք է կատարված հեռագրում «Բարբառների մասին» վերնագրով, և Կորնթոսի միտրոպոլիտ Գրիգորիոսի (XII—XIII դդ.) «Բարբառների առանձնահատկությունների մասին» աշխատությունը: Բարբառների հընչյունական և քերականական տարբերությունները սրանց մեջ մեկնաբանվում են գրավոր վկայությունների հիման վրա, որպես «տառերի» տարբերություններ:

## 2. ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ լեզվաբանության սկզբնավորման նախադրյալները և պայմանները.—Հայ գրերի գյուտը IV դ. վերջերին դառնում է հայ բաղմադարյան գրականության սկիզբը: Լեզվի դպրոցական ուսուցումը, քրիստոնեական եկեղեցու առօրյա կարիքները (քարոզներ և ճարտասանական հմտությունների անհրաժեշտություն, հմուտ ընթերցանություն, եկեղեցական տաղաչափություն և այլն), տեքստերի վրա կատարվող բանասիրական աշխատանքը,—այս բոլորը պահանջ են ստեղծում քերականական և ճարտասանական

աշխատութիւնների առաջացման համար: Երևան են գալիս ինքնուրույն և թարգմանական լեզվաբանական աշխատանքներ՝ ճարտասանական ձեռնարկներ, քերականութիւններ, բառացանկեր, ուղղագրական, կետադրական աշխատութիւններ:

ՓՅՅԵԻ-ի և ՅՅՅԵԻ-ի վեհերի արտացոլումը.— Հայ գրականութեան առաջին իսկ նմուշների մեջ արտացոլում են գտել հունական փիլիսոփայական վեճերը փՅՅԵԻ և ՅՅՅԵԻ շուրջը: Հայ հեղինակները այս հարցում սովորաբար երկու կարծիքների ծայրահեղութիւնները մեղմող գիծ են տանում՝ նշելով, որ անուններն սկզբնապէս իրերին տրվել են նրանց բնութեանը համապատասխան, բայց հետագայում մնացել են սովորույթի ուժով:

Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» քարգմանութեանը և առաջին մեկնութիւնները.— Հայ քերականութիւնն ճարտասանութիւնն սկիզբ են առնում հունարենից կատարված թարգմանութիւններով: V դ. հայերենի է թարգմանվում Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը»՝ հարմարեցվելով հայերենին: Թարգմանիչն ավելացնում է Ե-րդ հոլովը (դործիականը), փոփոխութիւններ է կատարում հնչյունների դասակարգման մեջ՝ հանգելով միասնական ֆիզիոլոգիական դասակարգման սկզբունքին և այլն: Սակայն սրա հետ միասին նշվում են հայերենին իւրով քերականական կատեգորիաներ, և կերտվում արհեստական քերականական ձևեր:

Դիոնիսիոս Թրակացու քերականութեան թարգմանութիւնը հիմք է տալիս բաղմամբիվ մեկնութիւնների: Թրակացու վաղ մեկնիչներից հայտնի են Դավիթը, Մովսեսը, Ստեփանոսը և ուրիշները: Մեկնիչների մեծագույն մասը քննադատում է Դիոնիսիոսի էմպիրիզմը, հիմնական խոսքի մասերի սահմանման մեջ ելնում է իմաստաբանական-տրամաբանական հիմունքներից և այլն: Հայերի մոտ տարբերվում է հնչյունը «տառից» և գրից, ընդ որում «տառի» ըմբռնման մեջ կարելի է նկատել հնչույթի (ֆոնեմայի) հետագա ուսմունքի սաղմը:

Քերականական և ուղղագրական աշխատութիւնները XI—XV դդ.— XI—XV դդ. քերականական-լեզվական հարցերի նկատմամբ նոր հետաքրքրութիւն է սկսվում՝ կապված միջին գրական հայերենի զարգացման, կյանքի աշխարհականացման և գրականութեան, արվեստի ու գիտութեան ծաղկման հետ: XI դ. հեղինակ Գրիգոր Մագիստրոսը կազմում է քերականական առաջին կամպիլյացիան և մշակում փոխառութիւնների տեսութիւնը: XII—

XIII դդ. երևան են գալիս Արիստակեսի և Գևորգ Սկևռացու ուղղագրական-կետադրական աշխատությունները: XIII դ. հեղինակ Վարդան Արևելցին իր քերականական աշխատությունները գրում է միջին հայերենով, տեղ տալիս կենդանի խոսակցական լեզվի փաստերին, արտահայտվում հանուն այդ լեզվի իրավունքների, հանդես գալիս որպես լեզուների հավասարության ջատագով, հայտնում նոմինալիստների կարծիքը հիշեցնող մի տեսակետ, փորձ անում նեղացնելու ֆիլոլոգիական քերականության սահմանները՝ սահմանափակելով այն խոսքի մասերի ուսմունքով: Հովհաննես Երզնկացին XIII դ. վերջերին կազմում է քերականական նոր կոմպիլյացիա, որի մեջ տեղ է տալիս միջին հայերենի խոնարհման փաստերին:

XIV—XV դդ. երևան են գալիս քերականական նաև այլ աշխատություններ, քերականական կատեխիզիսներ և քերականական վերլուծությունը նվիրված հատվածներ: Կազմվում են մի շարք ժողովուրդների այբուբենների հավաքածուներ, որոնցից մեկում հայտնաբերվեց աղվանների այբուբենը<sup>1</sup>: XIII դ. սլաոմիչ Կիրակոս Գանձակեցին գրի է առնում մոնղոլական բառեր. սա մոնղոլական լեզուների դրավոր առաջին հիշատակությունն է և կարևոր արժեք ունի մոնղոլագիտության համար:

Լեզուների բազմազանության հարցի մեկնաբանությունը.— Ընդունելով լեզուների բազմազանության առաջացման աստվածաշնչային տեսակետը, միջնադարյան հեղինակները տարբեր ձևով էին գնահատում այդ փաստը: Դոգմատիկ մոտեցման կողմնակիցները այն գնահատում էին որպես աստվածային պատիժ: Համեմատաբար ավելի ազատախոհ մարդիկ, ընդհակառակը, այդ բազմազանությունը դրական գնահատական էին տալիս: Այսպես XIII դ. հայ գիտնական Վարդան Արևելցին այդ բանը «շատ ինչ բարի էր» համարում՝ լեզուների բազմազանությունը գիտելով որպես գույների մի գեղեցիկ ներդաշնակություն, որի մեջ ամեն լեզու իր տեղն ունի և լրացնում է մյուսին<sup>2</sup>: Նույն այդ Վարդան Արևելցին թողել է լեզուների արտաքին հատկությունների դիպուկ նկարագիրը իր «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ: Համեմատելով առաջացած լեզուները նախնականի հետ, նա գրում

<sup>1</sup> Հմտ. Проф. А. Шанидзе, Новоткрытый алфавит Кавказских албанцев и его значение, Тбилиси, 1938:

<sup>2</sup> Հմտ. Գ. Զահեղյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, 1934, էջ 250:

էր. «...ի խոշոր լեզուէն առաջնոյ և ի կոպտաձև փափկագոյն հելլենացւոց և սաստկագոյն հռոմայեցւոց, հոնն սպառնական և ասորին աղաշական, պարսիկն պերճական և ալանն գեղեցկաձև, գուլթն ծաղրական, եգիպտացիին խարափառական և հնդիկն ճճուող, և հայն ևս ամենազարդ և համեղական. և որպէս ազգի ազգի գոյնք գեղեցկութիւն անոնն և զանազանութիւնք հասակաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք»<sup>1</sup>:

### 3. ԱՍՈՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասորական լեզուն և գրականութիւնը.— Ասորիքը գտնվում էր Արևմտյան Միջագետքում: Ասորերեն ասելով սովորաբար հասկանում են Եգեոսիա քաղաքի և նրա շրջապատի բարբառի վրա հիմնված լեզուն, որ պատկանում է սեմական լեզվախմբի հյուսիսային խմբին՝ կազմելով արամեական լեզուների կենտրոնական հատվածը: Ասորալեզու գրականութիւնն սկսվել է բավական վաղ, բայց առանձնապէս լայն ծավալ է ստացել քրիստոնեութեան մուտքից հետո (II դ.): Ասորական գրականութեան ծաղկման շրջանն ընկնում է III—VII դդ.: Արաբական տիրապետութեան սկզբնական շրջանում, մինչև IX դ. վերջը ասորական գրականութիւնը դեռ շարունակում է ինքնուրույն գոյութիւն ունենալ: Դրանից հետո արաբական գրական լեզուն սկսում է դուրս մղել ասորերենը. այն դառնում է մեռած գրական լեզու՝ իր գոյութիւնը քարշ տալով դեռ մինչև XIII—XIV դդ.: XI դ. ասորի գիտնական Նիսիբիս Իլիա Բար-Շինայան (975—մոտ. 1050) որոշ տեքստեր գրում էր խոսակցական լեզվով՝ արաբերենով, որոշ տեքստեր էլ զուգահեռաբար և՛ արաբերենով, որ կենդանի խոսակցական լեզու էր, և՛ ասորերենով, որ մեռած գրական լեզու էր<sup>2</sup>:

Ասորիների կուլտուրական դերը արտահայտվեց նաև այն բանով, որ նրանք արաբներին հաղորդակից դարձրին հունական կուլտուրային, այդ թվում՝ և նրանց որոշ լեզվաբանական նվաճումներին: Արաբական լեզվաբանութեան ծագման ու դարգացման վաղ շրջանը զգալի շահով կապված է ասորական ազդեցութեան հետ:

<sup>1</sup> Մեծի Վարդանայ Բարձրերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, 1862, էջ 18:

<sup>2</sup> Հմմտ. А. Крымский, Семитские языки и народы, II, М., 1910, էջ 165—212:

Ասորական ֆեռականության սկզբնավորումը.— V—VI դդ. ասորիների մոտ արդեն պահանջ է զգացվում բանասիրական-լեզվաբանական աշխատանքի: V դ. վերջերին Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը» թարգմանվում է ասորերենի: VI դ. Իոսիֆ Հուզայան (Խուզիստանցին), որ համարվում է ասորական առաջին քերականը, կազմում է քերականական ձեռնարկ արևելյան ասորիների համար, որոնց բարբառը տալիքներում էր Եդեսիայի բարբառից: Ունի և մի այլ աշխատություն՝ համահունչ և տարիմաստ բառերի մասին: Համարվում է որոշ կետադրական նշանների գյուտարարը:

Ասորական ֆեռականություններն ու բառաբանները VII—XI դդ.—Ասորական լեզվաբանության բուն զարգացումն սկսվում է առանձնապես VII դարից, երբ նախ՝ դրական ու խոսակցական լեզվի ուժեղացող տարբերակումը և ասորիների արաբացման պրոցեսը անհրաժեշտ են դարձնում գրական լեզվի քերականական ձեռնարկների կազմումը, ձայնավորների հստակ նշանակումն ու կետադրական-ուղղագրական հարցերի մշակումը, երկրորդ՝ ասորիների թարգմանչական գործունեության ծավալումը անհրաժեշտ է դարձնում տեքստերի բանասիրական մշակումն ու ճշտումը:

VII դ. հեղինակ Անան Իշոն այդ դարի կեսերին գրում է վերժանության, ուղիղ ընթիրցանության և դժվար բառերի արտասանության մասին մի գիրք: Նա զբաղվում է նաև տարբեր հնչում և իմաստ ունեցող համազիր բառերի հարցով:

VIII դ. միաբնակ-յակոբիտներից Յակոբ Եդեսացին գրում է քերականական-ուղղագրական աշխատություններ, զբաղվում է ձայնավորների նշանակման հարցով. հետագայում նրա հետևորդները այդ նպատակով օգտագործում են ձայնավորների հունական նշանակումները՝ դրանք համարեցնելով հղիսական արտասանությանը: Նույն այդ դարում նեստորյանները արևելա-արամեական ձայնավորների արտասանության համար մտցնում են տողատակային և տողավիթակային կետեր:

IX դ. հեղինակ Հոնիյն Իբն Իսհակը, օգտվելով Անան Իշոյից, կազմում է բառարան, որտեղ հատուկ ուշադրություն է դարձնում

<sup>1</sup> *Ըստ* Christ-ի, *Geschichte der griechischen Litteratur*, 6-te Aufl., II, էջ 420; Վ. Ռայտը, *Краткий очерк сирійскої літературы*, 1902, էջ 64, թարգմանությունը համարում է VI դ. հեղինակ Սերգիի գործը, բայց Մերքսը, *Historia artis grammaticae apud syros*, էջ 7, գտնում է, որ այն Սերգիին չի թարգմանել:



հունական բառերի բացատրությունը, և գրում է «Տարբերիչ նշանների գիրքը»: Հոնեյնը ասորիներից առաջինն է, որ քննության և ենթարկել շարահյուսական հարցեր, խոսել նախադասությունների պայմանական կապակցության մասին: Հոնեյնի սկսած բառարանագրական աշխատանքը շարունակում են Արու-Յահյա Իսա Մերվացին (IX դ. վերջ), Հոնեյնի աշակերտ Իսա բար-Ալին, Հենան Իշո բար-Սարոշվայը (մինչև 922 թ.): Ասորական այս բառարանագրական աշխատանքի յուրատեսակ ամփոփումը տալիս է Հասան բար-Բահլուլը (X դ.):

Արաբերենի աճող ազդեցությունն ստիպում է կալմել արաբերեն-ասորերեն բառարան. այդ գործը կատարում է XI դ. հեղինակ Իլիա բար-Շինայան:

Ասորական քերականությունները կալմվում են մեծ մասամբ հունական օրինակով: Վերևում հիշատակված բար-Շինայան այդպիսի քերականության վերջին հեղինակներից է:

Արաբական ֆեռականական սխտեմը ասորերենի նկատմամբ կիրառելու փորձերը.—XI—XIII դդ. փորձեր են արվում արարական քերականության օրինակով ասորական քերականություններ ստեղծելու ուղղությամբ: Այդպիսի առաջին չհաջողված (լավ չստեղծավորված) փորձը XI դ. կատարում է կաթողիկոս Իլիա Թիրհանցին, որ դեռևս հետևողական չէ արաբական քերականական սխտեմի կիրառման մեջ: Հետագայում ավելի հաջողված փորձ է կատարում Գրիգոր Արու-Յարաջ բար-Հեբեյը (XIII դ.), սրն իր քերականությունները (մեկ ընդարձակ և երկու համառոտ) կալմում է XII դ. արաբական քերական Ջամահշուրիի օրինակով: Օգտվել է և նախորդ ասորի քերականներից, հասկապես Յակոբ Եղեմացու՝ կորած քերականությունից: Արել է բաղմամբով բարբառագիտական դիտողություններ:

#### 4. ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խրաբր Չեռնոդեցը և նրա «Խոսք սլավոնական գրերի մասին» աշխատությունը.—Սլավոնական ժողովուրդների այս շարքանի լեզվաբանական աշխատանքի առաջին նմուշը բուլղար Խրաբր Չեռնոդեցի (Սևասթեմի, X դ.) «Խոսք սլավոնական գրերի մասին» աշխատությունն է: Այստեղ հեղինակը տալիս է սլավոնական գրերի սկզբնական հատկությունների և դյուտի նկարագիրը՝ վկայելով նախքան դլապոլիցյան և կիրիլիցյան՝ ինչ-որ այլ

գրասխտեմի հետքերի մասին: Միաժամանակ նա վիճում է Հռոմի կաթոլիկ քարոզիչների դեմ՝ սլաշտպանելով սլավոնների՝ իրենց լեզվով աստվածաշունչ ունենալու իրավունքը:

Քերականական աշխատություններ.— Սլավոնական ժողովուրդների մոտ X—XIV դդ. երևան եկած քերականությունները ուշ շրջանի բյուզանդական քերականական աշխատությունների կոմպիլյատիվ թարգմանություններ էին՝ սլավոնական եկեղեցու պաշտոնական լեզվին՝ եկեղեցա-սլավոններենին կամ հին սլավոններենին հարմարեցված: Դրանցից առաջինը Բուլղարիայի էկզարխ Իոաննին (X դ.) վերագրվող «Ութ խոսքի մասերի մասին» («О восьми частях слова») աշխատությունն է<sup>1</sup>, որը հետագայում զգալի հեղինակություն է վայելել և մեզ է հասել XV—XVII դդ. արտագրություններով: Սերբ գիտնական Կոնստանտին քերականի աշխատություններից առնված «Համառոտակի հավաքած խոսքեր» («Словеса вкратце избранны») կոմպիլյատիվ աշխատանքը ևս զգալի տարածում է ունեցել. այն օգտագործվել է և Մոսկովյան Ռուսիայում: Լեզվաբանական դատողություններ կան հիշված Իոանն էկզարխի՝ Ի. Դամասկինոսի աստվածաբանության թարգմանության առաջաբանում:

Քառացանկեր.— Այս շրջանում երևան են գալիս նաև զանազան բառացանկեր, որտեղ բացատրվում են հին սլավոնական և օտարազգի անծանոթ բառերը: Այդպիսի մի բառացանկ կցված է «Новгородский кормчий»-ի ձեռագրին 1282 թ.: 1431 թ. հանդես է գալիս համատիպ մի այլ բառացանկ:

Ուղղագրական հարցեր.— 1440 թ. Յակոբ Պարկոշովիչը գրում է առաջին աշխատությունը լեհերենի հնչյունաբանական-ուղղագրական հարցերի մասին:

## III. ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

### 1. ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### Ա. Լեզվի ծագման տեսություններ

Լեզվի (արաբերեն լեզվի) ծագման հարցը.— Լեզվի ծագման հարցը արաբական գիտական միտքն զբաղեցնող կարևոր հարցե-

<sup>1</sup> Հատ Յագիչի՝ այս վերնագիրը նույնությամբ թարգմանված է բյուզանդական քերականության այն հոդվածների վերնագրից, որոնք վերագրվում են Թեոդոսին կամ Թեոդորոս Պրոդրոմոսին (XII դ.):

րից մեկն է եղել: Այս հարցի լուծման մեջ նկատվող ուղղութիւնները մոտավորապէս նույն բնույթն ունեն, ինչ հին Հունաստանում տարվող վեճերի մեջ հանդես եկող տարակարծութիւնները, միայն թե չպետք է մոռանալ, որ արաբական գիտական միտքը գործում էր մահմեդական կրօնի դոգմատիկայի պայմաններում, որը չէր կարող իր կնիքը չդնել հարցի լուծման վրա:

Արաբական գիտնականների այն մասը, որ հենվում էր ղուտանի (մահմեդականների սրբազան գրքի) անառարկելի հեղինակության վրա (առանձնապէս մութաքալիմները), չէր կասկածում լեզվի աստվածային ծագման մեջ: Այս ուղղութիւնը հարողները կարծում էին, որ լեզուն ներշնչված և մարդկանց հաղորդված է իրեն՝ աստծու կողմից: Նրանց համար հիմք էին ծառայում ղուտանի հետևյալ ասույթները. «Նա (աստված) սովորեցրեց Ադամին բոլոր անունները» (2-րդ սուրահ, 29). «Մենք շինք ուղարկել նրա լեզվով (խոսող) ոչ մի մարգարեի» (14-րդ սուրահ, 4). «Նրա (աստծու) նշաններից են երկնքի, երկրի ստեղծումը և ձեր լեզուների ու գույնի տարբերութիւնը» (30-րդ սուրահ, 21): Այս կարծիքը առանձնապէս լայն քննութեան է ենթարկում X դ. հեղինակ Իբն Ֆարիսը իր «Արաբերեն լեզվի իմացութիւնը» աշխատութեան մեջ՝ առարկելով լեզվի ծագման՝ փոխադարձ համաձայնութեան ու սահմանման արդյունք լինելու տեսակետի դեմ: Նա նշում է, որ հայտնի չէ որևէ դեպք, երբ արաբները համաձայնութեամբ որևէ բառ կամ արտահայտութիւն ստեղծած լինեն: Սակայն Իբն Ֆարիսը այն կարծիքին չէ, որ լեզուն հանդես է եկել մի ժամանակ, միանգամից, այլ գտնում է, որ այն աստծու կողմից Ադամին և հետագա մարգարեներին հաղորդվել է աստիճանաբար, մինչև Մուհամմեդը, որին աստված հաղորդել է այնպիսի լեզվական գիտելիքներ, որ նախորդներին չի հաղորդել:

Գիտնականների երկրորդ մասը (առավելապէս մութաքալիտները՝ ղուտանի բացարձակ ճշմարտականութիւնը չճանաչողները), որոնց դեմ պայքարում էր Իբն Ֆարիսը, պնդում էր, որ լեզուն ու թե ներշնչման կամ հաղորդման արդյունք է, այլ փոխադարձ սահմանման կամ համաձայնութեան: Այս տեսակետի մեջ կտրելի է տեսնել հունական *ἰδέσσει-ի* շարունակութիւնը. Սակայն այս տեսակետի կողմնակիցները, այնուամենայնիվ, համաձայնութիւնը կապում են իմաստուն անվանողիւնների հետ: Ըստ նրանց՝ երկու, երեք կամ ավելի իմաստուններ հավաքվելով մի տեղ՝ կարիք են դրացել իրենց հայտնի առարկաները, որոնք անմիջապէս առկա

չին, արտահայտելու բառերով. նրանք կարիք են զգացել արտահայտելու նաև այնպիսի գաղափարներ, որոնք անմիջաբար ղգայելի չեն. հետո իմաստունները մարդկանց սովորեցրել են այդ բառերը: Հետագայում համաձայնությունը տարածվել է և այլ լեզուների վրա՝ նույն առարկաներին տարբեր անվանումներ տալու ճանապարհով: Այս տեսակետի մասին հաղորդում է X դ. քերական Իբն Ջիննին՝ իր «Հասոկություններ» աշխատության մեջ:

Նույն Իբն Ջիննին հիշատակում է մի այլ տեսակետի մասին ևս, որը կարելի է որակել որպես բնածայնական տեսություն սաղմ: Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ բոլոր լեզուներն առաջացել են քամու աղմկին, կայծակի որոտին, ջրի խոխոջին, ձիու վրնջյունին և այլ լսելի ձայների նմանվելու միջոցով: Այս բացատրությունը հավանական համարելով հանդերձ՝ Իբն Ջիննին գտնում է, որ արաբերենի ուսումնասիրությունն իրեն այլ տեսակետի է բերել:

Վերջապես, արաբների մոտ ունկա են նաև տարբեր տեսակետների հաշտեցման տենդենցներ: Այսպես, X—XI դդ. իրավագետ Իբրահիմ ալ-Իսֆերաինին գտնում էր, որ աստված հաղորդել է մարդկանց այնքան, որքան անհրաժեշտ է եղի իրար հասկանալու համար, իսկ լեզվի մեջ գոյություն ունեցող մնացած բաները մարդիկ հաստատել են իրիսադարձ համաձայնությունով:

## **Բ. Դիզակտիկ-ֆիլոլոգիական լեզվաբանություն**

### **ա. Քերականություն**

Արաբական լեզվաբանությունը և նրա սկզբնավորման նախադրյալները.— Արաբական լեզվաբանությունը արաբական գիտակրթական սիստեմի մեջ կարևոր տեղ էր գրավում: Այդ լեզվաբանության սկզբնավորումը ևս սերտորեն կապված էր մի կողմից՝ հին տեքստերի, այն է՝ ղոռանի տեքստի, բանասիրական ուսումնասիրության, մեկնաբանության (ճշտելու և հասկանալի դարձնելու նպատակով) ու մշակման, մյուս կողմից՝ գրական լեզվի նորմավորման պահանջի հետ. գրական լեզուն, որ ժամանակի ընթացքում զգալիորեն տարբերվել էր խոսակցականից, հարկավոր էր զերծ պահել արաբական բարբառների և այլազգի մուսուլմանների ազդեցությունից: Սակայն, եթե հունական ու հնդկական լեզվաբանությունները անկախ զարգացման արդյունք էին, ապա արաբական

լեզվաբանությունը սկզբնավորվեց մասամբ հնդկական, մասամբ էլ հունական լեզվաբանության ազդեցության տակ. վերջինիս արարենիը նախապես հաղորդակից եղան ասորիների միջնորդությամբ: Անհրաժեշտ է նշել, որ արաբական գիտության զարգացման հարցում կարևոր դեր խաղացին նրանց կողմից նվաճված ժողովուրդներից հույները, պարսիկներն ու ասորիները, որոնք զարգացման ավելի բարձր աստիճանի վրա էին կանգնած: Այսուհանդերձ, արաբական քերականությունը զգալի ինքնուրույնություն ունի, մանավանդ որ արաբերենի կառուցվածքը արմատապես տարբերվում է սանսկրիտի և հին հունարենի կառուցվածքից:

Արաբական հանրագետները լեզվի ուսումնասիրությունը բաժանում էին 8 գլխավոր գիտության.

1) Ilmu-l-luḡah—բառագիտությունը.

2) Ilmu-ṣ-ṣarf կամ at-taṣrif—ձևաբանությունը և հնչյունաբանությունը.

3) Ilmu-n-naḥw—շարահյուսությունը.

4) Ilmu-l-ma‘āni—խոսքը մտքին համապատասխան կառուցելու գիտությունը.

5) Ilmu-l-beyān միտքը համեմատությունների (taḵbiḥ), փոխաբերությունների (istiāreh) և փոխանունությունների (kināyeh) միջոցով պարզ շարադրելու գիտությունը.

6) Ilmu-l-badī‘—ճարտասանական պատկերների օգտագործման գիտությունը.

7) Ilmu-l-‘arūd—տաղաչափությունը.

8) Ilmu-l-qawāfi—ոիթմիկան.

Այսպիսով, արաբական լեզվաբանությունը պարունակում էր լեզվաբանության բոլոր ճյուղերը՝ բառագիտությունն ու բառարանագրությունը, քերականությունն ու հնչյունաբանությունը, ոճաբանությունն ու ճարտասանությունը՝ պոետիկային վերաբերող տեղեկություններով հանդերձ: Թե որքան մեծ է եղել լեզվի նկատմամբ արաբների ունեցած հետաքրքրությունը, հրևում է այն փաստից, որ XV դ. վերջում ապրող Սուլուիթին՝ «Քերականների և բառարանագիրների դասախմբեր» սշխատության մեջ հաշվում է շուրջ 2500 գիտնական-լեզվաբանի:

Արաբական յուրատեսակ քերականական սիստեմն ընդգրկում էր վերոհիշյալ գիտություններից 2-րդը և 3-րդը՝ հնչյունաբանությունը, ձևաբանությունը և շարահյուսությունը:

Իրենք արաբները արաբական լեզվաբանության ծագումը կա-

պում են այլազգիների կողմից արաբերեն լեզվի օգտագործման առջև առնելու պահանջի հետ: Սակայն լեզվական գիտելիքների զարգացման նպաստող գլխավոր հանգամանքը դուռանի տեքստի ճիշտ մեկնաբանման և տարրնթերցումների առաջն առնելու պահանջն էր: VII դ. կեսին հրապարակվում է դուռանը: Հարկավոր էր դուռանի տեքստն օժտել անհրաժեշտ կետադրությամբ և նշանակել ձայնավորները, որով և զբաղվում են հետագա քերականները: Այս կապակցությամբ զարկ են ստանում լեզվի ուսումնասիրության հարցերը: Ձայնավորները առանձին նշանների միջոցով արտահայտելու սկզբունքը արդեն V դ. կիրառվում էր ասորիների կողմից: Արաբների այս ուղղությամբ կատարած աշխատանքը, անշուշտ, զերծ չէր ասորական օգնությունից:

Արաբական ֆեռականական սիստեմի առանձնահատկությունները.—Փանի որ արաբական քերականների կարծիքով բառի այս կամ այն փոփոխությունը պայմանավորված է խոսքի մեջ այդ բառի կատարած ֆունկցիայով, ուստի և նրանք նախ տալիս են շարահյուսական կանոնները, ապա անցնում բառերի փոփոխության նկարագրությանը:

Արաբական շարահյուսական հասկացությունների հիմքում դրված «խոսք» (kalām) և «նախադասություն» (jumleh) բառերն սկզբնապես համարյա նույնիմաստ էին. նրանք արտահայտում էին մոտավորապես հունական λόγος-ի (հին հայ. «բանի») առումները:

Հետագա քերականների մեծամասնությունը առաջին տերմինը կիրառում է ընդհանրապես նախադասությունը նշելու համար (լինի այն պարզ, թե բարդ), իսկ երկրորդը՝ միայն պարզ նախադասությունը նշելու համար (լինի այն բարդ նախադասության կազմում, թե ոչ):

Յուրաքանչյուր նախադասություն համարելով դատողության արտահայտություն՝ արաբ քերականները տարբերում են ենթակա (musnad ileyhi «ստորոգյալը վրան», «նեցուկ») և ստորոգյալ (musnad «ստորոգվող», «հենվող»). ենթակայի և ստորոգյալի միացումը դատողություն արտահայտելու համար նրանք կոչում են isnād («ստորոգում», «հենում»):

Ըստ ենթակայի և ստորոգյալի՝ նախադասության մեջ գրաված տեղի, արաբ քերականները տարբերում են նախադասությունների 3 տիպ՝ անվանական (երբ ենթական նախադասության սկզբում է), բայական (երբ բայն է նախադասության սկզբում) և

պարագայական (երբ պարագան է նախադասութեան սկզբում), նախադասութեան սկզբում դրվող ենթական կոչվում է *mubteda*, սկզբում շիբրփողը՝ *fa'il* «գործող». ստորոգյալը կոչվում է *xabar* «հարդորում» կամ *fi'l* «գործողութուն», «բայ»:

Ըստ արտահայտութեան բնույթի տարբերվում են 1) պատմողական նախադասութուններ (*jumleh xabariyyah*), որոնց մեջ ենթական մասին հաստատվում կամ բացատրվում է որևէ հատկանիշ և 2) րդձական (*jumleh insāiyyah*), որոնք արտահայտում են ցանկութուն, հրաման, հարց, արգելք և այլն:

Ըստ կազմի՝ նախադասութունները լինում են մեծ և փոքր. մեծ են համարվում այն անվանական նախադասութունները, որոնց ստորոգելիներն արտահայտված են ամբողջական նախադասությամբ:

Բացի գլխավոր անդամներից, արաբները տարբերում են 6 տեսակ շրջադասություններ՝ 1) խնդիրներ (*maf'ūl* «ներգործող»), 2) վիճակի պարագաներ (*hāl*), 3) տրոհումներ (*temyiz*), 4) բացառություններ (*istisna*), 5) հատկացուցիչներ (*mejrūr*) և 6) բացահայտիչներ (*tewābi'*).

Բառերի շարահյուսական հարաբերություններն արտահայտող ձևաբանական թեքումը արաբները նշանակում են *i'rab* բառով՝ այս անվամբ հասկանալով բառերի (և՛ անունների, և՛ բայերի) վերջին ձայնավորների փոփոխությունը: Սիբավեյդին այս բառը չի սահմանում, բայց բառավերջի ձայնավորների փոփոխությունը, որ կատարվում է խնդրառու բառերի պահանջով, կոչվում է *hurūfu-l-i'rab*, այն է՝ թեքման վերջավորություններ: Անունների և բայերի թեքման՝ միևնույն անունով կոչելը բացատրվում է հավանաբար 2 հանգամանքով. 1) արաբերենի կառուցվածքով, որը հոլովման և խոնարհման (եղանակային) տարբերությունները արտահայտում է բառավերջի միևնույն *u*, *a*, *i* ձայնավորներով. 2) Արիստոտելի ազդեցությամբ: Ինչպես նշել ենք, Արիստոտելը *πεῖσις* բառով նշանակում էր անունների և բայերի «ուղիղ» ձևերից կատարվող բոլոր փոփոխությունները: Արաբները տարբերում են 4 տեսակ թեքում՝ 1) *raf'* (բարձրացում)—*u* ձայնավորի առկայությունը, որ արտահայտում է ուղղական հոլովը և բայերի սահմանական անկատարը (ներկան), 2) *naṣb* (հարաբերում)—*a* ձայնավորի առկայությունը, որ արտահայտում է անունների հայցականը և բայերի ստորադասականը, 3) *ṣarr* (գրավում) կամ *xafd* (իջեցում)—*i* ձայնավորի առկայությունը, որ արտահայ-

տում է անունների սեռականը և 4) յաշու (հատում) — ձայնավորի բացակայությունը (զրո վերջավորությունը), որ արտահայտում է բայերի հարկադրական անկատարը (ներկան):

Ընդհանուր առմամբ արաբները մեծ նվաճումների են հասնում բառի ձևաբանական կազմի ուսումնասիրության բնագավառում, որով հետագայում զգալի չափով ազդում են եվրոպական լեզվաբանության վրա՝ ընդհուպ մինչև Բոսլայի աշխատությունները. նրանք տարբերում են արմատը (տարբերենում այն հիմնականում եռաբաղաձայն է), հստակ կերպով սլատկերացնում են մասնիկավորման և ներքին թեքման երևույթները:

Կապակցված խոսքի մեջ բառերի կրած հնչյունական փոփոխությունները արաբները բացատրում են արտասանության հեշտացման ձգտմամբ:

Հնչյունաբանության բնագավառում արաբների ունեցած նվաճումները զգալի չափով գերազանցում են անտիկ լեզվաբանության՝ այդ բնագավառում ունեցած նվաճումները, մոտենալով հնդկական լեզվաբանության նվաճումներին: Արաբները հստակ կերպով տարբերում են հնչյունն ու տառը, հնչյունների դասակարգումը կատարում են ֆիզիոլոգիական-ակուստիկական հիմունքով. այսպես, նրանք տարբերում են ձայնեղ և խուլ, բաց և փակ, լարված և չլարված հնչյուններ, որոշում են հնչյունների արտաբերման տեղը, լեզվի բարձրության աստիճանը և այլն: Արաբները մեծ ուշադրություն են հատկացնում կապակցության մեջ հնչյունների կրած փոփոխություններին (փոխազդեցական հնչյունափոխությանը), խոսում լեզվի հնչյունական կառուցվածքի վրա անալոգիայի ունեցած աղբյուրության մասին և այլն:

Արաբ գերականները մինչև Սիբավեյդու հաճեցե գալը. — Մինչև VIII դ. երկրորդ կեսը, երբ հանդես է գալիս արաբերենի քերականության առաջին հանգամանալից և լայն տարածում գտած քերականության հեզիսակ Սիբավեյդին, հայտնի են նաև այլ քերականների անուններ, սակայն դրանցից կամ որևէ աշխատություն չի հասել, կամ հասել են քերականության հետ կողմնակի կերպով առնչվող, այլև քերականության այս կամ այն մասնակի հարցին նվիրված աշխատություններ: Արաբական հեզիսակները այդ քերականներից Աբու-լ-Ասվադին համարում են արաբական քերականության տոաջին սահմանողը. նա գրել է դատողություններ գործող անձի և օբյեկտի (խնդրի), զարմացական բայերի մասին և այլն: Ոմանք նույնիսկ հալիֆ Ալուն (656—661)



են վերագրում խոսքի մասերի այն եռամասնյա բաժանումը (անուն, բայ և մասնիկ), որ հետագայում ամուր հիմքեր է գցում արաբական քերականության մեջ: Մինչև Սեբավեյդին նշվում են նաև Սաղաֆիի (Աբու Ամր Իուս բ. Ումար աս-Սաղաֆի) և Խալիլ ալ-Ֆարադիդիի (Աբու Աբդու-ռ-Ռահման ալ-Խալիլ բ. Ահմադ բ. Ամր բ. Քամիմ ալ-Ազդի ալ-Ֆարադիդի ալ-Յահմադի ալ-Բասրի) անունները. սրանցից առաջինը գրել է «Ժողովածու» կոչված քերականական սիստեմատիկ երկը, երկրորդը հայտնի է որպես «Խնդրառու բառերի գրքի» և տաղաչափությանը նվիրված գործերի հեղինակ: Ոմանք նշում են, որ Սիբավեյդին յուրացրել է Սաղաֆիի գիրքը՝ լրացնելով իր ուսուցիչ Խալիլի դիտողություններով և ներկայացրել որպես ինքնուրույն աշխատություն (Սաղաֆին եղել է և՛ Խալիլի, և՛ Սիբավեյդու ուսուցիչը)<sup>1</sup>:

Բասրայի և Կուֆայի դպրոցները. — VIII դ. արաբական քերականության մեջ հետազոտողները նշում են երկու դպրոց՝ Բասրայի և Կուֆայի: Սրանցից առաջինը քերականական կանոնների սահմանման հարցում հենվում էր դասական հեղինակների լեզվի վրա և ավելի խստապահանջ էր քերականական կանոնների պահպանման հարցում: Կուֆայի դպրոցի ներկայացուցիչները մեծ ուշադրություն էին հատկացնում խոսակցական լեզվին և դասական լեզվից կատարվող շեղումներին ու բացառություններին: Այս պատճառով էլ Բասրայի դպրոցը հետագայում ավելի մեծ հեղինակություն էր վայելում:

Այս երկու դպրոցների որոշ տարաձայնությունները շարունակվում էին և հետագա դարերում, որ հիմք է տալիս IX դ. քերական Աբու-լ-Աբբաս Ահմադ Սալարային և հետագա քերականներին՝ այս տարաձայնություններին հատուկ աշխատություններ նվիրելու: Սակայն արդեն IX դարից սկսած՝ շատ քերականների մոտ տենդենց է նկատվում մեղմացնելու երկու դպրոցների ծայրահեղությունները՝ նրանցից առնելով այն բոլորը, ինչ անհրաժեշտ էր թվում իրենց:

Բասրայի քերականներից հայտնի են Սիբավեյդին, Աբու-լ-Հասան ալ-Անֆաշ Միջնակը, Աբու-լ-Ուման Բեքր ալ-Մադիհին, Աբու Ումար Սալիհ ալ-Ջարմին և ուրիշները:

Կուֆայի դպրոցի հիմնադիր է համարվում առ-Ռուսին

<sup>1</sup> Հմմտ. Гиргас, Очерк грамматической системы арабов, СПб, 1879, էջ 8, В. А. Звегинцев, История арабского языкознания, М., 1958, էջ 43:

(«Մեծագլուխը»—Աբու Ջաֆար Մուհամմեդ բ. ալ-Հասան բ. Աբու-Սառա), որի աշակերտներից են ալ-Կիսաին (Աբու-լ-Հասան Ալի բ. Համզա բ. Աբդուլլահ բ. Օսման բ. Ֆեյրուզ) և ալ-Ֆեռան («Հըղ-կիշը»—Աբու Ջաբարիա Յահյա բ. Ջիսդ բ. Աբդուլլահ բ. Մենզուր ադ-Դալլամի): Վերջինս իր ուսուցչի մահից հետո դառնում է Կուֆայի դպրոցի գլուխը (մեռել է 822 թ.): Թե որքան մեծ ուշադրություն էին դարձնում Կուֆայի դպրոցի ներկայացուցիչները կենդանի խոսակցական լեզվին, երևում է այն փաստից, որ ալ-Կիսաին երկար ժամանակ ապրել է քոչվոր արաբների (բեդուինների) մոտ, նրանց լեզուն ուսումնասիրելու նպատակով:

Կուֆայի դպրոցի ներկայացուցիչների աշխատություններից հայտնի են Ֆեռայի «Հոգվածները» (al-hudud), «Հոգվածների» հեղինակը զգալի շափով ենթարկվել է Միբավելյու ազդեցությանը: Աշխատությունը պարունակել է 45 հոդված, որոնք մեզ չեն հասել և որոնց մեջ քննվել են հիմնականում i'ral-ի (ձևաբանություն) և հնչյունաբանության) հարցերը:

Բասրայի և Կուֆայի դպրոցների տարաձայնությունները արտահայտվել են ոչ միայն տարբեր սկզբունքների կիրառությունից ստացված տարբեր արդյունքների, այլև առանձին քերականական հարցերի մեկնաբանության մեջ: Այսպես, բառերը բաժանելով նախատիպերի և ածանցյալների, նրանք տարբեր կերպ են մոտենում այն հարցին, թե ո՞ր ձևերը պետք է համարվեն նախատիպ. բասրացիները նախատիպ ձևեր են համարում գործողության սնունդները (մասդարը)՝ նշելով, որ դրանք բացի գործողության և վիճակի գաղափարից, քերականական այլ գաղափարներ չեն արտահայտում. կուֆացիները, ուշադրություն դարձնելով այն հանդամանքի վրա, որ մասդարները ենթարկվում են արմատական «տառերի» փոփոխության, այդպիսի հիմնական (նախատիպ) ձև են համարում բայի կատարյալ կերպի (ունցյալ կատարյալ ժամանակի) արական սեռի 3-րդ դեմքը՝ այլ կերպ ասած՝ բասրացիները մոտենում են հարցին իմաստային առումով, կուֆացիները՝ ձևական: Բասրացի քերականների կարծիքով՝ նախադաս ենթական դրվում է ուղղական հոլովով, որպես նախադասության սկզբում դրվող բառ, սրովհետև նախորդող խնդրառու շունենալն այդպիսի տրամաբանական պահանջ է ստեղծում, իսկ նրա որոշիչը դրվում է ուղղականով այդ նախադաս ենթականի պահանջ:

ջով. կուֆացիները գտնում են, որ նախադաս ենթակայի և նրա որոշչի ուղղական հոլովը փոխադարձ պահանջով է:

IX դ. այս երկու քերականական դպրոցների միավորման հիման վրա առաջանում է Բաղդադի քերականական դպրոցը, որի վաղ ներկայացուցիչներից է հայտնի ոճաբան և գրականագետ Իբն Քոթեյբան (մեռ. 883 թ.):

Սիբավեյդին և նրա ֆերականական գործունեությունը.— Բասրայի քերականության ամենից ավելի աչքի ընկնող ներկայացուցիչը Սիբավեյդին է:

Սիբավեյդու աշխատությունը հայտնի է «Գրքեր» անվամբ և բաղկացած է 568 գլխից: Սիբավեյդին իր տված կանոնների համար օրինակներ է ընտրում ղուռանից: Կանոնները շարադրելիս նա վկայակոչում է նաև նախորդ քերականների կարծիքները: Այն հանգամանքը, որ ի տարբերություն Սիբավեյդու՝ նախորդ քերականները կանոնները տալիս էին առանց հետևողական սխտեմի, յձուական դեր է խաղում Սիբավեյդու աշխատության համար լայն հեղինակություն նվաճելու գործում: Հետագա քերականները բավարարվում են Սիբավեյդու ստեղծած սխտեմի մասնակի փոփոխությամբ, առանձին հարցերի ճշտմամբ և մանրամասնումով: Սիբավեյդու կիրառած քերականական տերմինաբանությունը դառնում է տիրապետող: Սիբավեյդու աշխատությունը մեկնաբանություններով հանդերձ հասցվում է 30 հատորի:

Սիբավեյդին քերականության՝ արաբական հանրագետների կողմից նշված 2 բաժինները՝ taṣrif-ը (ձևաբանությունն ու հընչյունաբանությունը) և naḥw-ը (շարահյուսությունը) դեռևս հստակ կերպով չի տարբերակում: Սակայն նրա մոտ արդեն առկա է taṣrif-ի սահմանումը... «Taṣrif-ն այն է,—գրում է նա,—որ դու յուրաքանչյուր բառից կազմես արաբների կողմից չկազմված ձևը՝ բառերի արդեն կազմված ձևերին համապատասխան. ապա քո կազմած ձևի նկատմամբ կիրառես այն, ինչ պահանջում է արաբական խոսքի անալոգիան»<sup>1</sup>: Սիբավեյդին քերականության բաժինները քննարկում է առանց միմյանցից անջատելու, հետևողաբար սխտեմավորելով մատուցած նյութը:

Սիբավեյդու գրքի 568 գլխում քննվում են հետևյալ հարցերը.

1) Առաջին գլուխներում տրվում է խոսքի մասերի ուսմունքը և i'rab-ների (թեքությունների) դասակարգումը: Սիբավեյդին տրա-

<sup>1</sup> Гипсас, հիշ. աշխ., էջ 53:

դիցիոն կերպով նշում է 3 խոսքի մաս՝ անուն, բայ և մասնիկ: Անունների և բայերի հիմնական տարբերությունը, ինչպես կարելի է նրա սահմանումներից կռահել, Սիբավեյդին տեսնում է բայերի՝ ժամանակ արտահայտելու մեջ. այս բանը ավելի պարզ կերպով արտահայտվում է հետագա քերականների մոտ, որոնք անունը սահմանում են որպես ժամանակային հարաբերություն շարտահայտող խոսքի մաս՝ ի տարբերություն բայի: Իյս հարցում արաբական քերականները կախում ունեն Արիստոտելից: Մասնիկը Սիբավեյդին սահմանում է բացասական կերպով, որպես խոսքի մաս, որ ոչ անուն է, ոչ բայ:

2) 9—278-րդ դուխներում քննվում են շարահյուսական հարցեր՝ ա) հայցական, սեռական և ուղղական հոլովների, այլև կոչականի կիրառությունը. բ) մասնիկների գործածությունը:

3) 279—471-րդ դուխներում քննվում են հիմնականում բառակազմական և ձևաբանական հարցեր, ընդ որում մի քանի գլուխ էլ նվիրվում է թվականների գործածությանը:

4) 472—568-րդ դուխներում քննվում են հնչյունաբանական-ուղղագրական-ուղղախոսական հարցեր, այն է՝ «տառերի ուսմունքը». այս կապակցությամբ խոսվում է նաև ձևաբանական ֆունկցիա կատարող (անունների և բայերի զանազան ձևերի կազմությունը մասնակցող) «տառերի» մասին: «Տառերը» դասակարգվում են ըստ արտաբերող օրգանների. Սիբավեյդին նշում է հնչյունների արտաբերման 16 տեղ: Ուշադրություն է հատկացվում հնչյունների կապակցության հարցերին: Սիբավեյդու հաջորդները ավելի են առաջ տանում հնչյունաբանության հարցերը, խոսում հնչյունափոխության որոշ դեպքերի, հատկապես փոխազդեցական հնչյունափոխության մասին:

X—XII դդ. արաբական ֆեռականությունը.— X—XII դդ. քերականների մեջ հայտնի են Ֆարիսին (Աբու Ալի ալ-Հասան բ. Ահմեդ բ. Աբդու-լ-Ջաֆար բ. Մուհամմեդ բ. Սուլեյման ալ-Ֆարիսի ալ-Ֆեռավի, X դ.), Ջուրջանին (Աբուբեքր Աբդու Քադիր բ. Աբդուռահման ալ-Ջուրջանի, XI դ.) և Ջամահշարին (Աբու-լ-Կասեմ Մահմուդ բ. Ումար բ. Մուհամմեդ բ. Ումար ալ-Խուվարիզմի ալ-Ջամահշարի, XII դ.): Սրանց աշխատությունները ի մի էին բերում Սիբավեյդու աշխատությունից հետո արաբերենի ուսումնասիրության բնագավառում կատարված աշխատանքը և X—XII դարերում մեծ հեղինակություն էին վայելում:

Ֆարիսին քերականական նյութի դասավորության մեջ, ինչ-

պէս նշում են արաբ քերականները, հետևում է Սիբավեյդու սիստեմին՝ կատարելով որոշ փոփոխութիւններ: Նրա աշխատութիւններից հայտնի է «Շարահյուսութեան (Nahw) մեկնութիւնը, որը բաղկացած է 3 մասից. առաջին մասում քննվում են ներածական և շարահյուսական (Սիբավեյդու սիստեմով), երկրորդում՝ հնչյունաբանական-ուղղախոսական, երրորդում՝ ձևաբանական-բառակազմական հարցեր:

Ջուրջանին, ի տարբերութիւն Ֆարսիի, հետևում է հալիլ Ֆերադիդիի շարադրման սիստեմին՝ կատարելով, սակայն, նյութի ավելի մանր բաժանումներ: Նա իր գիրքը կոչել է «100 խնդրառու» և, ինչպէս ցույց է տալիս վերնագիրը, նյութը քննում է ըստ խնդրառութեան բնութի: Խնդրառու բառերը Ջուրջանին բաժանում է ձևականների (lafziyyah «բառային») և իմաստայինների (ma'anawiyah «իմաստային»), առաջիններն էլ իրենց հերթին բաժանում է գործածութեամբ (sama'iyyah) խնդրառուների և ուղիղ (qiyāsiyyah) խնդրառուների: Գործածութեամբ խնդրառու բառերի մէջ Ջուրջանին տարբերում է 91 տեսակ (մասնիկների և անունների ու բայերի որոշ տիպերն ըստ խնդրառութեան), ուղիղ խնդրառու բառերի մէջ՝ 7 տեսակ (բայերի և անունների հիմնական տիպերն ըստ խնդրառութեան), իմաստով խնդրառու բառերի մէջ՝ 2 տեսակ (բառասկզբի բացարձակ ուղղականով դրված անուններն ու նրանց որոշիչները և անվանը փոխարինող բայական օյն ձևերը, որոնք դրվում են սահմանական անկատարով):

Զամահշարին թողել է 8 լեզվաբանական աշխատութիւն, որոնցից հիմնականը «Գլուխների բաժանված քերականութեան ձեռնարկը» է («Al-Mufaṣṣalu fi-n-naḥwi»): Այս աշխատութեան նյութը Զամահշարին բաշխում է ըստ արաբ քերականների ընդունած խոսքի մասերի՝ դրանք քննելով բոլոր տեսանկյուններից. 1) 1-ին բաժնում քննում է անունները՝ ա) փոփոխվող անունների հոլովների կիրառութիւնը, բ) անփոփոխ անունների դործածութիւնը, գ) նունների թվի, սեռի կազմութիւնը և դ) բառակազմութիւնը. 2) 2-րդ բաժնում քննում է բայերը՝ ա) բայերի ժամանակները (կերպերը) և հղանակները, բ) բայերի սեռը, գ) բայերի գոնազան իմաստային տեսակների քերականական առանձնահատկութիւնները, դ) պակասալոր բայերը և ե) եռաբաղաձայն ու քառաբաղաձայն արմատներ ունեցող բայերը. 3) 3-րդ բաժնում քննում է

մասնիկները՝ ըստ իմաստի բաժանելով 27 խմբի. 4) 4-րդ բաժնում քննում է նախորդ բաժիններում տեղ չգտած այն հարցերը, որոնք վերաբերում են մեկից ավելի խոսքի մասերի, այն է՝ հնչյունաբանական հարցերը:

Ֆարսիյն և Զամահչարին ընդհանրապես ձևաբանությունն ու հնչյունաբանությունը լուծում են շարահյուսության մեջ՝ բոլոր հարցերը քննելով *nahw*-ի անվան տակ:

Արաբական ֆեռականությունը XIII—XV դդ.— XIV—XV դդ. մեծ հեղինակություն էին վայելում XIII դ. քերականներ Իբնու-լ-Խաշիբի (Ջեմալուդդին Աբու Ամր Ուաման) և Իբն Մալիբի (Աբու Աբդուլլահ Մուհամմեդ Իբն Մալիբ) աշխատությունները, որոնք դուրս մղեցին նախորդների դրքերը և դարձան հիմնական ձևաբանական:

Իբնու-լ-Խաշիբը թողել է մի քանի քերականական աշխատություն: Իր «Շարահյուսության բավարար ձեռնարկում» («Al-kāfiyat fi-n-nahwi») նա համառոտ և հանրամատչելի ձևով շարադրում է այն նյութը, ինչ Զամահչարին: Զամահչարու քերականական սխտեմը մասնակիորեն փոխելով՝ նա հանել է վերջինիս գլխավոր աշխատության 4-րդ բաժինը և մյուս բաժինների՝ բուռնազմությունը վերաբերող մասերը: Այդ նյութը նա քննում է ձևաբանությունը և հնչյունաբանությունը նվիրված աշխատության մեջ, որ կրում է «Թասրիֆի (իմա՛ ձևաբանության և հնչյունաբանության) բուժիչ» վերնագիրը:

Իբն Մալիբը (1206—1274) դրել է բազմաթիվ քերականական աշխատություններ, որոնցից «Շարահյուսություն: էությունը» («Al-xilāṣatu fi-n-nahwi») արևելքի դպրոցներում դարձել է արաբերենի հիմնական ձեռնարկը: Այս աշխատությունը դրված է չափածո և հենվում է Սիբավեյդու սխտեմի վրա: Իբն Մալիբը նախ տալիս է ընդհանուր տեղեկություններ, ապա բուն նյութը շարադրում հետևյալ կերպ. 1) անվանական նախադասությունները և ուղղակուսի կիրառությունը, 2) բայական նախադասությունները և հայցականի կիրառությունը, 3) սեռականի կիրառությունը, 4) համաձայնությունը, 5) դիմելու (կոչականի) տարբեր տիպերը և 6) նախորդների մեջ չմտած հնչյունական-ուղղախոսական և ձևաբանական հարցերը:

Մեծ անուն է վայելել նաև XIV դ. քերական Իբն Գիշամը (Աբու Մուհամմեդ Աբդուլլահ Իբն Գիշամ ալ-Անսարի ալ-Խանբալի), որին արաբներից ոմանք համարում են արաբ քերականներից մեծագույնը:

Իր բազմաթիվ աշխատություններում նա ամփոփել է արար նախորդ քերականների նվաճումները՝ հետևելով շարադրման ընդհանրացած սխտեմին և կատարելով միայն մասնակի փոփոխություններ ու հավելումներ:

## բ. Բառաբանագրություն

Արաբական բառաբանագրությունը և նրա աճեֆը.— Արաբական լեզվաբանությունը առանձնապես աչքի ընկնող նվաճումների ունեցավ բառարանագրության ասպարեզում՝ այս տեսակետից գերազանցելով հնդկական և հունական բառարանագրության նվաճումները: Բառարանագրություն մեջ արաբների ունեցած նվաճումները ավելի անկախ բնույթ ունեն:

Արաբական տառջին բառարաններից մեկի հեղինակ է համարվում Սիբաւեյդու ուսուցիչ Խալիլ ալ-Ֆարադիդին, որին վերագրվում է «Այնի գիրք» կոչված բառարանը<sup>1</sup>:

Հետագա արաբական բառարանագիրները հավաքում են հրակայական բառային նյութ և ստեղծում բառարանների բազմազան տեսակներ. տարածված էին հատկապես առարկայական բառարանները:

Ալ-Ջաուհարիի և ալ-Ղերավիի բառարանները.— Բառասլաշարի սխտեմավորման հարցում նոր սկզբունք են մշակում ալ-Ջաուհարին և ալ-Ղերավին (մեռ. 980 թ.), որոնցից առաջինը գրել է «Սիհահը» (40.000 բառ), Երկրորդը՝ «Բառարանագրության բարելավումը» (10.000 բառ): Նախորդ բառարանագիրները բառերը դասավորում էին ըստ տառերի արտահայտած հնչյունների ֆիզիոլոգիական հատկությունների: Ալ-Ջաուհարին և ալ-Ղերավին բառերը դասավորում են ըստ այբուբենի, ընդ որում հիմք են ընդունում արմատների վերջին տառերը և հերթով գայիս յեպի առաջինները: Այս եղանակով կազմված բառարանները միաժամանակ և՛ բացատրական բառարաններ են, և՛ հանգարաններ, և՛ ստուգաբանական-արմատական բառարաններ:

Ալ-Ֆիրուզաբադիի բառարանները.— Բառարանագիրներից առանձնապես հայտնի է ալ-Ֆիրուզաբադին (ծագումով շիրազցի պարսիկ, 1327—1403), որը կազմել է մի քանի տասնյակ (ըստ որոշ աղբյուրների՝ 60, ըստ այլ աղբյուրների՝ 100) հատորանոց բառա-

<sup>1</sup> Այնը արաբական տառերից մեկի անունն է:

րան: նա օգտվել է Իրն Սիդայի և հնգիկ մուսուլման Սաղանիի բա-  
ռարաններից՝ ավելացնելով հարավ-արարական բառապաշարը: Այս  
բառարանի հիման վրա ալ-Ֆիրուզբագին կազմել է «Օվկիանոս»  
(«Կամուս») կոչված բառարանը, որը հսկայական հեղինակություն է  
վայելել: Ինչպես որ «գոնատուր» միջնագրայան Եվրոպայում դար-  
ձել էր քերականության հասարակ անուն, այնպես էլ հետագայում  
«կամուս» ասելով ընդհանրապես բառարան էին հասկանում: Ալ-  
Ֆիրուզբագիի ընդարձակ աշխատությունը մեզ չի հասել:

**Արաբական բառարանագրության քերականությունները.**— Արաբա-  
կան բառարանագրությունը պետք է թերություններից. 1) արաբա-  
կան բառարանները կազմվում են առանց բավարար պատմական  
սկզբունքի. այստեղ հնարանությունները տեղ են գտնում նորաբա-  
նությունների կողքին, գործածությունից դուրս եկած բառերը տըր-  
վում են մյուսների հետ՝ համահավասար կերպով, բավարար շա-  
փով նկատի չեն առնվում իմաստային փոփոխությունները: 2) Ա-  
րաբական բառարանները տարբերություն չեն դնում դրական և ոչ  
գրական բառապաշարի միջև: Շատ հաճախ բարբառային բառերը  
տեղ են գտնում դասական գրական լեզվի բառերի կողքին, տարբեր  
բարբառների պատկանող բառերը բերվում են իրար հետ միասին.  
ժամանակային գործոնը հաշվի չառնելու հետ միասին, հաշվի չի առ-  
նըվում նաև տարածական՝ տերիտորիալ գործոնը: 3) Բառերի ի-  
մաստային մշակումը, հոմանիշների, համանունների և իմաստային  
առումների տարբերակումները բավարար գիտական հիմունքներով  
չեն կատարվում:

Սրանցով պետք է բացատրել այն հանգամանքը, որ արաբ  
բառարանագիրները այնքան հաճախ են խոսում արաբական բա-  
ռերի հոմանիշների առատության մասին. ըստ Ռընանի՝ նրանք  
թվում են ուղտ բառի 5000, սրի (թրի)՝ 1000, առյուծի 500, օձի  
200, մեղրի 80 հոմանիշ և այլն:

## 2. ՈՉ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

### ա. Եբրայական լեզվաբանություն

**Ընդհանուր տեղեկություններ.**— Եբրայական լեզվաբանություն  
վաղ քայլերը ևս կառված են եբրայական հնագույն տեքստերի՝  
աստվածաշնչի բանասիրական մշակման աշխատանքների հետ:  
Անհրաժեշտ էր այդ տեքստերը ոչ միայն արտագրել, այլև ճիշտ  
ընթերցել ու մեկնաբանել, մշակել կետադրական լրացուցիչ նշան-



ների այնպիսի սխտեմ, որը ճիշտ արտահայտեր տեքստի առանձնահատկությունները: Եբրայական լեզվաբանական մտքի վաղ քայլերը կապված են Մասսորա (Massora) կոչված մեկնաբանական գրանցումների ու նշումների հետ, որոնք կազմում են աստվածաշնչի ճիշտ արտագրության ու վերծանության, այլև քերականական գիտելիքների օժանդակ բնագավառ, նպաստում եբրայական քերականության առաջացմանը: Մասսորայի ուղղության ներկայացուցիչներից (մասսորետներից) առանձնապես նշելի է Բեն Աշերի անունը: Քերականական սխտեմատիկ աշխատությունների երևան գալուց հետո էլ լեզվական գիտելիքների որոշ բնագավառներ մնում են մասսորետների տնօրինության տակ: Մասսորետների գործունեության հետ սերտորեն կապված է կետագիրների (mishna'ic Plim, եվրոպական տարածված տերմինով՝ «պունկտատորներ») գործունեությունը, որը սկզբնապես կազմում էր մասսորային աշխատանքի մի մասը: Կետագիրները շարունակում են մասսորետների աշխատանքը նաև հետագայում, քերականությունների գոյության շրջանում. գործելով քերականների կողքին, սովորելով նրանցից լրացնելով նրանց աշխատանքը՝ նրանք նպատակ էին դնում աստվածաշնչի տեքստերի համար մշակված նշանների պահպանումն ու կատարելագործումը: Աստվածաշնչի ձայնավորների (սեմական ժողովուրդների մոտ ընդհանրապես ձայնավորները չեն գրվում) և շեշտադրության նշանակման ամբողջական սխտեմը արդեն առկա էր VIII դ. II կեսին<sup>1</sup>, թեև առանձին նշաններ կիրառվել են և ավելի վաղ: Եբրայական լեզվաբանության այս վաղ քայլերը համեմատելի են ասորական լեզվաբանության վաղ քայլերի հետ: Չնայած եբրայական բանասիրության ստեղծած ներքին նախադրյալներին, այնուամենայնիվ, եբրայական քերականության և բառարանագրության մտքի ձևավորումը տեղի է ունենում արաբական քերականական մտքի ու բառարանագրության ուղղեցության տակ: Հրեաները արաբական քերականական սխտեմի մեջ միայն այնպիսի փոփոխություններ են կատարում, որոնք պայմանավորված էին եբրայերենի բնույթով և իրենց գործունեության ընդհանուր նպատակով՝ աստվածաշնչի լեզվի ուսումնասիրությամբ: Արաբական ազդեցությունն այս դեպքում նպաստավոր էր, որովհետև արաբերենի ու եբրայերենի կառուցվածքը ընդհանուր առմամբ համատիպ է, և այդ լեզուները ցեղակցական մերձավոր ու ակնբախ ընդհանրություն-

<sup>1</sup> Հմմտ. Die jüdische Litteratur, herausgegeben von J. Winter und A. Wünsche, II. Trier. 1894, էջ 125:

ներ ունեն: Միսօժամանակ սա նպաստում է երկու լեզուների համեմատական ուսումնասիրություններ, որ մեծ շահով օգնում է սեմական լեզուների համեմատական քերականության հետազոտ քայլերին: Երրայական լեզվաբանները հասնում են արարերենի, երրայերենի և արամայերենի ցեղակցության գաղափարին: Այսպիսով, երրայական լեզվաբանությունը ձևավորվել է մի կողմից՝ ասսյա-ծուշնչի բանասիրական մշակման և հատկապես մասսորեաների գործունեության, մյուս կողմից՝ արարական ազդեցության հետևանքով: Գերականությունը նշանակող dikauk տերմինը իր սկզբնական իմաստով նշանակում էր ճշգրիտ ու հոգածու գործունեություն և, այսպիսով, շեշտում էր քերականության բանասիրական ուղղվածությունն ու բանասիրության հետ ունեցած կապը:

Երրայական քերականության և բառարանադրության առաջին քայլերն սկսվում են X դարից: Նշելի է, որ հրեաների՝ լեզվի բնույթի ու ծագման վերաբերյալ հայացքները կրում են ասսվածաշնչի դոգմաների ազդեցությունը և քիչ հետաքրքրություն են ներկայացնում:

Եհուդա Իրն Քորեյշը (IX դ. վերջ—X դ. սկիզբ) Ֆասի հրեական համայնքին ուղղված իր «Ուղերձում» նշում է այն կարևոր դերը, որ կարող է խաղալ սուրբ գրքի իմացության համար երրայերենի համեմատությունը այնպիսի ցեղակից լեզուների հետ, ինչպիսիք արամայերենն ու արարերենն են: Նա նշում է հնչյունական (բաղաձայնական) համապատասխանություններ երրայերենի և արարերենի միջև. ըստ նրա՝ լեզուների մերձավորության պատճառը պետք է փնտրել առաջին հերթին ժողովուրդների տերիտորիալ մերձավորության և ցեղակցության մեջ, թեև, իհարկե, հեղինակն այս ցեղակցությունը հիմնավորում է ասսվածաշնչի տվյալներով: Սրանց հետ միասին նշվում է նաև փոխադարձ խառնուրդի և փոխառությունների դերը: Երեք լեզուների մերձավորությունը Իրն Քորեյշը տեսնում է ոչ միայն բառերի, այլև քերականական ֆունկցիա կատարող «տառերի» նմանության մեջ. ճիշտ է, Իրն Քորեյշի քերականական համեմատությունները դեռ սահմանափակ բնույթ ունեն, բայց այդ պետք է լացատրել նրանով, որ երրայական քերականական միտքը նրա ժամանակ դեռ առաջին քայլերն էր միայն տեսնում: Բառային համեմատությունները երրայերենի ու արամայերենի և երրայերենի ու արարերենի միջև շատ ավելի լայն ծավալ ունեն և մեծ մասամբ ճիշտ են: Իրն Քորեյշը գրած է եղել և մի քառարան, որը, սակայն, մեզ չի հասել:

Երբայական ֆերականութիւնը և բառարանագրութիւնը.— Քերականական առաջին ինքնուրույն, աստվածաշնչի ուսումնասիրութիւննից անկախ գրութիւնները պատկանում են դառն Սաադ-յային (892—942): Ճիշտ է, աստվածաշնչի կարայան (karaim) մեկնարանների մոտ (VIII—XII դդ.), ոչ առանց արարների ազդեցութեան, առկա են քերականական առանձին դիտողութիւններ, բայց կարայանները քերականներ չեն: Մասսորեոնների մոտ էլ բուն քերականական (բառակազմական ու բառափոխական) բնուկանոնները հատուկեմտ են և ոչ սխտեմատիկ:

Երբայական բառարանագրութեան հավաստի սահմանված առաջին արտադրանքը նա պատկանում է Սաադյային. այդ նրա կրկնակի բառարանն է (913 թ. אגרוֹן «Հավաքածու», իմա՝ «Բառերի հավաքածու, բառարան»), որտեղ աստվածաշնչի բառերը դասավորված են այրբենական կարգով՝ ըստ առաջին վերջին տառերի և օժտված աստվածաշնչում զործածվելու վերաբերյալ նշումներով: Ինչպես արաբների մոտ, դասավորութեան երկրորդ կարգը հնարավորութիւն էր տալիս բառարանն օգտագործելու որպէս բանաստեղծական հանգարան: Հետագայում Սաադյան իր «Հավաքածուին» ավելացնում է բառերի արարական թարգմանութիւնը, բազմաթիվ քաղվածքներ բերում և այլ հավելումներ կատարում. այս փոփոխված տարբերակը կոչվում է «Բանաստեղծական արվեստի գիրք»: Գործի մեզ հասած եբրայերէն առաջարանում Սաադյան անում է և կարևոր քերականական դիտողութիւններ. նա տարբերում է արմատ և մասնիկներ՝ նշելով, որ մասնիկների տառերը ծառայում են թիվ, դեմք և ժամանակ արտահայտելուն: Ըստ Սաադյայի՝ արմատի տառերը միշտ պահպանում են իրենց որակը, մասնիկի տառերը փոփոխութեան են ենթարկվում: Սաադյան առանձնացնում է 11 մասնիկային, նույնքան էլ արմատական տառեր: Սրանով իսկ Սաադյան փաստորեն անում է երբայական քերականութեան առաջին լուրջ քայլը:

Սաադյան գրած է եղել նաև «Լեզվի գրքեր» վերնագիրը կրող՝ հրրայերենի քերականութիւնը արաբերէն լեզվով, որից, սակայն, միայն առանձին քաղվածքներ են հասել: Այն կաղմված է եղել ուրբական քերականութիւնների օրինակով, բայց որոշ դեպքերում Սաադյան հենվել է նաև մասսորեոնների կանոնների վրա: Այստեղ նա խոսել է եբրայական այբուբենի տառերի, նրանց հատկութիւնների, քերականական արժեքի, հնչյունական հերթագայութեան, ասիմիլյացիայի մասին, այլև ձևաբանական տեղեկութիւններ

տվել բայի ու նրա իոնարհման, գոյականի և մասնիկների վերաբերյալ:

Ստադյային պատկանում է նաև մի փոքր բառարանագրական աշխատանք, որ հայտնի է «Յոթանասուն բառի մեկնություն» անունով: Այս գործը կարևոր է նրանով, որ խթան է դարձել նոր երբայերենը և արամայերենը որպես բառերի բացատրություն օժանդակ աղբյուր դիտելու համար: Աստվածաշնչի իր արաբական թարգմանությունն մեջ Ստադյան նույն նպատակով օգտվում է և արաբերենի տվյալներին:

Հետագա բառարանագիրներից հիշատակելի է Իսպանիայում ապրող Մենախեմ բեն Սարուկը (շուրջ 960), որի «Բառարանը» («Maxbereth») աչքի ընկնող երևույթ էր: Այստեղ տրվում էր աստվածաշնչի բառարանագրության բացատրությունը արաբերեն, ընդ որում բառերի համեմատական մեկնարանությունն նպատակով Սարուկը ևս դիմում է արաբերենի և արամայերենի տվյալներին: Պետք է նշել, որ նա ծանոթ չէ Իբն Քորեյշի համեմատություններին: Սարուկը տալիս է քերականական, այդ թվում նաև շարահյուսական-ոճաբանական բնույթի տեղեկություններ (վեղչումներ և ավելադրություններ): Բառարանը ոչ միայն բացատրական արժեք ունի, այլև հոմանիշների հավաքածու է: Սարուկի գործը քրեանագատության է ենթարկվում Դունաշ Իբն Լարրատի կողմից, որը գրում է իր «Հերքումները» («'Tešūbōth»). Իսպանացի այս երկու հրեաների աշակերտները հետագայում շարունակում են վեճը՝ գրելով զանազան աշխատություններ: Սարուկի աշակերտներից մեկը՝ Եհուդա բեն Դավիդ Խայյուզը (X դ. վերջ—XI դ. սկիզբ) դառնում է եբրայական լեզվաբանական-քերականական մտքի ամենից ավելի նշանավոր ներկայացուցիչը: Հետագա հեղինակները Խայյուզին համարում են եբրայական լեզվաբանության իսկական հիմնադիր:

Խայյուզը աշխատում է թափանցել եբրայերենի առանձնահատկությունների մեջ և բացահայտել նրա ներքին օրինաչափությունները: Նա արաբական լեզվաբանության նվաճումները կիրառում է եբրայերենի նկատմամբ, հաստատում եբրայական արմատի եռատարության սկզբունքը՝ այն տարածելով նաև թուրքերենի և հնչյուններ ունեցող արմատների վրա, տալիս հնչյունական հերթագայությունների և բառակազմության վերաբերյալ սխառտման կանոններ: Նրա քերականական գործերից հայտնի են Թուլլու կրկնակ հնչյուններ ունեցող բայերին և կետադրությանը նվիրված աշխատությունները՝ գրված Իսպանիայում տարածված

արաբներենով: Խայրուզի գործերը հիմք են դնում եբրայական լեզվաբանութեան որոշակի տերմինաբանական տրադիցիային:

Խայրուզի աշխատանքը շարունակում, լրացնում և ավարտին է հասցնում Աբուլվալիդ Մերվան Իրն Գանախը (XI դ. առաջին կես), որին պատկանում են մի շարք աշխատություններ: Դրանցից առանձնապես կարևոր է «Հետազոտությունը» (արաբերեն *«Կադուսի Գադուսի»*), որը նպատակ ուներ ամբողջական գաղափար տալ եբրայերենի մասին և բաղկացած էր քերականությունից ու բառարանից: Քերականությունը գրված է Սիրավեյուու դրբի օրինակով: Աբուլվալիդն ընդգրկում է հնչյունաբանական և քերականական բոլոր կարևոր հարցերը, այլև խոսում ճարտասանական ու ոճաբանական խնդիրների մասին. նա սկսում է խոսքի մասերի տեսությունը, ապա տալիս է հնչյունաբանական (տառերի վերաբերյալ) տեղեկություններ. «տառերի» (հնչյունների) դասակարգումը կատարում է և՛ ըստ ֆիզիոլոգիական հատկությունների, և՛ ըստ քերականական արժեքի (արմատական և մասնիկային տառեր). հետո քննում է բառակազմական ու ձևաբանական հարցեր և, վերջապես, դիտողություններ անում բառերի ու նախադասությունների կազմության անկանոնությունների մասին: Վերջին դեպքում էլ հենց տրվում են շարահյուսական և ճարտասանական-ոճաբանական տեղեկությունները, այդ թվում նաև փոխարբությունների (տրոպների) ճարտասանական ուսմունքը: Աբուլվալիդը, հիմք ընդունելով աստվածաշնչի լեզուն, փաստորեն վերլուծում է վերջինիս ոճական-ճարտասանական առանձնահատկությունները:

Խայրուզից և Աբուլվալիդից հետո XII—XVI դդ. եբրայական լեզվաբանությունը տալիս է մի շարք նշանավոր անուններ ևս, որոնցից XII—XIII դդ. հայտնի են Աբրահամ Իրն Էսրան (1092—1167), Յոսեֆ Քիմխին (շուրջ 1150) և նրա որդիներ Մոսես Քիմխին ու Դավիդ Քիմխին (1160—1235):

#### Բ. ԹՅՈՒՐ-ՔԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ, ՄՈՆՂՈՒԵՐԵՆԻ, ՊԱՐՍՎԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ.— Արաբական լեզվաբանները բացի մահմեդական աշխարհում որպես գրական ընդհանուր լեզու իշխող արաբերենից, զգալի ուշադրություն են նվիրել նաև այլ լեզուների ուսումնասիրությանը, հատկապես՝ թուրքերենին, մոն-

ղղիբրենին, սլարսկերենին: Այն հանգամանքը, որ այս բոլոր դեպքերում ուսումնասիրութիւնը կատարվում էր արարական քերականութեան սխառեմի ընկօրինակամամբ, հնարավորութիւն չէր տալիս բացահայտելու այդ լեզուների քերականական կառուցվածքի առանձնահատկութիւնները: Սրան գումարվում էր նաև սլաւոնական մտտեցման բացակայութիւնը: Այս է պատճառը, որ թյուրքական լեզուների ուսումնասիրութեամբ զբաղվող անձինք (բայառութեամբ ստորև հիշվող Կաշգարիի) չկարողացան բացահայտել այդ լեզուների կառուցվածքի համար խիստ բնորոշ այնպիսի մի երևույթ, ինչպիսին սինհարմոնիզմն է: Արդեհ հիշված արաբ քերական Զամահարին (Ժաղումով սլարսիկ) կազմել է արաբերեն-սլարսկերեն բառարան: Արու-եսայանը (1256—1345) կազմում է սլարսկերենի և թուրքերենի առաջին արարական քերականական ձեռնարկները. նա ձեռնարկում է նաև եթովպերենի քերականութիւն գրելուն, բայց այն չի կարողանում ավարտել:

Մահմուդ Կաշգարին և նրա դերը քյուրցաղիտուրքան մեջ.— XI դ. հեղինակ Մահմուդ Կաշգարին ամենայն իրավամբ համարվում է «թյուրքագիտութեան հսկան»: 1073—1074 թթ. նա դրում է իր «թյուրքական լեզուների դիվանը»<sup>2</sup>, որ իր պատվավոր տեղն ունի արաբական լեզվաբանութեան նվաճումների մեջ և առանձնակի է կանգնած այլ աշխատութիւններից: Կաշգարին գիտակցարար կիրառել է համեմատական մեթոդը թյուրքական լեզուների նկատմամբ: Նա քննում է թյուրքական լեզուների հնչյունաբանութիւնը համեմատական հայեցակետով, զբաղվում քերականութեան ու բառագիտութեան հարցերով, անում ստուգաբանական դիտողութիւններ: Նա ելնում է այն գաղափարից, որ «սկզբնապես լեզուները քիչ են տարբերվել» և որ հետագա զարգացման ընթացքում նրանք փոփոխութեան են ենթարկվել ու տարբերվել իրարից «հնչյունների փոփոխութեան ու անկման հետևանքով»: Ի տարբերութիւն թուրքերենով զբաղված արաբական այլ լեզվաբանների, Կաշգարին նկատում է սինհարմոնիզմի երևույթը և կանգ առնում դրա վրա: Նա որոշում է թյուրքական լեզուների հիմնական խմբերը՝ օղուզական, դիշաղական և թուրքական (ուլղուրական)<sup>3</sup> տալով դրանց դասակարգման սկզբունքները:

Կաշգարին ոչ միայն տարված չէ արաբերենի գերազանցու-

<sup>1</sup> В. А. Звегинцев, *հիշ. աշխ.*, էջ 17:

<sup>2</sup> *Հմտ.* Mahmud-ak-Kasgari, *Diwan lugat at-Turk*; Stambul, 1912—1915. *տես նաև* Mahmud Kasgari, *Divanü lügat-it-türk tercümesi çeviren B. Atalay*, I—III, Ankara, 1939—1941.

թյան և նախնականության մասին ստեղծված նախապաշարումով, այլև փորձում է ցույց տալ, որ արարբերներ և թյուրքերինը հավա սարարժեք լեզուներ են:

Բացի լեզվաբանական հարցերից, Կաշգարին շոշափում է նաև պատմական, ազգագրական և գրականագիտական հարցեր, տեղեկոթյուններ տալիս թյուրքական բանահյուսուսթյունից: Այս կամ այն բառիմաստի կամ ստուգաբանական դիտողության առնչությամբ նա որպես բացատրություն բերում է առածներ, ասացվածքներ ու ատանավորներ:

Կաշգարին գիտակցել է իր գործի արժեքը՝ գրելով հետևյալը. «Ես գրել եմ մի գիրք, որ իր հավասարը չունի: Ես շարադրել եմ արմատները նրանց պատճառներով և պարզել կանոններ, որպեսզի իմ գիրքը օրինակ լինի: Ամեն խմբի համար ես տալիս եմ այն հիմքը, որի վրա կառուցվում է բառը, որովհետև իմաստությունը աճում է պարզ ճշմարտություններից»:

Մոնղոլերենի ուսումնասիրությունը.— Արաբական և միջինասիական լեզվաբան-ֆիլոլոգների կողմից մոնղոլերենին նվիրված աշխատությունները, որոնք հրևան են եկել XIII—XV դդ., բառարանագրական բնույթ ունեն: Դրանց թվին են պատկանում անանուն հեղինակի արաբերեն-մոնղոլերեն բառացանկը (600 բառ) 1245 թ., Իրն Մուխաննայի մոնղոլերեն-արաբերեն բառացանկը (XIV դ.), Համգալլահ Ղազվինիի մոնղոլական բառացանկը (1339 թ.), որ պարունակում է 50 կենդանու և բույսի մոնղոլական անուններ, անհայտ մի հեղինակի մոնղոլերեն բառարանը, որ XV դ. մի անձ արտագրել է մի անհայտ աղբյուրից և ներդրել ալ-Չամահշարիի բառարանի մեջ<sup>1</sup>:

#### IV. ՀՆԴԿԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

##### 1. ՀՆԴԿԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՌԻՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀՆԴԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Քերականություն և բառաբանագրություն.— Այս ենթաշրջանի հնդկական լեզվաբանության, հատկապես քերականության զարգացման մեջ կարևոր է նշել երեք հանգամանք՝ միջին շրջանի հնդկական լեզուների նկարագրության փորձերը՝ ի տարբերություն նախորդ շրջանի, երբ ուսումնասիրության առարկա էր գրեթե

<sup>1</sup> Հմմտ. Գ. Դ. Санжеев, Сравнительная грамматика монгольских языков, I, М., 1953, էջ 4:

միայն սանսկրիտը, սրա հետ կապված՝ պատմա-համեմատական մեթոդի սաղմնային ձևի ավելի ուժեղ դրսևորումը և, վերջապես, ավելի դյուրամատչելի քերականության ստեղծման փորձը:

VI դ. քերական Վարառուչին իր «Պրակրիտա-պրակաշա» աշխատության մեջ<sup>1</sup> տարբերում է 4 տեսակ պրակրիտ՝ մահարաշտրի, պայշաշի, մագադհի և շուուրասենի, որոնցից զիսավորը համարում է առաջինը և դրան նվիրում աշխատության մեծ մասը: Հանգելով այն մտքին, որ «սանսկրիտը պրակրիտի մայրն է», Վարառուչին պրակրիտների նկարագրությունը կատարում է սանսկրիտի հետ համեմատելու միջոցով: Նա իր առջև նպատակ է դնում մշակել սանսկրիտի բառերից ու բառաձևերից պրակրիտի բառերն ու բառաձևերը կազմելու կանոնները և դրանով իսկ փաստորեն տալիս է պրակրիտի պատմական հնչյունաբանությունն ու քերականությունը<sup>2</sup>: Այսուհանդերձ՝ Վարառուչին հանդես է բերում նորմատիվ մոտեցման ողջ սահմանափակությունը: Ելնելով զուտ գործնական նկատառումներից՝ նա ուշադրություն չի դարձնում հին հնդկերենում բարբառային տարբերությունների առկայության վրա և պրակրիտի հնչյունական ու քերականական ձևերի ազդրյուրը բոլոր դեպքերում որոնում է սանսկրիտի մեջ, ամեն ինչ հանգեցնում նրան:

Ուշադրության առարկա են դառնում նաև միջին հնդկական պալի լեզվի քերականության հարցերը: Հանդես են գալիս պալի լեզվի ուսումնասիրության մի քանի քերականական դպրոցներ՝ Կալչայանայի, Մոգալլանայի և Սադդանիտիի<sup>3</sup>:

XI դ. լեզվաբան-բառարանագիր Հեմաշանդրան առաջին անգամ ուշադրություն է դարձնում միջին հնդկական այն լեզուների վրա, որոնք հայտնի են ապաբհրանշա («անկում») անունով<sup>4</sup>: Սրանով նա լեզվական հետազոտության բնագավառը ներթաշում է նոր նյութ՝ որոշ շափով լրացնելով այն օղակի մասին մեր ունե-

<sup>1</sup> Հմմտ. V a r a r u c i, Prakṛtaprakāṣa, The First Complete Edition with Notes and English Translation by E. B. Cowell, II Issue, London, 1868.

<sup>2</sup> Հմմտ. А. П. Б а р а н н и к о в, Элементы сравнительно-исторического метода в индожогической лингвистической традиции, ВЯ, 1951, № 2, էջ 31: Ի միջի այլոց, հեղինակը Վարառուչիին նույնպեսում է Գանդիկ մեկնիչ Կատտայանայի հետ և դնում մ. թ. ա. III դարում:

<sup>3</sup> Հմմտ. O. Franke, Geschichte und Kritik der einheimischen Pāli-Grammatik und Lexicographia, Strassburg, 1902:

<sup>4</sup> Sidhahemacandra, herausgegeben von R. Pischel, Halle, 1877: 1878.



ցած գիտելիքները, որ միացնում են պրակրիաները նոր հնդկական լեզուների հետ:

Այս բոլորի հետ միասին շարունակվում է սանսկրիտի քերականության ուսումնասիրության, հատկապես Պանինիի աշխատության մեկնարանության գործը: Այս շրջանի քերական-մեկնարաններից հայտնի են Կաշիկան, Վամասնը (VII դ.), Ջայադիտյան (VII դ.): XIII դարում Վոյադևան գրում է սանսկրիտի մի քերականության, որ նախորդներից տարբերվում է իր դյուրամատչիլիությամբ:

Քննարկվող ենթաշջանի կարևորագույն նվաճումներից մեկն էլ իսկական իմաստով բառարանագրության ստեղծումն է: Հնդկական այս բառարանները հայտնի են մեծ մասամբ կոշա (कोशा «գանձարան») անունով և, ի տարբերություն նախկինում հանդիպող nighantu-ների, չափածո են: Դրանք մեծ մասամբ կարևոր ու հազվագեղ բառերի հավաքածուներ են և նախատեսված են բանաստեղծների համար: Բառերն այստեղ բերվում են ըստ տարբեր բնագավառների. այբբենական (ըստ սկզբի կամ վերջի բաղաձայնի) դասավորությունը հազվագեղ է և հանդես է գալիս համանունների դեպքում: Հնդկական կոշաները դերազանցապես հոմանիշների բառարաններ են: Կարևոր տեղ է տրվում նաև բառերի խմբավորմանն ըստ քերականական սեռի: Հնդկական առաջին հայտնի կոշայի հեղինակը Ամարուսիմհան է (VI դ.), թեև, ամենայն հավանականությամբ, նա ունեցել է իր նախորդները: Հընդկական բառարանագրության մեջ Ամարուսիմհային հատկացվում է գրեթե նույն տեղը, ինչ Պանինիին՝ քերականության մեջ<sup>1</sup>: Նրա գործը հայտնի է «Ամարակոշա» անունով և անոթ է տվել բավմասթիվ մեկնությունների (մինչև 50):

Հիշատակելի է IX դ. կամ X դ. գրված «ՄահաՎյատպատտի» բառարանը, որտեղ բերված են բուդդհայական տերմինները՝ ձեռք լեզվով՝ սանսկրիտերեն-տիբեթերեն-չինարեն:

Հետագա բառարանագիրներից հայտնի է արդեն հիշատակված Հեմաչանդրան:

Հնդկաստանի՝ մուսուլմանների կողմից նվաճվելուց հետո ուշ շրջանի հնդկական լեզուները ուշադրության չեն արժանանում մինչև XIX դ. սկզբները: Բրահմինները արհամարհանքով էին վե-

<sup>1</sup> Հմմտ. Th. Zachariae, Die indische Wörterbücher (kos'a), Strassburg, 1897:

րաբերվում նոր հնդկական լեզուներին՝ զբաղվելով միայն սանսկրիտով:

## 2. ՈՉ ՀՆԴԿԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դրավիդյան լեզուների ուսումնասիրությունը.— Հնդիկները միջին դարերում ուշադրություն են դարձնում նաև շրջակա լեզուների վրա: Հնդիկ Կումարալիբհատտան (VII դ.) հատուկ ուշադրություն է դարձնում դրավիդյան լեզուների վրա: Նրա տված սեղեկությունները հիմք են ծառայում դրավիդյան լեզուների հետագա գիտական դասակարգման համար:

Լեզվաբանական-քերականական աշխատություններ երևան են գալիս նաև հենց դրավիդյան ժողովուրդների լեզուներով: Թամիլների նոր տիպի դրուժյամբ ստեղծված առաջին աշխատանքը՝ «Տոլկապիյամբ» (VIII դ.), քերականական բնույթի էր և գրված ոտանավորով: Կանարյան դասական հեղինակների թվում հիշատակվում է նաև քերական Կեշիռաջան (XII դ.):

## V. ՉԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏ

### 1. ՉԻՆԱԿԱՆ ԼԵՋՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանական հարցեր.— Այս շրջանի շինական լեզվաբանության մեջ առանձնապես լուրջ ուշադրության են արժանանում հնչյունաբանության հարցերը՝ կապված բանաստեղծական ստեղծագործությունների առաջադրած կոնկրետ խնդիրների հետ՝ մի կողմից և սանսկրիտերենից բուդդհայական դրականության թարգմանության առաջադրած պահանջների հետ՝ մյուս կողմից: Չինացիների ծանոթությունը հնդկական լեզվաբանության նվաճումներին՝ զգալիորեն նսլաստում է շինական լեզվաբանության զարգացմանը: Միաժամանակ շինացիները մշակում են սանսկրիտական բառերը հնչյունաբանորեն ներկայացնելու եղանակներ և այս կապակցությամբ զբաղվում հնչյունաբանական որոշ դորժնական հարցերի ուսումնասիրությամբ:

Դեռևս մ. թ. III դ. շինացիները վանկի կազմության մեջ ուռանձնացնում են սկզբնական բաղաձայնը (շեն) և հանգը (յուն): Սակայն տաղաչափական հարցերը լուծելու հետ կապված՝ հարկավոր էր զբաղվել նաև շինական վանկային տոների տիպերի հարցով: Բանաստեղծ և բանասեր Շեն Յուեն (441—513) շինական

հիերոգլիֆները իմբրավորում է ըստ արտահայտած 4 տոների (երսօշտական շեշտերի) և կազմում «Սըն շեն փու» կոչված բառարանը: Այս բառարանի հետևողությամբ հետագայում երևան են գալիս այլ հանգարաններ, որոնք զգալիորեն նպաստում են միջին շինարների և նրա բարբառների հնչյունական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Միջին շինարների հնչյունական առանձնահատկություններն արտացոլվում են «Յեյուն» (601) և «Քանյուն» (751) կոչված հանգային, իսկ միջին շինարների բարբառների հնչյունական առանձնահատկությունները՝ «Գուանյուն» (1008) և «Ձիյուն» (1037) բառարաններում: XII դ. լեզվարան Ու Յույը «Նրգերի գրքի» («Շի ձին») հանգերի ուսումնասիրության ուղղությամբ կատարած իր աշխատանքով հիմք է դնում վաղ հին շինարների հնչյունական կերպարանքը վերականգնելու գործին:

XIV դ. հանգաբանական բառարաններում լայն արտացոլման են ենթարկվում հյուսիսային և հարավային բարբառների հնչյունական առանձնահատկությունները: Զոու Գե-ցինը հատուկ ուշադրություն է դարձնում հյուսիսային բարբառներին, Սուն կյանը՝ հարավայիններին:

IX դարում Շոու Վենը ստեղծում է առաջին այբուբենը, որ կիրառվում էր վանկերի առաջին տարրերը նշանակելու համար:

Բառագիտական-իմաստաբանական, ֆեռականական և ռեաբանական հարցեր. — Նույն այս շրջանում շինացիները մեծ աշխատանք են կատարում իմաստաբանական-բառագիտական, քերականական, ռճարանական հարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Այս կարգի հարցերի ուսումնասիրության բնագավառում առանձնապես հիշատակելի է Կան Ին-դան (574—648), որ դրավելով է դասական հեղինակների մեկնությունը:

Հին տեքստերի ուսումնասիրության մեջ փաստորեն սկսում են հանդես գալ պատմա-համեմատական մեթոդի որոշ տարրեր: Հին տեքստերի քերականական և բառապաշարային առանձնահատկությունների վերհանումը տեղի էր ունենում ժամանակակից լեզվի հետ կատարվող պատմական համեմատությունների ճանապարհով: Այս առումով առանձնապես կարևոր են XII դ. լեզվարան Զուաիի (1130—1200) աշխատանքները:

Մի շարք այլ հեղինակներ՝ Լյու Ջի-ձին (661—721), Խան Յույը, (768—824), Օույան Սյուն (1007—1072) դնում են շինական գրական լեզվի տարբեր կողմերի (բառապաշարի, ռճարանության) նորմավորման հարցերը:

## 2. ՈՁ ԶԻՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճապոնական լեզվաբանություն.— Ճապոնական լեզվաբանությունը զարգացման համար դեր են խաղացել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նախադրյալները: Արտաքին նախադրյալներին են պատկանում նախ շինական և ապա հնդկական ազդեցությունը, ծանոթությունը շինական և հնդկական լեզվաբանության նվաճումներին, ճապոնեերենի համեմատությունը շինարենի և սանսկրիտի հետ: Ներքին նախադրյալներին են պատկանում ճապոնական հին հուշարձանների բանասիրական մշակման ու մեկնաբանության փորձերը, բանաստեղծական արվեստի հետ կապված լեզվական հարցերի ուսումնասիրությունը: Առանձնապես կարևոր դեր է խաղում, շինական գրություն սիոտեմի ներմուծման հետ կապված, գրության և ուղղագրության հարցերի մշակումը: Նշելի է, որ ճապոնեերենի գրանցման առաջին փորձերը VIII դարից են. մինչև այդ որպես գրական լեզու իշխել է միայն շինարենը:

Այն հանգամանքը, որ շինական լեզվաբանության ամենից ավելի մշակված ճյուղերը բառարանագրությունը, գրաբանությունը և հնչյունաբանությունն էին, ազդում է և ճապոնական լեզվաբանության սկզբնական ընդլայնումը:

Կարևոր նվաճումների են հասնում ճապոնացիները հնչյունաբանության մեջ: Այդ բանին մեծ շահով օգնում է ծանոթությունը սանսկրիտին. հնդկական այբուբենի կարգը ազդում է XI դ. ճապոնական գոճյուտն կոչված այբուբեն-աղյուսակի տառային դասավորության վրա:

Թեև շինական ազդեցությունը ճապոնիայի վրա նկատելի էր դեռևս մ. թ. III դարից, բայց այն ուժեղանում է հատկապես VII դ. սկզբներից, երբ սլաշտոնական հարաբերություններ են սկսվում երկու երկրների միջև (դեսպանություններ): Նշելի է, որ շին-ճապոնական հոգորդակցման մեջ կարևոր դեր էր խաղում կորեան, որպես Չինաստանի հետ սահմանակից մայր-ցամաքային երկիր: Չինական ազդեցությունն՝ առանձնապես խիստ էր մինչև IX դ. կեսերը, որից հետո ուժեղանում է ինքնուրույնացման ձգտումը: Ճապոնական գրությունը սկզբնապես հենված էր շինականի վրա, բայց շինական հիերոգլիֆները, պահպանելով իրենց իմաստային նշանակությունը, շատ ավելի լայն շահով են սկսում օգտագործվել հնչյունական արժեքով՝ որպես առանձին վանկերի նշանակումներ: Այդ բանում դեր են խաղում նախ՝ ճապոնական

բերակունակի կառուցվածքի կցական բնույթը և երկրորդ՝ ճասպոնական վանկի կառուցվածքը՝ միայն բաց վանկերի առկայությունը: Ինքնուրույնացման ձգտման ուժեղացումը հանգեցնում է ճնայոնական վանկային այբուբենների ստեղծմանը, որոնք, սակայն, չեն կարողանում բոլորովին գուրս մղել շինական հիերոգլիֆների գործածությունը: Ճասպոնական գրութայն այս ընթացքը բնականաբար նպաստում է ճասպոնացիների հնչյունական գիտելիքների զարգացմանը: Չինական լեզվաբանական մտքի ազդեցությունը արտահայտվում է նաև ճասպոներենի տոնալ առանձնահատկությունների ուսումնասիրության և հանգարաններ ստեղծելու մեջ: Միաժամանակ մշակվում են շինական տեքստերի ճիշտ ընթերցանության համար բազմաթիվ գիակրիտիկ նշաններ:

Ճասպոնական ֆիլոլոգիայի զարգացումը VIII—IX դդ. կապված էր հատկապես «Նիհոն-շոկի» կոչված ճասպոնական հնագույն պատմա-գիցաբանական տեքստերի ամբողջականացման, մեկնություն և ուսումնասիրության հետ: Կազմվում են գործածությունից գուրս եկած բառերի բացատրական ցանկեր, մշակվում են տոներն արտահայտող նշաններ և այլն: Հին տեքստերի մեկնության հետ կապված՝ ճասպոնացիները նկատում են, որ բառերը տարբեր բարբառներում և տարբեր ժամանակ տարբեր հնչյունական կերպարանք են ունենում: Հնչյունական այս փոփոխությունները նրանք նշանակում են «բառահղկում» (gōka) և «բառափոխություն» տերմիններով: Սակայն ճասպոնացիները սրանից այն կողմ չեն անցնում և չեն խորանում այդ փոփոխության պատճառների մեջ<sup>1</sup>: Այսպիսով, ճասպոնացիների հնչյունական գիտելիքների զարգացումը սկզբնապես ընթանում է մի կողմից՝ շինարենի, որպես կուլտուրական գլխավոր լեզվի, մյուս կողմից՝ ճասպոներենի որպես մայրենի լեզվի ուսումնասիրության ուղղությամբ: VIII դարի վերջերին ուժեղանում է բուդդիստականության ազդեցությունը և սրա հետ կապված սանսկրիտի ու նրա գրութայն ուսումնասիրությունը: Այս հարցում մեծ դեր են խաղում և շինացիները, որոնք նույն պատճառներով զբաղվում էին. սանսկրիտով, նրա գրությամբ և հնչյուններով, հնչյունական զուգադրումներ կատարում սանսկրիտի և շինարենի միջև: Ճասպոնացիներն օգտվում են շինացիների այս աշխատանքից. վերջիններս դառնում են յուրատեսակ միջնորդներ:

IX դարից սկսած ճասպոնիայում երևան են գալիս ընդհանուր

<sup>1</sup> Հմմտ. G. Wenck, Japanische Phonetik, Wiesbaden, I, 1954, էջ 101:

բառարաններ՝ սկզբնապես շինական համապատասխան բառարանների օրինակով: Այսպես՝ Կուկայի (Kūkai) բառարանը (830 թ.) հիմնված է Կու Ե-վանգի բառարանի վրա. Շոյուն (Shōjū) և Մինամոտո Շիտագաուն (Minamoto Shitagau) հիմք ընդունելով շինարհներ՝ բացատրությունների մեջ բերում են և ճապոնական համարժեքներ: Շոյուի բառարանը (892) հետագա լրացումներով հանդերձ պարունակում է գրեթե 20.500 նշան, ընդ որում 160 բաժինների ներսում նյութը դասակարգվում է հմաստային սկզբունքով: Շիտագաուի (911—983) բառարանը իրային բառարան է (Sachwörterbuch):

Ճապոնական հարաբերական ինքնուրույնության շրջանում, հատկապես XI—XIII դդ. լեզվաբանական-ֆիլոլոգիական աշխատանքը սկսում է ծառայել գերազանցապես բանաստեղծական արվեստին, պոետիկային: Սրանով ճապոնացիներն անցնում են իրենց լեզվի ինտենսիվ ուսումնասիրությանը, հին ճապոնական բառերի հավաքմանն ու մեկնությանը, նրանց հնչյունական նկարագրությանը: Մեկնաբաններից հայտնի է հատկապես Կենշոն (Kenshō): Հետևելով սանսկրիտի ուսումնասիրության օրինակին, ճապոնացիները ի մի են բերում հնչյունական համապատասխանությունները, հնչյունական փոփոխությունների ու «շեղումների» դեպքերը: Տարբերվում են բաղաձայնական և ձայնավորային հնչյունափոխությունները:

Այս ժամանակի աչքի ընկնող գիտնականներից մեկը՝ Միոգակուն (Myōgaku, ապրել է XI դ. վերջերին) իրեն նպատակ է դնում մշակել սանսկրիտի, շինարենի և ճապոներենի համար կիրառելի լեզվական կանոններ: Միոգակուն նշում է լեզվի ներսում հրեք կարգի տարբերություն՝ տարածական (բարբառները), ժամանակային (պատմական փոփոխությունները) և հասարակական («բարձր» և «գոհհիկ» լեզուներ): Բարբառային տարբերությունները նա կատարում է կլիմայական պայմանների տարբերությունների հետ: Ճապոներենի փոփոխության մեջ նա կարևոր տեղ է տալիս օտար լեզուների ուսուցման ազդեցությանը: Լեզվի ներսում եղած տարբերությունները բացատրելու փորձի հետ միասին՝ Միոգակուն քննադատում է իր ժամանակ տարածված կարծիքը Չինաստանում, Հնդկաստանում և Ճապոնիայում կատարված հնչյունափոխությունների ընդհանուր ուղղության մասին: Ըստ այդ կարծիքի՝ Հնդկաստանում հնչյունափոխությունն ընթացել է գերազանցապես ձայնավորների փոփոխության ուղղությամբ, Չինաստանում՝ բաղա-

-նժգտ դեհիտըվճ ւզգւրա՛ յրահադու։նդ հրատուց յրաւզմուտըվճ ժղսմս ‘մմ  
-գըհիվւցոտը դահիտըտիոմզժ վըզմզգւստուց ոզ յրաղնտըզդւրաւտ մմզդ  
-վնտըստուց ւտզ ւզգւմտըվճ մմզստմ դտիտըստուց իսնգտտըգըսու։  
ւտըտիտըվմոնըմ մրահ յրաւսվն վճ մժտվյ դտիտըտիոմզժ դտիտըստ  
-ուց ղզթ ւտզ ւզտըխանգընեւտ դտըխադտժտիեզլ դտիտիեւզ ւնվրնահ  
տաւը ւզտընտըզդտուս վմզգւրաւթրաւզմմտտ րա դտըխատըգըտուց  
վմզդժժքտիւնրաստի դտիտըտիոմզժ դտիտըստուց ղ դտիտըվճ ւնվրնահ  
վը ճ զտիւտահ մըրաւտեւեւտն վժտը դտիտըտիոմզժ դտիտըստուց

ւզտիւտի տզ

վժվլտ մաղ տեւտուց ւզտըխամժժտուց ժրտըտտիղ վմզգւրաւթրաւզ  
դտիտըստուց ւնն XIX—IIAX ովտե ոզ ուղնուց մմզգւմսփ դտընու  
-րաւմաղժըվ տեւտուց վմզդժվլգտվե դտիտիեզլ դտիտըստուց  
ւնզդստ մզմմտտ ղուղ ոզ յրաւիմզժմտտ ‘(մզգւլվտեւոս ‘մզղնըղն ւնզ  
-րաւ ղ ‘մզղնըղնուց) վմզգւրաւթրաւտուց ւտ ղ (իսիտըգտտըղ ուհիմզ  
միզը ւնվնըսմս ‘իտըգտ ց) վնզտ դտըլմզժտտմտ տոմ ոզ յրաւիտմզժ  
-մտտ մմզգւրաւըզ դվտուփ յտզ տմլ ւտմլ վտվնիւրաճ ւվմզժմտտ  
-տտոտըլ վմզգըրաւըզ ոզ յրաւիւզզ ‘դզդրա թրաւզմ դտիտըտժտըրաւ  
-ըղմ ւտժ ‘դտիտըտմտթրաւըզ տրաւ վլգիտ մմզգըտտրաւտ ուտ ուտ  
-տըրաւըզ դտիտըվճ ւնզդրաւնմուհիտտեւ դտըտմըտը վմզգւրաւըզ ղ  
մզղնիտրաւտ դտիտըտմտըրաւըզ ոզ զտիւտ նգտուղ ւրաւիտըլմտժ  
‘յրաւիւտմ ւ ճ յրաւիտմտըհըր ‘մըրաւթրաւնգընեւտ դտըխադտժտըրաւ  
-ըմ ւտիտեւսմլ ողնըլ ճ յրաւքմս մս ‘միմտըսզ մսիտուլե վմզդժվ  
-գտվե դտիտըրաւըզ դտիտըստուց ճ յրաւըստն («վլգտուլմուց ւսիտ  
նրաւ մմզգըրաւթրաւժաժաճ» ՕՃԻՂԱԻ-ԻՂԻԿՏ—«սւվիղվ-վժվՉ» ւտուց)  
«ննըվըրաճ» զտիզ ողնուց յրաւտտոտըվճ դվոզի դվժտուս ւն X

ւնզգւրաւդտի դվժտուս դտըխամեւտեւրա դտիտըստուց

ճ յրաւըտի (ՂՃՃԻ—ՃԶԻԻ) ոզրտեոլ տմտիվըրաճ ւնզգւմուց ւտիտմ  
-տեւրա ոզ զտընդտի յրաւըստըզի ւտըխամեւտըրա վմզգւլնտըստուց  
ւն IIIX ‘(մզգւլվտուլմժ ղ մզգւլվտուլըտտտ ‘մզգւլվտիւեզլ ‘մզգւլվ  
-տըժ ‘մզգւլվտուլտմզ) յտի մզգւլվտեւսիսի) տմլ դտըխամսիտոտն  
վըզժաւմտ վտվմիոզտո իսնզիղզզ ւքմսփ դտըտիտմզժմտտ (վնզտ տոմ)  
ւտիտվեւստվեվճ վմզգւրաւըզ ոզ յրամտտտի մմզգւլնտըստուց

ւզ-«վիսեւսվլ» ւտմտու

-տժ դտիտըտժտեւստո հտոզտոմրաւ ովտե ճ ոտըմզ ւթ 89ՃԻ

ւնդտըխադտըլ վնզտ դտիտըտոտտմտ իզընգընուց ճ յրաւ

-մսփ դրահտեւվլ մըրաւթրաւսփսփսփ վմզգւլնուցտեւուց ւրամզժ ճ մզտ  
-ոտփ ղըն տոմ դրահտեւվլ դրաւթրաւսփսփսփ ճղմս վմզգւլնուցտեւտժ  
ճ յրաւտիտեւտ ոզտոտուլուցնըմ յրաւտուլնտուց ւզընըլ ղ վմզգւլնուց

տերը հասկանալու համար նրանք այս կապուկցութեամբ կատարում են հատուկ նշումներ, որոնք և հիմք են տալիս այսպես կոչված «տենիոխի» (քերականութեան, հատկապես ձևաբանութեան) ուսումնասիրութեան համար: Վերևում հիշված Ֆուձիվարա Սադայեն գրում է առաջին փոքր աշխատութիւնը տենիոխի մասին: «Միուգոկի» կոչված աշխատութեան մեջ առաջին փորձն է կատարվում բառալսմբերի (խոսքի մասերի) առանձնացման. տարբերվում են գոյական անուններ (նա «անուն») և բայեր ու ստորոգելիական ծականներ (կոտոբա «բայ»), ընդ որում խոսքի մասերը հստակ կերպով չեն տարբերակվում նախադասութեան անդամներից:

**Կորեական լեզվաբանութիւն.**— Կորեական լեզվաբանութիւնը այս շրջանում գրաբանական-հնչյունաբանական ուղղվածութիւն ունի<sup>1</sup>: 692 թ. կորեացի Չոնը ստանդարտացման է ենթարկում գոյութիւն ունեցող տառադարձական նշանները՝ չինական հիերոգլիֆների հնչյունական օգտագործումը: Նրա սիստեմը հայտնի է որպես ի-դո կամ ի-դու: Իսկական հնչյունական գրութիւն (օն-մուն) Կորեայում ստեղծվում է միայն XV դ. կեսին. այդ այբուբենի կարգը վկայում է հնչյունների ֆիզիոլոգիական հատկութիւնների գիտակցման բարձր մակարդակի մասին: Կորեական հնչյունաբանական գիտելիքները այս շրջանում հենվում էին չինական հնչյունաբանների նվաճումների վրա, ընդ որում հնչյունաբանական շատ աշխատութիւններ նվիրված էին հենց չինարենին:

<sup>1</sup> Հմմտ. Цой Ден Ху, Из истории языкознания в Корее, ВЯ, 1954, № 116 - 120:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԱԵՐԱՅԵՐՅԱԼ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

Աղ ա յ ա ն Է., Հայ լեզվաբանությունից պատմություն, I, Երևան, 1958, էջ 29—30 և 67—94:

Ջ ա ՚ ս ու է յ ա ն Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954:

### 2. ՌՈՒՍԵՐԵՆ

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

БСЭ, Статьи „Китай—языкознание“. „Япония—языкознание“

Гиргас, Очерк грамматической системы арабов, СПб, 1879.

Звегинцев В. А., История арабского языкознания. Краткий очерк, М., 1958.

История средних веков, под. ред. А. Д. Удадьцова и др., I, М., 1938.

Коковцев П., Новые материалы для характеристики Иехуды Хай-юджа, Самуила Нагида и некоторых других представителей еврейской филологической науки в X, XI и XII веке. Собрал, исследовал и издал П. Коковцев, Пг, 1916.

Крымский А., История арабов и их литературы, М., 1914.

Мелиоранский П. М., Араб-филолог о турецком языке, СПб, 1900.

Мелиоранский П. М. Араб-филолог о монгольском языке, СПб, 1903.

Райт, Краткий очерк сирийской литературы, СПб, 1902.

Трахтенберг О. В., Очерки по истории западноевропейской средневековой философии, М., 1957.

Цай Ден Ху, Из истории языкознания в Корее, ВЯ, 1954, 4, էջ 116—120:

Чудинов А. Н., Очерки из истории языкознания; развитие грамматических теорий в средние века, Воронеж, 1871.

Ягич И. В., Рассуждения южнославянской и русской старины о церковнославянском языке, СПб, 1996.

### 3. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Bacher W., Die hebräische Sprachwissenschaft vom X—XVI Jahrhundert (J. Winter und A. Wünsche, Die jüdische Literatur seit Abschluss des Kanons, Trier, 1892).

Baebler J. J., Beiträge zu einer Geschichte der lateinischen Grammatik im Mittelalter, Halle, 1885.

- Besthorn R., Aristoteles og de arabiske Grammatikere. „Festkrift til O. Thomsen“, 1894.
- Böhljng G., Untersuchungen zum rhetorischen Sprachgebrauch der Byzatiner, mit besonderer Berücksichtigung der Schriften des Michael Psellos, Berlin, 1956.
- Bravmann M., Materialien und Untersuchungen zu den phonetischen Lehren der Araber, 1934.
- Buhl Fr., Sproglige og historiske Bidrag til den arabiske Grammatik, 1878 (*Ներածություններ*):
- Chenu M. D., Grammaire et théologie aux XII<sup>e</sup> et XIII<sup>e</sup> siècles. Archives d'histoire doctrinale et littéraire du moyen âge, X, 1925, 28.
- Dante A., De vulgari eloquentia. Florentia, 1896, P. Rajna-ի առաջաբանը, Florentia, 1938, A. Marigo-ի առաջաբանը:
- Dietterich G., Die Massora der östlichen und westlichen Syrer, London, 1889.
- Duval R., La littérature syriaque, Paris, 1907 (XVI գլ.):
- Flügel E., Roger Bacon, seine Stellung in der Geschichte der Philologie, 1902.
- Flügel G., Die grammatischen Schulen der Araber, nach den Quellen bearbeitet. I. Die Schulen von Basra und Kufa und die gemischte Schule, 1862.
- Grabmann M., Mittelalterliches Geistesleben, München, 1926 (*հասկացես* Die Entwicklung der mittelalterlichen Sprachlogik (Tractatus de modis significandi) բաժինը):
- Grabmann M., De Thoma Erfurdiensi auctore grammaticae quae Joanni Duns Scoto adscribitur speculative, AFH, XV, 1922, 192, 273-277.
- Grabmann M., Thomas von Erfurt und die Sprachlogik des mittelalterlichen Aristotelismus, SBAW, München, 1943, II, 2.
- Guessard F., Grammaires provençales de Hugues Faidit et de Raymond Vidal, Paris, 1858.
- Haase, H. A. F., De medii aevi studiis philologicis, Breslau, 1856.
- Heidegger M., Die Kategorien- und Bedeutungslehre des Duns Scotus, Tübingen, 1916.
- Hirsch S. A., Early English Hebraists. Roger Pacon and his Predecessors, JQR, XII, 1899, 34.
- Islands grammatiske Litteratur i Middelalderen, Kjøbenhavn, 1884-86.
- Joannes Duns Scoti Doctoris subtilis OFM Grammaticae speculative: nova editio cura et studio P. Fr. Mariani Fernandez Garcia eiusdem ordinis, Quaracchi, 1902.
- Kokyogaky-dziten, Kokyogakaj-hen, Tokio, 1955 (*Հայրենական լեզվաբանության բառարան*), հասցուներեն, հմմտ. ВЯ, 1956, № 4, էջ 123-126):
- Landgraf G., Historische Grammatik der lateinischen Sprache, III, 1903.

- Liljelblad J., Bidrag till Kännedomen om den medeltida Grammatikundervisningen, „Eranos“, APhS, IV, 1900—02.
- Lehnert M., Das englische Wörterbuch in Vergangenheit und Gegenwart, ZAA, 1956, № 3.
- Little A. G., Roger Bacon, Commoration Essay, Oxford, 1914.
- Lohmeyer K., Eberhard von Bethune, RF, II, Erlangen, 1892.
- Manthey F., Die Sprachphilosophie des heiligen Thomas von Aquin—ihre Anwendung und Probleme der Theologie, Paderborn, 1937.
- Merx, Historia artis grammaticae apud Syros, Leipzig, 1889.
- Nitti-Dolci L., Les grammairiens prékrits, Paris, 1938.
- Nöлке Th., Die semitischen Sprachen, Leipzig, 1893.
- Paetow L. J., The Arts Course of Mediaeval Universities, Urbana, 1910.
- Prantl C., Geschichte der Logik im Abendland, III—IV.
- Rajna P., Le origini della lingua italiana, 1901.
- Renan E., Histoire générale des langues sémitiques, Paris, 1863.
- Robins R. H., Ancient and Mediaeval Grammatical Theory in Europe, with Particular Reference to Modern Linguistic Doctrine, London, 1951.
- Roos H., Die Modi significandi des Martinus de Dacia, Forschungen zur Geschichte der Philosophie und Theologie des Mittelalters, Münster, 1952.
- Rotta P., La filosofia del linguaggio nella patristica e nella scolastica, Torino, 1909.
- Sandys J. E., History of Classical Scholarship, I, Cambridge, 1903.
- Schlānder E., Die Lehre von den göttlichen Namen in der Summa Alexanders von Hales, ihre Prinzipien und ihre Methode, Freiburg, 1930.
- Sinko T., Dante o języku wloskim, NPLS, 1921.
- Thurot Ch., Notices et extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire des doctrines grammaticales au moyen âge, Paris, 1868.
- Traube L., Einleitung in die lateinische Philologie des Mittelalters, München, 1911.
- Vandevallé Ch. B., Roger Bacon dans l'histoire de la philologie, Paris, 1929.
- Wallerand G., Les oeuvres de Siger de Courtrae, Étude critique et texts inédits, Philosophes Belges, VIII, Louvain, 1913.
- Warnach V., Erkennen und Sprechen bei Thomas von Aquin, Divus Thomas, XV, 1937, **tz 189—218, 263—290.**
- Weil G., Die grammatischen Schulen von Kufa und Basra, Leyden, 1913.
- Weiss I., Die arabische Nationalgrammatik und Lateiner, ZDMG, 64.
- Wenck G., Japanische Phonetik, I, Wiesbaden, 1954.
- Werner K., Die Sprachlogik der Johannes Duns Scotus, SWAW, LXXXV, 1877, **tz 545—597.**
- Wulf M. de., History of Mediaeval Philosophy, London, 1926.

---

**ԵՐՐՈՐԿ ԵՆԹԱՇՐՁԱՆ**  
(Վերածնության շրջան և XVII—XVIII դդ.)

**ԷՄՊԻՐԻԿ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻՋՄ**

**ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Լեզվաբանական սահմանափակության վերացման նախադրյալները և պայմանները.— Լեզվարանության զարգացման այս փուլը ընդգրկում է մոտավորապես XV դ. կեսից մինչև XVIII դ. վերջը: Արևմտյան եվրոպայում այն համընկնում է վերածնության և բուրժուական ուղուցիտաների դարաշրջանի հետ. փուլի վերջում արդեն առկա են հաղթանակած բուրժուական հարաբերությունները, որոնք հիմք են տալիս իդեոլոգիական բնագավառի համապատասխան տեղաշարժերի համար: Վերածնությունը ֆեոդալիզմի քայքայման և բուրժուական հարաբերությունների զարգացման կտրիսան է, որ ուղեկցվում է քաղաքական և իդեոլոգիական բնագավառի աչքի ընկնող տեղաշարժերով: Լեզվաբանության պատմության մեջ այն նշանավորվում է միջնադարյան սահմանափակության վերացմամբ և լեզվարանական մտահորիզոնի աննախընթաց լայնացմամբ: Կյանքի առաջադրած նոր պահանջները աննախադեպ թափ ու ծավալ են հաղորդում լեզվաբանական աշխատանքին, որ սկզբնապես գնում է դեռևս քանակական մեծի գծով. սակայն քանակական կուտակումը անհրաժեշտաբար հանգեցնում է նոր որակի տարրերի երևան գալուն. հավաքողական աշխատանքն սկսում է ուղեկցվել դուզագրական-դասակարգողական աշխատանքով: Հիմք է ստեղծվում սլատմա-համեմատական լեզվարանության երևան գալու համար:

Լեզվաբանական ուղիորդների ուղիորդումը, լեզվաբանական մտահորիզոնի լայնացումը և սլաոմա-համեմատական լեզվաբանության նախապատրաստող գործոնների երևան գալը կապված էին մի շարք նախադրյալների հետ:

1453 թ. թուրքերը գրավում են Կոստանդնուպոլիսը և վերջ դնում Բյուզանդական կայսրությանը: Բյուզանդական դիտության ներկայացուցիչները սուլաստան են գտնում Եվրոպայում՝ եվրոպացիներին ծանոթացնելով հունական գիտության ու արվեստի այնպիսի նվաճումներին հետ, որոնց մասին նրանք միջնադարում միայն աղոտ սլատկերուցում ունեին: Եվրոպական հումանիստները լայն հետաքրքրություն են ստեղծում անտիկ աշխարհի նկատմամբ՝ այն հակադրելով սխոլաստիցիզմին և միջնադարյան ասպետական կուլտուրային:

Կոստանդնուպոլիսի գրավումը թուրքերի կողմից ունենում է և մի այլ հետևանք. մի կողմից՝ եվրոպական վաճառականների առջև փակվում է ցամաքային այն մեծ ճանապարհը, որ Հայաստանի վրայով ձգվում էր մինչև Չինաստան, մյուս կողմից՝ Միջերկրական ծովում թուրքական ծովահենների երևալը և թուրքերի առաջխաղացումը դեպի հարավ՝ հարվածի տակ են դնում դեպի Հնդկաստան տանող հարավային ուղին, որ անցնում էր Ասորիքի և Միջագետքի վրայով: Արաբները իրենց ձեռքին պահելով եգիպտոսով ու Կարմիր ծովով կատարվող հաղորդակցության մենաշնորհը, դժվարացնում են առևտուրը: Այս բոլորին միանում է դրամափոխանակության աշխուժացման համար անհրաժեշտ ոսկու պահանջը: Եվրոպացիներն սկսում են Հնդկաստանի հետ հաղորդակցման նոր, ծովային ուղիներ որոնել, և այս նպատակով ուղարկում են բազմաթիվ արշավախմբեր: Հետևանքը լինում են աշխարհագրական մեծ գյուտերը. 1492 թ. Կոլումբոսը հայտնագործում է Ամերիկան, 1498 թ. Վասկո դե Գաման՝ Հնդկաստանի ծովային ուղին, 1519—22 թթ. տեղի է ունենում առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը (Մագելլանի արշավախումբը): Աշխարհագրական առաջին հայտնագործություններին հետևում է գտնված վայրերի հեռազոտության և նոր վայրերի հայտնագործման տենդագին աշխատանքը: Աշխարհագրական մեծ գյուտերը աննախընթաց կերպով լայնացնում են աշխարհի մասին եղած պատկերացումները: Գաղութային լայն ձգնույնների և կաթոլիկ եկեղեցու՝ ազդեցության նորանոր ոլորտներ ձեռք բերելու ձգտումը նպաստում են լեզուների ուսումնասիրությանը: Նոր ժողովուրդների և նրանց լեզու-

ների ուսումնասիրութիւնը սկսում է վայելել պետական հովանա-  
վորութիւնը, իսկ կաթողիկ եկեղեցու ուղարկած միսիոներները  
դառնում են մինչ այդ անծանոթ գաղութային ժողովուրդների լե-  
զուների ուսումնասիրութեան նախակարապետները:

Կապիտալիզմի և կապիտալիստական հարաբերութիւնների  
յուրբացման պրոցեսը նշանավորվում է կէտրոնացած ազգային  
միապետութիւնների և ազգային պրական լեզուների գոյացմամբ:  
Առևտրի ու արդյունաբերութեան անարգել զարգացումը սլահան-  
ջում են վերացնել ֆեոդալիզմի շրջանում եղած տերիտորիալ  
ռանձնացումն ու սահմանափակումը: «...Ասորանքային արտադրու-  
թեան կատարյալ հաղթանակի համար,— գրում է Լենինը,— անհրա-  
ժեշտ է, որ բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է  
պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչու-  
թիւնը խոստում է միևնույն լեզվով, վերացնելով այդ լեզվի զար-  
գացման և գրականութեան մեջ այն ամբողջական դեմ եղած բոլոր  
արգելքները: Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն  
միջոց է. լեզվի միասնութիւնը և անարգել զարգացումը իրոք ա-  
զատ ու լայն, ժամանակակից կապիտալիզմին համապատասխա-  
նող առևտրական շրջանառութեան, բնակչութեան՝ ըստ բոլոր ա-  
ռանձին դասակարգերի ազատ և լայն խմբավորման կարևորա-  
գույն պայմաններից մեկն է, վերջապես, սերտ կապի պայման է  
շուկայի և ամեն կարգի ու յուրաքանչյուր տնտեսատիրոջ կամ  
տնտեսատերիկի, վաճառորդի և գնորդի միջև»<sup>1</sup>:

Եթե աշխարհագրական մեծ գյուտերը նպաստեցին լեզվաբա-  
նական մտահորիզոնի աննախընթաց լայնացմանը և մինչ այդ ան-  
ծանոթ ժողովուրդների ու լեզուների ուսումնասիրութեանը, ապա  
և որ, ազգային գրական լեզուների մշակման ու զարգացման հարցե-  
րը սլահանջ էին առաջադրում բուրժուանագրական, քերականական  
և ուղղագրական նորմավորման աշխատանքի ծավալման համար:  
Պայթար է տարվում գրական լեզուների մշակման ուղիները որոշե-  
լու, նրանց՝ բարբառների ու հին գրական լեզուների հետ ունեցած  
հարաբերութիւնը ճշտելու, այլ լեզուներից կատարվող փոխառու-  
թիւնների շարքի ու բնույթը որոշելու հարցերի շուրջը: Նոր գրական  
լեզուների դպրոցական ուսուցումը սլահանջ է առաջադրում համա-  
պատասխան ձեռնարկների ստեղծման համար:

XV դ. կեսին կատարված՝ տպագրական արվեստի գյուտը հնա-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 492—493:

րավորութիւնն է տալիս մեծ շահով լայնացնելու ընթերցողների շրջանակը և բաց թողնելու մինչ այդ շտեմնված քանակութեամբ գրքեր: Տպագրական գործի ղարգացումը է՛լ ավելի է նսլաստում լեզվաբանական աշխատանքի ծավալմանը և գրական լեզուների նորմավորման հարցերի լուծմանը:

Միջնադարյան սխոլաստիցիզմի և միջնադարյան աշխարհայացքի դեմ տարվող պայքարը անհրաժեշտաբար նսլաստում է լեզվաբանական հարցերի նկատմամբ բուրժուական լուսավորութեան և բուրժուական փիլիսոփայութեան ցուցաբերած հետաքրքրութեանը: Միջնադարյան փիլիսոփայական վեճերը անունների բնույթի շուրջը վերանայվում են, լեզվի ծագման քրիստոնեական ըմբռնմանը հակադրվում են լեզվի ծագման նոր տեսութիւնները, սլահանջ է առաջադրվում մարդկութեան համար ընդհանուր հասկանալի մի լեզվի ստեղծման: Սակայն հանդես են գալիս նաև հաշտեցնող տենդենցներ և հակադիր հայացքներ, որոնք ուժեղանում են հատկապես XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբին:

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները.— Այս ենթաշրջանի համար կարելի է տարբերել ղարգացման 2 էտապ. 1) XV դ. կեսից մինչև XVI դ. վերջը, որ համընկնում է վերածննդի հետ. այս շրջանում լեզվաբանական աշխատանքը կրում է էմպիրիկ-գործնական բնույթ՝ ընթանալով հիմնականում քերականութեան և բուրժուականութեան քանակական ծավալման ուղղությամբ: 2) XVII—XVIII դդ., որ համընկնում է բուրժուական ռևոլյուցիաների դարաշրջանի հետ. այս էտապում ծավալվում է փիլիսոփայական լեզվաբանութիւնը, հանդես են գալիս ռացիոնալիստական-ընդհանրական քերականութիւնները. լայն տարածում են ստանում ընդհանուր-զուգահրակական և ընդհանուր-դասակարգողական գործերը: XVII դ. և XVIII դ. 1-ին կեսում փիլիսոփայական լեզվաբանութիւնը ավելի պրոգրեսիվ գաղափարների կրող է, քան XVIII դ. վերջին քառորդում և XIX դ. սկզբում, երբ բուրժուական արդեն հողթանակ է նվաճում և դառնում այնչի պահանջողական:

Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը.— Դարաշրջանի առաջադրած պահանջներին համապատասխան հանդես են գալիս լեզվաբանական աշխատանքի հետևյալ տիպերը.

1) Ֆիլոլոգիական նորմատիվ-նկարագրական լեզվաբանութիւն.— Սրան են վերաբերում նոտանձին լեզուների ուսումնասիրութեան ու նորմավորման հարցերը: Այդ հարցերը լուծում են ստանում քերականութիւնների, բառարանների, ուղղագրական բարեփոխու-

թյունների և գրական լեզուների ղարգացման ու մշակման տեսու-  
թյունների միջոցով: Ըստ ուսումնասիրվող ու նորմավորվող լեզու-  
ների բնույթի՝ կարելի է տարբերել լեզվաբանական աշխատանքի  
հետևյալ բնագավառները՝ ա) հնաֆիլոլոգիա կամ հին գրա-  
վոր լեզուների ուսումնասիրություն, բ) նեոֆիլոլոգիա կամ եվրո-  
պական սղգային լեզուների ուսումնասիրություն ու նորմավորում,  
գ) արևելյան ու գաղութային ֆիլոլոգիա կամ արևելյան ու գաղու-  
թային լեզուների ուսումնասիրություն: Դասական ֆիլոլոգիայի ղար-  
գացումը պայմանավորված է անտիկ աշխարհի նկատմամբ հետա-  
քրքրության ընդհանուր աճմամբ և հին գրավոր լեզուների իմացու-  
թյան խաղացած կարևոր դերով ընդհանուր-դպրոցական կրթու-  
թյան, նոր գրական լեզուների մշակման, գիտական գործունեության  
ու եկեղեցական պրակտիկայի մեջ: Նեոֆիլոլոգիայի ղարգացումը  
պայմանավորված է նոր (աղգային) գրական լեզուների ղարգաց-  
ման ու մշակման ընդհանուր պահանջներով: Արևելյան ու գաղու-  
թային ֆիլոլոգիայի ղարգացումը պայմանավորված է գաղութային  
էքսպանսիայով, կաթոլիկ եկեղեցու՝ ընդհանուր տիրապետության  
հասնելու ձգտմամբ և աստվածաշնչի տեքստի բնասիրական  
ուսումնասիրության պահանջով, աշխարհի լեզուների նկատմամբ  
ցուցաբերված ընդհանուր հետաքրքրություն:

Քրեականությունների և բառարանների հիմնական տիպը նոր-  
մատիվն է. նորմատիվ արժեք ունեն նաև ուղղագրական և լեզվա-  
մշակողական զանազան ուսմունքները: Ըստ կողմնորոշման բնույ-  
թի՝ կարելի է տարբերել քերականությունների 2 տիպ՝ 1) էմպիրիկ-  
տեխնիկական և 2) ընդհանրական-աացիոնալիստական: Առաջին  
տիպի քերականությունները կազմվում են լատինական տիպիկ  
տեխնիկական քերականությունների օրինակով, դրեթե միշտ միև-  
նույն սխեմայով, առանց լայն տեսական-փիլիսոփայական ընդ-  
հանրացումների. երկրորդ տիպի քերականությունները, հանդես  
գալով 1660 թվից սկսած, կողմնորոշվում են դեպի տրամաբանա-  
կան ընդհանուր սխեմաները: Գործնական առումով տեխնիկական  
քերականությունների հանդես գալը պայմանավորված էր բաղմու-  
թիվ նոր լեզուները միևնույն հեշտությունը նկարագրելու և նորմա-  
վորելու պահանջով: Ռացիոնալիստական-տրամաբանական քերա-  
կանությունները ևս վերջին հաշվով բաղմաղան լեզուների համար-  
նկարագրման և նորմավորման միասնական սկզբունքներ սահմանե-  
լու պահանջով էին պայմանավորված: Երկու դեպքում էլ տիրա-  
պետող տենդենցը ունիվերսալիզմն է: Այս կարգի աշխատություն-



ների հեղինակները առաջնորդվում են հիմնականում այն սկզբուն-  
 քով, թե ո՞րն է ճիշտը, և ոչ թե նպատակ ունեն սլարզել, թե ի՞նչ  
 կա: Լեզվաբանական աշխատությունների նորմատիվ տիպի տարա-  
 ծումը բացատրվում է մի շարք հանգամանքներով. ա) քերականու-  
 թյան մեջ շարունակում էր իշխել ֆիլոլոգիական քերականության  
 տրադիցիան, թեև վերջինս գործնական-տեխնիկական բնույթ էր  
 ստացել. այդ քերականությունը դեռևս արտացոլում էր լեզվական  
 փաստերի նկատմամբ ֆիլոլոգիական քերականության ունեցած ոչ  
 պատմական մոտեցումը: Այն նպատակ ունեւ որոշել զրավոր տերս-  
 տերի բանասիրական հավաստիության աստիճանը, ցույց տալ հա-  
 վաստին ու ո՞չ հավաստին, սխալն ու ճիշտը, գրականն ու ոչ գրա-  
 կանը, տվյալ հեղինակին հատուկն ու ոչ հատուկը, բնականն  
 եկամուտը: Հին լեզուների ուսումնասիրությունը շարունակում էր  
 հենվել հին մեթոդների ու սկզբունքների, հին տեքստերի բանասի-  
 րական ուսումնասիրության վրա: Այդ սկզբունքներն ու մեթոդները  
 շատ դեպքերում մեխանիկորեն տարածվում էին նոր լեզուների  
 ուսումնասիրության վրա՝ որոշ դեպքերում հասցնելով ծայրահե-  
 ղությունների (լատինատիպ քերականությունների ստեղծումը):  
 բ) նոր գրական լեզուների դարգացման ու մշակման պահանջները  
 անհրաժեշտ էին դարձնում գրական լեզվի մեջ այս կամ այն քե-  
 րականական ձևի ու բառի ներմուծման որոշ նորմաներ մշակել,  
 որոշ ընտրություն կատարել, որոշ կայուն սկզբունքներ սահմա-  
 նել. այս բանը է՛լ ավելի է՝ նպաստում նորմատիվ քերականություն-  
 ների ու բառարանների տարածմանը. սա էլ հասցնում է լեզվի  
 նկատմամբ ոչ պատմական վերաբերմունքի խորացմանը, տարած-  
 վում է այն հայացքը, թե լեզուն մեկընդմիշտ տրված կանոնների  
 մի ամբողջություն է, որ կարելի է փոփոխել այս կամ այն սկզբուն-  
 քով, այս կամ այն անհատի հայեցողությամբ, այս կամ այն քե-  
 րականի ու բառարանագրի սահմանած նորմաներով: գ) Հին և նոր  
 գրական լեզուների դպրոցական ուսուցումը և դպրոցական քերա-  
 կանությունների ու բառարանների կազմումը ինքնին նպաստում էին  
 նշմատիվ սկզբունքի արմատավորմանը: Դպրոցական քերականու-  
 թյունը նպատակ ունեւր տալ ուղիղ գրելու ու խոսելու կանոններ և  
 համարվում էր, ինչպես միջնադարյան քերականությունը, «ուղիղ  
 խոսելու և գրելու արվեստ» (ars recte dicendi et scribendi)<sup>1</sup>: Հետե-

<sup>1</sup> «Արվեստ» բառը գործածվում է հուն. τεχνικ-ի համար, որից լատի-  
 նական technica բառը և՛ ամերիկական քերականությունն անվանուծը:  
 Վերջինս ապրեքովում էր նախկին ֆիլոլոգիական քերականությանից  
 նրանով, որ ավելի նեղ ընդգրկում ունեւր և գրազվում էր միայն լեզվական  
 հարցերով:

վարար՝ դպրոցական քերականությունների հեղինակները պետք է տեղ տային միայն ճիշտ համարվող ձևերին, լեզվական փաստերին մոտենային որոշ ընտրությամբ: դ) Ռացիոնալիստական փիլիսոփայությունը ամեն ինչ վերանայում էր բանականության տեսանկյունից, քրիստոնեական դոգմատիզմին հակադրում բանականություն ամենահաղթ ուժը: Որոշվում էին բոլոր ժամանակների համար կիրառելի բանական սկզբունքներ: XVII դ. երկրորդ կեսից տարածում գտած ընդհանրական-ուսցիոնալիստական քերականությունները հենվում էին ռացիոնալիստական փիլիսոփայության վրա և կողմնորոշվում դեպի տրամաբանությունը: Այս առումով էմպիրիկ-գործնական քերականություններին հակադրվող ունիվերսալ-ուսցիոնալիստական քերականությունները շարունակում են նորմատիվ բնույթ ունենալ. միայն թե փոխվում է նորմավորման հիմքը: Լեզվագործածության կամ USUS-ի փոխարեն հանդես է գալիս բանական լինելու սկզբունքը, լեզվական փաստերի ընտրության հիմք է ծառայում տրամաբանականությունը: Լեզվի փաստերի նկատմամբ վերաբերմունքը շարունակում է մնալ կամայական, ոչ պատմական:

Սակայն նորմատիվ սկզբունքներն աստիճանաբար զուգակցվում են նկարագրական սկզբունքների հետ: Գաղութային անգիր լեզուների ուսումնասիրությունը ինքնին խախտում էր նորմատիվությունը, որն այդ դեպքում ոչ միշտ էր հնարավոր և անհրաժեշտ: Միաժամանակ սկսում են ուշադրություն դարձնել նաև ոչ դասական տեքստերի լեզվին, որոնք ընդհանուր նորմաների խախտման արյուրները: Այս բոլորը նպաստում են նորմաներից շեղվող ձևերի նկարագրությանն ու ուսումնասիրությանը: Լեզուներն ըստ հնարավորին լրիվ ներկայացնելու տենդենցները ևս հասցնում են նորմատիվության խախտմանը: Սկսում են ավելի ու ավելի հաճախ երևան գալ նկարագրական կամ նորմատիվ-նկարագրական քերականություններ, հրատարակվում և ուսումնասիրվում են ոչ դասական լեզու ունեցող հին տեքստերը: Նորմատիվության խախտման հարցում այս առումով կարևոր դեր է խաղում գիտական բանասիրության հիմնադրումը 1777 թ.՝ Ֆրիդրիխ Ավգուստ Վոլֆի կողմից: Սկիզբ է դրվում տեքստերի իսկական բանասիրական քննադատական-համեմատական ուսումնասիրությանը, ընդ որում սկզբնապես նպատակ էր դրվում բնագրի վերականգնումն ու մեկնաբանությունը: Բանասիրական-տեքստաբանական այս մանրակրկիտ լայնատանքը, սկսվելով անտիկ ֆիլոլոգիայից, տարածվում է և այլ լեզուների ուսումնասիրության վրա: Սակայն պետք է նշել, որ գիտական բա-

նասիրութիւնը, լինելով սլատմա-համեմատական լեզվաբանութիւն ակունքներից մեկը, այնուամենայնիվ, այդ լեզվաբանութիւնի ձևավորման հարցում ամենից ավելի վճռական գործոնը չէր, ինչպիս կարծում են ումանք<sup>1</sup>:

Ավելորդ չէ հիշել, որ քերականական տերմինաբանութիւնի զարգացումն այս և հետագա շրջանում ընթանում է տարբեր ուղիներով: Եթե միջնադարյան Եվրոպայում իշխողը լատինական քերականական տերմինաբանութիւնն էր, ապա այս շրջանում բաղմամբիվ լեզուների քերականութիւնների, այլ և ընդհանրական քերականութիւնների երևան գալը տերմինաբանական տարբերացումներն է ստեղծում: Այդ բանը պայմանավորված էր մասամբ քերականական տերմինաբանութիւնի այլ տրադիցիաներ ունեցող երկրների ազդեցութեամբ, մասնավաճառ, երբ քերականութիւններ էին գրվում այլ երկրների լեզուների համար, մասամբ էլ քերականների կողմից ավելի ու ավելի հաճախ կատարվող նորամուծութիւններով, ընդ որում տարբեր քերականներ առաջնորդվում էին տարբեր սկզբունքներով. այսպէս, սլաւոնները նշանակելու համար ումանք (այդ թիւում և հայերը) դիմում են ճարտասանական տերմինների՝ circumstantia «պարագաներ», locus «տեղ» (տեղի սլաւոնաց), causa («պատճառ», պատճառի սլաւոնաց) և այլն, երկրորդները հիմք են ընդունում այն, որ սլաւոնները մեծ մասամբ մակբայներով են արտահայտվում, և սլաւոնները նշանակում են «մակբայ» բառից ածանցված տերմինով, ինչպէս, օրինակ, գերմաններն ում Adverb «մակբայ»—Adverbiale «սլաւոնաց» և այլն:

2) Ստուգաբանական—գուգադրական լեզվաբանություն. — Սրան են վերաբերում ստուգաբանական դանաղան տեսութիւնները, առանձին լեզուների ծագման, լեզուների ցեղակցական կապերի ու փոխհարաբերութիւնի, պատմա-համեմատական մեթոդի կիրառման, առանձին աշխարհագրական շրջանների և աշխարհի լեզուների դասակարգման ու խմբավորման, տարբեր լեզուների փաստերի զուգադրման փորձերը: Այդ հարցերը լուծում են ստանում ստուգա-

<sup>1</sup> Վարտուրգը իր „Einführung in Problematik und Methodik der Sprachwissenschaft“ աշխատութիւնի մեջ (1943, էջ 3) գրում է, որ «գիտական տեսութեան համեմատութիւններից աճեց վերջապէս լեզվաբանութիւնը», ընդ որում Վարտուրգը համեմատական լեզվաբանութիւնը դիտում է որպէս պատմական լեզվաբանութիւն (երիտօքերականութիւն) նախորդ շրջանը: Այս շրջանաբաժանումը, իհարկէ, որոշ արհեստական սխեմատիզացիայի և հապճեպ ընդհանրացման արդյունք է:

բանական և բազմալեզվյան բառարաններում, առանձին լեզուների ծագման հարցին նվիրված աշխատություններում, նոր գրական լեզուների զարգացման ու մշակման սկզբունքների հիմնավորման փորձերի մեջ, լեզուների ցեղակցական կապերի ուսումնասիրությանը նվիրված երկերում և դասակարգողական բնույթի աշխատություններում: Թեև այս դեպքում հանդես է դալիս որոշ մեխանիցիզմ, բայց արդեն նկատվում են պատմական մոտեցման, ցեղակցությունը որոշելիս քերականական ընդհանրություններին կարևորություն տալու և պատմա-համեմատական մեթոդի կիրառման որոշ փորձեր: Ստուգաբանական-զուգահեռական լեզվաբանությունը պատմա-համեմատական լեզվաբանության նախակարապետն է:

3) Փիլիսոփայական-տրամաբանական լեզվաբանություն. — Սրան են վերաբերում լեզվի բնույթի, անունների էությունն ու ծագման, լեզվի ծագման, փիլիսոփայական ընդհանուր (արհեստական) լեզվի ստեղծման, լեզուների նկարագրության միասնական սկզբունքների սահմանման և լեզվաբանական նյութի սիստեմավորման հարցերը: Այս հարցերը լուծում են ստանում փիլիսոփայական տարրեր սիստեմներում, լեզվի ծագման տեսություններում, ընդհանուր լեզվաբանական աշխատություններում, ընդհանրական-ուսուցիչ-նախնորոգական քերականություններում: Այս շրջանի աշխատություններին հատուկ է ունիվերսալիզմն որոշ մեխանիցիզմը, թեև աստիճանաբար ճանապարհ է բաց անում պատմական մոտեցումը: Մեխանիցիզմն արտահայտվում է լեզվի և մտածողության, բաների և հասկացությունների փոխհարաբերության ըմբռնման մեջ. լեզուն դիտվում է որպես հասկացությունների նշանների մեխանիկական դոմար: Փիլիսոփայական-տրամաբանական լեզվաբանությունը XIX—XX դդ. ընդհանուր լեզվաբանության և լեզվափիլիսոփայության նախորդն է:

Անտիկ աշխարհից ժառանգված «տառերի ուսմունքը» լեզվաբանության մեջ երկար ժամանակ պահպանվում է գրեթե անփոփոխ ձևով. «տառի» և հնչյունի ոչ հստակ տարբերակումը շարունակվում է ընդհուպ մինչև XIX դ. կեսերը՝ հանդես գալով նաև պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրների մոտ: Սա չի նշանակում, թե XVI—XVIII դդ. որևէ աչքի ընկնող քայլ չի կատարվում հնչյունաբանության բնագավառում: Լեզվի հնչյունական կողմի ուսումնասիրության սասպարեզում կատարված տեղաշարժերը այս շրջանում կապված էին, մի կողմից՝ խուլ ու համրերի ուսուցման,

մյուս կողմից՝ ուղղագրության ռացիոնալ սկզբունքների մշակման պահանջի հետ: Այս բնագավառի վաղ աշխատություններից առանձնապես նշելի են Խուան Պաբլո Բոնետի, Ջոն Ուոլլիսի և Ամմանի գրքերը XVII դարում<sup>1</sup>: XVIII դ. վերջում և XIX դ. առաջին կեսում դրվում են և սկսում տրիական հնչյունաբանության հիմքերը:

Վոլֆգանգ Ֆոն Կեմպելենը իր «Մարդկային լեզվի մեխանիկումը՝ նրա խոսողական մեքենայի նկարագրության մը հանդերձ» աշխատության մեջ<sup>2</sup> հասնում է հնչյունների կազմավորման պրոցեսի նկարագրության նշանակալից ձգրտության՝ նոր աստիճանի հասցընելով հնչյունաբանության դարգացումը:

Սակայն լեզվի հնչյունական կողմի ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճումները երկար ժամանակ հեռու են մնում լեզվաբանական աշխատություններից, չեն օգտագործվում յիշլոգների կողմից, որոնց ուշագրության կենտրոնում գտնվում էին գրավոր լեզվի հարցերը:

## I. ՖԻԼՈՍՈՒԿԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ՀՆԱՖԻԼՈՒԳԻԱ

#### ա) Դասական ֆիլոլոգիա

Հունարենի ուսումնասիրությունը. — Վերածնության շրջանի հումանիստները մեծ շահերով տարված էին անտիկ կուլտուրայի ուսումնասիրությանը: Անտիկ գրականության և արվեստի նմուշները համարվում էին օրինակելի, և ձգտում կար դրանց նմանվելու: Ամենայն խնամքով հավաքվում էին անտիկ կուլտուրայի հուշարձանները, կազմվում էին գրադարաններ (Վատիկանի գրադարանը՝ հիմնադրված XV դ. կեսին), ձեռագրերը ենթարկվում էին բանասիրական հոգատար մշակման և ուսումնասիրության:

Անտիկ աշխարհի կուլտուրայի նկատմամբ առաջացած այս լայն հետաքրքրության պայմաններում հատուկ արժեք է ձեռք բերում հունարենի և լատիներենի ուսումնասիրությունը: Շատ գիտ-

<sup>1</sup> J. P. Bonet, Reduction de los letras y arte parla, enseñara hatar los mudos, 1620. J. Wallis, Grammatica linguae anglicanae, 1653. J. K. Amman, Surdus loquens, 1692.

<sup>2</sup> W. Von Kempelen, Mechanismus der menschlichen Sprache nebst der Beschreibung seiner sprachenden Maschine, 1795.

նականներ զբաղվում են հին գրական տեքստերի հավաքմամբ, հրատարակութեամբ ու մեկնութեամբ: Կազմվում են բառարաններ և քերականութիւններ:

Հունարենի և լատիներենի ուսումնասիրութիւնը լեզվական տեսութեան առումով համարյա ոչ մի նոր բան չի ավելացնում անտիկ աշխարհի և միջնադարի լեզվական ուսումնքի վրա: Քերականութիւնները գրում են նորմատիվ հիմունքներով՝ նսլատակ ունենալով տալ դասական լեզվից օգտվելու նորմաներ:

Արդեն XV դ. երկրորդ կեսից երևան են գալիս հունարենի ուսումնասիրութեանը նվիրված դանադան աշխատութիւններ: 1476 թ. Միլանում լույս է տեսնում Կոնստանդին Լասկարիսի՝ հունարենի քերականութիւնը՝ «Ութ խոսքի մասերի մասին» խորագրով<sup>1</sup>: Սրան հետևում են Ֆիլոլոգիական-լեզվաբանական այլևայլ աշխատութիւններ, վեճեր են ծավալվում բանասիրական դանազան հարցերի (ինչպես, օրինակ, հունական անունների տառադարձութեան)<sup>2</sup> շուրջը, գրվում են բառարաններ: Այս բնագավառում աշխատում են Իոյսիլինը (1455—1522), Մելանխտոնը, Հենրիխ Ստեփանսը (Անրի էտյեն, 1528—1598) և ուրիշներ: Հ. Ստեփանոսի ընդարձակ «Հունարեն լեզվի գանձարանը» ձեռք է բերում լայն հեղինակութիւն<sup>3</sup>:

Լատիներենի ուսումնասիրութեանը. — Ուսումնասիրվող լատիական հեղինակների ու դրքերի շրջանակի խիստ ընդլայնման և զրանց բանասիրական մշակման պայմաններում աստիճանաբար սկսում են գիտակցվել դասական լատիներենի և միջնադարից ժառանգված լատիներենի աչքի ընկնող տարբերութիւնները: Իտալացի Լորենցո Վալլան (1406—1457) իր «Գիրք լատիներեն լեզվի նրբութիւնների մասին» աշխատութեան մեջ սեփական հետազոտութեան հիման վրա ցույց է տալիս իր ժամանակակիցների վրիպումները և պայքարում սխոլաստիկական լեզվական գիտելիքների մնացորդների դեմ: Սակայն միջնադարյան քերականութեան ազդեցութիւնը չի դադարում, դեռ շարունակում են հրատարակել Ալեքսանդր Մեծի՝ միջնադարում տարածված քերականութիւնը: Ընդհանուր առմամբ լատիներենի ուսումնասիրութիւնը երկար ժամա-

<sup>1</sup> K. Laskaris. De octo orationis partibus, Milan, 1476.

<sup>2</sup> Էրազմյան սիստեմը հենվում էր հին հնչման վրա, ռոյսիլինյանը՝ նոր:

<sup>3</sup> H. Stephanus, Thesaurus linguae graecae. այս աշխատութիւնը նոր վերամշակմամբ հրատարակվել է XIX դ.՝ Լոնդոնում (1816—26 թթ.) և Փարիզում (1836—65 թթ.):

նակ հենվում էր միջնադարյան լատինագիտության տրագիցիաների վրա: 1460 թ. լույս է ընծայվում XIII դ. հեղինակ Յոհաննես դե Յանուայի լատիներեն բառարանը: 1531 թ. լույս է տեսնում Ռոբերտ Ստեֆանոսի (Ռոբեր էտյենի) «լատիներեն լեզվի գանձարանը»<sup>1</sup>: 1540 թ. Յուլիոս Յեզար Սկալիգերը (1484—1558) լույս է ընծայում «լատիներեն լեզվի հիմունքների մասին 13 գիրք» աշխատությունը<sup>2</sup>, որտեղ քննադատաբար շարադրում է լատիներենի ուսումնասիրության արդյունքները՝ մտցնելով որոշ նորություններ: Հատկանշական է, որ Սկալիգերը, ներկայացնելով դասական լատիներենի տառերի հնչումը, ցույց է տալիս և դրանց փոփոխությունը ռոմանական լեզուներում, այլև բառային համեմատություններ է կատարում հունարենի և լատիներենի միջև: 1587 թ. հրատարակվում է իսպանական ֆիլոլոգ Ֆրանցիսկոս Սանկցիոսի (1554—1628) «Միներվա կամ լատիներեն լեզվի հիմունքների մասին» աշխատությունը<sup>3</sup>, որտեղ հեղինակը հակում է ցույց տալիս՝ սեմական լեզուների օրինակով Յ խոսքի մաս տարբերելու և բոլոր բայերի հիմքը համարում է էպկան բայը: Հանդես են գալիս նաև լատիներենի հետ առնչվող երկլեզվյան բառարաններ՝ 1475 թ.<sup>4</sup> Գերհարդ դե Շուերենի նիդերլանդերեն-լատիներեն և լատիներեն-նիդերլանդերեն բառարանը («Teuthonista»), 1538 թ.<sup>5</sup> լատիներեն-անգլերեն մի բառարան, 1565 թ.<sup>6</sup> ֆրանսերեն-լատիներեն մի բառարան:

Դասական ֆիլոլոգիայի ուղղակիամբ կատարվող աշխատանքը շարունակվում է հետո: Լատիներենի ուսումնասիրությունը տալիս է այնպիսի անուններ, ինչպիսիք են իսպանացի Պերիզոնիոսը, հոլանդացիներ Գեյնսիոս ավագը (հայրը), Գեյնսիոս կրտսերը (որդին), Ֆոսսիոսը և ուրիշները: Վերջինիս «Արիստարքոս կամ քերականական արվեստի մասին» աշխատությունը<sup>4</sup> XVII—XVIII դդ. լատիներենի ուսումնասիրության գլխավոր ձեռնարկներից մեկն էր:

XVIII դ. լեզվաբանները սկսում են ուշադրություն դարձնել ոչ միայն դասական, այլև միջնադարյան լատիներենի և «ստորին» լատիներենի (իմա՝ հին ֆրանսերենի) վրա: Ֆրանսիացի Դյուկանժի՝ «Միջին և ստորին լատինական գրողների բառարանը»<sup>5</sup>

<sup>1</sup> R. Stephanus, Thesaurus linguae latinae, 1531.

<sup>2</sup> J. C. Scaliger, De causis linguae latinae libri tresdecim, 1540.

<sup>3</sup> Fr. Sanctius, Minerva sive de causis linguae latinae, 1587.

<sup>4</sup> G. J. Vossius, Aristarchus sive de arte grammatica, 1635.

<sup>5</sup> Ch. du Cange, Glossarium ad scriptores mediae et infimae latinitatis, 1678.

վկայում էր դասական լատիներենի նորմատիվ հիմունքների խախտման և ոչ դասական լատիներենի նկարագրության փորձերի մասին:

### բ) Սլավոնական ֆիլոլոգիա

Հին սլավոներենի ուսումնասիրությունը. — Սլավոնական երկրների մեծ մասում երկար ժամանակ սիստեմատիկ ուսումնասիրության առարկա էր միայն եկեղեցու պաշտոնական լեզուն՝ հին սլավոներենը կամ եկեղեցասլավոներենը: Լեհաստանում իշխում էր կաթոլիկական եկեղեցու պաշտոնական լեզուն՝ լատիներենը. XI դ. վերջից Չեխիայում ևս իշխող լեզու է դառնում լատիներենը:

Ինչպես նշվել է, սլավոնական ժողովուրդների սկզբնական քերականական աշխատությունները թարգմանչական-կոմպիլյատիվ բնույթ էին կրում: Շուտով սկսում են երևան զալ նաև ինքնուրույն աշխատություններ, որոնք հենվում էին բյուզանդական քերականական տրագիցիայի վրա:

Ռուսաստանում մինչև XVIII դ. կեսերը քերականական ուսումնասիրության ենթաբովիտղ միակ լեզուն հին սլավոներենն էր, և այնտեղ ևս տարածված էին ուշ շրջանի բյուզանդական քերականներից կատարված կոմպիլյացիաները: Պետք է նշել, որ բուլղարական աղբյուրներից առնված վերոհիշյալ «Ութ խոսքի մասերի մասին» աշխատությունը, 1586 թ. հրատարակվելով նոր վերնագրով<sup>1</sup>, զգալի աղղեցություն է ունենում սլավոնական քերականական սերմինաբանության դարդացման հարցում:

Ինքնուրույն քերականական աշխատությունների երևան գլուխ նպաստում է հին սլավոնական տեքստերի բանասիրական մշակման պահանջը XVI դ.: Թարգմանված եկեղեցական գրքերի տեքստերը աղավաղվել էին բաղմամբիվ արտագրությունների հետեվանքով, և պաշտոնապես անհրաժեշտ համարվեց դրանց ճշտումը: Այս աշխատանքի համար հրավիրված բյուզանդացի Մաքսիմ Գրեկը, խորանալով տեքստերի համեմատական ուսումնասիրության մեջ, գրում է քերականական մի շարք հոգվածներ, որոնք երկար ժամանակ լայն տարածում ունեին և տպագրվում էին նույնիսկ XVII դ.:

Մոսկովյան Ռուսիայում XVI—XVII դդ. երևան եկած քերականական-լիզվաբանական աշխատություններն ու հոգվածները (Եվդեկիմի, Բոգոլեպի և այլոց) հենվում էին հիմնականում հունա-

<sup>1</sup>Грамматика словенска языка, Вильно, 1586.



բյուզանդական աղբյուրների վրա: Այս շրջանից պահպանվել են քերականական, ուղղագրական, առոգաբանական բնույթի հոդվածներ, որոնք մեծ մասամբ փոխադրություններ են: Սակայն հանդիպում են նաև ինքնուրույն դիտողություններ. այսպես, օրինակ, սլավոնական լեզուների դասակարգման և առանձնահատկությունների նկարագրման փորձեր են արվում:

Նույն այս շրջանում նկատվում է նաև լատինական աղղեցությունը: Գոնատոսի հայտնի քերականությունը 1522 թ. Գմիտրի Գերասիմովի կողմից փոխադրվում է ռուսերենի և հարմարեցվում եկեղեցասլավոններենին: Հեղինակն իրեն նպատակ է դնում քերականության հիմունքները շարադրել «միասնական ռուսերենով, առանց լատիներենի»:

Այս շրջանի արևելասլավոնական այլ ժողովուրդների մոտ կազմված քերականական աշխատությունները լայն տարածում են գտնում այդ ժողովուրդների բնակության ողջ տերիտորիայում:

Կվովում մոսկվացի տպագիր Իվան Ֆյոդորովի կողմից 1574 թ. հրատարակվում է «Ալբուրեն քերականությանը» աշխատությունը<sup>1</sup>: 1591 թ. լույս է տեսնում Կվովի դպրոցի ուսանողների կազմած հունա-սլավոնական քերականությունը, որտեղ զուգահեռաբար ներկայացված էին հունարենի և հին սլավոններենի փաստերը<sup>2</sup>: Մի քանի տարի անց, 1596 թ. Լավրենտի Զիդանիան հրատարակում է իր «Սլավոնական քերականությունը»<sup>3</sup>, որը կառուցված է արևմտաեվրոպական էմպիրիկ-տեխնիկական քերականությունների օրինակով: Այս երկու աշխատություն քննության առարկան 8 խոսքի մասերն էին:

XVII—XVIII դդ. առանձնապես լայն հեղինակություն էր վայելում Մելիտի Սմոտրիցկու (1577—1633) քերականությունը, որ առաջին անգամ հրատարակվել է 1619 թ.<sup>4</sup> և XVII դ. եղել է հին սլավոններենի քերականության հիմնական ձեռնարկը: Ի տարբերություն բյուզանդական աղբյուրների վրա հենվող քերականական աշխատությունների հեղինակների, որոնք խոսքի մասերի թվում նշում էին հոգը (различие), Սմոտրիցկին այն հանում է խոսքի

<sup>1</sup> Азбука с грамматикой, Львов, 1574.

<sup>2</sup> 'Αδελφότης, Γραμματικά dobrogлагоλιваго Еллинословенскаго языка, Львов, 1596.

<sup>3</sup> Л. Зизания, Грамматика словенска, 1596.

<sup>4</sup> М. Смотрицкий, Грамматика словенския правильное синтагма, 1619.

մասերի թվից և լատինական քերականությունների հետևողությամբ մտցնում միջարկութունը (междометие):

Հետագա քերականություններն ու դասագրքերը (Աֆանասի Պուզիհնի, Կոպիևիչի, Պոլիկարպովի, Մաքսիմովի և ուրիշների) մեծ շահով հենվում էին Սմոտրիցկու աշխատության վրա: Չնայած սրան՝ Սմոտրիցկու քերականությունը իր կառուցվածքով ու բնույթով շատ հեռու էր կատարյալ լինելուց: Նրա վրա դեռևս ղգացվում է հունական ազդեցությունը, խառնվում են հին ու նոր լեզվական երևույթները, հստակ չեն տարբերակվում սլավոնական տարրեր լեզուների քերականական փաստերը: Սմոտրիցկու քերականությունը դեռևս լայն ընդգրկում ունի, քերականության մասերը համարվում են ուղղագրությունը, «ստուգաբանությունը» (այս բառի այլիմաստ գործածությամբ՝ հիմնականում տառերի և խոսքի մասերի ուսմունքը)<sup>1</sup>, շարահյուսությունը և առոգաբանությունը (պրոսոդիան)<sup>2</sup>:

Կրիժանիչի «Քերականական խոսք ուսեսրենի մասին»<sup>3</sup> աշխատությունը հին սլավոնական քերականության և ուսեսրենի քերականական փաստերի յուրատեսակ միաձուլման, յուրատիպ «ընդհանուր ուսակալան» լեզու և քերականություն կառուցելու փորձ է: Ռուսեսրենի փաստերն սկսում են ավելի ու ավելի ուշադրություն գրավել և հատուկ ուշադրության առարկա դառնալ գիտությունների ակադեմիայի (1725 թ.) և Մոսկվայի համալսարանի հիմնադրումից (1755 թ.) հետո:

XVII դ. հին սլավոնեսրենը և սլավոնական նոր լեզուները դառնում են ուշադրության առարկան եվրոպական նաև այլ երկրներում: Կաթոլիկական պրոպագանդան ձեռնարկում է եկեղեցասլավոնական գրքերի հրատարակումը, լույս են տեսնում չեխերենի (1603 թ.), սերբա-խորվաթերենի (1604 թ.), ուսեսրենի (1696 թ.) քերականություններ և այլն:

Քննարկվող շրջանում երևան են գալիս նաև բառարանագրական աշխատանքներ: Դեռևս XV—XVI դդ. ձևագրերում պահպանվել են բառարաններ և բառացանկեր: XVI դ. վերջից հանդես են գալիս տպագիր բառարանների՝ Լավրենտի Զիզանիայի «Լեքսիս,

<sup>1</sup> Հետադաշում ЭТИМОЛОГИЯ «ստուգաբանություն» բառը ուսև իրականության մեջ երկար ժամանակ պահպանում է իր այս իմաստը՝ նշանակելով հնչյունաբանության ու ձևաբանության ամբողջությունը:

<sup>2</sup> С. П. Обнорский и С. Г. Бархударов, Хрестоматия по историч русского языка, I, 1952, էջ 327.

<sup>3</sup> Ю. Крижаннич, Грамматично изказание об русском ѳезику, 1666.

այն է՝ բառեր համառոտ հավաքված և սլավոններենից հասարակ սուսական բարբառով բացատրված» աշխատությունը<sup>1</sup>, Պամվլա Բերինդայի «Սլավյանոտուսական բառարանը»<sup>2</sup>։

Այս բառարանները, հատկապես վերջինը, կարևոր էին նրանով, որ սահմանազատում էին հին սլավոններենը կենդանի խոսակցական լեզվից (Բերինդայի մոտ՝ ուկրաիններենից)։ Ուսուցողական նպատակներով կազմված է Պոլիկարպովի «Նեալեզվյան բառարանը»<sup>3</sup>։

Պետրոս I-ի շրջանում կազմվում են նաև օտարազգի բառերի բառարաններ։

## 2. ՆԵՈՅԻԼՈՂՊԻԱ

Լատինատիպ և ոչ-լատինատիպ ֆերականություններ. — XV—XVIII դդ. Եվրոպայում աղգային միադեպությունների և աղղային գրական լեզուների կազմավորումը հրատարակելով լեզվաբանական խորհրդեր է դնում։ Երևան են գալիս բազմաթիվ էմպիրիկ-նկարագրական ու նորմատիվ քերականություններ, գրվում են բառարաններ, ուղղագրական նորմաների մշակման փորձեր են կատարվում։

Եվրոպայում երևան եկած առաջին քերականությունները կառուցված էին լատինական քերականությունների օրինակով։ Այս լատինատիպ քերականություններում ընդօրինակվում էին ոչ միայն շարադրանքի և նյութի սխտեմավորման ընդհանուր եղանակները, այլև լատինական քերականության առանձնահատուկ կատեգորիաները։ Հետագայում քերականություններն աստիճանաբար ազատվում են այս աղղեցությունից, թեև մինչև վերջ էլ նոր գրական լեզուների քերականությունները շարունակում են այս կամ այն չափով կրել լատինական քերականական սխտեմի կնիքը։

### ա) ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ՖԻԼՈՂՈՊԻԱ

Իսպաներենի առաջին ֆերականությունը, բառարանի և ուղղագրական կանոնների կազմումը Անտոնիո դե-Լեբբիի կողմից. — Ռումանական լեզուների համար գրված քերականություններից

<sup>1</sup> Л. Зизания, Лексис (сречь) речения, в кратце събраны и из словенского на просты Русский диалект истолкованы, 1596.

<sup>2</sup> П. Беринда, Лексикон славенороссийский, имен толкование... 1653

<sup>3</sup> Ф. Поликарпов, Лексикон трехязычный, 1704.

ուաջինը Անտոնիո դե-Լերրիխի (Ներրիխի) իսպաներենի քերականությունն էր (1492 թ.)<sup>1</sup>: Այս աշխատության մեջ հեղինակը, նորմատիվ փաստերից բացի, պատմական քերականությանը հատուկ դիտողություններ է անում. այսպես, նա սահմանում է ապառնու և պայմանականի ծագումը habēre (ունենալ) բայից և անորոշից: Նույն թվին դե-Լերրիխը լույս է ընծայում իսպաներեն-լատիներեն և լատիներեն-իսպաներեն բարձրան<sup>2</sup>: Լերրիխը եղել է նաև իսպաներենի ուղղագրական կանոնների առաջին կազմողը<sup>3</sup>, 1591 թ. լույս է տեսնում Պերսիվալի (Percyvall) իսպաներենի քերականությունը:

Իտալերենի առաջին ֆերսկանեները. Ֆորտունիո, Քեմբրո, Բուոմատտեի.— Իտալերենի առաջին քերականությունը գրել է Ֆրանչեսկո Ֆորտունիոն: Նա իր աշխատությունը<sup>4</sup> կառուցել է Դանթեի, Պետրարկայի և Բոկկաչչոյի լեզվի ուսումնասիրության հիման վրա՝ հիմք ընդունելով Տոսկանի բարբառը:

Իտալական քերականական հետագա տրադիցիայի համար կարևոր նշանակություն են ունենում Պյետրո Բեմբոյի երկախոսությունները՝ «Արձակ՝ ժողովրդական լեզվի մասին»<sup>5</sup> ընդհանուր խորագրի տակ: Բեմբոն առաջ տանելով Դանթեի քարոզած զաղափարները, գտնում է, որ իտալերենը որպես գրական լեզու պետք է դերադասել լատիներենից. հետագա մշակման ենթարկվելու դեպքում այն փառավոր ասպագա է խոստանում: Լատիներենի և իտալերենի փոխհարաբերության հարցը դնելով՝ Բեմբոն, իտալերենը բխեցնում է լատիներենից՝ նշելով, որ այն խառնվել է բարբարոսների լեզուների հետ: Առկա բարբարոսներից նա ուշադրություն է դարձնում Տոսկանի (Ֆլորենցիայի) բարբառի վրա, որից օգտվել են Դանթեն, Պետրարկան և Բոկկաչչոն: Նրա կարծիքով՝ հետագա իտալական գրողները պետք է հենվեն սրանց լեզվի վրա որպես օրինակելի լեզվի: Այս սկզբունքներով էլ Բեմբոն իր աշխատության 3-րդ գրքում՝ շարադրում է իտալերենի քերականության հիմունքները:

<sup>1</sup> Aelius Antonius Nebrissensis (Antonio de Lebrixa), Grammatica sobre la lengua castellana, Salamanca, 1492.

<sup>2</sup> A. A. Nebrissensis, Lexicon latino-hispanicum et vice versa hispano-latinum, 1492.

<sup>3</sup> A. A. Nebrissensis, Reglas de orthographia, 1517.

<sup>4</sup> Fr. Fortunio, Regale grammaticali della volger lingua, 1516.

<sup>5</sup> P. Bembo, Prose della volgare lingua, 1502-1525.

Բեմբոյի ազդեցութիւնը մեծ եղավ իտալական քերականական տրադիցիայի վրա: Հետագա քերականները շարունակում էին լրացնել և ճշտել հին կանոնները՝ հենվելով իրենց ժամանակակից գրողների լեզվի վրա: 1623—1643 թթ. լույս է տեսնում Բենեդետտո Բուտամատտիի՝ «Տոսկանական լեզվի մասին» աշխատութիւնը<sup>1</sup>, որը իր մանրամասնութեամբ և արժանիքներով գերազանցում էր մինչ այդ գրվածները: Այդ պատճառով էլ Բուտամատտիին համարում են իտալական նոր քերականութեան հիմնադիրը:

Տրանսլեանի առաջին ֆերականները. Պալսգրավ, Ժակ Դյուբուա, Մեգրե, Ռամուս.—XVI դ. 1-ին կեսին Ֆրանսիայում ևս ձայներ են լսվում ֆրանսերենը տիրապետող գրական լեզու դարձնելու օգտին: Ժոֆրուա Տորին իր «Champfleury» գրքում հանդես է գալիս ֆրանսերենը գիտական գրականութեան լեզու դարձնելու օգտին: Լատիներենի բարոպաշարից օգտվելու հետ միասին ուժեղ տենդենց է նկատվում օգտագործելու մայրենի լեզվի բարբառների հարստութիւնները: Այս բոլորի հետևանքով՝ XVI դ. յրանսերենը դուրս է մղում լատիներենը նաև գիտական բնագավառից և դառնում տիրապետող գրական լեզու: XVI դարում ֆրանսերենի վրա որոշ ազդեցութիւն է ունենում և իտալերենը՝ առաջ բերելով նաև հսկազգական տենդենցներ:

Ֆրանսերենի առաջին քերականութիւնը գրվել է Անգլիայում Պալսգրավի կողմից (Palsgrave), 1530 թ.: Հաջորդ տարին լույս է տեսնում Ժակ Դյուբուայի (Սիլվիոսի) լատիներեն լեզվով գրած քերականութիւնը<sup>2</sup>: Հեղինակը ներածութեան մեջ առաջ է քաշում մայրենի լեզվից օգտվելու պահանջը: Ֆրանսերենի քերականութիւնը նա կառուցում է լատինականի օրինակով, աշխատում է ֆրանսերենում բացահայտել նույն քերականական հասկացութիւնները, ինչ լատիներենում. նա տարբերում է քերականական 3 սեռ (թեև ֆրանսերենը միայն 2-ն ունի), 6 հոլով (նախդիրների և հոգի կոմբինացիաներով, թեպետ ֆրանսերենը գուրկ է հոլովներից), 4 խոնարհում՝ -er, -oir, -re, -ir (լատինական -are, -ēre, -ēre, -ire խոնարհումներին համապատասխան):

Այս լատինականացված քերականութեանը առաջին հարվածը առլիս է Լուի Մեգրեն: Իր քերականութեան մեջ<sup>3</sup> նա նշում է, որ

<sup>1</sup> B. Buomattei. Della lingua toscana, 1623 1643.

<sup>2</sup> Jacobi Silvii in linguam gallicam Isagoge, Parisiis, 1531.

<sup>3</sup> L. Meigret, Le tretté de la gramere françoeeze, Paris, 1550.

Ֆրանսերենը ունի միայն 2 սեռ, հոլովներ չունի: Լեզվի նորմավորման հարցում նա կողմնորոշվում է դեպի կուլտուրական խավերի լեզվագործածությունը՝ արտահայտվելով լատինականացման տենդենցների դեմ: Քերականությանը նախորդած ուղղագրական տրակտատում՝ Մեգրեն, առաջնորդվելով միևնույն սկզբունքով, պահանջում է ուղղագրությունը մոտեցնել արտասանությանը: Ուղղագրության ավելի արմատական բարեփոխության գաղափարով է հանդես գալիս փիլիսոփա և քերական Պետրոս Ռամոսը (Պյեռ դը լա Ռամե, 1515—1572): Պայքար մղելով Արիստոտելի տրամաբանության և սխոլաստիցիզմի դեմ՝ նա աշխատում է այդ բանը տարածել նաև քերականության վրա և հրատարակում է իր «Քերականությունը»<sup>2</sup>: Այստեղ նա տալիս է նոր դասակարգում և նոր սահմանումներ, նուրբ գիտողություններ կատարում հնչյունաբանության և ձևաբանության բնագավառում: 1557 թ. լատիներենի ուսումնասիրության մեջ զգալի վաստակ ունեցող Ռոբերտ Ստեփանոսը (Ռոբեր էտյեն) լույս է ընծայում Ֆրանսերենի մի քերականություն<sup>3</sup>:

Հետագա մի ողջ հարյուրամյակ Ֆրանսիական քերականությունը շարունակում է ընթանալ նորմատիվ-էմպիրիկ հիմունքներով՝ մինչև ռոցիոնալիստական քերականության երևան գալը: XVII դ. Ֆրանսիական լեզվի տեսարանները լեզվի մշակման և նորմավորման հարցերում հիմք են ընդունում արիստոկրատիայի լեզվագործածությունը (Մալերբ, Վոժլա), «լավ ճաշակը», «լավ հասարակության» լեզուն:

Ռոմանական լեզուների գրական նորմավորման հարցերը բառաբանագրություն.— նոր գրական լեզուների զարգացումը դնում էր նորմաների մշակման պահանջ ոչ միայն քերականության բնագավառում, այլև բառարանագրության և ուղղագրության մեջ: Գրական լեզվի նորմաների մշակման հարցով զբաղվում են XVI—XVIII դդ. հիմնադրված ակադեմիաները (Իտալիայում՝ Academia della crusca-ն, 1582 թ., Ֆրանսիայում՝ Académie Française-ը, 1635 թ., Իսպանիայում՝ Academia Real-ը, 1713 թ.): Սրանք դրադվում են նորմատիվ բառարանների ու քերականությունների

<sup>1</sup> I. Meigret, Traicté touchant le commun usage de l'écriture Française, Paris, 1542.

<sup>2</sup> P. de la Ramée, Gramere, Paris, 1562. II հր. Grammaire, Paris, 1572:

<sup>3</sup> R. Estienne, Traicté de la grammaire française, Paris, 1569.

հրատարակութեան, ուղղագրական նորմաների մշակման հարցերով: XVI—XVIII դդ. ուսմանական ժողովուրդների մոտ հանդես են գալիս երկրեզվյան և նորմատիվ զանազան բառարաններ, այդ թվում և ակադեմիական բառարաններ. այսպես, Ֆրանսիայում 1599 թ. լույս է տեսնում հիշված Ռոբեր էսյենի «Ֆրանսա-լատինական բառարանը»: XVII դ. բառարանների թիվը խիստ աճում է. 1694 թ. լույս է տեսնում ակադեմիական բառարանը, որ հետագա հրատարակութունների մեջ մտցված ճշտումներով ու բարեփոխումներով՝ ձեռք է բերում մեծ արժեք: Այդ բառարանը կազմողները խուսափում են բարբառային և մասնագիտական բառերից (վարվարիզմներից, վուլգարիզմներից, սուբյեյիզմներից)<sup>1</sup> այն նախատեսած լինելով սրպես բառապաշարի նորմավորման հիմնական ուղեցույց: Այդպես է կազմված նաև իտալական 1612 թ. բառարանը: Հետագայում այսպիսի նեղ նորմավորող բառարանները ենթարկվում են խիստ քննադատութեան. այսպես, կայրնիցը պահանջում է բառարանները լայն ժողովրդական հիմքերի վրա կառուցել և տեղ տալ նաև մասնագիտական բառերին:

### բ) Գերմանական Ֆիլոլոգիա

Գերմաներենի առաջին ֆլեականները, տեսաբանները և բանաբանագիրները. Կլայնս, Շոտտել, Գոտշեդ, Ադելունգ.— Գերմանական լեզուների համար գրված առաջին քերականական աշխատությունը պատկանում է մի սնանուն հեղինակի և կրում է «Tractatus dans modum teutonisandi casus et tempora» խորագիրը: Այն գրվել է 1451 թ., Մյունստերում (Վեստֆալիա) և հրատարակվել որոշ ժամանակ անց: Դրան նախորդող Վալենտին Իկելզումերի «Գերմանական քերականությունը» («Teutscher Grammatica») բուն իմաստով քերականություն չէ, այլ ուղղախոսական և ուղղագրական ձեռնարկ:

XVI դ. սկսած՝ աճում է գերմաներենի քերականությունների թիվը: 1573 թ. երևան են գալիս Ալբերտ Էոլինգերի «Վերին դերմաներեն լեզվի ուսումնասիրությունը»<sup>1</sup> և կավրենտիոս Ալբերտոսի «Գերմաներենի քերականություն կամ լեզվի արվեստ»-ը<sup>2</sup>:

XVII—XVIII դդ. Գերմանիայում հանդես են գալիս զանազան լեզվական ընկերություններ (Sprachgesellschaften), որոնք գերման-

<sup>1</sup> A. Ölinger, Unterricht der Hoch Teutschen Sprach, 1573.

<sup>2</sup> L. Alberti's, Teutsch Grammatik oder Sprach Kunst, 1573.

ներեն լեզվի նորմավորման հարցում փորձում են խաղալ նույն՝  
հերը, ինչ ակադեմիաները ողմանական ժողովուրդների մոտ:

Գերմաներենի քերականները գրավոր լեզվի նորմաների հար-  
ցում մեծ մասամբ կողմնորոշվում են դեպի Լութերի աստվածա-  
շնչի թարգմանություն լեզուն, բայց խոսակցական լեզվի հարցում  
հանդես են բերում տարակարծություններ, որոնք սլավոնականացած  
էին Գերմանիայի տերիտորիալ մասնատվածությունը: Որոշ մասը  
կողմնորոշվում էր դեպի Սաքսոնիայի լեզվական նորման՝ հենվելով  
Լութերի հեղինակության վրա, մյուս մասը հանդես էր գալիս որպես  
վերտերիտորիալ լեզվի կողմնակից, որ չի սահմանափակված որևէ  
բարբառով:

XVI դ. և XVII դ. առաջին կեսում Գերմանիայում ամենից ավե-  
լի տարածված էր Վլայոսի քերականությունը<sup>1</sup>: XVII դ. կեսերից  
հետո նրան փոխարինում է Շոտտելի քերականությունը<sup>2</sup>: Շոտտե-  
լից է սկիզբ առնում այն սխալ կարծիքը, թե բարբառները աղբյուրին  
լեզվի աղավաղումներն են հասարակության «ստորին», ան-  
կիրթ խավերի բերանում:

Լեզվի նշանավոր տեսաբան Գոտշեդը իր «Գերմաներենի ար-  
վեստի հիմունքներում»<sup>3</sup> քերականական կանոնները տալիս՝ կողմ-  
նորոշվում է «լավ ճաշակով», ինչպես Ֆրանսիայում Վոտլան ու նրա  
կողմնակիցները: Գոտշեդն ընդհանուր առմամբ հանդես է գալիս  
որպես տրամաբանական քերականության ներկայացուցիչ, տրա-  
մաբանական հետևողականությունը և միօրինակությունը համարում  
գրական լեզվի գլխավոր արժանիքը:

Գերմաներենի քերականության և բառարանագրության ամե-  
նից ավելի ծավալուն ու հեղինակավոր գործերը պատկանում են  
Ադելունգին (1732—1806), որը նպատակ էր դրել, իր ուսուցիչ  
Գոտշեդի օրինակով, տալու գրական լեզվի նորմաներ: 1782 թ.  
լույս է տեսնում Ադելունգի ընդարձակ քերականությունը<sup>4</sup>, 1775—  
1786 թթ.<sup>5</sup> բառարանը<sup>5</sup>: XVII դ. հրատարակվում են նաև մի շարք

<sup>1</sup> Clajus, Grammatica germanicae linguae, ex Bibliis Lutheri Germanicis et aliis eius libris collecta, 1578.

<sup>2</sup> J. G. Schottelius; Ausführliche Arbeit von der teutschen Hauptsprache, 1663.

<sup>3</sup> J. C. H. Gottsched, Grundlegung einer deutschen Sprachkunst, 1748.

<sup>4</sup> J. C. H. Adelung, Umständliches Lehrgebäude der deutschen Sprache, 1782.

<sup>5</sup> J. C. H. Adelung, Versuch eines vollständigen grammatisch-kritischen Wörterbuchs der hochdeutschen Mundart, I—V, 1775—1786.



բարբառագիտական բառարաններ, որոնց մեջ հանդես է բերվում առանձին բարբառների բառապաշարը:

Անգլերենի ֆեռականները, բառաբանագիրները և տեսությունները XVI—XVIII դդ. Գիլլ, Ուոլլիս, Ջոնսոն և ուրիշներ.— XVI դարից սկսած քերականական, բառաբանագրական և ուղղագրական բնույթի աշխատություններ են հանդես գալիս նաև գերմանական այլ ժողովուրդների մոտ: XVI դ. Անգլիայում երևան են դալիս մի շարք ուղղագրական տրակտատներ. ուղղագրությունը ներկայացնում էր անգլերեն լեզվի կազմավորման ամենից ավելի ցավոտ կողմերից մեկը: Այս բնագավառում կատարված երկարատև աշխատանքը XVIII դ. հանգեցնում է ուղղագրական նորմաների կայունացմանը և հարատևմանը մինչև մեր օրերը: XVI—XVII դդ. գրվում են անգլերենի բազմաթիվ քերականություններ և՛ անգլիացիների, և՛ օտարերկրացիների համար<sup>1</sup>: XVI դ. ուղղագրական-քերականական աշխատություններից հիշատակելի են Թ. Սմիթի, Ջ. Հարտի, Ու. Սալսբերիի, Ա. էլլիսի և ուրիշների աշխատությունները: Այս դարում է լույս տեսնում Ֆրանսիացի Ժակ Բելլոյի անգլերենի քերականությունը ֆրանսերեն լեզվով<sup>2</sup>: XVII դ. անգլերենի քերականությունների թիվն ավելի է աճում՝ տալով մի շարք կարևոր գործեր՝ Ա. Գիլլի «Անգլիական բառաբանությունը», Չարլզ Բատլերի «Անգլերենի քերականությունը», Ջոն Ուոլլիսի «Անգլերենի քերականությունը», Քուպերի «Անգլիական քերականությունը»<sup>3</sup>: Սրանցից Ա. Գիլլը պահպանողական սկզբունքների կողմնակից է և խիստ կերպով հանդես է գալիս ամեն կարգի նորամուծությունների դեմ: Ամենից ավելի աչքի ընկնող քերականներից է Քուպերը, որը հստակ կերպով տարբերում է հնչյունը և տառը: Ուոլլիսի քերականությունը կառուցված է մայրիկ հիմունքներով. հնչյունաբանական մեծ հետաքրքրություն է ներկայացնում այդ աշխատությանը նախադրված այն բաժինը, որ կրում է «Քերականական-ֆիզիկական տրակտատ՝ խոսքի կամ հնչյունների կազմավորման մասին» խորագիրը («Tractatus grammatico-physicus de loquela sive sonorum formatione»):

<sup>1</sup> Վաղ անգլիական ուղղագրական-քերականական աշխատությունները գերահրատարակվել են „Neudrucke frühneuenglischer Grammatiken“ սեփայով:

<sup>2</sup> J. Bellot, Le maistre d'escole anglois, 1580.

<sup>3</sup> A. Gill, Logonomia anglica, 1621. Ch. Buttler, Grammatica linguae anglicanae, 1634. J. Wallis, Grammatica linguae anglicanae, 1653. Cooper, Grammatica anglicana, 1685.

Անգլիական բառարանագիրտությունը ևս XVI—XVIII դդ. մեծ զարգացում է ապրում: Անգլիական բառարանագիրներից առանձնապես հայտնի է Սամուել Ջոնսոնը (1709—1784):

Հոլանդերենի առաջին ֆերականությունը և բառարանը.— Հոլանդերենի առաջին ֆերականությունը հանդես է գալիս XVIII դ. սկզբներին<sup>1</sup>:

1547 թ. Կոռնելիոս Կիլիանոսը հրապարակում է ֆլամանդերենի և հարևան բարբառների մի համեմատական բառարան:

Ղրիմի գոթերենի վկայությունը.— 1589 թ. հոլանդացի Օ. Գ. Վան Բուսբեկը իր գրքում<sup>2</sup> բերում է Ղրիմի գոթերենի բառերի մի ցանկ, որը մինչև այժմ էլ գոթական այդ բարբառի միակ վկայությունն է:

Դանիերենի ֆերականները, բառարանագիրներն ու տեսաբանները XVI—XVIII դդ.— XVI—XVIII դդ. ուղղադրական-ֆերականական աշխատություններ են երևան գալիս սկանդինավյան գերմանական ժողովուրդների մոտ: Դանիացի Յակոբ Մադսեն Օրհուսի (1538—1586)՝ «Երկու դիրք տառերի մասին»<sup>3</sup> աշխատությունը այս շրջանի հնչյունական մտքի լավագույն արտադրանքներից մեկն է: Հեղինակը ոչ միայն տալիս է հնչյունների սիստեմատիկ բնութագիրն ու նրանց կազմավորման սլավոնների նկարագիրը, այլև բերում է դանիական բարբառագիրտության համար արժեքավոր տրվյալներ ու տեղեկություններ: Դանիերենի առաջին ֆերականությունը գրվել է 1646 թ. և հրատարակվել 1668 թ.<sup>4</sup> է. Պոնտոպիդանի (E. Pontoppidan) կողմից: Սրան հետևում են Պ. Սյուսլի, Հ. Գերների լեզվաբանական-ֆերականական աշխատանքները: Պոնտոպիդանն ու Սյուսլը նշանակալից լեզվագիտություն են գործել դանիական ուղղագրության նորմավորման հարցի վրա<sup>5</sup>: XVIII դ. ֆերական Հեյսգորդի ֆերականական աշխատությունները ներկայացնում են ֆերականական լավագույն տրադիցիաների ամփոփումը և իրենց արժեքը մինչև այժմ էլ չեն կորցրել: XVII դ. երևան է գալիս և դանիական առաջին բառարանը, որ 60 հատորով է նախատեսված եղել և կիսատ է մնացել (սկսվել է 1680 թ. Մաթիաս Մոթի կողմից): Այս շրջանում էլ կաղմվում են բարբառագիրտական առաջին բառացանկերը:

<sup>1</sup> W. Sewel, Nederduytsche Spraakkonst. 1708.

<sup>2</sup> O. G. von Busbeck, Legationis Turcicae epistolae quatuor, 1585.

<sup>3</sup> J. M. Aarhus, De literis libri duo, 1586.

<sup>4</sup> Հմտ. М. И. Стеблин-Каменский, История скандинавских языков, 1953, էջ 62.

Շվեդերենի բառարաններն ու ֆերականութունները XVII—XVIII դդ.— Նույն XVII դ. են երևան գալիս շվեդերենի առաջին բառարաններն ու քերականությունները: Շվեդական առաջին բառարանը գրվել է լատիներեն լեզվով, Աուրիվիլլիոսի (E. Aurvillius) կողմից: Լատիներենը երկար ժամանակ տիրապետող գիտական լեզու էր և իշխում էր համալսարանում. 1677 թ. առաջին անգամ շվեդերենը մուտք է գործում այնտեղ: 1696 թ. հրապարակվում է շվեդերենի առաջին շվեդերեն քերականությունը: Այս շրջանի շվեդական բառարանագրական աշխատանքներից կարևոր են է. Սկրոդերոսի (E. Schroderus) բառարանները, որոնք պարունակում են և ֆրանսերեն բառեր: Շվեդիայում ևս ուղղագրական հարցերը կարևոր տեղ էին բռնում: 1786 թ. հիմնվում է Շվեդական ակադեմիան, որ կարևոր դեր է խաղում լեզվի հետագա նորմավորման հարցում:

#### գ) Նեոլատինական Ֆիլոլոգիա

Լեհերենի ֆերականութուններն ու բառարանները XVI—XVIII դդ.—XVI դարից սկսած երևան են գալիս սլավոնական ազգային լեզուների ուղղագրությանն ու քերականությանը նվիրված զանազան աշխատություններ: Նույն դարի առաջին կեսում լատիներեն լեզվով գրված քերականական տրակտատներում զուգահեռաբար բերվում են լեհերենի փաստերը որպես լատիներենի համապատասխան փաստերի բնութագրության միջոց: Ինչպես նշել ենք, 1440 թ. Պարկոշովիչը գրում է լեհերենին նվիրված առաջին աշխատությունը: XVI դ. երկրորդ կեսին երևան են գալիս լեհերենի քերականություններ՝ ֆրանսիացի Պետրոս Ստրատորիոսի աշխատությունը (1568)<sup>1</sup> և Ֆոլկմարի լեհերենի քերականությունը գերմանացիների համար (1594): Լեհերի համար գրված լեհերենի առաջին քերականությունը պատկանում է XVІІІ դ. հեղինակ Շիլյարսկուն (1770). 1773—78 թթ. լույս է տեսնում Օ. Կոպչինսկու ընդարձակ քերականությունը: XVІ դ. երկրորդ կեսից սկսած գրվել են և լեհերենի հետ առնչվող բառարանագրական աշխատանքներ՝ Մոնչինսկու

<sup>1</sup> P. Stratorius, Polonicae grammaticis institutio in eorum gratiam qui eius linguae elegantiam cito et facile addiscere cupiunt. Հեղինակի անունը պահպանվել է միայն լատինական ձևով. հմմտ. Т. Лерс-Сплавинский, Польский язык, 1954, էջ 345:

լատիներեն-լեհերեն բառարանը<sup>1</sup>, Կնասլսկու (Կնասլիոսի) «Լեհ-լատինա-հունական գանձարանը»<sup>2</sup>։

Չեխերենի բառարանները և ֆեռականությունները. — 1511 թ. և 1560—62 թթ. լույս են տեսել շեխական առաջին բառարանները։ 1567 թ. լույս է տեսել չեխերենի մի քերականություն գերմանացիների համար, 1603 թ.<sup>3</sup> Լավրենտի Նուգոժերցու քերականությունը։

Ռուսերենի ֆեռականությունները, բառարանները և ուղղագրությանը նվիրված ուսումնասիրությունները XVII—XVIII դդ., Լոմոնոսովի «Ռուսական ֆեռականությունը», «Ռուսական ակադեմիայի բառարանը». — Ռեռես 1696 թ. հոլանդացի Հ. Վ. Լույսլթեր հրատարակում է ուսանելի մի քերականություն<sup>3</sup> զանազան հավելվածներով հանդերձ։ Ռուսերենի քերականության իսկական դիտական հետազոտությունն սկսվում է Լոմոնոսովի «Ռուսական քերականությունից»<sup>4</sup>, որը մեծ ազդեցություն է թողել XVIII դ. երկրորդ կեսի ռուսական քերականական աշխատությունների վրա։ Իր քերականական աշխատությունը Լոմոնոսովը կառուցել է էմպիրիկ հիմունքներով՝ հաղվադեպ միայն տուրք տալով ընդհանրական ուսուցանելիության քերականության սխեմաներին. վերջինս արտահայտվել է, օրինակ, այն բանում, որ նա խոսում է ուսանելի բայական 10 ժամանակի մասին, մինչդեռ ուսանելի բայի այնպիսի մի կարևոր կողմը, ինչպիսին կերպն է, աչքաթող է անում։ Սակայն ընդհանուր առմամբ Լոմոնոսովին խորթ է Սմոտրիցկու կամայական վերաբերմունքը դեպի կենդանի լեզվի փաստերը, դրանք սեփական հայեցողությամբ խմբագրելու և արհեստական ձևեր ստեղծելու ձգտումը։ Լոմոնոսովն է առաջին անգամ ներմուծել նախդրավոր (предложный) հոլովի գաղափարը ռուսական քերականության մեջ։

Լոմոնոսովի աշխատությունը բաղկացած է 6 «հրահանգից» (наставления). 1-ինում խոսում է քերականության ընդհանուր հարցերի, 2-րդում՝ հնչյունաբանության և ուղղագրության, 3—5-րդում՝ ձևարանության ու բառակազմության և 6-րդում՝ շարահյուսության մասին։ Զեռբանության նյութը (ներառյալ և բառակազ-

<sup>1</sup> Dictionarium latino-polonicum in usum et gratiam polonicae inventatis, 1564.

<sup>2</sup> Thesaurus polono-latino-graeco, 1621, II հր. 1648.

<sup>3</sup> H. W. Ludolfi Grammatica russica, 1696։ Ռուսերեն է թարգմանվել և 1937 թ. հրատարակվել Բ. Ա. Լարինի կողմից։

<sup>4</sup> М. В. Ломоносов, Российская грамматика, СПб, 1755.

մությունը) Լոմոնոսովը բաշխում է ըստ խոսքի մասերի փոփոխականության՝ անունների կազմությունն ու հորվումը քննելով 3-րդ «հրահանգում», բայերի խոնարհումը՝ 4-րդ «հրահանգում» և անփոփոխ խոսքի մասերը՝ 5-րդ «հրահանգում»: Լոմոնոսովը իր խոսքի մասերի ուսմունքը կառուցելով խմաստաբանական հիմունքով՝ երկու գլխավոր խոսքի մասերը՝ անունն ու բայը հակադրում է մյուսներին: Լոմոնոսովի աշխատության ազդեցությունը խիստ մեծ է եղել Կուրգանովի, Սվետովի, Քարսովի և այլոց քերականական աշխատությունների վրա:

Լոմոնոսովը հատուկ ուշադրություն է դարձրել նաև ճարտասանական-ոճաբանական հարցերին: Օգտագործելով դեռևս անտիկ աշխարհից եկող 3 ոճերի ուսմունքը՝ նա փորձում է դրանք մեկնաբանել ռուսական իրականության լեզվական տարբերակումների հիման վրա և կայում է բարձր ոճը սլավոնական, միջինը՝ ռուսական (գրական) և ստորինը՝ ժողովրդական-խոսակցական (простонародное) «խոսքերի» (речения) հետ:

XVIII դ. բավական սուր կերպով են դրվում և ուղղագրական հարցերը. Լոմոնոսովը, Տրեդիակովսկին և ուրիշները պահանջում են ռուսական այբուբենից հանել ավելորդ տառերը, պայքարում են ուղղագրական որոշակի սկզբունքներ հաստատելու համար: Վերջին հարցում Տրեդիակովսկին հանգում է հնչյունաբանական սկզբունքին. Լոմոնոսովը, ելնելով ռուսերենի առանձնահատկություններից, կարևոր տեղ է տալիս ստուգաբանական-ձևաբանական սկզբունքին:

Ռուսական ակադեմիայի հիմնադրմամբ (1783) նոր թափ է ընդունում բառարանագրական աշխատանքը: 1789—1794 թթ. լույս է տեսնում «Ռուսական ակադեմիայի բառարանը»<sup>1</sup>, որը այլ երկրների ակադեմիական բառարանների նորմատիվ սկզբունքներով կառուցված լինելով հանդերձ՝ բավական տեղ է տալիս բարբառային բառերին. միաժամանակ տեխնիկական տերմինաբանության մշակմանն օգնելու նկատառումով բառարանի հեղինակները բավականաչափ մեծ տեղ են հատկացնում տեխնիկական բառերին:

#### գ) Եվրոպական այլ լեզուների ուսումնասիրությունը

Ներկվրոպական լեզուներ. — XVI—XVIII դդ. երևան են գալիս նաև եվրոպական այլ լեզուների քերականություններ ու բառարան-

<sup>1</sup> Словарь Академии Российской, 1789—1794.

ներ: Կելտական լեզուներին նվիրված քերականություններից առաջինը Գ. Ռորերտսի վալլիսերենի (ուելսերենի) քերականությունն էր<sup>1</sup>, որին 1592 և 1593 թթ. հետևում են նույն լեզվի երկու այլ քերականություններ: 1642 թ. լույս է տեսնում իռլանդական առաջին քերականությունը<sup>2</sup>, 1778 թ.<sup>3</sup> գաելերենի (Շոտլանդիա) վերաբերյալ առաջին լեզվաբանական աշխատությունը<sup>3</sup>: Ավելի վաղ են հանդես եկել կելտական լեզուների բառարանները. 1499 թ. հրատարակվել է բրետոներենի մի բառարան, 1547 թ.<sup>4</sup> վալլիսերենի բառարանը: Ալբաներենը և բալթիական լեզուները (լիտվերեն, լատվերեն) ուսումնասիրության են սկսում ենթարկվել XVII դարից սկսած: 1629 թ. լույս է տեսնում լեհերեն-լատիներեն-լիտվերեն մի բառարան<sup>4</sup>, 1653 թ.<sup>5</sup> լիտվերենի առաջին քերականությունը<sup>5</sup>, 1732 թ.<sup>6</sup> լատվերենի քերականությունը<sup>6</sup>: 1638 թ. երևան է գալիս նոր հունարենի առաջին քերականությունը<sup>7</sup>:

Ոչ հնդեվրոպական լեզուներ. — Ֆիննա-ուգրական ժողովուրդների լեզուներին նվիրված առաջին աշխատությունը էրդոզիի<sup>8</sup> հունգարերենի քերականությունն էր (1539)<sup>8</sup>: XVII դ. հանդես են գալիս ֆիններենին<sup>9</sup>, էստոներենին, լոպարերենին նվիրված աշխատություններ ևս:

Բասկերենի առաջին քերականությունը գրվել է իսպաներեն լեզվով, Ա. դե Պոզայի կողմից<sup>10</sup>:

<sup>1</sup> G. Roberts, Dosparth byrr ar y rhann gyntaf i ramadeg, Cymraeg, 1567.

<sup>2</sup> P. F. O'Molloi, Grammatica latino-hibernica nunc compendiata, Roma, 1642.

<sup>3</sup> M. Shaw, Analysis of the Gaelic Language, 1778.

<sup>4</sup> Dictionarium trium linguarum, 1629.

D. Klein, Grammatica lituanica, 1653. Շիրվիդի «Clavis linguae lithuanicae»-ն հանդես է եկել ավելի վաղ (1630), բայց մեզ չի հասել:

<sup>6</sup> Rudimenta linguae lotavicae, 1732.

S. Portius, Grammatica linguae graecae vulgaris, Paris, 1638.

I. Erdösi (I. Sylvester), Grammatica hungaro-latina in usum puerorum, 1539.

<sup>9</sup> A. Petraeus, Linguae finnicae institutio, Abo, 1649.

A. de Poza, De la antique lingua, poblaciones y comarcas de las Españas, Bilbao, 1587.

ա) Սեմական ֆիլոլոգիա

XVI դարից սկսած եվրոպական լեզվաբանական միտքը զգալի հետաքրքրություն է ցուցաբերում սեմական լեզուների նկատմամբ: Այս հետաքրքրությունը պետք է բացատրել նախ՝ այն կարևոր դերով, որ խաղացել է արաբական գիտությունը վերածննդի հարցում. երկրորդ՝ քրիստոնեական եկեղեցուն՝ աստվածաշնչի գիտական տեքստի վերականգնման ուղղությամբ ցուցաբերած հետաքրքրությամբ, որ նպաստում է եբրայական և արամեական-ասորական լեզուների ուսումնասիրությանը. երրորդ՝ եվրոպական պետությունների գաղութային քաղաքականության ընդհանուր պահանջներով. վերջապես, չորրորդ՝ արաբերենի՝ իսպանական կյանքում խաղացած կարևոր դերով:

Սեմական ֆիլոլոգիայի բնագավառում կատարված աշխատանքի առաջին կարևոր նմուշը Պեդրո դե Ալկալայի իսպանական արաբերենի քերականությունն է<sup>1</sup>, որը մինչև այժմ էլ արաբական այդ բարբառի հետ ծանոթանալու միակ աղբյուրն է: Մեկ տարի անց լույս է տեսնում Իոհանն Ռոյխլինի (1455—1522)՝ եբրայերենին նվիրված աշխատությունը<sup>2</sup>, որին նախորդել էին եբրայերենի ուսումնասիրության երկու աննշան փորձեր<sup>3</sup>: Սրանց հետևում է Մ. Վիկտորիոսի եթովպական քերականությունը<sup>4</sup>: Ռոյխլինի աշխատությունը պարունակում էր եբրայերենի հնչյունաբանությունը, բառարանը և խոսքի մասերի ուսմունքը, ընդ որում հետևելով սեմական լեզուների բնիկ քերականություններին՝ Ռոյխլինը առանձնացնում է Յ խոսքի մաս՝ անուն (ներսույալ նաև դերանունն ու դերբայը), բայ և մասնիկ կամ «նշանակակից» (consignificativum), վերջինիս մեջ զրվում են մակբայը, շաղկապը, նախդիրը և միջարկությունը: Արաբական և եբրայական քերականների օրինակով հստակ կերպով տարբերակելով բառի կազմիչները՝ նա մտցնում է suffixum «վերջամասնիկ» բառը՝ արմա-

<sup>1</sup> P. de Alcalá, Arta para ligeramente saber la lengua aráviça: Granada, 1505.

<sup>2</sup> I. Reuchlin, De rudimentis hebraicis, Pforrheim, 1506.

<sup>3</sup> Introductio ad litteras hebraicas, զրված 1497 թ. հավանարար Մատթեոս Ադրիանոսի կողմից. De modo legendi et intelligendi Hebraeum, զրված 1501 թ. (?) Պեղիկանի կողմից:

<sup>4</sup> M. Victorius, Chaldaeae sive Aethopicae linguae institutione., 1548.

տից (radix) հետո դրվող մասնիկը նշանակելու համար. այդ բա-  
 րը հետագայում լայն գործածություն է ստանում լեզվաբանական  
 գրականության մեջ: Ռոյլսլինը զգալի դեր է խաղացել և հունարենի  
 ուսումնասիրության ասպարեզում:

XVI դ. երկրորդ կեսին և XVII դարում սեմական ֆիլոլոգիայի  
 հաջողություններն ավելի զգալի են դառնում: Երևան են գալիս  
 ասորագետ Կանինիոսի աշխատությունը<sup>1</sup>, Իոհանն Բուքստորֆի  
 (1564—1629) և նրա որդի Բ. Իոհանն Բուքստորֆի (1599—1664)  
 սեմագիտական-երբայագիտական աշխատությունները (առաջին  
 հերթին բառարանները)<sup>2</sup>, արաբագետ էրպենիոսի (1584—1624)  
 «Արաբական քերականությունը»<sup>3</sup>, եթովպագետ-ամհարագետ Հոբ-  
 Լուդոլֆի քերականական-բառարանագրական աշխատությունները<sup>4</sup>:

Սեմագետների կողմից սեմական լեզվաբանական բնիկ աշ-  
 խատություններին ծանոթանալը իր հերթին անհետևանք չի անց-  
 նում: Մի շարք տեսական դրույթներ անցնում են եվրոպական գի-  
 տությունը և ազդում լեզվաբանական որոշ գաղափարների ձև-  
 վորման վրա: Այդպիսի հիմք ունեն՝ դը Բրոսսի և Ֆուլդայի այն  
 հայացքը, որ արմատը նախնական բառն է, իսկ ածանցը նրա  
 ձևափոխիչը, արաբական լեզվաբանների մոտ տարածված և համե-  
 մատական լեզվաբանության հիմնադիրներից մեկի՝ Բոպպի կցա-  
 կանության տեսության մեջ արտացոլված այն կարծիքը, որ բա-  
 յերի դիմային վերջավորությունները ծագում են նախկին անձնա-  
 կան դերանուններից<sup>5</sup>:

## բ) Հայագիտություն

XV—XVIII դդ. երևան են գալիս արևելյան այլ լեզուներին  
 նվիրված քերականական-բառարանագրական վանաղան աշխա-  
 տություններ: Եվրոպայում հայերենին և ղպտերենին նվիրված

<sup>1</sup> A. Caninius, Institutiones linguae Syriacae, Assyriacae atque  
 Thalmudicae, una cum Aethiopicæ atque Arabicæ collatione, Paris, 1554.

<sup>2</sup> I. Buxtorf, Lexicon hebraicum et chaldaicum, B. I. Bux-  
 torf, Lexicon chaldaicum, talmudicum et rabbinicum, Lexicon chaldai-  
 cum et syriacum *և այլն*:

<sup>3</sup> Erpenius, Grammatica arabica, 1613.

<sup>4</sup> J. Ludolf, Grammatica amharicae linguae, 1698, Lexicon aethio-  
 picum, 1699, Lexicon amharico-latinum, 1698, Aethiopische Grammatik, 1702.

<sup>5</sup> В. А. Звегинцев, Очерк истории языкознания до XIX века,  
 хрестоматия по истории языкознания XIX—XX веков, 1956, էջ 21:



ղանաղան աշխատանքների երևան գալը բացատրվում էր առաջին հերթին քրիստոնեական եկեղեցու էքսպանսիոնիստական ձրգտումներով, այլև աստվածաշնչի տեքստի ուսումնասիրության ւյահանջներով: Հայերենի նկարագրության առաջին փորձը եվրոպայում XVI դարից է և վերաբերում է հայկական տառերին<sup>1</sup>: XVII—XVIII դդ. երևան են գալիս հայագիտական մի շարք աշխատություններ՝ Ց. Ռիվոլայի, Կ. Գալանոսի, Յ. Յ. Սկրոդերի քերականական աշխատությունները<sup>2</sup>, նույն Ռիվոլայի և Հակոբ Վիլլոտի բառարանները<sup>3</sup>:

XVII—XVIII դդ. գրվում են և հրատարակվում նաև հայերեն բաղմամբիվ քերականություններ ու բառարաններ: Այս շրջանի հայկական քերականությունները ձևվում են լատինական քերականությունների օրինակով, ղգալի մասով էլ տրամաբանականաօցիոնալիստական բնույթ են կրում: Լատինաբանության և ղանաղան ոօցիոնալիստական «բարեփոխությունների» հաղթահարումը տեղի է ունենում XVIII դ. երկրորդ կեսին, երբ լույս է տեսնում Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկաղեան լեզուի» աշխատությունը (1779 թ.): XVIII դարին է պատկանում նաև Մխիթար Սեբաստացու և նրա աշակերտների կաղմած երկհատոր «Բաղգիրք հայկաղեան լեզուի» աշխատությունը (1769 թ.), որը մի շարք բառարանների հավաքածու է և որտեղ կան նույնպես հատուկ անունների բառարաններ:

Այս շրջանի քերականությունները տեղ են տալիս հիմնականում հին գրական հայերենին (դրաբարին): Նոր հայերենի նկարագրության առաջին փորձերին հանդիպում ենք Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհարար լեզուին հայոց»-ում (ուրեմտահայ տարբերակի համար, 1727) և Սկրոդերի վերոհիշյալ աշխատության մեջ (արևելահայ տարբերակի համար, 1711 թ.): Մխիթար Սեբաստացու ու նրա աշակերտների կաղմած վերոհիշյալ աշխատության մեջ ղեանեղված են նաև գրաբար-աշխարհարար և աշխարհաբար-գրաբար բառարաններ: Մխիթար Սեբաս-

<sup>1</sup> Th. Ambrosius, *Introductio in Chaldaicum linguam, Syriacam, atque Armenicam et decem alias linguas*, 1539.

<sup>2</sup> F. Rivola, *Grammaticae Armenae libri quatuor*, 1624. C. Galanus, *Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae*, 1645. J. J. Schröder, *Thesaurus linguae Armenicae*, 1711.

<sup>3</sup> F. Rivola, *Dictionarium Armeno-Latinum*, 1633. J. Villoet, *Dictionaris Latino-armenum*, 1712.

տաքին ուշագրություն է դարձնում հայերենի և այլ լեզուների մի շարք այնպիսի ընդհանրությունների վրա, որոնք փոխառությամբ շէն կարող բացատրվել<sup>1</sup>:

#### գ) Հնդիրաճագիտութիւն

XVII—XVIII դարերին են վերաբերում նաև հնդիրանական լեզուների տառչին եվրոպական քերականությունները: 1614 թ. լույս է տեսնում Յ. Բ. Ռայմունդոսի պարսկերենի քերականությունը<sup>2</sup>. 1787 թ.<sup>3</sup> Մ. Գարցոնիի «Քրդերենի քերականությունը և բառարանը»<sup>3</sup>. XVIII դ. 1-ին քառորդում գերմանացի Յ. է. Հաքսլեդենը գրում է սանսկրիտի տառչին քերականությունը. սա թեև լույս չի տեսնում, բայց օգտագործվում է Պատուխի կողմից, որ սանսկրիտի առաջին տպագիր քերականության հեղինակն է<sup>4</sup>:

Սակայն հիլրոպացիների ծանոթությունը սանսկրիտին ավելի վաղ էր տեղի ունեցել, կատարվել էին որոշ թարգմանություններ. սանսկրիտին ծանոթացած առաջին եվրոպացիներից էին իտալացի Պ. Սասետտին, Ռոբերտոս դե Նոբելիբոսը (1577—1656), հուլանդացի Ա. Ռոգերը, գերմանացի Հ. Ռոթը:

XVI դարից սկսած հիլրոպացիներն զբաղվում են Հնդկաստանի հարավում գտնվող դրավիդյան լեզուների ուսումնասիրությամբ, որոնց ավելի վաղ էին ծանոթացել: Սանսկրիտի և նոր հնդկական լեզուների ուսումնասիրությունը սկսվում է անգլիացիների՝ արեվելյան Զինաստանում հաստատվելուց հետո:

XVIII դ. գրվում են նոր հնդկական լեզուներին նվիրված մի շարք աշխատություններ՝ Կելիերի հինդուստանի լեզվի քերականությունը<sup>5</sup>, Անոմպլամի բենգալերեն-պորտուգալերեն բառարանը<sup>6</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Г. Б. Джаукян, О первых попытках применения сравнительного метода в истории армянского языкознания, „Известия АН Арм. ССР“, 1957, № 6, էջ 58—59.

<sup>2</sup> I. B. Raymondus, Rudimenta grammatices Persicae, Roma, 1614.

<sup>3</sup> M. Garzoni, Grammatica e vocabulario della lingua kurda, Roma, 1787.

<sup>4</sup> Paulinus, Sidharubam seu grammatica Samsertamica, Roma, 1790.

J. J. Kelejaer, Lingua Hindustanica (գրված է շուրջ 1715 թ. և հրատարակված է 1743 թ. D. Mil-l-ի „Dissertationes selectae“-ում, II ed., Leyden, 1743).

<sup>6</sup> M. da Assumpçãam, Vocabulario et idioma bengalla e portuguez, Lisabon, 1743.

## դ) Զինագիտություն

Եվրոպացիների կողմից շինարենին նվիրված առաջին տպագիր աշխատանքը Ա. Կիրխերի քերականությունն է<sup>1</sup>:

Բուն Զինաստանում այս շրջանում լայն ծավալ է ստանում լեզվաբանական աշխատանքը, որ ընդգրկում է լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր բնագավառները: Զինական յուրահատուկ քերականական սիստեմը, որ ծագել է բանասիրական աշխատանքի հետ կապված, ներկայացված է մի շարք դործերով, որոնք ազատ են օտար ազդեցությունից:

Այս շրջանին են վերաբերում կարևոր մի շարք բառարանագրական աշխատանքներ՝ «Քանսի ձրդյան»-ը (հիերոգլիֆական բառարան, 1716), «Փեյվեն յուն ֆու»-ն (հանգարան՝ կազմված 1704 թ. հրովարտակով), «Փյանձը լեյբյան»-ը (բարդ բառերի և բառազուգորդումների բառարան՝ կազմված 1719 թ. հրովարտակով):

XVII—XVIII դդ. և XIX դ. սկզբում լայն ծավալ է ընդունում հնչյունաբանական-հիերոգլիֆաբանական աշխատանքը. Գու Յանուն (1613—1683) զբաղվում է պատմական և ժամանակակից հնչյունաբանության հարցերով («Ինսյուե ու շու»—«Հնչյունաբանության հինգ գիրք»), Դուան Յուլ-ցայը (1735—1815)<sup>2</sup> հիերոգլիֆաբանությունը: XVIII դ. լեզվաբանները, սկսած Յյան Դա-սինից (1728—1804), մեծ ուշադրություն են դարձնում հին և միջին շինարենի հնչյունաբանության հարցերին՝ փորձելով վերականգնել այդ շրջանների հնչումը:

Ֆիլոլոգիական քերականության հարցերի մշակումը այս շրջանում տալիս է մի շարք ականավոր դեմքեր: Վան Նյան-սունը (1744—1832) և նրա որդի Վան Ին-ջին (1766—1834) համարվում են շինական քերականության հիմնադիրները: Վերջինս զբաղվում է հին շինարենի բառապաշարի ուսումնասիրությամբ՝ ստեղծելով «Կանոնական և պատմական գրքերի բառապաշարը» («Նին ջուան շի ցը», 1798) աշխատությունը, որն իր արժեքը մինչև հիմա էլ չի կորցրել: Լյու Յին («Ձուձը բյանյուե», 1711) և ուրիշները զբաղվում են դասական հուշարձանների լեզվի սպասարկիչ բառերի շարահյուսական ֆունկցիաների ուսումնասիրությամբ:

Քննարկվող էպոխայում են ստեղծվում շինական քերականական տերմինաբանությունը և քերականական հիմնական հասկա-

<sup>1</sup> A. Kircher, China illustrata, 1667.

ցությունները: Բառերն ըստ քերականական արժեքի բաժանվում են նշանունականների (շիձը) և աննշանակների (սյուլձը): Նշանունականների մեջ հետագայում առանձնացվում են գոյականներ, ածականներ և բայեր:

## Ե) ՃԱՎՈՆԱԳԻՏՈՒՔՅՈՒՆ

XVII դարի սկզբից մինչև 1867 թ. դարգանում է ճապոնական ինքնուրույն և նախորդ շրջանի համեմատությամբ ավելի գիտական բնույթ կրող լեզվաբանությունը: Նոր հոսանքի յուրատեսակ սկզբնավորող է դառնում Կեյտյուն (1640—1701), որի ուղղադրական բառարանը («Վաձի սյորանսյո») կարևոր երևույթ էր: Եթե նախկինում շինարենի, որպես գրական լեզվի, ուսումնասիրությունը առաջին պլանի վրա էր դրված, ապա այժմ առաջին պլանն է մղվում ճապոներենը և ձևավորվում «ճապոնագիտությունը» (կոկուգակա): «Ճապոնագիտության» 4 վարպետներն են համարվում Կադա Աձուամամարոն, Կամո Մարուչին, Մոտոորի Նորինագան և Հերատա Ացուտանեն (1776—1843): XVIII դ. և XIX դ. առաջին կեսում ճապոնացիների ինքնուրույն քերականական աշխատանքը լայն զարգացում է ստանում. Ֆուձիտանի Նարիակիրան (1765—1774) առաջին անգամ հիմնավորում է խոսքի մասերի քառամասնյա բաժանումը. Մոտոորի Նորինագան (1730—1801) տալիս է «տեհիոխի» (ձևաբանության) առաջին լուրջ գիտական հետազոտությունը. նրա որդի Մոտոորի Խարունիվան տալիս է խոնարհման տեսությունը. Տոձյո Գիմոնը և Սուձուկի Ակիրան քերականության զարգացումը տանում են դժված ուղիով: Միայն 1867—68 թթ. ճապոնական անավարտ բուրժուական ռևոլյուցիայից հետո հանդես է գալիս եվրոպական լեզվաբանության ու քերականության ազդեցությունը, և սկսվում է նոր շրջան:

## Գ) ՊՐԵՍԵՆՏԱԿԱՆ ԱՅՆ ԼԵԳՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՔՅՈՒՆ

XVII դարից սկսած երևան են գալիս արևելյան այլ լեզուներին նվիրված աշխատություններ: 1612 թ. լույս է տեսնում մալայերենի առաջին ուսումնասիրությունը հոլանդերեն<sup>1</sup>: Նույն թվին Մեզիզերը լույս է ընծայում թուրքերենի առաջին եվրոպական քե-

<sup>1</sup> A. C. Ruyll. Spieghel van de maleysche taal, Amsterdam, 1612.

բականությունը<sup>1</sup>: 1680 թ. երևան է գալիս դրավիդյան լեզուներից մեկի՝ թամիլերենի քերականությունը<sup>2</sup>: 1643 թ. հունդես է գալիս վրացերենի առաջին եվրոպական քերականությունը<sup>3</sup>, իսկ XVIII դ. երևան են գալիս առաջին տեղական քերականությունները՝ (է. Շանշովանիինը՝ 1737 թ., հր. 1881 թ., Անտոնի Ա կաթողիկոսինը՝ 1753 թ., հր. 1885 թ.) և բառարանը (Սուրխան-Սաբա Օրբելիանիինը՝ 1716 թ.): Նախքան պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորումը, կովկասյան լեզուները գրավել են Պ. Ս. Պալլասի, Ի. Ա. Գյուլդենշտեդտի, Գ. Յ. Կլապոթի ուշադրությունը: Անտոնի կաթողիկոսի քերականությունը, կառուցված լինելով հայ քերական Մխիթար Սեբաստացու քերականության 'օրինակով, ազդում է հետագա քերականությունների վրա՝ ընդհուպ մինչև XIX դ. երկրորդ կեսը:

### է) Ամերիկա-ճիստիկա և աֆրիկաճիստիկա, օվկիանյաց լեզուների ուսումնասիրություն

Ամերիկայի հայտնագործումից հետո սկսում են ղգալի ուշադրություն գրավել նաև ամերիկյան բնիկների լեզուները: Այս հարցում կարևոր դեր են խաղում միսիոներները, որոնք շատ դեպքում լեզվաբանական համապատասխան կրթություն չունեին:

Դեռևս XVI դ. լույս են տեսնում այդ լեզուներին նվիրված մի շարք գործեր: 1555—60 թթ. հրատարակվում է Ա. դե Օլմոսի երկհատոր աշխատությունը՝ նվիրված մեքսիկերենին, տոնակերենին և հուսաստեկերենին<sup>1</sup>, 1560 թ.՝ Դոմինգո դե Սան Թոմասի՝ կիչուա լեզվի քերականությունը<sup>2</sup>: 1593 թ. երևան է գալիս միջին ամերիկյան լեզուներից մեկի նկարագրությունը, 1599 թ.՝ սրաուկաներենի քերականությունը: Կաթողիկ միսիոներ, Մեքսիկայի բնակիչ Անտոնիո դել Ռինկոնը գրում է Մեքսիկայի բնիկների լեզվի՝ բուն մեքսիկերենի քերականությունը:

XVII դ. երևան են գալիս քերականական աշխատություններ՝

<sup>1</sup> H. Megiser. Institutionum linguae turcicae libri quatuor, 1612.

<sup>2</sup> B. da Costa. Arte tamulica, Verapoli, 1680.

<sup>3</sup> Fr. M. Madggio. Syntagmaton linguarum orientalium, quae in Georgie audiuntur, Romae, 1643, II 47. 1670.

<sup>4</sup> A. de Olmos, Grammatica et lexicon linguae mexicanae, totonacae et huastecae. Mexico, 1555—1560.

<sup>5</sup> Domingo de San Tomas, Grammatica o arte de la lengua general de los Indios de los reynos del Peru, Valladolid, 1560.

տագալոգերենի<sup>1</sup>, հուլոններենի<sup>2</sup>, մոխոներենի մասին<sup>3</sup>: 1603 թ. հրատարակվել է այժարներենի մի քերականություն, 1639 թ.<sup>4</sup> դուստրինի լեզվի քերականությունը:

Ամերիկյան լեզուների հետազոտությունը ինտենսիվ կերպով շարունակվում է և հետագայում: XVIII դ. լույս են տեսնում տարասկերենի քերականությունը<sup>1</sup>, էսկիմոսերենի քերականությունը:

Կեռևս Վասկո դե Գաման իր ուղևորության ժամանակ որոշ տեղեկություններ էր հավաքել հարավ-աֆրիկյան լեզուների մասին: XVII դ. դրանց մասին էլ ավելի մանրամասն փաստեր են հավաքում սլորտուգալացիները:

Իսպանացի Ալվարո դե Մենդանյան XVII դ. տեղեկություններ է տալիս օվկիանյան լեզուների մասին:

## II. ԱՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ-ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ԱՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

Բուն «ստուգաբանական» ուսմունքները այս շրջանում դեռևս կրում են անտիկ ստուգաբանական ուսմունքների կամայականությունների կնիքը: Լեզուների պատմության ու ցեղակցության հարցերի մասին անբավարար նյատկերացումների պայմաններում չի կարող իրոսք լինել իսկական գիտական ստուգաբանության մասին: Այսպես, օրինակ, շատերը լատիներենը շարունակում են համարել հունարենի ազավազված ձևը:

XVII—XVIII դդ. երևան են գալիս լատիներենի և ռոմանական մի շարք լեզուների ստուգաբանական բառարաններ: Ֆոսսիոսի «Լատիներենի ստուգաբանական բառարանը»<sup>6</sup> նոր ժամանակներում լատիներենի ստուգաբանական բառարան կազմելու առաջին փորձն էր, թեև կառուցված էր ստուգաբանության հին սկզբունքներով: Թոմանական լեզուների ստուգաբանական բառարաններից հիշատակելի են Մենսթի «Ֆրանսերենի ստուգաբանական բառարանը»:

<sup>1</sup> S. Josef, Arte y reglas de la lengua tagala. Bataam, 1610.

G. Segard, Grand voyage du pays des hurons. Paris, 1632.

<sup>3</sup> P. Marban, Arte y vocabulario de la lengua morocosi, Madrid, 1699.

<sup>4</sup> N. D. Quixas, Arte de la lengua tarasca, Mexico, 1714.

P. Egede, Grammatica grönlandico-danico-latina. Copenhagen, 1760: էսկիմոսները ապրում են Ամերիկայի և Ասիայի ծայր հյուսիսում:

<sup>6</sup> G. I. Vossius, Etymologicum Latinae linguae.

բանը»<sup>1</sup>, Մենաժի և Ֆեռուարիի՝ իտալերենի ստուգաբանական բառարանները<sup>2</sup>:

XVI—XVIII դդ. երևան են գալիս նաև գերմանական որոշ լեզուների ստուգաբանական հարցերին նվիրված աշխատություններ՝ Յ. Կիլիանոսի «Տևտոնական լեզվի ստուգաբանությունը»<sup>3</sup>, Իրեխ «Շվեդա-գոթական բառարանը»<sup>4</sup>:

Ռուսական իրականության մեջ այս կարգի ստուգաբանություն փորձ է Տրեդնիակովսկու «Երեք դատողություն ռուսական երեք գլխավոր հնությունների մասին» աշխատությունը<sup>5</sup>: Այստեղ հեղինակը զանազան արհեստական ստուգաբանություններով փորձում է ցույց տալ շատ ցեղանունների ռուսական ծագումը և ռուսական բառերի հնությունը. այսպես «սկյութ» (скиф կամ скит) անունը կապվում է ռուսական скитаться «թափառել» բառի հետ, «էտրուսկ»-ը (этруски)՝ хитрушки, «խորամանկներ» բառի հետ, և այլն: Այսպիսի «ստուգաբանություններ» կան և ուրիշների մոտ:

## 2. ԵՐՐԱՅԱԿԱՆ ԶԻՊՈՅԶՐ ԵՎ «ԼԵԶՈՒՆԵՐԻ ՆԵՐՂԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ»

Լեզուների երբայսպես ծագման հարցադրումը XVI դ.—XVI—XVII դդ. լեզվաբանական շատ աշխատությունների վրա շարունակում էր ազդեցություն գործել աստվածաբանական դոգմատիկան: Աստվածաշնչի հեղինակության վրա չկասկածող շատ հեղինակներ այն համոզմունքն էին հայտնում, թե եբրայերենը մարդկության հնագույն լեզուն է, և որ աշխարհի մնացած լեզուները ծագում են նրանից: Սակայն քանի դեռ եբրայերենի ուսումնասիրությունը անհրաժեշտ բարձրության վրա չէր գտնվում, այս բանը նշվում էր լոկ որպես հավանական ենթադրություն: XVI դ. լեզվաբանական մի շարք աշխատությունների հեղինակներ, լեզուների ցեղակցական կապերի մասին զանազան օգտակար դիտողություններ անելով հանդերձ, արդեն տուրք են տալիս այս հար-

<sup>1</sup> G. Menages, Dictionnaire étymologique ou origini de la langue françoise, 1650 (II հր. 1694, III հր. 1750).

<sup>2</sup> G. Menagè, Origini della lingua italiana, 1669. O. Ferrari, Origines linguae italiceae, 1676.

<sup>3</sup> C. Kilianus, Etymologicum teutonicae linguae, 1588.

<sup>4</sup> I. Ihre, Glossarium suio-gothicum, 1769.

В. К. Тредиаковский, Три рассуждения о трех главнейших древностях российских, 1773.

ցաղրմանը: Լեզուները երբայերինից ըլսեցնելու փորձերի հետ կապված՝ անցկացվում են տարբեր լեզուների համեմատութուններ: Բազմազան լեզուների այսպիսի համեմատութունները դասնում են Դիլոլոգիական գործունեութւան հատուկ ճյուղ, որ հայտնի է «լեզուների ներգաշնակութուն» (harmonia linguarum) անունով:

Այս կարգի առաջին փորձերից մեկը սկսականում է XVI դ. նորմանդացի գիտնական-հումանիստ Գվիլիելմոս Պոստելլոսին (1510—1581): Իր «Լեզուների մերձակցութունը» աշխատութւան մեջ՝ Պոստելլոսը նպատակ է դնում խոսելու «լեզուների մերձակցութւան և երբայերենի գերազանցութւան» մասին, թեև սյդ նպատակը չի կարողանում ցանկացած շահով իրագործել. այս աշխատութւունը պետք է լիներ մի ավելի ընդարձակ գործի ներածութւունը, բայց վերջինս այդպես էլ լույս չտեսավ<sup>2</sup>: Պոստելլոսն այստեղ իրար հետ է համեմատում 12 լեզու (եբրայերեն, ասորերեն, արաբերեն, հունարեն, սերբերեն, հայերեն, վրացերեն և այլն)<sup>3</sup> որպես նմուշ բերելով «Հայր մեր»-ի տեքստը: Պոստելլոսի համոզմամբ՝ եբրայերենը մարդկութւան հնագույն լեզուն է, որին ծագման որոշ հիերարխիայով հետևում են նաև քաղղեերենը (իմա՝ արամայերենը) և սամարերենը, ապա փյունիկերենը, արաբերենը, եթովպերենը:

Թեոդոր Բիբլիանդերը (Բուխման, մոտ. 1504—1564) 1548 թ. լույս է ընծայում մի աշխատութւուն<sup>3</sup>, որտեղ խոսում է այն մասին, թե կան իրար հետ սերտ կապ ունեցող լեզուներ և հայտնում է որոշ այլ հետաքրքիր մտքեր. այսպես, լեզուների՝ իրենց ծագումից հետո կրած փոփոխութւան պատճառները նա տեսնում է 1) մարդկանց ու լեզուների խառնվելու, 2) քաղաքական տիրապետութւան փոխվելու, 3) լեզվի ուսուցման ու ուսուցչին նմանվելու, 4) մարդկանց հոգևոր և կենցաղային հակումների մեջ. խոսում է տարբեր զբաղմունքի տեր մարդկանց լեզվական տարբերութւունների և ծածկալեզուների մասին: Նա ևս Պոստելլոսի նման այն կարծիքն է հայտնում, թե եբրայերենը նախնական (primigenia) լեզու է: Նույն այս կարծիքին է նաև Կոնրադ Գեաները (1516—

G. Postellus, De affinitate linguarum. 1538.

Հմտ. L. H. Gray. Foundations of Language. II ed., New York. 1950, էջ 431.

<sup>3</sup> Th. Bibliander (Buchmann). De communi ratione omnium literarum et linguarum. 1548.



1565), որը 1556 թ. հրատարակած իր աշխատության մեջ<sup>1</sup> բերում է 22 լեզվից «Հայր մեր»-ի օրինակներ, այլև փորձում համեմատել թվական անունները. նրա համար ևս հերթայերենը «առաջին և միակ մտքուր լեզուն է»:

Լեզուների Էբրայական ծագման դրույրի ապացուցման փորձերը XVII—XVIII դդ.—XVII դ. և մասամբ XVIII դ., երբ երբայագիտությունը բավականաչափ զարգացած էր, հանդես են գալիս մի շարք աշխատություններ, որոնց հեղինակները փորձում են այդ ենթադրությունն ապացուցել:

Այս բնագավառի աշխատություններից ամենահայտնին էտյեն Գիշարի «Լեզուների ստուգաբանական ներդաշնակություն»-ն է: Իր անալոցուցելի դրույթն «ստուգուցելու» համար հեղինակը դիմում է ամեն տեսակ կամայական հղանակներին՝ հնչյունների հավելում, հանում, տեղափոխություն և այլն. առանձնապես հաճախ է դիմում հեղինակը եբրայական բառերը հետևից առաջ կարդալով կատարվող համեմատությանը՝ պատճառաբանելով, որ «հրեաները գրում էին աչից ձախ, իսկ հույները և ուրիշները՝ ձախից աջ»:  
Այսպես. dābar «խոսել» եբրայական բառը նա համեմատում է անգլիական worde, գերմանական Wort, լատինական fari և verbum բառերի հետ. եբրայական āgār՝ «թև» բառը՝ գերմանական Flügel, անգլիական wing, ֆլամանդական wiecke բառերի հետ. եբրայական deber «մոհ», dabar «կործանել» բառերը՝ գերմանական sterben և (ver)derben բառերի հետ և այլն<sup>2</sup>:

Եբրայական հիպոթեզի կիրառման հետաքրքիր փորձերից մեկը Գեորգ Կրուցիգերի «Չորս գլխավոր լեզուների՝ եբրայերենի, հունարենի, լատիներենի և գերմաներենի ներդաշնակությունն» է<sup>3</sup>: Այստեղ Կրուցիգերը առաջ է քաշում այն կարծիքը, թե հունարենը ծագում է եբրայերենից, լատիներենը՝ հունարենից և գերմաներենը՝ լատիներենից: Չնայած հարցսօրման սխալ բնույթին՝ նա բազմաթիվ ճիշտ բառային համեմատություններ է կատարում և

<sup>1</sup> C. Gessner. Mithridates. De differentiis linguarum tum veterum quae hodie apud diversas nationes in toto orbe terrarum in usu sunt observationes. 1555: Վերնագիրն առնված է Պոնտոսի թագավոր Միհրդատի (Mithridates) անունից, որ ըստ տեղեկությունների բազմաթիվ լեզուներ է իմացել և իր նվաճած զանազան ժողովուրդների հետ խոսել է նրանց լեզվով:

E. Guichard. L'harmonie étymologique des langues 1606. II հր. 1619.

<sup>3</sup> G. Kruciger. Harmonia linguarum quatuor cardinalium, 1616.

նուշխակ փորձում հնչյունական համապատասխանություններ հաստատել:

Սակայն ժամանակի մի շարք առաջավոր մարդիկ համոզես եկան «երրայակտն հիսյոթեզի» դեմ՝ ցույց տալով դրա անմտությունը. սրանց մեջ հիշատակելի է Լայբնիցը (1646—1716), որի արժարձած լեզվաբանական հարցերի մասին մենք քիչ հետո առիթ կունենանք խոսելու:

Երրայական հիսյոթեզը կողմնակիցներ է գտնում և ավելի ուշ շրջանում՝ ընդհուպ մինչև XIX դ. կեսերը: Դրանց վերջին ներկայացուցիչների թվում կարելի է հիշատակել շվեդ գրող և բանասեր Ավգուստ Ստրինբերգին:

Յ. ՅԵՂԱԿԻՅ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՂ ՓՈՐՁԵՐԸ

ա) Հնդեվրոպական լեզուներ

Ռոմանական լեզուներ. — Ռոմանական լեզուների ուսումնասիրության մեջ հենց սկզբից մտցվում են պատմա-համեմատական մեթոդի տարրերը: Ինչպես նշվել է, դեռևս Դանթեն իր ժամանակին նկատել էր իտալերեն, իսպաներեն և ֆրանսերեն լեզուների ցեղակցական կապը: Ոչ պակաս կարևոր էր և այն, որ դե-Լեբրիխը փորձում է 1492 թ. ցույց տալ իսպանական պայմանականի և ապառնու ծագումը. habere բայից և անորոշից՝ սրանով իսկ անելով պատմական քերականությանը վերաբերող մի դիտողություն:

Ռոմանական լեզուների ցեղակցական-ծագումաբանական կապի հարցը հետագա քննության է ենթարկվում Պյետրո Բեմբոյի (1470—1547) «Արձակ»-ում (1502—1525): Բեմբոն դնում է իտալերենի ծագման հարցը և փորձում է պարզել իտալերենի կրած փոփոխության պատճառները: Նրա կարծիքով՝ իտալերենը ծագել է լատիներենից, որը խառնվել է Հռոմեական կայսրության անկումից հետո Իտալիայում տիրապետություն հաստատած բարբարոսների լեզվի հետ: Այսպիսով, Բեմբոն դնում է լատիներենի փոփոխության պատճառի հարցը՝ այդ փոփոխությունը բացատրելով արտաքին ազդեցությամբ՝ այլ լեզուների հետ խառնվելու փաստով:

Պյետրո Բեմբոյի գաղափարները լայն արձագանք են գտնում հետագա հեղինակների մոտ: Իսպանացի Խուան դե Վալդեսը

1536 թ. գրած իր «Երկախոսություն լեզուների մասին» (լույս է տեսել 1737 թ.)<sup>1</sup> աշխատության մեջ խոսում է իսպաներենի լատինական ծագման մասին. Վալդեսը ևս կարևոր նշանակություն է տալիս արտաքին ազդեցությանը՝ իսպաներենի մեջ տեսնելով հունական, գոթական, հրեական և արաբական ուժեղ տարրեր: Միաժամանակ Վալդեսը առաջին անգամ հայտնում է այն միտքը, որ բասկերենը շատ հին ծագում ունի:

XVI դ. հեղինակ Լոդովիկո Կաստելվետրոն իր «Վարկայի դեմ» աշխատության մեջ<sup>2</sup> անում է պատմա-համեմատական կարևոր դիտողություններ: Նրա կարծիքով՝ լատիներենը իտալերենի, ֆրանսերենի և իսպաներենի ընդհանուր աղբյուրն է: Միաժամանակ Լեբրիխի (Նեբրիխի) նման նա որոշում է իտալական ասյառնիի ծագումը avere «ունենալ» բայի ներկայի և այլ բայերի անորոշի գոգորդումից:

XVII դ. սկզբին լույս են տեսնում մի շարք լատիստություններ, որոնք է՛լ ավելի են առաջ տանում ռոմանական լեզուների ծագման ու ցեղակցության գաղափարները: Չելսո Չիտտադինին իտալերենի ծագման հարցին նվիրված իր աշխատություններում<sup>3</sup> խոսելով իտալերենի լատինական ծագման մասին՝ երկու կարևոր դիտողություն է անում. նախ՝ տարբերում է գրական լատիներենը խոսակցականից և իտալերենը բխեցնում է խոսակցական լեզվից, երկրորդ՝ այդ հիման վրա իտալերենում տարբերում է բառերի շշկրտ՝ գիտական և սովորական: Բեռնարդո Ալդրետտեն իր «Կաստելանական լեզվի ծագման մասին» աշխատության մեջ<sup>4</sup> է՛լ ավելի հստակ կերպով է դնում շոտմի գրական և խոսակցական լեզվի տարբերության հարցը, ինչպես և կանգ է առնում պրովինցիաների ռոմանացման պրոցեսի վրա: Ռոմանական լեզուների (իսպաներենի, իտալերենի և ֆրանսերենի) դոյացման հարցի լուսարանության մեջ նա աչքի ընկնող քայլ է՛ կատարում. այս հարցում նա դնում է ոչ միայն արտաքին ազդակների հարցը (լատիներենի վրա պրովինցիաների բնիկների ազդեցությունը), այլև առաջ քաշում այն գաղափարը, որ լեզվին հատուկ է փոփոխվելու ընդունակությունը:

J. de Valdes, Dialogo de las lenguas, 1737.

L. Castelvetro, Contra il Varchi, 1572.

C. Cittadini, Della vera origine della nostra lingua, 1606.  
Origine della volgar toscana favella, 1604.

\* P. Aldrette, Del origen de la lengua castellana, 1606.

Սա լեզվի նկատմամբ պատմական մոտեցման առաջին արտահայտություններից մեկն էր:

Համապատասխան գաղափարներ սկսում են ծագել և Ֆրանսիայում: Էտյեն Պասկյեն առաջ է քաշում ֆրանսերենի լատինական ծագման հարցը և նույնպես հայտնում ֆրանսերենի մեջ գալիական և ֆրանկյան տարրերի առկայության գաղափարը:

Ժիլ Մենաժը իր վերոհիշյալ՝ «Ֆրանսերենի ծագումը» աշխատության մեջ (1650 թ.), զարգացնելով այս գաղափարները, ստուգաբանական վերլուծության է ենթարկում 3000-ից ավելի բառ, որոնց մի նշանակալից մասի ստուգաբանությունը ճիշտ է: Դյու-Կանժի աշխատությունը, որի մասին նույնպես հիշատակվել է, յուրատեսակ փորձ էր գտնելու դասական լատիներենի և ժամանակակից ֆրանսերենի միջև պակասող օղակները. Դյու-Կանժը օգտագործում է միջնադարյան լատինական և հին ֆրանսիական տեքստեր, բերում հսկայական բառարանագրական նյութ:

XVIII դ. ֆրանսիացի գիտնական Պյեռ Բոնամին, ի մի բերելով նախորդ դիտողությունները և դրանք ենթարկելով գիտական վերլուծության, գալիս է այն եզրակացության, որ ֆրանսերենը ծագել է ժողովրդական լատիներենից: Բոնամիի այս տեսակետն ընդհուպ մոտենում է ռոմանագիտության ժամանակակից ըմբռնումներին: Բոնամիի կարծիքով՝ դասական լատիներենը ծագել է հռոմեական պլեբեյների ժողովրդական լեզվից, իսկ վերջինս Գալիայում տարածվել է հռոմեական լեզիոներենի, վաճառականների, գաղութարարների միջոցով և ենթարկվել նախ տեղական բնիկների (գալլերի), ապա և ֆրանկների լեզվի ազդեցությանը: Այս առումով էլ նա վերլուծության է ենթարկում հին ֆրանսերենի հնագույն տեքստը՝ «Ստրասբուրգյան երգումները»:

Կերամնական լեզուներ.—Ռոմանական լիլոներրի ցեղակցության հարցերի քննության փորձերից փոքր-ինչ ուշ հանդես են գալիս նաև գերմանական (տևտոնական) լեզուների ցեղակցության հարցերին նվիրված գործեր:

Բ. Վուլկանիոսը (XVI դ.) իր աշխատության մեջ<sup>1</sup> քննության է առնում գոթերենը, հին բարձր գերմաներենը, անգլո-սաքսոներենը, ֆրիզերենը և այլն՝ ցույց տալով դրանց ցեղակցությունը. սակայն նա գերմաներենին մոտ ցեղակից լեզու է համարում նաև պարսկերենը, այլև խոսում բասկերենի մասին:

<sup>1</sup> B. Vulcanius, De literis et linguae getarum sive gothorum.

Գանիական գիտնական Պեդեր Սյուվը իր «Նոր խորհրդածությունների կիմրական լեզվի մասին» աշխատության մեջ<sup>1</sup> խոսում է գերմանական լեզուների ցեղակցական ընդհանրության մասին. «կիմրական» բառը նա օգտագործում է մասամբ «սկանդինավյան», մասամբ «գերմանական» իմաստով<sup>2</sup>:

XVIII դ. 1-ին քառորդում լույս են տեսնում հոլանդացի գիտնական Լամբերտ Տեն Կատեի աշխատությունները<sup>3</sup>, որոնք գերմանական լեզուների ուսումնասիրության մեջ նշանավորում են նոր էտապ: Հեղինակը տալիս է գերմանական լեզուների համեմատական քերականության օրինակ՝ համեմատության ենթարկելով գոթերենի, գերմաներենի, հոլանդերենի, անգլո-սաքսոններենի և իսլանդերենի քերականական կառուցվածքները:

Պատմա-համեմատական մեթոդի հիմունքների նախապատրաստման համար կարևոր նշանակություն են ունենում նաև հին տեքստերի հրատարակումն ու ուսումնասիրությունը՝ Ջ. Հիքսի աշխատությունները անգլո-սաքսոնական հնությունների մասին, աստվածաշնչի գոթերեն թարգմանության պահպանված մասի հրատարակությունը 1655 թ. և այլն:

Ալվառնական լեզուներ.— Բավական վաղ են նկատվել նաև սլավոնական զանազան լեզուների ցեղակցական կապերը:

Դեռևս XVII դ. խորվաթ Յուրի Կրիժանիչը (1617—1693) հիշատակված աշխատության մեջ տալիս է սլավոնական լեզուների համեմատության առաջին օրինակները: Առանձին հիշատակության արժանի է Լոմոնոսովի աշխատանքը: Լոմոնոսովը թեև այս ուղղությամբ շատ բան չի թողել, բայց եղածն էլ վկայում է նրա խորաթափանց դիտողականության մասին: Այսպես, նա նախատակ էր դրել հատուկ աշխատություն գրելու «ուսերինին ցեղակից լեզուների և այժմյան բարբառների մասին»<sup>4</sup>: Լոմոնոսովը տարբերում է ցեղակից (сродственные) և ոչ ցեղակից (несродственные) լեզուներ: Պահպանված նյութերում նա բառա-

<sup>1</sup> P. Syw, Nogle Betenkniger om det Cimbriske Sprog, 1663.

<sup>2</sup> Հմմտ. В. Томсен, *հիշ. աշխ.*, էջ 41:

<sup>3</sup> Lambert Ten Kate, Gemeenschap tussen de Gottische Spraeke en de Nederduytsche, 1710. Aenleiding tot de Kennisse van het verhevene Deel der Nederduytsche Spraeke, 1723.

<sup>4</sup> Հմմտ. С. К. Булич, Очерк истории языкознания в России, СПб, 1904. П. С. Кузнецов, О трудах М. В. Ломоносова в области исторического и сравнительного языкознания, «Ученые записки МГУ» вып. 150, 1952.

կան համեմատությունների միջոցով ցույց է տալիս սլավոնական լեզուների ցեղակցությունը, ընդ որում՝ սլավոնական լեզուները բաժանում է երկու խմբի՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան: Նա տարբերում է նաև հին ուղտերենը սլավոներենից: Միաժամանակ կոմոնոսովը որոշ բառական ճիշտ համեմատություններ է կատարում ուղտերենի և հին հունարենի միջև՝ журавль—γέραιος, деверь—δελφίν, дар—δῶρον և այլն, թեև հանդիպում են և լոկ արտաքին տղավորության վրա հիմնված համեմատություններ (λίσσοσ—Ыльсьи, γράος—грязь):<sup>1</sup>

Հայերենի և այլ լեզուների ընդհանրությունների հարցը.—XVIII դ. հայ լեզվաբանները ուշադրություն են դարձնում հայերենի՝ այլ լեզուների հետ ունեցած այն ընդհանրությունների վրա, որոնք փոխառությամբ բացատրվել չեն կարող: 1769 թ. լույս տեսած «Քառգիրք հայկազեան լեզուի» աշխատության առաջարանում Մխիթար Սեբաստացին խոսում է հայերենի և լատիներենի այնպիսի բառերի ընդհանրության մասին, որոնք «մայր-բառեր» են և փոխառության արդյունք չեն կարող. առանձնապես կարևոր է, որ Սեբաստացին բերում է նաև խոնարհման ձևերի ընդհանրության օրինակներ (տամ, տաս—do, das, եմ, ես—sum, es): Գևորգ Դպիր Պալատացին (1737—1812) իր սլարսկերեն-հայերեն բառարանում, որ լույս է ընծայվել հեղինակի մահից շատ տարիներ անց՝ 1826 թ., բերում է հայերեն և սլարսկերեն լեզուների համար ընդհանուր 433 բառի ցանկ, որոնցից 346 բառի ընդհանրությունը փոխառության արդյունք չի համարում. նրա համեմատությունների նշանակալից մասը ճիշտ է:

Նման ընդհանրություններ հայերենի, հունարենի, լատիներենի և այլ լեզուների միջև տեսնում է և Գարրիել Ալեքսիքյանը XIX դ. սկզբներին, նախքան Բոպպի աշխատության լույս տեսնելը, իր «Քերականութիւն հայկական» աշխատության մեջ (1815):

Սանսկրիտի և եվրոպական մի շարք լեզուների ցեղակցության հարցի առաջնաշումը.—Դեռևս XVI դարում իտալացի Պ. Սասսետտին, որը 1583—1588 թթ. ապրել էր Հնդկաստանում (մեծ մասամբ Գոալում), ուշադրություն է դարձնում սանսկրիտական և իտալական բառերի նմանության վրա՝ նշելով, որ «մեր այժմյան լեզուն շատ ընդհանուր բան ունի նրա հետ»՝ իտալական sei, sette, otto, nove, dio, serpe և սանսկրիտական śāś, saptā՝,

<sup>1</sup>մատ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 42:

ašta', na'va, dva'-, sarpa'-, Սակայն Սասնետտու «Նամակաները» («Lettere») հրատարակվեցին շատ ուշ՝ 1855 թ.:

Ֆրանսիացի Կյորդուն (Coerdou) 1768 թ. ուշադրություն է դարձնում սանսկրիտի և եվրոպական հին լեզուների ունեցած կապի վրա՝ նշելով այնպիսի համապատասխանություններ, ինչպիսիք են սնսկր. dāna—լատ. dōnum «տուրք, նվեր», սնսկր. vid-ha'vā—լատ. vidua «այրի», սնսկր. a'smi—հուն. εἶμι «եմ»<sup>1</sup>:

Սանսկրիտի առաջին տպագիր քերականության հեղինակ Պատլինը նույնպես նշում է սանսկրիտի ունեցած նմանությունները եվրոպական լեզուների հետ:

Քենգալերենի իր քերականության ներածության մեջ 1778 թ. Ն. Բ. Հալհեզը գրում է. «Ես դարմացա հայտնագործելով սանսկրիտական բառերի՝ պարսկականների, արարականների և նույնիսկ հունականների ու լատինականների հետ ունեցած նմանությունը. և սա ոչ թե տեխնիկական և փոխաբերական արտահայտություններում, որոնք նրբացված արվեստների և բարձր բարքերի փոխանակության միջոցով պատահականորեն կարող են ներմուծված լինել, այլ ընդլի հիմնականում (Grundbestand), միավանկ բառերում, թվանշանների և այն իրերի անվանումների մեջ, որոնք ամեն մի քաղաքակրթության սկզբում արդեն հայտնի էին»<sup>2</sup>:

Առանձնապես հետաքրքիր էր Կալկաթայի Ասիական ընկերության հիմնադիր անգլիացի Ուիլյամ Ջոնսի (1746—1794)՝ հիշված ընկերությանը ներկայացրած հաղորդումը (1786 թ.), որ տպագրված է «Ասիական հետազոտություններում»: Այստեղ Ջոնսը գրում է. «Սանսկրիտը, ինչպիսին էլ որ լինի նրա հնությունը, ունի զարմանալի կառուցվածք. այն ավելի կատարյալ է, քան հունարենը, ավելի հարուստ, քան լատիներենը և դրանցից յուրաքանչյուրին գերազանցում է իր նրբությամբ, այնինչ այդ երկու լեզուների հետ ինչպես բայարմատների, այնպես էլ քերականական ձևերի առումով այնպիսի մոտ ցեղակցություն ունի, որ այդ չէր կարող պատահականությամբ առաջացած լինել. ցեղակցությունն այնքան ուժեղ է, որ այդ երեք լեզուների ուսումնասիրությամբ զբաղվող ոչ մի ֆիլոլոգ չի կարող չհավատալ, որ դրանք բոլորը ծագել են մի ընդհանուր աղբյուրից, որը թերևս այլևս դոյություն չունի. համապատասխանաբար հիմք կա, թեև ոչ այնքան համո-

<sup>1</sup> Հմմտ. H. Gray, հիշ. աշխ., էջ 437:

<sup>2</sup> Հմմտ. Th. Benfey, Geschichte der Sprachwissenschaft, 1869,

դիչ, ենթադրելու, որ գոթերենը և կելտական լեզուները, թեկուզ և խառնված միանգամայն տարրեր բարրառների հետ, ունեցել են միևնույն ծագումը, ինչ սանսկրիտը. այդ լեզվաընտանիքին կարելի փ հատկացնել և հին պարսկերենը, եթե այստեղ տեղ լինեն պարսկական հնուլթյունների հարցերի քննուլթյան համար»<sup>1</sup>:

### բ) Աշ-հնգեվրոպական լեզուներ

Սեմական լեզուների ցեղակցության հարցը. Հ. Լուդովֆ.— XVI—XVIII դդ. ծավալված սեմական ֆիլոլոգիան մեծ նվաճումներ է ունենում ոչ միայն առանձին լեզուների քերականական կառուցվածքի ու բառապաշարի ուսումնասիրության, այլև այդ լեզուների ցեղակցական կապերի բացահայտման ասպարեզում: Սեմական լեզուների համեմատական ուսումնասիրության այս միջոցները հնարավոր դարձան շնորհիվ այդ լեզուների ընդհանրությունների ակնհայտության:

XVIII դ. սկիզբը սեմական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշանավորվում է հայտնի սեմագետ Հոր Լուդովֆի (1624—1704) գործունեությամբ: Լուդովֆի հայտնած մտքերը ընդհանրապես ներկայացնում են պատմա-համեմատական մեթոդի գիտակցման առաջին լուրջ դրսևորումներից մեկը: Լուդովֆը նշում է, որ լեզուների ցեղակցության հարցերը որոշելիս պետք է նկատի առնել ոչ միայն առանձին բառերի ընդհանրությունը, այլև քերականական կառուցվածքի (grammaticae ratio)<sup>2</sup> մեծ մասամբ նույնը լինելը, ինչպես սեմական լեզուների դեպքում:

«Ուրալա-ալթայան» լեզուների ցեղակցության հարցը. Ֆ. Ստրալենբերգ, Ս. Դյարմաթի.— «Ուրալա-ալթայան» լեզուների փոխհարաբերությունների ուսումնասիրության ասպարեզում այս շրջանում որոշակի քայլեր են կատարվում:

Ինչպես կտեսնենք, դեռևս XVIII դ. սկզբներին Լայբնիցը խորալթափանցությամբ կռահում է ֆիննա-ուգրական, տունգուսամանջուրական, թյուրքական և սամոյեդական լեզուների ցեղակցությունը:

1730 թ. շվեդ Ֆ. Ստրալենբերգը հրատարակում է «Եվրոպայի և Ասիայի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասը» աշխատությունը<sup>2</sup>, որի մեջ այսպես կոչված «թաթարական» ժողովուրդները

<sup>1</sup> Asiatic Researches, I, 1, London, 1788, էջ 422:

<sup>2</sup> F. J. v. Strahlenberg, Das nord- und östliche Theil von Europa und Asia, Stockholm, 1730 («Tabula polyglotta» բաժինը):



բաժանում է 6 [սմբի. 1) ֆիննա-ուլարական, որոնք նա քննում է «ուլդուրական» անվան տակ, 2) հյուսիսային թյուրքական կամ թյուրք-թաթարական, 3) սամոյեդական, 4) մոնղոլական, մանջուրական ու տիբեթական, 5) տունգուսական ու սլաւեոսախական և 6) կովկասյան (լեոնային կովկասյան ժողովուրդներ) կամ Սև Կասպից ծովերի միջև դտնվող ժողովուրդներ: Եթե չհաշվենք տիբեթական և պալեոսախական լեզուների մասին ասվածը, ապա այս բաժանումն ընդհանուր առմամբ ճիշտ է արտացոլում իրերի վիճակը:

Նույն 1730 թ. Պ. Սայնովիչը հատուկ աշխատություն է նվիրում հունգարերենի ու լուպարերենի ցեղակցության հարցին<sup>1</sup>:

1799 թ. լույս է տեսնում հունգարացի Ս. Դյարմաթիի «Հունգարերեն լեզվի մերձավորությունը ֆիննական ծագում ունեցող լեզուների հետ՝ քերականորեն ապացուցված» աշխատությունը<sup>2</sup>: Ինչպես ցույց է տալիս վերնագիրը, Դյարմաթիի ֆիննա-հունգարական լեզվական ցեղակցությունն ապացուցելու համար դիմում է քերականական ընդհանրություններին՝ ընդհուպ մոտենալով պատմա-համեմատական լեզվաբանության գաղափարներին:

#### 4. ԱՎԱՔԱԿԱՆ-ԶՈՒԳԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տարբեր լեզուների փաստերի հավաքման և զուգադրման խտանքը.— XVI—XVIII դդ. ընդհանուր հետաքրքրությունն նկատվում ամենատարբեր բնույթի լեզուների նկատմամբ: Լեզվական փաստերի հավաքմամբ են զբաղվում դանադան գրադմունքի ու մասնագիտության տեր մարդիկ, առանձնապես ճանապարհորդներն ու միսիոներները: Սուանձին լեզուների վերաբերյալ սումնասիրությունների (քերականությունների ու բառարանների) հետ միասին երևան են գալիս այնպիսի աշխատություններ, որոնց մեջ խոսվում է տարբեր ժողովուրդների ու լեզուների մասին, հավաքվում են ամենատարբեր բնույթի լեզուների փաստեր, տրվում են տարբեր կառուցվածք ու ցեղակցական կապեր ունեցող լեզուների համառոտ նկարագրություններ:

Մագելանի աշխարհաշուրջ ճանապարհորդության ժամանակ

P. Saijnovics, Demonstratio idioma ungarorum et lapponum idem esse, 1799 (գրված է 1730 թ.):

<sup>2</sup> S. Gyarmathi, Affinitas linguae hungaricae cum linguis fennicae originis grammaticae demonstrata, 1799.

(1519—1522 թթ.) նրան ուղեկցող Ա. Պիգաֆետտան իր «Առաջին շուրջերկրյա ճանապարհորդութիւնը երկրագնդի շուրջը» (առաջին անգամ հրատարակվել է 1800 թ.) աշխատութեան մեջ<sup>1</sup> հավաքել է տարբեր լեզուների բառեր: Նման փաստեր կան նաև այլ ճանապարհորդների մոտ:

Տարբեր լեզուների փաստերի ու նմուշների հավաքման աշխատանքի վաղ փորձերից են նաև Վ. Լացիոսի, Հ. Մեգիզերի, արդեն հիշատակված Բ. Վուլկանիոսի, Քեսեսոս Ամբրոսիոսի և այլոց աշխատութիւնները<sup>2</sup>:

XVI—XVIII դդ. երևան են դալիս երկլեզվյան և բազմալեզվյան զանազան բառարաններ: Այս կարգի վաղ փորձերից հիշատակելի է Ջոն Մինշոյի տասնմեկլեզվյան բառարանը<sup>3</sup>:

Հ. Ռելանդը իր եռահատոր աշխատութեան մեջ<sup>4</sup> (1706—1708) քննութեան է առնում ամենարագմաղան բնույթի և տարբեր աշխորհամասերի սլատկանող լեզուներ (Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի), այդ թվում նաև հին հնդկերենն ու հին պարսկերենը. վերջիններս նա քննում է դասական հեղինակների մոտ պահպանված բառերի, հիման վրա<sup>5</sup>: Առաջին անգամ Ռելանդն է ցույց տվել մալայան լեզուների ցեղակցութիւնը:

Պ. Ս. Պալլասի բազմալեզվյան բառարանները. Խ. Յ. Կրաուսի գրախոսականը.—Բազմալեզվյան բառարանների մեջ խիստ կարևոր դեր է վիճակվում հտտկապես Պ. Ս. Պալլասի «Համեմատական բառարաններին», որոնք կազմվում և հրատարակվում են Ռուսաստանում:

Ռուսաստանում ընդհանրապես XVII դ. վերջերին և XVIII դարում զգալի աշխատանք է կատարվում լեզվական նյութի հավաք-

1. Pigaffetta. Primo viaggio intorno al globo terraqueo. 1800.

2. W. Lazius. De gentium aliquot migrationibus. 1557. H. Meisner. Specimen quadraginta diversarum et inter se differentium linguarum et dialectorum. 1592. II հր. 1603. B. Vulcanius. De literis et lingua Getarum sive Gothorum. Thesaurus Ambrosius. Introductio in Chaldaicam, Syriacam atque Armeniacam et decem alias linguas. 1539.

<sup>3</sup> John Minshew. Ductor in linguas. etc. The Guidé into Tongues, with their Agreement and Consent with one another as also their Etymologies, in these eleven Languages, viz. 1. English, 2. British, or Welsh, 3. Low Dutch, 4. High Dutch, 5. French, 6. Italian, 7. Spanish, 8. Portuguese, 9. Latine, 10. Greeke, 11. Hebrew. London, 1617.

<sup>4</sup> H. Relandus. Dissertationes miscelaneae. I—III, 1706—1708.

<sup>5</sup> Հմմտ. H. L. Gray. հիշ. աշխ., էջ 433:

ման ուղղութեամբ: Ճանապարհորդները կատարում են նաև լեզվի վերաբերյալ գրանցումներ:

XVIII դ. երկրորդ կեսին Ռուսաստանում մեծ թափ է ստանում տարբեր լեզուների փաստերի հավաքման ու զուգադրման աշխատանքը: Բակմեյստերը կազմակերպում է լեզվաբանական նյութերի հավաքման աշխատանքը. այս կապակցութեամբ նրա պրած աշխատութիւնը (1773 թ.)<sup>1</sup> դառնում է յուրահատուկ ծրագրային գործ: Գմելինն զբաղվում է Սիբիրի լեզուներով, Լեպյոսինը՝ կոմի լեզվով, Գյուլդենշտեդտը՝ կովկասյան և իրանական լեզուներով և այլն: Վերջինս կովկասյան լեզուները բաժանում է 6 խմբի՝ թաթարական, լեզգիական, կիստինյան (Չեչենիայում), օսական, շերքեզական և վրացական: Եկատերինա II-ը գործուն մասնակցութիւն է ցույց տալիս կատարվող աշխատանքին: Նա կազմում է թարգմանելու ենթակա բառերի ցանկը, ուղարկում դրանք Ռուսաստանի տարբեր կողմերը և արտասահման (ռուսական դեսպանութիւնները)<sup>2</sup>: Հավաքված նյութի ամբողջականացման աշխատանքը հանձնարարվում է Պ. Ս. Պալլասին (1741—1811): 1786—1787 թթ. տպագրվում է «Քոլոր լեզուների և բարբառների համեմատական բառարաններ» աշխատութիւնն առաջին մասը<sup>3</sup>, որը պարունակում էր 149 ասիական և 51 եվրոպական լեզուների բառացանկեր: 1791 թ. այն վերահրատարակվում է վերամշակված և ավելի ընդարձակված ձևով՝ 272 լեզուների (164 ասիական, 55 եվրոպական, 30 ֆրիկյան և 23 ամերիկյան) զուգադրական բառացանկերով: Այս աշխատութեան 4 հատորները, չնայած բառերի հավաքման, ընտրութեան և հնչունաբանական գրանցման սկզբունքների ոչ բավարար գիտականութեանը, զգալի նշանակութիւն են ունենում լեզվաբանական աշխատանքի զարգացման գործում:

Խրիստիան Յակոբ Կրաուսը (1753—1807) Պալլասի «Համեմատական բառարանների» մասին 1787 թ. գրած իր գրախոսականում<sup>4</sup>, գնահատելով այս աշխատութիւնը, հայտնում է, այն կարևոր միտքը, որ լեզուների ցեղակցութիւնը որոշելիս քերականու-

<sup>1</sup> H. L. Ch. Backmeiter, *Idea et desideria de colligendis linguarum speciminibus*, 1773.

<sup>2</sup> Fr. Adelung, *Catharinien der Grossen Verdienste um die vergleichende Sprachenkunde*, St. Petersburg, 1815.

Сравнительные словари всех языков и наречий, собранные десницей всевысочайшей особы, I, СПб, 1786—87.

<sup>4</sup> Ch. J. Kraus, *Rezension der allgemeinen vergleichenden Wörterbuches von Pallas, „Allgemeine Literaturzeitung“*, 1787, № 235.7.

կան համեմատութիւնը շատ ավելի վստահելի է, քան բառականը: Արա հետ միասին Կրաուսը մի շարք հետաքրքիր դիտողութիւններ է անում լեզվի բնույթի, լեզվաբանութեան նպատակների, լեզուների համեմատական ուսումնասիրութեան խնդիրների մասին և այլն: Լեզուների համեմատութեան գլխավոր նպատակը Կրաուսը համարում է ժողովուրդների պատմութեան ու ցեղակցական կապերի ուսումնասիրութեանը նպաստելը: Այդպիսի համեմատական աշխատանքը Կրաուսի կարծիքով պետք է ճշգրտորեն ներկայացնի լեզուները իրենց բոլոր կողմերով: Հնչյունական և իմաստային կողմի համեմատութեան դեպքում ծագում են ակնհայտ դժվարութիւններ. նախ՝ հնարավոր չէ որևէ լեզվի նորմալ գրութեամբ ճշտորեն արտահայտել մի որևէ օտար լեզվի հնչյունները, երկրորդ՝ երկու լեզվի երկու բառերի իմաստները ճշգրտորեն չեն համապատասխանում. միայն բառերի համապատասխանութեան վրա հիմնվող համեմատութիւնը կարող է սխալները տեղիք տալ. լեզուների ցեղակցութեան որոշման համար կարևորը լեզուների կառուցվածքային (իմա՝ քերականական) համեմատութիւնն է: Կրաուսը կարևոր է համարում նաև համեմատվող լեզուների բաղմակողմանի իմացումը, նրանցով խոսող ժողովուրդների կուլտուրայի ու տարածման հարցերի պարզաբանումը: Սակայն Կրաուսը այս համեմատական ուսումնասիրութիւնը հին ձևով շարունակում է կոչել «փիլիսոփայական ընդհանրական լեզվաբանութիւն» (philosophische Universallinguistik):

##### 5. ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ-ՄԱԳՈՒՐԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Եվրոպայի լեզուների դասակարգման փորձերը.— Բազմադան լեզուների փաստերի հավաքման աշխատանքը չի կարող չուղեկցվել այդ փաստերի խմբավորման ավելի կամ պակաս հաջող փորձերով: Նախքան պատմա-համեմատական լեզվաբանութեան ձևավորման շրջանը երևան եկած այս կարգի փորձերը մեծ մասամբ խառը բնույթի են. ծագումաբանական դասակարգումը զուգակցվում է աշխարհագրական դասակարգման հետ: Լեզուների զուգադրման և համեմատութեան փորձեր էին եբրայական հիպոթեզի հիմնավորմանը և ընդհանրապես «լեզուների ներդաշնակութեանը» նվիրված աշխատութիւնները, որոնց մասին մասամբ խոսել ենք:

Լեզուների ցեղակցական կառուցի բացահայտման և դասակարգման հաջողված վաղ փորձերից մեկը պատկանում է դասական ֆիլոլոգ և արևելագետ Յոզեֆ Յուստուս Սկալիգերին (1540—1609)<sup>1</sup> Յու. Յ. Սկալիգերի որդուն: Իր մի աշխատության մեջ, որ գրվել է 1599 թ., բայց լույս է տեսել 1610 թ.<sup>1</sup>, հեղինակը քննության առնելով բոլոր հվրոպական լեզուները՝ փորձում է տալ նրանց ցեղակցական դասակարգումը. նա տարբերում է 11 մայր լեզուներ (matrices) և շատ բարբառներ (propagines): 11 մայր լեզուներից 4-ը մեծ են, 7-ը՝ մանր: Այդ 4 «մեծ մայր լեզուներն» են լատինականը, հունականը, տևտոնականը (գերմանականը) և սլավոնականը: 7 մանր «մայր-լեզուներն» են՝ ալբանականը (էպիրոտականը), թաթարականը, հունգարականը, ֆիննականը, իռլանդականը, կիմրականը (բրիտոնականը) բրետոնների հետ միասին և բասկերենը (կանտարբերենը). վերջինս նա համարում է հին իսպանական լեզվի մնացորդ: Սակայն Սկալիգերը կարծում է, որ այս 11 «մայր լեզուները», «ցեղակցական ոչ մի կապով կապված չեն» և այդ այն դեպքում, երբ նրա բերած տարրերիչ բառերի մեջ ակնհայտ նմանություններ կան: Լեզուների նմանությունը Սկալիգերը տեսնում է բառական ընդհանրության մեջ, տարբերությունը՝ բառերի կրած փոփոխությունների մեջ: 4 մեծ «մայր-լեզուները» նա տարբերում է ըստ «աստված» բառի տարբերության՝ Deus, Կելտ. Godt և Богъ: Լատինական լեզուների մեջ նա նշում է իտալերենը, իսպաներենը և ֆրանսերենը (հմտ. լատ. gener «փեսա» և իտ. gerero, իսպ. yerno, ֆր. gendre): Godt-ի տևտոնական ճյուղը նա բաժանում է wasser և water բարբառների (ըստ «ջուր» բառի տարբեր հնչման). wasser-բարբառ է վերին գերմաներենը, water-բարբառ՝ ստորին գերմաներենը. մայր լեզուն է սաքսոնական ու դանիական (դանիերեն, շվեդերեն, նորվեգերեն) ճյուղերը նույնպես water-բարբառներ են:

XVIII դ. վերջերին լույս է տեսնում մի այլ աշխատություն, որտեղ կատարվում է եվրոպական 14 լեզուների խմբավորման ու ցեղակցական կապերի բացահայտման մի նոր փորձ: Դա Դ. Ենիշի «Եվրոպայի 14 հին և նոր լեզուների փիլիսոփայական-քննադատական համեմատություն և գնահատում» աշխատությունն էր<sup>2</sup>:

<sup>1</sup> J. J. Scaliger. Diatriba de Europaeorum linguarum. „Opuscula varia ante hac non edita“, 1610.

<sup>2</sup> D. Jenisch, Philosophisch-kritische Vergleichung und Würdigung von vierzehn altern und neuern Sprachen Europas, 1796.

Լայբնիցը և «Նախալեզվի» վերականգնման զաղափարը.— Այս բնագավառում առանձնապես հիշատակելի է փիլիսոփա Լայբնիցի (1646—1716) կատարած աշխատանքը: Նրա լեզվա-փիլիսոփայական հայացքների և փիլիսոփայական լեզու ստեղծելու ջանքերի մասին դեռ առիթ կունենանք խոսելու. այստեղ նշենք միայն հեղինակի այն աշխատանքները, որոնք կապված են լեզուների ցեղակցական փոխհարաբերության հարցերի հետ:

Լեզվական հարցերին նվիրված իր մի աշխատությունն մեջ<sup>1</sup> Լայբնիցը հասնում է լեզուների համար ենթադրական «նախալեզու» վերականգնելու գաղափարին: Եթե մինչ այդ լեզվաբանները հնագույն լեզուն փնտրում էին այս կամ այն հայտնի դրավոր լեզվի մեջ, ապա Լայբնիցը առաջ է քաշում հիպոթետիկ վերականգման գաղափարը: Նա հնարավոր է համարում Եվրոպայի և Ասիայի բոլոր լեզուները հանդեցնել մի ընդհանուր նախալեզվի: Ընդհանուր հիպոթետիկ նախալեզվից առաջացած լեզուները նա բաժանում է «հարեթական» կամ «կելտա-սկյութական» և «արամեական» լեզուների. «հարեթական» կամ «կելտա-սկյութական» անվան տակ նույն փաստորեն միավորում է հնդեվրոպական լեզուները (ընդ որում կելտական անվան տակ միավորում է հնդեվրոպական լեզուներից գերմանականներն ու բուն կելտականները) և լեզուների այն մեծ խումբը, որ շատ լեզվաբաններ հետագայում միացնում էին «ուրալա-սլավոնական» անվան տակ (ֆիննա-ուգրական, թյուրքական, մոնղոլական և այլն): Այս լեզուների սկզբնական տարածման վայրը Լայբնիցը համարում է հյուսիսը, «արամեական» լեզուներինը («սեմական» և «քամական»)՝ հարավը: Լայբնիցը ճիշտ կերպով նկատում է նաև, որ բառկերենը նման չէ եվրոպական որևէ լեզվի: Պարսկերենը, հայերենը և վրացերենը նա համարում է սկյութական և արամեական լեզուների միջև գտնվող «խառն» լեզուներ, ընդ որում հայերենի հարցը լուծելու համար նույն անհրաժեշտ է համարում հատուկ ուսումնասիրություն կատարել:

Մի ընդարձակ նախալեզվից հետագա բազմազան լեզուների առաջացումը Լայբնիցը բացատրում է խառնման ու աղավաղման պրոցեսով՝ նշելով, որ բոլոր լեզուների մեջ կարելի է նկատել նախկին ընդհանրության հետքեր. այս դեպքում նա նկատի ունի բառային ընդհանրությունները: Անընդհատ աղավաղումները կարող են, նրա կարծիքով, հանդեցնել ծագումային հիմնական գծերի մթա-

<sup>1</sup> G. W. Leibnitz, *Brevis designatio meditationum de originibus gentium ductis potissimum ex indicis linguarum*, 1711.

գնմանը. սրտնով էլ Լայբնիցը հակված է բացատրելու այն, որ աֆրիկյան ու ամերիկյան բնիկների լեզուները Ասիայի և Եվրոպայի լեզուների հետ նկատելի ընդհանրություններ չունեն: Լայբնիցը բեղմնավոր մտքեր է արտահայտել լեզուների համեմատական բառարաններ ու քերականություններ կազմելու հնարավորության մասին՝ նշելով, որ դրանք կնպաստեն ոչ միայն ժողովուրդների ծագման հարցի պարզաբանմանը, այլև իրերի և մեր ոգու գործունեության իմացությանը:

Իր աշխատություններում ու նամակներում Լայբնիցը վարպահնում է մի շարք այլ հետաքրքիր գաղափարներ ևս. այսպես, դնում է լեզվաբանական քարտեզների կարևորություն, լեզվի նոր շրջանները հին շրջանների հետ համեմատելու, համաշխարհային մի այբուբեն ստեղծելու հարցերը և այլն: Նա խորհուրդ է տալիս Պետրոս I-ին ուշադրություն դարձնել ռուսական կայսրության լեզուների ուսումնասիրության և անգիր լեզուների համար այբուբենների ստեղծելու գործին:

Հերվասի քնդհանուր-դասակարգողական աշխատությունը.— XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին լույս են տեսնում ընդհանուր դասակարգողական բնույթի երկու կարևոր աշխատություններ, որոնք ընդհուպ նախապատրաստում են պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորման դարաշրջանը: Դրանք իսպանացի Լորենցո Հերվաս Ի-Պանդուրոյի (1735—1809) և գերմանացիներ Ի. Խ. Ադելունգի ու Ի. Ս. Ֆասերի աշխատություններն էին:

Հերվասի աշխատությունը կազմում է նրա «Տիեզերքի գաղափարը» 21 հատորանոց իտալերեն աշխատության 17-րդ հատորը և կրում է «Հայտնի լեզուների կատալոգ և դիտողություններ նրանց մերձավորության ու տարբերությունների մասին» վերնագիրը<sup>1</sup>: 1800—1804 թթ. լույս է տեսնում լեզվական մասի վերամշակված և ընդարձակված հրատարակությունը իսպաներեն լեզվով՝ 6 հատորով: Երկրորդ հրատարակության վերնագիրը փոփոխված է. «Հայտնի ժողովուրդների լեզուների կատալոգ, նրանց թվարկումը, բաժանումն ու դասակարգումը ըստ տարատեսակների և բարբառների»<sup>2</sup>:

<sup>1</sup> Lorenzo Hervás y Panduro, Idea dell'Universo, XVII, 1784.

<sup>2</sup> Lorenzo Hervás y Panduro, Catálogo de las lenguas de las naciones conocidas y numeración, division, y clases de estas segun la diversidad de sus idiomas y dialectos. I-VI, 1800—1804.

Այս աշխատության մեջ Հերվասը քննության է ենթարկում շուրջ 300 լեզու: Բացի Եվրոպայի և Ասիայի լեզուներից, նա այստեղ նոր տվյալներ է բերում ամերիկյան լեզուների մասին, որոնցից 40-ի քերականությունը նա գրած է եղել: Հերվասի գլխավոր ծառայությունն այն է, որ լեզուների ցեղակցության և դասակարգման հարցը լուծում է ըստ քերականական կառուցվածքի ընդհանրության: Այս գործում նա բերում է 10 լեզվի քերականության համառոտ ուրվագիծը: Հերվասը նպատակ ունի լեզուների ցեղակցությունը որոշելու ճանապարհով ցույց տալ ժողովուրդների ցեղակցությունն ու տարբերությունները: Նա առաջինն է սահմանել մալայա-պոլինեզյան լեզուների ցեղակցությունը:

Ի. Խ. Ադելունգի և Ի. Ս. Ֆատերի աշխատությունը լույս է տեսել XIX դ. սկզբներին և անմիջապես նախապատրաստել պատմահամեմատական լեզվաբանության ձևավորումը. այդ պատճառով էլ նրա մասին կխոսենք XIX դ. քննության մեջ:

### III. ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ-ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 1. ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ-ԳԼՈՏՈԳՈՆԵԿԱԿԱՆ ՈՒՄՈՒՆՔՆԵՐ

##### ա) XVII դ. էմպիրիկ-մատերիալիստական ուսմունքները

Ներածական դիտողություններ. — Կապիտալի նախասկզբնական կուտակումը և բուրժուական ունեյուցիան Անգլիայում առաջ են բերում իդեոլոգիական լայն շարժում: Անգլիան դառնում է նոր ժամանակի էմպիրիկ-մատերիալիստական փիլիսոփայության ընթացիկ կենտրոնը: Լեզվական գաղափարների բնագավառում այդ նշանավորվում է սիտլաստիցիզմի ուժեղ քննադատությամբ, «ունիվերսալիստների» (ընդհանուր հասկացությունների) շուրջը տարվու հին վեճերի վերանայմամբ, լեզվա-իմացաբանական հարցերի նոր ըմբռնմամբ: Առանձին սրովյամբ է դրվում լեզվի ծագման հարցը: Եթե միջնադարում անառարկելի հեղինակությունը ստանալի էր, պապայժի այդպիսի հեղինակություն են դառնում, մի կողմից՝ բանականությունը, որով վերագնահատվում է ամեն ինչ, մյուս կողմից՝ փորձն ու զգայությունները, փորձնական, զգայական ճանապարհով ձեռք բերված դրական իմացությունը: Այս հողի վրա երևան եկած ուղիղ մտածողությունը, էմպիրիզմն ու սենսուալիզմը հանդես են բերում միակողմանիություն. ուղիղ մտածողությունը ճշմարտության միակ շահանիչ են համարում բանականությունը, էմպիրիկները՝ փորձը:



երկու կողմերն էլ զուրկ են հարցի խորը դիալեկտիկական ըմբռնումից:

Ֆրենսիս Բեկոն.— Նոր ժամանակի առաջին փիլիսոփաներից մեկը՝ Ֆրենսիս Բեկոնը (1561—1626), իր փիլիսոփայական պրպրատումների մեջ զգալի տեղ է տվել և լեզվի հարցերին: Իր «Գիտությունների արժեքի ու աճման մասին» աշխատության մեջ<sup>1</sup> Բեկոնը մարդկային լեզուն («բառերն ու տառերը») համարում է նշանների մի տեսակ, որ մտքերի հաղորդման միակ միջոցը չէ: Մտքի հաղորդման միջոց կարող են լինել զգայական բնույթի բոլոր այն նշանները, որոնք ենթակա են բավական մեծաթիվ տարրերակումների և աշղպիստով ի վիճակի են հստակ կերպով արտահայտելու տարրեր իմաստներ: Վկայակոչելով տարալեզու մարդկանց և խոլուհամբերի հաղորդակցման օրինակը՝ Բեկոնը նշում է, որ բանական արարածները կարող են հաղորդակցել և ժեստերի միջոցով: Նշանները երկու տեսակ են լինում. 1) նմանողական (անալոգիական) կամ համաձայնական, ինչպես ժեստերն ու հիերոգլիֆները, և 2) պայմանական ու կամայական, ինչպես մեր այբուբենի տառերը. հոսակցական լեզվի բնական թե պայմանական լինելու հարցը սկզբնական անվանադրման հարցի հետ կապելը և բառերի ստուգաբանության միջոցով այն լուծելը Բեկոնը ձիշտ չի համարում. նման: Հարցադրումը ելնում է այն ենթադրությունից, որ անվանադրումը ոչ թե կամայական բնույթ է կրել, այլ ուղղություն է ստացել որոշ կարգի բանականության կողմից, ածանցվել, արտածվել որոշակի մտածողական կարողությամբ:

Այնուամենայնիվ, Բեկոնն ընդունում է, որ բառերը բանականության նշանախեցերն են: Նրա կարծիքով, հնարավոր է պայմանավորվածությունը և արհեստականորեն ստեղծել կատարյալ լեզու: Տարբերելով 2 տեսակ քերականություն՝ գրական և փիլիսոփայական (grammatica literaria et philosophica), առաջինի (իմա՝ սովորական քերականության) նպատակը նա համարում է բառերի և նրանց անալոգիաների քննությունը, երկրորդինը՝ բառերի և իրերի անալոգիաների բացահայտումը: Բեկոնը երազում է այնպիսի բարձր տիպի փիլիսոփայական քերականության մասին, որի նպատակը պիտի լինի տարբեր լեզուների համեմատությունը, նրանց առանձնահատկությունների վերհանումը, արժանիքների ու թերությունների բացահայտումը. լեզուների կատարյալ կողմերի ու ար-

<sup>1</sup> F. Bacon. De dignitate et augmentis scientiarum. 1623.

ժանիքների զուգադրմամբ, նրանց մեջ եղած ամենազեղեցիկը և ամենալավը ջոկելու հիման վրա կարելի կլինի հանգել մի լեզվի, որը հնարավորություն կտա կատարյալ կերպով արտահայտելու մտքերն ու զգացմունքները: Բեկոնի այս «բարձր տիպի» փիլիսոփայական քերականությունը, իհարկե, լիովին տարբեր է հետագա ընդհանրական ռացիոնալիստական քերականությունից: Բեկոնը ժողովուրդների լեզվական տարբերությունները կապում է նրանց ոգու և բարքերի տարբերությունների հետ: Լեզուների քննությամբ նա հնարավոր է համարում գաղափար կազմել և ժողովուրդների հոգեկան առանձնահատկությունների մասին: Այս կապակցությամբ անելով մի շարք կոնկրետ դիտողություններ՝ Բեկոնը նշում է հին ու նոր լեզուների կառուցվածքային տարբերությունները և փաստորեն հանգում դրանց համադրական ու վերլուծական բնույթի մատնանշմանը:

Բեկոնը լայն քննադատության է ենթարկում միջնադարյան ռեալիզմը: Նա դտնում է, որ շի կարելի խոսել «ունիվերսալիաների» ռեալ գոյության մասին և գիտությունը հիմնել դրանց վրա: Իմացության հուսալի աղբյուր կարող են լինել միայն փորձն ու ինդուկցիան, և միայն առաջին ընդհանրացումները կատարելուց հետո կարելի է դիմել սիլլոգիստիկային ու դեդուկցիային: Սակայն գիտության նոր շենքը կառուցելիս պետք է հրաժարվել որոշ նախապաշարումներից կամ «կուռքերից»: Այդ «կուռքերի» թվում Բեկոնը հիշատակում է «հրապարակային կուռքը» (idola fori): Այս կուռքը մարդկանց համակեցության ձևերի արդյունք է և արտահայտվում է առաջին հերթին լեզվական հնացած հասկացությունների օգտագործման և ոչ ճիշտ բառագործածության մեջ: Կան բառեր այնպիսի բաների համար, որոնք գոյություն չունեն, և, ընդհակառակը, կան բաներ, որոնց համար բառեր չկան. կան շփոթող բառեր, որոնք հիմնված են ոչ ճիշտ և պատահական արատրակցիաների վրա: Մարդիկ կարծում են, թե իրենք իշխում են բառերի վրա, մինչդեռ բառերը հաճախ մոլորությունների աղբյուր են:

Հորբս.— Շարունակելով Բեկոնի մատերիալիստական-սենսուալիստական գիծը՝ Հորբսը (1589—1679) նույնպես հանդես է գալիս միջնադարյան ռեալիզմի դեմ: Լեզվի ծագման հարցը եղել է նրան զբաղեցնող կարևոր հարցերից մեկը, որին նա նվիրել է իր «Փիլիսոփայության տարերքը» աշխատության<sup>1</sup> 10-րդ գլուխը. սա-

<sup>1</sup> Hobbes, Elementae philosophiae. 1668.

կայն այս հարցում չորքսը առանձին ինքնատիպություն չունի: Նա ելնում է էպիկուրյան այն սկզբունքից, թե անհրաժեշտությունն ու կարիքն են մղել մարդկանց դաննելու լեզուն:

Չորքսի լեզվափոխությունից հետո կոնցեպցիան մեխանիստական է: Նրա համար զգայությունը արտաքին շարժման ազդեցությունից ծագած ներքին շարժում է: Այսպես, դանգի շարժումն առաջ է բերում օդի շարժում, սա էլ շարժում է առաջ բերում ականջում, ապա ներվերում, ներվերի շարժումն էլ առաջ է բերում շարժում սրտում և ուղեղում: Այսպես էլ մտքերը ուրիշներին հաղորդելու համար մենք դիմում ենք լեզվի շարժումներին, որոնք ուղեղի միջոցով փոխանցվում են ականջներին:

Մարդու իմացական կարողությունը տարբերվում է կենդանականից նրանով, որ մարդու մոտ առկա է բառի շնորհ: Բառերը պայմանական նշաններ են, որոնք հնարավորություն են տալիս հիշողության մեջ պահելու պատկերացումները և հաղորդելու միմյանց: Քանի որ բառերով նշանակվող հիշողական պատկերները թույլ են, դժգույն և իրարից այնքան էլ պարզ չեն տարբերվում, ինչպես սկզբնական ընկալումները, ուստի և իրար նման շատ պատկերացումներ միևնույն անվամբ են նշանակվում: Այս հողի վրա առաջանում են վերացական և ընդհանուր հասկացություններ: Սրանք ունեն լուրջ անվանական և ոչ թե ուսուցողական, որովհետև իրականության մեջ գոյություն ունեն միայն եզակի իրերը: Այսպիսով՝ ընդհանուր հասկացությունները մարդու լեզվա-իմացաբանական գործունեության արդյունք են: Դատողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ կամայական նշանների կամ բառ-անվանումների զուգակցում, բառերից նախադասություններ կազմելու ակտ, մտահանգումը՝ դատողությունների միջոցով եզրակացության հանգելու գործողություն: Դիշտ և հիմնավորված նախադասությունների զուգորդումը կազմում է գիտելիք: Բառերը, որոնցից մենք օգտվում ենք, լուրջ խաղանշաններ են. հիմար է նա, ով դրանք իսկական դրամի տեղ է ընդունում: Կենդանիները զուրկ են պայմանական նշանները կոմբինավորելու կարողությունից, այսինքն՝ բանականությունից:

**Ջոն Լոկկ.**— Լեզվի կարևորությունը մտածողության և բանականության ուսումնասիրության հարցում ավելի է ընդգծվում Ջոն Լոկկի (1632—1704) մոտ: Լոկկը այս շրջանի փոխադասություններից առաջինն է, որ լուրջ կերպով դնում է անուններով ու բայերով նշանակվող հասկացությունների ծագման հարցը:

Ժխտելով մարդու մոտ նախնական իդեանների գոյությունը՝

էմպիրիկ-մատերիալիստական փիլիսոփայութեան ներկայացուցիչները, որոնց թվում և Լոկկը, իմացութեան մասին խոսելիս անհրաժեշտորեն խոսում են «մտածողութեան գործիքի»՝ լեզվի մասին: Իր «Փորձ մարդկային հասկացողութեան վերաբերյալ» գրքում Լոկկը գրում է. «Ես գտնում եմ, որ մի այնպիսի սերտ կապ կա հասկացողութունների ու բառերի միջև, և մեր վերացական գաղափարներն ու ընդհանուր բառերը այնքան կայուն հարաբերություն ունեն իրար հետ, որ անհնար է սլաքը ու որոշակի կերպով խոսել մեր իմացութեան մասին,— որ ամբողջովին կայանում է նախադասութունների մեջ,— առանց նախապես քննելու լեզվի բնույթը, գործածությունը և նշանակությունը»<sup>1</sup>: Կանգնած լինելով լեզվի մատերիալիստական ըմբռնման դիրքերի վրա՝ Լոկկը ամենից առաջ ընդգրծում է, որ լեզուն ինքնին առած՝ իմացութեան անկախ բնագավառ չէ, այլ այդպիսի արժեք է ստանում իրականութեան հետ ունեցած իր կապի միջոցով: Այս առումով Լոկկը, մի կողմից՝ անհրաժեշտ տարբերակում է անցկացնում բառի և իրի միջև, մյուս կողմից՝ նշում բառի և պատկերացման հարաբերութեան անկախությունը: Լոկկը նշում է բառերի՝ հաղորդակցման և մտքի արտահայտման անկատար միջոցներ լինելը և դրանց շարաշահման հնարավորությունը: Ըստ Լոկկի՝ մարդը հասարակական էինդունի է, և խոսելու կարողությունը նրան հատուկ: Լեզուն այդ հասարակութեան կապի գործիքն է: Լեզվի գոյութեան համար անհրաժեշտ է 2 պայման՝ տարրորդած հնչյուններ արձակելու բնական ունակություն և այդ հնչյունները որպէս ներքին պատկերացումների, հոգու մեջ եղած գաղափարների նշաններ ծառայեցնելու կարողություն: Ինչպես ցույց է տալիս թութակների օրինակը, միայն առաջին պայմանը բավական չէ: Սակայն այս երկու պայմանը հնարավոր են դարձնում լեզվի գոյութեանը դեռևս անկատար ձևով: Լեզուն կատարելագործվում է գործածութեան ընթացքում՝ մեկ բառը բաղմամբիվ առանձին գոյականների նշան դարձնելու, այսինքն՝ ընդհանուր եղրերի (բառերի) գործածութեան միջոցով: Լոկկի կարծիքով՝ բնական կապ չկա տարրորդ հնչյունների և որոշակի գաղափարների միջև. այդ կապը կամայական է: Անընդհատ շարունակվող գործածութեան շնորհիվ է, որ տվյալ հնչյունները կապվում են տվյալ պատկերացումների հետ: Եթե տարրորդ հնչյուններ արձակելու կարողությունը բնական է, ապա տվյալ իմաստներին տվյալ հնչյունները

<sup>1</sup> J. Locke, An Essay concerning Human Understanding, Book II, Chapt. XXXIII, § 19.

հատկացնելը, բառ-անվանումներ հաստատելը պայմանական և կամայական է: Այս բանը հաստատելու համար խոկեր երկու ապացույց է բերում. 1) եթե այդպիսի բնական կապ գոյություն ունենար, ապա մարդիկ մեկ լեզու կունենային. 2) բառերը ուրիշների հոգում (նույնիսկ միևնույն լեզվով խոսելու դեպքում) չեն առաջացնում միևնույն գաղափարները, որոնց նշանները մեր կարծիքով նրանք պետք է լինեն:

Լեզվի զարգացումն ու կատարելագործումը, ըստ Լոկկի, ընթացել է առանձինյց դեպի ընդհանուրը և զգայականից դեպի հոգեկանը: Այս բանը հաստատվում է երեխաների օրինակով, որոնց առաջին գաղափարները առանձնակի են. երեխան «մայր» անվամբ սկզբնապես հասկանում է միայն իր մորը, հետո միայն կիրառում այդ առաջին անունը ուրիշների նկատմամբ. այսպիսով առաջանում են ընդհանուր անունները: Այս նույն ձևով էլ սկզբնական կոնկրետ զգայական անուններից անալոգիայով և փոխաբերությամբ առաջանում են վերացական անունները. այսպես, «ոգի» բառի սկզբնական իմաստն է «շունը», «հրեշտակ» բառինը՝ «լրուբեր, մունեստիկ». Լոկկը այն համոզմունքն է հայտնում, որ բոլոր վերացական անունները վերլուծելու դեպքում դրանք կարելի է հանգեցնել զգայական իմաստների: Այս ընդհանուր կոնցեպցիայի հետ է կապված Լոկկի կարծիքը հոլովական իմաստների՝ սկզբնական տարածական դադափարներից ծագելու մասին:

Այսպիսով, Լոկկը լեզվի բնույթի և ծագման հարցը ընդհանուր առմամբ լուծում է մատերիալիստորեն: Սակայն հարցի լուծման մեջ դեռևս առկա է մեխանիցիզմ և ոչ բավարար պատմականություն: Չնայած լեզվի պրոգրեսի ու կատարելագործման գաղափարի առաջադմանը, Լոկկն, այնուամենայնիվ, տարրորոշ հնչյուններ արձակելու կարողությունը մարդուն ի բնե հատուկ է համարում: Չունենալով մարդու՝ կենդանական աշխարհից աստիճանաւոր անջատվելու գաղափարը՝ նա չի կարողանում պարզել և լեզվի առաջացման սկզբնական պայմանների հարցը: Սրան միանում է և այն, որ Լոկկը հետևողականորեն չի կարողանում անցկացնել լեզվի հարարակական բնույթի գաղափարը. պատկերացումների և բառերի հարաբերության հարցի վերլուծման մեջ նա մեկնակետ է ընդունում առանձին անհատին, հիմք ընդունում երեխայի առանձնակի զարգացումը և բառերի իսկական ու անմիջական իմաստը համարում խոսողի պատկերացումները:

բ) XVII դ. ռացիոնալիստական-իդեալիստական  
ուսմունքները

Ներածական դիտողություններ.— Ինչպես նշեցինք, եթե մի կողմից, հակառակ միջնադարին, XVII—XVIII դարերում փիլիսոփաների որոշ մասի համար գլխավոր հեղինակությունը դառնում է փորձը, ապա մյուս կողմից՝ փիլիսոփաների մի այլ խումբ այդպիսի հելլենականություն է դարձնում բանականությունը, այն համարում ճշմարտության միակ շահանիշը, հավատում նրա ամենակարող ուժին: Ռացիոնալիստների կարծիքով՝ ղգայական տվյալները խաբուսիկ են. բանականությունն է միայն այն բանալին, որով մենք կարող ենք թափանցել երևույթների խորքը, հասկանալ նրանց էությունը: Եթե էմպիրիկները թերագնահատում են բանականության դերը, ապա ռացիոնալիստները այն վերածում են արսուլյուտի: Նրանց կարծիքով՝ մարդը ծնվում է բնածին հասկացությունների որոշակի պատրաստի պաշարով կամ որոշակի բնածին սկզբունքներով: Այս բոլորով հանդերձ՝ XVII դ. ռացիոնալիզմի որոշ ներկայացուցիչներ դերժ չեն ուսանելի կողմերից. նրանց մոտ առկա են հարցի դիալեկտիկական և մտտերխալիստական ըմբռնման առանձին տարրեր: Դեկարտը հանդես է գլլիս որպես դոկտրիստ՝ ընդունելով հոգևոր և նյութական սկիզբների անկախ գոյությունը, ընդ որում քիչ չեն մտտերխալիստական տարրերը նրա, հատկապես, բնության վերաբերյալ ուսմունքի մեջ. միաժամանակ Դեկարտը մտնեմտտիկայի մեջ մտցնում մե դիալեկտիկայի տարրեր՝ փոփոխական մեծությունների գաղափարի առաջաշարժումը: Լայբնիցը բնության հիմքում դնում է ինքնուրույն իդեալական: սուբստանցները՝ մանագուները: Սակայն իր իմացության տեսության մեջ Լայբնիցը փորձում է հաշտեցնել ռացիոնալիզմն ու էմպիրիզմը, թեև այդ հաշտեցումը կատարում է հօգուտ ռացիոնալիզմի: էմպիրիկներն այն բանաձևին, թե մտքում ոչինչ չկա, որ նախապես հղած չլինի ղգայություններում, Լայբնիցն ավելացնում է «բացի իրենից՝ բանականությունից» բառերը: Սակայն Լայբնիցը հասել է մատերիայի ու շարժման անխզելիության գաղափարին և անկախ նյութոսնից հայտնագործելով դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվումը՝ դրանով իսկ մտնեմտտիկայի մեջ մտցրել դիալեկտիկայի մոմենտ, շարժման գաղափար: Դեկարտի և Լայբնիցի լեզվական դիտողությունները սերտորեն կապվում են նրանց փիլիսոփայական ընդհանուր կոնցեպցիաների հետ:

Լեզվի հարցերը կարտեզիանակ:ան փիլիսոփայության մեջ. Դեկարտ.— Ռացիոնալիստական փիլիսոփայության առաջին խոշորագույն ներկայացուցիչ Դեկարտը (1596—1650) քիչ է հատուկ ուշադրություն դարձրել լեզվի հարցերին: Սակայն նրա արտահայտած գաղափարները մեծ ազդեցություն են թողել հետագա լեզվափիլիսոփայության և փիլիսոփայական քերականության ներկայացուցիչների վրա: Առանձնապես նշանակալից ազդեցություն են թողել նրա գաղափարները գիտությունների միասնության և տրամաբանական-մաթեմատիկական մեթոդի օրինակելիության մասին, որոնք բխում են նրա փիլիսոփայության դիստավոր սկզբունքից: Դեկարտի փիլիսոփայության մեկնակետը «մտածում եմ, ուրեմն կամ» («cogito, ergo sum») դրույթն է: Այստեղ մտածելու կարողությունը համարվում է մտածող սուբստանցիայի գոյության պայմանը: Սակայն, ըստ Դեկարտի, ով մտածում է, նա և խոսում է: Լեզուն, նրա կարծիքով, ստեղծված է մտածողության ներքին պահանջներով. մտածողությունը կերտում է լեզուն: Այս առումով լեզվի գոյությունը համարվում է բանականության առկայության նշան: Կենդանիները խոսելու կարողություն չունեն, ուրեմն ղուրկ են բանականությունից: Դեկարտին չի զբաղեցնում սկզբնական անունների՝ եզակի թի ընդհանուր գաղափարների արտահայտիչ լինելու հարցը: Նրան հուզում է մի այլ հարց. բառերն սկզբնապես հույզերի՞ արտահայտիչ են, թե՞ մտածողության: Այս հարցին Դեկարտը պատասխանում է, որ բառերը հենց սկզբից մտածողության արտահայտիչներ են և ոչ թե հուզմունքի ճիշեր. նա զգուշացնում է բառերը՝ կրքերի մասին վկայող բնական շարժումների (հույզերի) հետ խառնելուց. այս վերջինները կարող են ընթրիսակվել մեքենաների և կենդանիների կողմից:

Դեկարտին ևս զբաղեցրել է ընդհանրական լեզվի հարցը, թեև այդ ուղղությամբ նա որևէ գործնական քայլ չի կատարել: 1629 թ. նոյեմբերի 20-ին Մերսենին ուղղված նամակում նա խոսում է փիլիսոփայական լեզվի կառուցման սկզբունքների մասին: Դեկարտի կարծիքով՝ կարելի է ստեղծել բոլոր կենդանի լեզուներից և լատինիերենից ավելի հեշտ մի լեզու, որով բոլոր մարդիկ կարողանան հաղորդակցել: Սրա համար անհրաժեշտ է հասկացությունների փիլիսոփայական դասակարգում կատարել և այդ հասկացությունները նշանակել մաթեմատիկորեն: Ավելորդ չէ հիշատակել, որ Դեկարտից առաջ Թեոֆիլո Ֆոնենգոն (1491—1559) հղա-

ցել էր լատիներենի հիման վրա արհեստական լեզու ստեղծելու գաղափարը՝ դիմելով «մակարոնային լատիներենին»:

Քոսյուեն (1627—1704), որ եղել է Ֆրանսիական աբսոլյուտիզմի և ռեակցիայի գաղափարախոսներից մեկը, գաղափարները համարում է բնական և բոլոր մարդկանց մոտ միևնույնը, իսկ բաները՝ արհեստական և լեզվից-լեզու տարբեր: Ըստ նրա՝ բաներն ստեղծվել են արհեստականորեն, և նրանց հաստատումը կամայական բնույթ է կրել: Բաների և գաղափարների միջև բնական կապ չկա. գործածությունն ու սովորույթն են, որ միացնում են ռաջինները երկրորդներին՝ մինչև անխզելիության աստիճան: Քոսյուեի համար բաները ոչ թե հասկանալու պայմանն են, այլ գաղափարներն ամրագրելու միջոց: Լեզուն կախված է մտածողությունից. մտածողությունը նախորդել է լեզվին և ստեղծել այն. մինք խոսում ենք՝ մեր մտքերը արտահայտելու համար. գաղափարները նախորդում են բաներին, որոնք հայտնագործվել են դրանք նշանակելու համար: Քանի որ բաներն արհեստական ստեղծագործություններ են, ուստի, և կարող են անշատվել գաղափարներից: Իրերը անվանելուց առաջ հարկավոր է դրանք հասկանալ. բաներն էլ չհասկացվելու դեպքում ոչ մի գաղափար չեն առաջացնում:

Պետք է նշել, որ Դեկարտի և մյուսների ռացիոնալիստական-իդեալիստական գիծը Ֆրանսիայում XVII դ. միակը չէր. նրա կողքին առկա էին և լեզվի բնույթի ու ծագման հարցի մատերիալիստական լուծման փորձեր: Սիմոնը իր «Հին կտակարանի քննական պատմության» մեջ<sup>1</sup>, շարունակելով հին աշխարհի փիլիսոփայության մատերիալիստական գիծը, լեզվի ծագումը կապում էր անհրաժեշտության և կարիքի հետ:

Լայբնից.— Ավելի լայն է եղել նշանավոր փիլիսոփա Լայբնիցի (1646—1710) լեզվական հետաքրքրությունների շրջանակը: Ինչպես տեսանք, նա առաջիններից մեկն էր, որ հանդես եկավ լեզուների եբրայական ծագման «տեսության» դեմ, հասավ «նախալեզվի» վերականգնման հնարավորության գաղափարին, կարևոր քայլեր կատարեց լեզուների և նրանց փոխհարաբերության ուսումնասիրության ուղղությամբ: Միաժամանակ, ինչպես տեսանք, նա դրել է լեզուների համեմատության հարցը՝ գտնելով, որ ստուգաբանությունը միայն այդ ձևով կարող է ստանալ իսկական գիտական հիմք և որ դրանով կարելի է պարզել ժողովուրդների ծագու-

<sup>1</sup> J. Simon, Histoire critique du Vieux Testament, 1678.



մը: Լեզուները, ըստ Լայբնիցի, լինելով ժողովուրդների հնազույն հուշարձանները՝ ամենից ավելի լավ են պարզում նրանց ծագումը, ցեղակցությունը և տեղափոխությունները: Լայբնիցի համար լեզվի գլխավոր ֆունկցիան ոչ թե հաղորդակցականն է, այլ արտահայտչականը, ընդ որում լեզուն նա դիտում է որպես պատկերացումների համառոտ նշանների կամ ծածկանշանների (շիֆրեր) մի սխտեմ, որ հեշտացնում է մտածողությունը: Ի տարբերություն Լոկկի՝ նա լեզուն համարում է իմացություն ինքնուրույն միջոց:

Լայբնիցը լեզվի ռացիոնալիստական փիլիսոփայության գլխավոր ներկայացուցիչն է, որ հակադրվում է Լոկկի սենսուալիստական փիլիսոփայությանը: Նա աշխատում է հերքել Լոկկի երկու հիմնական դրույթները՝ 1) բառերի սկզբնական եղակիության և ղգայական գաղափարներ արտահայտելու և 2) բառերի հաստատման կամայականության մասին: Ընդհանուր եզրերը, Լայբնիցի կարծիքով, նախորդել են եզակի (առանձին) եզրերին: Ընդհանուր եզրերը, ըստ նրա ծառայում են ոչ միայն լեզվի կատարելագործմանը. նրանք անհրաժեշտ են նրա կառուցվածքի էություն համար. այլապես նախ՝ սկզբնապես գոյություն կունենային միայն հատուկ անուններ և երկրորդ՝ իրերի անսահման բազմության կայության պայմաններում մարդը ճնշված կլիներ իր ստեղծած բառերի թվով: Լայբնիցը այս դեպքում եթե մի կողմից՝ օգտագործում է Լոկկի մատերիալիզմի մեխանիստական բնույթի թերությունները, ապա մյուս կողմից՝ նկատի չի առնում, որ սկզբնապես անվանելի իրերի թիվը պետք է սահմանափակված լիներ մարդու սահմանափակ պահանջներով և հաղորդակցման սահմանափակ կարիքով: Լայբնիցի կարծիքով՝ ընդհանուր եզրերի դործածությունը նույնքան բնական էր, որքան և իրերի նամակությունը նկատելը: Իր դրույթների համար ապացույցներ որոնելու նպատակով Լայբնիցը ևս, Լոկկի նման, դիմում է մանկական լեզվին և անունների իմաստի վերլուծությանը: Նա նշում է, որ 1) իրենց չիմացած առանձին անունների փոխարեն երեխաները գործածում են «բան», «բույս», «կենդանի» բառերը, 2) բոլոր հատուկ անունները ծագում են հասարակ անուններից (Քրուտոս, Կեսար, Օգոստոս և այլն): Լայբնիցի կարծիքով՝ սա վկայում է ընդհանուր եզրերի՝ եզակի եզրերին նախորդելու մասին. ծագմամբ բոլոր բառերը ընդհանուր եզրեր են, որոնցից ծագում են եզակի եզրերը՝ դրանք առանձին իրերի նկատմամբ կիրառելու ուղիով:

Լայբնիցը՝ փորձում է հերքել նաև Լոկկի երկրորդ պրոպոզիցիան:

Այս նպատակով նա ընդունում է լեզվի ծագման բնածայնական տեսութունը և գտնում, որ բառերը ոչ թե կամայականորեն են հաստատվել, այլ որոշ բնական համապատասխանություններ: Նրա կարծիքով՝ աշխարհի համապատասխանությունն կա իրերի և հընչյունների ու ձայնական օրգանների շարժումների միջև: Այս հարցում նա հենվում է Պլատոնի «Կրատիլոսում» կիրառվող սկզբունքի վրա. ըստ նրա՝ ռ «տառը» արտահայտում է ուժեղ շարժում և աղմուկ (գերմ. Riss «խզում», լատ. rumpo, հուն. ῥήγνυμι, ֆր. arracher, իտալ. straccio), 1-ն՝ ավելի մեղմ աղմուկ (գերմ. leben «սպրել», lind «մեղմ, հեղ», lieben «սիրել», լատ. lenis «մեղմ», lentus «ձկուն» և այլն): Բերելով հակառակ օրինակներ՝ Հայրնիցը ենթադրում է, որ հետագա փոփոխությունների միջոցով բառերը հեռացել են սկզբնական արտասանությունից ու իմաստից. այսպես, ah կապակցությունն սկզբնապես թեթև շունչ է արտահայտել (հմտ. հուն. ἄω, ἄτριος, լատ. aura, ֆր. haleine, գերմ. Atem և այլն), բայց հետո ավելի կոպիտ aha, ahha ձևով սկսել է շուր նշանակել (նկատի ունի լատ. aqua և այլն). w ստանալով էլ՝ տևտոնների և այլոց մոտ այն նշանակել է օդի շարժումը (wehen, Wind, vent): Այսպիսով նախնական բնածայնական տարր Հայրնիցը փնտրում է հատկապես կենդանիների անունների, նրանց արձակած ձայներին նմանվող բառերի մեջ և այլն: Այն հանգամանքը, որ լեզուների մեջ, այնուամենայնիվ, բազմաթիվ տվյալներ չեն համապատասխանում բնածայնական տեսությանը, Հայրնիցը բացատրում է նրանով, որ մեր լեզուները ածանցյալ (երկրորդային) բնույթ ունեն, որոնք քիչ են պահել նախնական հատկություններ:

Այս բոլորով հանդերձ՝ Հայրնիցը խոսում է արհեստական լեզվի հնարավորության մասին: Նա եռանդով պաշտպանում է փիլիսոփայական լեզվի հնարավորության հարցը՝ գտնելով, որ կարելի է ստեղծել մի ընդհանուր նշանասխատեմ, որը մաթեմատիկայի լեզվի նման կարտահայտի մարդկանց բոլոր գաղափարները: Այս նպատակով նա անհրաժեշտ է համարում նախ բացահայտել այն տարրական ըմբռնումները, որոնցից կազմվել են մնացածները և երկրորդ՝ սահմանել այս ըմբռնումների բոլոր հնարավոր զուգորդումները: Սա հնարավորություն կտա հաշվելու միջոցով պարզել նախադասությունների ճշմարտականությունը, այլ և գտնել նոր նախադասություններ: Պարզ ըմբռնումներին և նրանց զուգորդումներին պիտք է համապատասխանեն բացարձակ արժեք

ունեցող այնպիսի նշաններ, որոնք ունակ լինեն կազմելու ընդհանուր լեզու:

XVII դարում ևս ռեակցիոն փորձեր են կատարվում փիլիսոփայական հիմնավորում տալու լեզվի աստվածային ծագմանը: Այսպես, Լամին իր «Պոսեյուս արվեստը» աշխատության մեջ<sup>1</sup> փորձում էր ապացուցել, որ մարդը ինքն իրեն թողնվելու դեպքում չէր կարող, բացի շատորոշված ճիշերից, ստեղծել որևէ այլ բան, եթե աստված նրան խոսել չսովորեցներ:

### գ) XVIII դ. մեխանիստական ուսումնեցները

Ներածական դիտողություններ. — Երևույթների մեխանիստական ըմբռնումը լայն հիմքեր է գցում XVII—XVIII դդ. փիլիսոփայության մեջ (Հոբբս, Դեկարտ, Սպինոզա, XVIII դ. անգլիական և ֆրանսիական մատերիալիստներ): Բնության երևույթների ուղջ բազմազանությունը հունգեցվում է մեխանիկականի, ամեն ինչ բացատրվում է մեխանիկայի օրենքներով, ժխտվում են շարժման ձևերի որակական տարբերությունն ու որակական փոխանցումները, մաթեմատիկական վերլուծության մեթոդը արտադրությունում է ու դարձվում ամեն մի գիտական իմացության հիմք: Սա բացատրվում է նրանով, որ այդ շրջանում ամենից ավելի բարձր վարչապետան էին հասել մեխանիկական և մաթեմատիկան: Լեղոն, ի թիվս այլ երևույթների, դիտվում է որպես մի մեխանիզմ, որի գործողությունն ու մասերի հարաբերակցությունը հեշտությամբ կարելի է ենթարկել մաթեմատիկական բանաձևերի: Լեզվի և մտածողության, լեզվի և օրյեկտիվ իրականության, լեզվի և մարդկային մարմնի անատոմիական կառուցվածքի կապը պարզեցվում է, դիտվում որպես ուղղագիծ փոխհարաբերություն: Լեզվի մեխանիստական ըմբռնումը ամենից ավելի ցայտուն կերպով հանդես է եկել ֆրանսիական մտածողների՝ Կոնդիլյակի, դը-Բրոսի, Բոզեի մոտ:

Կոնդիլյակ. — XVIII դարում փիլիսոփաները ավելի մեծ ուշադրություն են հատկացնում լեզվի հարցերին:

Կոնդիլյակը (1715—1780) հանդես է գալիս որպես Լոկկի սենսուալիզմի ջատագով և ռացիոնալիզմի հակառակորդ: Նա ընդունում է իմացության միայն մեկ աղբյուր՝ զգայությունները: Եթե կարտեզիանական փիլիսոփայության ներկայացուցիչները լե-

<sup>1</sup> I. a m i, L'art de parler. 1670.

գուն ենթարկում և՛ին մտածողութեանը և վերջինս համարում լեզվի կերտողը, ապա Կոնդիլյակը վարվում է հակառակ ձևով: Լեզվի վերլուծութունը նա դնում է տրամաբանական հետադոտութեան հիմքում: Կա՛վ տրամաբանել նշանակում է լավ խոսել: Որոշ առումով Կոնդիլյակը լեզուն համարում է վերացական և ընդհանուր հասկացութունների, սրանք էլ՝ բանականութեան սլայմանը: Կոնդիլյակի կարծիքով՝ գոյութուն ունի միայն մեկ մեթոդ՝ վերլուծական մեթոդը: Մտքի ողջ աշխատանքը, նրա կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ վերլուծութուն, բարդ և խառը իմացութեան վերածում իր տարրերին ու հարաբերութուններին, ծանոթին ու անծանոթին: Լեզուն Կոնդիլյակի համար հենց այդ վերլուծական մեթոդի իրականացումն է. «Յուրաքանչյուր լեզու մի վերլուծական մեթոդ է,— գրում է նա,— և յուրաքանչյուր վերլուծական մեթոդ մի լեզու է»<sup>1</sup>: Խոսել նշանակում է միտքը վերածել առանձին տարրերի և հերթով արտահայտել. բառը մտքի վերլուծութեան միակ գործիքն է: Բանականութեան կատարելագործումը լեզվի կատարելագործումն է: Որքան լավ է կաղմված լեզուն, այնքան մեծ է վերլուծութեան ճշգրտութունը: Մտածողութեան արվեստը (իմա՛ տրամաբանութունը) և լեզվի արվեստը (իմա՛ քերականութունը) Կոնդիլյակը վերջիվերջո հանգեցնում է մեկ ընդհանուր արվեստի և նույնացնում: Կոնդիլյակն այն շափով է կարտեղիանակում, որ շափով ընդունում է միայն մեկ մեթոդ՝ մաթեմատիկական վերլուծութեան մեթոդը: Տրամաբանել, նրա կարծիքով, նշանակում է հաշվել: Եվ քանի որ լեզուն տրամաբանելու սլայմանն է, ուստի և յուրատեսակ հաշվական մեթոդ է: Տրամաբանելը մի արտահայտութեան փոխարինումն է (la substitution) մի այլ արտահայտութեամբ՝ նույն գաղափարը պահպանելով հանդերձ: Այլպիսին է և հաշվելը: Բայց հաշվելը մեխանիկա է, ուրեմն և բանականութունը բոլոր գիտութունների մեջ մեխանիկա է: Ասել, որ բանականութունը մեխանիկա է՝ նույնն է ասել, թե նա գրանցվում է բառերի կամ նշանների միջոցով. հետևաբար՝ բանականութեան կամ գիտութեան արդունքը լեզուն է: Ստեղծել գիտութուն նշանակում է ստեղծել մի բարեկարգ լեզու: Բարեկարգ լեզվի հասկանիշները հետևյալներն են. 1) այդ լեզուն պետք է պարզ լինի, որպեսզի մտքերը հեշտութեամբ արտահայտվեն. 2) այդ լեզվի նշանները պետք է ճշգրիտ կերպով սահմանված լինեն, որպեսզի երկիմաստութունների տեղիք չտան. 3) այդ լեզուն պետք է կերտ-

<sup>1</sup> E. B. de Condillae, La langue de calcul, 1798. Առաջաբան:

ված լինի անալոգիայի օրենքներով, որպեսզի բառերը վերլուծվելիս համապատասխանեն այն տարրական գաղափարներին, որ արտահայտում են. անալոգիայի պետք է հանգեցվի ինչպես բանականության (մտածողության), այնպես էլ խոսելու արվեստը: Տրամաբանել մեխանիկորեն՝ նշանակում է ոչ թե մեքենայաբար, որպես ավտոմատ տրամաբանել, այլ հենվել մի սլարդ, ճշգրիտ, կատարյալ, երկբայությունների տեղիք շտվող լեզվի վրա: Այսպիսով, Կոնդիլյակը վերջիվերջո հանգում է փիլիսոփայական լեզվի ստեղծման գաղափարին:

Իր «Մարդկային իմացության ծագման ևսործ» աշխատության մեջ<sup>1</sup> Կոնդիլյակը տուրք է տալիս լեզվի աստվածային հայտնություն լինելու տեսակետին: Բայց հետագայում՝ «Տրամաբանություն» մեջ<sup>2</sup> նա այդ մասին բոլորովին չի խոսում: Այստեղ նա զարգացնում է այն միտքը, որ լեզվի առաջին ձևը «գործողության լեզուն» է (le langage d'action). մարմինն ու հոգին մի միասնություն են կազմում, և մեր արտաքին կառուցվածքը սահմանված է կատարվածը ներկայացնելու համար: «Գործողության լեզուն» նախ՝ վերլուծություն չի անում, այն սինթետիկ և ոչ-սլարդ բնույթ ունի և ներկայացնում է անմիջապես զգացածը, երկրորդ՝ այդ լեզուն ոչ պայմանական չէ և ոչ կամային. մարդիկ դիմում են նրան բնական մղումով՝ առանց նպատակ ունենալու հաղորդել իրենց մտքերը: Մարդը կարող է մտածել առանց նշանների. առաջին լեզուն նա ոչ թե հնարում է, այլ հայտնաբերում: «Գործողության լեզվի» տարրերը ծնվում են մարդու հետ միասին: Լեզվի տարրերը նախորդում են գաղափարների գոյությանը, որովհետև առանց որևէ տեսակի նշանների՝ հնարավոր չէր լինի վերլուծել մեր մտքերը: Այն հակասությունը, որ մտածողությունը ենթադրում է լեզու, իսկ լեզուն ենթադրում է մտածողություն, Կոնդիլյակը լուծում է «գործողության լեզու» ընդունելով: Լեզվի հետագա առաջընթացը կապված է կարիքի հետ: Մարդիկ կարիք են զգում իրար օգնելու, ուրեմն իրենց հասկանալի դարձնելու և հետևաբար հասկանալու Բնկալողը ի վերջո դիտի է ընկնում, որ հասկանալու և հասկանալի դառնալու համար հարկավոր է վերլուծել ուրիշների և իր գործողությունները: Իր գործողությունները վերլուծելով, մարդը վերլուծում է իր մտածողությունը:

<sup>1</sup> E. B. Condillac, Essai sur l'origine des connaissances humaines, 1746.

<sup>2</sup> E. B. Condillac, Logique, 1781.

Այսպիսով՝ «գործողության լեզուն» դառնում է վերլուծական մեթոդ: Անալոգիայի օրենքներով «գործողության լեզուն» հասնում է մեծ պարզության և ճշգրտության:

Բառերի կամ հնչյունական լեզուն փոխարինելով «գործողության լեզվին», պահպանում է նրա վերլուծական բնույթը: Սակայն այս փոխարինումը տեղի չի ունենում միանգամից: Հնչյունական լեզուն երկար ժամանակ գործում է «գործողության լեզվի» հետ խառնված. մարմնի շարժումներն ուղեկցվում են ձայնի ելևէջներով: Հետագայում միայն հնչյունական լեզուն գերակշռություն է ստանում: Սկզբնական հնչյունական լեզուն հիշեցնում էր երգը: Ինչպես որ բնությունը ժեստերի մեջ նախապատրաստել էր «գործողության լեզվի» տարրերը, այնպես էլ նա ճիշդի մեջ նախապատրաստել էր խոսակցական (հնչյունական) լեզուն: Սկզբնական ճիշդը աստիճանաբար վերածվում են ձայնարկությունների, որոնք ճիշդի մի տեսակն են կազմում և ունեն ղգացմունքներին համապատասխան ելևէջներ: Կենդանիների ձայներին, բնության աղմուկներին նմանվելը հարստացնում է բառապաշարը:

Իսկ ինչպե՞ս է պատկերացնում Կոնդիլյակը մարդու մտածողական կարողությունների զարգացումը: Հիմք ընդունելով երեսխայի խոսքը՝ Կոնդիլյակը կարծում է, որ մարդու մոտ նախքան խոսելը արդեն գործում էին ընկալումն ուշադրությունը. այն դեպքում, երբ առարկան այս կամ այն պատճառով (քաղցը և այլ կարգի պահանջները) խիստ կերպով էր տպավորվում, ապա գործում էին հիշողությունը և դեռևս թույլ հրեակայությունը: Այս կապակցությամբ Կոնդիլյակը հայտնում է այն մատերիալիստական միտքը, որ պահանջի ընկալումը կապվում էր այդ պահանջը բավարարող առարկայի հետ: Սակայն այդ կապը, նշում է Կոնդիլյակը, տևական բնույթ չէր կրում. պահանջը այսօր մի առարկայի հետ էր կապվում, վաղը մի ուրիշի: Այսպիսով, երևակայության վարժեցումը մարդու կամքով չէր կատարվում, այլ հանգամանքների դրդմամբ ու կարիքի ուժով: Համակեցությունը հնարավորություն է ստեղծում մարդկանց հոգեկան կարողությունների վարժեցման համար, որովհետև փոխհաղորդակցումն ստիպում է մարդկանց կրքի ճիշդի հետ կապել ընկալումները, որոնց բնական արտահայտությունն են հանդիսանում այդ ճիշդը: Ճիշդերն ուղեկցվում են ժեստերով: Ճիշդերն ու ժեստերը այլ մարդկանց մոտ առաջ են բերում համատիպ ղգացմունքներ. ցավն առաջ է բերում կարեկցանք և օգնելու կարողություն: Կոնդիլյակի կարծի-

քով՝ մարդը բնագրական կարիք է զգում հուզական էներգիան ծախսելու ճիշերի միջոցով: Միևնույն ճիշերը աստիճանաբար վելի տեսականորեն զուգորդվելով իրենց ծնող պատճառների հետ՝ դառնում են նրանց նշանները: Վերջիվերջո մարդիկ ընտելանալով այդ նշաններին՝ սկսում են դրանք վերարտադրել սեփական ցանկություններով՝ վերհիշել ու երևակայել: Այսպիսով՝ բնական ճիշերից անցում է կատարվում դեպի բառերը. այն, ինչ որ առաջ մարդիկ բնազդով էին անում, այժմ կատարում են խորհրդագծություններով: Սկզբնապես, Կոնդիլյակի կարծիքով, խոսքի օրգանները դեռ ճկուն չէին և շատ բաներ չէին կարող արտաբերել. բառերը դեռ քիչ էին:

Սկզբնական բառերը, ըստ Կոնդիլյակի, իրերի անուններ էին (չուր, ծառ և այլն): Հետագայում մարդիկ սկսում են աստիճանաբար տարբերել առարկաների զգայելի հատկությունները և Եկատում են այն հանգամանքները, որոնց մեջ դրանք կարող են գտնվել, և այսպիսով՝ ստեղծում են ածականներն ու մակբայները: Սկզբնական բայերը ծառայում էին հոգեվիճակն արտահայտելուն և անորոշ իմաստ ունեին, ինչպես զնալ, գործել բայերի անորոշները. հետագայում դրանք լրացվում են ժամանակներով, եղանակներով, թվերով և դեմքերով: Վերացական եզրերը (մեծուքյուն, արքնուքյուն և այլն) շատ ուշ են կերտվել՝ բայերից կամ ածականներից: Լոկիկ հետևողություններով՝ Կոնդիլյակը կարծում է, որ վերացական կամ հոգեկան գաղափարները ծագում են կոնկրետ-զգայականներից (համտ. ոգի, հակում և այլն):

Այսպիսով, լեզվի ծագման հարցը Կոնդիլյակը քննում է զարգացման պրոցեսի մեջ: Լեզուն, նրա կարծիքով, կամայականորեն է հաստատվել: Բնությունը մարմնի շարժումների մեջ դրել է «գործողության լեզվի» տարրերը, կրքի ճիշերի մեջ՝ խոսակցական լեզվի տարրերը: Մարդը փորձով, կարիքից գրգռված հայտնաբերում է, որ ինքը խոսում է, առանց խոսել կամենալու: Պայմանալորումը ծառայել է լոկ բնության սկսածը կատարելագործելուն բնորոճակելուն: Սխալները դատապարտվում են, եղած բառերը անալոգիայով կիրառվում նոր գաղափարներ արտահայտելու համար:

Իր-Քրոս.— Լեզվի մեխանիստական ըմբռնումը էլ ավելի բացահայտորեն է հանդես գալիս դր-Քրոսի (1709—1777) «Ուսումնասիրություն լեզուների մեխանիկական կազմության մասին»

աշխատութեան մեջ<sup>1</sup>: Դը-Բրոսը ևս ելնում է այն գաղափարից, որ լեզուն սկզբնապես ազգատ է եղել և ենթարկվել է աստիճանական զարգացման: Նրա կարծիքով՝ բառերի հաստատումը կամայական, պատահական կամ պայմանական բնույթ չի կրել, այլ պայմանավորված է արտասանական օրգանների և նշանակվող առարկաների բնույթով: Խոսելը գործողություն է, իսկ գործողությունը որոշվում է գործիքի բնույթով և գործողության նպատակով: Նշելով, որ այս դեպքում ողջ լուծելի հարցը հանգում է այն բանին, որ ցույց տրվի որոշ հարաբերություն արտաքին ֆիզիկական առարկաների, ուղեղի վրա նրանց թողած տպավորության և արտասանական օրգանների արձակած հնչյունների միջև, դը-Բրոսը դիմում է բնաձայնական տեսությանը: Բառերի հնչյունական ձևերը ճակատագրականորեն կախված են արտասանական օրգանների կառուցվածքից և նշանակվող առարկաների բնույթից, ընդ որում այդպիսի կապ դը-Բրոսը տեսնում է հիմնականում արմատական բառերի դեպքում: Սակայն այս ենթադրությունը պետք է հիմք տա մի այլ ենթադրության համար. եթե տվյալ առարկաներն անխուսափելիորեն առաջ են բերում միևնույն նմանողական հնչյունները, ապա մարդիկ պետք է մեկ լեզու ունեցած լինեն: Դը-Բրոսն ընդունում է այս ենթադրությունը՝ մարդկությանը վերագրելով սկզբնական մեկ լեզու: Այս բանը հաստատելու համար դը-Բրոսը դիմում է համեմատական ստուգաբանություններին, փորձում ապացուցել տարբեր լեզուների արմատների նույնությունը և դնում այնպիսի ստուգաբանական բառարան ստեղծելու պահանջ, որտեղ բոլոր բառերը կհանգեցվեն իրենց սկզբնական արմատներին:

Ինչ վերաբերում է լեզվական տարբերություններին, ապա դը-Բրոսը դրանք փորձում է բացատրել խոսքի օրգանների անատոմիական տարբերություններով, ընդ որում սրանք էլ կապում է կլիմայական տարբերությունների հետ:

Բնաձայնությունը դը-Բրոսը լայն ձևով է ըմբռնում. նա այս դեպքում հասկանում է առարկաների թողած տպավորության համապատասխան արտահայտումը խոսքի օրգանների միջոցով: Այս առումով բնական ճիշդերին, բացականչություններին և ձայնար-

<sup>1</sup> Ch. de Brosses. Essai sur la formation mécanique des langues, 1765. Ռուս. թարգմ. Бросс, Рассуждение о механическом составе языков и физических началах этимологии, пер. А. Никольского, СПб, 1882:



կություններին նույնպես բնածայնական որոշ արժեք է վերազրբ-վում: Մանկական լեզվի հետազոտութեանը դիմելով, դը-Բրոուը պնդում է, որ ձայնարկությունները նախնական լեզվի առաջին բառերն են: Դը-Բրոսի ծառայութեաններէց մեկն էլ այն է, որ նա փորձում է իր տեսութեանը հիմնավորել նախնական լեզուների վրա կատարած դիտողութեաններէ միջոցով:

Ընդհանրական (փիլիսոփայական) լեզվի ստեղծման փորձե-րը.—XVIII դ. շարունակվում է ընդհանրական կամ փիլիսոփա-յական արհեստական լեզվի ստեղծման ուղղութեամբ կատարվող աշխատանքը, որ սկիզբ էր առել XVII դ.՝ Դեկարտի, Լայբնիցի, Ջ. Ուիլկինսի և այլոց ջանքերով: Այս ուղղութեամբ աշխատում են նաև Հերման Հյուգոն, Սամյուել Հարտլիբը, Ջոն Վեկերը, Փորժ Դալգառնը, Բեննար Լամին, Միքայելիսը, Վոլտերը և ուրիշները: Ֆրանսիացի փիլիսոփա և մաթեմատիկոս Կոնդորսեն (1743—1794), հավատարով մարդկութեան ապագա կատարելագործմանը, այդ կատարելագործման նախադրյալներէց մեկն էլ տեսնում էր փիլիսոփայական ընդհանրական լեզվի ստեղծման մեջ: Նա կար-ծում էր, որ որոշ գիտութեաններում, օր՝ քիմիայի մեջ, արդեն սաղմնային ձևով գոյութեան ունի համաշխարհային լեզուն:

Ֆրանսիացի հայտնի ֆիլիկոս Ամպերը (1775—1836) ստեղ-ծել է արհեստական լեզվի սեփական սխտեմ և նրանով ստանա-վորներ գրել:

#### զ) XVIII դ. պատմա-մարդագրական ուսմունքները

Ներածական դիտողութեաններ.— XVII—XVIII դդ. փիլիսո-փայական միտքը մեծ առաջընթաց է կատարում միջնադարյան սխոլաստիցիզմի ու դոգմատիզմի հաղթահարման ուղղութեամբ: Աստիճանաբար վերանայվում են միջնադարում սրածված բոլոր այն դոգմատիկ դրույթները, որոնք հակասութեան մեջ էին դառնում փորձի ու բանականութեան տվյալների հետ: XVIII դարում, սր հայտնի է որպես լուսավորութեան էպոխա, առանձնապես լայն ուշադրութեան առարկա է դառնում մարդը իր մարմնական կառուց-վածքով, իր հոգեկան առանձնահատկութեաններով, իր հասարա-կական կազմակերպութեամբ, իր անցյալով ու ապագայով: Վերջ-նականապես խորխլվում են միջնադարյան այն հայեցակետի հիմ-քերը, որը մարդուն առնում էր որպես աստծու կողմից կազմ-ված արարաստ ստեղծված էակ. սովելի լավ ծանոթանալը մարդու և

կենդանիների կառուցվածքին, մարդանման կապիկները մասին տեղեկանալը, ամենաբազմազան ժողովուրդների ու ուսսայական տիպերի մասին իմանալը,— այս բոլորը հանգեցնում են մարդուն ախնիների՝ կենդանիներին մոտ լինելու գաղափարին, մի գաղափար, որ արտացոլում է գտնում կարլ Լիննեյի կենդանաբանական դասակարգման մեջ, XVIII դ. ֆրանսիական մատերիալիստ-էնցլիկոպեդիստների հայացքներում: Սկսում է տիրապետող դառնալ մարդու ֆիզիկական կառուցվածքի և հոգեկան առանձնահատկությունների աստիճանական ձևավորման դադարաբար, այն միտքը, որ ժամանակակից մարդու բանականությունն ու լեզուն կաղմավորվել են աստիճանաբար և որ մարդը զարգացման երկար ուղի է անցել մինչև ժամանակակից տիպը: Սրա հետ միասին հանդես է գալիս հասարակության պատմական զարգացման օրինաչափություններն ըմբռնելու ձգտում: Ճիշտ է, դեռևս հասարակության և հասարակական հիմնարկների ծագումն ու զարգացումը մատերիալիստորեն չեն բացատրվում, դեռևս մեծ դեր է խաղում ֆանտաստիկ տարրը, մարդու էությունը բացարձակացվում է, հասարակության զարգացումը դիտվում է մարդու զարգացման անալոգիայով, բայց և այնպես չի կարելի շտեմնել այս բնագավառում գիտական մտքի ընդհանուր առաջընթացը:

Այն հանգամանքը, որ մարդաբանական հարցերը<sup>1</sup>, այդ բառի ամենալայն իմաստով, XVIII դարում դառնում են ընդհանուր հետաքրքրության առարկա, անհետևանք չի մնում և լեզվի քննություն համար: Լեզուն որպես մարդուն կենդանիներից տարրերով պիտավոր հատկանիշ և որպես մարդկային մտածողության իրականացման միջոց բնակախումբար սկսում է ուղիղ: Լայն ուշադրություն գրավել. լեզվական պրոբլեմները քննվում են մտաբանական զարգացման ընդհանուր հարցերի հետ կապված: Գլոտոլոգիական պրոբլեմը՝ լեզվի ծագման հարցը դառնում է մի պրոբլեմ, որ շարժում է ամենաբազմազան պրոբլեմների տեղ մարդկանց հետաքրքրությունը: Այդ պրոբլեմի լուծման մեջ նկատվում են և՛ մատերիալիստական, և՛ իդեալիստական-աստվածաբանական, և՛ այս երկուսը հաշտեցնող տենդենցներ: Այսպիսով, XVIII դարի բազմաթիվ հեղինակների մոտ լեզվի քննությունը կատարվում է մար-

<sup>1</sup> XVIII դարում, մանավանդ ֆրանսիական էնցիկլոպեդիստների մոտ, մարդաբանության ըմբռնումը խիստ լայն էր և ընդգրկում էր մարդու հետ կապված ամենաբազմազան հարցերի մի շրջանակ. այստեղ այդ բառը զործածված է տվյալ ժամանակի համար բնորոշ իմաստով:

դաբաժնական ընդհանուր պրոբլեմատիկայի ֆոնի վրա ու նրա հետ կապված:

XVIII դ. համար բնորոշ է նաև լեզվի պատմական ըմբռնման տարրերի երևան գալը՝ կապված մարդու հոգեկան կարողությունների և հասարակության ըմբռնման պատմականության հետ: Այս պատմականությունը տվյալ դեպքում հանդես է գալիս դեռևս ընդհանուր ձևով, կոնկրետ արտահայտություն չի գտնում լեզուների վերլուծության մեջ կամ շատ թույլ արտացոլում է գտնում: Պատմական մոտեցումը մասամբ էլ, ինչպես կտեսնենք, կապված է եղել լեզվի տրամաբանական վերլուծության փորձերի, լեզվի ձևերի մեջ նախնական տրամաբանական պարզության բացահայտման ձգտման հետ (համառ. Հոուս Տուկի վերլուծությունը): Այսպիսով լեզվաբանական տեսություններն այս շրջանում ղվալի մասով ընդհանուր մարդաբանական պայմանավորվածություն ունեն, կապվում են մարդու ծագման ու զարգացման տեսությունների հետ: Ըիշտ է, սակայն, որ այս դեպքում կամ լեզվի ծագման հարցի լուծման մեջ բավարար չափով հաշվի չի առնվում հասարակական մոմենտը, կամ լեզվի ծագումը դիտվում է մտածողությունից կտրված, որպես արդեն մտածող արարածների «հասարակական դաշինքի» արդյունք՝ հասարակական դաշինքի ընդհանուր ուսմունքի մեխանիկական կիրառմամբ, կամ լեզվի և հասարակության զարգացման փոխհարաբերությունը պատկերացվում է մեխանիստորեն: Մարդը առնվում է ավելի շատ որպես բիոլոգիական, քան հասարակական էակ:

Ժան Ժակ Ռուսո.— Լեզվի բնույթի ու ծագման ըմբռնման մեջ նոր տարր է մտցնում Ժան Ժակ Ռուսսոն (1712—1778), լեզվի ծագման հարցը նա քննել է ոչ միայն կողմնակի կերպով, այլև դրան հատուկ աշխատություն է նվիրել: Առաջին աշխատությունը, որտեղ մարդկանց անհավասարության ծագման հարցի հետ կապված՝ Ռուսսոն կանգ է առնում նաև լեզվի ծագման հարցի վրա, «Մարդկանց միջև անհավասարության ծագման և հիմունքների մասին» գործն է<sup>1</sup>: Այստեղ Ռուսսոն հարցը դնում է պատմական հողի վրա: Նա նախամարդուն դիտում է որպես մի արարած, որ իր մտավոր կարողություններով մեզնից շատ հեռու է կանգնած և մոտենում է բարձր կենդանիներին: Սակայն կենդանիները զուրկ չեն զգացմունքներից, հետևաբար նաև գաղափարներից ու նրանց որոշ կոմբինացիաներից:

<sup>1</sup> J. J. Rousseau, Discours sur l'origine et les fondements de l'inégalité parmi les hommes, 1753.

Նախամարդու (վայրենու) սկզբնական հոգեկան կարողությունները, ըստ Ռուսսոյի, մաքուր կենդանական բնույթ ունեին և սահմանափակվում էին ընկալմամբ ու ղգացմունքով. ցանկանալը և շցանկանալը, ձգտելը և վախենալը վայրենու հոգու առաջին գործողություններն էին: Ընդհանրապես կրթերին Ռուսսոն մեծ տեղ է հատկացնում մարդու մտածողության դարգացման մեջ: Ռուսսոն նախամարդկանց պատկերացնում է ոչ թե որպիս հասարակական կենդանիների, այլ որպես առանձին ապրող, ընտանեկան տեական կապերով չկապված և մեկ-մեկ իրար հանդիպող անհատների. բնականաբար Ռուսսոն այս դեպքում լեզվի առկայության մեջ անհրաժեշտություն չի տեսնում (հետագայում միայն նա հանգում է ավելի տեական կապերի գոյության գաղափարին): Այստեղից էլ Ռուսսոն լեզվի ծագումը փորձում է որոնել այն բնական ճիշերի մեջ, որոնք նախամարդկանց կողմից արձակվում էին մեծ վտանգի և մեծ տանջանքի դեպքում: Այսպիսով՝ Ռուսսոն փաստորեն հանգում է ձայնարկությունների տեսությունը՝ փորձելով այն դնել որոշ պատմական հողի վրա և օժտելով որոշ կարևոր նորություններով: Լեզվի հետագա զարգացումը Ռուսսոն պատկերացնում է որպես ձայնի երանգների բազմացման և դրանք որոշ ժեստերով ուղեկցելու պրոցես, թեև բնական ճիշը հենց սկզբից չէր կարող զուրկ լինել ձայնի այսպիսի երանգավորումներից և ուղեկցող ժեստերից: Հետագայում ժեստերը դուրս են մղվում, որովհետև դրանք մթնում չեն կարող օգտագործվել և արտահայտչական սահմանափակություն ու դժարություն ունեն: Այս տեսակետից բառերը (ձայնական լեզուն) «վելի հարմար են, որովհետև լինելով «սահմանված (իմա՝ պայմանական) նշաններ», կարող են արտահայտել ամեն տեսակ գաղափարներ: Ռուսսոյի կարծիքով՝ սկզբնական բառերը շտաբորոշված իմաստ ունեին, այսինքն՝ համապատասխանում էին ամբողջ նախադասությունների: Հետագայում այդ ամբողջական բնույթի բառ-նախադասություններից առանձնանում են գոյականներն ու քայերը, որոնցից առաջինները սկզբնապես հատուկ անունների արժեք ունեին, իսկ երկրորդները՝ անորոշ դերբայի: Ընդհանուր (հասարակ) անունները ծագում են հետագայում՝ հատուկ անունների բազայի վրա:

Ռուսսոյի տեսության մեջ, բացի լեզվի ծագման հասարակական բնույթի անբավարար հաշվառումից, կա առանձնապես խոցելի հրկու կողմ ևս: Առաջին՝ նա չի կարողանում պարզել այն հիմքն ու պայմանները, որոնց առկայությամբ ածցում է կատարվում բնական ճիշերից դեպի իսկական բառերը. այլ կերպ ասած՝ անցումը

զգացական ճիշերից դեպի գաղափարներ արտահայտող բառերը մնում է չպարզված: Այս բանն զգում է և ինքը Ռուսսոն. նա խոսում է բառերի մասին որպես «սահմանված նշանների» և այս «սահմանման» մեջ տեսնում է գիտակցական-կամային մոմենտ: Բայց այսպիսի սահմանման համար խիստ անհրաժեշտ էր բառի (լեզվի) գործածությունը: Առաջանում է մի հակասություն, որ Ռուսսոն ի վիճակի չէ լուծելու «Բառն անհրաժեշտ կլինե՞ր բառի գործածությունը հիմնելու համար», — նշում է Ռուսսոն: «Երբ մարդը կարիք էր զգում բառի՝ մտածելու համար, ապա էլ ավելի շատ կարիք էր զգում մտածողության՝ լեզու կազմելու համար»: Այս առումով էլ Ռուսսոն լեզվի ծագման պրոբլեմի մեջ տեսնում է մի կարևոր լուծելի խնդիր՝ որ՞ն է եղել ավելի անհրաժեշտ՝ հասարակությունը՝ արդեն միավորված լեզուներ հաստատելու համար, թե՞ լեզուները՝ արդեն գտնված հասարակությունը հիմնելու համար: Երկրորդ՝ Ռուսսոն չի կարողանում պարզել այն հարցը, թե ինչպես սկզբնական «հատուկ անուններից», որոնք եղակի առարկաներ էին նշում, անցում տեղի ունեցավ դեպի «հասարակ անունները», որոնք ընդհանուր արժեք ունեն: էլ չենք խոսում այն մասին, որ Ռուսսոն առկախ է թողնում ամեն մի իրի անուն հատկացնելու սկզբնական հնարավորության հարցը:

Իր «Լեզուների ծագման մասին» ուսումնասիրության մեջ<sup>1</sup>, (հրատարակվել է ետմահու) Ռուսսոն էլ ավելի հստակ կերպով է դնում լեզվի ծագման հարցը: Եթե իր նախորդ աշխատության մեջ նա դեռևս զգալի չափով գտնվում էր Կոնդիլյակի ազդեցության տակ, ապա այս աշխատության մեջ ավելի ինքնուրույն է: Լեզվի ծագման հարցում հասարակական մոմենտին այստեղ ավելի կարևոր դեր է տրվում. բայց բառերը համարելով հասարակական սահմանում՝ Ռուսսոն նրանց ձևերը տեսնում է բնական սլաշաճանների մեջ, այլ կերպ ասած՝ շարունակում է լեզվի ծագումը որոնել զգացական ճիշերի մեջ և մեծ տեղ տալ ձայնարկությունների կամ լեզվի էմոցիոնալ ծագման տեսությանը: Նա նշում է, որ նախամարդու մոտ զգացմունքը գերակշռում էր: Այս առումով Ռուսսոն սահմանադատվում է Կոնդիլյակից և լեզվի ծագման մեջ կարիքի կարևորության մասնանշումից: Կարիքը, Ռուսսոյի կարծիքով, մարդկանց առանձնացնում է, իրար հակադրում, մինչդեռ զգացմունքը միացնում է. ոչ թե քաղցը և ծարավը, այլ սերը, ատելությունը.

<sup>1</sup> J. J. Rousseau, Essai sur l'origine des langues, „Oeuvres complètes“, XVI, 1798.

կարեկցանքն ու յարկությունն են մարդկանց ձայներ արձակել տվել: Նրա կարծիքով՝ Կոնդիլյակը սիւալվում է, երբ սկզբնական լեզուն համարում է մի բարեկարգ լեզու (une langue bien faite), վերլուծական մեթոդ, որ իր անալոգիաներով արտահայտում է դադափարների հարաբերությունները. սկզբնական լեզուն ոչ թե երկրաչափների լեզու էր, այլ բանաստեղծների լեզու. այդ լեզուն արտահայտում էր ոչ թե առարկաները, այլ առարկաների առաջացրած զգացմունքը. այն ավելի շուտ երգ էր, քան բառերի լեզու. սկզբնական բառերը կամ բնաձայնական բնույթ ունեին կամ կրփի արտահայտություններ էին (ձայնարկություններ) և այն էլ անհոգաբաշխ, շտարորոշված: Սկզբնական լեզուն պատկերավոր էր, շունք դատողական բնույթ. նախամարդիկ սկսում են զգացմունքներից և ոչ թե դատողություններից: Լեզուների ունեցած տարբերությունները Ռուսսոն հանգեցնում է կլիմայական տարբերությունների. հյուսիսային լեզուները, նրա կարծիքով, կոպիտ են, հարավայինները՝ հնչեղ, կենդանի:

**Մոպերտյուի.**— Ռուսսոյի նման Մոպերտյուին (1698—1759) ընդհանրություն է տեսնում մարդու և կենդանիների հոգեկան աշխարհների միջև. տարբերությունը նա համարում է լոկ քանակական, այսինքն՝ կարծում է, որ «կենդանական տեսակները ունեն ավելի քիչ քանակությամբ գաղափարներ և դրանք համեմատելու ավելի փոքր կարողություն», քան մարդը, ընդ որում կենդանիների մեջ էլ այս տեսակետից աստիճանավորություն է հաստատում: Իր «Փիլիսոփայական խորհրդածություններ լեզուների ծագման և բառերի նշանակության մասին» աշխատության մեջ (1784) Մոպերտյուին դարգնացնում է այն միտքը, որ մարդը մտածելու և դատելու կարողություն ունի նախքան լեզվի ծագումը. այս առումով բառի մաստը նախորդել է բառին. մարդը նախքան խոսել կարողանալը կարողանում էր տարբերել ընկալումները և այդ նպատակով դիմում էր նրանց մի քանի հատկանիշներին: Մարդկային սկզբնական լեզուն Մոպերտյուիի կարծիքով և՛ ժեստերի և ճիշերի լեզու էր, որոնցով արտահայտում էին ամենասանհրաժեշտ կարիքները. այդ լեզուն հասկանալի էր բոլոր մարդկանց համար: Շատ ժամանակ անց միայն մարդիկ սկսեցին մտածել արտահայտության այլ եղանակների մասին և այդ բնական ճիշերին ու ժեստերին ավելացրին սլայմանական ճիշեր ու ժեստեր: Երկարատև ժամանակ էր հարկավոր, որ մարդիկ հասնեին բառերին, այսինքն՝ առանց ժեստերի և տոների արտահայտվելու եղանակին, զգային դրա օգուտը և

սլահոլանհին այն: Այսպիսով՝ Մոպերտյուին փորձում է լեզվի ծագումը դիտել զարգացման սրտցեսի մեջ՝ կենդանուց դեպի մարդը, ընդ որում աշխատում է սլարդել զրա հասարակական հիմքերը. նրա տեսութայան թույլ կողմը լեզվի ծագման սրտցեսին որոշ դիտումնավորութուն հաղորդելն է, լեզվի հասարակական բնույթի մեկանհիկական ըմբռնումը, որ արտահայտվում է հասարակական դիտակցված և նախամտադրված սլայմանավորում ենթադրելու մեջ (լեզուն «հասարակական դաշինքի» արդյունք համարելը): Լեզվի ծագման հարցին Մոպերտյուին անդրադարձել է նաև «Գիսերտացիա լեզուների մասին» աշխատութայան որոշ հատվածներում:

Աղամ Սմիթ.—Լեզվի ծագման հարցը XVIII դարում ընդհանուր հետաքրքրութուն էր շարժում: Հայտնի տնտեսագետ Աղամ Սմիթը 1759 թ. հանդես է գալիս «Խորհրդածութուններ լեզուների նախնական կազմութայան մասին» աշխատութայամբ<sup>1</sup>, որտեղ հենվում է մասամբ Լոկկի, մասամբ Ռուսսոյի գաղափարների վրա: Սմիթի կարծիքով՝ մարդը սկզբնապես յուրատեսակ համրութայան վիճակ է ապրել. այս շրջանում որպես հաղորդակցման միջոց են ծառայել մարմնի և դեմքի արտահայտիչ շարժումները: Այս վիճակը տևել է այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ մատով ստորկանները ցույց տալով, կարող էին խոսր հասկանալ. գաղափարների բաղմացումը այդ դարձրել է անբավարար. մարդիկ «անհրաժեշտութուն զգացին գտնելու արհեստական նշաններ, որոնց նշանակութունը սահմանվեց ընդհանուր համաձայնութայամբ»<sup>2</sup>: Այս կարգի համաձայնութայամբ ստեղծված առաջին բառերը, Սմիթի կարծիքով, բայերն էին, որովհետև անուններն այդ ձևով նշանակելու ծայրահեղ անհրաժեշտութայան չէր զգացվում. իրերը կարող էին նմտնողութայամբ կամ ցույց տալով արտահայտվել, մինչդեռ բայերի արտահայտած սլարդ գործողութունները չէին կարող: Աղամ Սմիթը ես սլաշտպանում է Լոկկի և Ռուսսոյի այն կարծիքը, ըստ որի ընդհանուր հասկացութուններն արտահայտող բառերը (հասարակ անունները) ծագել են առանձին առարկաներ արտահայտող բառերի (հատուկ անունների) բաղայի վրա: Սմիթի կարծիքով՝ սկզբնապես մարդիկ նշանակել են միայն այն առարկաները, որ շրջապատում են իրենց,

<sup>1</sup> A. Smith, Considerations concerning the First Formation of Languages and the Different Genius of Original and Compound Languages, 1759.

<sup>2</sup> Մեջբերումը կատարել ենք ըստ P. Janet-ի և G. Séailles-ի, Histoire de la philosophie, VII հր., էջ 247:

առաջ աչգ անունները կիրառել են նաև համատիպ այլ առարկաների նկատմամբ:

Մոնբոդդո.— Անդլիացի Ջ. Բ. Մոնբոդդոն (1714—1799) իր «Դիսերտացիա լեզվի ծագման և առաջադիմության մասին» աշխատության մեջ<sup>1</sup> փորձում է պարզել լեզվի ծագման նախադրյալները, լեզվի սկզբնական տիպը, լեզվի հետագա զարգացման պրոցեսը՝ նախնական կոլլիտ ճիշերից դեպի բանաստեղծություն:

Ճարտասանությունը: Լեզվի ծագման նախադրյալների քննությունը նա տանում է 3 ուղղությամբ՝ 1) մարդու մարմնական նախադրյալները (արտասանական օրգաններ), 2) հոդեկան նախադրյալները (հասկացություններ) և 3) հասարակական նախադրյալները: Ելնելով լեզվի ծագման հասարակական պայմանավորվածության գաղափարից՝ Մոնբոդդոն փորձում է ի մի բերել և զուգադրել տարբեր հայեցակետները: Նա ընդունում է լեզվի հասարակական դաշինքով ստեղծվելու տեսությունը, բայց այդ պայմանավորման շրջանի նախադրյալները տեսնում է միջարկությունների և բնաձայնությունների շրջանի մեջ: «Լեզուն ստեղծվում է հասարակական հողի վրա,—դրում է նա:—Նրա սկզբնական տարրերը հետևյալներն են՝ 1) ճիշերը և ձայնարկությունները, 2) բնական ձայների նմանողությունը, որտեղից ծագում է բնաձայնությունը, օնոմատոպոեան, որի հիման վրա էլ պատվաստվում է որոշակի հնչյունը որպես գաղափարի նշան ընդունելու վերաբերյալ պայմանական համաձայնությունը»<sup>2</sup>:

Սկզբնական շտարորոշված բնական ճիշերը, որոնցից, ըստ Մոնբոդդոյի, սկսվում է լեզվի առաջացումը, դիտվում են որպես ամբողջական նախադասությունների արժեք ունեցող միավորներ: Այս սկզբնական ճիշերից արտասանության հեշտացմամբ մարդիկ տեսնում են իսկական բառերի ստեղծմանը: Սկզբնական լեզուն հարուստ է հղել ձայնավորներով և ազքատ՝ բաղաձայններով, բասերը հղի են երկար, բառախմբերի (խոսքի մասերի) ճշգրիտ տարբերակումներ չեն եղել, չեն եղել և քերականական մասնիկներ, կապեր ու շաղկապներ և այլն: Իր այս վերականգնած վիճակի իրական լինելը ցույց տալու համար՝ Մոնբոդդոն դիմում է ամերիկյան հնդիկների լեզուների տվյալներին: Լեզվի հետագա զար-

<sup>1</sup> J. B. Monbodo, A Dissertation on the Origin and Progress of Language, 1778—1793.

<sup>2</sup> Մեջբերումը ըստ А. Л. Погосин-ի, Язык, как творчество, Харьков, 1913, էջ 414:



գացումը Մոնբրողդոն կապում է արտարակցիայի կարողութեան զարգացման հետ և միաժամանակ այն քննում յուրատեսակ էսթետիկական հայեցակետով: Նրա կարծիքով՝ սլատմութեան ընթացքը տանում է սկզբնական կենդանական կուպիտ ճիշերից դեպի գեղարվեստորեն ձևավորված, ստեղծագործական ուժ հանդիսացող լեզուն: Մոնբրողդոնի այնքան զարմանալի է թվում լեզվի այժմյան կառուցվածքը և այնքան դժվար կապելի նախնական ճիշերի հետ, որ նա, այնուամենայնիվ, տուրք է տալիս դերրնական ուժի միջամտութեանը:

Հերդեր.—Լեզվի ծագման հարցը դերմանական իրականութեան մեջ հետաքրքրութեան առարկա է դառնում միայն XVIII դ. Իրկլորդ կեսից սկսած: Այս հետաքրքրութեան առաջին արտահայտությունը Ջյուսմիլիսի<sup>1</sup> 1756 թ. կարդացած ղեկուցումն էր՝ «Լեզվի աստվածայնութեան ապացույց» թեմայով, որի մեջ, ինչպես ցույց է տալիս թեմայի անվանումը, նա որդեգրում է լեզվի վաժային ծագման քրիստոնեական հայեցակետը. սա ակնհայտ սեակցիա էր լեզվի մարդկային ծագման տարածված տեսությունների դեմ: Հարցի հետագա գերմանական հետազոտողները մեծ մասամբ դիմում են յուրատեսակ կոմպրոմիսի<sup>2</sup> փորձելով զուգակցել երկու տեսակետները: 1772 թ. լեզվի ծագման հարցի մասին աշխատություններով հանդես են դալիս Հերդերը, Տիդեմանը և Տետենսը<sup>1</sup>, որոնցից առաջինը նշանակալից աղդեցություն է թույնում այդ հարցի լուծման հետագա որոշ փորձերի վրա:

Հերդերը ելնում է իլեալիստական հիմունքից և տեղ թողնում լեզվի ծագման հարցում աստծու գաղափարի միջամտութեան մար: Սկզբնապես լեզվի ծագումը կապելով մարդու դատողություններ անելու կարողութեան հետ, Հերդերը հետագայում<sup>2</sup> լեզուն համարում է բնածին և աստծու կողմից մարդուն տրված շնորհ էլ ավելի ուշ՝ Մոնբրողդոնի հիշված աշխատության գերմաներեն թարգմանութեան առաջաբանում, խոսելով լեզվի մարդկային ծագման մասին, Հերդերն այնուամենայնիվ այն դիտում է որպես «աստվածային արարչագործություն»:

<sup>1</sup> J. G. Herder, Abhandlung über den Ursprung der Sprache, 1772. Tiedemann, Versuch einer Erklärung des Ursprungs der Sprache, 1772. J. N. Tetens, Abhandlung über den Ursprung der Sprache und der Schrift, 1772.

<sup>2</sup> J. G. Herder, Älteste Urkunde des Menschengeschlechts, 1774—1776.

Հերդերն սկսում է այնտեղից, որ ընդունում է, թե մարդը դեռ կենդանի եղած ժամանակ «լեզու» ուներ: Այդ «լեզուն», ցավից կամ այլ զգացմունքից արձակած բնազդական շտարորոշված ճիշերն էին, որոնք արձագանք էին գտնում ուրիշների մեջ: Իր այս տեսակետը հիմնավորելու համար Հերդերը բերում է երկու կարգի օրինակներ. նախ՝ այդ «լեզվի» հետքերը պահպանվել են բոլոր ժողովուրդների մոտ, բազմաթիվ անունների ու բայերի արմատների և միջարկությունների մեջ. երկրորդ՝ «վայրենիների» լեզուներում բացականշուտությունները խիստ մեծ թիվ են կազմում, և այդ լեզուները զդացողական բնույթ ունեն: Սակայն այս կարգի ճիշերը դեռ իսկական իմաստով լեզու չեն, նրանք շատ հեռու են մարդկային լեզու լինելուց և հատուկ են նաև կենդանիներին: Որքան էլ որ զարգացվեն ու կատարելագործվեն, այդ ճիշերը չեն կարող իսկական լեզու դառնալ, եթե չկա դրանք նպատակահարմար կերպով օգտագործող բանականություն: Այս առումով Հերդերը վիճարկում է Կոնդիլյակի և Ռուսսոյի դրույթները: Հերդերը կարծում է, նույնիսկ, որ նախամարդու բնազդները ավելի թույլ և անհաստակ են եղել, քան կենդանիներին: Դեռ ավելին. կենդանիները բնազդների իշխանություն տակ են, իսկ մարդը զուրկ դրանցից: Սակայն մարդը մի մեծ առավելություն ունի կենդանուց, որը և նրանց միջև վիճ է ստեղծում. դա խորհրդածելու կարողությունն է, «ռեֆլեքսիան»: Հերդերը խորհրդածելու կարողությունը դիտում է ոչ թե ռոպայե լեզվի զարգացման հետ կապված և ձեռքբերովի երևույթ, այլ մարդուն ի բնի հատուկ մի բան: Խորհրդածության («ռեֆլեքսիայի») առաջին լեզվաստեղծական ակտը արտահայտվում է նրանով, որ հայեցողության մեջ տրված հատկանիշների ամբողջությունից մարդն ընտրում է մեկը կամ մի քանիսը: Այսպես, օրինակ, նախամարդը տեսնում է սպիտակ, հեղ, բրդոտ դառին և բնորոշ հատկանիշ է որոնում. դառը մայում է, այդ էլ հենց մարդը դարձնում է տարբերիչ հատկանիշ, որի ընկալման ժամանակ «հոգին որոշակիորեն մտածում էր հայտնի իրականության մասին»: Հատկանիշը (Merkmal) ոչ այլ ինչ է, եթե ոչ հատկանիշներքին անվանումը (Merkwort): Մայելու հատկանիշը դառնում է դառի ընդհանուր հատկանիշը՝ ամենից լավ արտահայտելով մարդու հոգեկան պրոցեսը գառի մասին խորհրդածելիս: Իսկ ի՞նչ կարգի հնչյունների է դիմում մարդը խորհրդածության ակտի ժամանակ՝ հատկանիշն արտահայտելու համար. Հերդերը նշում է իրեն այդպիսիներ բնածայնությունները (բնորոշ ձայն արձակող

առարկաների համար) և ձայնարկությունները (այլ՝ զգացական ընկալմամբ պայմանավորված դեպքերում): Մտկայն Հերդերը ելնում է Ռուսոսոյի այն կարծիքի դեմ, թե նախամարդու լեզուն մոտ էք երգին. նա նշում է, որ մարդը իր կռալիտ կոկորդով, իր կլանված ուշադրությամբ, իր պահանջներով և այլն չէր կարող զրանից սկսել, թեև չի ժխտում երգի կարևորությունն ընդհանրապես: Հերդերն այն կարծիքին է, որ մարդկային լեզուն չի կարող գոյություն ունենալ առանց արատրակցիայի, ուստի և ամեն մի լեզու անխուսափելիորեն պետք է ունենա վերացական լատեր: Մարդկային լեզվի ծագումը միասնական համարելով հանդերձ՝ նա նշում է, որ մարդկային տարրեր խմբերի տոկայությունը վերջիվերջո հասցնում է տարրեր լեզուների առաջացմանը:

Հերդերը փաստորեն ընդունում է լեզվի զարգացման երկու էտապ. նախնադարյան հասարակության լեզուն իր հուղական արտահայտչականությամբ ու պատկերավորությամբ և այժմյան քաղաքակրթության լեզուն իր գատողականությամբ վերացական հասկացություններով:

Հերդերի լեզվի ծագման տեսությունը և լեզվի բնույթի մասին ունեցած նրա այլ պատկերացումները զգալի ազդեցություն են թողել պատմա-համեմատական լեզվաբանության առաջին տեսարան Նումբոլդտի վրա: Առանձնապես նշելի է երկու հարց. նախ՝ լեզվի ծագումն ու զարգացումը, լեզվի գոյությունը Հերդերը պայնավորում է բանականության առկայությամբ. ըստ Հերդերի՝ բանականության օգնությամբ է, որ մարդը իրերին բնածայնական անուններ է տվել՝ նկատի առնելով այդ իրերի հատկությունները. երկրորդ՝ Հերդերը, լեզուն համարելով «մարդկային մտածողության» գործիք, բովանդակություն և ձև», նշում է (ոչ առանց Համաննի, Միքայելիսի և Ֆր. Նիկոլայի ազդեցության)<sup>1</sup>, որ ժողովրդի սգին արտահայտություն է գտնում լեզվի մեջ: Իեռուս «Նորագույն դերմանական գրականության մասին» աշխատության մեջ<sup>2</sup> Հերդերը հարց է դնում լեզվի և ազգային բնավորության կապի մասին: Այս դրույթը, անվանման համար հիմք ծառայած հատկանշի

---

H a m a n n, Versuch über eine akademische Frage, 1760. M i c h a e l i s, Über den Einfluss der Sprachen in die Meinungen und der Meinungen in die Sprachen. F r. N i k o l a i, Briefen, die neueste Literatur betreffend. հ մ մ. H. A r e n s, Sprachwissenschaft, 1955, էջ 103 104:

J. G. H e r d e r, Über die neueste deutsche Literatur, 1768.

մունքի հետ միասին, որոշ հիմք է տալիս Հումբոլդտի «ներքին ձևի» գաղափարի համար:

Հերդերի տեսութիւնն մեջ կան մի շարք ուշադրաւ կողմեր՝ 1) ի տարբերութիւն XVII—XVIII դդ. մտածողների մեծ մասի, որոնք լեզուն քննում էին վերացականորեն՝ որպէս տրամաբանական սիստեմ, Հերդերը լեզուն կապում է մարդու, տվյալ լեզվով խոսող ժողովրդի, նրա առանձնահատկութիւնների հետ. 2) լեզուն նա դիտում է ոչ թե որպէս քարացած, այլ վարգացող մի բան, թեև բավարար պատմականութեան, այնուամենայնիվ, չի հանգում. 3) ի տարբերութիւն լեզվի ծագման «հասարակական դաշինքի» արդունք լինելու տեսակետի կողմնակիցների՝ նա լեզուն դիտում է ոչ թե որպէս դիտակցական հայտնագործում, այլ որպէս տարբրայնորեն, մարդկանց կամքից անկախ առաջացած մի բան. 4) առաջ է քաշում այն կարծիքը, որ անունները իրերին տրվում են ըստ դրանց ամենից ավելի ուշադրութիւն գրավող հատկանշի: Սակայն վերևում հիշված թերութիւնների հետ միասին՝ Հերդերը լեզվի ծագման հարցում հանդես է բերում սկզբունքային սխալներ. 1) լեզուն կտրում է մտածողութիւնից, նախքան խոսելը մարդուն խորհրդածելու կարողութիւն վերագրում և վերջ ի վերջո տեղ թողնում աստվածային միջամտութեան համար. 2) լեզվի ծագումը պատկերացնում է ոչ թե որպէս աստիճանական պատմական պրոցես, այլ որպէս հանկարծակի ակտ. 3) լեզվի ծագման հարցում անտեսում է հասարակական միջավայրի դերը: Ճիշտ է, Հերդերը նշում է, որ մարդը հասարակական կենդանի է և լեզվի հետագա զարգացումը նրա համար անհրաժեշտ գործոն, բայց լեզվի ծագման հարցում այդ բունը ցույց չի տալիս. լեզվի ծագումը նա բացատրում է ոչ թե հասարակական հաղորդակցման կարիքներով, այլ մարդու ներքին պահանջներով, նրա խորհրդածելու կարողութեամբ:

Պատահական չէ այս տեսակետից, որ Յոսելը իր «Մտքեր լեզվի ծագման վերաբերյալ տարրեր հայացքների մասին» դրքում (1779) և Համաննը իր գրախոսականում ու հոդվածներում քննադատութեան են ենթարկում Հերդերի տեսութեան խոցելի կողմերը: Յոսելը նշում է, որ Հերդերը չի լուծում պլսավոր հարցը, այն՝ թե ինչպէս կարող էր մարդը ինքն իրեն հասնել պատկերացումները կամայական նշանների հետ այնպէս զուգակցելուն, որ անհրաժեշտ դեպքում այդ նշաններով դրանք հաղորդի ուրիշներին: Համաննը դիպուկ կերպով բնորոշում է Հերդերի տեսութիւնը որ-

սլես «մարդկային լեզվի ծագման գերբնական ապացույց»։ Հերդերի ապացույցը պլատոնական ապացույց է, որի ժամանակ հեղինակը մերթ գտնում է, որ մարդը կենդանի է, մերթ էլ ապացուցում, որ մարդն, այնուամենայնիվ, կենդանի չէ։ Համաներ ճիշտ կերպով կարողանում է նկատել Հերդերի տեսության որոշ թերությունները և ոչ բավարար պատմականությունը, բայց ինքը ևս վերջ ի վերջո հանգում է լեզվի աստվածային ծագման հայացքին։

**Տիդեման.**—Այդ հայացքին է նուև Հերդերի հետ միաժամանակ հանդես եկած Տիդեմանը։ Իր «Լեզվի ծագման բացատրություն»-ում<sup>1</sup> նա այդ բանը աշխատում է ապացուցել լեզուների մեջ իշխող կարգով և մտքի նրբություններն արտահայտելու զարմանալի կարողությամբ, որ նրա կարծիքով՝ չէր կարող առանց իմաստություն ու դատողություն ստեղծվել։ Սակայն այս կարծիքի հետ Տիդեմանն ի կիտիկորեն զուգորդում է լեզվի մարդկային ծագման հայեցակետը։ Ըստ նրա կարծիքի՝ մարդը նախքան լեզուն արդեն պատկերացումներ է ունեցել։ Սրանց առկայություն և այլ պատճառներով ծագել են բառերը, բառերի շնորհիվ գոյացել է բանականությունը, սա էլ լեզվին տվել է կարգ կառուցվածություն։ Սկզբնապես մարդիկ բացատրվել են ժեստերով, ապա նկատելով ժեստերի լեզվի անբավարարությունը, սկսել են դիմել ձայնական լեզվին, որի առաջին բառերը բնածայնություններն են եղել. սրանք աստիճանաբար լրացվել են և այլ կարգի բառերով, որոնք անհրաժեշտության դեպքում հնարվել են հասարակության այս կամ այն անդամի կողմից։

**Տետենս.**—Լեզվի աստվածային և մարդկային ծագման հայեցակետերի էկլեկտիկ զուգորդումը նկատելի է և դերմանացի մի այլ հետազոտողի՝ Տետենսի մոտ, որը Հերդերի և Տիդեմանի հետ միասին հատուկ աշխատություն է նվիրել այդ հարցին («Լեզվի և գրի ծագման մասին»)։<sup>2</sup> Հետագայում այդ հարցին նա անդրադարձել է իր «Փիլիսոփայական փորձեր մարդկային բնության և նրա զուրգացման մասին» աշխատության մեջ<sup>3</sup>։

Տետենսը նույնիսկ փորձում է հիմնավորել իր բռնած միջին

<sup>1</sup> Tiedemann, Versuch einer Erklärung des Ursprungs der Sprache, Riga, 1772.

<sup>2</sup> Tetens, Abhandlung über den Ursprung der Sprache und der Schrift, 1772.

<sup>3</sup> J. N. Tetens, Philosophische Versuche über die menschliche Natur und ihre Entwicklung, I, Leipzig, 1777.

գիծը. «Ձի սպասուցված ոչ այն,—գրում է նա,—որ մարդն ինքն իրեն թողնված չի կարող լեզու գտնել, ոչ էլ այն, որ նա անհրաժեշտաբար պետք է ստեղծի այն»<sup>1</sup>: Բնութագրելով հնչյունական լեզուն՝ Տետենսը մյուս միջոցների նկատմամբ նրա ունեցած առավելութունը համարում է նաև այն, որ խոսողը ոչ միայն արտասանում է բառը, այլև ինքն էլ այն ընկալում է: Սրանով իսկ նա դնում է ներքին խոսքի հնարավորության հարցը: Այն հարցը, թի ինչպե՛ս են մարդիկ հանգում հնչյունական լեզվի գաղափարին, Տետենսը լուծում է՝ հնթադրելով ստեղծագործ անհատների գոյությունը բոլոր ժամանակներում, այդ թվում՝ և նախնադարյան հասարակության մեջ:

**Զուլցեր.**— Զուլցերը իր «Խառն փիլիսոփայական հոգվածներում»<sup>2</sup>, հատկապես «Դիտողություններ բանականության՝ լեզվի վրա և լեզվի՝ բանականության վրա գործած փոխադարձ ազդեցություն մասին» հոդվածում, հենվում է Հերդերի հայացքների վրա: Նա ևս լեզվի ծագման նախապայմանն է համարում մարդու կողմից առարկաների ամբողջությունից առանձին առարկաների առանձնացման կարողությունը, այլ կերպ ասած՝ Հերդերի նշած խորհրդածելու կարողությունը: Ինչ վերաբերում է այդ առարկաների անվանմանը, ապա Զուլցերը դիմում է բնածայնական տեսությանը: Զուլցերի դատողությունների մեջ կարևոր է մի մոմենտ. նա նշում է, որ որակական տարբերություն չկա արդի լեզվագործածությունը և լեզվի ծագումը կառավարող օրենքների միջև, ուստի և անհրաժեշտ է համարում լեզվի ծագման հարցի լուծման համար հավաքել արդի լեզվի վրա կատարած դիտողությունները:

**Ադելունգ.**— Գերմանական հայտնի լեզվարան Ադելունգը նույնպես զբաղվել է լեզվի ծագման հարցով: Իր «Լեզվի ծագման և բառերի կառուցվածքի մասին»<sup>3</sup> աշխատության մեջ նա մի քայլ առաջ է գնում նախորդ գերմանական լեզվարանների նկատմամբ լեզվի ծագման հասարակական անհրաժեշտության ըմբռնման հարցում: Լեզվի կառուցվածքը Ադելունգը համարում է մարդկային և փորձում է նրա ծագումը բացատրել առանց աստվածային մի-

<sup>1</sup> Քաղվածքն ըստ А. П. Погодин-ի, Язык, как творчество, Харьков, 1913, էջ 433:

<sup>2</sup> J. G. Sulzer, Vermischte philosophische Schriften, 1773.

J. Ch. Adelung, Über Ursprung der Sprache und den Bau der Wörter, besonders der Deutschen, Leipzig, 1781.

չամտութեան: Նրա կարծիքով՝ մարդն իր բնութեամբ հասարակական կենդանի է, հետեւաբար և լեզվի ծագումը կապված է հասարակական անհրաժեշտութեան հետ: Ի տարրերութեան Տեպենսի, նա լեզվի ծագման հարցում ընդունում է ոչ թե օժտված անհատների դերը, այլ գտնում է, որ լեզուն ծագել է ինքն իրեն թողնված վայրենու մտտ: Աղելունգը ասաջին անգամ փորձ է անում որոշել այդ նախնական լեզվի կառուցվածքը՝ բնականաբար ենթադրելով, որ սկզբնական մարդկային խոսքը խիստ պրիմիտիվ պետք է եղած լինի: Բուսերի ծագման հարցում Աղելունգը դիմում է բնածայնական տեսութեանը՝ նշելով, որ երկու բաղաձայնով և մեկ ձայնավորով կազմված միավանկ բառերը ամենից ավելի լավ են վերարտադրում խոսքի հնագույն բնածայնական տարրերը: Մյուս ժամանակ Աղելունգը կատարում է այն գործնական փայլը, որ փորձում է կենդանի խոսքի հետազոտութեան հիման վրա ելլու կացութեաններ անել սկզբնական լեզվաստեղծագործութեան մասին: Նա նշում է գերմանական կենդանի ժողովրդական խոսքի հակումը դեպի բնածայն բառերի գործածութեանը: Կելտների տարրերութեանն ցեղակցութեանը Աղելունգը որոշում է ըստ բառերի կառուցվածքային համապատասխանութեան, ընդ որում ըստ արմատների, թերութեանների և ածանցների համապատասխանութեան: աստիճանի սահմանում է ցեղակցութեան տարբեր աստիճաններ՝ սկսած բարբառներից՝ մինչև հեռավոր ցեղակցութեան ունեցող լեզուները:

Ձ. Վիկո.— Իտալացի բուրժուական սոցիոլոգ Վիկոն (1668—1744) ասաջին հեղինակներից մեկն է՝, որ փորձ է արել մարդկային հասարակութեան պատմութեանը դիտելու որպես օրինաչափ պրոցես: Տուրք տալով աստժու գոյութեան տեսակետին՝ նա աստժու դերը սահմանափակում է պատմութեանը լսկ օրենքներ տալու մեջ և գտնում է, որ մարդկութեան հետագա զարգացումը տեղի է ունենում մարդկային բնութեանը հատուկ ներքին ուժով: Ըստ Վիկոյի՝ հասարակութեան զարգացման էտապները նման են առանձին մարդու կյանքի էտապներին, ընդ որում այս էտապներն անցնելուց հետո պատմութեանը կրկնվում է: Վիկոն տարրերում է մարդկային հասարակութեան զարգացման 3 շրջան՝ «աստվածային», «հերոսական» և «մարդկային»՝ դրանք համեմատելով մարդու

<sup>1</sup> J. B. Vieo. Principii della scienza nuova intorno alla commune natura delle nazioni, 1725. Վիկոն հայտնի է դարձել առանձնապես իր գրքի գերմաներեն թարգմանութեանից (1822) հետո:

մանկության, սրտանեկության և հասունության հետ: Առաջին շրջանը նրա մոտ համապատասխանում է նախնադարյան տոհմատիրական հասարակությանը, երբ դեռևս պետություն չկա, երկրորդը՝ ստրկատիրությանն ու ֆեոդալիզմին, երբ սկիզբ են առնում արխատոկրատական պետությունները, երրորդը՝ բուրժուական հասարակությանը, երբ ըստ Վիկտյի ստեղծվում են դեմոկրատական ռեսպուբլիկաներ: Վիկտյի կարծիքով՝ լեզուների պատմությունը հետևում է մարդկային գործերի պատմությանը, ընդ որում լեզվի վարգացումն ընթանում է ժեստերի ու միջարկությունների լեզվից դեպի այժմյան լեզվի հարստությունը: «Վիկտյի մեջ,— գրում է Մարքսը կասասլին ուղղված իր նամակում,— սաղմնային ձևով առկա են Վոլֆը («Հոմերոս»), Նիրուրը («Հոմերական կայսրերի պատմությունը»), համեմատական քերականության հիմունքները (թեև ֆանտաստիկ ձևով)»:

## 2. ԸՆԿՆԱՆՐԱԿԱՆ ՓԻԼՍՈՓԱՑԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախնական դիտողություններ.— XV<sup>II</sup> դարի երկրորդ կեսից սկսում են հանդես գալ ուսցիոնալիստական-տրամաբանական հիմունքներով կազմված քերականություններ: Եթե այս քերականությունները համեմատելու լինենք անտիկ աշխարհի փիլիսոփայական-տրամարանական լեզվաքննության փորձերի և միջնադարյան փիլիսոփայական-հայեցողական քերականությունների հետ, ապա կգտնենք ն՝ ընդհանուր, և՛ տարբեր կողմեր: Ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում ուշագրության կենտրոնում է լեզվի իմաստային կողմը, բոլոր դեպքերում ուղղագիծ կապ է տեսնվում լեզվի և մտածողության, քերականության և տրամարանության միջև, բոլոր դեպքերում, անդիտակցարար թե գիտակցարար, հնարավոր է համարվում բոլոր լեզուների համար միատեսակ քերականական սկզբունքների սահմանումը: Տարբերությունն առաջին հերթին արտահայտվում է լեզվի քննության նպատակների մեջ: Արխատոտելի և ստոիկների մոտ լեզվի քերականական քննությունը ծառայում է մտածողության տրամաբանական քննությանը: Միջնադարյան սխոլաստիկայի համար լեզվի տրամարանական քննությունը նյութակ ունի ցույց տալ աստվածային ստեղծագործության տրամարանականությունը բոլոր բնագավառներում: Ռա-



ցիոնալիստական-տրամաբանական քերականությունների երևան գալը բացատրվում է մասամբ ամեն ինչ բանականության պահանջներին ենթարկելու՝ դարաշրջանի ընդհանուր տենդենցով և սրանից բխող՝ լեզվի քննադատության ու այն «բարելավելու» պահանջով, մասամբ ամենաբարձրագույն լեզուների ուսումնասիրության համար ընդհանուր սկզբունքներ մշակելու ձգտմամբ: Քերականները այսպիսի ընդհանրական բանական հիմունքներ որոնում են տրամաբանության մեջ: Սակայն ընդհանրական քերականության որոշ ներկայացուցիչներ հանգում են լեզվի պատմական ըմբռնմանը, այսպարտում փաստազուրկ հայեցողականության դեմ, փորձում տրամաբանորեն հիմնավորել քերականական կատեգորիաների ծագումը:

**Պոր-Ռոյալի քերականությունը.**—Առաջին ընդհանրական ուցիոնալիստական քերականությունը կազմվել է ֆրանսիական Պոր-Ռոյալ մենաստանում Կլոդ Լանսլոյի և Անտուան Առնոյի կողմից 1660 թ.<sup>1</sup> «Ընդհանուր և ուցիոնալիստական քերականություն» խորագրով: Քերականության հեղինակների կարծիքով՝ լեզուն և լեզվի դործածության նորմաները պետք է ենթարկվեն բանականության պահանջներին: Այս հարցում հեղինակները հենվում են Դեկարտի (Կարտեզիոսի) ուցիոնալիստական փիլիսոփայության վրա. ինչպես տեսանք, Դեկարտը բանականությունը դիտում էր մարդուն կենդանուց տարբերող հիմնական հատկանիշը և այն համարում ամեն ինչի դնահատման շափանիշը. դեդուկտիվ մեթոդը նրա համար միակ հավաստի մեթոդն էր: Քերականության հեղինակներից մեկը՝ Առնոն մասնակցել էր նաև կարտեզիանական «Տրամաբանությունը» կազմելուն: Այդ նույն կարտեզիանական սկզբունքները տեղափոխվում են քերականության բնագավառը: Լեզուն կարտեզիանական դեդուկտիվիզմի դիրքերից քննելով՝ քերականության հեղինակները այն դիտում են որպես մտքի ճիշտ արտահայտություն: Այս առումով, ինչպես որ տրամաբանությունը տալիս է ուղիղ մտածողության կանոնները, այնպես էլ քերականությունը, ըստ նրանց, պետք է տա ուղիղ խոսելու կանոնները, ընդ որում քերականությունը պետք է հենվի տրամաբանության վրա, որովհետև լեզուն և մտածողությունը կապված են: Եթե նախորդ քերականները լեզվի նորմաները մշակելիս հիմք էին ընդունում արիստոկրատական ճաշակը, ապա «Ընդհանուր և ուցիո-

<sup>1</sup> Grammaire générale et raisonnée, 1660.

նախատական քերականության» հեղինակները հենվում են բանականության այն օրենքների վրա, որ տալիս է տրամաբանությունը: Քանի որ տրամաբանությունը տալիս է մարդկային ուղիղ մտածողության օրենքները և քանի որ լեզուն մտքի ուղիղ արտահայտությունն է, ուստի և այս քերականության հեղինակները կարծիքով՝ տրամաբանության հիման վրա կարելի է ստեղծել այնպիսի քերականություն, որը կիրառելի կլինի բոլոր լեզուների համար: Պոր-Ռոյալի քերականության հեղինակները նույնպես են դնում սահմանել բոլոր լեզուների քերականական ընդհանուր սկզբունքները և նրանց հիմնական տարբերությունների պատճառները: Այս նկատարումով նրանք, ֆրանսերենի լեզվական փաստերը հիմք ընդունելով հանդերձ, դիմում են նաև լատիներենի, հունարենի և եբրայերենի փաստերին:

Պոր-Ռոյալի քերականության հեղինակները լեզվի ու մտածողության և համապատասխանաբար քերականության ու տրամաբանության միջև ուղղագիծ համապատասխանություն են տեսնում: Լեզուն ենթարկված է տրամաբանական նպատակահարմարությանը, և հավելադեպ միայն կարող են հանդես գալ «ոչ բանական գործածության քմահաճություններ»: Քերականության ուսումնասիրության: առարկա հանդիսացող հիմնական լեզվական միավորների (բառի ու նախադասության) և տրամաբանության քննության առարկա հանդիսացող հիմնական հասկացությունների (հասկացության և դատողության) միջև ուղղագիծ համապատասխանություն է հաստատվում, քերականական կատեգորիաները համապատասխանեցվում են տրամաբանական կատեգորիաներին:

Պոր-Ռոյալի քերականության գլխավոր արժանիքն այն էր, որ այնտեղ մտցվում է նախադասության ուսմունքը, ընդ որում այս հարցում հիմք է ծառայում ձևական տրամաբանությունը: Նախադասությունը սահմանվում է որպես տրամաբանական դատողության արտահայտություն. համապատասխանաբար նրա կաղմիչներն են համարվում հիմնական («այն, ինչի մասին մի բան հաստատվում է» — «qui est ce dont on affirme»), ստորոգյալը (ավելի ճիշտ՝ ստորոգելին, «այն, ինչ հաստատվում է» — «qui est ce qu'on affirme») և հանգույցը (նրանց կապողը): Բայցևայն նախադասության և ընդհանրապես դիմավոր բայի մեջ, քերականության հեղինակների կարծիքով, միշտ կարելի է բացահայտել տրամաբանական այդ կազմը. լատ. vivo «ապրում եմ» = «1. ես + 2. ապրող +

3. հմ՞»։ միտակ մաքուր բայը համարվում է էական բայի երրորդ դեմքը։ Ըստ նախադասության մեջ կատարած դերի վել բառերը բաժանվում են հրկու իմյի՝ 1) լատեր, որոնք արտահայտում են մտքի առարկաները (անուն, դերանուն և այլն) և 2) լատեր, որոնք արտահայտում են մտքի ձևն կերպը (բայ և շարկկալ)։ Խոսքի մասերը սահմանվում են տրամաբանական հիմունքով՝ ըստ իրենց իմաստային-հասկացական արժեքի։

Պոր-Ռոյալի քերականությունն իր բնույթով ավելի շուտ լեզվի տրամաբանությունն էր կամ լեզուների ուսումնասիրության յուրատեսակ փիլիսոփայական ներածություն, քան իսկական քերականություն<sup>1</sup>։

Ընդհանրական-փիլիսոփայական և ռացիոնալիստական-տրամաբանական բերականությունները հետագայում. Ժիրար, Բոզե, Հառիս, Փրիստլի, Հոուն Թուկ.— Պոր-Ռոյալի քերականությունը վերահրատարակվելով 1756 թ. և 1806 թ.՝ մեծ ազդեցություն է գործում XVIII—XIX դդ. քերականական մտքի վրա։ Կայն տարածում են ստանում և՛ առանձին լեզուների՝ տրամաբանական հիմունքներով կառուցված ղանաղան քերականությունները, և՛ այսպես կոչված «ընդհանրական» («համընդհանուր», «ընդհանուր-համեմատական») փիլիսոփայական քերականությունները։ Ֆրանսիայում այդպիսի ռացիոնալիստական-տրամաբանական բնույթ ունեն Բյուֆֆյեի «Ֆրանսիական քերականությունը», աբբա Ժիրարի «Ֆրանսերենի ճշգրիտ սկզբունքները», Դյումարսեի «Քերականության սկզբունքները», Բոզեի «Ընդհանուր քերականությունը» (1767) և այլն<sup>2</sup>։

Հատուկ հիշատակության արժանի է Ժիրարի աշխատությունը, որտեղ առաջին անգամ տրված է նախադասության անդամների համեմատաբար լրիվ ուսմունքը։ Ժիրարը տարբերում է նախադասության 7 անդամ (membres de la phrase)՝ ենթակա (subjectif), ստորոգյալ (attributif), ուղիղ խնդիր (objectif), անուղղակի խնդիր (terminatif), պարագա (circonstanciel), շարկկալ (conjonctif) և միջարկություն (adjonctif)։ Ժիրարը հստակ կերպով տարբերում է նախադասության անդամները խոսքի մասերից՝

<sup>1</sup> Հմտ. Проф. М. В. Сергневский, История французского языка, Москва, 1947, էջ 169.

<sup>2</sup> Buffiet, Grammaire française, 1709. Girard, Vrais principes de la langue française, 1747. Dumarsais, Principet de grammaire, 1769. N. Beauzée, Grammaire générale, 1767.

ցույց տալով, որ միևնույն նախադասութեան անդամը կարող է արտահայտուիլ տարբեր խոսքի մասերով: Կարելի է ասել, որ մինչև 4. Բեկկերի (XIX դ.) հանդես գալը նախադասութեան անդամների այս ուսմունքը աչքի ընկնող փոփոխութեանների շի ենթարկվում: Ժիրարը կարևոր դեր է խաղացել նաև հումանիշների ուսմունքի զարգացման բնագավառում, այլև արտահայտել բազմաթիվ հետաքրքիր մտքեր լեզվի ու մտածողութեան փոխհարաբերութեան և այլ հարցերի շուրջը<sup>1</sup>:

Բողի աշխատութեանը, լույս տեսնելով զը-Բրուսի՝ հիշատակված աշխատութեանից հետո, իր ավարտին է հասցնում լեզվի՝ որպէս տրամաբանական-վերլուծական սիստեմի մեխանիստական քննութեանը: Ըստ Բողի՝ տրամաբանութեանը արատրակցիայի օգնութեամբ վերլուծութեան է ենթարկում ոգու անբաժանելի ակտը, առանձին քննում պատկերացումները և նրանց հարարկութեանները: Այս վերլուծութեանը ամեն մի լեզվի մեջ խոսքի վերլուծութեան հիմքն է և միշտ հանգեցնում է միևնույն արդունքներին: Պատկերացումների տեսակներին և նրանց հարարբութեաններին համապատասխան՝ ամենուրեք գոյութեան ունեն միևնույն բառատեսակները, դրանց միևնույն ֆունկցիաներն ու հարարբութեանները: Բողն տարբերում է 2 քերականութեան՝ 1) ընդհանուր, որ հենվում է մտածողութեան բնույթի և նրա վերլուծութեան եզանակի վրա և անփոփոխ ճշմարտականութեան ունի. 2) առանձին, որ կախված է պատահական ու կամայական պայմաններից և ենթադրական ճշմարտութեան ունի: Առաջինը «բանավեր և զբավոր լեզվի այն անփոփոխ և ընդհանուր սկզբունքների բանական դիտութեանն է, որոնք հանդես են գալիս յուրաքանչյուր

<sup>1</sup> Հմտ. Ա. Անդեկի հոդվածը (ՄՏ-ում, 4, 1944: Ավելորդ չէ հիշել, որ գերմանական փերականներ Բազեզովը և Մաշները XVIII դ. երկրորդ կեսում, ելնելով տրամաբանական հիմունքներից, տարբերում են նախադասութեան երեք անդամ՝ ենթակա (Subjekt), ստորոգյալ (-ստորոգելի, Prädikat) և հանգույց (Корюла)՝ վերջինս համարելով նախադասութեան հավասար անդամ, սակայն նրանք իրենց հետագու աշխատութեաններում ստիպված են լինում մտցնել լրացուցիչ անդամներ՝ խնդիրները: Միաժամանակ Բազեզովը հրաժարվում է հանգույցը ենթակային ու ստորոգյալին հավասար անդամ համարելու մտքից և այն համարում ստորոգյալի ձև, որ կարող է արտահայտվել լինել յայտով կամ յայական վերջավորութեամբ: Նշելի է նաև, որ մինչև XVIII դարի երկրորդ կեսը հստակ տարբերակում չէր մտցվում նախդիրների և նախածանցների միջև. Փոլլան 1773 թ. միայն շարժականով նախդիրները» (նախածանցները) հանում է նախդիրների շարքից:

առանձին լեզվում»: Երկրորդը «մի առանձին լեզվի կամայականորեն գործածվող կառուցվածքի կիրառման արվեստն է բանավոր կամ գրավոր լեզվի անփոփոխ ընդհանուր սկզբունքների հիման վրա»<sup>1</sup>:

Ընդհանրական փիլիսոփայական քերականությունը Անգլիայում հետևորդներ է գտնում հանձինս Ուիլկինսի, Հառիսի, Փրիստլիի և ուրիշների, որոնց աշխատությունները զերծ չեն լեզվաբանական մեծ հետաքրքրություն ներկայացնող սլոբոլիմների արծարծումից: Այս շրջանի անգլիական լեզվաբանության կարևոր նվաճումներից մեկը պետք է համարել լեզվի նկատմամբ սլատմական մոտեցման սաղմնավորումը Փրիստլիի, Հոռն Թուկի և ուրիշների աշխատություններում:

Բուն անգլերենին վերաբերող քերականությունները այս շրջանում մեծ չափով տուրք են տալիս լեզվական երևույթների տրամաբանական-ռացիոնալիստական ըմբռնմանը: Ընդհանուր առմամբ լեզվի նորմավորման հարցերը քննելիս քերականները հաճախ են ելնում տրամարանությունից, փոխանակ հիմք ընդունելու դործածման համախականությունը<sup>2</sup>: Այսպես, անգլիական քերական Լոուիթը առարկում էր անգլերենի կրկնակի ժխտման դործածության դեմ այն հիմունքով, որ «երկու բացառումը ոչնչացնում են իրար և հավասարվում են հաստատմանը»<sup>3</sup>:

Ընդհանրական քերականության վաղ ներկայացուցիչ Ջ. Ուիլկինսը<sup>1</sup> (XVII դ.) դեռևս տուրք է տալիս լատինատիպ քերականությունների տրադիցիային՝ փորձելով այն հաշտեցնել ռացիոնալիստական-տրամաբանական քերականության սկզբունքների հետ: Նա աշխատում է ապացուցել, որ այդպիսի ընդհանրական քերականություն կարելի է կառուցել լատիներենի հիման վրա:

1751 թ. լույս վ. տեսնում Ջեյմս Հառիսի (1709—1786) «Հելլենա կամ փիլիսոփայական ուսումնասիրություն ընդհանրական քերականության վերաբերյալ» աշխատությունը՝ որ մեծ ազդե-

<sup>1</sup> N. Beauzée, Grammaire générale ou exposition raisonnée des éléments nécessaire du langage pour servir à l'étude de toutes les langues, I—II, Paris, 1767, առաջարան, էջ X:

<sup>2</sup> Հմմտ. В. Н. Ярцев а, О курсе „История языкознания“, ВЯ, 1954, № 4, էջ 105—106:

<sup>3</sup> R. Lowth, A Short Introduction to English Grammar, London, 1762.

J. Wilkins, An Essay towards a Real Character and a Philosophical Language, London, 1868.

<sup>5</sup> J. Harris, Hermes, or a Philosophical Inquiry concerning Universal Grammar, 1751.

ցությունն է թողնում լեզվափոխոսփայական գաղափարների հետա  
գա զարգացման վրա: Ոմանք Հառիսին համարում են XIX դ. լեզ-  
վափոխոսփայության (Հումբոլդտի և ուրիշների) անմիջական նա-  
խորդը: Աշխատության վերնագիրը միայն մասամբ է ստնչվում  
երկում արծարծված հարցերի հետ:

Քսոթիմաստի ըմբռնման մեջ Հառիսը առաջ է քաշում որոշ  
իմաստով նոր սկզբունք՝ բառերը համարելով իրերի սիմվոլներ:  
Հառիսը հանդես է գալիս բնածայնական տեսության և համապա-  
տասխանաբար ֆօնետիկոլոգիայի դեմ: Ըստ Հառիսի՝ եթե  
բառերը համապատասխանեին իրերի բնությանը և լինեին նրանց  
նմանողությունը, ապա իրերի իմացությունը հնարավոր կգարձնել  
նրանց անվանումների իմացությունը, մինչդեռ այլ այդպես չէ:  
Հառիսը նշում է, որ առարկան ուրիշի համար պատկերացնելու  
երկու միջոց կա՝ կամ նմանեցմամբ այն արտահայտել, կամ  
«միանգամայն պատահական հատկություններից» ելնել: Վերջին  
դեպքում մենք գործ ունենք «սիմվոլիկ նշանի» հետ: Քանի որ  
բառերի դերակառոց մեծամասնությունը նմանողությունն է, ուստի  
մնում է ընդունել, որ դրանք «սիմվոլիկ նշաններ» են: Այն հարցը,  
թե ինչո՞ւ է մարդը առարկան արտահայտելու համար դիմում  
սիմվոլիկ նշաններին և ոչ թե նմանողությանը, Հառիսը լուծում է  
այն իմաստով, որ նմանողությունը շատ դեպքերում կամ դժվար  
է, կամ անհնար:

Պայքարելով ֆօնետիկոլոգիայի դեմ և առաջ քաշելով  
բառերի՝ սիմվոլիկ նշաններ լինելու դրույթը, Հառիսը լեզվի ծագ-  
ման հարցը համապատասխանաբար լուծում է ըստ ֆօնետիկոլո-  
գիայի: Նա ընդունում է լեզվի՝ սահմանման և պայմանադրու-  
թյան արդյունք լինելու տեսակետը, միայն թե այն խմբագրում է  
XVIII դ. տարածված հասարակական գաղափարի տեսության համա-  
ձայն: Սակայն ֆօնետիկոլոգիայի և բնածայնական տեսության կողմնակից-  
ների դեմ պայքարելիս Հառիսը ելնում է լեզվի բնութից, ապա-  
ցույցներ որոնում լեզվի էության մեջ՝ սրանով իսկ մի քայլ առաջ  
անցնելով ֆօնետիկոլոգիայի կողմնակիցներից:

Փիլիսոփա Փրիստլին (1733—1804) իր «Դասախոսություն-  
ների կուրս լեզվի տեսության և ընդհանրական քերականության  
վերաբերյալ» (1762) աշխատության մեջ աշխատում է հասնել  
լեզվի պատմական քննության: Փրիստլի կարծիքով՝ լեզվի պատ-  
մությունն անցնում է նույն շրջանները, ինչ ժողովրդի պատմու-  
թյունը, թեև, իհարկե, ժողովրդի պատմությունը Փրիստլին պատ-

կերացնում է ընական օրգանիզմների կյանքի անալոգիայով՝ սկզբնավորում, ծաղկում, անկում: Ի տարբերություն նրա, ինչպես տեսանք, Մոնբրոզոն լեզվի մեջ տեսնում էր անընդհատ կատարելագործում:

Քերականական կատեգորիաների պատմականության ըմբռնումը առկա է Ջ. Հոռն Թուկի (1736—1812) «Թևավոր խոսքեր կամ Փեռլիի զվարճալիքները» աշխատության մեջ<sup>1</sup>, որտեղ հեղինակը փորձում է քերականական մասնիկները հանդեցնել սկզբնական անկախ բառերի: Հոռն Թուկը հանդես է գալիս որպես Ջ. Հաոիսի ընդհանրական քերականության հակառակորդը՝ պայքարելով լեզվի հայեցողական, փաստազուրկ քննության դեմ: Քերականական մասնիկների ծագման հարցը լուծելիս, ինչպես հետագայում Բոսպլը, նա ելնում է տրամարանական քերականության սկզբունքներից՝ և դիմավոր բայը համարում գոտոզության առանձին անդամների միացում, բայց սրանով հանդերձ հարցի քննությունը նա տեղափոխում է կոնկրետ հոդի վրա, փնտրում քերականական մասնիկների կոնկրետ աղբյուրը: Հատինական *ibo* «կրնամ» բայը նա բողկացած է համարում սկզբնական *3* անկախ բառից՝ *i* «գնալ» (հմմտ. *i-re* «գնալ») + *b* «պետք է, ցանկանալ» <*bo, bou, boul* (հմմտ. հուն *x*: *և լատ. volo* «ուզում եմ, ցանկանում եմ») + *o* «ես» <լատ. *ego*: Հոռն Թուկը նախդիրները և շաղկապները (սղասարկու խոսքի մասերը) ծագած է համարում սկզբնական ինքնանշանակ բառերից: Այսպիսով, Հոռն Թուկը մի կարևոր քայլ է կատարում ստուգաբանությունը իսկական պատմական հոդի վրա դնելու ուղղությամբ:

<sup>1</sup> J. Horn Tooke, *Ἐπέξ πτεροέντα or Diversions of Purley, I—II, 1786—1805.*

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱՇՐՁԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 1. ՀԱՅԵՐԵՆ

- Աղայան Է., Հայ լեզվաբանությունը պատմություն, I, Երևան, 1958, էջ 30—38, 94—157.
- Կոստանյան Կ., Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910, էջ 86—411.
- Մենկերչյան Գ., Արդի լեզվագիտությունը, ՀԱ, 1896, էջ 1—4.
- Շուրաբաբյան Գ. Ա., Առումնադրությունը հայ լեզուի և մատենագրությանը, ՄԱրևմուտք (Գ. Զարբանյանի թարգմանությունը ու լրացումներով), Վենետիկ, 1895, էջ 16—105.

## 2. ԻՌԻՍԵՐԵՆ

- Баймут Т., Пути возникновения, развития и становления грамматической терминологии восточных славян, Житомир, 1958.
- Будагов Р. А., Понятие о норме литературного языка во Франции в XVI—XVII вв., ВЯ, 1956, № 5, стр. 10—21.
- Бухене Т. И. и Полионис И. И., Первая печатная грамматика литовского языка, 1954, № 2, стр. 147—151.
- Виноградов В. В., Великий русский языковед (к 240-летию со дня рождения М. В. Ломоносова), „Литературная газета“ 1951, 17 ноября.
- Виноградов В. В., Русская наука о русском литературном языке, „Роль русской науки в развитии мировой науки и культуры“, 3, 1946, стр. 23—39.
- Герье В., Отношение Лейбница к России и Петру Великому, СПб, 1871.
- Грунский Н. К., Очерки по истории разработки синтаксиса славянских языков, I—III, Юрьев, 1910—11.
- Гуковская З., Из истории лингвистических воззрений эпохи Возрождения (теория языка у „Плеяды“), Ленинград, 1940.
- Державин Н. С., М. В. Ломоносов как филолог, „Славянская филология“, М., 1952, стр. 9—16.
- Джаукян Г. О первых попытках применения сравнительного метода в истории армянского языкознания, ИАН Арм. ССР, 1957, № 6.
- Доза, А., История французского языка, М., 1956, стр. 20—24.
- Елизаровский И. А., Российская грамматика М. В. Ломоносова, Архангельск, 1952.
- Засадакевич Н. А., Мелетий Смотрицкий как филолог, Одесса, 1883.



- Жирмунский В. М., История немецкого языка, М., 1948, стр. 63—69
- Киэда М., Грамматика Японского языка, I, М., 1958.
- Коляда Г. И., Памво Берында и его „Лексикон славенороссийский“, УЗ Сталинабадского Пед. ин.-та, 3, 1953, стр. 29—55.
- Кузнецов П. С., О трудах М. В. Ломоносова в области исторического и сравнительного языкознания, УЗМГУ, 150. 1952, стр. 4—44.
- Кузнецов П. С., М. В. Ломоносов, Полное собрание сочинений, т. 7 (лингвистический обзор). ВЯ, 1953, № 6. стр. 119—120.
- Кузнецов П. С., В. А. Богородицкий [1857—1911], ТИЯ, 2, 1953, стр. 254—256.
- Кульман Н. К., Из истории русской грамматики. Пг., 1917.
- Ларин Б. А., Русская грамматика Лудольфа. Л., 1937.
- Лер-Сплавинский Т. Польский язык, М. 1954, стр. 344—346 (прилож.).
- Линниченко А. Очерк развития важнейших идей отечественного языкознания..., Киев, 1956.
- Мещанинов И. И., К истории отечественного языкознания, М., 1949, стр. 5—13.
- Мачавариани М. В., Воззрения Локка и Лейбница о языке, автореф. канд. дисс., Тбилиси, 1954.
- Немировский М. Я., Из прошлого и настоящего кавказской лингвистики, Владикавказ, 1958.
- Погодин А. Л., Язык, как творчество, Харьков, 1913, стр. 393—436.
- Сергиевский М. В., Введение в романское языкознание, М., 1952, стр. 45—49.
- Сергиевский М. В., История французского языка, М. 1947, стр. 128—131, 168—170.
- Смирнов А. Западное влияние на русский язык в петровскую эпоху, 1910.
- Стеблин-Каменский М. И. История скандинавских языков, М.—Л., 1953.
- Сухомлинов М. И. О языкознании в древней России, СПб, 1854.
- Цагарели А., О грамматической литературе грузинского языка, СПб, 1873.
- Шор Р. О., Лингвистическая концепция Шарля де-Бросса (из истории лингвистических учений), „Сборник статей по языковедению“, М., 1939, стр. 250—264.
- Ярцева В. Н., О курсе „История языкознания“ на филологических факультетах университетов, ВЯ, 1954, № 4, стр. 104—115.

### 3. 0S1IP ЦЕ20ИЪБЕП0Ц

- Adelung J. C., Catharinen der Grossen Verdienste um die vergleichende Sprachkunde, СПб, 1815.
- Arnault A. et Lancelot Grammaire générale et raisonnée, 1788 avec une introduction historique par M. A. Bailly. Paris, 1846.

- Bernays J., J. J. Scaliger, Berlin, 1855.
- Brauner H., Die tschechische Lexikographie des 16. Jahrhunderts, Breslau, 1939.
- Virbied J. Ch., Grammaire de la langue arménienne, Paris, 1823.
- Croce B., La filosofia di G. B. Vico, III 5p., Bari, 1932.
- Fricke G., Die Sprachauffassung in der grammatischen Theorie des 16. und 17. Jahrhunderts, ZDB, 3, 1933, s. 136.
- Funke O., Englische Sprachphilosophie im späteren XVIII Jahrhundert, Bern, 1934.
- Geiger L., Das Studium der hebräischen Sprache in Deutschland vom Ende des 15. bis z. Mitte des 16. Jahrhunderts, Breslau, 1870.
- Geiger L., J. Reuchlin, sein Leben und seine Werke, Leipzig, 1871.
- Hall R. A. Jr., Synchronic Aspects of Renaissance Linguistics, Italica, 16, 1939, 42 1—II.
- Hankamer P., Die Sprache, ihr Begriff, und ihre Deutung im XVI—XVIII Jahrhundert, Bonn, 1927.
- Harnois G., Les theories du langage en France de 1660 à 1821, Paris (*անթվագիր, շոբղ 1930 թ.*).
- Janet P. et Séailles J., Histoire de la philosophie, les problèmes et les écoles, VII 5p., Paris (*անթվագիր*), s. 233—250.
- Jellinek M. H., Geschichte der neuhochdeutschen Grammatik von den Anfängen bis auf Adelung, Heidelberg, 1913—14.
- Kluge O., Die hebräische Sprachwissenschaft in Deutschland im Zeitalter des Humanismus, ZGJD, 3—4, 1889—1890.
- Knight W., Lord Monboddo and some of his Contemporaries, London, 1900.
- Konrad G., Herders Sprachproblem im Zusammenhang der Geistesgeschichte, Berlin, 1937.
- Kukenheim L., Contributions à l'histoire de la grammaire italienne, espagnole et française à l'époque de la Renaissance, Amsterdam, 1932.
- Livet Ch. L., La grammaire française et des grammairiens du XVI siècle, Paris, 1953.
- Monk S. H., The Sublime. A Study of Critical Theories in XVIII—Century England, New York, 1935.
- Mundorf G., Die Muttersprache im pädagogischen Werk Herders, Berlin, 1952.
- Neff L., G. W. Leibniz als Sprachforscher und Etymologe, I, Heidelberg, 1870.
- Pott A. F., Zur Geschichte und Kritik der sogenannten Allgemeinen Grammatik, ZPhPhk, NF, 43, 1863.
- Reychman I., Znajomość i nauczanie języków orientalnych w Polsce XVIII w., Wrocław, 1950.
- Rompelman P. A., Lambert ten Káte als Germanist, MKNAW, 15, № 9.

- Schulenburg S. v. d. Leibnizens Gedanken und Vorschläge zur Erforschung der deutschen Mundarten. APAW. Berlin, 1937.
- Sickel K. Z., J. Ch. Adelung, diss., Leipzig, 1933.
- Streitberg W., Kant und die Sprachwissenschaft, IF, XXVI. 382-492.
- Unger R., Hamanns Sprachtheorie im Zusammenhang seines Denkens. München, 1905.
- Weber H. Herders Sprachphilosophie. Eine Interpretation in Hinblick auf die moderne Sprachphilosophie. Berlin, 1939.



Բ

**ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ**

(Նոր կամ «դասական» լեզվաբանություն—XIX դար)



**ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՁԱՆ**  
(XIX դ. I կեսը)

**ԾԱԳՈՒՄԱԲՈՆԱԿԱՆ (ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ)  
ԿՈՄՊՈՐԱՏԻՎԻԶՄ**

**ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ենթաշրջանի լեզվաբանական կոնցեպցիաները և նրանց ձևավորման ընդհանուր նախադրյալներն ու պայմանները.— Լեզվաբանության զարգացման այս փուլն ընդգրկում է XIX դ. սկզբներից (ավելի ճիշտ՝ 10-ական թվականների կեսերից) մինչև XIX դարի կեսերը: Աշխարհի առաջավոր երկրներում այն մոտավորապես համընկնում է կապիտալիզմի հաղթանակի դարաշրջանի հետ, որը բնութագրվում է ազատ մրցակցության ծաղկման և զարգացման վերընթաց գծով: Այս բանը նպաստավոր ազդեցություն է գործում գիտության զարգացման ընթացքի վրա:

Պատմա-համեմատական լիզվարանության տիրապետող դասնալը և լեզվաբանության որպես ինքնուրույն գիտություն ձևավորվելը կապված էին պատմական մի շարք նախադրյալների հետ:

Ինչպես տեսանք, ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի զարգացման պրոցեսը ուղեկցվում է տեղական սահմանափակության մտահորիզոնի նեղության վերացման պրոցեսով: XV—XVIII դդ. մեծ նյութ է կուտակվում ազգային ու գաղութային, հին (դասական) և նոր լեզուների ուսումնասիրության ուղղությամբ: Կատարվում են նյութի դասակարգման փորձեր, որոնք մի շարք դեպքերում գիտական միտքը մղում են ճիշտ հունով: Այս շրջա-

նում կատարվող նկարագրական-դասակարգողական աշխատանքը հանգեցնում է որակական անցման: Լեզվաբանությունը ընդհուպ մոտենում է լեզուների պատմա-ցեղակցական իրական կապերի բացահայտմանը. լեզվաբաններն օգտափոթում են, մեկնաբանության ենթարկում կուտակված նյութը, տալիս լեզուների ծաղու-մասրանական դասակարգման հիմնական սկզբունքները: Նյութի կուտակումից ու խմբավորման փորձերից նրանք անցնում են նյութի ավելի խոր ուսումնասիրության, բացատրության և ընդհանրացման աշխատանքին, փորձում տալ ցեղակից լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների ծաղման տեսությունը:

Արդեն նախորդ էտապում առանձին լեզվաբաններ լեզուների ցեղակցության հարցերը որոշելիս սկսում են հատուկ ուշադրու-թյուն դարձնել քերականական ընդհանրություններին: Ոմանք փորձ են անում այս կամ այն քերականական երևույթի ծագումը բացատրել ցեղակից լեզուների համապատասխան երևույթների հետ առդնելու ճանապարհով: Սկսում են մատնանիշ անել բառադաշարի ոչ բոլոր շերտերի: Հավասարաթեքության փաստը: Քննադատական վերաբերմունք է ստեղծվում ստուգաբանական հնացած եղանակների նկատմամբ: Այս բոլորը անհրաժեշտ բազա են ստեղծում պատմա-համեմատական լեզվաբանության երևան դալու համար:

Սանսկրիտին ավելի մոտիկից ծանոթանալը, սանսկրիտի և եվրոպական մի շարք հին ու նոր լեզուների միջև ընդհանրություններ նկատելը ընդհուպ մոտեցնում են հնդերոպական պատմա-համեմատական լեզվաբանությունը: Մարդիկ սկսում են աշխարհագրական մերձակցության վրա հիմնվող պատմափոփոխարինել ցեղակցական մերձակցության վրա հիմնվող դասակարգման փորձերով: Սկսում են գիտակցել, որ լեզուների իսկական գիտական դասակարգման համար կարևոր է ոչ թե արդի աշխարհագրական դիրքը, այլ տվյալ լեզուների քերականական բառապաշարային այնպիսի ընդհանրությունները, որոնք վկայում են այդ լեզուների՝ հնում մեկ ամբողջություն ներկայացնելու մասին: Սանսկրիտի հուշարձանների հնությունը և արխայիկ գծերը մեծապես նպաստում են եվրոպական մի շարք լեզուների որոշ փաստերի ըմբռնմանը, հնարավորություն են տալիս համեմատության միջոցով վերականգնելու այդ լեզուների լարգացման պատմությունը:

Կապիտալիզմի անարգել զարգացումը և կապիտալիստական

սոցալ մրցակցութիւնը այս շրջանում մեծ չափով պահանջ են առաջադրում գիտութեան, առանձնապէս բնական գիտութիւններին զարգացման համար: XIX դ. կատարվող բնականագիտութիւնները, գիտութեան ընդհանուր վերելքը անհետանք չէին կարող անցնել լեզվաբանութեան համար: Հասարակական գիտութիւններին մեջ են սկսում թափանցել բնական գիտութիւններին զարգացման հետևանքով առաջացած մի շարք գաղափարներ, բնական գիտութիւններին մեջ կիրառվող մեթոդներն ու պատկերացումները: Եթէ այս բանը մի կողմից՝ դրական ազդեցութիւն է գործում հասարակական գիտութիւններին զարգացման վրա, նոյապատում հասարակական գիտութիւններին մեջ հետազոտութեան ճշգրիտ մեթոդներին արմատավորմանը, ապա մյուս կողմից՝ հիմք է տալիս հասարակական երևույթների մասին որոշ միակողմանի պատկերացումներին ստեղծման համար, նոյապատում բնական գիտութիւններին մեջ կիրառվող մեթոդներին պատկերացումներին մեխանիկական տեղափոխութեանը հասարակական գիտութիւններին բնագավառը: Սա առանձնապէս զգալի է լեզվաբանութեան մեջ, որտեղ ոչ միայն հետազոտութեան ճշգրիտ մեթոդներ են սրտնում, այլև փորձում են լեզվական երևույթներին էութիւնը հանգեցնել բնական երևույթներին:

Ինչպէս տեսանք, XVII—XVIII դդ. գիտութեան և փիլիսոփայութեան մեջ աստիճանաբար թափանցում են պատմականութեան տարրերը, զարգացման գաղափարները: Փորձեր են արվում հաստատելու մարդկութեան զարգացման էտապներ, լեզվի ծագումն զարգացումը կապելու մարդու բնական զարգացման հետ: Գիտութեան գրեթէ բոլոր բնագավառներում XIX դարում հարթանակում է պատմականութեան գաղափարը: Փիլիսոփայութեան մեջ այն առանձնապէս լայն ճանապարհ բաց անելով Կանտից սկսած՝ իր ծաղկումն է ապրում Հեգելի դիալեկտիկայի մեջ:

Որպէսզի լեզվաբանութեան մեջ սկսեին զրադվել լեզուներին կոնկրետ պատմութեամբ, նկատեին լեզվի պատմական փոփոխականութիւնը, անհրաժեշտ էր պատմական բովանականաչափ երկարատես մի ժամանակաշրջան: ամրագրված հուշարձաններով: Ենթադրում XIX դարում մենք արդեն ունենք մի վիճակ, երբ ազգային լեզուներն անցել են բովանականաչափ երկար ճանապարհ, երբ հին ու նոր լեզուներին տարբերութիւններն ակնհայտ բնույթ են ստացել, երբ արդեն կան հավաքված և հրատարակված այնքան լեզվական հուշարձաններ, որ հնարավորութիւն տան զատե-



լու լեզունների անցած պատմական ուղու մասին: Այս պատմական հուշարձանների նկատմամբ հետաքրքրությունն աճմանը նվաստում է ումանտիկական հափշտակությունը պատմական անցյալով, այն հակադրելը բուրժուական ներկային:

Լեզվական հարցերի նկատմամբ հետաքրքրության աճը ղպալի շափով պայմանավորվում է նաև հին տեքստերի վերծանության ուղղությամբ տարվող հաջող աշխատանքով, հնագիտական պեղումների ընձեռած նյութով:

Լեզվաբանության պատմության զարգացման այս ենթաշրջանում կարելի է առանձնացնել 3 ուղղություն՝ 1) մեխանիստական նատուրալիզմի, 2) կուլտուր-պատմական (կուլտուր-իստորիզմի) և 3) բանասիրական (ֆիլոլոգիզմի), որոնք հանդես են գալիս պատմա-համեմատական լեզվաբանության մեջ: Ստատիկ-վերլուծական ուսումնասիրության մեջ հանդես է գալիս լոգիցիզմը՝ ընդհանրական ուսուցիչական-տրամաբանական քերականության մեջ իշխող տեղեկանքների բազայի վրա: Երեք ուղղություններն էլ կապված են մի կողմից՝ լեզվաբանության պատմության նախորդ շրջանում հանդես եկած լեզվաբանական սյուսկերացումների ու կոնցեպցիաների, մյուս կողմից՝ ժամանակի դիտության զարգացման տիրապետող տեղեկանքների ու ընդհանուր պատկերացումների հետ: Մեխանիստական նատուրալիզմը հանդես է գալիս մասամբ նախորդ շրջանի լեզվաբանության մեխանիստական պատկերացումների, մասամբ էլ ժամանակի բնական դիտությունների ծաղկման հետ կապված: Մեխանիստական նատուրալիզմի ներկայացուցիչները լեզուն դիտում են որպես բնական մարմին, որ ենթակա է բնական գիտությունների (մեխանիկայի, ֆիզիկայի, քիմիայի և այլն) հայտնագործած օրինաչափություններին, չեզվարանությունը՝ որպես բնական գիտությունների նման մի գիտություն, որի մեջ կիրառելի են այդ գիտությունների սկզբունքներն ու մեթոդները: Կուլտուր-իստորիզմի ներկայացուցիչները լեզուն դիտում են որպես մարդկային կուլտուրայի ու քաղաքակրթության անբաժան մասը, լեզուների ծագումը, զարգացումն ու կառուցվածքային առանձնահատկությունները կապում այդ լեզուներով խոսող ժողովուրդների ծագման, զարգացման ու հոգեկան առանձնահատկությունների հետ, լեզվաբանությունն էլ համարում են մարդկության, նրա կուլտուրայի ու քաղաքակրթության, տարբեր ժողովուրդների պատմության տարբեր կողմերն ուսումնասիրող գիտությունների՝ մարդաբանության (այս բառի լայն իմաստ

տով), հասարակագիտության, ակադաբրության, պատմագրության հետ սերտորեն առնչվող գիտություն: Կուլտուր-խատորիվմը ձև: վորվում է մասամբ նախորդ շրջանի լեզվաբանության պատմա-մարդաբանական և գլոտտոգոնիական ուսմունքների, մասամբ էլ ժամանակի գիտության մեջ իշխող փիլիսոփայական, մարդաբանական, հասարակագիտական, ակադաբրական, պատմագրական կոնցեպցիաների բազայի վրա: Ֆիլոլոգիվմի ներկայացուցիչները շարունակում են դավանել դեռևս XVIII դ. երկրորդ կեսում հանդես եկած համեմատական լանասիրության սկզբունքները՝ դրանք միացնելով ընդհանուր գիտական ու լեզվաբանական նոր պատկերացումների հետ: Ֆիլոլոգիվմի ներկայացուցիչները լեզուն դիտում են առաջին հերթին որպես գրական լեզու՝ իր պատմա-կուլտուրական ողջ արժեքով, լեզվաբանությունը դեռևս սերտորեն կապում են բանասիրության հետ: Ֆիլոլոգիվմը սերտորեն առնչվում է կուլտուր-պատմական ուղղության հետ, լեզուն այստեղ ևս քննվում է իր կուլտուր-պատմական արժեքով ու առնչություններով:

Մերանիստական նատուրալիվմի ներկայացուցիչները նպատակ են դնում համեմատության միջոցով պարզել լեզուների կառուցվածքային տարրերի ծագումը՝ նախկին անկախ միավորների կցման (ագլյուտինացիայի) ճանապարհով: Նրանց ուշադրության կենտրոնում գտնվում են քերականական ձևերի ծագման հարցերը: Կուլտուր-խատորիվմի ներկայացուցիչները լեզուների համեմատության մեջ տեսնում են մի միջոց, որ հնարավորություն է տալիս պարզել ժողովուրդների ցեղակցական կապերը, փոխհարաբերություններն ու առանձնահատկությունները: Նրանց ուշադրության կենտրոնում գտնվում են լեզուների ու ժողովուրդների ծագման հարցերը: Ֆիլոլոգիվմի ներկայացուցիչները ձգտում են համեմատության միջոցով պարզել հուշարձանների պատմական փոխհարաբերությունը, դրանց լեզվական առնչություններն առանձնահատկությունները, գրական ու լսոսակցական, հին գրական ու նոր գրական լեզուների կապը, գրական լեզվի դարգացման էտապները: Նրանց ուշադրության կենտրոնում գտնվում են գրավոր հուշարձանների ծագման հարցերը: Վերջ ի վերջո այս շրջանի բոլոր ուղղությունների ուշադրության կենտրոնում գեներտիկական հարցերն են, և համեմատությունը դիտվում է որպես այդ հարցերի լուծման միջոց:

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները.—

Պատմա-համեմատական լեզվաբանության զարգացման այս ևն-  
թաշրջանի համար կարելի է տարբերել 2 էտապ. 1) 1810—20-ա-  
կան թվականները, երբ հանդես են գալիս պատմա-համեմատա-  
կան լեզվաբանության առաջին աշխատությունները՝ արդարաբե-  
լով նոր ուղղության ծնունդը. 2) 1830—40-ական թվականները,  
երբ ավարտվում են պատմա-համեմատական լեզվաբանության  
հիմնադիրների գլխավոր աշխատությունները (Բոպպի, Գրիմի,  
Հումբոլդտի), և այդ լեզվաբանության սկզբունքներն սկսում են  
կիրառվել հնդեվրոպական հին ու նոր լեզուների ու լեզվաճյուղերի  
նկատմամբ:

Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը.— Լեզվա-  
բանության որպես ինքնուրույն գիտություն ձևավորվելու և պատ-  
մա-համեմատական լեզվաբանության արմատավորման հետ կապ-  
ված լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը զգալի փո-  
փոխություն են կրում: Սրանք էլ իրենց հերթին պայմանավորված  
էին դարաշրջանի ընդհանուր պահանջներով և աշխարհայացքային  
ընդհանուր փոփոխություններով: Այս շրջանում կարելի է առանձ-  
նացնել լեզվաբանական աշխատանքի հետևյալ տիպերը.

1) Պատմա-համեմատական (մասնակի և առանձնական) լեզ-  
վաբանություն.— Սրան են վերաբերում այն բոլոր հարցերը,  
որոնք կապված են լեզուների պատմական զարգացման, լեզուների  
ծագման ու ցեղակցության, լեզուների ծննդաբանական դասա-  
կարգման հետ: Այս հարցերը լուծում են ստանում պատմական ու  
համեմատական քերականությունների, համեմատական ու ստու-  
գաբանական բառարանների, լեզուների պատմության և ցեղակ-  
ցության հարցերին նվիրված աշխատությունների մեջ: Պատմա-  
համեմատական լեզվաբանությունը դալիս է փոխարինելու ն:  
խորդ շրջանի լեզվաբանական աշխատանքի այն տիպին, որ մենք  
կոչեցինք ստուգաբանական-զուգահրտական: Սակայն, եթե ստու-  
գաբանական-զուգահրտական լեզվաբանությունը դեռևս հենվում է:  
ստուգաբանական հին սկզբունքների վրա, սիստեմատիկ համե-  
մատություններ չէր կատարում, դեռևս չէր մշակել լեզուների դաս-  
ակարգման բավարար չափով գիտական մեթոդներ, ապա պատ-  
մա-համեմատական լեզվաբանությունը առաջանում է հենց այդ  
հիմքերի վրա: Պատմա-համեմատական լեզվաբանությունը ներ-  
կայացնում է նախկին ֆիլոլոգիական լեզվաբանության աշխա-  
տանքի որոշ բնագավառի զարգացումը: Եթե ֆիլոլոգիական լեզ-  
վաբանությունը ուղադրություն էր դարձնում միայն գրավոր տեքս-

տերի վրա, ապա սլատմա-համեմատական լեզվաբանությունը ընդլայնում է հետադոտություն շրջանակները՝ ընդգրկելով և անգիր ժամանակները. եթե ֆիլոլոգիական լեզվաբանությունը նստակ ունի լուկ հին տեքստերի լեզվական մեկնարանությունը, ապա սլատմա-համեմատական լեզվաբանության համար այդ տեքստերը միջոց են միայն տվյալ լեզվի գրավոր շրջանի սլատմության ստեղծման համար. եթե ֆիլոլոգիական լեզվաբանությունը ինքնուրույն դիսցիպլին չէր, այլ մտնում էր հին տեքստերի ուսումնասիրության ընդհանուր դիսցիպլինի մեջ, ապա սլատմա-համեմատական լեզվաբանությունը լեզվաբանական ինքնուրույն դիսցիպլին է և ունի իր ուրույն նպատակները. վերջապես, եթե ֆիլոլոգիական լեզվաբանությունը շունի որոշակի հետադոտության մեթոդ, այլ այդ մեթոդը որոշվում էր տեքստի բնույթով, ապա սլատմա-համեմատական լեզվաբանությունը մշակում է իր հետադոտության որոշակի մեթոդը:

Այս շրջանում իր առաջին քայլերն է անում սլատմա-համեմատական լեզվաբանությանը վերաբերող այն դիսցիպլինը, որ հայտնի է «լեզվաբանական հնէաբանություն» անունով և որը նույնպես ունի համեմատական քերականության ու ստուգարանության տվյալներով վերականգնել հնդեգրայացիների սլատմությունը:

2) Ֆիլոլոգիական-վերծանողական լեզվաբանություն.— Լեզվաբանական աշխատանքի այս բնագավառը շարունակում է մնալ ոչ ինքնուրույն բնագավառ: Նրա օգնությամբ նախապատրաստվում է այն նյութը, որ անհրաժեշտ է և՛ սլատմա-համեմատական լեզվաբանության, և՛ սլատմության համար: Այդ սլատմառով էլ այս լեզվաբանության ներկայացուցիչները կարող են նեղ մասն: գիտությամբ և՛ լեզվաբաններ լինել, և՛ սլատմարաններ, և՛ հնագետներ, և՛ գրականագետներ, երբեմն էլ նրանք և՛ այս են, և՛ այն, որովհետև տեքստերի հուշող վերծանումը կամ բանասիրական-տեքստարանական աշխատանքը սլահանջում է բազմակողմանի գիտելիքներ: Այսուհանդերձ ֆիլոլոգիական-վերծանողական աշխատանքը մեծ չափով կասկած է լեզվաբանության հետ և որոշ առումով սեռ է քննվի և նրա սլատմության մեջ:

3) Նորմատիվ-նկարագրական լեզվաբանություն.— Ինչպես նախորդ շրջանում, նորմատիվ-նկարագրական լեզվաբանության ուսարկան են կազմում առանձին լեզուների ուսումնասիրության առ նորմավորման հարցերը: Այդ հարցերը շարունակում են լուծում

ստանալ քերականությունների, բառարանների, ուղղագրական աշխատանքների, գրական լեզուների մշակման տեսությունների միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ XIX դարում ստատիկ վերլուծութեան հարցերը ավելի քիչ ուշագրություն են գրավում, քան պետք է: Շարունակում են օգտվել հին քերականական սիստեմներից, նկարագրության ու նորմավորման հին սկզբունքներից: Ըրոշ գեպքերում անհատող փորձեր են կատարվում պատմա-համեմատական լեզվաբանության ձեռքբերումները կիրառելու ստատիկ ուսումնասիրության մեջ, շփոթվում են սլատական և ստատիկ ուսումնասիրության բնագավառները: Դեռ ավելին. պատմական և համեմատական քերականությունները շարունակում են կառուցվել հին սիստեմով, նյութի հին բաշխմամբ և հին անուններով: Ճիշտ է, արդեն երևան են գալիս ֆիլոլոգիական և արտմարտնական քերականությունների սկզբունքների քննադատության փորձեր, բայց դրանք առայժմ արմատական փոփոխությունների չեն հասցնում: Նշելի է միայն, որ նորմատիվ-նկարագրական լեզվաբանությունը դեռևս մեխանիկորեն է միավորվում պատմա-համեմատական լեզվաբանության հետ, որի հետ նա մի գիտական բնագավառ է կազմում:

4) Ընդհանուր լեզվաբանություն և լեզվափիլիսոփայություն.—Սրան են վերաբերում լեզվի բնույթի ու ծագման, լեզվի զարգացման, աշխարհի լեզուների դասակարգման ընդհանուր հարցերը: Այս հարցերը լուծում են ստանում ընդհանուր լեզվաբանական և լեզվափիլիսոփայական դանադան աշխատություններում: Եթե նախկինում լեզվափիլիսոփայությունը փիլիսոփայության հարցերի մի մասն էր, ասլա այժմ այն ուսանձնանում է՝ կազմելով լեզվաբանության բնագավառներից մեկը: Լեզվափիլիսոփայության և ընդհանուր լեզվաբանության վրա խիստ ազդեցություն են գործում մասնակի պատմա-համեմատական լեզվաբանությունների (հատկապես հնդեւրոպարանության) գաղափարները: Ընդհանուր լեզվաբանությունն ու լեզվափիլիսոփայությունը հաղթահարում են նախորդ շրջանի մեխանիցիզմը, բայց չեն կարողանում ազատագրվել իդեալիզմից<sup>1</sup>:

Այս շրջանում գոյություն ունեն հետևյալ դիսցիպլինները.

1) Ընդհանուր լեզվաբանություն և լեզվափիլիսոփայություն.

<sup>1</sup> Ավելորդ չէ հիշել, որ Լ. Բլումֆիլդը (Language, 1933) XIX դ. համար տարբերում է պատմա-համեմատական և փիլիսոփայական-նկարագրական ուղղություններ:

զբաղվում են լեզվաբանության մեթոդալոգիայի և լեզվաբանության այն բոլոր ընդհանուր հարցերով, որոնք դուրս են մյուս լեզվաբանական դիսցիպլինաների բուն տնօրինությունից:

2) Համեմատական քերականություն. զբաղվում է ցեղակից լեզուների համեմատության հարցերով: «քերականություն» բառը այստեղ շարունակում է սահմանել նախկին լայն առումը՝ նշանակելով ոչ միայն քերականական կառուցվածքի, այլև հնչյունական առանձնահատկությունների նկարագիրը: Համեմատական քերականությունը փորձում է վերականգնել լեզուների նախագրային շրջանի դարգացման պատկերը ցեղակից լեզուների համեմատության հիման վրա: Համեմատական քերականություններ են գրվում և՛ լեզվաբնաբանների, և՛ լեզվաճյուղների, և՛ առանձին լեզուների համար: Ամենից ավելի վճռական դերը պատկանում հնդեւրոպական լեզուների համեմատական քերականությանը:

3) Պատմական քերականություն. զբաղվում է տվյալ լեզվի քերականական կառուցվածքի դարգացման ուսումնասիրությունը՝ հենվելով զբաղոր հուշարձանների վրա: Այստեղ ևս «քերականություն» բառը լայն առում ունի: Երբեմն «պատմական» բառը գործածվում է և «համեմատական» իմաստով՝ նշանակելով ցեղակից լեզուների համեմատական ուսումնասիրությունը: Պատմական քերականությունը երբեմն կոչվում է և լեզվի պատմություն: Սակայն ումանք այս բառին լայն իմաստ են հատկացնում ներառելով պատմական քերականությունը և գրական լեզվի դարգացման արտաքին փաստերը (այլև բառապաշարի պատմությունը):

4) Ստատիկ քերականություն. զբաղվում է լեզվի տվյալ (զրլ-սալոբրապես ժամանակակից) էտապի կառուցվածքի ուսումնասիրությունը: Ըստ նպատակների լինում է գիտական կամ ակադեմիական և դպրոցական, ըստ բնույթի՝ նկարագրական և նորմատիվ: Գիտական քերականությունը սովորաբար լինում է նկարագրական, թեև կարող է նպատակ ունենալ նպաստելու գրական լեզվի նորմավորմանը: Դպրոցական քերականությունը ընդհանրապես նորմատիվ է լինում:

5) Ստուգաբանություն. զբաղվում է այս կամ այն լեզվի բառերի ծագման կամ ցեղակից լեզուների բառային առնչությունների հարցով: Ցեղակից լեզուների բառային հարակցությունների հետազոտությունը կատարվում է և «համեմատական բառարան» անվան տակ:

6) Բարբառագիտութիւն. զբարզվում է այս կամ այն լեզվի բարբառների ուսումնասիրութեամբ. այս ենթաշրջանում դիտական բարբառագիտութիւնը իր առաջին քայլերն է անում<sup>1</sup>:

Ոճարանութիւն հարցերն այս շրջանում համեմատաբար քիչ ուշադրութիւն են գրավում: Ոճարանութիւնը շարունակում է հեն:վել նախկին ճարտասանական տեսութիւններին վրա:

Լեզվաբանութեան բաժիններից առանձնակի դոյութիւնն ունեն հնչյունաբանութիւնը, ձևաբանութիւնը, շարահարկութիւնը. վերջինս սլաւոնա-համեմատական ուսումնասիրութիւնների բնագավառում դեռևս առանձին ուշադրութիւն չի գրավում: Իմաստաբանութիւնը և բառագիտութիւնը քիչ ինքնուրույնութիւն ունեն իբրև այդպիսին: Իմաստաբանութիւնը դեռևս անկախ բաժին չէ, այլ կապված է ստուգաբանութեան և բառարանագրութեան հետ: Բառագիտութիւնը ուշադրութիւն է գրավում ոչ այնքան որպէս անկախ բաժին, որքան բառարանագրութեան, ստուգաբանութեան, քերականութեան (բառակազմութեան) հետ կապված:

Ընդհանուր դասակարգողական լեզվաբանութիւնը XIX դ. սկզբում. Ադելունգ և Ֆատեր. — XIX դ. սկզբում պատմա-համեմատական լեզվաբանութեան ձևավորման համար առնիշտակն նախադրյալներ են ստեղծվում նախ՝ Ի. Խ. Ադելունգի և Ի. Ս. Ֆատերի ընդհանուր դասակարգողական աշխատութեամբ, որի մեջ ամփոփվում են լեզուների փոխհարաբերութեան ուղղութեամբ նախորդ լեզվաբանութեան ձեռք բերած արդյունքները, երկրորդ սանակրիտի ուսումնասիրութեան բնագավառում Ֆր. Շլեգելի և մյուսների կատարած աշխատանքով և երրորդ՝ Ֆր. և Ա. Շլեգելների՝ լեզուների տիպաբանական դասակարգումով: Ի. Խ. Ադելունգի և Ի. Ս. Ֆատերի աշխատութիւնը կազմում է 4 հատոր և Ի. Խ. Ադելունգի՝ աշխատութեան ձեռնարկով և գլխավոր հեղինակի մահից հետո մշակվել ու հրատարակվել է Ի. Ս. Ֆատերի (1771—1826) կողմից: Ադելունգը կարողացել է հրատարակել միայն առաջին հատորը և մշակել երկրորդի մի մասը: Աշխատութիւնը կրում է «Միհրդատ կամ ընդհանուր լեզվաբանութիւն, որին որպէս լեզվական օրինակ կցված է «Հայր մերը» համարյա 500 լեզվով ու բարբառով» վերնագիրը<sup>2</sup>:

<sup>1</sup> Հմտ., օրինակ, Ի. Ա. Շմյուլերի (1785—1852) բարբառագիտական աշխատութիւնները Գերմանիայում:

<sup>2</sup> Mithridates oder allgemeine Sprachkunde mit dem „Vater unser“ als Sprachprobe in beinahe fünfhundert Sprachen und Mundarten, I—IV, 1806—1817. «Միհրդատ» անունն ընդօրինակված է արդեն հիշատակված Կոնրադ Գեաների գրքից:

Աշխատութիւնը բիբլիոգրաֆիական տեղեկութիւններ է պարունակում լեզուների մասին. բերվում են բառարանների ու քերականութիւնների անունները և ընդհանուր դիտողութիւններ են արվում: Հազվադեպ միայն դիտողութիւններն ուղեկցվում են բառերի ցուցադրութեամբ և համեմատաբար ընդարձակ տեղեկութիւններով: «Հայր մերի» օրինակները թարգմանված են և երբեմն քերականորեն բացատրված: Լեզվաբանութեան զարգացման տվյալ էտապում նման աշխատանքը շէր կարող զերծ չլինել թերութիւններից ու բացահայտ սխալներից: Այդպիսի սխալներ կան և՛ բերված փաստերի, և՛ դրանց մեկնարանութեան, և՛ լեզուների դասակարգման մեջ: Լեզուների դասակարգումը կա: տրված է նրանց աշխարհագրական դիրքի համապատասխան՝ ըստ աշխարհամասերի, բայց յուրաքանչյուր աշխարհամասի ներսում լեզուները խմբավորված են ըստ ծագումնաբանական ընդհանրութիւնների: Այս հարցում հեղինակները լիորձել են ի մի բերել այն բոլորը, ինչ արվել է նախորդ լեզվաբանների կողմից, թեև այդ բանը ոչ միշտ է նրանց հաջողվել: Առաջին հատորը նվիրված է Ասիային, երկրորդը՝ Եվրոպային, երրորդը՝ Աֆրիկային ու Ամերիկային, չորրորդը սարունակում է հավելվածային նյութեր (այստեղ է տպագրված Հումբոլդտի հոդվածը բասկերենի մասին): Ասիայի լեզուները ըստ բառերի հնչյունական-ձևաբանական կառուցվածքի դասակարգված են միավանկների և բազմավանկների: Եվրոպայի լեզուները դասակարգված են ըստ ծագումնաբանական-դեղակցական ընդհանրութեան, որքանով որ այդ պարզված էր այն ժամանակվա գիտութեան կողմից: Դրանք խմբավորված են հետևյալ կերպ. 1) բասկերեն, 2) կելտական լեզվաբուն, 3) կելտա-գերմանական կամ կիմրական լեզվաբուն (վալիսերեն և ներքին բրետոներեն), 4) գերմանական լեզվաբուն (գերմաներեն, «սկանդինավյան», անգլերեն), 5) թրակա-պելազգա-հունական և լատինական լեզվաբուն՝ ա) թրակա-իլիրական (այստեղ դրվում են Փոքր Ասիայի և Եվրոպայի՝ միայն անունով հայտնի բազմաթիվ լեզուներ), բ) պելապական, գ) հելլենա-հունական և դ) լատինական՝ ռոմանական լեզուներով հանդերձ, 6) սլավոնական լեզվաբուն, 7) լիտվական կամ գերմանա-սլավոնական լեզվաբուն, 8) վալախերեն կամ հոռոմա-սլավոներեն, 9) շուդյան լեզվաբուն և 10) հունգարերեն ու ալբաներեն:

Սանկրիտի ուսումնասիրութիւնը. լեզուների ձևաբանական դասակարգումը. Ֆ. և Ա. Շլեգելներ.— Եվրոպայում սանսկրիտի նկատմամբ առաջացած հետաքրքրութիւնը մեծ շափով պայմա-



նավորված էր այնպիսի անձերի գործունեությունը, ինչպիսիք Գ. Տ. Էռլբրուկը, Չ. Քիլկինսը և առանձնապես Ֆ. Շլեգելն են:

Յրիգրիխ Շլեգելը՝ գերմանական ուսմանտիզմի ակնաւոր տեսաբանը, 1808 թ. լույս է ընծայում իր հայտնի աշխատությունը «Հնդկների լեզվի և իմաստության մասին»<sup>1</sup>: Այստեղ նա խոսեւոլ սանսկրիտի հատկությունները մասին՝ միաժամանակ լեզվաբանական մեծ հետաքրքրություն ներկայացնող հարցեր է առաջ քաշում: Շլեգելը մասնաւիշ է սնում լեզուների ցեղակցության հարցում քերականական համապատասխանությունների կարևորությունը: Բառային և քերականական համեմատություններ կատարելով սանսկրիտի և հունարենի, լատիներենի, գերմաներենի ու պարսկերենի միջև՝ նա հանգում է դրանց ցեղակից լինելու գաղափարին և նույնիսկ վերջիններս բխեցնում սանսկրիտից: Շլեգելը սանսկրիտին ավելի մեծ հնություն է վերագրում, քան այդ կա իրականում, մի հանգամանք, որ դեր է խաղում լեզվի ծագման հետալա տեսությունների ձևավորման հարցում: Շլեգելի կարևոր ծառայությունները մեկն էլ այն է, որ նա ուշադրություն է դարձնում լեզուների ներքին կառուցվածքի տարբերությունների վրա և առաջին անգամ փորձ կատարում տալու ձևաբանական-տիպաբանական դասակարգում. նա տարբերում է լեզուների երկու հիմնական տիպ՝ թեքական, որոնց մեջ քերականական իմաստները (Nebenbestimmungen der Bedeutung) արտահայտվում են արմատական ձայնավորների փոփոխությամբ, ներքին թեքմամբ, և ոչ-թեքական, որոնց մեջ դրանք արտահայտվում են զանազան կցվող մասնիկների ու բառերի օգնությամբ, ընդ որում այդ կցվող մասնիկներն էլ, ըստ Շլեգելի, ծագել են նախկին անկախ մասնիկներից՝ սպասարկուրաւերից: Թեքական լեզուները համարվում են «օրգանական» և կատարյալ լեզուներ՝ հակադրվելով ոչ-թեքականներին որպես «անօրգանական» և անկատար լեզուների. սանսկրիտը համարվում է թեքականության իդեալ, որին մոտենում են հունարենը և լատիներենը, ավելի քիչ՝ գերմաներենն ու պարսկերենը: Շլեգելը, Յր. Բեկոնից անկախ, ուշադրություն է դարձնում հին և նոր լեզուների կառուցվածքային տարբերություններին: Թեքականության կատարելության գաղափարից մի քայլ է մնում գեպի լեզվի զարգացման պրոցեսը որպես քայքայման պրոցես՝ դիտելու հակապատմական ըմբռնումը) մի ըմբռնում, որ լայն տարածում է գտնում պատմահասկեմատական լեզվաբանության վաղ ներկայացուցիչների մոտ:

<sup>1</sup> Fr. Schlegel, "Über die Sprache und Weisheit der Indier, 1808.

Սակայն սրա հետ միասին Շլեգելը հավասարութեան նշան է դնում լեզվի դիտական ու պատմական քննութեան միջև՝ զրանով իսկ սաղմնային ձևով հիմք տալով լեզվի պատմական քննութեանը միակ դիտական քննութեան համարելու տեսակետի համար, որ սղզարարւում է պատմա-համեմատական լեզվաբանութեան XIX դ. վերջին քառորդի ներկայացուցիչների կողմից: Նշելի է, որ Շլեգելի մոտ առկա է նաև լեզվի քննութեան մեջ նատուրալիստական եղանակների ներմուծման տարր. համեմատական քերականութեանը, նրա կարծիքով, լեզուների ծագումաբանական հարցերի համար նույնպիսի կարևոր դեր պիտի խաղա, ինչ համեմատական անալիտիկական բնագիտութեան համար<sup>1</sup>: Շլեգելը առաջ է քաշում նաև ղլտական ստուգաբանութեան հարցը՝ նշելով այդ բնագավառում տիրող անմխիթար վիճակը:

Տր. Շլեգելի ավագ եղբայր Ավգուստ Շլեգելը (1768—1805) շուրջ կիրպով զբաղվում է սասակրիտի ուսումնասիրութեամբ և վարում այդ առարկայի պրոֆեսորի պաշտոնը: Ավգուստ Շլեգելը էլ սովելի է առաջ տանում եղբոր գաղափարը լեզուների ձևաբանական տիպերի մասին. իր «Իտաղոլոյններ պրովանսալական լեզվի և գրականութեան մասին» (1818) աշխատութեան մեջ նա տարբերում է լեզուների 3 տիպ.

1) քերականական կառուցվածք շունեցող լեզուներ, որոնց մեջ լատերն անփոփոխ են, և նրանց հարաբերութեաններն արտահայտվում են շարադասութեամբ,

2) մասնիկավոր (սֆիքսավոր) լեզուներ, որոնց մեջ բառերի հարաբերութեաններն արտահայտվում են մասնիկներով,

3) թեքական լեզուներ, որոնց մեջ բառերը բացի մասնիկներ ստանալուց ենթարկվում են և ներքին թեքման: Թեքական լեզուները Շլեգելը բաժանում է ըստ շարահյուսական առանձնահատկութեանների համարական և վերլուծական (սինթետիկ և անալիտիկ) տեսակների. առաջիններում բառերի հարաբերութեաններն արտահայտվում են հենց բառերի մեջ, իրկորդներում՝ բառերից դուրս (օժանդակ բառերով և շարադասութեամբ): Քերականական ձևերով հարուստ համադրական տիպի տարբերումը ձևերով աղքատ վերլուծական հետագա տիպից՝ հիմք է տալիս XIX դարում երկար ժամանակ իշխող այն գաղափարի համար, թե վերլուծական տիպի լեզուների առաջացումը քայքայման և հետադիմութեան պրոցես է:

<sup>1</sup> Հմտ. H. Arens, հիշ. աշխ., էջ 145:

1811 թ. Ռուսական Ակադեմիային ներկայացվում է մի աշխատություն «Սանսկրիտերենի և ռուսերենի նմանության մասին» («О сходстве санскритского языка с русским»), որտեղ հեղինակը (Ֆ. Աղելունգ) քննում է սանսկրիտական 178 բառ՝ համեմատելով ռուսերենի, երբեմն էլ այլ լեզուների հետ: Համեմատվում են և էական բայի ներկա ժամանակի ձևերը<sup>1</sup>:

XIX դ. I կեսի ստատիկ-վերլուծական լեզվաբանությունը, տրամաբանական ֆեռականություն.— XIX դարի առաջին կեսում ստատիկ-վերլուծական ուսմունքների մեջ շարունակում է տիրապետող լինել լոգիցիզմը, որ ազդեցություն է թողնում պատմահամեմատական լեզվաբանության որոշ ներկայացուցիչների, հատկապես Բոպպի հայացքների ձևավորման վրա: Քերականագիտության բնագավառում այն արտահայտվում է նրանով, որ քերականական վերլուծության հիմքում դրվում են տրամաբանական վերլուծության սկզբունքները և քերականական կատեգորիաները դիտվում որպես տրամաբանական կատեգորիաների ուղղագիծ արտահայտությունները: Այս շրջանում իշխող տրամաբանական քերականությունը ներկայացնում է նախկին սացիոնալիստական-փիլիսոփայական քերականության տարատեսակը: Լոգիցիզմի ձևավորման համար կարևոր դեր է խաղում XVIII դ. և XIX դ. առաջին կեսի իդեալիստական փիլիսոփայությունը, հատկապես Կանտի և Հեգելի փիլիսոփայական-տրամաբանական սիստեմները<sup>2</sup>:

Լոգիցիզմը արտահայտություն է գտնում Գերմանիայում՝ Շ. Հերմանի<sup>3</sup>, Ա. Ֆ. Բեռնհարդիի, Կ. Բեկկերի, Ի. Խ. Ա. Հայզեի<sup>4</sup>, Ս. Հ. Ա. Հեոլինգի, Ռուսաստանում՝ Ն. Ի. Գրեչի<sup>5</sup>, Վ. Գ. Բելինսկու<sup>6</sup>,

<sup>1</sup> Հմմտ. А. П. Баранников, Элементы сравнительно-исторического метода в индологической лингвистической традиции. ВЯ, 1952, № 2, էջ 46—47:

<sup>2</sup> Այսպես, գերմանիայում Ա. Ֆ. Բեռնհարդին և Հերմանը հենվում են Կանտի կատեգորիաների ուսմունքի, Կ. Բեկկերը՝ գերադասապես Հեգելի տրամաբանության վրա:

<sup>3</sup> H. Hermann, De emendanda ratione grammaticae graecae 1801.

<sup>4</sup> J. Ch. A. Heyse, Theoretisch-praktische deutsche Grammatik. 1814. IV բարեփոխված և ընդարձակված հրատարակությունը՝ 1827 թ.:

Н. И. Греч, Практическая русская грамматика, СПб, 1827  
Пространная русская грамматика, I, СПб, 1827.

<sup>6</sup> В. Г. Белинский, Основания русской грамматики. I, Москва, 1837

Ի. Ի. Դավիդովի<sup>1</sup>, Ֆրանսիայում՝ Ս. դը-Սասիի<sup>2</sup> և Դանիայում՝ Լանգեի<sup>3</sup>, Հայաստանում՝ Խ. Աբովյանի<sup>4</sup> և ուրիշների աշխատություններում:

Տարբերում էին տրամաբանական քերականությունների ևրկու տեսակ՝ ընդհանուր և առանձին. ընդհանուր քերականությունների հեղինակները, շարունակելով նախկին ընդհանրական (ունիվերսալ) քերականությունների տրադիցիան, փորձում էին ստեղծել բոլոր լեզուների քերականական վերլուծություն համար կիրառելի սկզբունքներ. առանձին քերականությունների հեղինակները դբաղվում էին այս կամ այն լեզվի քերականության հարցերով՝ կողմնորոշվելով դեպի տրամաբանությունը և մեծ շահով հիմք ընդունելով ընդհանուր քերականությունների սկզբունքները:

Լոգիցիզմը լիովին միասնական ու միատարր հոսանք չէր. այն տարբերվում էր հեղինակից հեղինակ՝ ըստ այն բանի, թե տրամաբանական ի՛նչ սիստեմ է հիմք ընդունվում, ի՛նչ վերաբերմունք կա դեպի սլատմա-համեմատական լեզվաբանությունը, ի՛նչ ձևով են դրվում այս կամ այն լեզվի կոնկրետ ուսումնասիրության հարցերը: Այսպես, որոշ հեղինակներ խոսքի մասերի ուսանձնացման խմբավորման և սահմանման մեջ հիմք են ընդունում բառերի արտահայտած հասկացությունները, մյուսները՝ բառերի ֆունկցիան նախադասության, resp. դատողության մեջ. ոմանց համար վերլուծման մեկնակետ է հասկացությունը, մյուսների համար՝ դատողությունը: Այն հեղինակների կողքին, որոնք նախորդել են համեմատական քերականության ստեղծմանը և նույնիսկ ազդել այն ստեղծողների հայացքների ձևավորման վրա (հմմտ. Բեռնհարդին), կան ուսումնասիրողներ, որոնք կրում են սլատմա-համեմատական լեզվաբանության ակնհայտ ազդեցությունը, փորձում են բովանդակել սլատմա-համեմատական հետազոտության տարրեր, երևույթների բացատրության մեջ տալ որոշ սլատմական հիմքեր. ոմանց մոտ էլ ստատիկ վերլուծական քերականությունը շարունակում է մնալ որպես մի բնագավառ, որ ոչ մի առնչություն չունի սլատմական և

<sup>1</sup> И. И. Давыдов, Грамматика русского языка, СПб, 1849, Опыт общесравнительной грамматики русского языка, СПб, 1852.

<sup>2</sup> S. de-Sacy, Principes de grammaire générale mis à la portée des enfants, et propres à servir d'introduction à l'étude des toutes les langues, Paris, 1823.

<sup>3</sup> L. a n g e, Almindelig Grammatik, 1840.

<sup>4</sup> Խ. Աբովյան, Նախաշավիղ, Ծրկերի լիակատար ժողովածու, V, Երևան, 1948:

համեմատական քերականությունների հետ: Տրամաբանական որոշ քերականություններ տառապում են վերացականությամբ՝ սխեմատիզմով, այլ քերականություններ, ընդհակառակն, աչքի են ընկնում նյութի խոր վերլուծությամբ: Վերջիններես հեղինակներին հատուկ է տվյալ լեզվի առանձնահատկությունները որքան կարելի է խոր կիրպով բացատրելու ձգտումը: Այսպես, օրինակ, Բելինսկին կլնում էր այն սկզբունքից, որ «ազգային լեզուն ունի իր հանձարը, իր ոգին, իր օրենքները և միայն իրեն հատուկ բնույթն ու դեմքը»<sup>1</sup>, որ քերականությունը լեզվին կանոններ չի տալիս, այլ կանոնները հանում է լեզվից: Այս կապակցությամբ Բելինսկին քննադատում է Գրեչի արհեստականությունները, սխեմատիզմ լեզվի փաստերի մանրակրկիտ ուսումնասիրություն: Սա մի քայլ էր նորմատիվ քերականությունից դեպի նկարագրական քերականության ստեղծումը և հրաժարումը տրամաբանական վերացական սխեմաներից: Հատկանշական է, որ տրամաբանական քերականությունների մյուս հեղինակների նման տարբերելով ընդհանուր և առանձնակի քերականություններ՝ Բելինսկին ընդհանուր քերականության սկզբունքները չի դիտում որպես ապրիորի տրամաբանական սկզբունքներ, այլ փորձում է դրանք հիմնել առանձին քերականությունների վրա: Լեզուն ու նրա պատմությունը Բելինսկին սերտորեն կապում է տվյալ լեզվով խոսող ժողովրդի նրա պատմության հետ, լեզուն համարում ժողովրդի սահղծագործությունը: Սրա հետ միասին լեզուն իր ծագմամբ՝ զտագուցմամբ Բելինսկին կապում է մտածողության հետ: Կա իր լեզվական ուսումնասիրություններում առաջ է քաշում գրական լեզվի, գրականության լեզվի և համաժողովրդական լեզվի փոխհարաբերության հարցը: Նրա անվան հետ է կապված և ռուսաց գրական լեզվի հիմնադրի հարցի լուծումը, ռուսական գրական լեզվի ստեղծման մեջ Պուշկինի բացառիկ դերի պարզաբանումը: Բելինսկին պայքար է մղել փոխառությունների հարցում եղած ծայրահեղ մաքրասիրության տենդենցների դեմ, մեծ ուշադրություն հատկացրել գիտական տերմինաբանության և ոճաբանության հարցերին:

Քանի որ լուրջիդմը տիպական արտահայտություն է գտել Բեռնհարդրի և Բեկկերի մոտ, որոնք նշանակալից ազդեցություն են թողել լեզվաբանական-քերականական ուսմունքների հետագա

<sup>1</sup> В. Г. Белинский, Грамматические разыскания В. А. Васильева (рецензия). „Отеч. записки“, XI, 1, 1845, *оригинал*:

բախտի վրա, ուստի և անհրաժեշտ ենք համարում նրանց մասին առանձին խոսել:

Ա. Ֆ. Բեռնհարդին և նրա ընդհանուր-լեզվաբանական ու ֆե-րականագիտական ուսմունքը.—XIX դ. սկզբներին, նախքան պատ-մա-համեմատական լեզվաբանության ձևավորումը, նախորդ լեզվա-բանական աշխատանքի յուրատեսակ ամփոփման և դրանց հիման վրա տեսական ընդհանուր հզրուկացություններ անելու փորձ է կատարում Ա. Ֆ. Բեռնհարդին (1769—1820): Նա էլնում է լեզվի ընդհանուր ուսմունքը ղեղուկտիվ ճանապարհով արտածելու հնարավորությունից, ընդ որում փաստորեն հիմք է ընդունում հունարե-նը, լատիներենը և գերմաներենը: Նրա լեզվաբանական աշխատու-թյունները («Լեզվի ուսմունքը», «Լեզվաբանության սկզբնական հի-մունքները»)<sup>1</sup> զգալի ազդեցություն են թողել ոչ միայն ստատիկ վերլուծական ուսմունքների զարգացման, այլև պատմա-համեմա-տական լեզվաբանության հիմնադիրների՝ Ֆ. Բոպպի և Վ. Հում-բոլդտի հայացքների ձևավորման վրա<sup>2</sup>: Բեռնհարդու գիրքը Ֆրան-սիայում և Լնգլիսյում տարածված ընդհանրական քերականությու-նը Գերմանիայում արմատավորելու առաջին փորձն էր: Այստեղ Բեռնհարդին լեզվի գիտությունը (ընդհանուր լեզվաբանությունը) նույնացնում է փիլիսոփայական քերականության հետ:

Բեռնհարդին սահմանում է լեզվաբանության 6 բաժին՝ հնչյու-նաբանություն, ստուգաբանություն, բառակազմություն, ձևաբա-նություն, բառազուգորդում (բառերի զուգորդման և խնյորառության ուսմունքը) և շարահյուսություն: Այս բաժանումը լայն տարածում է գտնում XIX դ. երևան եկող լեզվաբանական աշխատություննե-րում՝ ընդունելով գրեթե արագիցիոն բնույթ:

Բեռնհարդին արդեն տարբերում է լեզվի ուսումնասիրության 2 հայեցակետ՝ պատմական և փիլիսոփայական, որոնցից գլխավորը, սակայն, համարում է փիլիսոփայականը. պատմական հայեցակե-տին են վերաբերում լեզվի ծագման և զարգացման հարցերը: Բեռնհարդին լեզվի ծագումը բացատրում է բանականության պա-հանջներով, այսինքն՝ չի կարողանում հաղթահարել լեզվի ծագման ինդիվիդուալիստական հայեցակետը: Նա չի կարողանում հասնել նաև լեզվի իսկական պատմական ըմբռնմանը՝ լեզվի զարգացումը

<sup>1</sup> A. F. Bernhardi, Sprachlehre, I Reine Sprachlehre, II Ange- wandte Sprachlehre, 1801—1803. Anfangsgründe der Sprachwissenschaft, 1805.

<sup>2</sup> Վ. А. Звегинцев, Очерк истории языкознания до XIX века. „Хрестоматия по истории языкознания XIX—XX веков“, Москва, 1956, էջ 24:

պատկերացնելով որպէս բնական օրգանիզմի կենսական պրոցես: Լեզուն, ըստ Բեռնհարդու, ունի ծաղկման և հետադիմութեան շրջաններ. հասնելով իր ծաղկմանը՝ այն սկսում է հետադիմել:

Լեզվի քննութեան փրիխտփայական հայեցակետը Բեռնհարդու համար նույնն է փրիխտփայական քերականութեան հետ. վերջինս, ըստ նրա, գիտութեան է լեզվի բացարձակ ձևերի մասին, որ քննում է այն որպէս ավարտուն պրոդուկտ: Լեզվի փրիխտփայական քննութեան հարցում Բեռնհարդու վրա շարունակում է իշխել անտիկ աշխարհից եկող պտոմիստական ըմբռնումը. նա քննութեանը կատարում է պարզ տարրերից՝ «տառերից» դեպի ավելի բարդ միավորներ՝ վանկը, բառը, նախադասութեանը:

Բեռնհարդին բառերի ձևաբանական վերլուծումը կատարելիս սահմանում է բառահիմքեր և բառարմատներ. բառահիմքերը ունեն մաքուր իմաստ, այսինքն՝ հարաբերութեաններ չեն արտահայտում. բառարմատը բառահիմքի աչն տեսակն է, որ կապմիտ է պարզ վանկից, այսինքն՝ պարզ բաղաձայնից և պարզ ձայնավորից: Բառարմատներն ու բառահիմքերը, Բեռնհարդու կարծիքով, նախապէս ըստ իմաստի երկու տեսակ են եղել՝ նյութական և վերաբերական (հարաբերութեաններ նշանակող). դրանց միաձուլումը տվել է բառերի այժմյան տիպերը:

Խոսքի մասերը Բեռնհարդին տարբերում է ֆունկցիոնալ-տրամաբանական հիմունքով, այսինքն՝ նկատի ունենալով բառերի հարաբերութեանը տրամաբանական ենթակայի (սուբյեկտի), ստորոգյալի (պրեդիկատի) և հանգույցի հետ: Տրամաբանական բաժանման հետ զուգորդելով քերականականը՝ Բեռնհարդին առանձնացնում է և մասնիկներ. այս դեպքում նա նկատի է առնում, թե տվյալ մասնիկը վերոհիշյալ կատեգորիաներից որի՞ հետ է կապվում իր ֆունկցիայով. այսպէս, ըստ նրա՝ հոգը և նախդիրները որպէս մասնիկներ կապվում են ենթակայի հետ:

Շարահայտական ուսմունքների զարգացման մեջ կարևոր դեր է խաղացել Բեռնհարդու արտահայտած այն միտքը, թե պարզ նախադասութեանը այնպէս է հարաբերում բարդ նախադասութեանը (պարբերութիւն), ինչպէս բառը՝ պարզ նախադասութեանը, այսինքն՝ կարելի է առանձնացնել պարզ նախադասութեան նույնպիսի տեսակներ, ինչպիսի բառատեսակներ որ կան: Բեռնհարդու առաջարկած սկզբունքով Հեռլինգը տարբերում է երկրորդական նախադասութեանների 3 տեսակ՝ գոյական, ածական և մակբայ<sup>1</sup>:

<sup>1</sup> S. H. A. Herling, Über die Topik der deutschen Sprache, 1821.

էլ ավելի ուշ, նախադասութեան անդամների ուսմունքի զարգացման հետ կապված, սկսում են տարբերել ենթակա, ստորոգելի, խնդիր, որոշիչ և պարագայական պարզ-երկրորդական նախադասություններ՝ այն բանի անալոգիայով, թե ի՛նչ անդամի ֆունկցիա են կատարում բառերը պարզ նախադասության մեջ՝:

4. Բեկկերի ֆերականագիտական ուսմունքը.— Կ. Բեկկերը այն հեղինակներից մեկն է, որ գտնվելով գերմանական դասական փիլիսոփայության, հատկապես Կանտի ու Հեգելի ուժեղ ազդեցության տակ, փորձում է այդ փիլիսոփայության մեջ տեղ գտած տրամաբանական վերլուծության սկզբունքները տեղափոխել քերականական վերլուծության բնագավառը: Բեկկերը մի կողմից՝ հանգում է լեզվի և մտածողության, քերականական և տրամաբանական կատեգորիաների դրեթե նույնացմանը, կարծելով, որ հասկացության ու դատողության տրամաբանական ձևը միաձուլված է քերականական ձևի հետ, մյուս կողմից՝ զարգացնում է ընդհանրական քերականության սկզբունքների վրա հիմնվող այն միտքը, թե բոլոր լեզուներին հատուկ է քերականական կառուցվածքի միևնույն նախասկզբնական իդեայի զարգացումը: Քերականական կատեգորիաներն ու ձևերը դիտվում են որպես «ինքնակառուցված» մտածողության կատեգորիաներ ու ձևեր, որոնք համաժամանակյա բնույթ ունեն: Քերականական վերլուծման հիմքում Բեկկերը դնում է տրամաբանական դատողությունների և հասկացությունների վերլուծման սկզբունքները<sup>2</sup>:

Բեկկերի լեզվաբանական հետազոտության մեկնակետը լեզվական օրգանիզմի հասկացությունն է, ընդ որում «օրգանիզմ» բառը Բեկկերը գործածում է լայն իմաստով. նրա կարծիքով՝ «ամեն մի օրգանական բան համընդհանուր կյանքի մարմնավորված առանձնահատկությունն է, կարծես թե բնության մարմնավորված միաբլ»<sup>3</sup>:

Այս ըմբռնմամբ նախ՝ բոլոր օրգանիզմները և այդ օրգանիզմների անդամները լինելով մի ընդհանուր իդեայի դրսևորումները, կազմության և դարգացման ընդհանրություն ունեն, երկրորդ օրգանիզմի բոլոր առանձնահատկությունները հենց սկզբից տրված են նրա մարմնավորման սկզբնական իդեայի մեջ, և օրգանիզմի մարմնավորումը ներքին զարգացում է, ոչ թե արտաքին

Հմտ. В. В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения, „Вопросы грамматического строя“, Москва, 1955, էջ 390—391:

Նույն տեղը, էջ 390:

<sup>3</sup> K. Becker. Organismus der Sprache, 2-te Ausg., § 4.



բան: Այսպիսով, Բեկկերի օրգանիզմի տեսութունը տեւելու-  
գիական իդեալիզմ է, ըստ որի ամեն մի օրգանական բուն նախա-  
պես դրված նպատակի կամ գաղափարի իրականացումն է: Այս  
դրույթը կիրառելով լեզվի նկատմամբ՝ Բեկկերը խոսելու ընդու-  
նակութունը կապում է խոսքի օրգանների հետ, որոնք գործողու-  
թյան գրգիռ են ստանում հոգեկան գործունեությամբ:

Եթե նատուրալիզմը պատմա-համեմատական լեզվաբանու-  
թյան ներկայացուցիչների մոտ հիմք է տալիս լեզվական պրոցեսը  
որպես բնական աճ քննելու համար, ապա Բեկկերի մոտ այն  
հանգեցնում է լեզուն տրամաբանական սխեմատիզմի ենթարկե-  
լուն. լեզվական օրգանիզմի առաջացումը Բեկկերի համար մի  
պրոցես է, որի ընթացքում նախասկզբնական միասնութունը են-  
թարկվում է հետևողական բաժանումների<sup>1</sup>: Բնության գլխավոր  
հակասութուն համարելով գործունեության ու գոյի կամ, որ նրա  
համար նույնն է, ոգու և մատերիայի հակասութունը՝ Բեկկերը  
սրա արտացոլումը տեսնում է առաջին հերթին իմաստների և  
հնչյունների տարբերության մեջ. վերջիններս էլ իրենց հերթին  
ենթարկվում են երկատման, ստացված անդամներն էլ՝ նոր եր-  
կատման և այլն. այսպես հնչյունները բաժանվում են ձայնավոր-  
ների և բաղաձայնների և այլն. իմաստները բաժանվում են բա-  
յերի և գոյականների (գործունեության և գոյի արտահայտությու-  
նը), գոյականները իրենց հերթին՝ արատրակտ և կոնկրետ անուն-  
ների և այլն: Այսպիսով, մասերի ամբողջութունը ներկայացնող  
լեզվական սխեման, ըստ Բեկկերի, տոգորված է ոգու և մատե-  
րիայի, գործողության և գոյի նախնական հակասությամբ:

Լեզվի և մտածողության կապը Բեկկերը համարում է օրգանա-  
կան անհրաժեշտութուն: Այստեղից մի քայլ է մնում մինչև լեզվի  
ու մտածողության, մտքի (resp. դատողութուն) ու նախադասու-  
թյան, բառի ու հասկացության նույնացումը, և Բեկկերը կատար-  
ում է այդ քայլը: Ըստ նրա՝ «միտքը և լեզուն ներքնապես նույ-  
նական են». «միտքը միայն բառի մեջ է կազմվում ու կատարե-  
լագործվում, որովհետև ղգայական հայեցողության առարկաները  
միայն այն ժամանակ են դառնում հասկացություններ, երբ վե-  
րածվել են հոգեկան հայեցողության առարկաների և բառի մեջ  
հակադրվել են մտքին»<sup>2</sup>: Լեզուն, ըստ Բեկկերի, լոկ մտածողու-  
թյան մարմնավորումն է, և քանի որ մտքերի և հասկացություննե-

<sup>1</sup> Հմտ. H. Glinz. Geschichte und Kritik der Lehre von den Satzgliedern in den deutschen Grammatik, Bern, 1947, էջ 43:

<sup>2</sup> K. Becker. հիշ. աշխ., § 2:

րի հարաբերութիւնները արտահայտւում են քերականական հարաբերութիւնների մեջ, ուստի և քերականութիւնը հիմք ունի տրամաբանութիւնը: Սակայն բոլոր ժողովուրդների մոտ մտքերի

հասկացութիւնների հարաբերութիւնների տիպերը մեկ են, և բոլորի համար գոյութիւն ունի մեկ տրամաբանութիւն: Հետևաբար լեզուները տարբերվում են լոկ հնչյունապես, ներքնապես նույնն են, և պետք է գոյութիւն ունենա բոլոր լեզուների համար մեկ ընդհանուր քերականութիւն. այստեղից միաժամանակ բխում է, որ Բեկկերը, հանգելով մտածողութեան և լեզվի նույնացմանը, հնչյունների և իմաստների միջև լոկ մեխանիկական կապ է տեսնում: Նախորդ քերականութեանը Բեկկերը կշտամբում է այն բանում, որ նա ելնում է բառից ու սրա ձևերից, «որտեղ հնարավոր չէ տարբերել ձևը, նա չի տարբերում և իմաստը»: Սրան հակառակ՝ իր ուսմունքի առավելութիւնը նա տեսնում է այն բանում, որ ինքը հաղթահարում է ձևից ունեցած կախումը և ելնում նախադասութիւնից ու նրա իմաստից:

Չնայած իր տեսութեան իդեալիստական և ոչ-պատմական հիմունքներին՝ Բեկկերը լեզվի կառուցվածքային վերլուծութեան իր եղանակներով ազդեց քերականագիտութեան հետագա զարգացման վրա: Առանձնապես կարևոր դեր խաղաց նրա ուսմունքը նախադասութեան անդամների մասին: Ինչպես նշել ենք, Ժիրարից <sup>1</sup> Լատ նախադասութեան անդամների ուսմունքը աչքի ընկնող փոփոխութիւնների շէր ենթարկվել: Բոլորն ընդունում էին նախադասութեան երկու կամ երեք գլխավոր անդամ, որոնք ըստ նրանց կազմում են «մերկ» նախադասութիւնը. ոմանք սրանց ավելացնում էին նաև երկրորդական անդամներ՝ ավելի կամ պակաս տարբերակմամբ: Հայգիի դպրոցը Գերմանիայում ընդունում էր 4 երկրորդական անդամ՝ Objekt (ուղիղ խնդիր), Terminativ (անուղղակի խնդիր), Adjektiv (հմմտ. ohne Furcht «առանց վախի») և Adverb (պարագա-մակբայ). գերմանական մյուս քերականները նշում էին սովորաբար միայն առաջին երկուսը: Attribut (որոշիչ) բառը գործածվում էր որպես փոխսոսիայական տերմին կամ համարվում Prädikat-ի հոմանիշը: Adverbiale (պարագա) բառը և հասկացութիւնը դեռևս չկար. ընդհանրապես նախադասութեան անդամի գաղափարը խոսքի մասի գաղափարի համեմատութեամբ դիտվում էր որպես երկրորդական և ոչ թէ որպես նրան հավասար մեծութիւն<sup>2</sup>:

<sup>1</sup> K. Becker, հիշ. աշխ., էջ 105:

<sup>2</sup> Հմմտ. H. Glinz, հիշ. աշխ., էջ 41:

Նախադասութիւնն անդամների առանձնացման հիմքում Բեկ-կերը ղնում է շարահարմարական հարաբերությունների 3 տիպերը՝ ստորոգելիական կամ պրեդիկատիվ (prädikatives Satzverhältnis), որոշչային կամ ատրիբուտիվ (attributives Satzverhältnis) և խնդրային կամ օբյեկտիվ (objektives Satzverhältnis): Առաջին երկու հարաբերություններում գոյն է հարաբերվում գործողութայնը, երրորդում՝ գործողությունն և հարաբերվում գոյին. ստորոգելիական հարաբերությունն արտահայտում է երկու հասկացությունների միասնությունը մեկ մտքի մեջ, որոշչայինը՝ կոնկրետացնում է գոյականը, խնդրայինը՝ կոնկրետացնում է բայը: Բեկկերը նախադասութիւնն ուսմունքի մեջ արդի առումով մտնում է որոշչի (Attribut-ի) գաղափարը և արդեն միանգամայն որոշակի, այժմ ընդունված առում հատկացնում խնդրի (Objekt) գաղափարին. միաժամանակ նա առանձնացնում է խնդրի երկու տեսակ՝ լրացուցիչ խնդիր (ergänzendes Objekt) և որոշիչ խնդիր (bestimmendes Objekt), որ հիմք է տալիս խնդիրների ու պարագաների հետագա տարբերակման և «որոշիչ խնդիր» տարահայտութիւնն փոխարէն «պարագա» (Adverbiale) տերմինը ներմուծելու համար: Ըստ արտահայտման միջոցների տարբերվում են հոլովական և նախադրավոր խնդիրներ: Պարագայական հարաբերությունները (պարագայական բառերը) Բեկկերը խմբավորում է ըստ դրանց իմաստային կողմի՝ տարբերելով տեղի, ժամանակի, գործողութայնի ձևի և այլ տեսակներ: Բայի խոնարհվող ձևերը Բեկկերը դիտում է որպէս հանգույց: Հենվելով իր՝ վերնում հիշված բաժանման (երկատման) սկզբունքի վրա՝ Բեկկերը նախադասութիւնն զխաւոր հարաբերությունը համարում է ենթակայի ու ստորոգյալի հարաբերությունը, ապա աստիճանաբար հաստատում լրացուցիչ անդամների այլ հարաբերություններ, այսինքն՝ (1) ենթակայի և ստորոգյալի հարաբերություն, (2) ենթակայի ու որոշչի և ստորոգյալի ու խնդրի հարաբերություն, (3) որոշչի ու խնդրի (ղերբայական դարձվածի դեպքում) և խնդրի ու որոշչի հարաբերություն, (4) խնդրի ու որոշչի հարաբերություն (երկրորդական նախադասութիւնն դեպքում) և այլն:

Բեկկերի լրացիցիվը հետագայում լայն քննադատութիւնն է ենթարկվում հոգեբանական ուղղութիւնն ներկայացուցիչներին՝ հատկապէս Շտայնիսալի և Պոտեբնյայի կողմից, որոնք սակայն հասնելով որոշ ծայրահեղութիւնն, փաստորեն ժխտում են քերականութիւնն և տրամաբանութիւնն կապն ընդհանրապէս:

Բեկկերի և Գրիմի քերականությունների հանդես գալով խզում է տեղի ունենում լեզվաբանական գիտության և դպրոցական քերականության միջև:

## 1. ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ

### 1. ՄԵՆԱՆԻՍԱԿԱՆ ՆԱՏՈՒՐԱԼԻՋՄ

Ներածական դիտողություններ. — Ինչպես իշխել ենք, բնական գիտությունների բուռն զարգացումը XIX դարում իր կնիքն է դնում լեզվաբանության ներկայացուցիչների ըմբռնումների և կիրառած մեթոդների վրա: Մինչև XIX դարը բնական գիտությունների կիրառած մեթոդը վերլուծական բնույթ ուներ: Կուտակված փորձնական նյութը պահանջում էր կիրառել տարբեր բնագավառների միացնող մեթոդներ, վերլուծությունը զուգորդել համադրության հետ, վերացնել նախկին մեկուսացված քննությունը: Ի՞նչ իրերի հետազոտության մետաֆիզիկ մեթոդը նախկինում որոշ պատմական արդարացում ուներ, ապա այդ մեթոդը այժմ դադարում է բավարարելուց, կորցնում է իր պատմական արդարացումը:

«Հետազոտության և մտածողության հին մեթոդը, որը Հեղելն անվանում էր «մետաֆիզիկական», — գրում է Էնգելսը, — որը գործ ուներ առավելապես իրերի հետ, որպես միանգամայն պատրաստի ու ավարտված ինչ-որ բաների հետ և որի մնացորդները մինչև այժմ էլ դեռ խորապես նստած են գլուխներում, իր ժամանակին պատմական մեծ արդարացում է ունեցել: Պետք էր իրերը հետազոտել, նախքան հնարավոր էր ձեռնարկել պրոցեսների հետազոտմանը: Հարկավոր է նախ գիտենալ, թե ինչ բան է տվյալ իրը, որպեսզի հնարավոր լինի զբաղվել այն փոփոխություններով, որոնք նրանում տեղի են ունենում: Այսպես էր ընթանում բանր բնական գիտությունների մեջ: Հին մետաֆիզիկական, որ իրերն ավարտված բաներ է համարում, ծագեց բնագիտությունից, որը քննարկում էր այդ մեռյալ և կենդանի իրերը որպես ավարտված իրեր: Իսկ երբ առանձին իրերի այդ ուսումնասիրությունն այնքան ստաջ շարժվեց, որ կարելի էր նոր վճռական քայլ անել դեպի առաջ, այսինքն՝ ձեռնարկել այն փոփոխությունների սխտեմատիկ հետազոտմանը, որոնց ենթարկվում են այդ իրերը բնության մեջ, այն ժամանակ նաև փիլիսոփայական բնագավառում հնչեց հին

մետաֆիզիկայի մասվան ժամը: Եվ իրոք, մինչև վերջին դարի (XVIII դարի — Գ. Զ.) վախճանը բնագիտությունը առավելապես հստակացրեց գիտություն էր, ավարտված իրերի գիտություն, իսկ դարում նա դարձավ էսպես կոնցրետացրեց գիտություն, պրոցեսներ, այդ իրերի ծագման ու դարգացման և այն կապակցություն գիտություն, որ բնության այդ պրոցեսները միացնում է որպես «ի մեծ սամբողջություն»<sup>1</sup>:

Բնական գիտությունների տարբեր բնագավառներում նյութի կուտակումը հանգեցրել էր ոչ միայն այդ նյութի սխտեմավորմանը, այլև երևույթների միջև սվեղի խոր՝ ծագումաբանական-պատմական կապեր որոնելուն: Դրանով սխտեմավորումը դառնում է ոչ միայն պարզապես կուտակված նյութը լամբավորելու, այլև այն բացատրելու, պատմականորեն հիմնավորելու, տարբեր իրերի միջև եղած ծագումաբանական կապի աստիճանները որոշելու միջոց: Կուտակված նյութը սխտեմավորելու և պատմական դարգացումն ու փոխհարաբերությունը որոշելու մի կարևոր միջոց կա՝ համեմատությունը, և համեմատական մեթոդը լայն հիմքեր է գցում տարբեր գիտությունների մեջ. հանդես են գալիս «համեմատական մեթոդի տարբեր անատոմիայի, կլիմատոլոգիայի (մշտվածները), կենդանիների և բույսերի աշխարհագրության մեջ (գիտական էքսպերիմենտներ և ճանապարհորդություններ XVIII դ. կեսից սկսած), առհասարակ ֆիզիկական աշխարհագրության մեջ (Հումբոլդտ)»<sup>2</sup>:

Համեմատական մեթոդը թափանցելով լեզվաբանության մեջ նշանավորում է մի աճբողջ էտապ: Պատմա-համեմատական լեզվաբանության զարգացման հենց սկզբից լեզվաբանները տարբերություն չեն դնում բնական գիտությունների մեջ կիրառվող սխտեմավորման ու համեմատության և լեզվաբանության մեջ կիրառվող սխտեմավորման համեմատության միջև: Նրանց համար լեզուն բնության նույնպիսի ստեղծագործություն է, ինչպես բնական օրգանիզմները: Լեզվի հետազոտության մեջ այս նատուրալիզմը դրսևորվում է ոչ միայն ֆրանց Բոպպի և մասամբ Դասկի մոտ, այլև որոշ չափով արտահայտվում Հումբոլդտի ու մյունխենի մոտ, որոնք հաճույքով են դիմում «լեզվի օրգանիզմ» արտահայտությանը (փոխաբերաբար): Սակայն նատուրալիզմը այս շրջանում դեռ խոր հիմքեր չի նետել. որոշ արտահայտու-

<sup>1</sup> Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտր. երկեր, Գ. 2, 1850, էջ 407—408:

<sup>2</sup> Ֆ. Էնգելս, Բնություն. գիտական փոխակապ, Թրևան, 1957, էջ 198:

թյուններ դեռևս կիրառվում են ոչ թե սկզբունքային հետևողականությամբ, այլ մեխանիկական սեղափոխմամբ, որոշ դեպքերում՝ նաև փոխաբերաբար:

Պատմա-համեմատական լեզվաբանությունը հակադրվեց հին մետաֆիզիկական լեզվաբանությանը, հին տրամաբանական քերականությանը՝ նրա ողջ «կաղուխտիկային ու կամայականությանը» (էնգելս): Պատմա-համեմատական մեթոդի զարգացումը նշանակում էր դիալեկտիկայի հաղթանակ լեզվաբանության մեջ, լեզվի նկատմամբ պատմական հայացքի արմատավորում: Այս բանն էլ հենց նկատի ունի էնգելսը, երբ հակադրում է հին տրամաբանական քերականությանը պատմական քերականությունը, պատմա-համեմատական մեթոդը համարում XIX դ. լեզվաբանության գլխավոր նվաճումը: «...Սեփական լեզվի բառամթերքն ու ձևը»,—գրում է նա,—հասկանալի է դառնում միայն այն դեպքում, երբ ուսումնասիրվում է դրա ծագումը և աստիճանական զարգացումը. իսկ այդ հնարավոր չէ, եթե նկատի չեն առնվում: Ուստի՝ այդ լեզվի սեփական մեռած ձևերը և երկրորդ՝ նրա ցեղակից կենդանի և մեռած լեզուները»<sup>1</sup>:

Ֆրանց Բոպպ.—Դեռևս երիտասարդ հասակում Ֆրանց Բոպպը (1791—1867) Փարիզում զբաղվում է սանսկրիտի ուսումնասիրությամբ, որը հետագայում մեծապես օգնում է նրան լեզվաբանական աշխատանքում: Բոպպի առաջին աշխատությունը, որի մեջ համեմատական դիտողությունների համար նա օգտագործում է սանսկրիտից ձեռք բերած իր դիտելիքները, «Սանսկրիտի խոնարհման սիստեմը հունականի, լատինականի, պարսկականի և գերմանականի համեմատությամբ» աշխատությունն էր (Վինդիշմանի սուաջաբանով)<sup>2</sup>: Այս աշխատությունը առաջին լուրջ փորձերից մեկն էր, որի մեջ հեղինակը նպատակ էր դրել լեզուների քերականական ձևերի (խոնարհման սիստեմի) համեմատության միջոցով երևան հանել նրանց ծագման ընդհանրությունը, նրանց «նախնական վիճակը»: Աշխատության 2-րդ մասը զբաղեցնում էին Բոպպի՝ սանսկրիտից կատարած թարգմանությունները:

1833—1852 թթ. լույս են տեսնում Ֆրանց Բոպպի «Սանսկրիտի, զենդի, հունարենի, լատիներենի, լիտվերենի, հին սլա-

<sup>1</sup> Ֆ. էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1932, էջ 410—411:

Fr. Bopp, Über das Conjugationssystem der Sanskritsprache in Vergleichung mit jenem der griechischen, lateinischen, persischen und germanischen Sprache, Frankfurt a. M., 1816.

վոններենի, գոթերենի և գերմաներենի համեմատական քերականության» 3 մեծադիր հատորները վեց պրակով<sup>1</sup>: Երկրորդ վերամշակված հրատարակության մեջ (1857—1861) այս լեզուների թվի վրա Բոպպն ավելացնում է հայերենը՝ այն համարելով իրանական լեզու և նրա անունը տեղավորելով «ղենդից» (ավեստայի լեզվից) հետո. այս հարցում նա հենվում է Հ. Պետերմանի, Լ. Դիֆենբախի, Ֆ. Վինդիշմանի, Ռ. Գոշեի տվյալների ու եզրակացությունների վրա:

Բոպպի այս աշխատությունը հնդկրոպական լեզուների համեմատական քերականության սիստեմատիկ շարադրանքի առաջին փորձն էր: Աշխատության կառուցվածքը և նյութի սիստեմավորումը կատարված էր ժամանակի սովորական գործնական-տեսչական քերականությունների օրինակով: Բոպպի ուշադրության կենտրոնում է գտնվում ձևաբանությունը, որն զբաղեցնում է 1-ին հատորի մեծ մասը և 2-րդ ու 3-րդ հատորները: 1-ին հատորում որպես յուրատեսակ հնչյունաբանական ներածություն տրվում են ուսումնասիրվող լեզուների այբուբենները և հնչյունների արտասանությունը («Գրերի և հնչյունների սիստեմը» անվան տակ), ընդ որում Բոպպը հստակ չի տարբերում հնչյունը և սառը: Այս ներածությունից հետո Բոպպը քննում է ձևաբանական հետևյալ բաժինները. 1-ին հատորում՝ «Արմատների մասին» և «Հոլովների կազմությունը», 2-րդ հատորում՝ «Ածականները», «Թվականները», «Դերանունները», «Դերանվանական մակբայները», «Բայը», 3-րդ հատորում՝ «Բայը» (վերջը) և «Բառակազմությունը»:

Բոպպի ուշադրությունից չեն վրիպում նաև հնդկրոպական այն լեզուները, որոնց մասին նա հնարավորություն չի ունենում խոսելու իր «Համեմատական քերականության» մեջ: Նա առանձին հոդվածներ է նվիրում հին պրուսերենին և ալբաներենին<sup>2</sup> խոսելով այդ լեզուների՝ հնդկրոպական լեզվաընտանիքին պատկա-

<sup>1</sup> Fr. Bopp, Vergleichende Grammatik des Sanskrits, Zend, Griechischen, Lateinischen, Litauischen, Altslavischen, Gothischen und Deutschen, Berlin, I—III, 1833—1852 (II հր. 1857—1861, III հր. 1868—1870); Աշխատության ֆրանսերեն թարգմանությունը կատարվել է Մ. Բրեալի կողմից և լույս է տեսել 1866—1874 թթ.<sup>1</sup> Բոպպի հայացքների մանրամասն բնութագրով հանդերձ: Անգլերեն թարգմանությունը կատարել է Բ. Իսովիկը:

<sup>2</sup> Fr. Bopp, Über die Sprache der alten Preussen in ihren verwandtschaftlichen Beziehungen, Berlin, 1853. Über das albanesische in seinen verwandtschaftlichen Beziehungen, ABAW, 1854 -1855.

նելու մասին: Կելտական լեզուները ևս նրա ուշադրությունից չեն վրիպել<sup>1</sup>:

Սակայն տարվելով հնդկերոպական նորանոր լեզուներ որոնելու գաղափարով և դեռևս շունենալով լեզվական փաստերի օրինաչափ համեմատության խիստ մեթոդ՝ Բոպպը հնդկերոպական լեզվաբնտանիքի անդամներ է փնտրում մալայա-պոլինեզյան և հարավային կովկասյան լեզուների մեջ: Այդ լեզուների ցեղակցության հարցին Բոպպն առանձին աշխատություններ է նվիրում՝ «Մալայա-պոլինեզյան լեզուների՝ հնդկերոպականների հետ ունեցած ցեղակցության մասին»<sup>2</sup> և «Հնդկերոպական լեզվաբնի կովկասյան անդամները»<sup>3</sup>:

Բոպպը գրել է սանսկրիտի քերականություն (ընդարձակ և համառոտ) և բառարան<sup>1</sup>, որոնց մեջ (առանձնապես բառարանում) լատնակրիտի փաստերը համեմատում է ցեղակից լեզուների համապատասխան փաստերի հետ:

Բոպպը դեռևս 1821 թ. հրավիրվում է Բեռլինի համալսարանը դասախոսություններ կարդալու (Վիլհելմ ֆոն-Հումբոլդտի հանձնարարությամբ): Որպես Բեռլինի համալսարանի պրոֆեսոր նա 1824—1833 թթ. ներկայացնում է 6 զեկուցում՝ «Սանսկրիտի և ցեղակից լեզուների համեմատական վերլուծություն» վերնագրով: Այդ զեկուցումների նյութը հետագայում արտացոլում է գտնում նրա «Համեմատական քերականության» մեջ: Նա հատուկ ուշադրություն է նվիրել և հնդկերոպական ձայնդարձի (Ablaut-ի) հարցին՝ փորձելով տալ այդ երևույթի ծագման բացատրությունը<sup>5</sup>:

<sup>1</sup> Fr. Bopp, Die celtischen Sprachen in ihrem Verhältnisse zum Sanskrit, Zend, Griechischen, Lateinischen, Germanischen, Lithauischen, und Slawischen, Berlin, 1839.

Fr. Bopp, Über die Verwandtschaft der Malayisch-Polynesischen mit den Indisch-Europäischen, ABAW, 1840.

<sup>3</sup> Fr. Bopp, Die kaukasischen Glieder des indoeuropäischen Sprachstamms, Berlin, 1847.

<sup>4</sup> Fr. Bopp, Ausführliches Lehrgebäude der Sanskrita-Sprache, Berlin, 1827. Glossarium sanscritum, Berlin, 1830 (II հր. 1847, III հր. կրում է „Glossarium comparativum linguae sanscritae“ վերնադիրը, I—II, 1866—67): Kritische Grammatik der Sanskrita-Sprache in kürzerer Fassung, Berlin, 1834 (II հր. 1845, III հր. 1863, IV վերամշակված և ընդարձակված հր. 1868):

Fr. Bopp, Vocalismus oder sprachvergleichende Kritiken über J. Grimm's Deutsche Grammatik und Graff's Althochdeutschen Sprachchatz mit Begründung einer neuen Theorie des Ablauts, Berlin, 1836.



Լեզվաբանության պատմության նախորդ շրջանի քննությունը ցույց տվեց, թե լեզվաբաններն ինչպե՛ս քայլ-առ-քայլ հասան հնդերոպական լեզուների ցեղակցության: գաղափարին և ինչպե՛ս սկսեցին հասկանալ, որ քերականական ընդհանրությունները լեզուների ցեղակցության միակ հավաստի ապացույցն են: Ֆր. Բոպպը առաջին հեղինակն էր, որ այդ գաղափարների մարմնավորման համար անհրաժեշտ նյութ տվեց: Լեզվաբանության պատմությանը մոտուցած նրա ծառայությունն այն էր, որ նա առաջինը ի մի հավաքեց ու սխտեմավորեց հնդերոպական լեզուների քերականական ընդհանուր փաստերը և անժխտելիորեն ապացուցեց այդ լեզուների ծագումաբանական կապը:

Սակայն Բոպպը իր ժամանակի ծնունդն էր և շատ բանով դեռ գտնվում էր տրամաբանական քերականության պատկերացումների շրջանակում: Իր հետազոտության գլխավոր նպատակը նա տեսնում էր ոչ թե պատմա-համեմատական մեթոդի կիրառման առաջին հաջող օրինակները տալու, այլ հնդերոպական քերականական ձևերի ծագումը բացատրելու, քերականական ձևերի և տրամաբանական կատեգորիաների սկզբնական համապատասխանությունը բացահայտելու մեջ: «Բոպպը հայտնագործեց համեմատական քերականությունը հնդերոպական լեզուն բացատրելու որոնումների մեջ, ինչպես որ Քրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան՝ Հնդկաստանի ճանապարհը որոնելիս» (Մեյե)<sup>1</sup>:

Բոպպն էմպիրիկ գիտնական է: Նա տեսական-փիլիսոփայական լայն ընդհանրացումներ չի կատարում, իր հավաքած փաստերից անհրաժեշտ ելրակացություններ չի անում: Իր աշխատությունների մեջ տեսական հարցերը նա համեմատաբար սակավ է շոշափում և այն էլ առանց ինքնուրույնության: Բոպպի էմպիրիզմը նշանավորում է մի էպոխա, երբ պատմա-համեմատական լեզվաբանությունը իր առաջին քայլերն է անում և երբ դեռևս նոր են փաստեր կուտակվում հետագա եղրակացությունների համար:

Այն հանգամանքը, որ Բոպպը հետևում էր դրական փաստերին և զբաղվում փաստերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ, ուներ նաև իր դրական կողմերը: Տրամաբանական-ոացիոնալիստական քերականության վերացական սխեմաներին և լեզվաբանական փաստազուրկ հայեցողականությանը, որոնք լեզվաբա-

<sup>1</sup> А. Мейе. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, էջ 449:

նությունը կանգնեցրել էին փակուղու առջև, Բոպպը հակադրում է թարմ փաստերի հոսանքը, այդ փաստերի հավաքման ու դասակարգման աշխատանքը: Լեզվական փաստերը այս նոր բնագավառում աշխատանքի անսահմանափակ հնարավորություններ էին ստեղծում և հիմք տալիս հետագա լայն ընդհանրացումների համար: Ահա թե ինչու այս բնագավառը գրավեց լեզվաբանների մի քանի սերնդի շթուլացող ուշադրությունը:

Սակայն Բոպպի էմպիրիզմը նեղ էմպիրիզմ էր: Կուտակելով նոր փաստեր՝ Բոպպը շարունակում էր առաջնորդվել հին գաղափարներով: Իր իսկ փաստերից չկարողանալով անհրաժեշտ ելրակացություններ անել, չկարողանալով ստեղծել հետագա աշխատանքի մեթոդոլոգիական հիմք և մշակել աշխատանքի տեսական ճիշտ ուղեցույց՝ Բոպպը խորխափում էր իր փաստերի մեջ, բավարար չափով չէր գիտակցում իր արածի առանձնահատկությունները և իր կիրառած մեթոդը: Այս բանն էլ հասցրելու է վրիպումների՝ եղած փաստերի լուսաբանության մեջ, սխալների դուռ բաց անում այս կամ այն լեզվի ցեղակցական բնույթը որոշելու հարցում: Պատահական չէ, որ Բոպպը փորձում էր ապացուցել այնպիսի լեզուների հնդկրոպական բնույթը, որոնք այդպիսին չեն:

Բոպպի լեզվաբանական-քերականագիտական հայացքները ձևավորվել են բնական գիտությունների մեջ էմպիրիզմի ջատագավելու պայմաններում: Բոպպը լեզվին մոտենում է այնպես, ինչպես բնական գիտության ներկայացուցիչը՝ իր ուսումնասիրության առարկային:

Բոպպի համար լեզուները ոչ այլ ինչ են, եթե ոչ բնության օրգանական մարմիններ (organische Naturkörper): Նրանց զարգացումը ենթակա է նույն օրենքներին, ինչ բնական մյուս մարմինների զարգացումը: Լեզվի կյանքը Բոպպը դիտում է որպես օրգանական գիտակից էակի կյանք, էակ, որի զարգացումը տեղի է ունենում ներքին կենսական սկզբունքի ուժով. «Լեզուները, — գրում է Բոպպը, — պետք է դիտվին որպես բնության օրգանական մարմիններ, որոնք կազմվում են որոշակի օրենքներով, զարգանում իրենց մեջ ունեցած ներքին կենսական սկզբունքի ուժով և հետո աստիճանաբար մահանում, ընդ որում, դադարելով իրենք իրենց հասկանալուց, սկզբնապես իմաստավոր, բայց հետո աստիճանաբար ավելի շուտ արտաքին զանգվածի վերածված անյամներն ու ձևերը դեն են նետում, աղավաղում (verstümmeln)

կամ շարաշահում, այսինքն՝ կիրառում այնպիսի նպատակները, որոնց համար իրենց ծագմամբ չեն նախատեսված»<sup>1</sup>։

Բուպլը որակական տարբերություն չի դնում բնական օրգանիզմների կյանքը կառավարող օրենքների և լեզուների կյանքն ու փոխհարաբերությունը որոշող օրենքների միջև։ Ինչպես որ բնական օրգանիզմների կյանքն ընթանում է ֆիզիկական, մեխանիկական և ֆիզիոլոգիական գործոնների ներգործության սուկ, այնպես էլ լեզուներն ունեն իրենց «ֆիզիկան» ու «ֆիզիոլոգիան», իրենց գոյության «ֆիզիկական» և «մեխանիկական» օրենքները։ Պատահական չէ, որ Բուպլը հաճախ է դիմում բնական գիտությունների զինանոցից առնված տերմինների ու բնութագրումների, խոսում լեզուների «կյանքի» և «մահվան» մասին։ Իր «Համեմատական քերականության» նպատակները բնութագրելով՝ Բուպլը գրում է. «Այս գրքում ես նպատակ ունեմ տալու վերնագրում նշված լեզուների օրգանիզմի բոլոր ցեղակցական դեպքերն ընդգրկող համեմատական նկարագրությունը, նրանց ֆիզիկական ու մեխանիկական օրենքների և քերականական հարաբերություններ արտահայտող ձևերի առաջացման ուսումնասիրությունը»։ Լեզվի «ֆիզիկական» և «մեխանիկական» օրենքների անվան տակ Բուպլը հասկանում է ցեղակից լեզուների համեմատվող բառերի հնչյունական համապատասխանությունները և վերջավորությունների «ծանրության» ու «թեթևության» («վանկային կշռի» — Silbengewicht) հարաբերությունը արմատների հետ։ Բուպլը նպատակ է դնում լեզվաբանությունը դարձնել նույնպիսի գիտություն, ինչպիսին անատոմիան, ֆիզիկան և այլ բնական գիտություններն են. այն պետք է օրենքներ բացահայտի և ապացուցներ տա։ Լիզվական երևույթների քննության մեջ Բուպլն ակնհայտ մեխանիցիզմ է հանգես բերում։ Էմպիրիզմն ու մեխանիցիզմը հասցնում են այն բանին, որ նա իր ուշադրությունը կենտրոնացնում է լոկ արտաքին փաստերի վրա, չի խոսում քննարկվող ձևաբանական երևույթների իմաստային արժեքի ու գործածության մասին։ Նա ընդհանրապես ուշադրություն չի դարձնում լեզուների ներքին իմաստային կողմին, իմաստաբանական ու շարահյուսական հարցերին։

Բուպլի նատուրալիզմը բացահայտ է գտնում արդեն «Սանսկրիտի խոնարհման սխտեմից» հետո գրված գործերում։ Գրիմի

<sup>1</sup> Fr. Bopp, Vocalismus..., Berlin, 1836, էջ 1։



հարաբերությունների քողարկմանը, սկզբնական ձևերի քայքայմանը: Բուպպի կարծիքով՝ հնդերոպական լեզուների կրած փոփոխությունները տանում են դեպի քայքայում և անկում:

Իր աշխատությունների մեջ Բուպպը չի հասնում ո՛չ հնդերոպական լեզուների պատմական բարդ ուղու պարզաբանմանը, ո՛չ էլ ցեղակից լեզուների փոխհարաբերության ու ցեղակցության ստորձանի իրական պատկերի բացահայտմանը: Ճիշտ է, իր «Համեմատական քերականության» մեջ նա հանդես բերելով ավելի լայն հարցադրում, 3 կարևոր խնդիր է առաջ քաշում, բայց դրանք լուծում է խիստ հեռավոր կերպով. դրանք են՝ 1) քննարկվող հնդերոպական լեզուների ցեղակցական ընդհանուր գծերի լիակատար նկարագրությունը, 2) նրանց «ֆիզիկական և մեխանիկական օրենքների» ուսումնասիրությունը և 3) քերականական ձևերի ծագման բացատրությունը: Բուպպը փաստորեն ուշադրությունը կենտրոնացնում է երրորդի վրա:

Հնդերոպական լեզուների քերականական (ձևաբանական) ձևվերի վերլուծության բուպպյան մեթոդը հայտնի է կցականություն (ազլուտիստիայի) մեթոդ անվամբ: Ինչպես տեսանք, Բուպպն այն համոզմանն է, որ բառերի քերականական ձևերը կազմավորվել են «օրգանական շրջանում»՝ անկախ արմատների կցման ճանապարհով: Ըստ նրա՝ համեմատության միջոցով կարելի է հասնել այդ նախնական «օրգանական» վիճակին և դրանով իսկ՝ քերականական ձևերի վերլուծության և նրանց ծագման անմիջական բացատրության հնարավորություն ստեղծել: Այս պատճառով էլ, իր գլխավոր նպատակը համարելով հնդերոպական քերականական ձևերի ծագման բացատրությունը, Բուպպը բայական և անվանական ձևերը փորձում է հանդեցնել նախկին անկախ արմատների: Բայերի և անունների ձևաբանական կադմիչները նա համեմատում է զանազան անկախ արմատների հետ՝ վերջիններս համարելով այդ կադմիչների աղբյուրը՝ հետագա ձևափոխություններ և օրգանական ձևերի մթագնամամբ: Բուպպի վերլուծության այս մեթոդը հենվում է ոացիոնալիստական-տրամաբանական քերականության պատկերացումների, սեմական լեզվաբանության մեջ իշխող մեկնաբանությունների ու գաղափարների և հնդկական քերականական տրագիցիայի վրա:

Ռացիոնալիստական-տրամաբանական քերականության և սեմական լեզվաբանության պատկերացումների ազդեցությունը առանձնապես երևան է գալիս բայական ձևերի ծագման մեկնա-

բանության հարցում՝ սկսած ճենց առաջին աշխատությունից, որ նվիրված է սանսկրիտի խոնարհման սիստեմի համեմատական ուսումնասիրությանը: Բոպպի համոզմամբ սանսկրիտի, հունարենի, լատիներենի և այլ հնդկերոպական լեզուների բայերը, առանձին վերցրած, ունակ են արտահայտելու ամբողջական տրամաբանական դատողություն: Բայերի ձևաբանական կազմության մեջ Բոպպը փորձում է բացահայտել տրամաբանական դատողության տարրերը՝ սուբյեկտը, պրեդիկատը և հանգույցը:

Նեղ իմաստով բայ ասելով Բոպպը հասկանում է միայն այն բառը, որ զուրկ է ռեալ իմաստից և արտահայտում է առարկայի (սուբյեկտի) և հատկանշի (պրեդիկատի) կապը: Այս նեղ իմաստով միակ բայը էական բայն է, բայց նա էլ լիովին վերացական բնույթ չունի, նշանակում է գոյության գաղափար և որպես հանգույց օգտագործվում է միայն համապատասխան վերացական բայի բացակայության հետևանքով: Մնացած բայերի կազմության մեջ, Բոպպի կարծիքով, պետք է որոնել նաև այլ կարգի բառերի փոխակերպումները: Իր վերլուծության ընթացքում Բոպպը փորձում է սուբյեկտի և պրեդիկատի հարաբերության ժամանակային դրսևորումները կապել որպես հանգույց հանդես եկող էական բայի ձևերի հետ, բխեցնել նրանցից: էական բայի տարբեր սուպլետիվ ձևերի հետ է կապում Բոպպը, օրինակ, սանսկրիտական, հունական, լատինական սիգմատիկ աորիստի—S-կազմիչը, սանսկրիտական և հունական սիգմատիկ ապառնու—S-ը, լատինական անկատարի (imperfectum) -ba-ն ու կատարյալի -v-ն և այլն: Առաջին երկուսի S-ը<sup>1</sup> նա կապում է էական բայի՝ սանսկր. as-, լատ. es- (es-se), ձևերի հետ, լատ. 1)ä. 2) և v-ն կապվում են<sup>3</sup> էական բայի մի այլ սուպլետիվ ձևի՝ սանսկր. 1)hü-ի, լատ. 1)u(-i)-ի հետ և այլն:

Բայական դիմային վերջավորությունների ծագման հարցը մեկնաբանելիս՝ Բոպպը օդտվում է սեմական լեզվաբանությունից եկող այն տեսությունից, ըստ որի այդ դիմային վերջավորությունները կապվում են նախկին անձնական դերանունների հետ: Հայտնի է, որ սեմական լեզվաբանության մեջ եբրայերենի բայական դիմային վերջավորությունների ծագումը բացատրվում էր

<sup>1</sup> Հմմտ. սանսկր. adik-S-am «ցույց տվեցի», հուն. εἶδε:ξα(=εἶτε:α), լատ. dixi (=dik-s-i) «ասացի» և այլն:

Հմմտ. lege-ba-m «ասում էի»:

<sup>3</sup> Հմմտ. ama-v-i «սիրեցի»:

հենց այդ ձևով: Բ. Շեյդը դեռևս XVII դ. օգտագործել էր այդ ուսմունքը հունական բայի կազմությունը բացատրելու համար: XVIII դարում այս սկզբունքը տարածված էր հուլանդական ֆիլոլոգների շրջանում<sup>1</sup>: Այս բացատրությունը շատ լավ համընկնում էր բայի կազմության մասին Բուպպի ունեցած պատկերացումների հետ: Բայական դիմային վերջավորությունները կապելով նախկին անձնական դերանունների հետ՝ դրանով իսկ նա դիմային վերջավորությունները բխեցնում էր սուբյեկտ արտահայտող տարրերից:

Հնդկական քերականության ազդեցությունը նկատվում է հնդկերոպական արմատների սկզբնական բնույթի բուպպյան ըմբռնման մեջ: Բուպպի կարծիքով հնդկերոպական բառերը կազմվել են սկզբնական միավանկ արմատներից: Այն դեպքում, երբ արմատ համարվող տարրերը միավանկ չեն, Բուպպը դրանք դիտում է կամ որպես կրկնության, կամ որպես ածանցման արդյունք:

Բուպպը տարբերում է միավանկ արմատների երկու խումբ՝ «բայական» արմատներ, որոնցից ծագում են բայերն ու անունները, և «դերանվանական արմատներ», որոնց արտահայտած դերանվանական իմաստը ավելի կամ պակաս թաքնված ձևով առկա է նաև նախդիրների, շաղկապների և մասնիկների մեջ: Այս առումով Բուպպը առարկում է հնդկական քերականներին, որոնք բոլոր կարգի բառերը բխեցնում են բայական արմատներից. նրա կարծիքով՝ դերանունները հնարավոր չէ հանգեցնել բայական արմատներին ոչ կազմությամբ և ոչ էլ իմաստով:

Եթե «բայական արմատները» հիմք են տվել նյութական իմաստ ունեցող բառերի ծագման, ապա «դերանվանական արմատները» հիմք են տվել ոչ նյութական իմաստ ունեցող բառերի և վերջավորությունների ծագման համար:

Միևնույն կցականության սկզբունքով է Բուպպը բացատրում նաև բայական այլ կարգի կազմիչների և հոլովական վերջավորությունների ծագումը: Այսպես, հնդկերոպական լեզուների ըղ-ձակառնի -i- կազմիչը սանսկրիտական ապառնիի -sya- կազմիչի y-ի հետ միասին նա հանգեցնում է i «ցանկանալ» արմատին, **գերմանական թույլ բայերի անցյալի (Präteritum-ի) ձևերը (հմմտ. գոթ. nasjan «փրկել» բայից, եզ. 1. nasi-da, 2. nasi-dēs, 3. nasi-da, հոգն. 1. nasi-dēdum, 2. nasi-dēduþ, 3. nasi-dēdun, գերմ. machen «սանել» բայից եզ. 1. mach-te, 2. mach-test, 3. mach-te, հոգն. 1. mach-ten, 2. mach-tet, 3. mach-**

<sup>1</sup> Հմմտ. B. Delbrück. Einleitung in das Studium der indogermanischen Sprachen, 6-te Aufl., 1919. էջ 28—29.

ten)՝ «անեկ» բայի ձևերից (հմմտ. հին սաքս. *dēdun* «անում էին», գերմ. *taten* «անում էին») և այլն: Հոլովական վերջավորությունները մեջ Բոպպը փորձում է բացահայտել հին «գերանվանական արմատները»:

Բոպպի կիրառած կցականության սկզբունքը գնահատելու համար հարկավոր է նկատի առնել հետևյալը. 1) հնդերոպական քերականական ձևերի ծագումը բացատրելիս, Բոպպը բավարար պատմականություն և երևույթների ժամանակադրական բաշխման կարողություն հանդես չի բերում. նա միատեսակ մոտեցում է հանդես բերում բոլոր դեպքերի նկատմամբ՝ կցականության սկզբունքով բացատրելով և՛ այն փաստերը, որոնք հնդերոպական բոլոր լեզուների համար ընդհանուր են և որոնց բացատրությունը վերաբերում է հնդերոպական հիմնալեզվի քերականական ձևերի մեկնությանը (հմմտ. բայական դիմային վերջավորությունները), և՛ այն փաստերը, որոնք մասնակի բնույթ ունեն և վերաբերում են հնդերոպական լեզուների այս կամ այն խմբին, և՛ այն փաստերը, որոնք հնդերոպական այս կամ այն լեզվի նորագոյացումներն են: Բոպպը հավասար հետաքրքրություն է ցուցաբերում այս բոլոր փաստերի նկատմամբ: 2) Նա բավարար հստակությունը չի պատկերացնում համեմատվող լեզուների ցեղակցական փոխհարաբերության աստիճանները և այդ հարցին առանձին կարևորություն չի տալիս: Իր առաջին աշխատության մեջ Բոպպը հավասարապես ընդունելի է համարում և՛ այն վարկածը, որ հնդերոպական լեզուները ծագել են սանսկրիտից, և՛ այն վարկածը, որ նրանք սանսկրիտի հետ միասին ծագում են մի ընդհանուր նախորդից. համեմատության ընթացքում Բոպպը բոլոր մյուս լեզուների վերլուծությունը կատարում է սանսկրիտի հետ զուգադրելու միջոցով: 3) Համեմատվող ձևերի վերջնական ծագման բացատրությունը կարող էր լինել համեմատական քերականության վերջին քայլը, բայց ոչ առաջինը. մինչդեռ Բոպպը իր հետազոտությունն սկսում է հենց այդ հարցից: Հետագայում լեզվաբանները դնում են ոչ միայն առանձին լեզուների նորագոյացումների ծագման հարցը, այլև փորձում բացատրել հնդերոպական ընդհանուր ձևերի ծագման հարցը, բայց այդ անում են մի էպոխայում, երբ հնդերոպական լեզուների փոխհարաբերությունները միմյանց և այլ լեզուների հետ ուսումնասիրված են բավարար մասնամասնություններ: 4) Բոպպի կիրառած մեթոդը որոշ դեպքերում դրական արդյունքներ է տալիս, և հնդերոպական



լեզուների շատ հետազոտողներ ընդունում են նրա այս կամ այն վարկածը. այսպես, գերմանական լեզուների համեմատական քերականության մասնագետները, Գրիմից սկսած, ընդունում են թույլ բայերի խոնարհման ձևերի առաջացման բոլորական վարկածը, լատինագետները՝ լատինական անցյալի ծագման բոլորական տեսությունը և այլն, անհավանական չէ Բոլայի կարծիքը հնդեւրոպական բայական դիմային վերջավորությունների ծագման մասին և այլն: 5) Իր հետազոտության ընթացքում Բոլայը չի պահպանում հնչյունական (ըստ Բոլայի՝ «տառերի») համապատասխանությունների խստիվ օրինաչափականության սկզբունքը: Նա համեմատությունները կատարում է ավելի շուտ արտաքին նմանությունների և կառուցական մոտեցման հիման վրա, քան որոշակի սկզբունքների կիրառմամբ. այսպես, հունական որոշ բայերի աորիստի չ. կազմիչը Բոլայը բխեցնում է S-ից, ինչպես այլ բայերի կազմիչը. սրա համար նա օրինակ է բերում սլավոնական X-ն, որ արտացոլում է հին S-ը. առանց պայմանների ճշտման՝ Բոլայը միևնույն S-ի հետ է համեմատում հայերեն հուլովման և խոնարհման ամենաբազմազան վերջավորություններ:

Ինչպես տեսանք, Բոլայը, լեզուները դիտելով որպես բնական օրգանիզմներ, խոսում էր նրանց մեջ գործող «ֆիզիկական» և «մեխանիկական» օրենքների մասին: Քանի որ այս անունների տակ Բոլայը նկատի ունի հնչյունական կողմը, ապա թվում է, թե նա պետք է հետևողականորեն անցկացներ հնչյունական համապատասխանությունների օրինաչափականության սկզբունքը: Սակայն այդ այդպես չէ: Բոլայն, անշուշտ, նկատում է, որ ցեղակից լեզուների բառերը համեմատելիս սուկա են «ֆիզիկական» օրինաչափ համապատասխանություններ, բայց չի կարողանում հետազոտության ընթացքում օգտվել դրանցից, պարզել դրանց առկայության ճշգրիտ պայմանները և կիրառել այլ դեպքերի նկատմամբ: Նա ինքը շատ հաճախ թույլ է տալիս կամայական մեկնաբանություններ, փաստերը հարմարեցնում կցականության սկզբունքին, բազմաթիվ շեղումներ ու բացառություններ նշում: Արևմտյան էլ պետք է բացատրել լեզուների բնույթն ու փոխհարաբերությունները և բառերի ծագումը որոշելու հարցում նրա ցուցաբերած կամայականությունները և թույլ տված անճշտությունները:

Բոլայը չի հասնում նաև հնդեւրոպական հերթագայությունների բնույթի ու ծագման ճշգրիտ բացատրությանը: Հերթագայությունների սխտեմը նա փորձում է բացատրել վերջավորություն-

հերի և արմատների վանկային-հնչյունական կառուցվածքի փոխ-հարաբերությունը որոշող «մեխանիկական» օրենքներով: Ըստ իրա՝ արմատական վանկերի ու ձայնավորների բնույթը, արմատների հերթագայության տիպը, նրանց ձայնավորումը որոշվում է «վերջավորությունների ծանրության» սկզբունքով: Բոպպը տարբերում է վերջավորությունների երկու խումբ՝ «ծանր» և «թեթև». ըստ նրա՝ բառի հավասարակշռությունը պահանջում է «թեթև» վերջավորության դեպքում «ծանր» արմատ և ընդհակառակը. սրանով էլ որոշվում է հերթագայվող ձայնավորների բնույթը՝ հնդիկ քերականների որոշած հերթագայությունների՝ տիպերին համապատասխան. հմմտ. սանսկր. ved-mi «գիտեմ», vet-ti «գիտի» և vid-mas «գիտենք» (հուն. ἴδ-μεν), vid-anti «պիտեն»<sup>1</sup>.

## 2. ԿՈՒՆՏՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (ԿՈՒՆՏՈՒՐ-ԻՍՏՈՐԻՉՄ)

Ներածական դիտողություններ.— Կուլտուր-պատմական ուղղությունը հանդես է եկել տարբեր բնագավառներում՝ հասարակագիտության, ազգագրության, դրականագիտության, լեզվաբանության մեջ: Տարբեր բնագավառներում հանդես գալով տարբեր հիմքերի վրա, տարբեր ժամանակ, տարբեր գունավորմամբ՝ այդ ուղղությունը տարբեր պատմական դեր է խաղացել: Այդ պատճառով էլ չի կարելի հախուռն ժխտողական դիրք գրավել կուլտուր-պատմական ուղղության բոլոր արտահայտությունների հանդեպ: Եթե ազգագրության և մասամբ գրականագիտության մեջ այդ ուղղությունը հանդես է եկել համեմատաբար ուշ և հիմնականում ռեակցիոն դեր է խաղացել, ապա նույնը չի կարելի ասել լեզվաբանության համար: Գրականագիտության մեջ կուլտուր-պատմական շարժումը ձևավորվել է XIX դ. II կեսում՝ մեծ մասամբ հենվելով Կոնտի պողոտիվիզմի և Բոկլի քաղաքակրթության դարգացման տեսության վրա: Լեզվաբանության մեջ այդ դպրոցը զարգացել է սովելի վաղ՝ XIX դ. առաջին կեսում՝ վառ արտահայտություն գրանելով Վիլհելմ Ֆոն-Հոմբոլդտի և Յակոբ Գրիմի աշխատություններում: Լեզվաբանության մեջ այն հիմնականում առաջադիմական դեր է խաղացել, թեև այդ ուղղության ներկայացուցիչները

<sup>1</sup> «Մենք չենք կասկածում, որ վերջավորություններն են ազդում արմատական ձայնավորների վրա՝ դրանք բնագրծակուս են, որտեղ իրենք թույլ են, և դարձնում են իրենց սկզբնական պարզությանը, որտեղ իրենք ավելի են բնագրծակուս». Fr. Bopp, Vocalismas..., Berlin, 1836, էջ 13:

պատմութեան: նկատմամբ իդիալիստական հայացք ունեն և այդ պատճառով էլ շին կարողանում հասնել լեզվի ու ժողովրդի պատմութեան կուպի դրույթի բավարար լուծմանը:

XVII—XVIII դդ. լեզվաբանները դիմում էին լեզուների համեմատութեանը՝ ցանկանալով լեզուների ցեղակցական կապերի բացահայտման հիման վրա պարզել ժողովուրդների պատմութեան ու փոխհարաբերութեան հարցերը: Լեզվաբանութեանը շէր անջատվում ֆիլոլոգիայից, սա էլ՝ ժողովուրդների պատմութեան ու փոխհարաբերութեան հարցերն ուսումնասիրող այլ գիտութեաններից: Նոր ժամանակների գիտական համեմատական ֆիլոլոգիայի հիմնադիր Յր. Ա. Վոլֆը ֆիլոլոգիան սահմանում էր որպէս «ազգերի կենսագրութեան»: Դասական ֆիլոլոգիան օրինակ էր տալիս այլ ֆիլոլոգիաների զարգացման, բանասիրական աշխատանքի ընդհանուր եղանակների համար: Գիտական համեմատական ֆիլոլոգիայի ներկայացուցիչները որոշում էին ցեղակից լեզուների առանձնահատկութեանները, համեմատում հին նոր ձևերը, նշտում բառերի տեքստային գործածութեանները և գրանցում բառարաններում, կազմում քերականական աղյուսակներ, բացահայտում տեքստերի քերականական տարբերութեաններն ու ընդհանրութեանները, սիստեմավորում քերականական ձևերի տարբեր իմաստները: Դրանով իսկ համեմատական ֆիլոլոգիան ընդհուպ մոտենում է պատմա-համեմատական լեզվաբանութեան ձևավորմանը՝ XVIII դարում հանդէս գալով որպէս նրա յուրատեսակ փոխարինողը: Համեմատական ֆիլոլոգիայի ընդերքում են զարգացել այնպիսի լեզվաբանների գործերը, ինչպիսիք են Ալեքսանդր Վոստոկովը և «սլավոնագիտութեան հայր» Յոզեֆ Դոմբրովսկին: Հումբոլդտը յուրատեսակ կամուրջ է գցում նոր դարերի ֆիլոլոգիայի և պատմա-համեմատական լեզվաբանութեան միջև:

Կուլտուր-պատմական ուղղութեան ներկայացուցիչները լեզվին նայում են որպէս ժողովրդի կուլտուրական կյանքի արտահայտչի: Լեզվի պատմութեանը նրանց համար կուլտուրայի պատմութեան մի մասն է: Զբաղվելով լեզվի պատմութեան հարցերով՝ Իրանը հավատացած են, որ դրանով կարող են բացահայտել տրվյալ ժողովրդի հոգևոր կյանքի և կուլտուրայի զարգացման պատկերը: Ապրելով մի շրջանում, երբ լեզվաբանութեանը նոր է ձևավորվում որպէս ինքնուրույն գիտութեան և լինելով հենց այդ գիտութեան հիմնադիրները՝ կուլտուր-պատմական ուղղութեան ներկայացուցիչները լեզվական հարցերը դեռևս չեն անջատում փի-

լիստփայական ընդհանուր հարցերից, կուլտուրայի ու գրականութեան պատմութեան պրոբլեմներին: Նրանք նոր են միայն ֆիլոլոգներից վերածվում նեղ-մասնագետ լեզվաբանների: Լեզվաբանությունը նրանց համար հաճախ արդարություն մի օժանդակ դիսցիպլինն է:

Կուլտուր-պատմական ուղղությունը միատարր չէ, և ոչ բուլտրին հավասարապես կարելի է դնել այս ուղղության մեջ: Եթե Վիլհելմ ֆոն-Հումբոլդտին և Յակոբ Գրիմին անվերապահորեն կարելի է այս ուղղության աղեկատներ համարել, ապա նույն վրստահությունը չի կարելի խոսել, ասենք, Ռասկի և Վոստոկովի մասին, թեև, այնուամենայնիվ, սրանք էլ լեզվի ըմբռնման հարցում որոշ ընդհանուր գծեր ունեն այս ուղղության ներկայացուցիչների հետ: Ռասկը տուրք է տալիս ֆիզիոլոգիական սիստեմատիզմին, Վոստոկովը հանդես է գալիս որպես գիտական համեմատական ֆիլոլոգիայի մի այնպիսի ներկայացուցիչ, որ դուրս է գալիս այդ ֆիլոլոգիայի նեղ սահմաններից:

Ռասկոս Ռասկ.— Դանիացի դիտնական Ռասկոս Քրիստիան Ռասկը (1787—1832) լեզվաբանական լայն հետաքրքրություն ունեցող գիտնական է: Նա ամենայն իրավամբ համարվում է համեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկը: Առանձնապես կարևոր են նրա ծառայությունները գերմանական լեզվաբանության համար. նա սկանդինավյան լեզուների համեմատական ստամասիրության հիմնադիրն է:

Ի տարբերություն Քոպպի, Ռասկը ավելի քննադատաբար է մոտենում տրամաբանական քերականության սկզբունքներին: Նորմատիվ քերականությունը նա հակադրում է նկարագրական քերականությունը, որը առանց որևէ կանխակալ սխեմայի պետք է հավաքի լեզվական առկա փաստերը: Իր առաջին աշխատության՝ «Իսլանդական կամ հին հյուսիսային լեզվի ուղեցույց»-ի՝ առաջաբանում Ռասկը նշում է, որ «քերականությունը ոչ թե պիտի պատվիրագրի, թե ինչպես է հարկավոր բառեր կազմել, այլ նկարագրի, թե ինչպես են նրանք կազմվում և ինչպես փոփոխվում»:

Ռասկի գլխավոր աշխատությունը, որ նրան իրավունք է տալիս համեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկը համարվելու, նրա «Ուսումնասիրություն հին հյուսիսային կամ իս-

<sup>1</sup> R. K. Rask. Vejledning til det Islanske eller gamle nordiske sprog, Kjöbenhavn, 1811.

լանդական լեզվի ծագման մասին»<sup>1</sup> աշխատությունն էր: Այն գլորվել է Բոպպի առաջին աշխատության լույս տեսնելուց երկու տարի առաջ (1814 թ.), բայց լույս է տեսել նրանից երկու տարի ուշ (1818 թ.): Աշխատությունը բաղկացած է 3 բաժնից: Աշխատության վերջին բաժինը թարգմանվել է գերմաներեն Յ. Ս. Ֆատերի կողմից (որոշ կրճատումներով) և հրատարակվել 1822 թ. «Լեզուների թրակյան դասի մասին» («Ueber die thrakische Sprachklasse») վերնագրով, նրա «Հիմնական եվրոպական լեզուների համամատական աղյուսակներում»<sup>2</sup>: Իր հայրենիքից դուրս Ռասկը ճանաչում է գտել մասամբ այս թարգմանության հիմունքները, մասամբ էլ Գրիմի միջոցով՝ երկրորդական աղբյուրներից: Ռասկի աշխատությունն սկսվում է «Ստուգաբանության մասին ընդհանրապես» բաժնով, որտեղ նա քննության է առնում լեզուների համամատական ընդհանուր սկզբունքները, առաջ է քաշում ստուգաբանության կարևորության հարցը՝ այն պաշտպանելով նրա մասին ստեղծված վատ կարծիքից, որոշում է նրա էությունը, նշանակությունը, խնդիրները և մեթոդիկան: Այս բաժնում տված տեսական հիմունքներով էլ Ռասկը կատարում է իսլանդերենի ցեղակցական կապերի ուսումնասիրությունը: Իսլանդական կամ գոթական լեզվական դասի մասին» բաժնում նա որոշում է իսլանդերենի հարաբերությունը «գոթական լեզվական դասի» (իմա՝ գերմանական լեզվախմբի) մյուս լեզուների հետ, ապա «Գոթական լեզուների, առանձնապես իսլանդականի աղբյուրի մասին» բաժնում անցնում «գոթական լեզուների», այդ թվում և իսլանդերենի ցեղակցական կապերի ուսումնասիրությանը: Այս նպատակով, Ռասկը քննության է առնում նախ գրենլանդական, կելտական, բասկյան, ֆիննական (ֆիններեն և լատվանդերեն) լեզուները, ցույց տալիս, որ այդ լեզուները իսլանդերենի և ընդհանրապես «գոթական» լեզուների հետ ցեղակցական առնչություն չունեն, ապա սլավոնական և բալթիական (լատվա-լիտվական) լեզուների ուսումնասիրությամբ ցույց տալիս, որ դրանք «գոթականի» հետ միասին ծագում են մի ընդհանուր «արմատից»: Այդ «արմատը» Ռասկը համարում է այսպես կոչված «հին թրակերենը», որն ըստ նրա գոյություն է ունեցել նախապատմական ժամանակներում

<sup>1</sup> R. K. Rask, Andersögelse om det gamle Nordiske eller Islandske Sprog Oprindelse, Kjöbenhavn, 1818.

<sup>2</sup> J. S. Vater, Vergleichungstafeln der europäischen Stammsprachen, 1822.

հարավ արևելյան նվորպայում և որի աճնահի՛ վերապրուկները հունարենն ու լատիներենն են: Սրանք էլ, հատկապես հունարենը, Ռասկը համարում է իսլանդերենի աղբյուրը: Անհրաժեշտ է նշել, որ «թրակերեն» անվանումը հիմնված է Ադելունգի և Ֆատերի «Միհրդասի» 2-րդ հատորի տեղեկությունների վրա. այսօր հասնողիսում է «Իլունների ժողովուրդների թրակա-պելազգա-հունական և լատինական ընտանիք» անվանումը և նշվում է, որ թրակացիներն սկզբում իբր բնակվում էին հարավ-արևելյան նվորպայում և որ «թրակացիներ» անվանումը հնում լայն տոում եներ, «հատկապես մինչև այն ժամանակը, երբ հունները նրանցից առանձնացան»<sup>1</sup>: Ռասկը խոսում է նաև ստիակա՞ լեզուների (հայերեն, սանսկրիտ, ղինդ, պահլավերեն և պարսկերեն) ցեղացական կապերի մասին, բայց այս բանը հանգամանորեն չի բացահայտում. «Անվիճելի է,— գրում է Ռասկը,— որ այդ լեզուները աչքի բնկնող շատ նմանություններ ունեն գերմանական և հյուսիսային լեզուների հետ, բայց և այնպես այդ նույնությունը ոչ թի անմիջական է, այլ գալիս է թրակյան լեզուների միջոցով»<sup>2</sup>: Ասիական այս լեզուների մասին Ռասկը մանրամասնորեն չի խոսում նաև Արևելքի երկրներում կատարած իր երկարատև ճանապարհորդությունից (1816—1823) հետո:

Ռասկը հետագայում գրում է մի շարք լեզուների քերականություններ իր գծած նոր սխտեմով, պայքար է մղում դանիական քերականական տերմինաբանության համար, ղբաղվում ղենդերենի և «Ղենդ-Ավեստայի» հարցով, նպաստում հին պարսկական սեպագրերի վերծանությունը, ուսումնասիրություններ նվիրում կովկասյան և ուրալա-ալթայյան լեզուներին: Սակայն այս բոլորը երկրորդական բնույթի աշխատություններ են: Ռասկը լեզվաբանության պատմության մեջ մնում է իր հիմնական աշխատությամբ, որտեղ նա բացահայտել է գերմանական լեզուների ցեղակցական կապերը բալթիկ-սլավոնական, հունարեն և լատիներեն լեզուների հետ:

Ռասկի երկերի ժողովածուն լույս է տեսել 1932—35 թվերին, Կոպենհագենում, 3 հատորով<sup>3</sup>:

Ռասկը և լեզուն ղիտում է բնագետի աչքերով, լեզվի քննության

<sup>1</sup> Հմմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 53, ծան. 4:

R. K. Rask, Undersögelse om det gamle Nordiske eller Islandiske Sprogs Oprindelse. 1818. էջ 304:

<sup>3</sup> R. K. Rask, Udvalgte Afhandlinger. I III, København, 1932—1935.

հարցում օգտվում բնական դիտությունների հետազոտության եղանակներից ու մտտեցումից: Այստեղից էլ բխում է Ռասկի այն հայացքը, որ լեզվի իմացությունը պահանջում է երկու բան՝ հետազոտել լեզվի սիստեմը և լեզվի ֆիզիոլոգիան: «Լեզուն բնության առարկա է, — գրում է նա, — և նրա իմացությունը բնական պատմության իմացության նման պահանջում է երկու առարկա՝ 1) բնության առանձին առարկաների հաբաբերությունները, այսինքն՝ սիստեմը. 2) այդ անդամների և այն բանի կազմությունը, ինչ վերաբերում է նրան, այսինքն՝ ֆիզիոլոգիան»<sup>1</sup>:

Ինչպես որ բնագետը փորձում է սիստեմավորել տեսակները, փնտրելով ամենից ավելի բնորոշ հատկանիշները, այնպես էլ Ռասկը փորձում է որոշել լեզուների ցեղակցության ամենից ավելի բնորոշ հատկանիշները, սիստեմավորում է լեզուները ըստ ցեղակցության մերձավորության աստիճանի: Ռասկին հիմնականում հաջողվում է և՛ ցեղակցության հիմնական հատկանշի որոշումը (հօսք. քերականական կառուցվածքի ընդհանրությունը), և՛ քրննարկվող լեզուների դասակարգումը այդ հատկանշի համաձայն: Ռասկի այս ձգտումը, — սիստեմավորել լեզուները և վերածել դրանք որոշ կարգերի, — հասցնում է այն բանին, որ նրան հետաքրքրում է ոչ այնքան լեզուների պատմական զարգացման բացատրությունը, որքան փոխհարաբերության աստիճանի որոշումը: Սրանով էլ պետք է բացատրել այն, որ Ռասկը ուշադրություն չի դարձնում քննարկվող լեզուների պատմական զարգացման հարցերին: Գերմանական լեզուների պատմական զարգացման հարցերի խոր ուսումնասիրության պատիվը պատկանում է Գրիմին:

Ժողովուրդների ծագման և փոխհարաբերության հարցերը Ռասկը սերտորեն կապում է այդ ժողովուրդների լեզուների ծագման ու փոխհարաբերության հարցերի հետ: Ոչ մի միջոց այնպիսի լայն հնարավորություններ չի տալիս ժողովուրդների ծագումը, նրանց ցեղակցությունը, նախապատմական շրջանում ունեցած նրանց հարաբերությունները, նրանց սիլբնական բնակավայրը որոշելու հարցում, որքան լեզուն: Սրա պատճառը Ռասկը համարում է լեզվի պատմական կայունությունը. «Մեկ մարդկային սերրնդի տեղության ընթացքում, — գրում է նա, — ժողովուրդը կարող է փոփոխել իր հավատալիքները, ավանդությունները, սահմանված սովորույթները, օրենքները և հիմնարկությունները, կա-

<sup>1</sup> R. K. Rask. Udvalgte Afhandlinger, II, էջ 302.

րող է բարձրանալ կրթութեան որոշակի աստիճանի կամ վերագրա-  
նալ կոպտութեան և ագիտութեան: Բայց լեզուն այդ բոլոր փոփո-  
խութիւնների ժամանակ շարունակում է պահպանվել, եթէ ոչ իր  
նախնական տեսքով, ապա, համենայն դեպս, այնպիսի վիճակով,  
որը թույլ է տալիս այն ճանաչելու որչ հազարամյակների ընթաց-  
քում»<sup>1</sup>:

Լեզուն կարող է արմատահան լինել միայն ժողովրդի լիակա-  
տար տրոհմամբ կամ ոչնչացմամբ: Նույնիսկ այն դեպքերում, երբ  
ժողովուրդը ենթարկվում է բռնի ճնշման և ուժեղ խառնման այլ  
ժողովուրդների հետ, լեզուն փոփոխութեան է ենթարկվում միայն  
շատ հարյուրամյակներ հետո: Հատկանշական է, որ Ռասկը որո-  
շում է լեզուների խառնվելու առաջ բերած փոփոխութեան ուղղու-  
թիւնը. «Սովորաբար ամեն ինչ սահմանափակվում է,— գրում է  
նա,— միայն անցումով մի այլ, նույնական, բայց իր քերականա-  
կան կառուցվածքով ավելի պարզ և իր բնութիւթով ավելի խառնված  
տեսակի լեզվի»<sup>2</sup>:

Լեզուները համարելով ժողովուրդների ծագումն ու փոխա-  
րաբերութեանը սրոշելու աղբյուր՝ Ռասկն, այնուամենայնիվ, կար-  
ծում է, որ լեզվական ընդհանրութիւնները կարելի է հաշվի առ-  
նել երկու պայմանով. 1) դրանք պետք է բավականաչափ մեծ  
թիվ կազմեն և վերաբերեն լեզվի բուն էութեանը. 2) դրանց տվյալ-  
ները չպետք է հակասեն լեզուների պատմութեան այլ կարգի տրվե-  
լալներին. «...այն փոքրը, որ կարող է ձեռք բերվել նախնական  
աշխատանքով, ոչ մի կերպ բավարար չէ տպացուցելու, որ լեզու-  
ների մի խումբը ծագել է մյուսից, մանավանդ եթէ դրան հակասում  
է ցեղերի նշանակալից տարբերութիւնը կրօնի, սովորութիւնների և  
հասարակական այն հիմնարկութիւնների բնագավառում, որոնք  
մեզ հայտնի են այնքան վաղուց, որքան երկու ցեղերը»<sup>3</sup>: Ռասկը  
լեզուների ցեղակցութեան հարցը որոշելիս պահանջում է դիմել  
սխտեմատիկ համեմատութիւնների. ի տարբերութիւն հին  
ստուգաբանութեան, որ հենվում էր առանձին բառերի վրա, Ռասկը  
պահանջում է բացատրել ոչ թէ առանձին բառերը, այլ լեզուները՝  
նրանց որչ կառուցվածքի հաշվառմամբ: Հին ստուգաբանութեանը,  
որ ղբաղվում էր բառերի պատահական համեմատութեամբ, Ռասկը

<sup>1</sup> R. K. Rask. Undersøgelse om det gamle Nordiske eller Island-  
ske Sprogs Oprindelse. 1818. էջ 7:

<sup>2</sup> Նույն տեղը:

Նույն տեղը, էջ 304—305:



հակադրում է լեզուների ստորերի կապակցված քննությունը և սխառեմատիկ համեմատությունը:

Ի տարբերություն Բոպպի, Ռասկը պատմու-համեմատական մեթոդը կիրառում է ոչ թե քերականական ձևերի ծագումը բացատրելու, այլ լեզուների և դրանցով խոսող ժողովուրդների ծագման հարցերը պարզաբանելու համար: Ռասկը Բոպպի նկատմամբ ունի նույն այն առավելությունը, որ ավելի լավ է գիտակցում իր կիրառած մեթոդի առանձնահատկությունները, հետև է նեղ էմպիրիզմից: Իսկ նախ պարզում է իր կիրառելիք ստուգաբանական մեթոդների առանձնահատկությունները, տպա դրանք կիրառում տաջուդրած խնդիրը լուծելու համար: Պատմա-համեմատական մեթոդի էությունը՝ բացահայտման ու կիրառման մեջ Ռասկը հունդես է բերում նշանակալից խորաթափանցություն: Հ. Պեդերսենը, գնահատելով Ռասկի դիրքը, նշում է, որ «մենք այնտեղ գտնում ենք այն բոլոր սղմերը, որոնցից դարգացել են ժամանակակից մեթոդները»:

Ռասկը, ամենից առաջ, հիանալի կերպով դիտակցում նշում է, որ լեզուների ցեղակցական կապերը պարզաբանելի: պետք է բացատրել պատահական նմանություններն փոխառությունները: Այս դեպքում վճռական դերը պատկանում է լեզուների քերականական կառուցվածքի և հիմնական բառաֆոնդի ընդհանրություններին: Առանձնապես կարևոր է քերականական կառուցվածքի ընդհանրությունը. բառային ընդհանրությունները ավելի քիչ հուսալի են, որովհետև ժողովուրդների հազորդակցման ընթացքում լեզուները կարող են իրարից բազմաթիվ բառեր փոխանել, «անկախ այդ լեզուների ծագումից ու տիպից»: Այլ է քերականական համապատասխանությունների հարցը. սրանք «ցեղակցության և ընդհանուր ծագման անհամեմատ ավելի հուսալի հասկանիչ են, քանի որ հայտնի է, որ ուրիշ լեզվի հետ իստորակց լեզուն շատ հազվադեպ է փոխ առնում կամ, ավելի ճիշտ, երբեք փոխ չի առնում այդ լեզվից հոլովման ու խոնարհման ձևերը, այլ, ընդհակառակն, ավելի շուտ կորցնում է իր սեփական ձևերը»<sup>1</sup>: Լեզվի քերականական կառուցվածքի կարևորության, նրա լեզվի էությունը կազմելու հարցը Ռասկը դրել էր դեռևս իր «Իսլանդական կամ հին հյուսիսային լեզվի ուղեցույց»-ում: Հետագայում այս դրույթը նա կիրառում է լեզուների ցեղակցության հարցի լուսաբանման ժամանակ: Սակայն Ռասկը բառային ընդհանրություն-

<sup>1</sup> R. K. Rask, Undersögelse om det gamle Nordiske eller Islandiske sprogs Oprindelse, 1818, էջ 35:

ների վերն ընդհանրապես չի նվազեցնում. տարբերելով բառապաշարի շերտերը ըստ հնության ու կարեորության՝ նա լեզուների ցեղակցության հարցը պարզելիս կարևոր տեղ է տալիս նաև հիմնական բառաֆոնդի բառերի ընդհանրությունը. «Լեզուն, որքան էլ որ նա խառնված լինի, — գրում է Ռասկը, — մյուսների հետ միասին պատկանում է լեզուների մեկ խմբի, եթե ամենից ավելի կարևոր նշութական, անհրաժեշտ և նախնական բառերը, որոնք կազմում են լեզվի հիմքը, նրանց համար ընդհանուր են»<sup>1</sup>:

Սակայն Ռասկը չի սահմանափակվում քերականական կառուցվածքի և ամենից ավելի անհրաժեշտ ու նախնական բառերի կարեորության մատնանշմամբ: Նա այդպիսի ընդհանրությունները լիովին հուսալի է համարում միայն այն դեպքում, երբ հնարավոր է սահմանել հնչյունական օրինաչափ համապատասխանություններ, որոշել «տառերի» օրինաչափ անցումներ. «Երբ երկու լեզվում կան համապատասխանություններ հենց այդպիսի բառերում և այնպիսի քանակությամբ, որ կարող են կանոններ արտածվել մեկ լեզվից մյուսը կատարվող տառային անցումների վերաբերյալ, ապա այդ լեզուների միջև կան մերձավոր ցեղակցական կապեր. առանձնապես եթե համապատասխանություններ են նկատվում լեզվի ձևերի և կառուցվածքի մեջ»<sup>2</sup>: Հայտնի է, որ Ռասկը նկատել է գերմանական բաղաձայնների՝ հունականի նկատմամբ ունեցած այն օրինաչափ համապատասխանությունները, որոնք հայտնի են բաղաձայնների գերմանական տեղաշարժ անունով և որոնք հետագայում ձևակերպվել են Գրիմի կողմից՝ լեզվաբանության մեջ ստանալով Գրիմի օրենք անունը: Իհարկե, Գրիմն այս դեպքում անկախ չի եղել Ռասկից:

Ռասկը տալիս է բառակցքի բաղաձայնների համապատասխանությունների հետևյալ շարքը՝ π-f (πατήρ-fader), τ-θ (τρεις-þrír), ա-h (cornu-horn), β-b (βίαια-blad), τ-t (τάμι-тамr), γ-k (γνή-kona), φ-b (φύο-ber), θ-d (θύρη-dur), γ-g (γάλα-gall), [h]-s (ἄμα-saman). **Ընդհանուր առմամբ Ռասկը տալիս է հուսնարենի ու լատիներենի և իսլանդերենի 352 բառային համապատասխանություն:**

Բառերի համեմատության ժամանակ Ռասկը կարևոր է համարում դրանց նախնական արմատների բացահայտումը և հենց

<sup>1</sup> R. K. Rask, Undersøgelse om det gamle Nordiske eller Islandiske Sprogs Oprindelse, 1818, էջ 38:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 36:

արմատները ընդհանրութեան պարզաբանումը. արմատական ընդհանրությունների առկայությունը լեզուների ցեղակցութեան անհերքելի ապացույց է:

Ռասկի կարծիքով՝ ցեղակից լեզուների ընդհանուր բառերն մասնիկները իմաստով ու հնչյունական ձևով չեն կարող լիովին համընկնել: Եվ այդ հասկանալի է. ցեղակից լեզուների զարգացման բնույթը և տեմպերը չեն համընկնում, այլապէս դրանք կլինեին միևնույն լեզուն. «Մի լեզուն իրականացնում ոչ մեծ մի փոփոխություն մեկ ուղղութեամբ,—գրում է Ռասկը,—մյուսը՝ մի այլ ուղղութեամբ, յուրաքանչյուրը յուրովի. երբեմն մի լեզուն կորցնում է մի բան, մյուսը՝ մի այլ բան, և երկուսն էլ ընդամին կարող են զարգանալ և ընկալել մի ինչ-որ նոր բան. երբեմն մի լեզուն օգտագործում է միևնույն վերջավորություններն այն բանի համար, որ նշանակի հասկացութունների միջև եղած այլ կապերը»<sup>1</sup>: Այսպիսով, Ռասկը նշում է պատմա-համեմատական մեթոդի այն սկզբունքը, ըստ որի ցեղակից լեզուների զարգացումն ընթանում է անհավասարաչափ կերպով: Ցեղակից լեզուների նույն ծագումն ունեցող բառերը իմաստով ևս կարող են չհամընկնել, որովհետև նրանց ոչ միայն ձևը, այլև իմաստային զարգացումը կարող է ընթանալ միանգամայն տարբեր ուղղութեամբ. «Միևնույն բառը տարբեր լեզուներում կարող է ունենալ ոչ միայն տարբեր իմաստներ, երբ, օրինակ, մեկում այն ընդլայնված է, երկրորդում՝ նեղացված, այսինքն՝ երբ ընդհանուր հասկացությունը լեզվում իր գործածութեամբ հանգեցվել է մասնակի դեպքերի, իսկ երրորդում նրա գործածությունը թույլատրվում է միայն որոշ դեպքերում, որոնք առկա են առաջին լեզվում, կամ երբ տառացից այն դառնում է պատկերավոր կամ առանձնացած և այլն,—այլև միևնույն բառը երկու լեզվում, կամ հենց նույն լեզվում, ունի ուղղակի հակադիր իմաստ»<sup>2</sup>: Լեզուների զարգացման տարբերությունները դրսևորվում են ոչ միայն բառերի հնչյունական, իմաստային և քերականական ձևերի զարգացման տարբեր ուղղությունների ու գործածության տարբերությունների մեջ, այլև բառապաշարի փոփոխությունների մեջ. «Մի լեզուն սկզբնական ընդհանուր ֆոնդից կարող է կորցնել որոշ բառեր, մյուսը՝ այլ բառեր, մեկը կարող է հետագայում զարգացնել կամ ձեռք բերել որոշ բառեր, մյուսը՝

<sup>1</sup> R. K. Rask. Undersögelse om det gamle Nordiske eller Islandske Sprogs Oprindelse, 1818, էջ 40.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 39:

այլ բառեր, կաղմելով դրանք այլ հղանակով կամ փոխ առնելով այլ աղբյուրից»<sup>1</sup>։

Այս կապակցութեամբ Ռասկը ուշադրություն է դարձնում նաև փոխառությունների հարցի վրա։ Նրան առանձնապես դրադեցնում է փոխառությունների աղբյուրը որոշելու հարցը. եթե բառը հանդիպում է մեկից ավելի լեզվում, ապա նա փոխ է առնված այն լեզվից՝ ա) որտեղ բառը հանդես է գալիս ավելի անհրաժեշտ, նյութական և ընդհանուր իմաստով. բ) որտեղ բառը ընդհանուր է տվյալ լեզվի հետ սահմանակից բոլոր լեզուներում, մինչդեռ մյուս լեզվում հանդիպում է առանց նրա հետ կապված լեզուներում լայն տարածում ունենալու. գ) որտեղ բառը հանդիպում է բառակազմական լայն կապերով և ունի մի շարք ածանցումներ. դ) որտեղ բառը ունի տվյալ լեզվի բառափոխության ձևերը և գտնվում է իր միջավայրում, մինչդեռ մյուս լեզվում շունի նման տիպի ձևեր։

Ռասկի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ նա աշխատում է որոշել քննարկվող լեզուների ցեղակցության աստիճանը։ Նա սահմանում է որոշ խմբեր և որոշում այդ խմբերի ու խմբերի ներսում գտնվող լեզուների ցեղակցության բնույթը։ Ռասկը զերծ է համեմատության ժամանակ ավելորդ կանխակալ սխեմաներից. նա համեմատությունը կատարում է առանց Բոպպի կանխակալության և իր եղրակացությունները հիմնում է համեմատության տվյալների վրա։ Ռասկը հատուկ ծառայություններ ունի հատկապես սկանդինավյան և գերմանական լեզվաբանության մեջ։

Այս բոլորով հանդերձ Ռասկը զերծ չէ որոշ սահմանափակությունից ու վրիպումներից. 1) Ռասկի հետազոտության կենտրոնում է դրված իսլանդերենը. իր հետազոտությունը Ռասկն սկսում է իսլանդերենից, որպես յուրատեսակ մեկնակետից՝ ուշադրությունը կենտրոնացնելով իսլանդերենի ծագման հարցերի պարզաբանության վրա։ Եթե Բոպպը իր համեմատական հետազոտությունը կատարում էր՝ ցանկանալով պարզել համեմատվող լեզուների քերականական ձևերի ծագումը, ապա Ռասկը եվրոպայի հնդեւրոպական լեզուների ցեղակցության հարցերը քննում է իսլանդերենի ծագումը բացատրելու որոնումների մեջ։ Իր հետազոտության ընթացքում Ռասկը սահմանում է ավելի ու ավելի

<sup>1</sup> R. K. Rask, Undersøgelse om det gamle Nordiske eller Islandske Sprogs Oprindelse, 1818. էջ 37—38.



նշելի և սանսկրիտի տվյալները շագտագործելը: 5) Ռասկը ուշագրություն չի դարձնում անցողիկ օղակների վրա, նախաձևերի վերականգնման փորձեր չի կատարում, բավականաչափ չի գրադրում պատմական քերականության հարցերով: Նա չի կարողանում հասնել բավարար պատմականության, որ, ինչպես կեսնենք, հանգեցնում է վրիպումների՝ բայական ձևերի պատմական հաջորդականության գիտակցման հարցում: Սրանով է բացատրվում և այն, որ Ռասկը նոր իսլանդական արտասանությունը գրեթե նույնացնում է հին իսլանդականի հետ:

Յակոբ Գրիմ.—Յակոբ Գրիմը (1785—1863) հայտնի է ոչ միայն լեզվաբանության բնագավառում, այլև գրականության մեջ: Նա գերմանական ուսմանտիղմի ակադեմիայի ներկայացուցիչներից մեկն է, որ համալսարհային հռչակ է ձեռք բերել՝ իր եղբոր հետ միասին հրատարակելով գերմանական ժողովրդական հեքիաթների մշակումները:

Լեզվաբանության պատմության մեջ Յակոբ Գրիմը մտել է առաջին հերթին որպես «Գերմանական քերականություն» քառհատոր աշխատության հեղինակ: Այդ աշխատության I հատորը լույս է տեսել 1819 թ.: Սակայն չբավարարվելով աշխատության բնույթով՝ Գրիմը 3 տարի անց 1822 թ. լույս է բնծայում սյդ հատորը վերամշակված ձևով: Ինչպես կարծում են, այս նոր վերամշակված հրատարակությունը նշանակալից չափով պայմանավորված է Ռասկի ազդեցությամբ. հատկանշական է, որ առաջին հրատարակության մեջ բացակայում է հնչյունաբանության բաժինը՝ «տառերի ուսմունքը», որը երկրորդ հրատարակության մեջ գրավում է հատորի կեսից ավելին: Գրիմի աշխատության հաջորդ 3 հատորները լույս են տեսնում 1826, 1831 և 1837 թթ.: 1840 թ. սկսվում է I հատորի երրորդ հրատարակությունը, սակայն լույս է տեսնում միայն 1-ին մասը, որտեղ քերականություն են ձայնավորները: Գրիմը նպատակ ուներ արմատապես վերամշակել գործը, բայց հրատարակված մասը թողնված է առանց փոփոխության:

Գրիմի այս աշխատությունը, որի մասին վերնագիրը ճիշտ գաղափար չի տալիս, ներկայացնում է գերմանական լեզուների պատմա-համեմատական քերականությունը: Աշխատությունը, հակառակ վերնագրին, նախ՝ սովորական նկարագրական քերական-

նություն չէ, այլ մի քերականություն, որ կառուցված է գերմանական լեզուների գրավոր տեքստերի ուսումնասիրության և պատմական զուգադրության հիման վրա, հրկորորդ՝ այն գերմաներենի (Deutsch, deutsche Sprache) քերականություն չէ, այլ գերմանական լեզուների համեմատական-պատմական ուսումնասիրություն<sup>1</sup>: Գրիմի գործը մինչև այժմ էլ շի կորցրել իր արժեքը գերմանական լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ, իսկ լեզվաբանության պատմության մեջ այն կարևոր էր նրանով, որ ներկայացնում էր գրավոր տեքստերի ուսումնասիրության վրա հիմնված, հետազոտվող լեզուների պատմական շրջանի վարդացման պատկերը դժոզ մի գործ՝ պատմական քերականության առաջին օրինակը: Գրիմի պատմական քերականության առաջին հատորը լույս է տեսել Բոպպի համեմատական քերականության առաջին հատորից 11 տարի առաջ: Ճիշտ է, Գրիմը իր գործի հետազոտության սկզբունքների մեջ գտնվում է Ռասկի ազդեցության տակ, բայց պատմականությունը Գրիմի մոտ ավելի հետևողականորեն է կիրառված, քան Ռասկի մոտ:

Գրիմի «Գերմանական քերականության» ետմահու առաջին ամբողջական հրատարակությունը կատարվել է 1869—1898 թթ.: Գրիմի հետագա լեզվաբանական աշխատություններից առանձնապես հիշատակելի են «Գերմաներեն լեզվի պատմությունը»<sup>2</sup>, «Գերմանական բառարանը»<sup>3</sup>, որին նա ձեռնարկել է եղբոր հետ միասին ու հասցրել մինչև Frucht բառը և «Լեզվի ծագման մասին» դասախոսությունը՝ կարդացված 1851 թ. հունվարի 9-ին<sup>4</sup>: «Գերմաներեն լեզվի պատմությունը» ի մի էր բերում գերմաներենի պատմության տվյալները՝ տեքստերի մանրակրկիտ ուսուճնասիրության հիման վրա. այստեղ է Գրիմը գիտականորեն քննարկում գերմանական Ablaut-ը և Umlaut-ը: «Գերմանական բառարանը» կառուցված է պատմական լայն հիմունքով. բառերի համար բերվում են վկայություններ (հնարավոր լրիվությամբ), որոնք նպատակ ունեն լուսաբանելու բառերի պատմությունը.

<sup>1</sup> Մոտավորապես մինչև XIX դ. կեսերը deutsch բառը նշանակում էր ն՝ «գերմաներեն», «գերմանական», միայն գերմաներեն լեզվին կամ գերմանական ժողովրդին վերաբերող (deutsch, немецкий), և՛ «գերմանական», գերմանական ժողովուրդներին և լեզուներին վերաբերող (germanisch, германский):

<sup>2</sup> J. Grimm, Geschichte der deutschen Sprache, 1848.

<sup>3</sup> Deutsches Wörterbuch, I—XVI, 1854—1954.

<sup>4</sup> J. Grimm, Über den Ursprung der Sprache, „Kleinere Schriften“, I, Berlin, 1864.

աշխատանքը բառարանի վրա շարունակվել է եղբայրների մահից հետո և ավարտվել միայն վերջերս (1954 թ.):

Գրիմի պատմական քերականության երևան գալը մեծ շահով պայմանավորված էր պատմական անցյալի այն ոտմանտիկական իդեալականացմամբ, որ հատուկ էր գերմանական ռոմանտիզմի ներկայացուցիչներին: Տարվելով գերմանական ժողովրդի պատմական անցյալով՝ Գրիմն սկսում է ուսումնասիրել գերմանական հնուլեզուները, միջնադարյան գրականությունն ու կուլտուրան, գերմանական գրականության հուշարձանները, այդ հուշարձանների լեզուն: Նա նպատակ է դնում գերմանական լեզվական հուշարձանների հետազոտությանը վեր հանել գերմանական ժողովրդի ազգային ոգին, նրա հոգեկան կերտվածքն ու առանձնահատկությունները: Գրիմը նկատում է, որ գերմանական հնագույն տեքստերի քերականական առանձնահատկությունները դրսևորում են այնպիսի թեքականություն, որ սովորաբար հատուկ են համարում հունարենին ու լատիներենին: Հետազոտության ընթացքում Գրիմը փորձում է գտնել հին և նոր ձևերը կապող օղակները, բացահայտել հնչյունների ու քերականական ձևերի աստիճանական փոփոխությունները. «Հին գերմանական աղբյուրների ուղադիր ընթերցանության ժամանակ,—գրում է Գրիմը «Գերմանական քերականության» առաջաբանում,—ես ամեն օր հայտնաբերում էի լեզվի այնպիսի ձևեր և կատարելություններ, որոնց համար մենք սովորաբար նախանձում ենք հույներին ու հռոմայեցիներին, և որոնք գնահատում ենք մեր այժմյան լեզվի հատկությունները. այն հետքերը, որոնք ժամանակակից լեզվում պահպանվել են բեկորներով և կարծես քարացած տեսքով, ինձ համար աստիճանաբար պարզ դարձան, և կտրուկ անցումները հարթվեցին, և երբ հնարավոր եղավ կապել նորը միջինի և միջինը՝ հնի հետ»<sup>1</sup>:

Իր հետազոտությանը Գրիմը փորձում է բացահայտել ժողովրդի լեզուն իր նախնական անխառն մաքրությանը ու կատարելությանը: Այստեղից էլ բխում է նրա հոգածու վերաբերմունքը դեպի բոլոր մանր փաստերը, բոլոր մանրամասները: Գրիմը այս կապակցությամբ դնում է նաև բարբառների ուսումնասիրության, առանձնապես այլուր բացակայող բառերի ձևերի հավաքման հարցը, ընդ որում պահանջում է բարբառները քննել որպես ինքնին հետաքրքրական երևույթներ և ոչ թե որպես գրական լեզվի:

<sup>1</sup> J. Grimm, Deutsche Grammatik, I. 1819. էջ XVII:



լրացման միջոցներ: Գրիմը առանձնապես կարևոր է համարում այն, որ բարբառները, գտնվելով բնական վիճակում, իրենց թև-բույթները ավելի դանդաղ են փոփոխում. իրականում, սակայն, բարբառները ավելի արագ են փոխվում, քան գրական նորմա-վորված լեզուն:

Գրիմը տրամաբանական քերականության կոնխակալ վերացական սխեմաներին հակադրում է պատմական քերականու-թյան անկանխակալ մոտեցումը դեպի փաստերը. «Քերականու-թյան մեջ ընդհանուր տրամաբանական հասկացություններին ես թշնամի եմ,—գրում է Գրիմը,—նրանք իրենց հետ բերում են սահմանումների թվացող խստություն և ամփոփվածություն (Ge-schlossenheit), սակայն խանգարում են զննությունը (Beobach-tung), որ ես համարում եմ լեզվի հետազոտության ոգին»<sup>1</sup>: Լեզ-վական երևույթները Գրիմը ուսումնասիրում է ամենայն մանրա-մասնությամբ՝ խնամքով հավաքելով սմբն մի մանրուք, ամեն մի ձև և գրանցելով դրանք ճշգրտությամբ: Սակայն Գրիմը, այնու-ամենայնիվ, լեզվաբանական լայն տեսություն չի ստեղծում: Ճիշտ է, նա հանախակի է շեղումներ կատարում և դատողություն-ներ անում, բայց այդ բոլորով հանդերձ նա մինչև վերջ չի թա-փանցում լեզվական երևույթների էության մեջ, նրանց լիակա-տար լուսաբանությունը չի տալիս. ինչպես նշում է Մեյեն, նրա գործը «ավելի շուտ դիտողությունների հավաքածու է, քան թև բացատրությունների»<sup>2</sup>:

Լեզուն և նրա պատմությունը Գրիմը սերտորեն կապում է այդ լեզվով խոսող ժողովրդի ու նրա պատմության հետ: Գրիմի համար՝ «մեր լեզուն միաժամանակ մեր պատմությունն է»<sup>3</sup>: Լեզուն մարդկային ստեղծագործություն է և կապված է մարդու գործու-նեությունների բոլոր բնագավառների հետ: Մայրենի լեզուն այն մի-ջոցն է, որով մարդը կապվում է իր միջավայրի հետ: Լեզուն ծա-ռայում է որպես տարբեր սերունդների հաղորդակցման, տվյալ սերնդի կուտակած հոգևոր ժառանգությունը հաջորդ սերնդին հա-ղորդելու միջոց: Լեզուն ժողովրդի պատմության բոլոր կողմերի հուշարձանն է: Նպաստավոր պայմաններում այն ծաղկում է,

<sup>1</sup> J. Grimm, Deutsche Grammatik, I B., II Ausg., 1822, էջ VI:

A. Мейе, Введение в сравнительное изучение индоевропей-ских языков, М. - Л., 1933, էջ 452:

J. Grimm, Auswahl aus den Kleinereu Schriften, Berlin, 1871, էջ 263:

աննպաստ պայմաններում՝ դադարում դարգանալուց, սմբում ու սկսում մահանալ: Լեզուն ժողովրդի պատմութեան հուշարձանն է, որի մեջ արտայայտվում է այդ ժողովրդի ոգին: Ժողովրդի քաղաքական կյանքն ու կուլտուրան իրենց կնիքն են դնում լեզվի վրա, որը իր հերթին ժողովրդի կուլտուրայի լծակն է:

Գրիմի կարծիքով՝ լեզուն ներկայացնում է ժողովրդի պատմութեան մի այնպիսի հուշարձան, որի մեջ արտայայտվում են նրա կյանքի բոլոր կողմերը՝ տնտեսական կյանքն ու նյութական կուլտուրայի դարգացումը, քաղաքական կառուցվածքն ու միջազգային հարաբերությունները, իրավունքն սովորույթները: Լեզվի պատմությունը ավելի հավասարի տեղեկություններ է տալիս ժողովրդի կյանքի մասին, քան նյութական կուլտուրայի մնացորդները: Լեզվի հյւման վրա մենք կարող ենք գաղափար կազմել այդ լեզվով խոսող ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած կապերի մասին: Առանձնապես կարևոր է լեզվի նշանակությունը պատմութեան հնագույն շրջանի համար. «Հնագույն պատմութեան համար.— գրում է Գրիմը իր «Գերմաներեն լեզվի պատմութեան» մեջ,— այնտեղ, որտեղ մեղ համար ցամաքում են մնացած բոլոր աղբյւրները, որտեղ պահպանված մնացորդները մեզ թողնում են անյուծելի անհամոզվածութեան մեջ, ոչինչ չի կարող օգնել, բացի մեր լեզվի և մեր խոսվածքի ցեղակցութեան կամ տարամիտունների հոգածու ուսումնասիրությունից ընդհուպ մինչև նրա նրբագույն ջղերն ու մանրաթելերը»<sup>1</sup>:

Խոսելով լեզվի և ժողովրդի կապի մասին՝ Գրիմը բառերի պատմությունը սերտորեն կապում է իրերի պատմութեան հետ: Ինչպես որ իրերի պատմութեան իմացումը անհրաժեշտ է ստուգաբանութեան, բառերի պատմութեան համար, այնպես էլ բառերի պատմությունը պիտի օգնի իրերի պատմութեան մեջ թափանցելուն: Իր «Գերմաներեն լեզվի պատմութեան» մեջ Գրիմը ձգտում է հենց լեզվաբանական հետազոտութեան նման լայն պլանի իրադրոման: Պատահական չէ, որ այս աշխատությունը արժանացել է Մարքսի հատուկ ուշադրութեանը և կոնսպեկտավորվել նրա կողմից:

Լեզվի զարգացման պրոցեսը Գրիմը ներկայացնում է որպես յանդադ, բայց շընդհատվող ընթացք, որ չի կարող ոչ կանգ առնել, ոչ էլ հա ընթանալ:

1. J. Grimm, Geschichte der deutschen Sprache, 1848, էջ 5.

Գրիմը ևս զերծ չէ պատմա-համեմատական լեզվաբանության մյուս հիմնադիրների, հատկապես Բոպպի տարերային նատուրալ-լիզմից: Լեզվաբանության հետազոտության Ֆորագույն մեթոդների զարգացումը նա համեմատում է բնական գիտությունների մեթոդների զարգացման հետ. «Շատ անգամ և ոչ առանց հիմքի,— գրում է նա,— լեզուների ուսումնասիրությունը գրել են բնական պատմության ուսումնասիրության կողքին. նրանք նման են իրար նույնիսկ իրենց վատ ու լավ մեթոդների բնույթով»<sup>1</sup>:

Լեզուն, ըստ Գրիմի, սերտորեն կապված է մտածողության հետ և նրա հետ միասին մարդուն տարբերում է կենդանիներից: Լեզվի ծագումը Գրիմը կապում է մարդկային մտածողության ներքին պահանջների հետ. «Ծագելով անմիջաբար մարդկային մտածողությունից, հարմարվելով նրան,— գրում է Գրիմը,— համընթաց գնալով նրա հետ, լեզուն դարձել է բոլոր մարդկանց ընդհանուր ունեցվածքն ու ժառանգությունը, առանց որի նրանք չեն կարող յուրա գնալ, ինչպես չեն կարող յուրա գնալ առանց օդի, և որի վրա նրանք հավասար իրավունք ունեն»<sup>2</sup>: Գրիմը, ինչպես տեսանք, հատուկ ուսումնասիրություն է նվիրել լեզվի ծագման հարցին. այն իբրև: զեկուցում կարդացվել է Բեռլինի Գիտությունների ակադեմիայում 1851 թ. հունվարի 9-ին: Այստեղ Գրիմը նպատակ է դնում օգտագործել Հերդերի գրքի լույս տեսնելու ժամանակից հետո դիտության ձեռք բերած նվաճումները, մանավանդ պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումները և տալ հարցի նոր լուսաբանություն: Սակայն այս օգտագործման մեջ Գրիմը թույլ է տալիս որոշ ծայրահեղություն՝ որոշ իմաստով խառնելով հնդեւրոպական լեզուների ծագման հարցերը լեզուների ծագման ընդհանուր հարցի հետ<sup>3</sup> Լեզվի ծագման և նրա սկզբնական բնույթի մասին խոսելիս նա առաջնորդվում է հնդեւրոպական նախալեզվի մասին ստեղծված պատկերացումներով: Լեզվի ծագման հարցը լուծելիս Գրիմը մերժում է հարցի լուծման 2 կարգի ծայրահեղությունները՝ ե՛լ լեզուն բնածին երևույթ համարելու, ե՛լ լեզվի սասվածային հայտնություն տեսակետները. բնածին լեզուն մարդուն

J. Grimm, Auswahl aus den Kleineren Schriften, Berlin, 1871, էջ 226:

Նույն տեղը, էջ 267:

Նշում է, Գրիմը նշում է, որ լեզվի ծագումը շատ հարթամյակներով նախորդել է սանսկրիտի հուշարձաններին, բայց այդ բանը ավելի քիչ է հաշվի առնում, քան պետք է:

կնույնացներ կենդանիների հետ, լեզվահայտնությունը կենթադրէր մարդկանց աստվածայնությունը: Բերժեւով լեզվի բնածին լինելու տեսակետը և բառերը արմատապես տարբեր համարելով կենդանական ճիշերից՝ Գրիմը ընդհանուր է համարում միայն մի բան՝ նրանց հիմքը, մարմնի՝ անհրաժեշտորեն պայմանավորված ֆիզիկական կազմակերպումը: Հնչյունների հաջորդականությունը և շափը անհրաժեշտորեն պայմանավորված են մարդկային օրգանների կառուցվածքով. ձայնավորների առաջացման հաջորդականությունը Գրիմը հիմնավորում է հնդերոպական լեզվաբանության տրադիցիոն պատկերացումներով՝ Ձ, ի, Ա ձայնավորները համարելով սկզբնական և Ե-ն, Օ-ն ու զանազան երկբարբառներ՝ նրանցից հետո կազմված: Գրիմը որոշ տուրք է տալիս բնածայնական տեսությանը:

Գրիմի կարծիքով՝ լեզվի ծագման միակ ճիշտ վարկածն այն է, որ լեզուն իր ծագմամբ ու զարգացմամբ մարդկային ձեռքերում է, և այդ ծագումն ու զարգացումը կատարվել են միանգամայն բնական ճանապարհով, ազատ կերպով, առանց աստվածային պարտադրման:

Լեզվի ծագման հարցում Գրիմի մատուցած կարևոր ծառայություններից մեկը նախնական լեզվի ձևաբանական կառուցվածքի վերականգնման փորձն էր: Ելնելով հնդերոպական լեզվաբանության տվյալներից, Գրիմը տարբերում է լեզվի երկու տիպ՝ հին և նոր. հին տիպը թերականն է, որ ներկայացված է, օրինակ, սանսկրիտով, զենդով, այլև հունարենով ու լատիներենով. նոր տիպը ներկայացված է այդ լեզուների հետագա ժառանգներով՝ հնդկական նոր լեզուներով, նոր պարսկերենով, նոր հունարենով և ռոմանական լեզուներով, որոնց մեջ «թերման ներքին ուժն ճկունությունը մեծ մասամբ կորսված են և խանգարված, մասամբ էլ տարբեր օժանդակ միջոցների օգնությամբ վերականգնված»<sup>1</sup>: Սակայն Գրիմն, այնուամենայնիվ, կարծում է, որ այս նոր եղանակների արժեքը չի կարելի թերագնահատել: Նա նշում է, որ լեզվի հին և նոր էտապները կտրուկ կերպով չեն անջատված իրարից, և հին էտապի լեզուներում նկատվում են նոր էտապի որոշ տարրերը: Սակայն լեզվի զարգացումն, անշուշտ, չի սպառվում այս երկու էտապով. «Լեզվի զարգացման վերջին երկու շրջանների զուգադրումից ավելի շուտ բխում է, որ ինչպես թերմանը

<sup>1</sup> J. Grimm, Auswahl aus den Kleineren Schriften, 1871, էջ 252.

փոխարինում է նրա սեփական քայքայումը, այնպես էլ ինքը թե-  
քումը պետք է ծագեր իր ժամանակ՝ բառերի նման մասերի միա-  
ցումից: Հետևաբար, անհրաժեշտ է ենթադրել մարդկային լեզվի  
զարգացման ոչ թե երկու, այլ երեք աստիճան, առաջինը բառերի  
ու արմատների ստեղծումն է, այսպես ասած, աճումն ու լինե-  
լությունը, երկրորդը՝ իր կատարելություն մեջ ավարտված թերման  
ձազկումը, երրորդը՝ ձգտումը դեպի մտքի պարզությունը, ընդ  
որում թեքումից, նրա անբավարարության պատճառով, նորից  
հրաժարվում են. և եթե առաջին շրջանում բառերի մտքի կապը  
տեղի էր ունենում պրիմիտիվորեն, եթե երկրորդ շրջանում ձևեր  
բերվեցին այդ կապի հոյակապ օրինակներ, ապա հետագայում  
այն, բանականության հստակացումը, սահմանվում է է՛լ ավելի  
գիտակցությամբ»<sup>1</sup>: Լեզվի զարգացման այս էտապները Գրիմը նմա-  
նեցնում է ծառի տերևակալման, ծաղկման և պտղաբերության  
էտապներին:

Մերժելով լեզվի ծագման աստվածային տեսակետը՝ Գրիմը,  
այնուամենայնիվ, կարծում է, որ «լեզուն պահպանում է այն բու-  
լորը, ինչ որ կա նրա մեջ աստվածային, որովհետև աստվածու-  
յնը մեր բնության և մեր հոգու մեջ է ընդհանրապես»<sup>2</sup>:

Գրիմը առաջ է քաշում լեզվի ծագման հետ կապված երկու  
կարևոր հարց. 1) աշխարհի տարբեր լեզուները հանգում են մե՞կ  
նախալեզվի, թե՞ մի քանիսի, եթե մեկին, ապա մե՞կ մարդկային  
զույգի, թե՞ մի քանիսի. 2) ո՞ր խոսքի մասերն են ամենից առաջ  
ծագել: Առաջին հարցը Գրիմը հետևողականորեն չի զարգացնում  
և չի հիմնավորում բավարար շափով: Նա հավանական է համար-  
ում, որ լեզվի ծագմանը մասնակցած լինեն մեկից ավելի զույ-  
գեր: Երկրորդ հարցի լուծման մեջ Գրիմը հիմնվում է Բոպպի վրա՝  
նախնական համարելով բայերը և դերանունները, ընդ որում այս  
բանի հիմնավորման համար նա դիմում է դերանունների ու բա-  
յերի մեջ սկզբնական հնչյուններ՝ մարդկային արտասանական  
օրգանների վաղ արտադրանքներ որոնելուն:

Անհրաժեշտ է նշել, որ Գրիմը լեզվի ծագման բնական հի-  
մունքները որոնելով հանդերձ խոսում է և «գլուտարարների» մա-  
սին՝ չկարողանալով հասնել հարցի հստակ հիմնավորման:

Ստեղծելով պատմական քերականությունը՝ Գրիմը իր նա-

<sup>1</sup> J. Grimm. Auswahl aus den Klaineren Schriften. 1871. էջ 253.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 254.

խորդներից ավելի մեծ հետևողականութեամբ է անցկայնում պատմական վերլուծութիւնը. պատմականութեան սկզբունքի հետևողական կիրառումը լեզվաբանութեանը մատուցած նրա գլխավոր ծառայութիւններից մեկն է և արտահայտվում է, ամենից առաջ, նրանով, որ նա քերականական ձևերի քննութեան ժամանակ փորձում է տարբերակել պատմական շերտերը և քննութիւնը տանել նրանց հաջորդականութեանը համապատասխան: Այս ստումով նա տարբերվում է և՛ Բոպպից, և՛ Ռասկից: Վերջինս նույնիսկ սուր պոլեմիկայի մեջ է մտնում նրա հետ՝ գերմանական թույլ և ուժեղ բայերի քննութեան հաջորդականութեան հարցում: Գեռես Ռասկը տարբերիլ էր գերմանական բայերի խոնարհման 2 շերտ՝ 1) «հասարակ» կամ «բաց» բայեր, որոնց խոնարհման ձևերը կազմվում են առանց արմատական հնչյունների փոփոխութեան, և 2) «արհեստական» կամ «փակ» բայեր, որոնք խոնարհվելիս ենթարկվում են ներքին թեքման: Ռասկը նախ քննում էր առաջինները (որպես ավելի պարզ կազմութիւն ունեցողներ) և ապա երկրորդները՝ առաջնորդվելով գործնական նկատառումներով: Գրիմը վերանվանելով առաջինները՝ «թույլ», երկրորդները՝ «ուժեղ» բայեր, վարվում է հակառակ ձևով. նրա կարծիքով, — որ հետագայում ճշտվեց, — նշված բայերի ձայնավորի փոփոխութիւնը կամ Ablaut-ը հին երևույթ է և որոշում է լեզվի ներքին կառուցվածքը, մինչդեռ «թույլ» բայերը նոր երևույթ են և կազմվել են համեմատաբար նոր շրջանում: Գրիմի անվանումները ամուր հիմքեր գցեցին գերմանական լեզվաբանութեան մեջ, և նրա բացատրութիւնը պատմականորեն ճիշտ դուրս եկավ:

Գրիմի հետազոտութեան պատմականութիւնը արտահայտվում է, երկրորդ, նրանով, որ նա փորձում է հին և նոր ձևերի միջև հաստատել պատմական օղակներ, ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն ձևը պատմական աստիճանական փոփոխութեամբ հանգել առկա ձևին: Պատմական հետազոտութեան ընթացքում նա հաստատում է զարգացման հին, միջին և նոր փուլեր՝ միջին փուլը համարելով հին և նորի կապող օղակը: Գրիմը քերականական և հնչյունական ձևերի զարգացումը դիտում է իբրև անընդհատ պրոցես:

Գրիմի պատմականութիւնն արտահայտվում է, երրորդ, նրանով, որ նա ժամանակակից լեզվի հնչյունական և քերականական կառուցվածքը դիտում է որպես պատմականորեն կազմավորված ամբողջութիւն: Լեզվի պատմական քննութիւնը Գրիմի

Համար միջոց է ոչ միայն սովյալ ժողովրդի պատմության, նրա կուլտուրայի զարգացումը, նրա սկզբնական հոգեկան կերտվածքը վերհանելու, այլև ժամանակակից լեզվի կառուցվածքը բացատրելու համար:

Գրիմի մյուս կարևոր ծառայությունն այն է, որ նա ոչ միայն հետևողականությամբ կիրառում է հնչյունական համապատասխանությունների օրինաչափականության սկզբունքը, այլև այդ համապատասխանությունների տակ տեսնում է պատմական հիմքեր, հնչյունների պատմական անցումները և այդ անցումների սխտեմայնությունը: Ինչպես տեսանք, դեռևս Ռասկը նկատել էր գերմանական բաղաձայնների օրինաչափ համապատասխանությունները հունական և լատինական բաղաձայններին<sup>1</sup>. դեռ ավելին, նա նկատել էր նաև վերին գերմանական բաղաձայնների օրինաչափ տարբերությունները մյուս գերմանական լեզուների բաղաձայններից: Սակայն Գրիմը այս համապատասխանությունները վեր է ածում մի կուտ սխտեմի, ի մի բերում բոլոր յղակները, բացահայտում երևույթի օրինաչափականությունը և տալիս այն ձևակերպումը, որ լեզվաբանության պատմության մեջ հայտնի է «Գրիմի օրենք» անունով (ինքը Գրիմը սրա համար «օրենք» բառը չի գործածում): Ըստ այդ օրենքի՝ հնդեռոպական այլ լեզուների շնչեղ ձայնեղ պայթականներին (սանսկր. bh, dh, gh, հունարենում φ, θ, γ) բուռասկզբում համապատասխանում են գերմանական ձայնեղները (b, d, g), ձայնեղ պայթականներին (սանսկր. bh, dh, gh, հուն. β, θ, γ)՝ խուլերը (p, t, k) և խուլ պայթականներին (p, t, k)՝ խուլ շփականները (f, p, h): Գրիմն ինքը տալիս է հետևյալ աղյուսակը.

Հուն.	p	b	f	t	d	th	k	g	ch
Գրթ.	f	p	b	th	t	d...	k	g	
Հվգ.	b (w)	f		p	d	z	g	ch	k

<sup>1</sup> Այս համապատասխանությունները նկատել էին և այլ գիտնականներ՝ գոթերենի մասնագետ Ֆր. Յունիոսը, շոտլանդերենի ստուգարանական բառարանի հեղինակ Ջեյմս Ջեմիսոնը և ուրիշները, բայց առանց սխտեմափորման. Ռասկի գրքի ավարտումից 10 տարի առաջ Առնոլդ Կաննեն (A. Kanne, Über die Verwandtschaft der griechischen mit der teutschen Sprache, 1804) նշել էր այս համապատասխանությունների երկու երրորդը: Որոշ համապատասխանություններ գեւես 1816 թ. նկատել էր և կրուցիգերը (Cruciger, Harmonie der vier Hauptsprachen: Heybräisch, Griechisch, Latein und Deutsch, 1816):

Գերմանական բաղաձայնների կրած այս փոփոխությունը Գրիմը կոչում է «բաղաձայնների տեղաշարժ»: Գրիմը փաստորեն նշում է նաև «բաղաձայնների երկրորդ տեղաշարժը». սա հատուկ է վերին դերմաներենին, տարբերում է այն մյուս գերմանական լեզուներից և կատարվում է գրեթե նույն ուղղությամբ (b, d, g > p, t, k և այլն): Այս երկրորդ տեղաշարժի մեջ Գրիմը տեսնում է առաջին տեղաշարժի շարունակությունը՝ դրանք պատկերացնելով որպես միևնույն պրոցեսի օղակները: Գրիմը նկատում է այս կապակցությամբ մի կարևոր երևույթ ևս, որ հետագայում հիմք տվեց Վեռների հայտնի օրենքի ձևակերպման համար. հնդկրոպական խուլ պայթականները միայն բառասկզբում են տալիս նորմալ անցում խուլ շփականների, իսկ բառամիջում և բառավերջում տալիս ևն մերթ խուլ շփականներ, մերթ խուլ ձայնեղներ. Գրիմը չի կարողանում բացատրել այս երևույթը, բայց ի մի է բերում բնորոշ օրինակները՝ կոչելով «քերականական հերթագայություն»:

Գրիմը տարբերակում և բացատրում է նաև գերմանական հնչյունական սխտեմի երկու կարևոր օրինաչափությունը՝ Ablaut-ը և Umlaut-ը: Կարևորն այն է, որ արտաքնապես միևնույն բնույթի ունեցող այս երկու երևույթը (երկուսն էլ ներկայացնում են ձայնավորների հերթագայություն) Գրիմը տարբերակում է ըստ ծագման բնույթի. նա նկատում է, որ Ablaut-ը ավելի հին երևույթ է և պայմանավորված է լեզվի ներքին կառուցվածքով, մինչդեռ Umlaut-ը նոր երևույթ է և ներկայացնում է ձայնավորների առնրմանման (ասիմիլյացիայի) արդյունք:

Այս բոլորով հանդերձ, Գրիմը ևս զերծ չէ որոշ սահմանափակությունից ու թերություններից. 1) թեև լեզվի պատմությունը Գրիմը կապում է ժողովրդի պատմության հետ, բայց ժողովրդի պատմության իդեալիստական ըմբռնումը և ռոմանտիզմը Գրիմին հասցնում են հնչյունական և քերականական երևույթների բնույթի և ծագման մեկնաբանության սխալների: Գերմանական հնչյունական և քերականական կառուցվածքի ուսումնասիրության մեջ նա փորձում է հայտնաբերել նախնական ազգային ոգին, ընդ որում պիթ չէ ազգային որոշ սնապարծությունից և միատիցիզմից. այսպես, հնչյունների գերմանական տեղաշարժի պատճառները Գրիմը որոնում է գերմանական ցեղերի սկզբնական հոգեբանական կերտվածքի մեջ, նրանց հակման մեջ դեպի տեղաշարժերը: Գրիմի ռոմանտիզմն ու նացիոնալիզմն առանձնապես վառ արտահայտու-




թյուն են գտնում նրա «Գերմաներին լեզվի պատմության» մեջ. «Մի՞թե համարձակությունը և հպարտությունը ձայնեղների դեպի խուլերը և խուլերի դեպի շնչեղ-խուլերը կատարած տեղաշարժի հիմքը չեն», — գրում է նա<sup>1</sup>: նույնպիսի ումանտիկական երանգ է հաղորդում Գրիմը անվան քերականական սեռի ծագման և դերի մեկնաբանությանը: «Քերականական սեռը, այսպիսով, — գրում է նա, — բնական սեռի տարածումն է յուրաքանչյուր առարկայի վրա: Այդ տարածումը ծագել է լեզվի երևակայության շնորհիվ: Այդ դարմանալի գործողության հետևանքով շատ արտահայտություններ, որոնք նախկինում պարունակում էին մեռած և կենդանությունից զուրկ հասկացություններ, կարծես թե նորից կյանք և զգացմունքներ ձեռք բերեցին. բնական սեռից փոխ առնելով ձևվեր, կազմություններ, թեքույթներ՝ այդ գործողությունը տարածեց ողջ լեզուն տոգորող հրապույրը և միաժամանակ սերտ կապ ստեղծեց խոսքի մասերի միջև: Եթե սեռը լեզվից չքանա, ապա հնարավոր չի լինի պատկերացնել բառերի այն կապը, որով հիանում ենք հունական և լատինական շարահյուսության մեջ»<sup>2</sup>. ումանտիզմը հասցնում է և այն բանին, որ վերականգնումների մեջ Գրիմը թույլ է տալիս կամայականություններ, կառուցում է այնպիսի ձևեր, որոնք չեն հանդիպում, շեղվում է փաստերից: 2) Չնայած լեզվի քննման պատմականությանը, Գրիմն այնուամենայնիվ կաշկանդված է տրադիցիոն որոշ սահմանափակությամբ և չի կարողանում այդ պատմականությունը մինչև վերջ հասցնել: Համեմատելով գերմաներենի հին և նոր շրջանները՝ նա գերադասություն և նախապատվություն է տալիս այնուամենայնիվ հին շրջանին, անցյալով ումանտիկորեն տարվելը տարածում նաև լեզվի պատմության վրա. գերմանական նախկին թեքական ձևերը ն: գերադասում է հետագա վերլուծական ձևերից. այստեղից էլ մի քայլ է մնում դեպի լեզվի փոփոխությունների ըմբռնումը որպես անկում և քայքայում: Գերմանական հնչյունների հետևողական տեղաշարժերը Գրիմը պատկերացնում է ոչ թե լեզվի վարձայնական վերընթաց գծի ձևով, այլ որպես յուրատեսակ փակ շրջան, շարժում շրջանի մեջ, ընդ որում այդ շարժմանը Գրիմը որոշ միաստիկականություն է հաղորդում: Ձայնեղների (Media—b, d, g), խուլերի (Tenues—p, t, k) և շնչեղների (Aspirata—bh, dh, gh, ph, th, kh) շարժումը Գրիմին պատկերանում է հետևյալ ձևով

<sup>1</sup> J. Grimm, Geschichte der deutschen Sprache, 1848. էջ 437.

<sup>2</sup> J. Grimm, Deutsche Grammatik, III, 1831. էջ 346.

(ինչպես սովորաբար գծում են գերմաներենի պատմությանը նվիրված գործերում)



3) Գրիմը ևս տուրք է տալիս տրագիյիսն քերականության ըսբսնումներին և տերմիններին. նա ևս հնչյունների այս բոլոր փոփոխությունները պատկերացնում է որպես «տառերի անցումներ»:

Վիլհելմ ֆոն-Հումբոլդտ.— Եթե արդեն քննության առնված լեզվաբանները պատմա-համեմատական մեթոդի առաջին կիրառողները և համեմատական ու պատմական քերականությունների առաջին օրինակները տվողներն էին, ապա Վիլհելմ ֆոն-Հումբոլդտը (1767—1835) լեզվաբանության պատմության մեջ մտել է որպես պատմա-համեմատական լեզվաբանության առաջին տեսաբանը և ժամանակակից լեզվափիլիսոփայության ու ընդհանուր լեզվաբանության հիմնադիրը: Նա ոչ միայն առաջին մարդն է, որ փիլիսոփայական լայն ընդհանրացումներ է անում պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումների հիման վրա, այլև առաջ է քաշում ու մասամբ լուծում լեզվաբանության բազմաթիվ կարևոր պրոբլեմներ: Նրա ալոդեցությունը մեծ է եղել լեզվաբանության տեսության զարգացման մեջ և նույնիսկ այժմ էլ հանդես է գալիս նեոհումբոլդտականության անվան տակ: Ճիշտ է, Հումբոլդտը իդեալիստ է, որ կրել է Կանտի, մասամբ և Ֆիխտեի ու Շելլինգի ազդեցությունը, բայց այդ իդեալիզմը նրա մոտ հանդես է գալիս դիալեկտիկայի հետ զուգակցված: Նրա բազմաթիվ դրույթները այն «ռացիոնալ հատիկն» են, որ շեն կարող շօգտագործվել լեզվաբանության կողմից:

Հումբոլդտը եղել է պետական դործիչ և գիտնական-լեզվաբան: Նրա ջանքերով 1810 թ. հիմնադրվել է Բեռլինի համալսարանը: Հումբոլդտն ունեցել է հետաքրքրությունների լայն շրջան, լեզվաբանական լայն ընդգրկում, իմացել է մեծ թվով լեզուներ, մշակել մարդու բազմակողմանի կրթության ծրագիր՝ այդ ծրագրի մեջ կարևոր տեղ տալով և լեզվին: Նա զբաղվել է ոչ միայն հնդեւրոպական լեզուներով, հատկապես սանսկրիտով, այլև բասկերենով, չինարենով, ամերիկյան բնիկների, մալայա-պոլինեզյան լեզուներով և այլն:

Լեզվաբանության պատմության համար առանձնապես կարե-  
վոր դեր է խաղացել Հումբոլդտի «Ճավա կղզու կավի լեզվի մա-  
սին»<sup>1</sup> աշխատության ներածութիւնը, որ կրում է «Մարդկային  
լեզվակառուցվածքի տարբերության և մարդկային սեւի հոգևոր  
զարգացման վրա նրա գործած ազդեցության մասին» վերնագի-  
րը<sup>2</sup>: Այստեղ Հումբոլդտը նպատակ է դնում քննարկել լեզվի ա-  
ռանձնահատկութիւնները, լեզուների տիպերն ու փոխհարաբերու-  
թիւնը, ցույց տալ դրանց կապը մարդկային կուլտուրայի, մար-  
դու հոգևոր զարգացման և մտածողության հետ: Այս նպատակին  
իրագործելիս Հումբոլդտը շոշափում է դրեթե բոլոր կարևոր լեզ-  
վաբանական պրոբլեմները:

Մինչև այս աշխատության հրապարակումը Հումբոլդտը հան-  
դես է եկել մի շարք այլ լեզվաբանական գործերով, որոնք զգալի  
մասով նույնպես կարևոր դեր են խաղացել լեզվաբանության  
պատմության մեջ և նախապատրաստել այդ աշխատության երե-  
վան գալը:

Դեռևս 1811 թ. որպես Ադելունգի և Ֆատերի «Միհրդատի»  
հավելված հրապարակվել է Հումբոլդտի հոդվածը բասկերենի մա-  
սին<sup>3</sup>, որ այդ գրքի ամենափայլուն էջերից մեկն է: Հումբոլդտը  
հետագայում գրում է բասկերենի հետ կապված այլ աշխատու-  
թիւններ ևս<sup>4</sup>:

1820 թ. Հումբոլդտը հանդես է գալիս «Լեզուների համեմա-  
տական ուսումնասիրության մասին» կիրառված նրանց զարգաց-  
ման տարբեր շրջանների նկատմամբ» աշխատութեամբ<sup>5</sup>, որ պատ-  
մա-համեմատական լեզվաբանության հիմնաքարերից մեկն է: Այս

1 W. von Humboldt, Über die Kavisprache auf der Insel Ja-  
va, I III, Berlin, 1836—1840.

2 W. von Humboldt, Über die Verschiedenheit des menschli-  
chen Sprachbaues und ihren Einfluss auf die geistige Entwicklung des  
Menschengeschlechts, „Gesammelte Werke“, VI, Berlin, 1848.

3 Berichtigungen und Zusätze zum ersten Abschnitt des zweiten  
Bandes des „Mithridates“. über die kantabrische oder baskische Sprache,  
1811.

4 W. von Humboldt, Ankündigung einer Schrift über die  
baskische Sprache und Nation, nebst Angabe des Gesichtspunktes und  
Inhalts desselben, 1812. Über Urbewohner Hispaniens vermittelt der  
baskischen Sprache, 1821.

5 W. von Humboldt, Über das vergleichende Sprachstudium  
in Beziehung auf die verschiedenen Epochen der Sprachentwicklung,  
AHRhKKAWB, 1820.

աշխատութեան մեջ Հումբոլդտը դնում է լեզվաբանութեան որպէս անկախ գիտութիւն ձևավորվելու անհրաժեշտութեան հարցը. նրա կարծիքով՝ լեզուների համեմատական ուսումնասիրութիւնը կկարողանա հաջողութեամբ կատարել իր առջև դրված խնդիրները միայն այն դեպքում, եթէ դառնա հետազոտութեան ինքնուրույն բնագավառ: Այստեղ Հումբոլդտը աշխատում է պարզաբանել նաև լեզուների կառուցվածքների զուգահրժման եղանակներն ու նպատակները:

Հումբոլդտի մյուս լեզվաբանական աշխատութիւններից հիշատակելի են հետևյալները՝ «Քերականական ձևերի ծագման և գաղափարների զարգացման վրա նրանց գործած ազդեցութեան մասին», «Լեզուների Իսպանիայի բնույթի մասին», «Տաուայի գրութեան և լեզվի կառուցվածքի հետ նրա ունեցած կապի մասին», «Երկակի թվի մասին», «Տեղի մակբայների՝ դերանվան հետ ունեցած ցեղակցութեան մասին», «Գրի՝ լեզվի հետ ունեցած կապի մասին»<sup>1</sup> և այլն:

Ունենալով կուլտուրայի լայն ըմբռնում, կուլտուրան համարելով բնութեան ենթարկումը մարդուն գիտութեան և արվեստի օգնութեամբ՝ Հումբոլդտը լեզվաբանութեան խնդիրները կապում է կուլտուրայի պատմութեան խնդիրների լուծման հետ. ըստ նրա՝ «լեզվի պատմութիւնը կուլտուրայի ընդհանուր պատմութեան մի մասն է»: Լեզուն սերտորին կապված է մարդու հոգևոր զարգացման, նրա կուլտուրայի, նրա անդաշարժերի հետ: Կուլտուրայի բնագավառում կատարված ամեն մի փոփոխութիւն, կուլտուրայի ամեն մի վիճակ արտահայտվում է լեզվի մեջ. «Լեզուն խորը կերպով ընդգրկված է մարդու հոգևոր զարգացման մեջ,— գրում է Հումբոլդտը,— այն ուղեկցում է մարդկութեանը նրա տարածական տեղաշարժերի ամեն մի աստիճանում և կուլտուրայի ամեն մի վիճակ նկատելի է դառնում և լեզվի մեջ»<sup>2</sup>: Այստեղից էլ բխում է Հումբոլդտի ձգտումը բացահայտել լեզուների ներքին առանձնահատկութիւններն ու փոխհարաբերութիւնը՝ մարդկային կուլտուրայի ընդհանուր պատկերը, ժողովուրդների առանձնահատկու-

<sup>1</sup> W. von Humboldt. Über das Entstehen der Grammatischen Formen und ihren Einfluss auf die Ideenentwicklung, 1821. Über die Nationalcharakter der Sprachen, 1822. Über die Buchstabenschrift und deren Zusammenhang mit dem Sprachbau, 1824. Über den Dualis, 1827. Über die Verwandtschaft der Ortsadverbien mit dem Pronomen, 1830. Über den Zusammenhang der Schrift mit der Sprache, 1836.

W von Humboldt, Gesammelte Werke, VI, 1848, էջ 5:

թյուններն ընդհանրությունները պարզութանելու համար: Հումբոլդտը զարգացնում է Հերդերի արտահայտած սաղմնային միտքը առանձին: լեզուների՝ ազգային՝ ոգու ու բնավորության հետ ունեցած կապի մասին:

Հումբոլդտի լեզվափիլիսոփայությունը իդեալիստական է ինչպես նշել ենք, մեծ շահով հենվում է Կանտի, մասամբ և Գիլտեի ու Շելլինգի վրա. զգալի ընդհանրություն կա նաև նրա և Հեգելի հայացքների միջև: Չնայած սրան՝ որոշ հետազոտողներ ժրստում են Հումբոլդտի ուղղակի կախումը Կանտից կամ Հեգելից՝ նշելով, որ նա ոչ Կանտի հետևորդ է, ոչ Հեգելի՝ նրա լեզվաբանական հայացքների ձևավորման համար կարևոր դեր է խաղացել նաև Հերդերի՝ լեզվի բնույթի ծագման վերաբերյալ ուսմունքը:

Լեզվաբանական ամենաառողջ և ճիշտ դատողությունները Հումբոլդտի մոտ զուգակցվում են մշուշապատ միասնակայի հետ: Լեզուն Հումբոլդտը դիտում է շարժման և զարգացման մեջ, բայց այդ շարժման ու զարգացման պատճառները նրա մոտ իդեալիստական մեկնաբանություն են ստանում: Լեզուն նրա համար ոչ այլ ինչ է, քան ոգու արտահայտություն, ներքին հոգևոր ուժ, մարդու առանձնահատուկ բնության ներքին պահանջների գրսևորում: Լեզուն յուրատեսակ միջնորդ է մարդու ներաշխարհի և արտաքին աշխարհի միջև. «Լեզվի իրական և հիմնական ներգործությունը մարդու վրա պայմանավորվում է նրա մտածող և մտածողության մեջ ստեղծագործող ուժով. այդ գործունեությունը լեզվի համար իմանենտ է և կոնստիտուտիվ»<sup>2</sup>: Արտաքին աշխարհից մարդն առանում է միայն անկարգ, քաոսային տպավորություններ. լեզուն, որը միջնորդ է արտաքին աշխարհի և «մտքի ներքին ինքնակառուցողական գործունեության» միջև, կարգավորում է դրանք, վերածում հասկացությունների սիստեմի: Լեզուն Հումբոլդտը դիտում է որպես իմացության՝ Կանտի նշած ապրիորի և պոստերիորի տարրերի (տրվյալ դեպքում՝ լեզվական ձևի և լեզվական նյութի) յուրատեսակ համադրություն, ընդ որում գիտակցության ապրիորի ձևերի ու կատեգորիաների կանտական ուսմունքը արձագանք է գտնում Հումբոլդտի «ներքին ձևի» ուսմունքի մեջ, որի մասին առաջիկայում կխոսենք: Կանտականությունն այս դեպքում Հումբոլդտը լրացնում

<sup>1</sup> Հմտ. H. A r e n s, Sprachwissenschaft, Freiburg--München, 1955, էջ 183:

<sup>2</sup> W. v o n H u m b o l d t, Gesammelte Werke, VI, Berlin, 1848, էջ 20--21:

է նրանով, որ նույն այդ կանտական դիրքերից ներմուծում է լեզուն, փորձում պարզել լեզվի դերը կանտական դուալիստական սխտեմի մեջ: Կանտի ազդեցութեամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Հումբոլդտը լեզվի ծագումն ու զարգացումը կապում է իր գոյութեամբ անկախ և սկզբնական հոգեկանի հետ: Լեզուն նրա համար «հոգի է իր ամբողջութեան մեջ», որ զարգանում ոգու օրենքներով: Ոգին և գիտակցութունը նրա համար մեկնակեա են, որոնք ամեն ինչի սկիզբ են, բայց որոնց սկզբնավորման մասին Հումբոլդտը լռում է: Ավելորդ չէ հիշել, որ Հումբոլդտը հստակ կերպով չի տարբերում «ժողովրդի ոգի» և «մտածողութուն» հասկացութիւնները, չի պարզում դրանց փոխհարաբերութիւնը, շփոթում է իրար հետ:

Հումբոլդտի լեզվափիլիսոփայութեան մեջ առանձնահատուկ տեղ է բռնում նրա ուսմունքը լեզվական անտինոմիաների մասին: Ինչպես հայտնի է, Կանտի դուալիստական փիլիսոփայութեան մեջ անտինոմիաների ուսմունքը ծառայում էր նրա ազնոստիցիզմի հիմնավորմանը. Կանտը, նշելով մարդկային իմացութեան սահմանափակութիւնը, իրերի էութեան մեջ թափանցելու անկարողութիւնը, գտնում էր, որ մարդկային բանականութեանը հատուկ են 4 կարգի հակասութիւններ. 1) հավասարապես ապացուցելի է և՛ այն, որ աշխարհը սահմանափակ է ժամանակի ու տարածութեան մեջ, և՛ այն, որ այն անսահմանափակ է. 2) և՛ այն, որ ամեն մի սուբստանց անվերջ բաժանելի է, և՛ այն, որ կան անբաժանելի տարրեր. 3) և՛ այն, որ աշխարհի օրենքները գործում են անհրաժեշտորեն, և՛ այն, որ առկա է ազատութիւն. 4) և՛ այն, որ գոյութիւն ունի աշխարհի սկզբնապատճառ մի էակ, և՛ այն, որ ոչ աշխարհում, ոչ էլ նրանից դուրս այդպիսի էակ գոյութիւն չունի: Այսպիսով, Կանտը նկատելով աշխարհի զարգացման հակասականութիւնը, այն նախ՝ վերագրում է ոչ թե օբյեկտիվ իրականութեանը, այլ բանականութեանը և երկրորդ՝ սահմանափակում է միայն շրտով: Կանտի անտինոմիաների ուսմունքի մեջ այս առումով կա դիալեկտիկայի տարր, բայց սահմանափակ ձևով և իդեալիստորեն միայն բանականութեանը վերագրված:

Հումբոլդտի լեզվատկան անտինոմիաները նույնպես լեզվի դիալեկտիկայի բացահայտման սաղմեր են, բայց մեկնարանված իդեալիստորեն: Ըստ Հումբոլդտի՝ հավասարապես ապացուցելի են՝ 1) և՛ այն, որ լեզուն ժողովրդի ստեղծագործութիւն է, և՛ այն,

որ լեզուն անհատական ստեղծագործություն է. 2) և՛ այն, որ մարդկային լեզուն առանձին լեզուների անսահմանափակ քանակություն է, և՛ այն, որ բազմազան լեզուները հանդես են գալիս որպես մեկ մարդկային լեզու. 3) և՛ այն, որ լեզուն անընդհատ գործունեություն է, փոփոխական էություն, և՛ այն, որ լեզուն այդ գործունեության արդյունքն է, կայուն մի բան. 4) և՛ այն, որ լեզուն ասվող մի բան է, տվյալ անհատի կողմից տվյալ մոմենտին ստեղծագործվող մի բան, և՛ այն, որ լեզուն ստեղծագործված մի բան է, նախորդ սերունդների գործունեության արդյունք, տրադիցիա. 5) և՛ այն, որ լեզուն օբյեկտիվ էություն է, որ անհատի կողմից ընկալվում է որպես նրանից դուրս գտնվող, նախորդ սերունդներից ժառանգված, օտար մի բան, և՛ այն, որ լեզուն սուբյեկտիվ էություն է, որ ստեղծագործվում է իր իսկ անհատի կողմից և այլն: Հստ Հումբոլդտի՝ լեզուն միաժամանակ և՛ հոգևոր երևույթ է, և՛ մարմնական, և՛ ձև է, և՛ բովանդակություն, նյութ, և՛ մտավոր (ինտելեկտուալ) էություն է, և՛ զգացական, և՛ արտապատկեր է (Abbild), և՛ նշան (Zeichen) և այլն:

Լեզվի այս անտինոմիաները կամ հակասությունները Հումբոլդտը փորձում է լուծել մարդկային բնության, մարդկային գիտակցության միասնության դրույթով, ընդ որում այդ միասնությունը դիտվում է որպես հենց սկզբից տրված, անբացատրելի մի բան:

Տեսնենք, թե ինչպես է պատկերացնում լեզվի էությունը Հումբոլդտը, և ինչպիսի կոնկրետ արտահայտություն է գտնում անտինոմիաների ուսմունքը նրա լեզվափիլիսոփայության մեջ:

Ինչպես տեսանք, XVII—XVIII դարերում լեզվի ըմբռնումը մնում էր մետաֆիզիկական, ոչ պատմական. լեզուն քննվում էր որպես մեկընդմիշտ տրված փաստերի և նորմաների ամբողջություն, որպես պատրաստի գործ և ոչ որպես պրոցես: Լեզվական հետազոտության կենտրոնը կազմում էր գրավոր լեզուն՝ իր համեմատաբար կայուն ձևերով: Այս մետաֆիզիկական հայացքը խորանում էր ռացիոնալիստական-տրամաբանական քերականության վերացական, ոչ-պատմական սխեմաների առկայության պայմաններում: Լեզվաբանության պատմության մեջ Հումբոլդտը առաջինն է, որ հենվելով պատմա-համեմատական լեզվաբանության նախնական տվյալների վրա, ի մի բերելով սեփական լեզվական դիտողությունները և թափանցելով գիտության ու փիլիսոփայության նորածագ գաղափարների մեջ՝ տալիս է լեզվի պատմական ըմ-

բունման փիլիսոփայական հիմնավորումը: Լեզվի նկատմամբ նախ-  
կին մոտեցմանը հակառակ, որ փորձում էր տալ լեզուն փոփոխու-  
թյունից ապահովող կանոններ, մեկընդմիջտ նորմավորել նրա կա-  
նոններն ու բացատրությունները, Հումբոլդտը դնում է լեզուն  
սումնասիրելու և նրա պատմական զարգացումը վեր հանելու պա-  
հանջը: Եթե լեզվական հարցերի ֆիլոլոգիական քննության, գրա-  
վոր հուշարձանների մեկնաբանության ժամանակ փաստորեն աշ-  
քաթող էին արվում խոսող մարդիկ՝ իրենց խոսողական կենդանի  
գործունեությամբ, ապա Հումբոլդտը հենց այս կենդանի լեզվա-  
կան գործունեությունն է քաշում առաջին պլանի վրա: Լեզվաբա-  
նության պատմությանը Հումբոլդտի մատուցած կարևոր ծառա-  
յութություններից մեկը այս տեսակետից այն է, որ նա լեզուն դիտում  
է ոչ թե որպես պատրաստի գործ (Werk, έργον)՝ այլ որպես գոր-  
ծունեություն (Tätigkeit, ενεργεια): Այս առումով Հումբոլդտը կա-  
րողանում է նկատել լեզվի զարգացման դիալեկտիկան. «Լեզուն  
իր իսկական էության մեջ կայուն է և յուրաքանչյուր ակնթարթում  
անցողիկ»<sup>1</sup>: Լեզուն գոյություն ունի ոչ թե մեռած տեքստերում,  
այլ կենդանի խոսքի մեջ: Լեզուն «ոգու» անընդհատ գործունեու-  
թյուն է, որ ձգտում է տարրոշված հենչունը դարձնել մտքի ար-  
տահայտություն: Լեզուն ներկայացնում է կենդանի խոսողական  
գործունեության բոլոր ակտերի գումարը, և որպեսզի գաղտփար  
կազմենք լեզվի կենդանի էության մասին, պետք է ուշադրությու-  
նը կենտրոնացնենք կապակցված խոսքի վրա. «Լեզվի մասնա-  
ումը բառերի և կանոնների՝ գիտական վերլուծության մեռած  
արդյունք է միայն»<sup>2</sup>: Լեզուն Հումբոլդտը պատկերացնում է որպես  
անընդհատ ստեղծագործական պրոցես, ընդ որում այդ պրոցեսը  
տեղի է ունենում մշտապես ու միատեսակ, որպեսզի հնարավոր  
դարձնի մարդկանց փոխադարձ հաղորդակցումը և սերունդները  
կապի միմյանց հետ ու փոխանցվի սերնդից սերունդ: Այստեղից  
էլ բխում է կենդանի լեզուների ուսումնասիրության պահանջը: Լե-  
զուն որպես պատրաստի գործ քննելը, Հումբոլդտի կարծիքով,  
հնարավորություն չի տալիս բացատրել լեզվի ծագումը:

Լեզուն որպես ոգու անընդհատ գործունեություն սահմանելը  
Հումբոլդտը ճիշտ է համարում և այն պատճառով, որ ոգու գոյու-  
թյունը կարելի է պատկերացնել հենց միայն գործունեության մեջ:

W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 41:

<sup>2</sup> Նույն տեղը:



Սակայն՝ Իսաաք Բաբելոնի լեզվի որպես անընդհատ գործունեության դրույթը՝ Հումբոլդտը միտածամանակ ճիշտ է համարում և այն, որ լեզուն գոյություն ունի նաև որպես խոսքի անընդհատ արտադրանքների գումար, որպես արդեն ձևավորված բառապաշարի և քերականական կանոնների ամբողջություն, որպես գրավոր ձևի մեջ քարայացած մի բան, որպես «գործ»: Այս հակասությունը (անտինոմիան) Հումբոլդտի մոտ դրսևորվում է որպես խոսքի և լեզվի հակասություն: Խոսելով լեզվի՝ ոգու անընդհատ «գործունեություն» լինելու մասին, Հումբոլդտը փաստորեն նկատի ունի կենդանի խոսքը. խոսելով լեզվի որպես կենդանի խոսքի արտադրանքի, «գործի» մասին՝ Հումբոլդտը նկատի ունի լեզուն. «Լեզվից, որպես մեր կողմից սմեն անգամ արտասանվող խոսքի, պետք է տարբերել լեզուն՝ որպես այդ խոսքի արտադրանքների զանգված»<sup>1</sup>: Այսպիսով՝ լեզվի որպես գործունեության և լեզվի որպես «գործի» անտինոմիայի առաջբաշումը Հումբոլդտի մոտ ոչ այլ ինչ է, հիմ է խոսքի և լեզվի տարբերակման պահանջ: Այս պահանջը հետագայում ավելի վճռականորեն ու նոր ձևով դրվում է Սոսյուրի կողմից և կարևոր դեր խաղում լեզվաբանության պատմության մեջ: Լեզուն, որպես պատրաստի արտադրանքների զանգված, տարբերելով խոսողական գործունեության առանձին սկտերից՝ Հումբոլդտը նշում է, որ լեզուն՝ դարաշրջանների ընթացքում ինքնուրույն ուժ է դառնում: Լեզուն միշտ ունի արդեն մեռած զանգվածի վերածված ձևեր, բայց այդ զանգվածի մեջ իսկ արդեն առկա են նորի սաղմերը: Յուրաքանչյուր խոսողական ակտ ներկայացնում է լեզվի զանձերի օգտագործում: Լեզուն տալիս է լոկ խոսքի սխեման, իսկ խոսողը ձևավորում է իր խոսքը յուրովի. «նախադասության և խոսքի համար լեզուն սահմանում է միայն կանոնավորող սխեմաներ (die regelnde Form), նրանց անհատական ձևավորումը թողնելով խոսողի քմահաճույքին»<sup>2</sup>: Սա չի նշանակում, թե Հումբոլդտը լեզուն նախորդել է տալիս խոսքին: Ընդհակառակն, լեզվի գոյը կենդանի խոսքն է. լեզվի ստեղծումը չի սկսվում առարկաները բառերով նշանակելուց և ապա դրանք խոսքի մեջ միացնելուց. բառերը չեն նախորդում խոսքին, ընդհակառակն, բառերը ծագում են խոսքից: Բառերը լեզվի վերջին ստեղծագործությունն են. նրանց առաջացմամբ լեզուն ավարտում է իր ստեղծագործությունը: Կենդանի խոսքի այս կարևորություն

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 62:  
Նույն տեղը, էջ 76:

հետ էլ կապված են Հումբոլդտի ուսմունքի երկու կարևոր կողմերը, որոնք հետագայում լայն արձագանք են գտնում Շտայնթալի և հոգեբանական ուղղութիւնի այլ ներկայացուցիչների մոտ. առաջին՝ Հումբոլդտը բայր դիտում է որպես նախադասութեան գլխավոր տարրը, որ հակադրվում է մյուս խոսքի մասերին՝ որպես կենդանի և կենդանութուն տվող սկզբունքը՝ անկենդան նյութին: Երկրորդ՝ Հումբոլդտը փաստորեն բառի յուրաքանչյուր խոսքային գործածութիւնն դիտում է որպես անկախ բառ՝ առանց ընդունելու բառի բազմիմաստութիւնը. «Ոչ ոք բառը այնպես չի հասկանում, ինչպէս մի ուրիշը. ամեն հասկացում միաժամանակ չհասկացում է, մտքերի ամեն մի համաձայնութիւն՝ միաժամանակ անհամաձայնութիւն»<sup>1</sup>: Հասկանալու պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասկացողի գրգռման հարմոնիկ լարում: Այս տեսակետը Շտայնթալի և Պոտերնյայի մոտ հիմք է դառնում սուբյեկտիվ-հոգեբանական եզրակացութիւնների համար: Դնելով լեզվի և խոսքի տարբերակման հարցը և ուշադրութիւնը կենտրոնացնելով խոսքի վրա՝ Հումբոլդտը դրանով իսկ հակադրվում է նախորդ ֆիլոլոգիական լեզվաբանութեանը և գրական լեզվի ուսումնասիրութիւնից ծանրութեան կենտրոնը տեղափոխում է կենդանի խոսակցական լեզվի վրա, բարբառների ուսումնասիրութեան վրա:

Լեզվի զարգացումը Հումբոլդտը դիտում է որպես ոգու զարգացման օրենքների գործողութեան արտահայտութիւն: Նրա համար լեզվի զարգացման օրենքը լեզվի ձևն է: Քանի որ լեզվի մեջ լրիվ արտահայտութիւնն է գտնում ժողովրդի ոգին, ուստի և լեզվի զարգացման տարբեր աստիճանները արտացոլում են ժողովուրդների հոգևոր զարգացման փուլերը: Կանգնած լինելով պատմականութեան սկզբունքի վրա՝ Հումբոլդտն այնուամենայնիվ առաջ է քաշում լեզվի գոյութեան երկու շրջանի հակապատմական ուսմունքը. ըստ այդ ուսմունքի՝ առաջին շրջանում լեզուն ստեղծվում է և ինքն է որպես նպատակ ծառայում, իսկ մտածողութիւնը գտնվում է խանձարուրների մեջ, երկրորդ շրջանում՝ լեզուն գործածվում է, դառնում միջոց, դադարում զարգանալուց, մինչդեռ մտածողութիւնը զարգացում է ապրում: Առաջին շրջանում «լեզվի հնչաստեղծական մղումը դեռևս անման և կենդանի գործունեութեան մեջ է»։ Երկրորդ շրջանում «գոնե արտաքին լեզվական ձևի կատարյալ ձևավորումից հետո մի թվացող խաղաղ վիճակ է

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, III, էջ 261—262:

սկսվում, որին հետևում է այդ զգայական ստեղծագործական մրդման (schöpferisches sinnliches Trieb) նվազումը (Abnahme)»<sup>1</sup>: Հումբոլդտի այս դրույթը հետագայում հիմք է տալիս Շլայխերի և ուրիշների՝ լեզվի երկու շրջանի ծայրահեղության հասցված հակադրման համար:

Ինչպես տեսանք, Հումբոլդտը լեզուն սերտորեն կապում է մտածողության հետ: Սակայն այս կապը նա ըմբռնում և մեկնաբանում է իդեալիստական հիմունքներով: Մտածողության առարկան Հումբոլդտի համար ոչ թե օբյեկտիվ հիմք ունի, այլ կազմվում է սուբյեկտիվ գործունեությամբ: Ոչ մի պատկերացում չի ծագում սրպես գոյություն ունեցող առարկայի հայեցում, որպես մերկ ընկալում: Պատկերացումները ծագում են զգայությունների գործունեության և ներքին հոգեկան պրոցեսի միացմամբ: Այս բանը կատարվում է լեզվի օգնությամբ, որն իր մեջ զուգորդում է օբյեկտիվությունն ու սուբյեկտիվությունը, հանդես գալիս որպես սուբյեկտի և օբյեկտիվ աշխարհի միջնորդ. «Նրա օգնությամբ հոգևոր ձգտումը իրեն համար ճանապարհ է բացում շրթունքների միջոցով դեպի արտաքին աշխարհը, և հետո այդ ձրգտման արդյունքը բառի տեսքով լսողության միջոցով վերադառնում է ետ: Այսպիսով՝ պատկերացումն օբյեկտիվանում է՝ միևնույն ժամանակ շարվելով սուբյեկտից»<sup>2</sup>: Այս դրույթի մեջ է հենց, որ երևան է գալիս օբյեկտիվության և սուբյեկտիվության անտիոնոմիան. սուբյեկտիվ պատկերացումը բառի միջոցով օբյեկտիվանում է, լսողության համար դառնում օբյեկտ. սակայն սրանով այն չի կորցնում իր սուբյեկտիվությունը, որովհետև վերջ ի վերջո այս կամ այն սուբյեկտի պատկերացումն է:

Սուբյեկտիվության և օբյեկտիվության հակասությունը առնչվում է նաև խոսքի և հասկացման (խոսելու և հասկանալու) հակասության հետ, ընդ որում վերջիններս, ըստ Հումբոլդտի, ոչ այլ ինչ են, եթե ոչ լեզվական կարողության դրսևորում. «խոսքի և հասկացման փոխանակումը, — գրում է Հումբոլդտը, — տվյալ բովանդակության փոխանցում չէ (ձեռքից ձեռք): Հասկացողի, ինչպես և խոսողի մեջ այդ բովանդակությունը պետք է զարգանա սեփական ներքին ուժով. այն բոլորն, ինչ ստանում է առաջինը, միայն նրա հարմոնիկ լարող գրգռումն է»<sup>3</sup>:

<sup>1</sup> W von Humboldt, Gesammelte Schriften, VII, 2, էջ 160.

W von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 53—54:

<sup>3</sup> Նույն տեղը, III, էջ 263:

Լեզուն մտածողության անհրաժեշտ նախապայմանն է: Առանց լեզվի հնարավոր չէ հասկացությունների կալմամբորումը և գրանով իսկ՝ մտածողությունը: Լեզուն մտածողության նախապայմանն է նաև այն դեպքում, երբ այն տեղի է ունենում լռության մեջ և մարդու լիակատար մեկուսացման դեպքում: Սակայն լեզուն իսկապես զարգանում է միայն հասարակության մեջ. մտրդը հասկանում է իրեն այն շարժում, որ շարժում նրա բառերը հասկանալի են և ուրիշներին: Մեր կողմած բառը անցնելով ուրիշներին՝ դառնում է բնդհանուր սեփականություն: Այդ ընդհանուրի մեջ տմեն մեկն ունի իր անհատական ձևափոխությունը, որը համահարթվում և կատարելագործվում է մյուսների անհատական ձևափոխություններով:

Լեզուն և՛ նույնն է մտածողության հետ, և՛ միաժամանակ տարբեր նրանից: Այս հանգամանքը ազդակ է հանդիսանում մտածողության համար: Նույնությունը նրան գործողության ազդակ է տալիս, իսկ տարբերությունը զգալ է տալիս սեփական ներքին առաջացումների էությունը: Խոսքային գործունեությամբ անհատական ընկալումները միանում են մարդու ընդհանուր բնության հետ: «Յուրաքանչյուր մարդու մեջ դրված է լեզուն իր լրիվ ծավալով, որ նշանակում է միայն այն, որ յուրաքանչյուր մարդու մեջ դրված է որոշակի ուժի կողմից կառավարվող, ազդակավորվող և սահմանափակվող ձգտում՝ իրականացնելու լեզվի գործունեությունը սեփական ներքին և արտաքին պահանջներին համապատասխան, ընդ որում այնպես, որ հասկացվի ուրիշների կողմից»<sup>1</sup>:

Լեզուն, այսպիսով, էական դեր է խաղում մարդու զարգացման մեջ՝ ազդելով նրա էության և բնույթի վրա: Այս դրույթի մեջ արտահայտվում է Հումբոլդտի կողմից լեզվի և մտածողության նույնացման որոշ տեղեկնց: Լեզուն միջնորդ է մարդու և արտաքին աշխարհի միջև: «Քանի որ մարդու ընկալումը և գործունեությունը կախված են նրա պատկերացումներից, ապա նրա վերաբերմունքը դեպի առարկաները ամբողջովին պայմանավորված է լեզվով» Արանով մարդն, ընկնում է լեզվի, այն է՝ մտրբների լեզվի իշխանության տակ: Ըստ Հումբոլդտի՝ յուրաքանչյուր լեզու շրջան է գծում այն ժողովրդի շուրջը, որին պատկանում է. իր ծննդյան օրից մարդն ընկնում է այդ շրջանի մեջ և նրանից կարող է դուրս գալ միայն այն ժամանակ, երբ անցնում է մի այլ շրջան. օտար լեզվի ուսումնասիրությունը նոր տեսակետի յուրացում է:

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 55:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 60:

Հումբոլդտը բառի մեջ տեսնում է հնչյունական կողմի և հասկացութեան միացում: Բառերը առանձին հասկացութեաններին նշաններն են, սակայն ինչպես որ գիտակցութեանը Հումբոլդտի համար սկզբների սկիզբն է, որ նախորդում է լեզվին, այնպես էլ նախադասութեանը, ըստ նրա, նախորդում է բառին: Այսպիսով, Հումբոլդտի իդեալիզմը խանգարում է լեզվի և մտածողութեան կապի իսկական դիալեկտիկական լուծմանը:

Լեզուն Հումբոլդտի համար «մտքի կազմավորող օրգանն է» (des bildende Organ des Gedanken)<sup>1</sup>: Մտածողութեան անհրաժեշտաբար կապված է լեզվի հետ, առանց որի չի կարող հասնել պարզութեան և պատկերացումը դարձնել հասկացութեան: Սակայն դնելով լեզվի և մտածողութեան կապի հարցը՝ Հումբոլդտը միաժամանակ նշում է, որ լեզուն մտածողութեան համար բեռ է, և մտածողութեանը աշխատում է ազատվել այդ բեռից: Լեզվի և մտածողութեան փոխհարաբերութեան այս հակասական ըմբռնումը հիմք է տվել հետագա հակասական եզրակացութեանների և Հումբոլդտի ուսմունքը տարբեր ձևով օգտագործելու համար: Եթե Շտայնթալը, սնունդ առնելով լեզվի՝ մտածողութեան համար կապանք լինելու հումբոլդտյան դրույթից, ժխտում է տրամաբանական և քերականական կատեգորիաների կապը, ապա նեոհումբոլդտականները, ընդհակառակն, լեզուն դիտում են որպես մարդկային աշխարհայացքը որոշող գործոն:

Լեզվի և մտածողութեան կապի դրույթը ևս Հումբոլդտը հիմնավորում է մարդկային բնութեան միասնականութեան դրույթով, որ հանդես է դալիս որպես անբացատրելի մեկնակետ և ընդհանրապես կարևոր դեր է խաղում նրա լեզվափիլիսոփայական սիստեմում. «Մտածողութեան, խոսքի օրգանների և լսողութեան անխզելի կապը լեզվի հետ պայմանավորված է նախասկզբնական և իր էութեամբ անբացատրելի կառուցվածքով»<sup>2</sup>:

Այս հիման վրա էլ Հումբոլդտը փորձում է բացահայտել լեզուների տիպական այն առանձնահատկութեանները, որոնք հնարավորութեան են տալիս դատելու ժողովուրդների հոգեկան կերտվածքի ու մտածողութեան եղանակի տարբերութեանների մասին: Հենվելով Ա. Շլեգելի ձևաբանական դասակարգման վրա՝ Հումբոլդտը նրա տված անշատական, կցական և թեքական տիպերին:

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 51.

<sup>2</sup> Նույն տեղը:

ավելացնում է մի նոր տիպ՝ բազմահամադրականը (պոլիսինթե-  
տիկ). այս տիպի մեջ է դնում նա ամերիկյան բնիկների իրեն  
հայտնի մի շարք լեզուներ: Միաժամանակ Հումբոլդտը փորձ է  
անում լեզուների այս ձևաբանական տիպերի միջև սահմանել  
պատմական հաջորդականություն՝ անջատականությունը, կցակա-  
նությունը և թեքականությունը համարելով լեզուների զարգացման  
աստիճաններ: Սրանով նա հակադրվում է Ֆր. Շլեգելի կոնցեպ-  
ցիային, որ մետաֆիզիկական անհաղթահարելի սահման էր տես-  
նում կցական և թեքական լեզուների միջև: Սակայն դրանք համա-  
րելով զարգացման հաջորդական աստիճաններ և թեքականության  
մեջ տեսնելով ժողովրդի ողու կատարյալ արտահայտությունը՝  
Հումբոլդտը բոլորովին էլ չի հանգում թեքական լեզուների բա-  
ցարձակ առավելության գաղափարին նա նշում է նաև նախորդ  
աստիճանների մասնակի առավելությունները:

Հումբոլդտի լիբլարանական հայացքների մեջ կարևոր տեղ է  
յունում ձևի և բովանդակության պոլիգլոսի: Հումբոլդտի ուսմուն-  
քը հերքին ձևի մասին նրա ուսմունքի անկյունաքարերից մեկն է  
լայն ազդեցություն է թողել լեզվական ձևի հետագա ըմբռնուն-  
ների վրա:

Տրագիցիոն ֆիլոլոգիական և արամբանական քերականու-  
թյունների ներկայացուցիչները լեզվական ձևն ըմբռնում էին մե-  
տաֆիզիկորեն, միասնիստորեն և միակողմանիորեն: Լեզվական  
ձևը նրանց համար փաստորեն սահմանափակվում էր քերականա-  
կան ձևով, որ համարվում էր արամբբանական կատեգորիաների  
արտաքին կեղևը: Քերականական ձևերը ըմբռնվում էին որպես  
մեկընդմիջ տրված, անփոփոխ, քերականների կոշմից նոր-  
մավորման ենթակա ձևեր: Լեզվա-քերականական ձևը նրանց հա-  
մար ոչ թե բազմաթիվ անցումներով պայմանավորված, բովան-  
դակության հետ դիալեկտիկորեն միահյուսված մի բան է, այլ  
հասկացությունների լեզվական նշանների մեխանիկական միա-  
վորման արտահայտություն:

Քննելով լեզվական ձևերի բազմազանությունը և հանդես  
գալով արագիցիոն մետաֆիզիկական հայացքների դեմ՝ Հումբոլդ-  
տը տալիս է լեզվական ձևի վերաբերյալ մի բազմակողմանի ուն-  
մունք: Քացի «նորտքին ձևից», Հումբոլդտը տարբերում է նաև  
«ներքին ձև», մի գաղափար, որը սակայն նրա կողմից բավա-  
րար հասկանություններ չէր գրվում: Հումբոլդտը հավելած է այն կա-

պէլու «ներքին անալոգիայի» հետ<sup>1</sup>: «ներքին ձևի» գաղափարի այս մշուշապատուիթյունը հիմք է տալիս հետագայում ամենատարբեր մեկնաբանութիւնների համար:

Ինչպես տեսանք, Հումբոլդտը լեզուն դիտում է որպես միջնորդ մարդու ներքին աշխարհի և արտաքին աշխարհի միջև: «Մտքի ներքին ինքնակառուցողական գործունեութիւնը» կապվում է արտաքին աշխարհի հետ լեզվի միջոցով: Ներքին ձևը հանդես է գալիս հենց որպես լեզվի այն կողմը, որ հնարավորութիւն է տալիս հասկացութիւնները կապելու հնչյունների հետ: Ներքին ձևը լեզվի զարգացման սկզբունքն է, նրա զարգացումը որոշող տենդենցը: Յուրաքանչյուր լեզու ունի իր ներքին ձևը, որը պայմանավորում է այդ լեզվի արտաքին ձևը: Արտաքին ձևի մեջ մտնում են հետևյալ ձևերը. 1) լեզվի հնչյունական ձևերը. լեզվի հնչյունները սարորոշված են, ընդ որում տարրորոշումը տեղի է ունենում ձևավորման պրոցեսի հետևանքով. 2) լեզվի քերականական ձևերը. քերակոնական ձևերը պարունակում են բառազուգորդումների և բառակազմութեան կանոնները, ընդ որում դրանք էլ ներկայացնում են գործողութիւն, սուբստանցիայի, հատկութեան և այլ ընդհանուր տրամաբանական կատեգորիաների կիրառումը արմատների և հիմքերի նկատմամբ. 3) լեզվի ստուգաբանական ձևերը. լեզվի ստուգաբանական ձևեր ասելով Հումբոլդտը հասկանում է բառարմատների ձևավորումը:

«Որպեսզի արտասանական զգացումը կարողանա գտնել նշանակման համար անհրաժեշտ հնչյուններ, — գրում է Հումբոլդտը մեկնաբանելով բառի «ներքին ձևի» ըմբռնումը, — հարկավոր է, որ ներքին ոլորտում յուրաքանչյուր հասկացութիւն նշվի որևէ իրեն հատուկ հատկանշով և կապի մեջ գրվի այլ հասկացութիւնների հետ»<sup>2</sup>: Հատկանիշների ընտրութիւնից էլ, ըստ Հումբոլդտի, բխում են միևնույն առարկայի նշանակման տարբերութիւնները. եթե սանսկրիտում փիզը նշանակվում է որպես խմոր, էրկատամնավոր կամ ձեռնավոր, սպա այստեղ առկա են տարբեր «ներքին ձևեր», թեև նկատի է առնվում միևնույն առարկան:

Լեզվական ձևը ներկայացնում է լեզվի առանձին տարրերի միավորող սկզբունքը, նրանց համադրութիւնը՝ հակադրվելով նրանց նյութական բովանդակութեանը: Բովանդակութիւնը կարող

<sup>1</sup> Հմտ. P. Га й м, Вильгельм фон Гумбольт, 1896, էջ 138.

<sup>2</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 97.

է հանդես գալ միայն որպէս ձևավորված բովանդակութիւն, ձեր որպէս որոշ բովանդակութիւն ունեցող ձև: Ձեի և բովանդակութիւն կապը Հումբոլդտն ըմբռնում է դիալեկտիկորեն: Ձեր մեկընդմիշտ տրված չէ: Այն, ինչ որ մի հարաբերութեամբ նյութ (բովանդակութիւն) է, մի այլ հարաբերութեամբ կարող է լինել ձև: Փոխառյալ բառերը փոխառու լեզվում կարող են հանդես գալ իբր՝ նյութ, բայց նրանք նյութ են ոչ թե ինքնին, այլ միայն տվյալ լեզվի հարաբերութեամբ: Լեզվի մեջ չի կարող լինել անձն նյութ, որովհետև լեզվի մեջ ամէն ինչ ուղղված է մեկ նպատակի՝ մտքի արտահայտութեանը: «Լեզվի իսկական նյութը,—գրում է Հումբոլդտը,—մի կողմից հնչյունն է բնդհանրապէս, մյուս կողմից այն ղգայական տպավորութիւնների և ոգու ակամա շարժումների ամբողջութեանը, որոնք նախորդում են հասկացութիւնների կազմավորմանը, որը կատարվում է արդեն լեզվի օգնութեամբ»<sup>1</sup>

Ձեր Հումբոլդտը պատկերացնում է մի կողմից՝ որպէս տվյալ լեզվի առանձին տարրերի միասնականութիւնը, որի միջոցով ժողովուրդը յուրացնում է ժառանգաբար իրեն փոխանցվող լեզուն, մյուս կողմից՝ որպէս ոգու գործունեության մեջ այն մշտականն ու միօրինակը, որ տարրորդված հնչյունը բարձրացնում է մինչև մտքի արտահայտութիւնը: Ձեր նրա մոտ առնվում է իր կապերի ամբողջութեան և իր սիստեմայնութեան մեջ:

Հումբոլդտի կարծիքով՝ լեզվի ձևի ըմբռնումն է հետազոտողին հնարավորութիւն տալիս թափանցելու լեզվի գաղտնիքների մեջ, բացատրելու նրա բնութիւնը: Այլապէս հետազոտողը չի կարող քննել լեզուն իբրև մեկ միասնութիւն իր բաղմազանութիւնների մեջ. նրա համար իրար հետ կենդանի կապ ունեցող փաստերը հանդես կգան առանձնացած ձևով: Լեզուների տարբերութեանը հիմնվում է նրանց ձևի վրա, իսկ ձեր սերտորեն կապված է ժողովրդի աշխարհայացքի հետ:

Ձեի ուսմունքի հետ է կապվում և լեզուների ցեղակցութեան հարցի լուծումը. «...Լեզուների նույնութիւնն ու ցեղակցութիւնը պէտք է հիմնվի ձևերի նույնութեան և ցեղակցութեան վրա, որովհետև գործողութիւնը կարող է հավասար լինել միայն պատահալին: Միմիայն ձևն է որոշում, թի որ լեզուների հետ է ցեղակից տվյալ լեզուն»<sup>2</sup>:

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 46:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 48:



Լեզվի մեջ Հումբոլդտը տեսնում է երկու կողմ՝ լեզվական զգացումը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ ներքին ձև, և հնչյունը: Հրնչյունն ինքնին պասսիվ նյութ է, որ դառնում է հոդաբաշխ հնչյուն՝ անցնելով լեզվական զգացման միջով: Սրանով իսկ Հումբոլդտի համար լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ միայն ձև. ճիշտ է, այդ ձևը բազմազան արտահայտություններ ունի, բայց և այնպես ձև է. բովանդակությունը վերջ ի վերջո մնում է լեզվից դուրս: Միաժամանակ, չնայած իր դրական կողմերին, Հումբոլդտի ձևի ուսմունքը զերծ չէ որոշ միասնականությունից, ներքին ձևի գաղափար: անպարզությունն էլ, ինչպես նշեցինք, հիմք է տալիս հետագա արբեր մեկնությունների համար:

Լեզունների բազմազանության ու միասնության և հասարակականի ու անհատականի անտինոմիաները Հումբոլդտի մոտ կապվում են և՛ իրար, և՛ մյուս անտինոմիաների հետ:

Յուրաքանչյուր լեզու, ըստ Հումբոլդտի, կապված է տվյալ ժողովրդի ոգու հետ և հանդիսանում է այդ ժողովրդի ոգու արտահայտությունը: Լեզունների տարբերությունն արտահայտվում է, այսպիսով, ոչ միայն որպես հնչյունական և քերականական ձևերի տարբերություն, այլև որպես ժողովուրդների աշխարհայացքների տարբերություն: Քանի որ լեզվական ձևը անխզելիորեն կապված է լեզվական բովանդակության հետ, ուստի և լեզուների տարբերությունը սոսկ արտաքին տարբերություն չէ, այլ ներքին տարբերություն: Սակայն լեզուները իրենց տարբերությամբ հանդերձ ներկայացնում են միևնույն միասնական լեզվաստեղծական պրոցեսի տարրեր դրսևորումները: Լեզուների տարբերության մեջ հանգես են գալիս լեզվի կազմավորման՝ բոլոր ժողովուրդների համար ընդհանուր խնդրի լուծման տարբեր եղանակները. նսլատակը նույնն է, նրա կատարման եղանակները տարբեր: Հումբոլդտը սալիս է լեզուների զարգացման տեխնոգիական բացատրություն: Յուրաքանչյուր լեզու իր դարգացման մեջ արտացոլում է միևնույն կատարելագործման մարդկային հոգևոր ուժը. «Մարդկային սեռի բաժանումը ժողովուրդների ու ցեղերի և նրանց լեզուների ու լարբանների տարբերությունը փոխադարձորեն կապված են, բայց գտնվում են կախման մեջ նաև մի երբորդ ավելի բարձր երևույթից՝ մարդու հոգեկան ուժի վերաստեղծումից է՛լ ավելի նոր, և հաճախ ավելի բարձր ձևերով: Այդ երևույթի մեջ նրանք գտնում են իրենց արդարացումը, այլև, — այն չափով, որ չափով ռսումնասիրությունը թափանցում է նրանց կապի մեջ» — երկնց բա-

չյատրութիւնը: Մարդկային հոգեկան ուժի այդ ձևով և աստիճանով տարբեր արտահայտութիւնը, որ տեղի է ունենում հաղաբանակների բնթացքում ողջ երկրագնդով մեկ, ամեն մի հոգեոր պրոցեսի բարձրագույն նպատակն է և վերջնական իղեան, որին պետք է ձգտի համաշխարհային պատմութիւնը<sup>1</sup>: Լեզվաստեղծումը պայմանավորված է մարդկութեան ներքին պահանջով: Յուրաքանչյուր լեզու այդ պահանջի բավարարման մի փորձն է, ուստի և մարդկութեան լեզվաստեղծական ուժը կարող է գործել մինչև այն ժամանակ, քանի դեռ չի ստեղծի այդ պահանջն ամենից ավելի կատարյալ ձևով բավարարող մի բան: Այսպիսով, ոչ միայն իրար հետ պատմականորեն կապված, այլև այդպիսի պատմական կապեր շունեցող լեզուներն ու լեզվաընտանիքները կարող են դիտվել որպես նրանց կազմավորման միասնական պրոցեսի տարբեր աստիճանները: Այս բնդհանրութեան պատճառներին, ինչպես տեսանք, Հումբոլդտը իղեալիստական բացատրութիւն է տալիս: Լեզուների ձևաբանական տիպերը, որոնք Հումբոլդտը դիտում է իբրև դարգացման տարբեր աստիճաններ, նրահամար ոչ այլ ինչ են, եթե ոչ միևնույն համաշխարհային լեզվաստեղծական պրոցեսի պատմական տարբեր դրսևորումները:

Ճիշտ կերպով դնելով լեզուների բազմազանութեան ու միասնութեան հարցը՝ Հումբոլդտը լեզուների բազմազանութիւնը կայում է ժողովուրդների ոգու արտահայտութեան բազմազանութիւնների հետ, իսկ լեզուների միասնութիւնը փորձում է բացատրել «մարդկային բնութեան» միասնութեամբ, ընդ որում այդ «մարդկային բնութեանը» նրա մոտ իղեալիստական վերացական մեկնաբանութիւն է ստանում: Լեզուների բազմազանութեան և միասնականութեան հարցը Հումբոլդտը փաստորեն ներկայացնում է որպես լեզվի մարդկային և աստվածային բնութի անտիմիա: Լեզուների կառուցվածքային բազմազանութիւնները, ըստ նրա, կապված են տարբեր ժողովուրդների ոգու առանձնահատկութիւնների հետ և բացատրվում են դրանցով, հետևաբար լեզուները մարդկային ստեղծագործութիւն են: Սակայն տարբեր լեզուները հանդես են բերում այնպիսի միասնութիւն, որ կարող է բացատրվել միայն լեզվի աստվածային բնութով, լեզվի աստվածային ժագամբ, հետևաբար լեզուն աստվածային ստեղծագործութիւն է: Այսպիսով, Հումբոլդտը խճճվելով հարցի իղեալիստական մեկնաբանութեան ցանցում, վերջ ի վերջո սպաստան է փնտրում աստծու գաղափարի մեջ:

<sup>1</sup> W von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 1:

Ըստ Հումբոլդտի՝ լեզուների ուսումնասիրութեան ժամանակ այդ լեզուները մենք փաստորեն գտնում ենք կես ճանապարհին. երբ նրանք զարգացման բավական երկար ճանապարհ են անցել: Յուրաքանչյուր լեզու իր նյութը բերում է մեզ համար անմատչելի նախապատմությունից, և մտքի արտահայտմանն ուղղված հոգեկան գործունեությունը գործ ունի պատրաստի նյութի հետ. այդ նյութը նա ոչ թե ստեղծում է, այլ փոխակերպում: Այդ գործունեությունը կատարվում է անընդհատ և միատեսակ, որովհետև այն «պայմանավորված է հոգեկան մի ուժով, որի սարքերությունները շեն կարող անցնել որոշակի և ընդամին ոչ այնքան լայն սահմանները, քանի որ նշված գործունեութեան խնդիրը փոխադարձ հաղորդակցումն է»<sup>1</sup>: Այսպիսով, լեզվի ստեղծումը կապելով մարդկության ներքին պահանջների հետ, Հումբոլդտը լեզվի հետագա գործունեութեան մեջ մեծ աեղ է տալիս լեզվի հաղորդակցական ֆունկցիան: Լեզվի հաղորդակցական ֆունկցիան և հնչյունական կողմը այն գործոններն են, որոնք իրենց բնութթով սուբյեկտիվ և անհատական լեզվական փաստերն օբյեկտիվացնում են ու ընդհանուր դարձնում:

Այստեղ մենք անցնում ենք մի բնագավառ, որտեղ ծագում է անհատականի և հասարակականի պրոբլեմը, այլ կերպ սած անհատի և ժողովրդի, ազատութեան և սնհրաժեշտութեան անտի-նոմիան: Եթե սուբյեկտիվութեան և օբյեկտիվութեան հարցի դեպքում Հումբոլդտը մեկնակեա է ընդունում սուբյեկտը, ապա այս դեպքում նա աշխատում է քննել լեզուն որպես «հոգու համար կողմնակի տոարկա»: «Լեզուների գոյությունը ջույց է տալիս,— գրում է Հումբոլդտը,— որ կան հոշեկան ստեղծագործություններ. բրոնք բոլորովին էլ մեկ անձից շեն անցնում մյուս բոլորին, այլ ծագում են բոլորի միաժամանակյա ինքնագործունեությունից: Լեզուները, որոնք միշտ ազգային ձև ունեն, կարող են լինել միայն ժողովուրդների անմիջական ստեղծագործություններ»<sup>2</sup>: Սակայն, մյուս կողմից, խոսում են միայն անհատները, ուստի և լեզուն անհատների ստեղծագործություն է: Եթե անհատների լեզվական գործունեութեան մեջ դործում է ազատութեան սկզբունքը, ապա ընդհանուրի լեզուն աղղում է անհատի վրա որպես անհրաժեշտություն, սահմանափակում նրա ազատությունը:

Խոսելով լեզվի հաղորդակցական ֆունկցիայի մասին՝ Հում-

<sup>1</sup> W. von Humboldt. Gesammelte Werke, VI, էջ 42.  
Նույն տեղը, III, էջ 33:

բոլորտն այնուամենայնիվ ոչ այդ Ֆունկցիան, ոչ էլ առարկաները նշանակելը չի համարում լեզվի էությունը. ընդհակառակը, այդ երկուսի փոխադրեցությունը հենց կապված է լեզվի էության հետ, որը որոշված է հոգեկան ներքին գործունեությամբ: «Լեզուն պետք է դիտել ոչ թե որպես մեռած մի բան, այլ որպես ստեղծագործական պրոցես, հարկավոր է արստրահվել այն բանից, որ նա գործում է որպես առարկաների նշանակում և որպես հազորդակցման միջոց, և, ընդհակառակը, մեծ ուշադրությամբ վերաբերվել նրա կապին հոգեկան ներքին գործունեության հետ, և այդ երկու երևույթների փոխադրեցությունը»<sup>1</sup>:

Լեզվի էությունը, ինչպես տեսանք, Հումբոլդտը կապում է լեզվի ձևի հետ: Լեզվի ձևը արտահայտություն է գտնում լեզվի առանձին տարրերի միասնության մեջ. «Իր բնությամբ լեզվի ձևը, հակառակ նյութի, լեզվի առանձին տարրերի ընկալումն է նրանց հոգեկան միասնության մեջ»<sup>2</sup>: Այդ միասնությունը կա ամեն մի լեզվում և դրանով է ժողովուրդը յուրացնում լեզուն. տվյալ հասարակության ամեն անհատ ունի այդ միասնության ներքին բնույթը: Լեզվի մեջ անհատականի և ընդհանուրի հակասության լուծումը Հումբոլտը փնտրում է մարդկային բնության միասնության մեջ: «Լեզվի մեջ այնքան հրաշալի կերպով է համաձայնեցված անհատականը համընդհանուրի հետ, որ միատեսակ ձիշտ է ասել, թե ողջ մարդկային սեռը խոսում է մեկ լեզվով և որ յուրաքանչյուր մարդ ունի իր լեզուն»<sup>3</sup>: Լեզուն իր ընդհանուր բնույթով զգացնել է տալիս յուրաքանչյուր մարդու, որ նա ողջ մարդկության մի մասնիկն է: Այսպիսով, բոտ Հումբոլդտի՝ մարդկության բնության միասնությամբ է պայմանավորվում և՛ տարրեր լեզունների միասնությունը, և՛ անհատական լեզվի ու ողջ մոդոլոգի լեզվի կապը: Յուրաքանչյուր անհատ վերարտադրում է լեզուն իր սեփական գործունեությամբ. բայց իր գործունեության մեջ նա սահմանափակված է հասարակականով և իր անհատականով դրսևորում է բոլոր մարդկանց համար ընդհանուրը: Անհատական լեզվական գործունեության հասարակական սահմանափակման պատճառը, ինչպես տեսանք, Հումբոլդտը բացատրում է ոչ թե մարդկանց հաղորդակցման կարիքով, այլ «մարդկային բնության միասնության» վերացական-իդեալիստական դրույթով:

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 40:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 47:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 48:



մեջ արտացոլում են գոնում սոսորկաների սուբյեկտիվ ընկալման առանձնահատկությունները, բայց լեզուն իր էությունը կապված է հասարակության հետ. «Լեզվի ստեղծումը մարդկության ներքին պահանջ է,— գրում է Հումբոլդտը,— այն ոչ միայն հասարակության մեջ մարդկանց հաղորդակցման արտաքին միջոց է, այլ դրված է հենց մարդկանց էության մեջ և անհրաժեշտ է նրանց հոգեկան ուժերի զարգացման և աշխարհայացքի կազմավորման համար, որին մարդը կարող է միայն այն ժամանակ հասնել, երբ իր մտածողությունը պարզ ու հստակ կերպով կապի մեջ է դնում հասարակական մտածողության հետ»<sup>1</sup>:

Հումբոլդտի լեզվաբանական ուսմունքի մեջ կարևոր տեղ է բռնում լեզվի սիստեմայնության գաղափարը, մի գաղափար, որ նորագույն լեզվաբանության մեջ վերաթարծվեց նոր ուժով և նրա անկյունաքարային սկզբունքներից մեկը դարձավ: Սակայն լեզվի՝ սիստեմ լինելու գաղափարին Հումբոլդտը հասնում է այլ ճանապարհով, քան այդ առկա է նոր լեզվաբանության մեջ: Լեզվի սիստեմային ըմբռնումը որոշ առումով կապված է բնական գիտությունների ազդեցության և տարերային նատուրալիզմի այն դրսևորումների հետ, որոնք այս կամ այն չափով երևան են գալիս նրա մոտ: Հումբոլդտը ևս լեզուն դիտում է որպես օրգանիզմ, հաճախ դիմում «լեզվի օրգանիզմի» ըմբռնմանը: Այդ օրգանիզմն էլ Հումբոլդտին բնականաբար ներկայանում է որպես մի ամբողջություն, իր տարրերի կապի և փոխհարաբերության մեջ, իր սիստեմայնությամբ:

Դեռևս 1795 թ. Շիլլերին գրած նամակում նա լեզուն համարում էր «մի օրգանական ամբողջություն»<sup>2</sup>. հետագայում այս գաղափարը նա արժարժում ու զարգացնում է իր լեզվաբանական աշխատություններում: Լեզուն համարելով ժողովրդի ոգու արտահայտությունը՝ Հումբոլդտը բնականաբար նպատակ է դնում վերջինիս վերահասու լինելու համար լեզուն որպես օրգանական ամբողջություն անդամատել, բաժանել իր մասերին:

Ըստ Հումբոլդտի՝ լեզվի պատմությունը ժողովրդի ոգու զարգացման հետ սերտորեն կապելը, այն որպես ժողովրդի լեզվական գիտակցության ստեղծագործություն քննելը՝ լեզվի իսկական գիտական քննության միակ ճանապարհն է. «Միայն այդ ճանապար-

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 10:

Briefwechsel zwischen Schiller und W. Humboldt, II Ausg., Stuttgart, 1876, էջ 138:

Տով կարելի է հասկանալ Երևույթների նախնական կապը և ճանաչել լեզուն որպես ներքնապես փոխկապակցված օրգանիզմ, որը նպաստում է և յուրաքանչյուր Երևույթի ճիշտ գնահատմանը<sup>1</sup>: Ինչպես որ Կյուպիեն խոսում է «ձևերի հարաբերակցության» (corrélation des formes) և օրգանիզմի բոլոր փոփոխությունների ներքին փոխկախվածության մասին<sup>2</sup>, այնպես էլ Հումբոլդտը լեզուն պատկերացնում է որպես փոխադարձաբար կապված տարրերի մի սիստեմային ամբողջություն, որի առանձին տարրերի բնությունը չի կարող հաջող լինել, եթե չի կապվում ողջ սիստեմի հետ: Խոսելով այն մասին, որ առանձին առարկաների նշանակման ենթակա հարաբերությունները և քերականական ձևերը հենվում են մեծ մասամբ հայեցողության ընդհանուր ձևերի և հասկացությունների տրամաբանական հարաբերությունների վրա, Հումբոլդտը գրում է. «Այստեղ առկա է, հետևաբար, մի որոշակի սիստեմ, որի հետ կարելի է զուգադրել լեզվի սիստեմը: Ընդամենի դարձյալ որոշվում է հրկու մոմենտ. նշանակվող Երևույթների լրիվությունն ու ճշգրիտ սահմանագատումը՝ մի կողմից, և ամեն մի այդպիսի հասկացության համար ընտրված նշանակումը՝ մյուս կողմից»<sup>3</sup>:

Լեզվի ծագման հումբոլդտյան տեսության հիմքերը մասամբ պարզ դարձան վերևում շարադրված ընդհանուր սկզբունքներից: Լեզվի ծագումը Հումբոլդտը կապում է ոգու ներքին պահանջների հետ: Նրա կարծիքով՝ լեզվի տիպը նախապես գոյություն ունի մարդկային բանականության մեջ. «Լեզուն հնարավոր չէր լինի հորինել, եթե նրա տիպը արդեն գոյություն չունենար մարդկային բնության բանականության մեջ» — այս է Հումբոլդտի մեկնակետը, որը պայմանավորված է նրա կանտական հայացքներով: Լեզվի զարգացումը պատճառի և հետևանքի անընդհատ շարք է. խոսել լեզվի ծագման մասին նշանակում է բացահայտել ամենասկզբնական պատճառը. լեզվի ծագումը Հումբոլդտը բացատրում է որպես երկու գործոնի ներգործությունը՝ զրևոտում. 1) մարդու բնության մեջ հենց սկզբից զրված է խոսելու բնազդային ձրգտում, լեզվական որոշ կարողություն: Լեզուն այս առումով «բանականության ինտելեկտուալ բնազդ է» (intellektueller Instinkt der Vernunft), «ոգու ակամա արտահոսք» (eine unwillkürliche

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 2—3:

Հմտ. H. Areus, հիշ. աշխ., էջ 153:

W. Humboldt, Gesammelte Schriften, VII, էջ 48:

Emanation des Geistes)<sup>1</sup>, «ներքին ճակատագրով բաժին ընկած շնորհ» (durch ein inneres Geschick zugefallene Gabe)<sup>2</sup>; 2) Սակայն այս ներքին ձգտման ծավալման համար անհրաժեշտ է մի միջավայր, որ հասկանալով և գիտակցութեամբ դիմավորի բնազդի այդ առաջին արտադրանքները: Մարդկային բնութեան «անբացատրելի» նույնութունը հենց հիմք է տալիս այսպիսի կապի համար: Մարդու լեզուն ծագում է ոչ թե գիտակցական մղումով, այլ ներքին բնազդային ձգտումով. մարդը իրեն սկսում է գիտակցել որպես խոսող էակ այն ժամանակ, երբ արդեն խոսում է:

Նախկին ընդհանրական օայլանալիստական-տրամաբանական քերականության դեպուկտիվ մեթոդներին Հումբոլդտը նախըրում է լեզվի այնպիսի ուսումնասիրությունը, որ հենվի ինդուկտիվ մեթոդների վրա: Ուսումնասիրելով լեզուները բազմազանությունները, լեզուների կոնկրետ փաստերը՝ կարելի է ավելի ու ավելի լայն ընդհանրացումներ կատարել: Այդ ուսումնասիրությունը պետք է տեղի ունենա տարբեր լեզուների ներքին ձևերի մեջ թափանցելու և դրա օգնությամբ ընդհանուր եզրակացությունների հանգելու միջոցով: Նման ուսումնասիրության մի փորձ է երկակի թվի մասին Հումբոլդտի գրած աշխատությունը:

Ի՞նչ է մի բերենք Հումբոլդտի լեզվափոխադրության մասին մեր ասածները և փորձենք գնահատել Հումբոլդտի տեղը լեզվաբանության պատմության մեջ, ապա կարելի է նշել հետևյալը: Հումբոլդտի լեզվաբանական ուսմունքը իր ժամանակի համար կարևոր նվաճում էր, և դրանով էլ բացատրվում է նրա ազդեցությունը լեզվաբանական պրոբլեմների հետագա մեկնաբանության վրա. 1) Հումբոլդտը առաջին լեզվաբանն էր, որ փորձեց ի մի բերել և ընդհանրացնել պատմա-համեմատական լեզվաբանության ձևեր բերած արդյունքները հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության բնագավառում և տարածել մյուս լեզուների ուսումնասիրության վրա. միաժամանակ Հումբոլդտը մեծ չափով նպաստում է պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորմանն ու ամբապնդմանը՝ լինելով նրա հիմնադիրներից մեկը և առաջին տեսաբանը: Պատահական չէ, որ լեզվաբանության պատմաբանները Հումբոլդտին համարում են նոր ժամանակների ընդհանուր լեզվաբանության և լեզվափոխադրության հիմնադիրը: 2) Հումբոլդտը առաջ քաշեց լեզվաբանության հետագա զարգացման համար կարև-

<sup>1</sup> W. von Humboldt, Gesammelte Werke, VI, էջ 98.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ



վոր մի շարք պրոբլեմներ՝ լեզվի և մտածողության, ձևի և բովանդակության, սուբյեկտիվության և օբյեկտիվության, անհատականի և հասարակականի, լեզվի ու խոսքի և այլն: Չնայած իր իդեալիստական կոնցեպցիային՝ Հումբոլդտը կարողանում է կուսակցի և այդ կատեգորիաների դիալեկտիկական փոխհարաբերությունը և նպաստում լեզվաբանական կարևորագույն պրոբլեմների լուծմանը: 3) Հումբոլդտը մեծ շափով նպաստում է լեզվի նկատմամբ եղած մետաֆիզիկական, ոչ պատմական հայեցակետի հաղթահարմանը և նախկին գեղուկտիվ մեթոդներին հակադրելով ինդուկտիվ մեթոդները՝ դրանով իսկ օգնում է ռացիոնալիստական քերականության մերկ հայեցողականության հաղթահարմանը և լեզվաբանության մեջ նոր ուղիներ որոնելուն: 4) Դիտելով կենդանի խոսակցական լեզուն ուսումնասիրելու պահանջը՝ Հումբոլդտը դրանով նպաստում է ֆիլոլոգիական մոտեցման հաղթահարմանը և գիտական լեզվաբանության ամրապնդմանը:

Իր դրական կողմերով ու արժանիքներով հանդերձ՝ Հումբոլդտի լեզվափիլիսոփայությունը ուներ մի շարք արմատական թերություններ. 1) Հումբոլդտի փիլիսոփայության հիմքը իդեալիստական է: Գտնվելով Կանտի ազդեցության տակ՝ Հումբոլդտը լեզվական հարցերի լուծման մեջ ելնում է գիտակցական կատեգորիաների ապրիորի գոյության փաստից, ժողովրդի ոգու մետաֆիզիկական-իդեալիստական ըմբռնումից: Հումբոլդտը՝ անտիդիմիաները մասամբ իրոք լեզվի զարգացման համար բարոյ հակասություններ են, մասամբ Հումբոլդտի կողմից ներկայացվում են որպես մարդկային իմացության՝ լեզվի էության մեջ թափանցելու ընթացքում առաջացող հակասությունները, մասամբ էլ իր իսկ Հումբոլդտի լեզվափիլիսոփայության հակասություններն են. նրա իդեալիստական կոնցեպցիան խանգարում է պատմականությունը և լեզվական պրոցեսի էության հակասականության գաղափարը մինչև վերջ հասցնելուն, լուրջ սխալների է հասցնում լեզվի ծագման և դարգացման պրոցեսի մեկնաբանության մեջ. չերջի վերջո՝ նա ապաստան է որոնում աստծու գաղափարի մեջ: Նրա ապրիորիստական իդեալիզմը սերտորեն զուգակցվում է ազնոստիցիզմի հետ: Հումբոլդտը փաստորեն ժխտում է լեզվի էության մեջ մինչև վերջ թափանցելու հնարավորությունը, սահմանափակում մեր իմացության շրջանակները և հենց սրա հետ կապված դիմում անտիդիմիաների գաղափարին: 2) Փորձելով թափանցել լեզվի դիալեկտիկայի էության մեջ՝ Հումբոլդտը կանգնում է կես ճանապարհին:

նախ՝ նրա լեզվափոխի խոստովանության մեջ առկա դիալեկտիկան իդեալիստական դիալեկտիկա է, երկրորդ՝ Հումբոլդտը այն սահմանափակում է միայն որոշ կարգի գաղափարներով՝ առանց հետևողականորեն տարածելու լեզվի բոլոր կողմերի վրա, երրորդ՝ շմշակելով դիալեկտիկական մեթոդի՝ լեզվի նկատմամբ կիրառելու վերաբերյալ բազմակողմանի ուսմունք՝ Հումբոլդտը լոկ կռահում է լեզվի դիալեկտիկան: Այս կապակցությամբ նա թույլ է տալիս հակասություններ, չի կարողանում մինչև վերջ հասցնել լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցի չուծումը, անտինոմիաների լուծման բանալին որոնում է «մարդկային բնության միասնության» մետաֆիզիկական գաղափարի մեջ, լեզվի դարգացման պրոցեսի ըմբռնման մեջ թույլ է տալիս շեղումներ իսկական պատմականությունից և այլն: 3) Հումբոլդտի լեզվափոխի խոստովանությունը դերժ չէ որոշ միատիկականությունից, ոչ պարզ մտքերից, մինչև վերջ չհասցված դրույթներից և այլն, որոնք հիմք են սվել Հումբոլդտի մտքերի հակասական մեկնաբանությունների համար: Ամենաառողջ դատողությունները Հումբոլդտի փիլիսոփայության մեջ զուգորդվում են մշուշապատ և հեղինակի համար չպարզված գաղափարների հետ:

Լեզվաբանության հետագա պատմաբանները, Շտայնթալից սկսած, Հումբոլդտի լեզվափոխի խոստովանական ուսմունքի մեջ տեսնում են 3 անկյունաքարային գրույթ, որոնք առանձնապես ուժեղ ազդեցություն են թողել հետագա լեզվաբանական ուսմունքների վրա. 1) լեզուն մտքի կաղամվորող օրգան և սրա հիման վրա լեզուների տարբերությունը ոչ թե սոսկ հնչյունների ու նշանների, այլ աշխարհայացքների տարբերություն համարելը, 2) լեզուն: որպես գործունենություն (էներգիա) քննելու պահանջը, լեզուն գործունենություն և ոչ թե պատրաստի գործ համարելը, 3) լեզվի «ներքին ձևի»: գաղափարի առաջաշուժը:

Հումբոլդտի կոնցեպցիայի բնագիտությունը Չերնիշևսկու կողմից. — իր «Մարդկանց դասակարգումն ըստ լեզուների» հոդվածում Չերնիշևսկին քննադատում է Հումբոլդտից եկող այն հայացքը, թե լեզվի ձևաբանական տարբեր տիպերը կապված են մտածողության զարգացման տարբեր աստիճանների, ժողովրդի սզու բնույթի առանձնահատկությունների, մարդկանց բնության ու կառուցվածքի առանձնահատկությունների հետ: Չերնիշևսկին ցույց է տալիս, որ այդպիսի անմիջական կապ չկա, որ յուրյալ ժողովուրդը կարող է ունենալ այս կամ այն ձևաբանական տիպը: անկախ

այս յ յոդովրդի մտավոր զարգացման աստիճանից: Ճիշտ կերպով պայքարելով վերլուծականությունը և համադրականությունը մտածողության զարգացման տարբեր աստիճանների հատկանիշ լինելու գրույթի դեմ՝ Չիռնիշևսկին նշում է, որ չկան մաքուր համադրական լեզուներ. սակայն հասնելով ծայրահեղության՝ նա ընդհանրապես լեզուները հնարավոր չի համարում հատկացնել այս կամ այն տիպին, բոլոր լեզուները համարում է խտոն բնույթի: Չերնիշևսկին պահանջում է պատմա-համեմատական ուսումնասիրության ժամանակ հաշվի առնել մյուս հասարակական-պատմական գիտությունների տվյալները, պարզել տվյալ լեզվի պարզացման կոնկրետ պատմական պայմանները:

Չերնիշևսկին միաժամանակ արդյունավետ մտքեր է արտահայտել ձևաբանության և շարահյուսության փոխադարձ կապի բնույթի մասին:

### 3 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (ՖԻՂՈՂՈՒԶՄ)

Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Վոստոկով.—1820 թ. լույս է տեսնում Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Վոստոկովի «Գատաղություն» սլավոնական լեզվի մասին<sup>1</sup> աշխատությունը, որով նա իրավունք է նվաճում համարվելու պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկը: Այս աշխատության մեջ Վոստոկովը լուծում է սլավոնագիտական մի շարք կարևոր հարցեր, տալիս է եկեղեցյալսլավոներենի և ռուսերենի պատմական շրջանաբաժանումը, համեմատության միջոցով պարզում հին սլավոնական գրության մեջ գործածվող «յուս» կոչվող տառերի հնչյունական արժեքը, ցույց տալիս եկեղեցյալսլավոներենի տարբերությունը ռուսերենից. ընդհանուր գծերով որոշում սլավոնական լեզուների հնագույն փոխհարաբերության բնույթը, բացատրում ածականների վերջավորությունների կազմությունը և այլն<sup>2</sup>: Այս աշխատությունը գրելիս Վոստոկովը ծանոթ է եղել Գրիմի «Գերմանական քերականության» 1-ին գրքի առաջին հրատարակությանը, բայց Բոսպլի և Ռուսկի աշխատություններին նրա ծանոթ լինելու հարցը բաց է մնում: Իր

<sup>1</sup> А. X. Востоков, Рассуждение о славянском языке, „Труды Общества любителей российской словесности“, XVII, 1820.

<sup>2</sup> Հմտ. Н. С. Чемаданов, Сравнительное языкознание в России, Москва, 1936, էջ 7—11.

աշխատութեամբ Վոստոկովը դնում է սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրութեան հիմքերը:

Դեռևս 1811 թ. Սլենինին ուղղված մի գրութեան մեջ Վոստոկովը, խոսելով ստուգաբանական բառարանների խնդիրների մասին, առաջ է քաշում մեթոդական մի շարք պահանջներ: Նա նպատակ է դնում պարզել «մերձակցութեան տարրեր աստիճանները», բառերի «աստիճանական առաջացման» ու փոխառութեան հարցերը, խոսում «քերականութեան պատմական մասի» պարզաբանման մասին և այլն. «Եթե կարելի է, — գրում է Վոստոկովը իր նպատակների մասին, — հաստատելով պատմական և տրամաբանական ապացույցներով ուսական լեզվի բառակազմութիւնը (СЛОВООБРАЗОВАНИЕ), բացատրել քերականութեան այս պատմական մասը մեր ապագա բառարանագիրների համար և դրա միջոցով մեկընդմիջտ արմատախիլ անել ամեն տեսակ կամայական ու չհիմնավորված բառակազմութիւնները»<sup>1</sup>:

Վոստոկովը գրել է ռուսերենի երկու քերականութիւն՝ համառոտ և ընդարձակ (1831), որոնք Լոմոնոսովից հետո մի քայլ առաջ են տանում ռուսերենի ուսումնասիրութեան գործը. առանձնապես կարևոր է ռուսական շեշտագրութեան օրինաչափութիւններ սահմանելու ձգտումը: Վոստոկովը հրատարակել է նաև մի շարք այլ աշխատութիւններ՝ «Ռուսական թանգարանի ռուսական և սլավոնական ձեռագրերի նկարագիրը»<sup>2</sup>, ռուսերենի հնագույն գրավոր հուշարձանի՝ «Օստրոմիրյան ավետարանի»<sup>3</sup> տեքստը, «Եկեղեցաւսլավոններենի բառարանը»<sup>4</sup> և այլն:

Սակայն այս բոլորով հանդերձ Վոստոկովը լեզվաբանութեան պատմութեան մեջ մոտք է գործել առավելապես իր «Դատողութեամբ». այն ժամանակին ըստ արժանվույն գնահատվել է «Սլավոնական ֆիլոլոգիայի հոր»՝ Ի. Դոբրովսկու (1753—1829) կողմից, որը իր նշանավոր «Սլավոնական լեզվի հիմունքները»<sup>5</sup> աշխատութեան մեջ Վոստոկովի ազդեցութեամբ ուղղումներ է կատարել:

Վոստոկովի՝ պատմա-համեմատական լեզվաբանութեանը

<sup>1</sup> Քաղվածքը հիշված գրքից, էջ 8:

А. Х. Востоков, Описание русскѣх и славянскихъ рукописей Румянцевскаго музея, 1842.

<sup>2</sup> Остромирово евангелие. 1843.

<sup>4</sup> А. Х. Востоков, Словарь церковнославянскаго языка, I—II, 1858—1861.

Ј. Dobrovsky. Institutiones linguae slavicae. 1822.

մատուցած գլխավոր ծառայությունը վերաբերում է համեմատական հնչյունաբանությունից բնագավառին: Գրիմի «Գերմանական քերականություն» 1-ին գրքի առաջին հրատարակության մեջ, ինչպես նշել ենք, հնչյունաբանական հարցեր չէին քննվում. այսպիսով, Վոստոկովը ցեղակից լեզուների հնչյունական համապատասխանությունների օրինակափոխության գաղափարին հասնում է ինքնուրույնաբար: Վոստոկովն այդ համապատասխանություններն օգտագործում է սլավոնական այբուբենի «յուս» կոչված տառերի հնչյունական արժեքը պարզաբանելու համար. լեհական համապատասխան բառերի հետ զուգադրելով հին սլավոնական այն բառերը, որոնք «յուս» ունեն, Վոստոկովը պարզում է, որ դրանք նշանակել են ոնգային ձայնավորներ: Օգտագործելով *ij, dj, kt* զուգորդումների տարբեր փոփոխությունները *e, i* ձայնավորներից առաջ և մի շարք այլ հնչյունական տարբերություններ՝ Վոստոկովը որոշում է հին ոտսերենի հարաբերությունը եկեղեցապլավոններին, լեհերենի և սերբերենի հետ: Վոստոկովը փաստորեն հասնում է գրավոր հուշարձաններով ավանդված ձևերի միջոցով՝ չավանդված նախաձևերը վերականգնելու գաղափարին: Նա առաջինն է մատնացույց անում հին գրավոր, մեռած լեզուների և կենդանի լեզուների ու բարբառների տվյալների համեմատության անհրաժեշտությունը՝ տալով այդպիսի համեմատության կոնկրետ օրինակներ<sup>1</sup>:

Խոսելով սլավոնական լեզուների ցեղակցության մասին և տարբերելով սլավոնական լեզուների խմբերը, Վոստոկովը դնում է նրանց ընդհանուր «նախահոր» վերականգնման հնարավորության հարցը: Ճիշտ է, այդ գաղափարը Վոստոկովի մոտ դեռևս աղու է, անհրաժեշտ չափով չմշակված, բայց և այնպես վկայում է նրա խորաթափանցության մասին. «Նոր սլավոնական լեզուներից և բարբառներից յուրաքանչյուրը, — գրում է նա, — նրանց ընդհանուր նախահորից՝ հին սլավոններենից (древний словенский) պահպանել է առանձնահատուկ, մյուսների կողմից կորսված բառեր, վերջավորություններ և հնչյուններ, ինչպես կարելի է տեսնել, համեմատելով նրանց քերականությունները և բառարանները հին լեզվից մնացած հուշարձանների հետ»<sup>2</sup>. Այս սկզբնական լեզուն,

<sup>1</sup> *Հմտ.* А. А. Реформатский; Введение в языкознание, Москва, 1955, էջ 307.

<sup>2</sup> А. Х. Востоков, Рассуждение о славянском языке, ПОЛЯС; XVII, 1820; էջ 117-12:

Վոստոկովի կարծիքով, սլավոնական գրի սկզբնավորման շրջանում ներկայացնում էր իրար մոտ բարբառների մի ամբողջութուն: Բարբառային տարբերությունները քերականական բնույթ չունեին, այլ արտահայտվում էին հնչյունական և բառային տարբերությունների մեջ. տարբեր բարբառների ներկայացուցիչները միմյանց հեշտությամբ հասկանում էին:

Վոստոկովը հասնում է լեզվական պրոգրեսի պատմական ըմբռնման: Ոչ առանց Գրիմի ազդեցության՝ սլավոներենի և ուսսերենի պատմությունը նա բաժանում է 3 շրջանի՝ հին, միջին և նոր: Պերիոդիզացիայի հիմքում նա դնում է լեզվի ձևաբանական և հնչյունական («բառերի կառուցվածքի և ուղղագրության») փոփոխությունները:

Այս բոլորով հանդերձ, Վոստոկովը դեռևս սլավոնական լեզուների քերականական կառուցվածքների սիստեմատիկ համեմատություններ չի կատարում, Բուպպի նման դեռևս հստակ կերպով չի գիտակցում իր կիրառած մեթոդը, չի ստեղծում պատմական քերականություն այդ բառի իսկական իմաստով, խառնում է հնչյունն «տառը»:

## ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

### 1. ԸՆԻՆԱՆՈՒՄ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԻԼՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆ

Լեզվի զարգացման տեսություններ. Յա. Ն. Բրեդդորֆ, Լ. Ն. Մադլից, Ֆր. Վյուլներ.—Դեռևս պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադրման շրջանում դանիացի գիտնական և Ռասկի հետևորդ Յա. Ն. Բրեդդորֆը (1790—1841) հանդես է գալիս լեզվաբանական մի շարք հետաքրքրական աշխատություններով, որոնք նվիրված են հնչյունաբանությանը և լեզվաբանության ընդհանուր տեսությունը: Առանձնապես կարևոր է հիշատակել նրա «Լեզվական փոփոխությունների պատճառների մասին»<sup>1</sup> աշխատությունը, որի մեջ հեղինակը արտահայտում է իր գարաշրջանը կանխող մտքեր: Նա տոսաջիններից մեկն է, որ նկատել է լեզվական փոփոխության մեջ անսլոգիայի խալսացած դերի կարևորությունը: Նա է դարձյալ, որ առաջ է քաշել սուբստրատի հարցը, բրը կաղմոմ է ժամանակակից լեզվաբանության կարևոր գրույթներից մեկը: Այն հանգամանքը, որ Բրեդդորֆը լեզվաբանության

<sup>1</sup> J. H. Bredsdorff, Om Aarsagerne til Sprogenes Forandringer, 1821.

զարգացման համար շխաղաց այնպիսի դեր, ինչպիսին կարող էր խաղալ, բացատրվում է ինչպես աշխատութեան լեզվով (գրված էր դանիերեն, որ քչերին էր մատչելի), այնպես էլ արտահայտված մտքերի դժվարամատչելիութեամբ:

Գանիացի գիտնական Ի. Ն. Մադվիգի (1804—1886) գործունեութունը համընկնում է մասամբ պատմա-համեմատական լեզվաբանութեան զարգացման քննարկվող էտապի, մասամբ էլ հաջորդ էտապի հետ: Սակայն լեզվաբանութեան պատմութեան մեջ նրա հիմնական դերը կապված է հենց քննարկվող էտապի հետ: Մադվիգի լեզվաբանական հետաքրքրութեան շրջանակներն ընդգրկում են ինչպես լեզվաբանութեան ընդհանուր տեսութեան հարցերը, այնպես էլ հնդեւրոպական լեզվաբանութեան առանձին բնագավառները՝ «Սեուր լեզուներում, հատկապես ստիսկիրտում, լատիներենում և հունարենում»<sup>1</sup>, «Առաջին ականարկ լեզվի էութեան, զարգացման ու կյանքի վերաբերյալ հետազոտութունից»<sup>2</sup>, «Քերականական իմաստների ծագման և էութեան մասին»<sup>3</sup> և այլն:

Լեզվաբանական տեսութեան համար առանձնապես կարևոր է հիշատակված աշխատութուններից երկրորդը: Այս աշխատութեան մեջ Մադվիգը արժեքավորում է Հումբոլդտի հայացքները և արտահայտում սեփական կարծիքը լեզվի էութեան, ծագման ու զարգացման մասին: Առանձնապես խիստ կերպով է հանդես գալիս Մադվիգը լեզվի էութեան միատիֆիկացման փորձերի դեմ, քննադատում Հումբոլդտի հակումը դեպի հնչյունների սիմվոլիկան: Լեզվի ծագման հարցը նա համարում է լեզվի ընդհանուր բնույթի և զարգացման հետ կապված հարց, ընդ որում լեզվի էութունը տեսնում է հազորդակցման ֆունկցիայի մեջ. «Լեզվի ստեղծման ակտը, — գրում է նա, — ոչ այլ ինչ էր, եթե ոչ նույն ակտը, որի միջոցով ստեղծվեց ներկա, այժմ էլ գոյութուն ունեցող լեզուն, որպես հազորդակցման ազատ և հասկանալի միջոց»: Լեզվի ծագման մասին Մադվիգի հայտնած որոշ մտքեր համարյա բառացիորեն

<sup>1</sup> I. N. Madvig, Om kjonnet i Sprogene især i Sanskrit. Latin og Graesk, 1835.

<sup>2</sup> I. N. Madvig, Første Stykke of en Afhandling om Sprogets Vaesen udvikling og Liv, 1842.

<sup>3</sup> I. N. Madvig, Om de grammatikalske Betegnelser Tilblivelse og Vaesen, 1856—1857.

համընկնում են ամերիկացի Ուիտնիի՝ լեզվի ծագման մասին հետազոտում հայտնած մտքերի հետ<sup>1</sup>։

Մաղվիգի գործերը լեզվաբանությունը հայտնի դարձան միայն ուշ շրջանի գերմանական թարգմանություններով, բայց այդ ժամանակ նրա արտահայտած մտքերից շատերը դադարել էին արդեն նորություն լինելուց։ Մաղվիգը ևս, Բրեդադորֆից հետո, ուշադրություն է դարձնում անալոգիայի դերի վրա, ընդգծում դրա կարևորությունը որպես լեզվական փոփոխության գործոնի։

Բուպպի աշակերտ Ֆր. Վյուլները իր «Լեզվական հոլովների և եղանակների հմաստը» և «Լեզվական ձևերի ծագման և նախնական հմաստի մասին» աշխատություններում<sup>2</sup> փորձում է լրացնել Հումբոլդտի ուսմունքը<sup>3</sup>՝ ուշադրությունը կենտրոնացնելով քերականական ձևերի նախնական հմաստի բացահայտման վրա։ Սակայն Հումբոլդտի օբյեկտիվ իդեալիզմը նա փոխարինում է սուբյեկտիվ իդեալիզմով։ Ըստ նրա՝ լեզվական բովանդակությունը սուբյեկտիվ բնույթ ունի, այն արտահայտում է ոչ թե առարկայի օբյեկտիվ էությունը, այլ առարկայի սուբյեկտիվ ընկալումը։ Քերականական յուրաքանչյուր ձև ունի մեկ հիմնական վերացական հմաստ, որից արտածվում են մնացած բոլոր կոնկրետ հմաստները։ Այս ընդհանուր դրույթը կիրառելով հոլովների նկատմամբ՝ Վյուլները հանգում է հոլովների տարածական տեսությանը։ Ըստ նրա՝ հոլովական յուրաքանչյուր ձևի հիմնական հմաստը արտահայտում է տարածական սուբյեկտիվ ընկալում, որը խոսող անձը կարող է կիրառել թե՛ տարածական ու ժամանակային և թե՛ պատճառական օբյեկտիվ հարաբերություններ, այլև շարահյուսական հարաբերություններ արտահայտելու համար։ Այս կապակցությամբ բնությունն առնելով սանսկրիտի հոլովները՝ նա առանձնացնում է Չ խումբ՝ ուղղականն ու կոշականը և մյուս հոլովները։ Կոշականի ու ուղղականի բնութագրման համար նա դիմում է Բեռնհարդիին, որ դեռևս 1805 թ. այդ հոլովները տարբերել էր որպես 2-րդ և 3-րդ դեմքերի ձևեր։ Մյուս հոլովներից սեռականը նա սահմանում է որպես հեռացման, հայցականը՝ որպես մերձեցման, տրականը՝ որպես հանգստի հոլով. ներգոյականը, գործիականը և բացատրականը համարվում են տրականի երանգավորումներ։

<sup>2</sup> Հմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 70։

Fr. Wüller, Die Bedeutung der sprachlichen Casus und Modi, 1827. Über Ursprung und Urbedeutung der Sprachlichen Formen, 1831.

<sup>3</sup> Հմտ. T. Milewski, Zary. jezykoznawstwa, I, 1947, էջ 35։



Հնչյունաբանություն.— XIX Կ. առաջին կեսում հնչյունների ֆիզիոլոգիական կազմավորման հարցերի ուսումնասիրությունը գտնվում էր դեռևս անբավարար վիճակում: Լեզվաբանները, այդ թվում նաև պատմա-համեմատական լեզվաբանությունից հիմնադիրները, հստակ կերպով չէին տարբերում հնչյունն ու տառը: Ուշադրության կենտրոնում դեռևս գտնվում էին գրավոր լեզվի նմուշները, հատկապես այդ լեզվի հնագույն հուշարձանները: Հնչյունների ֆիզիոլոգիայի ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները դեռևս բավարար արձագանք չէին գտնում լեզվաբանների շրջանում: Այս կարգի աշխատանքներից հիշատակելի են շեխ Պուրկինիեի (1832) և ռուս Ս. Բարանի (1842) ուսումնասիրությունները. վերջինս իր «Մարդկային խոսքի տարբեր կամ հնչյունների առաջացման սեսությունը (ֆիզիոլոգիական ուսումնասիրություն)» հոդվածում (հետագայում լույս է տեսել Թոմանձին գրքույկով)<sup>1</sup> քննադատում է քերականներին և տալիս հնչյունաբանության ֆիզիկական-ֆիզիոլոգիական հիմունքների համառոտ սեսությունը:

Ինչպես նշել ենք, XVIII դ. վերջում և XIX դ. սկզբում զրվում են նաև ակուստիկական հնչյունաբանության հիմքերը. XIX Կ. առաջին կեսին այս բնագավառում նշելի է Վիլլիսի աշխատանքը (1831):

Հնչյունաբանության զարգացման մեջ կարևոր դեր է խաղում Ռուդոլֆ Ֆոն Ռաումերի «Շնչեղացումը և հնչյունական տեղաշարժը» աշխատությունը<sup>2</sup>, որի մեջ նա մատնացույց է անում տառի հնչյունի տարբերման անհրաժեշտությունը: Միաժամանակ, ոչ առանց Բուպպի և ուրիշների նատուրալիզմի ազդեցության, նա խոսում է կենդանի խոսակցական լեզվի ուսումնասիրության կարևորության մասին՝ դրանով իսկ վերստին առաջ քաշելով գրավորից խոսակցական լեզվին անցնելու համբուլդայան պահանջը, որ մոտացվել էր հետազոտողների կողմից:

## 2. ՀՆԳԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ա) ԸՆԳԻՏԱԾՈՒ ԿԱՐԳԵՐԻ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հնդեռոպական լեզուների ստուգաբանության հարցերը. Ա. Ֆ. Պոստ.— Բուպպի «Համեմատական քերականության» հետ միա-

<sup>1</sup> С. Баран, Стихии человеческой речи, или теория происхождения звуков (физиологическое исследование), 1842.

<sup>2</sup> R. von Raumer, Aspiration und Lautverschiebung, 18:

ծամանակ Ա. Ֆ. Պոտտը (1802—1887) լույս է բնծայում իր «Ստուգաբանական ուսումնասիրություններ հնդգերմանական լեզուների բնագավառում» աշխատությունը<sup>1</sup>: Իր այս աշխատության մասին Պոտտը լրացնում էր Բոպպի հետազոտությունը. եթե Բոպպի ուշադրությունը կենտրոնացած էր քերականական կառուցվածքների համեմատության վրա, ընդ որում հնչյունաբանությունը թույլ էր ներկայացված, ապա Պոտտն ընտրում է բառապաշարի հետազոտությունը և համեմատական հնչյունաբանությունը: Նա ի մի է հավաքում բառերի ստուգաբանական համեմատությունները և դրանց հիման վրա տալիս հնչյունների փոխանցումները հնդեւրոպական տարբեր լեզուներում (սանսկրիտում, հունարենում, լատինարենում, լիտվերենում և գոթերենում)<sup>2</sup> լրացնելով «Փրիմի օրենքը» հնչյունական այլ «օրենքներով»: Նրա տված հնչյունական համապատասխանությունների աղյուսակները կարևոր դեր խաղացին հնչյունական օրենքների ըմբռնման հարցում: Պոտտի այս աշխատությունը փաստորեն հնդեւրոպական լեզուների առաջին ստուգաբանական բառարանն էր: Առաջին հատորում քննելով այսպես կոչված «ստուգաբանական» հնչյունափոխությունները՝ երկրորդ հատորում Պոտտը զբաղվում է «քերականական» հնչյունափոխությամբ (առնմանում, տարնմանում, դրափոխություն, հնչյունների հավելում և պակասում) և բառակազմությամբ (բարդություն, ածանցում և ներքին թեքում):

Պոտտի հետաքրքրությունը հնդեւրոպական լեզուների ստուգաբանության հարցերով չի սպառվում: Նա դրել է բազմաթիվ այլ հոդվածներ ու աշխատություններ և՛ նվիրված ընդհանուր լեզվաբանությանը, հնդեւրոպական զանազան լեզուների (գնչուերենին, լիտվերենին) ու զանազան մասնակի հարցերի (ինչպես, օրինակ, կրկնությունը): Նրան է պատկանում նաև աֆրիկյան բանտու լեզուների հայտնագործման պատիվը:

Պոտտին ևս հատուկ է Բոպպի նատուրալիստական և մեխանիստական հայեցակետը: Նրա համար ևս լեզուն «հոգևոր-մարմնական բնական էակ է» (geistig-leibliches Naturwesen), «բնության արտադրանք» (Naturprodukt), որի զննությունը, սակայն, լեզվաբանը կատարում է առանց զանակի, առանց լեզուն կենդանությունից զրկելու:

<sup>1</sup> A. F. Pott, Etymologische Forschungen auf dem Gebiete der indogermanischen Sprachen, I—II, 1833—1836: Երկրորդ հրատարակությունը, 6 հատորով, կատարվել է 1859—76 թթ.:

Լեզվաբանական հնէաբանության հիմնադրումը. Աղալբերտ Կուն. — Պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրները լեզվաբանական հետազոտությունը ոչ միայն չէին կարում ժողովուրդների ծագման ու փոխհարաբերության հարցերից, այլև համարում էին դրանց լուծման գլխավոր միջոցը:

Հնդկերոպական ժողովուրդների ցեղակցական կապերի հիմնավորումը բնականաբար երկու կարևոր պահանջ էր առաջադրում. առաջին՝ լեզվաբանության տվյալները հիմնավորել այլ գիտությունների տվյալներով և երկրորդ՝ այդ տվյալներն օգտագործել ժողովուրդների պատմության ու կուլտուրայի հարցերի լուսաբանության համար: Շատ լեզվաբանների զբաղեցնում էր, օրինակ, հնդկերոպացիների նախահայրենիքի հարցը. Գրիմը, Պոտտը և ուրիշները պաշտպանում էին հնդկերոպացիների ասիական ծագման ընդհանրացած կարծիքը:

Առաջին գիտնականը, որ սխտեմատիկ կերպով զբաղվում է լեզվաբանական հնէաբանության հարցերով, Ա. Կունն էր (1812—1881): Նրա ժամանակ կուտակվել էր ստուգաբանական բավականաչափ հարուստ նյութ, որի հիման վրա կարելի էր եզրակացություններ անել հնդկերոպացիների հնագույն պատմության մասին: Իր «Հնդգերմանական ժողովուրդների հնագույն պատմության մասին» նշանավոր հոդվածում<sup>1</sup> Կունը խնդիր է դնում «որոշել այն վիճակի հիմնական գծերը, որի մեջ գտնվում էր այդ ցեղը նախքան ժողովուրդների տրոհվելը, երբ դեռ մի ժողովուրդ էր»<sup>2</sup>: Զուգադրելով զանազան ընդհանուր բառեր՝ Կունը փորձում է ցույց տալ, որ նախքան տրոհվելը հնդկերոպացիները ունեին կանոնավոր բնտանեկան կյանք (հմմտ. բնտանեկան անունները), պետական կառուցվածք (հմմտ., «թագավոր», «պետ» նշանակող անունները), վարում էին հովվական կյանք (հմմտ. կենդանիների անունները), արդեն անցել էին հողագործական կյանքի (հմմտ. արորի ընդհանուր անունը) և նստակյաց կյանք էին վարում (հմմտ. տան, բակի, գյուղի, քաղաքի և այլն ընդհանուր անունները): 1850 թ. Կունը լրացնում է իր եզրակացությունները կելտական և սլավոնական լեզուների տվյալներով:

Կունի ծառայությունը սրանով չի սպառվում: Նա համարվում է նաև համեմատական դիցաբանության հիմնադիրը: 1852 թ. նա սկսել է լույս ընծայել «Համեմատական լեզվաբանության»

<sup>1</sup> A. Kuhn, Zur ältesten Geschichte der indogermanischen Völker, 1845.

<sup>2</sup> Նույն սեղր, էջ 2:

հանդեսը»<sup>1</sup>, որ շատ կարևոր դեր է խաղացել լեզվաբանության պատմութեան մեջ: 1868 թ. Շլայխերի հետ միասին նա սկսել է լույս ընծայել «Նյութեր համեմատական լեզվաբանութեան շուրջը՝ արիական, կելտական և սլավոնական լեզուների բնագավառում» պարբերականը<sup>2</sup>:

Լեզվաբանութեան տվյալները պատմական կյանքի լուսաբանման համար օգտագործելու ձգտումը առանձին ազդակ է ստանում Գրիմի «Գերմաներեն լեզվի պատմութեամբ» (1848), որտեղ նա անհրաժեշտ է համարում «բառերից անցնել իրերին»:

Հնդեւրոպական հնչյունական հերթագայութեան և շեշտի ուսումնասիրությունը. — Ա. Հոլցմանը առաջին դիտնականներից մեկն է, որ մենագրական ուսումնասիրութեան առարկա է դարձնում հնդեւրոպական լեզուների քերականական կառուցվածքի այնպիսի մի կարևոր կողմ, ինչպիսին ձայնավորների՝ քերականական արժեք ունեցող փոփոխություններն էին, այն է՝ ձայնավորների հերթագայությունը կամ ձայնդարձը (Ablaut-ը): 1844 թ. լույս է տեսնում Հոլցմանի «Ձայնդարձի մասին» աշխատությունը<sup>3</sup>, որի մեջ նա նկատում է ձայնավորների հերթագայութեան կապը շեշտի հետ: Հոլցմանը կանխում է վեոների կողմից հետագայում ավելի լրիվ ձևակերպված այն օրենքը, ըստ որի գերմանական խուլ և ձայնեղ բաղաձայնների հերթագայությունը (հմմտ. դոթ. þarf «ես կարիք ունեի» և þaurbun «մենք կարիք ունեինք») կախված է շեշտի դիրքից: Հոլցմանի անվան հետ է կապված նաև գերմանական լեզուների պատմութեան համար կարևոր մի երևույթի մատնանշումը, որ ստացել է «Հոլցմանի օրենք» անունը. j և w հնչյունները գերմանական լեզուներում որոշ կարճ ձայնավորներից հետո ուժեղանալով՝ դարձել են կրկնակ հնչյուններ, որոնցից առաջինը արևմտագերմանական լեզուներում նախորդ կարճ ձայնավորի հետ երկբարբառ է կազմում, իսկ գոթերենում և սկանդինավյան լեզուներում վերածվում է պայթականի (հմմտ. հին վերին գերմ. zweio «երկու» և գոթ. twaddjē, հին սկանդ. tuesday, հին վերին գերմ. triuwa, treuwa «հավատարիմ» և գոթ. triggwa «միութուն», հին սկանդ. հգն. tryggvar «հավատ»): Հոլցմանի կարծիքով՝ կրկնությունը տեղի է ունեցել այն դեպքում, երբ շեշտն ընկել է նախորդ վանկի վրա:

<sup>1</sup> Kuhn's Zeitschrift für vergleichende Sprachforschung.

Beiträge zur vergleichenden Sprachforschung auf dem Gebiete der arischen, celtischen und slavischen Sprachen. I—VIII.

<sup>3</sup> A. Holzm ann. Ueber den Ablaut. 1844.

1847 թ. և. Բենլյուն լույս է ընծայում «Հին և նոր հնդերոպական լեզուների շեշտադրության մասին»<sup>1</sup> աշխատությունը, որտեղ հենվում է Հոլցմանի վրա:

Այս բոլորով հանդերձ հնչյունական հերթադասությունների ուսմունքը մինչև 1868 թ. հենվում էր հնդիկների կոնցեպցիայի վրա. այդ թվին միայն և. Գայգերը դնում է հերթադասությունների ժամանակակից ուսմունքի հիմքերը:

## բ) Առաճնից լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրությունը

Հնդիրանական լեզուներ. պարսկական սեպագիր արձանագրությունների վերծանումը.— Քանի որ սանսկրիտը համարվում էր հնդերոպական լեզուներից հնագույնը, բնականաբար հնդերոպական լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ նրան առանձնահատուկ տեղ էր տրվում: Սրա հետ կապված հնդկական հին գրավոր հուշարձանների լեզվի հետազոտությունը դառնում է առաջնահերթ խնդիրներից մեկը: Այդ հետազոտությունն սկսվում է հին հնդկերենի ավելի նոր հուշարձաններից՝ կպիկական դասական սանսկրիտի նմուշներից և 1840-ական թվականներից տարածվում նաև վեդաների լեզվի վրա: Վերջիններս այն ժամանակ հնդերոպական ամենահին լեզվական հուշարձաններն էին և խիստ կարևոր էին համեմատական հետազոտության տեսակետից:

Դանիացի գիտնական Նիլս Լյուդվիգ Վեստերգորդը (1815--1878) 1840—41 թթ. լույս է ընծայում «Սանսկրիտերեն լեզվի արմատները»<sup>2</sup> աշխատությունը, որը սանսկրիտի արմատական բառարանի առաջին փորձն էր: Այս աշխատությունը հենվում էր արմատների այն ցանկերի վրա, որոնք հանդիպում էին հնդկական քերականների աշխատություններում: Սակայն հեղինակը դրանք օգտագործում է անհրաժեշտ քննադատական վերաբերմունքով և օժտում սանսկրիտական գրականությունից առնված բազմաթիվ օրինակներով: Վեստերգորդը աշխատություններ է նվիրել նաև սանսկրիտի և իսլանդերենի ցեղակցության հարցին<sup>3</sup>,

L. Ben loew. De l'accentuation dans les langues indo-européennes tant anciennes que modernes, 1847.

<sup>2</sup> N. L. Westergaard. Radices linguae sanscritae, 1840—1841.

N. L. Westergaard, On the Connexion between Sanscrit and Icelandic.

հնդկական պատմութեան հնագույն շրջանին<sup>1</sup>, դանիերեն լեզվով լույս է ընծայել սանսկրիտի մի բառարան և այլն:

Իրանական լեզուների դերը հնդկրոպական լեզուների համեմատական քերականութեան համար մեծացաւ առանձնապես պարսկական բնեռագիր արձանագրութեանների ընթերցումից հետո:

Հին պարսկական բնեռագիր (սեպագիր) արձանագրութեանների լեզվի վերծանումը XIX դ. գործն է: Գեոհս 1621 թ. իտալացի վաճառական Պիետրո դելլա Վալլան բերել էր Դարեհի՝ Պերսեպոլիսի պալատի արձանագրութեանների պատճենները: XVІІІ դ. վերջին դանիացի ճանապարհորդ Կարստեն Նիբուրը հրատարակում է սեպագիր տեքստերի՝ իր կողմից կատարված ճշգրիտ ընդօրինակումները և միաժամանակ կարողանում է որոշել, որ արձանագրութեանները գրված են 3 լեզվով և 3 տարբեր սիստեմով՝ այբբենական, վանկային և գաղափարագրային: Սակայն բնեռագրերի վերծանման պատիվը պատկանում է Գյոտինգենի գիմնապիտայի ուսուցիչ Գրոտեֆենդին, որը 1800 թվից սկսում է զբաղվել այդ գործով: Նա սկսում է Նիբուրի բերած 2 արձանագրութեանից, որոնք այբբենական գրով էին գրված: Արդեն 1802 թ. նա կարողացավ գտնել արձանագրութեանների վերին մասի ընթերցման բանալին: Ամենից առաջ Գրոտեֆենդը մտածեց, որ արձանագրութեան լեզուն պետք է լինի պարսկերեն, որովհետև բերված է Պերսեպոլից: Առանձնաշնչելով բառերն իրարից այն թեք սեպանշանի օգնությամբ, որի արժեքը որոշել էր դեռևս Պիետրո դելլա Վալլան, Գրոտեֆենդը ուշագրութեան դարձրեց արձանագրութեանների տարբեր մասերում կրկնվող բառախմբի վրա: Բնականաբար նա ենթադրեց, որ այդ խումբը պարունակում է արքաների անունները՝ նրանց տիտղոսներով հանդերձ: Սասանյան Պարսկաստանի թագավորների՝ այլուստ հայտնի տիտղոսավորումը հնարավորութեան էր տալիս որոշելու բառերի տեղը. այն հնչում էր այսպէս. «X արքա, արքա մեծ, արքաների արքա, որդի Y արքայի, սասանյան»: Որոշելով ամենից ավելի շատ կրկնվող «արքա» բառի արժեքը՝ Գրոտեֆենդը նկատեց, որ արձանագրութեաններից մեկում այդ բառը պակասում է այն տեղում, որտեղ պետք է լինի հոր տիտղոսը. նշանակում է՝ պետք է ընտրել այն թագավորի անունը, որ թագավորի որդի չի եղել. Գրոտե-

<sup>1</sup> N. L. Westergaard. Ueber den aeltesten Zeitraum der indischen Geschichte.

ֆենդը որոշեց, որ այդ թագավորը Դարեհն է, որը 521 թ. մ. թ. ա. թագավոր է դարձել: Սրանից հետո գործն առաջ գնաց, մանավանդ Քեհիսթունի ժայռի (Քերմանշահ քաղաքի մոտ) 400 տողանոց հսկայական արձանագրության հայտնագործումից հետո: 1836 թ. Թուրքիստանը կարդում է այդ արձանագրության մի հատվածը, իսկ 1847 թ. հրատարակում է ողջ արձանագրության ամբողջական տեքստը: Այսպիսով, XIX դ. կեսին հին պարսկական սեպագիր տեքստերի վերծանման գործը կարելի է ավարտված համարել:

Հայերեն.— Հայերենի՝ այլ հնդկարոպական լեզուների հետ ունեցած ցեղակցության փաստը ճանաչում է ստանում Հ. Պետերմանի «Հայերեն լեզվի քերականության»<sup>1</sup> և Յր. Վինդիշմանի «Հայերենի տեղը արիական լեզվաբնում»<sup>2</sup> հոդվածի լույս ընծայումից հետո: Այս հեղինակներից անկախ այդ ցեղակցության փաստի վրա մատնանիշ է անում հայ գրող և Աբովյանը իր «Նոր տեսական և գործնական քերականութիւն՝ ուսուսաց վասն հայոց» (1837—1838) աշխատության մեջ, որը սակայն ժամանակին լույս չի տեսել:

Գիտական աշխարհում ընդունելություն է գտնում հայերենի՝ իրանական լեզու լինելու տեսակետը: Այս բանն ընդունում են Քոպպը, Ռ. Գոշեն, Պ. դը-Լագարդը, Յր. Մյուլլերը, Ք. Պատկանյանը, որոնք մի շարք աշխատություններ են նվիրում հայերենի քերականության, հնչյունաբանության և բառապաշարի համեմատական ուսումնասիրությանը:

Դասական լեզուներ (հին հունարեն և լատիներեն).— Դասական ֆիլոլոգիան այս ենթաշրջանում դեռևս հեռու է կանգնած համեմատական քերականության նվաճումներից: Համեմատական քերականության հիմնադիրները դասական լեզուների առաջնակարգ մասնագետներ չէին, իսկ դասական ֆիլոլոգիայի մասնագետները կասկածով էին նայում համեմատական քերականության շուրջը բարձրացած աղմուկին: Դասական ֆիլոլոգիան երկար ժամանակ պահպանում էր իր տրադիցիոն մեթոդը և սկզբբունքները: Սակայն այս բանը երկար շարունակվել չէր կարող. արդեն 1840-ական թվականներին որոշ կոնտակտի անհրաժեշտություն է առաջանում. նախ՝ Արենսի «Հունարենի բարբառների մա-

<sup>1</sup> H. Petermann. Grammatica linguae armeniacae, 1837.

F. Windischmann. Die Grundlage des Armenischen im arischen Sprachstamme. ABAW, IV, 2. 1846 (գրվել է 1836 թ.):

սին»<sup>1</sup> աշխատութեամբ վարկ ստացած բարբառագիտական հրատարակութիւններն ու ուսումնասիրութիւնները ցույց տվին, թե որքան կարևոր է համեմատական քերականութեան իմացումը բարբառային ձևերի բացատրութեան համար. երկրորդ՝ համեմատական լեզվաբանութեան մեջ սուր կերպով ղգացվում էր դասական լեզուների տվյալների ավելի լավ մշակման, դասական ֆիլոլոգիայի նվաճումների օգտագործման կարիքը: Հարկավոր էր մի մարդ, որ դասական լեզուների և դասական ֆիլոլոգիայի նվաճումների անբասիր իմացումը զուգակցեր համեմատական քերականութեան տվյալների հետ. այդ մարդը Գեորգ Կուրցիուսն էր (1820—1885), որը արդեն 40-ական թվականներից հանդես է գալիս մի շարք աշխատութիւններով: Սակայն նրա գործունեութիւնը հիմնականում պատկանում է հաջորդ ենթաշրջանին, ուստի և անհրաժեշտ ենք համարում նրա մասին հետո խոսել:

**Ռոմանական լեզուներ. Ֆր. Դից.**—Նախորդ շրջանի լեզվաբանական տեսութիւնների քննարկումը ցույց տվեց, որ ռոմանական լեզուների ցեղակցութեան և լատիներենի հետ ունեցած հարաբերութեան հարցերը վաղուց էին զբաղեցնում մտքերը: Սակայն ռոմանական լեզուների գիտական-համեմատական սիստեմատիկ ուսումնասիրութիւնը նոր ժամանակների գործ է և կապված է պատմա-համեմատական լեզվաբանութեան զարգացման հետ:

Նոր ժամանակների ռոմանական լեզվաբանութեան հիմնադիրը Ֆր. Դիցն էր (1794—1876): Նրա երկու գլխավոր աշխատութիւնները՝ «Ռոմանական լեզուների քերականութիւնը» և «Ռոմանական լեզուների ստուգաբանական բառարանը»<sup>2</sup> դարձան ռոմանական ֆիլոլոգիայի դասական աշխատութիւնները և ունեցան բազմաթիվ հետևորդներ: Կարևոր դեր է կատարել Դիցը նաև ռոմանական լեզուների հնագույն տեքստերի հրատարակութեան և մեկնաբանութեան գործում:

Դիցը ռոմանական լեզուները համարում է ոչ թե դասական լատիներենի ձևափոխութիւնները, այլ նրա կողքին դոյութիւն ունեցող ժողովրդական լատիներենի հետևորդները: Իր համեմատական քերականութեան ներածութեան մեջ Դիցը փորձում է բա-

<sup>1</sup> A r e n s, De linguae graecae dialectis, 1839—1843.

Fr. Diez, Grammatik der romanischen Sprachen, I—III, 1836—1844. **Ֆրանս. հր. 1872—76.** Etymologisches Wörterbuch der romanischen Sprachen, 1853.



յաճայտել ժողովրդական լատիներենի առանձնահատկությունները, ցույց է տալիս հունարենի ու գերմանական լեզուների բառային ազդեցությունը ուսմանական լեզուների վրա և գծում ուսմանական լեզուների զարգացման ու բարբառային տարբերակման պատկերը: Ներածությունը հետևում են ուսմանական լեզուների համեմատական հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառակազմությունը և շարահյուսությունը (պարզ ու բարդ նախադասությունների համեմատական քննությունը): Գրավոր հուշարձանների լավագույն օգտագործմամբ, նյութի լայն ընդգրկմամբ՝ սիստեմավորմամբ, կիրառած մեթոդի ճշգրտությամբ, հնչյունական փոփոխությունների օրինաչափ բնույթը բացահայտելու ձգտմամբ և այլն,— այս բոլոր հատկություններով Դիցը բացառիկ տեղ է գրավում պատմա-համեմատական լեզվաբանության մեջ և ոչ միայն մեծ ծառայություն է մատուցել ուսմանական ֆիլոլոգիայի զարգացմանը, այլև օրինակ է հանդիսացել հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության շատ փորձերի համար: Իլյուր չէ, որ էնգելը նրան գնում է Բոպպի և Գրիմի շարքում: Այս բոլորով հանդերձ՝ Դիցը տուրք է տալիս պատմա-համեմատական լեզվաբանության տվյալ ենթաշրջանի ընդհանուր թերություններին. այսպես, հնչյունական համապատասխանությունների օրինաչափականությունը սկզբունքի ոչ բավականաչափ խիստ և հետևողական կիրառման հետևանքով նա լավ չի տարբերում ուսմանական լեզուների՝ լատիներենից ժառանգած բառերը հետագա փոխառություններից:

Դիցն ընդգրկում է 6 ուսմանական լեզու՝ իսպաներենը, պորտուգալերենը, ֆրանսերենը, պրովանսալերենը, լատալերենը և ուումիներենը, ընդ որում առաջին շորսը միացնում է մեկ ընդհանուր՝ արևմտյան խմբի, վերջին երկուսը՝ մի այլ՝ արևելյան խմբի մեջ:

Ավելորդ չէ նշել, որ պրովանսալերենի ուսումնասիրության հարցում Դիցը հենվում էր Ֆր. Ռենուարի (1761—1836) վրա, որը 1816—1821 թթ. լույս էր ընծայել «Տրուբադուրների օրիգինալ պոեզիայի հավաքածուն»<sup>1</sup>: Այս աշխատության առաջին հատորը կազմում էր պրովանսալերենի քերականությունը, վերջինը՝ ուսմանական լեզուների համեմատական քերականության փորձը՝ կատարված Գրիմի հետևողությամբ: Սակայն Ռենուարը սխալ

<sup>1</sup> Fr. J. M. Raynouard, Choix de poésies originales des troubadours, I—VI, 1816—1821.

կարծիք ուներ մի կողմից՝ պրովանսալերենի, մյուս կողմից՝ լատիներենի մասին. նա պրովանսալերենը համարում էր լատիներենի և մյուս ուսմանական լեզուների միջին օղակը, իսկ լատիներենը դիտում էր որպես յուրատեսակ ընդհանուր ուսմանական լեզու<sup>1</sup>: Դիցն սկզբում հետևեց Ռենուարին, բայց շուտով ազատվեց նրա ազդեցությունից և վարգացրեց նոր կոնցեպցիա:

Դիցը բազմաթիվ հետևորդներ ունեցավ Գերմանիայում, ուսմանական երկրներում և այլուր: Նրանցից հիշատակելի են Գաստոն Պարիսը (1839—1903) և Պոլ Մեյերը (1840—1917)՝ Ֆրանսիայում, Ասկոլին (1829—1907)՝ Իտալիայում և ուրիշները: Այս և մյուս ուսմանագետների գործունեության մասին մենք դեռ առիթ կունենանք խոսելու:

Գերմանական լեզուներ.— Հնդեւրոպական լեզուների համեմատական ուսումնասիրությունը, ինչպես տեսանք, սկզբնավորվեց գերմանական լեզուների ուսումնասիրության հետ սերտորեն կապված: Ռասկը և Գրիմը միաժամանակ գերմանական լեզուների համեմատական ուսումնասիրության հիմնադիրներն էին: Հնդեւրոպական լեզուների այլ հետազոտողներ ևս այս կամ այն չափով անդրադառնում էին գերմանական լեզուներին: Հոլցմանի «րենքը, որի մասին հիշվել է, նպաստեց գերմանական լեզուների տարբեր խմբերի փոխհարաբերությանը ըմբռնմանը: Մյուս կարգի աշխատություններից նշենք հայտնի կելտագետ Ի. Կ. Ցոյսի (1806—1856) «Գերմանացիները և հարևան ցեղերը» գործը<sup>2</sup>:

Ավելորդ ենք համարում հանգամանորեն կանգ առնել գերմանական լեզուների համեմատական ուսումնասիրությանը նվիրված այլ մանր գործերի վրա: Նշենք, որ այս շրջանում լայն ծավալ է ստանում գերմանական լեզուների հին գրավոր հուշարձանների նրատարակության գործը, որ մեծ չափով նպաստում է այդ լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրությանը:

Քալթիկ-սլավոնական լեզուներ.— Մինչև XIX դ. կեսերը սլավոնական ֆիլոլոգիայի բնագավառում իշխում էր այսպես կոչված հանրագիտական ուղղությունը: Լեզվի հարցերը դեռևս սերտորեն առնչվում էին այլ կարգի հարցերի հետ, դեռևս ֆիլոլոգիական նպատակադրում ունեին: Եթե մի կողմ թողնենք Ա. Վոստոկովին,

<sup>1</sup>Մտ. Проф. М. Г. Сергиевский, Введение в романское языкознание, М., 1952, էջ 250:

<sup>2</sup>J. K. Zeuss, Die Deutschen und die Nachbarstämme, 1837.

որի մասին խոսել ենք, ապա կարելի է նշել շեխ Ի. Դոբրովսկու (1753—1829), սլովեն Կոպիտարի (1780—1844) և սլովակ Շաֆարիկի (1795—1861) անունները: Ի. Դոբրովսկին, որ համարվում է սլավոնական ֆիլոլոգիայի հայրը, հայտնի է շեխական լեզվին ու գրականությանը նվիրված մի շարք աշխատություններով: Նրա գլխավոր աշխատությունը «Սլավոնական լեզվի հին բարբառի հիմունքները» գործն էր<sup>1</sup>: Շաֆարիկը մի շարք աշխատություններ է նվիրել սլավոնական ֆիլոլոգիայի զանազան բնագավառներին: Առանձնապես նշելի է նրա «Պատմություն սլավոնական լեզվի և գրականության՝ բոլոր բարբառներով» աշխատությունը<sup>2</sup>: Շաֆարիկը բավական հիմնավոր կերպով կարողանում է հերքել այն տարածված կարծիքը, թե հին սլավոններենը բոլոր սլավոնական լեզուների հայրն է:

1840—50-ական թվականներին Երևան են գալիս բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրությանը: 40-ական թվականների ռուսական իրականության մեջ պատմա-համեմատական մեթոդի կիրառման առաջին օրինակները աալիս են Գ. Պ. Պավսկին (1787—1863), Մ. Ն. Կատկովը (1818—1887) և ուրիշները: Սրանցից առաջինը իր «Բանասիրական դիտողություններում»<sup>3</sup> և երկրորդը իր «Սլավոնա-ռուսական լեզվի տարրերի և ձևերի մասին» աշխատության մեջ<sup>4</sup> համեմատական քննության են ենթարկում ռուսերենը՝ փորձելով պարզել նրա տեղը ցեղակից լեզուների մեջ:

Բալթիական լեզուներին այս շրջանում նվիրված գործերից հիշելի է Պ. Ի. Կեպպենի աշխատությունը<sup>5</sup>:

Ալբաներեն.— Դեռևս 1835 թ. Ի. Քսյուլանդերը իր «Ալբանացիների կամ շկիպետարների լեզուն» աշխատության մեջ<sup>6</sup> մատնացույց է անում ալբաներենի՝ հնդերոպական լեզուների հետ ու-

<sup>1</sup> I. Dobrovsky, Institutiones linguae slavicae veteris dialecti, 1822.

P. J. Schafarik, Geschichte der slavischen Sprache und Literatur in allen Dialekten, 1826.

Г. П. Павский, Филологические наблюдения, 1841

М. Н. Катков, Об элементах и формах славяно-русского языка, М., 1845.

<sup>5</sup> П. И. Кеппен, О происхождении языка и литературы литовских народов, 1827

<sup>6</sup> J. Xylander, Die Sprache der Albanesen oder Schkipetaren, Frankfurt M., 1835.

Նեցած ցեղակցությունը: Այլևի ուշ Բուպար հատուկ ուսումնասիրություն և նվիրում այս հարցին:

### 3. ՈԶ-ԶՆԳԻՆՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Քամա-սեմական լեզուներ. եգիպտական հիերոգլիֆների և ասուրական սեպագրերի ընթերցումը. եգիպտագիտության և ասուրագիտության ծնունդը.— Սեմական լեզուները տարածված են հյուսիսային Աֆրիկայի և Առաջավոր Ասիայի երկրներում, քամական լեզուները՝ Աֆրիկայի հյուսիսում: Երկու անվանումներն էլ աստվածաշնչից են առնված. մասնավորապես սեմական անվանումը մտցված է Շլեցերի կողմից դեռևս 1781 թ.: XIX դ. առաջին կիսում քամա-սեմական լեզուների ուսումնասիրության բնագավառում կարևոր դեր խաղաց եգիպտական հիերոգլիֆների և ասուրական սեպագրերի վերծանումը, որով հնարավորություն ստեղծվեց քամա-սեմական լեզուների պատմա-համեմատական հետազոտության: մեջ հենվելու հնագույն գրավոր հուշարձանների տված լեզվական ավյալների վրա:

Եգիպտական հիերոգլիֆների ընթերցանության պատիվը պատկանում է ֆրանսիացի գիտնական Ֆրանսուա Շամպոլյոնին (1790—1832), որը տիրապետում էր, բացի դասական լեզուներից, եբրայերենին, արաբերենին և ղպտերենին (հին եգիպտերենի շատավիդը): 1799 թ. Նապոլեոնի՝ եգիպտական և քապեղիցիայի ժամանակ Ռոզետտա վայրում զինվորները գտել էին մի արձանագրություն, որտեղ միևնույն տեքստը գրված էր հիերոգլիֆներով, դեմոտիկ գրով և հունարենով: Մինչև Շամպոլյոնը ձեռնարկված վերծանման փորձերը, այդ թվում և Յունգի փորձը, վերջացել էին անհաջողությամբ: Շամպոլյոնից առաջ իկատել էին, որ թագավորական հատուկ անունները առնված են շրջագծի մեջ: Շամպոլյոնը վերծանումն սկսեց Պտղոմեոս հատուկ անունից՝ ճշտորեն ենթադրելով, որ այն, որպես ոչ եգիպտական հատուկ անուն, պիտի գրված լինի տառանշաններով. պարզվեց, որ եգիպտական նշաններով այն գրված է Պտղոմեոս, այսինքն՝ որոշ ձայնավորներ բացակայում են: 1815 թ. Ֆիլե կղզում գտնվեց մի ուրիշ արձանագրություն, որտեղ կար նաև Կլեոպատրա անունը. համեմատելով ընդհանուր նշանները՝ Շամպոլյոնը հավաստիացավ ընդհանուր լ, ո, պ, ա տառանշանների նույնության մեջ. միաժամանակ ճշտորեն ենթադրեց, որ երկու անգամ կրկնվող նշանը Կլեոպատ-

րա անվան մեջ արտահայտում է ա-ն: Շարունակելով աշխատանքը՝ նա ընթերցեց նաև Տուտմոս և Ռամսես անունները: Հետագա աշխատանքի ընթացքում, հենվելով ղպտերենի իր իմացության վրա, Շամպոլյոնը կարողացավ պարզել որոշ այլ նշաններ ևս. այսպես, իմանալով, որ ձին ղպտերեն կոչվում է իստը և պարզած լինելով ա ու ր նշանները՝ Շամպոլյոնը որոշեց իս-ի արժեքը, այլև իստը նշաններից հետո ղրված ձիու նշանի՝ ղետերմինատիվ լինելը: 1822 թ. սեպտեմբերի 27-ին Շամպոլյոնը Փարիզի Ակադեմիայում ղեկուցում կարգաց եգիպտական հիերոգլիֆների ընթերցանության մասին. էլ համարվում է եգիպտագիտության սկիզբը: Շամպոլյոնի սկսած գործը շարունակվեց Ռ. Լեպսիոսի, Հ. Բրուզի և այլոց կողմից՝ հանգեցնելով եգիպտական հիերոգլիֆների բոլոր տեսակների պարզմանը:

Ասուրագիտության ղարգացման համար վճռական նշանակություն ունեցավ պարսկական սեպագրերի վերծանումը՝ մի կողմից և Բեհիսթունի արձանագրության գլուսը՝ մյուս կողմից: Պարսկական սեպագրերը ներկայացնում էին Միջագետքի սեպագրության պարզեցումը և բանալի էին տալիս ասուրա-բաբելական սեպագրության վերծանման համար: Բեհիսթունի արձանագրությունն էլ բաղկացած էր 3 սյունակից: Դանիայի Մյունստերը պարզեց, որ երրորդ սյունակի արձանագրությունը հիշեցնում է հին Բաբելոնի տեղում գտնված արձանագրությունները: Այլ սյունակի որոշ նշանների հնչյունական արժեքը հայտնի էր պարսկական սեպագրերի վերծանումից. ինչ վերաբերում է լելվին, ապա նրա սեմական բնույթը պարզվեց շվեդ Լեհնշտայնի կողմից՝ աստվածաշնչում, հունական մատենագրության մեջ և Բեհիսթունի սեպագիր տեքստում պահպանված անունների վերլուծությամբ. սակայն սկզբում գործին խանգարեց այն սխալ կարծիքը, թե իբր այլ սեմիտների նման ասուրա-բաբելայիները ձայնավորները չէին գրում: Հետագայում իտալացացի Հինքսը պարզեց, որ ասուրա-բաբելական սեպագրության մեջ ձայնավորները նշանակվում են, և գործն առաջ գնաց: Ասուրա-բաբելական սեպագրերի ընթերցանության գործում մեծ ղեր խաղացին Ռոուլինսոնը, Հինքսը և Օպպերտը. նրանք պարզեցին 200-ից ավելի վանկային նշանների և որոշ թվով գաղափարագրերի բնույթը: Ռոուլինսոնը 1851 թ. ավարտեց Բեհիսթունի արձանագրության երրորդ սյունակի ընթերցումը: Եգիպտական հիերոգլիֆների ընթերցման և քամական լիզոնների ավելի մերձավոր ուսումնասիրության հետևանքով ար-

դեն XIX դ. առաջին կեսում առաջ է քաշվում քամա-սեմական (համիտական և սեմական) լեզուների ցեղակցության հարցը: 1844 թ. Թ. Բենֆեյը նշում է եգիպտերենի և սեմական լեզուների ցեղակցությունը<sup>1</sup>:

Շուտով Կլապոթի կողմից առաջ է քաշվում հնդկրոպական և սեմական լեզուների ցեղակցության հնարավորության հարցը: Թ. Ֆոն Ռաումերը 55 բառի համեմատություն է կատարում:

«Ուրալա-ալթայան» լեզուներ. ֆիննա-ուգրական և սամոյեդական: լեզուների ցեղակցություն հարցը.— Ֆիննա-ուգրական լեզվաբանության սկիզբը, ինչպես նշել ենք, փաստորեն դրվել է դեռևս XVIII դ. վերջին Ս. Դյարմաթիի հայտնի աշխատությամբ<sup>2</sup>: XIX դ. հնդկրոպական պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկը՝ Ռասկը, շնայած ձեռքի տակ եղած նյութերի ոչ լրիվ լինելուն, տալիս է ֆիննա-ուգրական լեզուների սիստեմատիկ դասակարգումը, որին հետևում է Մ. Ա. Կաստրենը (1813—1852): Վերջինս մշակում է ֆիննա-ուգրական և սամոյեդական լեզուների ցեղակցության հարցը, բազմաթիվ աշխատություններ նվիրում սամոյեդական և ֆիննա-ուգրական լեզուների ուսումնասիրությանը<sup>3</sup>: Նրա հետևորդներից են ֆինն լեզվաբաններ Սետելեն և Պասսոնենը:

Վիլհելմ Շոտար հատուկ աշխատություն է նվիրում «ուրալյան» (ֆիննա-ուգրական), թյուրքական, մոնղոլական և տունգուսական լեզուների ցեղակցության հարցին<sup>4</sup>: Ֆ. Վիգեմանը տալիս է «ուրալա-ալթայան» լեզուների հիմնական առանձնահատկությունների բնութագիրը<sup>5</sup>:

Այլ լեզուներ.— XIX դ. սկզբներին հավաստվում է Արևելյան Ասիայում շին-տիբեթական, Հնդկաստանում՝ դրավիդյան և Աֆրիկայում՝ բանտու լեզվաընտանիքների գոյությունը: Ալեքսանդրը Չոման 1834 թ. գրում է տիբեթերենի առաջին գիտական քերա-

<sup>1</sup> Th. Benfey, Über die Verhältniß der ägyptischen Sprache zum semitischen Sprachstamm, Leipzig, 1844.

S. Gjarmathi, Affinitas linguae hungaricae cum linguis feniciae originis grammaticae demonstrata, 1799.

<sup>3</sup> A. Castren, Grammatik der samojedischen Sprachen, 1854. Wörterverzeichnisse aus den Samojedischen, 1885 և այլն:

<sup>4</sup> W. Schott, Versuch über die tatarischen Sprachen, 1836.

<sup>5</sup> F. Wideman, Über die früheren Sitze der tshudischen Völker und ihre Sprachverwandtschaft mit den Völkern Mittelhochasiens, 1838.

կանությունն ու բառարանը: Հոգոսոնը 1847 թ. աշխատություն է նվիրում շին-տիրեթական լեզուների համեմատական ուսումնասիրությանը:

1823 թ. Կլապոթի կողմից փորձ է կատարվում ի մի բերելու Ասիայի լեզուների վերաբերյալ տեղեկությունները<sup>1</sup>: Կլապոթն անաչին գիտնականն է, որ մտցնում է հնդկրոպական լեզուների համար «հնդգերմանական» (indogermanisch) անվանումը, որը լայն գործածություն է ստանում գերմանական լեզվաբանների շրջանում. ոչ գերմանական գիտնականները գերադասում են համատիպ «հնդկրոպական» տերմինը: Տարբեր ժամանակ գործածության մեջ են դրվել նաև «արիական», «արիա-եվրոպական» և այլ կարգի տերմիններ, բայց դրանք կարճ կյանք են ունեցել:

Վրացերենի ուսումնասիրության բնագավառում մեծ աշխատունք է կատարում Մ. Բրոսսեն<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Klapproth, Asia polyglotta, Paris, 1823.

<sup>2</sup> M. Brosset, L'art libéral, ou grammaire géorgienne, Paris, 1834 (լիթոգր.) Elements de la langue géorgienne, Paris, 1837 և այլն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

### 1. ԱՌՅԵՐԵՆ

- Աբրահամյան Ռ., Հնդեւրոպական լեզվախումբ և հայ լեզվաբանութեան պատմութիւնը, «Արարատ», 1912, էջ 696—719:
- Աղայան Է., Հայ լեզվաբանութեան պատմութիւնը, I, Երևան, 1958, էջ 36—46, 161—182:
- Աճառյան Հ., Պարսկական բեկողերի յուժման պատմութիւնը, ՊՀԱԺ, 34, 1951, էջ 129—132:
- Կոստանյանց Կ., Հայադիտութիւնն Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910, էջ 4Ա—4Գ:
- Մենկիշյան Գ., Արդի լեզվագիտութիւնը, ՀԱ, 1896, էջ 4, 76:
- Շոուստիկ Գ. Ա., Ուսումնասիրութիւնը հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս (Գ. Զարբանալյանի թարգմանութեամբ ու լրացումներով), Վենետիկ, 1895, էջ 269—287:
- Ջահուկյան Գ., Խաչատուր Արուստանը որպէս լեզվաբան-քերականագետ, ՊՀԱԺ, 42, էջ 47—105:
- Տերգիշյան Ս., Հնդեւրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885:

### 2. ԽՈՒՍԵՐԵՆ

- Василевская Е. Л. Лингвистическое наследство Н. Г. Чернышевского, УЗ Моск. Пед. ин-та им. В. И. Ленина. LXXV 4, 1954, էջ 139—156:
- Василевская Е. Л. Чернышевский-языковед, РЯШ, 1953, № 3, էջ 69—76:
- Виноградов В. В. Из истории изучения русского синтаксиса, М 1958, էջ 122—222:
- Виноградов В. В., Синтаксические воззрения А. Х. Востокова и их значение в истории русского языкознания, ИАН, X. 1951—1952, էջ 116—135:
- Гайм Р., Вильгельм фон Гумбольдт, 1898:
- Коропачинский С. Ф. Значение А. Х. Востокова в истории славянской филологии, «Отчет Одесской первой прогимназии за 1874/5 уч. год», էջ 1—53:
- Лукьяненко А. М., Основные методы и направления в области славянского языкознания в связи с историческим ходом развития



науки языкознания вообще. индо-европейского—в частности, Киев, 1909.

- Львов А. С., А. Х. Востоков, РЯШ, 1956, № 6, էջ 95—102.
- Мосальский В. И., Русские революционеры-демократы и К. Д. Ушинский о языке и его изучении. Очерки по истории развития передовой отечественной научной мысли, Киев, 1956.
- Памяти М. А. Кастрена, к 75-летию со дня смерти, Л., 1927.
- Панов Д., Лингвистические взгляды В. Г. Белинского, автореферат канд. диссерт., Москва, 1953.
- Сергиевский М. В. Введение в романское языкознание, М. 1952, էջ 249—252.
- Сорокин Ю. С., Н. Г. Чернышевский и материалистическое языкознание, 1949, էջ 536—550.
- Степанова А., Лингвистическое наследие Н. Г. Чернышевского, РЯШ, 1957, № 6, էջ 94—100.
- Цейтлин Р. М., А. Х. Востоков один из первых русских славяноведов, КСИС, 25, 1958, էջ 3—13.
- Цукерштейн-Горницкая Н., Вопросы литературного языка в борьбе Белинского за передовую русскую литературу, автореферат канд. диссерт. Л. 1954.

### 3. ՕՏԱՐ ԱԵՂՈՒՆԵՐՈՎ

- Abergge E., W. v. Humboldt und die Probleme der allgemeinen Sprachwissenschaft, NJKA, 24, 1921. s. 62—75.
- Brauer J., A. F. Bernhardt, die Sprachphilosophie der alt. Romantik. Diss., Breslau, 1921.
- Cassirer E., Die kantischen Elemente in W. v. Humboldts Sprachphilosophie, „Festschrift für P. Hensel-Erlangen“, Greitz, 1923. էջ 105—127.
- Crümmel-Lacour P., La philosophie individualiste. Étude sur Guillaume de Humboldt, Paris, 1864.
- Fjesel E., Die Sprachphilosophie der deutschen Romantik, Tübingen, 1927.
- Franke K., Die Brüder Grimm, Ihr Leben und Werken, Dresden-Leipzig, 1899.
- Gabelentz G. v. d., A. F. Pott, ABD, 26.
- Gäudfroy-Demombynes, L'oeuvre linguistique de Humboldt, Paris, 1931.
- Horn P., Պոստի գործունեութեան բնութագիրը ВВ-ում, XIII, էջ 317 և 59.
- Harnack O., Wilhelm von Humboldt, 1944.
- Haym R., Wilhelm von Humboldt, Berlin, 1858.
- Howald E., Wilhelm von Humboldt, 1944.
- Kainz Fr., Friedrich Schlegels Sprachphilosophie, ZDG, 3, 1941, էջ 263—82.

- Körner J., Indologie und Humanität. Festschrift für M. Winternitz, Leipzig, 1933. **52** 117-138.
- Lammers W. W. v. Humboldts Weg zur Sprachforschung 1785- 1801, NDF, 56, Berlin, 1936.
- Lefman S., Franz Bopp, sein Leben und seine Wissenschaft, I-II, Berlin, 1891- 1897.
- Lommel H., Friedrich Schlegels Charakteristik des Sanskrits und die deutsche Sprache, DVLG, 8, 1930, **52** 647- 659.
- Pott A. F., W. v. Humboldt und die Sprachwissenschaft. **Հովհորդակ** „Über die Verschiedenheit...“-ի առաջաբանը, Berlin, 1876.
- Rantzau J. A. von, Wilhelm von Humboldt. Der Weg seiner geistigen Entwicklung, München, 1939.
- Sandfeld Kr., R. Rask. „Dansk Biografisk Leksikon“, 19, 1940. **52** 180- 194.
- Scheinert M. W. Humboldt Sprachphilosophie, AGP, 13, 1915 **52** 141-195.
- Scherer W., J. Grimm, 2-te Aufl., Berlin, 1885.
- Schmidt K. E. A., Beiträge zur Geschichte der Grammatik, Halle, 1859.
- Simon J., Das Problem der Sprache bei Hegel, Köln, 1957.
- Steinmayer, R. v. Rauemer, ADB, 27.
- Steinthal H., Die Sprachwissenschaft Wilh. von Humboldts und die Hegelsche Philosophie, Berlin, 1844.
- Steinthal H., Die sprachphilosophischen Schriften W. Humboldts, 1884 (Einleitung).
- Stenzel L., Die Bedeutung der Sprachphilosophie W. v. Humboldts für die Probleme des Humanismus, „Logos“, 10, 1921/22, **52** 261- 4 52.
- Verburg P. A., The Backgrounds of the Linguistic Conceptions of Bopp, „Lingua“, II, 4, 1950, **52** 438-468.
- Wimmer L., R. Kr. Rask, 1887.

**ԵՐԿՐՈՐԳԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ**  
(XIX դ. III քառասուրդը)

**ՎԵՐԱԿԱՆԳՆՈՎԱԿԱՆ (ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԻՍՏԱԿԱՆ)  
ԿՈՄՊԱՐԱՏԻՎ ԻԶՄ**

**ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ենթաշրջանի լեզվաբանական ուղղությունները և նրանց ձևավորման նախադրյալներն ու պայմանները.— Պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորման ռեկոնստրուկտիվիստական ենթաշրջանը ընդգրկում է շուրջ մեկ քառորդ դար՝ մոտավորապես XIX դ. կեսերից մինչև 70-ական թվականների կեսերը: Տնտեսական տեսակետից այս շրջանում կապիտալիզմն ապրում է իր նախամոնոպոլիստական-նախաիմպերիալիստական զարգացման փուլը, երբ դեռևս շարունակվում է նրա զարգացման վերընթաց գիծը, շարունակվում է ազատ մրցակցությունը, երբ սկսում է տիրապետող դասնալ ծանր արդյունաբերությունը:

Կապիտալիզմի վերընթաց զարգացման առկայության պայմաններում շարունակում են զարգանալ և բնական գիտությունները, որոնք անհրաժեշտ նախապայման են նրա անարգել առաջընթացի համար: Միաժամանակ նշանակալից զարգացում են ապրում և հասարակական գիտությունները. կապիտալիզմի զարգացման վերընթաց գիծը նպաստավոր ազդեցություն է գործում նրանց մեջ առաջավոր դադափարների ծավալման համար, թեև արդեն առկա են հետագա փոփոխությունների սաղմերը:

Լեզվաբանության այս ենթաշրջանում հանդես են գալիս լեզվի ըմբռնման երեք հիմնական կոնցեպցիաներ՝ 1) նատուր-բիո-

յագիական (ա. կենսաբանական կամ բիոլոգիական նատուրալիզմ  
և բ. բիոլոգիզմ), 2) հոգեբանական (պսիխոլոգիզմ) և 3) կուլ-  
տուր-էվոլյուցիոնիստական:

Նատուր-բիոլոգիզմի ներկայացուցիչները լեզուն ըմբռնում են որպես  
բիոլոգիական օրգանիզմ կամ օրգանիզմի ֆունկցիա և լեզվաբա-  
նությունը դասում բնական գիտությունների շարքը: Պսիխոլոգիզ-  
մի ներկայացուցիչները լեզուն դիտում են որպես հոգեկան երե-  
վույթ, իսկ լեզվաբանությունը՝ որպես հոգեբանական գիտություն:  
Կուլտուր-էվոլյուցիոնիզմի ներկայացուցիչները լեզուն դիտում են  
որպես մարդկային կուլտուրայի արտահայտություններից մեկը և  
լեզվաբանությունը դասում «կուլտուրային» (հասարակական) գի-  
տությունների շարքը, թեև նրանցից ոմանք որոշ սուրբ են տալիս  
և բիոլոգիական էվոլյուցիոնիզմին:

Այս երեք ուղղությունների հանդես գալը պայմանավորված է  
մասամբ լեզվաբանության զարգացման նախորդ ընթացքով, մա-  
սամբ էլ գիտության զարգացման ընդհանուր բնույթով: Նատուր-  
բիոլոգիզմը Բոպպի մեխանիստական նատուրալիզմի հետագա  
ձևափոխությունն ու զարգացումն է նոր պայմաններում, երբ ա-  
ռանձնապես մեծ նվաճումներ է ունենում բիոլոգիան, և երբ տեն-  
դենց է նկատվում բիոլոգիայի բնագավառում հանդես եկած էվո-  
լյուցիոնիստական սկզբունքներին ընդհանրական բնույթ հատկաց-  
նելու, դրանք դարձնելու ամենատարբեր բնույթի երևույթների (այդ-  
թվում և հասարակական երևույթների) մեկնաբանության հիմք:  
Անցումը Բոպպի մեխանիստական նատուրալիզմից դեպի «մա-  
քուր» բիոլոգիզմը տեղի է ունենում ոչ միանգամից, այլ որոշ աստի-  
ճանական օղակներով՝ «լիզվական օրգանիզմ» արտահայտության  
փոխաբերական գործածությունից և լեզվի կառուցվածքի ու բնա-  
կան օրգանիզմների ֆիզիոլոգիական կառուցվածքի միջև անցկաց-  
վող անալոգիաներից մինչև այդ արտահայտության ուղղակի ըմ-  
բռնումը և, վերջապես, մինչև լեզուն օրգանիզմի բնական ֆունկ-  
ցիա համարելու տեսակետը: Պսիխոլոգիզմը կապված է հիմնակա-  
նում հոգեբանության՝ որպես գիտություն ձևավորվելու և նրա ու-  
նեցած նվաճումների հետ: Սակայն նա ևս զերծ չէ որոշ ժառան-  
գորդականությունից. պատահական չէ, որ այդ ուղղության հիմ-  
նադիրը՝ Շտայնթալը, իրեն սկզբնապես համարում էր Հումբոլդտի  
հայացքների մեկնաբանողն ու ժողովրդականացնողը: Այս ուղղու-  
թյան ձևավորման համար հատուկ նշանակություն է ունենում այն  
հանգամանքը, որ Հումբոլդտը ուշադրություն էր դարձնում հատ-

կապես լեզվի ներքին կողմի, լեզվական երևույթների իմաստի վրա, մի հանգամանք, որ կազմում է պսիխոլոգիզմի կարևոր գծերից մեկը՝ ի տարբերություն և ի հակադրություն բիոլոգիզմի։ վերջինիս ուշադրության կենտրոնում լեզվի արտաքին-հնչյունական կողմն է։ Կուլտուր-էվոլյուցիոնիզմը հանդես է եկել մի կողմից՝ որպես Հումբոլդտի և Գրիմի կոնցեպցիայի հետագա շարունակությունն ու զարգացումը, մյուս կողմից՝ որպես լեզվի նատուրալիստական-բիոլոգիական ըմբռնման յուրատեսակ հակադրեցությունը։ Եթե լեզվի նատուր-բիոլոգիական ըմբռնմամբ խրկվում էր կապը լեզվի և հասարակական մյուս երևույթների միջև, լեզուն կտրվում էր մարդկային կուլտուրայի զարգացումից, ապա էուլտուր-էվոլյուցիոնիզմը շեշտում է հենց այդ կապը։ Այս դեպքում, սակայն, լեզվի զարգացումը դիտվում է էվոլյուցիոնիզմի դիրքերից, մի բան, որ արդյունք է զարգացման էվոլյուցիոնիստական հայեցակետի ընդհանրացման։ Այս երեք ուղղություններից նատուր-բիոլոգիզմը տիրապետող ուղղություն է հնդկաբանականության մեջ, մինչդեռ մյուսները ավելի շատ հանդես են գալիս ընդհանուր լեզվաբանության և առանձին լեզուների ուսումնասիրության բնագավառում։

Նախորդ ենթաշրջանում լեզվաբանական հետազոտությունն հղանակները ծառայում էին մի հիմնական նպատակի՝ բացահայտել տվյալ լեզուներով խոսող ժողովուրդների և քերականական ձևերի ծագումը։ այլ կերպ ասած՝ լեզուների համեմատությունը նպատակ ուներ գենետիկական հարցեր լուծել։ Այս ենթաշրջանում համեմատությունը աստիճանաբար սկսում է վերածվել մի միջոցի, որի օգնությամբ լեզվաբանները նպատակ են դնում վերականգնել տարբեր լեզուների հիմքում ընկած լեզվի (նախալեզվի) կառուցվածքային տիպն ու առանձնահատկությունները։ Այս բանը լեզվաբանության առանձնացման ու ինքնուրույնացման տենդենցի հետագա արտահայտություններից մեկն էր. եթե համեմատությունը նախորդ շրջանում դիտվում էր գերազանցապես որպես ժողովրդի ծագման ու կապերի բացահայտման միջոց, ապա այս շրջանում այն աստիճանաբար սկսում են դիտել որպես իր իսկ լեզվի կառուցվածքային սկզբնական առանձնահատկությունների վերականգնման միջոց. լեզվական կառուցվածքի և ժողովրդի կյանքի սկզբնական առնչությունների հարցը քննվում է որպես առանձին դիսցիպլինի նյութ։ Այսպիսով, այս շրջանում համեմատության գենետիկական հայեցակետը փոխարինվում է ռեկոնստ-

յուկտիվիստականով: Ռեկոնստրուկտիվիզմը առանձնապես ցայտուն արտահայտություն է գտնում նատուր-բիոլոգիական ուղղութիւն մեջ և այն էլ 1860-ական թվականների սկզբներից. սա մասամբ էլ կապված է բիոլոգիայի մեջ իշխող մեթոդների հետագա կատարելագործման, համեմատական անատոմիայի և հնէաբանութիւնի զարգացման հետագա քայլերի հետ:

Սակայն ռեկոնստրուկտիվիզմը այս բառի լայն առումով հանդես է գալիս նաև լեզվաբանական մյուս ուղղութիւններում, մանավանդ որ դրանց մեջ ևս տիրապետող են ընդհանրապես մարդկային լեզվի ու առանձին լեզուների ծագման ու զարգացման հարցերը: Հոգեբանական ուղղութիւնի ներկայացուցիչները աշխատում են վերականգնել լեզվի ծագման ու զարգացման սկզբնական պայմանների պատկերը, պարզել լեզվի զարգացման տարբեր փուլերի առանձնահատկութիւնները, բացահայտել այն հոգեկան պայմաններն ու նախադրյալները, որոնց մեջ տեղի է ունենում լեզվի ծագումն ու զարգացումը: Կուլտուր-էվոլյուցիոնիստական ուղղութիւնի ներկայացուցիչները ցանկանում են պարզել լեզվի կուլտուրական դերը, բացահայտել տարբեր լեզուների ձևավորման կուլտուրական պայմանների պատկերը, ցույց տալ լեզուների և նրանցով խոսող ժողովուրդների պատմութիւնի ու կուլտուրական զարգացման կապը, վերականգնել այն պայմանների պատկերը, որոնց մեջ տեղի է ունենում տվյալ ժողովրդի լեզվի զարգացումը:

Այսուհանդերձ լեզվաբանութիւնի այս նոր շրջանի զարգացման, կիրառվող մեթոդների և տեսական սկզբունքների առաջ քաշման համար վճռական դեր է խաղում նախորդ շրջանում կուտակված նյութը նոր ձևով մեկնաբանելու անհրաժեշտութիւնը: Լեզվաբանները տեսական հարցերում դիմում են այլ գիտութիւններին, իսկ մեթոդի հարցում հենվում են առավելապես եղած նյութի, լեզուների ցեղակցական կապերի ուսումնասիրութիւնի փաստերի վրա՝ փորձելով ավելի խոր գնալ պատմութիւնի խորքերը, վերականգնել հնդկարոպացիների հին լեզվական զօհրը, հին կուլտուրայի ու կյանքի պատկերը, այլև ընդհանրապես լեզվի ծագման ու զարգացման հոգեբանական հիմքերը:

Լեզվաբանական ուսումնօգնութեան զարգացման էտապները.— Այս ենթաշրջանի համար կարելի է տարբերել երկու էտապ. 1) 1850-ական թվականները, երբ մեթոդի բնագավառում որոշումներ են կատարվում, իսկ տեսութիւնի բնագավառում արդեն

-բօրիմարմուց Նվժ 'ղգ րահիդտեցտե մնզդրեվդոեմօ բօրիմարմուց վլգիտ ղվմնտիտեմվր ղվժտսմտ Լոմիտ Ժքտնթրսմսղմ ղտհիտղժ րսսղգղուս և վնգտ մրսսնտեմտե նրտ մս 'նգիտ նրսն մղվիմուճ ։մնզդստցտտե (վրտվնրսնիւիւ) ղտքնտեմտե վմզղջ ղտհիտղտե մօ րսնզմտտեմ ղտիհիտցվի մ և ղվղվիմուճ ղրտհիտղ ։ձգր վժղսսր -որս վիմարտղ Լգիտնուցտսմտ ոգետղջղտստ ղ Լոմի վլգիտ ստՆ մ և Լգնղտփտթ ձգր վրտվեանսվժ մմտփտեմտե ղտնթրսղտհիտղվսփսփ ղ վրտվնրսնիւիւ վմզղհիտոզտ վչմտղՆտ ղտհիտղտեմղ ։ղվրեվղվի մտե վժղսրտուս մսղ վր Լոմզժմզղի (վրտվնրսնիւիւ) ղտքնտեմտե ղտհիտրտտե վչմտղՆտ ղտհիտղտեմօ րսնիմե և ձեվիո Իսմս 'մժմվե Ճիսչմտետղտց ղտնթրսմսղմ ղտհիտղժ մրսետք վմզղհիտոզց» վղվի մտճ ԵնտՃ ղտհիտղտվե Լգմտցղտց վնտվեղտ րսսղոզտ և ոհրս ։թ 698I ։ղտվեանսվժ րսսմտտ և րսսնտեմտե ղրտ ոգետղջղտստ ղվոզղ Եմսմիմզ Ե XIX — ։ագղցղսնճիսնստվն ղտհիտղտագղ

ՈՃԿԵՆՆՍԿՅ-ՍԿՍՏՈՒՎ ։I

**ՍԳՂՂԿՑԵԳՑՎՍԿ ԻՉ ՍԳՂՂԿՍՍԵՓՎՍՆՆԿՍ ԳՂԿՂԳՂՄՈՒՆԾՂՎ ։I**

։մղրսնթրսղտժտղսնիւց ։

Լգտիղ մզղժղրսնիւմվ մտոտիտց տղչ տմղ և րսսոհո րթրտ տեսս 'մ և ղղվրտժ ղտնթրսղտժտղջ մմսիտղվե րսսղվիղմղզ գթղ 'ոգեոտ ։րսնիմտտտե և ղմտՆտեզտ Նսմս ձգր ղտնթրսմզժմտուճտվսփ վոզղ ։ղվիտվնոմե ղ վմզղղվրտժ մս 'ղրտվր և վլզՆ ձքտնթրստսնտտց ։ղտհիտտրգրտուց-տքտտե Լգիմտտ Իսեմզղ վղտրեանիտղր ղգ րսսիտղ ։սմտՆ մմզղղտժտիեղ ևս Եղտիտղտր 'րսմի վՆ մզղղրսնթրստվսփ սփ ղվջղտստ մղրսնթրսմզժմտուճտվսփ վմզղղվրտժ ղտնթրսղտժտի Եեղ ղ վմզղղվիտվնոմե ղտհիտղտժտիեղ ։մղրսղ գթղմե ղզ րսսղր րսսղտժմՆտթղզ ոհտ մմզղտ րս ղթրսղժ վժղտոտղՆտ ղտհիտղտժ տիեղ— ։մագղտվտ րս ղեհրսցմ վչչտտտղՆտ ղտհիտղտժտիեղ ։

։րսսղտտո և ղրսնթրստնուցտսմտ բօրիմսիտղջ

մրեմեանսվժ Իսմս 'մղրսնթրստտղՆտ վմզղրսնիւ ոժտղ 'րսսղտտո և ղրսստմմի ձմրս ղվժտտ մեսթղր վրեմիմտիսմտտղսիզս ձգր վմս 'մղրսնթրստտղՆտ մսիտղվե վմզղմտղ ։մոզեղտց ղտհիտղտժգեանչ վոսմտնոյ ղ (վմետղրմիչ ղտնթրսնեան ղտհիտղտժգեանչ) վրտթղրտտղ ։նվրեանի վր րսսղոզտ ղզ ոհրս ձմզ '։թ 928I—098I (Ճ ։մղրսնթ ։սնեան ղտհիտղտժգեանչ րսսղտ և ղվղրտժ ղվժտտ ղ 'մղրսնթրսն Եան վրեվրտմստտղ ղտհիտղտեմսնսվժ վղրս ղրսնթրսնե բօրիմսիտղջ

ները չեն ապրում կամ ժառանգ չեն տալիս. այս տեսակետից, Գարվինի ուսմունքի համաձայն, գոյության պայքար է գնում կենդանի օրգանիզմների միջև: Գարվինի ուսմունքը, լինելով գիտության ամենաազդի րնկնող նվաճումներից մեկը, ազդեցություն է թողնում գրեթե բոլոր գիտական ուսմունքների, այդ թվում և հասարակական գիտությունների զարգացման վրա: Առաջանում է այսպես կոչված սոցիալ-գարվինիզմը, որը Գարվինի ուսմունքի կողմերը մեխանիկորեն տեղափոխում է հասարակության բնագավառը՝ փորձելով դրանցով բացատրել հասարակության զարգացումը: Լեզվաբանությունը ևս ղերծ չի մնում բիոլոգիզմի ազդեցությունից: Սկզբնական տարերային նատուրալիզմը, որ արդեն նկատվում էր նախորդ շրջանի սրող հեղինակների, այդ թվում և Բոպպի մոտ, փոխանցվում է բիոլոգիական նատուրալիզմի և բիոլոգիզմի:

Նթե սկզբնական շրջանում նատուրալիզմը տարերային բնույթ էր կրում, և բնական գիտությունների բնագավառից առնված շատ տերմիններ ու հասկացություններ դեռևս փոխաբերաբար էին գործածվում, ապա այս շրջանում այն հանդես է գալիս որպես միանգամայն որոշակի, գիտական համոզմունքների վրա հենվող ուղղություն: Բոպպն սկզբնապես դիմում էր նման տերմիններին փոխաբերաբար, առանց դրանց մեջ խիստ իմաստ դնելու. «Լեզվի օրգանիզմ» տերմինը նա յուրացրել էր Հումբոլդտից, որն իր հերթին սրա մեջ ուղղակի իմաստ չէր դնում և գործածում էր որպես փիլիսոփայական տերմին: Սակայն, ինչպես տեսանք, Բոպպը իր վերջին շրջանում դրսևորում է ակնհայտ նատուրալիզմ, որ անհետևանք չի մնում նատուրալիզմի տարածման համար: Բիոլոգիական նատուրալիզմը և բիոլոգիզմը առանձնապես լայն հիմքեր են գցում գարվինիզմի առաջացումից հետո՝ երկար ժամանակ դառնալով տիրապետող ուղղություն:

Լեզվաբանության մեջ նատուրալիզմի խորացումը մասամբ էլ բացատրվում է որպես Հումբոլդտի մշուշապատ իդեալիստական լեզվափիլիսոփայության հակազդեցությունը. սակայն այդ հակազդեցությունը հանդես է գալիս որպես նատուրալիստական-բիոլոգիական վուլգար մատերիալիզմ, որը հասարակական երկվույթների բացատրության բնագավառում շարունակում է մնալ իդեալիստական հիմքերի վրա:

Բիոլոգիական նատուրալիզմը որպես կոնցեպցիա հանդես է գալիս Մ. Ռապպի և Ա. Շլայխերի աշխատություններում: Ռապպի



«Լեզվի ֆիզիոլոգիան»<sup>1</sup> և «Համեմատական քերականությունը որպես գիտություն» աշխատությունները (1852) շուտով մոռացության են մատնվում, բայց Շլայխերի աշխատությունները երկար ժամանակ ազդեցություն են գործում լեզվաբանության վրա:

Բիոլոգիական ուղղության արմատավորումը կապված է Մաքս Մյուլլերի անվան հետ, որ լեզվաբանության համար նոր հորիզոններ բաց չի անում, բայց նպաստում է լեզվաբանության նորագույն նվաճումների մասսայականացմանը: Ակնհայտ բիոլոգիզմ է դրսևորվում և ֆրանսիացի լեզվաբան Օվելյակի «Լեզվաբանության» մեջ<sup>2</sup>, որտեղ լեզվաբանությունը սահմանվում է որպես բնական գիտություն՝ ի հակադրություն ֆիլոլոգիայի, որ հատկացվում է պատմական գիտություններին: Բիոլոգիզմին որոշ տուրք է տվել նաև ամերիկացի հայտնի լեզվաբան Ուիտնին: Ավելի ուշ շրջանում բիոլոգիզմին տուրք են տալիս նաև Ծսպերսենը, Հոռնը և ուրիշները: Բիոլոգիական նատուրալիզմի և բիոլոգիզմի զարգացումը բնականաբար ունենում է այն հետևանքը, որ հետազոտության համապատասխան եղանակները տեղափոխվում են լեզվաբանության մեջ: Մասամբ էլ սրանով է բացատրվում ռեկոնստրուկտիվիզմի՝ նախալեզվի ու նախաձևերի վերականգրման՝ գլխավոր նպատակ դառնալը:

Այս շրջանի լեզվաբանական ուսմունքների և հատկապես նատուր-բիոլոգիական ուղղության տեսական հիմունքների ձևավորման համար կարևոր դեր են խաղում փիլիսոփայական հոսանքները, առանձնապես գերմանական դասական փիլիսոփայության նվաճումները: Այդ փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Հեգելը (1770—1831) հանդես էր եկել դիալեկտիկական մեթոդով, որը սակայն իդեալիստական դիալեկտիկա էր և հակասության մեջ էր գտնվում իր իսկ Հեգելի դոգմատիկ սիստեմի հետ: Հեգելը, մշակելով դիալեկտիկայի գծերը, հանճարեղորեն կռահեց երևույթների փոխադարձ պայմանավորվածությունը, նրանց փոփոխականությունն ու զարգացումը, շարժման հակասականությունը և հակասության՝ շարժման աղբյուր լինելը, քանակական փոփոխությունների անցումը որակականի և այլն: Սակայն այս զարգացումը Հեգելը դիտում էր որպես հասկացությունների զարգացում, այն կապում էր «համաշխարհային բացարձակ ոգու»,

<sup>1</sup> M. Rapp, Physiologie der Sprache, 1840.

<sup>2</sup> A. A. Hovelacque, Linguistique, 1870, II հր., 1876, թարգմ. А. Овеляк, Лингвистика, СПб, 1881

«բացարձակ իդեալի» զարգացման հետ՝ դրան գոյութիւն հատկացնելով նախքան բնութիւն ու մարդու երևան գալը: «Հեգելը,— գրում է Լենինը,— հասկացութիւնների դիալեկտիկայի մեջ հանճարեղորեն կռահեց իրերի (երեւութիւնների, աշխարհի, բնութիւն) դիալեկտիկան»<sup>1</sup>:

Զարգացումը Հեգելը պատկերացնում էր տրիադայի ձևով (թեզիս, անտիթեզ, սինթեզ), ընդ որում այդ տրիադային զարգացմանը որոշ միաստիկական բնույթ էր հաղորդում: Հեգելի փիլիսոփայութիւնը զգալի ազդեցութիւն է թողել Շլայխերի լեզվաբանական սիստեմի ձևավորման վրա:

### ա) Կենսաբանական (բիոլոգիական) ճատուրալիզմ

Ալֆոուս Շլայխեր.— Շլայխերը յուրատեսակ կամուրջ է նետում նախորդ և հաջորդ ենթաշրջանների միջև. նա փակում է պատմա-համեմատական լեզվաբանութիւն ատաշին ենթաշրջանը և միաժամանակ հիմքեր ստեղծում հաջորդ ենթաշրջանի համար: Հնդկրոպական լեզուների համեմատական քերականութիւն մեջ Նշանավորում է նոր էտապ, իր ընդհանուր լեզվաբանական հայացքներով նպաստում բիոլոգիական նատուրալիզմի արմատավորմանը: Շլայխերը 1850 թվից եղել է Բոննի, Պրագայի և Իենայի համալսարանների պրոֆեսոր:

Շլայխերի առաջին կարևոր աշխատութիւնը «Լեզվահամեմատական հետազոտութիւնների» առաջին մասն էր («Զետացիզմի մասին»)<sup>2</sup>, որտեղ նա քննում է այսպես կոչված «զետացիզմի» հարցը, այն է՝ յ-ի (i-ի) ազդեցութիւնը նախորդ բաղաձայնների վրա: Սրանով Շլայխերը նպատակ է դնում մշակել բոլոր լեզուների նկատմամբ կիրառելի օրենքներ: Երկրորդ մասում («Եվրոպայի լեզուները սիստեմատիկ տեսութիւնով»)՝ նա տալիս է եվրոպայի հին ու նոր լեզուների բնութագիրը և խոստում նրանց տարածման մասին: Այս աշխատութիւն մեջ արդեն նկատվում է մի կողմից՝ Հեգելի ազդեցութիւնը (հեգելյան դիալեկտիկայի որոշ գծերի, հատկապես զարգացման տրիադային ըմբռնման յուրա-

<sup>1</sup> В. И. Ленин, Философские тетради, 1947, էջ 169:

A. Schleicher, Sprachvergleichende Untersuchungen, I, Bonn, 1848.

<sup>2</sup> A. Schleicher, Linguistische Untersuchungen, II Die Sprachen Europas in systematischer Übersicht, Bonn, 1850.

ցումը և հակումը դեպի սիստեմավորում), մյուս կողմից՝ ձևավորված նատուրալիստական կոնցեպցիան: Շլայխերը գտնում է, որ կենդանաբանության և բուսաբանության մեջ կիրառվող դասակարգման ձևաբանական սկզբունքները պետք է կիրառվեն և լեզվաբանության մեջ:

Շլայխերի հաջորդ աշխատությունները նվիրված էին եկեղեցական սլավոներենին և լիտվերենին. վերջինիս Շլայխերը ծանոթացել էր լիտվայում՝ առանց սակայն լիովին թափանցելու նրա շեշտի առանձնահատկությունների մեջ, առանց հասկանալու այդ շեշտի երաժշտական բնույթը: 1852 թ. լույս է տեսնում Շլայխերի «Եկեղեցասլավոներենի ձևաբանությունը»<sup>1</sup>, 1856 թ.՝ «Լիտվերեն լեզվի ձևնարկը», որին հաջորդում է (1857 թ.) քրեստոմատիան՝ բառարանով հանդերձ: Շլայխերի վերջին աշխատությունը, այսուհանդերձ, որոշակի դեր խաղաց արխայիկ գծեր պահպանած լիտվերենի նկատմամբ հետաքրքրության աճման մեջ: Կարևոր է նշել, որ Շլայխերն այստեղ հենվում է կենդանի լեզվի վրա և, այսպիսով, «տառերի» ուսմունքը փոխարինում է հնչյունների ֆիզիոլոգիայով:

1852 թ. լույս է տեսնում Շլայխերի «Լեզվի ձևաբանության շուրջը»<sup>3</sup> աշխատությունը, որտեղ դրսևորվում է նրա ակնհայտ նատուրալիստական կոնցեպցիան: Այս կոնցեպցիան է՛լ ավելի է խորանում «Դարվինի տեսությունը և լեզվաբանությունը»<sup>4</sup> և «Լեզվի նշանակությունը մարդու բնական պատմության համար»<sup>5</sup> աշխատություններում:

«Գերմաներեն լեզու»<sup>6</sup> աշխատության ներածության մեջ Շլայխերը խոսում է իր ընդհանուր-լեզվաբանական սկզբունքների մասին, ապա իր այդ սկզբունքները կիրառում գերմանա-

1. A. Schleicher, Formenlehre der kirchenslawischen Sprache, Bonn, 1852.

2. A. Schleicher, Handbuch der litauischen Sprache, I-II, Prag, 1856-1857.

3. A. Schleicher, Zur Morphologie der Sprache, „Mémoire de l'Académie impériale des sciences de St.-Petersbourg, VII, 1, 1859.

4. A. Schleicher, Die Darwin'sche Theorie und die Sprachwissenschaft, 1863: Ռուս. թարգմ. А. Шлейхер, Теория Дарвина в применении к науке о языке, СПб, 1864:

5. A. Schleicher, Über die Bedeutung der Sprache für die Naturgeschichte der Menschen, Weimar, 1865.

6. A. Schleicher, Die deutsche Sprache, 1860.

կան լեզուների նկատմամբ («Գերմաներեն լեզվի» անվան տակ Շլայխերը, Գրիմի նման, հասկանում է գերմանական լեզուները): Իբրև հանրամատչելի շարագրանք նախատեսված այս գրքի մեջ Շլայխերը ամենից ավելի մանրամասն է զարգացնում իր ընդհանուր-տեսական հայացքները՝ կանգ առնելով նաև այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են հնչյունական օրենքը, անալոգիան, լեզվի սիստեմային բնույթը և այլն, հարցեր, որոնք հետագայում լայն քննարկման առարկա են դառնում<sup>1</sup>:

Լեզվաբանության պատմության մեջ Շլայխերը մտել է առանձնապես իր նշանավոր «Հնդգերմանական լեզուների համեմատական քերականության կոմպենդիում»-ով<sup>2</sup>: Այս աշխատության հետ կապված է նրա «Հնդգերմանական քրեստոմատիա»-ն<sup>3</sup>, որ պարունակում է նախորդում քննարկված լեզուներից նմուշներ և դրանց համառոտ բնութագրերը: «Քրեստոմատիա»-ն կազմելուն ու մշակելուն մասնակցել էին և նրա աշակերտները: Շլայխերի «Կոմպենդիում»-ը Բոպպի «Համեմատական քերականություն»-ից հետո երկրորդ ընդհանրացնող աշխատությունն է, որի մեջ հեղինակը հնդկաբանությունը հասցնում էր մի նոր աստիճանի՝ նախապատրաստելով նրա զարգացման հաջորդ փուլը: «Կոմպենդիում»-ի մեջ Շլայխերը տալիս է միայն հնչյունաբանությունը և ձևաբանությունը. շարահյուսությունը նա դեռևս հնարավոր չի համարում մշակել այն աստիճանի գիտականությամբ, ինչ այդ երկու բնագավառը: Եթե Բոպպի մոտ հնչյունաբանությունը աննշան տեղ էր գրավում, ապա Շլայխերի մոտ այն զբաղեցնում է աշխատության մի պատկառելի մասը (<sup>1</sup>/<sub>3</sub>-ը):

Շլայխերը լեզվաբանությունը դիտում է որպես բնական գիտություն, լեզվաբանության առարկան՝ լեզուն՝ որպես բնական օրգանիզմ: Լեզուն, ըստ նրա, ենթակա է ծագման, զարգացման ու գոյության նույն օրենքներին, ինչ բնության մյուս օրգանիզմները: Այս առումով լեզվաբանության մեթոդը չի տարբերվում ընդհանրապես բնական գիտությունների մեթոդից: Լեզվաբանությունը ևս ճշգրիտ գննության է ենթարկում իր ուսումնասիրության առարկան և եզրակացություններ հանում այդ գննություն-

<sup>1</sup> Հմմտ. Хрестоматия по истории языкознания XIX—XX веков, М., 1956, Զվեգինյեի ներածական հոդվածը Շլայխերի մասին, էջ 87:

A. Schleicher, Compendium der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, I II, Weimar, 1861—1862.

A. Schleicher, Indogermanische Chrestomatie, Weimar, 1869

նից: Լեզվաբանության գլխավոր նպատակներից մեկն էլ լեզվա-  
ընտանիքների սահմանումն ու նկարագրութունն է, դրանց դա-  
սակարգումը բնական սիստեմով. լեզվաընտանիքներ են հա-  
մարվում մեկ նախալեզվից ծագող լեզուները: Քերականութունը  
լեզվաբանության մի մասն է, որ նպատակ ունի քննարկել և  
նկարագրել հնչյունները, ձևերը, բառերի և նրանց մասերի ֆունկ-  
ցիաները, այն է՝ իմաստներն ու հարաբերությունները, և նախա-  
դասության կառուցվածքը: Պատմական քերականութունը լեզվի  
կյանքի նկարագրութունն է: Հնդեւրոպական լեզուների համեմա-  
տական քերականութունը մասնակի (ոչ ընդհանուր) պատմական  
քերականութուն է:

Լեզվի սահմանումը տալիս Շլայխերը հենվում է լեզվի տրա-  
դիցիոն իդեալիստական ըմբռնման վրա: Ըստ նրա՝ լեզվի էու-  
թյունը մտածողության միջոց լինելն է: Լեզվի հաղորդակցական  
ֆունկցիան, որ լեզվի հասարակական էության մարմնավորումն է,  
Շլայխերի մոտ ընկած է երկրորդ պլանի վրա: Լեզվի հիմնական  
ֆունկցիան նրա համար, այսպիսով, մտածողության ներքին պա-  
հանջների սպասարկումն է: «Լեզուն մտքի հնչյունական արտա-  
հայտութունն է,—գրում է նա,—հնչյունների մեջ դրսևորվող մտա-  
ծողության պրոցես»<sup>1</sup>: Շլայխերը լեզուն սերտորեն կապում է  
մտածողության հետ. այս տեսակետից նա ժխտում է զգացմունք-  
ների և կամքի անմիջական լեզվական արտահայտութուն ստա-  
նալու հնարավորութունը. դրանք կարող են արտահայտվել լեզվի  
միջոցով միայն միջնորդաբար՝ մտքի ձևով: Կամքը և զգացմունք-  
ներն անմիջաբար արտահայտող հնչյունական ժեստերն ու իսկա-  
կան ձայնարկութունները լեզվի տարրեր չեն, բառեր չեն, այլ  
լեզվի հետ միասին օգտագործվող և կենդանական ճիշերին մոտե-  
ցող հնչյունական ժեստեր: Նրանք չունեն ոչ բառի ձևեր, ոչ էլ բա-  
ռի ֆունկցիաներ և լեզվից ցած են կանգնած:

Լեզվի նպատակն է հնչյունների միջոցով արտահայտել մտա-  
ծողության պրոցեսը, այսինքն՝ պատկերացումներն ու հասկացու-  
թյունները և դրանց միջև եղած հարաբերությունները: Հնչյունա-  
կան արտահայտութուն ստացած պատկերացումներն ու հասկա-  
ցությունները կոչվում են նշանակութուններ (իմաստներ): Քանի  
որ բառերը կազմված են նշանակութուններից ու հարաբերու-  
թյուններից, լեզուն էլ իր հերթին կազմված է բառերից, ուստի և

<sup>1</sup> A. Schleicher. Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 4:

լեզվի էությունը նշանակութունների ու հարաբերությունների արտահայտությունն է: Սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ լեզուների մեջ անպայմանորեն հնչյունական արտահայտություն են ստանում միայն նշանակութունները. հարաբերությունները կարող են և հնչյունական արտահայտություն չստանալ: Ըստ այն բանի, թե հարաբերությունները հնչյունական արտահայտություն ստանում են, թե ոչ, կամ ինչպիսի արտահայտություն են ստանում, տարբերվում են լեզուների 3 տիպեր՝ անջատական, կցական և թեքական. ա) անջատական լեզուները բաղկացած են անփոփոխ արմատներից. բ) կցական լեզուների մեջ այդ անփոփոխ արմատներին կցվում են հարաբերություններ արտահայտող մասնիկներ (սկզբնական արմատներ), գ) թեքական լեզուներում նման ձևով կազմված հիմքերը ենթարկվում են ներքին փոփոխութունների: Շլայխերը ևս Բոպպի նման ընդունում է նախնական միավանկ արմատների երկու խումբ՝ բայական և դերանվանական՝ գտնելով, որ վերջավորություններն առաջացել են սկզբնական անկախ արմատներից՝ կցման ճանապարհով: «Լեզվի ձևաբանության շուրջը» աշխատության մեջ Շլայխերը լեզուների դասակարգման հարցում հետևում է բուսաբանության ու կենդանաբանության մեջ կիրառվող սկզբունքներին. ինչպես որ վերջիններիս մեջ դասակարգման հիմք են ընդունվում օրգանիզմների ձևաբանական հատկանիշները, այնպես էլ իր դասակարգման հիմքում նա դնում է լեզուների ձևաբանական հատկանիշները: Սակայն լեզուների ձևաբանական ու ծննդաբանական (ծագումաբանական) դասակարգման փոխհարաբերության հարցը Շլայխերի մոտ առանձին ուշադրության չի արժանանում:

Լեզուների նույնացումը բնական օրգանիզմների հետ Շլայխերը կատարում է՝ նկատի ունենալով, որ նրանց դասակարգման սկզբունքները և նրանց «աճի» օրենքները նույնն են: Նույնիսկ լեզվական ամենաբարձր օրգանիզմները դասակարգվում են սեւերի, տեսակների, ենթատեսակների և այլն և աճում են ու ապրում նույն օրենքներով, ինչ բնական օրգանիզմները: Լեզուները Շլայխերի կարծիքով պատմություն չունեն, այնպես որ լեզուների համար «կյանք» բառը նա գործածում է՝ ուղղակի իմաստով. լեզուները պատմությունից զրկելը, նրանց միայն բնական աճ վերագրելը եթե մի կողմից՝ խարսխվում է լեզվի նատուրալիստական ըմբռնման վրա, ապա մյուս կողմից՝ հիմք ունի պատմության իդեալիստական ըմբռնումը: Շլայխերը կարծում է, որ պատմու-

թյունը մարդիկ կերտում են գիտակցաբար, որ նրա ընթացքը կախված է մարդկանց կամքից, մինչդեռ լեզվի կյանքը այդպիսին չէ: «Լեզուները,—գրում է Շլայխերը,—չեն վարվում ինչպես մարդիկ և չունեն պատմություն, որին համապատասխան «կյանք» բառը մենք գործածում ենք ավելի նեղ և տառացի իմաստով»<sup>1</sup>:

Լեզվի կյանքը Շլայխերը պատկերացնում է որպես մի պրոցես, որ հար և նման է կենդանի օրգանիզմների՝ բույսերի ու կենդանիների կյանքին. «Ինչպես և այս վերջինները,—գրում է Շլայխերը,—նա ունի աճի շրջան՝ պարզ կառուցվածքներից դեպի ավելի բարդ ձևերը և ծերացման շրջան, երբ լեզուներն ավելի ու ավելի են հեռանում ձեռք բերված զարգացման բարձրագույն աստիճանից, և նրանց ձևերը նվազման են ենթարկվում (iñunbuße erleiden)»<sup>2</sup>: Այսպիսով, լեզվի կյանքը Շլայխերը բաժանում է երկու շրջանի՝ զարգացման շրջան, երբ մարդու հետ միասին զարգանում է նաև լեզուն, և քայքայման շրջան, երբ հնչյունների ու ձևերի քայքայման հետ միասին փոփոխություններ են տեղի ունենում նաև ֆունկցիաների ու նախադասության կառուցվածքի մեջ: Առաջին շրջանը նախապատմական շրջանն է, երկրորդը՝ պատմականը. անցումն առաջին շրջանից երկրորդին տեղի է ունենում աստիճանաբար: Շլայխերի նախապատմական շրջանի ըմբռնումը համընկնում է Բոպպի «կազմակերպման շրջանի» ըմբռնման հետ: Այս շրջանում, ըստ Շլայխերի, տեղի է ունենում լեզվի կազմավորման պրոցես, որ դադարում է՝ հենց որ ժողովուրդը մշտնում է պատմության շեմքը: Լեզուն սառչում է այն աստիճանում, որում նրան վրա է հասնում պատմությունը: Լեզվի կազմավորման շրջանում տեղի է ունենում պարզերից ավելի բարդ ձևերի առաջացման էվոլյուցիոն պրոցես, այսինքն՝ անջատականությանը հաջորդում է կցականությունը, կցականությանը՝ թեքականությունը: Զարգացման այս երեք աստիճանները լրիվ անցել են միայն հնդերոպական և սեմական լեզուները, մյուսները կանգ են առել նախորդ աստիճաններից մեկի կամ մյուսի վրա: Բարձր թեքականության հասած հնդերոպական նախալեզվի համադրական ձևերը պատմական շրջանում քայքայվում են, հոգմահարվում, և ա-

<sup>1</sup> A. Schleicher, Compendium der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Weimar, I, 1861, էջ 1, ժառ. 2.

<sup>2</sup> A. Schleicher, Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 37.

ուաջանում են վերլուծական լեզուները: Լեզուների կյանքի ամբողջական ընթացքը անմիջական զննության ենթարկել հնարավոր չէ. լեզվի զարգացման պատմությունը կարելի է վերականգնել կազմավորված լեզվական օրգանիզմի վերլուծման միջոցով:

Ինչո՞վ բացատրել, որ սկզբնական ձևաուսուցիչները ավելորդ բեռ չէր: Այս հարցում Շլայխերը դիմում է «լեզվական զգացման» գաղափարին, որ նրա մոտ խաղում է մոտավորապես նույն դերը, ինչ Հումբոլդտի մոտ «ներքին ձևը»: Լեզվի գոյության վաղ շրջաններում դեռևս մնում էր բառի առանձին տարրերի ֆունկցիայի զգացումը, որը պահպանում էր լեզուներն անկումից: Հենց որ այդ զգացումը թուլանում է, բառի հստակ սահմանազատված ձևերը հողմահարվում են ու հարթվում, ձգտում է նկատվում ազատվելու այն բոլորից, ինչ այլևս որպես իմաստավոր բան չի ընկալվում: «Բառի ֆունկցիաների և նրա մասերի զգացումը, — գրում է Շլայխերը, — մենք կկոչենք լեզվական զգացում: Լեզվական զգացումն, այսպիսով, լեզվական ձևերի պահպանող է. այնչափով, որչափով նա խլանում է՝ հետագայում ամբողջովին անհետանալու համար, տեղի է ունենում բառի հնչյունական փշացում: Լեզվական զգացումը և հնչյունական ձևի ամբողջականությունը, հետևաբար, միմյանց հետ ուղիղ համեմատության մեջ են, իսկ հնչյունական զգացումը և հնչյունական օրենքները, անալոգիան, լեզվական ձևերի պարզեցումը՝ հակադարձ հարաբերության մեջ»<sup>1</sup> (ընդգծումն իրենն է):

Լեզվի և նրանով խոսող ժողովրդի կապը Շլայխերը հասկանում և մեկնաբանում է յուրովի: Ժողովրդի պատմական գոյությունը հնարավոր չէ առանց լեզվի. լեզուն ժողովրդի հոգեկան գործունեության արտահայտությունն է: Սակայն լեզվի կազմավորումը և ժողովրդի պատմությունը մի կողմից՝ միաժամանակյա պրոցեսներ չեն, այլ առաջինը նախորդում է երկրորդին, մյուս կողմից՝ հակադարձ հարաբերության մեջ են միմյանց նկատմամբ. «Որքան հարուստ և բարդ է պատմությունը, այնքան ավելի արագ է տեղի ունենում լեզվի տրոհումը, և որքան ավելի աղքատ, դանդաղ և կայուն է առաջինը, այնքան իրեն ավելի հավատարիմ է մնում լեզուն»<sup>2</sup>: Լեզվի կազմավորման և պատմության կապը հանդես է գալիս նրանով, որ և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքում դրսևոր-

<sup>1</sup> A. Schleicher, Die deutsche Sprache. III Aufl., Stuttgart, 1874, էջ 65:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 35:



վում է մարդկային էությունն ընդհանրապես և յուրաքանչյուր ժողովրդի ազգային էությունը՝ մասնավորապես. «Միևնույն ոգին, որ հնչյունի հետ իր կապվածությամբ կազմում է լեզուն, իր ազատ գործունեության մեջ պայմանավորում է պատմական զարգացումը: Հետևաբար լեզվի և ժողովրդի պատմության միջև նկատվում է անպայման կապ...»<sup>1</sup>: Պատմական պրոցեսը հասկանալով իդեալիստորեն՝ Շլայխերը և՛ լեզվի կազմավորումը, և՛ ժողովրդի պատմությունը պայմանավորում է մարդկային բանականության ներքին պահանջներով: Միաժամանակ չկարողանալով թափանցել այդ երկուսի կապի բուն էության մեջ՝ նա փաստորեն դրանք խզում է իրարից, հակադրում իրար: Լեզուների տարբերությունը Շլայխերը բացատրում է լեզուների մեջ հենց սկզբից գոյություն ունեցող զարգացման տարբեր պոտենցիաներով. «Որոշ լեզուներ բարձր զարգացման ավելի մեծ ընդունակություն ունեն, քան մյուսները, թեև սկզբնապես տարբեր լեզուների ձևը պետք է նույնը լիներ: Նման ձևով է տեղի ունենում օրգանական կյանքի զարգացումն ընդհանրապես»<sup>2</sup>: Այստեղից մի քայլ է մնում դեպի ռասայականությունը և լեզուների ու ժողովուրդների նախասկզբնական բնական տարբերության ընդունումը:

Լեզվի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ըստ Շլայխերի, կատարվում են աստիճանաբար: Լեզուն իր տարածման տարբեր շրջաններում տարբեր զարգացման ենթարկվելով՝ տրոհվում է լեզուների, բարբառների, խոսվածքների: Պատմական շրջանում լեզվի զարգացումը տեղի է ունենում այսպիսի բազմաթիվ տրոհումների ճանապարհով. այդ զարգացման համար Շլայխերը բնորոշ է համարում տարբերակումը (դիֆերենցիացիան): Այն սկզբնական լեզուն, որից պատմական շրջանում տարբերակման ու տրոհման ճանապարհով առաջանում են ցեղակից լեզուներ, Շլայխերը կոչում է նախալեզու (Ursprache), իսկ նախալեզվից ամենից առաջ ծագած լեզուները՝ հիմնալեզուներ (Grundsprachen): Միևնույն նախալեզվից ծագող լեզուների փոխհարաբերությունը Շլայխերը ներկայացնում է ծննդաբանական ծառի ձևով. լեզվական ծառը կամ լեզվական սեռը (genus) բաժանվում է լեզվաճյուղերի: Գոյություն ունեցող բոլոր լեզուների համար հնարավոր չէ մեկ նախալեզու հաստատել. լեզուների համեմատական քննու-

<sup>1</sup> A. Schleicher, Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 37:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 41:

թյունը հաստատում է շատ նախալեզունների գոյությունը, ընդ որում դրանց թիվը ավելի շատ է եղել, քան կարելի է հաստատել դեռևս կենդանի լեզուների հիման վրա: Ընդհանրապես Շլայխերը կարծում է, որ սկզբնապես ավելի շատ լեզուներ են եղել, քան այժմ:

Լեզուների ցեղակցությունը պարզելու համար գլխավորը ոչ թե ձևն է, այլ լեզվական նյութը: Լեզվական ձև ասելով Շլայխերը հասկանում է հարաբերությունների արտահայտության առկայությունը կամ բացակայությունը և նշանակության արտահայտության ու հարաբերության արտահայտության՝ իրար նկատմամբ զրաված դիրքը: Այլ կերպ ասած՝ լեզվի ձևաբանական տիպը Շլայխերը կարևոր չի համարում ցեղակցության որոշման հարցում. կարևորը նշանակության և հարաբերության արտահայտության համար գործածվող նյութի (հնչյունների) մերձավորությունն է. «Եթե երկու կամ ավելի լեզուներ նշանակության և հարաբերության արտահայտության համար գործածում են անֆան շատ համապատասխանող հնչյուններ, որ պատահական զուգադիպության միտքը միանգամայն անօրինաշափ է, և եթե, այնուհետև, համապատասխանություններն անցնում են ողջ լեզվի միջով և այնպիսի բնույթ ունեն, որ դրանք չի կարելի բացատրել բառերի փոխառություն ենթադրելով, ապա այդպիսի համապատասխանող լեզուները, անկասկած, ծագում են մի ընդհանուր հիմնալեզվից, նրանք ցեղակից են»<sup>1</sup>:

«Դարվինի տեսությունը և լեզվաբանությունը» աշխատության մեջ, խորացնելով իր բիոլոգիական կոնցեպցիան, Շլայխերը փորձում է «լեզուների օրգանիզմների» նկատմամբ կիրառել կենդանիների և բույսերի տեսակների համար Դարվինի կողմից սահմանված օրենքները: Ամենից առաջ լեզուների ցեղակցական հարաբերությունների աստիճանները նա փորձում է ցույց տալ ծերնդաբանական ծառի ձևով և դասակարգման ժամանակ կիրառել անալոգիական անվանումներ: Հին ձևերից աստիճանական փոփոխություններ ու տարբերակմամբ նոր ձևերի ծագումը, Շլայխերի կարծիքով, նույնիսկ ավելի հեշտ է ցույց տալ լեզվի բնագավառում, քան բուսական և կենդանական օրգանիզմների դեպքում: Շլայխերը հաստատում է լեզուների դասակարգման մեջ ցեղակցական կապերի հետևյալ աստիճանները՝ անալոգիա անցկացնելով դրանց և բնագիտության մեջ կիրառվող հասկացությունների ու տերմինների միջև.

<sup>1</sup> A. Schleicher. Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 26.





չատվել, բ) որքան ավելի արևմուտք է լեզուն, այնքան ավելի քիչ արխայիկ գծեր ունի և ընդհակառակը: Սակայն այս սկզբունքը Շլայխերը չի կարողանում հետևողականորեն կիրառել. հենց կելտական լեզուների տեղադրման հարցը խախտում է այս սկզբունքը: Շլայխերը, նախալեզու ընդունելով հանդերձ, շարունակում է սանսկրիտը համարել ամենից ավելի արխայիկը և նախալեզվին ամենամոտը:

Լեզվի ծագման հարցը ևս Շլայխերը լուծում է նույն բիոլոգիական նատուրալիզմի հայեցակետով: Ինչպես որ օրգանական աշխարհի ամենաբարդ ձևերը սկիզբ են առել ամենանախնական միաբջիջ օրգանիզմներից, որոնք ոչ բույսեր էին և ոչ կենդանիներ և որոնց մեջ նույնիսկ շնչառության և սննդատության համար հատուկ օրգաններ չկային, այնպես էլ բոլոր լեզուներն սկիզբ են առել նախնական պարզ արմատներից, որոնք տարբերակված չեն եղել ըստ խոսքի մասերի, չեն ունեցել հոլովման և խոնարհման ձևեր: Լեզվի կազմավորումն սկսվել է ամենապարզ անշատական կառուցվածքից, որտեղ արտահայտվել են միայն նշանակությունները, բայց ոչ հարաբերությունները. «Այսպիսով, մենք ընդունում ենք,— գրում է Շլայխերը,— բոլոր լեզուների համար ըստ ձևի նույն ծագումը: Երբ մարդը հնչյունական ժեստերից և բնաձայնություններից ճանապարհ գտավ դեպի նշանակություն ունեցող հնչյունները, ապա այս վերջինները դեռևս միայն նշանակություն ունեցող հնչյուններ էին, պարզ հնչյունական ձևեր, առանց որևէ քերականական հարաբերության: Բայց այն հնչյունական նյութով, որից նրանք կաղմված էին, և այն իմաստով, որ նրանք արտահայտում էին, լեզվի այդ ամենապարզ սկզբնավորումները տարբեր էին տարբեր մարդկանց մոտ, որ ապացուցվում է այդ սկզբնավորումներից՝ զարգացած լեզուների տարբերությամբ: Այստեղից էլ մենք ենթադրում ենք նախնական լեզուների անհամար բազմություն, բայց բոլորի համար ընդունում ենք միևնույն ձևը»<sup>1</sup>:

Լեզվական տարբերությունների գոյացումը Շլայխերը հարաբերության մեջ է դնում կենսական պայմանների տարբերությունների հետ: Այս տարբերություններն էլ իրենց հերթին նա պայմանավորում է աշխարհագրական գործոնով. «Այսպիսով,— գրում է նա,— լեզուների սկզբնական բաշխումը երկրում խիստ օրինա-

<sup>1</sup> A. Schleicher, Die Darwinsche Theorie und die Sprachwissenschaft, Weimar, 1863, էջ 23.

չափությամբ պետք է տեղի ունեցած լինի. հարևան ժողովուրդների լեզուները պետք է ավելի նման եղած լինեն, քան տարբեր աշխարհամասերում ապրող մարդկանց լեզուները: Ելակետային լեզվից հեռանալուն ղուգրնթաց լեզուները պետք է ավելի ու ավելի շեղված լինեն նրանից, քանի որ տարածական հեռացման հետ միասին աճում է կլիմայի ու կենսական պայմանների տարբերությունն ընդհանրապես: Նույնիսկ ներկայումս էլ պահպանվել են, ըստ երևույթին, լեզուների այդ ուղիղ բաշխման հետքերը...»<sup>1</sup>:

Շլայխերը խիստ հեռու է լեզվի ծագումն ու զարգացումը մարդու գոյության հասարակական պայմանների հետ կապելուց: Կեզվի ծագումը նա չի կապում մարդու հաղորդակցման կարիքի հետ: Այս առումով էլ նա չի կարողանում լուծել ո՛չ նախնական ճիշերից իմաստավորված հնչյուններին՝ արմատներին անցնելու պայմանների հարցը, ո՛չ էլ լեզվի զարգացման ու լեզվական տարբերությունների գոյացման հարցը: Վերջին դեպքում նա ստիպված է վերջ ի վերջո դիմել ներքին միատիկական պոտենցիայի գաղափարին: Նշելով, որ միատեսակ պայմաններում ապրողների լեզուն փոփոխվում է միևնույն ուղղությամբ՝ Շլայխերը, այնուամենայնիվ, այդ միատեսակությունը բացատրում է մարդկանց «ներքին չգիտակցված ազդակի» հետևողական ներգործությամբ. այդ նույն ձևով էլ նա տարբերությունները բացատրում է հենց սկզբից լեզուների «զարգացման տարբեր պոտենցիաների» առկայությամբ: Լեզվի սկզբնական ձևերը Շլայխերը համարում է արտաքին տպավորությունների ռեֆլեքսներ. «Որտեղ զարգանում են մարդիկ, — գրում է նա, — այնտեղ ծագում է լեզուն. սկզբնապես, հավանաբար դրանք արտաքին աշխարհից ստացած տպավորությունների հնչյունական ռեֆլեքսներ էին, այսինքն՝ արտաքին աշխարհի արտացոլում մտածողության մեջ, որովհետև մտածողությունը և լեզուն այնքան նույնական են, որքան բովանդակությունը և ձևը: Այն էակաները, որ չեն մտածում, մարդիկ չեն. մարդ դառնալն սկսվում է, հետևաբար, լեզվի ծագումից, և հակադարձաբար՝ մարդու հետ ծագում է լեզուն»<sup>2</sup>:

Թուպպի համեմատությամբ Շլայխերը մի քայլ առաջ է մղում պատմա-համեմատական մեթոդը: Ծիշտ է, նրան ևս հատուկ են

<sup>1</sup> A. Schleicher, Die Darwinsche Theorie und die Sprachwissenschaft, Weimar, 1863, էջ 24—25:

<sup>2</sup> A. Schleicher, Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 40.

այդ մեթոդի կիրառման սկզբնական շրջանի թերությունները, բայց նա արդեն սկիզբ է դնում այն աշխատանքին, որ հետագայում նշանակալից արդյունքների հասցրեց:

Բուպպի գլխավոր նպատակն էր համեմատովոդ ձևերի քերականական ձևերի ծագման բացատրությունը, և այս բանի համար նա դիմում էր կցականության սկզբունքին: Շլայխերը ընդունելով այս սկզբունքը և նույնիսկ ընդարձակելով նրա կիրառության շրջանակները՝ առաջ է քաշում մի այլ սկզբունք ևս՝ համեմատովոդ ձևերի նախատիպերի վերականգնման սկզբունքը: Նա սրանով կարծես երկփեղկում է պատմա-համեմատական մեթոդը՝ նայած այն բանին, թե լեզվի զարգացման ո՞ր շրջանի համար է այն կիրառում: Լեզվի զարգացման պատմական շրջանի համար նա կիրառում է համեմատական-վերականգնողական սկզբունքը, նախապատմական շրջանի, այն է՝ վերականգնված ձևերի ծագման բացատրության համար՝ կցականության սկզբունքը: Սրա հետ կապված՝ նախապատմական շրջանի պատկերը գծելու համար անհրաժեշտաբար ձևաբանական վերլուծություն է կատարվում, պատմական շրջանում լեզուների կրած փոփոխությունների պատկերը գծելու համար՝ հնչյունական, որովհետև Շլայխերի պատկերացմամբ հնդկարոպական առկա լեզուների տարբերությունները հիմնականում կապված են հնչյունական փոփոխությունների հետ:

Լեզուների ցեղակցությունը որոշելիս, ինչպես տեսանք, Շլայխերը գլխավոր դերը տալիս էր նյութական ընդհանրություններին, այսինքն՝ նշանակությունների ու հարաբերությունների հնչյունական արտահայտության ոչ-պատահական և փոխառությամբ չբացատրվող ընդհանրություններին: Ցեղակից լեզուները Շլայխերը բխեցնում է մեկ ընդհանուր նախալեզվից, որ նույնը չէ ցեղակից լեզուներից ոչ մեկի հետ, այլ ներկայացնում է նրանց նախահայրը: Հնդկարոպական լեզուների համեմատական քերականության գլխավոր նպատակը նա տեսնում է այդ նախալեզվի վերականգնման մեջ: Այդ նպատակով նա անհրաժեշտ է համարում մի կողմ թողնել այն, ինչ տարբերում է ցեղակից լեզուներն իրարից ու հանդիսանում է պատմական շրջանում կրած ինքնուրույն փոփոխության արդյունք, և ուշադրությունը կենտրոնացնել լեզուների ընդհանուր կողմերի վրա՝ սրանց համեմատությամբ վերականգնելով նախալեզվի պատկերը: Սա էլ իր հերթին պահանջում է ընդհանուր արմատների և քերականական ձևերի (նշանակություն-

ներն հարաբերություններ արտահայտող հնչյունների կամ հնչյունական կոմպլեքսների) նախատիպերի վերականգնում. նախալեզուն կներկայացնի դրանց գումարը: Համեմատության ընթացքում Շլայխերը միշտ ելակետ է ընդունում այդ ենթադրական նախածեղը, որոնց նա միանգամայն ռեալ գոյություն է հատկացնում: Հայտնի է, որ Շլայխերն այնքան էր հավատում իր վերականգնած նախալեզվի իսկությունը, որ նրանով մի առակ է կազմել ու հրատարակել<sup>1</sup>:

Այսպիսով, վերականգնման սկզբունքը Շլայխերի մոտ լրացնում է զննման մեթոդը, որը նա լեզվական հետազոտության գլխավոր մեթոդն էր համարում՝ հետևելով բնական զիտություններին: Այդ մեթոդը գործում է այն լեզուների նկատմամբ, որոնց «կենսական զարգացումը հնարավորություն չենք ունենա զննելու երկար ժամանակի ընթացքում,—գրում է Շլայխերը:—Հաճախ նրանց ձևերի մեջ մենք տեսնում ենք զարգացման ավելի ուշ ստադիաներ և մեզ հայտնի օրենքների օգնությամբ վստահաբար վերականգնում ենք այն ձևերը, որոնք նախորդել են ամրագրվածներին: Մենք վերականգնում ենք լեզուների ավելի կամ պակաս վաղ շրջանները՝ մեզ փաստապես հայտնի ուշ ձևը հանգեցնելով ավելի հին»<sup>2</sup>: Հնդկարոպական նախալեզուն, որը նպատակ է դնում վերականգնել Շլայխերը, նրա համար նախապատմական շրջանի վերջին էտապն է, որից հետո սկսվում է քայքայման պրոցեսը: Նրա «նախալեզուն» փաստորեն զուրկ է զարգացումից:

Նախալեզվից հետո լեզուների հետագա փոփոխությունների մեջ Շլայխերը տեսնում է լոկ նախկին լեզվական զգացմունքի կորուստ և բառերի հնչյունական փչացում: Հնչյունական փոփոխությունները հանգեցնում են լեզվական տարբերությունների, և, հետևաբար, ցեղակից լեզուների տարբերությունները արտահայտվում են հնչյունական տարբերությունների մեջ: Այստեղից էլ բխում է այն մեծ ուղադրությունը, որ հատկացնում է Շլայխերը հնչյունաբանությանը՝ փորձելով օրինաչափ համապատասխանություններ սահմանել ցեղակից լեզուների ընդհանուր արմատների

<sup>1</sup> Eine Fabel in indogermanischer Ursprache, BVS, V, 1868, էջ 206. այն բերված է Ջվեգինցկի հիշված «Хрестоматия»-ում, 1956, էջ 104:

<sup>2</sup> A. Schleicher, Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 48:



և քերականական ձևերի միջև. այս կապակցությունք էլ նա դիմում է «հնչյունական օրենքների» գաղափարին. «Ցեղակցության շափանիչը ամենից առաջ յուրաքանչյուր լեզվում մյուս լեզուների հետ ընդհանուր հնչյունական նյութի առանձնահատուկ ձևով տեղի ունեցող փոփոխությունն է, որի միջոցով նա մյուս լեզուներից առանձնանում է որպես առանձին լեզու: Ցեղակից լեզուների համար ընդհանուր հնչյունական նյութի՝ յուրաքանչյուր լեզվին ու բարբառին հատուկ դրսևորման ձևը մենք կոչում ենք տվյալ լեզվի բնորոշ հնչյունական օրենքներ»<sup>1</sup>:

Խոսելով հնչյունական օրենքների և նրանց՝ «առանց բացառության գործելու» մասին՝ Շլայխերն, այնուամենայնիվ, իրականում չի հասնում հնչյունական համապատասխանությունների լիակատար օրինաչափականության ըմբռնմանն ու կիրառմանը: Հնչյունական օրենքները Շլայխերի համար պարզապես այն հնչյունական տարբերություններն են, որ ունի տվյալ լեզուն սկզբնական վերականգնված վիճակի համեմատությամբ: Շլայխերը՝ 1) ոչ միշտ է հստակ կերպով սահմանում այդպիսի համապատասխանությունների բանաձևեր և հաճախ բավարարվում է միայն օրինակներով. 2) իր հաստատած համապատասխանություններից բազմաթիվ բացառություններ է ընդունում. 3) չի ճշտում փոփոխությունների կոնկրետ պատճառներն ու պայմանները և չի նշում այն պայմանները, որոնց մեջ տվյալ բացառությունը երևան է գալիս. 4) հնչյունական օրենքներն ըմբռնում է իհստ լայն կերպով և նրանց գործողության մեծ ոլորտ հատկացնում. չնայած այն բանին, որ նա խոսում է անալոգիայի մասին («կեղծ անալոգիա»), բայց և այնպես նրա դերը բավարար չափով հաշվի չի առնում և չի տարածում հնչյունական օրենքների գործողությունը բոլոր դեպքերի վրա<sup>2</sup>:

Որպեսզի փոփոխությունները տարբեր լեզուներում տարբեր արդյունք տան, պետք է ենթադրել փոփոխության բնույթի անհավասարաչափություն: Շլայխերը գտնում է, որ «լեզուների փոփոխությունները անհավասարաչափ են լեզվի ողջ բնագավառի համար: Նման անհավասարաչափ փոփոխության միջոցով լեզվի տարբեր բնագավառներում հիմնալեզվից ժամանակի ընթացքում ծագում են մի քանի լեզուներ, որոնք ավելի ուշ զարգանում են

<sup>1</sup> A. Schleicher. Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart, 1874, էջ 27:

<sup>2</sup> Հմտ. В. Томсен, հիշ. աշխ., էջ 86:

էլի որոշ քանակութեան լեզուների և բարբառների և այլն»<sup>1</sup>: Այսպիսով, ճիշտ կերպով խոսելով լեզվի տարածման տարբեր շրջաններում նրա զարգացման անհամաչափութեան մասին՝ Շլայխերը հակված է լեզուների զարգացման բոլոր սաղմերը տեսնելու սկզբնական լեզվի մեջ. այստեղից էլ մի քայլ է մնում դեպի լեզվի զարգացման սկզբնական պոտենցիայի մասին խոսելը և գործը միայն պարզ էվոլյուցիոն փոփոխութուններին հանգեցնելը:

Ինչպիս նշեցինք, Շլայխերը շարունակում է դիմել կցականութեան սկզբունքին, հենց որ անհրաժեշտ է լինում բացատրել նախալեզվի ձևերի ծագումը: Բոպպի նման Շլայխերն ընդունում է երկու կարգի նախնական միավանկ արմատներ՝ բայական ու դերանվանական և բայական բոլոր կարգի վերջավորութունների ծագումը փորձում է բացատրել դերանվանական արմատների կցմամբ: Այս բանն ապացուցելու հարցում նա է՛լ ավելի է խախտում հնչյունական օրինաչափության սկզբունքը՝ այս կամ այն ձևի առաջացումն ապացուցելու համար դիմելով հնչյունների անկման, թուլացման, դրափոխության և այլ կարգի միջոցների. այս առումով նա դեռևս շատ հեռու չի գնացել հին ստուգաբանութեան մեջ կիրառվող «ապացուցման» եղանակներից:

Շլայխերի կիրառած մեթոդը, իր նորութուններով ու դրական կողմերով հանդերձ, ունի մի շարք լուրջ թերութուններ, որոնք պայմանավորված են մասամբ լեզվաբանական գիտութեան զարգացման ընդհանուր մակարդակով, մասամբ էլ Շլայխերի լեզվաբանական կոնցեպցիայով:

1) Առաջ քաշելով նախալեզվի հարցը, Շլայխերը մի կողմից՝ այն փաստորեն զրկում է զարգացումից, դիտում իբրև յուրատեսակ միատարր ամբողջություն, մյուս կողմից՝ այն օժտում է կատարելության մասին իր ունեցած պատկերացման բոլոր կողմերով: Այս հարցում նա չի մնում հնդերոպական լեզուների տված փաստական նյութի սահմաններում, այլ ելնելով այդ նախալեզվի կատարելության ու կանոնավորության մասին ունեցած իր պատկերացումից՝ վերականգնված նախաձևերն օժտում է փաստերով չհաստատվող գծերով: Բերենք մի օրինակ. չնայած այն բանին, որ հնդերոպական ուղղականը ոչ բոլոր դեպքերում է օժտված S վերջավորությամբ, Շլայխերն այդ S-ը տարածում է նաև այն դեպքերի վրա, որոնց մասին հնդերոպական լեզուների փաստերը

<sup>1</sup> A. Schleicher, Die deutsche Sprache, III Aufl., Stuttgart. 1874, էջ 27.

յուրացան և յրաբոմտս մասդուսնդմ յաւտեռտագս մս Իսնվդուստուտ  
և յրահուդունը մնզովուշ մնզդդտովուց զտեհմնեթուզ զտիզեզտեհումզի :

ոգեմս Իսնզդվլ զտիճտեհմնզ յրամզժեղե Լեռ Խմի վզտեհուդումվեղչ  
ոգեռտեհտուց և յրսիդզչ զ-Ե նմամհմզ սզեղնվր ‘մղդտովուց s-թթբժ  
և յրաղեղտեհումզի ‘ժղտոզս ոգեռնզվ ‘մնզովուշ մտքուց վստմ  
«մտուց» ԼուՆվչ ‘ոգեռոմ ‘զվտովմհոզտո և ովուտս մղսնթխոտեհումզե  
ձզր վնզդրաղեղտեհումզի մվ յ զվժվզմտեհ ոմ յզդվլ և յրահուդումտ՝  
մնզովուշ մըրսնեռտստ ովսփսփուտ վ-Ե զտեհուդովուց զզ յրամտր  
-ուց զ-Ե զտեհտովմհոզտո հոմ ‘ժղսննմտ (Ճսսոզթսյալլ ‘զտրմսի  
-տուրսն Կսսր վնզովուշ) «զտրժնզց» վ-Ե զտեհուդովուց ոգեմս զզ  
յրամտեհում մնզդդտեհումսնդեղչ վզտձն ոմ ‘Ե ‘Օ ‘Յ զզ տեհսս  
յրամզդսնեղլ Լեռ ետրվն վ-Ե վտովմհոզտո ձմզ ‘մժեղե զմ ‘մմսի  
-տղմոք զտեհուդովուցտուզդրտ զզ յրամտրուց ‘բոտեհո եվեհուսյ ‘մնզդ  
-դտեհումսնդեղչ վզտձն Եսիմտուղժ յ մնզդդտեհումզժ հվնեղչ մմս  
‘զ-Ե զրսնզդվր և տեհս ետրվն վնզդմսիտղմոք Ե\* յ Օ\* ‘Յ\* զտե  
-տեհումսնդեղչ յրստովմհոզտո ‘և վզտուց ոգեռնզվ :ձզր զտնթխուդումու  
-հզր վնզդդսնթխումեռթմզչ յ (վրգտովո վնզդմսիտղմոք) վրնվլ  
-տեհսի զտեհումսնդեղչ և յրսիտտեղ ոգեռուզդդտուտ նելլ :վնզդդսնթ  
-րստնջուտ զտրղեղտեհումզի յ վնզդրսնեռմզիտտե Լուոն զվոտր վի  
-եղլուովուց զզ յրաղեղեղուց մըրսեղվմօնըմ վնզդդսնթխուդումուզիզր  
վնզդդտեհումզժ հվնեղչ յ մղսնթխուդումուտ վնզդդտեհումսնդեղչ  
-տտեհ վտովմհոզտո :մնզդդսնթխուդումուզիզր վնզդդտեհումզժ հվնեղչ  
զզ յրահուդումօնըմ զզմսիվզտովզր ովուցուց մնզովուշ յ յրսիթ նու  
‘մնզդդտեհումսնդեղչ վզտձն Ետի ովլզոսով զվոտր վտովմհոզտո  
մս ‘մժղտրտեղուց զմ և յրսզտվր Լև զտմլ :և հվտովմտ զտժղր  
յ զվիեղլուովուց և սսր զտժղր ‘զսնեղլ յրսիդսն և ժլզդմտ զտժմս  
զթլ ‘և զվժվզմտեհ զմ զմնզովուշ ‘ժղտոզս ոգեռնզվ :լզմեռմզի  
զսնթխուդումուզուզովուց զտեհուդումսնդեղչ զվժբտեհումսնդեղչ զտեհուդումսնդ  
ու զտեհուդումսնդեղչ տմզ յ եվմտեհումսնդեղչ զտնթխուդումուտեհ վտովմհոզտո  
լզդլ և յրահուդումտ՝ մնզովուշ մնզդդտովուց հրստուց զվիեղլ  
-տովուց նու Իսնզդեղտեհումզի յ զվմտեհումսնդեղչ եսնդեղ զվիեղլուով  
-ուց մասդուսնդմ հզր վնզդդսնեղլ զտեհումսնդեղչ Իսնզեղուշ (Ճ

ւլմղդտովուց

s-թթբժ և յրաղեղտեհումզի մնզովուշ զտեհում ‘(թլ\*-<թլ\*-) և  
լզմնմսի զ-Ն նմ մնզզմհեղչ յրամս նըմ ‘դդտովուց Եսնեռնզմի Իս-Ն  
զզ յրամեռթլուց մնզդդ զմտ յ թթթլ .թնս ‘թթթթ .տտլ ‘թլթթթ  
‘զրսչ ‘մուց Քլլլ զտեհտովմհոզտո ովուտս զզ զսնթխումեի վր Լս

ē(>e): Այս նույն ձևով էլ սանսկր. bhā'rāmi, հուն. φέρω, լատ. ferō, գոթ. bairu (հայ. բերեմ) ձևերի համար նա առաջարկում է \*bharami նախաձևը:

Մի կողմից՝ հենվելով սանսկրիտի վրա, մյուս կողմից՝ ելնելով նախալեզվի կատարելության մասին ունեցած կանխակալ պատկերացումից՝ Շլայխերն ընդունում է հնդկերոպական նախալեզվի համար 3 կարճ (a, i, u) և 6 երկար ձայնավոր (ā, ai, au և ā, āi, āu), ընդ որում երկարների մեջ դնում է և երկբարբառները. երկար ձայնավորները, նրա կարծիքով, ստացվում են կարճերի «բարձրացմամբ», այսինքն՝ a-ի հավելմամբ. ստացվում են հետևյալ համամասնական շարքերը.

կարճեր	a	i	u
երկարներ (1-ին «բարձրացում»)	ā(a+a)	ai(i+a)	au(u+a)
երկարներ (2-րդ «բարձրացում»)	ā(ā-a)	āi(i+ā)	āu(u+ā)

Հասկանալի է, որ այսպիսի պատկերացումը Շլայխերին իրավունք էր տալիս պնդելու, որ «հնդգերմանական նախալեզվի վրակալիզմը վերին աստիճանի պարզ, բայց և վերին աստիճանի ուղիղ էր և խիստ համամասնական՝ բաղկացած 3×3 հնչյունից»<sup>1</sup>. ձայնավորների այս համամասնական սիստեմը Շլայխերն օգտագործում էր քերականական հարաբերությունների դրսևորման օրինակափոխությունը և կատարելությունը բացահայտելու համար: Նրա մոտ ամեն ձայնավոր շարժվում է իր շարքում՝ որոշակի քերականական հարաբերություններ արտահայտելու համար: Ձայնավորների այս շարժումը կամ հերթագայությունների սիստեմը գծելիս Շլայխերը հենվում էր հնդիկ քերականների ուսմունքի վրա ցարգա-ի և १४(dh)i-ի մասին՝ որոշ պարզեցման ենթարկելով այն: Հնդկերոպական հիմնական հերթագայությունը (\*e/\*o/զրո) բացահայտվեց ավելի ուշ՝ կապված հնդկերոպական ձայնավորների մասին եղած պատկերացումների ճշտման հետ: Ձայնավորների մնացած փոփոխությունները Շլայխերը կապում էր առանձին լեզուների հետ:

3) Քերականական ձևերի ծագումը բացատրելիս, ինչպես նշեցինք, Շլայխերը գործադրում է Բոպպի կցականության սկզբբունքը: Այս հարցում նա ոչ միայն չի մեղմում Բոպպի արհեստականությունները, այլ, ընդհակառակը, որոշ դեպքերում դրանք ավելի է ծավալում՝ տարածելով ուրիշ դեպքերի վրա. այսպես,

<sup>1</sup> A. Schleichner, Die deutsche Sprache, Stuttgart, 1874, էջ 135.



թյուն է մատուցել լեզվաբանական հնէաբանությանը, հատկապես հնդկերոպացիների կրոնական պատկերացումների ու հավատալիքների պարզաբանման հարցում:

Մաքս Մյուլլերի և մյուսների բիոլոգիզմը զգալիորեն տարբերվում էր Շլայխերի բիոլոգիական նատուրալիզմից. լեզվի զարգացման երկու շրջանի մետաֆիզիկական հակադրությունը, «լեզվական օրգանիզմի» ըմբռնումը, լեզուների տարբերակումների համար կենդանաբանության ու բուսաբանության սիստեմատիկայից առնված տերմինների կիրառումը, այս բոլորը շէին կարող երկար ժամանակ արմատներ ձգել: Լեզվի բիոլոգիական կոնցեպցիայի հետևորդները մեղմում են այդ կարգի ակնհայտ որակումներն ու վիճելի ձևակերպումները: Լեզուն համարվում է ոչ թե ինքնին որպես լեզվական օրգանիզմ, այլ օրգանիզմի անհրաժեշտ ֆունկցիա, օրգանական գործունեություն: Այսպես, օրինակ, Մյուլլերը ելնում է այն կարծիքի դեմ, թե լեզուն բնական օրգանիզմ է, որը ծնվում է, հասակ առնում, սերունդ տալիս ու մեռնում: Սակայն լեզվական պրոցեսը բացատրելիս Մյուլլերը դիմում է դարվինիզմի զինանոցից առնված այնպիսի տերմինների, ինչպիսիք են «գոյություն պայքարը», «բնական ընտրությունը»:

Մաքս Մյուլլերը հայտնի է իր «Դասախոսություններ լեզվի գիտության մասին»<sup>2</sup> աշխատությանմբ, որ ներկայացնում է Օքսֆորդի համալսարանում կարդացած նրա դասախոսությունների հավաքածուն: Շնորհիվ մատուցվող նյութի հանրամատչելի և հետաքրքրական շարադրանքի, Մաքս Մյուլլերի բիոլոգիզմը զգալի ազդեցություն է թողնում հետագա լեզվաբանական աշխատությունների վրա՝ առանց լիովին դուրս մղվելու երիտբերականների պիտիոլոգիզմի կողմից:

Մաքս Մյուլլերը խստորեն տարբերում է իրարից լեզվաբանությունը (իմա՝ համեմատական լեզվաբանությունը) և ֆիլոլոգիան (րանասիրությունը): Առաջինը պատկանում է բնական գիտություններին, երկրորդը՝ «պատմական» (իմա՝ հասարակական) գիտություններին: Ֆիլոլոգիայի համար լեզուն լոկ միջոց է և ոչ թե ուսումնասիրության առարկա, լեզվաբանության համար՝ գիտական հետազոտության առարկա է. բոլոր լեզուներն ու բար-

<sup>1</sup> Հմմտ. В. Томсен, *հիշ. աշխ.*, Р. О. Шор-ի „Послесловие“-ն, էջ 128:

<sup>2</sup> M. Müller, *Lectures on the Science of Language*, 1861 (*գերմ.* թարգմ. *Vorlesungen über die Wissenschaft der Sprache*, 1 II, 1866):

բառները, անկախ նրանց՝ գրական հուշարձաններ ունենալուց կամ չունենալուց, լեզվաբանության համար կարևոր են նրա պրոբլեմների լուծման տեսակետից. լեզվաբանությունն ուսումնասիրում է լեզուն և ոչ թե առանձին լեզուները, նա փորձում է պարզել լեզվի ծագումը, օրենքները, բնույթը, այն, թե ինչպես է լեզուն ծառայում որպես մտքերի հաղորդման միջոց, օրգան:

Լեզվաբանության՝ բնական գիտություններին պատկանելու դրույթը հիմնավորելու համար Մյուլլերը դիմում է «աճի» և «պատմության» ըմբռնումների տարբերակմանը: Ելնելով պատմության իդեալիստական ըմբռնումից՝ նա պատմական պրոցեսի, պատմական գիտությունների ուսումնասիրության առարկաների հիմնական հատկանիշը համարում է անհատների կամքից կախված լինելը. բնական աճը տեղի է ունենում կամքից անկախ, որպես բնական փոփոխության ու զարգացման պրոցես: Լեզվաբանական պրոցեսը այս առումով ոչ թե պատմություն է, այլ աճ. լեզվի աճը, նրա փոփոխությունը տեղի է ունենում մարդկանց կամքից անկախ, և նրա օրենքները բոլորի համար պարտադիր անհրաժեշտություն ունեն: Անհատը ոչ մի բան չի կարող փոխել լեզվի, լեզվական պրոցեսի մեջ. «Անհատը որպես այդպիսին անզոր է, — գրում է Մյուլլերը, — նրա ձեռք բերած թվացող արդյունքները կախված են միայն օրենքներից, որոնց վրա նա չի իշխում, և բոլոր նրանց գործակցությունից, որոնք նրա հետ մի դաս, մի մարմին, մի օրգանական ամբողջություն են կազմում»<sup>1</sup>: Անհատի լեզվական գործունեությունը կորչում է ընդհանուրի լեզվական գործունեության մեջ որպես նրա մի մասը, փոփոխություններն էլ նրա կողմից մտցվում են անգիտակցաբար: Լեզուն անընդհատ փոփոխության պրոցես է, և մարդը չի կարող փոխել նրա ընթացքը կամ իր ուզած ձևով նոր բառեր հնարել, ինչպես որ չի կարող ձևափոխել աշյան շրջանառությունը: Լեզվական աճը, լեզվի բնական զարգացումը, Մյուլլերի կարծիքով, երկու պրոցես է ընդգրկում՝ 1) բարբառային վերարտադրություն և 2) հնչյունական անկում (քայքայում): Մարդու կամքից անկախ այս երկու պրոցեսն էլ որոշում են լեզվի փոփոխությունների ընդհանուր բնույթը:

Լեզվի ծագման հարցը Մյուլլերի մոտ լուծում է ստանում նրա ընդհանուր կոնցեպցիայի լույսի տակ: Նրա կարծիքով՝ լեզուն այնպիսի հայտնագործություն չէ, ինչպիսի իմաստով խոս-

<sup>1</sup> M. Müller, Vorlesungen über die Wissenschaft der Sprache, I, 1866, էջ 98:

վում է, օրինակ, ճարտարապետության, գրի կամ տպագրության մասին, այլ բնության արդյունք, մարդկային բնության անհրաժեշտ հատկանիշ: Մարդն իր սեփական ուժերով չէր կարող իրեն տալ խոսելու կարողություն. այդ կարողությունը մարդկության բնական հատկությունն է, որ կենդանիների մոտ երբեք գոյություն չի ունեցել և չէր կարող գոյություն ունենալ: Մարդը խոսում է մի տեսակ բնագրով, որ անհրաժեշտորեն միավորում է իր մեջ երկու կարողություն՝ ընդհանուր հասկացությունների կազմում և դրանք արտահայտելու համար բառերի ստեղծում:

Ճիշտ է, Մյուլլերը փորձում է այս կապակցությամբ հաշտեցնել Ադամ Սմիթի սենսուալիստական և Լայբնիցի ռացիոնալիստական տեսակետները, բայց փաստորեն հակվում է հարցի ռացիոնալիստական լուծման կողմը: Եթե Ադամ Սմիթը գտնում էր, որ անունն առաջին անգամ տրվել է մի առանձին առարկայի և հետագայում ստարածվել մյուսների վրա, եթե Լայբնիցը գտնում էր, որ առարկան չէր կարող այսպես կամ այնպես կոչվել, եթե հենց սկզբից հոգու մեջ գոյություն չունենար ընդհանուր գաղափար, ապա Մյուլլերը կարծում է, թե բոլոր գոյականները ծագմամբ արտահայտել են առարկայի բազմաթիվ հատկանիշներից մեկը (որակական հատկանիշ կամ գործողություն), որը անհրաժեշտաբար ներկայացված է ընդհանուր գաղափարով: Սկզբնապես անունը նշանակում է միայն մեկ առարկա (հատուկ անուն), բայց անհրաժեշտաբար սկսում է նշանակել և այդ հատկանիշն ունեցող բոլոր առարկաները: Այս կապակցությամբ Մյուլլերը առաջ է քաշում այն դրույթը, որ ամեն անվանում դասակարգում է, տեսակային հասկացության բերում սեռայինի տակ. ինչ որ մենք գիտենք, գիտենք շնորհիվ մեր ընդհանուր գաղափարների: Այստեղից էլ Մյուլլերի՝ ստորոգման ուսմունքը, ըստ որի ամեն բառ սկզբնապես առարկայի ստորոգյալն է: Իր այս տեսությունը Մյուլլերը փորձում է հիմնավորել համեմատական քերականության տվյալներով. ըստ նրա՝ համեմատական վերլուծությունը լեզվական նյութը հանգեցնում է ընդհանուր և վերացական իմաստ ունեցող 400—500 անվերլուծելի արմատի՝ ա՛ր «աշխատել», i «գնալ», ad «ուտել», dā «տալ», spas «հայել» և այլն: Այս սկզբնական արմատները ոչ բնաձայնություններ են եղել, ոչ էլ միջարկություններ. բնաձայնությունների և ձայնարկությունների տեսությունները Մյուլլերը ծաղրով կոչում է «բառ-վառ» և «պահ-պահ» տեսություններ: Նրա կարծիքով՝ լեզուն սկսվում է այնտեղ, որ-



տեղ վերջանում են ձայնարկությունները, իսկ բնաձայնությունները խաղալիք են և ոչ թե գործիք: Ինչ վերաբերում է լեզվի աստվածային ծագման տեսությանը, ապա Մյուլլերը նշում է, որ այս տեսության կողմնակիցներն ընկնում են անթրոպոմորֆիզմի մեջ՝ աստծուն պատկերացնելով որպես ռուսացիչ, որ կազմելով բառարան ու քերականություն՝ դրանք սովորեցրել է առաջին մարդուն: Սակայն Մյուլլերը իր տեսությամբ վերջ ի վերջո հանգում է լեզվի աստվածային ծագման տեսակետին՝ լեզվական բնազդը համարելով աստծուց մարդուն տրված շնորհ:

Մյուլլերը, այսպիսով, փաստորեն չի լուծում լեզվի ծագման հարցը: Մերժելով բնաձայնությունների ու միջարկությունների տեսությունները՝ նա ի վիճակի չէ պատասխանելու այն հարցին, թե ինչպե՛ս են կապվում տվյալ իմաստները տվյալ (և ոչ այլ) հնչյունների կամ հնչյունախմբերի հետ: Համեմատական գերլուծության տվյալների վկայակոչումը այս դեպքում հարցը չի լուծում. հնդեւրոպական լեզուների համեմատական ուսումնասիրությունը վերականգնում է ոչ թե լեզվի նախնական պատկերը, այլ մեզ համեմատաբար մոտ գտնվող վիճակի պատկերը, ընդ որում այդ արմատների նախնական իմաստների մեկնաբանությունը ճիշտ չէ: Գեռես Միշել Բրեսալը<sup>1</sup> նշում էր, որ հիշյալ արմատները չեն կարող սկզբնական լեզվի տարրեր համարվել, այլ ներկայացնում են ավելի նախնական, կոնկրետ իմաստ ունեցող անուններից ծագած գոյականների մնացորդներ: Ավելորդ չէ հիշատակել, որ Մյուլլերը հետագայում Նուարեի ազդեցության տակ փոխում է իր տեսակետը<sup>2</sup>:

Զբաղվելով համեմատական կրոնագիտության և համեմատական դիցաբանության հարցերով՝ Մյուլլերը հանգում է այդ հարցերի՝ ըստ էության լեզվաբանական պրոբլեմներ լինելու գաղափարին: Ըստ Մյուլլերի՝ դիցաբանական գրույցները (միֆերը) ոչ այլ ինչ են, քան «լեզվի հիվանդություն», որոնք առաջանում են մարդկային տարրորոշված խոսքի բազայի վրա: Գործողության գաղափար արտահայտող սկզբնական արմատների փոխաբերական գործածությունները նախնադարյան մարդու երևակայությունը վերածում է իրականության և փնտրում տվյալ արմատով նշանակվող գործողության աղբյուրը. անունը (nomen) դառնում է

<sup>1</sup> Mélanges de mythologie et de linguistique, 1878.

<sup>2</sup> Հմտ. А. Л. Погодин, Язык, как творчество, Харьков, 1913, էջ 480—481:

աստվածային էություն (numen)։ Մտածողությունը գոյություն ունի միայն լեզվի միջոցով, իսկ միջը բնության երևույթների բացատրության առաջին մտածողական ակտն է։ Հնդկերոպական լեզուների դիցաբանական անունների և զրույցների համեմատության միջոցով Մյուլլերը փորձում է ստեղծել հնդկերոպական համեմատական դիցաբանությունը և համեմատական լեզվաբանության մեթոդի անալոգիայով հնդկերոպական ժողովուրդների բոլոր միջերը փորձում է բխեցնել մեկ սկզբնաղբյուրից՝ հնդկերոպական նախաժողովրդի միջերից։

Մյուլլերը ընդհանրություն է տեսնում լեզվաբանության զարգացման էտապների և բնական գիտությունների զարգացման էտապների միջև։ Նրա կարծիքով՝ բնական գիտությունների պատմությունն ընդգրկում է 3 էտապ՝ 1) էմպիրիկ-հավաքողական, 2) դասակարգողական և 3) տեսական ընդհանրացման։ Լեզվաբանությունը ևս իր պատմության մեջ անցնում է այդ 3 էտապները։ Հասկանալի է, որ Մյուլլերը իրեն կոչված է համարում հատուկ խոսք ասելու լեզվաբանության զարգացման նոր աստիճանում։

Իր բոլոր թերություններով հանդերձ՝ Մյուլլերի լեզվաբանական կոնցեպցիան ունի որոշ նվաճումներ. 1) լեզվաբանությունը համարելով բնական գիտություն՝ Մյուլլերը, այնուամենայնիվ, կարծում է, որ լեզվաբանությունը պատմության համար կարևոր սվայններ է ընձեռում, և որ բնական գիտություններից ոչ մեկը այնքան սերտորեն չի կապված պատմության հետ, որքան լեզվաբանությունը. 2) հակադրելով աճը պատմությանը և ունենալով պատմության իդեալիստական ըմբռնում՝ Մյուլլերն, այնուամենայնիվ, լեզվաբանության մեջ հայտնում է կարևոր միտք՝ լեզվական պրոցեսի՝ մարդու կամքից անկախ լինելու մասին, որն այս բնագավառում մատերիալիստական կոնցեպցիայի սաղմ էր. 3) Մյուլլերը լեզվաբանության համար կարևոր է համարում բանավոր խոսքի ուսումնասիրությունը։ Հակադրելով լեզվաբանությունը բանասիրությանը՝ նա առաջ է քաշում բարբառների և անգիր լեզուների ուսումնասիրության՝ լեզվաբանության համար ունեցած կարևորության հարցը։

## 2. ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆ (ՊՍԻԽՈԼՈԳԻՉՄ)

Ներածական դիտողություններ. — Նատուր-բիոլոգիզմը լեզվաբանության մեջ աստիճանաբար տեղի է տալիս պսիխոլոգիզմին,

որ սկզբնապես գոյակցելով նրան՝ հետագայում այն գրեթե լիովին դուրս է մղում: Հոգեբանական ուղղութիւնի հիմնադիրը համարվում է Շտայնթալը, որը սկսելով Հումբոլդտի հայացքների ժողովրդականացման փորձերից՝ վերջ ի վերջո հանգում է լեզվական երևութիւնների հոգեբանական ըմբռնմանը: Հոգեբանական ուղղութիւնը հող է նախապատրաստում պատմա-համեմատական լեզվաբանութիւնի նոր շրջանի տեսական հիմնավորման համար: Շտայնթալն ապրում և ստեղծագործում է նաև այդ նոր շրջանի ձևավորման ընթացքում:

Հոգեբանութիւնը որպէս ինքնուրույն գիտութիւն ձևավորվել է XIX դ. կեսերից: Սակայն նրա փիլիսոփայական հիմքերը դրվել են դեռևս XVIII դ. փիլիսոփաների կողմից: XIX դ. առաջին կեսի փիլիսոփաներից հոգեբանութիւնի ձևավորման համար առանձնապէս կարևոր դեր է խաղում իդեալիստ փիլիսոփա Հերբարտը, որը փորձում է հոգեբանութիւնի մեջ ներմուծել բնական գիտութիւնների մաթեմատիկական վերլուծութիւնի մեթոդը՝ և ստեղծել պատկերացումների ստատիկա ու մեխանիկա: Ըստ նրա՝ պատկերացումները գտնվելով ինքնաշարժման մեջ՝ փոխադարձաբար իրար արգելակում են, մթազնում, հավասարակշռում կամ աջակցում, որի հետևանքով հանդես են գալիս պատկերացումների դոմինանտութիւնը, ասոցիացիան և վերարտադրութիւնը: Բնական է, որ Հերբարտի հայացքներն էլ սկզբնապէս ազդում են լեզվաբանութիւնի մեջ հոգեբանական սկզբունքների ներմուծման վրա:

XIX դ. կեսերից, երբ հոգեբանութիւնի համար արդեն փիլիսոփայական և ֆիզիոլոգիական հիմքեր էին ստեղծվել, հոգեբանութիւնը ձևավորվում է որպէս ինքնուրույն գիտութիւն՝ իր փորձնական հետազոտութիւնի մեթոդով: Սակայն հետազոտութիւնի այս նոր մեթոդների և նոր դրույթների ազդեցութիւնը նկատվում է հատկապէս հաջորդ ենթաշրջանում, ուստի և այդ մասին կխոսվի ավելի ուշ:

Հայման Շտայնթալ. — Շտայնթալը (1823—1899) լեզվաբանական հետաքրքրութիւնի լայն շրջան է ունեցել: Իր լեզվաբանական գործունեութիւնն սկսելով Հումբոլդտի լեզվաբանական հայացքների ժողովրդականացումից՝ իր հետագա աշխատանքներում նա ընդգրկում է լեզվաբանութիւնի գրեթե բոլոր կարևոր հարցերը՝

<sup>1</sup> Հմտ. հատկապէս Herbart, Psychologie als Wissenschaft, begründet auf Erfahrung, Metaphysik und Mathematik, 1824—1825.

լեզվի ծագման ու էություն, լեզուների դասակարգման, քերականության տեսության, լեզվաբանական ուսմունքների պատմության և այլն: Նա եղել է Բեռլինի համալսարանի ընդհանուր լեզվաբանության պրոֆեսոր:

1840-ական թվականներից սկսած Շտայնթալը հրատարակում է բազմաթիվ աշխատություններ, որոնցից առանձնապես հիշատակելի են հետևյալները՝ «Վ. Հումբոլդտի լեզվափիլիսոփայական աշխատությունները» (Շտայնթալի մեկնաբանություններով) և «Վիլհ. Ֆ. Հումբոլդտի լեզվաբանությունը և հեգելյան փիլիսոփայությունը», «Լեզուների դասակարգումը որպես լեզվական իդեալի զարգացում», «Լեզվի ծագումը», «Քերականությունը, տրամաբանությունը և հոգեբանությունը, նրանց սկզբունքներն ու փոխհարաբերությունները», «Լեզվակառուցվածքի գլխավոր տիպերի բնութագիրը» («Լեզուների դասակարգումը» աշխատության վերամշակումը), «Հունական և հռոմեական լեզվաբանության պատմությունը», «Բանասիրությունը, պատմությունը և հոգեբանությունը՝ իրենց փոխադարձ հարաբերություններով», «Մանդե նեգրերի լեզուները՝ հոգեբանորեն և հնչյունաբանորեն քննված», «Հոգեբանության և լեզվաբանության ներածությունը»<sup>1</sup>; 1869 թ. Շտայնթալը փիլիսոփա և հոգեբան, Հերբարտի հետևորդ Մորից Լացարուսի հետ միասին հիմնադրում է «Ժողովուրդների հոգեբանության և լեզվաբանության հանդեսը»<sup>2</sup>, որտեղ արժարժվում են նորելուկ «Ժողովուրդների հոգեբանության» հիմնական սկզբունքները: Այստեղ էլ Շտայնթալը Լացարուսի հետ միասին հրատարակում է «Ներածական մտքեր ժողովուրդների հոգեբանության մասին»<sup>3</sup>,

<sup>1</sup> H. Steinthal, Die sprachphilosophischen Werke W. Humboldts, Berlin, 1848. Die Sprachwissenschaft Wilh. Humboldts und die Hegelsche Philosophie, Berlin, 1848. Die Klassifikation der Sprachen als die Entwicklung der Sprachidee, Berlin, 1850. Der Ursprung der Sprache, Berlin, 1851 (II վերամշակված հրատ., 1858 թ.). Grammatik, Logik und Psychologie; ihre Prinzipien und ihre Verhältnis zueinander, Berlin, 1855. Charakteristik der hauptsächlichsten Typen der Sprachbaues, Berlin, 1860. Geschichte der Sprachwissenschaft bei Griechen und Römern, Berlin, 1863. Philologie, Geschichte und Psychologie in ihren gegenseitigen Beziehungen, Berlin, 1864. Die Mande-Neger-sprachen psychologisch und phonetisch betrachtet, Berlin, 1867. Abriss der Sprachwissenschaft, I, Psychologie und Sprachwissenschaft, Berlin, 1871.

Zeitschrift für Völkerpsychologie und Sprachwissenschaft.

<sup>3</sup> M. Lazarus und H. Steinthal, Einleitende Gedanken über Völkerpsychologie, ZVY, I.

ապա առանձին՝ «Ժողովուրդների հոգեբանության ըմբռնումը» հոդվածները<sup>1</sup>։

Շտայնթալը XIX դ. լեզվաբանության այն հաղվադեպ ներկայացուցիչներից մեկն է, որոնք ուշադրություն են հատկացրել ոճաբանական հարցերին<sup>2</sup>։ Ոճաբանությունը նա սահմանում է որպես ոճի բոլոր ձևերի հատկությունները և արդյունավետությունը որոշող պայմանների ուսմունք։

Լեզվաբանության պատմության մեջ Շտայնթալը հայտնի է որպես հոգեբանական ուղղության հիմնադիր։ Լեզվական պրոցեսի հոգեբանական մեկնաբանության նրա փորձը լայն արմատներ գցեց լեզվաբանության մեջ՝ դանազան տարատեսակներով հանդես գալով լեզվաբանական դանազան ուղղություններում ու դպրոցներում։ Սակայն նրա ազդեցությունը այս հաստատական-դրական կողմով չի սպառվում։ Ոչ պակաս կարևոր էր և նրա ուսմունքի ժխտողական-քննադատական կողմը։ Իր հոգեբանական կոնցեպցիայի դիրքերից Շտայնթալը լայն քննադատության է ենթարկում և՛ տրամաբանական քերականության սկզբունքները (հատկապես Բեկկերի սիստեմը), և՛ լեզվաբանության մեջ իշխող բիոլոգիական նատուրալիզմը։ Տրամաբանական քերականությունը XIX դ. 1-ին կեսում շարունակում էր տիրապետող լինել լեզվի ստատիկ ուսումնասիրության բնագավառում, հանդես գալով հատկապես դպրոցական քերականության անվան տակ։ Այդ քերականության ներկայացուցիչները դեռևս հեռու կանգնած լինելով պատմական ըմբռնումից, շարունակում էին քերականության մեջ առաջնորդվել հին Մեթոդներով, տարբերություն չտեսնել տրամաբանության ու քերականության սկզբունքների միջև, նույնացնել լեզուն ու մտածողությունը։ Ինչպես նշել ենք, այդ առանձնապես ցայտուն կերպով արտահայտվել է Կ. Բեկկերի «Լեզվի օրգանիզմը» աշխատության մեջ։ Շտայնթալը ծառանում է լեզվի այսպիսի ըմբռնման դեմ, քննադատում տրամաբանական քերականության արհեստական սխեմաները և լեզվին բռնի կերպով նրան ոչ հատուկ կատեգորիաներ պարտադրելը։ Շտայնթալը խիստ քննադատության է ենթարկում և Շլայխերի լեզվաբանական կոնցեպցիան՝ լեզվի նույնացու-

<sup>1</sup> H. Steinthal, Begriff der Völkerpsychologie, ZNS, XVII.

<sup>2</sup> H. Steinthal, Zur Stilistik, ZNS, 1866, IV. Շտայնթալից ավելի վաղ ոճի մասին մի աշխատություն է գրել անգլիացի փիլիսոփա Հ. Սպենսերը. H. Spenser, The Philosophie of Style, 1852.

մը բնական օրգանիզմի հետ: Այս հարցում է, որ նա լայն կերպով օգտագործում է Հումբոլդտի դրույթները: Շտայնթալը Հումբոլդտից հետո նոր աստիճանի է հասցնում ընդհանուր լեզվաբանությունը (մասնակի լեզվաբանություններով միակողմանիորեն տարվելու պայմաններում)<sup>1</sup> առանց այն դարձնելու առանձին քերականությունների հավաքածու<sup>1</sup>:

Դեռևս իր սկզբնական աշխատություններում հանդես գալով Հումբոլդտի լեզվափիլիսոփայական հայացքները մասսայականացնողի դերում, Շտայնթալը լեզուն դիտում է որպես ոգու բնազդանման ինքնագիտակցություն, մարդկության բազմազան լեզուները համարում մի ընդհանուր «լեզվական իդեայի» զարգացումը դեպի կատարելություն և հաճույքով դիմում լեզվական օրգանիզմի հասկացությանը: Իր «Լեզուների դասակարգումը որպես լեզվական իդեայի զարգացում» գրքում (1850 թ.) Շտայնթալը բոլոր լեզուները դիտում է որպես լեզվական իդեայի «ընդհանուր օրգանիզմը» (Gesamtorganismus) կազմող անդամները: Սակայն նա աստիճանաբար ավելի ու ավելի է տուրք տալիս լեզվի հոգեբանական ըմբռնմանը և լեզվական կարևորագույն հարցերի քննության մեջ Հումբոլդտի փիլիսոփայական լայն հարցադրումը փոխարինում հոգեբանական նեղ հարցադրումով: Այդ արդեն ցայտուն կերպով երևան է գալիս «Քերականություն, տրամաբանություն, հոգեբանություն» գրքում (1855 թ.): Եթե, ասենք, Հումբոլդտի համար լեզվի ծագման հարցը փիլիսոփայական հարց էր, լեզվի ծագման պայմանների և լեզվի ծագման շրջանում մարդու գիտակցության վիճակի հարց, ապա Շտայնթալի համար այն սկսում է վերածվել փորձնական հոգեբանության հարցի, անհատական խոսքի և անհատական գիտակցության փոխհարաբերության, խոսքի յուրաքանչյուր մոմենտում մարդու գիտակցության վիճակի և այն կառավարող օրենքների հարցի: Լեզվի ծագման և զարգացման հետ կապված բոլոր հարցերը Շտայնթալը փորձում է լուծել մարդկային ընկալումների վերլուծության մեջ՝ կարծելով, որ այդ հոգեկան ոլորտից էլ բխում է մարդու տարբերությունը կենդանուց, կենդանական աշխարհի վրա գերակշռություն ստանալը: Շտայնթալի համոզմամբ անհատական խոսողական ակտի հոգեբանական հետազոտությունը պարզում է մարդկային լեզվի ծագումը, զարգացումն ու ֆունկցիավորումը ընդհանրապես: Շտայն-

<sup>1</sup> Հմմտ. II. Arens. հիշ. աշխ., էջ 253:

թալը որակական տարբերություններ չի տեսնում երեխայի խոսքի զարգացման և մարդկային լեզվի ծագման ու զարգացման միջև: Զկարողանալով հասնել ընդհանուրի և առանձինի փոխհարաբերության դիալեկտիկային՝ նա առանձին խոսողական ակտերը կառավարող օրենքները հավասարապես կիրառելի է համարում լեզվի նկատմամբ առհասարակ: «Քանի որ ժողովրդի ոգին ապրում է միայն անհատների մեջ, — գրում է նա, — և շունի անհատական ոգուց առանձնակի գոյություն, ուստի և նրանում բնականաբար տեղի են ունենում, ինչպես և վերջինում, միևնույն հիմնական պրոցեսները, որոնք ավելի մոտիկից բացատրում է անհատական հոգեբանությունը»:

Պայքարելով տրամաբանական քերականության դեմ՝ Շտայնթալը հասնում է ծայրահեղության և փաստորեն հանգում է լեզվի ու մտածողության խզման, լեզվի ծագման հարցում մտածողության մասնակցության ժխտման. լեզվի և տրամաբանության կատեգորիաները նա համարում է անհամատեղելի և անհարաբերակից: Այս հարցում նա փաստորեն վախճանակետին է հասցնում Հումբոլդտի դրույթը լեզվի՝ մտածողության համար բեռ լինելու մասին:

Կարելի է ասել, որ Շտայնթալից է սկսվում լեզվի նախկին սինթետիկ, ամբողջական քննության տրոհումը առանձին ակտերի քննության, լեզվի և պատմության կապի սկզբնական ըմբռնման աստիճանական կորուստը առանձին տարրերի մեկուսացված քննության մեջ:

Լեզվական երևույթների հոգեբանական բացատրության հարցում Շտայնթալը հենվում է Հերբարտի իդեալիստական-մեխանիստական (ասոցիատիվ) հոգեբանության վրա: Վերջինս, ինչպես նշել ենք, հոգեբանությունը համարելով «հոգու մեխանիկա», հոգեկան ողջ պրոցեսների էությունը հանգեցնում էր «պատկերացումների մեխանիկային»: Հերբարտի և ասոցիատիվ հոգեբանության մյուս ներկայացուցիչների մոտ պատկերացումների փոխազդեցությունը, շարժումն ու կապերը որոշվում են ասիմիլյացիայի, ապերցեպցիայի և ասոցիացիայի օրենքներով: Ըստ այդ օրենքների՝ նման պատկերացումները միաձուլվում են, նոր ընկալումները որոշվում են եղած պատկերացումների ամբողջությամբ, պատկերացումների միջև հաստատվում են զանազան կապեր կամ գուգորդումներ (նմանություն, առընթերություն և հակադրություն):

վերջիններիցս լեզվի համար կարևոր են առընթերության զուգորդումները): Այս երեք կարգի օրենքները Շտայնթալի մոտ այն կախարդական բանալին են, որոնցով նա փորձում է թափանցել լեզվի բոլոր գաղտնարանները:

Խոսելով այն մասին, որ ժամանակակից հոգեբանությունը անհատական հոգեբանություն է, Շտայնթալը անհրաժեշտ է համարում այն լրացնել ժողովուրդների հոգեբանությամբ. անհատական հոգեբանության առարկան անհատի հոգին է, բայց անհատը մեկուսացած անհատ չէ, այլ պատկանում է որոշ ժողովրդի. հետևաբար անհատի մասին չի կարելի լիակատար գաղափար կազմել՝ առանց նկատի ունենալու այն հոգեկան միջավայրը, որի մեջ ծնվել է և որի մեջ ապրում է տվյալ անհատը: Շտայնթալի այս դրույթը, անշուշտ, հենվում է Հումբոլդտի «ժողովրդի ոգի» հասկացության վրա:

Շտայնթալի և Լացարուսի պատկերացմամբ ժողովուրդների հոգեբանության առարկան ժողովրդի ոգին է կամ ժողովուրդների տարբեր ոգիները: Ժողովրդի ոգին տվյալ ժողովուրդը կազմող անհատների միատեսակ պատկերացումների ամբողջությունն է: Ժողովուրդը (ազգը), այսպիսով, հոգեկան միասնության վրա է հիմնված. այն ստեղծում են ոչ թե ընդհանուր ծագումը և ընդհանուր լեզուն, այլ «ժողովրդի ոգին», որը հանդես է գալիս որպես օբյեկտիվ բանականություն և ժողովրդի պատմության կերտողն է: Ժողովրդի ոգին երևան է գալիս նրա օբյեկտիվ ստեղծագործությունների՝ լեզվի, սովորությունների, կրոնի և տեխնիկայի, գիտության, արվեստի հաջողությունների մեջ: Առաջադիմությունը համարվում է ժողովրդի ոգու էական հատկանիշը:

Լեզվին Շտայնթալը հատուկ տեղ է հատկացնում ժողովրդի ոգու արտահայտությունների մեջ. լեզուն ժողովրդի, ընդհանուրի արդյունքն է, և լեզվի տվյալները ամենից ավելի լավ են լուսաբանում ժողովուրդների հոգեբանության սկզբունքները. «Լեզուն ժողովրդի ոգու գիտակցությունն է, աշխարհայացքը և տրամաբանությունը»,—գրում է նա<sup>1</sup>: Երբ անհատը խոսքի պրոցեսում ստեղծում էր լեզուն, ապա նրան հասկանում էին. այն, ինչ ասում էր և ինչպես ասում էր մեկը, նախքան խոսքի մոմենտը կար լսողի մտքում: Հետևաբար «խոսողը ստեղծեց լեզուն միաժամանակ և՛

---

H. Steinthal, Grammatik, Logik und Psychologie, Berlin, 1855. էջ 392.



իր հոգուց, և՛ լսողի հոգուց, ուստի և արտասանված խոսքը պատկանում է ոչ միայն նրան, այլև ուրիշին»<sup>1</sup>: Լեզվի պատմությունը և ժողովրդի ոգու պատմական դարգացումը սերտորեն միահյուսվում են: Այս առումով էլ Շտայնթալը լեզվաբանությունը համարում է ժողովուրդների հոգեբանության ներածությունը: Սակայն, ինչպես նշել ենք, լեզվի էությունը Շտայնթալը փնտրում է անհատական խոսքային ակտերի բնույթի մեջ. «Այնքան, որքան յուրաքանչյուր խոսքային պրոցեսում տրված է լեզուն ընդհանրապես, և ստեղծվում կամ գործադրվում է լեզվական նյութ, այդ պրոցեսները լեզվաբանության առարկան են: Բայց լեզվական նյութը կաղմված է պատկերացումներից, և նույնիսկ պարզ հընչյունները, արտասանությունները պայմանավորված են հոգեկան սկզբնավորությամբ. որպես այդպիսին նրանք կարող են ենթարկվել մաքուր հոգեբանական զննության, որը վերանում է հոգևոր գործունեության արդյունքների բովանդակությունից»<sup>2</sup>: Լեզուն Շտայնթալի համար ոչ այլ ինչ է, եթե ոչ գիտակցված ներքին հոգեկան վիճակների, շարժումների ու հարաբերությունների արտահայտություն՝ սարրորշված հնչյունների միջոցով: Այս առումով Շտայնթալը տարբերում է խոսքը (Sprechen), խոսելու կարողությունը (Sprachfähigkeit) և լեզվական նյութը (Sprachmaterial): Առանձին լեզուն որևէ ժողովրդի լեզվական նյութի ամբողջությունն է: Խոսելու կարողությունը Շտայնթալը իդեալիստորեն նախորդել է տաշիս լեզվին. խոսելու կարողությունը, ըստ նրա, մի կողմից՝ տարրորշված հնչյուններ արտաբերելու ֆիզիոլոգիական կարողությունն է, մյուս կողմից՝ ներքնաշխարհի ամբողջությունը, որ մտածվում է որպես լեզվին նախորդող մոմենտ և որը պետք է արտահայտվի: Խոսքը, որ լեզվի անմիջական դրսևորումն է, Շտայնթալը համարում է հոգու գործունեություն, ուստի և լեզվաբանությունը հատկացնում է հոգեբանական գիտություններին: Այս կապակցությամբ, խստորեն տարբերելով քերականությունը տրամաբանությունից, Շտայնթալը լեզվաբանությունն անջատում է «գնահատող» գիտություններից՝ տրամաբանությունից, էթիկայից, էսթետիկայից. լեզվաբանությունը նպատակ չունի գնահատել արտասանվածքի իմաստը՝ սխալ կամ ճիշտ, բարոյական և անբարոյական լինելը, այլև արտասանվածքի գեղեցիկ կամ տգեկ

<sup>1</sup> H. Steinthal, Grammatik, Logik und Psychologie, Berlin, 1855, էջ 391. 392:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 142:

լինելը. հետևաբար լեզվաբանությունը իմացական գիտություն է, թեև իր որոշ ճյուղերով մոտենում է և գնահատող գիտություններին: Այս ճյուղերի մեջ Շտայնթալը դնում է առաջին հերթին լեզուների սիստեմատիկան (իմա՝ ձևաբանական դասակարգումը)՝ գտնելով, որ այն գնահատում է լեզուներն ըստ արժանիքների և կատարելության: Լեզուների առանձնահատկությունը Շտայնթալը որոշում է 3 կողմով՝ հնչյունական կողմով, ներքին ձևով և սրանց հարաբերության եզանակով: Լեզվի տարբեր կողմերը հանդես են գալիս որպես միասնական սիստեմներ, ընդ որում քերականության միասնությունն ավելի սերտ է, քան բառապաշարինը:

Իր քերականական ըմբռնումները Շտայնթալը շատ բանով կառուցում է Հոմբոլդտի հայացքների վրա՝ դրանց տալով նեղ հոգեբանական մեկնաբանություն: Շտայնթալը ևս մեծ կարևորություն է տալիս ներքին ձևի ուսմունքին, առաջնություն տալիս խոսքին լեզվի հանդեպ, բացառում բառի տարբեր նշանակությունները՝ բառի ամեն գործածություն դիտելով որպես առանձին բառ, բայը համարում է նախադասության կենտրոնը, նախնական արմատական բառերի մեջ տեսնում է բառ-նախադասություններ և այլն: Ուշադրությունը կենտրոնացնելով խոսքի վրա որպես ամբողջական կառուցվածք՝ Շտայնթալը բնականաբար առաջնություն է տալիս նախադասությանը բառի հանդեպ: Նախնական արմատական բառերը, ըստ նրա, բառ-նախադասություններ էին. զարգացած լեզվի բառերը (խոսքի մասերը) դուրս են ընկնում նախադասությունների կազմից՝ շնորհիվ վերջիններիս անընդհատ խաչավորման: Յուրաքանչյուր առանձնացած բառ պահպանում է նախկին նախադասության մեջ մյուս բառերի հետ ունեցած կապի հետքերը: Նախադասության և բառի կապը որոշում է բառագիտության և քերականության կապը. երկուսն էլ գործ ունեն նույն լեզվական նյութի հետ, բայց մեկն ուշադրությունը կենտրոնացնում է բուն կառուցողական նյութի, մյուսը՝ կապի միջոցների վրա: Յուրաքանչյուր բառի համար իմաստը որոշվում է կոնկրետ խոսքի, կոնկրետ գործածության մեջ: Բառիմաստը որոշվում է այն պատկերացմամբ, որ խոսողի մոտ կապվում է բառի հետ. այսպիսով, խոսողը փաստորեն խոսքի մեջ նշում է ոչ թե առարկան, այլ առարկայի մասին ունեցած իր պատկերացումը. հնչյունների ընկալումը լսողի մոտ ասոցիացիայով առաջ է բերում նույն պատկերացումը, և լսողը հասկանում է խոսողին: Բառը կենդանի գոյություն ունի միայն խոսքի մեջ. խոսքից դուրս նա անկենդան:



բաղմաթիւլ հասկանիշներից մեկն է առանձնացվում, միայն սա է որպէս ստորոգյալ մտածվում, և դատողութեան ակնթարթում ենթակայի հասկացութեանը միայն որպէս այսպիսին է մտածվում, միայն նրա մեջ է ընկած ենթակայի արժեքը»<sup>1</sup>:

Յուրացնելով Հումբոլդտի ուսմունքը ձևի մասին՝ Շտայնթալը այնպիսի կոռեկտիվներ է մտցնում այդ ուսմունքի մեջ, որ փաստորեն նշանակում էին նահանջ ձևի լայն ըմբռնումից: Լեզվի «ներքին ձևի» ըմբռնումը Շտայնթալը հանգեցնում է առարկայի սուբյեկտիւլ հոգեբանական պատկերացմանը. ներքին ձևը նրա համար առարկայի այն պատկերն է, որ ստեղծում է խոսողի հոգին: Առարկայի պատկերացումն էլ որոշվում է անհատի զգայականութեամբ, երևակայութեամբ, գրգռումների տևականութեամբ: Վերջ ի վերջո «ներքին ձևը» Շտայնթալը մեկնարանում է ասոցիատիւլ հոգեբանութեան հայեցակետով. ըստ նրա՝ ներքին ձևը «յուրաքանչյուր հնարավոր բովանդակութեան այն հայեցումը կամ ապերցեպցիան է, որ ունի ոգին, մի միջոց պատկերացնելու այդ բովանդակութեանը, վերարտադրելու այն և նույնիսկ ձեռք բերելու նոր բովանդակութեան կամ պարզապէս ստեղծելու այն»<sup>2</sup>: Արտաքին ձևը Շտայնթալը համարում է այդ ներքին ձևի արտահայտման համար յուրաքանչյուր լեզվի մեջ առկա ստուգաբանական, քերականական և հնչյունական ձևերը: Իր «Մանդե-նեգրերի լեզուները» աշխատութեան մեջ<sup>3</sup>, որ նախատեսված է որպէս լեզվի հոգեբանական քննութեան կոնկրետ նմուշ, Շտայնթալը հանդես է բերում ձևի նեղ ըմբռնում, որ հետագայում շարունակվում է երիտքերականների մոտ՝ նրանց կողմից հանգեցվելով իր տրամաբանական վախճանակետին՝ Ֆորմալիզմին. «Մենք իրավունք չունենք խոսելու լեզվական ձևերի մասին այնտեղ, որտեղ նրանց չի համապատասխանում հնչյունական ձևի փոփոխութեանը»,—գրում է նա:

Լեզուների ձևաբանական դասակարգմանը նվիրված իր աշխատութեաններում Շտայնթալը ելնում է դեռևս ձևի լայն ըմբռնումից՝ այդ անվան տակ հասկանալով ոչ միայն բառաձևը, այլև նախադասութեան ձևը: Հիմք ընդունելով ձևի այդ ըմբռնումը՝ նա տարբերում է լեզուների երկու հիմնական տիպ՝ անձև և ձևավոր:

<sup>1</sup> H. Steinthal, Grammatik, Logik und Psychologie, Berlin, 1855, էջ 330.

<sup>2</sup> H. Steinthal, Charakteristik der hauptsächlichsten Typen des Sprachbaues, Berlin, 1860, էջ 84.

<sup>3</sup> H. Steinthal, Die Mande-Neger-Sprachen, Berlin, 1867.

Այդ երկու տիպերից յուրաքանչյուրի մեջ էլ նա առանձնացնում է կցող և փոխակերպող (իսկական իմաստով բառափոխության ձևեր ունեցող) ենթատիպեր: Անձև կցող լեզուներ են համարվում Հնդկաչինի լեզուները, ձևավոր կցող լեզու՝ շինարենը: Անձև փոխակերպող լեզուները, ըստ Շտայնթալի լինում են՝ 1) կրկնությամբ և նախամասնիկների օգնությամբ փոխակերպող՝ Պոլինեզիայի լեզուները, 2) վերջամասնիկներով փոխակերպող՝ թյուրքական, մոնղոլական, ֆիննա-ուգրական լեզուները և 3) ներմարմնավորմամբ փոխակերպող (բազմահամադրական)՝ ամերիկյան: լեզուները: Չկավոր փոխակերպող լեզուները լինում են՝ 1) տարրերի հավելմամբ փոխակերպվող՝ եգիպտերենը, 2) ներքին թեքմամբ փոխակերպվող՝ սեմական լեզուները և 3) իսկական վերջամասնիկներով փոխակերպվող՝ հնդերոպական լեզուները:

Լեզվի ծագման շտայնթալյան տեսությունը ներկայացնում է անտիկ աշխարհից եկող բնաձայնական տեսության վերամշակումը գիտական հոգեբանության տվյալների հիման վրա: Շտայնթալի օնոմատոպոետիկ կամ ռեֆլեքսային<sup>1</sup> տեսությունը ներկայացնում է ասոցիատիվ հոգեբանության սկզբունքների կիրառումը լեզվի ծագման հարցի նկատմամբ: Ըստ նրա՝ հնչյունների և իմաստների կապը բոլոր դեպքերում որոշվում է ասոցիացիայով և ապերցեպցիայով: Լեզվի ծագման հարցը լուծել՝ նշանակում է պարզել այն հոգեկան վիճակը, որ անմիջապես նախորդում է լեզվի առաջացմանը և հասկանալ, թե լեզվի ստեղծմամբ ի՞նչ է ձեռք բերում հոգին. «Լեզվի առումով,—գրում է Շտայնթալը,— գոյություն չունի նախաստեղծման (Urschöpfung) և ամեն օր կրկնվողի տարբերությունը»<sup>2</sup>. Լեզվի առաջացման ընթացքում գործում են նույն օրենքները, ինչ ամենօրյա լեզվական գործունեության ընթացքում. լեզուն անընդհատ նորոգվող, նորից ու նորից առաջացող պրոցես է: Մարդկային լեզվի տարրորշված հնչյունները Շտայնթալը բխեցնում է նախնական աֆեկտային ճիշտ-ռեֆլեքսներից, միմիկական և հնչյունական ռեֆլեքսային շարժումներից: Զգացմունքի ընդհանրությունն է այն կապող օղակը,

<sup>1</sup> Ռեֆլեքսը (Reflexion) Շտայնթալը հոգեբանական-ֆիզիոլոգիական առումով սահմանում է որպես մի երևույթ, որի դեպքում ներվային զրդիորը (հաղորդող ներվինը) անցնելով ուղեղին կամ ողնուղեղին՝ այնտեղ չի վերջանում, այլ ուրիշ ներվերի է անցնում (զիցուս՝ շարժողական ներվին). հմմտ. H. Steinthal, Grammatik, Logik und Psychologie, 1855, էջ 247:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 232:



տանքն իր հերթին հարստացնում է նրա իմացությունը, և այդ երկու երևույթը՝ աշխատանքն ու իմացությունը թուլացնում են աֆեկտը, ագահությունը և բարձրացնում են գիտակցականությունը: Այստեղից էլ առաջանում է էսթետիկական հետաքրքրություն, գեղեցիկի և բարոյականության ուրախության ունակությունը: Աշխատանքը պետք է առաջ բերի նոր պահանջներ, նոր պահանջները ձգտել են տալիս նոր աշխատանքի, և այսպիսով, աշխատանքը բարձրացնելով իր նպատակները, հասցնում է մարդկանց միավորման, հասցնում է հասարակությանը, որը տալիս է բանականության (ինտելեկտի) լայնացման նոր սալմեր և այդ հենց լեզվի ստեղծման ճանապարհով»:

Շտայնթալն ընդունում է լեզվի և լեզվական «ներքին ձևի» սկզբնական (նախքան պատմական շրջանը) զարգացման երկու էտապ՝ բնաձայնության (die Stufe der Onomatopöie) և բնութագրական (charakterisierende Stufe): Բնաձայնությանը նախորդող ձայնարկությունների տիրապետության (այսպես կոչված պաթոզնոմիկական) աստիճանում (ձայնարկությունները Շտայնթալը համարում է ղգացմունքի ռեֆլեքսներ) դեռևս մարդկային լեզվի մասին չի կարելի խոսել, դեռևս չկա «ներքին ձևը»՝ ղգացմունքի հայեցողությունը (Anschauung). հնչյունը և ղգացմունքը նույնական են: Բնաձայնության աստիճանում,—ընդ որում բնաձայնությունն ասելով Շտայնթալը հասկանում է ոչ թե հայեցված առարկաների հնչյունական նմանողությունը, այլ հնչյունի կապը հայեցողության (Anschauung) հետ, որն այսպիսով հանդիսանում է իրի և հնչյունի միջնորդը,—ներքին ձևը հանդես է գալիս որպես հայեզողության հայեցողությունը, այսինքն՝ հայեցողության այն հատկանիշը կամ տարրը, որը գիտակցությունը առանձնացնում է հայեցողության մյուս տարրերից և դարձնում ներքին ձև (իմա՝ հոգեկան բովանդակությունը հնչյունի հետ կապող սկզբունք)՝

<sup>1</sup> Իր «Լեզվի ծագումը» գրքում Շտայնթալը «Էհենդանի խոսքի դործունեության մեջ» տարբերում է «3 գործոն՝ 1) հնչյունը՝ մտքի (Gedanke) մարմնավորումը (Verleiblichung), 2) լեզվի ներքին ձևը կամ այս մարմնավորման որոշակի ձևը և 3) մաքի բովանդակությունը կամ հայեցողությունները (Anschauungen) և հասկացությունները, որոնք հազորգման բովանդակությունն են». H. Steintal, Der Ursprung der Sprache, II Ausg., 1858, էջ 130: Քանի որ պատկերացումը Շտայնթալը դիտում է որպես հայեցողության հայեցողություն, ուստի և վերջի վերջը նշում է, որ «այն պրոցեսի մեջ, որի միջոցով հայեցողությունից կազմվում են պատկերացումները, պարունակվում է հենց լեզվի ծագումը, և պատկերացումները հնչյուններով, բառե-

ներքին ձևի բուլանդակութիւնը կամ արժեքն այս աստիճանում այն է, ինչ իր մեջ կրում է ռեֆլեքսով առաջացած բնաձայնական հնչյունը: Բնութագրական աստիճանում ներքին ձևը նույնպես տարբերվող հատկանիշն է, բայց նյութ են ծառայում արդեն ոչ թե ծագմամբ ռեֆլեքսային հնչյունները, այլ դրանցից արդեն կազմված արմատական հնչյունները: Խոսելով հայեցողութեան մասին՝ Շտայնթալը նշում է, որ այն առնվում է հեգելյան փիլիսոփայութեան ոգով, որպես ինքնագիտակցութեան զարգացման հայեցողական աստիճանը, բայց մեկնաբանված հոգեբանորեն, հերբարտյան հոգեբանութեան դիրքերից և հատկապես ապերցեպցիայի ուսմունքի կիրառմամբ, որովհետև խոսելը «համենայն դեպս ներքին ձևի տեսակետից ղգայական տպավորութեան, ընկալման, հայեցողութեան ապերցեպավորումն է»<sup>1</sup>:

Ալեքսանդր Աֆանասիչ Պոտեբնյա. — Պոտեբնյան հոգեբանական ուղղութեան ամենականավոր ներկայացուցիչներից մեկն է: Գտնվելով Հումբոլդտի և Շտայնթալի լեզվաբանական հայացքների ազդեցութեան տակ՝ նա իր ուշադրութիւնը կենտրոնացրել է լեզվական երևույթների ներքին կողմի վրա և ընդունել լեզվական հարցերի մեկնաբանութեան նրանց հիմնական սկզբունքները: Սակայն մի շարք հարցերի լուծման մեջ Պոտեբնյան հանդես է բերել նշանակալից ինքնուրույնութիւն և մեծապես նպաստել լեզվական երևույթների իրական բնույթի ըմբռնմանը:

Պոտեբնյան բազմազան հետաքրքրութիւնների տեր գիտնական է: Բացի լեզվաբանական հարցերից նա զբաղվել է գրականագիտական և ազգագրական հարցերով: Այս հանգամանքը մեծապես նպաստել է այն բանին, որ Պոտեբնյան հատուկ ուշադրութիւն նվիրի գեղարվեստական ստեղծագործութիւնների լեզվի ուսումնասիրութեան, լեզվի և արվեստի փոխհարաբերութեան, լեզվի արտահայտչականութեան ու ոճի հարցերին. ինչպես հայտնի է, լեզուների համեմատական ուսումնասիրութեամբ առաջացած միակողմանի հետաքրքրութեան պայմաններում այս հարցերը դադարել էին անհրաժեշտ ուշադրութիւն գրավելուց: Լեզվաբանական տեսութեան և ոճի հարցերի հետ միասին Պոտեբնյան հետաքրքրվել է ուսերենի հնչյունաբանութեամբ, ձևաբանութեամբ ու

րով ամբայցվում են ու վերարտադրվում»։ H. Steinthal, Charakteristik der hauptsächlichen Typen des Sprachbaues, 1860, էջ 82:

<sup>1</sup> H. Steinthal, Der Ursprung der Sprache, II Ausg., 1858, էջ 132:



շարահյուսութեամբ, սլավոնական լեզուների առանձին կողմերով, բարբառագիտութեամբ, պատմա-համեմատական քերականության հարցերով: Ճիշտ է, պատմա-համեմատական քերականության ժամանակակից պրոբլեմների նկատմամբ նա սկեպտիկ դիրք է զբաղեցրել, բայց իր քննադատությամբ նպաստել է այդ բնագավառում իշխող մի շարք սխալ հայացքների հաղթահարմանը:

Պոտեբնյայի ընդհանուր լեզվաբանական հայացքները ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտվել են նրա «Միտք և լեզու»<sup>1</sup>, «Ռուսական քերականության նյութեր»<sup>2</sup>, այլև հետմահու հրատարակված «Բանահյուսության տեսության նյութեր»<sup>3</sup> աշխատություններում: Վերջին աշխատությունը կարևոր է նրանով, որ Պոտեբնյան այստեղ զբաղվում է քիչ ուսումնասիրված մի այնպիսի հարցով, ինչպիսին լեզվի արտահայտչական կողմն է:

Պոտեբնյայի ողջ գիտական գործունեությունն ընթացել է խարկովի համալսարանում: Նա դաստիարակել է լեզվաբանների մի ամբողջ սերունդ, որի ներկայացուցիչներից են Դ. Ն. Սվյաչանիկո-Կուլիկովսին, Ա. Վ. Պոպովը և ուրիշները:

Պոտեբնյան լեզվական պրոցեսը դիտում է որպես անընդհատ ստեղծագործության պրոցես, որի յուրաքանչյուր ակտը նման չէ մյուսին: Սակայն այս անընդհատ փոփոխության մեջ, ըստ նրա, լեզուն պահպանում է իր կառուցվածքային միասնությունը և սիստեմայնությունը: Ելնելով լեզվի անընդհատ փոփոխականության ըմբռնումից՝ Պոտեբնյան լեզվաբանական պրոբլեմների լուծման մեկնակետը տեսնում է կոնկրետ խոսքի մեջ: Վերջինս լեզվագործածության հիմնական ձևն է, որը լինելով խիստ անհատական՝ միաժամանակ մի մեծ ամբողջի՝ լեզվի մասն է: Եյս կապահցութեամբ Պոտեբնյայի մոտ հետագա զարգացում է ապրում լեզվի և խոսքի հակադրության գաղափարը: Լեզուն կապվում է կոլեկտիվի հետ, դիտվում որպես մի սկիզբ, որ արտահայտություն է գտնում յուրաքանչյուր անհատի յուրաքանչյուր խոսողական ակտի մեջ: Մարդիկ հասկանում են իրար, որովհետև պատկանում են միևնույն ժողովրդին, միևնույն ընդհանուր ամբողջության մասն են կազմում: Սակայն Պոտեբնյան լեզվի էությունը տեսնում է ոչ թե այս ընդ-

<sup>1</sup> А. А. Потебня, Мысль и язык, Харьков, 1862.

А. А. Потебня, Из записок по русской грамматике, I—II, 1874 (լրացումներով՝ 1888), III, 1882, IV, 1941.

<sup>3</sup> А. А. Потебня, Из записок по русской словесности, Харьков, 1905.

հանուրի մեջ, հասարակութեան հաղորդակցման կարիքը սպասարկելու մեջ, այլ անհատական խոստովական ակտերի ստեղծագործական բնույթի մեջ: Այս առումով լեզվական խնդիրների լուծումը նա, Շտայնթալի նման, վերջ ի վերջո տեսնում է անհատական հոգեբանութեան մեջ՝ առանձին խոստովական ակտերի համար արվող կերակացութունները կիրառելի համարելով լեզվի նկատմամբ ընդհանրապես: Լեզվի էութեան այս նեղ ինդիվիդուալիստական ըմբռնումը առանձնապես ցայտուն կերպով արտահայտվել է նրա «Միտք և լեզու» աշխատութեան մեջ. Պոտերնյայի համար ևս «բար աշխարհում է ուրիշին հասկանալու միջոց, որքանով այն ինքն իրեն հասկանալու միջոց է: Նա մարդկանց միջնորդ է ծառայում և նրանց միջև բանական կապ սահմանում այն պատճառով, որ առանձին անձի մեջ նշանակված է միջնորդ լինելու նոր ընկալման և գիտակցութունից դուրս գտնվող՝ մտքի նախորդ պաշարի միջև»<sup>1</sup>:

Լեզվի իրական անմիջական գոյը տեսնելով կոնկրետ խոստովական ակտերի մեջ՝ Պոտերնյան՝ ա) ժխտում է բառի բազմիմաստութիւնը և գտնում, որ բառի յուրաքանչյուր գործածութիւնն առանձին բառ է, բ) լեզվական գլխավոր միավորը համարում է նախադասութիւնը (որպես կապակցված խոսքի միավոր) և գրտնում, որ խոսքից դուրս բառը մեռած մի բան է, գ) հանգում է խոսքի մասերի նույնացմանը նախադասութեան անդամների հետ, դ) այս բոլորի հետ կապված՝ ուշադրութիւնը կենտրոնացնում է շարահյուսութեան վրա: Բառը Պոտերնյան համարում է խոսքի բաղկացուցիչ տարրը, որից դուրս նա գոյութիւն չունի. որպես այդպիսին բառը չի կարող բազմիմաստ լինել. նա կարող է ունենալ միայն մեկ իմաստ, որ որոշվում է կոնտեքստով. բառիմաստի ամեն մի փոփոխութիւն, այդ թվում և քերականական իմաստի փոփոխութիւնը այն առանձին բառ է դարձնում: Ամեն մի գործածութիւն նոր բառ է ստեղծում, և ամեն մի այդպիսի ակտ անկրկնելի է: Բառը Պոտերնյայի համար անկրկնելի անհատական ստեղծագործական ակտ է, որ համապատասխանում է մտքի մեկ ակտին: Այս տեսակետից լեզվական կյանքի հիմնական միավորը նախադասութիւնն է, որը նախապես եղել է բառ-նախադասութիւն, այսինքն՝ հոգեբանական դատողութեան արտահայտութիւն մեկ բառով, ապա աստիճանաբար տարրորշվել է: Քերականական ձևերը և կատեգորիաները ծագում և զարգանում են նախադասու-

<sup>1</sup> А. А. Потебня, Мысль и язык, 1862, III դրուխ:

թյան մեջ ու նրա միջոցով: Սակայն ծագելով՝ նրանք դառնում են նախադասության կառուցվածքը պայմանավորող, այն կազմակերպող գործոն: Խոսքի մասերը կազմավորվում ու ձևավորվում են նախադասության մեջ, ընդ որում խոսքի մասերը սերտորեն կապված են նախադասության անդամների հետ. խոսքի մասերը քերականորեն ձևավորված բառերն են, որոնք որոշվում են նախադասության կառուցվածքով, նախադասության մեջ կատարած իրենց ֆունկցիայով, այսինքն՝ որպես նախադասության անդամներ հանդես գալով: Եթե բառի իմաստային ձևերը լիակատար արտահայտություն են գտնում խոսքի մեջ, ապա քերականական ձևերը այդպիսի արտահայտություն են գտնում նախադասության մեջ<sup>1</sup>: Այսպիսով՝ քերականության մեկնակետը Պոտեբնյայի համար շարահյուսությունն է, որն ըմբռնվում է որպես լեզվի կառուցվածքային միասնություն: Քերականական ձևը համարվում է շարահյուսական հասկացություն, քերականական կատեգորիաները դիտվում են շարահյուսորեն: Պոտեբնյայի համար ևս դիմավոր բայը (verbum finitum) նախադասության կենտրոնն է, որ կարող է միայնակ նախադասություն կազմել: Ի տարբերություն Շտայնթալի, որ նախադասությունը դիտում էր որպես տավտողգիա, Պոտեբնյան նախադասությունը համարում է մի միասնություն, որ արտահայտում է հաղորդվող հասկացությունների երկվությունը. «շունը վազում է» նախադասության մեջ արտահայտվում են, օրինակ, առարկայականությունը և պրոցեսը իրենց միասնության մեջ: Քանի որ խոսքի կառուցվածքը փոփոխական է, ուստի և, ըստ Պոտեբնյայի, դժվար է տալ նախադասության մի ընդհանուր սահմանում բոլոր էտապների համար: Նշելի է, որ շնայած խոսքի մասերի այս կոնկրետ-խոսքային ըմբռնմանը՝ դրանք Պոտեբնյայի մոտ, այնուամենայնիվ, որոշ վերացականություն և ոչ կոնկրետ-պատմականություն ունեն: Խոսքի մասերի՝ զարգացման պոտեբնյայական տեսությունը կառուցվում է պատմա-համեմատական լեզվաբանության տվյալների անբաժարար հաշվառմամբ:

Լեզվի քերականական կառուցվածքի կապակցված-սիստեմային բնույթի ըմբռնումը Պոտեբնյային հնարավորություն է տալիս խոսելու զրո վերջավորության մասին. եթե Շտայնթալը իր գործունեության ուշ շրջանում գտնում էր, որ ձևի մասին կարելի է խոսել միայն հնչունական համապատասխան արտահայտությամբ՝

<sup>1</sup> Հմտ. В. В. Виноградов, Современный русский язык. учрակ 1-ին, 1938, էջ 15:

դեպքում, ապա Պոտեբնյան ելնում է ձևի ավելի լայն ըմբռնումից և այդ ըմբռնումը կապում լեզվի սիստեմայնությունից փոխարինելով հետ. ըստ նրա՝ ձևը չի կարելի համարել լոկ արտաքին հնչյունական արտահայտություն, այն որոշվում է մյուս բառերի հետ ունեցած ասոցիատիվ կապերի հիման վրա. СТОП «սեղան» ուղղականը վերծ չէ քերականական ձևից, այն ունի զրո վերջավորություն, երբ համեմատում ենք այլ ձևերի հետ: Այս դեպքում քերականական ձևերը որոշում են «երևույթների շարքերը»:

Ելնելով բառերի շարահյուսական ըմբռնումից՝ Պոտեբնյան բառերն ըստ ֆունկցիայի բաժանում է երկու խմբի՝ լեքսիկական և ձևական. խոսքի մասեր են միայն առաջինները: Բառը որպես խոսքի միավոր, ըստ Պոտեբնյայի, բաղկացած է 3 տարրից՝ ա) հնչյունական ձևից, այն է՝ հնչյունից կամ հնչյունակոմպլեքսից, բ) նշանից կամ պատկերացումից և գ) առարկայական նշանակությունից: Նշանը կամ պատկերացումը տվյալ բառի այն կողմն է, որ կապվում է նախորդ, տվյալ բառը նշանակելու համար հիմք ծառայող բառի նշանակությունից հետ: Այսպես, օրինակ, երեխան լուսամփոփը կոչում է ձմերուկ՝ վերջինիս նշանակությունից հանելով նրա կլորությունից հատկանիշը և այդ դարձնելով նախորդի նշանակության նշանը՝ տվյալ բառը նշանակելիս: Ըստ Պոտեբնյայի, ամեն մի բառիմաստ իր այս կողմով կապվում է նախորդ բառերի հետ. այն ոչ միայն բառի ստեղծման, այլև նրա գոյությունից անհրաժեշտ տարրն է: Բառի նշանակությունը և նշանը միասին կազմում են բառի ներքին ձևը: Նշելի է, որ ներքին ձևի ըմբռնումը Պոտեբնյայի մոտ որոշ վարգացում է ապրել. «Միտք և լեզու» գրքում, հենվելով Հումբոլդտի վրա, նա ներքին ձևը սահմանում է որպես արտալեզվական բովանդակության պատկերացման եղանակ, դիտում որպես լեզուն գիտակցության հետ կապող սկզբունք. հետագայում ներքին ձև ասելով նա հասկանում է ստուգաբանական ձևը, ապա «այն նվազագույն նշանակությունը, առանց որի բառը չի կարող ինքն ինքը լինել»: Այսպիսով, Պոտեբնյան տարբերում է՝ ա) բառի ներքին ձևը, բ) բառի արտաքին կամ հնչյունական ձևը և գ) բառի քերականական ձևը: Վերջինս, ըստ Պոտեբնյայի, միտքը սիստեմավորելու, այն առանձին բաժիններով դասավորելու կարողությունն է:

Ըստ Պոտեբնյայի՝ քերականական ձևը բառի նման ունի 3 կողմ՝ «հնչյուն, պատկերացում և նշանակություն»: Պոտեբնյան

А. А. Потеня, Из записок по русской грамматике, I, էջ 36:





փոխարինումը նկարագրական-վերլուծական ձևերով բոլորովին էլ չի համարում անկման և քայքայման, ձևերի կրճատման պրոցես. ըստ նրա՝ այս դեպքում նախկին ձևերին փոխարինում են այլ ձևեր. հանդես են գալիս «մաքուր ձևական բառերը»՝ աստիճանաբար ազատվելով «ամեն մի նյութական իմաստից»: Պոտեբնյան նոր լեզուների զարգացումը համարում է լեզվի հետագա առաջադիմություն՝ վերացական մտածողության զարգացման հետ կապված: Լեզվի զարգացումը կապված է մտքի արտահայտման կարիքների հետ: Այս առումով նոր լեզուները նույնքան արժանի են ուսումնասիրության, որքան և հնները: Նկարագրական ձևերի զարգացումը չի նշանակում ձևայնության անկում, այլ, ընդհակառակը, խոսում է դրա զարգացման մասին: Լեզվի հնչյունական փոփոխությունները Պոտեբնյան համարում է ոչ թե «հիվանդություն», որ հատուկ է միայն «ձևական լեզուներին», այլ նախասկզբնական երևույթ: Չնայած սրան՝ Պոտեբնյան չի կարողանում լրիվ ազատվել երկու շրջանի պատկերացումից. նա պատմական առումով տարբերում է զարգացման երկու էտապ. առաջին էտապում, ըստ նրա, իշխում է «անվանական կառուցվածքը», երբ բայը գոյականից գրեթե չի տարբերվում: Այս էտապում անունը հիշեցնում է դերբայը, որ երկակի բնույթ ունի և ղուգորդում է անվան ու բայի հատկանիշները. ավելի ու ավելի առաջ գնացող տարբերակումը հասցնում է երկրորդ էտապին, երբ իշխում է բայը, և բայի ու անվան հակադրությունը ակնառու է դառնում: Փամանակակից լեզուները բնութագրվում են «բայականության» աճով (ընդ որում բայականությունը նույնացվում է ստորոգելիության հետ): Բայը դառնում է նախադասության կենտրոնը: Պոտեբնյայի այս դրույթը հասցնելով ծայրահեղության՝ Օվսյանիկո-Կուլիկովսկին հետագայում պնդում էր, որ ստորոգյալի ֆունկցիա կատարող յուրաքանչյուր խոսքի մաս բայական բնույթ ունի, և բայականությունն ավելի ու ավելի է աճում: Ընդհակառակը, Շախմատովը վճռականորեն ելնում էր այս ըմբռնման դեմ, ըստ որի «ստորոգյալի արտահայտության միակ եղանակը բայն է»:

Պոտեբնյան հանդես է գալիս և արմատի հետևողական պատմական ըմբռնմամբ՝ բողոքելով արմատի ֆետիշացման փորձերի դեմ: Նա քննադատում է առանձնապես Գ. Կուրցիոսի և Մ. Մյուլլերի փորձերը՝ վերականգնվող արմատները դիտելու որպես ունալ բառեր, որոնք գոյություն են ունեցել նախաթեքական շրջանում, «կազմակերպման» փուլում. «Այսպիսի պատկերացումը արմատի

մասին,—գրում է Պոտեբնյան,—համատեղելի է լեզվի նկատմամբ պատմական հայացքի լիակատար բացակայության հետ»<sup>1</sup>։ Համեմատության միջոցով վերականգնված արմատները ոչ մի կերպ չի կարելի դիտել որպես այնպիսի տարրեր, որոնցից սկսվել է լեզվի ստեղծումը. դրանք բոլորովին էլ նախնական լեզվին հատուկ երևույթներ չեն, այլ նշանավորում են լեզվի զարգացման մի որոշ էտապ:

### 3. ԿՈՒՆՏՈՒՐ-ԷՎՈՒՅՈՒՑԻՑԻՈՆՆԵՅԻՄ

Ուիլյամ Գուայտ Ուիտնի.—Ամերիկյան լեզվաբան Ուիտնին (1827—1894) զուգորդում է բիոլոգիական էվոլյուցիոնիզմը կուլտուր-պատմական ուղղության որոշ սկզբունքների հետ՝ հանդես բերելով և որոշ այլ առանձնահատկություններ: Եթե մի կողմից՝ լեզվական պրոցեսը նա պատկերացնում է որպես էվոլյուցիոն զարգացում, որի մեջ կարևոր դեր են խաղում գոյության պայքարն ու բնական ընտրությունը, ապա մյուս կողմից՝ լեզուն նա կապում է կուլտուրայի հետ, մարդկանց հաղորդակցման կարիքների հետ: Ըստ նրա՝ լեզվաբանությունը հիմնականում պատմական կամ կուլտուրային (իմա՝ հասարակական) գիտություն է, որովհետև լեզուն,—որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մտածողության արտահայտության միջոց՝ հաղորդակցության նպատակի համար,—սերտորեն կապված է մարդու պատմության ու կուլտուրայի հետ, և մարդկային կամքը լեզվի ստեղծագործող ուժն է՝ լինի նրա ազդեցությունը գիտակցական թե անգիտակցական: Սակայն Ուիտնին չի ժխտում, որ լեզվաբանությունը մասամբ էլ բնական գիտություն է, որ «հասարակական գիտության ճյուղերից ոչ մեկը բնական գիտության այնքան նման չէ, որքան լեզվաբանությունը», որ լեզուն իր որոշ երևույթներով նաև բնական գիտության առարկա է: Լեզվաբանությունը Ուիտնին սահմանադատում է և հոգեբանությունից. ճիշտ է, վերջինս կարևոր դեր է խաղում լեզվի կազմավորման գործոնների ուսումնասիրության մեջ, բայց լեզվաբանությունը չի կարելի ամբողջովին լուծել նրա մեջ, համարել նրա մի մասը: Լեզվաբանությունը, Ուիտնիի կարծիքով, երբեք չի կարող հասնել ապացույցման մասթեմատիկական հավաստիության, այլ հասարակական գիտությունների նման մնում է հավանականության սահմաններում:

<sup>1</sup> А. А. Потебня, Из записок по русской грамматике, I, էջ 23-24:



Ուիտնին հայտնի է որպես սանսկրիտագետ և լեզվի տեսաբան: Նրա հայացքները լեզվի բնույթի, ծագման ու զարգացման մասին շարագրված են «Լեզուն և լեզվի ուսումնասիրությունը» և առանձնապես «Լեզվի կյանքն ու աճը» աշխատություններում<sup>1</sup>: Վերջին աշխատությունը լայն ճանաչում է ստացել և թարգմանվել մի շարք լեզուներով:

Ուիտնին լեզուն համարում է մարդկային կուլտուրայի անհրաժեշտ մասը: Ըստ նրա՝ լեզուն ոչ թե ունակություն է կամ մտածողական ուժի անմիջական դրսևորում, ինչպես կարծում են, այլ գործիք, միջոց: Խոսելու ունակությունը դեռևս լեզու չէ. հնարավորությունը և իրականությունը տարբեր բաներ են: Լեզվի կյանքը և ծագման ու զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն մարդկանց հասարակական կյանքի հետ կապված: Մարդկային լեզուն տարբերվում է կենդանական «լեզվից». կենդանական «լեզուն» բնական երևույթ է, բնազդային արտահայտություն, մինչդեռ մարդկային լեզուն պատմական բնույթ ունի: Մարդկային լեզվի պատմությունն սկսվում է այն ժամանակ, երբ զգացմունքի արտահայտությունը դառնում է գիտակցության արտահայտություն: Բնազդային ճիշերը, ժեստերն ու միմիկան փոխարինվում են իսկական լեզվով հաղորդակցման ձգտման շնորհիվ: Հաղորդակցման ձգտումը մարդու մոտ զարգանում է աստիճանաբար, էվոլյուցիոն փոփոխությամբ՝ արտահայտության բնական միջոցները վերածելով լայն հնարավորություններ ունեցող և անընդհատ կատարելագործման ընդունակ մի գործիքի: Լեզվի ստեղծագործությունը կապված է հաղորդակցվելու ձգտման հետ: Լեզվի գործածությունը որպես հաղորդակցման միջոցի՝ մեծապես նպաստում է մարդու մտածողական կարողությունների զարգացմանը: Հաղորդակցման կարիքը, իրար հասկանալու ձգտումը պայմանավորում է և լեզվի հետագա զարգացումը. ընդհանուր հասկանալի լեզուն ունենալու պահանջը որոշում է այս կամ այն բառի կամ նախադասության օգտագործումը, այս կամ այն լեզվական կանոնին հետևելը:

Քանի որ հաղորդակցման պահանջով է սկիզբ առնում լեզուն, ուստի և Ուիտնիի կարծիքով, չի կարելի ենթադրել, որ սկզբնական հաղորդակցման միակ կամ նույնիսկ գլխավոր միջոցը լսողությունն էր ընկալվող ձայները լինելին. հաղորդակցման տեսողական

<sup>1</sup> W. D. Whitney, Language and the Study of Language, New York, 1867. The life and Growth of Language, New York, 1875.

միջոցները՝ ժեստը և միմիկան սկզբնապես պետք է նույնպիսի բնական և հասկանալի միջոցներ լինեին, ինչպիսիք հնչյուններն են. նույնիսկ երկար ժամանակ նրանք գերակշռություն պետք է ունենային լսողական միջոցների հանդեպ կրթի արտահայտման մեջ: Լսողական միջոցների գերակշռություն ստանալը պետք է տեղի ունենար գոյություն կռվի և բնական ընտրության օրենքների: Սկզբնական ճիշտը թեև բնաձայնություններ չէին, բայց մոտենում էին դրանց: Քանի որ հաղորդակցման միջոցը հնչյուններն էին, ուստի և արտահայտություն պիտի ստանային առաջին հերթին լսելի առարկաները. բնաձայնությունը Ուիտնին չի սահմանափակում միայն հնչյունների բնույթով, այլև ձայնի այլ հատկություններով: Բնաձայնությունները կարող էին բառակազմական դեր խաղալ մինչև այն ժամանակ, երբ ստեղծվում են անհրաժեշտ քանակությամբ բառեր, որոնցից կարող են այլ բառեր կազմվել լեզվական հայտնի միջոցներով: Սկզբնական բառերը ոչ գոյականներ էին և ոչ բայեր: Բառը հենց սկզբից իր մեջ կրում է աբստրակցիայի մոմենտ, որ խիստ կարևոր է մտածողության զարգացման համար: Աբստրակտ մտածողության հնարավորությունն ստեղծվում է բառի՝ սկզբնական պատկերից կտրվելու միջոցով:

Ինչպես տեսնում ենք, Ուիտնին մի կարևոր քայլ առաջ է բերում լեզվի բնույթի և ծագման ըմբռնման մեջ: Սակայն նա պարզ սլատկերացում չունի «հաղորդակցման ձգտումը» ծնող պայմանների մասին և դեռևս խիստ կերպով կաշկանդված է բիոլոգիական կոնցեպցիայով՝ խոսելով լեզվի «կյանքի և աճի» մասին:

Ուիտնին առաջադիմական դիրք է գրավում այս կամ այն լեզվի «կատարելությունը» գնահատելու հարցում՝ հրաժարվելով լեզվի զարգացման երկու շրջանների դրույթից և հանգելով լեզվի զարգացման պրոցեսի միասնականության գաղափարին: Ըստ նրա՝ այս կամ այն լեզուն կատարյալ համարելու հարցում դեր են խաղում ազգային զգացմունքները և նախապաշարումները, հաճախ և տգիտությունը: Իրականում ամեն մի լեզու ի վիճակի է արտահայտելու տվյալ ժողովրդի հոգևոր կյանքը բոլոր դեպքերում, որովհետև լեզուն և մտածողության միջոց է, մտքի արտահայտման գործիք: Որքան ավելի կուլտուրական է դառնում ժողովուրդը, այնքան նրա լեզուն ավելի է հարմարվում նրա նոր մտքերի արտահայտության ձևերին. սխալ է, օրինակ, քերականական ձևերի պակասը նկատի առնելով անկատար լեզու համարել չինարենը, որն:

իրականում բնդունակ է եղել փիլիսոփայական ծավալուն գրականության լեզու լինելու:

Ուիտնին ևս անդրադարձել է «ներքին ձևի» հարցին՝ իր մեկնաբանության մեջ այն ազատելով միստիկականության տարրերից: Նա «ներքին ձևը» սահմանում է որպես լեզվի իմաստային կառուցվածքի յուրահատկություն: «Ամեն լեզու ունի սահմանված տարբերությունների իր սիստեմը, մտածողության իր ձևերը, որոնց մեջ տվյալ լեզուն որպես մայրենի լեզու սովորող մարդը պարտավոր է արտահայտել իր բանականության աշխատանքի բովանդակությունը և արդյունքները, իր տպավորությունները, իր փորձը և աշխարհի իմացումը: Այդ այն է, ինչ երբեմն կոչում են ներքին ձև»<sup>1</sup>: Ուիտնիի մոտ սաղմնային ձևով կան նշանի կամայականության և լեզվի՝ ընդհանուր ու տրագիցիոն բնույթ ունենալու տեսակետները, բայց դրանք հետագա զարգացում չեն ստացել:

Վիլհելմ Շերեր.—Վիլհելմ Շերերի «Գերմաներեն լեզվի պատմության շուրջը» աշխատությունը<sup>2</sup> կարևոր դեր է խաղացել միայն գերմաներեն լեզվի ուսումնասիրության մեջ, այլև մեծ շահով նպաստել պատմա-համեմատական լեզվաբանության առաջընթացին: Լեզվաբանության որոշ պատմաբաններ Շերերին, Շտայնթալի և Ուիտնիի հետ միասին, համարում են պատմա-համեմատական լեզվաբանության հաջորդ փուլի հիմնադիրներից մեկը<sup>3</sup>՝ հենվելով նաև այդ փուլի լեզվաբանների վկայությունների վրա:

Շերերը իր աշխատության մեջ ելնում է գերմաներեն լեզվի և գերմանական ժողովրդի պատմության սերտ կապի սկզբունքից: Հետևողականորեն անցկացնելով լեզվի զարգացման էվոլյուցիոնիստական ըմբռնումը՝ նա շի ընդունում լեզվի զարգացման երկու շրջանների տարբերումը. Շերերի կարծիքով՝ լեզվի զարգացումը անընդհատ իրականացվող պրոցես է: Լեզվի կյանքում նա նշում է երկու «ձևաստեղծ» (formschaffend) գործոնի դերը՝ «փոխանցում» (Übertragung) և «տարբերակում» (Differenzierung)՝ «փոխանցում» անվան տակ նա նկատի ունի այսպես կոչված «կեղծ

<sup>1</sup> W. D. Whitney. The Life and Growth of Language, New York, 1875, էջ 21.

<sup>2</sup> W. Scherer, Zur Geschichte der deutschen Sprache, Berlin, 1868.

<sup>3</sup> Հմմտ. H. Arens, հիշ. աշխ., էջ 288:

անալոգիան», մի երևույթ, որ հետագայում դառնում է երիտքերականների առաջատար սկզբունքներից մեկը:

Ֆյոդոր Իվանովիչ Բուսլաև.— Բուսլաևը հենվում է կուլտուրպատմական դպրոցի սկզբունքների վրա, հետևում Գրիմի պատմական վերլուծության մեթոդին, լեզվի պատմությունը սերտորեն կապում ժողովրդի պատմության հետ: Նրա հայացքները արտացոլում են գտել հատկապես նրա «Ռուսաց լեզվի պատմական քերականություն» և «Մայրենի լեզվի դասավանդման մասին» աշխատություններում<sup>1</sup>: Բուսլաևի լեզվաբանական կոնցեպցիան դրսևորում է մի շարք առանձնահատկություններ: Ամենից առաջ Բուսլաևը ղուգորդում է պատմա-համեմատական լեզվաբանության և հատկապես կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքները տրամաբանական քերականության սկզբունքների հետ. առաջինները հիմք են ծառայում լեզվի դարգացման պրոցեսի ուսումնասիրության մեջ ընդհանուր կողմնորոշման համար, երկրորդները՝ լեզվի քերականական կառուցվածքի վերլուծության, լեզվական նյութի սիստեմավորման և հատկապես լեզվի ստատիկ քննության համար: Այսպիսով, և՛ Ն Գրիմի աշխատությունը նշանավորում էր պատմական քերականության և դպրոցական ստատիկ-տրամաբանական քերականության միջև խզման ուժեղացումը, ապա Բուսլաևի աշխատությունները յուրատեսակ փորձեր են կամուրջ նետելու այդ երկուսի միջև, մի կողմից՝ պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումները օգտագործելու դպրոցական ուսուցման մեջ, մյուս կողմից՝ տրամաբանական քերականության մեջ կիրառվող ստատիկ վերլուծության սկզբունքները գործադրելու պատմական քերականության նյութի սիստեմավորման նկատմամբ: Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել Բուսլաևի մի այլ արժանիքը ևս. եթե պատմա-համեմատական լեզվաբանության նախորդ ներկայացուցիչները գրեթե ուշադրություն չեն դարձնում ոճաբանության հարցերին, ապա Բուսլաևը այդ հարցերը պահում է ուշադրության կենտրոնում: Դեռ ավելին. ոճաբանական նախկին տեսությունները նա փորձում է հարստացնել պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումներով: Կուլտուր-պատմական դպրոցի մյուս ներկայացուցիչների նման ռոմանտիկական սերտաժելով ժողովրդի ու նրա հոգևոր արտադրանքների, ժողովրդի կուլտուրայի հուշարձանների և ժողովրդական բանահյուսության

<sup>1</sup> Ф. И. Буслаев, Историческая грамматика русского языка, 1858. О преподавании отечественного языка, 1867.

նկատմամբ, լեզուն համարելով ժողովրդի ոգու արտահայտությունը՝ Բուսլաևն այստեղից բխեցնում է ժողովրդական բանահյուսության լեզվի ուսումնասիրության պահանջը, մայրենի լեզվի ուսուցման մեջ կարևոր տեղ տալիս գրական լեզվի օրինակելի նմուշների և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությանը: Յուրացնելով ներքին ձևի Հումբոլդտյան ուսմունքը՝ Բուսլաևը այն յուրահատուկ ձևով կիրառում է ոճաբանական հարցերի նկատմամբ և օգտագործում մայրենի լեզվի ուսումնասիրության մեջ: Ըստ Բուսլաևի՝ «բառով մենք արտահայտում ենք ոչ թե առարկան, այլ այն տպավորությունը, որ նա թողնում է մեր հոգում. այսպես, սանսկրիտերեն փիղը կոչվում է երկու անգամ խմոզ, երկատամվոր, ձեռնավոր: Հետևաբար հոմանիշները պետք է որոշվեն ոչ թե ըստ նրանց նշանակած առարկաների, այլ ըստ այն հայեցակետի, որով մարդը նայել է առարկային բառի ստեղծագործության ժամանակ»<sup>1</sup>: Այստեղից Բուսլաևը անում է մթշաբք եզրակացություններ՝ բառերի մեծ մասը ծագում է բայարմատներից, որովհետև պատկերացումը ենթադրում է ինչ-որ գործունյա, շարժուն բան. բառի ֆիզիկական իմաստը նախորդում է բարոյականին, որովհետև ավելի մոտ է կենդանի պատկերացմանը. բառի սկզբնական կենդանի իմաստը ժամանակի ընթացքում կորչում է, և մնում է վերացական հասկացությունը, հետևաբար բառի սկզբնական իմաստը վերականգնել նշանակում է «իր հոգում նորոգել սկզբնական լեզվի ստեղծագործությունը»<sup>2</sup>: Եթե բառիմաստի պատմական զարգացումը Բուսլաևը պատկերացնում է այս ձևով, ապա խոսքի մասերի դասակարգման հարցում նա հիմք է ընդունում բառերի հասկացական արժեքը՝ առաջնորդվելով տրամաբանական քերականության սկզբունքներով. նա բացարձակ զուգահեռականություն է տեսնում բառիմաստի ու հասկացության, նախադասության իմաստի ու դատողության միջև: Սա բխում է լեզվի և մտածողության ուղղագիծ զուգահեռականության ըմբռնումից, որ հատուկ է ոչ միայն տրամաբանական քերականության ներկայացուցիչներին, այլև Հումբոլդտին, և հետևաբար հիմք է տալիս նրանց տվյալների զուգորդման: Ըստ Բուսլաևի՝ լեզուն՝ ծառայում է մտքերը, այն է՝ պատկերացումները, հասկացությունները, դատողությունները փոխադարձաբար հաղորդելուն. հետե-

<sup>1</sup> Ф. И. Буслаев, О преподавании отечественного языка, 16 изд., 1941, էջ 171:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 172:



ու զարգացումը: Լեզվի զարգացումը նա դիտում է ոչ թե որպես օրգանիզմի բնական աճ, այլ որպես մի պրոցես, որ պայմանավորված է մարդկային իմացության ընդլայնմամբ և հաղորդակցման պահանջներով. «Այս փոփոխությունց առաջին և զլիսավոր մղում տվողն է մարդուս մտացն առած զարգացումը կամ նորանոր գաղափարաց պեսպիսությունը, զորոնք յուր նմանվույն հաղորդելու կամ ավելի դյուրավ հաղորդելու համար լեզուն նորանոր կերպեր և եղանակավորմունք կատեղծե: Եվ այսպես՝ քանի որ լեզուն մտաց երևեցուցիչն է, հարկ է, որ որչափ գաղափարներ որ միտքը ստանա, այնչափ նոր տարրներով ալ լեզուն ճոխանա, որչափ գաղափարներ որ միտքը հոգե, նույնչափ հոգված բառեր (բարդացություններ) օրըստօրե երևան ելլեն»<sup>1</sup>:

Ի տարբերություն Շլայխերի և մյուսների՝ Այտընյանը հետև է լեզվի գոյության մեջ երկու շրջանների տարբերման տեսակետից և կանգնած է հետևողական էվոլյուցիոնիստական հայեցակետի վրա: Ինչպես հետագայում երիտքերականները, այնպես էլ Այտընյանը գտնում է, որ լեզվական զարգացման տարբեր շրջանների սահմանը, նրանց «անջատման կետը անկարելի է ճշտել: Այդ փոփոխությունները, այդ բնության անցումները՝ վիճակե վիճակ անզգալի փոխադրություն մըն են, որոնց բոլորը մեկանց միևնույն լեզվին գունոցը մեղմ ծիածանը կկազմեն»<sup>2</sup>: Նոր լեզուն սկզբնավորվում է հնի ընդերքում «իբրև նախընթաց փոփոխությանց արդյունք» և «դարձյալ մեղմով և անզգալաբար կընկղմվի, կկորսվի անոր կենացը հետագա փոփոխությանցը մեջ, որոնք լեզվին գրլիսավոր պատմական մասը կկացուցանեն»<sup>3</sup>: Խոսելով լեզվի կատարյալ կամ ոչ կատարյալ լինելու մասին՝ Այտընյանը դրանք հասկանում է ոչ թե բացարձակորեն, այլ կապում է լոկ գրական լեզվի ու նրա մշակման ընթացքի, լեզվի զարգացման ու մշակման համար հասարակական պայմանների նպաստավոր կամ աննպաստ լինելու հարցի հետ:

Ընդունելով ժողովրդի համար միասնական լեզվի գոյության անհրաժեշտությունը՝ Այտընյանը այդ միասնական լեզուն տարբերակված է համարում ըստ հասարակական տարբեր իմբավորումների, ընդ որում տերիտորիալ տարբերակումները կապում է

<sup>1</sup> Ա. Այտընյան, Քննական քերականություն..., Վիեննա, 1866, էջ 32:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 31:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 32:

հասարակական տարբերակումների հետ. «Բայց ազգի մը մեջ,— գրում է նա,— խորհողն ու խոսողը մեկ անհատ մը չէ, և ոչ ամենքը միևնույն կարգի և վիճակի մարդիկ են. որով՝ ըստ իմացականության և զգացողության աստիճանացը՝ լեզվի ալ որոշ աստիճանավորություն մը կեղև. ավագանվո կամ ազատաց լեզու, ուսումնական կամ գիտնոց լեզու, հասարակ կամ ընտանեկան լեզու, դեհհիկ կամ գեղջկական լեզու և այլն»<sup>1</sup>: Լեզվի զարգացման պրոցեսը և լեզվական նոր որակը Այտրնյանը կապում է լեզվի տարբերակումների հետ՝ ցույց տալով, թե ինչպես դրանցից մեկը կամ մի քանիսը ըստ պատմական տվյալ պայմանների և շնորհիվ իրենց լեզվական հատկությունների աստիճանաբար գերակշռություն են ձեռք բերում մյուսների նկատմամբ: Ըստ Այտրնյանի՝ գրավոր շրջանում այս տեսակետից առանձնապես կարևոր են գրական լեզվի և խոսակցական լեզվի («նամիկ խոսվածքի», «հասարակ լեզվի») տարբերությունները. այդ լեզուների փոխհարաբերությունը և տռանձնահատկությունները հասկանալի են դարձնում լեզվի հետագա զարգացման ուղղությունն ու ընթացքը և նոր գրական լեզվի ծննդյան անհրաժեշտությունը: Եթե Եվրոպայի հին գրական լեզուներին ու գրաբարին սկզբնապես բնորոշ են եղել «բառից ընտրություն և նշանակության ճշտություն», «բացատրությանց զորություն և փափկություն», հետագայում էլ՝ այս սկզբնական լեզվի դասական նմուշներին հետևելը, ապա խոսակցականին հատուկ են «պարզության և բացահայտության» տենդենցները, որոնցից առաջինը դյուրացնում է հաղորդակցման մեջ հասկացնելը, երկրորդը՝ հասկանալը: Սրանցով էլ Այտրնյանը բացատրում է եվրոպական լեզուների վերլուծականության զարգացումը, այսինքն՝ այն նոր գրական լեզուների վերլուծական կառուցվածքի ձևավորումը, որոնք առաջացել են հին գրական լեզուների կողքին եղած խոսակցական լեզուների («ընտանեկան», «հասարակ» խոսվածքի) հիման վրա:

Լեզուների փոխհարաբերության հարցի մեկնաբանության հարցում ևս Այտրնյանը շատ բանով կանխում է լեզվաբանության հետագա նվաճումները: Ցույց տալով լեզուների՝ զարգացման իրենց սեփական օրենքները, իրենց մասնակիություններն ունենալու փաստը՝ Այտրնյանը միաժամանակ նշում է լեզվական ընդհանրությունների երկու խումբ՝ 1) ցեղակցական ընդհանրու-

<sup>1</sup> Ա. Այտրնյան, Քննական բերականություն..., Վիեննա, 1886, էջ 34:



թյուններ և 2) անկախ զարգացմամբ ձևաբե բերվող ընդհանրություններ ու զուգահեռություններ. «Լեզվաց ընդհանրական շարժմանը մեջ,—գրում է նա,—ղանազան մարդկային ցեղերը, նաև իրարմե բոլորովին օտար, իրարու ամենևին անհաղորդ ազգերն ալ՝ իբրև թե հավասարական դաշնակցությամբ մը միաբանված են... միևնույն զույգ ընթացքն ունենալու»<sup>1</sup>:

Պողոս Հովնանյան.— Կուսուր-էվոլյուցիոնիստական հայեցակետը հետևողականորեն արտահայտված է նաև հայ լեզվաբանության մի այլ ներկայացուցիչ՝ Պ. Հովնանյանի «Մարդկային լեզվին սկզբան, հանգամանաց, միության ու բաժանման և աղագային լեզվաց վրա քննական տեսություն մը» աշխատության մեջ, որ նախորդել է Ա. Այտրնյանի «Քննական քերականությանը», բայց նրանից հայ լեզվաբանության պատմության մեջ ավելի քիչ հետք է թողել: Հովնանյանը լեզվի ծագման հարցում յուրատեսակ կերպով զուգորդում է Հումբոլդտի և բիոլոգիստների հայեցակետերը<sup>2</sup>: Եթե մի կողմից՝ Հումբոլդտի նման նա մարդուն ի բնե հատուկ է համարում «խոսելու ձիրքը»<sup>3</sup>, «խոսիլը» դիտում որպես «մարդուն բնությանը մեջ հաստատված... կարողություն ու սեփականություն»<sup>4</sup>, ապա մյուս կողմից՝ բիոլոգիստների նման նա լեզուն մարդուն հատուկ այնպիսի բնական երևույթ է համարում, «ինչպես ուտելը, խմելն ու քնանալը»<sup>5</sup>: Լեզվի ծագումը Հովնանյանը կապում է մարդկային հասարակության հետ և լեզվի գլխավոր ֆունկցիան համարում հաղորդակցականը. լեզուն նրա համար «մեկ մարդուն ներքին մտածությունն ու յգացմունքը մեկային հաղորդելու միջոց կամ միջնորդ մըն է»<sup>6</sup>, առանց որի չի կարելի պատկերացնել մարդկային հասարակությունը. «Ընկերությունն առանց խոսքի չի կրնար երևակայվիլ: Ընկերության մեջ ապրիլ սկսող մարդը պետք է որ իր սկսելու ատենը խոսելու կարողություն ունենար՝ խոսեր»<sup>7</sup>: Լեզուն ոչ միայն իր ծագմամբ, այլև իր ողջ գոյությամբ կապված է հասարակության հետ: Հումբոլդտի,

<sup>1</sup> Ա. Այտրնյան, Քննական քերականություն. Վիեննա, 1886, էջ 61:

<sup>2</sup> Հմմտ. է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, 1, Երևան, 1958, էջ 259:

<sup>3</sup> Պ. Հովնանյան, Մարդկային լեզվի սկզբան..., 1867, էջ 24:

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 23:

Նույն տեղը:

Նույն տեղը, էջ 18:

Նույն տեղը, էջ 24:

Գրիմի և կուլտուր-պատմական դպրոցի այլ ներկայացուցիչների նման Հովնանյանը լեզվի պատմությունը դիտում է որպես ժողովրդի պատմության անբաժանելի մասը, նրա կարևորագույն աղբյուրը. «Լեզու մը ուրիշ բան չէ, բայց եթե ազգի մը (կրնանք ըսել նաև՝ ընդհանուր մարդկային ազգին կամ ընկերության) հատուկ եղած սովորություններուն բովանդակությունը՝ ամեն խորհուրդները կամ մտածողություններն ու զգացմունքը հայտնի ընելու» միջոց<sup>1</sup>: Գրիմի նման Հովնանյանը ևս գտնում է, որ լեզուն, այլ պատմական հիշատակարանների կորստի դեպքում, բավական է տվյալ ժողովրդի նախորդ կյանքի պատկերը վերականգնելու համար:

Լեզուների զարգացման և փոխհարաբերության հովնանյանական ըմբռնումը հակասական բնույթ ունի. այստեղ գիտական լուրջ կոահեմներն ու եզրակացությունները դուրսդրվում են կրոնական-աստվածաշնչային «հիմնավորումների» հետ: Ցեղակից լեզուների «մայր լեզուները» Հովնանյանը դուրս եկած է համարում «մեկ նախավոր ընդհանուր լեզվեն»՝ գտնելով, որ «ամենքն ալ իրենց մեջ անոր հետքերը կպահեն»<sup>2</sup>: Ցեղակից լեզուների վարզացման ու փոփոխությունների պրոցեսը Հովնանյանը պատկերացնում է վոլգար էվոլյուցիոնիզմի դիրքերից՝ փաստորեն ժխտելով որակական անցումներն ու ձեռքբերումները: Նրա կարծիքով՝ ցեղակից լեզուները, շնայած իրենց փոփոխություններին, նախալեզվի «գլխավոր կերպարանքն չեն կորսնցուցած»: Դեռ ավելին. ըստ նրա՝ լեզուների մեջ «էական փոփոխություններ ընելն, իրեն սկզբնական գոյություն ատեն ընդունած կերպին ներհակ կերպ մը իրենց տալը հնարավոր չէ»: Այսուհանդերձ, Շլայխերի «Compendium»-ի լույս տեսնելուց առաջ, Հովնանյանը ելնում է սանսկրիտը հնդկերոպական լեզուների մայր համարելու տեսակետի դեմ. «Թեպետ և լեզվագետք հիմակ... սանսկրիտ լեզուն ամեն հնդկային-եվրոպական լեզուներու մայր կսեպեն, բայց պետք չէ այնպես կարծել, որ ասոնք անկից ելած են, հապա՝ թե անիկա արտաքո կարգի հարստություն ու կատարելություն մ'ունենալով՝ ամեն ցեղակից լեզուներուն տարրները մասնավոր կերպով մը կբովանդակեն»<sup>3</sup>:

<sup>1</sup> Պ. Հովնանյան, Մարդկային լեզվի սկզբնա... 1857, էջ 15:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 62:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 40, ծան. 1: Հմմտ. է. Աղայան, Հայ լեզվարանության պատմություն, Կ, Նրևան, 1958, էջ 263:

Հովանայանը ևս ընդունում է լեզուների ձևաբանական տարածված դասակարգումը՝ անջատականությունը, կցականությունը և թեքականությունը համարելով հաջորդական աստիճաններ, նա կանգ է առնում նաև աղգային լեզուների ձևավորման ու փոխազդեցության հարցերի վրա:

## II. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

### 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանություն. Բրյուկկե.— Ռաուների առաջ քաշած հարցը տառերի և հնչյունների տարբերակման մասին աստիճանաբար ավելի ու ավելի լայն արձագանք է գտնում: Ֆիզիոլոգ (ոչ մասնագետ-լեզվաբան) էռնստ Բրյուկկեն (1819—1892) 1856 թ. լույս է ընծայում իր «Լեզվի հնչյունների ֆիզիոլոգիայի և սիստեմատիկայի հիմնական գծերը» գիրքը<sup>1</sup>, որ նախատեսված էր լեզվաբանների և խուլ ու համրերի ուսուցիչների համար. այս գրքում նա լուրջ փորձ է կատարում տալու լեզվի հնչյունների դասակարգումն ըստ նրանց ֆիզիոլոգիական կազմավորման, ընդ որում օգտագործում է բազմաթիվ լեզուների տվյալներ: Լեզվի ֆիզիոլոգիական քննությունը, հոգեբանական քննության հետ միասին, նախապատրաստում է երիտքերականների հանդես գալը:

Բրյուկկեից մի քանի տարի անց գերմանացի ֆիզիկոս Հելմհոլցը տալիս է ձայնավորների ֆիզիկական բնույթի ուսումնասիրությունը<sup>2</sup>, իսկ հնչյունագետ Ա. Բելլը նկարագրում է լեզվի արտասանական տարբեր դիրքերը<sup>3</sup>: Վերջինս հիմնում է անգլիական հնչյունաբանական դպրոցը, որը, ընդհանրական վերլուծական այբուբեն ստեղծելու որոնումների մեջ, տալիս է հնչյունների մանրամասն ֆիզիոլոգիական դասակարգումը. Բելլի ուսմունքը հետագայում շարունակում, զարգացնում և տարածում է Հ. Սուիտը:

<sup>1</sup> E. Brücke. Grundzüge der Psychologie und Systematik der Sprachelaute für Linguisten und Taubstummenlehrer, 1856.

<sup>2</sup> H. Helmholtz, Die Lehre der Tonempfindungen, 1862.

<sup>3</sup> A. M. Bell, English Visible Speech, 1890. Sounds and their Relations, 1894.

## ա) ԲՆԳԻԱՆՈՐ ԿԱՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄՆԵՐ

Լեզվաբանական հնէաբանություն.— Աղալբերտ Կունի հիմնածայս դիսցիպլինը տվյալ ենթաշրջանում շարունակում է նոր քայլեր անել: Ռեկոնստրուկտիվ մեթոդի կիրառումը հիմքեր է ստեղծում նրա զարգացման համար: Լեզվաբանական հնէաբանությունը նվիրված հետազոտաշխատություններից, եթե զանց առնենք Մ. Մյուլլերի գործը, որի մասին խոսել ենք առանձին, հիշատակելի է Պիկտեի (1799—1875) «Հնդերոպացիների ծագումը և նախնական արիացիները» աշխատությունը<sup>1</sup>, որի մեջ հեղինակը հնդերոպացիների սկզբնական պատմությունը տալիս է իդեալական գույներով:

Ավելի ուշ շրջանում սկսում են քննադատաբար նայել իդեալականացման այս փորձերին, փնտրում հնէաբանական վերլուծությունն այլ եղանակներ: Սա կապված էր նաև «նախալեզվի» վերականգնման հանդեպ եղած սկեպտիկ վերաբերմունքի ուժեղացման հետ<sup>2</sup>: Այս ուշ շրջանի գործերից նշելի է Վ. Հենի (1813—1890) «Կուլտուրական բույսերը և բնտանի կենդանիները իրենց անցումով Ասիայից Հունաստան, Իտալիա և Նվրոպայի մնացած մասերը» աշխատությունը<sup>3</sup>:

Լեզվաբանական հնէաբանության վաղ փորձերը դրսևորում են մի շարք թերություններ. 1) դեռևս խիստ մեծ տեղ է տրվում սանսկրիտի տվյալներին, մինչդեռ մնացած լեզուների փաստերը անհրաժեշտ մշակման չեն ենթարկվում. 2) լեզվաբանները դեռևս շարունակում են հենվել պատմության իդեալիստական ըմբռնման վրա, բավականաչափ հստակությունը չեն պատկերացնում հասարակության զարգացման օրինաչափությունները. 3) դեռևս չի ստեղծված իմաստաբանական հետազոտության անհրաժեշտ բազա, իմաստաբանական վստահելի տեսություն, որ կարողանա բավարար շփով բացատրել իմաստային անցումները. 4) քիչ են հաշվի առնվում հնդերոպական լեզուների սկզբնական փոխհարաբերությունների, բառերի վաղ փոխանցումների, վաղ փոխառություն-

<sup>1</sup> A. Pictet, Les origines indoeuropéennes ou les Aryas primitifs, 1859.

<sup>2</sup> Հմտ. В. Томсен, հիշ. աշխ., Խ. Շորի վերջաբանը, էջ 134:

<sup>3</sup> V. Hehn, Culturpflanzen und Haustiere in ihrem Übergang von Asien nach Griechenland und Italien sowie in das übrige Europa, 1870.

ների հարցերը. 5) հնդերոպական նախալեզուն դիտվում է դեռևս որպես մի միատարր ամբողջություն, նրա նկատմամբ բավարար պատմական մոտեցում հանդես չի բերվում. 6) քիչ են հաշվի առնվում իմաստային զուգահեռ ու անկախ անցումները և բառերի զուգահեռ ու անկախ ղարգացման փաստերը:

Համեմատական հնչյունաբանություն. Գրասմանի օրենքը.— Հնչյունական համապատասխանությունների օրինաչափ բնույթի սկզբունքային գիտակցման համար կարևոր նշանակություն ունեցան տարբեր լեզվաբանների կողմից կատարված հայտնագործությունները: Դրանք էին, որ հող նախապատրաստեցին հաջորդ ենթաշրջանին անցնելու և երիտքերականների սկզբունքների ձևավորման համար: Այդպիսի կարևոր հայտնագործություններից մեկը Գրասմանի օրենքն էր, որ հնարավորություն տվեց պարզելու հնդերոպական պայթականների համապատասխանության որոշ ոչ պարզ կողմերը:

Հնդերոպաբանները հաստատել էին, որ հին հնդկական bh, dh, gh-ին համապատասխանում են հունական φ, θ, γ-ն և գերմանական b, d, g-ն, հին հնդկական b, d, g-ին՝ հունական β, δ, γ-ն և գերմանական p, t, k-ն. սակայն մի շարք դեպքերում նկատվում էին շեղումներ: Այդ թվացող շեղումները բացատրեց գերմանացի մաթեմատիկոս և բանասեր Հ. Գրասմանը իր «Շնչեղների և արմատների սկզբում ու վերջում նրանց միաժամանակյա առկայության մասին» հոդվածում<sup>1</sup>: Գրասմանը ցույց տվեց, որ այս թվացող շեղումները հետևանք են հին հնդկերենում և հունարենում տեղի ունեցած դիսիմիլյացիայի և որ այս բանի հաշվառման ու հնդերոպական ընդհանուր նախաձևերի ճիշտ վերականգնման դեպքում այդպիսի շեղումներ չեն լինի: Ըստ Գրասմանի՝ հին հնդկերենում և հունարենում հնդերոպական շնչեղ ձայնեղ պայթականներով սկսվող վանկերից մեկը (առաջինը) կորցրել է իր շնչեղ տարրը. այսպես, գերմանական Band «կապ» բառի դիմաց հին հնդկերենն ունի bandhāh «ժապավեն, կապ» և bandhuḥ «ազգական» բառերը, հունարենը՝ πενθερός «աներ, դորանց, ազգական» բառը, որոնց մեջ վերևում նշված ընդհանուր համապատասխանությունը (գերմ. b—հին հնդկ. bh—հուն. π) չկա. բայց երբ վերականգնում ենք հին հնդկական և հունական սկզբնական,

<sup>1</sup> H. Grassmann, Über die Aspiraten, ihr gleichzeitiges Vorhandensein im An- und Auslaute der Wurzeln, KZ, XII, 1863.

դիտմիլյացիայի շենթարկված նախաձևերը՝ \*bhandhab, \*bhand-  
huh և φενδῆρος, ապա թվացող շեղումները վերանում են, և հիշյալ  
համապատասխանությունները դառնում են ընդհանուր ու օրի-  
նաչափ:

## բ) Առանձին լեզուների և լեզվանյութերի ուսումնասիրությունը

Հնդիրանական լեզուներ.— Այս ենթաշրջանում շարունակվում  
է հնդիրանական լեզուների խորացված ուսումնասիրությունը:  
Սկսում է լայն ուշադրության առարկա դառնալ վեդայական  
հնդկերենը: Բուպպի, Վ. Շլեգելի, Ք. Լասսենի և Բյունուֆի կատա-  
րած հրատարակությունները վերաբերում էին դասական և էպի-  
կական սանսկրիտին: 1840—1850-ական թվականներին Թ. Բեն-  
ֆեյը, Մ. Մյուլլերը, Թ. Աուֆռեխտը, Ա. Վեբերը, Ռ. Ռոտը և Ու. Գ.  
Ուիտնին հրատարակում են վեդայական գրականության գրեթե  
բոլոր հիմնական տեքստերը:

Գերմանացի գիտնական Թեոդոր Բենֆեյը (1809—1881) ա-  
ռանձնահատուկ դեր է կատարել հնդկական ֆիլոլոգիայի զարգաց-  
ման մեջ: Նա հրատարակել է հին հնդկական մի շարք տեքստեր՝  
«Սամավեդայի հիմները» (1848), «Պանշաշանտրան» (1859), գրել  
է «Սանսկրիտական քերականությունը», որ ընդգրկում է և վեդա-  
ների լեզվի փաստերը (1852): Բենֆեյի դերը կարևոր է և այլ  
բնագավառներում. 1839—42 թթ. լույս են տեսնում նրա «Հունա-  
կան ստուգաբանական բառարանի» 2 հատորները, 1869 թ.՝ «Լեզ-  
վաբանության և արևելյան ֆիլոլոգիայի պատմությունը Գերմա-  
նանիայում» աշխատությունը<sup>1</sup>:

Վեստերգորդի «Սանսկրիտերեն լեզվի արմատները» աշխա-  
տությունը երկար ժամանակ սանսկրիտական արմատների միակ  
տեղեկատուն էր: 1855—75 թթ. ռուսական ակադեմիան լույս է  
ընծայում Բյոտլինգի և Ռոտի «Սանսկրիտական բառարանը»<sup>2</sup>, որը  
սանսկրիտի ամենահարուստ բառարանն էր և մինչև այժմ էլ չի  
կորցրել իր արժեքը:

<sup>1</sup> Th. Benfey, Griechisches Wurzellexikon, I- II, 1839—1842. Geschichte der Sprachwissenschaft und orientalischen Philologie in Deutschland, 1869.

<sup>2</sup> O. Böhtlingk und A. Roth, Sanskrit-Wörterbuch, St. Petersburg. I—VII, 1852—1875.

Հնդերոպական լեզուների համեմատական քերականության համար իրանական լեզուների բնագավառում ստեղծվում է մի նոր հնարավորություն՝ տեղի է ունենում «Ավեստայի» ընդարձակ հրատարակությունն ու մեկնաբանումը:

«Ավեստան» զրադաշտական կրոնի հնագույն տեքստերի հավաքածուն է՝ գրված նախ արամեական այբուբենով, ապա տառադարձված, այսպես կոչված, ավեստայականով: «Ջենդ» անվամբ նշանակում են «Ավեստայի» ուշ շրջանի մեկնությունները, որոնց լեզուն տարբերվում է «Ավեստայի» լեզվից. սակայն հնում զենդերեն ասելով ընդհանրապես հասկանում էին ավեստայի լեզուն, իսկ «Ավեստան» կոչում էին «Ջենդավեստա»: Բուն «Ավեստան» բաղկացած է հնագույն հիմներից՝ «գաթաներից», որոնց հեղինակը համարվում է Զրադաշտը, և կրտսեր ավեստայից. սրանց լեզուն զգալի շահով տարբեր է: «Ավեստայի» տեքստերի կազմման ժամանակը ենթադրվում է մ. թ. ա. IX—III դդ.: Քանի որ Զրադաշտի ուսմունքն սկզբնապես տարածված էր Մարաստանում (Մեդիայում) և Բակտրիայում, ուստի և ավեստայի լեզուն համարում էին հին Բակտրիայի լեզուն և կոչում էին նաև հին բակտրերեն:

Վերևում հիշված Վեստերգորդը 1852 թ. հրատարակում է «Ավեստայի» ամենից ավելի լրիվ տեքստը, որ զգալի շահով նպաստում է այն համեմատական ուսումնասիրություն մեջ ներգրավելուն: Սրան 1852—1858 թթ. հետևում է Ֆ. Շպիգելի հրատարակությունը: 1860-ական թվականներին հրատարակվում են ավեստայի լեզվին նվիրված մի շարք աշխատություններ (ձեռնարկներ, քերականություններ, բառարաններ)՝ Ֆր. Յուստիի, Ֆ. Շպիգելի, Ա. Օվելակի կողմից: Ֆր. Յուստիի «Ջենդերեն լեզվի ձեռնարկը»<sup>1</sup> պարունակում էր ավեստայի լեզվի բառերի և քերականական ձևերի լրիվ հավաքածուն: Սրանց, ավելի ուշ շրջանում, հետևում են և այլ աշխատություններ, որոնք նվիրված են ավեստայի լեզվի նկարագրական և պատմա-համեմատական ուսումնասիրությանը: «Ավեստայի» լեզվական մեկնաբանության մեջ խիստ կարևոր դեր խաղաց Բյուռնուֆը: Նշելի է, որ Ռասկը հատուկ աշխատություն է նվիրել «Ավեստայի»՝ Անկետիլ դը-Պեռոնի կողմից XVIII դ. կատարված թարգմանության իսկությունը:

<sup>1</sup> F. Justi, Handbuch der Zendsprache. Altbaktrisches Wörterbuch, Leipzig, 1864.

«Ավեստայի» վերծանութեան գործը ավարտում է Սիլվեստր դը-Սասին:

Հունարեն և լատիներեն. Գ. Կուրցիոս.— Ինչպես նշել ենք, 1840-ական թվականներից սկսած Կուրցիոսը հանդես է գալիս մի շարք աշխատութիւններով, որոնց մեջ պատմա-համեմատական լեզվաբանութեան ձեռք բերած նվաճումների լույսի տակ քննարկման է ենթարկում հունարենը: Դրանցից ամենից ավելի լայն հեղինակութիւն է վայելում «Հունական ստուգաբանութեան հիմնական գծերը» աշխատութիւնը<sup>1</sup>, որի մեջ նա նախ ներածական տեղեկութիւններ է տալիս հունարենի ուսումնասիրութեան պատմութեան նոր շրջանի և համեմատական մեթոդի հիմնական սկզբունքների մասին, ապա անցնում հունարենի ստուգաբանական քննութեանը՝ կատարելով բաղմաթիվ համեմատական զուգադրումներ:

Կուրցիոսի՝ հունարենին և մասամբ լատիներենին նվիրված մյուս աշխատութիւններից հիշատակելի են՝ «Ժամանակների և եղանակների կազմութիւնը հունարենում և լատիներենում»<sup>2</sup> աշխատութիւնը, որը հետագայում արմատապես վերամշակվել է ու լույս տեսել «Հունարեն լեզվի բայը» վերնագրով<sup>3</sup>, և «Հունական քերականութիւնը»<sup>4</sup>, որի համար իբրև հավելված ավելի ուշ լույս է ընծայվել «Լուսաբանումներ իմ հունական քերականութեանը» գործը<sup>5</sup>: Վերջին երկու աշխատութիւնները կարևոր էին այն տեսակետից, որ սրանց մեջ Կուրցիոսը, մի կողմից՝ փորձ էր անում համեմատական մեթոդն օգտագործել դպրոցական ուսուցման համար, մյուս կողմից՝ տալիս էր հունարենի համեմատական քերականութեան սիստեմատիկ շարադրանքը՝ ծանոթացնելով նրա հետ դասական ֆիլոլոգիայով զբաղվողներին: 1868—1878 թթ. Կուրցիոսը լույս է ընծայում «Հունական և լատիական քերականութեան էտիմոլոգիան» պարբերականը<sup>6</sup>, որտեղ լույս են տեսնում նրա հետևորդների աշխատութիւնները:

<sup>1</sup> G. Curtius, Grundzüge der griechischen Etymologie, I—II, Leipzig, 1858—1862.

<sup>2</sup> G. Curtius, Die Bildung Tempora und Modi im Griechischen und Lateinischen, 1846.

<sup>3</sup> G. Curtius, Das Verbum der griechischen Sprache, 1873—1876.

<sup>4</sup> G. Curtius, Griechische Grammatik, 1852.

<sup>5</sup> G. Curtius, Erläuterungen zu meiner griechischen Grammatik, 1863.

<sup>6</sup> Studien zur griechischen und lateinischen Grammatik, 1868—1878.



Կուրցիոսի լեզվաբանական հայտացքների ձևավորման մեջ կարևոր դեր են խաղացել մասամբ Բոպպի ու Հումբոլդտի դավանած սկզբունքները, մասամբ էլ Ա. Շլայխերի լեզվաբանական սխտեմը: Այդ հայտացքների մեջ արտացոլում են գտել և՛ իդեալիստական պատմափիլիսոփայության պատկերացումները, և՛ լեզվաբանության այս շրջանի ընդհանուր գաղափարներն ու մոլորությունները:

Իր «Հնդկերոպական լեզվաբանության ժամանակագրության շուրջը» աշխատության մեջ<sup>1</sup> Կուրցիոսը խոսելով հին և նոր լեզվաբանության մասին՝ առաջ է քաշում պատմականության սկզբբունքի կարևորության հարցը. պատմականությունը նա համարում է այն գլխավոր գիծը, որ տարբերում է նոր լեզվաբանությունը հնից: Այս առումով նա դնում է քննարկվող երևույթների ժամանակագրական բաշխման անհրաժեշտության հարցը. առանց ժամանակագրության՝ լեզվի պատմությունը դառնում է առանձին փաստերի գումար, և չի որոշվում այդ փաստերի տեղը պատմական պրոցեսի մեջ: Սակայն այս ճիշտ սկզբունքների հետ միասին Կուրցիոսը շարունակում է մնալ լեզվի զարգացման երկու շրջանի առկայության տեսակետի վրա՝ իր իսկ կողմից խախտելով հետևվողական պատմականության սկզբունքը, թեև, ի պատիվ Կուրցիոսի պետք է նշել, որ նա ճիշտ չի համարում դրանցից երկրորդը դիտել որպես անկման և քայքայման շրջան: Նա, հատկապես Հումբոլդտի հետևողությամբ, տարբերում է «լեզվական օրգանիզմի» (Sprachkörper) «կազմավորման» կամ «աճման» շրջան (die Periode der Organisation oder des Wachstums) և «կատարելագործման» շրջան (die Periode der Ausbildung): Այս երկու շրջանների տարբերությունը նա տեսնում է այն բանի մեջ, որ առաջին շրջանում տեղի է ունենում լեզվական ձևերի ստեղծման պրոցես, իսկ երկրորդ շրջանում ոչ մի նոր բան չի ստեղծվում, այլ տեղի են ունենում միայն շեղումներ և գործածության յուրահատկություններ. «լեզվական ձևերի բոլոր հիմնական տիպերը պետք է ստեղծված լինեն հենց այս շրջանում, քանի որ նրանք նույնն են բոլոր ցեղակից լեզուներում: Հաջորդ շրջանը տալիս էր, ոչ մեծ շեղումներով և յուրահատուկ գործածությամբ, միայն այդ տիպերի դրոշմները, բայց հիմնական ձևերի բնագավառում ոչ մի նոր բան

<sup>1</sup> G. Curtius, Zur Chronologie der indogermanischen Sprachforschung, APHKKSGW, V, 1867.

չէր ստեղծվում»<sup>1</sup>: Հենվելով հունական և սանսկրիտական ձևաբանական կազմիչների փոխհարաբերության վրա, Կուրցիոսը հնդերոպական «կաղմավորման» շրջանի համար առաջարկում է 7 ժամանակագրական էտապ՝ 1) արմատների շրջան, 2) ածականների (դետերմինատիվների, բառացի՝ «որոշիչների») շրջան, 3) նախնական բայական շրջան, 4) հիմքերի կազմավորման շրջան, 5) բարդ բայական ձևերի շրջան, 6) հոլովների կազմավորման շրջան և 7) մակբայների կազմավորման շրջան: Դեռևս գտնվելով Բոպպի կցականության սկզբունքի և Հումբոլդտի հայացքների ազդեցության տակ՝ Կուրցիոսը լեզվաբանության հիմնական նպատակն է համարում «գոյություն ունեցող ձևերը սկզբնական կազմիչ մասերին տարրալուծելը և ստեղծող լեզվական ոգու չգիտակցված նպատակները ճանաչելը»<sup>2</sup>: Երկրորդ շրջանը Կուրցիոսը պատկերացնում է որպես մի շրջան, երբ կենդանի գործածությունը սկիզբ է դնում նախապես ստեղծվածի հընչյունական հողմահարմանը (Verwitterung) և թուլացմանը: Եթե ձևաբանության հարցերը կապվում էին առաջին շրջանի հետ, ապա հընչյունական փոփոխությունները կապվում են երկրորդ շրջանի հետ: Այս շրջանում, ըստ Կուրցիոսի, հընչյունները հողմահարվում են, կորցնում արտասանության ուժն ու հնչման լրիվությունը: Մասամբ էլ այս պատկերացմամբ է բացատրվում Կուրցիոսի վեճը երիտքերականների հետ. շնայած այն բանին, որ նա և Շլայխերը խոսում են «հընչյունական օրենքների» մասին, բայց և այնպես թույլ են տալիս բաղմաթիվ բացառություններ:

Դեռևս իր «Հունական ստուգաբանության հիմնական գծերը» աշխատության մեջ, խոսելով գիտական ստուգաբանության սկզբունքների մասին և նշելով, որ լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության ժամանակ պետք է ելնել առաջին հերթին հընչյունաբանական կողմից, Կուրցիոսը տարբերում էր հընչյունական փոփոխությունների երկու տեսակ. 1) կանոնավոր փոփոխություններ (regelmäßige oder durchgreifende Lautveränderungen), որոնք տոգորում են տվյալ լեզվի ողջ հընչյունական կառուցվածքը, որոշում նրա հընչյունական բնույթը. այս փոփոխությունները Կուրցիոսը բաժանում էր 3 ենթատիպի՝ հընչյունական տեղաշարժ

G. Curtius, Zur Chronologie der indogermanischen Sprachforschung, APhKKSGW, V, 1867, էջ 197:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 193:

(Lautverschiebung), հնչյունների ճեղքում<sup>1</sup> (Lautspaltung) և հնչյունների կորուստ (Lautverlust). 2) անկանոն կամ սաղմնային փոփոխություններ (unregelmäßige oder sporadische Lautveränderungen), որոնք հանդիպում են մի քանի սահմանափակ դեպքերում և չեն որոշում տվյալ լեզվի հնչյունական բնույթը: Վերջիններս Կուրցիոսը դիտում էր որպես «ծագումային հարաբերության մթազնում (Trübung)»: Այսպիսով, այստեղ նախ՝ Կուրցիոսը հին ֆիլոլոգիական քերականության օրինակով բավարարվում է «կանոնավոր» և «անկանոն» երևույթների տարբերակմամբ՝ առանց «հնչյունական օրենքի» գաղափարը հետևողականորեն տարածելու բոլոր (և՛ «կանոնավոր», և՛ «անկանոն») դեպքերի վրա, առանց այն բացատրելու, ավելի շուտ պատկերավոր գործածություններ. երկրորդ՝ նա փաստորեն ընդունում է, որ կանոնավոր փոփոխությունների կողքին հնարավոր են «սաղմնային» փոփոխություններ, որոնք չեն ենթարկվում որևէ օրինաչափության: Հետագայում Կուրցիոսը հնչյունական օրենքների հարցին հատուկ աշխատություններ է նվիրել՝ «Դիտողություններ հնչյունական օրենքների կարևորության մասին»<sup>2</sup> և «Նորագույն լեզվաբանության քննադատության շուրջը»<sup>3</sup>: Հնչյունական փոփոխությունների պատճառը Կուրցիոսը համարում է հարմարության և հեշտացման ձգտումը՝ որպես արդյունք մարդկանց ծուլության. արտասանությունը այդ փոփոխությունների հետևանքով բերանի խոռոչում տեղափոխվում է հետևից առաջ: Հեշտացման ձգտումը, ըստ Կուրցիոսի, գործում է և՛ կանոնավոր, և՛ «սաղմնային» փոփոխությունների դեպքում: Կուրցիոսի կարծիքով՝ ոչ բոլոր հնչյուններն են ենթակա միատեսակ «հողմահարման». որպես իմաստի կրողներ ըմբռնվող հնչյուններն ու վանկերը ավելի շատ են դիմադրում նյս հողմահարմանը: Իր «Դիտողություններում» Կուրցիոսն ընդհուպ մոտենում է երիտքերականների սկզբունքներին՝ նշելով, որ «լեզվի ուսումնասիրության. համար ամենից ավելի կարևոր են երկու հիմնական հասկացություն՝ անալոգիայի հասկացությունը և հնչյունական օրենքի հասկացությունը»<sup>4</sup>:

<sup>1</sup> Հստ տվյալ շրջանի պատկերացման Կուրցիոսը կարծում է, թե սանսկրիտական k-ի ճեղքմամբ առաջանում է k'-ն, a-ի ճեղքմամբ՝ e-ն և o-ն և այլն:

<sup>2</sup> G. Curtius, Bemerkungen über die Tragweite der Lautgesetze, BPhKKSGW, 1870.

<sup>3</sup> G. Curtius, Zur Kritik der neuesten Sprachforschung, 1885.

<sup>4</sup> G. Curtius, Bemerkungen über die Tragweite der Lautgesetze, 1870, էջ 2:

Կուրցիոսի կատարածի մեջ առանձնապես նշելի է «արմատի աճականի» («դետերմինատիվի», «որոշչի») գաղափարի առաջ-քաշումը, որ հետագայում կարևոր դեր է խաղում արմատի գաղափարի հիմնավորման մեջ։ Կուրցիոսն այսպես է կոչում արմատին հարող այն մասնիկ-բաղաձայնները, որոնք ղուրկ են որոշակի ածանցական իմաստից։

Լատիներեն լեզվի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցան Վ. Կորսսենի (1820—1875) աշխատությունները, թեև դրանք դեռևս շատ հեռու են կատարյալ լինելուց և մեթոդական ամուր հիմքի վրա չեն խարսխված։ Նրա ամենից ավելի կարևոր աշխատությունը «Լատիներեն լեզվի արտասանության, ձայնավորների և շեշտի մասին» գործն էր<sup>1</sup>։

Լատիներենի համեմատական ուսումնասիրության հետ միասին կարևոր նշանակություն ունեցան նրա մերձավոր ցեղակիցների՝ օսկերենի և ումբերենի արձանագրությունների գիտական մեկնաբանությունները։ Աուֆուեխտը և Կիրխհոֆը սկիզբ դրեցին ումբերենի հուշարձանների ուսումնասիրությանը («Ումբրական լեզվական հուշարձանները»<sup>2</sup>), Մոմսենը՝ օսկերենի («Ստորին իտալական բարբառները»<sup>3</sup>)։

Գերմանական լեզուներ.— Այս ենթաշրջանում ևս գերմանական լեզուների ուսումնասիրությունն ընթանում է հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության հետ գիրկընդխառն։

Ի թիվս այլոց, Վ. Տոմսենի ուսումնասիրությունները գերմանական լեզուներից կատարված ֆիննական փոխառությունների (1869) մասին ցույց տվին փոխառությունների ուսումնասիրության կարևորությունը լեզվի պատմության համար։

1870 թ. Ռ. Ֆոն Ռաումերը լույս է ընծայում «Գերմանական ֆիլոլոգիայի պատմությունը»<sup>4</sup>՝ ի մի բերելով այդ բնագավառում կատարվածի արդյունքները։

Աելյական լեզուներ.— Աստիճանաբար համեմատական ուսումնասիրության մեջ են գրավվում կելտական լեզուները, որոնց

<sup>1</sup> W. Corssen, Über Aussprache, Vocalismus und Betonung der lateinischen Sprache, 1858, II հր. 1868—1870.

<sup>2</sup> Aufrecht und Kirchhoff, Die umbrischen Sprachdenkmäler, 1849—1851.

<sup>3</sup> Mommsen, Die unteritalischen Dialekte, 1850.

<sup>4</sup> R. von Raumer, Geschichte der germanischen Philologie, vorzugsweise in Deutschland, 1870.

հնդերոպական բնույթի մասին խոսվել էր և Քոպպի կողմից: Այս բնագավառի առաջին սիստեմատիկ և հանգամանալից աշխատանքը վերևում հիշված Ի. Կ. Ցոյսի «Կելտական քերականություն» էր<sup>1</sup>: Ցոյսը կելտական լեզուների նկատմամբ կատարում է այն, ինչ Գրիմը և Ռասկը՝ գերմանական, Դիցը՝ ռոմանական և Միկլոշիշը՝ սլավոնական լեզուների համար:

Հայերեն.— Այս ենթաշրջանում շարունակում է տիրապետող լինել հայերենի՝ իրանական լեզու լինելու տեսակետը: Հայերենի համեմատական ուսումնասիրությունն արժանանում մեծ աշխատանք են կատարում Ֆր. Մյուլլերը, Պ. դը-Լագարդը, Ք. Պատկանյանը և ուրիշները:

Ընդունելով հայերենի բնույթի վերաբերյալ ընդհանուր տեսակետը՝ այս հեղինակները, սակայն, տարբերություններ ունեն հայերենի և իրանական լեզուների փոխհարաբերության մեկնաբանության հարցում: Ֆր. Մյուլլերը, որ ակտիվ կերպով հանդես է եկել և Հյուբշմանի տեսակետի դեմ, գտնում է, թե «հայերենը մի իրանական լեզու է, հատկապես ոչ հին բակտրերենի (=ավեստայի լեզվի, «գենդերենի» — Գ. Զ.) կամ հին պարսկերենի դուստր, այլ հին բակտրերենի ու հին պարսկերենի հետ միասին մի ուրիշ, մեզ անծանոթ հին իրանական լեզվից առաջացած հիմնական լեզու»<sup>2</sup>: Պ. դը Լագարդը (1827—1891) (Բյոտտիխերը) հայերենը բաղկացած է համարում 3 բաղադրիչ մասերից՝ հայկազյան (Haikannisch), արշակունյան (պահլավի) և սասանյան. վերջին երկու բաղադրիչները ակնհայտ իրանական բնույթ ունեն, բայց, Լագարդի կարծիքով, իրանական բնույթի է նաև հայկազյան շերտը: Վերջինս պատկանում է լեզուների այն խմբին, որի «հնագույն ներկայացուցիչը զենդն է»: Լագարդի այդ տեսակետը մի քայլ առաջ էր դեպի հայերենի բնիկ հնդերոպական տարրի անջատումը: Լագարդի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա իր «Հայկական ուսումնասիրություններում»<sup>3</sup> ամփոփել է հայերենի համեմատական ուսումնասիրությունն արդյունքները՝ տալով հայերենի մինչև 1877 թ. ստուգաբանված արմատների լրիվ ցանկը (2413): Ք. Պատկան-

<sup>1</sup> J. K. Zeuss, Grammatica celtica, 1853, II հր. 1873:

Fr. Müller, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, 1877, էջ 4:

<sup>3</sup> P. de Lagarde. Armenische Studien, Göttingen, 1877.

յանը իր «Հայերենի կազմութեան ուսումնասիրութեան» մեջ<sup>1</sup> հայերենը իրանական լեզու համարելով հանդերձ՝ գտնում է, որ «այն իրանական նախնական լեզվի բարբառը չի հանդիսանում»<sup>2</sup>: Այս նպատակով նա անհրաժեշտ է համարում հայերենի բարբառների ուսումնասիրութիւնը՝ նշելով, որ միայն գրաբարի ուսումնասիրութեամբ չի կարելի վճռական խոսք ասել հայերենի՝ հնդիրոսական լեզուների մեջ գրաված տեղի մասին: Զեռնարկելով հայերենի բարբառների ուսումնասիրութեանը՝ Պատկանյանը յուրօրինակ կարծիք է հայտնում գրաբարի և բարբառների բնույթի մասին: Գրաբարը նա համարում է արհեստական լեզու, իսկ հայերենի բարբառները դիտում որպէս «հնուց գոյութիւն ունեցած տարբեր հայկական ցեղերի խոսվածքների ժառանգները»<sup>3</sup>: Ավելորդ չէ հիշել, որ Հյուբշմանի հողվածից հետո Պատկանյանը վերանայում է հայերենի՝ իրանական լեզու լինելու իր տեսակետը: Հայ բարբառների ուսումնասիրութեան ու զասակարգման բնագավառում, բացի Ք. Պատկանյանից, կարևոր դեր են խաղում նաև Ա. Այտընյանը և Հ. Պետերմանը. վերջինս աշխատութիւն է նվիրում Թրիլիսիի բարբառին:

Այս ենթաշրջանում հետագա լայն թափ է ընդունում գրաբարը նոր գրական լեզվով՝ գրական աշխարհաբարով փոխարինելու համար մղվող պայքարը, որը Աբովյանից հետո շարունակում են Ստ. Նաղարյանը և Մ՝ Նալբանդյանը: Այս տեսակետից հատկապէս կարևոր են հայ ուսուցիչոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի աշխատութիւնները, որոնց մեջ նա հանդես է գալիս լեզվի հասարակական էութեան, լեզվի ու ժողովրդի պատմութեան և լեզվի ու մտածողութեան սերտ կապի դրույթներով, դնում նոր գրական լեզվի մշակման մեջ ժողովրդականութեան սկզբունքի պահպանման հարցը: Նալբանդյանը ձեռնարկում է աշխարհաբարի քերականութեան ստեղծմանը՝ ծավալուն տեսական ու պատմական հիմնավորմամբ հանդերձ, բայց մահը հնարավորութիւն չի տալիս այդ գործը գլուխ բերելու: Գրական աշխարհաբարի երկու ճյուղերից մեկի՝ արևմտահայերենի համար այդպիսի աշխատանք կատարում է Ա. Այտընյանը իր արդեն հիշատակված քննական քերականու-

1 К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб, 1864.

2 Նույն տեղը, էջ XVII:

3 К. Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869.

թյամբ, արևելահայերենի համար՝ Ստ. Պալասանյանը իր «Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրավոր լեզվի հայոց» (1870) և «Քերականություն մայրենի լեզվի» (1874) աշխատություններով:

Բալթիկ-սլավոնական լեզուներ. — Սլավոնական լեզուների սիստեմատիկ և ամբողջական ուսումնասիրության պատիվը պատկանում է սլովեն Ֆրանց Միկլոշիչին (1813—1893): 1852—1874 թթ. նա լույս է ընծայում իր «Սլավոնական լեզուների համեմատական քերականությունը»<sup>1</sup>, որին ավելի ուշ հետևում է «Սլավոնական լեզուների ստուգաբանական բառարանը»<sup>2</sup>: Հին սլավոններենին ծանոթացնելու հարցում կարևոր դեր խաղաց Միկլոշիչի «Հին սլավոնա-հունա-լատինական բառարանը»<sup>3</sup>:

Կարևոր դեր խաղացին բալթիկ-սլավոնական լեզուների ուսումնասիրության համար Ավգուստ Շլայխերի (1821—1868) աշխատությունները՝ «Նկեղեցասլավոններեն լեզվի ձևաբանությունը» և «Լիտվերեն լեզվի ձեռնարկը»:

Բալթիկ-սլավոնական լեզուներով ավելի վաղ զբաղվել է և Պոտտը:

Այս շրջանի ռուսական իրականության մեջ պատմա-համեմատական մեթոդի կիրառման առաջին սիստեմատիկ օրինակները տալիս են երկու ականավոր դեմքեր՝ Ֆ. Ի. Բուսլանը (1818—1897) և Ի. Վ. Սրեզնևսկին (1812—1880): Բուսլանը իր քերականական աշխատությունների մեջ հանդես գալով որպես տրամաբանական սկզբունքների կիրառող՝ միաժամանակ լայն աշխատանք է տանում ռուսերենի պատմա-համեմատական հետազոտության ուղղությամբ: Դեռևս 1840-ական թվականներից հանդես գալով պատմա-համեմատական լեզվաբանության սկզբունքների շատագույն ու մասսայականացնողի դերում՝ նա 1858 թ. լույս է ընծայում իր «Ռուսաց լեզվի պատմական քերականությունը», որը մեծ ազդեցություն է թողնում այդ բնագավառի հետագա ուսումնասիրությունների վրա: Բուսլանի գրքին նախորդել էր Սրեզնևսկու «Մտքեր ռուսաց լեզվի պատմության մասին» աշխատությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> F. Miklos'ich, Vergleichende Grammatik der slavischen Sprachen, 1852—1874.

<sup>2</sup> F. Miklos'ich, Etymologisches Wörterbuch der slavischen Sprachen, 1886.

<sup>3</sup> F. Miklos'ich, Lexicon palaeoslavonico-graeco-latinum, 1862—1865.

<sup>4</sup> И. И. Срезневский, Мысли об истории русского языка, 1850.

Սակայն Սրեզնևսկին առանձնապես հայտնի է «Հին ռուսերենի բառարանի նյութեր» եռահատոր աշխատությամբ<sup>1</sup>, որ հրատարակվել է հեղինակի մահից հետո և իր գիտական արժեքը մինչև օրս չի կորցրել: Սրեզնևսկին ևս Բուսլանի նման հենվում է կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքների վրա, հետևում Գրիմին:

### 3. ՈՉ-ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Քամա-սեմական լեզուներ. — Սեմական լեզուների վերաբերյալ տեղեկությունների ամփոփման և հնդեւրոպական լեզուների հետազոտության եղանակները նրանց նկատմամբ կիրառելու առաջին փորձը XIX դ. պատկանում է է. Ռընանին (1823—1892), որը նպատակ է դրել տալու սեմական լեզուների ընդհանուր պատմությունը<sup>2</sup>: Պետք է նշել, որ Ռընանը սխալ հայացք ուներ սեմական ժողովուրդների «հատուկ» կուլտուրական դերի մասին:

«Ուրալա-ալթայան» լեզուներ. — Ֆիննա-ուգրական և սամոյեդական լեզուների ցեղակցության հարցի հետ միասին, որ անհրաժեշտ չափով ապացուցվում է, լեզվաբանները XIX դարում լայն գործածության մեջ են պահում «ուրալա-ալթայան լեզուներ և ժողովուրդներ» անվանումը՝ այդ լեզուների ու ժողովուրդների ցեղակցության հարցադրմամբ հանդերձ: Ուրալա-ալթայան լեզուների մեջ, բացի ֆիննա-ուգրական և սամոյեդական լեզուներից, դրվում են, ինչպես նշել ենք, նաև թյուրք-թաթարական, մոնղոլական, մանջուրական, տունգուսական լեզուները: Այս լեզուների ցեղակցության գաղտնիքի առաջքաշումը կապված էր առաջին հերթին դրանց ձևաբանական տիպի ընդհանրության բացահայտման հետ, որին միանում էին բառա-քերականական նյութական դուզահեններ գտնելու փորձերը: Ուրալա-ալթայան լեզուների ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների մեջ առանձին հիշատակության արժանի են Ա. Ալքվիստի «Ուսումնասիրությունները ուրալա-ալթայան լեզուների բնագավառում»<sup>3</sup>:

<sup>1</sup> И. И. Срезневский, Материалы для словаря древне-русского языка, I—III, 1890—1912.

<sup>2</sup> E. Renan, Histoire générale et système comparée des langues sémitiques. Première partie. Histoire générale des langues sémitiques, Paris, 1855.

<sup>3</sup> A. Ahlquist, Forschungen auf dem Gebiete der uralaltaischen Sprachen, I—III, St. Petersburg, 1861—1880.



Այլ լեզուներ.— Չին-տիբեթական լեզուների համեմատական քերականությանը նվիրված աշխատություններից այս ենթաշրջանում հիշատակելի է Վ. Վ. Հանտերի աշխատությունը<sup>1</sup>: Ռ. Կալդուելը գրում է դրավիդյան լեզուների համեմատական քերականությանը<sup>2</sup>: Վ. Ռիդլեյը աշխատություն է նվիրում ավստրալիական մի քանի լեզուների ուսումնասիրությանը<sup>3</sup>: Ա. Շիֆները 1856—73 թթ. տալիս է կովկասյան տարբեր լեզուների նկարագրությունը:

Զգալի առաջընթաց է կատարվում ավստրոնեզիական (ավելի վաղ՝ մալայա-պոլինեզյան կոչված) լեզուների ուսումնասիրության բնագավառում: Դեռևս Հումբոլդտը, ինչպես նշել ենք, հատուկ աշխատություն էր նվիրել կավի լեզվին. միաժամանակ նա նշել էր նաև ինդոնեզիական և պոլինեզիական լեզուների կապը: Հ. Կ. Ֆոն դեր Գաբելենցը 1861—73 թթ. որոշում է ավստրոնեզիական լեզուների ցեղակցական ընդհանուր փոխհարաբերությունները:

Աֆրիկայի ոչ սեմա-քամական լեզուներին ևս մի շարք աշխատություններ են նվիրվում: Բացի Հ. Շտայնթալի՝ մանդե-նեգրերի լեզուներին նվիրված աշխատությունից (1867) նշելի են նաև Կյոլլեի<sup>4</sup> և Բլիկի<sup>5</sup> գործերը:

<sup>1</sup> W. W. Hunter, Comparative Dictionary of the Languages of India and High Asia, London, 1868.

R. Caldwell, A Comparative Grammar of the Dravidian or South Indian Family of Languages, London, 1856.

W. Ridley, Kamilaroi, Dippil and Turrubul: Language. Spoken by Australian Aborigines, II ed., Sydney, 1875.

<sup>4</sup> S. W. Koelle, Polyglotta africana, London, 1854.

W. H. Bleek, Languages of Mozambique, London, 1856, Comparative Grammar of South African Languages, London, 1869.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

- Արքայաճամբյան Ա. Ա., Արևելյան Այսրեանի «Քննական քերականություն»  
«Նախաշարիցը», ՀՊՄԻԱԺ, 2, 1945:
- Աղայան Է., Հայ լեզվաբանություն պատմություն, 1, Երևան, 1958,  
էջ 46-48, 182-221, 257-288:
- Մալխոսյան Ս., Արևելյան արքեպ. Այսրեանի, ԱՀ, 1902, 9, էջ 282-284:
- Մենեիշյան Գ., Արդի լեզվագիտությունը, ՀԱ, 1896, էջ 45-47, 76  
և հ.:
- Շատամյա Գ. Ա., Ուսումնասիրություն հայոց լեզուի և մասենագրու-  
թեան յԱրևմուտս (Գ. Զարրհանայանի թարգմանությունը և լրացում-  
ներով), Վենետիկ, 1895, էջ 287-305, 372-384:

### 2. ՌՈՒՍԵՐԵՆ

- Булаховский Л. А., Александр Афанасьевич Потебня, Киев, 1952.
- Булаховский Л. А., Лингвистическое наследие А. А. Потебни,  
РЯШ, 1952, № 2, էջ 72-81.
- Булаховский Л. А., Потебня—лингвист «Роль русской науки в  
развитии мировой науки и культуры» 2, 1946, էջ 36-62.
- Виноградов В. В., Из истории изучения русского синтаксиса,  
М., 1958, էջ 223-և հ.:
- Виноградов В. В., Русская наука о русском литературном языке,  
УЗМГУ, 106, 1946, էջ 78-94.
- Джаукян Г. Б., Армянская лингвистическая мысль и вопросы ново-  
армянского языка в XVIII—XIX вв. автореферат докторской  
диссертации, Ереван, 1955.
- Мелкумян Р. Л., Буслаев как исследователь русской стилистики,  
НТЕГУ, 34, 1951, էջ 105-128.

### 3. ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ

- Achelis Th., H. Steinthal, Berlin, 1898.
- Angermann, *Վարդիսի մասին հոդված* ВВ-ում, X.
- Basch V. W. Scherer et la philologie allemande, Paris, 1889.

- Dilthey W., W. Scherer, „Gesammelte Schriften“, II, Leipzig--Berlin, 1936, **tz 235—253.**
- Kuhn E., Joh. Kaspar Zeuss, 1906.
- Noire L., Max Müller und die Sprachphilosophie, Mainz, 1897.
- Pisani V., A. Schleicher e alcuni orientamenti della moderna linguistica, „Lingua“, 4, 1949, **tz 297—319.**
- Rothacker E., Einleitung in die Geisteswissenschaft, Tübingen, 1920, **tz 207—253.**
- Schmidt E., W. Scherer, GJ, 9, 1888.
- Schroder E., W. Scherer, ADB, 31.
- Seymour Th. D., W. D. Whitney, AJPh, 15, 1894, **tz 271—298.**
- Voigtmann Ch. G., Dr. Max Müllers Bau Wau Theorie und der Ursprung der Sprache, Leipzig, 1865.
- Whitney W. D., „40 Years' Record of the Class of 1845 of William College“, New Naven, 1885, **tz 175—182.**

---

**ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱՇՐՋԱՆ**  
(XIX դ. վերջին քառորդը)

**ՕՐԻՆԱՍԱՀՄԱՆՉԱԿԱՆ (ՆՈՄՈԹԵՏԻԿԱԿԱՆ)**  
**ԷՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆԻԶՄ**

**ՆԵՐԱՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ենթաշրջանի տիրապետող լեզվաբանական ուղղությունը և նրա ձևավորման նախադրյալներն ու պայմանները. — Այս ենթաշրջանն ընդգրկում է XIX դ. վերջին քառորդը: Տնտեսական տեսակետից այն բնութագրվում է որպես մի շրջան, երբ կապիտալիզմը թևակոխում է իր զարգացման մոնոպոլիստական-իմպերիալիստական փուլը: Սակայն պատմա-համեմատական լեզվաբանությունը շարունակում է վերելք ապրել, վերելք, որ հենվում է լեզվաբանության զարգացման նախորդ շրջանի նվաճումների վրա: Կարճ ժամանակում մի շարք հնչյունական օրինաչափ համապատասխանությունների հայտնագործումը հանգեցնում է լեզվական բոլոր կարգի փոփոխությունների խստիվ օրինաչափականության գաղափարին, և հնչյունական օրենքի սկզբունքը դառնում է այս ենթաշրջանի լեզվաբանության գլխավոր հիմնաքարերից մեկը: Իհարկէ, արդեն առկա են և այն գործոնները, որոնք խարխլում են այս ենթաշրջանի տիրապետող լեզվաբանական ուղղության տեսական հիմքերը, առկա է քննադատական վերաբերմունք հնչյունական օրենքի գաղափարի հանդեպ:

Հոգեբանությունը XIX դ. վերջին քառորդում շարունակում է նույնպես վերելք ապրել, ուժեղ կերպով ազդելով լեզվաբանության տեսական հիմունքների ձևավորման վրա: Փորձառական հոգեբանու-

Քյան վարգապետը XIX դ. կեսերից սկսած՝ այս ենթաշրջանում հասցնում է կարևոր արդյունքների. հոգեբանները փորձում են բացահայտել հոգեկան երևույթների ֆիզիոլոգիական հիմքերը, դրանք կապել ֆիզիոլոգիական պրոցեսների հետ: Այս ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները ի մի է բերում և զարգացնում Վ. Վունդտը իր «Ֆիզիոլոգիական հոգեբանության հիմունքները» (1874) աշխատության մեջ: Հոգեբանությունը մի կողմից՝ ավելի ու ավելի է դառնում խիստ օրենքներ ունեցող գիտություն, որ հենվում է փորձառական հետազոտության վրա, մյուս կողմից՝ սկսում է հանդես գալ հոգեֆիզիոլոգիական պրոցեսների որոշ միասնական ըմբռնմամբ: Այս հանգամանքը կողմնակի կերպով ազդում է նշված շրջանի լեզվաբանության տեսական հիմնավորման վրա. լեզվաբանության մեջ ևս տիրապետող է դառնում պսիխոֆիզիոլոգիզմը, լեզվական երևույթների մեջ փնտրում են հոգեկան և ֆիզիոլոգիական գործոնների ազդեցությունը: էվոլյուցիոն սկզբունքների ազդեցության խորացումը հոգեբանության և այլ գիտությունների մեջ նույնպես անհետևանք չի անցնում լեզվաբանության համար, որտեղ էվոլյուցիոն զարգացման գաղափարը յայն հիմքեր է նետում: Հոգեբանական գործոնների քննության մեջ լեզվաբանները մեծ մասամբ հենվում են ասոցիատիվ հոգեբանության վրա, բայց որոշ հարցերում հիմքեր է ձգում և էվոլյուցիոն տարիստական հոգեբանությունը, որի ներկայացուցիչ Վունդտը հանդես է գալիս նաև լեզվաբանական հարցերի հետազոտությամբ:

Այս ենթաշրջանի գլխավոր հոսանքի՝ երիտօրականության կողմից բարբառագիտական հարցերին մեծ ուշադրություն հատկացնելը բարերար ազդեցություն է գործում բարբառների ուսումնասիրության խորացման և բարբառագիտական ուսումնասիրության նոր սկզբունքների մշակման համար: Գերմանիայում սրան նպաստում է Գերմանիայի միավորումը 1870—71 թթ. ֆրանս-պրուսական պատերազմից հետո:

Այն հանգամանքը, որ լեզվաբաններն այս ենթաշրջանում տարվում են փաստերով, ուշադրություն դարձնում մանրամասների վրա, մանրատում հետազոտության առարկան (այսպես կոչված ատոմիզմը), իր տեսական-փիլիսոփայական որոշ հիմնավորումն ունեն Օգյուստ-Կոնտի (1798—1857) պողիտիվիստական փիլիսոփայության մեջ: Կոնտը ազնոստիկական հայեցակետ ուներ երևույթ-

ների մասին՝ գտնելով, որ նրանց էությունը անճանաչելի է, որ զգայություն սահմաններից մարդիկ չեն կարող դուրս գալ, որ մարմինների ներքին բնությունը մեղ համար բոլորովին անիմանալի է: Մարդկությունը անցնելով աստվածաբանական և մետաֆիզիկական ստադիաները՝ հասել է պոզիտիվ (դրական) ստադիային, երբ գլխավորը դառնում են դրական գիտելիքները: Գիտությունների դասակարգման մեջ Կոնտը հաստատում է որոշ աստիճանավորություն, հիերարխիա՝ ըստ ընդհանրացման աստիճանի. գիտություն հիմքը համարվում է մասթեմատիկան, որին հետևում են աստղաբաշխությունը, ֆիզիկան, քիմիան, բիոլոգիան և սոցիոլոգիան. այս գիտություններն էլ բաժանվում են ավելի մասնակի գիտությունների, որոնք զուտ նկարագրական բնույթ ունեն և զբաղվում են ավելի մասնակի օրենքների սահմանմամբ:

Այս ենթաշրջանի տիրապետող լեզվաբանական կոնցեպցիան, ինչպես նշեցինք, պսիխոֆիզիոլոգիզմն է, որ հանդես է գալիս որոշ տարատեսակների ձևով: Ամենից ավելի ուղղափառ տարատեսակը Երիտքերականությունն է (նեոգրամատիզմը), որը յուրատեսակ համագրություն է ենթարկում նախորդ ենթաշրջանի լեզվաբանական կոնցեպցիաների (նատուր-բիոլոգիզմի, պսիխոլոգիզմի և կուլտուր-էվոլյուցիոնիզմի) որոշ կողմերը: Երիտքերականները լեզուն դիտում են որպես երկպլանային հոգեֆիզիկական պրոցեսների ամբողջություն, լեզվաբանությունը դասում «կուլտուրային» գիտությունների շարքը, բայց «կուլտուրային» գիտությունների հիմքում դնում են հոգեբանությունը. հոգեբանության դերի այս պիսի համապարփակ լրմբոնումը նրանց մոտ միանում է լեզվաբանությունը բնական գիտությունների նման ճշգրիտ գիտություն դարձնելու ձգտման հետ: Լեզվի բնույթի լրմբոնման հարցում ընդհանուր առմամբ մոտենալով օրթոդոքս երիտքերականներին՝ հոգեբանական ֆորմալիզմի կամ պսիխոֆորմալիզմի (Մոսկվայի լեզվաբանական դպրոցի) և հոգեբանական ֆունկցիոնալիզմի կամ պսիխոֆունկցիոնալիզմի (Կաղանի լեզվաբանական դպրոցի) ներկայացուցիչները հանդես են բերում որոշ յուրահատկություններ. պսիխոֆորմալիզմի ներկայացուցիչներին ավելի է հատուկ լեզուն անկախորեն քննելու, լեզվի կառուցվածքի բնույթյան մեջ իր իսկ լեզվի ձևերից ելնելու ձգտումը. պսիխոֆունկցիոնալիզմի ներկայացուցիչներին հատուկ է լեզվի կառուցվածքային տարրերը ըստ իրենց կատարած լեզվական և հոգեկան ֆունկցիայի քննելու ձրգ-



ոանում միակողմանի պատմականությունից (պսիխոֆորմալիզմ, պսիխոֆունկցիոնալիզմ), աշխատում են խուսափել երիտքերականների ինդիվիդուալիզմից և ավելի շատ տեղ տալ իմաստային կողմին (էթնոպսիխոլոգիզմ)։

Լեզվաբանական մեթոդի բնագավառում այս շրջանում հանդես եկած տեղեղենները մասամբ հենվում են նախորդ ենթաշրջաններում ձեռք բերված նվաճումների, համեմատական հնչյունաբանության բնագավառում կատարված հայտնագործությունների և լեզվաբանական տարբեր կոնցեպցիաների լավագույն կողմերի համադրման վրա, մասամբ արդյունք են լեզվաբանությանը մերձավոր համարվող գիտությունների օրենքների ու սկզբունքների և ընդհանուր ըմբռնումների ազդեցության, մասամբ էլ հետևանք են նախորդ լեզվաբանության հետազոտության եղանակների ու պատկերացումների քննադատական վերանայման և էվոլյուցիոնիստական հայեցակետի արմատավորման։

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները.— Այս ենթաշրջանի համար կարելի է առանձնացնել երկու էտապ. 1) 1870—80-ական թթ., հատկապես 1870-ական թվականների երկրորդ կեսից սկսվող շրջանը, երբ հնչյունական օրենքների հաստատման, լեզվաբանական «հայտնագործությունների» եռուն ժամանակաշրջանն է. այս էտապում լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության այն եղանակները, որոնք կիրառում էին երիտքերականները, շնայած քննադատության որոշ փորձերին, ընդհանուր ընդունելություն են գտնում. 2) 1890-ական թվականները, երբ վերջանում է «հայտնագործությունների» ժամանակաշրջանը, երբ ուժեղանում է քննադատական վերաբերմունքը երիտքերականների նկատմամբ և երբ սկսում են ուշադրություն գրավել նոր կամ աչքաթող արված հարցերը։

Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը.— Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը մնում են գրեթե նույնը, միայն թե փոփոխություններ են կատարվում որոշ բաժինների փոխհարաբերության մեջ (հնչյունաբանությունը գերակշռող դիրք է գրավում), այլև նախ՝ հիմնադրվում է իմաստաբանությունը որպես գիտության բաժին, երկրորդ՝ հիմքեր են ստեղծվում լեզվաբանական աշխարհագրության ու բարբառագրության ձևավորման համար, երրորդ՝ կարևոր քայլեր է անում փորձառական հնչյունաբանությունը՝ հնչյունական հետազոտությունների խիստ մեծ կարևորություն ստանալու հետ կապված։



1. ՊՍԻԽՈՖԻԶԻՈԼՈԳԻԶՄ

ա) Երիտքերականները և ցրանց բնագաղտները

ա) Երիտքերականներ (նեոգրամատիզմ)

Ներածական դիտողություններ.— XIX դ. վերջին քառորդի տիրապետող լեզվաբանական ուղղութիւնը երիտքերականների դպրոցն է: Առաջ քաշելով պատմա-համեմատական հետազոտութեան մեջ ավելի խիստ մեթոդների հարցը՝ երիտքերականները հարձակվում էին լեզվաբանների հին սերնդի վրա, որ նույն խնդրատեսակում ու հետևողականութեամբ շէր կիրառում հնչյունական օրենքների գաղափարը: Այս կապակցութեամբ Ֆ. Յառնկեի կողմից կատակով տրված «երիտքերականներ» (Junggrammatiker) անվանումը, բնդհանուր իմաստով «գտագործվելով ուղղութիւնի հիմնադիրներից մեկի՝ Կ. Բրուգմանի կողմից, տարածում է ստանում և դառնում ուղղութեան ճանաչված անվանումը: «Երիտքերականութիւն» անվանումը գործածվում է լայն ու նեղ իմաստով. լայն իմաստով այն դառնում է տվյալ շրջանի պատմա-համեմատական լեզվաբանութեան գրեթե բոլոր հոսանքների անվանումը. այս լայն առումով է, որ հետագայում խոսում են այնպիսի «ուլ երիտքերականների» մասին, ինչպիսիք են Լ. Հիրտը, Լ. Պեդերսենը և ուրիշները. նեղ իմաստով այդ անվանումը գործածվում է հիմնականում գերմանական լեզվաբանութեան Լայպցիգի դպրոցի ներկայացուցիչների համար, որոնցից զգալի տարբերութիւններ ունենին Բեռլինի և Գյոտինգենի դպրոցի ներկայացուցիչները: Լայպցիգի դպրոցի ներկայացուցիչներն էին Ա. Լեսկինը (1840—1916), նրա աշակերտներ Կ. Բրուգմանը (1849—1919), Լ. Օստհոֆը (1842—1907), Լ. Հյուբշմանը (1848—1908), Լ. Պաուլը (1846—1921), է. Ջիվերսը (1850—1926), Վ. Բրաունեն (1850—1926) և ուրիշները: Ա. Լեսկինի աշակերտների թվին էր պատկանում նաև շվեյցարացի Ֆ. դը-Սոսյուրը, որի սկզբնական շրջանի դործունեութիւնը պատմականորեն նույնպէս կապում են երիտքերականների գործունեութեան հետ: Սակայն ինքը Լեսկինը չի գլխավորում նոր ուղղութիւնը. այդպիսի ղեկավարներ են դառնում Կ. Բրուգմանը և Լ. Օստհոֆը: Բեռլինի դպրոցի գլուխ, Շլայխերի

աշակերտ Ի. Շմիդտը երկար ժամանակ անտարբեր է մնում երիտ-  
քերականների հոսանքի հանդեպ և վաղ շրջանում շարունակում  
Շլայխերի ուղղութիւնը. սակայն շուտով նա մի կողմից՝ փաստե-  
րի ճնշման տակ հրաժարվում է հնդկրոպական լեզուների զար-  
գացման ծննդաբանական ծառից և առաջ քաշում «ալիքների տե-  
սութիւնը», մյուս կողմից՝ փոխում է իր վերաբերմունքը երիտ-  
քերականների հանդեպ և հնդկրոպական հնչյունաբանութեան ու  
ձևաբանութեան բնագավառում կատարած իր հետազոտութիւննե-  
րով մեծապես նպաստում նրանց սկզբունքների ամրապնդմանը:  
Գյոտինգենի դպրոցի ներկայացուցիչներից Թ. Բենֆելը հեռու է  
մնում ընդհանուր հոսանքից, բայց Ա. Ֆիկը (1833—1916) և նրա  
աշակերտները՝ Ա. Բեցցենբերգերը (1851—1922), Գ. Կոլլիցը  
(1855—1935), Ֆ. Բեխտելը (1855—1924) և ուրիշները իրենց գոր-  
ծունեութեամբ վերջ ի վերջո դառնում են նոր ուղղութեան ներկայա-  
ցուցիչները:

Գերմանիայից դուրս երիտքերականների հետադոտական  
սկզբունքները ավելի կամ պակաս շափով կիրառվում են Խուսաս-  
տանում Ֆ. Ֆ. Ֆորտունատովի (1848—1914) ու նրա աշակերտնե-  
րի՝ Մոսկվայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների կող-  
մից, Դանիայում՝ Կ. Վեռների և Վ. Տոմսենի (1841—1927) կողմից,  
Ֆրանսիայում՝ Մ. Բրեալի (1832—1915), Վ. Անրիի (1850—1907)  
և ուրիշների կողմից:

Երիտքերականների գլխավոր տեսաբանը Հերման Պաուլն է:  
Նրանց մանիֆեստը համարվում է Հ. Օստոֆի և Կ. Բրուզմանի  
«Ձևաբանական հետազոտութիւնների» առաջաբանը: Երիտքերա-  
կանութեան ձևավորման պրոցեսը և տեսական սկզբունքները  
քննութեան են առնված նաև Բ. Դելբրյուկի «Լեզվի ուսումնասի-  
րութեան ներածութիւն» աշխատութեան մեջ:

Երիտքերականների ուշադրութեան գլխավոր բնագավառը  
հնչյունաբանութիւնն է. կարևոր տեղ է տրվում նաև ձևաբանու-  
թեանն ու սաուգաբանութեանը. քիչ ուշադրութիւն են գրավում  
շարահնչուսութեան հարցերը: Այս վերջին բնագավառի ամենից  
ավելի աչքի ընկնող հետազոտողը Բ. Դելբրյուկն է:

Ա. Լեսկինի, է. Ջիվերսի, Կ. Վեռների, Գ. Ասկոլիի գործու-  
նեության դերը երիտքերականական ուղղութեան ձևավորման մեջ.  
Վեռների օրենքը. — Ա. Լեսկինը սլավոնական լեզուների և լիտվե-  
րենի մասնագետ էր և 1870 թ. սկսած՝ կայացրելով վարում էր  
սլավոնական ֆիլոլոգիայի ամբիոնը: Լեսկինը առաջիններից մեկն

էր, որը Շերերից հետո գիտակցեց լեզվի պատմութեան մեջ անալոգիայի գործոնի կարևորութիւնը և տվեց այդ սկզբունքի կիրառման գործնական օրինակներ: Անալոգիայի գործոնի հետ միասին Ա. Լեսկինը, ոչ առանց Շլայխերի ազդեցութեան, դնում է հնչյունական օրենքների հաստատման կարևորութեան հարցը: 1876 թ. իր «Հոլովումը սլավա-լիտվականում և գերմանականում» գրքում՝ Լեսկինը ձևակերպում է այն միտքը, որ հնչյունական օրենքները բացառութիւն չեն ճանաչում, թեև այդ սկզբունքը նա անցկացնում է ոչ բավարար հետևողականութեամբ: Այս կամ այն լեզվի ձևերը տվյալ շրջանում, ըստ Լեսկինի, բացատրվում են «երկու մոմենտով՝ օրինաչափ հնչյունական փոփոխութիւնները և անալոգիայի ազդեցութիւնը»: Սրանով իսկ հնչյունաբանութիւնը մղվում է առաջին պլանը և ձևաբանութիւնը ենթարկվում է նրան: Նույն այդ աշխատութեան մեջ Լեսկինը փորձում է հաշտեցնել Շմիդտի ալիքների տեսութիւնը Շլայխերի ծննդաբանական ծառի հետ:

Հնչյունական օրենքի սկզբունքի հետևողական կիրառումը սկսվում է Կ. Վեռների հայտնի հոդվածի հրատարակումից հետո. այստեղ ձևակերպվում է այն հնչյունական օրենքը, որ ստանում է «Վեռների օրենք» անունը:

Կ. Վեռների օրենքի հայտնագործումը շրջադարձային կետ է համարվում պատմա-համեմատական լեզվաբանութեան վարդապետական մեջ: Երիտքերականութեան պատմութեան սկիզբը սովորաբար դնում են Վեռների հոդվածի գրման տարեթիւից՝ 1875 թվից:

Դեռևս Գրիմը, ձևակերպելով գերմանական հնչյունների տեղաշարժի օրենքը, նկատել էր, որ բայերի խոնարհման մեջ առկա է խուլերի և ձայնեղների որոշ հերթագայութիւն. բաղաձայնների գերմանական տեղաշարժի հետևանքով առաջացած խուլերի փոխարեն որոշ դիրքերում առկա էին ձայնեղներ: Վ. Բրաունեն իր «Քերականական հերթագայութիւնը գերմանական բայերի թեքման մեջ» հոդվածում<sup>2</sup> խմբավորում է հերթագայութեան այդ դեպքերը առանց որևէ բացատրութեան: Բրաունեին ուղղված իր նամակում է. Զիվերսը 1874 թ. գրեթե տալիս է այդ թվացող բացառութիւնների մեկնաբանութիւնը, բայց այն չի հրատարակում:

<sup>1</sup> A. Leskien, Die Deklination im Slawisch-Litauischen und Germanischen, Leipzig, 1876.

<sup>2</sup> W. Braune, Über den grammatischen Wechsel in der deutschen Verbalflexion, 1873.

Դանիացի գիտնական Կ. Վեոնները, Զիվերսից միանգամայն անկախ, հասնում է այդ խնդրի լուծմանը՝ 1875 թ. գրելով և 1877 թ. լույս ընծայելով «Մի բացառություն հնչյունների առաջին տեղաշարժից»<sup>1</sup> հոդվածը: Վեոնները ցույց է տալիս, որ գերմանական ուժեղ բայերի խոնարհման մեջ խուլերի և ձայնեղների հերթագայությունը բացատրվում է հնդերոպական շեշտի դիրքով: Ինչպես պարզում է համեմատությունը սանսկրիտի համապատասխան ձևերի հետ, գերմանական բայերի մեջ խուլերը հանդիպում են այն դեպքում, երբ սանսկրիտում նրանց համապատասխան բաղաձայններին նախորդում է շեշտված ձայնավոր (շեշտն ընկնում է արմատի վրա), ձայնեղները՝ այն դեպքում, երբ նրանց հաջորդում է շեշտված ձայնավոր (շեշտն ընկնում է վերջավորության վրա): 1) սանսկր. vārtati «դարձնում է, շուռ է տալիս», vavārta «դարձրեց» — գերմ. verpia, varp և 2) սանսկր. vavṛtima' «դարձրին», vartāna «դարձած» — գերմ. wurəum, wurəan. Այստեղից էլ Վեոնները ձևակերպում է այն ընդհանուր օրենքը, ըստ որի գերմանական խուլ շփականները մնացել են խուլ շփականներ, եթե նախորդ վանկը հնդերոպականում եղել է շեշտված, և ձայնեղացել են ձայնեղների շրջապատում, եթե նախորդ վանկը հնդերոպականում եղել է անշեշտ:

Մեր կողմից հիշատակված է. Զիվերսի դերը առանձնապես կարևոր է հնչյունաբանության բնագավառում: 1876 թ. լույս է տեսնում նրա «Հնչյունների ֆիզիոլոգիայի հիմունքները որպես հնդերոպական լեզուների հնչյունաբանության ուսումնասիրության ներածություն» գիրքը<sup>2</sup>, որը հետագայում վերամշակվում է և հրատարակվում «Հնչյունաբանության հիմունքները» անվամբ<sup>3</sup>: Եթե Պաուլի մի քանի սարի անց լույս տեսած «Լեզվի պատմության սկզբունքները» աշխատությունը դառնում է երիտքերականների լեզվաբանական սկզբունքների հոգեբանական կողմի տեսական հիմնավորման կարևորագույն փորձը, որտեղ ուշադրությունը կենտրոնացվում է լեզվի հոգեբանական կողմի վրա, ապա Զիվերսի գիրքը տալիս է լեզվի ֆիզիկական-ֆիզիոլոգիական կողմի բնութագիրը: Լեզվի ֆիզիկական-ֆիզիոլոգիական և հոգեբանա-

<sup>1</sup> K. Werner, Eine Ausnahme der ersten Lautverschiebung. KZ, XXIII, 1877.

<sup>2</sup> E. Sievers, Grundzüge der Lautpsychologie zur Einführung in das Studium der Lautlehre der indogermanischen Sprachen, Leipzig, 1876.

<sup>3</sup> E. Sievers, Grundzüge der Phonetik, Leipzig, 1881.

կան կողմերի գիտական քննությունը որոշ առումով լրացնում էր երիտքերականների ուսմունքը լեզվի մասին որպես հոգեֆիզիկական հիմունքներ ունեցող երևույթի: Նշելով, որ հնչյունները կարելի է ուսումնասիրել 3 հայեցակետով՝ ֆիզիկական, ֆիզիոլոգիական և լեզվաբանական՝ Զիվերսը «հնչյունների ֆիզիոլոգիան» համարում է սահմանային դիսցիպլին, որ ընկած է ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի և լեզվաբանության միջև: Զիվերսը Բրյուկկեից հետո հնչունաբանական հարցերի հետազոտությունը նոր աստիճանի է հասցնում: Նա հանդես է բերում բացառիկ դիտողականություն, ուշադրությունը կենտրոնացնում «բնական», ազդեցությունից զերծ խոսքի վրա՝ նույնքան կարևոր համարելով բարբառը, որքան և լեզուն: Զիվերսը հնչյունները քննում է ոչ միայն որպես առանձնակի ֆիզիոլոգիական կազմավորումներ, այլ կապում է բառերի ու նախադասությունների հետ, դիտում հնչյունական ամբողջության դիրքերից: Միաժամանակ այս կամ այն լեզվի հնչյունները նա քննում է որպես մեկ ամբողջություն, մեկ ամբողջական սիստեմ, ուշադրության առնում լեզուների արտասանական առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Բնականաբար Զիվերսի ուշադրությունը գրավում է նաև հնչյունափոխության հարցը, և նա հանդես է բերում հնչյունական օրինաչափ փոփոխությունների հիմունքները պարզաբանելու ձգտում: Տարբերում է 2 կարգի հնչյունափոխություն՝ տարբրային և փոխազդեցական (spontaner und kombinatorischer Lautwandel):

Հնչյունական համապատասխանությունների օրինաչափականության գիտակցման և հնդերոպական հնչյունական կառուցվածքի վերաբերյալ ըմբռնումների ճշգրտման մեջ կարևոր դեր է խաղում իտալացի լեզվաբան Գ. Ասկոլին (1829—1907), որ սակայն հետագայում հանդես է գալիս երիտքերականների սկզբունքների քննադատությամբ: Ինչպես հայտնի է, Շլայխերը կարծում էր, թե հնդերոպական հիմնալեզուն ուներ ետնալեզվայինների միայն մեկ շարք՝ k, (kh), g, gh: Սակայն իրականում նկատելի էր, որ ետնալեզվայինները հնդերոպական լեզուներում ներկայացված են համապատասխանությունների տարբեր շարքերով: Շլայխերն այս փաստից լուկ այն եզրակացությունն էր անում, որ միևնույն սկզբնական ետնալեզվայինը կարող էր տարբերակվել տարբեր հնչյունների, ընդ որում Շլայխերը այս տարբերակման պատճառների որևէ գոհացուցիչ բացատրություն չէր տալիս:

Իտալացի լեզվաբան Ասկոլին առաջինն էր, որ փորձեց խմբա-

վորել այդ համապատասխանությունները և դրանք դիտել որպես հնդերոպական վիճակի արտացոլում: 1870 թ. իր «Դասախոսություններ լեզվաբանությունից. I. սանսկրիտի, հունարենի և լատիներենի համեմատական հնչյունաբանություն» գրքում<sup>1</sup>, ելնելով համապատասխանությունների 3 շարքերի առկայությունից, նա սահմանում է հնդերոպական ետնալեզվայինների 3 տեսակ՝ 1) «մաքուր» ետնալեզվայիններ՝ \*k և այլն, որոնք որոշ լեզուներում պահպանվել են, իսկ հնդիրանական և սլավոնական լեզուներում ենթարկվել են հետագա փոփոկացման (հուն. κ, լատ. c, գերմ. h, սանսկր. k(c), լիտվ. k, սլ. k(ч)). 2) «փոփոկացված հսկական ետնալեզվայիններ»՝ \*k<sup>i</sup> և այլն, որոնք հնդերոպական լեզուներում մի մասում ներկայացված են որպես մաքուր ետնալեզվային պայթականներ (հուն. κ, լատ. c, կելտ. k, գերմ. h), մյուս մասում՝ որպես շփականներ (սանսկր. ç, ավեստ. s, լիտվ. š, սլավ. s). 3) «անորոշ հսկական ետնալեզվայիններ»՝ k<sup>u</sup>, որոնք հունա-լատինա-գերմանական խմբում ներկայացված են որպես շրթնայիններ (հուն. π, լատ. qu, գերմ. hw), հնդիրանական-սլավոնական խմբում՝ որպես մաքուր ետնալեզվայիններ՝ հետագա փոփոկացման հնարավորությամբ [սանսկր. k (c), լիտվ. k, սլավ. k(ч, u)]:

Ասկոլիի եզրակացությունները հետագայում ճշտվում ու լրացվում են Ա. Ֆիկի, Լ. Ավեի և Ի. Շմիդտի ուսումնասիրություններով: Ետնալեզվայինների հարցում հետագա լեզվաբանները բաժանվում են երկու խմբի. Բրուգմանը, Օստհոֆը, Բեցցենբերգերը, Պեդերսենը շարունակում են Ասկոլիի նման ընդունել երեք շարք՝ քմային կամ փոփոկացված (պալատալ), ետնաքմային (վելար) և շրթնաետնաքմային (լաբիովելար)—ըստ Բրուգմանի նշանակման՝ 1) k̄, ḡ, gh̄, 2) q, g, gh, 3) q<sup>u</sup>, g<sup>u</sup>, g<sup>u</sup>h. Ֆիկը, Ավեն, Ֆորտունատովը, Մեյեն վերականգնում են երկու շարք՝ անհավասար համարելով Ասկոլիի նշած առաջին շարքը (Բրուգմանի ետնաքմայինները կամ վելարները)—ըստ Մեյեի նշանակման՝ 1) k<sub>1</sub>, g<sub>1</sub>, g<sub>1</sub>h և 2) k<sup>w</sup>, g<sup>w</sup>, g<sup>w</sup>h.

Սակայն բոլորի կողմից ընդունվող երկու հիմնական շարքի

<sup>1</sup> G. I. Ascoli, Corsi di glottologia, I. Fonologia comparata del sanscrito, del greco e del latino, 1870. Գերմ. թարգմ. Vorlesungen über die vergleichende Lautlehre des Sanskrit, des Griechischen und des Lateinischen, 1872.

առկայութիւնը կարևոր դեր է խաղում հնդերոպական լեզուների խմբավորման մեջ. Ասկոլիի նշած երկրորդ շարքի (Մեյեի առաջին շարքը) ետնալեզվայինների արտացոլման բնույթին համապատասխան՝ լեզվաբանները, Պ. Ֆոն Բրադկեից սկսած (1890 թ.) հնդերոպական լեզվաբնտանիքում տարբերում են՝ 1) centum («հարյուր» բառի լատինական ձևը) խմբի լեզուներ, որոնց մեջ հնդերոպական այդ շարքի ետնալեզվայինները ներկայացված են որպես ետնալեզվայիններ, 2) satəm («հարյուր» բառի իրանական-ավեստյան ձևը) խմբի լեզուներ, որոնց մեջ հիշյալ շարքի ետնալեզվայինները ներկայացված են որպես առաջնալեզվային շփականներ:

2. Օստհոֆի և Կ. Բրուգմանի «Ձևաբանական հետազոտութիւնների» առաջաբանը.— 1878 թ. սկսած՝ լույս են տեսնում Կ. Բրուգմանի և Հ. Օստհոֆի «Ձևաբանական հետազոտութիւնների հնդերոպական լեզուների բնագավառում» ժողովածուների հատորները՝ 1878—1880 թթ. պարբերաբար (3 հատոր), ապա ոչ պարբերաբար (մինչև 1910 թ. ևս 3 հատոր)<sup>1</sup>: Առաջին իսկ հատորի առաջաբանում հեղինակները զարգացնում են այն հիմնական մտքերը, որոնք դարձան երիտքերականների գործունեության ծրագրային դրույթները: Այստեղ առաջ են քաշվում գերազանցապես հետազոտության մեթոդի հետ կապված հարցեր:

Առաջաբանն սկսվում է նախորդ լեզվաբանական հետազոտութիւնների տեսութայն ու մեթոդի քննադատությամբ, ընդ որում իրենց հայացքների սաղմերը Օստհոֆը և Բրուգմանը տեսնում են Վ. Շերերի, Հ. Շտայնթալի, Ա. Լեսկինի աշխատութիւններում: Հ. Շտայնթալը նրանց համար հիմք է ծառայում լեզվի հոգեբանական էություն հիմնավորման մեջ, Վ. Շերերը և Ա. Լեսկինը՝ մեթոդի հարցերում: Սակայն և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքում նրանք կոռեկտիվներ են մտցնում նրանց հայացքների ու մեթոդի մեջ:

«Ձևաբանական հետազոտութիւնների» առաջաբանի հեղինակները նախորդ լեզվաբանությանը հակադրվում են ամենից առաջ լեզվի հիմունքների ինդիվիդուալիստական ըմբռնմամբ: Նրանց կարծիքով նախորդ շրջանում «բացառիկ խանդավառությամբ հետազոտում էին լեզուները, բայց չափազանց քիչ՝ խոսող մարդուն»<sup>2</sup>: Նախորդ լեզվաբանութիւնը անհրաժեշտ տեսական

<sup>1</sup> H. Osthoff und K. Brugmann, Morphologische Untersuchungen auf dem Gebiete der indogermanischen Sprachen, I—VI, 1878—1910.

<sup>2</sup> Նույն տեղը, I, 1878, Առաջաբան:

բազա շուններ. պարզ շէին պատկերացնում լեզվի զարգացումն ընդհանրապես և խոսքային գործունեությունը՝ մասնավորապես: Մարդկային լեզվի զարգացման օրինաչափությունների բանալին հեղինակները փաստորեն փնտրում են անհատական խոսքի հիմքում ընկած գործոնների հետազոտության մեջ:

Մարդկային խոսքի մեխանիզմը Բրուզմանի և Օստհոֆի կարծիքով՝ երկու կողմ ունի՝ հոգեկան և ֆիզիկական: Միայն այս հոգեֆիզիկական մեխանիզմի կառուցվածքի և գործողության խորացված ուսումնասիրությունը հնարավոր կդարձնի լեզվի պատմության հարցերի արդյունավետ հետազոտությունը, ցույց կտա, թե ինչպես են անհատներից սկսվող լեզվական նորությունները արժատավորվում լեզվական կոլեկտիվում: Դեռևս Շտայնթալը իր «Առնմանումը և առձգումը (Attraktion) հոգեբանության տեսակետից» հոդվածում<sup>1</sup> փորձել էր պարզել հոգեբանական գործոնների ներգործությունը հնչյունական փոփոխությունների վրա: Բրուզմանը և Օստհոֆը, առաջ տանելով այդ միտքը, ծրագրում են ուսումնասիրել, մի կողմից՝ զուտ ֆիզիկական-մեխանիկական երևույթները, մյուս կողմից՝ հոգեկան գործոններով պայմանավորվածները: Ինչպես Շտայնթալը, առաջաբանի հեղինակները ևս հոգեկան երևույթների բացատրության մեջ ելնում են ասոցիատիվ հոգեբանության սկզբունքներից, նպատակ դնելով պարզել ասոցիատիվ կապերի ազդեցությունը խոսքային գործունեության և լեզվական ձևերի նորագոյացումների վրա: Ըստ նրանց՝ նախորդ լեզվաբանությունը ուշադրություն չի դարձրել կամ շատ քիչ է դարձրել այս հոգեբանական կողմի վրա:

Նախորդ լեզվաբանությունը մեղադրվում է նաև մի այլ հարցում՝ ոչ բավարար պատմականության մեջ: Ըստ «Առաջաբանի» հեղինակների՝ նախորդ լեզվաբանների ողջ ուշադրությունը կենտրոնացվել է հնդերոպական հիմնալեզվի և նախաձևերի վերականգնման վրա, ընդ որում այս տեսակետից քննության են առնվել հիմնականում հին գրավոր լեզուները: Ավելի նոր լեզուները դիտվել են որպես անկման, բայթայման, ծերացման արդյունք: Այնինչ, ով ցանկանում է ճիշտ մեթոդոլոգիական սկզբունքներ մշակել, պետք է ուշադրությունը դարձնի առաջին հերթին նոր լեզուների վրա: Այդ լեզուները, իրենց բարբառների հետ միասին, կենդանի լեզուներ են. նրանց մեջ հնչյունական ձևերը անց են

<sup>1</sup> ZVS, 1, էջ 93—170.



կացվում ավելի մեծ հետևողականությունը, և նրանց հնչյունական կողմի հետազոտությունը լայն հնարավորություններ է ստեղծում: Նույնը չի կարելի ասել հին գրավոր և գրական մշակման Ինթարկված լեզուների մասին, որոնց հնչյունական կողմի վերաբերյալ չի կարելի այդքան լավ պատկերացում կազմել: Նոր լեզուների և նրանց հնչյունական զարգացման պատկերի ճշգրիտ հետազոտությունն իր հերթին չի կարող զրականապես չաղդել հնդերոպական նախաձևերի վերականգնման հավաստիության վրա. «Մի՞թե հնդերոպական այն նախաձևերի հավաստիությունը գիտական հավանականությունը, որոնք, իհարկե, ղուտ ենթադրական կազմություններ են, կախված չէ առաջին հերթին այն բանից, թե համաձայնվո՞ւմ են դրանք ընդհանրապես լեզվի ձևվերի հետագա զարգացման մասին եղած ճիշտ պատկերացման հետ, և պահպանվե՞լ են արդյոք նրանց վերականգնման ժամանակ ճշգրիտ մեթոդոլոգիական սկզբունքներ»<sup>1</sup>: Մի կողմից՝ լեզվի զարգացման ուշ շրջանների և կենդանի ժողովրդական բարբառների ուսումնասիրության արդյունքները, մյուս կողմից՝ խոսքի հոգեֆիզիկական մեխանիզմի հետազոտության տվյալները հնարավորություն են տալիս վերափոխել լեզվաբանության մեթոդական սկզբունքները: Երիտքերականներն իրենց հիմնական սկզբունքները կառուցում են լեզվի նատուրալիստական ըմբռնման քննադատության և խոսքի էության սուբյեկտիվ հոգեբանական ըմբռնման վրա. «Այդ սկզբունքների հիմքում,— գրում են Կ. Բրուգմանը և Հ. Օստհոֆը,— ընկած են երկու ծայրահեղորեն պարզ մտքեր. առաջին՝ լեզուն՝ մարդկանցից դուրս ու նրանցից վեր կանգնած և իր համար գոյություն ունեցող իր չէ. նա իսկական ձևով գոյություն ունի անհատի մեջ, դրանով իսկ լեզվի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները կարող են սկիզբ առնել միայն խոսող անհատներից. երկրորդ՝ մարդու հոգեկան և ֆիզիկական գործունեությունը նախնիներից ժառանգած լեզվի յուրացման և գիտակցության կողմից ընկալված հնչյունական պատկերների վերարտադրման ու փոխակերպման ժամանակ մնում է իր էության մեջ անփոփոխ բոլոր ժամանակներում»<sup>2</sup>:

Որո՞նք են այն հիմնական մեթոդական սկզբունքները, որ առաջ են քաշում երիտքերականները: Դրանք հնչյունական օրենքի և

<sup>1</sup> H. Osthoff und K. Brugmann, Morphologische Untersuchungen, I, 1878, Առաջաբան:

<sup>2</sup> Նույն տեղը:

անալոգիայի սկզբունքներն են. 1) հնչյունական փոփոխությունները կատարվում են օրինաչափ կերպով. հնչյունական այդ օրինաչափ փոփոխությունները կամ հնչյունական օրենքները բացառություն չեն ճանաչում և պայմանավորված են զուտ ֆիզիկական-մեխանիկական գործոններով. այս տեսակետից երիտքերականների հնչյունական օրենքի դրույթը որոշ առումով կրում է լեզվի նատուրալիստական-մեխանիստական ըմբռնման հետքերը. «Յուրաքանչյուր հնչյունական փոփոխություն, որքանով որ այն մեխանիկորեն է տեղի ունենում,—գրում են «Առաջաբանի» հեղինակները,—կատարվում է բացառությամբ շնանաչող օրենքներով, այսինքն՝ այն ուղղությունը, որով տեղի է ունենում հնչյունի փոփոխությունը, միշտ միևնույնն է լեզվական ընկերակցության բոլոր անդամների մոտ, բացի բարբառային տրոհման դեպքից, և առանց բացառության բոլոր բառերը, որոնց մեջ հնչյունական փոփոխության ենթակա հնչյունը գտնվում է միատեսակ պայմաններում, մասնակցում են այդ պրոցեսին». 2) լեզվական ձևերի փոփոխության մեջ խիստ կարևոր դեր է խաղում անալոգիան, որը հանդես է գալիս որպես հոգեկան գործոնի ներթափանցում ֆիզիկականի բնագավառը, որպես հոգեկան ասոցիացիաների դրսևորում. «Քանի որ պարզ է, թե ձևերի անալոգիան, այսինքն՝ լեզվական ձևերի նորակազմությունն անալոգիայով, շատ կարևոր դեր է խաղում նոր լեզուների կյանքում, հարկավոր է առանց տատանվելու ընդունել լեզվի հարստացման այդ եղանակի նշանակությունը հին և հնագույն շրջանների համար. և ոչ միայն ընդհանրապես ընդունել, այլ և բացատրության այդ սկզբունքը կիրառել այնպես, ինչպես այն կիրառվում է ուշ շրջանների լեզվական երևույթների բացատրության համար: Եվ բոլորովին չպետք է զարմանալ, եթե դուրս գա, որ անալոգիական կազմությունները լեզվի պատմության հին և հնագույն շրջաններում մեր կողմից հայտնագործված կլինեն նույն կամ ավելի մեծ ծավալով, ինչ ավելի ուշ շրջաններում»<sup>1</sup>: Սակայն Օստհոֆը և Բրուգմանը կարծում են, որ անալոգիայի սկզբունքից պետք է զգուշորեն օգտվել և դիմել դրան այն ժամանակ, երբ այդ բանին հարկադրում են հնչյունական օրենքները, երբ վերջիններիս կիրառումը լիակատար գաղափար չի տալիս բոլոր հնչյունական փոփոխությունների մասին: Դավանելով լեզվի զարգացման էվոլյուցիոնիստական հայեցակետը՝ նրանք

<sup>1</sup> H. Osthoff und K. Brugmann, Morphologische Untersuchungen, I, 1878, Առաջարան:

գտնում են, որ չի կարելի լեզվի հին շրջանի նկատմամբ մի սկզբ-  
բունք կիրառել, նորի նկատմամբ՝ մի այլ. այս առումով պետք է  
դեն նետել նատուրալիստական բոլոր պատկերացումները և հրա-  
ժարվել լեզվի երկու շրջանի գոյություն սխալ մտքից: «Հին» և  
«նոր» անվանումները լոկ պայմանական անվանումներ են, և լեզ-  
վի զարգացումը միշտ տեղի է ունենում նույն օրենքներով՝ և՛ հին,  
և՛ նոր շրջանում:

Կարլ Բրուգման.— Կարլ Բրուգմանը երիտքերականության  
ամենականավոր ներկայացուցիչներից մեկն է: Նա հայտնի է ոչ  
միայն որպես հնդեւրոպական լեզուների համեմատական քերակա-  
նության առանձին կողմերի մանրակրկիտ հետազոտող, այլև որ-  
պես մի աշխատության հեղինակներից մեկի, որտեղ ի մի են բեր-  
վում և ամբողջացվում երիտքերականների ուսումնասիրություն-  
ների արդյունքները հնդեւրոպական լեզուների համեմատական քե-  
րականության բնագավառում: Այդ աշխատությունը «Հնդեւրոպա-  
կան լեզուների համեմատական քերականության հիմունքներն»  
են<sup>1</sup>: Աշխատության I և II հատորները նվիրված են հնչյունաբա-  
նությանն ու ձևաբանությանը և գրված են Բրուգմանի կողմից.  
III—V հատորները նվիրված են շարահյուսությանը և գրված են  
Բ. Դելբրյուկի կողմից: I հատորը պարունակում է ներածությունն  
ու հնչյունաբանությունը և լույս է տեսել 1886 թ. (2-րդ վերա-  
մշակված հրատարակությունը՝ 1897 թ.). II հատորը պարունա-  
կում է ձևաբանությունը և լույս է տեսել 1888—1892 թթ. (2-րդ  
վերամշակված հրատարակությունը՝ 1906—1916 թթ., 3 մաս):  
Բրուգմանն իր առջև խնդիր է դնում ներկայացնել հնդեւրոպաբա-  
նության ձեռք բերած կարևորագույն նվաճումները: Իր ուսումնա-  
սիրության մեջ Բրուգմանը հենվում է քննարկվող լեզուների հնա-  
գույն տվյալների վրա: Ծ՛վ հնչյունաբանության, և՛ ձևաբանու-  
թյան մեջ Բրուգմանը մեկնակետ է դարձնում վերականգնվող  
հնչյուններն ու ձևերը և նկարագրում դրանց հետագա արտացո-  
լումները լեզուների հնագույն գրավոր հուշարձաններում: Վերա-  
կանգնման ընթացքում Բրուգմանը ժամանակագրական շերտա-  
վորում և վերականգնվող փաստերի բարբառային խմբավորում  
չի անցկացնում. մեկնակետային վերականգնումներ կատարելիս

<sup>1</sup> K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, I—II, 1886—1892, II հր., 1897—1916: Սրան հետևում է «Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen» աշխատությունը, I—II, 1902—1904.

Բրուգմանն ընդգրկում է ինչպես ընդհանուր հնդերոպական երեւ-  
վույթները, այնպես էլ մասնակի տարածում գտած և նույնիսկ  
եզակի փաստերը՝ ձգտելով լեզուների տված նյութի համապար-  
փակ ընդգրկման:

Սակայն տեսականորեն Բրուգմանը զերծ չէ աչդպիսի ժամա-  
նակագրական և տարածական բաշխման անհրաժեշտութեան գի-  
տակցումից:

Աշխատության երկրորդ վերամշակված հրատարակության  
մեջ Բրուգմանը հաշվի է առնում նորագույն նվաճումները և հըն-  
չունական նյութի նկարագրության մեջ փորձում է քննարկվող  
փաստերի ժամանակագրական բաշխում կատարել, հարաբերական  
որոշ ժամանակագրություն հաստատել: Միաժամանակ Բրուգմանը  
առանձին բաժիններ է նվիրում ձևաբանական կազմիչների իմաս-  
տային կողմի հետազոտությանը՝ դրանով իսկ իր շարադրանքը  
լրացնելով շարահյուսական նյութով. այս հարցում նա հենվում է  
Դեյբրյուկի վրա<sup>1</sup>: Բրուգմանը թողել է նաև մի շարահյուսական  
հատուկ աշխատություն՝ «Հնդերոպական պարզ նախադասության  
շարահյուսությունը»<sup>2</sup>, որ հրատարակվել է ետմահու (1925 թ.):

Իր աշխատության մեջ նախալեզվի վերականգնման և նրա  
բնույթի վերաբերյալ հարցերի մեջ Բրուգմանը փաստորեն շարու-  
նակում է հենվել Շլայխերի վրա՝ ծննդաբանական ծառի լուծյալն  
ընդունմամբ հանդերձ: Նախալեզվի վերականգնումը Բրուգմանի  
կարծիքով ընդարձակում է հնդերոպական լեզուների պատմության  
հեռանկարը և հնարավորություն տալիս բացատրելու դրանց ձևե-  
րի ծագումը: «Նախալեզվի հնչունական, թեքական, շարահյու-  
սական և լեքսիկական առանձնահատկությունների որոշման շնոր-  
հիվ, — գրում է Բրուգմանը, — մեր հնդերոպական ընտանիքի յու-  
րաքանչյուր լեզվի համար բացահայտվում է նախապատմական  
ետին պլանը: Յուրաքանչյուր լեզու աջակցություն է ցույց տալիս  
նախահնդերոպական լեզվական վիճակի վերականգնմանը և յու-  
րաքանչյուրն իր հերթին իր բացատրությունն է ստանում՝ ելնելով  
այդ վիճակից, շնորհիվ այն բոլորի, ինչ ներմուծվում է ցեղակից  
լեզուների կողմից այդ ընդհանուր ելակետը լուսաբանելու հա-  
մար»<sup>3</sup>:

<sup>1</sup> Հմտ. А. В. Десницкая, Вопросы изучения родства индо-  
европейских языков, М.—Л., 1955, էջ 132:

<sup>2</sup> K. Brugmann, Syntax des einfachen Satzes im Indogermanischen, 1925.

<sup>3</sup> K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, III, II հր., 1897, էջ 7:

Այս պատճառով էլ Բրուգմանը և մյուս երիտօքերականները իրենց գլխավոր նպատակը տեսնում են նախալեզվի ճիշտ վերականգնման և հնդերոպական լեզուների փոխհարաբերության ճիշտ որոշման մեջ: Քերականական ձևերի ծագման հարցերը առանձին հետաքրքրություն չեն առաջացնում, թեև դրվում են: Երիտօքերականների հակումը դեպի փաստերը առաջացնում է սկեպտիկ վերաբերմունք նման ենթադրական մեկնաբանությունների հանդեպ: Բրուգմանի կարծիքով հնչյունական օրենքների ու անալոգիայի գործողությունը և բառի ձևաբանական կազմիչների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերը այնքան են բարդացրել գործը, որ հնդերոպական թեքական ձևերի ծագման հարցը նարող է հավաստիորեն լուծվել միայն քիչ թվով դեպքերում: Այդպիսի հարց դրվում է առանձնապես այն բարդությունների դեպքում, որոնց բաղադրիչները միացել են առանց հոլովական ձևավորման, ուստի և նրանց կազմությունը ենթադրում է այդ դեպքում մի «նախաթեքական» կամ «արմատական շրջանի» գոյություն: Ահալայն, ի տարբերություն նախորդ շրջանի կոմպարատիվիստների, Բրուգմանը և մյուս երիտօքերականները ընդհանրապես նախալեզվի թեքական ձևերի ծագման համար կտրուկ առանձնացված մի շրջան չեն ընդունում: Ելնելով էվոլյուցիոն-պատմական հայեցակետից՝ Բրուգմանը գտնում է, որ «թեքությունների կազմությունը հնդերոպական լեզուների զարգացման մեջ որևէ որոշակի նախապատմական շրջանի գործ չէ, ժամանակի մի որոշակի մոմենտի ավարտված պրոցես չէ, այլ մի անգամ սկսվելով՝ նորից ու նորից է կատարվել լեզվի պատմության բոլոր ժամանակաշրջանների ընթացքում և հավանաբար կրկնվելու է նաև ապագայում, քանի դեռ գոյություն ունեն և հետագա զարգացում են ապրում մեր լեզուները»<sup>1</sup>: Բառերի ձևուման և բարդության մասերի՝ թեքությունների ու ածանցների վերածվելու պրոցեսը Բրուգմանի համար անընդհատ պրոցես է՝ որևէ ժամանակագրական խստիվ սահմանով չսահմանափակված:

Բրուգմանը այս կապակցությամբ փորձում է համեմատվող երևույթների մեջ ժամանակագրական որոշ շերտեր հաստատել՝ տարբերելով «մինչնախահնդերոպական» (vorurindogermanisch), «ընդհանուր հնդերոպական» (gesamtindogermanisch) և «մասնակի հնդերոպական» (partiallindogermanisch) երևույթներ. ա-

<sup>1</sup> K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, III, II հր., 1897, էջ 33.

ուաջին շերտը Բրուգմանին, ինչպես տեսանք, զբաղեցնում է միայն մասամբ: Վերջին շերտի հարցն էլ կապվում է հնդկերոպական լեզուների նորամուծությունների և բարբառային հին տարբերությունների առկայության փաստի հետ: Բրուգմանը նշում է, որ նախ՝ վերականգնումը հնարավորություն չի տալիս միանգամայն վատահ կերպով խոսելու հնդկերոպական նախալեզվի և հնդկերոպական նախաշրջանի մասին, որ վերականգնված ձևերը չեն պատկանում մի կոնկրետ ժամանակամիջոցի, այլ վերաբերում են ավելի շուտ տարբեր էպոխաների և տարբեր տերիտորիալ շրջանների. երկրորդ՝ հնարավոր չէ որոշակի սահման անցկացնել վերականգնվող նախալեզվի վիճակի և առանձին լեզվախմբերի (ճյուղերի) զարգացման միջև: Այստեղից էլ բխում է Բրուգմանի այն եզրակացությունը, որ «բարբառային տարբերություններ գոյություն են ունեցել արդեն այն հնագույն էպոխայում, որին հասնում են առանձին լեզուների նյութի վրա հիմնվող մեր վերականգնումները: Ժամանակի ընթացքում փոխվել են բարբառային տարբերությունների շափը, բնույթը և հարաբերակցությունը միայն»<sup>1</sup>: Այս բոլորով հանդերձ, Բրուգմանը չի կատարում ո՛չ բարբառային տարբերությունների, ո՛չ էլ ժամանակագրական շերտերի մանրակրկիտ բաշխում և ուսումնասիրություն:

Ընդունելով մի նախնական հնդկերոպական նախաժողովրդի գոյությունը՝ Բրուգմանը գտնում է, որ այն պետք է համեմատաբար սահմանափակ տարածություն զբաղեցնե: Բարբառային առանձին տարբերությունները սկզբնավորված պետք է լինեին դեռևս «նախահայրենիքում» ապրած ժամանակ, սակայն բուն բարբառային տարբերությունների ծագումը կապված պետք է լիներ այդ «նախաժողովրդի» հետագա տարաբնակման հետ: Բարբառային այսպիսի տարբերակումը Բրուգմանը կապում է 3 գործոնների հետ՝ 1) լեզվական նորագոյացումների տարածումը սահմանակից շրջաններում և առաջացող բարբառների միջև սահմանների ստեղծումը. 2) լեզվական հաղորդակցման դադարումը վերաբնակեցումների կամ առանձին սահմանների գոյացման հետևանքով. 3) այլալեզու բնակչության հետ խառնվելը, որի լեզուն այս կամ այն չափով կարող էր ազդել հաղթող լեզվի վրա:

Բրուգմանի «Հունական քերականությունը»<sup>2</sup> իր բնույթով կարևորությամբ հեղինակի երկրորդ կարևոր աշխատությունն էր:

<sup>1</sup> K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen sprachen, III, II հր., 1897, էջ 24:

<sup>2</sup> K. Brugmann, Griechische Grammatik, 1885.

Այստեղ Բրուգմանը փորձում է տալ հունարենի պատմական զարգացման պատկերը (հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն): Կուրցիոսի աշխատանքներից հետո սա մի նոր քայլ էր տալու հունարենի վերաբերյալ մի նոր աշխատություն, որտեղ ի մի էին բերվում և ամբողջացվում այդ բնագավառում կատարվածի արդյունքները: Սա հունարենի առաջին պատմական քերականությունն էր:

Բրուգմանը Շտրայտբերգի հետ միասին Բոպպի մահվան հարյուրամյակի կապակցությամբ ձեռնարկում է «Հնդկերոպական ուսումնասիրություններ» հանդեսի<sup>1</sup> հրատարակումը, որի հավելվածային տեղեկատվում տրվում էին բիրլիոգրաֆիկ տեղեկություններ և գրախոսականներ:

Իր գործունեության վերջին շրջանում Բրուգմանն սկսում է մեծ ուշադրություն հատկացնել լեզվի հոգեբանական կողմի հարցերին<sup>2</sup>, դրանք կապելով շարահյուսական կողմի ուսումնասիրության հետ<sup>3</sup>: Այս կապակցությամբ նա հրատարակում է «Նախադասության ձևավորման բազմազանությունը և նրա համապատասխանությունը հիմնական հոգեբանական ֆունկցիաներին հնդկերոպական լեզուներում»<sup>3</sup> և «Կարծեցյալ ենթակայի արտահայտությունը գերմանական և ռոմանական լեզուներում»<sup>4</sup> հոդվածները:

Իր «Հնդկերոպական լեզուների ցեղակցական-հարաբերությունների շուրջը» հոդվածում<sup>5</sup> Բրուգմանը քննադատական դիրք է բռնում հնդկերոպական լեզվալրնտանիքի տարբեր ճյուղերի լեզուների մերձակցության աստիճանի վերաբերյալ կարծիքների նկատմամբ: միակ հավաստի մերձավորությունը նա տեսնում է լատինականի և կելտականի միջև:

Միաժամանակ Բրուգմանը հանդես է եկել երիտքերականների սկզբունքների, հատկապես հնչյունական օրենքի սկզբունքի պաշտ-

<sup>1</sup> Indogermanische Forschungen.

<sup>2</sup> Հմտ. Փ. Шпехт, „Индоевропейское“ языкознание от младограмматиков до первой мировой войны, „Общее и индоевропейское языкознание“, М., 1956, էջ 53:

<sup>3</sup> K. Brugmann, Verschiedenheit der Satzgestaltung nach Massgabe der seelischen Grundfunktionen in der indogermanischen Sprachen, BSGW, LXX, 6, 1918.

<sup>4</sup> K. Brugmann, Der Ausdruck des Scheinsubjekts „es“ in den germanischen und romanischen Sprachen, BSGW, LXIX, 1917.

<sup>5</sup> K. Brugmann, Zur Frage nach der Verwandtschaftsverhältnissen der indogermanischen Sprachen, PIZAW, I, 1884.

պանությամբ Կուրցիոսի հարձակումների դեմ: Այս կապակցությամբ հիշատակելի է նրա «Լեզվաբանության այժմյան վիճակի շուրջը» աշխատությունը<sup>1</sup>, որտեղ նա 9 կետերի մեջ ամփոփում է «հնչյունական անհետևողականությունները» և փորձում «հնչյունական օրենքի» գաղափարի մեջ ճշգրտումներ մտցնել քննադատական դիտողությունների լույսի տակ. սակայն սրանով հանդերձ նա փաստորեն մնում է հնչյունական օրենքի ըմբռնման նույն դոգմատիկ հողի վրա:

Երիտքերականների նվաճումների մեջ կարևոր տեղ են բռնում նաև Բրուգմանի մի շարք հայտնագործություններն ու դիտողությունները հնդկրոպական հնչյունական ու քերականական կառուցվածքի, հնդկրոպական լեզուների ցեղակցության հարցերի այս կամ այն կողմի ուսումնասիրության մեջ:

Իր մի շարք հոդվածներում («Ռնգային ձայնորդ»<sup>2</sup>, «Հիմքի հերթագայությունյամբ կազմվող հոլովման պատմության շուրջը»<sup>3</sup>, «Անվանական ածանցների պատմության շուրջը»<sup>4</sup>), Բրուգմանն առաջ է քաշում հնչյունական և ձևաբանական կարևոր հարցեր, այդ թվում և ռնգային ձայնորդների՝ որպես վանկարար տարրեր հանդես գալու հարցը: Հ. Օստհոֆի՝ վանկարար Ի-ի (լ) մասին հայտնած կարծիքի հետ միասին<sup>5</sup> Բրուգմանի այս կարծիքը հիմք է տալիս հնդկրոպական ձայնորդների և ձայնավորների նոր ստույգ ստեղծելու, հնդկրոպական ձայնորդների իսկական բնույթը գիտակցելու համար. այն ցույց էր տալիս նաև, որ միևնույն՝ a հնչյունը հունարենում ու սանսկրիտում կարող է միանգամայն տարբեր ծագում ունենալ: Բրուգմանը պարզեց, որ այն դեպքում, երբ առկա է համապատասխանությունների հետևյալ շարքը՝ 1) սանսկր. a, հուն. α, լատ. en, գոթ. un, լիտվ. in և 2) սանսկր. a, հուն. α, լատ. em, գոթ. um, լիտվ. im, հնդկրոպական նախալեզուն ունեցել է ձայնավոր \*n և \*m (==\*ŋ և \*ṃ), Ավելորդ է, սակայն, նշել, որ երկար ձայնավոր-ձայնորդների (ī, ū, ē, ǐ և այլն) ծագումը Բրուգմանը դիտում էր որպես éiǝ, éyǝ, éǝǝ.

<sup>1</sup> K. Brugmann, Zum heutigen Stand der Sprachwissenschaft, 1885.

<sup>2</sup> K. Brugmann, Nasalis sonans, Curtius' Studien, IX.

<sup>3</sup> K. Brugmann, Zur Geschichte der stammbestufenden Deklination, CS, IX.

<sup>4</sup> K. Brugmann, Zur Geschichte der Nominalsuffike -as, -jas und -vas, KZ, XXIV.

<sup>5</sup> BGDSL, III.



ՅՈԹ և այլն կապակցությունների թուլացման արդյունք՝ ijə, uęə, ręə, րոճ և այլն միջանդիկ օղակներով: Ինչ վերաբերում է կարճ Դ-ին և Ո-ին, ապա դրանք Բրուգմանը և ուրիշները սկսում են դիտել որպես շեշտված ar-ի և an-ի տարբերակներ անշեշտ դիրքում. այս նույն ձևով էլ i-ն և u-ն կապում են շեշտված ái-ի և áu-ի հետ, որով և հեղաշրջվում է Շլայխերի պատկերացումը կարճ ձայնավորների նախնական բնույթի մասին: Շլայխերը նախնական էր համարում կարճ ձայնավորները, մինչդեռ այս նոր ուսմունքով նախնական են դուրս գալիս «լրիվ աստիճանները», իսկ կարճերը դիտվում են որպես դրանց թուլացման արդյունք անշեշտ դիրքում:

Ինչպես հայտնի է, հնդերոպական ձայնավորների հարցում տիրապետում էր Բուպպի և Շլայխերի այն հայացքը, թե հնդերոպական նախնական ձայնավորները a-ն, i-ն և u-ն էին, իսկ e-ն և o-ն ծագել են որպես a-ի ճեղքման արդյունք: 1864 թ. Կուրցիոսը ցույց է տալիս, որ որոշ բառերում բոլոր եվրոպական լեզուներն օրինաչափորեն e ունեն, սակայն այս երևույթը բացատրում է Բուպպի և Շլայխերի նման՝ որպես նախնական a-ի ընդհանուր եվրոպական ձևափոխում e-ի, այսինքն՝ որպես եվրոպական նորամուծություն: 1876 թ. Բրուգմանը և 1874—1876 թթ. Ամելյունգը գալիս են այն եզրակացության, որ հնդերոպական լեզուների e-ն և o-ն արտացոլում են հնդերոպական վիճակը, և, հետևաբար, հունական o, α-ն, իտալական e, o, a-ն, կելտական e, o, a-ն ներկայացնում են հնդերոպական վիճակը, թեև հնդիրանականում դրանք ներկայացված են միևնույն a-ով: Սակայն Բրուգմանը փորձում է, այնուամենայնիվ, հաշտեցնել հնդիրանական և եվրոպայի հնդերոպական լեզուների տվյալները: 1879 թ. Կ. Կուլիցը «Հնդերոպական քմայինների շարքի ծագումը» հոդվածում<sup>1</sup> վերջնականապես ապացուցում է e-ի նախնականությունը: Նա ցույց է տալիս, որ հնդերոպական k ետնալեզվայինը հնդիրանականում, հատկապես սանսկրիտում a-ից առաջ արտացոլված է որպես k այն դեպքերում, երբ եվրոպայի հնդերոպական լեզուներում այդ a-ին համապատասխանում են o-ն, a-ն, և արտացոլված է որպես e այն դեպքում, երբ եվրոպայի հնդերոպական լեզուներում a-ի դիմաց առկա է e. հետևաբար e-ի դիմաց գտնվող հնդիրանական a-ն այս դեպքում առաջացել է նախքան k > e հնչյունափոխությունը, որ կարող էր տեղի ունենալ միայն e-ից առաջ: Այս նույն

<sup>1</sup> K. Collitz, Die Entstehung der indogermanischen Palatalreihe, BB, III, 1879.

կարծիքը 2 տարի անց հայտնում է և Ի. Շմիդտը «Արիական Երկուս  
1 հնչյունները և քմայինները» հոդվածում<sup>1</sup>։ Սրանով *e* և *o* ձայնա-  
վորների նախնականությունը դառնում է անկասկած։ Հնդկրոպա-  
կան ձայնավորների բնույթի ճշտման հարցում կարևոր դեր է խա-  
ղում և Ֆ. դը-Սոսյուրը, որի մասին, սակայն, կիսովի հետո։

Բրուգմանը նոր ձևով է դնում հնդկրոպական հնչյունական հերթագայությունների հարցը՝ ցույց տալով, որ այն ավելի բարդ է, քան պատկերացրել են Բոպպը և Շլայխերը. հերթագայությունների սիստեմի մեջ նա կարևոր տեղ է տալիս *e* և *o* ձայնավորներին, թեև հրաժարումը շլայխերյան սխեմայից միանգամից չի կատարվում։ Հնդկրոպական հերթագայությունների ծագումը Բրուգմանը կապում է շեշտի դիրքի ազդեցության և այլ պայմանների հետ։ Ամելունգի՝ ձայնդարձի (Ablaut) բնագավառում կատարած հետադոտությունների վրա Բրուգմանը փաստորեն այլ բան չի ավելացնում, քան *e-ի* և *o-ի* ներքաշումը հերթագայությունների սիստեմի մեջ։ Սրան միանում է և Բրուգմանի կողմից արմատի հարցի վրա բավարար ուշադրություն չդարձնելը, ածանցների և ածականների («որոշիչների») ոչ հստակ տարբերակումը և այլն։

Ավելորդ չէ նշել, որ Բրուգմանի վրա շարունակում են ազդեցություն թողնել կուլտուր-պատմական (կուլտուր-էվոլյուցիոնիստական) ուղղության ներկայացուցիչներին՝ լեզվի մասին ունեցած հայացքները. նա լեզուն սահմանում է որպես «կուլտուրայի արդյունք»։

Հեռման Օստհոֆ.— Ի տարբերություն Բրուգմանի, որին վիճակված էր ավելի կարևոր դեր խաղալ հնդկրոպական լեզվաբանության մեջ, Հ. Օստհոֆի աշխատությունները գրեթե ամբողջովին մոռացված են և պատմական արժեք են ներկայացնում։

Բրուգմանի հետ միասին ձեռնարկելով «Ձևաբանական հետադոտությունների» հրատարակությանը և գրելով դրանց առաջաբանը՝ Օստհոֆը զգալի թվով հոդվածներ է գետեղել այդտեղ, այլև հրատարակել մի շարք այլ աշխատություններ։ Ինչպես տեսանք, նա առաջինն է խոսել *ɣ-ի* վանկարար արժեքի մասին և Բրուգմանի հետ միասին հիմք տվել ձայնորդների ու ձայնավորների նոր ուսմունքի համար։ Կարևոր է Օստհոֆի դերը նաև հնդկրոպական ետնալեզվայինների ուսումնասիրության բնագավառում։

<sup>1</sup> I. Schmidt, Zwei arische a-Laute und Palatalen. KZ, XXV, 1881.

Օստհոֆի «Հնդկրոպական պերֆեկտի պատմության շուրջը» աշխատությունը<sup>1</sup> ժամանակին ընդունվել է որպես կարևոր նվաճում, սակայն հետագայում մոռացվել է: Այդ բախտին են արժանացել նաև «Ձևաբանական հետազոտությունների» 4-րդ հատորում տեղավորած նյութերը, որոնցով հնդկրոպական ձայնավորների մեջ նա փորձում էր գտնել թուլացման երկրորդ աստիճանը<sup>2</sup>:

Ավելի կարևոր է Օստհոֆի «Սուպլետիվիզմը հնդկրոպական լեզուներում»<sup>3</sup> աշխատությունը, որտեղ նա առաջին անգամ ի մի է բերել ու սիստեմավորել հնդկրոպական սուպլետիվիզմի դեպքերը խոնարհման, համեմատության աստիճանների կազմության մեջ և այլուր՝ աշխատելով պարզել դրանց նշանակությունն ու ծագումը:

Հետաքրքրությունից զերծ չեն Օստհոֆի այն հոդվածները, որոնք վերաբերում են համեմատական դիցաբանության լեզվաբանական հիմնավորման հարցերին:

Օստհոֆն զբաղվել է նաև ստուգաբանական հարցերով, որի արդյունքները ամփոփված են առավելապես նրա «Ստուգաբանական ալլեայլթում»<sup>4</sup>:

Բերտոլդ Դելբրյուկ. — Դելբրյուկի (1842—1922) լեզվաբանական գործունեությունը երիտքերականական ուղղության մեջ երկու կարևոր կողմ ունի. 1) երիտքերականների գործունեությունը ուղղված էր առավելապես հնչյունական և ձևաբանական փաստերի քննությանը, ընդ որում հնչյունաբանությունը, հատկապես ձայնավորների ուսումնասիրությունը, դարձել էր նրանց հոգածության գլխավոր առարկան. շարահյուսությունը և իմաստաբանությունը համեմատաբար քիչ ուշադրություն էին գրավում: Դելբրյուկը այս առումով յուրատեսակ բացառություն է կազմում. նա իր ուսումնասիրության հիմնական առարկան է դարձնում շարահյուսությունը՝ գրելով իր «Հնդկրոպական լեզուների համեմատական շարահյուսությունը»<sup>5</sup>: Այս աշխատությունը ներկայացնում է Բրուզմանի հետ միասին ձեռնարկած «Հնդկրոպական լեզուների

<sup>1</sup> H. Osthoff, Zur Geschichte des Perfekts im Indogermanischen, 1884.

<sup>2</sup> Հմմտ. Փ. Шпект, հիշ. աշխ., էջ 23—24:

<sup>3</sup> H. Osthoff, Vom Suppletivwesen der indogermanischen Sprachen, 1900.

<sup>4</sup> H. Osthoff, Etymologische Parerga, 1901.

<sup>5</sup> B. Delbrück, Vergleichende Syntax der indogermanischen Sprachen, I—III, 1893—1900.

համեմատական քերականության հիմունքների»<sup>1</sup> մի մասը: Դեկտրբրյուկը դեռևս 1871—1888 թթ. լույս էր ընծայել իր «Շարահյուսական հետազոտությունների» 5 հատորները<sup>2</sup>, որոնք հիմք էին ծառայել «Համեմատական շարահյուսության» համար. 2) ինքնուվերիտքերականների տեսաբաններից մեկը՝ Դելբրյուկն իր տեսական գլխավոր աշխատության՝ «Լեզվի ուսումնասիրության ներածության» մեջ<sup>3</sup> արդեն քննադատական վերաբերմունք է ցույց տալիս երիտքերականության որոշ սկզբունքների նկատմամբ, հրաժարվում առանձին դրույթներից:

Բացի հիշված աշխատություններից, Դելբրյուկը գրել է նաև «Նորագույն լեզվաբանությունը»<sup>4</sup> պոլեմիկ աշխատությունը, «Լեզվի ուսումնասիրության հիմնական հարցերը»<sup>5</sup>, հատուկ ուսումնասիրություն է նվիրել պոլեմիկության ցույց տվող հնդեւրոպական լեզուների անուններին<sup>6</sup> և այլն:

Դելբրյուկը ևս, լեզուն դիտելով հոգեֆիզիկական պրոցեսների դիրքերից, հենվում է բացառություն չճանաչող հնչյունական օրենքի և անալոգիայի գաղափարների վրա: Սակայն, արտացոլելով ժամանակի ընթացքում առաջացած որոշ սկեպտիցիզմը, նա բողոքում է հնչյունական օրենքները բացարձակ դարձնելու և բնության օրենքների հետ խառնելու դեմ: Նշելով, որ առանձին անհատը ոչ մի իշխանություն չունի հնչյունական փոփոխությունների պատճառների վրա՝ Դելբրյուկը նկատում է, որ հասարակության ճնշումը անհատի վրա ավելի ուժեղ է, քան անհատի ետադարձ ազդեցությունը. վերջինիս դերը որոշվում է նրանով, թե համընկնում է արդյոք նրա մուծած փոփոխությունը մյուս փոփոխությունների ուղղության հետ: Երիտքերականների ինգրիդիտալիզմից հեռանալու արդյունք էր և այն, որ Դելբրյուկը լեզուն սահ-

<sup>1</sup> K. Brugmann und B. Delbrück, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, I—V, Strassburg, 1888—1900.

<sup>2</sup> B. Delbrück, Syntaktische Forschungen, I—V, 1871—1888.

<sup>3</sup> B. Delbrück, Einleitung in das Studium der indogermanischen Sprachen, 1889, արմատապես վերամշակված VI հրատարակությունը՝ 1919 թ.:

<sup>4</sup> B. Delbrück, Die neueste Sprachforschung, 1885.

<sup>5</sup> B. Delbrück, Grundfragen der Sprachforschung, mit Rücksicht auf W. Wundh Sprachpsychologie erörtert, Strassburg, 1901.

<sup>6</sup> B. Delbrück, Die indogermanischen Verwandtschaftsnamen, 1889.

մանում է որպես «օրգանիզմի ֆունկցիա, որ ծագել է մարդկային հասարակության մեջ»:

Ավելի ուշ շրջանում Դելբրյուկը փաստորեն հանգում է հընչյունական փոփոխությունների օրինաչափականության բացասմանը՝ նշելով, որ լեզվի հիմքում ընկած մարդկային գործողություններն ու վարմունքները կամայական բնույթ են կրում: Այն հարցին, թե արդյո՞ք հնչյունական օրենքները իրոք բացառություն չեն ճանաչում, Դելբրյուկը բացասական պատասխան է տալիս: Նրա կարծիքով ընդհանրապես պատմական օրենքների կիրառելիությունը բոլոր դեպքերի նկատմամբ փորձով չի կարող ապացուցվել: Սակայն, իհարկե, Դելբրյուկը չի հրաժարվում հնչյունական օրենքի գաղափարի օգտակարությունից: Նշելի է նաև, որ Շոլխարդտի և այլոց ազդեցության տակ Դելբրյուկը հնչյունական փոփոխությունների կարևոր պատճառներից մեկն էլ համարում է լեզուների խառնվելու երևույթը:

Այսպես կոչված «նախաձևերը» Դելբրյուկը համարում է լոկ պայմանական նշանակումներ, դրանք ներկայացնում են «գիտնականների փոխվող հայացքների արտահայտությունը բանաձևերով այն լեզվական նյութի ծավալի ու բնույթի մասին, որ առանձին լեզուները ժառանգել են ընդհանուր լեզվից»։ դրանք ոչ թե նոր նյութ են տալիս, այլ վկայում են առանձին լեզուների նյութի վերլուծության արդյունքների մասին: Նշելով, որ Շլայխերի ժամանակներից հետո մեծապես փոխվել է կարծիքը «նախալեզվի» մասին՝ Դելբրյուկը անհրաժեշտ է համարում հատկապես ընդգծել, որ նախ՝ նախալեզուն պետք է ունեցած լինի բարբառային տարբերություններ. երկրորդ՝ նախալեզուն սլետք է անցած լինի զարգացման երկար ճանապարհ, ուստի և չենք կարող իմանալ, թե վերականգնվող ձևերից ո՞րն է ծագմամբ մյուսից ավելի հին. երրորդ՝ վերականգնումը միշտ չէ, որ հավասարաթեք է, որոշ հնչյուններ ավելի հավաստիորեն են վերականգնվում, քան մյուսները. չորրորդ՝ դժվար է պնդել, թե տվյալ ընդհանուր երևույթը ո՞ր է կոխային է վերաբերում, այն նախալեզվի՞ց է գալիս («նախահնդերպական» է), թե՞ բացատրվում է ձևերի կազմության օրենքների նույնությամբ: Այս բոլորով հանդերձ Դելբրյուկը գտնում է, որ վերականգնվող ձևերը նախ՝ օգտակար են որպես համառոտ բանաձևեր և երկրորդ՝ հետազոտողին մղում են աշխատանքի՝ ստիպելով փնտրել վերականգնվող ձևի հնություն և նախալեզվի պատկանելու հնարավորության աստիճանը: Այս կապակցությամբ



առաջացումը սերտորեն կապվում է նրանց շարահյուսական գործածութեան հետ և որ չափով շարահյուսական գործածութեան հարցերը աննշվում են իմաստաբանական հարցերի հետ: Նշված լեզուների փաստերի համեմատական զուգադրման միջոցով Դելբրյուկը գործում է վերականգնել հնդկրոպական անվանական ու բայական կատեգորիաների (հոլովների, թվի, ժամանակների, եղանակների և այլն) գործածությունն ու իմաստային սահմանները, առանձին խոսքի մասերի գործածությունը, նախադասությունների զանազան տիպերը և նրանց զարգացումը և այլն: Տեղ է տրվում նաև աշխարհի հարցերի, ինչպիսիք են հնդկրոպական անվանական և բայական հիմքերի իմաստը, մակբայների առաջացումը և այլն: Նշելի է, որ հարցերի քննությունը կատարվում է անհավասարաչափ լրիվությամբ՝ ամենասպառիչ վերլուծությունից մինչև ամենամակերեսային դիտողությունները:

Դելբրյուկը իր գործի մեջ տեղեկություններ է տալիս նաև շարահյուսական հարցերի ուսումնասիրության պատմության մասին:

Հերման Պաուլ.— Հերման Պաուլը (1846—1921) նշանակալից ծառայություններ է մատուցել առանձնապես գերմաներենի ուսումնասիրությանը. նա գերմաներենի բացատրական բառարանի և ընդարձակ քերականության, միջին վերին գերմաներենի քերականության և այլ աշխատությունների հեղինակ է: Սակայն լեզվաբանության մեջ Հերման Պաուլը մտել է հատկապես որպես «լեզվի պատմության սկզբունքները» գրքի<sup>1</sup> հեղինակ: Այդ գրքով Պաուլը մտնում է երիտքերականների գլխավոր տեսաբանների շարքը:

Բոլոր գիտությունները բաժանելով երկու խմբի՝ «բնապատմական» (բնական) և «կուլտուրային» (հասարակական)՝ Պաուլը լեզվաբանությունը դնում է վերջիններիս շարքում: Սակայն Պաուլի կարծիքով լեզվաբանությունը կուլտուրային գիտությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում՝ որպես ամենից ավելի կատարյալ մեթոդն ունեցողը: Սրանով նա մոտենում է բնապատմական գիտություններին, մի հանգամանք, որ հիմք է տվել լեզվաբանությունը բնական գիտությունների շարքը դասելու և հումանիտար գիտություններից հանելու սխալ դրույթի համար: Կուլտուրային գիտությունը նաև հասարակական գիտություն է (գիտություն հասար-

<sup>1</sup> H. Paul, Prinzipien der Sprachgeschichte, 1880.

րակութեան մասին), որովհետև միայն Գասարակութիւնն է մարդուն դարձնում պատմական էակ: Միայն հասարակութեան մեջ է, որ անհատը դառնում է այն, ինչ նա է: Սակայն այս սկզբունքը չի խանգարում Պաուլին կուլտուրային բոլոր գիտութիւններին, այդ թիւում և լեզվաբանութեան հիմնական հարցերի լուծման մեջ ելնել առանձին անհատներից, հանդես բերել լեզվական պրոցեսի ինդիվիդուալիստական ըմբռնում: Կուլտուրայի հիմնական հատկանիշը նա համարում է հոգեկան գործոնների առկայութիւնը. այս առումով Պաուլը շարունակում է կուլտուրային յուրաքանչյուր գիտութեան, այդ թիւում և լեզվաբանութեան հիմքում դնել հոգեբանութիւնը, լեզվական հարցերը լուծել ասոցիատիվ հոգեբանութեան հիման վրա. «Հոգեկան տարրը,— գրում է Պաուլը,— ամեն մի կուլտուրական շարժման կարևորագույն գործոնն է, մի գործոն, որի շուրջը պտտվում է ամեն ինչ, հոգեբանութիւնն էլ այդ պատճառով ամեն մի իսկական կուլտուրային գիտութեան գլխավոր հիմքն է»<sup>1</sup>:

Հոգեկան կյանքն էլ Պաուլը դիտում է որպէս մտապատկերների և դրանց խմբերի զուգորդումներ՝ հենվելով Հերբարտի ասոցիատիվ հոգեբանութեան սկզբունքների վրա: Սակայն հոգեկան գործոնը պատմական շարժման միակ գործոնը չէ, ուստի և, ըստ Պաուլի, ճիշտ չէ կուլտուրային գիտութիւնները սահմանել որպէս հումանիտար գիտութիւններ. միայն հոգեբանութիւնն է միակ մաքուր հումանիտար գիտութիւնը: Պատմական շարժման մեջ, կուլտուրայի ամեն մի դրսևորման մեջ հոգեկան գործոնների հետ միասին գործում են նաև ֆիզիկական գործոնները, որովհետև մարդու հոգին նախ՝ փոխազդեցութեան մեջ է գտնվում մարդու մարմնի հետ և երկրորդ՝ շրջապատող միջավայրի հետ:

Լեզվի պատմութեան դիսցիպլինի կողքին Պաուլն անհրաժեշտ է համարում նաև մի ընդհանուր տեսական դիսցիպլինի՝ սկզբունքների ուսմունքի ստեղծումը. ըստ նրա՝ սկզբունքների ուսմունքը մեթոդների ուսմունքի հիմքն է: Քանի որ լեզվաբանութիւնը «կուլտուրային» գիտութիւն է, իսկ կուլտուրան դրսևվորվում է հոգեկան և ֆիզիկական գործոնների միջոցով, ուստի և «կուլտուրային գիտութեան սկզբունքների ուսմունքի գլխավոր խնդիրը այն ընդհանուր պայմանների սահմանումն է, որոնց մեջ հոգեկան և ֆիզիկական գործոնները, հետևելով իրենց հատուկ

<sup>1</sup> H. Paul, Prinzipien der Sprachgeschichte. V Aufl, Halle, 1937, էջ 6.



օրենքներին, հնարավորություն են ստանում միմյանց վրա փոխազդելու՝ մի ընդհանուր նպատակի հասնելու համար»<sup>1</sup>: Ամեն մի «կուլտուրային» գիտություն, այդ թվում և լեզվաբանությունը, լինելով գիտություն հասարակության մասին, պետք է նպատակ ունենա պարզել, թե ի՞նչ ձևերով է տեղի ունենում մարդկանց փոխներգործությունը, և ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում անհատն ու հասարակությունը:

Սահմանելով կուլտուրային և բնասպասմական գիտությունների փոխհարաբերությունը՝ Պաուլը անցնում է լեզվաբանության և մյուս «կուլտուրային» գիտությունների փոխհարաբերության հարցին.

1) Յուրաքանչյուր ճշգրիտ գիտական քննություն, ըստ Պաուլի, պահանջում է առանձին գործոնների մեկուսացված քննություն. լեզվաբանությունն այս տեսակետից գտնվում է առանձնապես բարենպաստ պայմաններում. ճիշտ է, լեզվի վրա ազդում են ամենաբազմազան գործոններ, բայց լեզվաբանության անմիջակա՞ խնդիրը «լոկ այն հարաբերությունների ուսումնասիրությունն է, որոնց մեջ պատկերացումների բովանդակությունը հանդես է գալիս հնչյունների որոշակի խմբերով... Որպես նման ուսումնասիրության հիմք պահանջվում է միայն երկու գիտություն՝ հոգեբանությունը և ֆիզիոլոգիան, ընդ որում վերջինիցս՝ միայն որոշ բաժիններ»<sup>2</sup>:

2) «Լեզվական յուրաքանչյուր ստեղծագործություն միշտ միայն մեկ անհատի գործ է»<sup>3</sup>. երբեք չի պատահում, որ մի քանի անհատ ստեղծեն միասին, միացյալ ջանքերով՝ պարտականությունները բաշխելով միմյանց մեջ, ինչպես այդ լինում է տընտեսական և քաղաքական բնագավառում. ճիշտ է, սակայն, որ անհատական ստեղծագործությունը փոխանցվում է ուրիշներին վերամշակվում:

3) Լեզվական կազմություններն սովորաբար չեն ստեղծվում գիտակցական մտադրմամբ. սրանով լեզուն տարբերվում է գեղարվեստական ստեղծագործությունից. խոսքն այստեղ վերաբերում է լեզվի բնական և ոչ արհեստական զարգացմանը, ինչ ամեն մի արհեստական բան, որ արվում է մտադրված նորմավորմամբ, մտնելով լեզվի մեջ, հանդես է գալիս բնական ուժերի իշ-

<sup>1</sup> H. Paul. հիշ. աշխ., 1937, էջ 7:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 18:

խանութեան տակ: Սակայն ամեն մի անհատական առանձնահատկութիւն հանդես է գալիս ոչ ուժեղ ձևով. ամեն մի փոփոխութիւն պարզ բնույթ ունի և միայն մի փոքր քայլ է դեպի առաջ, ընդ որում մեծ մասամբ խոսողը չի գիտակցում իր նորամտութիւնը: Անհատների մտտ կատարվող պարզագույն ֆիզիկական պրոցեսները նույնն են, և նրանց տարբերութիւնները հիմնված են լոկ ալո պարզ պրոցեսների տարբեր կոմբինացիաների վրա: Տարբեր անհատների մեջ տեղի ունեցող լեզվական պրոցեսների այս միակերպութիւնն էլ հիմք է տալիս դրանց ճշգրիտ գիտական ուսումնասիրութեան համար: Վերջ ի վերջո Պաուլը անհատական լեզվային պրոցեսների միասնութեան հիմքը որոնում է մարդկային բնութեան ընդհանրութեան մեջ և գտնում, որ առանց դրա լեզուն չէր կարող հաղորդակցման հարմար գործիք ծառայել. լեզուն տարբերվում է հասարակական հարաբերութիւններից, իրավունքից, կրօնից և պոեզիայից ու արվեստի այլ տեսակներից նրանով, որ զարգացման ու շրջանում էլ նրա մեջ գիտակցական նպատակայնութիւնն ու անհատականութիւնը չեն իշխում, և որ նրա մեջ միշտ էլ հանդես են գալիս միօրինակութիւնն ու բնական անհրաժեշտութիւնը:

Ունենալով լեզվի զարգացման էվոլյուցիոնիստական հայեցակետ՝ Պաուլը հանդես է գալիս պատմականութեան շահագնացրած ընդհանրացմամբ: Նրա կարծիքով՝ լեզվի գիտական քննութիւնը կարող է ինեւ միայն պատմական քննութիւն: Հենց որ մենք փաստերի պարզ սահմանումից անցնում ենք դրանց բացատրութեանը, դրանց միջև կապի սահմանմանը, մենք մտնում ենք պատմական քննութեան մեջ: Պատմական հիմքի վրա է կառուցված ո՞չ միայն բուն պատմական քերականութիւնը, այլև համեմատականը. պատմական քննութիւնը երևան է գալիս նաև միևնույն էտապի ուսումնասիրութեան մեջ, երբ տարբեր երևութիւնների համեմատութեամբ փորձում ենք պարզել դրանց մեկնակետը. Հոմբոլդտի և Շտայնթալի նշած «ներքին ձևը» կարելի է բնութագրել միայն այն դեպքում, երբ հաջողվի արտահայտման ձևերի քննութեամբ հասնել դրանց մեկնակետին. «Այն, ինչ որ այդ ժամանակ դուրս կմնա լեզվի ոչ պատմական քննութիւնից,— գրում է Պաուլը,— կհանգի ընդհանուր դատողութիւնների՝ լեզվի անհատական «գտագործման, անհատի և լեզվական նորմայի (Sprachusus) հարաբերութեան մասին. սրան է վերաբերում նաև լեզվի ուսուցման հարցը: Բայց հետագա շարադրանքից կպարզվի, որ հենց այդ դա-

տողությունները պետք է ամենասերտ կերպով կապվեն լեզվի պատմական զարգացման ուսումնասիրության հետ»<sup>1</sup>: Նկարագրական քերականությունը գործ ունի միայն աբստրակցիաների հետ և սահմանում է որոշ նորմաներ. բայց այդ նորմաները փոփոխվում են, և այդպիսի նկարագրությամբ դրանց հեզաշրջման պատճառները չեն կարող պարզվել: Իսկական գիտական քննությունը, որ ըստ Պաուլի միայն պատմական քննությունն է, պետք է գործ ունենա ո՛չ թե աբստրակցիաների հետ, այլ նկատի ունենա լեզվական գործունեության բոլոր անհատական դրսևորումները՝ դրանց փոխազդեցության մեջ. «Բոլոր հնչյունական կոմպլեքսները, որոնք որևէ մեկը երբևէ արտասանել է, լսել կամ պատկերացրել իրեն՝ դրանց հետ զուգորդված պատկերացումներով հանդերձ, որոնց համար դրանք սիմվոլներ են ծառայում, բոլոր բազմազան կապերը, որոնց մեջ մտնում են լեզվի տարրերը անհատի հոգում,— այդ բոլորը վերաբերում են լեզվի պատմության բնագավառին, այդ բոլորը պետք է հայտնի դառնան, որպեսզի հնարավոր լինի զարգացման լիակատար ըմբռնումը»<sup>2</sup>: Պատմական լեզվապրոցեսներ են ոչ միայն խոսքային գործունեությունն ու լսելը և դրանց ընթացքում հարուցված պատկերացումները, այլև անձայն մտածողության ժամանակ ծագող լեզվական կազմավորումները: Շատ հոգեկան պրոցեսներ կատարվում են անգիտակցաբար. լեզվական պրոցեսները հենց այդպիսի ենթագիտակցական ոլորտներից են բխում: Նրանց հիմքում ընկած պատկերացումների խմբերը այն բանի արդյունք են, ինչ առաջ հանդես է եկել անհատի մոտ ուրիշներին լսելու կամ իր խոսելու ու մտածելու ժամանակ. հարմար պայմաններում դրանք նորից վերադառնում են դեպի գիտակցական ոլորտները: Լեզվական գործունեության միջոցով գիտակցության մեջ ներմուծված ոչ մի պատկերացում անհետ չի կորչում, այլ մնում է ենթագիտակցական ոլորտում՝ մտածելիս, խոսելիս և լսելիս նորից կյանքի կոչվելով:

Լեզվական գործունեության բոլոր դրսևորումների հիմքում Պաուլը դնում է պատկերացումների խմբերը, որոնց նա յուրատեսակ անկախ գոյություն է հատկացնում և կոչում «պատկերացումների խմբերի օրգանիզմներ»: Դրանք յուրաքանչյուր անհատի մոտ զարգանում են յուրատեսակ ձևով և գտնվում մշտական փոփոխության պրոցեսում: Պաուլը իսկական պատմական զարգացման կր-

<sup>1</sup> H. Paul, հիշ. աշխ., 1937, էջ 21--22:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 24:

րողներ համարում է հենց այդ հոգեկան օրգանիզմները. «Իսկ արտասանվածը,— գրում է Պաուլը,— ոչ մի զարգացում չունի»<sup>1</sup>: Ֆիզիկապես և ֆիզիոլոգիապես այն անհետ կորչում է՝ հետք թողնելով միայն հոգու մեջ՝ շնորհիվ զանազան ասոցիատիվ կապերի. արտասանվածքները կապված են իրար հետ միայն հոգեկան օրգանիզմով, որի մեջ մնում է հետքը և որը հնարավոր է դարձնում հետագա պատմական զարգացումը: Հնչյունական-ֆիզիկական կողմը միայն մի ֆունկցիա ունի. այն տարբեր հոգեկան օրգանիզմների փոխազդեցության միջնորդ է: Լեզվի զարգացումը տեղի է ունենում որպես անընդհատ պրոցես. անհատների մահը և սերունդների իրար փոխարինելը չեն դադարեցնում լեզվական գործունեությունը, որովհետև հին լեզվական օրգանիզմներին միանում են նորերը: Լեզվի պատմաբանի խնդիրն է հոգեկան օրգանիզմների նկարագրությունը: Սակայն այդ բանը հեշտ չէ. նախ՝ մենք չենք կարող ընդգրկել բոլոր դեպքերը, այլ միայն մի քանի անհատի լեզվական օրգանիզմները. երկրորդ՝ լեզվական օրգանիզմը ենթագիտակցականի ոլորտում է գտնվում, և թափանցել խոսքային գործունեության հոգեկան կողմի մեջ դժվար է. այդ կարելի է միայն ինքնազննությամբ. երրորդ՝ այն դեպքում, երբ անհրաժեշտ է ուրիշների հոգեկան օրգանիզմների քննությանը դիմել, մենք պետք է բավարարվենք միայն ֆիզիկական կողմով՝ հնչյուններով և նրանց սուտոգատներով՝ տառային գրանցումներով. սրանց միջոցով էլ միանգամայն ճիշտ գաղափար կազմել հոգեկան օրգանիզմների մասին հնարավոր չէ: Այս դժվարություններն են պատճառը, որ տրադիցիոն քերականությունների մեջ տեղ գտած քերականական կատեգորիաների խմբավորումները համարժեք չեն հոգեկան պատկերացումների խմբերի նուրբ բաժանումներին: Պատմական լեզվաբանությունը ևս հաճախ մեղանչում է ճշմարտության դեմ՝ հին շրջանների հետազոտությունները բացահայտված կատեգորիաները մեխանիկորեն փոխանցելով ուշ շրջանները: Լեզվի հետևողական պատմական քննության սկզբունքի անցկացման հետ կապված Պաուլը հանդես է գալիս հնդեվրոպական թեքականության ծաղկման և անկման շրջաններ տարբերելու տարածված դրույթի դեմ: «Ժողովրդի լեզվի զարգացման մեջ,— գրում է Պաուլը,— չկա՝ ոչ մի ժամանակակետ, որի դեպքում նախաստեղծումը (Urschöpfung) ավարտվի: Մյուս կողմից՝ ան-

<sup>1</sup> H. Paul, հիշ. աշխ., 1937, էջ 28:

շուշտ նախաստեղծումներից անմիջապես հետո հանդես են եկել սկզբնապես (ursprünglich) ստեղծվածի հետագա զարգացման միևնույն ձևերը, ինչ որ մենք դիտել ենք հետագա շրջաններում: Այս առումով զարգացման տարբեր փուլերի միջև չկա ձևի տարբերություն, այլ միայն աստիճանի»<sup>1</sup>:

Պաուլի առջև բնականաբար պետք է ծառանա անհատականի և ընդհանուրի փոխհարաբերության պրոբլեմը: Այս ընդհանուրը Պաուլը տեսնում է լեզվական նորմայի կամ ուզուսի մեջ. առանձին «լեզվական օրգանիզմների համեմատությունից ստացվում է ինչ-որ միջին բան,—գրում է նա,—որով և որոշվում է նորման լեզվի մեջ, լեզվական ուզուսը»<sup>2</sup>: Լեզվական կյանքը, ըստ Պաուլի, հանդես է գալիս անհատների փոխհաղորդակցման մեջ, ընդ որում անհատական տարբերությունները համահարթվում են հաղորդակցման պրոցեսում: Հաղորդակցումը երկկողմանի պրոցես է, ուստի և խոսքի միավորի՝ նախադասության սահմանումը տալիս՝ Պաուլը ելնում է խոսողի և լսողի դիրքերից. «Նախադասությունն այն բանի լեզվական արտահայտությունը կամ խորհչրդանիշն է, ինչ խոսողի հոգու մեջ կատարել է մեկից ավելի պատկերացումների կամ դրանց խմբերի կապակցությունը, և այն բանի միջոցը, որ խոսողի հոգում առաջացնի նույն պատկերացումների ու դրանց խմբերի նույն կապակցությունը»<sup>3</sup>:

Առանձինի և ընդհանուրի պրոբլեմը լեզվի մեջ հանգեցնում է անհատական «լեզվական օրգանիզմների» և ուզուսի հարաբերության պրոբլեմին, այն հարցին, թե ինչպե՛ս է հարաբերում առանձինը ուզուսին, ինչպե՛ս են փոխհաղորդակցման մեջ փոխվում լեզվամիջոցները և նրանց ֆունկցիաները սերունդների ընթացքում: Ուզուսի փոփոխության իսկական պատճառը Պաուլը տեսնում է սովորական լեզվագործածության մեջ, որտեղ բացառված է ամեն մի նպատակադրություն. իհարկև, Պաուլը չի ժխտում գիտակցական, նպատակադիր միջամտությունը, բայց զրա դերը համարում է խիստ փոքր՝ դանդաղ, անգիտակցական և շնչապատակադրված փոփոխությունների համեմատությամբ: Այս հարցում Պաուլը ելնում է էվոլյուցիոնիզմի հայեցակետից, ընդ որում տուրք է տալիս նաև բնական ընտրության սկզբունքին. այս

<sup>1</sup> H. Paul, հիշ. աշխ., 1937, էջ 176.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 29.

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 121.

կամ այն «օրգանական կազմաւորման» բախտը (մնալը կամ կոր-  
 շելը) որոշվում է դրա նպատակահարմարութեան աստիճանով:  
 Անհատների մոտ միևնույն ուղղութեամբ կատարված մասնակի շե-  
 դումները առաջ են բերում և ուզուսի փոփոխութիւն: Անհատակա-  
 նը սրանով դառնում է ընդհանուր ուզուս. մնացած կարգի շե-  
 դումները կորչում են: «Այստեղից հետևում է,— գրում է Պաուլը,—  
 որ լեզվի պատմութեան սկզբունքների ողջ ուսմունքը կապված է  
 այն հարցի հետ, թե ի՞նչ հարաբերութեան մեջ է գտնվում լեզվա-  
 կան ուզուսը անհատական, խոսքային գործունեութեան հետ, ինչ-  
 պէ՛ս է այդ գործունեութիւնը պայմանավորված նրանով և իր  
 հերթին ի՞նչ ազդեցութիւն է գործում լեզվական ուզուսի վրա»<sup>1</sup>:  
 Այս կապակցութեամբ Պաուլը վերանայում է լեզվաբանութեան և  
 ֆիլոլոգիայի փոխհարաբերութեան նատուրալիստական ըմբռնու-  
 մը: Ըստ Պաուլի լեզվաբանութիւնն զբաղվում է ընդհանուր ուղու-  
 սային (ուզուսլ) հարաբերութիւններով, ֆիլոլոգիան՝ դրանց ան-  
 հատական կիրառութիւններով: Անհատի մեջ կատարվող լեզվա-  
 կան՝ փոփոխութիւնները արդյունք են մասամբ նրա սովորական  
 գործունեութեան, մասամբ էլ այլ անհատների ազդեցութեան: Ամեն  
 փոփոխութիւն սկսվում է անհատներից կամ անհատների փոքր  
 խմբերից և տարածվում: Քանի որ լեզուն յուրացվում է մանկու-  
 թիւնից, ուստի և փոփոխութիւնների առաջացումն ու տարածու-  
 մը կապված է սերունդների փոփոխութեան հետ: Այստեղից էլ  
 բխում է Պաուլի ինդիւլգուսալիստական ըմբռնումը: Լեզուն, ըստ  
 Պաուլի, տարբերվում է անհատից անհատ մինչև այն աստիճան,  
 որ կարելի է ասել, թե ամեն անհատ իր սեփական բարբառն ունի:  
 Անհատական տարբերութիւնների հիման վրա էլ բացատրվում են  
 և՛ լեզվական ուզուսի փոփոխութեան, և՛ բարբառների ծագման  
 հարցերը. «Բարբառային տրոհումն այլ բան չի նշանակում,—  
 գրում է Պաուլը,— քան մի որոշակի շափից բարձր անհատական  
 տարբերութիւնների արտաճում (Hinauswachsen)»<sup>2</sup>: Ընդհանուրը  
 Պաուլը դիտում է որպէս անընդհատ փոխվող մի հավասարակըշ-  
 սութիւն, որի բնույթը կախված է անհատական լեզվական գոր-  
 ծունեութեան փոփոխութիւնների ուղղութիւնից: Յուրաքանչյուր  
 անհատի լեզուն իր հերթին ունի իր զարգացման պատմութիւնը.  
 «Իրականում յուրաքանչյուր ակնթարթում ժողովրդի մի ընդհան-

<sup>1</sup> H. Paul, հիշ. աշխ., 1937, էջ 33:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 38:

բության ներսում այնքան բարբառներ են խոսվում,— գրում է Պաուլը,— որքան խոսող անհատներ կան, այսինքն՝ բարբառներ, որոնցից ամեն մեկը մի պատմական զարգացում ունի և մշտական փոփոխության մեջ է»<sup>1</sup>։

Պաուլի ուզուը, իհարկե, այն չէ, ինչ մենք հասկանում ենք որպես լեզվի հիմնական (հասարակական-հաղորդակցական) ֆունկցիա։ Լեզվական ընդհանուրը Պաուլը վերջ ի վերջո բացատրում է հոգեկան և մարմնական կազմակերպման, շրջապատող բնության և ապրումների համաձայնեցվածությամբ (Übereinstimmung), ընդհանրությամբ և ոչ թե հասարակական գործունեության պրոցեսում մարդկանց հաղորդակցելու անմիջական պահանջներով։ Պաուլի համար հոգին շարժիչ ներվերի հոգեկան արդյունք է, որը գրգռում է այլ անհատների զգայող ներվերը և զուգորդումների շնորհիվ առաջ բերում համապատասխան պատկերացումներ. հընչյունները ծառայում են իբրև միջոց։ Պատկերացումն անփոխանցելի է. հաղորդակցման մեջ ոչ թե պատկերացումներ են փոխանցվում, այլ խոսողը գրգռում է լսողի համապատասխան պատկերացումները, իսկ այդ համապատասխանությունը պայմանավորված է մարդկային բնության միատեսակությամբ և միատեսակ փորձի վրա հիմնված ասոցիատիվ կապերով։ Հասկանալու պրոցեսը սեփական պատկերացումների վրա է հիմնված, պատկերացումներ, որոնք ենթագիտակցականից վերածվում են գիտակցականի՝ լսելու միջոցով։ «Պատկերացման բովանդակությունը,— գրում է Պաուլը,— ...անփոխանցելի է։ Այն բոլորը, ինչ մենք կարծում ենք, թե մի ուրիշ անհատից ենք իմանում, հենվում է միայն մեր սեփականից արվող եզրակացությունների վրա»<sup>2</sup>։ Պաուլը ավելի շատ անհատականով է բացատրում ընդհանուրը, քան ընդհանուրով անհատականը։ Այստեղից էլ բխում է Պաուլի մեթոդի առանձնահատկությունը. նա պահանջում է նախ՝ երևույթի մեկուսացված քննություն, երկրորդ՝ լեզվի էություն հետազոտության հիմնական մեթոդը համարում է ինքնազննումը, որը բանալի է տալիս ուրիշներին հասկանալու համար։ Երիտթերականների պահանջը երևույթները մեկուսացած քննելու մասին նրանց հանգեցնում է «ատոմիզմի», երևույթների առանձնակի, իրար հետ չկապ-

<sup>1</sup> H. Paul, հիշ. աշխ., 1937, էջ 38.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 15.

ված քննություն, որի մեջ կորչում է լեզվի՝ որպես մեկ ամբողջական սիստեմ լինելու բմբռնումը:

Լեզվական ուզուտի փոփոխությունները Պաուլը խմբավորում է մի քանի սկզբունքով. 1) ըստ ընդհանուր բնույթի՝ տարբերվում են դրական փոփոխություններ, բացասական փոփոխություններ և փոխարինում. վերջինիս մեջ միավորվում են հնի կորուստը և նորի ստեղծումը. փոխարինումը հնչյունական փոփոխությունների մեջ բացառիկ տեղ է զբաղվում. 2) ըստ հնչյունական և իմաստային կողմի՝ զուտ հնչյունական փոփոխություններ, զուտ իմաստային փոփոխություններ և անալոգիա, որ ներկայացնում է իմաստային ասոցիացիաների հետևանքով տեղի ունեցող հնչյունական փոփոխություն: Հնչյունական օրենքների հարցում Պաուլը ելնում է այդ օրենքները բնական գիտությունների օրենքների հետ շփոթելու դեմ:

Չնայած լեզվի բնույթի հոգեբանական ըմբռնմանը՝ Պաուլը իմաստային փոփոխությունները խմբավորում է փաստորեն տրամաբանական հիմունքով. նա տարբերում է բառիմաստի փոփոխության հետևյալ տեսակները՝ 1) նեղացում, 2) լայնացում, 3) փոխարինում ըստ նմանության, ժամանակի ու տարածության առընթերություն և այլն, 4) այլ դեպքեր (վերջինիս մեջ տարբեր հեղինակների կողմից դրվում են վերաբերմունքի «լավացման» ու «վատացման», հիպերբոլայի ու լիտոտսյի դեպքերը և այլն): Սակայն քանի որ տրամաբանական սկզբունքը բավարար դուրս չի գալիս, Պաուլը դիմում է էթիկական և էսթետիկական սկզբունքներին<sup>1</sup>:

Որդեգրելով լեզվի զարգացման էվոլյուցիոն հայեցակետը՝ Պաուլը կարծում է, որ լեզվի ծագումը կարելի է բացատրել նույն սկզբունքներով, ինչ նրա զարգացումը: Պաուլի համոզմամբ այժմյան մարդու հոգեֆիզիկական առանձնահատկությունները առկա են եղել և լեզվի ծագման շրջանում, միայն թե հետագայում ավելի կատարելագործվել են: Լեզվաստեղծման պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնչյունների որոշ խմբի միացում մտապատկերների որոշ խմբի հետ, որ դառնում է այդ հնչյունների արտահայտած իմաստը: Որպեսզի այսպիսի միացման ակտերը շանհետանան, մնայուն բնույթ ստանան, իրոք լեզվի ծագման հիմք դառնան,

<sup>1</sup> Հմտ. В. А. Звегинцев, Семасология, М., 1957, էջ 11:



-հղմբոց զգլ մագղորամսիո՞ւմ յոհիողոհիո՞ւմ զժ վնմտի լիտ յ մագո-  
-տր վժոսպ մետղիտոցս զտնթխաղտիտսզստեանս բոհի զտնթխաղնսղ.  
վմզղտվմսնգատի զտիգեհս յ զտիտղտիո՞ւմ զժ յ տարմզր տղ ճոստ  
նվզլցրղ արգն վրնվլտրմսճ նզղ յ վրնվնվնս նզղ վմզղտրմթխանգչ  
-տմմոք վնմտի րսիմզ յ տրաղլզ թխատլ տրանմոց զտնթխամզմո՞  
-տչոյմսի վմզղտվմսնգատի զտիտղտիո՞ւմ զժ յ զտիտղտմբո՞ւմ

ւղտրմսղ զտիտղտմնիո վղվլ զտիտտտոտչ իսովեհնո յ արան  
-տեհն զվլտսստսր վղվլ զտմզմ ճոստ ՚ն ծտգեո նչ զղտնթխազոքմսե  
նղոմո ՚ղզ զմզղտրմնչ զվլտմստիզլճզս տանն զվթմզչ զվճոտտ  
ծղոմն ՚ղզղվլ զտիճոքմսե յ ծտգեո ոլտջոչ ողեոտղջոտտ մզմրոլ  
նմս վմզղտրմնչ նսնիզնրս զվմզտոզք մղտնթխամնտտր րսլզքնզս  
-ոմ նսճվր զտիտտՆր զտրնհիտնմսնոչ Նս նոմ ՚մրամնտիտտեող  
րսլզիեհիտնմսնոչ յ լզնզ ճզր զտնթխամնտտո նղսմս ՚մագղտրմնչ  
ղզ տրաղտվր զվմզղտրմսրմոՆ զվլտմստիզլճզս տրտիղլ մզիտմն զրմթ  
-րմնեոՆրս լզնզղտս զզ հտտտեող ծղսմս ՚տզչ վմզտոզք զվլտմստ  
-իզլճզս յ տրտտի մնատլ մրտեոք վթխաղժ մվնտիտտեող զտր  
-նմսնոչ տզչ նղտրմր տրաղտր զզ ճզր վեոհի մագղտտչղտ տեո  
՚չ լզիեհիտնոչ իսմս ՚հտղտրտքոլտր տզչ զտնթխամսիտեո զտիտն  
-տեհն զնո նվրնսի վմզղտտչղտ Նվմսն յ տրմիտիղժ Պղտրմնչ զվլոմ  
-ստիզլճզս ժմզ ՚ղվճ մզղոժզլճզս զտմր մագղտրմնչ զտիտղտմնիո  
նս մժվթմտի զնո վլտթղտտոՉ յ տրաննզնմս մնատլ մնողտտո  
ծրտջոչ վնտոոլ նվղտնթխաղտրմսե վմզիմզղ (զվլտսստսր) Նվթ  
-մոՆ մտրոչ րսլզղտոտտո ողտրմնչ լտղզրսր մսղ վր յ տրնչոտ  
-տտր տրանմոց զտրեոք վիեզլ մնատլ մտղտտո թխաղժ զտիտղտ  
ղզ նսմտի մագեոտի նոտ տեոտ ՚տզչ վմզղտտոտրվ զրտղղվր զզ տրմի  
-եոտի մագղտրմնչ զրտղղվր ժրտնթխազմսնմզղ վտտջտտեո զրտղղվր  
տսր վմզղտտչղտ մզժմտտ գթղ վիեզնգտոՆ (իտեմղի զտտղտեո)  
ղզմսղտմզմտո նվրնսի վմզղտտչղտ զվճղտտո գթղ ՚(լլոնսն)  
զտիտմսիտո լողտտն ճզր վիեզլ նսմտի վՆ ՆղվՆս մղտնթխաիտոզս  
-տվր վմզղտիտջվիգեհս վտտչղտ րսիմզ յ զվմզտոզք տրաղնտիտոչ յ  
բզն զզր մնատլ ճզր տմո տրմս նղժ ՚տրանտվր զտիտնթխաղտ զտի  
-ղտ յ վլտիմտտո տրաղզղտս յ վնզտ ճզր վտիտ զտիտղտմնիոտոլող  
ղտրեոք վիեզլ ՚նվրնսի վմզղտտչղտ Նվմսն մրտնեոտտմզի յ  
մրտնեոտոչ վտժ (Չ ՚իսրս վմզեոտի իվտտվնտո զոնողտիտղտ  
ժրտնթխաղեո վմզղտրմնչ լզմնտտմոմզի (մտոտրվ) ժրտնեոմզի  
-տտեո վղվլի մսթմոտղչ իվճմսղՆ վմս մղտնթխազմսնմզղ զտիգեհս  
դտտմոտիմզ վմզղտրմտոլտ վովեհնո (լ ՚ղտժ րսիմզ յ մսիտիմտ:



ղանակը՝ քերականական կատեգորիաների հիմքում հոգեբանական կատեգորիաներ դնելը. այսպես, քերականական ենթական և ստորոգյալը համարվում են հոգեբանական ենթակայի և ստորոգյալի լեզվական արտահայտություններ:

Ենելով հիշված սկզբունքներից՝ Պաուլը քննադատում է Շտայնթալ-Հացարուսի ժողովրդական հոգեբանությունից ըմբռնումը՝ մի կողմից և Վունդտի որոշ հայացքները՝ մյուս կողմից:

Ըստ Պաուլի՝ Հացարուսը և Շտայնթալը քննում են անհատի և հասարակության կապի մի տեսակը միայն՝ հոգեկան կապը, այսինքն՝ այն, որ անհատի մոտ ծագում են այնպիսի մտապատկերներ, որոնց նա չէր հասնի կամ խիստ դանդաղ կհասներ, եթե դրանք չնախապատրաստվեին: Պաուլը սրան միացնում է կապի մի այլ կողմը՝ ֆիզիկական կապը, որ դրսևորվում է 3 ձևով. 1) անհատը կատարում է այնպիսի շարժումներ, որոնց կատարմանն առանց ընդօրինակելու կամ չէր հասնի, կամ խիստ դանդաղ կհասներ, 2) սերունդների և մարդկանց միջև կատարվում է գործիքներ ստեղծելու և դրանցից օգտվելու փորձի փոխանակում, 3) մարդիկ ֆիզիկական ձգտում են զգում միմյանց նկատմամբ. հոգիների փոխազդեցությունը հնարավոր է միայն անուղղակի ձևով՝ ֆիզիկականի միջոցով:

Պաուլը քննադատում է նաև Հացարուս-Շտայնթալի ժողովուրդների հոգեբանության (Völkerpsychologie) ըմբռնումը: Այդ ըմբռնումը տատանվում է 2 կողմի միջև՝ 1) հասարակության հոգեկան կյանքի ընդհանուր պայմանները և 2) ազգային առանձնահատկությունները: Պաուլի կարծիքով՝ ժողովուրդների հոգեբանությունը չի կարելի հակադրել անհատների հոգեբանությանը, եթե նկատի առնենք, որ հերբարտյան առումով հոգեբանությունը մտապատկերների հարաբերություն է:

Վունդտի պաուլյան քննադատությունը ամենից առաջ ուղղված է այն բանի դեմ, որ Վունդտը, ինչպես կտեսնենք, անհատների հարաբերությունները պոստուլավորում է և դիտում որպես անհատներից վեր գտնվող կուլտուրական հարաբերությունների հիմք: Այս կապակցությամբ Պաուլը բողոքում է և «ժողովրդի հոգի» (Volksseele) մետաֆիզիկական ըմբռնման դեմ: Պաուլի կարծիքով՝ Վունդտը խոսողին քննում է միակողմանիորեն, մինչդեռ խոսողները լուկ լեզվական գործունեության կրողներն են և պետք է քննվեն որպես այդպիսին:

-գոյծղցմօ զտիտղսա՛ն՛նչս քասիդասնցմ զգ ժրվչս զտրմզմմտս վմզսմզ՛ն  
 ասիմզ նհլլ ւմզսմզ՛ն լոտստոմփսի դ հվ՛ղճ զգ քասղնտղզղտստ իսեմզհ  
 քվե՛տննրս ձգքր վմտ՛նտեոտստմ հոմվ ՛մղսն՛ըսմսնիտմտոնչս զտն՛ըսստոմ  
 -սփ (վմզղ՛նվրե՛տի զտիտղտճտղջ) վմզմմտս վճճտի՛նրսստի զտիտղ  
 -տիտմզճ վի՛նզլ զգ քաստոմք մմզղզտիտմզճտվմզ :քասղսճքմ զտի  
 -տստոմլոտսնվիվննղվ դ զտիտստոմիվտիզմճսո վոզնամե զտիտրտտե  
 քրսմզճ զգ ոզննո՛ւս մմզղզտիտմզճտվմզ Վմզնմո՛ւս զտն՛ըսսղճ  
 հվտտստո իսզղտո նսթոճ՛նտ ՛ձղտիտրտտե իսզմտրո՛ւս մտզի  
 -տնզո՛ւս զտիտսվե հտվր վի՛նզլ ՛ճրտո՛ըսսղտիտրտտե վղտրնսհ  
 -տվր զտրղսճքմ վի՛նզլ իսլտե ոզննո՛ւս ՛տվրնա՛նա՛նի՛ն զտիտղո՛ւսվս  
 -րտ ողեմս ՛ժմտ՛ն վմզղզղսն՛ըստվսփսփ ստիղղտ ողեմս զգ քաստվն  
 ժղտմղ մոզնամե զտիտի՛նզլ ՛տզս զտրղսճքմ զտիտստոմզսվնրսն  
 -սի՛ն վոզնամե զտիտի՛նզլ ք քրսի՛նղստ մմտփո՛նտե ասզի՛նղտոմփ  
 նղրսմզո նվննցո զգմստո՛ւսննղղտ վի՛նզլ ՛զտն՛ըսսղտիտտո՛ւսննղղտ  
 դտիտի՛նզլ ՛մմզղճղսմճեհո զտն՛ըսստոմփսի դ զտն՛ըսսղտիտտո՛ւսննղ  
 -ղս զտիտի՛նզլ ոմլտե զգ ոզննո՛ւս սսր վմզղզտիտմզճտվմզ ճոմի  
 -եոտի տզս նղտմղ դ զվոտմր տզս վմզղճղսմճեհո մսիտոմնե զտիտե  
 -սթզղ ՛ձգքր վոտվե՛նտղտ մղտիտղոճզեաս ՛ձգքր վմզղճղցմօ զտիտղ  
 -րսն՛նչս նա՛նտղո՛ւս զրսն՛ըսստեոճ ք քրսի՛մսղոմն մրնսհ զտիտվն  
 -սնսվե՛վճ-զտիտի՛վե՛վճ ՛նղտմղ տոմ ՛ձգքր վմզղճղսմճեհո մսիտոմնե  
 զտիտե՛նսթզքր վմզղզտիտմզճտվմզ ք քրսի՛մսղոմն մղրսն՛ըսսղտո՛ն  
 -հմզ ո՛նտ զտրղզճ վի՛նզլ ՛մրե՛վե՛նսնտոմո՛նտ իվտոմնստո ճոտղո՛րտն  
 վտո՛ըղո՛նտղ զգ քրսմնզնմս ՛նվրնսհ որսնր ՛իսղջ վստճ զտիտղոճ  
 -տեղղճ զտն՛մզոմլո՛ն ՛նզտվն զգ քրսիտղրսմտ՛ն մքրսնտե՛նտե վի՛նզլ դ  
 ՛ղրսն՛ըստվե նսի՛նմսղճոտո իսմզղղրսն՛ըստփտ՛նտղվմօ տոմոմ զտրղ  
 վմզղղրսն՛ըստվե զտիտղճ իզղջմտե ք վլզմտի մղրսն՛ըսսղտճտի՛նզլ  
 մս ՛ղջ քրսճմտի ՛նվրնսհ վր ՛մմզղզտիտմզճտվմզ տզս զտրղսճ  
 -քմ զտիտղոճզեաս մքրսղսճքմ զտիտվե՛նսնսվճ-զտիտստոմլոմստոճ  
 ճոտի՛մո՛ւսթլնո՛ւս զվի՛րսվլ ողրսզն վոզնամե զտիտի՛նզլ ք քրսի՛նմսն  
 -րսն ձգքր վոտվե՛նտզնղսի զտիտղոճտի՛նզլ նղտմղ ՛իսոմիտո՛նտ ՛մմզղ  
 -ղսճքմսն զտիզե՛սս դ զտիտվե՛նսնսվե՛վճ-զտիտի՛վե՛վճ իսզղն քրսճրվչ  
 նղտմն ՛նվմզճմվն վմզղղրսն՛ըստվսփսփ զտիտտո՛ւսնղտ զգ քրսղճ  
 ժղտմղ մոզնամե զտիտի՛նզլ տզս վմզղճղսմճեհո զտիտոզս զտիտո  
 -տճտի՛նզլ նղտմղ ՛վոտվե՛նտզնղսի մրսղտո՛ւսննղ նղտմղ զգ ճոտիտո՛  
 զգմստմզո զտվե՛նտղտ դ մճղցմօ զտիտղրսն՛նչս ՛մմզղճղսմճեհո  
 մսիտոմնե զտիտե՛նսթզքր վմզղզտիտմզճտվմզ ՛մլոնրտզս իզնղ ք  
 վլզմտի տեոտ ՛մմզղճղսմճեհո վմզղզտիտմզճտվմզ ժղզղվլ րսզտո՛ւս  
 -տզե դ րսզփսփրտ զթլզ — րզղղրսն՛մրսնտիտա՛նզ րսղտոմննլլ

րը. քստ նրանց՝ ինչ որ բնիկ չէ, փոխառյալ է: Տարվելով հնչյունապատկերային և ձևաբանական հարցերի մանրակրկիտ քննութեամբ՝ երիտօրէնականները, մի կողմից՝ մոռանում են լեզվի ամբողջականութիւնը և հանգում ատոմիզմի, մյուս կողմից՝ լեզվի պատմութիւնը կտրում նրանով խոսող ժողովրդի պատմութիւնից և հանդես բերում ֆորմալիզմ<sup>1</sup>: Այն հանգամանքը, որ երիտօրէնականները ուշադրութեամբ կենտրոնացնում են հավաքման ու նկարագրութեան վրա՝ աչքաթող անելով բացատրութիւնն ու պատճառաբանումը, վկայում է նրանց ազնոստիցիզմի մասին: Այս առումով երիտօրէնականների պրակտիկան ներկայացնում է պոզիտիվիստական փիլիսոփայութեան դրույթների դրսևորումը:

Իրենց բոլոր բացասական կողմերով հանդերձ՝ երիտօրէնականները հանդես են բերում որոշակի արժանիքներ. 1) նրանք հաղթահարում են լեզվի նատուրալիստական-բիոլոգիական ըմբռնման հետ կապված պատկերացումը լեզվի ծաղկման ու մահացման, լեզվական ձևերի կազմակերպման ու քայքայման շրջանների գոյութեան վերաբերյալ, հանդես բերում լեզվական պրոցեսի պատմական ըմբռնում: 2) հանդես են գալիս կենդանի լեզուների ուսումնասիրութեանը առաջնութիւն տալու, կենդանի լեզուների վրա կատարված դիտողութիւնների կարևորութեան, խոսակցական լեզուն գրավորից տարբերելու և ուշադրութեան կենտրոնում պահելու պահանջներով, թեև շեն կարողանում այդ պահանջները հետևողականորեն իրականացնել: 3) լեզվի պատմական քննութեան մեջ ելնում են խիստ օրինաչափականութեան սկզբունքից, որ կարևոր քայլ էր լեզվաբանութեան՝ որպէս գիտութեան ձևավորվելու ճանապարհին: 4) աչքի ընկնող նվաճումների են հասնում լեզվի հնչյունական կողմի ուսումնասիրութեան մեջ. սրա հետ է կապված հնչյունաբանութեան գիտական հիմունքների մշակումը և փորձառական հնչյունաբանութեան ստեղծումը: 5) մեծ դեր են խաղում բարբառագիտութեան՝ որպէս լեզվաբանական կարևոր դիսցիպլինի ձևավորման մեջ և հիմքեր ստեղծում լեզվաբանական աշխարհագրութեան (բարբառագրութեան) զարգացման համար: 6) հնչյունական օրենքները դիտում են որպէս մարդու կամքից ու գիտակցութեանից անկախ, օբյեկտիվ լեզվական օրենքներ. ճիշտ է,

<sup>1</sup> «Ֆորմալիզմ» բառն այստեղ օգտագործվում է որպէս հակադրութեան կոլտուր-իստորիզմին և ոչ թե որպէս հակադրութեան լոգիցիզմին, ինչպէս այն հանդես է գալիս Ֆորտունատովի մոտ. վերջին դեպքում այն առաջագիմական հիմքեր ունի:

այս բանին նրանք հասնում են բնական գիտութիւնները պէս ճշգրիտ գիտութիւն ստեղծելու որոնումների մեջ, բայց այսուհանդերձ հանդես են բերում լեզվի հնչյունական զարգացման պրոցեսի տարերային մատերիալիստական բմբռնում:

## 6) Երիտքերականների թեճագատները

Ներածական գիտողութիւններ.— Ինչպես նշել ենք, մինչև 1890-ական թվականները կատարվում են երիտքերականների գրեթե բոլոր կարևորագույն հայտնագործութիւնները, և ձևակերպվում բոլոր հիմնական գրույթները: Այդ թվականներից սկսած՝ աստիճանաբար սկսում են ավելի բարձր հնչել երիտքերականների նկատմամբ քննադատաբար տրամադրված և դիսիդինտական հոսանքների ներկայացուցիչների ձայները, հոսանքներ, որոնք, կարելի է ասել, XX դարում տիրապետող են դառնում: Սակայն երիտքերականների քննադատների նշանակալից մասը իր գործունեութիւնն սկսել է XIX դարի 90-ական թվականներից առաջ, շատ բանով XIX դ. լեզվաբանութիւնի շառավիղն է և նույնիսկ որոշ դեպքերում կանխել է երիտքերականների այս կամ այն սկզբունքը: Երիտքերականների քննադատութեամբ հանդես են գալիս լեզվաբանական երկու տարբեր սերունդներ. դրանցից մեկը միավորում է երիտքերականներին նախորդող սերնդի ներկայացուցիչներին (Գ. Կուրցիոս և ուրիշներ), որոնք հանդես են գալիս հին սկզբունքների պաշտպանութեամբ, փորձում են ցույց տալ, որ երիտքերականները որևէ սկզբունքային նորութիւն չեն բերում. մյուս սերունդը (Չ. Շուխարդտ և ուրիշներ) ժամանակակից է երիտքերականներին և իր քննադատութեամբ հիմքեր է ստեղծում XX դ. լեզվաբանութիւնի զարգացման համար:

Պատմա-համեմատական լեզվաբանութիւն XIX դ. գրեթե բոլոր ներկայացուցիչները շարունակում էին նյութը սիստեմավորել նախորդ շրջանում մշակված ձևով: Սակայն այդ սիստեմավորման եղանակները ձևավորվել էին այս կամ այն կոնկրետ լեզվի, առանձնապէս հունարենի և լատիներենի որը շրջանի առանձնահատկութիւնների հիման վրա, և պատմա-համեմատական նյութը անհրաժեշտ չափով չէր տեղավորվում սիստեմավորման տրագիցիոն սխեմաների ու տերմինների մեջ: Սրան միանում էր և այն, որ ստատիկ ուսումնասիրութեան մեթոդները մնալով նախկինը՝ նույն հաջողութեամբ չէին կիրառվում այնպիսի լեզուների

նկատմամբ, որոնց քերականական կառուցվածքը մեծ չափով տարբերվում էր հունարենի և լատիներենի կառուցվածքից. այդպիսի լեզուներ էին ինչպես եվրոպական նոր լեզուները, ույնպես էլ բազմաթիվ գաղութաբնակների լեզուները: Անհրաժեշտություն է զգացվում մշակել նյութի սիստեմավորման և ստատիկ ուսումնասիրության այնպիսի մեթոդներ, որոնք կիրառելի լինեն ամենաբազմազան կառուցվածքի լեզուների նկատմամբ, ճշգրիտ նկարագրության ավելի լայն հնարավորություններ ստեղծեն և ավելի ռացիոնալ բնույթ ունենան: Այսպիսով ուժեղանում է քննադատական վերաբերմունքը երիտքերականների կիրառած տրագիցիոն մեթոդների նկատմամբ, և հանդես են գալիս սիստեմավորման նոր փորձեր ու նոր սկզբունքների որոնումներ:

Երիտքերականների գրեթե ողջ ուշադրությունը միակողմանիորեն կենտրոնացվել էր պատմա-համեմատական հետազոտության վրա. ստատիկ ուսումնասիրության հարցերը բավարար ուշադրության չէին արժանանում: Այս շրջանում սկսում է որոշ քննադատական վերաբերմունք հանդես գալ երիտքերականների միակողմանի պատմականության նկատմամբ, պահանջ է առաջանում լրջորեն դբադվելու ստատիկ վերլուծության հարցերով, պարզելու պատմական և ստատիկ հետազոտության փոխհարաբերությունը: Այս պահանջը զրվում է հատկապես Բողուն-դե-Կուրտենեի ու նրա հետևորդների, մասամբ և Ֆ. Ֆ. Ֆորտունատովի և նրա հետևորդների կողմից: Հասկանալի է, որ այս քննադատության մեջ շատերը պետք է հասնեին միակողմանիության և ֆետիշացնեին ստատիկ հետազոտությունը. այս բանը նկատվում է հատկապես հաջորդ շրջանում:

Խորանալով փաստական նյութի ուսումնասիրության մեջ՝ երիտքերականները, մի կողմից՝ տարվում էին մանրուքներով, դառնում մանրախնդիր ու փաստամոլ, ավելի ու ավելի քիչ դիմում ընդհանրացումների, մյուս կողմից՝ մանրատելով նյութը՝ հաճախ մոռանում էին ամբողջի մասին: Երիտքերականների այս ատոմիզմը բնականաբար առաջ է բերում քննադատական վերաբերմունք. պայքար է տարվում, մի կողմից՝ նրանց պոզիտիվիստական փաստամոլության, մյուս կողմից՝ նրանց մանրախնդրության ու ատոմիզմի դեմ: Սակայն այս դեպքում էլ զործն առանց ծալրահեզուլությունների չի անցնում. երիտքերականների տարերային մատերիալիստական որոշ դրույթները ոմանք փորձում են

յիովին դուրս մղել և պողիտիվիզմի դեմ տարվող պայքարի անվան տակ ներս են քաշում սուբյեկտիվ իդեալիզմը:

Երիտքերականների տարվելը հնչյունական օրենքներով և «մաքուր» նյութի վերուծութեամբ՝ հաճախ նրանց հասցնում է ինքնանպատակ որոնումների: Այս պատճառով էլ ոմանք հանդես են գալիս երիտքերականների քննադատութեամբ, պահանջում անհրաժեշտ չափով աղերսել լեզվական հետազոտությունը պատմական տվյալների հետ, շմոռանալ բառերի և իրերի կապը: Հընչյունական օրենքների հարցի շուրջը, մինչև 1885 թ. ներառյալ, հանդես են գալիս Տորբերը (1879 թ.), Միստելին (1880 թ.), Կրուշևսկին (1883 թ.), Մ. Բլումֆիլդը (1884 թ.), Ֆ. Մյուլլերը (1884 թ.) և Գ. Կուրցիոսն ու Հ. Շուխարդտը (1885 թ.): Առանձնապես սուր բնույթ էին կրում Կուրցիոսի և Շուխարդտի ելույթները, որտեղ նրանք քննադատության էին ենթարկում հնչյունական օրենքի երիտքերականական ըմբռնման գրեթե բոլոր կողմերը: Ի պատասխան սրանց՝ հանդես են գալիս նույն 1885 թ. Բրուգմանը («Լեզվաբանութեան այժմյան վիճակի շուրջը») և Դելբրյուկե («Նորագույն լեզվաբանությունը»): Այսպիսով՝ 1885 թ. հնչյունական օրենքի շուրջը տարվող պայքարի գագաթնակետն էր: 1885 թ. հետո XIX դ. այս հարցի շուրջը հանդես են գալիս Եսպերսենը, Թ. Լյովեն, Ա. Լուդվիգը, Ա. Վալենսկյուդը: Հնչյունական օրենքի հարցի շուրջը դրական կերպով արտահայտվում են նաև Վ. Վունդտը և է. Վեքսլերը<sup>1</sup>: Հարցը ուշադրություն է գրավել և XX դարում:

Երիտքերականների որոշ սկզբունքների կիրառումով կատարված ուսումնասիրությունները առանձին դեպքերում հասցնում են այնպիսի արդյունքների, որոնք վերջի վերջը հակասութեան մեջ են ընկնում այդ իսկ սկզբունքների հետ: Այդ զգացվում է առանձնապես բարբառների ուսումնասիրութեան բնագավառում, որտեղ կատարված մանրամասն հետազոտությունները հանգեցնում են միանգամայն նոր եզրակացությունների, հիմք տալիս նոր մեթոդների համար և հասցնում երիտքերականների լեզվաբանական սկզբունքների վերանայման պահանջին:

Երիտքերականների տարվելը հնչյունական օրենքների հաստատումով խիստ հետին պլանն էր մղել և նույնիսկ հետադր-

<sup>1</sup> W. Wundt. Über den Begriff des Gesetzes mit Rücksicht auf die Frage der Ausnahmslosigkeit der Lautgesetze, 1886. E. Wechsler. Gibt es Lautgesetze?, 1900.



-եզլ ղ ղտոնթրաստոնտոզոթ վմզոթոզսմնեհո ղտհոտղտհոմզթտվմզ  
 յլզոտմտտոցտտոտ ղ ղզստոնոմ  
 ղլոտ 'Ղզմսիտրզտոլո ղս ղզթոիտոյ ղլոմլր ղս ղզ ղրսզմսսի թղտմո  
 ղվրնսսի վմզոզոտմոիեզլ թմոՆ վր վղոձմՆ ոնո նղզոյ ղրսիիմոթղզո ք  
 ղտոնթրաստոնտոզոթ մս 'թղտրտեղտոյ վր 'մղտոնթրասղտմողիզր ղտհոտս  
 -տոցտտոտ ղս ղղտոնթրաստոնոմ վմզոզոնրսղմզ ղտհոտիեզլ ղրսրվե նզղ  
 ղթզմե մմզոզոտհոմզթտվմզ մս 'ղլոտ ղ ք մսղմտի ղոգեոձմզի

Վթրսնղ նսղոմոտոսլ ոգեմս ղլոմլր ղսլզրվե ղվմ  
 -զղլոմիոս ղտոնթրասղտմոտեմղնղոյ ղիսմզնմոյ ղտհոտղտմոիեզլ մսոջ  
 -տոյնղմ ոգեոնղոնեոմզե ղզ ղրսիեոմե նմզոզոտմոիեզլ նսիմզմտո  
 նվնղոմղ 'զոիմնեոլոմս մոմոտոնեոզոթ թրոտոտիղ վմզոզոտհոմ  
 -զթտվմզ սզնՆղվր 'նվմզոզմվնղոլ ղտհոտձվրղտ նղզմվ ղսլզոլզ ղոչ  
 ղրսսիեոնՆ մմզնմոյ ղտհոտղտմոիեզլ մսոջտոյնղմ թղսմս 'ղզ մզոզվմ  
 -սնոտոհմզղ ղտոնթրասղտմոտեմղնղոյ ոգեոնղոնեոմզե մմզոզոտհոմ  
 -զթտվմզ մս 'մստոտի ղլոտ ղզմոտոյ ք թսզե ղտհոտղոտիտոչ

Ղզվրնսսի ղվլոտոտոլ  
 'ղզմզոզ վմզոզոնրսղմզ ղտհոտիեզլ ղրսիեոտոյ ք ղրսնթրասնեոնս  
 ղզր վլզիոտ մս 'ղզղոմ ղլոտ ք ղրսղնզեղտոյ ղն ոո 'ղզղսզմսե ղտի  
 -տղոմթզնսոյ ոլլոտ մզն ղզր վլզիոտ ղ ղզվրնվենսսվնվթսոլվոտ վմզոզ  
 -ղտհոտմզթտվմզ ղզ ղրսիմնտիտոյ մզղՆվնրսնոտհմզղ ղսմս վրեվե  
 -սսսվլոտ նսսմմզ 'քրսղոձմՆ նսսձոյ քրսղտոտ ղզ ղոիոթ ղլո  
 թղսմս 'վմզզմսսի ղտրսոնոյտնոմ վեոտի վմզոզոմսեզտոտի ղտհոտջ  
 -ոմոլոլոմս ղս ղտհոտղտհոմզթ 'ղտրոնղոմզի վթրսմն նոտ քրսմե  
 -ոձոտո ձղտոտո ղ ղրսնթրասնեոլոմս քրսմզմ ք ձոտո մքրսմնտիտոյ  
 հոջմոնոմ վմզոզոմսեզտոտի ղտհոտղտմոլոմս ղ ղտհոտղտհոմզթ  
 նվրնսսի վմզոզոնրսնոտհմզղ վմզոզոտհոմզթտվմզ ղսսմիմզ 'մմզթ  
 -մվն ղտոնթրասղտմզթտվմզ ք ղրսոլմոլ մս 'թղտրտեղտոյ վր 'իս  
 -ոմնիղսոճ մվ ղոտի ձզր վմզոզ մվ ղլոմլր ղսլզոզոթ ղրսնզլ ղրսիտոտիզ  
 ք ղրստեզ 'սոզ վրեվլոտղսվնիղսոճ ղ վրեվլոտքմսոճ ք ղրսիմսեոսն  
 սսր նղոքս մրեվնսսոլվոտ ղլոտ ղլոտո 'մրեվնսսոլվոտ ղզղվ  
 նստգեոտմվո ողսզն ք ղրսիտղրսմոՆ սսր վմզոզոտղվնզոյ տոՆ ղոիմն  
 -տրոմս մոմոտոնեոզոթ թրոտոտիղ վմզոզոտհոմզթտվմզ 'քրսոյ  
 -ոձմՆ նսսձոյ ոգեոտիտոյ ք ղրսիոտիոթ 'ղլոտո 'մղրսնթրսզղսզ  
 -ոնս վմս 'ղզլոմվչ 'չ ղզիտոտՆվոյ ք թսզե ղզթղմզ ղվձոտո նզտոլղ  
 տիմոտո ղտրիմոտղոթ ղլոտ ղսլզոզմոն թղոմն ղմզնմոյ վեմոտի  
 նոտ ղզՆոթ ձոտո ղզիմի ղզ ղրսոտիո («մմզոզոտհոմզթտվմզ վղոձմՆ  
 ղս») մմզոզոնրսնոտհմզղ ղտոնթրասնեոտոց ղտհոտտրզրոտոյ-տր  
 -տոտ նմզնմոյ ղտրեոթ վմզոզ ղտհոտղտհոմզթ ղզղտոյ նվղրսնթրս

վաբանական ուսումնասիրութեան նոր ուղիների որոնման հետ կապված՝ որոշ լեզվաբաններ, շկարողանալով հաղթահարել երիտքերականների թերութիւնները, հանդես են բերում ակնհայտ կկեկախիզմ, ղուգորդում երիտքերականների որոշ սկզբունքները գրանց անհարիր գրութիւնների հետ:

Բարբառագիտական հարցերի մշակման հետ կապված՝ սկսում են գծադրվել բարբառագրութեան կամ լեզվաբանական աշխարհագրութեան հիմքերը, որը որպէս դիսցիպլին ձևավորվում է հատկապէս XX դ.՝ զգալի փոփոխութիւններ մտցնելով բարբառների փոխհարաբերութեան ու լեզունների ցեղակցութեան հարցերի ըմբռնման մեջ: Այս դիսցիպլինը սերտորեն կապվում է XIX դ. երկրորդ կեսում տարածված սուբստրատի տեսութեան և 1872 թ. առաջ քաշված «ալիքների տեսութեան» հետ:

Ավելորդ չենք համարում նշել, որ «կրիտիցիզմ» անվան տակ մենք միավորում ենք այն լեզվաբանական կոնցեպցիաները, որոնք կարևոր են հենց իրենց քննադատական էութեամբ. մյուս լեզվաբանական կոնցեպցիաները մենք քննում ենք առանձին, թէև նրանց մեջ ևս առկա են ուղղափառ երիտքերականութեան քննադատութեան բազմաթիւ փաստեր:

Գ. Կուրցիոս. — Իր «Նորագույն լեզվաբանութեան քննադատութեան շուրջը» գործում (1880) հանդես գալով երիտքերականների դեմ՝ Կուրցիոսը ամենից առաջ փորձում է ցույց տալ անալոգիայի գաղափարի հնութիւնը: Միաժամանակ նա նշում է, որ անալոգիան ամենուրեք հնարավոր է, բայց ոչ մի տեղ անհրաժեշտ չէ. կան բազմաթիւ դեպքեր, երբ միևնույն պայմաններում այն չի գործում. կան անալոգիային հակառակ տենդենցներ, որոնք և չեն թողնում նրան գործելու: Անալոգիան նման է հիվանդութեան. հետևաբար, նախ հարկաւոր է ուսումնասիրել «առողջ» դեպքերը, ապա՝ «հիվանդ» (անալոգիական) ձևերը: Ըստ Կուրցիոսի՝ անալոգիան ամբողջովին հոգեբանական երևութի համարելը ճիշտ չէ: Հոգեկան գործոնը հանդես է գալիս ձևերի անփոփոխ մնալու մեջ. վերջինս կապված լինելով հիշողութեան (=հոգեկան երևութի) հետ՝ հենց հոգեբանական բնութի ունի: Անալոգիան երիտքերականները համարում են հոգեկան անգիտակից իմպուլսի արդյունք, բայց կիրառելով բոլոր դեպքերի նկատմամբ՝ այն փաստորեն դարձնում են գիտակցական գործոն: Կուրցիոսը նշում է այնպիսի դեպքեր, որոնք չեն կարող բացատրվել ո՛չ հրնշլոնական օրենքներով, ո՛չ էլ անալոգիայով՝ հապլոլոգիան,

հատուկ անունների՝ որպես կոչական գործածվելիս համառոտվելը, հնչյունների կրկնավորումը և այլն, վերջապես՝ կուրցիոսը նշում է, որ երիտքերականները, ձգտելով հաստատել բնական գիտությունների օրենքների նման օրենքներ, այդ բանը կիրառում են միայն հնչյունաբանության նկատմամբ:

Տր. Միսսելի, Լ. Տորլեք—Միստելին, որ ընդհանրապես համակրում է երիտքերականներին, նույնպես նշում է, որ՝ 1) անալոգիական կազմություններն արդյունք են պահպանողական և բարձրացող գործոնների կոնֆլիկտի, ընդ որում արդյունքը հարավոր չէ կանխատեսել: 2) անալոգիական = հոգեբանական դրույթը ճիշտ չէ: վերջին հանգամանքը, ինչպես կտեսնենք, նշում է և Ասկոլին:

Երիտքերականների և նրանց հակառակորդների վեճին խառնրվում են փիլիսոփաները: Լ. Տորլեքը երիտքերականների նշած հնչյունական օրենքները արմատապես տարբերում է բնական (ֆիզիկական և քիմիական) օրենքներից<sup>1</sup>. Ըստ նրա՝ հնչյունական օրենքները լուրջ որոշ փոփոխությունների արձանագրումներ են, որոնք գաղափար չեն տալիս փոփոխությունների ո՛չ պատճառների, ո՛չ էլ բնույթի մասին:

Գ. Ի. Ասկոլի.—Իտալացի նշանավոր լեզվաբան Գ. Ի. Ասկոլին, ինչպես տեսանք, կարևոր դեր է խաղացել հնդևրոպական հնչյունական կառուցվածքի ըմբռնման ճշտման և երիտքերականների հնչյունական օրենքի սկզբունքի ձևավորման մեջ: Սակայն նա հեռու է եղել երիտքերականների դոգմատիկ ըմբռնումներից և մի շարք հարցերում լիովին շեղվել է նրանցից ու քննադատել նրանց հայացքները: Իր վերաբերմունքը երիտքերականների նկատմամբ Ասկոլին արտահայտել է իր «Լեզվաբանական նամակներում»<sup>2</sup>:

Հենվելով ումանական լեզուների պատմության տվյալների ուսումնասիրության վրա՝ Ասկոլին հանգում է երիտքերականներից տարբեր եզրակացությունների: Ամենից առաջ Ասկոլին լեզուն

<sup>1</sup> Vierteljahrsschrift für wissenschaftliche Philosophie, III, 1879.

<sup>2</sup> G. I. Ascoli, Prima lettera glottologica, „Rivista di filologia e d'istruzione classica“, X, 1882. Due recenti lettere glottologiche, „Archivio glottologico italiano“, X, 1886—1888. Սրանցից երկրորդը կրում է „Dei neogrammatici“ (Երիտքերականների մասին) վերնագիրը և նպատակ ունի արտահայտել հեղինակի վերաբերմունքը դեպի երիտքերականները: Ասկոլիի նամակները թարգմանվել և հրատարակվել են գերմաներեն՝ G. I. Ascoli. Sprachwissenschaftliche Briefe, Leipzig, 1887:

ու նրա պատմությունը անհրաժեշտ է համարում կապել ժողովրդի ու նրա կուլտուրայի պատմության հետ, թեև շի կարողանում թափանցել հասարակության զարգացման օրինաչափությունների մեջ և շարունակում է տուրք տալ լեզվի ինդիվիդուալիստական ըմբռնմանը: Ռոմանական լեզուների ծագումը նա հնարավոր է համարում բացատրել այդ լեզուներով խոսող ժողովուրդների ծագման պայմաններով և սրա հետ կապված՝ հանգում է սուբստրատի տեսությանը, առաջ քաշում էթնիկական գործոնի կարևորության գաղափարը: էթնիկական կամ սուբստրատի տեսության սաղմերը Ասկոլիի մոտ հանդես են եկել դեռևս 1854 թ., երբ նա նշել է էթնիկական խառնուրդի կարևորությունը լեզվական փոփոխությունների մեջ: Իր «Լեզվաբանական նամակներում» նա այս տեսությունը հետագա մշակման է ենթարկում և կատարում առաջին կոնկրետ փորձը ռոմանական որոշ կարգի հնչյունական փոփոխություններ այլալեզու սուբստրատի ազդեցությամբ բացատրելու ուղղությամբ. այսպես լատինական « Ֆրանսերենում, Այուսիսային իտալերենում և ռետոռոմաներենում y-ի (ü) փոխվելը նա բացատրում է կելտական սուբստրատի ազդեցությամբ, լատինական f-ի՝ իսպաներենում և Գասկոնի շրջանում h-ի փոխվելը՝ իբերական ազդեցությամբ և այլն:

Հարձակվելով երիտքերականների դեմ ավելի շուտ հին լեզվաբանների սերնդի դիրքերից՝ Ասկոլին ելնում էր ռոմանական կենդանի բարբառների իր լավ իմացումից և էթնիկական գործոնի կարևորության իր ըմբռնումից: Ասկոլին մեղադրում է երիտքերականներին անալոգիայի շուրջը բարձրացրած աղմուկի համար, այն զեպում, երբ, ըստ նրա, այդ սկզբունքը առաջ էլ լեզվաբանական երևույթների բացատրության նկատմամբ կիրառվել է (թեև շի խոսվել նրա մասին որպես հոգեբանական գործոնի. անալոգիական==հոգեբանական դրույթը Ասկոլին ևս մերժում է). դեռևս Դիցը տարբերում էր պատմական և անալոգիական փոփոխություններ: Խոսելով երիտքերականների երկրորդ սկզբունքի՝ հընչյունական օրենքների մասին՝ Ասկոլին նշում է, որ միևնույն հընչյունը տարբեր պայմանների առկայության դեպքում կարող է փոխվել տարբեր հնչյունների, ընդ որում կարևոր է համարում փոփոխությունների պատճառների մեկնաբանությունը: Ըստ նրա՝ միևնույն հնչյունական փոփոխությունը կարող է տեղի ունենալ

<sup>1</sup> Հմտ. I. Jordan, An Introduction to Romance Linguistics, London, 1937, էջ 29, ծան.:

տարբեր լեզուներում և այն էլ հաճախ ամենաբազմազան պատ-  
ճառներով. դրանք վարիացիայի են ենթարկվում բարբառից բար-  
բառ և բառից բառ՝ ըստ շեշտի, հնչյունական դիրքի, շարահյու-  
սական խմբավորման, այլ բարբառների ազդեցություն և այլն: Ասկոլին այս հարցում կարևոր է համարում էթնիկական-սուբս-  
տրատային գործոնը, թեև չի կարողանում հաղթահարել երիտքե-  
րականների ինդիվիդուալիստական կոնցեպցիան և հնչյունական  
փոփոխությունների մեջ մեծ տեղ է հատկացնում անհատա-  
կան արտասանական տարբերություններին: Սրա հետ միասին  
Ասկոլին, սակայն, գովում է երիտքերականներին՝ հատկապես  
հնչյունաբանության բնագավառում նախորդ լեզվաբանների աշխա-  
տանքը շարունակելու և զարգացնելու համար:


Ասկոլին խոշոր վաստակ ունի կենդանի բարբառների ու-  
սումնասիրության մեջ. նա ռոմանական գիտական բարբառագի-  
տության հիմնադիրն է: 1873 թ. նա սկսում է հրատարակել  
«Archivio glottologico italiano»-ն, որը կարևոր դեր է խաղում  
իտալական գիտական բարբառագիտության համար. սրա առաջին  
համարում (էջ 1—556) նա հրատարակում է իր «Saggi ladini»-ն:

Ավելորդ չէ նշել, որ Ասկոլին հնդերոպական-սեմական ցե-  
ղակցության գաղափարի պաշտպաններից մեկն է:

Յոհան Եմիդտը և նրա «ալիքների տեսությունը».— Ե այլևերը  
և նրա հաջորդները հնդերոպական լեզուների պատմական փոխ-  
հարաբերությունը պատկերացնում էին ծննդաբանական ծառի  
ձևով. ըստ այսմ հնդերոպացիների տարածումը դիտվում էր որ-  
պես անընդհատ տարբերակման (դիֆերենցիացիայի) և աստիճա-  
նական տարաբնակման պրոցես: Այս պատկերացումը հետագայում  
լայն հիմքեր է գցում՝ հանդես գալով ոչ միայն Ա. Ֆիկի, Ֆր.  
Մյուլլերի և այլոց սխտեմներում, այլև ավելի կամ պակաս շա-  
փով՝ երիտքերականների աշխատություններում: Սակայն փաս-  
տերի կուտակումը նշանակալից չափով խարխլում էր այս ուղղա-  
գիծ-նատուրալիստական պատկերացման հիմքերը և երևան էր  
հանում լեզուների ցեղակցական փոխհարաբերության շատ ավելի  
բարդ պատկեր:

Առաջին լեզվաբանը, որ փորձեց նոր ձևով բացատրել լեզու-  
ների ծագումաբանական-ցեղակցական փոխհարաբերությունը,  
Յոհան Եմիդտն էր (1843—1901): 1872 թ. Եմիդտը, հանդես գա-  
լով «Հնդերոպական լեզուների ցեղակցական հարաբերություննե-

ըը» գրքով<sup>1</sup>, ցույց է տալիս, որ՝ ա) բալթիկ-սլավոնական ճյուղը կապված է, մի կողմից՝ հնդիրանականի (արևելքում), մյուս կողմից՝ գերմանականի (արևմուտքում) հետ. բ) այդ նույն ձևով էլ հունական ճյուղը կապված է, մի կողմից՝ հնդիրանականի (արևելքում), մյուս կողմից՝ իտալականի հետ (արևմուտքում): Այսպիսով, Շմիդտը գալիս է այն եզրակացության, որ լեզուների ցեղակցական որոշակի ճյուղավորումներ չկան, որ լեզվական առանձին երևույթների սահմանները չեն համընկնում, և որ մի լեզվից մյուսին անցումն աստիճանաբար է կատարվում, ուստի և ցեղակցության պատկերացումը ծննդաբանական ծառի ձևով հաշվի չի առնում լեզուների փոխհարաբերության բարդությունը: Նրա կարծիքով՝ այդ փոխհարաբերությունը կարելի է պատկերացնել «ալիքի տեսքով, որը տարածվում է համակենտրոնային շրջաններով, որոնք նորակազմությունների տարածման կենտրոնից հեռանալու շափով ավելի ու ավելի թուլանում են»<sup>2</sup>: Սրա հիման վրա էլ Շմիդտը տալիս է հնդկրոպական լեզուների փոխհարաբերության հետևյալ սխեման.



Շմիդտի «ալիքների տեսությունը» հենց այս շրջանում կողմնակիցներ է գտնում հանձինս Հ. Շուխարդտի, Պ. Կրեչմերի և ուրիշների. XX դ. այն ավելի լայն ազդեցություն է ձեռք բերում՝ լրացվելով լեզվաբանական աշխարհագրության տվյալներով<sup>3</sup>:

<sup>1</sup> J. Schmidt, Die Verwandtschaftsverhältnisse der indogermanischen Sprachen. Weimar, 1872.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 23:

<sup>3</sup> Հ. Արևեսը, Sprachwissenschaft, 1955, էջ 273, Շմիդտի «ալիքների տեսության» գլխավոր արժանիքը համարում է ոչ այնքան ծագումաբանական ծառը ալիքներով փոխարինելը, որքան այն, որ նա «1. ապացու-

Շմիդտը իր սկզբնական շրջանի գործերում շարունակում էր Շլայխերի հետազոտական գիծը և ակնհայտ օպոզիցիայի մեջ էր գտնվում երիտքերականների նկատմամբ: Սակայն շուտով նա հարում է նոր լեզվաբանական ուղղության՝ երիտքերականության որոշ սկզբունքներին և հանդես գալիս հնդերոպական լեզուների հնչյունաբանությանն ու ձևաբանությանը նվիրված բազմաթիվ հոդվածներով, որոնց մեջ հայտնագործում է մի շարք հնչյունական օրենքներ և պարզաբանում որոշ կարևոր հարցեր: Նա զբաղվում է հնդերոպական հնչյունական հերթագայությունների հարցով՝ շատ բանով կանխելով Սոսյուրի հայացքները, մի քանիսի հետ միաժամանակ պարզում հնդերոպական ձայնավորների իրական բնույթն ու հնդիրանական ա-ի՝ շատ դեպքերում ոչ-նախնական լինելը, հակառակ Բրուգմանի՝ փորձում ապացույցել ր-ի օ՞ հնչումը, պարզում է ձևաբանական մի քանի մասնակի հարցեր և այլն: Երա ձևաբանական հետազոտությունների մեջ հատուկ արժեք ունի «Հնդերոպական չեզոք սեռի բառերի հոգնակիի կազմությունը» գիրքը՝ այստեղ հենվելով այն բանի վրա, որ հունարենում չեզոք սեռի հոգնակի ենթակայի մոտ գրվում է եզակի ստորոգյալ, Շմիդտը ժխտում է հնդերոպական նախալեզվում չեզոք սեռի հոգնակիի առկայությունը. ըստ նրա՝ վերջինս փոխարինվել է բառի հավաքական ձևով:

Շմիդտը սուր վեճ էր մղում երիտքերականների հետ հատկապես անալոգիայի սկզբունքի շարաշահման հարցում. նրա կարծիքով՝ բացառությունների դեպքում պետք է նկատի առնել, որ կարող են գոյություն ունենալ մեզ անհայտ հնչյունական օրենքներ, և դիմել անալոգիային միայն ծայրահեղ դեպքերում, երբ բացատրության այլ հնարավորություններ չկան: Բեռլինի Գիտությունների ակադեմիայում 1884 թ. արտասանած իր ճառի մեջ նա ցավով նշում էր, որ «այժմ ողջ համեմատական քերականությունը լուծվել է ձայնավորների ուսումնասիրության մեջ»:

Ինչպես կտեսնենք, Շմիդտն զբաղվել է նաև լեզվաբանական

---

ցում է հնդերոպական նախալեզուն որպես ամբողջություն զիտելու գիտական ֆիկցիա լինելը, 2. հայտնաբերված հնդերոպական բառաձևերը (աստղա-Նիշային բառերը) զիտում է միայն որպես հետազոտության վերջին համապատասխան արդյունքը, 3. քանզում է «հնդերոպական նախալեզվի» միասնության հավատը և նրա տեղը դնում բարբառային բաղմապանությունը»:

<sup>1</sup> J. Schmidt, Die Pluralbildung der indogermanischen Neutra,

հնէաբանութեան հարցերով, և այս բնագավառում նրա արածները զուրկ չեն հետաքրքրութիւնից:

Հուզո Շուխարդտ. — Ավստրիական նշանավոր լեզվաբան և պոլիգլոտ Հուզո Շուխարդտի (1842—1928) գործունեութիւնը ծավալվել է դեռևս երիտքերականների գործունեութեան բուռն ծաղկման շրջանում: Սակայն Շուխարդտն այն լեզվաբաններից էր, որոնք քննադատաբար էին նայում երիտքերականների սկզբունքներին և որոնց արծարծած գաղափարները աստիճանաբար են ճանապարհ հարթում: Նրա աշխատանքները վերաբերում են լեզվաբանութեան տեսութեան կարևորագույն հարցերին և առանձին լեզուների պատմութեանն ու տեսութեանը: Շուխարդտը երիտքերականների նեղ էմպիրիզմին հակադրում էր լեզվական երևույթների տեսական խորը լուսաբանութեան և գիտական լայն ընդհանրացումների անհրաժեշտութեան գաղափարը: Եթէ երիտքերականների ուղադրութիւնը կենտրոնացած էր հնդկոպաբանութեան հարցերի շուրջը, տեսական ընդհանրացումներն արվում էին գրեթէ միայն այդ լեզուների հիման վրա, ապա Շուխարդտն ընդգրկում էր ամենաբազմազան կառուցվածքի լեզուներ, պայքարում իսկական ընդհանուր լեզվաբանութեան ստեղծման համար: Նա հաճախ է նշում, որ մասնակի լեզվաբանութիւնները կապված են իրար հետ, ընդ որում ընդհանուր կողմերի ուսումնասիրութիւնը նպաստում է նաև տարբերութիւնների բացահայտմանը:

Շուխարդտի տարբերք քննադատութիւնը և պոլեմիկան են: Նա միշտ ավելի ուժեղ է քննադատութեան, քան սեփական դրույթներն առաջ քաշելու մեջ: Սակայն քննադատութեան ընթացքում Շուխարդտը ելնում է որոշ ընդհանուր գաղափարներից, դրույթներից ու սկզբունքներից, որոնք և կիրառում է առանձին լեզուներին վերաբերող իր հետազոտութիւններն ի մեջ:

Իր հայացքները Շուխարդտն արտահայտել է զանազան հոդվածներում, որոնց կարևոր մասը հավաքված ու հրատարակված է *Լեո Շպիցերի կողմից*<sup>1</sup>:

Շուխարդտը լեզվաբանական առանձին դպրոց չի ստեղծել, թեև իր հայացքներով զգալի շարժում ազդել է ամենատարբեր ուղիւթիւնների ներկայացուցիչների վրա:

<sup>1</sup> Hugo Schuchardt-Brevier. Ein Wademecum der allgemeinen Sprachwissenschaft, zusammengestellt von L. Spitzer, 1922, II հրատ. 1928: Ռուս. ժողովածուն կազմված է Ռ. Բուզադովի կողմից. Г Шухардт, Избранные статьи по языкознанию, М., 1950:





չյունական օրենքների մասին՝ երիտքերականների դեմ» հոդվածում<sup>1</sup> և այլ հոդվածներում Շուխարդտը պայքար է մղում հնչյունական օրենքների երիտքերականական մեխանիստական ըմբռնման դեմ:

Ամենից առաջ, եթե երիտքերականները հնչյունական օրենքները դիտում էին որպես ֆիզիկական-ֆիզիոլոգիական կարգի գործոնների ազդեցության արդյունք, ապա Շուխարդտի կարծիքով՝ հնչյունական օրենքների մեջ ևս երևան է գալիս հոգեկան գործոնի ազդեցությունը: Նա անօրինական է համարում ֆիզիոլոգիական ու հոգեկան գործոնների հակադրությունը և գտնում, որ նրանց միջև հնչյունական օրենքների հարցում ներքին կապ կա. հնչյունական փոփոխությունը տարածվում է անալոգիայի միջոցով. այն սկսվում է փոքրաթիվ բառերից և անալոգիայի հետևողական ազդեցությամբ տարածվում այլ դեպքերի վրա: Հետևելով Տոբլերին՝ Շուխարդտը պնդում է, որ հնչյունական օրենքների՝ զուտ ֆիզիոլոգիական բնույթ ունենալու դեպքում անալոգիան չէր կարող հանգես գալ որպես խանգարիչ գործոն: Հնչյունական օրենքների երիտքերականական ըմբռնումը, Շուխարդտի կարծիքով, այդ օրենքները դարձնում է արտաքին գործոն, դրանք չի կապում լեզվի ներքին էություն հետ:

Հանդես գալով հնչյունական օրենքի բնույթի երիտքերականական ընդհանուր ըմբռնման դեմ՝ Շուխարդտը հակադրվում է և հնչյունական օրենքի մասին նրանց ունեցած այլ կարգի պատկերացումներին: 1) Շուխարդտը հակադրվում է ամենից առաջ երիտքերականների այն պնդմանը, թե հնչյունական փոփոխությունները տարածվում են միայն մեկ ուղղությամբ: Ըստ նրա՝ դրանք տարածվում են անհատից անհատ՝ «լեզվախառնուրդի» ճանապարհով, որ ըստ Շուխարդտի՝ առկա է ոչ միայն լեզուների միջև, այլ լեզուների ներսում. տվյալ լեզվով խոսող անհատների մոտ կան արտասանական այնպիսի շեղումներ, որոնք կարող են ուրիշների կողմից ընդօրինակվել և տարածվել: 2) Ըստ Շուխարդտի՝ ճիշտ չէ երիտքերականների այն պնդումը, թե հնչյունական փոփոխությունը միաժամանակ է երևան գալիս տվյալ հնչյունը տվյալ դիրքում ունեցող բոլոր բառերում. այս կամ այն բառի՝ տվյալ հնչյունական փոփոխությանը ենթարկվելու արագությունը կախ-

<sup>1</sup> H. Schuchardt, Über die Lautgesetze, gegen die Junggrammatiker, 1885, րուս. թարգմանությունը հիշված ժողովածուում, էջ 23—55:

ված է բառի գործածութեան հաճախականութիւննից. հաճախակի գործածվողներնից այն տարածվում է ավելի քիչ գործածվողների վրայ: 3) Շուխարդտը չի ընդունում երիտօրեականների դրույթը հնչյունական օրենքների՝ բացառութիւն չճանաչելու մասին. նախ՝ կան փոփոխութիւններ, որոնք առկա են միայն մեկ կամ մի քանի բառերում, թեև համապատասխան հնչյունական պայմաններ գոյութիւն ունեն և այլ բառերում. երկրորդ՝ կան այնպիսի բառեր, որոնք չեն ենթարկվել տվյալ հնչյունական փոփոխութեանը, ընդ որում այդ բացառութիւնը անալոգիայով չի կարող բացատրվել. երրորդ՝ շատ հաճախ գործածվող բառերը ենթակա են մաշվելու և անկանոն կերպով են փոփոխվում. Շուխարդտը գրտնում է նույնիսկ, որ հնչյունական միակ օրենքը հնչյունափոխութեան անհավասարաչափութեան օրենքն է և նշում է, որ հնչյունական օրենքների հարցում երիտօրեականների մտքած ուսման փակումները (դրանց՝ տեղով և ժամանակով սահմանափակված լինելու դրույթը) գործը չեն փրկում: 4) Կանգնած լինելով հնչյունական փոփոխութիւնների մեջ հոգեկան գործոնի կարևորութեան տեսակետի վրա՝ Շուխարդտը բնականաբար չի ընդունում երիտօրեականների դրույթը՝ հնչյունական օրենքների՝ մարդկանց կամքից անկախ և անգիտակցաբար գործելու մասին. ըստ նրա՝ հընչյունական այս կամ այն փոփոխութեան տարածման մեջ կարևոր դեր են խաղում նորաձեւութեանը հետեւելու, կրթված խավերի և նշանավոր անձերի արտասանութեանը նմանվելու ձգտումը և այլն, — հանգամանքներ, որոնք չեն կարող կամքից և գիտակցութիւնից անկախ բաներ համարվել: Չունենալով լեզվի իսկական հասարակական ըմբռնում՝ Շուխարդտն այնուամենայնիվ նկատում է հնչյունական օրենքների հարցում երիտօրեականների նեղ ինդիվիդուալիզմի սահմանափակութիւնն ու տեսական անճարակութիւնը և փորձում նշել հասարակական որոշ կարգի գործոնների դերը. այսպէս, օրինակ, նշվում է դպրոցի, հասարակական տարբեր խավերի ազդեցութիւնը և այլն: Այս հարցում, ինչպէս նշել ենք, հասարակական դարգացման շուխարդտյան ըմբռնումը հենվում է Տարդի իդեալիստական կոնցեպցիայի վրա: Շուխարդտը նկատում է, որ լեզվի երիտօրեականական ինդիվիդուալիստական ըմբռնումը փաստորեն զրկում է օրենքի գաղափարը տեսական հիմնավորումից: Ըստ Շուխարդտի՝ հնչյունական փոփոխութիւնների պատճառների հարցում անհրաժեշտ է հաշվի առնել նախ՝ լեզուների խաչավորման ու խառնման փաստի առկայութիւնը:

երկրորդ՝ լեզվի և բարբառների սահմանների անկայունութունը և լեզու, բարբառ, խոսվածք հասկացութունների պայմանականութունը,— հանգամանքներ, որոնք բացառում են հնչյունական օրենքների տարածման որոշակի սահմանների առկայութեան հնարավորութունը, երրորդ՝ հասարակական այս կամ այն գործոնի դերը այս կամ այն երևույթի տարածվելու կամ դադարելու գործում:

Շուխարդտը բողոքում է երիտօրականների հնչյունական րենքի սկզբունքի դեմ և՛ տեսական, և՛ գործնական առումով: Նա նշում է, որ հնչյունական փոփոխութունները չի կարելի որակել որպես օրենքներ. բնական օրենքներն համընդհանուր և բացարձակ բնույթ ունեն, հնչյունական օրենքները սահմանափակված են տեղով և ժամանակով: Շուխարդտը հանդես է գալիս երիտօրականների դեմ, մի կողմից՝ որոշակի բարբառային-հնչյունական սահմաններ նշելու, մյուս կողմից՝ ժամանակային որոշակի շրջաններ առանձնացնելու հարցում (վերջինս արտահայտվում է լեզվի միևնույն փուլում բացառութուն շճանաչող հնչյունական օրենքների գոյութեան երիտօրականական պնդման մեջ). ըստ Շուխարդտի՝ որոշակի սահմաններ չկան ոչ միայն բարբառների, այլև լեզվի զարգացման տարբեր փուլերի միջև: Շուխարդտի կարծիքով՝ չի կարելի խոսել հնչյունական պայմանների նույնութեան մասին, ինչպես անում են երիտօրականները հնչյունական օրենքների առնչութեամբ, որովհետև այդպիսի նույնութուն հնարավոր չէ. ամեն բառ ունի իր սեփական լեզվական շրջապատը: Շուխարդտը առաջ է քաշում հնչյունափոխութեան մեջ գործածութեան հաճախականութեան կարևորութեան դրույթը՝ դրանով փորձելով հաղթահարել իր ինդիվիդուալիզմը և ռելյատիվիզմը. սակայն լեզվական գործածութեան հաճախականութեան դրույթը լեզվի իսկական հասարակական ըմբռնումը փոխարինում է մեխանիստական մեկնաբանութեամբ:

Շուխարդտը բողոքում է հնչյունական օրենքների ֆետիշացման, դրանց ինքնանպատակ քննութեան, ստուգաբանական պրակտիկայում առանձին փաստերով տարվելու և տեսական լայն ընդհանրացումներից հեռանալու դեմ. «Մի՞թե ինքնին միևնույնը չէ,— գրում է Շուխարդտը,— թե ոտմանական andare-ն «քայլել» ծագում է արդյոք adnare-ից, addare-ից, թե՞ ambulare-ից կամ թե մի որևէ կելտական բայական արմատից. դառնում է արդյոք տվյալ բարբառում ՚-ն ը կամ մի այլ բարբառում՝ ր-ն ՚: Ի՞նչ ի-

մաստ կա այդ անվերջ ստուգաբանական կամ ձևաբանական համապատասխանությունների մեջ՝ հնչյունական օրենքների անվերջ շարքով, քանի դեռ դրանք մնում են մեկուսացված, քանի դեռ գրանք չեն իմաստավորվել բարձրագույն պլանով<sup>1</sup>: Հնչյունական օրենքի սկզբունքը, Շուխարդտի կարծիքով, հանգեցնում է մերկ փաստամուտության, հեռացնում ինքնուրույն մտածողությունից:

Ինելով բացառություն շճանաչող հնչյունական օրենքների բացահայտման հարցը՝ երիտքերականները, լեզվի ինդիվիդուալիստական ըմբռնման պայմաններում, հնչյունական օրենքի գաղափարը կապում էին անհատի խոսքի հետ. ըստ այդմ ստացվում էր, որ հնչյունական օրենքների բացառված հետևողականության մասին կարելի է խոսել միայն որոշակի անհատի առումով և միայն սովյալ որոշակի մոմենտի համար: Հասկանալի է, որ այս դեպքում բացառվում էր լեզվական օրինաչափությունների հասարակական էությունը, լեզվի պատմությունը կտրվում էր նրանով խոսող ժողովրդի կոնկրետ պատմությունից: Կենդանի բարբառների հետազոտությունը և հնչյունական օրենքների բացահայտման ուղղություն մբ կատարվող աշխատանքը հանգեցնում են, մի կողմից՝ հնչյունական օրենքների՝ իրական օրինաչափություններն արտահայտող պայմանական բանաձևեր լինելու գաղափարին, մյուս կողմից՝ լեզունների ցեղակցության ու փոփոխության մասին երիտքերականների տրադիցիոն պատկերացումների վերանայմանը: Ինչպես հայտնի է, երիտքերականները բարբառները համարում էին այն հիմնական միավորները, որոնց մեջ ամենից ավելի լավ է դրսևորվում հնչյունական օրենքների հետևողականությունը, և դրանք հակադրում էին գրական լեզվին:

Երիտքերականների այս լեզվաբանական պատկերացումների վերանայումն ընթանում է երկու ուղղությամբ. 1) ի հակակշիռ երիտքերականների, որոնք լեզունների փոփոխության պատճառները տեսնում էին միայն անհատական լեզվագործածության և սերունդների կողմից լեզուն յուրացնելու ընթացքում մտցված անգիտակից փոփոխությունների մեջ, սկսում է երևան գալ այդ փոփոխության պատճառները նաև դոսում որոնելու տենդենց. 2) ի հակակշիռ մինչև XIX դ. վերջին քառորդը եղած պատկերացման՝ բարբառների ու լեզունների և հնչյունական օրենքների գործողության որոշակի սահմանների մասին, սկսում են խոսել դրանց բա-

<sup>1</sup> Г. Шухардт, Избранные статьи по языкознанию, М., 1950 էջ 51.

ցակայութեան մասին. առաջին տեսակետն արտահայտուով և «սուբստրատի տեսութեան», երկրորդը՝ «լեզվաբանական աշխարհագրութեան» մեջ:

Սուբստրատի կամ էթնիկական տեսութունը կողմնակիցներ է գտնում ոչ միայն երիտքերականների նկատմամբ քննադատաբար տրամադրված լեզվաբանների, այլև հենց իրենց երիտքերականների շարքերում: Շուխարդտի հետ միասին այդ տեսութունը, ինչպես տեսանք, պաշտպանում է Ասկոլին: Շուխարդտը և այս տեսակետի մյուս կողմնակիցները լեզուների խաչավորումն ու խառնումը դիտում են որպես լեզվի փոփոխութեան կարևոր գործոն. ըստ նրանց՝ այս կամ այն լեզվական հանրութունը, յուրացնելով մի նոր լեզու, այդ յուրացման ընթացքում պահպանում է իր նախկին լեզվի որոշ հատկութունները. այսպիսով՝ ստեղծվում է լեզվի որոշ ենթահիմք, սուբստրատ, որի բնույթը կարելի է բացատրել՝ նկատի առնելով միայն ասիմիլյացված լեզվի բնույթը:

Լեզվական փոփոխութունների գլխավոր գործոնը Շուխարդտը համարում է լեզուների խաչավորումն ու խառնումը: Նրա կարծիքով՝ հնարավոր չէ որոշակի սահման գծել ոչ միայն լեզվի զարգացման տարբեր փուլերի միջև, այլև տարբեր լեզուների ու տարբեր բարբառների միջև: Խոսվածք, բարբառ, ենթաբարբառ ու լեզու հասկացութունները միայն պայմանական հասկացութուններ են: Չկա ոչ մի լեզու, որ զերծ լինի խաչավորումից և օտար տարրերից. բոլոր լեզուները խաչավորված տարրեր ունեն: Օրինակներ բերելով ումանական լեզուներից, Շուխարդտը ցույց էր տալիս, թե ինչպես հնարավոր չէ գծել սահմանակից իտալական և ֆրանսիական բարբառների սահմանը: Այստեղից էլ բխում էր Շուխարդտի սկեպտիցիզմը դեպի լեզուների ծագումաբանական դասակարգումը: Այս կապակցությամբ Շուխարդտը որոնում է աշխարհի բոլոր լեզուների ցեղակցութեան ապացույցներ, այլև խոսում լեզուների «տարրական» ցեղակցութեան մասին՝ վերջինիս հիմքում դնելով մարդկանց հոգեկան բնութեան ընդհանրությունը:

Լեզուների ծագումաբանական դասակարգմանը Շուխարդտը հակադրում էր լեզուների «աշխարհագրական համահարթման» դրույթը, նշում լեզուների անցումների անընդհատականությունը՝ ըստ դրանց աշխարհագրական տեղաբաշխման:

Տարբերելով լեզվական փոփոխութունների երկու տիպ՝ ներքին և արտաքին (խառնուրդ)՝ Շուխարդտը ոչ միշտ է հնարավոր համարում լուծել այս կամ այն փոփոխութեան՝ ո՛ր կատեգորիա-

յին պատկանելու հարցը լեզուն դադարելով ապրել՝ կարող է իր որոշ հատկություններով (վարժաբնություններ ու տենդենցներ) ապրել հաշորդ լեզվի մեջ:

Հնչյունական փոփոխությունների պատճառները որոնելով ընդհանրապես խառնվորման, խառնման ու փոխազդեցության մեջ՝ Շուխարդտը այդ պրոցեսն առնում է լայն իմաստով. լեզվական խառնուրդ, ըստ նրա, տեղի է սենհնում ոչ միայն էթնիկական խառնուրդի ժամանակ, որը նրա կարծիքով ավելի հաճախադեպ երևույթ է, քան կարծում են, այլև սերտ կապ ունեցող հաղորդակցական հանրությունների (Verkehrsgenossenschaft) մեջ. 1) «Մի կողմից՝ յուրաքանչյուր նշանավոր կենտրոնում բնակչության հոսունությունը ձեռք է բերում այնպիսի շափեր, որ այն կարելի է դիտել որպես յուրատեսակ խառնուրդ». 2) «Մյուս կողմից՝ բոլորովին էլ բացառիկ չէ այն դեպքը, որը Պաուլը համարում է լեզվական խառնուրդի միակ հնարավոր նախադրյալը, այն է՝ եերբ առանձին պատմական պատճառների հետևանքով մարդկանց մեծ խմբերը ելել են բնակչության վայրերից և խառնվել ուրիշների հետ»<sup>1</sup>:

Շուխարդտի ծառայությունը մեծ է օտուգաբանության բնագավառում. նա չի բավարարվում փոփոխությունների բանաձևերի հավաստմամբ, այլ ձգտում է քաջահայտել բառերի իսկական պատմությունը. այս դեպքում նա օգտագործում է բառի բարբառային տարբերակների ամբողջությունը և հետևում նրա զարգացման հետևողական պատմական օղակներին: Նա, ի տարբերություն երիտքերականների, ուշադրությունը կենտրոնացնում է բառի իմաստի վրա՝ այս կապակցությամբ հետազայում հանգելով «իրաբառերի» գաղափարին: Շուխարդտը հատուկ ուշադրություն է դարձրել բնաձայնությունների հարցին՝ նշելով, որ իրարից բոլորովին տարբեր լեզուներում կարող են հանդիպել միևնույն իմաստն արտահայտող նման հնչյունախմբեր. բնաձայնությունը նա ըմբռնում է լայն իմաստով՝ որպես հնչյունական սիմվոլիզմ<sup>2</sup>: Այս կապակցությամբ էլ հենց լեզուների պատմական ցեղակցության գաղափարին Շուխարդտը հակադրում է ոչ-պատմական «տարրական» ցեղակցության գաղափարը: Այսպիսի «տարրական» ընդհանրությունները նրան են գալիս ամենատարբեր բնույթի

<sup>1</sup> Г. Шухардт, Избранные статьи по языкознанию, М., 1950, էջ 35.

<sup>2</sup> Հմտ. I. Jordan, հիշ. աշխ., էջ 56:

լեզուներում և տարբեր են էթնիկական և փոխառութեամբ առաջացող ընդհանրություններից՝ իրենց հիմքում ունենալով մարդկային մտածողական ընդհանրությունները. այդպիսի ընդհանրությունները արդյունք են ընդհանուր ներքին տենդենցի: Այսպես, օրինակ, ուժանական լեզուներում, գերմաներենում, բասկերենում, հունգարերենում հոդի առաջացումը կատարվել է միևնույն ձևով՝ առանց փոխառութեամբ կամ ցեղակցութեամբ բացատրվելու:

Շուխարդտը լեզուն համարելով առաջին հերթին մարդկանց հաղորդակցվելու միջոց՝ սրանից հետևողական եզրակացություններ չի հանում լեզվի հասարակական բնույթի մասին, բայց եզրակացություններ է անում նախադասության ու բառի, բայի ու անվան ծագման առաջնության մասին՝ նախադասությունը նախորդել տալով բառին, բայը՝ անվանը: Ըստ Շուխարդտի՝ լեզվի ծագման հարցը նախադասության ծագման հարց է, որովհետև նախադասությունը հաղորդակցման միավորն է: Սկզբնական նախադասությունները եղել են միանդամ և հանդես եկել ստորոգյալի բաղաչյւ վրա. երկանդամ (ենթակայով և ստորոգյալով) նախադասությունները հետո են առաջացել: Լեզուն ծագում է կարիքից: Շուխարդտը ելնում է լեզուների մոնոգենետիկական և պոլիգենետիկական ծագման տեսությունների ծայրահեղությունների դեմ՝ գտնելով, որ մոնոգենեզիսը և պոլիգենեզիսը հենց սկզբից միահյուսված են, այլև որ երկուսն էլ հավասարապես անապացուցելի են:

Տարբերելով լեզվի քննության պատմական և ստատիկ հայեցակետերը՝ Շուխարդտը այնուամենայնիվ դրանք չի հակադրում. լեզվի ստատիկ ուսումնասիրությունը նա նույնացնում է լեզվի հոգեբանական ուսումնասիրության հետ և այն կոչում լեզվահոգեբանություն (Sprachpsychologie): Միաժամանակ Շուխարդտը պահանջում է պատմական լեզվաբանությունը դարձնել իսկապես այդպիսին:

Շուխարդտը հատուկ ուշադրություն է դարձրել արհեստական լեզուների և այսպես կոչված «խառն» (կրեոլյան) լեզուների հարցին. վերջիններիս առաջացումը նա կապում է հաղորդակցման կարիքի հետ և կոչում «կարիքային լեզուներ» (Notsprachen):

Շուխարդտը մեծ ծառայություն է մատուցել բասկերենի ուսումնասիրությանը:

«Իրերի և բառերի» փոխհարաբերության շուխարդտյան ըմբռնման մասին մենք դեռ առիթ կունենանք խոսելու:



## բ. Մոսկվայի լեզվաբանական դպրոց

Ֆիլիպ Ֆյոդորովիչ Ֆորտունատով.— Ֆ. Ֆ. Ֆորտունատովը (1848—1914) ռուսական պատմա-համեմատական լեզվաբանության ամենականավոր դեմքն է, Մոսկվայի լեզվաբանական դպրոցի հիմնադիրը: Նրա ուսանողների թվին են պատկանում ռուս գիտնականներ Ա. Ա. Շախմատովը, Գ. Կ. Ուլյանովը, Վ. Կ. Պորժեպինսկին, Մ. Մ. Պոկրովսկին, Վ. Ն. Շչեպկինը, Բ. Մ. Լյապունովը, Ա. Ի. Տոմսոնը, Դ. Ն. Ուշակովը, Ե. Ֆ. Բուդդեն, Ա. Մ. Պեչկովսկին, Մ. Ն. Պետերսոնը, հայ Լ. Զ. Մսերյանցը, նորվեգացի Օ. Բրոկը, շվեդ Տորբյորսոնը, դանիացի Հ. Պեդերսենը, հոլանդացի Վան դեր Կոպը, ֆրանսիացի Պոլ Բուայեն, գերմանացիներ Սոլմսենը և Բեռնեկերը, չեխ Մուրկոն և Պոլիվկան, սերբ Բելիչը և Տոմիչը, ֆինն Միկկոլան, ռումին Բոգդանը: Զի կարելի, սակայն, ասել, թե բոլորին էլ հավասարապես հատուկ են Ֆորտունատովի լեզվաբանական կոնցեպցիայի բոլոր կողմերը:

Պատմա-համեմատական մեթոդի կիրառման խնդրում Ֆորտունատովը դավանում է երիտքերականների հիմնական սկզբունքները, բայց մի շարք հարցերում զերծ է նրանց միակողմանիությունից ու կանգնած է ավելի առաջադիմական դիրքերի վրա: Նրա լեզվաբանական հայացքները և հնդկրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ բերած նորությունները արտացոլում են գտել դասախոսությունների ու առանձին հոդվածների մեջ: Առանձնապես մեծ է նրա վաստակը հնդկրոպական շեշտաբանության (ակցենտոլոգիայի) և համեմատական քերականության առանձին հարցերի լուսաբանության մեջ: Դասախոսությունները հրատարակվել են Ֆորտունատովի մահից հետո. դրանցից նշելի են «Դասախոսություններ հին սլավոներենի հնչյունաբանության մասին» և «Հնդկրոպական լեզուների համեմատական հնչյունաբանության համեմատական ուրվագիծը»<sup>1</sup>, այլև «Համեմատական լեզվաբանությունը» և «Հնդկրոպական լեզուների համեմատական ձևաբանությունը»<sup>2</sup>: Վերջին երկուսը երկար ժամանակ հայտնի էին միայն վիմատիպ հրատարակություններով: Սո...

<sup>1</sup> Ф. Ф. Фортунатов, Лекции по фонетике старославянского языка, 1919. Краткий очерк сравнительной фонетики индоевропейских языков, 1922.

<sup>2</sup> Ф. Ф. Фортунатов, Сравнительное языковедение, 1901—1902. Сравнительная морфология индоевропейских языков. 1899—1901.

վետական շրջանում լույս են տեսել Ֆորտունատովի «Բնտիր աշխատութիւնները», որոնք պարունակում են հիշյալ դասախոսութիւնները<sup>1</sup>։

Ֆորտունատովի հոդվածներից մի քանիսը տպագրվել են «Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen» և «Zeitschrift für vergleichende Sprachforschung» հանդեսներում։ Կարևոր է նշել, որ Ֆորտունատովի ընդհանրացնող դասընթացները նախորդել են Բրուզմանի համեմատական քերականութիւն ամբողջական հրատարակութիւնը։

Ինչպես երիտօրեականները, Ֆորտունատովը ևս լեզվի հիմքում դնում է հոգեֆիզիկական պրոցեսների ամբողջութիւնը, լեզվաբանութիւնը լուծում պատմական հետազոտութիւն մեջ, դաժանում հնչյունական օրենքի, անալոգիայի, լեզվական պրոցեսի անընդհատականութիւնի դրույթները։ Բայց նա զերծ է, մի կողմից՝ լեզվական պրոցեսի սուբյեկտիվ-ինդիվիդուալիստական ըմբռնումից, մյուս կողմից՝ մեթոդի կիրառման մեջ ցուցաբերած այն միակողմանիութիւնից ու ծայրահեղութիւններից, որոնք հատուկ էին երիտօրեականների շատ ներկայացուցիչների։

Լեզվի հոգեֆիզիկական ըմբռնումը Ֆորտունատովը յուրատեսակ կերպով զուգորդում է լեզվի հասարակական ըմբռնման հետ։ Լեզվի կառուցվածքային առանձնահատկութիւնները, նրա հնչյունական ու իմաստային կողմերի փոխհարաբերութիւնը, Ֆ. Ֆորտունատովի կարծիքով, կարելի է ուսումնասիրել ֆիզիոլոգիական ու հոգեբանական դիրքերից. բառերի հնչյունները ֆիզիկական երևույթներ են և կապվում են ֆիզիոլոգիայի, այն է՝ խոսքի հնչյունների ֆիզիոլոգիայի հետ. բառերի իմաստները, այլև իմաստների ու հնչյունների կապի բնույթը հոգեկան երևույթներ են և կապվում են հոգեբանութիւնի հետ։ Այս դեպքում Ֆորտունատովը ելնում է ասոցիատիվ հոգեբանութիւնի տվյալներից։ Սակայն լեզվի էությունը սրանցով չի սպառվում։ Լեզուն հասարակական երևույթ է. նա պատկանում է որոշ հասարակական խումբակցութիւնի, սերտորեն կապվում այդ խմբակցութիւնի պատմութիւնի հետ։ Այսպիսով, լեզվաբանութիւնը անմիջական կապի մեջ է զտնվում ոչ միայն ֆիզիոլոգիայի և հոգեբանութիւնի, այլև ժողովրդի պատմութիւնի հետ. լեզվաբանութիւնը և պատմութիւնը փոխադարձաբար օգնում են միմյանց. «Յուրաքանչյուր լեզու,—

<sup>1</sup> Ф. Ф. Фортунатов, Избранные труды, I—II, М., 1956—1957.

գրում է Ֆորտունատովը, — պատկանում է որոշակի հասարակության, որոշակի հասարակական խմբակցության (ОБЩЕСТВЕННЫЙ СЛОЖ), այսինքն՝ յուրաքանչյուր լեզու պատկանում է մարդկանց, որպես այս կամ այն հասարակության անդամների: Այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հասարակության կազմում, լեզվի մեջ ուղեկցվում են համապատասխան փոփոխություններով, հասարակության տրոհումը այս կամ այն մասերի համապատասխանում է լեզվի տրոհմանն առանձին բարբառների, իսկ հասարակական խմբակցության մասերի միավորմանը համապատասխանում է և լեզվի մեջ նրա բարբառների միավորումը<sup>1</sup>: Լեզվի բնույթով էլ Ֆորտունատովը որոշում է լեզվաբանության հարաբերությունը հասարակական և բնական զանազան գիտությունների հետ՝ շնկատելով լեզվաբանությունը դրանց մեջ ձուլելու վտանգը. «...Մարդկային լեզվի ուսումնասիրությունը նրա պատմության մեջ մտնում է իր որոշակի կողմերով, որպես բաղկացուցիչ մաս, բնության և հասարակական խմբակցությունների Այանքի վերաբերյալ գիտության մեջ»<sup>2</sup>: Լեզվաբանության՝ որպես լեզվի պատմական ուսումնասիրության գլխավոր խնդիրը Ֆորտունատովը տեսնում է. «ժողովուրդների ու նրանց կուլտուրայի պատմության հարցերը պարզաբանելու մեջ: Նրա կարծիքով՝ վաղ շրջանի պատմության մեջ հասարակության մասերի կապի թուլության պայմաններում գերակշռում էին տարբերակող տենդենցները, զարգացած հասարակության մեջ այդպիսի կապերի սերտացման, զրի ու գրականության առկայության պայմաններում՝ միացնող տենդենցները:

Պատմա-համեմատական մեթոդի կիրառման մեջ Ֆորտունատովն անց է կացնում հետևողական պատմականության և օրինաչափականության սկզբունքը: Իր պատմա-համեմատական ընդհանրացնող դասընթացներում նա ձգտում է տալ լեզվական երևույթների ծագումը և զարգացումը՝ հենվելով հնչյունական օրինաչափականության խստիվ պահպանման սկզբունքի վրա: Հնչյունական այս կամ այն օրենքը հաստատելիս նա պարզում է հնչյունական անցումների պայմանների նույնությունը՝ այդպիսի նույնության քացակայության դեպքում փնտրելով այլ օրինաչափություններ: Այս կապակցությամբ նշելի են նրա մեթոդի մի քանի կարևոր

<sup>1</sup> Ф. Ф. Фортунатов, Избранные труды, I, М., 1956, էջ 24.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 28.



յության փաստը և միաժամանակ գտնում, որ այդ նախալեզուն ունեցել է իր հարուստ պատմութունը, անցել զարգացման երկարատև շրջան. այս առումով նա անհաջող է համարում «նախալեզու» (Ursprache) տերմինը՝ նշելով, որ այդ տերմինը ենթադրել է տալիս մի նախնական-պրիմիտիվ լեզու, մի բան, որ ճիշտ չէ. 6) հնչյունական օրենքների քննության մեջ նա շի բավարարվում համապատասխանութունների պարզ հավաստումով, այլ փորձում է պարզել անցողիկ օղակները և հաստատել զարգացման որոշ էտապներ:

Ֆորտունատովի անվան հետ է կապված հնդկրոպական, հատկապես բալթիկ-սլավոնական լեզուների հնչյունաբանական-շեշտադրական մի շարք մասնակի հարցերի պարզաբանումը կամ ուրույն մեկնաբանումը: Նրա կարծիքները հնդկրոպական ձայնավորների երկու կարգի երկարության, երկու վանկի տրոհվող վեղալական «a»-ի ծագման մասին և այլն կանխում են հետագա ուսումնասիրութունների արդյունքները<sup>1</sup>:

Շեշտաբանության (ակցենտոլոգիայի) բնագավառում առանձնապես նշելի է այն օրենքը, որ կրում է «Սոսյուր-Ֆորտունատովի օրենք» անունը և որն իրարից անկախ հայտնաբերել են այդ երկու գիտնականները: Հայտնի է, որ բալթիկ (հատկապես լիտվական) և սլավոնական լեզուները շեշտի դիրքի ու բնույթի ակնհայտ համապատասխանութուններ ունեն. սակայն շեշտի բնույթի համապատասխանութունն արտահայտվում է հակառակ հարաբերությամբ. լիտվական բարձրացող տոնին համապատասխանում է սլավոնական իջնող տոնը և հակառակը (հմմտ. լիտվ. vārna—նախասլավ. \* vōrna, սերբախորվ. врана, ռուս. ворона և լիտվ. varnas—\* նախասլավ. vōrnъ, սերբախորվ. врѣн. ռուս. ворон). այս կապակցությամբ նախաբալթիկ-սլավոնականի համար վերականգնվում է առաջին դեպքում պարուլյային (circumflexus), երկրորդ դեպքում սուր շեշտ (acutus): Սոսյուրը և Ֆորտունատովը բալթիկ-սլավոնական լեզուների շեշտի բնույթի հակառակ հարաբերութունները բացատրում են շեշտի տեղաշարժով: Սոսյուրն այս օրենքի կիրառութունը տվել է միայն լիտվերենի համար: Ըստ

<sup>1</sup> Հմմտ. М. Н. Петерсон, Фортунатов и московская лингвистическая школа. „Ученые записки МГУ“, вып. 107, 1946. С. Д. Качинельсон, Теория сонантов Ф. Ф. Фортунатова и ее значение в свете современных данных, ВЯ, 1954, № 6:

Սոսյուրի՝ լիտվերենում կարճ կամ ցիրկումֆլեքսային հատվածի շեշտը շարժվել է մի վանկ առաջ, եթե նրան հաջորդել է սուր (ակուտային) ձայնավորային հատված: Ֆորտունատովը հարցը քննել է ավելի լայն առումով: Դեռևս 1880 թ. նա ցույց է տվել, որ ուսական լիաձայն ձևերի (оро, оло, ере՝ նախասլավոնական \*ор-ի, \*ол-ի, \*ер-ի դիմաց) շեշտային տարբերությունները (հմմտ. вóрон և во́ро'на) արտացոլում են նախասլավոնական ֆանակային (երկարության և կարճության) տարբերությունները, որոնք իրենց հերթին հնդկերոպական հիմքեր են ունեցել: 1895 թ. Ֆորտունատովը պարզում է լիտվերենի և պրուսերենի իջնող և բարձրացող շեշտերի փոխհարաբերությունը<sup>1</sup>: Ըստ Ֆորտունատովի՝ լիտվական ir, il և in, im երկբարբառների տոնի տարբերությունները կապված են այն բանի հետ, թե դրանք հնդկերոպական երկար, թե կարճ ձայնորդներն են արտացոլում և ըստ այդմ սանակրիտական ॄ-ին, ա-ին, ॠ-ին և ॡ-ին են համապատասխանում. հմմտ. լիտվ. mirtas—սանսկր. mṛtab «մեռած» և լիտվ. girtas «հարբած»—սանսկր. gīrnab «կլանված»: Սրանով իսկ հաստատվում է հնդկերոպական երկար ձայնորդների գոյությունը:

Ֆորտունատովն ուրույն կարծիք ունի հնդկերոպական ձայնավորների թուլացման (սեղուկցիայի) բնույթի և սրա հետ կապված, հնդկերոպական ॄ, ॠ, ॡ վանկարար ձայնորդների արտասանության մասին<sup>2</sup>: Ըստ նրա՝ բացի ॠ-ից, որ երկար ձայնավորների (ē, ō, ā) թուլացման արդյունք է, պետք է տարբերել և ॡ-ն, որով նա պայմանականորեն նշանակում էր կարճ ձայնավորների (e, o, a) թուլացումը: Այսպիսով, Ֆորտունատովը տարբերում էր թուլացման երկու աստիճան՝ 1) ē, ō, ā > ə և 2) e, o, a > a. Ի տարբերություն հնդկերոպաբանների մեծ մասի՝ նա ॄ, ॠ, ॡ վանկանվանների դիմաց ենթադրում էր ar, al, am, an կամ, երբեմն էլ, ra, la, ma, na, ընդ որում այս դեպքերում վանկարար էր համարում ձայնորդային մասը և ոչ թե ա ն. ա-ի դիրքի տարբերությունների հետ էլ Ֆորտունատովը կապում էր սլավոնական լեզուների ь, ъ թուլացած ձայնավորների դիրքային

<sup>1</sup> Հետազոտում Ռ. էկլըովը վիճարկում է Սոսյուր-Ֆորտունատովի դրույթը շեշտի տեղաշարժի մասին, թեև, իհարկե, բալթիկ-սլավոնական շեշտի բնույթի հակառակ հարաբերության դրույթը մնում է:

<sup>2</sup> Հմմտ. С. Д. Кацнельсон, Теория сонантов Ф. Ф. Фортунатова..., ВЯ, 1954, № 6, էջ 48 և հջ.

-տդստեամենցու թ 968Է (Ն՝Ր՝ Գ) մնգղզվմտիեցլտղծստ (լոմմզվ  
 -զն քոհի Լոզվքրահոհի) զվմտղթլոնեռն զտհոհինուչ զվյ զք Լզեռոք Լն  
 ճվմզզղչսնթխանհոտոհ վիվտ զվձմզի Լգիղտեհչտե վն զ-լ ձգր վմզզ  
 -դրսնթխանհոտոհ Ա ԼՐ Լ Գ Կոպ Գ Լգիղտեհչտե զ-1 ձգր վմզզղչսնթ  
 -րսնհոտոհ Ա ԼՐ Լ Գ Լոմզ տոյ Գ թլրսղմզ մսզ մտորսմսի վ-լ  
 վղզմզհինուչ զվյ քրսթեղն ոմ մս Կպլտտ Գ ճրսն թ 888 Ե ողսզե  
 միստողրստմսզ Ե թլրսղմզ վղտձմՆ Նս ողեմս մն քրսիտվն մնմսմ  
 -հմզ Ե-լ մն քրսղտպոտտոտոտրտչ քրսմզղչսնզլ զտհոտեմդնուչ Ոտ  
 զվ-1 զտհոտեմդնուչ մնզ քրսմզթեղն զրտ Կիսպիտոմ Լ Դ 1 Երսնուչ  
 րսիմզ Գ Լգիտ «Կիսզիթնզչ» քրսմզղչսնզլ զտհոտեմդնուչ զտեռոզր  
 կոպ Կիսեմզի ղսփսփիզտ Գ Լգիղտեհչտե քրսմզղչսնզլ զտհոտեմդնուչ  
 զ-1 Երտհոտեմդնուչ Երտմզ տոմ Կմ-լ Լգնզ Գ զմզն զրսնղլոմլոզ  
 զտհոտեմդնուչ մս Եղվն քրսթմտի Ե մղտրնեռնվտզե վտվմիոզտո Կսլտս  
 ձմստ «մնզղչվմնրսնեռնոհմզղ վրնվիվտտմտեռքսի զտհոտիվտզչզ»

վզղղտի

-տնսո զք Լզզմտն ձտստ ճվմզղչսնիտղրոք մսզ զվմտիեցլտղծստ  
 զտեռոք ճվմզղչստձմտձիմզ քրսմտեաւտչչ Ե վմզղչղտիտՆ զք Լգիղսնի  
 ձտստ ճվմզղչսնիտղրոք վձմռ զվձտստ քրսղտձմՆ Նտի մնզղղրոք  
 -տնոմ զտիՆղ Լոմզ տոմ Ե մզղղտտն Լսմս զտրնեռնմտն քրստտտ  
 -ոտչ «մնզղչսնթխսնփսփի հրստեչոզղչտտ վիեզլ մսնՆղտձմ  
 -րսն ոպլտտ ճրսն «մնզղչսնթխսնփտՆղվմս մսղտչնղմ վմզղչսնթ  
 -րսնփսփսի Գ քրսնմտե ող Ե լսմտ» Դ «Նմտե» Լիվտ րսիմզ զտրնեռն  
 -փտի վմզղղրոքտնոմ Կսնզմզմտտ քրսղղմզղվտտ Դ քրսղչմոզ  
 -րսչ զվն քրսղղմզհինուչ զվյ քրսղտիտղսիտոտոլոզ մղրսնթխսնփ  
 սփ վմզղղրոքտնոմ (ՅԻՔԻՑԻՑԵԻՑԵԻՑԵ) զվմտրձտղձվր Գ քրսղղձ զզմ  
 -սղոտրոմղոտր ող Ե մն զթլրսղմզ (վմտվմտնվլտտտոտե) զտրնեռն  
 -րտձ զվմտիտղվ Ե մտչ վոպիտղր մք մսղմտի մտրտչ զտրնաղտմ  
 -տիեզլ զտհոտեմդնուչ դտղ Գ քրսղնզնեռն զվիստողրստմսզ

քրսեռոհ մնՆ տչչ վձմվն մղրսնթխսնիմզ

վմզղչնսնիտղրոք միստողրստմսզ քրսթմվն Որսթ զրոպր մղրսնթխսն  
 վմզղչնսնիտղրոք մտիմզ մն քրսղրսնղմ մս «վմտնոսր զրսնթխսնթմտտ Ե  
 Ե (մնզղրսնսնեռն վմզղչնսնիտղրոք Ա Ե Ե Լ զրոքտնոմ Դ վմզղ  
 -մսնիտղրոք) մզղրսնսնեռն զվմտտեմտձիմզ Դ (մնզղրսնսնեռն  
 վմզղչնսնիտղրոք Ա Ե մսիտղրոք Դ վմզղչսնիտղրոք) մզղրսնթխսնիտղրոք  
 մն քրսմզմտտ միստողրստմսզ քրսթմվն Նգքրս ձրոթլրսնհոտեռն  
 ոմ «ձիտմս զտիտղրոքտնոմ ճղզմվ զք քրսղտեհչտե մնզղչնսն  
 -րոք զտեռոզր կոպ Ե վմզղչսնիտղրոք քրսիոպսի քրսթմվն Որսթ զք Ե-ձ  
 Դ Ե-լ զրոպր Ե վիստեռստմսզ տոմ «զրոքտր Ե մնզղչսնթխսնթմտտ

դք վր զգրու զվոռովր սոց ամն զ սոց վմգսմ Նանգղոս ժրվյ մզմ  
 -մտտ ք մասդոչնդմ ձգր վստմ դք վր զգրդ...» Կամի դոռվյ վմզդ  
 -դրանքսմզմմուտ րս վմզդդրանքսմդոչնդմ վմզդՆվդոհտոչ դոհոտդք  
 ք րսսզգմմուտ րոհ րսսզգդոտրդ մմզստմ նրո րսսս նդմ «մզրսնք  
 -րսնոհստ վմզգմրոյ Եվիտմզմմուտյ վմզստմ րսսզստ ք վստոհ ըմիսս  
 -տոչստմսոց ովզոսոյ զվոռոք վդք վմզստյ րսսնմոչ ուտ զվզդժնոհ  
 -ոչ վմսնոսը իսնզոյոհի լրդստոփո վմզդդրանքսմզմմուտյ զվոռոք  
 վմզստմ րսսզստ ք վիՆոչ ու «դրոհոտ «րսսժեղն ուտ Եվզրսնքրսս  
 -ոչոչստսմո զոհոտդրսնդչ սոցմիդսի վդք ք րսսդդ ձգր դոռնքրսս  
 -մդի մվ դիստտոչստմսոց Վզմոստոհի ք մզն զոհոքրսսնոժոստ ժրոք  
 -ստ մասդոչնդմ զ ք րսսիսոմոնմո զզմսոչոհոքրստոտ մրնվոռքսմսոց  
 վիստտոչստմսոց մրսսնոժնմոն զոհոնսդսոց զոռքոչմրմ զոհոդոհի  
 -տմզժտվմզ վդք ք րսսդնոհոհմզդ լք ժրոոտր «քզն զոռնքրսսդոհոն  
 -սնզոչոչ զոռնքրսսդոհոհմզժ զոհոդոժոքրոստ մմզդնսդսոց վոռվն  
 -եզնդսի զոհոդոժզնսչ զվք րսսնք մս իսսմժոհո ուտ ք զոիմսի  
 -տոչոքրոտ ժրոոտր զվոռոք վդք մժդրսրոս վիստտոչստմսոց

Կամի դոռնոժնմոն զոռնքրսոչս զոռնքրսսդոհոհմ  
 -զժ զ վժտր զոհոտտվեոչոհոհոհմզժ ռսս լզզմսն զզ զրսնքրսսնեո  
 Եվիտոհոդոնը մմզդրսսրսս իստոդժոյ մոն վմզնմոչ զոռքսսիոժ  
 -րմոյ վմզոտր վժոսոյ վմզստմ «վժրսնդ վմզդոքվմսնզստոհ զոհոդ  
 -ոհոհմզժ «զոռնքրսսզմմուտյսսս վմզդՆվրեոհի զոհոդոժոքր զ վժ  
 -զոիմսստոհ զոհոդոժոքր վստյ զվմզնմոչ զոռնքրսսզմմուտյսսսս  
 զոռնքրսսիոնդոիսմ րս վդք զոիեոհի սոց ամո զ զոռնքրսսսզոտր  
 րս վիսզլ լզմվիդ ք զրսնքրսսնեոս վոռնն միստտոչստմսոց

Ելլոտ զ զոռնքրսնմոտ զոռնքրսսոհոտոն րսսդոչո  
 վր ուղ րսսզնմոչ զոհոդոժոքր «զվրդստոփո վմզդդրանքրսնեոժմզչ  
 զոհոտսսմդնդչ րսսզնոհոտոչ ք զրսնքրսսնեոս Նվժ ոչոտոմդոչնդմ  
 զ մզրսնքրսսզմմուտյսսսս նրոնն րսսնմոտ վր ուղ «մզդք նզրս» զ  
 «Նրսնք» ոչոտոչրսնդչ վստրոստ իսնզմզմմուտ «ք ժոչոհ ուժ «զվսոյմի  
 -ոչոտ րսսզնոհոտոչ ք նզս տոՆ վիզիտ ուղ րսսզզմսն զոհոդոժնիո  
 -մվ «ոչոտոն «մմզդդրանքրսսզժ Նսսս զոռնքրսսդոժոիեզլ Եվիտոհոդոք  
 -ոք մվ զվք հրստոչ զվիստտոչստմսոց զվզնդոչ իսսնսմ ուղ

(ՁՈՒԳՔԱՆԸ ԿՈՒ ԱՎՆ ԿՈՏ ԿՈՍՏ ԿՈՍՏ ԿՐԵԱՆՏ ԿՎՈՂՈՍ  
 ԿՍՈՒՐԵՅ) Ի րսսզդրսնզլ Նո «ք ք լզիտ րսսզզմզնդչ զվչ րսսնեոտոչչ  
 մոռ լոտվո Նսսսդո նրո իսժվզմոհի մոն «իս-չ ք րսսսոսսնը  
 զզմսոչոհոդոքրոտ մս իոոոզս նսսմզ վր վմզոտոժ ժոքրոչ վիեզժ  
 -տոլոչ զոհոտսսմդնդչ ք րսսզգմմուտ Եվ-ք զ Եվ-ք վնոժ միստտոչ  
 -րստմսոց մմզդդրանքրսսոտ զոնզ իսնզդոժ ք զվնմոչ ուտ իսն



բառի մեջ՝ հարաբերակից է ուրիշի հետ, այսինքն՝ ենթադրում է այլ ձևի առկայություն՝ այլ ձևական պատկանելությամբ, բայց բառերի միևնույն հիմքերով, այսինքն՝ նույն այդ նրանց հիմնական պատկանելություններով»<sup>1</sup>։

Լեզուն Ֆորտունատովի համար այնպիսի նշանների գումար է, որոնք ծառայում են մտքերի արտահայտմանը ինքնին (անձայն մտածողության դեպքում) և խոսքի մեջ՝ մի կողմից և զգացմունքների (ЧУВСТВОВАНИЯ) արտահայտմանը՝ մյուս կողմից։ Մտածողությունը ներկայացնում է պատկերացումների զանազան տիպի զուգորդումների ամբողջություն և միաժամանակ այդ պատկերացումների հարաբերակցության զգացում։ Լեզուն որպես մտածողության նշանների և մտքի ու զգացմունքների արտահայտման նշանների գումար կարող է լինել ոչ միայն բառերի լեզու, այլև ժեստերի ու միմիկայի լեզու։ Լեզվաբանության ուսումնասիրության առարկան բառերի լեզուն է, բայց լեզվի երևան գալու հոգեֆիզիկական պայմանները հասկանալու համար պետք է նկատի առնել և մտքերի արտահայտության մյուս միջոցները՝ շարժումների լեզուն։ Այստեղից բխում է, որ լեզվական հետազոտության ժամանակ պետք է ելնել բառից։ Բառը հանդես է գալիս դանազան կապակցությունների մեջ. բառն, այսպիսով, կարող է ընկնել որպես առանձին բառ և որպես ավարտուն բառակապակցության (նախադասության) անդամ։ Առանձին բառերը լինում են՝ 1) լրիվ բառեր (ПОЛНЫЕ СЛОВА), որոնք նշանակում են մտքի առարկաներ և հանդես են գալիս որպես նախադասության անդամներ ու ամբողջական նախադասություններ, 2) մասնակի բառեր (ЧАСТИЧНЫЕ СЛОВА) և 3) ձայնարկություններ։ Առանձին լրիվ բառերը, բացի նյութական իմաստից, կարող են ունենալ նաև ձևական իմաստ։ Նյութական իմաստի ուսումնասիրությունը բառագիտության առարկան է կազմում, ձևական իմաստինը՝ քերականության։ Քերականության երկու մասերից ձևաբանությունն ուսումնասիրում է առանձին բառերի ձևերը, շարահյուսությունը՝ բառակապակցությունների ձևերը։ Խոսքի մասերի դասակարգման հիմքում Ֆորտունատովը դնում է ձևական հատկանիշները՝ խոսքի մասերը համարելով բառերի քերականական խմբեր։ Բառերի ձևերը նա բաժանում է բառակազմության ձևերի և բառափոխության ձևերի։ Թվի, սեռի, համեմատության աստիճանների, բայամակբայների (деепричастие) ձևերը, այլև բայի հարաբերակցական

<sup>1</sup> Ф. Ф. Фортунатов, Избранные труды, I, М., 1956, էջ 137.

կերպային ձևերը դիտվում են որպես բառակազմության ձևեր: Շարահյուսության գլխավոր նպատակը Ֆորտունատովը համարում է բառակապակցությունների, այսինքն՝ երկու լրիվ բառերի զուգորդումների ուսումնասիրությունը՝ արտահայտեն դրանք ամբողջական հոգեբանական դատողություն, թե դրա մի մասը: Նախադասությունը Ֆորտունատովի համար հոգեբանական դատողության արտահայտություն է, ընդ որում հոգեբանական ստորոգյալ է համարվում ամեն մի խոսքի մաս, որը իր վրա է կրում գլխավոր շեշտը, ընդգծվում է խոսողի կողմից:

#### գ. Կազանի լեզվաբանական դպրոց

Ի. Ա. Բոդուեն-դե-Կուրտենեն.— Իվան Ալեքսանդրովիչ Բոդուեն-դե-Կուրտենեն (1845—1929) Կազանի լեզվաբանական դրպրոցի հիմնադիրն է և լեզվաբանության ամենականավոր ներկայացուցիչներից մեկը: Նա տարբեր ժամանակներում դասավանդել է Կազանի, Յուրի, Պետերբուրգի, Կրակովի համալսարաններում: Նրա աշակերտներից առանձնապես հիշատակելի են Ն. Վ. Կրուշևսկին, Վ. Ա. Բոգորոդիցկին, Ա. Ի. Ալեքսանդրովը, Ս. Կ. Բուլչը, Լ. Վ. Շչերբան և ուրիշները: Մի շարք բնագավառներում նրա հայտնած մտքերը դարձան ժամանակակից լեզվաբանության անկյունաքարային դրույթները: Լինելով Շլայխերի աշակերտներից մեկը՝ նա հետագայում հրաժարվել է վերջինիս «մեռցնող ֆորմալիզմից», ինչպես արտահայտվել է նա իր ինքնակենսագրության մեջ, և փնտրել լեզվաբանության զարգացման նոր ուղիներ:

Բոդուեն-դե-Կուրտենենի հայացքները իրենց որոշ կողմերով համընկնում են երիտքերականների հայացքների հետ. սակայն նախ՝ մի շարք դեպքերում նա դրանց հասել է միանգամայն ինքնուրույն ճանապարհով ու նույնիսկ նախորդել երիտքերականներին<sup>1</sup>. երկրորդ՝ նա շատ հարցերում քննադատական դիրք է գրավել երիտքերականների նկատմամբ և առանձին դեպքերում կանխել նորագույն լեզվաբանության մի շարք սկզբունքները:

Բոդուեն-դե-Կուրտենենի լեզվաբանական կոնցեպցիայի հիմքում ընկած է սուբյեկտիվ պսիխոլոգիզմը: Հասարակական խըմ-

<sup>1</sup> Այսպես, զեռես 1868 թ. նա հատուկ ուսումնասիրություն է նվիրել անալոգիայի դերին լեհական հոլովման մեջ. I. Baudouin de Courtenay, Einige Fälle der Analogienwirkung in der polnischen Deklination. KZ, IV, 1870 (դրված է 1868 թ.):

բակցութեան լեզուն նրա համար «մաքուր արստրակցիա» է, միակ աեալութիւն հանդիսացող անհատական լեզուների պարզ միջինը. «Լեզուն,— գրել է նա 1904 թ.,— գոյութիւն ունի միայն անհատական ուղեղներում, միայն հոգիներում, միայն տվյալ լեզվական հասարակութիւնը կազմող անհատների և առանձնակներ՝ հոգեկանի (ПСИХИКА) մեջ: Յեղային և ազգային լեզուն մաքուր վերացականութիւն է (ОТВЛЕЧЕННОСТЬ), ընդհանրացնող կոնսարուկցիա, որ ստեղծված է մի ամբողջ շարք իրապես գոյութիւն ունեցող անհատական լեզուներից: Այդպիսի ցեղային կամ ազգային լեզուն բաղկացած է լեզվական պատկերացումների և արտալեզվական պատկերացումների զուգորդումների գումարից, զուգորդումներ, որոնք հատուկ են անհատներին և, վերացական, արստրակտ իմաստով, միջին հետևութեան ձևով, նաև ժողովուրդներին ու ցեղերին»<sup>1</sup>: Միայն անհատական լեզուն է, ըստ Բողոևնի, մի միատարր ամբողջութիւն. ժողովրդի լեզվի միատարրութիւնը լոկ ֆիկցիա է: Սակայն այս սուբյեկտիվ պսիխոլոգիզմը միշտ չէ, որ Բողոևն-դե-Կուրտենի մոտ նման «մաքուր» արտահայտութիւն է գտել: Իր գործունեութեան վաղ շրջանում, երբ սուբյեկտիվ պսիխոլոգիզմը դեռևս այդպիսի խորացված արտահայտութիւն չէր ստացել, երբ դեռևս Հումբոլդտի և Գրիմի լեզվաբանական դրույթների աղղեցութիւնը ուժեղ էր, Բողոևն-դե-Կուրտենն լեզուն դիտում էր որպես ժողովրդի ընդհանուր հատկանիշ, որ հատուկ է նրա մեջ մտնող բոլոր անհատներին. ճիշտ է, հասարակական երևույթները նա ըմբռնում էր իդեալիստական-հոգեբանական տեսանկյունով, բայց և այնպես դեռևս շկար այն նեղ իդեալիստական սուբյեկտիվիզմը, որ հետագայում դառնում է տիրապետող. «Լեզուն մի կոմպլեքս է տարրորոշված և իմաստավոր (знаменательный) հնչունների և հնչակցումների (СОЗВУЧИЕ), որոնք միացված են որպես մեկ ամբողջութիւն մի որոշակի ժողովրդի զգացումով (ЧУТЬЕ), ժողովրդի որպես զգացող և անգիտակցութեամբ ընդհանրացնող այն միամորթների կոմպլեքսի (խըմբավորման), որոնք մտնում են միևնույն կատեգորիայի, միևնույն տեսակային հասկացութեան մեջ՝ իրենց հատուկ լեզվի հիման վրա»<sup>2</sup>:

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Язык и языки. Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Эфрона, 81. 1904. էջ 531:

<sup>2</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Некоторые общие замечания о языковедении и языке, СПб, 1871. էջ 37:

Հնդդունելով Հսամբուզտի գրույթը լեզվի՝ մտքի կազմակերպող օրգան լինելու մասին՝ Բոդուեն-դե-Կուրտենեն կասկածի տակ է առնում նրա գրույթները այն մասին, որ չկան մտքեր առանց լեզվի և որ լեզուն ոգու անընդհատ կրկնվող գործունեություն է՝ հնչյունը մտքի արտահայտիչ դարձնելու նպատակով: Ըստ Բոդուենի՝ լեզուն «օբյեկտիվ հոգեկան երևույթ» է, ոգու ընդհանրական ուֆլեքս աշխարհի հարուցած գրգիռների հանդեպ. այն բաղկացած է 3 կարգի պատկերացումների խմբերից՝ 1) ֆիզիոլոգիական շարժումների պատկերացումների, 2) նշված ֆիզիոլոգիական շարժումների ակուստիկական արդյունքների պատկերացումների և 3) բացառապես ցերեքրացիոն պատկերացումների<sup>1</sup>:

Իր գործունեության հետագա շրջանում էլ Բոդուեն-դե-Կուրտենեն, փաստերի ճնշման տակ, հոգեբանական հիմքը այս կամ այն շահով զուգորդում է հասարակականի հետ: Նշելով, որ լեզվական փոփոխությունները կարելի է բացատրել միայն հոգեբանորեն ու ֆիզիոլոգիապես, իսկ հոգեբանական ու ֆիզիոլոգիական պրոցեսները տեղի են ունենում միայն անհատների մեջ՝ Բոդուեն-դե-Կուրտենեն ստիպված է որոնել անհատների մեջ կատարվող պրոցեսների ընդհանրության հիմքերը. այս ընդհանրությունը, այսինքն՝ մարդկանց՝ իրար հասկանալը բացատրելու համար նա դիմում է ոչ միայն նախորդ լեզվաբանների մոտ տարածված գրույթին մարդկանց կառուցվածքային ընդհանրության մասին, այլև մարդկանց գոյության պայմանների ընդհանրության և հաղորդակցման անհրաժեշտության գրույթին. «Հոգեկան և ֆիզիոլոգիական պրոցեսները, — գրում է Բոդուեն-դե-Կուրտենեն, — ընթանում են միայն անհատների մեջ և ոչ մի դեպքում հասարակության մեջ: Իսկ որ նրանք ընթանում են առանձին անձերի մոտ նման և նույնիսկ միատեսակ ձևով, ապա լայն կախված է նրանց կառուցվածքի միատեսակությունից և նրանց գոյության պայմանների միատեսակությունից և բացի դրանից՝ հոգեկան փոփոխությունների դեպքում հասարակայնացված առանձնակների (обобществленные особы) ինքնին ենթադրվող հաղորդակցումից»<sup>2</sup>:

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Язык и языки, *Եռյն տեղը*, էջ 532.

<sup>2</sup> I. Baudain de Courtenay, O ogólnych przyczynach zmian językowych, „Szkice językoznawcze“, I, Warszawa, 1904, էջ 52. Բաղկածքն ըստ Լ. Վ. Շչերբայի, И. А. Бодуэн-де-Куртенэ и его значение в науке о языке, „Избранные работы по русскому языку“, 1957, էջ 92.

Բողոեներ նույնիսկ փորձ է անում ցեղակցութեան հնդերոպական անունները բացատրել նախնադարյան հասարակութեան հասարակական պայմաններով՝ այդ անունների բիոլոգիական իմաստը համարելով՝ երկրորդական, նյութեր է հավաքում հասարակական խմբավորումների լեզվական տարբերակումների վերաբերյալ և այլն. շատ ավելի ուշ նա խոսում է և բառիմաստների փոփոխութեան հասարակական հիմքերի մասին:

Բողուեն-դե-Կուրտենեն կանգնած է հետևողական պատմականութեան սկզբունքի վրա: Սակայն յուրացնելով երիտքերականների լեզվական անընդհատականութեան սկզբունքը, նրանց նման առաջնություն տալով կենդանի լեզուների ուսումնասիրութեանը մեռածների հանդեպ՝ Բողուենն այնուամենայնիվ զերծ է նրանց միակողմանիութունից և հանդես է բերում հարցի ավելի խոր ըմբռնում:

1) Ամենից առաջ՝ հակառակ Պաուլի, որ լեզվաբանութեան հետազոտութեան բնագավառը սահմանափակում էր միայն պատմական հայեցակետով, Բողուենը կարևոր է համարում նաև լեզվի ուսումնասիրութեան ստատիկ-սինխրոնիկ հայեցակետը: Բնութագրելով Կազանի լեզվաբանական դպրոցի հիմնական սկզբունքները՝ նա շեշտում էր «ամեն ժամանակ լեզվի տվյալ վիճակում տեղի ունեցող փոփոխությունները և պատմութեան մեջ, շատ դարերի ընթացքում ու խոսող սերունդների մի ամբողջ շարքում տեղի ունեցող փոփոխությունները տարբերակելու կարևորությունը»<sup>1</sup>: Սրանով իսկ Բողուենը կանխում է Սոսյուրի միտքը լեզվի հետազոտութեան սինխրոնիկ (համաժամանակյա) և դիսխրոնիկ (տարաժամանակյա) հայեցակետերի տարբերութեան մասին: Սակայն, ի տարբերութուն Սոսյուրի, Բողուենը այդ հակադրությունը ծայրահեղութեան չի հասցնում, մեկի գոյությունը մյուսից չի կտրում և առաջնություն չի տալիս սինխրոնիային՝ դիսխրոնիայի հանդեպ. «Լեզվի մեխանիզմը, — գրում է նա, — և ընդհանրապես նրա կառուցվածքն ու կազմը տվյալ ժամանակ ներկայացնում են նրան նախորդող ողջ պատմութեան, նրան նախորդող ողջ զարգացման արդյունքը և, ընդհակառակն, այդ մեխանիզմով որոշակի ժամանակում պայմանավորվում է լեզվի հետագա զարգացումը»<sup>2</sup>:

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Лингвистические заметки и афоризмы, ЖМНП, 1903, էջ 32.

<sup>2</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Некоторые общие замечания..., էջ 26.

Բողուենը երիտօքերականների նման առավելութիւնն է տալիս կենդանի լեզուների ու բարբառների ուսումնասիրութեանը հին մեծ լեզուների հանդէպ: Սակայն եթե երիտօքերականները կենդանի լեզուների ուսումնասիրութիւնը կատարում էին վերջ ի վերջո հին տարրերի և հնութեան մնացորդների հայտնաբերման նպատակով, ապա Բողուենին դրանք հետաքրքրում էին նաև հենց ինքնին՝ և՛ այն տարրերով; որոնք գալիս են հնից, և՛ այն տարրերով, որոնք նորի սաղմերն են: Բողուենի բարբառագիտական աշխատանքները այս առումով մեթոդական զգալի նորութիւնն էին բերում: Կենդանի լեզուների ու բարբառների ուսումնասիրութեամբ, նրա կարծիքով, ընդհանրապես ավելի լավ կարելի է բացահայտել լեզվական երեւոյթների ներքին կապն ու պատճառականութիւնը, լեզվի ֆունկցիոնալութեան ու զարգացման գործոնները: Բողուենը ղնում էր լեզվի ուսումնասիրութեան մեջ կենդանի, գործուն և անկենդան, ոչ-գործուն քերականական կատեգորիաներն ու բառակազմական տիպերը տարբերակելու պահանջը, որ ուներ և՛ տեսական, և՛ գործնական կարևոր արժեք<sup>2</sup>:

Բողուենի գլխավոր արժանիքներից մեկը լեզվաբանութեան պատմութեան մեջ ֆունկցիոնալ հայեցակետի ներմուծումն է, ըստ որի լեզվական երևոյթները (միջոցները) պետք է քննել ու գնահատել նրանց ֆունկցիոնալ առումով. այստեղ հնչյունների ֆունկցիոնալ քննութիւնը հանգեցնում է ֆոնեմայի գաղափարին:

2) Բողուենը պատմական պրոցեսը պատկերացնում է որպես ընդհատականի և տնընդհատականի հակադրամիասնական պրոցես՝ մոտենալով երիտօքերականների նեղ էվոլյուցիոնիզմի հաղթարմանը. «վերջ ի վերջո,—գրում է նա,—պատմութիւնը նույնպես զարգացում է, բայց ընդհատական զարգացում (перерывистое развитие) ինչպես տարածութեան, այնպես էլ ժամանակի մեջ: Միաժամանակ ապրող մարդկանց բաժանում է տարածութիւնը»<sup>3</sup>: Ընդհատականութիւնը ժամանակի մեջ նա պատկերացնում է որպես ընդհանուր լեզվական պրոցեսի բաժանում տարբեր անհատների լեզուների զարգացման. միաժամանակ նա այդ զարգացումը դիտում է որպես անընդհատ շերտավորումների պրոցես.

<sup>1</sup> Հմմտ. Մ. Բ. Шерба, հիշ. աշխ., էջ 89—90:

Հմմտ. նույն տեղը, էջ 88:

<sup>3</sup> J. Baudain de Courtenay, O ogólnych przyczynach zmian językowych, „Szkic. językoznawcze“, I, Warszawa, 1904, էջ 52: Քաղվածքը ըստ Մ. Բ. Шерба-ի հիշ. աշխ., էջ 91:

որոնց վերհանումը լեզվաբանության գլխավոր խնդիրներից մեկն է համարում. «Տվյալ լեզուն,— գրում է Բոգունենը,— շի ծնվել հանկարծ, այլ առաջացել է աստիճանաբար շատ դարերի ընթացքում. նա ներկայացնում է տարբեր շրջաններում տեղի ունեցող յուրատեսակ զարգացման արդյունքը: Զարգացման շրջանները չեն հերթափոխվել, ինչպես մի պահակը մյուսով, այլ յուրաքանչյուր շրջան ստեղծել է որևէ նոր բան, որը աննկատելիորեն հաջորդին անցնելիս կազմում է հետագա զարգացման հիմքը (подкладка): Տարբեր շրջանների աշխատանքի այդպիսի արդյունքները, որոնք նկատելի են որոշակի օբյեկտի տվյալ վիճակում, բնական գիտությունների մեջ կոչվում են շերտեր. կիրառելով այդ անվանումը լեզվի նկատմամբ՝ կարելի է խոսել լեզվի շերտերի մասին, որոնց առանձնացումը կազմում է լեզվաբանության գլխավոր խնդիրներից մեկը»<sup>1</sup>: Լեզվի պատմության այս ըմբռնման հետ էլ կապված է լեզվական երևույթները քննելիս հարաբերական ժամանակագրությունն սահմանելու բողոենյան պահանջը: Նրա կարծիքով լեզվի պատմական հետազոտությունը պահանջում է առանձնացնել ժամանակագրական շերտեր, ցույց տալ լեզվական երևույթների հաջորդականությունը: Բոգունենը և նրա աշակերտները լայն կերպով էկիրառում էին ժամանակագրության սահմանման սկզբունքը. այսպես, ինքը Բոգունենը ռուսական հնչյունական հերթագայությունների պատմության 5 շրջան էր տարբերում: Բոգորոդիցկին ևս փորձում է պարզել հնդեվրոպական մի շարք լեզվաճյուղերի հնչյունական փոփոխությունների հաջորդականությունը՝ տալով ժամանակագրական սխեմաներ:

3) Բոգունենի կարծիքով՝ հետևողական պատմականությունը պահանջում է յուրաքանչյուր լեզվի յուրաքանչյուր էտապ քննել՝ ելնելով այդ էտապից, այսինքն՝ նախորդ շրջանի մասին արված եզրակացությունները չվերագրել հաջորդին, և ընդհակառակն, տվյալ լեզվի կատեգորիաները չբռնադատել մյուսին: «Մայր աստիճանի անտեղի է լեզվի կառուցվածքը մի որոշակի ժամանակում չափել որևէ նախորդ կամ հաջորդ ժամանակի կատեգորիաներով,— գրում է Բոգունենը.— Ուսումնասիրողի խնդիրն այն է, որ լեզվի տարբեր շրջանների մանրամասն քննութայամբ որոշի նրա վիճակը այդ շրջաններին համապատասխան և հետագայում միայն ցույց տա, թե ինչպես կարող էր նախորդ ժամանակի այս-

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртене, Некоторые общие замечания..., էջ 23:

ինչ և այնինչ կառուցվածքից ու կազմից զարգանալ հետագա ժամանակի այսինչ կառուցվածքն ու կազմը: Գենետիկական օբյեկտիվության նույն այդ պահանջը լիովին կիրառելի է և տարբեր լեզուների ուսումնասիրության նկատմամբ ընդհանրապես. գիտական չէ մի որոշակի լեզվում առանց որևէ հետագա կողմնակի պարագայի տեսնել մի ուրիշ լեզվի կատեգորիաները. գիտությունը չպետք է օբյեկտին պարտադրի նրան խորթ կատեգորիաները և պետք է փնտրի նրա մեջ միայն այն, ինչ նրա մեջ ապրում է՝ սլայմանավորելով նրա կառուցվածքն ու կազմը»<sup>1</sup>:

4) Բողուենը պահանջում է լեզուների ծագումաբանական խմբավորումներ կատարելիս դիմել նրանց ամենից ավելի բնորոշ առանձնահատկությունների վերհանմանը և, սկզբունք ընդունելով լեզուների այս կամ այն բնորոշ գիծը, դրանք խմբավորել: Փոքր ինչ ուշ Բողուենը այսպիսի բնութագիրը պահանջում է փոխարինել լեզուների զարգացման ուղղությունը որոշող գծերի ավելի խորացված ու ամբողջական ուսումնասիրությամբ. «Ընդհանրապես լեզուների բնութագրերը (характеристики) ըստ որոշակի ստատիկ առանձնահատկությունների,—գրում է նա,—պետք է փոխարինվեն բնութագրերով ըստ պատմական զարգացման ամբողջական գծերի, ըստ այն աստիճանական ձևափոխությունների ամբողջական գծերի, որոնք լեզուները կատարել են իրենց բազմադարյան պատմական կյանքի ընթացքում»<sup>2</sup>:

Սկսելով ասոցիատիվ հոգեբանության սկզբունքներից՝ Բողուեն-դե-Կուրտենեն հանգում է լեզվական երևույթների կապակցվածության սկզբունքին. «Լեզվական մտածողության բոլոր տարրերը,—գրում է նա,—ինչպես հնչյունական, այնպես էլ ձևաբանական և իմաստաբանական, ինքնին դասավորվում են խմբերի և կարգերի»<sup>3</sup>: Լեզվաբանների խնդիրն է միայն այդ հոգեկան գոյությունը ճիշտ վեր հանել, իրենց դասակարգումների մեջ մոտենալ իրական վիճակին՝ առանց դիմելու արխաիզացիայի ու մոդեռնիզացիայի, առանց բռնադատելու տվյալ լեզվին մի այլ լեզվի

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Некоторые общие замечания..., էջ 26:

<sup>2</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Лингвистические заметки и афоризмы, ЖМНП, 1903, էջ 293. հմտ. Н. С. Чемоданов, Сравнительное языкознание в России, 1956, էջ 49—50:

<sup>3</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Введение в языкознание, V հ., 1917, էջ 61:



կատեգորիաները: Լեզվական երևույթների այս կապակցված ըմբռնումը երևան է գալիս առանձին միավորների բնութագրման մեջ: Այսպես՝ բառը Բողունը դիտում է բազմակողմանիորեն, որպես հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական հատկանիշներով որոշվող ամբողջություն<sup>1</sup>:

Բողուն-դե-Կուրտենեն անհրաժեշտ քննադատական վերաբերմունք է ցույց տալիս նախալեզունների վերականգնման զանազան փորձերին: Նրա կարծիքով՝ մեր կողմից վերականգնված ձևերը լոկ գիտական արտարկեցիաներ են, որոնց միևնույն ժամանակագրական մակարդակին պատկանելը չի կարելի հավաստել: Դրանք պատկանում են նախալեզվի գոյության տարբեր շրջանների, ընդ որում նախալեզուն էլ գոյություն է ունեցել որպես երկարատև էվոլյուցիոն փոփոխությունների շարքի շարունակությունը: Սրա հետ միասին Բողուն-դե-Կուրտենեն քննադատաբար էր մտաբանում նաև Յ. Շմիդտի «ալիքների տեսությունը»՝ նշելով, որ լեզունների և բարբառների տարբերակման և միավորման ուղիները խիստ բազմազան են: Դեռևս 1875 թ. Բողունը դնում է լեզունների խաչավորման ու խառնման գործոնի կարևորության հարցը: ավելի ուշ, նա այդ հարցին հատուկ աշխատություն է նվիրում («Բոլոր լեզունների խառնված բնույթի մասին», 1901)՝ դնելով սուբստրատի պրոբլեմը. այդ անվան տակ նա հասկանում է «այն ալլադեզ լեզունների ու բարբառների ազդեցության հնարավորությունը, որոնք դադարել են գոյություն ունենալուց և կլանվել են սվյալ լեզվի կողմից, բայց և այնպես նրան կտակել են իրենց ունեցվածքի, այսպես ասած, որոշ մասերը, — կամ, ուրիշ խոսքով, կորած լեզունների արտացոլման հնարավորությունը այժմ գոյություն ունեցող բարբառների ու խոսվածքների ոչ միայն բառապաշարի՝ այլև որոշ հնչյունական և ընդհանրապես քերականական առանձնահատկությունների մեջ»<sup>2</sup>:

Բողունի կարծիքով՝ լեզունների թիվն սկզբնապես ավելի մեծ է եղել. լեզունները պակասել են առանձին խմբավորումների փոխադարձ ոչնչացման և փոխադարձ մերձեցման ու նմանեցման ճանապարհով:

Լեզվի ծագման հարցում Բողունը տուրք է տալիս և՛ միջարկությունների, և՛ բնաձայնությունների տեսություններին: Նրա

<sup>1</sup> Հմտ. В. В. Виноградов, Современный русский язык, I. 1938, էջ 97:

<sup>2</sup> Քաղվածքը ըստ Մ. В. Щерба-ի հիշ. աշխ., էջ 90, ծանոթություն:

կարծիքով՝ լեզվի ծագման ու զարգացման պրոցեսը աննկատ և անգիտակից էվոլյուցիայի պրոցես է: Սկզբնական բառերի իմաստն անորոշ է եղել. դրանց հետագա զարգացման և տարբերակման միջոցով են առաջացել խոսքի մասերը: Բողոենը խստորեն բողոքում է լեզվի և ռասայի նույնացման փորձերի դեմ՝ նշելով, որ նույն լեզվով խոսողները կարող են պատկանել միանգամայն տարբեր ռասաների:

Հնչյունական հարցերի քննության մեջ Բողոեն-դե-Կուրտենեն էլնում է, մի կողմից՝ հոգեբանական մոմենտի առաջնությունից, մյուս կողմից՝ հնչյունական երևույթների ֆունկցիոնալ պայմանավորվածությունից, այսինքն՝ այն ֆունկցիայից, որ ունեն հնչյունական երևույթները որպես լեզվական արտահայտության միջոցի: Նրա համար լեզվաբանական փաստի արժեք է ներկայացնում միայն այն արտաքին հնչյունական երևույթը (հնչյունները և նրանց հատկությունները, ինտոնացիան, շարադասությունը, շեշտը և այլն), որ ունի լեզվական ֆունկցիա, իմաստաբանական կամ ձևաբանական ֆունկցիա է կատարում, հանդես է գալիս որպես «նշան»<sup>1</sup>: Սրա հետ է կապված հնչյունն ու տառը տարբերակելու և հնչյունի քննությունը ավելի խոր գիտական հիմքերի վրա դնելու պահանջը: Բողոենը դնում է հնչյունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկությունների ճշգրիտ ուսումնասիրության, հնչյունական հերթագայությունների ժամանակագրական շերտերի վերհանման, հնչյունական փոփոխությունների տեմպերի անհավասարաչափության, ժառանգ լեզուների հնչյունական հատկությունների աշխարհագրական բաշխման՝ հնդեվրոպական նախալեզվի մեջ ունեցած հիմքերի, պատմական հնչյունաբանությունը նկարագրականից առանձնացնելու հարցերը և այլն:

Այս կապակցությամբ առաջին հերթին նշելի է հնչույթի (ֆոնեմայի) գաղափարը, որ ղարգացրել են Բողոեն-դե-Կուրտենեն և Կրուշևսկին: Դեռևս 1870 թ. Պետերբուրգի համալսարանում կարդացած իր ներածական դասընթացում, որ 1871 թ. հրատարակվել է «Մի քանի ընդհանուր դիտողություններ լեզվաբանության և լեզվի մասին» խորագրով<sup>2</sup>, Բողոենը գործածում է ֆոնոլոգիա (ФОНОЛОГИЯ) բառը, բայց այն չի տարբերում ֆոնետիկա (ФОНЕТИКА, հնչյունաբանություն) բառից: Այդ նույն ձևով էլ Սոսյուրը

<sup>1</sup> Հմտ. Л. В. Щерба, հիշ. աշխ., էջ 94:

<sup>2</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Некоторые общие замечания о языковедении и языке, СПб, 1871.

1879 թ. օգտագործելով «Ֆոնեմա» բառը՝ այն շէր հակադրում «հնչյունին»:

1880 թ. Կրուչևսկին օգտագործում է «Ֆոնեմա» բառը նոր իմաստով՝ այն տարբերելով «հնչյունից»<sup>1</sup>:

1880/81 ուս. տարում Կազանի համալսարանում կարդացած իր դասախոսություններում<sup>2</sup> Բոդուեն-դե-Կուրտենեն ֆոնեմայի գաղափարը հիմնավորում է ձևաբանորեն և ստուգաբանորեն. տարբերելով անթրոպոֆոնիկան (որպես հնչյունների ֆիզիոլոգիա) ֆոնետիկայից (հնչյունների ընդհանուր ուսմունքից)՝ նա հնչյունը համարում է անթրոպոֆոնիկական, ֆոնեման՝ ֆոնետիկական միավոր. ֆոնեման Բոդուենը դիտում է ըստ իմաստային-ձևաբանական ֆունկցիայի և ստուգաբանական ընդհանրության, այն համարում ձևույթի (մորֆեմայի)՝ ձևաբանական վերլուծության նեցուկային նվազագույն միավորի («ձևաբանության միավոր, որ ավելի մանր ձևաբանական միավորների չի բաժանվում») բաղկացուցիչ տարր: Հետագայում ֆոնեմայի (հնչույթի) գաղափարը Բոդուեն-դե-Կուրտենենի մոտ հոգեբանական հիմնավորում է ստանում: Հնչույթը նրա համար «հնչյունի ընդհանուր պատկերացումն» է, որ միավորում է հնչյունների բազմազանությունը, հանդիսանում է ֆիզիկական բնույթ ունեցող հնչյունների հոգեբանական հիմքը: Միաժամանակ անթրոպոֆոնիկայի և ֆոնետիկայի նախկին ոչ այնքան պարզ տարբերման փոխարեն Բոդուենը սկսում է առանձնացնել անթրոպոֆոնիկան և պսիխոֆոնետիկան<sup>3</sup>, որ հիմք է տալիս ֆոնետիկայի (հնչյունաբանության) և ֆոնոլոգիայի (հնչույթաբանության) հետագա տարբերման համար:

Սրա հետ միասին՝ Բոդուենը նպատակ է դնում հնչյունների՝ տվյալ էտապի բնույթով պայմանավորված գծերը տարբերել այն դժերից, որոնք արդյունք են զարգացման նախորդ էտապի թողած շառանգության. այլ կերպ ասած՝ քննում է հնչյունները ստատիկ (սինխրոնիկ) և դինամիկ (դիսխրոնիկ) հայեցակետերի փոխհարաբերության մեջ: Յուրաքանչյուր տվյալ էտապում հնչյունները գտնվում են կոմբինացիոն կախման կամ, ինչպես Բոդուենն է ասում, կոհերենցիայի հարաբերության մեջ: Կոհերենցիան առաջ է

<sup>1</sup> Н. В. Крушевский, Лингвистические заметки, РФВ, 1880.

<sup>2</sup> И. А. Бодуэн-де-Куртене, Некоторые разделы сравнительной грамматики славянских языков, РФВ, 1881.

<sup>3</sup> И. А. Бодуэн-де-Куртене, Языкознание, Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Эфрона, 81, 1904, էջ 510.

բերում դիվերգենցիա, այսինքն՝ կոմբինացիոն փոփոխությունները Այս կապակցությունը բողոենը տարբերում է դիվերգենտներ և կոռելյատիվներ. դիվերգենտներ են կոչվում այն «հոմոգեն», աչսինքն՝ միևնույն ծագումն ունեցող հնչյունները, որոնց տարբերությունները պայմանավորված են տվյալ էտապում գոյություն ունեցող կոմբինացիոն պայմաններով (համտ. ք-ի հնչումը բառավերջում որպես ɤ, այսինքն՝ բօժ [=բօշ] և բօժա). կոռելյատիվներ են կոչվում այն «հոմոգեն» հնչյունները, որոնց ծագումը պայմանավորված չէ առկա կոմբինացիոն պայմաններով (համտ. քմայնացման հետևանքով ծագած հերթագայությունները՝ пекы-пекышь, ընդ որում առկա էտապում ք-ն ք-ի չի փոխվում, այն փոխվել է պատմական որոշ շրջանում): Յեղակից լեզուների «հոմոգեն» հնչյունների համար բողոենը գործածում է «կոռեսպոնդենտներ» տերմինը՝ տարբերելով դրանք դիվերգենտներից և կոռելյատիվներից: Բողոենի ուսմունքը հետագա փոփոխություններով ու լրացումներով՝ հիմք ծառայեց հնչյութաբանության (ֆոնոլոգիայի) և պատմական հնչյութաբանության (պատմական ֆոնոլոգիայի) ժամանակակից ուսմունքի համար, նպաստեց այդ ուսմունքի զարգացմանը:

Միաժամանակ իր «Հնչյունական հերթագայությունների տեսության փորձ» ուսումնասիրությամբ՝ Բողոենը փաստորեն դնում է այն դիսցիպլինի հիմքերը, որը հետագայում Տրուբեցկոյի կողմից կոչվել է «ձևահնչյութաբանություն» (մորֆոնոլոգիա):

Միևնույն ֆունկցիոնալ-հոգեբանական հայեցակետով է քննելում Բողոեն-դե-Կուրտենեն շեշտի էությունը և ազդեցությունը նրա կարծիքով՝ չշեշտված վանկերի ու ձայնավորների թուլացումն ու անկումը ոչ թե հնչյունական պատճառներով է բացատրվում, այլ հոգեբանական. այսպես, ուսերենի անորոշի ы վերջաձայնի կորուստը բացատրվում է ոչ միայն վերջին ձայնավորների վերացման ընդհանուր տենդենցով, այլ և այդ ы-ի ավելորդ լինելու զգացումով. այդ է պատճառը, որ նույն պայմաններում հոլովաչկան վերջավորությունը չի ընկնում: Հնչյունի մնալը կամ անհետանալը կախված է նրա ֆունկցիոնալ արժեքից՝ իմաստային կշռից. «...Այստեղ բանը բոլորովին էլ հնչյունական տարբերությունների և հնչյունական պայմանների մեջ չէ, այլ այն բանի

<sup>1</sup> J. Baudouin de Courtenay, Próba teorii alternacji fonetycznych, „Rozp. Ak. Um. Widz. Filol.“, XX, էջ 219—364, Kraków, 1894. **գերմաներենը՝** Versuch einer Theorie phonetischer Alternationen, 1895:

մեջ, որ ես կառաջարկեի «հոգեկան շեշտ» կոչել, այսինքն՝ արտասանության տվյալ վայրի՝ ձևաբանական և իմաստարանական զուգորդումների համար ունեցած հարաբերական կարևորության մեջ. «հոգեկան շեշտի» առկայությունը տվյալ ֆոնեման կայուն է դարձնում իր հնչական (фонационные) դրսևորումներում, իսկ «հոգեկան շեշտի» բացակայության դեպքում ֆոնեմայի արտահայտչականությունը ավելի ու ավելի է թուլանում և, անյնելով հնչական ֆակուլտատիվության (фонационная факультативность) աստիճանից, այսինքն՝ արտասանության միակ հնարավորությունից, բայց ոչ անհրաժեշտությունից, ժամանակի ընթացքում հասնում է լրիվ զրոյի, անհետանում է նաև հոգեկան, ուղեղային (церебрационный) աշխարհում»<sup>1</sup>:

Սրիտքերականների երկու կարևոր սկզբունքներից առաջինի՝ հնչյունական օրենքի նկատմամբ Բոդուեն-դե-Կուրտենեն յուրատեսակ դիրք է գրավում: Հնդունելով հնչյունական փոփոխականության օրինաչափականությունը՝ նա հնչյունական փոփոխությունները դիտում է որպես բազմաթիվ գործոնների գործողության արդյունք, ընդ որում այդ գործոնները, նրա կարծիքով, հաճախ հակասական տենդենցներ ունեն և գործում են տարբեր ուղղությամբ<sup>2</sup>: Ինչ վերաբերում է երկրորդ սկզբունքին՝ անալոգիային, ապա Բոդուենը հանդիսանում է նրա կարևորության առաջին նշողներից և կիրառողներից մեկը: Դեռևս 1868 թ. նա գրում է «Վեհական հոլովման մեջ անալոգիայի մի քանի դեպքերը» հոդվածը, որի մեջ ցույց է տալիս այդ գործոնի կարևորությունը հոլովման ձևերի միօրինակություն ստեղծելու գործում:

Անալոգիայի կողքին Բոդուեն-դե-Կուրտենեն ձևաբանական զարգացման կարևոր գործոն է համարում այսպես կոչված վերատարրալուծումը (переразложение) կամ վերամիասնացումը (переинтеграция), այն է՝ բառի ձևաբանական բաղադրիչների սահմանների տեղաշարժը: Այս սկզբունքը նա հաջողությամբ կիրառում է հոլովման հիմքերի նկատմամբ: Դեռևս 1870 թ. մշակելով այդ հարցը՝ 1902 թ. նա հրատարակում է «Դիտողություն հոլովման հիմքերի փոփոխականության, առանձնապես վերջավորությունների օգտին նրանց կրճատվելու մասին» ուսումնասիրություն

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртенэ, Лингвистические заметки и афоризмы, ЖМНП, 1903, էջ 8—9.

<sup>2</sup> Հմտ. Н. С. Чемоданов, հիշ. աշխ., էջ 37.

նը՝ Այստեղ նա ելնում է հոլովման հիմքերի ոչ պատմական ըմբռնման դեմ՝ նշելով, որ հնդերոպական հոլովման հիմքերը ենթարկվում են երկու տիպի՝ հնչյունական և անալոգիական փոփոխությունների: Այդ փոփոխությունների հետևանքով նախկին հիմքային ձայնավորները սլավոնական լեզուներում դառնում են վերջավորությունների անբաժան մասը, այսինքն՝ հիմքերից անցնում են վերջավորություններին: Կրուշևսկին և Բոգորոդիցկին ևս շարունակում են այս հարցի ուսումնասիրությունը՝ խոսելով «ձևաբանական կլանման» (морфологическая абсорбция) երևույթի, այն է՝ մի ձևաբանական միավորի՝ մյուսի կողմից կլանվելու մասին: Ի մի բերելով եղած արդյունքները՝ Բոգորոդիցկին տարբերում է լեզվի ձևաբանական զարգացման 4 գործոն՝ 1) անալոգիա, 2) վերատարրալուծում, 3) պարզեցում (опрощение), այսինքն՝ բաղադրության տարրերի հարաբերության միազանում ու պարզում և 4) տարբերակում (дифференциация), այսինքն՝ հնչյունապես տարբերակված ձևույթների ու բառերի իմաստային տարբերակում:

Պատմա-համեմատական մեթոդի համար կարևոր նշանակություն ունեն 1880—1881 թթ. Բոդուեն-դե-Կուրտենի զարգացրած այն միտքը, թե համեմատական վերլուծության միավորները քերականական իմաստավոր միավորները՝ ձևույթներն են: Հնչյունները չեն կարող այդպիսի վերլուծման ինքնուրույն հիմք ծառայել. նրանք կարևոր են այն շահով, որ շահով հանդիսանում են ձևույթների կազմիչ տարրերը և դրանով իսկ «հոգեկան բովանդակություն» ձեռք բերում, այսինքն՝ որպես հնչույթ (ֆոնեմա) հանդես գալիս: Այս առումով, Բոդուենի կարծիքով, համեմատության պրակտիկայում ձևաբանական համեմատությունները ծառայում են իբրև հնչյունական համեմատությունների մեկնակետ:

Ն. Վ. Կրուշևսկի.— Ն. Վ. Կրուշևսկին (1851—1887) եղել է Կազանի լեզվաբանական դպրոցի ամենից ավելի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը, որի ուշադրության կենտրոնում գտնվել են ընդհանուր լեզվաբանության և հնչյունաբանության պրոբլեմները<sup>2</sup>: Ինչպես նշել ենք, Կրուշևսկին առաջին լեզվաբան

<sup>1</sup> И. А. Бодуэн-де-Куртене, Заметки об изменяемости основ, в особенности же об их сокращении в пользу окончания, «Русский филол. вестник», Сборник статей, посвященных Ф. Ф. Фортунатову, 1902.

<sup>2</sup> Հմտ. Н. В. Крушевский, Лингвистические заметки, РФВ, 1880. Очерк науки о языке, Казань, 1883. Антропофоника, 1894 (հրատարակված է ետմահու՝ Վ. Ա. Բոգորոդիցկու կողմից):

է, որ ֆոնեման (հնչույթը) տարբերել է հնչյունից: Միաժամանակ նա պաշտպանել է Բոդուենի «անթրոպոֆոնիկա» տերմինը՝ ի հակադրութիւն «հնչյունների ֆիզիոլոգիայի»: Կրուշևսկին իր գործունեութեան դեռ վաղ շրջանում Բոդուենի նման պահանջում էր ուշադրութեան կենտրոնում պահել կենդանի լեզուների ուսումնասիրութեան հարցերը: Հնչյունաբանութեան մերձավոր խնդիրը նա համարում էր այս կամ այն լեզվի հնչյունների, նրանց փոփոխութեան, անհետանալու և երևան գալու պայմանների ու օրենքների հետազոտութիւնը, այսինքն՝ ի տարբերութիւն երիտքերականների՝ անհրաժեշտ էր համարում ոչ միայն հավաքել ու սխտեմավորել փաստերը, այլև դրանք բացատրել, պարզել փոփոխութեան պատճառները:

Իր «Լեզվի գիտութեան ուրվագծում», որը նախատեսված էր որպէս Հ. Պաուլի «Լեզվի պատմութեան սկզբունքների» հակադրութիւնը<sup>1</sup>, Կրուշևսկին փորձում է տալ Կազանի լեզվաբանական դպրոցի կարևորագույն դրույթների շարադրանքը և իրագործել լեզվի զարգացման պրոցեսը բացատրելու անհրաժեշտութեան իր դրույթը: Ինչպէս Բոդուեն-դե-Կուրտենեն, Կրուշևսկին ևս լեզվաբանական երևույթների մեկնաբանութեան մեջ հենվում է ասոցիատիվ հոգեբանութեան վրա, թեև չի բավարարվում այդ հոգեբանութեան դրույթների մեխանիկական կիրառմամբ, այլ ձգտում է ավելի խորը թափանցել լեզվի կառուցվածքային առանձնահատկութիւնների և ֆունկցիոնալութեան պրոցեսի մեջ: Կրուշևսկու կարծիքով՝ լեզվի զարգացման սլոցեսը բնութագրվում է նրանով, որ «բառերի աշխարհը» տենդենց ունի լիովին համապատասխանելու «մտքերի աշխարհին», որքան կարելի է լավ արտահայտելու այն: Այս պրոցեսի ընթացքում տեղի է ունենում լեզվի տարրերի անընդհատ վերամիասնացում (перейнтеграция), թեև լեզուն երբեք չի հասնում մի իդեալական վիճակի: Իր այս բացատրութեան մեջ Կրուշևսկին հասնում է լեզվի սխտեմային բնույթի ըմբռնմանը, լեզվի տարրերի վերամիասնացումը, դրանց տեղափոխութիւնն ու ձևափոխութիւնը դիտում որպէս լեզվական սխտեմի ներսում կատարվող անընդհատ շարժում: Դեռ ավելին. Կրուշևսկին լեզուն դիտում է որպէս սխտեմների (հոլովման, խոնարհման և այլն) ամբողջութիւն, բարդ կառուցվածքային ամբողջութիւն, որի մեջ վերամիասնացման պրոցեսն առաջ է բերում բառատիպային նոր սխտեմներ:

<sup>1</sup> Հմտ. Н. С. Чемоданов, Сравнительное языкознание в России, М., 1936, էջ 39:





խմբերի մեջ: Առընթերության զուգորդումը որոշում է բառերի զուգորդման բնույթը հետևողական շարքի մեջ:

Լեզվի հիմնական միավորը համարելով բառը՝ Կրուշևսկին իր ուշադրությունը կենտրոնացնում է բառի կազմության պատմական փոփոխությունների վրա: Ըստ նրա՝ բառը ենթարկված է ամբողջականության քայքայման (դեստրուկցիայի) և վերստեղծման հակադիր պրոցեսների ներգործությանը: Քայքայման պրոցեսի գործոններն են «հնչյունական այլասերումը» (вырождение, պատմական և փոխադղեցական հնչյունափոխությունը), — որ առաջ է բերում «ձևաբանական այլասերում», — անալոգիան, «աշխարհագրական շերտավորումը (наслоение)» (այլ լեզուներից կատարվող փոխառությունները) և «ժամանակագրական շերտավորումը» (հնաբանությունները):

Կրուշևսկու կարծիքով՝ անվանման պրոցեսի հիմքում ընկած է նմանության զուգորդությունը. առարկային տրվում է այս կամ այն անունը՝ նրա որևէ հատկանշի առանձնացմամբ, որը հիմք է ծառայում արդեն անվանված առարկայի հետ նմանություն հաստատելու համար: Սակայն հետագա գործածության ընթացքում բառն սկսում է գիտակցվել որպես ողջ առարկայի (իր բոլոր հատկանիշներով) նշան և նրա իմաստը որոշվում է խոսքային գործածությամբ, ոչ թե նրա ծագումով: Սրա հետևանքով բառի փոփոխությունը տեղի է ունենում սեփական ճանապարհով՝ անկախ նշանակվող առարկայի պատմությունից. բառը կարող է նշանակել արդեն փոխված բնութիւթով առարկան: Սրանով իսկ լեզուն դառնում է պատմական կարևոր աղբյուր:

Վ. Ա. Բոգորոդիցկի.— Վ. Ա. Բոգորոդիցկին իր լեզվաբանական գործունեությունը սկսել է դեռևս XIX դ. 80-ական թվականներից: Ընդհանուր լեզվաբանության և հնդկերոպական լեզուների համեմատական քերականության հարցերում նա կիրառել է Բոդունդե-դե-Կուրտենեի գլխավոր սկզբունքները: Սովետական շրջանում նա զբաղվել է հատկապես գործնական-մեթոդական հարցերով: Բոգորոդիցկու լեզվաբանական կոնցեպցիայի հիմքում ևս ընկած է պսիխոլոգիզմը:

Լեզվաբանությանը Բոգորոդիցկու մատուցած գլխավոր ծառայությունները պատկանում են փորձառական հնչյունաբանության, հնդկերոպական լեզուների համեմատական քերականության և թյուրք-թաթարական լեզուների ուսումնասիրության բնագավառներին: Բոգորոդիցկին ֆրանսիական լեզվաբան Ռուսլոյից առաջ,

որ համարվում է փորձառական հնչյունաբանության հիմնադիրը, զբաղվել է փորձառական հնչյունաբանության հարցերով և Կազանի համալսարանին կից հիմնել է փորձառական-հնչյունաբանական լաբորատորիա: Հնչյունաբանության հարցերն ընդհանրապես միշտ եղել են նրա ուշադրության կենտրոնում<sup>1</sup>:

Բոգորոդիցկին հնդեւրոպական լեզուների համեմատության բնագավառում նշանակալից աշխատանք է կատարել<sup>2</sup>: Առանձնապես կարևոր պետք է համարել հնդեւրոպական լեզուների հնչյունական հարաբերական ժամանակագրություն հաստատելու նրա փորձը. այդ հարցի վրա նա աշխատել է XIX դ. վերջերից սկսած: Համեմատական քերականության նպատակը Բոգորոդիցկին տեսնում է ոչ միայն ցեղակից լեզուների հնագույն գրավոր հուշարձանների տվյալների համեմատության և նախալեզվի վերականգնման, այլև ցեղակից լեզուների հետագա զարգացման պրոցեսի ուսումնասիրության մեջ. այստեղ է հենց, որ հարաբերական ժամանակագրության հաստատումը բացառիկ արժեք է ստանում: Սրա հետ միասին նա կարևոր է համարում նախ՝ ցեղակից լեզուների սինխրոնիկ համեմատությունը, որպեսզի համեմատվող փաստերը միաժամանակյա լինեն, երկրորդ՝ համեմատվող հնչյունական փաստերի մանրամասն ֆիզիոլոգիական բնութագրումը և ձևաբանական փաստերի հոգեբանական վերլուծությունը, երրորդ՝ համեմատվող փաստերի վերականգնման ժամանակ դրանց աշխարհագրական տարածման սահմանների բացահայտումը:

Ինչպես նշել ենք, Բոգորոդիցկին մեծ ուշադրություն է հատկացրել ձևաբանական փոփոխության գործոններին՝ անալոգիային, տարբերակմանը, պարզեցմանը (опрощение) և վերատարրալուծմանը (переразложение): Կարևոր են Բոգորոդիցկու աշխա-

<sup>1</sup> В. А. Богородицкий, Гласные без ударения в общерусском языке, Казань. 1884. Очерки по языковедению и русскому языку. Казань, 1901 (կազմված է 1880 թ. սկսած՝ տպագրված գնահալան հոդվածներից). Лекции по общему языковедению, Казань, 1915. Курс экспериментальной фонетики применительно к литературному русскому произношению, вып. I—III, Казань, 1917—1922. Фонетика русского языка в свете экспериментальных данных, Казань, 1930.

<sup>2</sup> В. А. Богородицкий, Курс сравнительной грамматики индоевропейских языков, тетрадь I, Введение, Казань, 1890. II *լրացված հրատ.* 1900 թ.: Из чтений по сравнительной грамматике индоевропейских языков, вып. I—IV, Казань, 1895—1902. Сравнительная грамматика индоевропейских языков, вып. I, Казань, 1914. Краткий очерк сравнительной грамматики индоевропейских языков, Казань, 1916. К хронологии и диалектологии грамматики арио-европейских языков, Казань, 1917.

տությունները թյուրք-թաթարական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում<sup>1</sup>։

## 2. ԺԳՂՈՎՐԴԱՆՈՒԹԵՐԱՆԱԿԱՆ ԿՈՆՅԵՊՑԻԱ (ԷՄՆՈՊՍԻՆՈՂՈՒԿԻՉՄ)

Վիլհելմ Վունդտ.— Վիլհելմ Վունդտը (1832—1920) խոշորագույն հոգեբաններից և փորձառական հոգեբանության հիմնադիրներից մեկն է, որ լեզվի հարցերով զբաղվել է իր հոգեբանական հետազոտությունների հետ կապված և ոչ իբրև մասնագետ լեզվաբան։ Նրա ուշադրությունը գրավել է լեզվաբանական այնպիսի պրոբլեմների հոգեբանական կողմը, ինչպիսիք են լեզվի ծագումը, զարգացումը, ֆունկցիավորումը և այլն։ Լեզվի հոգեբանական րմբունսան հիմնավորման մեջ առանձնապես կարևոր դեր է խաղացել նրա՝ «Ժողովուրդների հոգեբանություն, լեզվի, մտքի և սովորույթի զարգացման օրենքների հետազոտություն» աշխատության առաջին գիրքը՝ նվիրված լեզվին<sup>2</sup>։ Այս գրքի 9 գլուխներում Վունդտը քննում է հետևյալ հարցերը՝ 1) «Արտահայտչական շարժումները», 2) «Ժեստերի լեզուն», 3) «Լեզվի հնչյունները», 4) «Հնչյունափոխությունը», 5) «Բառակազմությունը», 6) «Բառաձևերը», 7) «Նախադասությունների կապակցությունը» (Satzfügung), 8) «Իմաստափոխությունը» և 9) «Լեզվի ծագումը»։

Ի հակադրություն Հերբարտի ասոցիատիվ հոգեբանության, որի վրա հիմնվում էր Շտայնթալի ու Լացարուսի՝ ժողովուրդների հոգեբանությունը, և որն ընկած էր երիտքերականների պսիխոլոգիզմի հիմքում, Վունդտը դավանում է իդեալիստական հոգեբանության մի այլ տարատեսակը՝ վոլյունտարիզմը։ Հոգեկան պրոցեսների հիմքում նա դնում է կամքը, անհատի ներքին ստեղծագործական ակտիվությունը։ Վունդտը անկախ գոյություն է հատկացնում ստեղծագործական հոգեկան սկզբնավորությանը՝ նրա արտահայտությունը տեսնելով ապերցեպցիայի մեջ։ Ապերցեպցիան նա դիտում է որպես հոգեկան երևույթների հիմքը, ընդ որում ապերցեպտիվ կապերը նրա համար ոչ թե օբյեկտիվ իրականության կապերի ու փոխհարաբերության արտացոլումն են, այլ անհատի հո-

<sup>1</sup> В. А. Богородицкий, Этюды по татарскому и тюркскому языковедению, Казань, 1933. Введение в татарское языковедение в связи с другими тюркскими языками, Казань, 1934. О научных задачах татарского языкознания, Казань, 1935.

<sup>2</sup> W. W und t, Völkerpsychologie, eine Untersuchung der Entwicklungsgesetze in Sprache, Mythos und Sitte. I. Die Sprache, 1900.



Վունդտի մեկնակետը հոգու գաղափարն է, որը նա դիտում է որպես հոգեկան պրոցեսների որոշ կապակցված ամբողջություն և այս առումով հնարավոր համարում ոչ միայն անհատական հոգու, այլև ժողովրդի հոգու (Volksscele) գոյությունը: Ժողովրդի հոգին, որ հանդես է գալիս անհատական հոգիների փոխազդեցությամբ, ըստ Վունդտի, արտահայտություն է գտնում լեզվի, դիցաբանության (կրոնի, Mythus) և կենցաղի մեջ: Ուստի և Վունդտը էթնիկական հոգեբանության իր հետազոտությունը նվիրում է այդ բնագավառների քննությանը՝ ձգտելով բացահայտել ժողովրդի հոգու բնույթն ու զարգացման առանձնահատկությունները: Սակայն Վունդտը որակական տարբերություն չի տեսնում անհատական հոգեկան պրոցեսները կառավարող օրենքների և ժողովրդի հոգու էությունը որոշող օրենքների միջև: Լեզվի վունդտյան ըմբռնումը երիտքերականների ըմբռնման հետ և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ ունի. Վունդտը ևս լեզուն քննում է հոգեբանական և էվոլյուցիոն-պատմական հայեցակետով, բայց այն համարում է ոչ թե անհատի, այլ ժողովրդի հոգու արտահայտությունը:

Տարբերելով անհատական հոգեբանությունը (Individualpsychologie) ժողովրդական հոգեբանությունից (Völkerpsychologie)՝ Վունդտը վերջինիս նպատակը համարում է «այն հոգեկան իրակությունների (Vorgänge) ուսումնասիրությունը, որոնք ընկած են մարդկային հանրությունների զարգացման և ընդհանրական (gemeingültig) արժեք ունեցող ընդհանուր հոգևոր արտադրանքների (Erzeugnisse) առաջացման հիմքում»<sup>1</sup>: Այլ կերպ ասած, ըստ Վունդտի, ժողովուրդների հոգեբանությունը ուսումնասիրում է «ժողովրդի հոգին» (Volksseele), որը, նրա կարծիքով, հանդես է գալիս տվյալ հանրության ներսում՝ այդ հանրությունը կազմող անհատների փոխազդեցությամբ: Այսպիսով՝ եթե Պաուլը և մյուս երիտքերականները ժխտում են «ժողովրդի հոգու» գաղափարը որպես մետաֆիզիկական, վերանհատական մի բան, ապա Վունդտը այն դնում է իր հետազոտության հիմքում. լեզվի հոգեբանական ըմբռնման մեջ սուբյեկտիվ իդեալիզմը նա փոխարինում է միայն օբյեկտիվ իդեալիզմով: Վունդտյան «ժողովրդի հոգու» ըմբռնումը փաստորեն հումբոլդտյան «ժողովրդի ոգու» իդեալիստական ըմբռնման հոգեբանական երկվորյակն է: Նշելի է, որ Հումբոլդտի նման Վունդտը ևս կարծում է, թե լեզվի, նրա կառուցվածքի մեջ արտացոլվում է «մարդու պատկերացումների աշ-

<sup>1</sup> W. W u n d t, Völkerpsychologie, I, 1, III հրատ. Leipzig, 1911, էջ 10

խարհը»։ Անհատի և հասարակականի փոխհարաբերությունը Վունդտը պատկերացնում է հետևյալ կերպ. անհատը շփվելով այլ անհատների հետ՝ սկսում է աստիճանաբար գիտակցել, որ անհատական կամքի ուժն այն ժամանակ է դրական ուժ, երբ համընկնում է այլ կամքերի ուղղության հետ, դառնում ընդհանուրի կամքի մի մասը. ամեն անհատ և՛ անհատական կամքի կրող է, և՛ ընդհանուրի մի մասը։ Հասարակության զարգացումը Վունդտը տեսնում է հոգեկան մոտիվների մեջ և առաջ քաշում պատմության իդեալիստական-վոլյունտարիստական ըմբռնում։ Անհատի կյանքը հասարակության մեջ Վունդտը պայմանավորում է լեզվական, կրոնական և կենցաղային-սովորույթային գործոններով։ Կուլտուրայի բոլոր դրսևորումները, որոնց թվում Վունդտը հասկանում է և լեզուն, նա ածանցում է անհատների փոխազդեցությունից, յուրաքանչյուր առանձին դեպքի մեջ նա տեսնում է ընդհանուրը. այդ բանը նրան հիմք է տալիս հաղորդակցումը բխեցնելու հուզակցումից (Mitbewegung)<sup>1</sup> ։

Երևույթների իսկական էությունը տեսնելով հոգեկանի մեջ՝ Վունդտը վերջինիս գլխավոր հատկանիշը համարում է զարգացումը։ Սակայն հոգեկան զարգացման վունդտյան ըմբռնումը իր առանձնահատկություններն ունի, որոնք երևան են գալիս լեզվի ծագման ու զարգացման նրա տեսության մեջ։ Ամենից առաջ՝ հոգեկան ստեղծագործության ու անընդհատ զարգացման վունդտյան ըմբռնումը տարբեր է Շտայնթալի ըմբռնումից։ Եթե Շտայնթալը խոսելով այս մասին՝ նկատի ունի զարգացող ու առաջադիմույ գիտակցությունը, ապա Վունդտը այդպիսի ստեղծագործության աղբյուրը փնտրում է զգացմունքի և հույզի մեջ։ Վունդտի կարծիքով՝ մտքի ամեն մի արտահայտություն ուղեկցվում է հույզով, որ նույնպես արտահայտության է ձգտում։ Մարդու զարգացումը Վունդտը փորձում է բացատրել մի այնպիսի սովորական նախնական երևույթով, ինչպիսին մղումն է (Trieb). մղումից էլ Վունդտը բխեցնում է կամքը, որ նրա մոտ բոլոր երևույթների հիմքն է։ Մղումը, ըստ Վունդտի, կամքի մի այնպիսի դրսևորում է, որ որոշվում է մեկ մոտիվով. մինչդեռ կամքը մեկից ավելի զգացական մոտիվների միջև հանդես եկող վճռականությունն է։ Զարգացման վունդտյան ըմբռնման երկրորդ կարևոր առանձնահատկությունը էվոլյուցիոնիզմն է։ Վունդտի կարծիքով՝ իսկական պատմականու-

<sup>1</sup> Հմտ. G. P ä t s c h. Grundfragen der Sprachtheorie, Halle, 1955 էջ 20:

թյունը պրոցեսի էվոլյուցիոնիստական ըմբռնման մեջ է: Նա ոչ-  
պատմական է համարում ոչ միայն այն տեսակետը, որով մարդը  
դիտվում է որպես անփոփոխ էոթյան կրող, այլև այն ուղմանտի-  
կական հայեցակետը, թե մարդու էոթյունը ժամանակի ընթացքում  
լիովին փոխվել է: Ճիշտ է, նշում է Վունդտը, համեմատելով մարդ  
կային ամենաստորին ռասայի ներկայացուցչի գիտակցությունը  
ամենազարգացած կենդանու գիտակցության հետ՝ մենք դրանց  
միջև անդունդ ենք նկատում. սակայն այդ անդունդն այնպիսին չէ  
որ մարդու զարգացման սաղմերը մենք չկարողանայինք գտնել  
կենդանիների մոտ: Վունդտի կարծիքով կենդանուց դեպի մարդու  
կատարվող զարգացումը մանր էվոլյուցիոն փոփոխությունների մի  
անընդհատ շարք է, որի ամեն մի էտապում մարդը և՛ նման է  
իրեն, և՛ նման չէ: Այս զարգացման ընթացքում տեղի է ունենում  
լոկ կատարելագործում, բայց ոչ որակապես նոր հատկությունների  
և ունակությունների ձեռքբերում<sup>1</sup>:

Ջարգացման իր այս տեսության լույսի տակ էլ Վունդտը քրն-  
նում է լեզվի բնույթի, ծագման ու զարգացման հարցերը:

Լեզվի ըմբռնման հարցում Վունդտն ամենից առաջ հակա  
դրվում է բիոլոգիական նատուրալիզմին: Լեզուն ոչ թե օրգանիզմ  
է, որ բնութագրվում է աճով, կյանքով ու անկմամբ, այլ ֆունկցիո-  
նալ, ավելի ճիշտ, ֆունկցիոնների մի ամբողջություն. լեզուն ինքն  
իրեն չի ստեղծվում. այն ստեղծվում է մարդու կողմից՝ նրա կազ-  
մակերպող գործունեության միջոցով: Սակայն լեզուն ստեղծող  
մարդուն Վունդտը պատկերացնում է ոչ իր հասարակական կոնկ-  
րետ կապերի մեջ: Լեզվի ծագման ու զարգացման պրոցեսը Վունդ-  
տի համար մարդու հոգեկան զարգացման ներքին պրոցես է. այդ  
պրոցեսը նա քննում է առանց արտաքին գործոնների հաշվառ-  
ման:

Վունդտը լեզուն և մտածողությունը ծագմամբ ու գոյությամբ  
գնում է սերտ կապի մեջ: Լեզուն ու մտածողությունը զարգանում  
են միաժամանակ, և սխալ պետք է համարել հարցադրումը դրան-  
ցից մեկի՝ մյուսին նախորդելու հնարավորության մասին: Լեզուն  
և գիտակցությունը չեն կարող մտածվել իրարից անկախ: Լեզուն  
մտածողության ֆունկցիոնների անհրաժեշտ տարրն է, և նրա զար-  
գացման յուրաքանչյուր էտապ համապատասխանում է մտածողու-  
թյան զարգացման տվյալ էտապին. «Մարդկային գիտակցության  
զարգացումը, — գրում է Վունդտը, — անհրաժեշտորեն ներառում է

<sup>1</sup> Հմտ. G. Patsch, հիշ. աշխ., էջ 23:

իր մեջ արտահայտչական շարժումների, ժեստերի, լեզվի ղարգացումը, և ղարգացման յուրաքանչյուր ստադիայում պատկերացումը, ղդացողությունը և մտածողությունը արտահայտվում են նրան լիովին համարժեք (համապատասխան) ձևով. այդ արտահայտությունն ինքը վերաբերում է այն հոգեբանական ֆունկցիային, որի համար ծառայում է որպես բնկալելի հատկանիշ, և ո՛չ նախորդում է նրան, ո՛չ էլ նրանից ետ մնում»<sup>1</sup>: Այնտեղ, որտեղ կա հոգեկան երևույթների որևէ կապ և, հետևաբար, գիտակցություն, պիտի գոյություն ունենան և գրանք արտահայտող շարժումներ: Իր ղարգացման բոլոր էտապներում լեզուն մնում է որպես արտահայտչական շարժում, որ աստիճանաբար առանձնանում է արտահայտչական շարժումների ամբողջությունից: Արտահայտչական շարժումները ծառայում են աֆեկտով ուղեկցվող մտածողական ակտի արտահայտմանը: Մարդը մի հոգեֆիզիկական միասնություն է, որի մեջ հոգեկանը և ֆիզիկական-ֆիզիոլոգիականը սերտորեն կապված են. ղգացմունքը արտահայտություն է գտնում համապատասխան շարժմամբ. առանձին ղգացմունքների և շարժման որոշակի տեսակների միջև սերտ կապ կա: Այս արտահայտչական շարժումները մի ամբողջ սիստեմ են կազմում: Հնչյունների և պատկերացումների միջև կապը ոչ թե անմիջական է, ինչպես կարծում են բնաձայնության տեսության կողմնակիցները, այլ միջնորդված. հնչյունները կապվում են հոգեկան պրոցեսի հետ արտասանական շարժման միջնորդությամբ: Հոգեկան պրոցեսը արտահայտվում է հնչյունական շարժմամբ և ոչ թե հնչյունով, ընդ որում այդ հնչյունական շարժումն էլ աջակցություն է գտնում ուղեկցող պանտոմիմիկական և միմիկական շարժման մեջ: Սկզբնական հնչյունը շատ վեպըում նշանակություն էր ստանում իրեն ուղեկցող այդ ժեստերի օգնությամբ, որոնք բացառում էին հնչյունի և նշանակության որևէ անհամապատասխանություն: Այսպիսով, սկզբնական լեզվական արտահայտության հիմնական տարրերը հնչյունական ժեստերն էին (Lautgebärde), որոնք արտահայտչական ժեստերի մի տեսակն էին և որոնց հիման վրա ղարգանում են լեզվի հնչյունները: Հնչյունական ժեստերը ևս, այլ ժեստերի նման, լինում են երկու տեսակ՝ ցուցական և նմանողական. առաջինները ծառայում են առկա օբյեկտների արտահայտմանը և ավելի նախնական են. երկրորդները արտահայտում են բացակա օբյեկտները՝ նրանց թողած հիշողական պատկերների հիման վրա: Եթե առաջիններն ընդ-

W. W u n d t. Völkpsychologie, II B., III Aufl., 1912, էջ 649.



հանուր հասկանալի են, ապա երկրորդները հասկանալու համար հարկավոր է ունենալ առարկայի տեսողական պատկերը, պատկերացնել այն: Նմանողությունից (Nachahmung) ծագում է պատկերացումը (Darstellung): Աստիճանական զարգացման պրոցեսում նախնական արտահայտչական շարժումները դառնում են լեզվի հնչյուններ և միաժամանակ վերածվում մտքի բովանդակութայն սիմվոլների, որոնք (բացի բացառիկ դեպքերից) անմիջական կապը չունեն իրենց արտահայտած նշանակությունների հետ:

Իսկ ինչպե՞ս է տեղի ունենում հաղորդակցումը, ինչպե՞ս են առանձին անհատները միմյանց հասկանում: Լեզվի ծագումը բխեցնելով մարդու ներքին հոգեկան պահանջներից՝ Վունդտը բնակունաբար հաղորդակցման պրոցեսը քննում է հոգեբանական դիրքերից: Հաղորդակցումը Վունդտի համար մի պրոցես է, որտեղ մեկի արտահայտչական շարժումները մյուսի մեջ առաջ են բերում համապատասխան հույզեր՝ կապվելով համապատասխան պատկերացումների հետ: Ընկալող («լսող») սուբյեկտի մեջ արթնացած պատկերացումները զրգոում են այլ պատկերացումներ, և առաջինում է պատասխան շարժում: Այն հանգամանքը, որ աֆեկտը նպատակային բնույթ չունի, իսկ հաղորդակցումը նպատակադիր է, Վունդտին չի մտահոգում, մինչդեռ հենց սա է, որ խարխուլում է նրա շենքը: Մարդկային հաղորդակցումը նպատակադիր բնույթ ունի և կյանքի է կոչվում կոլեկտիվ գործունեությամբ, որ ուղղված է գոյապահպանմանը<sup>1</sup>: Լեզվի հետագա զարգացումը Վունդտը պատկերացնում է որպես մի պրոցես, որտեղ հուզականությունն ավելի ու ավելի է ենթարկվում մտավորայնությանը:

Լեզվի զարգացման պրոցեսի ժողովրդահոգեբանական մեկնաբանությունը Վունդտի մոտ ընթանում է 3 գլխավոր ուղղությամբ՝ ձևաբանության, շարահյուսության և իմաստափոխության: Զևաբանական և շարահյուսական հարցերի քննության մեջ Վունդտը ուշադրությունը կենտրոնացնում է ներքին-իմաստային կողմի վրա, փորձում պարզել քերականական կատեգորիաների ու նախադասության կառուցվածքային տիպերի կապը ժողովրդահոգեբանական պատկերացումների հետ և ցույց տալ դրանց պատմական էվոլյուցիան:

Խոսքի մասերից հնագույնը համարելով անունը և բային վերագրելով համեմատաբար ուշ ծագում՝ Վունդտը նախ քննում է

<sup>1</sup> Հմմտ. G. Pätseh, Նիշ. աշխ., էջ 28:



griff)»<sup>1</sup>: Ներքին որոշման հոլովներին հատկացվում են ուղղականը, հայցականը, տրականը և սեռականը, արտաքին որոշման հոլովներին՝ մնացածները: Ներքին որոշման հոլովների իմաստը նախնական ձևերում կարող է արտահայտվել շարադասությամբ, այլ դեպքերում՝ վերջավորություններով, ընդ որում այդ հոլովների իմաստը նախդիրներով լրացվել չի պահանջում: Արտաքին որոշման հոլովների իմաստը շարադասությամբ այլևս չի արտահայտվում, այլ բառամասնիկներով (նախդիր-ետադիրներով) և վերջավորություններով: Վերջավորությունները հաճախ ուղեկցվում են նախդիրներով, որոնք կարող են և նրանց լիովին փոխարինել: Հոլովական դարգացման տեսակետից Վունդտը տարբերում է լեզուների 3 տիպ՝ 1) լեզուներ, որոնց մեջ բառերի տարբերությունները և հոլովական հարաբերությունների արտահայտության միջոցները թույլ հետքեր ունեն (Սուդանի նեգրերի, պապուասների և ավստրալիացիների լեզուները). 2) լեզուներ, որոնց մեջ հոլովական զմուծյունը ծառայում է հասկացությունների կոնկրետ-զգայական (կամ արտաքին՝ տարածա-ժամանակային) հարաբերությունների արտահայտությանը՝ դրանց բոլոր մանրամասնություններով (ամերիկյան բնիկների, օվկիանյան, բասկերի, ուրալա-ալթայան և կովկասյան լեզուները). 3) լեզուներ, որոնց մեջ հոլովակազմությունը ծառայում է հասկացությունների փոքրաթիվ պարզ հիմնական հարաբերությունների արտահայտությանը, ընդ որում հարաբերությունների հետագա բազմազանեցման համար դիմում են նախդիրներին (սրանց մեջ Վունդտը տարբերում է երկու խումբ՝ փոքրաթիվ հոլովներով սեմա-բամական լեզուները և հոլովների ավելի մեծ թիվ ունեցող հնդերոպական լեզուները):

Շարահյուսության քննությունը Վունդտն սկսում է ընդհանուր հարցերից, որոնց մեջ հատուկ տեղ է բռնում նախադասության սահմանումը: Ինչպես նշել ենք, Վունդտը նախադասությունը սահմանում է որպես «լեզվական արտահայտությունն այն բանի, մեկ ամբողջական պատկերացումը անդամատվում է իրար նկատմամբ տրամաբանական հարաբերության մեջ դրվող բաղկացուցիչ մասերի»<sup>2</sup>: Բառերի ծագումը, ըստ Վունդտի, տեղի է ունենում այս անդամատման պրոցեսում: Տարբերելով նախադասությունների 3 տիպ՝ բացականչական, պատմողական և հարցական՝ Վունդտը դրանցից յուրաքանչյուրի մեջ տարբերում է երկուական

<sup>1</sup> W. W u n d t. Völkerpsychologie, I, III Aufl., 1912, էջ 85:

<sup>2</sup> Նույն տեղը, 2, էջ 248:

ինթուտեսակ՝ զգացական ու ցանկացական, անվանական ու բայական և կասկածային ու հավաստական (Tatsachenfragen): Ըստ ստորոգյալի տիպի Վունդտը տարբերում է ստորոգելական (պրեդիկատիվ) և որոշչային (ատրիբուտիվ) նախադասություններ: Վունդտի կարծիքով՝ զգացական նախադասությունները որոշչային բնույթ ունեն, ցանկացականները՝ ստորոգելական: Այս կապակցությամբ Վունդտը որոշակի պատմական հաջորդականություն է հաստատում, մի կողմից՝ կապելով պատմողական-անվանական (ատրիբուտիվ) նախադասությունները զգացականների և պատմողական-ստորոգելական նախադասությունները՝ ցանկացականների հետ, մյուս կողմից՝ որոշչայինները նախորդել տալով ստորոգելականներին: Հանգույցի ֆունկցիան Վունդտը համարում է այն, որ նա «ծագմամբ որոշչային արտահայտությունը փոխակերպում է (umwandeln) ստորոգելականի»<sup>1</sup>: Հնդերուպական լեզուների նախադասության կառուցվածքի մեջ, ըստ Վունդտի, սկզբնապես տիրապետող է եղել որոշչային նախադասության տիպը, որին հաջորդել է մի փուլ, երբ «մաքուր ստորոգող (predizierend) պատմողականությունը» դարձել է գերիշխողը. սակայն առկա են միջանցիկ տիպի որոշչային-ստորոգելական նախադասություններ, որոնց մեջ վերացական բայի բովանդակային իմաստը լիովին չի անհետացել: Այդ բանը նկատելի է հատկապես անցյալ և ապառնի ժամանակներում (ըստ Վունդտի՝ «Կյուրոսը թագավոր՝ է», «Կյուրոսը իշխում էր» և «Կյուրոսը թագավոր էր» նախադասությունները ներկայացնում են որոշչային, ստորոգելական և որոշչային-ստորոգելական տիպեր): Արևելքային գործածությունը որոշչային նախադասությունները ստորոգելականի վերածելու հարցում, այսպիսով, ըստ Վունդտի, վճռական դեր է խաղացել: Որոշչային նախադասություններից ստորոգելականին անցնելիս բայը կոնկրետ առարկայական ոլորտից անցնում է վերացական ոլորտը: Որոշչային տիպի դեպքում առկա է նախադասության անդամների ասոցիատիվ կապակցությունը, որի դեպքում գոյական-ենթակային միացվում են նրա հատկանիշներն ունեցող բաներ. ստորոգելական տիպի դեպքում առկա է նախադասության անդամների ապերցեսպատիվ կապ, որը ամբողջական պատկերացումը բաժանում է իրար հետ որոշակի տրամաբանական հարաբերության մեջ գտնվող իր երկու (միշտ երկու!) բաղկացուցիչ մասերին: Որոշչային տիպի դեպքում առկա է նախադասության անդամների բաց, այսինքն՝ դրան:

<sup>1</sup> W. W u n d t, Völkpsychologie, 2, էջ 270.

քանակը շահամանափակող կապակցություն, ստորոգելական տիպի դեպքում՝ փակ, այսինքն՝ անդամների քանակը սահմանափակող կապակցություն:

Ինչպես որ պարզ նախադասության անդամների կապակցության քննության մեջ հակադրվում են որոշչային և ստորոգելական տիպերը, այնպես էլ նախադասությունների կապակցության (բարդ նախադասություն) քննության մեջ հակադրվում են համադասությունն ու ստորադասությունը, և դրանց միջև համապատասխան հարաբերություն ու պատմական հաջորդականություն է սահմանվում. սակայն մտքուր համադասության և ստորադասության միջև Վունդտը դնում է զարգացման մի աստիճան ևս, որ, կոչում է շաղկապային համադասություն (konjunktive Parataxis): Այսպիսով, ըստ Վունդտի, նախադասությունների կապակցության զարգացումն ընթացել է անշաղկապ կամ մաքուր համադասությունից դեպի շաղկապավորը, սրանից էլ դեպի ստորադասությունը. վերջին դեպքում որպես կապող տարրեր հանդես են գալիս ստորադասական շաղկապները և հարաբերական դերանունները: Շաղկապը երկրորդական նախադասությունը կապում է ողջ գլխավորի հետ, հարաբերական դերանունը՝ նրա մեկ անդամի հետ, ուստի և երկրորդ դեպքում կապն ավելի ուժեղ է: Առաջին դեպքում երկրորդականը գլխավորին լրացնում է միայն, երկրորդ դեպքում մտնում է նրա մեջ որպես անդամ:

Դնելով լեզվի ու մտածողության սերտ կապի հարցը և Հումբոլդտի նման կարծելով, որ լեզվի մեջ արտացոլվում է «մարդու պատկերացումների աշխարհը»՝ Վունդտը ձևաբանական և շարահյուսական հարցերի քննությունն ավարտելուց հետո բնականաբար առաջ է քաշում «ներքին ձևի» գաղափարը: Ըստ նրա՝ «ներքին ձևի» գաղափարը սահմանելու համար հարկավոր է նկատի ունենալ 3 բան՝ «1. լեզվի արտաքին ձևերի մեջ դրսևորվող (sich verratend) լեզվական մտածողության փոխկախվածությունը, 2. այս մտածողության ուղղությունը կամ պատկերացումների այն շրջանները, դեպի որոնք սա գերազանցապես ուղղված է (denen es vorzugsweise zugewandt ist) և, վերջապես, 3. նույնի բովանդակությունը, պատկերացումների ու հասկացությունների այն սպեցիֆիկ առանձնահատկությունները, որոնք արտահայտություն են գտնում լեզվի արտաքին ձևերում: Այս առանձնահատկություններից առաջինը դրսևորվում է ամենից առաջ լեզվի նախադասության ձևերի մեջ, երրորդը՝ բառաձևերի մեջ, մինչդեռ երկրորդը ազ-

դում է միաժամանակ և՛ բառի, և՛ նախադասության ձևերի վրա: Երեք առանձնահատկություններն էլ ամենասերտ փոխհարաբերության մեջ են, և ամեն մի լեզու ըստ այս երեք ուղղությունների անհրաժեշտաբար ներկայացնում է լեզվի ներքին ձևի մի որոշակի տիպ: Սակայն քանի որ լեզվի մեջ նախադասությունը և ո՛չ թե բառն է առաջնային, ուստի և նախադասության կազմությունից հետևող հատկանիշները ամենավճճականն են»<sup>1</sup>:

Լեզվական մտածողության փոխկախվածության քննության հետ կապված՝ Վոնդտը տարբերում է մտածողության հատվածական և դիսկուրսիվ տիպեր, վերջինիս մեջ էլ՝ համադրական և վերլուծական ենթատիպեր. լեզվի արտաքին ձևերի բնագավառում հատվածականին համապատասխանում է անջատականությունը, դիսկուրսիվ-համադրականին՝ կցականությունը, դիսկուրսիվ-վերլուծականին՝ թեքականությունը: Լեզվական մտածողության ուղղության քննության հետ կապված՝ Վոնդտն առանձնացնում է առարկայական ու վիճակային մտածողություններ (zuständliches Denken)՝ վերջինիս մեջ տարբերելով մասամբ որպես միջաստիճաններ, մասամբ որպես հնթաձևեր՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ մտածողական տիպեր. լեզվի արտաքին ձևերի բնագավառում առարկայական մտածողությանը համապատասխանում է որոշչային կառուցվածքը, որի դեպքում բայերը անուններից խստորեն չեն սահմանադատված, և բայանունները մեծ թիվ են կազմում (յակուտերեն). վիճակային մտածողությանը համապատասխանում է ստորոգելական կառուցվածքը՝ անվան և բայի ուժեղ հակադրությամբ. առարկայական մտածողությունը հակված է դեպի սինթեզ, վիճակայինը՝ դեպի անալիզ. օբյեկտիվ և սուբյեկտիվ միջաստիճանները կամ ենթատիպերը գրասերվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի քերականական արտահայտության գերակշռությամբ: Լեզվական մտածողության բովանդակության քննության հետ կապված՝ Վոնդտն առանձնացնում է մտածողության կոնկրետ և վերացական տիպեր, համարելով դրանք զարգացման փուլեր և վերջինիս մեջ տարբերելով դասակարգողական և ընդհանրացական մտածողության աստիճաններ: Արտաքին ձևերի բնագավառում կոնկրետ մտածողությունը համապատասխանում է տեղ նշանակող բառերի, բառամասնիկների ու ցուցական դերանունների և դիմային ու դիրքորոշող տար-

<sup>1</sup> W. W u n d t, Völkerpsychologie, 2, էջ 443:

բերությունների առատությանը: Դասակարգողական էտապում կան բառերի տարբեր խմբերը միացնող դասանիշեր, բայց չկան այնպիսի ընդհանրացնող բառեր, որոնց ենթարկվեն տվյալ դասի մեջ մտնող բառերը: Ընդհանրացական էտապում գրանք երևան են գալիս: Նշելի է, որ այս քոլոր դեպքերում Վունդտը նախ լեզվի և մտածողության զարգացման կապը ըմբռնում է ոչ դիալեկտիկորեն, որոշ առումով մեխանիստորեն, երկրորդ՝ իր եզրակացությունները հիմնում է ոչ լիովին հավաստի ուսումնասիրությունների վրա՝ առանց անմիջական-սեփական խոր քննություն: Այսպես օրինակ, հայտնի է, որ որոշ հետազոտողներ դասանիշերը բխեցնում են, և բավական հիմնավոր կերպով, նախկին անկախ բառերից, մի հանգամանք, որ խարխլում է դասակարգողական և ընդհանրացողական աստիճանների վունդտյան սխեման:

Վունդտը իմաստային փոփոխությունների խմբավորման հարցում քննադատում է Պաուլի դասակարգումը, որովհետև 1) սրամեջ շեն բացահայտվում հոգեկան մոտիվները, և 2) այն ներկայացնում է պարզ թվարկում՝ առանց մեկնաբանություն: Հոգեբանական մեկնաբանության նպատակով Վունդտը դիմում է 3 տիպի ասոցիացիաներին, որոնց կապակցված գործողության հիմքը նա համարում է ապերցեպցիան: Նա տարբերում է իմաստային փոփոխությունների 2 խումբ՝ հարաբերակից (հնչյունական փոփոխությունների հետ կապված) և ինքնուրույն. վերջիններիս մեջ նա առանձնացնում է ենթախմբեր՝ 1) ընդհանուր (կանոնավոր)՝ ա) առնմանական, բ) բարդացական, գ) զգացական փոփոխություններ ու դ) իմաստի ասոցիատիվ խտացում և 2) առանձին (մասնակի)՝ ա) անվանում մասնակի ասոցիացիայով, բ) անվանման մասնակի փոխաբերում և գ) փոխաբերական (մետաֆորիկ) փոփոխություններ: Ընդհանուր փոփոխությունները բացատրվում են կուլտուրական ընդհանուր պայմաններով և սրանց հետ կապված հոգեբանական մոտիվներով, առանձինները՝ անհատական պատճառներով (տեղի պատահական պայմաններով): Այս կապակցությամբ պետք է նշել, որ 1) Վունդտի սխեմայի ներկայացնում է նրա արդեն ձևավորված հոգեբանական կոնցեպցիայի կիրառումը լեզվաբանական փաստերի նկատմամբ. 2) Վունդտի ժամանակ փորձառական հոգեբանությունը առաջին քայլերն էր կատարում, որ և հիմք է տվել նրա հոգեբանական կոնցեպցիայի մի շարք թերությունների համար. 3) Վունդտը կաղում է բուն լեզվաբանական նյութի մշակման մեջ, որ և ա-

սիթ է տվել բազմաթիվ քննադատական դիտողություններ: Վունդտի գլխավոր սխալները, սակայն, սկզբունքային են. 1) նա բառի և իմաստի հարաբերության հարցը շարունակում է Հերբարտի ասոցիատիվ հոգեբանության հիման վրա դիտել որպես սլարզ ասոցիատիվ կապ. բառը ծառայում է միայն այս կամ այն առարկան հիշեցնելուն, որպես պարզ նշան. նշանն ու նշանակությունը կտրվում են իրարից և դիտվում որպես անկախ բաներ. 2) միաժամանակ Վունդտն անտեսում է բառերի գործածության կոնկրետ պատմական պայմանները, իմաստային փոփոխության պատճառները դիտում պատմական կոնկրետ պայմաններից կտրված<sup>2</sup>:

## II. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր լեզվաբանության բնագավառում ձեռք բերված նվաճումների ամփոփման և պրոպրիեմների խմբավորման փորձը Գ. Ֆոն դեր Գաբելենց.— 1891 թ. լույս է տեսնում Գեորգ Ֆոն դեր Գաբելենցի «Լեզվաբանությունը, նրա խնդիրը, մեթոդները և մինչ-այժմյան նվաճումները»<sup>3</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը փորձ է անում ի մի բերել լեզվաբանության բնագավառում կատարված աշխատանքի արդյունքները և ստեղծել ընդհանուր լեզվաբանության սխտեմատիկ շարադրանք՝ Հումբոլդտից և Շտայնթալից հետո, բայց ավելի լայն ընդգրկմամբ:

Գաբելենցն ինքը կանգնած է լեզվի հոգեբանական բմբռնման հողի վրա: Արտահայտելով ժամանակի լեզվաբանների մեծ մասի հակումը դեպի էմպիրիզմ՝ նա զգուշացնում է լեզվաբաններին փիլիսոփայությունից տարվելուց և ուշադրությունը կենտրոնացնում է լեզվական փաստերի կուտակման վրա: Գաբելենցը ուսումնասիրու-

<sup>1</sup> Հմմտ. B. Delbrück, Grundfragen der Sprachforschung, 1901. L. Sütterlin, Das Wesen der sprachlichen Gebilde, 1902. J. van Ginneken, Principes de linguistique psychologique, 1907. I. V. Rozwadowski, Wortbildung und Wortbedeutung, 1904.

<sup>2</sup> Հմմտ. B. A. Звегинцев, Семасиология, М., 1957, էջ 22—24.

<sup>3</sup> G. von der Gabelentz, Die Sprachwissenschaft, ihre Aufgabe, Methoden und bisherigen Ergebnisse, Leipzig, 1891. II հր., 1901.



թյան հատուկ առարկա է դարձրել համեմատական շարահյուսա-  
 ւան հարցերը (հատկապես 1869—1887 թթ. գրած գործերը): Նա հո-  
 գեբանական պրոցեսի էությունը համարում է ամբողջական պատ-  
 կերացման վերլուծումը, անդամատումը իր բաղկացուցիչ մասերին՝  
 դրանց հետագա համադրմամբ հանդերձ, ընդ որում, ըստ նրա,  
 այս պրոցեսը կատարվում է նախադասություն միջոցով և արտա-  
 հայտվում սրա կառուցվածքի մեջ: Ոգին, ըստ Գաբելենցի, պետք  
 է անդամատի՝ նախքան լեզվական համադրության մեջ պատճենա-  
 վորելը (nachbilden): Գաբելենցը այս կապակցությամբ տարբե-  
 րում է հոգեբանական ենթակա (մտքում առաջինը ծագող պատկե-  
 րացումը) և հոգեբանական ստորոգյալ (հոգեբանական ենթակայի  
 հետ միացվող պատկերացումը): Հոգեբանական ենթակայի և  
 ստորոգյալի գաղափարները հետագայում քննադատվում են Վունդ-  
 տի կողմից: Գաբելենցը հանդես է գալիս որպես տելեոլոգիստ, լեզ-  
 վի վարգացումը դիտում որպես յուրատեսակ նպատակադիր պրո-  
 ցես, որ տանում է դեպի սլարոլություն ու համառոտություն:

Լեզվի ծագման տեսություններ. Լ. Նուարե.— Լեզվաբանա-  
 կան առանձին պրոբլեմների լուծման փորձերի մեջ առանձնա-  
 պես կարևոր է հիշել Լուդվիգ Նուարեի՝ լեզվի «աշխատանքային»  
 ծագման տեսությունը<sup>1</sup>: Ըստ Նուարեի՝ լեզուն ծագել է այն սկզբ-  
 նական ձիչիբից, որոնք ուղեկցել են մարդկանց աշխատանքային  
 պրոցեսին և համատեղ կոլեկտիվ գործունեության ժամանակ այն  
 հեշտացրել՝ դարձնելով ութմիկ և կապակցված. աշխատանքային  
 երգերը նպաստել են սկզբնական բառերի ծագմանը: Այս կապակ-  
 ցությամբ Նուարեն ամենից վաղ ծագած է համարում սլարոլ գոր-  
 ծողություններ արտահայտող արմատները. բոլոր խոսքի մասերից  
 ամենավաղ ծագածը, Նուարեի կարծիքով, բայն է: Իր դրական  
 կողմերով հանդերձ Նուարեի տեսությունը հարցը չի լուծում և  
 վերջին հաշվով ներկայացնում է ձայնարկությունների տեսության  
 մի տարատեսակը: Լեզվի ծագումը այստեղ կապվում է ոչ թե աշ-  
 խատանքային պրոցեսում մարդկանց հաղորդակցման կարիքի  
 հետ, այլ աշխատանքը ուղեկցող ձիչերի հետ: Լեզվի էությունը  
 որոշող հաղորդակցական և արտահայտչական ֆունկցիաները այս-  
 տեղ անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվում:

Սուբստրատի պրոբլեմը.— Ուղղափառ երիտքերականները,  
 ուշադրությունը կենտրոնացնելով լեզվական (resp. հնչյունական)

<sup>1</sup> L. Noiré. Der Ursprung der Sprache, 1877. Max Müller and the  
 Philosophy of Language, 1879.

փոփոխությունների օրինաչափականության հավաստման և հընչյունական օրենքների սահմանման վրա, հետու էին կանգնած այդ փոփոխությունների պատճառների բացատրության փորձերից: Մինչդեռ այս բացատրության փորձերի մեջ է, որ հանդես է գալիս սուբստրատի տեսությունը, որ ինչպես տեսանք, ջերմ կողմնակիցներ է գտնում հանձինս այնպիսի լեզվաբանների, ինչպիսիք Գ. Ի. Ասկոլին և Հ. Շուխարդտն են: Այդ տեսությունը պաշտպանութձուն է գտնում նաև երիտքերականների ոչ ուղղափառ թևի, հատկապես այն լեզվաբանների կողմից, որոնք զբաղվում էին հնդերոպական լեզուների և հնդերոպական լեզուներով խոսող ցեղերի ու ժողովուրդների նախապատմության հարցերով: Այսպես, օրինակ, Հիրտը դեռևս 1894 թ. հնդերոպական լեզվի բարբառախմբերի առաջացումը կապում է ոչ-հնդերոպական սուբստրատի ազդեցության հետ: Նշելի է, որ որոշ հետազոտողների կողմից սուբստրատի տեսությունը շարաշահվում է. այն բոլոր դեպքերում, երբ տվյալ լեզվաբանտանիքին պատկանող լեզվի այս կամ այն կողմը շեն կարողանում բացատրել նախալեզվից «ժառանգած» լեզվական նյութով, դիմում են օտարալեզու սուբստրատի ազդեցությանը, մանավանդ որ ենթադրվող սուբստրատի լեզվական առանձնահատկությունների մասին հաճախ կամ գաղափար չեն ունենում, կամ ունենում են շատ մշուշապատ պատկերացումներ: Սուբստրատի գաղափարին առանձնապես հաճախ են դիմում հատուկ անունների բացատրության դեպքում:

Սուբստրատի տեսությունն այս շրջանում լայն կիրառում է գտնում հնդերոպական լեզուներից հայերենի և հունարենի ոչ-հնդերոպական տարրերի բացատրության հարցում: Գրեթե ընդհանուր ընդունելություն է գտնում հայերենի մեջ, հատկապես նրա հնչյունական կառուցվածքի մեջ կովկասյան սուբստրատի առկայության դրույթը, մի դրույթ, որ հետագայում, ծայրահեղության հասցվելով Ն. Յա. Մառի և նրա հետևորդների կողմից հանգեցնում է հայերենի երկսեռ բնույթ ունենալու գաղափարին: Հունարենի համար ընդունվում է այն տեսակետը, որ նրա մեջ, հատկապես հատուկ անուններում առկա են նախահունական բնիկների լեզվից եկող ոչ-հնդերոպական տարրեր: Այս տարրերը ի մի բերելու և բացատրելու ղգուշավոր փորձ է կատարում Պ. Կրեշմերը իր «Հունարեն լեզվի ներածություն» աշխատության մեջ<sup>1</sup>: Ֆ. Հոմմելը ավելի

<sup>1</sup> P. Kretschmer. Einleitung in die griechische Sprache, 1896.

վազ գրած իր ուսումնասիրություններում նախահունական ոչ-հնդեւրոպական բնիկների (որոնք սովորաբար նույնացվում էին պելագզների հետ) ցեղակցությունը տարածում է Փոքր Ասիա և Կովկաս: Պատվին պելագզների ցեղակցությունը տարածում է ավելի հեռու՝ նրանց կապելով էտրուսկների, բասկերի, լիգուրների, ռեաների և նույնիսկ էլամցիների հետ: Ընդհանուր առմամբ գրեթե որևէ կասկած չի հարուցում Հունաստանի նախաբնիկների՝ ոչ-հնդեւրոպական ժողովուրդ լինելու հարցը:

Հնչյունաբանություն. փորձառական հնչյունաբանություն.— Քննարկվող ենթաշրջանում հնչյունաբանության բնագավառում լուրջ նվաճումներ են կատարվում: Առանձնապես նշելի է 2 նվաճում՝ 1) փորձառական հնչյունաբանության ստեղծումը և 2) հնչյութաբանության (ֆոնոլոգիայի)՝ որպես նոր դիսցիպլինի սաղմնափորումը:

Փորձառական հնչյունաբանությունը հանդես է գալիս հատկապես ֆրանսիացի գիտնական Պ. Ռուալոյի և ուսուցիչական Բոգորոդիցկու ջանքերով: Ռուալոն (1846—1924) դեռևս 1890-ական թթ. սկզբներին աշխատություն է նվիրում փորձառական հնչյունաբանությանը<sup>1</sup>, իսկ «Փորձառական հնչյունաբանության սկզբունքները» ծավալուն աշխատության մեջ<sup>2</sup> տալիս է հնչյունաբանական այդ նոր դիսցիպլինի հիմունքները և ստեղծում փորձառական հնչյունաբանության առաջին լաբորատորիան:

Վ. Ա. Բոգորոդիցկին Ռուալոյից առաջ, 1882 թ. հնչյունաբանական հետազոտության մեջ կիրառում է դրաֆիկ մեթոդը (լաբիոդրաֆ): 1880—1883 թթ. նա ուսումնասիրություններ է նվիրում ուսական ձայնավորներին<sup>3</sup>: 1895 թ. նա Կազանի համալսարանին կից հիմնում է լաբորատորիա<sup>4</sup> և հաջորդ տարվանից սկսում լույս բնծայել «Դիստոլոգիաներ փորձառական հոգերանության մասին» շարքը<sup>5</sup>:

<sup>1</sup> J. P. Rousselot, Les modifications phonétiques du langage étudiées dans les patois d'une famille de Cellefrouin, Paris, 1891—1892.

<sup>2</sup> J. P. Rousselot, Principes de phonétique expérimentale. I—II. Paris, 1897—1908.

<sup>3</sup> В. А. Богородицкий, Гласные без ударения в русском языке, РФВ, 1880. Введение в изучение русского вокализма, РФВ, 1882—1883.

<sup>4</sup> Հմտ. В. А. Богородицкий, Экспериментальная фонетика и кабинет экспериментальной фонетики в Казани (1882—1932), „Красная Татария“, 1932, 12-го июня.

<sup>5</sup> Заметки об экспериментальной фонетике, I VI, 1896—1897.

Հնչույթաբանության հիմքերը, ինչպես ադիթ ենք ունեցել նշ-  
դրել են Կազանի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները՝  
Բոդունեն-դե-Կուրտենեն, Կրուշևսկին, ապա նաև Շչերբան: Հնչույ-  
թաբանական տեսության զարգացման համար որոշ դեր են խաղա-  
ցել և գերմանացի Յ. Վինտելերի, անգլիացի Հ. Սուփտի և ավելի  
ուշ՝ դանիացի Օ. Եսպերսենի աշխատությունները: Վինտելերը իր  
այտնի բարբառագիտական աշխատության մեջ՝ հայտնում է այն  
միտքը, որ այս կամ այն լեզվի մեջ կան, մի կողմից՝ հնչունական  
այնպիսի տարբերություններ (հակադրություններ), որոնք օգտա-  
գործվում են բառերի տարբերակման համար, մյուս կողմից՝ տար-  
բերություններ, որոնք այդ նպատակով չեն օգտագործվում: Անպ-  
փական հնչունաբանական դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչ  
Հենրի Սուփորը<sup>2</sup>, որ տվել է հնչունների ֆիզիոլոգիական՝ դիտական  
դասակարգման առաջին փորձերից մեկը, Վինտելերից անկախ  
նման միտք է հայտնել իր դասախոսություններում: Սուփտի աշա-  
կերա Օտտո Եսպերսենը այդ միտքը զարգացրել է իր «Հնչունաբա-  
նական հիմնական հարցերում» և ավելի ուշ՝ «Հնչունական  
ստորաբաժանություն և գրադարձություն» աշխատության մեջ<sup>3</sup>:

Շարահյուսություն. Յ. Ռիս.— Թեև լեզվաբանների ուշադրու-  
թյունն այս ենթաշրջանում կենտրոնացած է հնչունաբանության և  
ձևաբանության հարցերի վրա, բայց չի կարելի շնչել շարահյու-  
սության բնագավառում ձևոք բերված որոշ արդյունքները: Բացի  
Դելբրյուկից՝ շարահյուսության հարցերն այս շրջանում գրավում  
են Ֆր. Միկլոշիչի, Գ. Ֆոն դեր Գաբելենցի, Օ. Բեհագելի և մասնա-  
վանդ Յ. Ռիսի ուշադրությունը. վերջինս հատուկ տեղ է գրավում  
շարահյուսության պատմության մեջ:

Մինչև Յոն Ռիսի հանդես գալը՝ շարահյուսության ստարկայի,  
նպատակների և լեզվաբանության մյուս բաժինների հետ նրա ու-  
նեցած փոխհարաբերության ըմբռնման հարցում վզալի տարըն-  
թացություն գոյություն ուներ: Ոմանք այն դիտում էին որպես ձև-  
վաբանության համեմատությամբ լոկ կախյալ վիճակի մեջ գտնվող  
բնադափառ և շատ դեպքում շարահյուսությունը ձուլում էին ձևա-  
բանության մեջ. երկրորդները այն համարում էին մի խառը բա-  
ժին և այնտեղ կենտրոնացնում մյուս բաժիններում շտեղավորվող

J. Winteler. Die korenzer Mundart des Kantons Clarus, 1876.

H. Sweet. A Primer of Phonetics, 1877.

<sup>3</sup> O. Jespersen, *Phonetische Grundfragen*, 1904. *Phonetic Transcription and Transliteration*, 1926.

նյութը. երրորդները ձևաբանությանը հատկացնում էին լոկ թեքման ձևերի արտաքին նկարագրությունը՝ դրանց իմաստի քննությունը թողնելով շարահյուսությանը. չորրորդները նույնացնում էին ձևաբանությունը շարահյուսության հետ և այլն: Այս վերջին տեսակետը արտահայտվել է, օրինակ, Օ. Բեհագելի մոտ, որ երիտբերական լինելով հանդերձ՝ զգալի դեր է խաղում XX դ. հանդես եկող ֆունկցիոնալիստական լեզվաբանության ձևավորման մեջ: Իր շարահյուսական գործերում Բեհագելը տարբերում է երկու բաժին՝ հնչյունաբանություն (Lautlehre) և իմաստաբանություն (Bedeutungslehre). շարահյուսությունը նա դնում է վերջինիս մեջ և փաստորեն նույնացնում ձևաբանության հետ. «Ձևաբանությունը,— գրում է Բեհագելը,— շարահյուսություն է. ոչ թե շարահյուսության մի մասը, այլ նրա կոմպենդիումը»: Բեհագելն առաջիններից մեկն է, որ շարահյուսության բնագավառում փորձել է կիրառել անալոգիայի սկզբունքը: Իր «Կախյալ խոսքի ծագումը» դիսերտացիոն աշխատության մեջ՝ ելնելով անուղղակի խոսքի՝ ուղղակի խոսքից առաջանալու մասնակի դրույթից, նա փորձում է ընդհանրապես հիմնավորել համադասությունից (պարատաքսիսից) ստորադասության (հիպոտաքսիսի) ծագումը: Բեհագելը XIX դ. վերջերին ու XX դ. սկզբներին լույս է ընծայել գերմաներենի պատմությանը և հատկապես պատմական շարահյուսությանը նվիրված մի շարք կարևոր աշխատություններ, սրոնցից հայտնի է «Գերմանական շարահյուսությունը»<sup>2</sup>:

1894 թ. Յոն Ռիսը հանդես է գալիս «Ի՞նչ է շարահյուսությունը» գրքով<sup>3</sup>, որտեղ քննադատական վերանայման է ենթարկում շարահյուսության բնագավառի առկա պատկերացումները և տալիս իր սեփական ըմբռնումը: Ռիսը տարբերում է երկու ծայրահեղ պատկերացումներ. ոմանք շարահյուսության խնդիրն են համարում բառակապակցությունների և բառաձևերի արտահայտած իմաստի ուսումնասիրությունը (Միկլոշիչ և ուրիշներ), մյուսները այն դիտում են որպես նախադասության ուսմունք: Շարահյուսության տեղի ու առարկայի հստակ պատկերացման բացակայության պայմաններում ոմանք էլ շարահյուսությանն են հատկացնում գրեթե այն բոլորը, ինչ դուրս է մնում հնչյունաբանությունից ու ձևա-

<sup>1</sup> O. Behagel, Die Entstehung der abhängigen Rede, Paderborn, 1877.

<sup>2</sup> O. Behagel, Deutsche Syntax, I—III, 1923—1928.

<sup>3</sup> J. Ries, Was ist Syntax? 1894.

բանությունից, ստեղծելով մի խառը դիսցրիպլին («Mischsyntax» — «խառը շարահյուսութիւն»)։ Շարահյուսութեան ըմբռնման հարցում եղած տարակարծութիւնները Ռիսը մասամբ էլ կախման մեջ է դնում նախադասութեան տրամաբանական սահմանումից, որի մեջ հաշվի է առնվում նախադասութեան միայն իմաստային կողմը, բայց ոչ արտաքին-ձևականը։ Զգտելով հասնելու տրամաբանական հետևողականութեան և հաղթահարելու տրամաբանական քերականութեան ունեցած ըմբռնման միակողմանիութիւնը՝ Ռիսը տարբերում է քերականութեան ուսումնասիրութեան 3 առարկա՝ հնչյուն, բառ ու բառակապակցութիւն և համապատասխանաբար 3 բաժին՝ հնչյունաբանութիւն (Lautlehre), բառագիտութիւն (Wortlehre) ու շարահյուսութիւն (Syntax)։ Այսպիսով, շարահյուսութիւնը Ռիսը համարում է ոչ թե նախադասութեան ուսմունք, այլ բառակապակցութեան ուսմունք։ Ինչ վերաբերում է ձևաբանութեանը (Formenlehre) և իմաստաբանութեանը (Bedeutungslehre), ապա Ռիսը դրանք համարում է պարզապէս ուսումնասիրութեան միևնույն առարկաների (բառի և բառակապակցութեան) քննութեան տարբեր հայեցակետերը, որոնք հանդես են գալիս և՛ բառագիտութեան, և՛ շարահյուսութեան մեջ։ Այս կապակցութեամբ Ռիսը տալիս է հետևյալ սխեման.

Առարկա		Առանձին բառ	Բառակապակցութիւն
քննված էր հարաբերութեամբ դեպի		Բառագիտութիւն (Wortlehre)	Շարահյուսութիւն (Syntax)
ձևը	Ձևաբանութիւն (Formenlehre)	Բառերի ձևերի ուսմունքը (բառաձևերն ըստ ձևական հայեցակետերի և թեքման ուսմունքը)	Շարահյուսական կառուցվածքի (Gebilde) ձևերի ուսմունքը
իմաստը	Իմաստաբանութիւն (Bedeutungslehre)	Բառերի, նրանց տեսակների և ձևերի իմաստի ուսմունքը	Շարահյուսական կառուցվածքի իմաստի ուսմունքը

Ռիսի մեկնաբանութիւնը բավական լայն ընդունելութիւն է գտնում։ Նրա ուսմունքի քննադատներից հիշատակելի է Պորցիզը։

Ավելի ուշ շրջանում Ռիսը հրատարակում է իր «Ի՞նչ է նախադասությունը»<sup>1</sup> գիրքը, որտեղ քննության է ենթարկում նախադասության իմաստային ու ձևական սահմանումները (շուրջ 150) և տալիս սեփական սահմանումը:

Շարահյուսական տեսության հետագա զարգացման համար կարևոր դեր է խաղում նաև Կ. Ավեդեյիտսի ուսմունքը՝ նախադասության բնույթի և իմաստային տիպերի մասին<sup>2</sup>: Ավեդեյիտսը նախադասության սահմանման հիմքում դնում է «հաղորդման» (կոմունիկացիայի) գաղափարը: Նա տարբերում է նախադասությունների իմաստային երկու տիպ՝ 1) պրոցես արտահայտող և 2) հարաբերություն արտահայտող, այլև դրանք բաժանում է ենթատիպերի:

Խմաստաբանություն. Մ. Բրեալ, Մ. Մ. Պոկրովսկի.— Երիտերականներն սկզբնապես տարվելով հնչյունական հետազոտություններով, բարձիթողի էին արել բառերի իմաստային զարգացման ու փոփոխությունների հարցը: Ֆրանսիացի ականավոր լեզվաբան Միշել Բրեալն իր վրա է վերցնում այդ գործը՝ փաստորեն ստեղծելով իմաստաբանությունը իր տերմինաբանությամբ ու հիմնական գաղափարներով: «Սեմանտիկա» («իմաստաբանություն») տերմինը նա առաջին անգամ օգտագործել է 1883 թ.<sup>3</sup>: 1897 թ. նա լույս է ընծայում «Իմաստաբանության ուղվագիծ»<sup>4</sup> աշխատությունը, որտեղ ի մի է բերում ու խմբավորում բառերի իմաստափոխության տիպերը՝ դրանց նկատմամբ կիրառելով համապատասխան տերմիններ. նա քննարկում է իմաստի նեղացման ու լայնացման դեպքերը, բազմիմաստությունը և այլն: Սակայն նշելի է, որ այսուհանդերձ Բրեալը հակված է իմաստային փոփոխություն-

<sup>1</sup> J. Ries, Was ist ein Satz? 1931.

C. Svedelius, L'analyse du langage appliquée à la langue française, Upsala, 1897.

<sup>3</sup> M. Bréal, Les lois intellectuels du langage, fragments de sémantique, AAEGF, XVII, 1883. Ավելի վաղ գործածության մեջ է դրվել «սեմանտիկոգիա» բառը: Կարլ Ռայդեգը իր „Vorlesungen über lateinische Sprachwissenschaft“-ում, Leipzig, 1839, ձևաբանության և շարահյուսության կողքին տարբերում է և «իմաստաբանությունը» (Bedeutungslehre կամ Semasiologie), որին հատկացնում է բառիմաստի փոփոխությունների ուսումնասիրությունը. Ֆր. Հաուզեն շարունակում ու զարգացնում է Ռայդեգի ուսմունքը: Հմտ. P. Matthes, Sprachform, Wort- und Bedeutungskategorie und Begriff, Halle (Saale), 1926:

<sup>4</sup> M. Bréal, Traité de sémantique, 1893.

սերի օրոշակի ընդհանուր օրինաչափությունների ժխտման կողմը և խոստում է լուկ դրանց դասակարգման հնարավորության մասին:

Իմաստաբանական հետազոտությունների մեջ նշելի է ուսելզվաբան Մ. Մ. Պոկրովսկու «Իմաստաբանական հետազոտություններ հին լեզուների բնագավառում» աշխատությունը<sup>1</sup>: Այստեղ հեղինակը փաստորեն հանգում է լեզվի իմաստային փոփոխությունների սիստեմային բնույթի և ընդհանրապես իմաստային սիստեմի գազափարին, թեև շարունակում է հենվել հոգեբանական ըմբռնումների վրա: Նա նշում է բառերի իմաստային ասոցիատիվ կապերի և իմաստային զուգահեռ փոփոխությունների գոյության փաստը:

Հերման Պաուլից հետո երկար ժամանակ իմաստաբանական հետազոտությունների մեջ իշխում է իմաստափոխության տիպերի նրա դասակարգումը՝ շարունակելով այս կամ այն չափով իր գոյությունը նաև Վոնդտի քննադատությունից հետո: Իմաստաբանության հարցերի մեկնաբանության և իմաստափոխության պատճառների բացատրության մեջ այս բնագավառի հետ ուղղակի կամ անուղղակի առնչվող ուսումնասիրությունները դրսևորում են մի քանի տեսակ մոտեցում. 1) լեզվի բիոլոգիական մեկնաբանության ներկայացուցիչները (Ա. Դարմստեներ և ուրիշներ) այս հարցում հենվում են Դարվինի էվոլյուցիոնիստական ուսմունքի վրա, խոստում բառերի կյանքի, գոյության կովի և բնական ընտրության մասին. 2) նպատակաբանական (տեղեղագիական) մոտեցման ներկայացուցիչները (Գ. Ֆոն դեր Գաբելենց, Օ. Եսպերսեն) լեզվի զարգացման ողջ պրոցեսի հիմքում դնում են պարզեցման ու հարմարության ձգտումը. 3) գնահատողական կամ էթիկական և էսթետիկական ուղղության ներկայացուցիչները (Լ. Տոբլեր, հետագայում Կ. Յաբերգ և ուրիշներ) ուշադրությունը կենտրոնացնում են տվյալ երևույթի գնահատման մոմենտի կարևորության վրա. 4) հոգեբանական մոտեցման ներկայացուցիչները (Վոնդտ, Պոկրովսկի և ուրիշներ) փորձում են հասնել իմաստափոխության հոգեբանական հիմունքների բացատրությանը:

Հատուկ հիշատակության արժանի են և Շտյոկլայնի ու էրգմանի իմաստաբանական ուսումնասիրությունները<sup>2</sup>: Շտյոկլայնը

<sup>1</sup> М. М. Покровский, Семантические исследования в области древних языков, 1896.

<sup>2</sup> Stöcklein, Bedeutungswandel der Wörter, 1898. K. Erdmann, Bedeutung des Wortes, 1900.



նշում է բառիմաստի փոփոխութեան՝ ոչ թե մեկուսացված բառի ալլ բառակապակցութեան մեջ կատարվելը: էրդմանը նշում է, որ բառերի մեջ կա ոչ միայն հասկացական բովանդակութիւնն և ուղեկցող իմաստ, այլև զգացական արժեք:

Բարբառագիտութիւն. գերմանական և ֆրանսիական բարբառագիտական ատլասների կազմման աշխատանքների սկիզբը. Գ. Վենկեր և Ժ. Ժիլբերոն. Ֆր. էնգելսի «Ֆրանկյան բարբառը».— XIX դ. վերջին բառորդը բարբառագիտութեան զարգացման մեջ հատուկ նշանակութիւն է ունենում: Բարբառագիտութեան ասպարեզում այս շրջանում կատարվում է երեք կարևոր քայլ. 1) երիտքերականների կողմից լեզվի հնչյունական կողմին մեծ ուշադրութիւն հատկացնելու պայմաններում և է. Զիվերսի «Հնչյունների ֆիզիոլոգիայի» լույս տեսնելու հետ կապված բարբառագիտութեան մեջ սկսում են մեծ տեղ տալ հնչյունական կողմի ուսումնասիրութեանը, բարբառների հնչյունական մանրակրկիտ նկարագրութեանը. 2) առաջ է քաշվում բարբառների սահմանների հարցը, և սկսվում են գերմանական ու ֆրանսիական բարբառագիտական քարտեզների կազմման աշխատանքները. Գերմանիայում բարբառային սահմանների հարցը սուր կերպով առաջ է քաշվում հատկապես բարբառագիտական քարտեզի կազմման աշխատանքների նախնական արդունքների հետ կապված. Ֆրանսիայում, ընդհակառակն, բարբառային սահմանների վերաբերյալ վեճերն են հատկապես, որ նպաստում են բարբառագիտական քարտեզի կազմման աշխատանքների սկզբնավորմանը. գերմանական և ֆրանսիական բարբառագիտական ատլասների հրատարակումը և տեսական մշակումը, լեզվաբանական աշխարհագրութեան կամ բարբառագրութեան՝ որպես լեզվաբանական դիսցիպլինի վերջնական ձևավորումը, նրա ընդհանուր սկզբունքների ձևակերպումը տեղի է ունենում հիմնականում XX դարում՝ նախորդ շրջանի աշխատանքի հիման վրա. այդ մշակման մեջ կարևոր դեր են կատարում Ֆրանսիայում Ժիլբերոնը, Գերմանիայում Վոեդեն և Ֆրինգսը. 3) վերջապես, արդեն նշմարվում են բարբառագիտութեան մեջ երիտքերականական հնչյունաբանական ֆորմալիզմի հաղթահարման փորձեր, որոնք լայն ծավալ են ընդունում XX դարում՝ լեզվաբանական աշխարհագրութեան կամ բարբառագրութեան վերջնական ձևավորման հետ կապված: Այս շրջանում նման փորձերից մեկը էնգելսի «Ֆրանկյան բարբառը» ուսումնասիրութիւնն էր:



են բազմաթիվ այլ աշխատություններ, որոնք միշտ էլ ելնում էին փոքր խոսվածքներից և ոչ թե մեծ բարբառային միավորներից. բայտ երիտքերականների (Օստհոֆ և ուրիշներ)՝ հնչյունական օրենքների հետևողականութունը կարելի է լավ ցույց տալ հենց այդպիսի փոքր միավորների հիման վրա:

Վինտեկերի գրքի լույս տեսնելու հետ միաժամանակ (1876 թ.) Գեորգ Վենկերը (1852—1911) սկսում է գերմաներենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքումը. նա իր դիսերտացիայի վրա կատարած աշխատանքի ընթացքում զգում է բարբառների սահմանների մասին եղած պատկերացումների անճշտութունը և որոշում է ստուգել եղած տվյալները: Այդ նպատակով նա կազմում է 40 նախադասությունից բաղկացած մի անկետա և ուղարկում Դյուսելդորֆի (Հռենոսյան) շրջանի ուսուցիչներին՝ խնդրելով դրանք վերածել բարբառի՝ օգտվելով գերմանական ուղղագրությունից: Նախադասությունները կազմված էին այնպես, որ հնարավորութուն էին տալիս որսալ բարբառների հնչյունական և քերականական գրեթե բոլոր կարևոր առանձնահատկությունները: Ուսուցիչների մեծ մասից ստացած տվյալների նախնական մշակման հիման վրա մեկ տարի անց՝ 1877 թ. Վենկերը հրատարակում է «Հռենոսի բարբառը» ուսումնասիրությունը<sup>1</sup>: Այստեղ նրան հաջողվում է ցույց տալ, որ բառերի մի որոշ խմբի փոփոխության սահմանը չի համընկնում գերմանական տեղաշարժի հիմնական սահմանի հետ, այլ անցնում է նրանից 25 կմ հյուսիս: Այս արդյունքի կապակցությամբ Վենկերը սկսում է ընդարձակել անկետայի տարածման շրջանակները՝ ընդգրկելով Գերմանիայի  $\frac{2}{3}$ -ը: 1879—1880 թթ. նա հավաքում է 30 000 անկետա: Ուսումնասիրված տերիտորիան բաժանելով 13 շրջանի՝ նա յուրաքանչյուրի համար նախատեսում է 36 քարտեզ: 1881 թ. լույս են տեսնում «Հյուսիսային և միջին Գերմանիայի բարբառագիտական ատլասի» առաջին 6 փորձնական քարտեզները, որոնք պատկերացում էին տալիս 30 հնչյունական և քերականական երևույթի մասին: Բեռլինի Գիտությունների ակադեմիայի գրախոս Մյուլլենդորֆը երկու կարևոր առաջարկ է անում. նա գտնում է, որ ավելի նպատակահարմար է և մեթոդապես ավելի ճիշտ ամեն հարցի մեկ կամ երկու քարտեզ նվիրել՝ փոխանակ մեկ քարտեզը բաժանելու սեկտորների. երկրորդ՝ տալ ոչ թե ամփոփիչ քարտեզներ, այլ բայտ հնարավորու-

<sup>1</sup> G. Wenker, Das Rheinische Platt, Düsseldorf, 1877.

թյան՝ ամեն բառի համար մեկ քարտեզ: Վենկերը զգում էր, որ իր նախատեսած քարտեզները մեծ ծախսեր և երկարատև աշխատանք են պահանջում: 1886 թ. ատլասի գործը սկսում է պաշտոնապես ղեկավարել Բեռլինի Գիտությունների ակադեմիան, և Վենկերին ասիստենտներ են տրվում: 1887 թ. ասիստենտ է դառնում Ֆերդինանդ Վոեդեն, որ հետագայում դառնում է Վենկերի հաջորդը: 1886—1887 թթ. հավաքվում է ևս 10 000 անկետա, և այսպիսով ընդգրկվում է այն ժամանակվա Գերմանիայի ողջ տերիտորիան: Անկետաները պարունակում էին 330 բառ: Յուրաքանչյուր բառի, այլև յուրաքանչյուր վերջավորությունից ու նախածանցի համար կազմվում էր առանձին քարտեզ: Եղած 40 000 անկետայի հիման վրա 40 տարվա ընթացքում՝ 1886—1926 թթ. կազմվում է 1650 ձեռագիր քարտեզ: 1892—1900 թթ. փորձ է արվում նախնական նկարագրություններ տալ, բայց այդ փորձը դադարեցվում է, որովհետև առանց քարտեզների դրանք թյուրիմացությունների տեղիք էին տալիս: 1926 թ. ձեռնարկվում է քարտեզների փոքրացված և պարզեցված հրատարակությունը, ընդ որում աստիճան ավարտվելուց հետո պարունակելու էր միայն 120 քարտեզ:

Ատլասի կազմության մեթոդը դեռևս XIX դ. վերջերին ենթարկվեց քննադատության. հատկապես խիստ էր Բրեմերի քննադատությունը (1891 թ.): Վերջինս նշում էր, որ՝ 1) տառադարձումը կատարվում է ոչ-գիտականորեն, արհեստավորապես եղանակով. այն չի կարող տալ բարբառային արտասանության իրական պատկերը. 2) երևույթների սահմանները շարժական են և սրա հետևանքով կան անցողիկ երկրեզվյան գոտիներ, մինչդեռ պատասխանողները պատահականորեն գրանցում են կամ միայն հին ձևը, կամ միայն նորը, որի հետևանքով քարտեզում առկա են ոլորուն, զիգ-զագաձև գծեր՝ երկու կողմով անցնող բազմաթիվ բացառություններով. 3) բարբառներում եղած հնչյունական (ֆրազային շեշտի բնույթից կախված) կրկնակները քարտեզում չեն նշանակված: Բրեմերի քննադատությունը դիմադրության հանդիպեց Վենկերի և Վոեդեի կողմից, թեև վերջինս վերջ ի վերջո ստիպված էր հաշվի առնել եղած դիտողությունները: Սկսելով իր աշխատանքը՝ Վենկերը համոզված էր, որ բարբառային հատկությունները որոշակի սահմանային գծերով անջատված են. մինչդեռ հետազոտությունը պարզեց, որ յուրաքանչյուր երևույթ ունի իր սահմանը, այդ սահմանները գնում են տարբեր ուղղությամբ և հաճախ խաչաձևվում են:

XIX դ. 80-ական թվականներից լայն ծավալ է ստանում ումանական բարբառների ուսումնասիրության աշխատանքը՝ կապված կենդանի լեզուներին ու բարբառներին ավելի մեծ ուշադրություն դարձնելու երիտօրեականական պահանջի հետ: Սակայն նախքան այդ էլ արդեն հիշված Ասկոլին սկսում է բարբառների ուսումնասիրման մի ամբողջ շարք: Ռոմանական բարբառների ուսումնասիրության մեջ հենց սկզբից առկա էր երկու ուղղություն, որոնցից մեկը ելնում էր բարբառային որոշակի սահմանների գոյության տրադիցիոն հայեցակետից, մյուսը պաշտպանում էր այդպիսի որոշակի սահմանների բացակայության տեսակետը: Առաջին կարծիքը պաշտպանում էին Ասկոլին, Տուրտուլոնը, Բրենգյենն և ուրիշները, երկրորդ կարծիքը՝ Պոլ Մեյերը, Հուզո Շուխարդտը, Գաստոն Պարիսը և առանձնապես վերջինիս աշակերտ Ժիլյերոնը, որի անվան հետ կապված է ֆրանսիական բարբառագիտական ասլյաս կազմելու աշխատանքը: Պոլ Մեյերը Ասկոլիի բարբառագիտական սկզբունքների դեմ հանդես է գալիս 1875—1876 թթ.<sup>1</sup> արսուհայտելով այն կարծիքը, որ բարբառների խմբավորումը մի քանի պատահական, հետազոտողի քմահաճույքով առանձնացված հատկանիշների հիման վրա ճիշտ չէ. նրա կարծիքով՝ այդ հատկանիշները չեն հանդիպում բարբառների տարածման ողջ տերիտորիայում, ընդհանրապես բարբառների որոշակի սահմաններ չկան, բարբառների հատկանիշներն այնպես են խաչաձևվում, որ դրանց որոշակի սահմանազատումը դժվար է: Սակայն 1877 թ. Մեյերը, Տուրտուլոնի և Բրենգյեի կողմից ֆրանսիերենի ու պրովանսալերենի սահմանները որոշելու աշխատանքից հետո, ստիպված է լինում ընդունել, որ այդպիսի սահման կարելի է անցկացնել՝ որոշակի թվով լեզվական փաստերի հիման վրա: Պոլ Մեյերի կարծիքին մոտ կարծիք են պաշտպանում Շուխարդտը (իր «Ռոմանական բարբառների դասակարգման շուրջը» հոդվածում)<sup>1</sup> և Գաստոն Պարիսը: «Իրականում բարբառներ գոյություն չունեն»,— գրում է վերջինս:— «Ժողովրդական բարբառները աննկատ երանգներով անցնում են մեկը մյուսին: Միայն իր գյուղի խոսվածքն իմացող գյուղացին անկասկած կկարողանա հասկանալ և հարևաններին, ավելի մեծ դժվարությամբ՝ նույն ուղղությամբ ավելի հեռու ընկած գյուղի խոսվածքը և այդպես շարունակ, ընդ-

<sup>1</sup> H. Schuchardt, Über die Klassifikation romanischer Mundarten, 1900 (գրված է 1870 թ.):

հուպ մինչև այնպիսի մի վայր, որի բարբառը նա կկարողանա հասկանալ միայն չափազանց մեծ դժվարութեամբ<sup>1</sup>։

Բարբառների ժխտման այս տեսակետը արտացոլվում է և ժյուլ Ժիլյերոնի (1854—1926) մոտ, որ իր վրա է վերցնում Պ. Մեյերի, Հ. Շուխարդտի, Գ. Պարիսի հայացքների հաստատման խնդիրը։ Ժիլյերոնի աշխատանքի մեթոդը լիովին տարբերվում էր Գեորգ Վենկերի կիրառած մեթոդից։ Նախ՝ ի տարբերութուն վերջինիս, որ հենվում էր մասնագիտական հատուկ պատրաստութուն չունեցող ուսուցիչների տվյալների վրա, ժիլյերոնը գրանցման աշխատանքները դնում է շատ լավ երաժշտական լսողութուն ունեցող և հնչյունաբան էդմոնի վրա։ Վերջինս ժիլյերոնի կազմած պլանով 1897—1901 թթ. անցնում է Ֆրանսիայի 639 վայր և գրանցում իր հետազոտութեան արդյունքները։ Երկրորդ՝ ի տարբերութուն Վենկերի անկետայի, ժիլյերոնի անկետան պարունակում էր 2000 առանձին բառ, որոնք պետք է լուսաբանեին հնչյունական, քերականական և բառապաշարային երևույթները. առանձնապես կարևոր էր բառապաշարի հետազոտութունը, որը Վենկերի անկետայում անբավարար չափով էր արտացոլված։ Սակայն ժիլյերոնի մեթոդն ուներ և իր թերի կողմը. այստեղ ընդգրկված վայրերի քանակը մի քանի տասնյակ անգամ փոքր էր, քան Վենկերինը, այսինքն՝ հետազոտութեան ցանցը շատ ավելի նոսր էր։ Անհրաժեշտ է նշել, որ չնայած իր լավ լսողութեանը՝ էդմոնն այնուամենայնիվ ոչ միշտ էր լիովին որսում բարբառային բոլոր նրբերանգները, որովհետև հնչյունները առնվում էին ոչ սխտեմային փոխհարաբերութունների մեջ։ Հետագայում բարբառագիտական ատլասներ կազմելիս աշխատում են խուսափել երկու դպրոցին հատուկ թերութուններից։ Հետազոտութեան արդյունքները ժիլյերոնն ամփոփում է 2000 քարտեզի մեջ. ամեն բառի տրվում է մեկ քարտեզ, որի վրա միշտ նույն համարներով նշանակվում են հետազոտված կետերը։ 1903—1910 թթ. ատլասը հրատարակվում է՝ հիմք տալով լեզվաբանական կարևոր եզրակացութուններին համար։

Իրենց բարբառագիտական ուսումնասիրութունների մեջ երիտքերականները, տարվելով «մաքուր» հնչյունական չափանիշների գերազանհատմամբ, հաճախ ընկնում էին ակնհայտ ֆորմա-

<sup>1</sup> G. Paris, Les parlers de la France, 1888. Տե՛ս և „Mélanges linguistiques“, III, 1907. էջ 434.

իզմի մեջ, մոռանում լեզվի և ժողովրդի պատմության կապը: Նման մոտեցման ցայտուն արտահայտություն են Վ. Բրաունեի բարբառագիտական ուսումնասիրությունները: Իր «Ֆրանկերենի իմացության և վերին գերմանական հնչատեղաշարժի շուրջը» ուսումնասիրության մեջ<sup>1</sup> Բրաունեն, ելնելով հնչյունների վերին գերմանական տեղաշարժի<sup>2</sup> առկայությունից կամ բացակայությունից պատմական և լեզվական մեկ ամբողջություն ներկայացնող ֆրանկյան բարբառը բաժանում է երկու մասի, ընդ որում հարավային ֆրանկյան խոսվածքները խմբավորում է սաքսոնականների հետ միասին:

Ֆր. էնգելսը իր «Ֆրանկյան բարբառ» ուսումնասիրության մեջ որ կազմում է «Հին գերմանացիների պատմության շուրջը» աշխատության մի մասը (գրված 1880-ական թթ. և հրատարակված միայն 1937 թ.)<sup>3</sup>, քննադատելով Վ. Բրաունեի տեսակետը և մանրամասն վերլուծության ենթարկելով ֆրանկյան բարբառի առանձին խոսվածքների նյութը, ապացուցում է այդ բարբառի պատմալեզվական ամբողջականությունը: Ըստ էնգելսի՝ ֆրանկյան բարբառը VI—VII դդ. մի ինքնուրույն ամբողջություն էր, և մինչև այժմ էլ խոսողների մեջ առկա է իրենց՝ մի փոխկապակցված ամբողջություն լինելու գիտակցությունը: Երիտքերականների զուտ հնչյունական շափանչին էնգելսը հակադրում է նոր մոտեցում, որ ելնում է բարբառի գծերի ամբողջականության, բարբառային սահմանների հասարակական-պատմական որոշվածության գաղափարից: Սրանով իսկ էնգելսը կանխում է գերմանական բարբառագրության նորագույն եզրակացությունները<sup>4</sup>:

Լեզուների ընդհանուր դասակարգման փորձերը. Ֆր. Մյուլլեր, Ֆր. Միստելի.—Ֆրիդրիխ Մյուլլերը 1876—1888 թթ. լույս տեսած իր «Լեզվաբանության հիմունքները»<sup>5</sup> աշխատության մեջ ամփոփում է աշխարհի տարբեր լեզուների ցեղակցական կապերի

<sup>1</sup> W. Braune. Zur Kenntnis des Frankischen und zur hochdeutschen Lautverschiebung, BGDSL, I, 1874.

<sup>2</sup> Այդ տեղաշարժը տարբերում է վերին գերմաներենը մյուս գերմանական լեզուներից և արտահայտվում է b, d, g > p, t, k և p, t, k > pf, ts(z). kch անցումներով:

<sup>3</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, I, 1937. էջ 412—430.

<sup>4</sup> Հմտ. Т. Фрингс, Энгельс как филолог, „Немецкая диалектография“, 1955, էջ 220—223.

<sup>5</sup> Fr. Müller, Grundriss der Sprachwissenschaft, 1876—1888.

ուսումնասիրության ուղղութեամբ ձեռք բերված նվաճումները, թեև Մյուլլերի գործը դեռևս աչքի չի ընկնում հնչյունական օրինաչափականության գաղափարի հետևողական կիրառմամբ:

Հենվելով Շտայնթալի վրա՝ 1893 թ. Միստելին տալիս է լեզուների տիպոլոգիական դասակարգման նոր փորձ<sup>1</sup>: Նա տարբերում է անձև և ձևավոր լեզուներ, դրանք բաժանելով բառազուրկ կեղծաբառ և իսկաբառ (nichtworig, scheinworig, echtworig) ենթատեսակների: Շտայնթալի նման ունենալով լեզվի հոգեբանական ըմբռնում և բառիմաստը նույնացնելով հոգեբանական պատկերացման հետ՝ Միստելին բառիմաստի, որպես պատկերացման, մեջ է մտցնում խոսքի մեջ բառի ունեցած հարաբերությունների ամբողջությունը: Այս առումով էլ իսկական բառեր են համարվում այն բառերը, որոնք արտահայտում են և՛ նյութական, և բերականական իմաստ: Ինչպես այլ հեղինակների մոտ, այնպես էլ Միստելու մոտ կատարյալ տիպը ներկայացված է համարվում հնդկերոպական և սեմական լեզուներով, որոնց մեջ բառի բաղադրիչները միացած են սերտորեն, իսկ բայը որպես նախադասության կենտրոն ունի ենթական նշող մասնիկ. այս լեզուները համարվում են ձևավոր իսկաբառ: Ձևավոր բառազուրկ լեզուների մեջ Միստելին տարբերում է անջատական (արմատանջատական, ինչպես շինարենը և հիմքանջատական, ինչպես մալայերենը) և միացական (ինչպես բանտու) լեզուները: Կցական լեզուները համարվում են անձև կեղծաբառ:

## 2. ՀՆԳԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ա) ԸՆԳԻՏԱԿԱՆ ԻՍԿԱԲԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Հնդկերոպական լեզուների ստուգաբանության, հնչյունաբանության, ձևաբանության հարցերը Ա. Ֆիկի և Ս. Տերվիշյանի աշխատություններում.— Իր գործուսեության սկզբնական շրջանում Ա. Ֆիկը (1833—1916) հենվում էր Շլայխերի դրույթների վրա: «Նվրոպայի հնդկերոպացիների վաղեմի լեզվաբանականությունը» գրքում<sup>2</sup> նա, հետևելով Շլայխերին, փորձում է ապացուցել սահական և եվ-

<sup>1</sup> Fr. Misteli, Charakteristik der hauptsächlichen Typen des Sprachbaues, 1893.

<sup>2</sup> A. Fick, Die ehemalige Spracheinheit der Indogermanen Europas, 1873.



րոպական հնդերոպական լեզուների՝ նախապես երկու լիովին անջատ խումբ կազմելու դրույթը. ընդհանրապես նա անցկացնում էր ծննդաբանական ծառի գաղափարը: Հետագայում Ֆիկը կարևոր գեր է խաղում հնդերոպական լեզուների առանձին հարցերի ուսումնասիրության և առանձնապես հնդերոպական ստուգաբանության բնագավառում: Նա Պոտտից հետո ձեռնարկում է նոր ամփոփիչ ստուգաբանական աշխատություն, որ երկար ժամանակ պահպանում է իր արժեքը. դա «Հնդերոպական լեզուների համեմատական բառարանն» էր<sup>1</sup>:

Ֆիկը առաջիններից մեկն է եղել, որ ցույց է տվել հնդերոպական ձայնավորների կարճ ու երկար տեսակների տարբերությունը և խոսել երկար ձայնավորների՝ անշեշտ վանկերում կրած թուլացման մասին:

Ձևաբանության բնագավառում Ֆիկի կատարածից առանձնապես կարևոր է նշել հետևյալը. 1) Ֆիկը առաջիններից մեկն է, որ նշել է բայական և տնվանական հիմքերի կապը, ցույց տվել բայական և անվանական ածանցների ընդհանրությունները: 2) Նա առաջ է քաշել հնդերոպական արմատի նոր ըմբռնում: Ինչպես տեսանք, Բոպպը և Շլայխերը տարբերում էին արմատական շրջան, երբ գոյություն են ունեցել «մաքուր» արմատներ. սրանով իսկ արմատները դիտվում էին որպես մեկ շրջանի արդյունք: Լեզվաբանության նոր նվաճումները և արմատի գաղափարի վերանայումը հիմք են տալիս արմատի ըմբռնման պատմականության համար. սկսում է դիտակցվել այն փաստը, որ արմատակազմությունը պատմական երկարատև պրոցես է և ոչ թե մի շրջանի արդյունք: Ֆիկը հայտնում է այն կարծիքը, որ հունական *ἀόρος* «բևու» և *φείρομαι* «բերում ենք» բառաձևերի միջև առկա *φείρο-* և *φείρο-* ձևերը ոչ այլ ինչ են, եթե ոչ մեկ արմատական տարր՝ «բազա»: Այս տեսակետը հետագայում ընդունվում ու զարգացվում է Հիրտի, ապա ավելի նոր ժամանակներում՝ Կուրիլովիչի ու Բենվենիստի կողմից<sup>2</sup>: Սգտվելով Կուրցիոսի «արմատի աճականի» գաղափարից՝ Ֆիկը այն լայն կերպով կիրառության մեջ է մտցնում և իր ստուգաբանական բառարանին կցում «Արմատները և արմատների աճականները» հավելվածը, որ հետագայում լրացվում ու ճշտվում է Պ. Պերսոնի աշխատություններով: 3) Ֆիկը առաջին անգամ լուրջ ուղղորդություն է դարձրել հնդերոպական հատուկ անունների կազ-

<sup>1</sup> A. Fick, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, Göttingen, 1868 (հետագայում ևս 4 հրատարակություն):

<sup>2</sup> Փ. Шпект, հիշ. աշխ., էջ 26:

մության հարցին. այս տեսակետից առանձնապես կարևոր է նրա «Հունական անձնանունները» աշխատությունը<sup>1</sup>, որը հնդերոպական օնոմաստիկայի բնագավառի առաջին լուրջ հետազոտություններից մեկն է:

Հնդերոպական լեզվաբանության բնագավառում ձեռք բերված նվաճումների ամփոփման առաջին փորձերից մեկը պատկանում է հայ լեզվաբան Ս. Տերվիշյանին (1843—1892): Իր «Հնդերոպական նախալեզու» գրքում (1885 թ.) նա տալիս է հնդերոպական նախալեզվի քերականության ուրվագիծը և քննում բառամթերքը՝ բերելով հնդերոպական արմատների՝ իր ժամանակի համար բավականաչափ լրիվ ցանկը: Դժբախտաբար հեղինակը չի կարողացել հենվել երիտքերականների՝ այս բնագավառում ձեռք բերած վերջին նվաճումների վրա. այսպես, օրինակ, նա դեռևս հնդերոպական հիմնական ձայնավորներն է համարում a-ն, i-ն, u-ն, տատանվում է հայերենի վերաբերյալ Հյուբշմանի տեսակետն ընդունելու մեջ և այլն:

Իր ընդհանուր լեզվաբանական հայացքներով Տերվիշյանը հետևում է Ուիտնիին:

Լեզվաբանական հնէաբանությունը և հնդերոպացիների նախահայրենիքի ու կուլտուրայի պրոբլեմները. Օ. Շոադերի, Ի. Շմիդտի և ուրիշների ուսումնասիրությունները. — Հնդերոպացիների նախահայրենիքի, կյանքի, հասարակական հարաբերությունների ու կուլտուրայի պատմության ուսումնասիրությունը լեզվաբանական տվյալների հիման վրա սկսվել էր, ինչպես տեսանք, դեռևս նախորդ շրջանում: Այս շրջանում այդ հարցերին ամենից ավելի մեծ ուշադրություն է նվիրում Օ. Շոադերը (1855—1919): Նա ի մի է հավաքում եղած հետազոտությունների արդյունքները և իր եզրակացությունների հետ միասին ամփոփում երկու գրքում՝ «Լեզվահամեմատությունը և նախապատմությունը»<sup>2</sup> և «Հնդերոպական հնությունների իրաբառարանը»<sup>3</sup>: Շոադերը հնդերոպացիների նախահայրենիքը տեղավորում է Սև ծովից հյուսիս ընկած շրջանում՝ Ռուսաստանի հարավում: Որոշ իդեալական գույներով է Շոադերը

<sup>1</sup> A. Fick. Die griechischen Personennamen, 1874.

<sup>2</sup> O. Schrader, Sprachvergleichung und Urgeschichte, 1883 (ռուս. հր.՝ Օ. Шрадер, Сравнительное языковедение и первобытная история, СПб, 1886):

<sup>3</sup> O. Schrader, Reallexikon der indogermanischen Altertumskunde, 1901.

գծում հնդերոպացիների տնտեսական ու քաղաքական կյանքի, կուլտուրական նվաճումների և ընտանեկան հարաբերությունների պատկերը (հմմտ. Չերնիշևսկու քննադատությունը): Նրան պակասում է ոչ միայն հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտման կարողությունը, այլև լեզվական երևույթների ըննման ինքնուրույնությունը: Իրենց թերություններով հանդերձ, որոնք մասամբ նկատելի էին հենց երևան գալու ժամանակ, Շոադերի գրքերը լայն շահով տարածվել են և շատ հարցերում կարևոր տեղեկատու ձեռնարկ են եղել: Շոադերի «Լեզվահամեմատությունը և նախապատմությունը» հետագայում վերամշակվել է Հանս Կրահեի կողմից և լույս ընծայվել 1935 թ.:

Շմիդտը իր «Հնդերոպացիների նախահայրենիքը և հաշվման եվրոպական սիստեմը» գրքում<sup>1</sup> վերլուծման ենթարկելով հնդերոպական հաշվական սիստեմը, ցույց տալով տասնորդականի հետ առաներկուորդական ու անավարտ վաթսուներդական հաշվական սիստեմների զուգորդվելը, այլև մատնանշելով երկու վաղ սեմական փոխառության փաստը՝ գալիս է այն եզրակացության, որ հնդերոպացիները գտնվել են սեմիտների հարևանության մեջ և որ, հետևաբար, նրանց նախահայրենիքը պետք է գտնված լինի Ասիայում: Շմիդտի եզրակացությունները հապճեպ են կատարված և հետագայում առանձին ընդունելություն չեն գտել. նրա բերած փաստերը չեն հաստատում հնդերոպացիների ու սեմիտների անմիջական շփման առկայությունը: Հաշվական սիստեմի տարածում, կարող էր կատարվել և ոչ անմիջաբար<sup>2</sup>:

Ինչպես նշել ենք, Գրիմը իր «Գերմաներեն լեզվի պատմություն» մեջ նպատակ էր դնում բառերից անցնել իրերին, բառերի պատմության հետևում բացահայտել իրերի պատմությունը: Այս հարցը հետաքրքրության նոր ալիք է առաջացնում վ. Շերերի (1841—1887) «Գերմաներենի պատմության շուրջը» գրքի հրատարակությունից հետո: 1879 թ. լույս են տեսնում այս բնագավառին վերաբերող երկու կարևոր աշխատություններ՝ Հ. Յիմմերի «Հին հնդկական կյանքը»<sup>3</sup>, որ նրա հին աշխատության վերամշակումն էր, և Ֆ. Բեխտելի «Հնդերոպական լեզուներում զգայական րնկա-

<sup>1</sup> I. Schmidt, Die Urheimat der Indogermanen und das europäische Zahlensystem, 1890.

<sup>2</sup> Հմմտ. Փ. Միքել, հիշ. աշխ., էջ 47:

H. Zimmer. Altindisches Leben, 1879.

յումների նշանակման մասին» գործը<sup>1</sup>. Վերջինս գրված էր ոչ առանց Շերերի ազդեցութեան: Թեև երիտքերականների ուշադրութեան կենտրոնում գտնվում էին հնչյունական ու քերականական հարցերը, բայց երբեմն-երբեմն նրանք անդրադառնում էին և այս հարցին. Բ. Դելբրյուկը աշխատութիւն է նվիրում ազգակցական անուններին (1889)<sup>2</sup>:

Ա. Լուզվիգի աղապատացիայի սկզբունքը. — Ի տարբերութիւն Բուպպի կցականութեան (ազլուտինացիայի) սկզբունքի, Ա. Լուզվիգը 1870-ական թվականների սկզբներին առաջ է քաշում հարմարեցման (աղապատացիայի) սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի՝ քերականական թեքութիւնները կարող են սկզբնապես անորոշ իմաստով, շտարբերակված ձևաբանական կազմավորումներ լինել, բայց աստիճանաբար հարմարվել նոր ֆունկցիա կատարելուն ու դրանով իսկ վերածվել տվյալ թեքութիւններին: Այսպես, հնդկերոպական բայական դիմային վերջավորութիւնների ծագումը նա փորձում է բացատրել անորոշի (infinitivus) զանազան կազմավորումների իման վրա<sup>3</sup>:

Թեև երիտքերականութեան ականավոր դեմքերը (հատկապես Դելբրյուկը իր «Լեզվի ուսումնասիրութեան ներածութեան» մեջ) այս սկզբունքը ենթարկում են խիստ քննադատութեան, բայց այն հետագայում զգալի ազդեցութիւն է ձեռք բերում և մեծ դեր խաղում Հիրտի կողմից հնդկերոպական քերականական ձևերի ծագմանը տրված մեկնաբանութեան մեջ:

Ավելորդ չէ նշել, որ Լուզվիգը և նրա աշակերտ Ի. Չուբատին առաջիններն էին<sup>4</sup>, որոնք հնդկերոպական լեզվական ընդհանրութեան տրոհումն սկսեցին դիտել որպես աստիճանական պրոցես, նշելով, որ մյուս լեզուներից վաղ ինքնուրույնացած լեզուները պահպանում են ավելի արխաիկ կառուցվածքի հատկանիշներ: Հետագայում

<sup>1</sup> F. Bechtel. Über die Beziehung der sinnlichen Wahrnehmungen in die indogermanischen Sprachen, 1879.

<sup>2</sup> B. Delbrück. Die indogermanischen Verwandtschaftsnamen, 1889.

<sup>3</sup> A. Ludwig, Der Infinitiv im Veda nebst einer Systematik des litauischen und slavischen Verbs, Prag, 1871 և մանավանդ Agglutination oder Adaptation? Eine wissenschaftliche Streitfrage, Prag, 1873.

<sup>4</sup> Հմտ. B. Havranek, Sur la formation des langues indoeuropéennes par les colonisations successives, Praha, 1932, այլև A. B. Десницкая, Вопросы изучения родства индоевропейских языков, 1955, էջ 171.

նորագույն լեզվաբանության մեջ այդ տեսակետը վաղ անջատված լեզուների («եզրային» լեզուների) ավելի արխաիկ գծեր պահպանելու մասին՝ դրվում է նոր ձևով և ավելի վճռականորեն:

Հնդկարապական շեշտի ուսումնասիրության հարցերը. Յ. Վակերնագել, Ֆ. Ֆորտունատով, Ա. Բեցցենբերգեր, Ֆ. Հանսեն. «Միխելսի օրեֆֆը».— Հնդկարապական հնչյունաբանության ինտենսիվ ուսումնասիրության հետ կապված՝ սկսում են լայն ուշադրություն գրավել հնդկարապական շեշտի բնույթի հարցերը, որոնք կամա թե ակամա հանգեցնում են գենետիկական պրոբլեմների: Այդ բանը նկատվում է հատկապես Ն. Հիրտի աշխատություններում, որի գործունեությունը որոշ շահով շեղվում է այս ենթաշրջանի հնդկարապական տրագիցիայից և կապվում է երիտքերականների ժառանգության քննադատական վերանայման փորձերի հետ: Շեշտի հետ կապված հարցերի կարևորությունը զգացվում էր հատկապես այն պատճառով, որ այնպիսի մի կարևոր ուսումնասիրություն, ինչպիսին Վեռնների հոդվածն էր, հնչյունական փոփոխությունը տվյալ դեպքում կապում էր շեշտի հետ:

Իր «Հունական բայաշեշտը» հոդվածում<sup>1</sup> Վակերնագելը կապ է սահմանում վեղայական և հունական բայաշեշտի դիրքի ու բնույթի միջև՝ դրանց հիմքերը տանելով մինչև հնդկարապական հիմնալեզուն: Լեզվաբաններն սկսում են ուշադրություն դարձնել ոչ միայն շեշտի դիրքի, այլև բնույթի վրա, այն է՝ վանկի ինտոնացիայի վրա, որ հունարենում հանդես է գալիս որպես պարուկավոր և սրաշեշտ ինտոնացիա (ցիրկումֆլեքսային և ակուտային՝ բարձրացող-իջնող և բարձրացող)<sup>2</sup>: Կարևոր նշանակություն ունեցավ նաև այն, որ Ֆ. Կուրշատը նկատեց լիտվական շեշտի երաժշտական բնույթը և ցույց տվեց, որ լիտվական երկար ձայնավորներն ու երկբարբառները կարող են ունենալ երկու տարբեր ինտոնացիա՝ սրաշեշտ (ակուտային) և պարուկավոր (ցիրկումֆլեքսային)<sup>3</sup>:

Ինչպես նշել ենք, Ֆորտունատովը ցույց է տալիս, որ հնդկարապական միավանկ արմատների դեպքում լիտվական պարուկավոր վանկերին սերբերենում (սլավոնական լեզուներում) համապատասխանում է երկար վանկ, իսկ հնդկարապական երկվանկ արմատների դեպքում լիտվերենի սրաշեշտ վանկերի դիմաց սերբե-

<sup>1</sup> I. Wackernagel. Der griechische Verbalaccent, KZ, XXIII, էջ 457—470.

<sup>2</sup> Հունական ցիրկումֆլեքսային շեշտի բնույթը լիովին պարզ չէ:

<sup>3</sup> Լիտվերենում ակուտայինը կարող է լինել և իջնող, իսկ ցիրկումֆլեքսայինը՝ նաև իջնող-բարձրացող:

րենը (պլավոնական լեզուները) ունի կարճ վանկ: Բեցցենբերգերը ցույց տվեց որոշակի փոխհարաբերություն հունական և լիտվական պարույկավոր և սրաշեշտ վերջնավանկերի միջև: Փ. Հանսենը նման հարաբերություն հաստատեց գոթերենի նկատմամբ, որտեղ ևս դուրս եկավ, որ հին պարույկավոր վերջավանկերը երկար են, հին սրաշեշտ վանկերը՝ կարճ<sup>1</sup>:

Ա. Բեցցենբերգերը հաստատում է շեշտի հետ կապված նաև մի այլ օրինաչափություն, որ թեև հենվում էր լիտվերենի ոչ բավարար ուսումնասիրության հետևանքով սպրդած սխալ մեկնաբանությունների վրա, բայց զգալի ազդեցություն է ձեռք բերում: Ըստ Բեցցենբերգերի՝ սրաշեշտ ինտոնացիա ունեցող երկբարբառները կորցրել են իրենց երկրորդ (իմա՝ ձայնորդային) տարրը<sup>2</sup>: Սրա հետ առնչվում էր նաև ալյապես կոչված «Միխելսի օրենքը», որի համաձայն ձայնորդի կորստից հետո պահպանված ձայնավորը երկարում է և դառնում պարույկավոր՝ որպես կորցրած չափամասերը (մորերը) հատուցելու անհրաժեշտության հետևանք: Համատիպ կարծիք է հայտնում և Շտրայտբերգը իր «կոմպենսացիայի տեսության մասին»: Ըստ Շտրայտբերգի ուսմունքի՝ ձայնավորների հերթագայության այսպես կոչված երկար աստիճանը (Dehnstufe) ծագում է բաց շեշտավոր վանկերին հաջորդող անշեշտ վանկի կարճ ձայնավորի կորստյան հետևանքով, այսինքն՝ լատ. pēs և «ոսք» (<\*peds)\* \*pedos-ից, rex-ը՝ \*regus-ից, հուն. πατήρ-ը՝ πατερ-ից կամ πατερο-ից և այլն<sup>3</sup>:

## բ) Հնդերոպական առանձին լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրությունը

Առանձին լեզուների և լեզվաճյուղերի համեմատական և պատմական փերականությունների սկզբունքների վերաճայումը.— Հնդերոպական լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում նոր սկզբունքների արմատավորումը պա-

<sup>1</sup> Հմտ. Փ. Ս next, հիշ. աշխ., էջ 40:

<sup>2</sup> Միամասնակ Բեցցենբերգերը կարծում էր, թե հնդերոպական սրաշեշտ ինտոնացիան իջնող էր, մի բան, որ չէր համընկնում մյուս բալթիական լեզուների (լատվերենի և հին պրուսերենի), սլավոնական լեզուների և հունարենի տվյալների հետ: Հմտ. Փ. Ս next, հիշ. աշխ., էջ 41:

<sup>3</sup> Նշելի է, որ կարճ ձայնավորը եթե մեկ չափամաս (մոր) է համարվում, ապա երկարը և երկբարբառը կլինեն 2 չափամաս, երկար երկբարբառը և երկար ձայնավորի ու կարճ ձայնավորի զուգորդումը՝ 3 չափամաս:

հանջ է ստեղծում վերանայելու առանձին լեզուների ու լեզվա-  
ճյուղերի պատմական ու համեմատական քերականությունները և  
ստուգաբանական բառարանները:

Հանդես են գալիս նաև բազմաթիվ նկարագրական քերակա-  
նություններ ու առանձին հարցերի նվիրված աշխատություններ:

Հնդիրանական լեզուներ.—Հնդկական լեզուների ուսումնասի-  
րության բնագավառում հանդես են գալիս բաշմաթիվ նկարա-  
գրական և պատմա-համեմատական օղխատություններ: Սանսկրի-  
տի լավագույն քերականությունը համարվում է Ուիտնիի «Սանսկր-  
իտի քերականությունը»<sup>1</sup>, որտեղ քննության են արժանանում նաև  
վեդայական հնդկերենի փաստերը: Հին հնդկական լեզուների շա-  
րահչյուսությունն են նվիրված Շպայերի «Սանսկրիտի շարահչյու-  
սությունը» և «Վեդայերենի ու սանսկրիտի շարահչյուսությունը»<sup>2</sup>.  
պատմա-համեմատական բնույթի աշխատություններից հիշատա-  
կելի են Վակերնագելի ձեռնարկած ընդարձակ «Հին հնդկերենի  
քերականությունը», որի ի հատորը լույս է տեսել 1896 թ. (մնա-  
ցած հատորները լույս են տեսնում XX դարում)<sup>3</sup>, և Ուլենբեկի «Հին  
հնդկերենի համառոտ ստուգաբանական բառարանը»<sup>4</sup>:

Միջին հնդկական լեզուներից պրակրիտերին նվիրված Պի-  
շելի աշխատությունը<sup>5</sup> նկարագրական բնույթի է:

Նոր հնդկական լեզուներին մի շարք աշխատություններ են  
նվիրվում՝ գերազանցապես պատմա-համեմատական բնույթի:  
Գրանցից Բիմսի և Հյոռնլեի ծավալուն աշխատությունները<sup>6</sup> աչքի  
չեն ընկնում մեթոդի ճշգրտությամբ: Միկլոշիչը հասուկ աշխատու-

<sup>1</sup> W. D. Whitney, Sanskrit Grammar, III հր., Boston, 1896.

<sup>2</sup> J. S. Speijer, Sanskrit Syntax, Leyden, 1886. Vedische und  
Sanskrit-Syntax, Strassburg, 1896.

<sup>3</sup> J. Wackernagel, Altindische Grammatik, I—III, Göttingen,  
1896—1930 (III հատորը Կերուների աշխատակցությամբ. բայի մասը չի  
բնագրված):

<sup>4</sup> C. C. Uhlenbeck, Kurzgefasstes etymologisches Wörterbuch  
der altindischen Sprache, Amsterdam, 1898.

<sup>5</sup> R. Pischel, Grammatik der Prakrit-Sprachen, Strassburg,  
1900 (նախատեսված է որպես „Grundriss indo-iranischen Philologie“ աշ-  
խատության համապատասխան բաժին):

<sup>6</sup> J. Beames, Comparative Grammar of the Modern Aryan Lan-  
guages of India, I—III, London, 1872—1879. A. F. R. Hoernle, Compa-  
rative Grammar of the Gaudian Languages, London, 1880.

թյուն է նվիրել Եվրոպայի գնչուական բարբառներին<sup>1</sup>, Գայգերը կազմել է սինգհալերենի քերականությունն ու բառարանը<sup>2</sup>։

Իրանական լեզուների ուսումնասիրության բնագավառում հատուկ հիշատակության արժանի է «Իրանական ֆիլոլոգիայի ուրվագիծը»՝ Վ. Գայգերի և է. Կունի խմբագրությամբ, որի 1 հատորում տրված է իրանական լեզուների զարգացման պատմությունը. այստեղ գծվում է իրանական լեզուների համեմատական քերականության ընդհանուր պատկերը («Իրանական լեզուների նախապատմությունը»<sup>3</sup> խորագրով՝ գրված Բարթոլոմեի կողմից, որը հետագայում էլ հանդես է գալիս իրանագիտական մի շարք կարևոր աշխատություններով), և տրվում է առանձին լեզուների պատմահամեմատական տեսությունը (այդ թվում նույն Բարթոլոմեին ունի «Ավեստայի լեզուն և հին պարսկերենը» բաժինը)։ Զեկսոնը գրում է ավեստայի լեզվի քերականությունը՝ սանսկրիտի համեմատությամբ<sup>4</sup>։

Համեմատական-ստուգաբանական և նկարագրական բնույթի մի շարք աշխատություններ են նվիրվում նոր իրանական լեզուներին՝ Յուստիի «Քրդերենի քերականությունը», Հոռնի «Նոր պարսկական ստուգաբանության ուրվագիծը», Հյուբշմանի «Պարսկական ուսումնասիրությունները» (այստեղ տրված է պարսկական հնչյունաբանության ուրվագիծը և Հոռնի գրքի քննադատությունը) և «Օսերեն լեզվի ստուգաբանությունն ու հնչյունաբանությունը», Գայգերի «Աֆղաներենի ստուգաբանությունն ու հնչյունաբանությունը» և «Բելուջերենի ստուգաբանությունը», Շտակերբերգի «Օսերենի շարահյուսության շուրջը» գիրքը<sup>5</sup>։

Հայերեն.—Հայերենի ուսումնասիրության բնագավառում հատուկ վաստակ ունի Հյուբշմանը։ 1875 թ. Հյուբշմանը լույս է ըն-

<sup>1</sup> F. Miklosich, Über die Mundarten und die Wanderungen der Zigeuner Europas, I. XII, 1872—1880.

<sup>2</sup> W. Geiger, Literatur und Sprache der Singalesen, Strassburg, 1900. Etymologie der Singalesischen, München, 1897.

<sup>3</sup> Grundriss der iranischen Philologie, I, 1895—1901.

<sup>4</sup> A. V. W. Jakson, An Avesta Grammar in Comparison with Sanskrit, Stuttgart, 1892.

<sup>5</sup> P. Justi, Kurdische Grammatik, St. Petersburg, 1880. P. Horn, Grundriss der neupersischen Etymologie, Strassburg, 1894. H. Hübschmann, Persische Studien, Strassburg, 1895. Etymologie und Lautlehre der ossetischen Sprache, Strassburg, 1897. W. Geiger, Etymologie und Lautlehre des Afghanischen, München, 1893. Etymologie des Baluchi, München, 1890. R. von Stackelberg, Beiträge zur Syntax des Ossetischen, Strassburg, 1880.



ծայում իր «Հնդերոպական լեզուների շրջանում հայերենի գրաված դիրքի մասին» հոդվածը<sup>1</sup>, որի մեջ քննության առնելով հայերենի քերականական ու հնչյունական առանձնահատկությունները և իրանական լեզուներից ունեցած տարբերությունները, ցույց է տալիս, որ հայերենը ոչ թե իրանական լեզու է, այլ հնդերոպական լեզուների անկախ ճյուղ: Իր հետագա «Հայկական ուսումնասիրություններ», «Հայերենի քերականություն» և այլ աշխատություններում<sup>2</sup> Հյուբշմանը խորացնում է իր ուսումնասիրության սկզբնական արդյունքները, հնչյունական օրենքի գաղափարի խստիվ կիրառմամբ առանձնացնում հայերենի բնիկ արմատները (մոտ 300) և իրանական լեզուներից փոխ առնված բառերը, տալիս հայերենի համեմատական քերականության հիմունքները: Հյուբշմանի «Հայերենի քերականությունը» երկար ժամանակ հայերենի ստուգաբանական գլխավոր տեղեկատուն էր: Հյուբշմանի եզրակացություններն ընդունվում են Բրուգմանի կողմից և օգտագործվում վերջինիս հայտնի աշխատության մեջ:

Հայերենին նվիրված գործերից հիշատակելի են Բուգգեի «Հայերեն լեզվի ստուգաբանական մեկնաբանության հարցի շուրջը» և «էտրուսկերենն ու հայերենը» աշխատությունները, Մեյեի վաղ հոդվածները, հատկապես «Հայերենի բարբառային դիրքը» հոդվածը, Հ. Պեդերսենի ալբաներենին նվիրված աշխատության «Ալբաներենը և հայերենը» գլուխը և այլն<sup>3</sup>:

Գրաբարին և ժամանակակից հայերենին նվիրվում են նկարագրական մի շարք քերականություններ հայերի և ուրիշների կողմից: Միջին հայերենի հնչյունաբանությունը նվիրված է Կարստի աշխատությունը<sup>4</sup>:

Ա. Այտրնյանի և Ք. Պատկանյանի կողմից ձեռնարկված՝ հայ բարբառների գիտական ուսումնասիրության աշխատանքը այս են-

<sup>1</sup> H. Hübschmann, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, KZ, XXIII.

<sup>2</sup> H. Hübschmann, Armenische Studien, Leipzig, 1883. Armenische Grammatik, Leipzig, 1895—1897. Zur Chronologie der armenischen Vocalgesetze, SA, I, 1898 և այլն:

<sup>3</sup> S. Bugge, Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache, Christiania, 1889. Etruskisch und Armenisch, Christiania, 1890. A. Meillet, Position dialectale de l'arménien, MSL, IX, 1896. Recherches sur la syntax comparée de l'arménien, MSL, X—XVII, 1898—1911 և այլն:

<sup>4</sup> J. Karst, Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen. Strassburg, 1899.

թաշրջանում ավելի լայն թափ ու ծավալ է ստանում: Կույս են տեսնում Ս. Սարգսյանցի, Հանուշի, Ա. Տոմսոնի, Մ. Ս. Դավիթ-բեկի, Լ. Մսերյանցի բարբառագիտական աշխատությունները: Ա. Տոմսոնն ու Լ. Մսերյանցը Թբիլիսիի և Մշո բարբառներին նվիրված իրենց ուսումնասիրություններում<sup>1</sup> այդ բարբառները համեմատում են գրաբարի և հնդկարոպական նախալեզվի հետ՝ դրանով իսկ կարեւոր լուծա մտցնելով հայերենի պատմա-համեմատական քերականության ստեղծման բնագավառի մեջ: 1898 թ. հայ բարբառագիտության ասպարեզն է մտնում Հ. Աճառյանը, որը հետագայում դնում է այդ դիսցիպլինի ամուր գիտական հիմքերը:

Ալբաներեն.— Ալբաներենի ուսումնասիրության բնագավառում (նկարագրական և պատմա-համեմատական) նոր էտապ են նշանավորում Գ. Մեյերի աշխատությունները՝ «Ալբաներեն լեզվի համառոտ քերականությունը» (նկարագրական), «Ալբաներեն լեզվի ստուգաբանական բառարանը», «Ալբանական ուսումնասիրությունները»<sup>2</sup>, որոնք հնարավորություն են տալիս այդ լեզվի տրվյալները ավելի լայնորեն օգտագործելու հնդկարոպաբանության մեջ:

Բալթիկ-սլավոնական լեզուներ.— Բալթիկ-սլավոնական լեզուների և գերմանական լեզուների ու ֆիններենի առնչությունների հարցերին հատուկ աշխատություններ են նվիրում Ուլենբեկը և Տոմսենը<sup>3</sup>:

Բալթիկական լեզուներից հատուկ ուսումնասիրության առարկա են դառնում հին պրուսերենը և լիտվերենը: Բեռնեկերը կատարում է պրուսերենի բաղմակողմանի ուսումնասիրության փորձ<sup>4</sup>. Կուրշատը իր «Լիտվերեն լեզվի քերականության մասին»<sup>5</sup> մի քայլ առաջ է մղում այդ լեզվի ուսումնասիրությունը Շլախսերի համեմատու-

<sup>1</sup> А. Томсон, Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890. Л. Мсерянц, Этюды по армянской диалектологии, I II, С116, 1897—1911.

<sup>2</sup> G. Meyer, Kurzgefasste albanesische Grammatik, Leipzig, 1890. Etymologisches Wörterbuch der albanesischen Sprache, Leipzig, 1891. Albanesische Studien, III, Lautlehre der indogermanischen Bestandteile des Albanesischen, Wien, 1892, SWAW, 125.

<sup>3</sup> C. C. Uhlenbeck, Die lexicalische Urverwandschaft des Baltoslavischen und Germanischen, Leyden, 1890. V. Thomsen, Beröringer mellem de finske og de baltiske (litauisk-lettiske) sprog, København, 1890.

<sup>4</sup> E. Berneker, Die preussische Sprache, Texte, Grammatik, etymologisches Wörterbuch, Strassburg, 1896.

<sup>5</sup> F. Kurschat, Grammatik der litauischen Sprache, Halle, 1876.

թյամբ, որը չէր նկատել լիտվերենի շեշտի երաժշտական բնույթը: Լիտվերենին Կուրշատից հետո մի աշխատություն է նվիրում Վիդեմանը<sup>1</sup>, որն այն ուսումնասիրում է համեմատական հայեցողե-տով: Լիտվերենի ուսումնասիրության բնագավառում կարևոր դեր խաղացին նաև Ֆորտունատովի և Լեսկինի՝ լիտվական շեշտին նվիրված հոդվածները:

Սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում ժամանակին առանձնահատուկ դեր են խաղում արդեն հիշատակված Ֆ. Միկլոշիչի աշխատությունները, որոնք մեծ մասամբ ընկնում են այս ենթաշրջանում: Սլավոնական լեզուների շարահյուսության կարևոր հարցերից մեկին՝ բառերի շարադասու-թյանն է նվիրված Բեռնեկերի աշխատությունը<sup>2</sup>: Մեյեն հատուկ աշխատություն է նվիրում հին սլավոնական հայցական-սեռականի գործածությանը<sup>3</sup>: 1894 թ. սկսած՝ լույս է տեսնում Գերաուերի «Չեխերեն լեզվի պատմական քերականությունը»<sup>4</sup>: Ռուսական իրականության մեջ երևան եկած կարևոր աշխատությունները, հատկապես Սրեզնեկու աշխատությունը, արդեն հիշատակվել են: Լուժիկերենը քննության նյութ է դառնում Մուկեի կողմից<sup>5</sup>: Լես-կինը հրատարակում է հին եկեղնյա սլավոներենի իր քերականու-թյունը, որ թարգմանվում է ռուսերեն և լրացումներով հրատարակ-վում<sup>6</sup>:

Թրակերեն.— Թրակերենի ուսումնասիրության բնագավառում նոր էտապ է բաց անում Տոմաշեկը, որն իր «Հին թրակացիները» աշխատության մեջ<sup>7</sup> ի մի է բերում այդ լեզվի մնայորդները և փորձում մեկնաբանել: Հետագա ուսումնասիրությունները, սա-

<sup>1</sup> O. Wiedemann, Handbuch der litauischen Sprache, Stras-  
sburg, 1897.

<sup>2</sup> E. Berneker, Wortfolge in den slavischen Sprachen, Berlin,  
1900.

<sup>3</sup> A. Meillet, Recherches sur l'emploi de l'accusatif-génitif en  
vieux slave, Paris, 1897.

<sup>4</sup> I. Gebauer, Historická mluvnická jazyká českého, I—IV, Praha,  
1894—1924 (Տրակցիեկի հավելումներով):

<sup>5</sup> E. Mucke, Historische und vergleichende Laut- und Formen-  
lehre der niedersorbischen Sprache, Leipzig, 1891.

<sup>6</sup> A. Leskien, Handbuch der altbulgarischen Sprache, II հր-  
1886. ռուս. թարգմ. А. Лескини, Грамматика старославянского языка,  
1890:

<sup>7</sup> W. Tomaszek, Die alten Thraker, SWAW. 1893—1894.

կայն, բացահայտեցին զգալի թվով վրիպումներ, և աշխատությունն այժմ արժեքավոր է միայն փաստական նյութով:

**Հունարեն.**—Հունարենի նկարագրական և պատմա-համեմատական քերականության բնագավառում հանդես են գալիս մի շարք կարևոր աշխատություններ՝ Մեյերի «Հունարենի քերականությունը» (հնչյունաբանություն և ձևաբանություն) և Կյուների «Հունարեն լեզվի մանրամասն քերականության» երրորդ հրատարակությունը, Կ. Բրուզմանի «Հունարենի քերականությունը», Գիտրիխի «Հետադոտություններ հունարեն լեզվի պատմության շուրջը» գործը<sup>1</sup>:

Նրան են գալիս մի շարք աշխատություններ՝ նվիրված հունական բարբառներին՝ Բեխտելի և Կոլլիցի «Հունական բարբառային արձանագրությունների հավաքածուն», Հոֆմանի «Հունական բարբառները իրենց պատմական փոխհարաբերությամբ», Բուլաչի «Գոթիական բարբառները»<sup>2</sup>:

Հունարենի և հույների նախապատմության հարցերը արծարծված են Կրեյչելերի «Հունարեն լեզվի պատմության ներածության» մեջ<sup>3</sup>:

**Իտալական լեզուներ.**—Իտալական հին լեզուներից բնականաբար ամենից ավելի լայն ուշադրություն է գրավում լատիներենը, որին նվիրվում են նկարագրական և պատմական բնութի մի շարք աշխատություններ. դրանցից հիշատակելի են Լինդսելի «Լատիներեն լեզուն», Շտուլցի «Լատիներեն լեզվի պատմական քերականությունը», Շտուլցի և Շմալցի «Լատիներենի քերականությունը», Փոբի «Ներկան և նրա ածանցյալները լատինական խոնարհման մեջ» գիրքը, այլև 1900 թ. սկսած՝ «Լատիներեն լեզվի գանձա-

<sup>1</sup> G. Meyer, Griechische Grammatik, III հր., Leipzig, 1893. Kühner, Ausführliche Grammatik der griechischen Sprache, I (1, 2), II (1, 2), Hannover, 1890—1904. K. Brugmann, Griechische Grammatik, Leipzig, 1885, IV հր., München, 1913. K. Dietrich, Untersuchungen zur Geschichte der griechischen Sprache, Leipzig, 1898.

<sup>2</sup> F. Bechtel und H. Collitz, Sammlung der griechischen Dialektinschriften, Göttingen, 1884—1915. O. Hoffmann, Die griechischen Dialekte in ihrem historischen Zusammenhange, I—III, Göttingen, 1891—1898. E. Boisacq, Les dialectes doriens, Paris, 1891.

<sup>3</sup> P. Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, Göttingen, 1896.

րան» ընդարձակ բառարանը՝ ստուգաբանական նշումներով հանդերձ<sup>1</sup>։

Օսկ-ումբրյան լեզուների բնագավառում հանդես են գալիս երկու կարևոր աշխատություն՝ Փոն Պլանտայի «Օսկ-ումբրյան բարբառների քերականությունը» և Քոնվեյի «Իտալական բարբառները»<sup>2</sup>։

Ռոմանական լեզուների համեմատական քերականության ուսումնասիրության բնագավառում Դիցից հետո նոր էտապ էին նշանավորում Մեյեր-կյուբկեի աշխատությունները, հատկապես նրա «Ռոմանական լեզուների քերականությունը»<sup>3</sup>, որին հետևում են մի շարք այլ աշխատություններ (ստուգաբանական բառարանը լույս է տեսնում XX դարում)։ Նշելի է և «Ռոմանական լեզվաբանության ուրվագիծը»<sup>4</sup>։

Ժողովրդական լատիներենի ուսումնասիրության բնագավառում հանդես եկած աշխատություններից նշելի են Բուզինսկու «Լատիներեն լեզվի տարածումը Իտալիայում և հոմեական պետության պրովինցիաներում», Յունգի «Հոմեայեցիները և ոմանները Դանուբի երկրներում» աշխատությունները, Մուլի «Ժողովրդական լատիներենի ժամանակագրության ներածությունը», Զիտլի «Լատիներեն լեզվի տարածական տարբերությունները» և այլն<sup>5</sup>։

Սուբստրատի հարցը արծարծված է Ասկոլիի՝ արդեն հիշա-

---

<sup>1</sup> W. M. Lindsay, The Latin Language, Oxford, 1894. F. Stolz, Historische Grammatik der lateinischen Sprache. Leipzig, 1894. F. Stolz und J. H. Schmalz, Lateinische Grammatik, IV հր., 1910, V հր., 1928. L. Job, Le présent et ses dérivés dans la conjugaison latine, Paris, 1893. Thesaurus linguae latinae, Leipzig, 1900 և հջ․

<sup>2</sup> R. von Planta, Grammatik der oskisch-umbrischen Dialekte, I—II, Strassburg, 1892—1897. R. S. Conway, The Italic Dialects, Cambridge, 1897.

<sup>3</sup> W. Meyer-Lübke, Grammatik der romanischen Sprachen, I—IV, Leipzig, 1890—1902.

<sup>4</sup> Grundriss der romanischen Philologie, herausgegeben von G. Gröber, 1888 և հջ., II հր. 1904—1906.

<sup>5</sup> A. Budinszky, Die Ausbreitung der lateinischen Sprache, über Italien und die Provinzen des römischen Reiches, Berlin, 1881. J. Jung, Römer und Romanen in Donauländer, Innsbruck, 1891. G. Mohl, Introduction à la chronologie du latin vulgaire, Paris, 1899. K. Sittl, Die lokalen Verschiedenheiten der lateinischen Sprache, 1882.

տակված աշխատության մեջ և Գրյոբերի «Ռոմանական բառերի ժողովրդա-լատինական սուբստրատը» գործում<sup>1</sup>։

Առանձին ռոմանական լեզուների պատմա-համեմատական և նկարագրական ուսումնասիրության բնագավառում հիշատակելի են Բրյունոյի և Նիրոպի՝ ֆրանսերենի պատմության բազմահատոր շարադրանքների առաջին հատորները, Կանդրեա-Հեշտի «Ռոմի-նական քերականության լիակատար դասընթացը», Վայգանդի «Առոմունները», Գարտների «Ռետո-ռոմաներենի քերականու-թյունը»<sup>2</sup>։

Կելտական լեզուներ.— Կելտական լեզուների ուսումնասիրու-թյան բնագավառում հանդես եկած աշխատություններից նշելի են Հոլդերի «Հին-Կելտական լեզվագանձը» (I հատորը), Անրիի «Նոր բրետոներենի ամենագործածական բառերի ստուգաբանական բա-ռարանը», էռնուի «Միջին բրետոներենի ստուգաբանական բառ-րանը», Ֆինկի «Արանյան բարբառը», այլև Շտոքսի և Բեցցենբեր-գերի «Կելտական միասնության բառագանձը. նախակելտական լեզվագանձ», որը կազմում է Ֆինկի «Համեմատական բառարան»-ի XV հրատարակության II մասը, Մակբեյնի «Գաելական լեզվի ստուգաբանական բառարանը»<sup>3</sup>։

Գերմանական լեզուներ.— Գերմանական լեզուների ուսումնա-սիրության բնագավառում կատարված տեղաշարժերի մասին մեծ քարդեն խոսել ենք։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշատակել այս բնագավառի գլխավոր աշխատությունները՝ «Գերմանական ֆիլոլոգիայի ներածությունը», Շտրայտբերգի «Նախադերմաներենի քերականությունը», Դիտերի «Հին գերմանական բարբառների

<sup>1</sup> G. Gröber, *Vulgärlateinische Substrate romanischer Wörter*, ALL, I, 1888, էջ 204—254.

<sup>2</sup> F. Brunot, *Histoire de la langue française*, I—XII, Paris, 1899—1946. K. Nypop, *Grammaire historique de la langue française*, I—VI, 1890—1930. J. A. Candrea-Hecht, *Cours complet de grammaire roumaine*, Paris, 1900. G. Weigand, *Aromunen*, I—II, Leipzig, 1894—1895. T. Gartner, *Rätoromanische Grammatik*, Heilbronn, 1883.

<sup>3</sup> A. Holder, *Alt-celtischer Sprachschatz*, I—III, Leipzig, 1896—1913. V. Henry, *Lexique étymologique des termes les plus usuels du breton moderne*, Rennes, 1900. E. Ernou *Dictionnaire étymologique du breton moyen*, „Le Mystère de Saint Barbe“-ի հրատարակության մեջ, Nantes, 1885. F. N. Finck, *Die Araner Mundart*, I—II, Marburg, 1889. W. Stockes und A. Bezzenberger, *Wortschatz der keltischen Einheit, Urkeltischer Sprachschatz*, Göttingen, 1894. Macbain, *An Etymological Glossary of the Gaelic Language*, Inverness, 1896.

հնչյունաբանութիւնն ու ձևաբանութիւնը», նորեկնի «նախագերմանական հնչյունաբանութեան ուրվագիծը» և «Հին իսլանդերենի ու հին նորվեգերենի քերականութիւնը», «Հին շվեդերենի քերականութիւնը», Ուլենբեկի «Գոթերենի համառոտ ստուգաբանական բառարանը», Վոնդեի «Վանդալների լեզվի մասին» գործը, Բրուկնեբի «Լանգոթարդների լեզուն», Կլուգեի «Գերմաներեն լեզվի ստուգաբանական բառարանը», «Դարաշրջանի բառարանը» (անգլերենի բառարան՝ ստուգաբանական տեղեկութիւններով), Կլուգեի և Լուցի «Անգլիական ստուգաբանութիւնը», Ռայտի «Անգլիական բարբառների բառարանը»<sup>1</sup>։

ՈՉ-ՆԵՌԵՎՈՒՊԹԵՍԵՆ ԼԵՁՃԻՆԵՐԻ ԻՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեմա-ֆամական լեզուներ.—Այս ենթաշրջանում սեմա-քամական ցեղակցութեան հարցը լայն լուսաբանութիւն է ստանում Կ. Աբելի և Հոմմելի աշխատութիւններում, ընդ որում Կ. Աբելը ուշագրութիւն է դարձնում նաև սեմա-քամական և հնդկերոպական ընդհանրութիւնների վրա<sup>2</sup>։ Հատուկ ուշագրութիւն են գրաւում և վեճերի տեղիք տալիս սեմական նախահայրենիքի և լեզվական հնէաբանութեան հարցերը։ Սեմական լեզուների պատմութեան ու ցեղակցական փոխհարաբերութեան հարցերը լայն լուսաբանու-

<sup>1</sup> Grundriss der germanischen Philologie, 1889 և հջ., II հր. Strassburg, 1897. W. Streitberg, Urgermanische Grammatik, Heidelberg, 1896. F. Dieter, Laut- und Formenlehre der altgermanischen Dialekte, Leipzig, 1900. A. Noreen, Abriss der urgermanischen Lautlehre, 1894. Altisländische und altnorwegische Grammatik, Halle, 1884, II հր., 1892. Altschwedische Grammatik, 1894. C. C. Uhlenbeck, Kurzgefasstes etymologisches Wörterbuch der gotischen Sprache, II հր., Amsterdam, 1900. F. Wrede, Über die Sprache der Wandalen, 1886. W. Bruckner, Die Sprache der Langobarden, 1895. F. Kluge, Etymologisches Wörterbuch der deutschen Sprache, 1881. The Century Dictionary, I—VIII, New York, 1895. F. Kluge und F. Lutz, English Etymology, Strassburg, 1898. I. Wright, English Dialect Dictionary, I—VI, Oxford, 1898—1905.

<sup>2</sup> K. Abel, Einleitung in ein ägyptisch-semitisch-indoeuropäisches Wurzelwörterbuch, Leipzig, 1887. Über Wechselbeziehungen der ägyptischen, indoeuropäischen und semitischen Etymologie, Leipzig, 1889. Ägyptisch-indoeuropäische Sprachwissenschaft, Leipzig, 1889. Hommel, Über den Grad der Verwandtschaft des Ägyptischen mit dem Semitischen, Leipzig, 1892.

թյուն են ստանում նյութների աշխատություններում, հատկապես նրա «Սեմական լեզուները» աշխատության մեջ<sup>1</sup>: Սեմական լեզուների համեմատական քերականության բնագավառում կատարված աշխատանքի ամփոփումն էին ներկայացնում Ուիլյամ Ռայտի և Հ. Յիմեննի աշխատությունները<sup>2</sup>: Քամական լեզուներին նվիրված աշխատություններից նշելի է Ռ. Լևասիոսի «Նուբիերենի քերականությունը» (1880), որտեղ կատարված է աֆրիկյան լեզուների դասակարգման փորձ:

Ընդհանուր առմամբ նշելի է, որ այս ենթաշրջանում հնչյունական օրենքների գաղափարը ներթափանցում է նաև ոչ-հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեջ<sup>3</sup>: հիմք տալով այդ լեզուների պատմա-համեմատական ավելի խորացված հետազոտության համար:

«Ուրալա-ալթայան» լեզուներ.— Ֆիննա-ուգրական («ուրալյան») լեզուների ուսումնասիրությունը այս շրջանում տալիս է մի շարք նշանավոր անուններ: Վ. Տոմսենը ֆիններենում գոթերենից և բալթիական լեզուներից կատարված փոխառություններին նվիրված իր ուսումնասիրություններով նոր էջ է բաց անում<sup>4</sup>: Ֆիննա-ուգրական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում կարևոր էին Բուդենցի համեմատական-ստուգաբանական բառարանը<sup>4</sup>, Կ. Յ. Ուլֆալվիի<sup>5</sup>, Օ. Դոնների<sup>6</sup>, է. Ն. Սետելիի, Հ. Պասսոնենի և ուրիշների աշխատությունները: Սետելին, լինելով Կաստրենի աշակերտը, նոր մակարդակի է հասցնում ֆիննա-ուգրական և սամոյեդական լեզուների ցեղակցության հարցի ուսումնասիրությունը: Հանդես են գալիս ֆիննա-ուգրական և հնդկ-

<sup>1</sup> Th. Nöldeke, Die semitischen Sprachen, Leipzig, 1887.

<sup>2</sup> W. Wright, Lectures on the Comparative Grammar of the Semitic Languages, Cambridge, 1890. H. Zimmern, Vergleichende Grammatik der semitischen Sprachen, Berlin, 1898.

<sup>3</sup> V. Tomsen, Die gotische sprogklassens indflydelse på den finske, København, 1869. Beröringer mellem de finske og de baltiske (litauisk-lettiske) sprog, København, 1890.

<sup>4</sup> Bundenz, Magyarugor összehasonlító szotár, Budapest, 1873—1881.

<sup>5</sup> K. J. Ujfalvy, Étude comparée des langues ougrofinoises, Paris, 1875.

<sup>6</sup> O. Donner, Die gegenseitige Grammatik der finnisch-ugrischen Sprachen, Helsingfors, 1875. Vergleichendes Wörterbuch der finnisch-ugrischen Sprachen, I—III, Helsingfors, 1874—1884 (չավարտված):



ըոպական լեզուների ցեղակցության հարցի դրման փորձեր: 1886 թ. սկսում է լույս տեսնել ֆիննա-ուգրական լեզուների ուսումնասիրությանը նվիրված «Journal de la Société finno-ougrienne» հանդեսը. 1890 թ. սկսվում է մի նոր՝ «Mémoire de la Société finno-ougrienne» հանդեսի հրատարակությունը:

Թյուրք-թաթարական, տունգուսական և մանջուրական լեզուների ուսումնասիրության բնագավառում նշելի են հատկապես Լ. Վամբերիի, Է. Բյուզեի, Վ. Բանգի, Լ. Վինկլերի, Յ. Գրունցելի, Վ. Ռադլովի անունները. սրանք զբաղվում են այդ լեզուների դասակարգման ու փոխհարաբերության, համեմատական քերականության, բառա-ստուգաբանական զուգահեռների և այլ հարցերով<sup>1</sup>: Թյուրքագիտության զարգացման համար առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ հին թյուրքական տեքստերի վերծանումը (Վ. Տոմսեն, Վ. Ռադլով)<sup>2</sup>:

Չին-տիբեթական և «հարավ-ասիական» լեզուներ.— Սկզբնապես Չինաստանում, Տիբեթում և Հնդկաչինում գտնվող լեզուների համար գործածվում էին պարզապես աշխարհագրական բնույթի տերմիններ. այսպես, հնդկաչինական լեզուներ ասելով հասկանում էին Հնդկաչինի, երբեմն էլ Չինաստանի, Տիբեթի և հիմալայան լեզուները. այդ լայն առումով գործածությունը հանդիպում է և սովյալ շրջանում<sup>3</sup>:

Քաստր իր «Արևելյան Հնդկաստանի ժամանակակից լեզուների ուրվագիծ» աշխատության մեջ<sup>4</sup> ընդարձակ տարածություն բռնող

<sup>1</sup> H. Va'mbéry, Etymologisches Wörterbuch der türko-tatarischen Sprachen, Leipzig, 1878. H. Winkler, Ural-altaische Völker und Sprachen, 1884. E. Büge, Über die Stellung des Tungusischen zum Mongolisch-Türkischen, Halle, 1887. -W. Band, Uralaltaische Forschungen, Leipzig, 1890. J. Grundzel, Entwurf einer vergleichenden Grammatik der altaischen Sprachen nebst einem vergleichenden Wörterbuch, Leipzig, 1895. W. W. Radloff, Phonetik der nördlichen Türkssprachen, Leipzig, 1883. Versuch eines Wörterbuches der Turk-Lialekte, SPb, 1893—1911.

<sup>2</sup> V. Thomsen, Dechiffrement des inscriptions de l'Orkhon et de l'Yénisséi, 1883. Inscriptions de l'Orkhon déchiffrés, MSFOu, 1896. W. Radloff, Die alttürkischen Inschriften der Mongolei, SPb, 1895—1899.

<sup>3</sup> Հ.մ.տ. G. von der Gabelentz, Die Sprachwissenschaft, Leipzig, 1891:

<sup>4</sup> Cust, A Sketch of the Modern Languages of the East Indies, London, 1878.

այս լեզուները բաժանում է 4 ընտանիքի՝ 1) տիբեթա-բիրմանական: ընտանիք, որի մեջ առանձնացնում է 8 խումբ՝ նեպալյան, սիքքիմյան, ասսամյան, մանիպուրչիտագոնգյան, բիրմանական, անդրհիմալայան (ներառյալ և տիբեթերենը), շինական և կղզիական (սիլոնգ, անդամաներեն, նիկոբարերեն), 2) քասյան ընտանիք (Ասսամում, 5 բարբառով), 3) թայական ընտանիք (սիամերեն, լաոսերեն, շաներեն, թայ և այլն), 4) մոն-աննամյան ընտանիք (մոն, կամբոջերեն, աննամերեն և այլն):

Այս լեզուների համեմատական ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից նշելի են նաև Ֆորբսի, Կունի և Կոնրադիի գործերը<sup>1</sup>:

1889 թ. էռնստ Կունը ցույց է տալիս Ասիայի հարավում գտնվող մի շարք լեզուների (մոն-քմեր, պրամալակկյան, մոնդա, կասսինոկոբորյան) ցեղակցական կապը. այդ լեզուների համար ընդհանրանում է «հարավ-ասիական» (ավստրոասիական) անվանումը:

Այլ լեզուներ.— Այս շրջանում քայլեր են արվում նաև այլ լեզուների ու լեզվաընտանիքների ուսումնասիրության ուղղությամբ: Փորտմանը ծավալուն աշխատություն է նվիրում անդամայան լեզուներին<sup>2</sup>: Քոդրինգտոնը զգալի շափով առաջ է տանում մելանեզյան լեզուների ուսումնասիրության գործը<sup>3</sup>: Ռ. Ֆոն էրկերտը աշխատություն է նվիրում կովկասյան լեզուներին<sup>4</sup>. նա տարբերում է հյուսիսային և հարավային կովկասյան լեզուներ, որոնք նույնպես ենթարթաժանումների է ենթարկում:

Առաջ է գնում նաև ավստրալիական, աֆրիկյան և ամերիկյան լեզուների ուսումնասիրության գործը: Ավստրալյան լեզուներին նվիրված աշխատություններից հիշատակելի է Բ. Սպենսերի և Ֆ.

---

C. J. F. S. Forbes, Comparative Grammar of the Languages of Further India, London, 1882. E. Kuhn, Über Herkunft und Sprache der transgangetischen Völker, Berlin, 1883. A. Conrady, Eine indochinesische Causativ-Denominativ-Bildung und ihr Zusammenhang mit den Tonakzenten, Leipzig, 1896.

<sup>2</sup> M. V. Portman, Notes on the Languages of the South Andaman Groups and Tribes, Calcutta, 1898.

<sup>3</sup> R. H. Condrington, The Melanesian Languages, Oxford 1885.

<sup>4</sup> R. von Erckert, Die Sprachen des kaukasischen Stammes Wien, 1895.

Ձ. Գիլլենի գործը<sup>1</sup> նվիրված կենտրոնական մասի լեզուներին. սրան հետևում են և նույն հեղինակների այլ աշխատությունները:

Հաստը հատուկ աշխատություն է նվիրում արևելյան Աֆրիկայի լեզուների դասակարգման ու բնութագրման հարցերին<sup>2</sup>: Տոտենըը գրում է բանտու լեզուների համեմատական քերականությանը (1891):

Ամերիկյան բնիկների լեզուներին նվիրված աշխատությունն է: րից հիշատակելի են Բրինտոնի, Փոուելլի, Ադամի և ուրիշների գրքերը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> B. Spencer and F. J. Gillen, Native Tribes of Central Australia, London, 1899.

<sup>2</sup> J. T. Last, Polyglotta africana orientalis, London, 1885.

<sup>3</sup> D. G. Brinton, The American Race: A Linguistic Survey, Classification and Ethnographic Description of the Native Tribes of North and South America, New York, 1891. Studies in South American Languages, Philadelphia, 1892. J. W. Powell, American Linguistic Families North of Mexico, Washington, 1891. L. Adam, Matériaux pour servir à l'établissement d'une grammaire des dialectes de la famille tupi, Paris, 1896 (նույն հեղինակը 1891 և 1893 թթ. համատիպ համեմատական ուսումնասիրություններ է նվիրել գուայակուրո և կարիբ կոչված լեզգարնտանիքներին):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԻ ԵՆԹԱՇՐՁԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀԱՅԵՐԵՆ

- Աղ ա յ ա ն է., Հայ լեզվաբանության պատմություն, 1, Երևան, 1958  
էջ 49—50, 231—244, 324—408,  
Շ ա ու մ Վ Ֆ Գ. Ա., Ուսումնասիրությունը հայոց լեզուի և մատենագրու-  
թեան յԱրևմուտս (Գ. Չարրեանայլանի թարգմանությունը և լրա-  
ցումներով), Վենետիկ, 1896, էջ 306—325,  
Մ ա ն տ ա ձ ե Հ Ր., Հայոց լեզվի ուսումնասիրության հնդկերոպական փուլի  
մի քանի հարցերի շուրջը, «Լեզվաբանական և հայագիտական հետազո-  
տություններ», Երևան, 1951, էջ 83—93:

### 2. ՈՒՒՍԵՐԵՆ

- А ба ев В. И., О фонетическом законе, ЯМ, 1, 1933  
Богородицкий В. А., Казанская лингвистическая школа (1875—  
1919). «Сборник статей по языковедению», М., 1939, стр. 269—294.  
Будагов Р. А., Г Шухардт-ի Избранные статьи по языкознанию\*  
գրքի առաջարանը, М., 1950, стр. 5—22.  
Виноградов В. В., Русская наука о русском литературном языке.  
УЗ МГУ, 106, 1946, стр. 94—104.  
Жирмунский В. М., Немецкая диалектология, М., 1956, стр. 45-  
63, 69—97.  
Жирмунский В. М., О некоторых проблемах лингвистической гео-  
графии, ВЯ, 4, 1954, стр. 3—25.  
Земская Е. А., «Казанская лингвистическая школа» проф. И. А.  
Бодуэна де Куртенэ, РЯШ, 1951, № 6, стр. 63—69.  
Зиндер Л. Р., Общая фонетика, докторская диссертация, 1943.  
Кацинельсон С. Д., Теория сонантов Ф. Ф. Фортунатова и ее зна-  
чение в свете современных данных, 1954, № 6, стр. 47—61.  
Немецкая диалектология, сборник статей, редакция, предисловие и при-  
мечания В. М. Жирмунского, М., 1955.  
Памяти В. Томсена, к годовщине со дня смерти, Л., 1928  
Петерсон М. Н., Фортунатов и московская лингвистическая школа,  
«Роль русской науки в развитии мировой науки и культуры», 2,  
1947, стр. 25—35.  
Поржезинский В., Очерк сравнительной фонетики древнеиндий-  
ского, греческого, латинского и старославянского языков, М.,  
1912 («Из истории сравнительной фонетики» ).  
Серебрянников Б. А., Теория волн Шмидта и явления языковой  
аттракции, ВЯ 1957, № 4, стр. 3—15.

- Сергиевский М. В., Введение в романское языкознание, М., 1952, стр. 252—253, 258—260.
- Черепанов М. Н., Н. К. Крушевский как представитель казанской лингвистической школы, автореф. канд. дисс., Казань, 1952.
- Шпехт Ф., „Индоевропейское“ языкознание от младограмматиков до первой мировой войны, „Общее и индоевропейское языкознание“, Сборник, М., 1956.
- Штибер З., Теория фонем И. А. Бодуэна де Куртенэ в современном языкознании, ВЯ, 1955, № 4, стр. 89—93.
- Ярцева В. Н., Теория субстрага в истории языкознания, ДСИЯ, XI, М., 1956, стр. 8—32.

### 3. OSUR ЦԵՂՈՒՆԵՐՈՎ

- Ascoli G. J., Dei neogrammatici, AGI, 10, 1886.
- Bechtel Fr., Die Hauptprobleme der indogermanischen Lautlehre seit Schleicher, Göttingen, 1892.
- Berg A., Anschauungen Ludwig Noiré's über Ursprung und Wesen von Sprache und Vernunft, Darmstadt, 1918.
- Bertold L., Vorstosse gegen die Lautgesetze und ihre Gründe, „Von Wenker zu Wrede“, Marburg, 1933, էջ 55 և 52.
- Brugmann K., Nachruf auf Osthoff, IF, 24, 1909.
- Frings Th., E. Sievers, SSAW, 1933.
- Fumi F. Ch., La glottologia e i neogrammatici, Napoli, 1881.
- Hermann E., B. Delbrück, Jena, 1923.
- Karst J., Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930.
- Kraus C. V., H. Paul, DBJ, 3, 1927.
- Kraus C. V., E. Sievers, SBAW, 1932.
- Lepitre A., Le néogrammairiens d'Allemagne, „Compte rendu du Congrès scientifique international des catholiques tenu à Paris 1—6 avril 1891 (section VI philologie)“, Paris, 1891.
- Luick K., E. Sievers, SWAW, 1932.
- Richter E., H. Schuchardt, NOB, 6, 1929.
- Silloge linguistica dedicata alla memoria di G. I. Ascoli, Turino, 1929.
- Specht F., Die „indogermanische“ Sprachwissenschaft von den Junggrammatikern bis zum ersten Weltkriege, „Lexis“, I, 1948.
- Strom J., Englische Philologie, 1892.
- Streitberg W., A. Leskien, DBJ, I, 1925.
- Streitberg W., K. Brugmann, IJ, 7, 1921.
- Sutterlin L., Das Wesen der Sprachlichen Gebilde. Kritische Bemerkungen zu W. Wundts „Sprachpsychologie“, Heidelberg, 1902.
- Wechssler E., Gibt es Lautgesetze? Halle, 1900.
- Ziemmer H., Junggrammatische Streifzüge im Gebiete der Syntax, 2. Aufl., Colberg, 1883.
- Zimmer H., J. Schmidt, BJDN, 6, 1904.

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ<sup>1</sup>

### 1. ՀԱՅԵՐԵՆ

ԱՀ—Ազգադրական հանդես:

ՀԱ—Հանդես ամսօրյա:

ՀԳԱՏ—ՀՍՍՌ Գիտությունների տեղեկամատյանի «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների սերիա):

ՀՊՄԻԱԺ—Հայկական Պետական մանկավարժական ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու»:

ՊՀԱԺ—Երևանի Պետական համալսարանի «Աշխատությունների ժողովածու» («Գիտական աշխատություններ»):

### 2. ՌՈՒՍԵՐԵՆ

ВЯ—Вопросы языкознания.

ДСИЯ—Доклады и сообщения Института языкознания АН СССР

ЖМНП—Журнал Министерства народного просвещения.

ИАН—Известия Академии наук.

ИАНА—Известия Академии наук Арм. ССР (серия общественных наук).

ИАН ОЛЯ—Известия Академии наук СССР, отделение литературы и языка.

Известия ГАИМК—Известия Государственной Академии истории материальной культуры.

КСИС—Краткие сообщения Института славяноведения.

НТЕГУ—Научные труды Ереванского Государственного университета.

РФВ—Русский филологический вестник.

РЯШ—Русский язык в школе.

ТИЯ—Труды Института языкознания АН СССР.

ТОЛРС—Труды Общества любителей русской словесности.

УЗ—Ученые записки.

УЗЛГУ—Ученые записки Ленинградского Государственного университета.

УЗМГУ—Ученые записки Московского Государственного университета.

ЯМ—Язык и мышление.

<sup>1</sup> Կարճ անվանումները (Language, Word, Lingua և այլն) չեն համառոտագրված:

- AA—Art and Archaeology.  
 AAEEGF—Annuaire de l'Association pour l'encouragement des études grecques en France.  
 AB—Altfranzösische Bibliographie.  
 ABAW—Abhandlungen der Bayerischen Akademie der Wissenschaften.  
 AFN—Archivum Franciscanum historicum.  
 AGI—Archivio glottologico italiano.  
 AGP—Archiv für die gesellschaftliche Psychologie.  
 AJ—Acta jutlandica.  
 AISA—Anzeigen für indogermanische Sprach- und Altertumskunde.  
 AJPh—American Journal of Philology.  
 AJSL—American Journal of Semitic Languages and Literature.  
 AKGW—Abhandlungen der Kaiserlichen Geseleschaft der Wissenschaften zu Göttingen.  
 AKSGW—*տհ'ս* APhKKGW.  
 AL—Acta linguistica.  
 AL, ALZ—Allgemeine Literaturzeitung.  
 ALASH—Acta linguistica Academiae scientiarum hungaricae.  
 ALLG—Archiv für latinsche Lexikographie und Grammatik.  
 ARAW—Abhandlungen der Preussischen Akademie der Wissenschaften.  
 APhKKGW—Abhandlungen der philologisch-historischen Klasse der Königlichen Sächsischen Gesellschaft der Wissenschaften.  
 APHS—Acta philologica succana.  
 APHS, APhSc—Acta philologica scandinavica.  
 AR—Asiatic Researches.  
 APh—Archiv für slavische Philologie.  
 BB—A. Bezzenbergers Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen (*տհ'ս նաև* BKIS).  
 BCLC—Bulletin du Cercle linguistique de Copenhague.  
 BDPh—Bl. für die deutsche Philosophie.  
 BGDSL—Beiträge zur Geschichte der deutschen Sprache und Literatur.  
 BJDN—Biogr. Jb. und dt. Nekrolog.  
 BKIS—Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen (*տհ'ս նաև* BB).  
 BPhKKGW—Berichte der philologisch-historischen Klasse der Königlichen Sächsischen Gesellschaft der Wissenschaften.  
 BSGW—*տհ'ս* BPhKKGW.  
 BSL—Bulletin de la Société linguistique de Paris.  
 BSPL—Bulletin de la Société Polonaise de linguistique.  
 BVS—Beiträge zur vergleichenden Sprachforschung (*տհ'ս նաև* KZ).  
 CFS—Cahiers Ferdinand de Saussure, publiés par la Société genevoise de linguistique.  
 CS—Curtius' Studien.  
 DBJ—Deutsches biographisches Jahrbuch.

- DVLG—Deutsche Vierteljahrschriften für Literaturwissenschaft und Geistesgeschichte.
- FUF—Finnisch-ugrische Forschungen.
- GJ—Goethe-Jahrbuch.
- HFL—Historisk-filologiske Meddelelser.
- IF—Indogermanische Forschungen.
- IFAnz—Anzeiger für indogermanische Sprach- und Altertumskunde (*mit dem Buch ALSA*).
- IJ—Indogermanisches Jahrbuch im Auftrag der Indogermanischen Gesellschaft.
- JP—Journal de psychologie.
- JPNP—Journal de psychologie normale et pathologie.
- JQR—Jewish Quarterly Review.
- KZ—Kuhn's Zeitschrift für vergleichende Sprachforschung (*mit dem Buch ZVS BVS*).
- LSS—Lexis, Studien zur Sprachphilosophie, Sprachgeschichte und Begriffsforschung.
- MAGW—Mitteilungen der Anthropologischen Gesellschaft in Wien.
- MGP—Monumenta Germaniae pedagogica.
- MKNAW—Middelingen der Koninklijke Nederlandse Akad. van Wetenschappen.
- MSL—Memoire de la Société de linguistique de Paris.
- MSRL—Memoires de la Société Roumaine de linguistique.
- NDF—Neue deutsche Forschungen.
- NJKA—Neue Jahrbücher für die klassische Altertumskunde.
- NJWB—Neue Jahrbücher für Wissenschaft und Bildung.
- NK—Nielvtudományi Kozlemények.
- NOB—Neue Österr. Biogr.
- NPLS—Nowy Przegląd Literatary i Sztuki.
- RA—Revue d'assyriologie.
- REA—Real-Encycläpadie der Altertumswissenschaft.
- REI—Revue des études indoeuropéennes.
- RF—Romanische Forschungen.
- RFIC—Rivista di filologia e d'istruzione classica.
- SBAW—Sitzungsberichte der Bayerischen Akademie der Wissenschaften, Philologisch-historische Klasse.
- SJ—Szkice jezykoznawcze.
- SL—Studia linguistica.
- SL—Studies in Linguistics.
- SWAW—Sitzungsberichte der Wiener Akademie der Wissenschaften.
- SSAW—Sitzungsberichte der Sächsischen Akademie der Wissenschaften.
- TCLC—Travaux du Cercle linguistique de Copenhague.
- TCLP—Travaux du Cercle linguistique de Prague.
- TIZAS—Techmers Internationale Zeitschrift für allgemeine Sprachwissenschaft.



TAPhA—Transactions of the American Philological Association.  
VWPh—Vierteljahrschrift für wissenschaftliche Philosophie.  
WF—Wissenschaftliche Forschungsberichte.  
WS—Wörter und Sachen.  
ZAA—Zeitschrift für Anglistik und Amerikanistik.  
ZCPa—Zeitschrift für celtische Philologia.  
ZDB—Zeitschrift für deutsche Bildung.  
ZDG—Zeitschrift für deutsche Geisteswissenschaften.  
ZDMG—Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft.  
ZGJD—Zeitschrift für die Geschichte der Juden in Deutschland.  
ZNSL—Zeitschrift zur neufranzösischen Sprache und Literatur.  
ZPhAS—Zeitschrift für Phonetik und allgemeine Sprachwissenschaft.  
ZPhPhK—Zeitschrift für Philologie und philologische Kritik.  
ZRPPh—Zeitschrift für romanische Philologie.  
ZVS—Zeitschrift für vergleichende Sprachforschung (*ank' u' zwk* KZ).  
ZVS, ZVPS—Zeitschrift für Völkerpsychologie und Sprachwissenschaft.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբաև Ի. Վ. 591:  
 Աբել Կ. 586:  
 Աբելյար 118, 119:  
 Աբերգե Ն. 372:  
 Աբովյան Խ. 279, 362, 371, 449:  
 Աբրահամ Իրն Էսրա 152:  
 Աբրահամյան Ա. Ա. 453:  
 Աբրահամյան Ռ. 371:  
 Աբրամչիկ Յ. 100:  
 Աբու Աբդուլլահ Մուհամմեդ Իրն Մալիք, տե՛ս Իրն Մալիք:  
 Աբու Ալի ալ-Հասան բ. Ահմեդ բ. Աբդուլ-Ջաֆար բ. Մուհամմեդ բ. Սուլեյման ալ-Ֆարիսի ալ-Ֆեռա-վի, տե՛ս Ֆարիսի:  
 Աբու Ամր Իսա բ. Ումար աւ-Սա-ղաֆի, տե՛ս Սաղաֆի:  
 Աբուրեքր Աբդուլ Քալիբ բ. Աբդու-ռահման ալ-Ջուրջանի, տե՛ս Ջուր-ջանի:  
 Աբու Ջաբրիա Յահյա բ. Ջիադ բ. Աբդուլլահ բ. Մենզուր ադ-Դալ-լամի ալ-Ֆեռա, տե՛ս Ֆեռա:  
 Աբուլ-Աբրաա Ահմադ Սալարա 140:  
 Աբուլ-Ասվադ 139:  
 Աբուլ-Կասեմ Մահմադ բ. Ումար բ. Մուհամմեդ բ. Ումար ալ-Խափա-րիզի ադ-Ջամահշարի, տե՛ս Ջա-մահշարի:  
 Աբուլ-Հասան ալ-Անֆաշ Միջնակ 140:  
 Աբուլ-Հասան Ալի բ. Համզա բ. Աբդուլլահ բ. Օսման բ. Ֆելուզ ալ-Կիսաի, տե՛ս ալ-Կիսաի:  
 Աբուլվալիդ Մերվան Իրն Գանաթ 152:  
 Աբուլ-Ուսման Բեքր ալ-Մազինի 140:  
 Աբու-Խալլան 153:  
 Աբու Մուհամմեդ Աբդուլլահ Իրն Գիշամ ալ-Անսարի ալ-Խանբալի. տե՛ս Իրն Գիշամ:  
 Աբու-Յահյա Իսա Մերվազի 132:  
 Աբու Ջաֆար Մուհամմեդ բ. ալ-Հասան բ. Աբու-Սառա առ-Ռուա-սի, տե՛ս առ-Ռուասի:  
 Աբու Ումար Սալիհ ալ-Ջամրի 140:  
 Ադամ XXXIX, XL, XLII, XLVII, 125, 134:  
 Ադամ Է. 590:  
 Ադելունգ Յ. Խ. 186, 187, 218, 219, 249, 250, 260, 274, 305, 326:  
 Ադելունգ Ֆր. 214:  
 Ադոնց Ն. 164:  
 Ադրիանոս Մ. 194:  
 Ալրեբտ Մեծ 120:  
 Ալբերտոս Է. 186:  
 Ալդրեստե Բ. 206:  
 Ալեքսանդր Մեծ 115, 177:  
 Ալեքսանդրով Ա. Ի. 525:  
 Ալի (Խալիֆ) 139:  
 Ալլեն Վ. Ս. 100:  
 Ալ-Կիսաի (Աբուլ-Հասան Ալի բ. Համզա բ. Աբդուլլահ բ. Օսման բ. Ֆելուզ ալ-Կիսաի) 141:  
 Ալկուին 113:  
 Ալ-Ղերավի 146:  
 Ալ-Ջուսուսի 146:  
 Ալքվիստ Ա. 451:

Ալ-Տեռա, տե՛ս Տեռա;  
 Ալ-Տիրուզաբադի 146, 147;  
 Ակիրա Ս. 199;  
 Ախելիս Թ. 453;  
 Աձուամարո Կ. 199;  
 Աղայան է. XV, XVI, 99, 164, 259,  
 371, 436, 437, 453, 591;  
 Աճառյան Հ. XV, XLIII, 371, 581;  
 Ամանն Հ. 100;  
 Ամարուսիմհա 156;  
 Ամբրոսիոս Թ. 196, 213;  
 Ամելունգ 476, 477;  
 Ամենեմիպետ 11;  
 Ամենիտտեպ IV, 10;  
 Ամման Յ. Կ. 176;  
 Ամոնիոս 43;  
 Ամպեր Ա. Մ. 236;  
 Այտրիյան Ա. 434—436, 449, 453,  
 581;  
 Անան Իշո 131;  
 Անարոսիմենես 58, 59, 64;  
 Անդերման 453;  
 Անելմ Քենարբերցի 119, 121;  
 Անտիպատրոս Տարոսացի 77, 79;  
 Անտոնի Ա. Կաթողիկոս 200;  
 Անրի վ. 101, 461, 585;  
 Ապոլլոդորոս 64;  
 Ապոլլոնիոս Դիակոլոս 80, 87—89,  
 92;  
 Ապտեկար վ. Բ. XXII;  
 Ապուլեոս Կրտսեր 56, 57;  
 Առնո Ա. 252, 260;  
 Առ-Ռուսսի (Աբու Զաֆար Մուհամ-  
 մեդ բ. ալ-Հասան բ. Աբու-Սա-  
 ա) 140—141;  
 Ասկիպիոսգես Միռյեացի 82, 86;  
 Ասկոլի Գ. Ի. XIII, 461, 464,  
 465, 466, 502—504, 513, 557,  
 568, 584, 592;  
 Ասոււպշամ 197;  
 Ավգուստինոս Ա. 50, 51, 55, 56;  
 Ավե Լ. 465;  
 Ավետիքյան Գ. 209;  
 Արենս Հ. IX 121, 246, 276, 328,  
 346, 362, 363, 409, 430, 505;  
 Արիստարքոս 45, 80, 81, 83, 129;

Արիստոն Քրոսացի 64, 81, 86;  
 Արիստոսել 41, 43, 59—61, 63, 64,  
 72—75, 77, 78, 88, 93, 104,  
 117—120, 125, 138, 143, 185,  
 251;  
 Արիստոֆան 58;  
 Արիստոֆանես 80, 81;  
 Արխիդամոս 44;  
 Արծրունի XLVIII;  
 Արքինոս 71;  
 Ացուտանն Հ. 199;  
 Աուրիվիլիոս 190;  
 Աուֆոնեստ Թ. 441, 447;  
 Բազեղով 255;  
 Բախեր վ. 164;  
 Բակմեյստեր Հ. Լ. Խ. 214;  
 Բաղամա XLV;  
 Բայմուտ Տ. 259;  
 Բանգ վ. 588;  
 Բաղ վ. 453;  
 Բատյեր Զ. 188;  
 Բարան Ս. 356;  
 Բարաննիկով Ա. Պ. 23, 99, 153  
 278;  
 Բարթոլոմե Խ. 579;  
 Բարիլուտարով Ս. Գ. 181;  
 Բարսեղ Կեսարոսի 51;  
 Բարսով Ա. Ա. 192;  
 Բարվիկ Կ. 100;  
 Բարտոն Ժ. (Ջ.) 116;  
 Բերյեր Յ. Յ. XII, 164;  
 Բելինսկի վ. Գ. 278, 280, 373;  
 Բելիշ 516;  
 Բելլ Ա. 438;  
 Բելյո Ժ. 188;  
 Բելվարկար Ս. XII, 100;  
 Բելստել Յ. 461, 574, 583;  
 Բելստեր Ֆր. 592;  
 Բեկանոս Յ. Գ. XLII;  
 Բեկկեր Կ. 255, 278, 280, 283—  
 287, 408;  
 Բեկոն Ռ. 121, 125;  
 Բեկոն Ֆր. 220, 221, 278;  
 Բեհազեյ Օ. 559, 560;  
 Բեմբո Պ. 183, 184, 205;

Բեն Աշեր 148:  
Բենլյո Լ. 360:  
Քենպենխոս է. 572:  
Բենֆեյ Ք. XVI, XVII, 100, 210,  
369, 441, 461:  
Բեռնաու Յ. 261:  
Բեռնեկեր Ե. 516, 581, 582:  
Բեռնհարդի Ա. 278—282, 295, 355,  
372:  
Բեստհոռն Ռ. 165:  
Բերգ Ա. 592:  
Բերինդա Պ. 182:  
Բեռնեկեր է. 516:  
Բերտոլդ Լ. 592:  
Բեցուլդ Կ. 99:  
Բեցցենբերգեր Ա. 461, 465, 576,  
577, 585:  
Բիբլիանդեր (Քուխման) Ք. 203:  
Բիկովսկի Ս. Ն. XXII:  
Բիմա Ջ. 578:  
Բլիկ Ու. 2. 452:  
Բլում Գ. 48:  
Բլումֆիլդ Լ. XIV, 272:  
Բլումֆիլդ Մ. 499:  
Բհարարհարի 25:  
Բլոյինգ Գ. 165:  
Բլոյինգ Օ. 441:  
Բլուգե է. 588:  
Բլուլեր Կ. XI:  
Բլուտուֆ 441, 442:  
Բլուֆլե 254:  
Բոգդան 516:  
Բոգուլեպ 179:  
Բոգորոցիսկի Վ. Ա. 230, 525, 537,  
540—542, 558, 591:  
Բոդուն-դե-Կուրտենե 2. Ա. 498,  
525—538, 540, 559, 592:  
Բոեցիոս 117:  
Բոցե Ն. 230, 255, 256:  
Բոկլ 2. Ք. 301:  
Բոկկալլո Ջ. 183:  
Բոնամի Պ. 207:  
Բոնե ժ. Պ. 176:  
Բոնետ Խ. Պ. 176:  
Բոսա Յո. XI, XIII, XVI, XXV,  
139, 195, 209, 270, 278, 281,

288—301, 303, 304, 308, 311,  
312, 314, 318, 320, 321, 350,  
353, 356, 357, 362, 364, 367, 373,  
375, 379, 383, 385, 386, 393,  
394, 397—399, 441, 444, 445,  
448, 474, 476, 477, 572, 575:  
Բոսյուե ժ. Բ. 227:  
Բորստ Ա. 100:  
Բրադկե Պ. 466:  
Բրաշ XLIII:  
Բրավման Մ. 165:  
Բրաուեր Յ. 372:  
Բրաունե Վ. 460, 461, 570:  
Բրաուներ 2. 261:  
Բրեալ Մ. 290, 404, 461, 562, 563:  
Բրեդսդորֆ Յա. 353, 355:  
Բրեմեր Օ. 567:  
Բրենդլե 568:  
Բրինտոն Դ. 590:  
Բրյուկե է. 438, 464:  
Բուունո Յ. 585:  
Բրոկ Օ. 516:  
Բրոկհաուզ Ֆ. Ա. 526, 534:  
Բրոս, տե՛ս Դր-Բրոս Ե.:  
Բրոսս Մ. 370:  
Բրուզլ 2. 368:  
Բրուզման Կ. 460, 461, 465—479,  
481, 499, 506, 517, 583, 592:  
Բրուկեներ Վ. 536:  
Բրուտոս 228:  
Բուադակ է. 583:  
Բուալե Պ. 516:  
Բուզդե Ս. 580:  
Բուզադով Ռ. 259, 507, 591:  
Բուզդե Ե. Ֆ. 516:  
Բուզինգ Յ. 587:  
Բուզինսկի Ա. 584:  
Բուլ Ֆր. 165:  
Բուլխովսկի Լ. Ա. 453:  
Բուլիչ Ս. Կ. XV, XVII, 208, 523:  
Բուխենե Տ. 259:  
Բուումաստի 183, 184:  
Բուսրեկ Օ. Գ. Վ. 189:  
Բուսլակ Յ. Ի. 431—433, 450, 451,  
453:  
Բուռնի Ա. 100:

Քուրստորֆ Ի. 195:  
 Քուրստորֆ Ի. Բ. 195:  
 Գարեկենց (ֆոն դեր Գարեկենց) Գ.  
 372, 555, 556, 559, 563, 583:  
 Գաբելենց (ֆոն դեր Գաբելենց) Հ.  
 Կ. 452:  
 Գագկան Կ. Ծ. XII:  
 Գալանոս Կ. 196:  
 Գալգեր Լ. 261, 360:  
 Գալգեր Վ. 579:  
 Գարգյա 23:  
 Գարոններ Բ. 585:  
 Գարսիա 121:  
 Գարցունի Մ. 197:  
 Գաուտեր դե Բիրելսուորթ. տե՛ս  
 դե Բիրելսուորթ:  
 Գեբաուեր Ի. 582:  
 Գեորգոս իոյորբոսկոս 126:  
 Գեսար Ֆ. 165:  
 Գեսներ Կ. 203, 204, 274:  
 Գևորգ Դադեր Պալատացի 209,  
 Գևորգ Սիկոացի 129:  
 Գերասիմով Դ. 180:  
 Գերլի Վ. 256:  
 Գերներ Հ. 189:  
 Գիլլ Ա. 188:  
 Գիլլեն Ֆ. Ջ. 590:  
 Գիմոն Տ. 199:  
 Գիշար Է. 204:  
 Գիրգաս Վ. XII, 140—142, 164:  
 Գլինդ Հ. 73, 87, 114, 118, 284,  
 285:  
 Գմելին Ս. Գ. 214:  
 Գրլուեր Գ. 585:  
 Գյուդենշտեյն Ի. Ա. 200, 214:  
 Գնունի XLVIII:  
 Գոդֆրուա-Դեմոմոնեն 372:  
 Գոյեբհենկի Կ. 101:  
 Գոմպեոց Բ. 101:  
 Գոֆ Բ. 290, 362:  
 Գոտեդ Յ. Ք. 186, 187,  
 Գորգհաս 57, 58, 61, 65:  
 Գոգ Գ. 101:  
 Գմիդոտտ Բուոնիացի 116:  
 Գրասման Հ. 450,

Գրաբման Մ. 121, 165:  
 Գրեկ Մ., տե՛ս Մաքսիմ Գրեկ:  
 Գրեյ Լ. Հ. XIV, XLVII, 203, 210,  
 213:  
 Գրեյ Ն. Ի. 278, 280:  
 Գրիգոր Աբուլ-Յարաջ բար-Հեբբեյ  
 152:  
 Գրիգոր Մագիստրոս 128:  
 Գրիգոր Նյուացի 51:  
 Գրիգորիոս 127:  
 Գրիգորիոս I Պապ 112:  
 Գրիմ Յ. XI, 270, 287, 294, 300,  
 301, 303, 304, 306, 309, 313—  
 320, 321—325, 352, 353, 357—  
 359, 364, 365, 373, 376, 393, 431,  
 433, 437, 447, 451, 462, 526,  
 574:  
 Գրիմ եղբայրներ 372:  
 Գրոտեֆենդ Գ. Ֆ. 361:  
 Գրունակի Ն. Կ. 259:  
 Գրունցել Յ. 583:  
 Գուկովսկայա Ջ. Վ. 259:  
 Գու Յան-ուն 198:  
 Դալման Հ. 101:  
 Դամասկինոս Ի. 133:  
 Դանթե Ա. 123—125, 183, 205:  
 Դավիդով Ի. Ի. 279:  
 Դավիդ Քիմխի 152:  
 Դավիթ 128:  
 Դավիթ-րեկ Մ. Ս. 581:  
 Դատտա Դ. 32, 36:  
 Դարեհ 361:  
 Դարմատետեր Ա. 563:  
 Դարվին Չ. XXVIII, 378, 379, 382,  
 389, 390, 563:  
 Դե Արկայա Պ. 194:  
 Դե Բիրելսուորթ Գ. 116:  
 Դեբրուններ 578:  
 Դե Գամա Վ. 201:  
 Դեգտերևա Տ. Ա. XIV:  
 Դելորյուկ Բ. XV, 298, 461, 470,  
 471, 479—482, 499, 555, 559,  
 575:  
 Դե-Լեբբիս (Նեբբիս) Ա. 182, 183,  
 205, 206,

Դեկարտ (Կարտեզիւս) Ռ. 118.  
 225—227, 230, 236:  
 Դե-Մենդանյա Ա. 201:  
 Դեմետրիոս Ք. 86:  
 Դեմոկրիտ 40, 46, 53, 71:  
 Դեմոսթենես 66, 67:  
 Դե-Նոբրիբոս Ռ. 197:  
 Դե-Պոզա Ա. 193:  
 Դեսինցկայա Ա. Վ. XV, 471, 575:  
 Դեսպոտտերիոս Յ. 115:  
 Դե-Վալդես Խ. 205, 206:  
 Դերժավին Ն. Ս. 259:  
 Դե-Օլմոս Ա. 200:  
 Դը-Բրոս Շ. 195, 230, 234—236,  
 255:  
 Դը-Լազարդ Պ., տե՛ս Լազարդ Պ.  
 Խը-Մարկիլ ժ., տե՛ս ժոս դը-Մար-  
 վիլ:  
 Դը-Սասի Ս. 279:  
 Դիոհմոս 99:  
 Դիլթեյ Վ. 454:  
 Դիոգենես Էնոանդացի 43:  
 Դիոգենես Լաերոացի 42:  
 Դիոգենես Մելեկացի 79:  
 Դիոսորոս Սիդիուսոսի 46:  
 Դիոմեդես 92, 93, 126:  
 Դիոնիսիոս Քրակագի 45, 80—86,  
 83, 90, 91, 126, 128, 131:  
 Դիոնիսիոս Հալիկառնացի 66:  
 Դիսկոլոս Ա., տե՛ս Ապոլլոնիոս Դիս-  
 կոլոս:  
 Գիտեր Յ. 585, 586:  
 Գիտրիխ Գ. 165:  
 Գիտրիխ Կ. 533:  
 Գիդ Յը. 363—365, 447, 534:  
 Գիֆենբախ Լ. 290:  
 Դյարմաթի Ս. 211, 212, 369:  
 Դյուրուս ժ. (Սիլվիոս) 184:  
 Դյու-Կանժ Շ. 173, 207:  
 Դյումարսե Ա. Շ. 254:  
 Դյուվալ Ռ. 165:  
 Դորիաշ Ա. 100:  
 Դորրովսկի Ի. 302, 351, 366:  
 Դոսա Ա. 259:  
 Դոմինգո դե Սան Քոմաս 200:

Դոլլե Յ. 101:  
 Դոնատոս 91, 92, 112, 113, 115.  
 116, 120, 121, 147, 180:  
 Դոննեը Օ. 587:  
 Դրազանու Ն. 101:  
 Դրուան Յուլ-ցուլ 198:  
 Դրուանշ իրն Լաբրատ 151:  
 Դրուան Սկոտ Ի. 118, 121, 165, 166:

Ելիզարովսկի Ի. Ա. 259:  
 Ելլինեկ Մ. Հ. 261:  
 Եկատերինա II 214:  
 Եհուդա բեն Դավիդ Խայյուզ 151  
 152:  
 Եհուդա իրն Քորեյշ 149, 151:  
 Ենիշ Դ. 216:  
 Եսպերսեն Օ. XIV, 330, 499, 559.  
 563:  
 Եվա XL, XLVII:  
 Եվդոկիմ 179:

Զամահարի (Աբու-Լ-Կասեմ Մահ-  
 մուդ ր. Ումար ք. Մուհամմեդ ք.  
 Ումար ալ-Խուվարիզմի ազ-Զա-  
 մահարի) 132, 143—145, 153,  
 154:

Զախարիե Ք. 156:  
 Զանդֆելդ Կ. 372:  
 Զասագլիկիշ Ն. Ա. 259:  
 Զարբհանայան Գ. 371, 453, 591:  
 Զարարիա Սարկավազ XLIII:  
 Զեմսկայա Ե. Ա. 591:  
 Զենդոտոս 80:  
 Զիզանիա Լ. 180—182:  
 Զիկել Կ. Յ. 262:  
 Զինոեր Լ. Ռ. 590:  
 Զիվերս Է. 460—464, 564:  
 Զիտլ Կ. 584:  
 Զյուսմիլիս 244:  
 Զյուտերիյե Լ. 555, 592:  
 Զվեգինցե Վ. Ա. XIII, XIV, 140,  
 153, 164, 195, 281, 395, 491.  
 555:  
 Զուրատի Ի. 575:  
 Զուլցեր Յ. Գ. 249:

Էքերճարդ Բեթունեցի 115:  
 Էգգեր է. 101:  
 Էգգեր Գ. 201:  
 Էդերին Ոսկեիզու 116:  
 Էդմոն 569:  
 Էլիոս Ստիլոն 48, 56, 81, 90:  
 Էլլիս Ա. 188:  
 Էյֆրիկ 116, 117:  
 Էյնաթոն 10:  
 Էկբլոմ Ռ. 521:  
 Էնգելս Ֆր. XXII, 4, 36, 103, 104,  
 119, 251, 287—289, 364, 570:  
 Էռլինգեր Ա. 186:  
 Էոլոս 99:  
 Էպիկուր 42, 43, 46, 49, 50:  
 Էոնո: է. 585:  
 Էսփիես 58:  
 Էյնոմիոս 51:  
 Էվրիպիդես 58:  
 Էրդման Կ. 563, 564:  
 Էրդյոզի (Սիլվեստեր) Ի. 193:  
 Էրկերտ (Ֆոն Էրկերտ) Ռ. 589:  
 Էրպենիոս 195:  
 Էֆրոն Ի. Ա. 526, 534:  
  
 Քեոդեկտես 59, 93:  
 Քեոզոս, տե՛ս Քեոզորոս Պրոդրո-  
 մոս:  
 Քեոզոսիոս 126:  
 Քեոզորոս 64:  
 Քեոզորոս Պրոդրոմոս (Քեոզոս) 133:  
 Քեոֆրաստես 59, 61—64:  
 Քերամենես 58:  
 Քիրֆելդեր 102:  
 Քլուրո Շ. XII, 115, 166:  
 Քոմաս Էրֆուրտցի 113, 121:  
 Քոմաս Օկկալ 121:  
 Քոմսեն Վ., տե՛ս Տոմսեն Վ.:  
 Քոր աստված XLIV:  
 Քրանդելենբուրգ Ա. 77:  
  
 Ժանն Գ. 101, 242, 261:  
 Ժոր Վ. 583:  
 Ժոս դը Մարվիլ 121:  
 Ժիլլերոն Ժ. XIII, 564, 568, 569:

Ժիրար 254, 255, 285:  
 Ժիրմունսկի Վ. Մ. 260, 591:  
  
 Իբն Գիշամ (Աբու Մուհամմեդ Աբ-  
 դուլլահ՝ իբն Գիշամ ալ-Անսարի  
 ալ-Խանբալի) 145:  
 Իբն Մալիք (Աբու Աբդուլլահ Մու-  
 համմեդ Իբն Մալիք) 145:  
 Իբն Մուխաննա 154:  
 Իբն Ջիննի 135:  
 Իբն Սիգա 147:  
 Իբն Սինա (Ավիցեննա) 120:  
 Իբն Տարիս 134:  
 Իբնու-լ-Խաշիբ (Ջեմալուդին Աբու  
 Ամր Ուսման) 145:  
 Իբրահիմ ալ-Իսֆերահի 135:  
 Իլիա բար-Շինայա 132:  
 Իլիա Թիրճանցի 132:  
 Իկելդումեր Վ. 186:  
 Իոանն էկզարքոս 133:  
 Իոաննես Ֆիլոպոնոս 88, 127:  
 Իոնոս 99:  
 Թախֆ Նուզայա (Խուզիստանցի)  
 131:  
 Իորդան Ի. XVI, 503, 514:  
 Իսա բար-Ալի 132:  
 Իսիդոր աստվածուհի XLVIII:  
 Իսիդորոս Սիլիլացի 112, 113:  
 Իսմայել XLVII:  
 Իսոկրատես 59, 64, 65:  
 Իստվիկ Բ. 290:  
 Իրե Ի. 202:  
  
 Լագարդ (դը-Լագարդ, Բյոտտիխեր)  
 Գ. 362, 448:  
 Լակշմանա XI, IV:  
 Լամարկ Ժ. Բ. 378:  
 Լամերս Վ. 373:  
 Լամի Բ. 239, 236:  
 Լայբնից Գ. Վ. 186, 205, 211, 217,  
 218, 225, 227—229, 236, 403,  
 543:  
 Լանգե Լ. 101, 279:  
 Լանգդոն Ս. 101:  
 Լանգրաֆ Գ. 165:

Հանալու Կ. 252, 260:  
Հասկարիս Կ. 177:  
Հասսալ Ֆ. 251:  
Հասսեն Ք. 441:  
Հաստ Ջ. Ք. 590:  
Հարին Բ. Ա. 260:  
Հաշարուս Մ. 378, 407, 411, 494,  
542:  
Հացիոս Վ. 213:  
Հերրիխ, տե՛ս դե-Հերրիխ:  
Հեկի Մ. 101:  
Հեներտ Մ. 166:  
Հենին Վ. Ի. 169, 371, 381, 543:  
Հեպիտր Ա. 592:  
Հեպյոխին Ի. Ի. 214:  
Հեպսիոս Ռ. 368, 587:  
Հեսկին Ա. 460—462, 466, 582:  
Հերը Լ. 79, 101:  
Հեր-Սպլավիհսի Տ. 190, 260:  
Հեֆման Ս. 373:  
Հիթլ Ա. Գ. 166:  
Հիլիելուադ Յ. 166:  
Հիկիմնիոս 58, 60:  
Հինդսեյ Վ. Մ. 583, 584:  
Հիննեյ Կ. 237:  
Հիննիչենկո Ա. 260:  
Հիսիաս 66:  
Հիվե Շ. Լ. 261:  
Հյապունով Բ. Մ. 516:  
Հյովե Ռ. 499:  
Հյովենյատեոն 368:  
Հյու Ջի-ձի 153:  
Հյու Սիին 18:  
Հյու Տի 198:  
Հոկկ Ջ. 222—224, 228, 230, 234,  
242:  
Հոմայեր Կ. 166:  
Հոմմել Հ. 373:  
Հոմոնոսով Մ. Վ. 191, 192, 208,  
209, 351:  
Հոութ Ռ. 256:  
Հոուկուկա Չ. 13, 99, 108:  
Հովով Ա. Ս. 372:  
Հուդիլիս Ա. 499, 575:  
Հուոոյֆ Հ. 191, 195, 211:  
Հուիկ Կ. 592:

Հութեր Մ. 187:  
Հուկյանենկո Ա. Մ. 371:  
Հուկրեցիոս Կարոս 49:  
Հուոոսլավսկի Վ. 101:  
Հուց Ֆ. 586:  
  
Խալիլ ալ-Ֆարադիդի 140, 144, 146:  
Խան Յույ 158:  
Խան Վեն-կուն 19:  
Խաշատուր Ջուդայեցի XLIII:  
Խարունիվա Մ. 199:  
Խարիսիոս 91, 92:  
Խրաբր Չեոնոսիգեց (Սևասթեմ) 132:  
Խրիստ Վ. 77, 79, 80, 82, 131:  
  
Կալլ Հ. 90:  
Կանյց Ֆր. 372:  
Կանդրեա—Հեշտ Ժ. Ա. 585:  
Կան Ին-դուն 158:  
Կանինիոս Ա. 195:  
Կաննե Ա. 322:  
Կանտ է. 118, 267, 278, 283, 325,  
329, 348, 543:  
Կաշգարի Մ., տե՛ս Մահմուդ Կաշ-  
գարի:  
Կաշիկա 156:  
Կաուզրեն Պ. 101:  
Կասսիրեր է. XI, 372:  
Կաստրեն Մ. Ա. 369, 372, 587:  
Կաստելվետրո Լ. 206:  
Կատկով Մ. Ն. 366:  
Կատայանա 25, 155:  
Կարլզրեն Պ. 101:  
Կարստ Յ. XVI, 530, 592:  
Կարտեզիոս, տե՛ս Դեկարտ Ռ.:  
Կասցեկսոն Ս. Դ. 520, 521, 524,  
591:  
Կելլեր Յ. Յ. 197:  
Կեկու XLVIII:  
Կեմպելեն (ֆոն Կեմպելեն) Վ. 176:  
Կելսյու 199:  
Կենշո 161:  
Կեշուաթա 157:  
Կեպպեն Պ. Ի. 366:  
Կեսար Հ., տե՛ս Հուլիոս Կեսար:



Կիեւա Մ. 260:  
Կիլիանոս Կ. 189:  
Կիլիանոս Յ. 202:  
Կիկեբրոն 67, 68:  
Կիրակոս Գանձակեցի 129:  
Կիրիսեր Ա. 193:  
Կիրխհոֆ 447:  
Կլաւոս 186, 187:  
Կլապրոթ Գ. Յ. 200, 369, 370:  
Կլեոպատրա 367:  
Կլուպե Օ. 261:  
Կլուպե Ֆ. 586:  
Կլուլե Ս. Վ. 452:  
Կլոններ Յ. 373:  
Կլոններ 533:  
Կլոսիե Ժ. 346:  
Կլոբոս 551:  
Կլորդոս 210:  
Կնասպակի (Կնասպիոս) 191:  
Կորով Ի. Ու. 100:  
Կոլրուկ Հ. Ք. 276:  
Կոյյար Ժ. 100:  
Կոլլից Հ. 461, 476, 583:  
Կոլլադա Գ. Ի. 260:  
Կոլումբոս Քր. 168, 292:  
Կոկովցե Պ. Կ. 164:  
Գոմիինանոս 92:  
Կոնֆուբելի Օռլիանցի 116:  
Կոնուիլյակ Է. 230—234, 240, 241, 245:  
Կոնդորսե Ա. 236:  
Կոնստանտին 133:  
Կոնտ Օ. 301, 456, 457:  
Կոնրադ Գ. 261:  
Կոնրադե Ա. 589:  
Կոնֆուտոս 18, 19:  
Կոպ վան դեր, տե՛ս Վան դեր Կոպ:  
Կոպիևիչ 181:  
Կոպիտոր Վ. 366:  
Կոպչինսկի Օ. 190:  
Կոստա Բ. 200:  
Կոստանյանց Կ. 259, 371:  
Կորոպս ինսկի Ս. 371:  
Կորսեն Վ. 447:  
Կրատես Մալոսացի 45, 48, 63, 80, 91:

Կրատիոս 40, 43, 44:  
Կրահե Հ. 574:  
Կրատու Խ. Յ. 213, 214, 215:  
Կրատու Խ. Վ. 592:  
Կրեշինի Վ. XIII:  
Կրեշմեր Պ. 505, 557, 583:  
Կրիժանիչ Յու. 181, 208:  
Կրիմակի Ա. 130, 164:  
Կրոչե Բ. 261:  
Կրուչևսկի Ն. Վ. 499, 525, 539, 534, 537—540, 559, 592:  
Կրուցիգեր Գ. 204, 322:  
Կու Ե-վանգ 161:  
Կուզնեցով Պ. Ս. 208, 260:  
Կուլման Ն. Կ. 260:  
Կուկալ 161:  
Կուկենհեյմ Լ. 261:  
Կումարալիբհատտա 157:  
Կոն Ա. 359, 439:  
Կոն Է. 454, 579, 589:  
Կուրգանով Ն. Գ. 192:  
Կուրիլովիչ Յ. 572:  
Կուրչատ Ֆ. 578, 581, 582:  
Կուրցիոս Գ. 101, 363, 426, 443—447, 453, 474, 475, 497, 499, 501, 502, 572:  
Հասագ Է. 101:  
Հասա Հ. Ա. Ֆ. 165:  
Հալհեդ Ն. 210:  
Համանն 246—248:  
Համդալլահ Ղազվին 154:  
Հարեգեր Մ. 165:  
Հալդե Ի. Խ. Ա. 278, 285:  
Հայմ Ռ. 371, 372:  
Հայնսիոս Ալագ 178:  
Հայնսիոս Կրտսեր 178:  
Հանկամեր Պ. 261:  
Հանսեն Ֆ. 576, 577:  
Հանտեր Վ. Վ. 452:  
Հանուշ Հ. 531:  
Հառիս Զ. 254, 256, 257:  
Հառն Պ. 372:  
Հառնակ Օ. 372:  
Հառնուա Գ. 261:

Հասան բար-Բահուլ 132:  
 Հավրանեկ Բ. 575:  
 Հավունի XLVIII:  
 Հարտ Ջ. 188:  
 Հաուզե Յր. 562:  
 Հաքսիեղեն Յ. է. 197:  
 Հեգեղ Գ. Վ. Ֆ. 267, 278, 283,  
 287, 328, 373, 380, 381, 407:  
 Հեյիողորոս 126:  
 Հեյլիոս 90:  
 Հելմհոլց Ֆ. 438:  
 Հեմաչանդրա 155:  
 Հեյսգորդ 139:  
 Հեն Վ. 439:  
 Հենան Իշո բար-Սարոշվայ 132:  
 Հեռլինգ Ս. Հ. Ա. 278, 282:  
 Հեսիողոս XLVIII, 52:  
 Հերակլիտ 39, 43, 53:  
 Հերարտ Յ. Ֆ. 406, 407, 410, 433,  
 542, 555:  
 Հերդեր Յ. Գ. 244—249, 318, 328:  
 Հերեննիոս 67:  
 Հերման է. 592:  
 Հերման Հ. 278:  
 Հերմես (աստված) XLI, 43:  
 Հերմոզեն 40, 44, 52:  
 Հերմոզեն Տարսոնացի 66:  
 Հերոդիանոս 87:  
 Հերոդոտ XLIII:  
 Հերվաս Ի-Պանդուրո ի. 218, 219:  
 Հիլգարդ 126:  
 Հիլգարդիս 123:  
 Հինքս է. 388:  
 Հիրշ Ս. 165:  
 Հիրտ Հ. 460:  
 Հիպսիկատոս 99:  
 Հիրտ Հ. 500, 557, 575:  
 Հիքս Ջ. 208:  
 Հյոսնլե Ա. Ֆ. Ռ. 578: {  
 Հյուշաման Հ. 448, 449, 460, 573,  
 579, 580:  
 Հյուզո Հ. 236:  
 Հոբբս Բ. 221, 222, 230:  
 Հոլդեր Ա. 585:  
 Հոլլ Ռ. 261:  
 Հոլցման Ա. 359, 360, 365:

Հոմերոս XLVIII, 52, 69, 71:  
 Հոմեել Ֆ. 557, 586:  
 Հոնեյն Իբն-Իսհակ 131, 132:  
 Հոռն Պ. 579:  
 Հոռն Վ. 330:  
 Հոռն-Թուկ Ջ. 238, 254, 256, 258:  
 Հոպալդ է. 372:  
 Հովհաննես Երզնկացի 129:  
 Հովնանյան Պ. 436—438:  
 Հորտենզիոս 68:  
 Հոֆման Օ. 583:  
 Հաբանոս Մ. 113:  
 Հուգուլլո 113:  
 Հուլիոս Կեսար 48, 68, 95, 228:  
 Հումբոլդտ (Ֆոն Հումբոլդտ) Վ.  
 XIX, 246, 247, 257, 270, 281,  
 288, 291, 301, 302, 303, 325—  
 350, 354, 355, 371—373, 375,  
 376, 379, 337, 406, 407, 409—  
 411, 413, 415, 419, 423, 425,  
 432, 436, 444, 445, 452, 485,  
 526, 527, 544, 555:

Ղանալանյան Ա. XLV:

Մարուշի Կ. 199:  
 Մագելյան Ֆ. 168:  
 Մադլիխ Ի. Ն. 353—355:  
 Մալերր Ֆ. 185:  
 Մախասյան Ստ. 453:  
 Մահմուդ Կաշգարի 153, 154:  
 Մահադարիսի Մ. Վ. 260:  
 Մալեբեր 255:  
 Մանթել Ի. 115:  
 Մաշո Յր. Մ. 200:  
 Մառ Ն. Յա. XXII, 557:  
 Մատթեո Պ. 562:  
 Մարթան Պ. 201:  
 Մարիոս Վիկտորինոս 81, 92:  
 Մարցիանոս Կապիլա 111, 112:  
 Մարքս Կ. XXII, 36, 104, 119, 251,  
 288, 312, 370:  
 Մաքսիմ Գրեկ 179:  
 Մաքսիմոս Պանուզես 127:  
 Մաքսիմոլ 181:

Մեզիզեր շ. 199, 200, 213:  
Մեզրի Լ. 184, 185:  
Մելամպոզես 126:  
Մելանխտոն 177:  
Մելիորանսկի Պ. Մ. 164:  
Մելքունյան Ռ. Լ. 453:  
Մեյի Ա. XIII, XV, 292, 316, 465,  
466, 580—583:  
Մեյեր Պ. XIII, 365, 568, 569, 584:  
Մեյեր-Լյուբկե Վ. XIII, 584:  
Մենստ ժ. 201, 202, 207:  
Մենսխեմ բեն Սարուկ 151:  
Մեննիշյան Գ. XV, 259, 371, 459:  
Մեշչանինով Ի. Ի. 260:  
Մեռնեք-Պտախ XLIV:  
Մեսրոպ Մաշտոց 107:  
Մետե Շ. Յ. 101:  
Մերսեն 226:  
Մերրս 131, 166:  
Միլևսկի Թ. IX—XI, 50, 355:  
Միխիլ 576, 577:  
Միկոյշիչ Յ. 448, 450, 559, 560,  
578, 579, 582:  
Միկկոլա 516:  
Միհրդատ 204:  
Մինչյո Ջ. 213:  
Միոզակու 161, 162:  
Միստելի Յր. 499, 502, 570, 571:  
Միբայել Մարտահոհ 121:  
Միբայելիս 236, 246:  
Միսիթար Սերաստացի 196, 200,  
209:  
Մյուլլենդորֆ 566:  
Մյուլլեր Մ. 378 380, 400—403,  
426, 439, 454:  
Մյուլեր Յո. 101, 365, 448, 499,  
504, 570, 571:  
Մյունստեր 368:  
Մոգայանս 153:  
Մոթ Մ. 189:  
Մոլ Գ. 584:  
Մոմսեն Թ. 447:  
Մոնրոդո Ջ. Բ. 243, 244, 258:  
Մոնյինսկի 190:  
Մոնր Ս. Շ. 261:  
Մոնր (Մո Դի) 19:  
Մոսպերտուի 241, 242:

Մոսալսկի Վ. Ի. 372:  
Մոսես Քիմխի 152:  
Մովսես 128:  
Մովսես Խորենացի XLVIII:  
Մսերյանց Լ. 516, 580, 581:  
Մուկե Է. 582:  
Մուհամմեդ 134:  
Մունդորֆ Գ. 261:  
Մուռեյ Գ. 101:  
Մուրկո 516:  
Յաբերգ Կ. 563:  
Յագիշ Ի. Վ. 133, 164:  
Յակոբ Եղեսացի 131, 132:  
Յան Խին-շուն 20, 100:  
Յան Սյուն 18:  
Յանուս (դի Յանուս) Յ. 178:  
Յասկա 23, 26, 30:  
Յարցևս Վ. Ն. 256, 260, 292:  
Յելլինեկ Մ. Շ. 114:  
Յոսեֆ Ս. 201:  
Յոսեֆ Քիմիի 152:  
Յունգ Թ. 363:  
Յունգ Յ. 584:  
Յունիոս Յր. 322:  
Յուստի ֆր. 442, 579:  
Նազարյան Ստ. 449:  
Նալբանդյան Մ. 449:  
Նալթ Վ. 261:  
Նապոլեոն 367:  
Նարա XLVII:  
Նարիակիրա Յ. 199:  
Նեմիրովսկի Մ. Յա. 260:  
Նեֆ Լ. 261:  
Նիրուր Կ. 251, 361:  
Նիկոլայ Յր. 246:  
Նիկոլսկի Ա. 235:  
Նիսիրիս Իլիա Բար-Շինայա 180:  
Նիտտի-Դոլլի Լ. 166:  
Նիրոպ Կ. 585:  
Նյուլդեկե Թ. 166, 587:  
Նյուտոն Ի. 225:  
Նորեն Ա. 586:  
Նորինազա Մ. 199:  
Նոֆերկա-Պտախ VLVII:

Նուարե Լ. 404, 454, 556:  
Նուգոժերցի Լ. 191:  
Շալմեի-Լակուր Պ. 372:  
Շախմատով Ա. Ա. 516:  
Շակալլա 23:  
Շակատայանա 23, 31:  
Շահ-Աբաս XLIH:  
Շահան-Ջրպետյան Լ. 261:  
Շամպոլլոն Ֆր. 367, 368:  
Շայնբրո Մ. 372:  
Շանիձե Ա. 129:  
Շանշովանի Է. 200:  
Շաֆարիկ Պ. Յ. 366:  
Շիլլինգ Յ. Վ. 325, 328:  
Շեյդ Ք. 298:  
Շեն Յուեն 157:  
Շենյու Մ. Գ. 165:  
Շերեր Վ. 373, 430, 453, 454, 463,  
466, 474, 475:  
Շիլլեր Ֆր. 345:  
Շիլլարսկի 190:  
Շիտազաու Մ. 161:  
Շիրվիդ Կ. 193:  
Շիֆներ Ա. 452:  
Շլայխեր Ա. XI, XXII, 334, 359,  
378—390, 392—401, 433, 437,  
444, 445, 450, 454, 460—462,  
464, 471, 476, 477, 480, 571,  
572, 581:  
Շլանդեր Է. 166:  
Շլեզել Ա. Վ. 274, 275, 277, 295,  
336, 441:  
Շլեզիլ Ֆր. 274—277, 295, 337,  
372, 373:  
Շլոցեր Ա. Լ. 367:  
Շկոլսկի Վ. Ք. 123:  
ՇՆալց Յ. Լ. 583:  
Շմելլեր Ի. Ա. 274:  
Շմիդտ Է. 454:  
Շմիտտ Յ. 461, 465, 477, 504—506,  
573, 574:  
Շմիդտ Կ. Ն. Ա. 373:  
Շոյու 161:  
Շոտտ Վ. 369:  
Շոտտել Յ. Գ. 186, 187:

Շոր Ռ. Օ. VIII, XIV, 260:  
Շո Մ. 193:  
Շոու Վեն 158:  
Շչեպկին Վ. Ն. 516:  
Շչերբա Լ. Վ. 525, 527, 529, 532, 533,  
559:  
Շպայեր Յ. Ս. 578:  
Շպեխտ Յ. XVII, 474, 478, 573,  
574, 577, 592:  
Շպիգել Յ. 442:  
Շպիցեր Լ. 507:  
Շոադեր Օ. 573, 574:  
Շոումպֆ Գ. XVI, 259, 371, 453,  
591:  
Շտակհերբրգ (ֆոն Շտակհերբրգ) Ք.  
579:  
Շտայնթալ Լ. XII, XL, 75, 79, 103,  
286, 333, 336, 349, 373, 375,  
378, 406—419, 421, 422, 453,  
453, 466, 467, 485, 571:  
Շտայնմայեր Ռ. 373:  
Շտենզել 116:  
Շտենցել Լ. 373:  
Շտիրեր Ջ. 592:  
Շտյոկլայն 563:  
Շտյուրցինգեր Յ. 116:  
Շտոլց Յ. 583:  
Շտոքս Վ. 585:  
Շտրայտերբրգ Վ. 262, 474, 577, 583:  
Շտրաուտ Օ. 102:  
Շտրոմ Յ. 592:  
Շրոդեր Է. 454:  
Շուերեն (դե Շուերեն) Գ. 178:  
Շուլհերտրոդ (ֆոն դեր Շուլհերտրոդ)  
Ս. 262:  
Շուխարոտ Լ. XIII, 48, 497, 499,  
505, 507—515, 557, 568, 589,  
591:  
Չակրվարտի Պ. XII, 26, 30, 32,  
100:  
Չամչյան Մ. XLII, 196:  
Չատտերշի Ս. 32, 36, 100:  
Չեմոպանով Ն. Ս. VIII, XIV, XVII,  
350, 531, 536, 538, 539:  
Չերեպանով Մ. Ն. 592:

Զերնիշևսկի Ն. Գ. 349, 350, 371,  
 372, 433, 574:  
 Զխտադրինի Զ. 206:  
 Զոն 163:  
 Զոմա Այ. 369:  
 Զուգինով Ա. Ն. 164:  
  
 Պասսոնեն Զ. 369, 587:  
 Պալսգրավ 134:  
 Պալասանյան Ստ. 450:  
 Պալլաս Պ. Ս. 200, 213, 214:  
 Պանով Դ. 372:  
 Պանինի IX, 23—28, 155, 156:  
 Պասկյե Է. 207:  
 Պավսկի Գ. Պ. 366:  
 Պատանջալի 25:  
 Պատկանյան Բ. 362, 448, 449, 581:  
 Պարիս Գ. 365, 568, 569:  
 Պարկոշովիչ Յ. 133, 190:  
 Պարոլ Զ. 460, 461, 463, 481—494,  
 514, 528, 538, 544, 554, 558,  
 563, 565:  
 Պաուլին 197, 210:  
 Պեդերսեն Զ. XIII, 308, 365, 460,  
 530:  
 Պելլիկան 194:  
 Պեշկովսկի Ա. 516:  
 Պեչ Գ. 545, 546, 548:  
 Պեոն Ա. 442:  
 Պետերման Զ. 290, 362, 449:  
 Պետերսոն Մ. Ն. XIV, 516, 520,  
 591:  
 Պետով Է. 166:  
 Պետրարկա Ֆր. 183:  
 Պետրեոս Ա. 193:  
 Պետրոս I 182, 218:  
 Պետրոս Հելին 120, 122, 123:  
 Պերիզոնիոս Յ. 178:  
 Պերոտոս Ն. 115:  
 Պերսիվալ 183:  
 Պերսոն Պ. 572:  
 Պիզաֆետտա Ա. 213:  
 Պիետրո ռելլա Վալլե 361:  
 Պիզանի Վ. XIII, 100, 454:  
 Պիկտե Ա. 439:  
 Պիշել Ռ. 578:

Պլանտա (Ֆոն Պլանտա) Ռ. 584:  
 Պլատոն 40—42, 46, 47, 53, 54, 58,  
 66, 70, 72, 120, 229:  
 Պոգոզին Ա. Լ. XIV, 100, 243, 249,  
 260, 404:  
 Պոլենց Մ. 101:  
 Պոկարպով Ֆ. 181, 182:  
 Պոլինիս Ի. 259:  
 Պոլիվկա 516:  
 Պոլոս 58:  
 Պոկրովսկի Մ. Մ. 516, 562, 563:  
 Պոնտոպիդան Է. 189:  
 Պոպով Ա. Վ. 420, 425:  
 Պոսելդոն 53:  
 Պոստելլոս Գ. 203:  
 Պոտերնյա Ա. Ա. 286, 333, 419—  
 427, 453:  
 Պոտտ Ա. Ֆ. 251, 356—358, 372,  
 373, 450, 572:  
 Պորժեգինսկի Վ. Կ. XIV, 516, 591:  
 Պորշիզ Վ. 562:  
 Պորցիոս Ս. 193:  
 Պորիերիոս 126:  
 Պամեստիս XLIII:  
 Պաղոմեոս Պերիպատեստիկ 82:  
 Պաղոմեոս (Պոտոմեոս) 367:  
 Պրանտլ Կ. 101, 166:  
 Պրիսցիանոս 77, 91, 92, 94,  
 95, 112, 113, 115, 120, 121:  
 Պրոտազորաս 74, 75:  
 Պուզին Ա. 181:  
 Պուշկին Ա. Ս. 280:  
 Պուրկինին 356:  
  
 Զակոմինո Կ. XIII:  
 Զահուկյան Գ. 99, 129, 164, 197,  
 259, 288, 321, 337, 353, 369,  
 371, 385, 401, 417, 433, 448,  
 449, 453:  
 Զայարիտյա 156:  
 Զեկսոն Ա. Վ. Ու. 579:  
 Զեմայուդդին Աբու Ամր Ուսման.  
 տե՛ս Իբնու-լ-Խաշիբ:  
 Զեմիսոն Զ. 322:  
 Զոնս Ու. 210:

Զոնսոն Ս. 188, 189:  
 Զոու Դե-ցին 158:  
 Զոու Դին-ի 100:  
 Զուսի 158:  
 Զուրջանի (Աբուբեքր Աբդուլ Քա-  
 զիբ բ. Աբդուռահման ալ-Զուր-  
 ջանի) 143, 144:  
  
 Փաղով վ. վ. 588:  
 Ռադհակրիշնան Ս. 32, 100:  
 Ռամա XLIV:  
 Ռամոս Պ. (Դը լա Ռամե) 184,  
 185:  
 Ռամսես 368:  
 Ռայզիգ Կ. 562:  
 Ռայխլինգ Դ. 115:  
 Ռայխման Ի. 261:  
 Ռայմոն Վիդալ 116:  
 Ռայմոնդո Յ. Բ. 197:  
 Ռայնա Պ. 166:  
 Ռայտ Ի. 586:  
 Ռայտ վ. 131, 164, 587:  
 Ռայցենշտայն Ռ. 55, 101:  
 Ռանցաու Յ. Ա. 373:  
 Ռապպ Մ. 379, 390:  
 Ռասկ Ռ. Ք. 288, 303—314, 321,  
 322, 350, 365, 369, 373, 442,  
 448:  
 Ռատուեր (ֆոն Ռատուեր) Ռ. XVI,  
 356, 369, 373:  
 Ռելանդ(ոս) Ն. 213:  
 Ռեմիոս Պալեմոն 91, 94, 95:  
 Ռենոու Ն. 28:  
 Ռենուար Ֆր. Յ. Մ. 364, 365:  
 Ռեֆորմատսուի Ա. Ա. XIV, 352:  
 Ռիխտեր է. 592:  
 Ռինկոն (ռեյ Ռինկոն) Ա. 200:  
 Ռիս Յ. XXV, 559—562:  
 Ռիվոլա Ֆ. 196:  
 Ռրհան է. 166, 451:  
 Ռիդելլ վ. 452:  
 Ռրբերտս Գ. 193:  
 Ռրրինս Ռ. Ն. 37, 49, 78, 79, 88.  
 101, 112, 116, 121, 166:  
 Ռոզեր Ա. 197:  
 Ռոզենշտրաուի Գ. Ի. 100:

Ռոզվարդովսկի Յ. 555:  
 Ռոմանոս 88:  
 Ռոմպելման Պ. Ա. 261:  
 Ռոյսլին Ի. 177, 194, 195:  
 Ռոս Ն. 166:  
 Ռոսցելին Ի. 119:  
 Ռոտ Ա. 441:  
 Ռոտ Ն. 197:  
 Ռոտ Ռ. 441:  
 Ռոտակեր է. 454:  
 Ռոտտա Պ. XIII, 166:  
 Ռոուլինսոն Ն. Ք. 362, 368:  
 Ռուլլ Ա. Ք. 199:  
 Ռուլտ Պ. 540, 558:  
 Ռուտ Ժ. Ժ. 238—242, 245, 246:  
  
 Սաադյա 150, 151:  
 Սադդանիտի 155:  
 Սալթերի Ռ. 188:  
 Սահուրա XLVIII:  
 Սադանի 147:  
 Սադաֆի (Աբու Ամր Իսա բ. Ումար  
 ա-Սադաֆի) 140:  
 Սայնովիլ Պ. 212:  
 Սանդիս Ջ. է. 166:  
 Սանժես Գ. Դ. 154:  
 Սանկցիոս Ֆր. 178:  
 Սանտաձե Նր. 591:  
 Սասի (դը-Սասի) Ս. 443:  
 Սասետի Ֆ. 197, 209, 210:  
 Սասունցի Դավիթ XLVIII:  
 Սարգսյանց Ս. 581:  
 Սեայ Գ. 101, 242, 261:  
 Սեզար Գ. 201:  
 Սելմուր Թ. 454:  
 Սենեկա 56:  
 Սեշես Ա. 255:  
 Սեել վ. 189:  
 Սետել է. Ն. 369, 587:  
 Սերգի 131:  
 Սերգիևսկի Մ. վ. 124, 254, 260.  
 365, 372, 592:  
 Սիրերենհեկով Բ. Ա. 591:  
 Սերսոս էմպիրիկոս 42, 82, 97, 98:  
 Սիբավիլդի 138—144, 146, 152:  
 Սիգեր Կուրտրեացի 121—123:

Սիմոն Ժ. 227:  
 Սիմոն Յ. 373:  
 Սինկո Տ. 166:  
 Սլարիյնեն Յ. XV:  
 Սկալիգեր Յ. Յ. 216:  
 Սկալիգեր Յ. Յ. 178, 216:  
 Սկյուզ Հ. 102:  
 Սկրոզեր Յ. Յ. 196:  
 Սկրոզեր(ոս) Է. 190:  
 Սմիթ Ա. 242, 403:  
 Սմիթ Բ. 188:  
 Սմիտնով Ա. 260:  
 Սմոտրիցկի Մ. 180, 181, 191:  
 Սյուն Շեն 18:  
 Սյուվ Պ. 189, 208:  
 Սնոթրի 115:  
 Սոլմսեն 516:  
 Սոկրատես 40, 41, 52, 84:  
 Սոսյուր (զր-Սոսյուր) Յ. XI, XXV,  
 50, 332, 460, 477, 506, 520—523,  
 528, 533, 539:  
 Սորոկին Յու. Ս. 372:  
 Սպանզուների XLVIII:  
 Սանեսեր Բ. 539, 590:  
 Սպենսեր Հ. 408:  
 Սահնոզա Բ. 230:  
 Սվեդզիտս Կ. 562:  
 Սմետով 192:  
 Ստերլին-Կամենսկի Մ. Ի. 189, 260:  
 Ստեփանյան Ա. 372:  
 Ստեփանյան 126:  
 Ստեփանյան Ն. (Էտեն Ա.) 177, 178:  
 Ստեփանյան Ռ. (Էտյեն Ռ.) 173, 185,  
 186:  
 Ստեփանյան Սլուցեզի 128:  
 Ստրալենբերգ Յ. Յ. 211:  
 Ստոաստոնոս Պ. 190:  
 Ստրինբոզ Ա. 205:  
 Սրեզնեկի Ի. Ի. 450, 451, 582:  
 Սրվանձտլանզ Գ. XLVIII:  
 Սուխա Հ. 438, 550:  
 Սուխան-Սառա Օրբելյանի 200:  
 Սախումիևով Մ. Ի. 260:  
 Սուլութի 136:  
 Սուրե Լյուն 158:

Վակերհագել Յ. 102:  
 Վալլա Լ. 177:  
 Վալլենսկյուզ Ա. 499:  
 Վալլերան Գ. 121, 166:  
 Վաման 156:  
 Վամբերի Հ. 588:  
 Վայլ Գ. 166:  
 Վայս Ի. 166:  
 Վան դեր Կոպ 516:  
 Վան Ին-զի 198:  
 Վան Գիննեկեն Յ. 555:  
 Վան Նյուն-սուն 198:  
 Վանդեկալ Շ. Բ. 166:  
 Վառնախ Վ. 166:  
 Վառոն Մ. Տ. 45, 48, 49, 55, 56,  
 57, 78, 90, 91, 93, 95, 96:  
 Վասիլևսկյա Ե. Լ. 371:  
 Վասկո դե Գամա 168:  
 Վարաուզի 155:  
 Վարդան Արևելյի 129:  
 Վարդան Բարձրբերդեցի 130:  
 Վարմա Ս. 102:  
 Վաստրուրգ (Ֆոն Վաստրուրգ) Վ.  
 174:  
 Վերեր Ա. 441  
 Վերեր Հ. 262:  
 Վերեր Օ. 102:  
 Վենկ Գ. 160, 166:  
 Վերկեր Գ. 564, 565, 567, 569:  
 Վերներ Կ. 156, 323, 461—463,  
 576:  
 Վերուրգ Պ. Ա. 273:  
 Վերուրգ Ե. 360, 442:  
 Վեսսեր Է. 489, 522:  
 Վիսման Յ. 369, 532:  
 Վիսամյան-Վալլենսկյա 102:  
 Վիլլիս 356:  
 Վիլյամ Հ. 196:  
 Վիլհելմ Շամպայո:  
 Վիլման Ա. 102:  
 Վիլյո Ջ. 250, 251:  
 Վիլտորիոս Մ. 194:  
 Վիմեր Լ. 373:  
 Վինդելբանդ Վ. 99:  
 Վինդիլյան Պր. 289, 290, 362:

Վինսկներ 2. 588:  
 Վինոգրադով Վ. Վ. XVI, 259, 283,  
 371, 422, 453, 531, 591:  
 Վինսեներ 3. 559, 565, 566:  
 Վինտերից Մ. 373:  
 Վյուֆլին Է. 55, 102:  
 Վյուրներ Ֆր. 353, 355:  
 Վ. սյա Կ. 185, 187:  
 Վ. սեր Ֆ. Մ. 236:  
 Վոյֆ Ֆր. 173, 251, 302:  
 Վոպադևա 156:  
 Վոստոկով Ա. Խ. 303 350—353,  
 365, 371, 372:  
 Վուկո Ֆ. 564, 567, 586:  
 Վոլգանիստ Բ. 207. 213:  
 Վուլֆ Մ. 166:  
 Վուլտ Վ. XI, 456. 458. 494, 499,  
 542—556, 563:  
 Վարուր Մ. ]:  
 Վարդ Կ. 508—510:  
 Վեն Կասե Լ. 208:  
 Վոստալինի Բ. XIII:  
 Վետենս 3. Ն. 244, 248, 249, 250:  
 Վերվիշյան Ս. XV 371, 571, 573:  
 Վիլհելման 244. 248:  
 Վիլհելմիս Ա. 31 99:  
 Վիլլեր Է 502. 509, 563:  
 Վոլտել Վ. 582:  
 Վիլ 516:  
 Վոլտել (Բուր Կ. Վ. VIII X\, III,  
 41, 53, 55, 115, 208, 209, 305,  
 375, 392 401 439, 447, 461,  
 587 588, 591:  
 Վոտան Ի. 516, 580, 581:  
 Վոտենդ 590:  
 Վարբյուրան 516:  
 Վորի Ժ. 184:  
 Վաստոս 368:  
 Վաստուրն 568  
 Վրասաններով Օ. Վ. 122, 164:  
 Վրանդելներով Ա. 77  
 Վրաստարոս 59:  
 Վրաստիել Ֆր. 582:  
 Վրաստի Լ. 166:  
 Վրանդելով Վ. Կ. 192, 202:

Վրանդել 56, 86, 87:  
 Վրանդի Ի. Մ. 100:  
 Վրանդելով Ն. Ս. 535:  
 Վրան Բ. Ա. 100:  
 Վաստարելի Ա. 260:  
 Վաստել Ֆ. 460:  
 Վաստիս Ռ. Մ. 372:  
 Վաստիստ Կալակտացի 65, 66:  
 Վաստի 2. 574, 592:  
 Վաստեն 2. 587:  
 Վաստ Գա-սին 198:  
 Վաստ 247:  
 Վաս Դեն Խու 163, 164:  
 Վաս Ի. Կ. 365, 448, 454:  
 Վաստարան-Վոտիցկայա Ն. 372:  
 Վաստար 3. 116:  
 Վ. Յու. 158:  
 Վալալով Ա. Դ. 112, 164:  
 Վալիկինա Զ. 236, 256, 276:  
 Վախենի Ու. Դ. XIII, 355, 380, 427—  
 430, 441, 454, 578:  
 Վալենդել Խ. Կ. 578, 581, 586:  
 Վալենով Գ. Կ. 516:  
 Վալ Ֆալիս 116:  
 Վալֆ սվալի Կ. 582  
 Վանդել Ռ. 262:  
 Վանդով Դ. Ն. 516:  
 Վալենդել Կ. Գ. 372:  
 Վանդել Զ. 176 188:  
 Վաստար Մ. VII:  
 Վենդի 253:  
 Վաստի Զ. Վ. 590:  
 Վաստան Մ. Վ. 589:  
 Վաստի Զ. 254. 256, 257:  
 Վաստ 588:  
 Վալեն Դ. 193:  
 Վախ. Ն. Դ. 201:  
 Վալդիցկայան Ռ. 2 589:  
 Վալդուել 452:  
 Վալտոն Ֆ. 2. 100:  
 Վանդել Ռ. Ս. 584:  
 Վաստի Է. 115:



Քսյուլանդեր Ի. 366:  
Քվինտիլիանոս 68, 95:  
Քվինտոս Էննիոս 48:  
Քրիստիպանոս Առլոյացի 45, 54, 77,  
78:  
Քուպեր 188:  
Քուֆու XLVIII:

Օբնորսկի Ա. Պ. 181:  
Օգոստոս 228:  
Օլենին 351:  
Օկկամ Թ., տե՛ս Թոմաս Օկկամ:  
Օ՛Մորոյ Պ. Ֆ. 193:  
Օպպերտ Յու. 363:  
Օստոնֆ Շ. 460, 461, 465—469,  
475, 477, 478, 566:  
Օվելակ Ա. Ա. 380, 442:  
Օվսյանիկո-Կուլիկովսկի Գ. Ն. 420,  
426:  
Օրհուս Յ. Մ. 189:  
Փուլդֆադեր Վ. Ա. 48:  
Օուլյան Սյու 158:

Տադդեգոն Բ. 101:  
Տատեր Ի. Ս. 218, 219, 274, 304,  
305, 326:  
Տարիսի (Աբու Ալի ալ-Հասան բ.  
Ահմեդ բ. Աբդուլ-Ջաֆար բ. Մու-  
համմեդ բ. Սուլեյման ալ-Տարիսի  
ալ-Տեռավի) 143—145:  
Տեռա (ալ-Տեռա, Աբու Ջաքարիա  
Յահյա բ. Ջիսդ բ. Աբդուլլահ բ.  
Մենզուր ադ-Դալլամի) 141:

Տեռարի Օ. 202:  
Տիգել է. 372:  
Տիլոդմոս 64:  
Տիլոքսենոս 99:  
Տիխտե Յ. Գ. 325, 328:  
Տիկ Ա. 461, 465, 504, 571—573  
585:  
Տլյուզել Գ. XII, 165:  
Տլյուզել է. 165:  
Տյոդորով Ի. 180:  
Տուենդո Թ. 226:  
Տոյգտման Խ. Գ. 454:  
Տոն դեր Գաբելենց, տե՛ս Գաբելենց:  
Տոն Կեմպելեն Վ., տե՛ս Կեմպելեն  
Վ.:  
Տոն Հոմբուրգա Վ., տե՛ս Հոմբուրգա  
Վ.:  
Տոսիոս Գ. Յ. 178, 201:  
Տոտիոս 126:  
Տորբա Ք. Ջ. Ս. 589:  
Տորտունատով Յ. Յ. 461, 465, 496  
498, 516—525, 537, 575, 582:  
Տորտունիո Տր. 183:  
Տրանկե Կ. 372:  
Տրանկե Օ. 101, 155:  
Տրեզեր Ջ. Գ. XL, 100, 101:  
Տրեյդենբերգ Օ. Մ. 99:  
Տրիկե Գ. 261:  
Տրիդա Թ. 564, 570, 592:  
Տուլդա 195, 255:  
Տումի Յ. Կ. 592:  
Տունկե Օ. 261:  
Տուծիվարա Սադայե 162, 163:

ԼԻԶՈՒՆԵՐԻ ԵՎ ԼԻԶՎԱՆՄԲԵՐԻ ՑԱՆԿ

- Ալբանացիների կամ շկիպետարների լեզու, տե՛ս ավրաներեն:
- Ալբաներեն 139, 193, 216, 275, 290, 366, 580, 581:
- Ակկադերեն (ասուրա-բաբելերեն) 10, 13, 15:
- Ամերիկյան բնիկների լեզուներ, տե՛ս ամերիկյան լեզուներ:
- Ամերիկյան լեզուներ 201, 214, 219, 325, 337, 416, 550, 589, 590:
- Այմարերեն 201:
- Անգլերեն XIII, XIV, 125, 178, 188, 204, 256, 275, 586:
- Անգլիական բարբառներ 586:
- Անգլո-սաքսոներեն (հին անգլերեն) 116, 117, 207, 208:
- Անդամաներեն 589:
- Անդամանյան լեզուներ 589:
- Անդրհիմալայան լեզուներ 589:
- Աննամերեն 108, 589:
- Աշխարհաբար, տե՛ս նոր հայերեն:
- Ասիական լեզուներ 214, 218, 219, 305:
- Ասորերեն 130, 131, 194, 203:
- Ասսամյան լեզուներ 589:
- Ասուրերեն, տե՛ս ակկադերեն:
- Ավեստայի լեզու (զենդերեն, հին քակտրերեն) 289, 290, 305, 442, 448, 465, 579:
- Ավստրալիական լեզուներ 452, 550, 589:
- Ավստրո-ասիական լեզուներ, տե՛ս հարավ-ասիական լեզուներ:
- Ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան լեզուներ) 219, 221, 325, 452:
- Ատտիկյան բարբառ 98:
- Արաբերեն XLI, 130, 132, 133, 135—141, 145—154, 194, 203, 206, 210, 367:
- Արամայերեն, տե՛ս արամեերեն:
- Արամեական լեզուներ 130, 194, 217:
- Արամեերեն (արամայերեն, բաղդեերեն) 14, 107, 149, 151, չստ:
- Արանյան բարբառ 585:
- Արաուկաներեն 200:
- Արդի հայերեն, տե՛ս նոր հայերեն:
- Արևելահայերեն 196, 450:
- Արևելյան Աֆրիկայի լեզուներ 59:
- Արևելյան լեզուներ 195, 199:
- Արևմտագերմանական լեզուներ 359:
- Արևմտահայերեն 196, 449:
- «Արիական» լեզուներ 370:
- «Արիա-եվրոպական» լեզուներ 370:
- Աֆղաներեն 579:
- Աֆրիկայի ոչ սեմա-քամական լեզուներ, տե՛ս աֆրիկյան լեզուներ:
- Աֆրիկյան լեզուներ 214, 452, 589:
- Բաբելերեն, տե՛ս ակկադերեն:
- Բալթիկական լեզուներ 193, 304, 366, 577, 581, 587:
- Բալթիկ-սլավոնական (հնում. նաև սլավա-լիտվական) լեզուներ 305, 385, 450, 505, 520, 521, 581:

- Քանառու լեզուներ 357, 369, 571, 590:  
 Քասկերեն (կանտարերեն) 193, 206, 207, 216, 217 275, 304, 325, 336, 515, 550:  
 Քելուզերեն 579:  
 Քենգուլերեն 197:  
 Քիրմանական լեզուներ 589:  
 Քրետոներեն XLI, 193, 216, 585:  
 Քուն մերսիկերեն, տե՛ս մերսիկերեն:  
 Կանչերեն 193, 585:  
 Քերմանական լեզվաբուն 275:  
 Քերմանական (հնում նաև տանուա կան) լեզուներ 207, 209, 300, 305 306, 312—314, 322, 359, 364 365, 383, 447, 448, 462 463 474, 505, 581, 585:  
 Քերմաներեն (հնում նաև ախտուն րեն) XIV, 114, 115, 125, 174 186, 187, 202, 204, 207, 208, 216, 229, 244, 250, 275, 276, 281, 289, 290, 298, 299, 304, 314, 317, 321—325, 350, 352, 359, 382, 393, 430, 440, 465, 482, 502, 515, 560, 566, 574, 586:  
 Քնյուերեն 357:  
 Քոթթական լեզուներ 304:  
 Քոթթերեն 180, 206—208, 211, 290, 298, 322, 357, 359, 396, 399, 475, 481, 586, 587:  
 Քրարար 196, 435, 449, 581:  
 Քրական աշխարհարար 449:  
 Քրենյանդական լեզուներ 304:  
 Քուալկուրու 590:  
 Քուարինի լեզու 201:  
 Քուլթերեն, տե՛ս գոթերեն:  
 Քանիերեն 189, 216, 312, 361:  
 Քասական լատիներեն 207, 353:  
 Քասական սանսկրիտ 360, 441:  
 Քորիական բարբառ 98, 583:  
 Քրամիզյան լեզուներ 157, 197, 200 369 452:  
 Ծրրայերեն XLI, XLVII, 105, 125 148—152, 194, 202, 203, 204 206, 253, 297 367:  
 Ծգիպտերեն XLIII, 130, 369, 416:  
 Ծղեսիայի բարբառ 130, 131:  
 Ծթովպերեն 153, 194, 195, 203:  
 Ծկեղեցասլավոներեն (տե՛ս նաև հին սլավոներեն) 133 180, 350 — 352, 382, 450, 582:  
 Ծվրոպական լեզուներ 192, 210 214—216, 218, 219, 304, 435, 498:  
 Ծվրոպայի գնչուական բարբառներ 579:  
 Ծվրոպայի հին դրուական լեզուներ 435:  
 Զենդերեն, տե՛ս ավեստայի լեզու:  
 Էդիսական բարբառ 98, 99:  
 Էպիկական սանսկրիտ 360, 441:  
 Էսկիմոսերեն 201:  
 Էսպերանտո 123:  
 Էստոներեն 193:  
 Էտրուսկերեն 580:  
 Ընդհանուր ուսմանական լեզու 365:  
 Քաթարական լեզուներ 214  
 Քաթարերեն 216:  
 Քամիլերեն 200:  
 Քայ լեզու 589:  
 Քայսական ընտանիք 589  
 Քալիլիսիի բարբառ 581:  
 Քյուրբական լեզուներ 152, 153, 213, 217, 369, 416:  
 Քյուրբ-թաթարական լեզուներ 451, 540, 541, 583:  
 Քրական-իլլիրական լեզվաբուն 275:  
 Քրակու-պելյագգա-հունական և լատինական լեզվաբուն (ընտանիք) 275, 305:  
 Քրակներեն 304, 305, 582:  
 Քրակյան լեզուներ 305:  
 Քյուրբերեն 152—154, 199:

ժողովրդական լատիներեն 207, 363, 364, 584, 585:

Ինդոնեզական լեզուներ 452:

Իռլանդերեն 216:

Իսպանական արարերեն 194:

Իսլանդերեն 203, 304, 305, 309, 311, 312, 360:

Իսպաներեն 124, 125, 182, 183, 193, 194, 205, 206, 216, 218, 364:

Իտալական բարբառներ 513, 584:

Իտալական լեզուներ 505, 583:

Իտալերեն XXVI, 116, 123, 124, 183, 202, 205, 206, 209, 216, 218, 364:

Իրանական լեզուներ 214, 361, 362, 442, 448, 449, 465, 579, 580:

Իրանական նախնական լեզու 449:

Լանդորարդների լեզու 586:

Լատներեն 589:

Լապլանդերեն 304:

Լատինական բնատանիք, տե՛ս լատինական լեզվաբուն:

Լատինական լեզվաբուն 275, 305:

Լատիներեն XII, XXVI — XXXI, XXXIII, XXXIV, XXXVI, XXXVII, 48, 50, 52, 56, 65, 75, 78, 91—97, 99, 101, 105, 109, 111, 112, 115, 117, 121, 123, 125, 172, 174, 176—180, 183, 184, 186, 190, 191, 193, 201, 204—207, 209, 210, 216, 227, 229, 253, 256, 258, 276, 281, 289, 297, 300, 305, 309, 315, 319, 322, 324, 340, 354, 357, 362, 363, 365, 398, 399, 443, 445, 447, 465, 475, 481, 497, 498, 503, 522, 583, 584:

Լատերերեն, տե՛ս լատիներեն:

Լատովերեն 193, 450, 461, 577:

Ղեսոգիական լեզուներ 214:

Ղեհերեն 133, 190, 191, 193, 352:

Լիտվական (գերմանա-սլավոնա-հյուսիս) լեզվաբուն 275:

Լիտվերեն 193, 289, 357, 382, 465, 475, 520, 521, 576, 577, 581, 582:

Լոպարերեն 193, 212:

Լուժիկերեն 582:

Կամբոջերեն 589:

Կավի լեզու 326, 452:

Կասսերեն 14:

Կասսինոկո-բորյան լեզուներ 589

Կարիբ 590:

Կելտա-գերմանական (կիմրական) լեզվաբուն 275:

Կելտական լեզվաբուն 275:

Կելտական լեզուներ 193, 291, 304, 358, 359, 392, 447, 448, 535:

Կելտա-սկյութական լեզուներ 212:

Կելտերեն 465:

Կիմրական (բրիտանական) «մայր-լեզու» 216:

Կիչուա լեզու 200:

Կիստինյան լեզուներ 214:

Կոչնի լեզու 126:

Կովկասյան լեզուներ 200, 212, 214, 305, 550, 589:

Հաբեթական լեզուներ 217:

Համիտական լեզուներ, տե՛ս իսթաական լեզուներ:

Հայերեն XV, XVII, XLII, XLVII, 21, 75, 78, 108, 123, 130, 195—197, 203, 209, 217, 300, 362, 399, 433, 448, 449, 557, 573, 579, 580:

Հայկազյան հայերեն 448:

Հարավ-ասիական (ավստրո-ուսինական) լեզուներ 588, 589:

Հարավ-աֆրիկյան լեզուներ 201:

Հարավային կովկասյան լեզուներ 291, 589:

Հարավային շինական բարբառներ 153:

Հարավային ֆրանկյան խոսվածքներ 570:

Հելլենա-հունական լեզվաբուն 275:

Հելլենական լեզու, տե՛ս հունարեն: Չիլիկներեն, տե՛ս հունարեն:

Հիմալայան լեզուներ 588:  
 Ճին անգլերեն, տե՛ս անգլո-սաքսոններն:  
 Հին քաղտրերեն, տե՛ս ավեստայի լեզու:  
 Հին բարձր գերմաներեն 207:  
 Հին գերմանական բարբառներ 585:  
 Հին եգիպտերեն 367:  
 Հին իսլանդերեն 586:  
 Հին իրանական լեզուներ 448:  
 Հին կելտական լեզուներ 585:  
 Հին հայերեն 137:  
 Հին հնդկական լեզուներ 156, 578:  
 Հին հնդկերեն 155, 213, 360, 440, 481:  
 Հին հունարեն 136, 209, 362, 522:  
 Հին նորվեգերեն 586:  
 Հին շվեդերեն 586:  
 Ճին պարսկերեն 211, 213, 448, 579:  
 Հին պրուսերեն 577, 581:  
 Հին ռուսերեն 209, 451:  
 Հին սաքսոներեն 299:  
 Հին սլավոններեն (տե՛ս նաև եկեղեցաւսլավոններեն, սլավոններեն) 133, 180—182, 289, 352, 353, 366, 450, 516:  
 Հին սկանդինավյան լեզուներ 359:  
 Հին վերին գերմաներեն 359:  
 Հինդուստանի լեզու 197:  
 Հյուսիսային լեզուներ 305:  
 Հյուսիսային իտալերեն 503:  
 Հյուսիսային թյուրքական (թյուրք-թաթարական) լեզուներ 212:  
 Հյուսիսային կովկասյան լեզուներ 589:  
 Հյուսիսային շինական բարբառներ 158:  
 Հնդգերմանական լեզուներ (տե՛ս նաև հնդկարոպական լեզուներ) 357, 383:  
 Հնդգերմանական նախալեզու (տե՛ս նաև հնդկարոպական նախալեզու) 399, 370:  
 Հնդկարոպական լեզվաճյուղեր 530:  
 Հնդկարոպական լեզվի՝ բարբառախմբեր 557:

Հնդկարոպական լեզուներ (տե՛ս նաև Հնդգերմանական լեզուներ) **XY, XVI, 192, 205, 217, 270, 290—292, 295—300, 323—325, 356, 357, 359, 360, 361, 364—366, 369, 370, 394, 386, 390, 394, 397, 398—400, 404, 405, 416, 425, 437, 439, 445, 447, 448, 449, 451, 456, 461, 463, 464, 466, 470—472, 474, 475—479, 481, 504—506, 520—523, 537, 540, 541, 551, 557, 571, 572, 574—577, 580, 581, 586, 587—588:**  
 Հնդկարոպական նախալեզու (տե՛ս նաև Հնդգերմանական նախալեզու) **XV, 299, 386, 440, 464, 467, 468, 471, 475, 481, 506, 522, 523, 533, 573, 576, 581:**  
 Հնդիրանական լեզուներ **312, 398, 441, 465, 476, 505, 522, 578:**  
 Հնդկական լեզուներ **197, 243, 440, 578:**  
 Հնդկաչինի լեզուներ **416, 588:**  
 Հնդկերեն **21, 23, 130, 257, 522, 523, 578:**  
 Հուանդերեն **XLIII, 189, 199, 208:**  
 Հոմերական հունարեն **481:**  
 Հոմոմ-սլավոններեն, տե՛ս ռումիներեն:  
 Հրեաների լեզու, տե՛ս եբրայերեն:  
 Հուաստեկերեն **200:**  
 Հունական բարբառներ **583:**  
 Հունարեն (հելլենական լեզու, հելլեններեն) **XXVIII—XXXII, XXXVI, 47, 48, 52, 56, 65, 75, 95, 96, 98, 99, 111, 115, 125, 128, 130, 132, 172, 176, 177, 178, 191, 193, 195, 201, 203, 204, 206, 209, 210, 216, 229, 253, 258, 276, 281, 289, 297, 298, 300, 301, 305, 309, 312, 315, 319, 322, 324, 354, 357, 362, 364, 367, 398, 399, 400, 440, 443, 445, 465, 474, 475, 481, 497, 498, 506, 557, 576, 577, 583:**

Հունգարերեն 193, 212, 216, 275, 515:  
Հուրոներեն 201:  
Ղպտերեն 195, 367, 368:  
Ղրիմի գոթերեն 189:  
Ճապոներեն 159—162, 199:  
Մագադհի լեզու 155:  
Մալայան լեզուներ 213:  
Մալայա-պոլինեզյան լեզուներ, տե՛ս ավստրոնեզիական լեզուներ:  
Մալայերեն 199, 571:  
Մահարաշտրի լեզու 155:  
Մանդե նեգրերի լեզուներ 407, 415, 452:  
Մանիպուրչիտագոնգյան լեզուներ 589:  
Մանջուրական լեզուներ 212, 451:  
Մեխանեզյան լեզուներ 589:  
Մեքսիկայի բնիկների լեզու, տե՛ս մեքսիկերեն:  
Մեքսիկոնեն (քուն մեքսիկերեն, մեքսիկայի բնիկների լեզու) 200:  
Միչին բրետոներեն 585:  
Միչին հայերեն 129, 580:  
Միչին հնդկական լեզուներ 578:  
Միչին լինարեն 198:  
Միջին վերին գերմաներեն 482:  
Մոխոներեն 201:  
Մոն-աննամյան ընտանիք 589:  
Մոնղոլական լեզուներ 212, 217, 451:  
Մոնղոլերեն 129, 153, 154, 369, 416:  
Մոն-քմեր լեզուներ 589:  
Մշո բարբառ 581:  
Մունդա լեզուներ 589:  
Ֆակոտերեն 553:  
Նախաբալթիկ-սլավոնական լեզուներ 520:  
Նախագերմաներեն 585, 586:

Նախասլավոներեն 520, 521:  
Նեպալյան լեզուներ 589:  
Ներքին բրետոներեն 275:  
Նիդեռլանդերեն 178:  
Նիկոբարներեն 589:  
Նոր հայերեն (արդի հայերեն, աշխարհաբար) 196, 433:  
Նոր իրանական լեզուներ 579:  
Նոր հնդկական լեզուներ 157, 197, 578:  
Նոր հունարեն 193, 319:  
Նորվեգերեն 216, 312:  
Շաներեն 589:  
Շաուրասնի լեզու 155:  
Շոտլանդերեն 322:  
Շվեդերեն 190, 216, 312:  
Շումերերեն 12—14:  
Չեխերեն 181, 191, 366, 582:  
Չերքեզերեն 211:  
Չինական ընտանիք 589:  
Չինարեն 108, 156, 158—163, 198, 199, 325, 416, 429, 571:  
Չին-տիբեթական լեզուներ 369, 370, 452, 588:  
Չուդյան լեզվաբուն 275:  
Պալեոասիական (հնասիական) լեզուներ 213:  
Պահլավերեն 305, 448:  
Պալշալի լեզու 155:  
Պապուասների լեզուներ 550:  
Պարսկերեն 47, 130, 153, 197, 207, 209, 210, 217, 276, 289, 305, 319, 361:  
Պելագական լեզվաբուն 275:  
Պոլինեզիական լեզուներ 416, 452:  
Պորտուգալերեն 197, 364:  
Պրակրիտ լեզու 155:  
Պրամալակկայի լեզուներ 589:  
Պրովանսալերեն 277, 364, 365, 588:  
Պրուսերեն 290, 521, 531:  
Ռետոռոմաներեն 503, 585:  
Ռոմանական բարբառներ 503, 568:

Ռումանական լեզուներ 201, 205—  
207, 363—365, 448, 474, 503,  
508, 515, 584, 585:  
Ռուսերեն V(ի) XIII, XV—XVIII.  
21, 123, 180, 181, 191, 192, 202,  
208, 209, 235, 278, 279, 350,  
351, 353, 362, 366, 419, 425,  
437, 450, 520:  
Ռումիներեն (վալախերեն, հոմոս-  
ոլավոներեն) 275, 364, 585:

Սամարերեն 203:

Սամոյեդական լեզուներ 211 212  
369, 451, 587:

Սանսկրիտ XII, 22, 23, 25, 110  
136, 155—157, 159, 160—162  
197, 209—211, 266, 275—278  
289—291, 294, 297—299, 301  
312, 313, 318, 319, 325, 330  
357, 357, 361, 392, 393—400  
432, 437, 439, 441 463, 465  
475, 521, 578, 579:

Սաքսոնական խոսվածքներ 570:

Սեմական լեզուներ 130, 194, 711,  
357, 369, 386, 416, 451, 571,  
574, 587:

Սեմա-բամական լեզուներ 586:

Սեմիտների լեզուներ, տե՛ս սեմա-  
կան լեզուներ:

Սերբա-խորվաթերեն (տե՛ս և սեր-  
բերեն) 181, 520:

Սերբերեն (տե՛ս և սերբա-խորվա-  
թերեն) 203, 352:

Սիամերեն 589:

Սիլոնց (լեզու) 589:

Սինդհալերեն 579:

Սիրբիմյան լեզուներ 589:

Սլավոնա-լիտվական լեզուներ (տե՛ս  
և րալթիկ-սլավոնական լեզուներ)  
462:

Սլավոնական (լեզու, լեզուներ),  
տե՛ս սլավոներեն, սլավոնական  
լեզուներ:

Սլավոնական լեզուներ 179, 190, 203  
216 275 304 358 359, 368

419, 448, 450, 461, 465, 520,  
521, 531, 576, 578, 582:

Սլավոնական «մայր լեզու» 216:

Սլավոնական նոր լեզուներ 181

Սլավոնա-ռուսական լեզու (տե՛ս և  
ռուսերեն) 366:

Սլավոներեն (սլավոնական լեզու),  
տե՛ս և հին սլավոներեն, սլա-  
վոնական լեզուներ) 132, 179, 180,  
182, 209 300, 350—353, 366,  
465:

Սկանդինավյան լեզուներ 312 359:

Սկյութական լեզուներ 217

Սոգդերեն 107:

Ստորին լատիներեն (հին ֆրանսի-  
երեն) 178:

Սուգամի նեղրեյի լեզուներ 550

Վալախերեն, տե՛ս ռումիներեն:

Վալխսերեն (ուելսերեն) 193, 275

Վանդալների լեզու 586:

Վեդայական լեզու, տե՛ս վեդայա-  
կան հնդկերեն:

Վեդայական հնդկերեն (վեդայական  
լեզու, վեդաների լեզու, մեդայե-  
րեն) 22, 441, 360, 481, 578:

Վեդայերեն, տե՛ս վեդայական  
հնդկերեն:

Վեդաների լեզու, տե՛ս վեդայական  
հնդկերեն:

Վերին գերմանական (լեզու), տե՛ս  
վերին գերմաներեն:

Վերին գերմաներեն 186, 322 323—  
325, 570:

Վոլապուկ 123:

Վրացական լեզուներ 214:

Վրացերեն 200, 203, 217 370:

Տազարոցերեն 201:

Տարասկերեն 201:

Տատոնական լեզուներ, տե՛ս գեր-  
մանական լեզուներ:

Տատոնալերեն, տե՛ս գերմաներեն:

Տիրեթա-բլրամահական բնուանիք 589:

Տիրեթական լեզուներ 212:

**Տիրքերեն** 156, 369, 589:  
**Տոնակերեն** 200:  
**Տոսկանի բարբառ** 124, 183, 184:  
**Տունգուսական լեզուներ** 212, 369, 451:  
**Տունգուսա-մանջուրական լեզուներ** 211:

**Ուկրաիներեն** 182:  
**Ումբերեն** 447, 584:  
**Ուլղուրերեն** 107:  
**Ուրալա-ալթայական լեզուներ** 211, 217, 305, 369, 451, 550, 587:

**Փյունիկերեն** 203:  
**Փոյուգերեն** XLIII:

**Քաղզերեն, տե՛ս արամեերեն:**  
**Քամական (Համխոտական) լեզուներ** 367, 368, 369, 587:  
**Քամա-սիմական լեզուներ** 367, 369, 451:  
**Քասսան լեզուներ** 589:  
**Քրդերեն** 197:

**Օսական լեզուներ** 214:  
**Օսերեն** 579:  
**Օսկերեն** 447, 584:  
**Օսկ-ումբրյան բարբառներ** 584:  
**Օվկիանյան լեզուներ** 200, 201, 550:

**Ֆիննական լեզուներ** 212, 304:  
**Ֆիննա-ուգրական լեզուներ** 193, 211, 212, 217, 369, 416, 451, 587, 588:

**Ֆիններեն** 193, 216, 304, 581:  
**Ֆլամանդական (լեզու). տե՛ս ֆլամանդերեն:**

**Ֆլամանդերեն** 189, 204:  
**Ֆլորենտինյան բարբառ** 124:  
**Ֆրանկյան բարբառ** 564, 570:  
**Ֆրանկերեն, տե՛ս ֆրանկյան բարբառ:**  
**Ֆրանսերեն** XXVI, 115—117, 125, 178, 184—186, 188, 190, 201, 205, 206, 207, 216, 229, 253, 254, 364, 503, 568, 585:

**Ֆրանսիական բարբառներ** 513:  
**Ֆրիզերեն** 207:





## ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ներածություն

	<i>Էջ</i>
1. Լեզվաբանության պատմությունը համառոտ ճեպագրությամբ	VII
Լեզվաբանության պատմությունը և նրա ուսումնասիրության հարցերը	VII
Լեզվաբանության պատմության ամբողջական շարադրանքները	VII
Լեզվաբանության պատմության առանձին շրջաններին նվիրված աշխատությունները	XII
Լեզվաբանության պատմության հարցերը ընդհանուր լեզվաբանական աշխատություններում ու ձեռնարկներում	XIV
Մասնակի և առանձին լեզվաբանությունների պատմությունը նվիրված աշխատությունները	XV
Լեզվաբանության պատմության հարցերին նվիրված մենագրություններն ու հոդվածները	XVII
2. Լեզվաբանության պատմության պեթիոլոգիայի հարցերը	XVIII
Լեզվաբանության պատմության տրագիկոն պեթիոլոգիան	XVIII
Լեզվաբանության պատմության՝ ներկա աշխատության մեջ կիրառվող պեթիոլոգիայի սկզբունքները	XX
Լեզվաբանության պատմության 3 շրջանների բնորոշ գծերը	XXX
3. Մարդկության նախալեզվաբանական պատմությունը	XXXI
Լեզվական հարցերը ժողովրդական բանահյուսության մեջ	XXXVII
Լեզվի ծագման հարցը	XXXVIII
Լեզուների բաղադրանքության առաջացման և լեզուների փոխհարաբերության հարցերը	XL
Գենդանական «լեզվի» («լեզուների») դոյություն և մարդկային լեզվի հետ նրա ունեցած փոխհարաբերության հարցը	XLIII
Լեզվի էություն, դերի և հատկությունների հետ կապված հարցերը	XLV

Ա

ՍՏԱՏԻԿ-ՎԵՐԼՈՒՄԱԿԱՆ ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
 ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

(Հին լեզվաբանություն լեզվաբանական գիտելիքների  
 սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջը)

ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆ  
 (Հին դարեր)

Ազատսեբոբիտական իզոլյացիոնիզմ	
Ներածական սեղեկություններ	3
Լեզվաբանական ինքնուրույն կենտրոնների գոյացման նախադրյալները և պայմանները	3
Լեզվաբանական ուսումնեքների զարգացման էտապները	5
Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	5
I. Եզրպատկան լեզվաբանություն	8
1. Ընդհանուր սեղեկություններ	8
Լեզվական գիտելիքների զարգացման պատճառները	8
Եզրպատկան գրերը	9
Իլլյակտիկ և ֆիլոլոգիական լեզվաբանություն	10
Եզրպատկան գրերի ուսուցումը	10
Մայրենի լեզվի ալ կողմից ուսուցումը	10
Օտար լեզուների ուսուցումը	10
Լեզվաբանական գիտելիքների զարգացումը	11
II. Շումերա-ակկադական լեզվաբանություն	12
1. Ընդհանուր սեղեկություններ	12
Լեզվական գիտելիքների զարգացման պատճառները	12
Գրության սխեման	
2. Իլլյակտիկ և ֆիլոլոգիական լեզվաբանություն	14
Գրաբանություն	14
Բառարանագրություն	14
Տեքստերի բանասիրական-քերականական մեկնությունը	15
Գրադարանագիտություն	16
III. Չինական լեզվաբանություն	16
1. Ընդհանուր սեղեկություններ	16
Լեզվական գիտելիքների զարգացման պատճառները	16
Չինական գրերը	17

2. Հիբոգոգիֆոսցրոսական-ֆիլոսոփական լեզվաբանություն	17
Զինական հիբոգոգիֆ սզբուությունը	17
Բառարանագրություն	19
3. Փիլիսոփայության լեզվաբանություն (օճոմսիսիկա)	19
Ընդհանուր տեղեկություններ	19
Լեզվական հարցերը մոխասական ֆիլիսոփայության մեջ	19
IV. Հնդկական լեզվաբանություն	21
1. Ընդհանուր տեղեկություններ	21
Հնդկական լեզվաբանության նշանակությունը	21
Վեդաները և նրանց զերբ հնդկական լեզվաբանության սկզբնավորման մեջ	21
2. Ֆիլոլոգիական լեզվաբանություն	22
Լեզվաբանական հարցերը վեդանդներում	
Պանինի	
Պանինիի մեղնաբանները՝ Կատյայանա, Պատանջալի, Բհարտրհարի	25
Հնդկական քերականական սիտեմի ընդհանուր բնութագրերը	25
Բառարանագրություն	30
Ոճարանություն	30
3. Փիլիսոփայական լեզվաբանություն	30
Լեզվական հարցերը հնդկական ֆիլիսոփայության մեջ	30
Ջայնիզմ	32
Շյայայի ֆիլիսոփայությունը	33
Ստնջայի ֆիլիսոփայությունը	35
Միմանսայի ֆիլիսոփայությունը	35
V Անգլի (հունո-հռոմեական) լեզվաբանություն	36
1. Փիլիսոփայական լեզվաբանություն	36
ա. Փոճուի և Պոլոնի շուրջը տարվոյ վեճերը հին Հունաստանում	36
Լեզվաբանական ուսմունքները դարպսցման նախադրյալները և սկզբնական բնույթը	36
Փոլոնի և Սոկրատի շուրջը տարվոյ վեճերը	38
Հերակլիտ	39
Էրեական (էրիսթեների) դպրոցը	39
Դեմոկրիտ	40
Պլատոնը և նրա «Կրատիոս» երկախոսությունը	40
Արիստոտել	41
Ստոիկներ	41
Սկեպտիկներ	42
Էպիկուրյաններ	42
Ամփոփման և խմբավորման փորձեր	42
բ. Անալոգիստների և անոմալիստների վեճերը հելլենիստական Հունաստանում	44
Վեճի էությունը	44

Վեճի դերը հունական քերականության ձևալորման մեջ .	44
Վեճի հարթումը	45
ա. Լեզվի (անուսանների) ծագման տեսությունները հին Հուսաստանում	45
Ձայնարկությունների տեսության սաղմերը	45
Բնաձայնական տեսության սաղմերը .	46
Լեզվի հասարակական ծագման տեսության սաղմերը	46
Լեզվի՝ ձեռքերովի՞, թե՞ բնածին լինելու հարցը	47
դ. Լեզվափոխության հարցերը հին Հռոմում	47
Հունական ազդեցությունը	47
Φύσει-ի ու Ήθει-ի և անալոգիայի ու անոմալիայի շուրջը տարվող վեճերի արձագանքները Հռոմում	48
Լեզվի ծագման հարցը Լուկրեցիոս Կարոսի մոտ	49
ե. Պատրիստիկական-աստվածաբանական լեզվաբանություն	50
Անունների և իրերի փոխհարաբերության հարցը: Ավդուս-տինոս	50
Լեզվի ծագման հարցը	51
զ. Ստուգաբանական ուսումնը քննելը	52
Ստուգաբանական ուսումնը քննելի առաջացման պայմանները	52
Անտիկ ստուգաբանություն թերությունները	52
Φύσει-ի և Ήθει-ի կողմնակիցները և ստուգաբանությունը	53
Ստուգաբանական փորձերը հունական փոխաբանություն մեջ	53
Հին հույների ստուգաբանական վերլուծության առանձնահատկությունները	54
Ստուգաբանությունը հին Հռոմում	55
Անտիկ ստուգաբանություն սկզբունքները	55
2. Լեզվա-ոճական հարցերը ճարտասանության մեջ	57
Մայրենի լեզվի ուսուցումը և «ճարտասանական արվեստը» Էլեաթների և սոփեստների դերը ճարտասանության և ոճաբանության զարգացման մեջ	57
Իսկրատեսի և Անաքսիմենեսի ճարտասանական-ոճաբանական ձեռնարկները	58
Արիստոտել	59
Քեոֆրաստես	61
Ճարտասանության և ոճի հարցերը հելլենիստական Հուսաստանում	62
Ճարտասանության և ոճի հարցերը հին Հռոմում	66
Յ. Քերականություն («քերականական արվեստ»)	68
ա. Քերականական հարցերը հունական դիդակտիկ լեզվաբանության և փոխաբանական լեզվաբանության (օնոմատիպիայի) մեջ .	68
Հունական քերականությունը և նրա առաջացման նախադրյալները	68

Գրի ուսուցումը և «տառերի ուսմունքը»	69
Դեմոկրիտ	71
Պլատոն	72
Արիստոտել	73
Ստոիկներ	76
<b>բ. Ֆիլոլոգիական քերականությունը հելլենիստական չուստանում</b>	<b>79</b>
Բանասիրական աշխատանքը և նրա դերը քերականության ձևալրման մեջ	79
Պերգամի և Ալեքսանդրիայի քերականական դպրոցները	80
Դիոնիսիոս Թրակացին և նրա «Քերականական արվեստ» աշխատությունը	81
Հելլենիստական շրջանի հետագա քերականները	86
Ապոլլոնիոս Դիսկոլոսը և նրա «Շարահյուսության մասին» աշխատությունը	87
<b>գ. «Քերականական արվեստը»-ի նկատմամբ</b>	<b>90</b>
Հռոմայեցիների քերականական առաջին տեղեկությունները	90
Վառոն	91
Ռեմիոս Պալեմոնը և ալեքսանդրյան քերականական սիստեմի ներմուծումը	91
Լատիներենի հետագա քերականները. Դոնատոս և Պրիսցիանոս	91
Լատինական քերականության առանձնահատկությունները	93
Անտիկ քերական կան տեսության քննադատության փորձերը. Սեքստոս Հիպոլիտոս	97
<b>4. Բարբառագիտական հարցերի մեակումը</b>	<b>98</b>
Հունական բարբառները և հույների բարբառագիտական առաջին ըմբռնումները	98
Բարբառագիտական ուսումնասիրություններ.	98
<b>Գրականություն առաջին ենթաշրջանի վերաբերյալ</b>	<b>100</b>

## ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՇՐՋԱՆ

(Միջին դարեր)

### Ապրիորիսական դոգմասիզմ

Ներածական սեղեկություններ	103
Լեզվաբանական ազդեցության սահմանափակ ոլորտները չոյացման նախադրյալները և պայմանները	103
Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները	108
Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	110
<b>I Լատինական ազդեցության ոլորտ</b>	<b>111</b>
1. Գիդակսիկ-ֆիլոլոգիական լեզվաբանություն	111
Լեզվի ուսուցումը	111
Միջնադարյան քերականությունը	113
Բառարանագրություն	118

2. Սխոլաստիկական-փիլիսոփայական լեզվաբանություն	117
<i>Ընդհանուր տեղեկություններ</i>	117
<i>Նոմինալիստների, աեալիստների և կոնցեպտուալիստների վեճերը</i>	119
<i>Փիլիսոփայական «հայեցողական» քերականությունները</i>	120
<i>Սրեստական լեզվի հարցը</i>	123
3. Կենսեթկական-բնագյուսմական լեզվաբանություն	123
<i>Դանթեի լեզվաբանական գործունեությունը</i>	123
<i>Ռոջեր Բեկոն</i>	125
II. Հունա-բյուզանդական ազդեցության ոլորտ	126
1. Հունա-բյուզանդական լեզվաբանություն	126
<i>Քերականություն և ճարտասանություն</i>	126
<i>Բարբառագիտական աշխատություններ</i>	127
2. Հայ լեզվաբանություն	127
<i>Հայ լեզվաբանության սկզբնավորման նախադրյալները և պայմանները</i>	127
<i>ՓՅՅԵԼ-ի և ՅԵՅԵԼ-ի վեճերի արտացոլումը</i>	128
<i>Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանությունը և առաջին մեկնությունները .</i>	128
<i>Քերականական և ուղղագրական աշխատությունները XI—XV դդ.</i>	128
<i>Լեզուների բազմազանության հարցի մեկնաբանությունը</i>	129
3. Ասորական լեզվաբանություն	130
<i>Ասորական լեզուն և գրականությունը</i>	130
<i>Ասորական քերականության սկզբնավորումը</i>	131
<i>Ասորական քերականություններն ու բառարանները VII—XI դդ.</i>	131
<i>Արարական քերականական սխտեմը ասորերենի նկատմամբ կիրառելու փորձերը</i>	132
4. Սլավոնական լեզվաբանություն	132
<i>Պրաբր Չեռնոգիեցը և նրա «Խոսք սլավոնական զրբերի մասին» աշխատությունը</i>	132
<i>Քերականական աշխատություններ</i>	133
<i>Բառացանկեր</i>	133
<i>Ուղղագրական հարցեր</i>	133
III. Արաբական ազդեցության ոլորտ	133
1. Արաբական լեզվաբանություն	133
<i>Ա. Լեզվի ծագման տեսություններ</i>	133
<i>Լեզվի (արաբերեն լեզվի) ծագման հարցը</i>	133
<i>Բ. Դիզակտիկ-ֆիլոլոգիական լեզվաբանություն</i>	135
<i>ա. Քերականություն</i>	135
<i>Արաբական լեզվաբանությունը և նրա սկզբնավորման նախադրյալները</i>	135
<i>Արաբական քերականական սխտեմի առանձնահատկությունները</i>	137

Արաբ քերականները մինչև Սիրավեյդու հանդես զալը	139
Բասրայի և Կուֆայի գուրոցները	140
Սիրավեյդին և նրա քերականական գործունեությունը	142
X—XII դդ. արաբական քերականությունը	143
Արաբական քերականությունը XIII—XV դդ.	145
<b>բ. Բառարանագրություն</b>	146
Արաբական բառարանագրությունը և նրա արժեքը	146
Ալ-Ջաուհարիի և ալ-Էհրավիի բառարանները	146
Ալ-Ֆիրուզաբադիի բառարանները	146
Արաբական բառարանագրության թերությունները	147
<b>2. Ոչ արաբական լեզուների ուսումնասիրությունը</b>	147
<b>ա. Եբրայական լեզվաբանություն .</b>	147
Ընդհանուր տեղեկություններ .	147
Եբրայական քերականությունը և բառարանագրությունը	150
<b>բ. Թյուրքական լեզուների, մոնղոլերենի, պարսկերենի ուսումնասիրությունը</b>	152
Ընդհանուր տեղեկություններ	152
Մահմուդ Կաշգարին և նրա դերը թյուրքագիտության մեջ	153
Մոնղոլերենի ուսումնասիրությունը	154
<b>IV. Հնդկական ազդեցության ոլորտ</b>	154
<b>1. Հնդկակա՛ր լեզուների ուսումնասիրությունը (հնդկական լեզվաբանություն)</b>	154
Քերականություն և բառարանագրություն	154
<b>2. Ոչ հնդկական լեզուների ուսումնասիրությունը</b>	157
Գրավիդյան լեզուների ուսումնասիրությունը	157
<b>V. Զինական ազդեցության ոլորտ</b>	157
<b>1. Զինական լեզվաբանություն</b>	157
Հնչյունաբանական հարցեր	157
Բառագիտական-իմաստաբանական, քերականական և ոճաբանական հարցեր	158
<b>2. Ոչ չինական լեզուների ուսումնասիրությունը</b>	159
Ճապոնական լեզվաբանություն	159
Կորեական լեզվաբանություն	163
Պրականություն երկրորդ ենթաշրջանի վերաբերյալ	164

ԵՐԿՐԱՆՈՒԹՅՈՒՆ

(Վերածնունդի շրջան և XV—XVIII դդ.)

Էմպիրիկ-սեխնիկական և ռացիոնալիստական ունիվերսալիզմ	
Նեոսոցրատական սեխնիկություն	167
Լեզվաբանական սահմանափակումի շրջանի վերացման նախադրյալները և պայմանները	167
Լեզվաբանական ուսումնասիրության զարգացման էտապները	170
Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	170



Ի. Ֆիլոլոգիական և գրական-հնչարարական լեզվաբանություն	176
1. Հնագիլոլոգիա	176
ա) Դասական ֆիլոլոգիա	176
Հունարենի ուսումնասիրության թյունը	176
Լատիներենի ուսումնասիրության թյունը	177
բ) Սլավոնական ֆիլոլոգիա	179
Հին սլավոներենի ուսումնասիրության թյունը	179
2. Նեոֆիլոլոգիա .	182
Լատինատիպի և ոչ-լատինատիպի քերականություններ	182
ա) Ռոմանական ֆիլոլոգիա	182
Իսպաներենի առաջին քերականության, բառարանի և ուղղագրական կանոնների կազմումը Անտոնիո դե-Լեբրիխի կողմից	182
Իտալերենի առաջին քերականությունները. Ֆորտունիո, Բեմբո, Բուոմաստուեի	183
Ֆրանսերենի առաջին քերականությունները. Պալսգրավ, Ժակ Դյուրուա, Մեյլեր, Ռամբուս	184
Ռոմանական լեզուների գրական նորմավորման հարցերը. բառարանագրություն	185
բ) Գերմանական ֆիլոլոգիա	186
Գերմաներենի առաջին քերականությունները, տեսարանները և բառարանագիրները. Կլայս, Շոտտել, Գոտշեդ, Ադելունգ	186
Անգլերենի ընդհանրությունները, բառարանագիրները և տեսարանները XVI—XVIII դդ. Գիլլի Ռոլլիս, Ջոնսոն և ուրիշներ	188
Հրեաներենի առաջին քերականությունները և բառարանը Ղը՛մի գոթերենի վկայությունները	189
Գանձերենի քերականությունները, բառարանագիրները ու տեսարանները XVI—XVIII դդ.	189
Եվեգերենի բառարաններն ու քերականությունները XVII—XVIII դդ.	190
գ) Նեոսլավոնական ֆիլոլոգիա	190
Լեհերենի քերականություններն ու բառարանները XVI—XVIII դդ.	190
Չեխերենի բառարանները և քերականությունները Ռուսերենի քերականությունները, բառարանները և ուղղագրությանը նվիրված ուսումնասիրությունները XVII—XVIII դդ., Լոմոնոսովի «Ռուսական քերականության» «Ռուսական ակադեմիայի բառարանը»	191
դ) Եվրոպական այլ լեզուների ուսումնասիրություններ	193
Հնդկարոպական լեզուներ	193
Ոչ հնդկարոպական լեզուներ	193

<b>Յ. Արևելյան և զազութային ֆիլոլոգիա</b>	<b>194</b>
ա) Սեմական ֆիլոլոգիա	194
բ) Հայագիտություն	195
գ) Հնդիրանագիտություն	197
դ) Աինագիտություն	198
ե) Ճապոնագիտություն	199
զ) Արևելյան այլ լեզուների ուսումնասիրություն	199
է) Ամերիկանիստիկա և աֆրիկանիստիկա, օվկիանյան լեզուների ուսումնասիրություն	200
<b>ԻԼ. Ստուգաբանական-գուղաղբական լեզվաբանություն</b>	<b>201</b>
1. Ստուգաբանական ուսմունքներ	201
2. Երբայական հիպոթեզը և ղեզուների ներդասնակությունը	202
Լեզուների երբայական ծաղման հարադրումը XVI դ. լեզուների երբայական ծաղման դրույթի ապացուցման փորձերը XVII—XVIII դդ.	204
3. Ցեղակից լեզուների պատճառ-համեմատական ուսումնասիրության վաղ փորձերը	205
ա) Հնդեւրոպական լեզուներ	205
Ռոմանական լեզուներ	205
Գերմանական լեզուներ	207
Սլավոնական լեզուներ	208
Հայերենի և այլ լեզուների ընդհանրությունների հարցը	209
Սանսկրիտի և եվրոպական մի շարք լեզուների ցեղակցություն հարցի առաջընթացը	209
բ) Ոչ-հնդեւրոպական լեզուներ	211
Սեմական լեզուների ցեղակցության հարցը. Հ. Լուդուֆ «Ուրալա-ալթայան» լեզուների ցեղակցության հարցը.	211
Ֆ. Ստրալենբերգ, Ս. Դյարմաթի	211
4. Հավաքական-գուղաղբական աբխասացներ	212
Տարբեր լեզուների փաստերի հավաքման և զուգադրման աշխատանքը	212
Պ. Ս. Պալլասի բազմալեզվյան բառարանները. Ս. Յ. Կլաուսի գրախոսականը	213
5. Լեզուների աբխաբնագրական-ժաղումարանական ընդհանուր դասակարգման փորձերը	215
Եվրոպայի լեզուների դասակարգման փորձերը	215
Լայնիցը և Շնախալեզվի վերականգնման գաղափարը	217
Հերմանի ընդհանուր-դասակարգողական աշխատությունը	218
<b>ՈՂ. Փիլիսոփայական-տրամաբանական լեզվաբանություն</b>	<b>219</b>
1. Փիլիսոփայական-գրագիտական ուսմունքներ	219
ա) XVII դ. Լմպիրիկ-մատերիալիստական ուսմունքները	219
Ներածական դիտողություններ	219
Ֆրենսիս Բեկոն	220
Հորբս	221
Ջոն Լոկ	223

բ) XVІІ դ. ռազիոնալիստական-իդեալիստական ուսմունքները	225
Ներածական զիտողություններ	225
Լեզվի հարցերը կարտեզիանական փիլիսոփայության մեջ	
Դեկարտ	226
Լայբնից	227
գ) XVІІІ դ. մեխանիստական ուսմունքները	230
Ներածական զիտողություններ	230
Կոնդիլյակ	230
Դը-Բրոս	234
Ընդհանրական (փիլիսոփայական) լեզվի ստեղծման փորձերը	236
դ) XVІІІ դ. պատմա-մարդաբանական ուսմունքները	236
Ներածական զիտողություններ	236
Ժան Ժակ Ռուսսո	238
Մոպերտյուփ	241
Ադամ Սմիթ	242
Մոնրոզո	243
Հերդեր	244
Տիդեման	248
Տետենս	248
Ջուլցեր	249
Ադելունգ	249
Ջ. Վիկո	250
2. Ընդհանրական փիլիսոփայական երականություններ	251
Նախնական զիտողություններ	251
Պոր-Ռոյալի քերականությունը	252
Ընդհանրական-փիլիսոփայական և ռազիոնալիստական-տրամաբանական քերականությունները հետագայում. Ժիրար, Բոզե, Հաուս, Փրիստլի, Հոռն Թուկ	254
Դրականություն երրորդ ենթաշրջանի վերաբերյալ	259

Բ

**ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ**

(Նոր կամ «դասական» լեզվաբանություն — XIX դար)

ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆ

(XIX դ. I կեսը)

Մագումարանական (գեներտիկական) կոմպարատիվիզմ	
Ներածական օրհանգրվուններ	265
Ենթաշրջանի լեզվաբանական կոնցեպցիաները և նրանց ձևավորման ընդհանուր նախադրյալներն ու պայմանները	265

Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները	269
Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	270
Ընդհանուր-դասակարգողական լեզվաբանությունը XIX դ. սկզբում. Աղելունդ և Ֆատեր	274
Սանսկրիտի ուսումնասիրությունը. լեզուների ձևաբանական դասակարգումը. Ֆ. և Ա. Շելդելներ	275
XIX դ. I կեսի ստատիկ-վերլուծական լեզվաբանությունը. տրամաբանական բերականություն	278
Ա. Ֆ. Բենհարդին և նրա ընդհանուր-լեզվաբանական ու բերականագիտական ուսմունքը	281
Կ. Բեկկերի բերականադիտական ուսմունքը	283

I. Պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադրումը. լեզվաբանական ուղղություններ և կոնցեպցիաներ

1. Մեխանիստական նշանակություններ	287
Ներածական դիտողություններ	287
Ֆրանց Բոպպ	289
2. Կուլուր-պատմական ուղղություն (կուլուր-իստորիզմ)	301
Ներածական դիտողություններ	301
Ռասմոս Ռասկ	303
Յակոբ Գրիմ	313
Վիլհելմ Ֆոն-Հումբոլդտ	325
Հումբոլդտի կոնցեպցիայի քննադատությունը Չերնիշևսկու կողմից	349
3. Բանասիրական ուղղություն (Ֆիլոլոգիզմ)	350
Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Վոստոկով	350

II. Լեզվաբանական առիասանցի առանձին բնագավառներ

1. Ընդհանուր լեզվաբանություն և լեզվափիլիսոփայություն	353
Լեզվի զարգացման տեսություններ. Յա. Ն. Բրեդադորֆ, Խ. Ն. Մադվից, Ֆր. Վյուններ	353
Հնչյունաբանություն	356
2. Հնգիրոսական լեզվաբանություն	356
ա) Ընդհանուր հարցերի ուսումնասիրությունը	356
Հնդերոսական լեզուների ստուգաբանության հարցերը. Ա. Ֆ. Պոտտ	356
Լեզվաբանական հնչաբանության հիմնադրումը. Ադալբերտ Կուն	358
Հնդերոսական հնչյունական հերթադաշտության և շեշտի ուսումնասիրությունը	359
բ) Առանձին լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրությունը	360
Հնդիրանական լեզուներ. պարսկական սեպագիր արձանագրությունների վերծանումը	360
Հայերեն	362
Դասական լեզուներ (հին հունարեն և լատիներեն)	362
Ռոմանական լեզուներ. Ֆր. Դից	363

Ֆերմանական լեզուներ	365
Բալթիկ-սլավոնական լեզուներ	365
Ալբաներեն	366
2. Ոչ-հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությունը	367
Քամա-սեմական լեզուներ. եգիպտական հիերոգլիֆներին և ասուրական սեպագրերին ընթերցումը. եգիպտագիտություն	367
«Ուրալա-սլավոնական» լեզուներ. ֆիննա-ուգրական և սամոյեդական լեզուների ցեղակցություն հարցը	369
Այլ լեզուներ	369
Պրականություն առաջին ենթաշրջանի վերաբերյալ	371

ԵՐԿՐՈՐԳ ԵՆԹԱՇՐՋԱՆ  
(XIX դ. III քառորդը)

Վերականգնողական (ոեկոնոստոկսիպիսական) կոմպարատիվիզմ Ներածական սեղեկություններ	374
Ենթաշրջանի լեզվաբանական ուղղությունները և նրանց ձևավորման նախադրյալներն ու պայմանները	374
Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները	377
Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	378
I. Լեզվաբանական ուղղություններ և կոնցեպցիաներ	378
1. Նասուր-բիոլոգիզմ	378
Ներածական դիտողություններ	378
ա) Կենսաբանական (բիոլոգիական) նատուրալիզմ	381
Ավգուստ Շլայխեր	381
բ) Բիոլոգիզմ	400
Մաքս Մյուլլեր	400
2. Հոգեբանական ուղղություն (պսիխոլոգիզմ)	405
Ներածական դիտողություններ	405
Հայման Շտայնթալ	406
Ալեքսանդր Աֆանասևիչ Պոտերնյա	419
3. Կոլտուր-էվոլյուցիոնիզմ	427
Ուեյլամ Դուայտ Ուիտնի	427
Վիլհելմ Շերեր	430
Ֆյոդոր Իվանովիչ Բուսլակ	431
Արսեն Այսերնյան	433
Պոդոս Հովհանյան	436
II. Լեզվաբանական աեխասանի առանձին բնագավառներ	438
1. Ընդհանուր լեզվաբանություն	438
Հնչյունաբանություն. Բրյուկկե	438
2. Հնդեվրոպական լեզվաբանություն	439
ա) Ընդհանուր հարցերի ուսումնասիրությունը	439
Լեզվաբանական հնչաբանություն	439

	Համեմատական հնչյունաբանություն. Գրասմանի Երենքը	440
բ)	Աւանձին լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրությունը	441
	Հնդիրանական լեզուներ	441
	Հունարեն և լատիներեն. Գ. Կուրցիոս	443
	Գերմանական լեզուներ	447
	Կելտական լեզուներ	447
	Հայերեն	448
	Բալթիկ-սլավոնական լեզուներ	450
Յ.	Ոչ-հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությունը	451
	Քամա-սեմական լեզուներ	451
	«Ուրալա-ալթայան» լեզուներ	452
	Այլ լեզուներ	452
Գրականություն	Երկրորդ ենթաշրջանի վերաբերյալ	453

**ԵՐՐՈՐԿ ԵՆԹԱՇՐՋԱՆ**

**(XIX դ. վերջին քառորդը)**

	Օրինասահմանական (նումոթեսիական) էվոլյուցիոնիզմ	
Ներածական	Տեղեկություններ	455
	Ծնթաշրջանի տիրապետող լեզվաբանական ուղղությունը և նրա ձևավորման նախադրյալներն ու պայմանները	455
	Լեզվաբանական ուսմունքների զարգացման էտապները	459
	Լեզվաբանական աշխատանքի բնույթն ու տիպերը	459
I.	Լեզվաբանական ուղղություններ և կոնցեպցիաներ	460
1.	Պսիխոֆիզիոլոգիզմ	460
	ա) Միսկեռականներ և նրանց լեզվաբաններ	460
	ա) Միսկեռականներ (նեոգրամատիզմ)	460
	Ներածական գիտություններ	460
	Ա. Լեակինի, Է. Ջիվերսի, Կ. Վեռների, Գ. Ասկոլի գործունեության դերը երկտերականական ուղղության ձևավորման մեջ. Վեռների օրենքը	461
	Հ. Օստրոֆի և Կ. Բրուկմանի «Ձևաբանական հետազոտություններ» առաջարանը	466
	Կարլ Բրուկման	470
	Հերման Օստոֆ	477
	Բերտոլդ Դելբրյուկ	478
	Հերման Պաուլ	482
	Ընդհանուր եզրակացություններ	495
6)	Միսկեռականների քննադատները	497
	Ներածական գիտություններ	497
	Գ. Կուրցիոս	501
	Ֆր. Միստիլի, Լ. Տորլեր	502
	Գ. Ի. Ասկոլի	502

	Յոհան Շմիդտը և նրա ճալիքների տեսութայունը .	304
	Հուզո Շուխարդո	307
բ)	Մոսկվայի լեզվաբանական դպրոց	316
	Ֆիլիպ Ֆյոդորովիչ Ֆորտունատով	316
գ)	Կազանի լեզվաբանական դպրոց	325
	Ի. Ա. Բոլուեն-դե-Կուլբոենե	325
	Ն. Վ. Կրուշևսկի	337
	Վ. Ա. Բոլորոդիցկի	340
2.	Փողոտրյան հոգեբանական կոնյեպցիա (էքզայսիտոլոգիզմ)	342
	Վիլհելմ Վունդտ	342
II.	Լեզվաբանական աբստրակտի առանձին բնագավառներ	355
1.	Ընդհանուր լեզվաբանություն	355
	Ընդհանուր լեզվաբանությունը ընդհանուր լեզվաբանության ընդհանուր հասկացության մեջ	355
	Վերջինիս հասկացության մասին	355
	Լեզվի ծագման տեսություններ. Լ. Նուարե	356
	Սուբստրատի պրոբլեմը	356
	Հնչյունաբանություն. փորձառական հնչյունաբանություն	358
	Շարահյուսություն. Յ. Ռիս	359
	Իմաստաբանություն. Մ. Բրեալ, Մ. Մ. Պոկրովսկի	362
	Բարձրագույն լեզվաբանություն. գերմանական և ֆրանսիական բարձրագույն լեզվաբանության տարբերությունների կազմման աշխատանքների սկիզբը. Գ. Վենկեր և Ժ. Ժիլիերոն. Ֆր. Էնգելսի «Ֆրանսիայի բարձրագույն լեզվաբանության մասին»	364
	Լեզուների ընդհանուր դասակարգման փորձերը. Ֆր. Մյուլլեր, Ֆր. Միստելի	370
2.	Հնչյունական լեզվաբանություն	371
ա)	Ընդհանուր հնչյունական ուսումնասիրությունը	371
	Հնչյունական լեզուների ստուգաբանություն, հնչյունաբանություն և ձևաբանություն հարցերը Ա. Ֆիլի և Ս. Տերվիշյանի աշխատություններում	371
	Լեզվաբանական հնչյունաբանությունը և հնչյունաբանության նախահարկերի ու կոնկրետային պրոբլեմների. Օ. Շոպերի, Ի. Շմիդտի և ուրիշների ուսումնասիրությունները	373
	Ա. Լուդվիգի ազատագրության սկզբունքը	375
	Հնչյունական լեզուների ուսումնասիրություն հարցերը. Յ. Վակերնակել, Ֆ. Ֆորտունատով, Ա. Բեցցենբերգեր, Ֆ. Հանեն. «Միստելի օրենքը»	376
բ)	Հնչյունական առանձին լեզուների և լեզվաճյուղերի ուսումնասիրությունը	377
	Առանձին լեզուների և լեզվաճյուղերի համեմատական և պատմական քերականությունների սկզբունքները	377
	Հնչյունական լեզուներ	378

Հայերեն	579
Ալբաներեն	581
Բալթիկ-սլավոնական լեզուներ	581
Քրակերեն	582
Հունարեն	583
Իտալական լեզուներ	583
Գելտական լեզուներ	585
Փերմանական լեզուներ	585
Յ. Այ-ննդերոսյական լեզուների ուսումնասիրությունը	586
Սեմա-քամական լեզուներ	586
«Ուրալա-ալթայոն» լեզուներ	587
Չին-տիբեթական և «հարավ-ասիական» լեզուներ	587
Այլ լեզուներ	589
Պրականութուն երրորդ ենթաշրջանի վերաբերյալ	591
Համառոտագրությունների ցանկ	593
Պնձնանունների ցանկ	597
Լեզուների և լեզվախմբերի ցանկ	613



ԳԵՎՈՐՆ ԲԵՔԷԼԻՐԻ  
Զ Ա Հ Ո Ի Կ Տ Ա Ն

Լեզվաբանության պատմություն  
հատոր I

Հրատ. խմբագիր՝  
Արտ. շ. ՊԱՊՈՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝  
Հ. Ա. ՀՈՎԱՍՏԻՑԱՆ  
Վերատուգող սրբագրիչ՝  
Հ. Ա. ՎԱՐԻԱՆՅԱՆ

Պատ. հրատ. խորհրդի որոշում № 3, 8/Մ-1959 թ  
Հանձնված է արտադրության 30/Մ-1959 թ.,  
Ստորագրված է տպագրության 5/1-1961 թ.,  
ՎՖ 07:03, Պատվեր :01, Տիրաժ 1000,  
Թուղթ՝ 60×92<sup>1</sup>/<sub>2</sub>, Տպագր. 42,75 մամուլ,  
Հաշվ.-հրատ. 37,4 մամուլ:

Գինը ԽՍՀՄ-ում 35 կ.,  
i 1961 թ.՝ 2 ա. 40 կ.

Երևանի Պետական համալսարանի  
հրատարակչության տպարան,  
Երևան, Արսիվյան փողոց № 104.

ՆԿԱՏՎԱԿՑ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Գետք է լինի
XIV	վ. 19—20	ռուս լեզվաբաններից	ռուս լեզվաբանների աշխատանքայիններից
XXVII	վ. 8—9	վաղ միջնադար	վաղ և զարգացած միջնադար
6	վ. 13	վերածնունթյան	վերածնունթյան
34	վ. 14	գոյությունը՝	գոյության՝
55	ն. 4—2	Etymologika, E. Wolf- flin...für	Etymologika, E. Wolf- flin...für
70	վ. 15	φ=πς	ψ=πς
76	վ. 7—8	(προσβολή), օրինակ՝	(προσβολή), օրինակ՝ օ և ω
85	վ. 17	οἰδέτερον	οἰδέτερον
87	ն. 4—3	նախադասությունը	նախադրությունը
107	ն. 3	մ. թ. 253 թ.	մ. թ. ա. 253 թ.
117	վ. 2	այլուր	այլուր
316	ն. 12	դիանական	դանիական
325	վ. 16	XVIII դ.	XVII դ.
391	ն. 3—1	über...Althochdeutschen Sprachschatz...einen	über...Althochdeutschen Sprach-schatz...einer
345	վ. 10	մեջ	հետ
352	ն. 2	A. A. Востокон	A. X. Востокон
375	վ. 4	Բիրոնգիմի	Նատուր-բիրոնգիմի
380	ն. 2	H. Hovelague	A. A. Hovelague
406	ն. 2—1	beg-rundet	be-gründet
407	ն. 10	Verhältnis zu einander	Verhältnis zueinander
407	ն. 1	Völkerpsychologie	Völkerpsychologie
415, 419	ն. 3	hauptsachlichen	hauptsächlichen
455	վ. 9	այս	այն
464	ն. 7	ներկայացված էր	ներկայացված են
465	ն. 2	der vergleichenden	die vergleichende
484	ն. 9	ստեղծվում են սովորաբար	սովորաբար չեն ստեղծվում
340	ն. 4	փորձնական	փորձառական
344	ն. 13	Vollseele	Volksseele

Էջ 369-ի 4-րդ և 5-րդ ծանոթությունների տեղերը խորհել